



**ԱՐԿՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
ԵԱՄԱԿԱԿԻ**

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱՆՍԱՐԱՆ

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ԵՐԵՒԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ  
2018

ՀՏԴ 94(479.25):82-94  
ԳՄԴ 63.3(5Հ)  
Մ 283

*Հրատարակութեան է երաշխատրուել  
ԵՊՀ հայագիտական հետազօտութիւնների  
ինստիտուտի գիտական խորհուրդը*

### **Մանուկեան Արամ**

Մ 283 Նամականի/Ա. Մանուկեան: -Եր., ԵՊՀ հրատ., 2018, 672 էջ + 1 ներդիր քարտէս:

### **Փանպուրեան Երուանդ**

Ժողովածուի կազմութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ:

Ժողովածուն կը բովանդակէ ամբողջութիւնը հիմնականին մէջ Պոսքընի Հ. Յ. Դ-աշնակցութեան արխիւներուն մէջ պահպանուած Արամ Մանուկեանի (Սարգիս Յովհաննիսեանի) նամակներուն, որոնք կը ցոլացնեն անուանի յեղափոխականին աւելի քան տասնամեակի մը վրայ (1904-1915) երկարող գործունէութիւնը; Նամակները նոր լոյս կը սփռեն եւ կը վկայեն այն բախտորոշ դերակատարութեան մասին, զոր ան ունեցած է ազգային-ազատագրական պայքարին՝ յատկապէս յաղթանակով պսակուած Վան-Վասպուրականի հայութեան ինքնապաշտպանութեան գործին մէջ:

ՀՏԴ 94(479.25):82-94  
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2273-5

© Փանպուրեան Եր., 2018  
© ԵՊՀ հրատ., 2018



ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
1879-1919



**Կը ցուիրուի  
Հայաստանի Ա. Հանրապետութեան  
հարիւրամեակին**

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ներկայացուող ժողովածուն կ'ամփոփի հայ ազատագրական պայքարի պայծառ դեմքերին Արամ Մանուկեանի անելի քան տասը տարիներու վրայ երկարող (1904-1915) նամակները, քաղուած մեծագոյն մասով Հ. Յ. Դաշնակցութեան կեդրոնական արխիւին: Նամակները կը վերաբերին հայ յեղափոխութեան ամենէն տազնապալի ու բախտորոշ մէկ ժամանակաշրջանին, երբ հայ ժողովուրդը կենաց-մահու պայքար կը մղէր ի խնդիր իր գոյութեան պահպանման եւ ապագայ ազատ Հայաստանի ստեղծման: Այդ գոյամարտին մէջ առաջնորդի դեր ստանձնած էր Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ Արամ Մանուկեան անոր արժանաւոր ու ընտիր գաւակներէն մէկն էր:

Շուրջ չորս հարիւրի հասնող այդ նամակները կը բացայայտեն անուանի յեղափոխականին յատկապէս Վանեան գործունէութեան այնպիսի երեսները, որոնք իրենց ամբողջութեանը մէջ ցարդ կը մնան քիչ յայտնի կամ բոլորովին անյայտ: Անոնք առիթ կ'ընծայեն մօտէն ծանօթանալու այն հսկայական ու տքնաջան աշխատանքին, զոր տարած է ան Վասպուրականի հայութեան կազմակերպման եւ շրջանի զինման գործին մէջ:

Նախ համառօտ կերպով իր անցած ուղիին մասին, մինչեւ Վան հաստատուիլը:

Իսկական անունով Սարգիս Յարութիւնի Յովհաննիսեան, Արամ ծնած է 1879 թ. Մարտ 19ին Դարաբաղի կեդրոն Շուշի քաղաքին մէջ: Ծնողքը կը մնար Դափանի շրջանի Ձէյվա գիւղը, ինչ որ առիթ տուած է կարգ մը ուսումնասիրողներու, որ այդ գիւղը համարեն իր ծննդավայրը, մինչդէռ ինք՝ Արամ Մանուկեան ինքզինքն ցկատած է միշտ դարաբաղցի եւ ծնունդով շուշեցի\*: Ուսումը ստացած է տեղոյն ծխական եւ թեմական վարժարաններուն մէջ, հանդիսանալով ոչ միայն մտացի եւ յաջողակ աշակերտ, այլեւ ազգային ու հասարակական հարցերու նկատմամբ սուր հետաքրքրութիւն ցուցաբերող պատանի: ԺԹ. դարու վերջին տասնամեակներուն, ազգային զարթօնքն ու հայրենասիրական զգացումները, մինչեւ իսկ յեղափոխական գաղափարները պարարտ հող գտած էին Անդրկովկասի այդ ոստանին՝ Շուշիի երիտասարդութեան մէջ, եւ պատանի Սարգիսը՝ ապագայ Արամը կը տեսնենք ներգրաւուած աշխոյժ գործունէութեան մէջ, թէ՛ աշակերտական եւ թէ՛ արտադպրոցական շրջանակներուն մէջ: Արդէն 14 տարեկանին՝ ան յարած է Հ. Յ. Դաշնակցութեան եւ դարձած տեսակ մը առաջնորդ ու քարոզիչ կուսակցութեան ազգային-յեղափոխական ու ընկերային գաղափարներուն: Երիտասարդութեան յատուկ այդ խլրտումները պիտի վրդովեցնէին անշուշտ քաղաքի պահպանողական խաւերը, պիտի զայրացնէին յատկապէս թեմական վարժարանի տեսուչ Բենիկ վարդապետը, որ ի վերջոյ 1901ին ռուս գաւառապետին եւ ոստիկանապետին միջոցով դպրոցէն վճռուել կու տայ Արամը եւ

---

\*) Յանենայն դէպս, բացառուած չէ որ Արամ ծնած ըլլայ Ձէյվա եւ մանուկ տարիքին փոխադրուած Շուշի:

խումբ մը «ըմբոստ» ու «անկարգ» աշակերտներ: Այս վերջինները կ'անցնին Երեւանի թեմականը, ուր յարաբերաբար թոյլատու պայմաններու մէջ կը շարունակեն, ուսումնառութեան կողքին, միեւնոյն հայրենասիրական ու յեղափոխական գործունէութիւնը:

Երեւանի թեմական վարժարանէն Արամ կը վկայուի 1903 թ. Մայիսին եւ կ'անցնի Պաքու, ուր Ոսկանապատի Կեդր. կոմիտէի կարգադրութեամբ իբրեւ գործիչ կը լծուի նախաշխարհի բանուորութեան կազմակերպման գործին: Ժողովրդական հաւաքներու, գործադուլային ցոյցերու, արհեստաւորներու եւ բանուորներու համար սարքուած լսարաններու գլխաւոր բանախօսներէն է: Կ'արժարժէ աշխատաւորութիւնը յուզող այժմէական հարցեր. համոզիչ փաստարկումներով, կը քարոզէ կրտսրական ընդդիմութիւն ցուցադրել ցարական իշխանութեանց, որոնք ոչ միայն կը հովանաւորեն շահագործող դասակարգը, այլեւ բացայայտ հակահայ քաղաքականութիւն կը վարեն: 1903 թուականը կը յատկանշուէր կարեւոր ուրիշ իրադարձութեամբ մը. հայ կրթական եւ մշակութային հաստատութիւններու փակումէն ետք, Նիկոլայ Բ. ցարին Յուլիս 12ի հրովարտակով յարքունիս կը գրաւուէին հայ եկեղեցական կալուածները: Ռուսացման քաղաքականութեան այս նոր ու վտանգաւոր քայլին դէմ պիտի ծառանար կովկասահայութիւնը ամբողջ, գլխաւորութեամբ Ամենայն հայոց կաթողիկոս Խրիսեան Հայրիկի եւ Հ. Յ. Դաշնակցութեան: Արամ եւս մասնակից է համահայկական այդ շարժումին: Պաքուէն կը մեկնի Գանձակ, ուր կը մնայ կարճ ժամանակ մը զբաղելու համար տեղւոյն հայութեան ինքնապաշտպանութեան գործերով: Անկէ կ'անցնի Կարս՝ Երկիր մուտք գործելու հաստատ մտադրութեամբ, այնպէս ինչպէս կ'ընէին այդ օրերուն իր սերնդակիցներէն շատեր:

1903 թ. աշնան Արամ արդէն Կարս է, ուր ծանօթ է Սերգէյ անունով: Կարսի մարզը սահմանակից ըլլալով դարձած էր Հ. Յ. Դաշնակցութեան կարեւոր կայաններէն մէկը ֆետայական խումբերու եւ ռազմամթերքի դէպի Երկիր փոխադրութեան համար: Շուրջ տարի մը ան գործեց հոս, ցուցաբերելով կազմակերպական եւ քարոզչական արտասովոր տաղանդ: Մասնոյ ապստամբութեան նախօրեակն էր եւ ամբողջ նահանգը կը գտնուէր արտակարգ եռուզեռի մէջ, յատկապէս զինեալ խումբերով օգնութիւն հասցնելու համար Սասունին, որ 1902 թ. վերջերէն օղակուած էր մեծաթիւ թրքական զօրքերու եւ քիւրտ հրոսակներու կողմէ: Լեռնաշխարհին մէջ խմբուած էին բազմաթիւ անուանի մարտիկներ, — Դաշնակցութեան ներկայացուցիչ Վահանը (Տողրամաճեան), Հրայր-Դժոխքը, Անդրանիկը, Գեորգ Չաուշը, Քեռին, Սեբաստացի Մուրատը, Սեպուհը եւ շատ ուրիշներ: Կարսի եւ Երեւանի կուսակցական մարմիններուն վրայ պարտք էր դրուած զինեալ խումբեր փութացնել եւ խտացնել օրհասական կռիւ մղող սասունցիներու շարքերը: Ճիշդ է որ ճամբայ ելած արշաւախումբերէն ոմանք, ճիւղորդ եւ հետեւակ, հերոսաբար ճեղքելով պաշարման շղթաները՝ հասան իրենց նպատակին, մեծ մասը սակայն ունեցաւ ողբերգական վախճան, զոն դառնալով ոչ միայն թուրք ու քիւրտ թշնամիի զնդակներուն, այլեւ սահմանապահ ռուս զօրքերու կրակին: Չոռուածներու շարքին էին նաեւ Արամի դպրոցական մտերիմ ու զաղափարակից ընկերներէն Թուման Թումեանցը (Թորգոմ), Եգոր Առստամեանը (Մեմակ) եւ շատ ուրիշներ: Արամ՝ որ Կարս եկած էր Սասուն անցնելու նպատակով եւ նոյնիսկ զինեալ խումբի մը միանալով փորձ կատարած, բայց հիւանդութեան պատ-

ճառով ետ դարձած էր, ինք՝ որ կազմակերպած ու ճամբայ հանած էր մեկէ ատելի խումբեր, խոր վիշտ կ'ապրէր ու կը տառապէր հոգեպէս՝ ամէն անգամ որ կը ստանար թանկագին ընկերներու նահատակութեան շարագոյժ լուրը... Ի վերջոյ եւ հակառակ պնդումներուն Կարսի Կեդր. կոմիտէին, որ տեղոյն կազմակերպական գործերուն համար անհրաժեշտ կը համարէր իր ներկայութիւնը շրջանին մէջ, Արամ վճռեց անցնիլ Երկիր, այս անգամ ոչ Սասուն, ուր ապստամբութիւնը վիժած էր արդէն, այլ Վասպուրական, ուր մտնելու կարելիութիւն կար պարսկական Ատրպատականի ճամբով:

Այդպէս ալ ըրաւ: Թիֆլիսէն Հ.Յ.Դ. Արեւելեան բիրոյի յանձնարարականը ստանալէ ետք, 1904 թ. աշնան, երեք ընկերներու ուղեկցութեամբ Արաքսը կտրելով գնաց Խոյ, ապա Թուրքիոյ սահմանին մօտ գտնուող Ս. Թաղէի վանքը, անկէ Վան անցնելու ծրագրով: Այստեղէն սկսեալ Կարսի Սերգէյը ծանօթ է այլեւ Արամ Մանուկեան կամ պարզապէս Արամ անունով:

Նախքան Վասպուրական մուտքը, երիտասարդ բայց գործնական մեծ փորձառութիւն ձեռք բերած յեղափոխականի մտքին մէջ հասունցած էին որոշ գաղափարներ: Իր գոյութեան համար պայքարի դաշտ նետուած հայ ժողովուրդը միայնակ էր, շրջապատուած իր բնաջնջումը հետապնդող թուրք ու քիւրտ ջարդարարներով, իսկ արտաքին աշխարհը, Ռուսիա եւ Եւրոպա, անտարբեր հանդիսատեսներ էին միայն հայոց տառապանքին: Ապա կը խորհէր, որ անցած պէտք է համարել այն ժամանակները, երբ արշաւախումբերով յարձակումներ կը գործուէին հայութեան հարստահարիչ տարրերը պատուհասելու նպատակով: Ջինեալ խումբերով Երկիր անցնելու փորձերը եւս, ինչպէս ցոյց կու տային Սասնոյ վերջին դէպքերը, կապուած էին գրեթէ անյադօհաարելի խոչընդոտներու հետ եւ, ամէն պարագայի, կը կատարուէին ի գին մարդկային մեծ կորուստներու: Հարկ էր, ուրեմն, կանխաւ յարմար հող պատրաստել՝ կազմակերպելու համար ժողովուրդի ինքնապաշտպանութիւնը, զինելով այս վերջինը եւ երկարաշունչ պայքարի ոգի ներշնչելով անոր: Ճիշդ է որ իրմէ առաջ նոյն տեսակէտին ջատագով հանդիսացած էին ուրիշներ, Հրայր-Դժոխք՝ Տարօնի, Գիսակ եւ Կոմս՝ Վասպուրականի մէջ, եւ սակայն այդ գաղափարը առաւել արդիւնատրութեամբ պիտի գործնականացնէր Արամ, իրեն յատուկ ջանասիրութեամբ, եռանդով ու մեղուաջան աշխատանքով:

Ահա այս նպատակի իրագործման վրայ կեդրոնացաւ ան՝ այն երեք ամիսներուն (1904 թ. Նոյ. – 1905 թ. Յունուար), երբ ձմրան սաստիկ եղանակին պատճառով անանցանելի դարձած էին ճանապարհները եւ ինք ստիպուեցաւ մնալ պարսկական Ատրպատական՝ Ս. Թաղէի վանքը ու զբաղիլ այնտեղէն դէպի Երկիր ռազմամթերքի փոխադրութեան կազմակերպումով: Այսուհանդերձ չդիմաճախելով ատելի երկար սպասելու մտքին, եւ հակառակ բոլոր ու բորանին, 1905 թ. Փետրուարի սկիզբը ճամբայ ելաւ, ծպտուած իբրեւ շալակատր գիւղացի ու չխօսկան համր, եւ ութօրեայ տաժանելի ուղեւորութենէ ետք հասաւ Վան, պատմական ոստանը հայաշատ Վասպուրական նահանգի, ուր հաստատուելէ քիչ անց ան պիտի դառնար շրջանի ամենէն հեղինակատր դէմքերէն մէկը, սիրուած ու յարգուած ժողովուրդի բոլոր խաւերէն: Արդարեւ, Արամի յեղափոխական կեանքին մէջ առանցքային տեղ կը գրաւէ Վանը, ուր որոշ ընդմիջումներով ան գործեց ատելի քան տասնամեակ մը եւ որու ընթացքին ձեւաւորուեցաւ ժողովրդամուտ գործիչին

յաւերժօրէն անմեռ կերպարը: Երկար պիտի ըլլար յառաջաբանի մը նեղ սահմաններուն մէջ բնութագրել անոր անձնական բարեմասնութիւնները, կամ ծանրանալ անոր ծաւալած գործունէութեան բոլոր երեսներուն վրայ. անոնք բազմազան են եւ բազմաբնոյթ, եւ կ'ընդգրկեն միաժամանակ՝ մարտական, կազմակերպչական, քարոզչական, կրթական, մշակութային եւ հասարակական մարզերը: Կանգ չենք առնել այդ աշխատանքներուն վրայ նկատի ունենալով որ մատուցող ժողովածուն – ինքնին հարուստ բովանդակութեամբ – եւ անոր իւրաքանչիւր բաժնին կցուած խմբագրական ներածութիւնները կը հայթայթեն արդէն հարկ եղած ծանօթութիւնները: Կը բաւէ հաստատել որ շնորհիւ Արամի եւ գաղափարակից ընկերներու ժրաջան ջանքերուն, Վասպուրականը պիտի վերածուէր այնպիսի ամուր կռուանի, որ 1915 թուականին պիտի յաջողէր ձախողութեան մատնել թրքական իշխանութեանց ծրագրած հայասպանութիւնը եւ յաղթանակով պսակել Վանի ինքնապաշտպանութիւնը: Արդարեւ, իր ընկերներուն՝ Իշխանի եւ Վռամեանի դաւադիր սպանութենէն ետք, Արամին պիտի վիճակուէր Վանի հայութիւնը համախմբելու եւ միասնական ճակատ յարդարելու առաքելութիւնը:

Վերջապէս, միեւնոյն վճռականութիւնը ցոյց պիտի տար Արամ 1918 թուականի Մայիսեան մարտերու ընթացքին, երբ թրքական զօրքերու Արարատեան դաշտ ներխուժումով ամբողջական բնաջնջում կը սպառնար հայութեան մնացորդացին:

Ծայր աստիճանի ճգնաժամային այդ օրերուն, երբ ընդհանուր վիատութիւն կը տիրէր եւ խուճապի մատնուած էին բազմութիւնները, անգամ մը եւս փրկարար գործ պիտի տեսնէր ան: Թիֆլիսի Ազգ. խորհուրդի կողմէ արտակարգ լիազօրութիւններով Երեւան առաքուած Արամ Մանուկեան, որուն անհարկի կերպով տրուած է իր խառնուածքին բոլորովին անյարիր «դիկտատոր» տիտղոսը, գիտցաւ յայտնաբերել անյողորդ կամք եւ հիմնովին շրջել կացութիւնը: Կտրուկ միջոցներով սանձեց դասալքութիւնը, հրահրեց պայքարի ոգին եւ կռուի դաշտ ուղղեց մարտունակ երիտասարդութիւնը: Այսպէս, թիկունքային աշխատանքներու կազմակերպումով, ստեղծուեցաւ ներդաշնակ գործակցութիւն հայկական բանակին եւ ճակատ մեկնող աշխարհագորայիններու միջեւ: Առաւելաբար Արամ Մանուկեանի ջանքերով կազմուած համազգային այս բռունցքի տարած Մայիսեան փառատր յաղթանակներէն ալ ծնունդ պիտի առնէր հայ ժողովուրդի դարատր երազ անկախ Հայաստանի պետականութիւնը:

Ե. Փ.

## ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՁԵՌԱԳԻՐՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Ժողովածուն բաղկացնող Արամի նամակներուն ճնշող մեծամասնութիւնը, ինչպէս յիշուեցաւ, բաղուած է Հ. Յ. Դաշնակցութեան կեդր. արխիւին (Պոսթըն-Ուաթըրքաուն, Միացեալ Նահանգներ): Արդիւնք են անոնք ատիկի քան տասը տարիներու մանրակրկիտ պրպտումներու, որոնց ընթացքին մաղէ անցուցած ենք այն բոլոր թղթածրարները, ուր հնարատր էր գտնել Արամ Մանուկեանի գրչին պատկանող գրութիւնները: Այս վերջիններէն նկատի առնուած են միայն նամակները, ինչպէս նաեւ շարք մը կենսագրութիւններ, նահատակուած ընկերներու յիշատակին ձօնուած: Չանց առած ենք Հ.Յ.Դ. ընդհանուր կամ շրջանային ժողովներու մէջ իր ունեցած արտայայտութիւնները, պաշտպանած տեսակէտները, բանաձեւումները. անոնք տեղ գտած են համապատասխան ժողովներու արձանագրութեանց մէջ եւ հրատարակուած «Նիւթեր Հ.Յ.Դ. Պատմութեան համար» շարքի հատորներով: Չանց առած ենք նոյնպէս տարբեր ընկերներու եւ կուսակցական մարմիններու կողմէ իրեն ուղղուած հարիւրատր նամակները, որոնք այլապէս շահեկան՝ պիտի կրկնապատկէին այսուհանդերձ ներկայ հատորին արդէն բուսականին ծաւալուն չափերը: Իւրաքանչիւր փաստաթուղթի վերեւ նշուած են համարները, ըստ Կեդր. արխիւի ցուցակագրումին:

Արամի առաջին նամակները թուագրուած են 1904 թ. Նոյեմբեր ամիսէն սկսեալ, այն օրերէն երբ նախքան Վան անցնիլը ժամանակաւորապէս կը մնար Պարսկաստանի Ատրպատական նահանգը: Նամակներուն մեծագոյն մասը, սակայն, գրուած է Վասպուրական հաստատուելէն ետք, մանաւանդ առաջին երկու տարիներուն, երբ ան նուիրուած էր կազմակերպական աշխատանքի՝ յատկապէս շրջանը զէնք-զինամթերքով ապահովելու գործին: Արդարեւ միայն 1905-1906 տարիներուն համար այդ նամակներուն թիւը կը հասնի 240ի: Ընդհակառակն, 1914-15 թուականէն Արամի գրչին պատկանող միայն սակաւաթիւ գրութիւններ հասած են: Յուօք այդ տարիներու Վասպուրականի, ինչպէս նաեւ կուսակցական միւս շրջաններու արխիւը, ժամանակին ժընձե փոխադրուած չլլալով, ոչնչացած պէտք է համարել:

Մովորաբար Արամի ձեռագիրներուն ընթերցումը մասնատր դժուարութիւն չի ներկայացներ, բացի այն պարագաներէն երբ շատ հապճեպով գրուած են անոնք, կամ երբ խոնարհութեան, մեղանի տարածման կամ որեւէ այլ պատճառով գունաթափուած ըլլալու հետեւանքով տողեր եւ պարբերութիւններ անընթեռնելի կը դառնան: Այսուհանդերձ բարդութիւն կը ստեղծեն արտասահման, յատկապէս ժընձե եւ Թիֆլիս՝ Հ.Յ.Դ. Արեւելեան եւ Արեւմտեան բիրտներուն սահմանուած նամակները, որոնք, օսմանեան կամ ցարական գրաքննութենէն խուսափելու համար, կը գրուէին գաղտնի թանաքով: Այս վերջինները, յաջողութեամբ «բացուած» ըլլալու պարագային, դժուարընթեռնելի, բայց եւ ընդհանրապէս կը վերծանուին, մանաւանդ որ ապահովութեան նպատակով նամակագիրները յաճախ մէկէ ատիկ օրինակներով եւ տարբեր ճամբաներով կ'առաքէին զանոնք միեւնոյն հասցէին: Բայց եւ այնպէս քիչ չէ թիւը անոնց՝ որոնց կարեւոր մէկ բաժինը կամ ամբողջութիւնը բոլորովին սեւցած է:

Որոշ դժուարութիւն կը ներկայացնէ անշուշտ ծածկանուններու յաճախակի գործածութիւնը, մանաւանդ տեղանուններու պարագային: Վասպուրականի հարիւրատր գիւղերը, ուր կազմակերպական բջիջ կը գործէր, կը կրէր յատուկ ծածկանուն մը: Արամի նամակներուն մէջ այդ բնակավայրերը կը յիշուին ոչ թէ իրենց բուն անուններով, այլ կուսակցութեան կողմէ սահմանուած գաղտնանուններով: Մտանձին գոռուակութեամբ կը յայտնենք, որ այս բարդ խնդիրը լուծած ենք յաջողութեամբ, ծածկանունով յիշատակուած բոլոր գիւղերուն եւ քաղաքներուն դիմաց նշելով անոնց իսկական անունները:

Միշտ գաղտնապահութեան նկատմամբ, Արամ Մանուկեան յաճախ կը դիմէ թուանշային ծածկագրութեան միջոցին: Ծածկագիր այդ բաժինները ներկայ հատորին մէջ շարուած են համակարգչային Times Armenian տառերով եւ կը կրեն մէկ աստղանիշ: Ռուսերէն բառերն ու նախադասութիւնները (թարգմանութիւն ընկ. Հայկազուն Ալվրցեանի) շարուած են նոյն տառերով սակայն շեղակի եւ նշանակուած գոյգ աստղանիշով:

Վերջապէս, պահպանուած են, ըստ կարելոյն, Արամի լեզուական եւ ուղղագրական առանձնայատկութիւնները:





## Ա.– ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՄԷՁ

1904 թ. Հոկտեմբեր ամսուն Թիֆլիսէն, Հ.Յ.Դ. Արեւելեան բիրոյի յանձնարարագրով, Արամ Մանուկեան ճամբայ կ'ելլէ դէպի իր նոր առաքելութեան վայրը՝ Վասպուրական, անցնելով Երեւանէն Ջուլֆա, ապա Պարսկաստանի հիւսիսային նահանգը՝ Ատրպատականի հայաշատ շրջանը: Իբրեւ զէնք-զինամթերքի փոխադրութեան եւ մարտական խումբերու դէպի Երկիր անցման կէտ, Ատրպատականը կարեւոր նշանակութիւն ունէր, եւ արդէն ԺԹ. դարու 90-ական թուականներու սկիզբէն շրջանը օժտուած էր դաշնակցական զօրաւոր կազմակերպութեամբ, ծանօթ Վրէժի կամ Վրէժստանի Կեդր. կոմիտէութիւն անունով: Ատրպատականէն դէպի Վասպուրական, ապա նաեւ Տարօն ու Մասուն լայն գործունէութիւն ծաւալած էին շարք մը անուանի յեղափոխական գործիչներ, ինչպէս Պետոն, Խանասորայ Վարդանը, Վազգէնը, Սեւքարեցի Մաքոն, Նիկոլ Դումանը, Վարդգէսը եւ շատ ուրիշներ: Վրէժի (Թարիզի) Կեդր. կոմիտէութեան հիմնական առաքելութիւնը կը կայանար քիկունքային աշխատանքի մէջ, – դէպի Երկիր մարտական խումբերու եւ ռազմամթերքի փոխադրութեան գործը:

Շրջանի գլխաւոր դէմքն էր Սալմաստ հաստատուած Մտեփան Թաղէսեանը (Մամտն, Գարեգին), Քր. Միքայելեանի քրոջորդին, մինչ Մակու գաւառին մէջ գտնուող Ս. Թաղի (Մեմաւոր) պատմական վանքը՝ վանահայր Գեորգ վրդ. Նալպանտեանի օրով (Ընծայր) վերածուած էր սահմանագլուխի փոխադրութեանց կարեւորագոյն կէտի:

Հոս, Թաղէի վանքին մէջ է որ ժամանակաւորապէս պիտի հաստատուէր Արամ Մանուկեան եւ մնար երեք ամիս (1904 թ. Նոյեմբերէն 1905 թ. Փետրուար), սպասելով անհամբեր եղանակի եւ ճամբաներու բացուելուն՝ Երկիր անցնելու համար: Ի դէպ, բուն անունով Սարգիս Յովհաննիսեան, Կարսի շրջանին մէջ Սերգէյ անունով ծանօթ երիտասարդ գործիչը, առաջին անգամ հոս կը յայտնուի Արամ ծածկանունով, նոյն ինքն ապագայ հանրածանօթ յեղափոխական ու պետական գործիչը:

Թաղէի վանքին մէջ Արամի գլխաւոր զբաղումը եղաւ փոխադրութեան գործի կազմակերպումը, զիծերու կանոնաւորումը եւ վստահելի (քիւրտ) սուրհանդակներու ապահովումը: Այստեղէն ան հաղորդակցութեան մէջ մտաւ Ատրպատականի Կեդր. կոմիտէին եւ շրջանի գլխաւոր դէմքերէն Մամտնի (Ստ. Թաղէսեան), Մալխասի (Արտաշէս Յովսէփեան) Փայլակի (Ռուբէն Դերձակեան), ինչպէս նաեւ այդ օրերուն Վանի մէջ կուսակցութեան ներկայացուցիչ Կոմսի (Վահան Փափագեան) հետ:

Հ.Յ.Դ. Կեդր. արխիւին մէջ, Պոսթըն\*, կը գտնուին Արամի կողմէ Ատրպատականէն գրուած 14 նամակներ, առաջինը՝ 1904 թ. Նոյ. 29, վերջինը՝ 1905 թ. Փետրուար 8-ին, երբ արդէն ճամբայ ելած է դէպի Վան եւ կը գտնուի Աբաղայի Խաչան գիւղը:

ԽՄԲ.

---

\* Պոսթընի արխիւատան փաստաթուղթերը համարակալուած են՝ առաջինը թրթածրարի թիւով, իսկ երկրորդը՝ թրթածրարին մէջ փաստաթուղթին տրուած համարով:

**Սիրելի Կոմս<sup>1</sup>!**

Մալխասս<sup>2</sup> վերջին նամակով գրած էր իմ գալու մասին. այսօր ամէն բան պատ-  
րաստ էր, սպասում էինք վալադին<sup>3</sup>, որը իւր յիմար առաջարկութեամբ անվստա-  
հութիւն ներշնչեց. ստիպւած եմ մնալ մինչեւ գարուն. մանաւանդ ճանապարհները  
սարսափելի ձիւն է, այնպէս որ մեծ դժարութիւններ կան:

Եթէ ձեզ մօտ մարդու մեծ կարեւորութիւն կայ գրեցէք եւ ճանապարհներ պատ-  
րաստեցէք անցնիմ, թէ չէ սպասեմ գարնան:

Ինձ ճանաչում է Իշխանը<sup>4</sup> (Ջրաբերդի - Սարգիսը<sup>5</sup>). նա կարող է պատմել թէ ինչ  
բանի ընդունակ կարող եմ լինել. հետս ունեմ երեք ընկեր. մէկը ռուսական զինու-  
որական կրթութիւն ունի, մէկը ամերիկական, միւսը մեր շրջաններում է վարժեւե-  
րեքն էլ կարեւոր ուժեր են. մէկը մանաւանդ ուսումնասիրել [է] խմորային<sup>6</sup> գոր-  
ծողութիւնը:

Պատրաստութիւն եմ տեսնում խմորի, խնձորի<sup>7</sup> եւ նմանօրինակ նիւթերի. ես էլ  
մասնաւորապէս ուսումնասիրել եմ խմորի եւ խնձորի գործողութիւնները. գար-  
նան յուսով եմ առաջի յարմար դէպքում կարող կը լինենք մեծ քանակութեամբ  
խմոր ուղարկել. յամենայն դէպս այս բոլորը ի նկատի ունեցէք:

Եթէ յարմարութիւններ լինի գուցէ երկու ամսից օտարների մի[ջո]ցով խմոր եւ  
խնձոր տեղափոխենք:

Ուրիշ նորութիւններ չատ կարող էի գրել, բայց ոչ ժամանակ կայ եւ ոչ էլ զի-  
տեմ թէ ինչ տեսակ նիւթեր է հետաքրքիր ձեզ համար:

Ուղարկում եմ երկու լցնելու կոնպլէկտներ<sup>8</sup>. դրանից շատերը կան. այստեղ էլ  
երկուսը պահեցինք յարմար դէպքում ուղարկելու համար:

Առ այժմ այսքանը:

**Յարգանքներով  
ԱՐԱՄ**

1904, 29 նոյեմ., Մենաւոր<sup>9</sup>

1.- Կոմս – Վահան Փափազեան (1876-1973), դաշնակցական հանրաժանօք գործիչ, որ այդ օ-  
րերուն կուսակցութեան ներկայացուցիչն էր Վասպուրականի մէջ:

2.- Մալխասս – Արտաշէս Յովսէփեան (1877-1962), Ամերիկայէն եկած գործիչ մախ Ատրպատա-  
կան, ապա Վասպուրական եւ այլուր:

3.- Վալադ – սուրհանդակ, ուղեցոյց (քիւրտ):

4.- Իշխան – Նիկոլ Պօղոսեան-Միքայէլեան (1883-1915), դաշնակցական հանրաժանօք գոր-  
ծիչ, կազմակերպիչը Վասպուրականի հարաւային գաւառներուն (Մոկս, Սպարկերտ եւայլն), ո-  
րոնք պիտի ստանային Լեռնապար անունը:

5.- Ջրաբերդը ծածկանունն է Կարսի նահանգին, որ Արամ Մանուկեան ծանօթ էր Սարգիս կամ  
Սերգէյ անուններով:

6.- Խմորը վառօղն է, ընդհանրապէս պայթուցիկ նիւթ, ուժանակ:

7.- խնձորը՝ ռումբ, նռնակ:

8.- Փամփուշտ լեցնելու կազմածներ:

9.- Մենաւոր – կուսակցական ծածկանուն Ատրպատականի մէջ պատմական Արտազ գաւառի  
Ս. Թադէի վանքին, որ կ'օգտագործուէր իբրեւ գլխատր կայան դէպի Երկիր գե՛նք-գինամթերքի փո-  
խադրութեան եւ ֆետայիներու անցման:

**Սիրելի Մալխաս!**

Բժիշկը<sup>1</sup> կը պատմէ թէ ինչպէս խայտառակ կերպով վիժեց իմ գնալը. թէ եւ վատ ազդեց ինձ վրայ, ինչ արած, պիտի հաշտուել իրականութեան հետ. հաւանականութեան քիչ շանսեր կային, ուստի բարւոք համարեցի առայժմ մնալ:

Գրիգորը հիւանդութեան պատճառով անցնում է Կովկաս, այնպէս որ ես էլ ստիպուած կը լինեմ մնալ վանքում մինչեւ տեսնենք իմ գծերի գործը ինչ կը դառնայ: Քանի որ Գրիգորը գնալու է Կովկաս, մենք մտածեցինք Բժշկին էլ միացնել հետը, որպէսզի թէ՛ մեր տեղափոխութեամբ զբաղեն եւ թէ՛ մանաւանդ մտածել ենք Կովկասում յոգևտ վանքի<sup>2</sup> հանգանակութիւն անել: Հանգանակութիւնը կարծում ենք բաւական արդիւնք կը տայ, որով կարելի կը լինի ապահովել դպրոցի դրութիւնը եւ հոս մի լեզալ մարդ պահել մշտական մեր գործերի համար:

Քանի որ իմ մնալը որոշուեց, սիրելի՛ս, լաւ կը լինէր որ Վրէժի<sup>3</sup> ընդհանուր շրջանային ժողով գումարէիք տեղական մի քանի խնդիրները համար, օր[ինակ] 1) Տեղափոխութեան գործի մասին, 2) Կովկասի հետ յարաբերութեան կանոնաւորման մասին, 3) Թերթերի փոխադրութեան մասին, 4) Հոս Պարսկաստանում արդեօ՞ք պիտի հայ ժողովրդի դատաստանական գործը եւ ներքին գործերը պաշտօնապէս մեզ վրայ վերցնենք թէ ոչ... յետոյ կարելի էր մի քանի մանր-մունր խնդիրներ էլ դնել. երեւի տեղական ընկերները աւելի կարեւոր խնդիրներ կ'ունենան:

Ինչ եւ իցէ մտածեցէք դրա մասին եւ ինձ էլ գրէք թէ ինչ պիտի անէք: Չմոռանաք նոր թերթեր ուղարկել, մանաւանդ կովկասեան թերթեր...

**Յարգանք  
ԱՐԱՄ**

1904 թ. 30-ին նոյեմբեր  
Մենաւոր

1.- Բժիշկ – Գերձակեան Ռուբէն (1870-1915), ծանօթ նաեւ Փայլակ ծածկանունով:  
2.- Վանքը Ս. Թադէն է (Մեմաւոր):  
3.- Ատրպատականի, նաեւ Թարիզ քաղաքի ծածկանուն:

Սիրելի Կոմս!

Անցեալ նամակով գրել էի իմ գալու մասին, յուսով եմ որ ստացած կը լինէք. նամակիս հետ ուղարկել էի երկու ծայրեր<sup>1</sup> լցնելու կոնպլեկտներ, բայց դեղինի մի փոքրիկ մասնիկը սխալմամբ մնացել էր հոս. այս նամակի հետ ուղարկում եմ էլի մի ձեռք եւ առաջինի փոքրիկ բլազուկը. ի հարկէ ստա[նա]լուց նամակներում կը յիշէք. միայն չմոռանաք գրել թէ էլի դոցանից քանի<sup>2</sup> հատ տեղդ կարեւոր է, որ ըստ այնմ Սարուստանից<sup>2</sup> բերել տամ. ես ի նկատի ունեմ եղածներով մինչեւ 10 ձեռք կարծում եմ դա առայժմ բաւական է:

Ես մտածում եմ լուրջ կերպով խմորի եւ խնձորներ<sup>3</sup> տեղափոխութեան մասին ձմեռը, բայց ցաւալին այն է, որ առայժմ հոս ձեռքի տակ չկայ. կարգադրւած է ուղարկելու հոս 10 փութ խմոր եւ 200 դատարկ խնձորներ. ես կարծում եմ եւ հաւատացած եմ որ դուք էլ համաձայն էք ինձ հետ, որ աւելի լաւ է անպատրաստ տեղափոխենք եւ տեղդ կարեւոր պարագաներում պատրաստենք, որովհետեւ երբ երկար ժամանակ լցուած մնում է իւր պայթուցիկ ուժի մի մասը անպայման կորցնում է. դեռ մի կողմն եմ թողնում վտանգաւորութիւնը: Ինք ըստ ինքեան հասկանալի է որ խնձորներից գատ կարեւոր է եւ գուտ խմորային գործողութիւն, ուրեմն կարեւոր է խմոր ուղարկել եւ առանձնապէս. այսպէս կամ այնպէս այդ խնդիրների մասին էլ չմոռանաք գրել: Սրանք այնպիսի նիւթեր են որ չեն հրապուրում<sup>4</sup>. ուստի հնարաւոր է օտարների միջոցով տեղափոխել, այն էլ մեծ քանակութեամբ: Թէ՛ որ մինչեւ 1-2 ամիս հոս այդ նիւթերը կը լինի, դրա վերաբերմամբ չեմ կասկածում, որովհետեւ յատկապէս դրա համար մարդ ենք ուղարկում Սարուստան:

Այս նամակով ցանկանում եմ գրել ձեզ մի խնդրի մասին, որը թէեւ չնչին բան է, բայց գործի տեսակէտից կարեւոր է եւ առանձին ռիսկ ու ծախս չի պահանջում:

Բայց նախապէս պարտականութիւն եմ գգում ներողութիւն խնդրելու, որ սահմանազլխից դեռ ներսը ոտ չկոխած պրոէկտներ<sup>5</sup> եմ կազմում կամ առաջարկում. ներողութիւն եմ խնդրում յատկապէս նրա համար որ դուք ինձ չէք ճանաչում եւ երկրորդ որ գուցէ ձեր հայեացքներով այսպիսի տրամադրութիւնը օգային ամրոցներ շինողի տրամադրութիւն լինի... Ինչեւիցէ անցնեմ բուն խնդրին. խօսքս աղաւնու պոստայի\*<sup>6</sup> մասին է. երեւի դուք լաւ գիտէք թէ կառավարութիւնները որչափ լայն չափերով օգտւում են այդ միջոցից պատերազմների ժամանակ: Օրինակ մի օրւայ մէջ այնտեղից-այստեղ կարելի է հեռագրով մտքեր փոխանակել. դա կատարւում է ամենահասարակ կերպով. ամէնից առաջ երեւի գիտէք որ աղաւնի\* եթէ տանէք մի հեռաւոր տեղ բաց թողէք, ամենակարճ միջոցում կը վերադառնայ իւր նախկին տեղը. հէնց պէտք է օգտւել աղաւնու\* այդ բնագրական ընդունակութիւնից. յատկապէս պէտք է] նախ մի վստահելի տեղ բազմացնել, կամ եթէ բազմացրած կայ, ապա օր[ինակ] եթէ ուզում ենք այդտեղից այստեղ փոխանակել, պէտք է այդտեղինը բերել հոս եւ այստեղինը հող. յետոյ երբ կարեւոր է մի լուր շուտով տեղ հասցնել, կամ մարդ չկայ, կամ եղանակները լաւ չէ, պէտք է այն տեղի աղաւնու\* թեւի փետուրից\* կապել նամակը (նամակը նախապէս պատրաստում են բադի\* կամ

սագ-ի\* փետուրով, նեղ ու բարակ թղթում գրում ու ոլորած դնում են բացածքի մէջ) թելով ու բաց թողել. մի ժամում կամ 2 ժամում կը գայ հոս եւ նոյն օրը դուք պատասխան կը ստանաք:

Գործողութիւնը յաջողութեամբ կատարելու եւ երկար ժամանակ այդ միջոցը շահագործելու համար, մի բան միայն կարեւոր է – գաղտնապահութիւն\*, ուրիշ ոչինչ, պէտք է իմանան մէկ կամ երկու հոգի:

Եթէ կարեւոր եւ հնարաւոր բան էք գտնում, դուք մի քանի զոյգ վերցրէք եւ վստահելի մարդու մօտ բազմացրէք. ես հոս արդէն սկսել եմ. եթէ այդտեղ էլ վարժուէն, կարելի է փոխանակել եւ սկզբնական փորձեր անել:

Սրա մասին յատուկ գրականութիւն կայ, եթէ ուզում էք գոնէ էնսիգլոպէտիկ<sup>7</sup> բառարանի մէջ եղածը ուղարկեմ ձեզ, որով կարելի է կանոնաւոր կերպով առաջնորդել: Սա հնարաւոր եւ լաւ միջոց է, աշխատենք ձեռքից բաց չթողնել: Բազմացնելու համար հարկաւոր է մի քանի զոյգ վերցնել, փակ պահել մինչեւ որ ճուտեր հանեն, եթէ հանեցին, տեղի հետ կը վարժուեն եւ էլ չեն խուսափի, միայն աշխատելու է լաւ տեսակները վերցնել:

Աւելի քան երկար գրեցի, թէեւ այնպիսի նիւթ էր որ աւելի կարելի էր գրել. եթէ գործնական գտաք, ապա[գա]յում էլի կարելի է գրել մի քանի բնորոշ կողմերի մասին:

Արտուրը<sup>8</sup> կը գրի իւր Սարուստան գնալու մասին. առայժմ ես կը մնամ հոս, աւելորդ եմ համար[ում] գնալ Մինարէթ կամ Վրէժ<sup>9</sup>, որովհետեւ այստեղ աւելի մօտ կը լինեմ եւ յաճախ կարող եմ մտքեր փոխանակել այն խնդիրների մասին, որ ապագայում պիտի լինի իմ զբաղմունքների առարկան:

Ինչ եւ իցէ առայժմ այսքանը, բարի եղէք անծանօթ ընկերներին ընկերական ողջոյններ հաղորդելու, յայտնեցէք որ իմ եւ ընկերներիս իղէալն է իրենց մօտ լինել...

Յարգանքներով՝  
ԱՐԱՄ

1904 թ. 1-ին դեկտ.

Մենաւոր

- 1.- Ծայրը փանփուշտն է:
- 2.- Սարուստանը ծածկանունն է Կովկասի, որու տարածքին կը գտնուէին 10 Կեդր. կոմիտէութիւններ:
- 3.- Խմորը վառօդն է, խնձորը՝ ռումբ, նոնակ:
- 4.- Այսինքն՝ քիւրտ փոխադրողները չեն շահագրգռեր:
- 5.- Ծրագիրներ:
- 6.- Յիշեցնենք որ հոս եւ այսուհետեւ մէկ աստղանիշ կրող բառերը բնագրին մէջ գրուած են թւանշային գաղտնագրով:
- 7.- Հանրագիտարանի:
- 8.- Արտուրը կարճ ժամանակով կուս. գործիչ էր Ատրպատականի մէջ:
- 9.- Միւնարէթը ծածկանունն է Մալմաստի, Վրէժը՝ Թաւրիզի:



4

Ձեռագիրը թուական չի կրեր ինչպես եւ ստորագրութիւն. կը գտնուի Ատրպա-տականի Կ. կոմիտէութեան 1904 թ. թղթածրարին մէջ: Վերջին էջին կայ յաւել-ւած Վարդան Շահպազի կողմէ, նոյնպէս անթուակիր: Ամենայն հաւանականու-թեամբ դեկտ.ի գրութիւն է:

Սիրելի Մալխաս,

Շտապում եմ պատասխանել նամակիդ, շտապում եմ որովհետեւ իսկապէս հե-տաքրքիր բաներ շատ կան:

Սկսեմ իմ խոստովանելից. Սիրելիս! Ես ոչ ոքի դրա[մա]կան խոստում չեմ տւել, այլ ծրագիր եմ կազմել եւ գրել քեզ եւ ընկերներին իրագործելու պայմանների մա-սին կարծիք յայտնելու եւ ըստ այնմ վարւելու. նոյնը գրել եմ եւ Վրէժ. միայն Աւե-տարանում, ինչպէս Փայլակն<sup>1</sup> է գրել, ես դրա[մա]կան խոստում եմ արել ամէն մի ոտքին<sup>2</sup> մի թուման տալու համար. այո՛ խոստացել եմ եւ ուրանալու կարիք չունեմ. ասա՛ խնդրեմ մեր մարդկանցից որ մէկը Մենաւոր գալով դրանից էժան է նայել: Գալով դրամին, ես ինքս իմ ճանապարհի դրամից այնտեղ մի ոսկի եմ թողել, իսկ այս օրերը Ֆարհադի<sup>3</sup> հետ կրկին երեք ոսկի եմ ուղարկել. յոյս ունեմ որ այս քանի օրը 10 ոսկու չափ էլ կ'ուղարկեմ. է՛հ լաւատեսութիւնը լաւ բան է, բայց երանի թէ լաւատես լինէինք. վերջապէս ինչո՞վ են մեղաւոր Մ[եծ] Ք[աղաք]ի<sup>4</sup> ընկերները երբ նրանց ես եւ դու նամակ գրեցինք դրամի համար, նրանք 500 ուռբլի ուղարկեցին. նրանք շատ [լաւ] գիտէին թէ մենք պարտքեր ունէինք, կամ Վրէժ<sup>5</sup> գնալու համար ահագին ծախս է հարկաւոր: Ինչ եւ է. ես ինչպէս գիտես Սրգաստան<sup>6</sup> դրամ ունեմ. այս օրերը սպասում եմ. ստանալուց՝ անմիջապէս մի զգալի մասը կը յատկացնեմ Մենաւորի<sup>7</sup> գործին: Դու այդտեղից հեռագրիր որ եթէ իմ դրամները չեն ուղարկել, եթէ հնարաւոր է հեռագրով փոխադրեն: Է՛հ ինչ անեմ, ես շատ [լաւ] եմ հասկա-նում, որ Սարուստանի մեծապատիւները մի փոքրիկ կոտորածից գլուխը կորցնելու են եւ այդպէս ապուշ դրուլթեան մէջ ընկնելու: Եթէ այդքան հին փորձած ուժե-րով ու այդքան յարմարութիւններով եւ դիւրութիւններով չեն կարողացել խուսա-փել, կամ պատւաւոր դուրս գալ այդ կրիտիկական դրուլթիւնից, մենք ինչ հողը տանք գլուխներուս, որ ամէն ըրպէս նոյն վտանգի մէջ ենք եւ այն էլ այս ուժերով եւ յարմարութիւններով: Թող նրանք այդ դրուլթիւնից դաս առնելով մի քիչ էլ մեր դրուլթիւնը հասկանան:

է՛հ, սիրելիս! Ցաւում եմ որ այդ մարդկանց շնորհիւ գծերը թերեւս վտանգւեն: Բայց արդէն ուշ է, որովհետեւ վերջին մարդը երեք չորս օր է որ դուրս է ելել. հնա-րաւորութիւն չկայ յետ դարձնելու. ընկերները հաւատացնում են որ այլ դրուլթիւն չկայ: Այլեւս ազգերի մեծ գաղթականութիւնը կը դադարի այդ գծով...

Հարցնում ես Բարձր[աւանդակ] կամ Դուրան<sup>8</sup> գնալու յարմարութիւն կը լինի

ամիս ու կէս վերջը: Այստեղից մի շարք յարմարութիւններ մինչեւ հոն կարելի է ստեղծել. բայց հարցը նրանումն է թէ, մինչեւ հոս հնարաւոր է անվտանգ գալը. եւ երկրորդ մի մոռնաք որ այնտեղ Սարհաղը<sup>9</sup> եւ ընկերները սարսափելի դրութեան մէջ են եւ խիստ հետապնդումների ենթակայ, ու ամենագլխաւորը՝ դրամական տագնապի տակ. ուղղակի արտասահմանի ընկերների արածը Սարհաղի վերաբերմամբ դաւաճանութիւն է. մի կողմից նրան գովում էին որ այդքան զոհողութիւններով ու դժւարութիւններով վճռել է մնալ եւ միտիթարել ժողովուրդը, իսկ միւս կողմից թողնում են խեղճին ի սաստ ճակատագրի: Հեշտ բան է տեղեկագրի մէջ գրելը — «մեր ընկերներից Սարհաղը մնալու է Բարձր[աւանդակ] եւ գաղտնի հսկելու է բաշխուելիք դրամի եւայլն...»: Իսկ իրեն ո՞վ պիտի դրամ տայ, այդ Ալլահը գիտէ: Եթէ երբեւիցէ Սարուստան ընկնես, այդ կէտը չմոռանաս. մի լաւ կը ներկես մանաւանդ Ջրաբերդցոց<sup>10</sup>...

Է՛հ մեր դրութիւնը մի առանձին բան չէ ներկայացնում. մի կողմից խուզարկութիւնների լուր ենք լսում, միւս կողմից ոչինչ չի լինում. առայժմ անորոշ դրութեան մէջ ենք, տեսնենք վերջերնիս ինչ կը լինի:

1.- Փայլակ – Ռուբէն Դերձակեան (1870-1915): Մասնակից Կուկունեանի արշաւախումբին. Միպերիա քարտուած, այնտեղէն փախուստ տուած եւ իբրեւ գործիչ հաստատուած էր Ատրպատական:

2.- Իւրաքանչիւր երթին, փոխադրութեան:

3.- Ֆարիադ – ծածկանունն է Սարգիս Օհանջանեանի (1869-1918), Ատրպատականի հին գործիչներէն:

4.- Մեծ Քաղաքը Թիֆլիսն է. այս պարագային՝ Արեւելեան քիւրդն:

5.- Վրէժ – Ատրպատականի Կեդր. կոմիտէ. այս պարագային՝ Թաւրիզ քաղաք:

6.- Մրգաստան – կուս. ծածկանունն Երեսանի շրջանի:

7.- Մեմաուր – Ս. Թաղի վանք:

8.- Բարձրաւանդակը՝ Տարօն եւ Մասուն միասին. Դուրանը Տարօնն է:

9.- Սարիադ – Գեորգ Չաուշն է (Աղամեան-Ղազարեան, 1870-1907). 1904 թ. Մասոնյ ապրւստամբութենէն ետք, Անդրանիկի եւ միւս ընկերներուն հետ անցած էր Վասպուրական, ապա վերադարձած Մասուն:

10.- Ջրաբերդը Կարսն է:

Միրելի Մալխաս<sup>1</sup>!

Ստացանք ձեր ուղարկած իրերը, շատ շնորհակալ ենք, որ այդքան բարի էք եղել մեզ համար լաբ-լաբու եւ քարէ նուշ ուղարկել, ոչինչ դրանք Պարսկաստանի սիււպ-րիզներ են.— Արտուրը այնքան շտապում եկաւ որ չկարողացայ ինչ հարկաւորն է գրել. առհասարակ շատ բաների դէմ բողոք ունեմ. ամէնից առաջ նա կանոնաւոր հաշիւ չտեսաւ ոչ նիւթականի եւ ոչ ռազմականի: Ապրանքները երէկ հանել տուի մաքրելու համար, իսպառուակ դրուածեան մէջ էին. ես չգիտեմ թէ սա ինչ տեսակ ապրանք պահել է. թիւրքն էլ այդպէս չէր անել ինչ արել ենք մենք. վարդապետը<sup>2</sup> կը պատմէ.— Արտուրը, ինչպէս կը տեսնենք հաշեմատեանից հոս եղած դրամները հաւաքել բերել է հետը. ինձ մօտ եղած 4 լիրան էլ ինդրեց, չէի կարող մերժել որովհետեւ չգիտ[է]ի հաշիւների մասին...

Հաշեմատեանից կը տեսնէք ինչ որ հարկաւոր է, միայն այսքանը իմացէք որ հոս թողել էր 36 դրան, այն էլ պարտքեր կար մանր-մոնր, նրանք ծածկեցի. այնպէս [որ] ոչ մի կոպէկ դրամ չկայ. իմ տրամադրութեան տակ եղած փողերն էլ շուտով կը հատնեն, որովհետեւ Արտուրը Մակուում շորեր էր կարել տուել, կամայ թէ ակամայ պիտի վճարեմ...

Դրա վրայ աւելացրէք եւ թոմասի<sup>3</sup> չորս ոսկի պարտքը, այն ժամանակ պատկերը կատարեալ կը լինի. թէ ինչպէս պիտի վարւել այսուհետեւ առանց փողի, այդ էլ թողնում եմ ձեր բարեխղճութեան...

Ես հիմա չգիտեմ ինչ պիտի անեմ հոս. Կոմսը գրել էր փոխադրութեան մասին, իսկ դուք պնդում էք որ անհնարին է. ի՞նչ պիտի անել... Գրում էք որ ես ամբողջ ձմեռը մնամ հոս. առանց որոշ գործի հոս մնալ աննպատակ է, այնպէս որ ի նկատի ունեցէք... չմոռանաք այստեղի համար մի կանոնաւոր մարդ ճարել մշտական մնալու համար. ես այդ մասին գրել եմ Կովկաս, եթէ մարդ լինի թող գրեն. եթէ Արտուրը չէ գալու կամ ամբողջ սեզոնը չէ մնալու, լաւ կը լինի որ ուրիշին ի նկատի ունենաք. ես առաջի յարմարաւոր դէպքում անցնելու եմ. այնպէս որ իմ վերաբերմամբ մեծ յոյսեր չդնէք... Եթէ յարմար էք տեսնում գրեմ Կովկաս նորից, հոն ես մարդիկ ունեմ ի նկատի, նրանցից մէկին ուղարկեն, եթէ ոչ դուք գիտէք, ինչպէս ուզում էք վարւէք:

Թերթեր եւ նամակներ եթէ լինեն շուտ ուղարկէք. հո՛մ մոռացայ գրել ձիւլ մասին. առանց ձիւլ չգիտեմ հոս ինչպէս եօլայ գնանք. բոլոր ձիւլները հաւաքել էք հող եւ այստեղ երեսի վրայ թողել. գիւղում էլ ձի չկայ, ուրեմն հոս անպատճառ ձի

1.- Մալխաս – Բուն անունով Արտաշէս Յովսէփեան (1877-1962), Ամերիկայէն եկած. այդ օրերուն հաստատուած էր Խոյ:  
 2.- Խօսքը Ս. Թադէի վանահայր Գեորգ վրդ. Նալպանտեանի (1857-1915) մասին է, ծանօթ Ըն-ծայր ծածկանունով:  
 3.- Թոմասը Ս. Թադէի վանքի հայ զինուորներէն էր:

է ուղարկելու.— Հակառակ պարագայում դրուժիւններնիս յիմար կը լինի: Եթէ ան-  
ցագիրս գալու լինի շուտով ուղարկէք...

Յարգանքներով  
ԱՐԱՄ

1904 թ. 5 դեկտ., Մենաւոր

Յ. Գ.— Կօշիկներս չմոռանաք ուղարկելու:

Փաստ. 468-1

## 6

Սիրելի Կոմս!

Ամսուս մէկին ստացայ ձեր դեկտ. 14 թւակիր նամակը. շատ ցաւում եմ որ չյա-  
ջողուեց ձեր գալը. իսկապէս Դ[աշնակցութեան] Խ[որհրդ]ում<sup>1</sup> պիտի քննէր մի  
ծրագիր, որ վերաբերուում էր Շամի շրջանին<sup>2</sup>: Կ'արժէր որ դուք ներկայ լինէիք.  
ինձ պատուիրած էր այդ առթիւ ձեզ հետ խօսել, բայց դժբախտաբար ես էլ չկրցայ  
գալ: Այժմ գրելը ուչ է եւ մանաւանդ անօգտակար, այնպէս որ դուք շտապեցէք տե-  
ղեկագիրը հասցնել շուտով. եթէ Մենաւորի գծով ուղարկէք շատ ժամանակ կը շա-  
հէիք, որովհետեւ այստեղից ուղղակի Մ[եծ] Ք[աղաք]<sup>3</sup> կ'ուղարկէի առանց Աւա-  
րայր<sup>4</sup> մտնելու. եթէ հնարաւոր է արէք: Ինչպէս երեւում է երկրորդ նամակս չէք  
ստացել, որի մէջ գրել էի մեր գալու մասին. ես էլ նոյն կերպ եմ մտածել ինչ դուք  
էք առաջարկել, այնպէս որ անհամբեր սպասում եմ օրեր բացելուն<sup>5</sup>. միայն դուք  
գրեցէք, թէ ինչ բանի մեծ կարիք էք գգում, ես ըստ այնմ պատրաստութիւն տես-  
նեմ. այժմ յարմարութիւններ կան, յետոյ կարող է ուչ լինել: Աւարայրում ստացել  
է փաթեթ եւ պարագաները, առաջին հնարատրութեան դէպքում կ'ուղարկեմ,  
երկրորդ նամակում գրել էի աղաւնի... Ի՞նչ մտածեցիք, պատասխանեցէք\*\*<sup>6</sup>:

Դէ՛հ ուրիշ նորութիւններ գոնէ մեզ մօտ չկայ. Սարուստանից դեռ նամակներ  
չեմ ստացել, իսկ ընկերները կարծէք մեր մասին մոռացել են, բոլորը Վրէժ են գնա-  
ցել, երեւի գիտէք, որ այնտեղ կը լինի շրջանային խորհուրդ\*\*<sup>7</sup>: Արտուրը ուղիղ մի  
ամիս է գնացել է Սարուստան, այնպէս որ հոս մենակ եմ: Վերջին նամակով (երկ-  
րորդ) ուղարկել էի էլի մի կոմայնկա\*\* չգիտեմ ստացաք թէ ոչ, ինչպէս երեւում [է]  
հէչ երկրորդ նամակս չէք ստացել:

Արտուրի համար ուղարկած իրերը դեռ չէ ստացւած, ինչպէս երեւում է Կիրճ<sup>6</sup>  
է մնացել, նոյն էլ Մալխասի տարակերկա-ն\*\* [ծխախոտատուփ] էլ չենք ստացել.—  
որի հետ էք ուղարկել չգիտենք:

Բէկի համար ստացել ենք ձայնագիր, սպասում եմ -----\*\*, կարծում եմ այդ  
հանգամանքից պիտի օգտուել եւ գոնէ բաւական տեսա\*\* ուղարկել. դուք էլ մտա-

ծեցէք դրա մասին. փոխադրութեան մասին աւելի լաւ է մեզ գրէք: Աւարայր գնացած նամակներից հէջ տեղեկութիւններ չեն ուղարկուում, այնպէս որ անորոշ դրութեան մէջ ենք եւ չգիտենք ինչ պիտի անենք. ահագին անելիքներ ունենք, միաժամանակ ունենք նախապատրաստութիւններ տեսնելու, իսկ մենք հոս կենում ենք անգործ...

Նամակաբերները պատմում են իրենց ուսուցչի մասին\*\*\*, որ մտածում է ինչ-որ կուսակցութեան մասին\*\*\*. աւելի լաւ կը լինէր նրա պոչը խուզել. Ջրաբերդում մի շատ եռանդոտ ընկեր ունենք կիսաինտելիգենտ, ինքն էլ Շամից է. մտածում եմ նրան կանչել եւ ձեր համաձայնութեամբ վերոյիշեալի տեղը դնել. այս մասին գրեցէք...

Ի՞նչ դրութեան մէջ է Իշխանը ! Բարեւներ ուղարկէք նրան. ասում են, որ Արմենակը ազատել է, ճիշտ է\*\*:

Ընկերական ողջոյններ բոլոր ընկերներին, շնորհաւորում եմ բոլորիդ նոր տարին:

Ձեզ մօտ երկու հնչակեան են եկել, ի՞նչ են անում\*\*:

Ընկերական բարեւներով  
ԱՐԱՄ

1905 յունւար 1  
Մենաւոր

1.- Դաշնակցութեան Խորհուրդը կուսակցութեան գերագոյն մարմինն էր, բաղկացած չորս պատասխանատու կեդր. կոմիտէներու (Պոլիս, Կիլիկիա, Տարօն-Սասուն, Վասպուրական), ինչպէս նաեւ Կովկասի ինքնապաշտպանութեան մարմնի եւ Արեւելեան ու Արեւմտեան քիւրդներու ներկայացուցիչներէն: Ընդի. ժողովներու միջեւ ինկող ժամանակամիջոցին կը գումարուէր կարեւորագոյն որոշումներ կայացնելու համար: Այդպիսին էր 1905 թ. Փետրուար-Ապրիլ կայացած Դաշն. Խորհուրդի Ժընեւի նստաշրջանը, ուր մշակուեցաւ կովկասեան Նախագիծը:  
2.- Շամ, Շամիր – կուս. ծածկանուն Վան-Վասպուրական Կեդր. կոմիտէութեան:  
3.- Մ. Բ. – Մեծ Բաղաք, կուս. ծածկանուն Թիֆլիսի, այլապէս նաեւ Արեւելեան քիւրդի:  
4.- Աւարայրը Խոյ քաղաքն է:  
5.- Օրեր բացուելուն, այսինքն՝ ձմեռնային եղանակի աւարտին կամ եղանակի բարելաման:  
6.- Յիշեցնենք որ զոյգ աստղանիշ կրող բառերն ու նախադասութիւնները, հոս եւ այսուհետեւ, քննարկին մէջ ռուսատառ են կամ ռուսերէն:

**Ջրաբերդի<sup>1</sup> ընկերներին**

**Սիրելիք՝**

Յարութիւնը<sup>2</sup> գալիս է ձեզ մօտ մի քանի օրով. Կոմսը գրել է թէ անպատճառ ծանօթացէք էլեկտրական մեքենայի հետ. ուղարկում եմ ծանօթանալու: Ստեղծեցէք բոլոր յարմարութիւնները. հակառակ պարագայում ուղարկէք Մեծ Քաղաք, այնտեղ շուտով ծանօթանալու եւ խկոյն վերադառնալու պայմանով:

Աստուծոյ խաթեր, մի քանի պահանջների անպատճառ բաւարարութիւն տուէք, մանաւանդ մի քանի հասարակ տեսակի ռեվոլւ[ւ]ներ եւ ինձ համար մի տասնոց 200 ծայրով: Սրանք անպատճառ արէք:

Մնացածը ինքը կը պատմէ, որին կարծում եմ վստ[ահ]ութեամբ կը վերաբերւէք: Ի հարկէ չէք զլանայ ճանապարհածախս տալ, եթէ իւր փողերը եկած չլինի:

Ասացէք [?]մի քանի անհրաժեշտ ..... հայերէն գրած խորհուրդներով ..... ու .....<sup>3</sup>

Մնացածը ինքը կը պատմէ բերանացի. երկար չեմ կարող գրել որովհետեւ շտապում եմ:

Եթէ «Աղաւնու փոստը» յօդուածը թարգմանէք ուղարկէք շատ լաւ կը լինի: Նորութիւններ գրեցէք:

Թերթերի տեղափոխութեան մասին մտածեցէք. ահագին թերթեր հաւաքում է եւ աւելորդ տեղը փչանում:

Ես ամենաուշը փետր. 1-ին կ'երթամ:

Համբոյրներով՝  
**ԸՆԿԵՐ**

1905 թ. յունւար 5-ին

**Մենաւոր**

Յ. Գ.— Կոմսը վերջին նամակով գրել էր որ փող չկայ. յայտնեցէք Մ[եծ] Ք[աղաք] փող փոխադրեն:

Մեզ հետներս վերցնելու համար մի քանի լիրա ուղարկէք:

**ՆՈՅՆ**

1.- Ջրաբերդը Կարսն է:  
2.- Յարութիւն Միրաքեան (1878-1908), բնիկ տարօցի, Ամերիկա գաղթած եւ ծառայած բանակի մէջ: Վերադարձած է Կովկաս եւ Արամի ընկերանալով անցած Ատրպատական, աւելի ուշ Վասպուրական:  
3.- Տողին վրայ մելանը տարածուած ըլլաով, տեղ-տեղ անընթեռնելի:



**Սիրելի Կոմս!**

Ամսուս 4-ին ստացայ Սահակի ձեռքով ուղարկած ձեր դեկ. 24 թևակիր նամակը եւ դրա հետ մի քանի պատմական հնուածիւններ — պ. Տիգրանի<sup>1</sup> հոկտեմ. թևակիր նամակները, որոնք ուղղւած էին Արտուրին եւ բովանդակութեամբ ինչպէս ասացի միայն հնագէտների հետաքրքրութեան առարկայ կարող է դառնալ... Բոլորը կիրճեցոց<sup>2</sup> լրբութիւններն են. ամիսներով նամակները եւ ապրանքները հոն քնացնում են, թէեւ ձեր նամակներից երեւում է որ շուտով հասցնելու համար կարգադրութիւններ արած էք, բայց երբ բացատրութիւն պահանջեցի աւետարանցիներէն<sup>3</sup>, պատճառաբանում են, թէ դուք առհասարակ պատւիրել էք նամակները բերել մինչեւ Կիրճ, ձգել հոն, բերեն չբերեն իրենց գործը չէ: Փոխադարձաբար նոյնը եւ կիրճեցիք են ասում: Ես այս անգամ պատուիրեցի, որ աւետարանցիք եւ կիրճեցիք նամակները առանց իրար հրամայեցէք անելու, բերեն մինչեւ հոս, այլապէս 6 օրից աւելի ուշացած նամակների համար խստիւ պիտի պատժեն: Փոխադրութիւն այժմ էլ հնարաւոր էր մինչեւ Աւետարան, բայց հոս համարեա ապրանքներ չկան, եւ մեծապատիւները պատւիրել են ինձ ձիւնով տեղափոխութիւն չանել... Ես վաղը մի 10 օրով կ'երթամ Աւարայր<sup>4</sup> մի քանի կարեւոր խնդիրների համար խօսելու, մանաւանդ խմորների եւ խնձորների տեղափոխութեան մասին հոգ տանելու: Գոնէ ահագին խնձոր ու խմոր կը տեղափոխէինք, եթէ հոս լինէր, մինչեւ Աւետարան իսկ այնտեղից այդ կողմը ասում են հեշտ է... Ի դէպ Յ-րդ նամակումս էլ գրել էի Աւետարանի ուսուցիչ գուրնաչու<sup>5</sup> մասին (նրանք Կովկասում այժմ այդ անունով են կոչւում). նա հոն լրբութիւններ է անում եւ գիւղը երկու մասի է բաժանել. այդ հրէշին պատւիրել եմ կամ այդ կամ այս կողմը թռցնելու: Նամակներ է գրում հոս մեր գիւղի Ռէսին, եւ կարծէք հոս էլ օջախ, բայց օպոզիցիայի օջախ — հիմնելու նկատումներ ունեն: Յայտնեցէք նրանց մեծապատիւ ներկայացուցիչներին, որոնք վերջերս եկան միայն — որ եթէ այդ ընթացքով գործ սկսեն եւ կատարեն, մեր սիմպատիան<sup>6</sup> ոչ մի պարագայում նրանց կողմը չի կարող լինել. ոչ միայն այդքան պլատոնական վերաբերմունք ցոյց կը տանք, այլ եւ բացարձակ կերպով նրանց բոլոր գործողութիւնները կ'արգելենք. կորչի դիմակը\*\* գառան մորթով մտնողներից են. մեղքը մերոնցն է որ նրանց երես տւին եւ յարմարութիւններ ստեղծեցին ձեր շրջանն էլ մոլորտառելու...

Հեռագիր ուղղակի ես այդտեղից ուղարկեցի Սարուստան...

Մեր գալը առայժմ անհնարին է ձիւների շատութեան պատճառով: Սահակին<sup>7</sup> կը պահեմ մինչեւ մեծ պահքը\* մեզ հետ գալու համար, իսկ եթէ մեծ կարիք կայ գրեցէք իսկոյն ճանպեմ, թէեւ մի ամսից աւելի չենք ուշանայ հոս... կը հետեւեմ ձեր խորհուրդներին գալուց:

Գրել էիք թէ խմորային արհեստին ծանօթ լինել — չեմ հասկանում: Գիտէք միայն լեցնել\* թէ ելկտրական պատարիաներով\* էլ գիտէք:

Պիտի իմանաք որ արհեստին ծանօթ լինել նշանակում է – որ եթէ նիւթերի բաղադրութիւնը լինի, կարող է նոր խմոր պատրաստել – բայց սա թէեւ մեզ համար անգործնական բան է, որովհետեւ ինչպէս ինձ թւում է հող նիւթեր ճարելը դժուար է. մնում է օգտել պատրաստի եղածները. իսկ օգտել նա կարող է շատ յաջող կերպով, որովհետեւ [եւ] լաւ ծանօթ է եւ գործնականապէս էլ փորձած. ինչ վերաբերում է թէ ելեկտրական պատարիաներով\* էլ գիտէ, այդ գործիքին էլ ծանօթ է եւ գործնականապէս էլ փորձած է. գործիքը կար Սրգաստանում, պատելիքը էինք մեզնից յետոյ ուղարկել Աւարայր. եթէ ուղարկած չլինին, հէնց նոյն մարդը կ'ուղարկեմ, կ'երթայ հոն վերջին անգամ կը փորձէ, հոսանքի մեծ պաշար կը վերցնէ եւ մինչեւ մի ամիս հոս կը գայ...

Գրում էք թէ ձեզնից ո՞վ ինչ կարող է անել. առանձին նամակով գրել էի ընկերներին մասին, իսկ իմ մասին պիտի գրէին Մ[եծ] Ք[աղաք]ից<sup>8</sup>. միթէ մինչեւ հիմա ոչի՞նչ չեն գրել. դէհ, ինչ եւ իցէ, կը գանք ինչ որ ձեռքովս կը գայ կ'անեմ... գոնէ մեծ ճանապարհի վրայ քար կը փշրեմ:

Դրամի մասին կը գրեմ Սրգաստան. ի դէպ իմ գալու օրերը մրգաստանցիք ասում էին, թող պաշտօնապէս Կոմսը մեզ հետ կապուի, Մ. Ք.-ի համաձայնութեամբ մենք բոլոր պահանջներին ժամանակին լրացում տանք, եւ ի գուր տեղը այս եւ այն կողմը չընկնի: Թէեւ ես առարկեցի մրգաստանցիներին յատուկ այդ պաշտօնականութեան մասին, բայց էլ լաւ կը լինի, որ այդպէս մի բան անէք: Սարուստանից շատ քիչ դրամ է գալիս Վրէժ, հազիւ սրանք իրենց ծախսերը ծածկեն:

Ստացայ Աւետարանցի Մարգարից Մայիսսի տուփը եւ Արտուրի շալը. մնացած իրերը դեռ չէ եկել:

Պարոն Տիգրանին կը յայտնէք որ Արտուրը հոս չէ, այնպէս [որ] նամակներում եղած հարցերին առայժմ ես չեմ կարող պատասխանել, որովհետեւ այդ հարցերին մեծ մասամբ անծանօթ եմ: Իսկ ինչ վերաբերում է թէ Կովկասում ինչ նորութիւններ կան, այդ մասին մի այլ նամակ կը գրեմ, որի մէջ կը գրեմ մեր շրջանների վեր-

---

1.- Տիգրան – ծանօթ նաեւ կողբեցի Յարութիւն անունով. իսկական անունը Յարութիւն Տէր Սկրտիչեան (1880-1915). անդամ էր Վասպուրականի Կեդր. կոմիտէին:

2.- Կիրճ – ծածկանունն է քրտաբնակ Քեաղուկ գիւղի, Վանի վիլայէթի Բերկրի գաւառակ. խօսքը կը վերաբերի փոխադրութեան գործով վարձուած քիւրտերուն:

3.- Աւետարան – ծածկանունն է Վանի Բերկրի գաւառակի Խաչան գիւղին:

4.- Աւարայր – ծածկանունն է Ատրպատականի Խոյ աւանին:

5.- Չուռնաչի – հնչակեաններուն տրուած անուն, երեւի իրենց պաշտօնաբերք «Հնչակ»ի հետեւողութեամբ:

6.- Համակրանքը,

7.- Սահակ, Մեւանցի Սահակ, Վանէն եկած յատկապէս Արամին ընկերակցելու համար. 1896ի կոտորածին քրտացած, Ջաֆար անունով ծանօթ:

8.- Մեծ Քաղաք – ծածկանունն Թիֆլիսի: Հոս՝ Արեւելեան բիրոյէն իմաստով:

9.- Բժիշկը այստեղ գործածուած Ռ. Դերձակեանին (Փայլակ) համար: Ռ. Դ. մասնագիտութեամբ դեղագործ էր, ուրեմն զինք կը կոչէին նաեւ Բժիշկ:

Ղին օրերի տրամադրութիւնը, պատերազմի առթիւ ներքին խռովութիւնների բնա-  
ւորութիւնը եւ հետեւանքները: Գրեցէք թէ ինչ նիւթեր է ձեզ համար հետաքրքիր,  
ես էլ ըստ այնմ ձեզ տեղեկութիւններ տամ:

Յարգանքներով  
ԱՐԱՄ

1905 թ. յունւար 6-ին  
Մենաւոր

Յ. Գ.— Միայն նոր իմացայ որ ձեր անցեալ նամակ բերող Աւետարանցի Յակով-  
բը նամակներ է բերել զուրնաչիներից գիւղի Ռէսին. վերջինին այսօր կանչելու եմ  
բացատրելու. միայն դուք ներկայացուցիչներին յայտնեցէք, որ նրանք Արտուրին,  
Բժշկին<sup>9</sup> եւ Մայիսասին հետ պայմանաւորուել են գատ օջախ չհիմնել, հակառակու-  
թիւններ չսերմանել եւ նամակները մեր միջոցով փոխադրել:

Այժմ խոստումներից ոչ մէկը չէ կատարոււմ. թող իմանան որ այդպիսի ընթաց-  
քով գործ կը փչացնեն, իսկ հակառակ պարագայում իրենց նամակները այս գծով  
չեն տեղափոխուի...

ՆՈՅՆ

Ահա այս Գրքուստի տարբերակ տեսնուած դասերը եւ Արտուրի շարքը:  
Ընդամենը թիւնք զիստ իմ:

Ըստու տարբերակը չիցարուելի առ Գրքուստի հաւ չի, առջեւս օրնաչիներու  
եղանակայիտեւ անուցիտեւ չիտ կարգայ կարգաւորուելու արտօնելու այս կար-  
գիտիտեւ թիւնքու տեսնուած է: Իսկ ձեր վարկերու եւ թիւնքու ձեզ-  
նորուութիւնը կաւ, այս ըստիտեւ առ անոն չիցարուելու: Կրնալիտեւ յար-  
գիտելիտեւ վարկի տեսնուածից, Գրքուստի առջեւ չիցարուելու  
Թուականութիւնի վարկերուց: Գրքուստի թիւնքու ձեզ չիցարուելու  
եւ չիցարուելու տեսնուածիտեւ եւ չիցարուելու չիցարուելու չիցարուելու:

Կարգաւորուելու Արտուր

1905 թ. յունւար 6-ին  
Մենաւոր.

### Վրէժի [Ատրպատականի] Կ. Կոմիտէին

Սիրելի ընկերներ!

Աւարայրում լսեցի որ ինձ կանչել էք Վրէժ մինչեւ գարուն մնալու. ցաւում եմ որ այսուհետեւ անկարող եմ ընդունել ձեր առաջարկը, որովհետեւ Կոմսի հետ համաձայնութեան գալով մտադիր եմ փետրւարի սկզբներին ներս մտնել... Իսկ թէ ինչն<sup>օ</sup> այս երկու ամբողջ ամիսը ես Վանքում անգործ ընկայ, այդ խնդրում մեղաւորը ես չեմ այլ ընկերները, որովհետեւ երբ ես Մենաւորից գրել էի Մալխասին թէ մնում եմ այնտեղ ամբողջ ձմեռը,— Մալխասը պատասխանել էր թէ — շատ ուրախ եմ որ վճռել ես մնալ Մենաւորում, սպասիր մինչեւ Վրէժից կարգադրութիւն կ'անենք...

Այսպէս կամ այնպէս իմ խնդիրը վերջացած համարելով կարիք եմ զգում մի քանի խօսք ասել Մենաւորի գործերի շուրջը:

Անշուշտ գիտէք այն բոլոր յարմարութիւնները որ ունեն Մենաւորի գծերը տեղափոխութեան համար. գլխաւոր պայմանը օտար տարրերի աջակցութեան մէջ է. սա մի խնդիր է որի վրայ մեծ ուշադրութիւն է դարձնելու. մի կողմից սիրաշահելով այդ տարրերին, միւս կողմից էլ նկատի ունենալով որ այդ տարրերի տրամադրութիւնը մեծ մասամբ անտեւողական է լինում, ուստի պէտք է եղած ժամանակից օգտւել ամենալայն չափերով:

Գովելով հանդերձ Մենաւորի ընկերների եռանդուն գործնչութիւնը, չի կարելի ուշադրութեան չառնել մի քանի պակասութիւններ, որոնք այսպէս կամ [այնպէս] վնասում են տեղափոխութեան գործին... Ամէնից առաջ դուք, եւ Մենաւորում նստող ամէն մի ընկեր պէտք է համոզւած լինի, որ տեղափոխութեան գործը այդպիսի բացառիկ պայմաններով չէ կարելի լայն չափերով միմիայն պրոպագանդի ուժով ի կատար ածել, այլ խօսքով, միմիայն «ազգասիրութեամբ» տեղափոխութիւն չի լինի առանց նիւթական կանոնաւոր վարձատրութեան: Որովհետեւ այն հասարակութիւնը որ զբաղւում է այդ գործով դեռ գիտակցական զոհաբերութեան այդ չափը չունի, իսկ մինչեւ այդ աստիճանին կը հասցնենք, բանը բանից կ'անցնի. սովորական դրութեամբ, ազգասիրաբար տեղափոխութիւնը այդ կարգի մարդիկ անում են այն ժամանակ երբ ազատ են լինում եւ տնտեսապէս իրենք չեն վնասւում. չէ՞ որ դրանք մի առանձին տնտեսական ապահովութիւն չունեն, կամայ թէ ակամայ մատերի արանքով են նայում այն խնդրին որից քիչ չհա ունեն...

Ըստ իս ներկայ պարագաներում երբ մեր կազմակերպութիւնը նիւթականապէս կանոնաւոր ապահովւած է, կարծում եմ տեղափոխութեան, որ մեր գործի ամենազգայուն ճիւղն է, պէտք է արտակարգ ուշադրութիւն դարձնենք. հաւատացնում եմ ձեզ, եթէ անցեալ տարի ամէն մի հազար ծայրին մի լիրա (տաճկա[կա]ն ոս-

կի) վարձատրութիւն տրւէր, կրկնակին կը փոխադրւէր: Եղել է այսպիսի դէպք Արտուրի օրով՝ ձիով տեղափոխող սուրհանդակը 4000 ծայրը քցել առանց ապրանքի է վերադարձել մի 2-3 ուռբլու համար... գուցէ սա մի այնպիսի դէպք է որ պէտք է վերագրել ներկայացուցչի թուլութեան, բայց յամենայն դէպս այդ կարգի օրինակներ բացառիկ չեն...

Դուք գուցէ առարկէք որ մենք այդ իրողութիւնների մասին տեղեկութիւն չենք ունեցել եւ անկարող էինք ժամանակին շտապօրոյթ օգնութիւն հասցնել. մեծ սխալներից մէկն էլ այդ է, որ Մենաւորը ամսեկան գոնէ մի ընդարձակ տեղեկագիր չէ ուղարկում իւր բովանդակ գործողութեան եւ կարիքների մասին Վրէժի Կ. Կ[ոմիտ]էին. պակասութիւն որի վրայ լուրջ ուշադրութիւն էք դարձնելու եւ խօսքից գործի էք վեր ածելու:

Կարճ. Մենաւորում տեղափոխութիւնը այս տարի կանոնաւորելու համար պէտք է մտցնել, ներսի համար, կանոնաւոր վարձատրութեան սխտեմ:

Գուցէ դուք առարկէք որ Մենաւորում ահագին ծախս է եղել, ինչպէս հաշիւն է ցոյց տալիս. ցաւօք սրտի այդ հաշւեպահութիւնը այնքան խամ եւ անգործնական կերպով է տարւած, որ դժւար է կանոնաւոր դադափար կազմել, թէ ելքի ո՞ր տոկոսն է գնացել ներսի տեղափոխութեան գործին. եթէ վերջինը զատւած լինէր, շատ փառաւոր կերպով կը տեսնէիք որ մի շատ չնչին գումար է, իսկ մնացածը տեղական եւ ընկերների ծախսեր է...

Այս տարւայ տեղափոխութիւնը կանոնաւորելու պամար պէտք է ունենալ յատուկ Մենաւորի, այն էլ ներսի տեղափոխութեան համար որոշ գումար, 10-15 ատրրճանակներ առնուազը 50ական ծայրերով (տեսակի վրայ ուշադրութիւն չէ դարձնելու, որովհետեւ սուրհանդակները այդքան բարձր դադափար չունեն տեսակների մասին), չորս հատ ձի, կանոնաւոր այն էլ փալանած եւ մի քանի ուրիշ յարմարութիւններ որ տեղական գոյն են կրում եւ կարելի է Մենաւորի ներկայացուցչի հետ խօսել այդ առթիւ... Եթէ այս պայմանները ժամանակին ի կատար ածւեց, մանաւանդ դրամականի խնդիրը, հաւատացէք որ գործը կիսով չափ յաջողւած եւ ապահոված կը լինի...

Երեւակայում եմ որ այս տողերը կարդալուց պէտք է մի կուշտ ծիծաղէք եւ աւելացնէք որ այդ բոլորը մենք գիտէինք եւ այդ անիծեալ նիւթականի խնդիրն է որ մեզ կաշկանդել է եւ չենք կարողանում մեր ուզածը անել... Այդ պակասը լրացնելու համար միայն մի ճար կայ. գործերի ներկայ դրութեան մասին մի կանոնաւոր տեղեկագիր կազմել, մէկը ուղարկել Արեւմտ[եան] մէկը Արեւել. Բիւրոյին եւ պահանջել որ իրենց շրջանների Կ. Կ[ոմիտէ]ները կարգադրեն որ անմիջապէս նիւթական օգնութիւն անեն շեշտելով որ այդ փողերը ոչ թէ Վրէժի համար է, ինչպէս Մ. Ք.-ի ընկերներն են հասկացել, այլ Երկրի եւ Շամի... Իսկ եթէ առարկելու լինեն թէ Ընդ. Ժողովը այդքան գումար չէ յատկացրել Շամին, իրաւացի կերպով պատասխանելու էք որ Ընդ. Ժողովը չէր կարող նախագուշակել թէ Բարձրաւանդակի հարցը այդպէս շուտով կը վիժուի եւ կը մնայ Երկրում միմիայն Շամի շրջան... Իսկ եթէ Դ[աշնակցութեան] խորհրդին կանոնաւոր ընկեր ունենայիք, որ ծանօթ լինէր այս բոլոր պարագաներին, շատ բան շահած կը լինէիք. մեր քոռ բախտիցն էլ Կոմսի գալը ձիւների պատճառով արգելւեց...

Մի քանի խօսք էլ Մենաւորի ընկեր ներկայացուցիչների մասին. բայց կանխապէս ասեմ որ գրում եմ ոչ իբրեւ բամբասանք, այլ իբրեւ խորակտերիստիկայ<sup>1</sup>... Թէեւ Արտուրի խնդիրը վերջացած է, բայց աւելորդ չեմ համար[ում] մի քանի խօսք նրա մասին յայտնելու... Նա մոմենտի ազգասէրներից էր եւ աւելի շուտ անմահանալու իւր իշխանական կապրիզներէ<sup>2</sup> համար էր աշխատում քան գործի. ամենագլխաւորը՝ նա չունէր ոչ մի առաջնորդող գաղափար եւ չէր անցել ամենաչին յեղ[ափոխական] շկոյա<sup>3</sup>. Բնականաբար այսպիսի յատկութիւններով օժտած մարդը չէր կարող այդտեղ երկար մնալ եւ կանոնաւոր գործ կատարել. իսկ նրա օրով եղած գործի յաջողութիւնը վերագրելու է Վարդանի<sup>4</sup> եռանդին, որ կանոնաւոր հիմքերի վրայ էր դրել գործը, Շամի<sup>5</sup> մղումներին, որոնցով գործը ինքնաբայով<sup>6</sup> [էր] առաջ գնում. որի ժամանակ Արտուրը պրատակով<sup>7</sup> կազմողի դեր է կատարել, այն էլ շատ անչնորհք: Եթէ Երկրից եկած նամակները կարդանք [կը] տեսնենք որ նոյնիսկ տեղափոխած ապրանքների թիւը եւ ցուցակը կանոնաւոր չէ կազմել... որով տեղի է տւել ներսը շատ անգամ մեծ թիւրիմացութիւնների... իսկ նրա գործողութիւնների գլուխ գործոցը վերջին քայլերն էր եւ Սարուստան գնալը, որի մասին գիտէք, բայց առանց մի քանի մանրամասնութիւնների, որոնց մասին կարելու է համարում գրել, որովհետեւ նրա հետ վարւելու համար կարելու է այդ տեղեկութիւնները:

Մինչեւ գնալու օրը ճիշտն ասած ես չէի կարողանում ճանաչել նրան, թէեւ առիթներ կար ճանաչելու, բայց Աւարայրի ընկերների անտարբերութիւնը եւ ներողամտութիւնը ինձ չկեցրել էր... Հէնց այդ էր պատճառը որ ես էլ նրան մի քանի յանձնարարական նամակներ տուի Սարուստանի մի քանի ընկերների եւ մարմինների վրայ. ի միջի այլոց մի նամակով խնդրել էի Մրգաստանի ընկեր Ս[արգիս] Օհանջանեանից 100 ռուբլի յանձնելու, ինձ համար մի քանի բաներ գնելու: Սրա մասին ոչինչ չէք գրել, իսկ նամակ ստացայ որ նա վերցրել է, ուրեմն հարցրէք, թէ ի՞նչ է արել այդ 100 ռուբլին. յետոյ Մ. Ք.-ից խնդրել է ատրճանակներ, փոքրիկները, եւ մի մատուցէր ինձ համար եւ մի քանի ուրիշ իրեր. պէտք է տեղեկութիւն ունենալ Մ. Ք.-ից եւ ըստ այնմ վարւել... Լսեցի որ մի քանի ատրճանակ բերել եւ թողել է ջրի ափը<sup>8</sup>. խնդրում եմ ուղարկեցէք այդ ատրճանակները յատկապէս Մենաւոր սուրհանդակների համար. միայն պատւիրեցէք որ Մինարէթում եւ Աւարայրում չվերցրնեն...

Արտուրին շրջանից հեռացնելու ժամանակ գործ է դնելու որոշ զգուշութիւններ, որովհետեւ ինչպէս ասացի նրա համար սրբութիւն չկայ, մէկ էլ տեսանք «գուրնաչի» (հնչ[ակեան]) դառաւ եւ Մենաւորի բոլոր գաղտնիքները ու յարմարութիւնները ի չարը գործ դրեց, որոնց մասին ինքը լաւ գաղափար ունի: Այս բանի վրայ լուրջ ուշադրութիւն է դարձնելու, որովհետեւ նրանց Հաջի Յակովբը եւ Երուանդը, որ վերջերս մերոնց աջակցութեամբ ներս գնացին, արդէն սկսել են գծերի վրայ «գուրնաչիների» օջախներ հիմնել, այն էլ օպոզիցիայի<sup>9</sup> օջախներ... Մեղքը մերոնց է, այսքան խայտառակութիւններից յետոյ էլի գրկախառնում ենք եւ ընկերական համաձայնութիւններ փոխանակում... Մենաւորում էլ, յատկապէս գիւղի կեդտոտ ուսի ձեռքով ցանկանում են օջախ հիմնել. վերջերս սուրհանդակները նամակ էին բերել եւ յանձնել ուսին... Չգիտեմ թէ ինչպէս են վարւելու ընկերները,



բայց իմացէք որ եթէ անցեալի պէս մատերի արանքով նայենք այդ խնդրին, այդ գիծը կը փչանայ եւ նրանք փոխանակ իրենք գործ կատարելու, մեզ էլ կը խանգարեն, ինչպէս որ ամէն տեղ անուամ են...

Լսեցի որ Բժիշկին<sup>10</sup> ուղարկում էք իբրեւ ներկայացուցիչ Մենաւորի: Բայց մի երկու խնդիր կայ որ աչքից չէ փախցնելու. սկզբից ասեմ որ ես Բժիշկին բազմակողմանի չեմ ճանաչում, բայց յամենայն դէպս անհամեմատ խոհեմ եւ եռանդոտ է քան Արտուրը եւ կարող է գործերը նրանից լաւ վարել. այս բոլորը այնուամենայնիւ բաւական չէ: Ի նկատի է ունենալու եւ այլ հանգամանքներ: Փայլակը Մենաւորի համար որոշ չափով վտանգուած մարդ է եւ կարծում [եմ որ] երկար ժամանակ այնտեղ մնալ չէր կարող, որովհետեւ ամէն կողմից կը խօսեն, Սարգարն էլ կը լսէ եւ գծերը կը վտանգւեն. թէ նրան բոլոր շրջանի մարդիկ ճանաչում են, այդ մասին չկասկածէք անգամ. միւս կողմից էլ Փայլակի բնաւորութեան մէջ կայ մի գիծ որ իր կողմից այնքան էլ նպաստաւոր հանգամանք չէ ներկայացնում: Անշուշտ գիտէք որ նա ջղային մարդ է եւ շատ անգամ չափից դուրս է գալիս, վշտացնում թէ տեղական մարդկանց եւ թէ սուրհանդակներին. նրա մասին Մենաւորում ընդհանուր կարծիքը այն է որ նա երկար ժամանակ չէ կարող վարել մարդկանց հետ եւ վաղ թէ ուշ կռիւներ կը պատահեն...

Այս երկու հանգամանքները ի նկատի ունենալով — մանաւանդ առաջինը — կարծեմ Փայլակի վրայ նայելու էք իբրեւ ժամանակաւոր ներկայացուցիչի վրայ եւ օր առօր առաջ աշխատեցէք Սարուստանից կանչել մարդ որ նրա տեղ բռնէր, իսկ [նրան] ուղարկեցէք մի անծանօթ վայր. այդպիսի տեղերում նա աւելի յաջողութիւն կը գտնի քան ծանօթ տեղերում:

Սարուստանում մի քանի մարդիկ կան որոնց մասին պէտք է գրել պաշտօնապէս Մեծ Քաղաք եւ խնդրել, որ նրանք անցնեն այս կողմը, մանաւանդ որ Սամսոնը եւ Մալխասը հեռանալուց յետոյ գործերը երեսի վրայ կը մնան եւ շատ դժգոհութիւն կը ստեղծուի... Կանչելու համար յարմար մարդիկ հետեւեալներն են. Մենաւորի համար Անմեղեանցին<sup>11</sup> (Սաքոյին), գոնէ գարնանից մինչեւ աշուն: Նա շատ յարմար է, թէ իբրեւ փորձաւոր մարդ եւ թէ իբրեւ բնաւորութեամբ սիրալիր. կարող է մեծ յաջողութիւն ունենալ: Գրեցէք սրան անպատճառ ուղարկեն. եթէ սրան չուղարկեցին, պահանջելու է] Ջրաբերդի եւ Քարի<sup>12</sup> շրջաններում գործող մեր նախկին ընկերներից Արամայիսին<sup>13</sup>, նա էլ փորձաւոր եւ լաւ մարդ է, Մենաւորի համար շատ յարմար: Վերջերս նա վտանգւել է Սարուստանում եւ թերեւս համաձայնրւի այս կողմերը գալու. նա ինքը այդ ուղղութեամբ տրամադրութիւն է յայտնել... Քարում ունենք մի շատ եռանդոտ եւ ինտելիգենտ ընկեր — Կարապետ Պարունակեան, Քարի Կ. Կ. անդամներից է, նա էլ ցանկութիւն ունէր այս կողմերը անցնելու. նա ամուսնացած է եւ ընտանիքով պիտի գայ այս կողմերը. ինքը լուսանկարիչ է եւ կինն էլ կարող է վարժուհի լինել. այնպէս որ սրանք Մենաւորի համար շատ յարմար մարդիկ են եւ Սամսոնից<sup>14</sup> յետոյ, եթէ նա համաձայնուի գալ, իմացէք որ մեծ բան կը լինի շահած-ինքը ինձ տրամադրութիւն ցոյց տուաւ եւ խնդրեց ինձնից տեղեկութիւն գրեմ, թէ արդեօ՞ք իւր արհեստով կարող է այստեղ ապրել եւ ընտանիքը պահել թէ ոչ. այստեղի ընկերների կարծիքով դա հնարաւոր է, այնպէս որ ես իրեն ընկերա[կա]ն նամակ կը գրեմ: Դուք էլ ձեր կողմից պաշտօնական նա-

մակներ գրեցէք այդ երեքին (Ամեղեան, Արամայիս եւ Պարունակեան), Քարի եւ Մեծ Ք. ընկերներին (Քարի հասցէն հէնց կարող էք գրել իրեն Պարունակեանին):

Մի քանի խօսք էլ վարդապետի<sup>15</sup> մասին. Սրա մասին շատ թեր եւ դէմ լուր է տա-  
րածուում մեր շրջաններում. կարծում եմ պէտք է այդ լուրերի առաջն առնել, որով-  
հետեւ այդ մարդը ոչ մի կողմից արժանի չէ այդ բամբասանքներին.— Ինձ թւում է  
թէ մենք ծայրայեղութիւնների մէջ ենք ընկնում. նրա վրայ նայելու է իբրեւ մի հա-  
մակրող եւ սովորական նպաստող դաշնակցականի վրայ, որ մեզ ամէն յարմարու-  
թիւններ տալիս է գործի համար. թիւրիմացութիւնները մեծ մասամբ առաջ են գա-  
լիս նրանից որ մենք խառնուում ենք նրա ներքին գործերին եւ վանքի տնտեսական  
հարցերի մէջ, ինչդիրներ՝ որ ոչ մի պարագայում, մեզ չէ վերաբերուում. յայտնելու  
է միանգամից մի անգամ Մենաւոր գնացող ընկերներին, որ նրանք վանքի ներքին  
գործերին հետ ոչ մի հաշիւ չունեն եւ վարդապետի հետ վարուեն իբրեւ ընկերի եւ ոչ  
իբրեւ ենթարկւողի... Սա շատ կողմերից կարեւոր բան է. ի նկատի ունեցէք որ  
դրանից լաւին չենք արժանանայ. կրթւածները այն սարի գլխին պատիւ չեն համար-  
րի ապրել, տգէտներն էլ կը գան իրենց փորի համար, իսկ [սա] գոնէ աշխատում է  
վանքը շէնացնել. սրա միակ թուլութիւնը այն է, որ ամէն բանից քաշում է վանքը  
վերակենդանացնելու համար. իսկ մեզ եւ մեր գործին ոչ մի պարագայում չէ վնա-  
սում, ընդհակառակը կարեցածին չափ օգնում է. հաւատացէք որ եթէ նա չլինի՝ այն  
շրջանում ոչ կարող էինք պտուտել եւ ոչ ապրել. ինչ որ պատահում է նրան ենք ներ-  
կայացնում բէկերի եւ խաների առաջ եւ ամէն անգամ, ինչպէս փաստերը ցոյց են  
տալիս, պարզերես է դուրս գալիս...

Կոմսը միշտ ներսից պահանջում է որ խմոր եւ խնձորներ ուղարկենք. Սարուս-  
տանում ահագին քանակութեամբ կայ երկուսից էլ (մօտաւորապէս 20 փուլ խմոր  
կայ եւ 1500 խնձոր) բայց մինչեւ հիմա Մրգաստանից ուղարկել [են] միմիայն 25  
հատ լիբր այն էլ առանց կապսուլի եւ Ֆիթիլի. գրեցէք որ ապրանքների հետ ան-  
պատճառ խմոր եւ խնձորներ տեղափոխեն, մի 200 խնձոր եւ 6-8 փուլ խմոր, Ֆի-  
թիլ եւ բազմաթիւ կապսուլներ. գրելու է, որ առանց լցնելու ուղարկեն առանձին  
առանձին. մենք այստեղ կամ ներսը կը պատրաստենք: Սրանք կարեւոր խնդիրներ  
են եւ անպատճառ շուտով գրելու էք Մրգաստան եւ Մեծ քաղաք որ մինչեւ Զատիկ  
անպատճառ տեղափոխեն...

Մենաւորում կան մի քանի ատրճանակներ առանց ծայրերի, այնպէս որ մի քա-  
նի 100 ծայր ուղարկեցէք դրանց համար. չմոռանամ յայտնել որ նոյն ծայրերի պա-  
հանջ կար եւ Երկրում, որի մասին, Տիգրանը Շամից գրել էր Արտուրին. Արտուրը  
գրել էր ձեզ, ինքը ասում էր որ Նիկոլը կ'ուղարկի. մինչեւ հիմա էլ չենք ստացել.  
ատրճանակները հետեւեալ տեսակներն են: 1. Նագան 2. Բրաունինգ 3. Սմիտվիսոն  
եւ 4. Մաուզեր — տասը հարուածանի: Եթէ ամէն մի տեսակից մի քանի հարիւր հատ  
ուղարկենք, թէ Մենաւորի ատրճանակները կը գործադրենք եւ թէ ներս կ'ուղար-  
կենք. եթէ Մալխասին հասաւ, նրա հետ անպատճառ ճանպեղէք եւ պատւիրեցէք  
ուղղակի ճանպեղ Մենաւոր:

Ընկերներ! Ներեցէք որ այսքան երկար գրեցի. գուցէ խնդիրներից ձեզ շատերը  
ծանօթ էին, եւ սա մի կրկնողութիւն էր, բայց բարի եղէք մի աւելորդ անգամ էլ  
լսելու այդ նկատողութիւնները եւ շուտափոյթ կարգադրեցէք քանի որ ուշ չէ. երբ

ճանապարհները բացեցին, սուրհանդակները կը գան եւ դատարկ կ'երթան:

Ես մի երկու օրից կը վերադառնամ Աւարայր<sup>16</sup>, այնտեղից Մենաւոր եւ կը սպասեմ սուրհանդակներին:

Մնաք բարով. եթէ կեանքի պատահարները այնպէս դասաւորուեցին որ ես չկարողացայ տեղ հասնել եւ իդէալիս ծառայել, մեռնելուց կը մխիթարւեմ միմիայն նրանով, որ կենդանի մնացած ընկերները կը շարունակեն գործը եւ բարձր կը պահեն «Ազատութեան դրօշը»:

Ընկերական համբոյրներով  
ԱՐԱՄ

1905 թ. յունւար 18ին  
Մինարէթ<sup>17</sup>

- 1.- Յատկանշական երեւոյթ:
- 2.- Քնայքներու:
- 3.- Դպրոց:
- 4.- Խօսքը Վարդան Շահպազի մասին է:
- 5.- Շամ, Շամիր – կուս. ծածկանուն Վանի:
- 6.- Անգործօն կերպով առանց եռանդի:
- 7.- Չեւականօրէն, լոկ արձանագրութիւն կազմողի եղանակով:
- 8.- Իմա՝ պարսկա-ռուսական սահմանին, Արաքսի ափին, հաւանաբար Ջուլֆա:
- 9.- Ընդդիմութեան:
- 10.- Գործածուած Ռուբէն Գերձակեանի համար, որուն կուս. ծածկանունը Փայլակ էր:
- 11.- Անմեղեանցը Սեքարեցի Սաքուն է (Ծովիանեան) (1870-1908):
- 12.- Ջրաբերը ծածկանունն է Կարսի, Քարը՝ Ալեքսանդրապոլի:
- 13.- Արամայիւր Բաշգառնեցի Մարտիրոսն է, իսկական անունով Աբրահամեան Մարտիրոս (1885-1957):
- 14.- Սամսոն կամ Գարեգին – Ստեփան Թադէոսեան:
- 15.- Խօսքը Ս. Թադէի վանահայր Գեորգ վրդ. Նալպանտեանի մասին է:
- 16.- Աւարայրը ծածկանունն է Խոյի, Մեմաւորը՝ Ս. Թադէի վանքին:
- 17.- Մինարէթը ծածկանունն է Սալմաստի:

10

Սիրելի Մալխաս!

Ապահով տեղ հասանք<sup>1</sup>. Ընծայրը գալիս է Թաւրիզ գնալու. խօսեցէք շուտ վերադառնալու մասին. նրա հոս լինելու հետ շատ խնդիրներ է կապած, դեռ մի կողմ եմ թողնում տեղիդ տեղափոխութեան հարցը. մտածեցէք եթէ ամսից աւելի մնաց այն կողմերը մեր բանը շատ դժւար կը լինի. գոնէ Մաշտոցին<sup>2</sup> նամակ գրէք որ շուտով համաձայնութիւն տայ. եթէ տալու է եւ սա էլ իւր պատգամաւորութիւնը արագ կատարելով վերադառնայ: Դեռ սուրհանդակներ չեն եկել. շուտով պէտք է մարդիկ կանչեմ, թէ օտարներ թէ մերոնք, պայմանաւորելու մասին. նպատակ ունեմ մի նոր գիծ էլ բանալ, որի մասին հարցրէք Ընծայրից. շատ յարմար գիծ է, եթէ յաջողեցինք շատ բան կը շահենք. բայց անպիտան փողի հարցը ինձ կասեցնում է. վախենում եմ խոստումներ անել, ծրագիրներ կազմել եւ յանկարծ խայտառակել եթէ ժամանակին դրամ չհասնի... ինչ եւ իցէ, գոնէ իմանալինք Մ. Ք.ի ընկերների տրամադրութիւնը եւ ըստ այնմ վարուէինք: Յակովբին ե՞րբ ես ուղարկել, եւ պատւիրեցի՞ր շուտ վերադառնալու: Թէեւ մի քիչ վաղ բայց մի բան եմ արել. արդէն քեզ հետ խօսել եմ, որ լաւ կը լինի եթէ այստեղ մենք վարձով տեղացի սուրհանդակներ ունենանք թէ մեր եւ թէ թերթերի տեղափոխութեան համար. ես Մելքոնին<sup>3</sup> առաջարկեցի այդ պաշտօնը. նա ուրախութեամբ ընդունեց հետեւեալ պայմանով. աչքի առաջ ունենալով գանազան հաշիւներ, ես նրան առաջարկեցի <sup>35</sup> թուման, ինքը իւր ձիով աշխատելու համար. ի հարկէ ամէն անգամ երբ կարիք եղաւ այս եւ այն կողմը գնալու, նա առանց պատճառաբանութեան պէտք [է] գնայ: Կարճ, նա ամբողջապէս պիտի ինքզինքը դնի կազմակերպութեան տրամադրութեան տակ:

Սա թէ իրեն եւ թէ առանձնապէս մեզ շատ շահաւէտ է. այդ փող միայն մի ձիւղ գին է, որ մենք պիտի առնենք եւ տարւայ վերջը 8 թումանով ծախենք... Իսկ թէ Մելքոնը ընտանեկան գործերից ազատ եղաւ, որքան օգտակար կը լինի, այդ բոլորիս համար պարզ է: Սա եւ արի յատկապէս Քարեցոց<sup>4</sup> թերթի փոխադրութիւնը աչքի առաջ ունենալով. բայց հակառակ պարագայում էլի չենք վնասուի, որովհետեւ եթէ տարւայ մէջ 20 անգամ էլ գնայ գայ, էլի 40 թուման կ'անէ. բայց յուսով եմ որ աւելին կը շահենք: Մտածեցէք եւ գրեցէք ձեր եզրակացութիւնը, որպէսզի վերջին խօսք ասեմ նրան, նա էլ իր անելիքը տեսնէ. որովհետեւ եթէ համաձայնեց պիտի իրենց տանը համար ծառայ վերցնէ. բայց կարծում եմ մնացածներին չգայթակղեցնելու համար պէտք է այս բանը գաղտնիք մնայ. գոնէ գումարի խնդիրը...

Եթէ փողերի հարցը կարգադրուեց կամ Մ. Ք.ից նամակ եկաւ, իսկոյն ինձ իմաց տուր. դա կարեւոր է թէ այստեղի ձեռնարկների համար եւ թէ ներս գնալու ժամանակ. այդ խնդրի մասին պէտք է որոշ կարգադրութիւններ անեմ Կիրճում եւ Աւետարանում<sup>5</sup>...

Ձիւղների խնդիրը մտից չէ հանելու, Յուլիի մէջքը փչացել է, պահում եմ որ առողջացնեմ, վախենում եմ բանեցնենք բոլորովին փչանայ եւ յիմար դրութեան մէջ ընկնենք. սպիտակ ձիւղն ոտը դեռ բոլորովին չէ լաւացել, մի 10-15 օր պէտք է կապեմ որպէսզի բոլորովին պնդի: Այդտեղ եղած կարմիր ձին լաւ պահեցէք որ փա-

լանով ներսի փոխադրութեան համար գործադրենք:

էլի վանքը դատարկուել է, ոչինչ չկայ ուտելու, նոյնիսկ չուրաթանն<sup>6</sup> էլ վերջացել է. Պատեւելուն յայտնիր որ Զամանի հետ մի քիչ կարտոֆիլ եւ սոխ ուղարկէ. մի պատի օրացոյց անպատճառ ուղարկեցէք, ամիսների եւ օրերի հաշիւը լրբիայով ենք պահում... Քո ատրճանակի չափով երկու դուբուր<sup>7</sup> շինել տուէք եւ ուղարկեցէք — հոս եղած երկու հատն էլ առանց դուբուրի են — Պատեւելուն[ն] իմ կողմից խնդրիր որ մի քիչ թուրչի ուղարկէ եւ երկու շիշ էլ քացախ: Երկու ջուխտ սօլ ուղարկեցէք այստեղ հագնելու համար. թող բաւական մեծ լինեն:

Մրգաստան<sup>8</sup> գրեցէք որ ձեր ուղարկած 24 խնձորի խմորը<sup>9</sup> բոլորովին փչացել է, պաղեթոց նրա պայթուցիկ մասի ուժը կորչում է, այնպէս որ նորից պիտի լցնել, այսուհետեւ ոչ մի նոր լցւած խնձոր չեն ուղարկելու...

Հայր սուրբի հետ Սանամերիկ<sup>10</sup> Ասլանին մի խենչալ ուղարկի, խոստացանք եւ մոռացանք ուղարկել:

Ես մոռացայ այդտեղ անձամբ մի երկու ձեռնափայտեր շինել տալ սուրհանդակների համար, այնպիսի յարմարութեամբ որ մի երկու նամակ պահէ մէջը. կարծում եմ եթէ կարողանան պտուտակներով շինել շատ լաւ կը լինի եւ մշտական կը լինի. սովորական դրութեամբ շատ կոպիտ է լինում եւ աչքի կը զարնւի. նամակի տեղը ներքեւի մասում է շինելու. փայտը պէտք է շատ հասարակ ձեւ (աւելի տձեւ) ունենայ որպէսզի աչքի չզարնւի:

Ուղարկում եմ տեղիս արխիւը, դրա հետ եւ Արտուրի անձնական նամակները, բայց ես մի փոքրիկ զարտուղութիւն եմ արել, որ սովորական դրութեան մէջ թերեւս յանցանք սեպուէր. բացել եմ նրա անձնական նամակների ծրարը եւ գատել զուտ անձնականը եւ մեր գործերի հետ կապ ունեցողը՝ դրել ընդհանուր նամակների հետ. կարծում եմ յեղափոխական բարոյագէտը կը ներէ ինձ այդ յանցանքի համար, ի դէմ այն մեծ շահագործութեան որ Արտուրը գործել է իմ վերաբերմամբ<sup>11</sup>...

Առայժմ այսքանը.

Յարգանքներով՝  
ԱՐԱՄ

1905 թ. յունւար 28-ին

Մենաւոր

Յ. Գ.— Նամակս գրել էի երբ եկան երկու սուրհանդակներ առանց նամակների, իբր թէ նամակները անապա[հո]վութեան համար թողել են Աւետարան, որ այսօր կամ վաղը պէտք է բերեն:

Ընձայրին այսօր յատկապէս պահեցի նամակների համար. եթէ հասաւ նամակների հետ կ'ուղարկեմ եթէ ոչ այլ անգամ:

Մոռացել էի գրել որ այստեղ ձիւներից մէկը առանց այրիի է. Զամանի հետ մի կանոնաւոր այր ուղարկէք բոլոր թախումներով, չմոռանաք մանաւանդ մի կակուղ թարիկ[?] գնել եւ այրիի հետ դնել, գամը ինքն ըստ ինքեան չէք մոռանայ:

Մի երկու հատ էլ մեծ թաշկինակ ուղարկէք ալու քիւրդ Սահակի համար:

Խմբագրութեան<sup>12</sup> ուղարկած տեղեկագիրը եւ Դ[աշնակցութեան] Խ[որհրդին] առաջարկուելիք հարցերը մոռացայ բերել, շուտով ուղարկէք Շամի համար:

Մոռացայ այդտեղ ասել որ խնձորները վտանգից ազատելու համար, մի մեծ կաթսայ ջուր եռացրէք եւ կրակից հեռացրէք եւ անցրէք մէջը, կը կակղի. ապա եթէ

կանոնաւոր կակղեց, եթէ հնարաւոր է ուղարկէք որովհետեւ շատ յարմարութիւններ կան ներս ուղարկելու:

Փող, փող եւ փող- եկած սուրհանդակի հետ պայմանաւորեցինք առաջիկայ փոխադրութեան մասին- շուտով փող հասցրէք որ արագացնեմ:

Յարութիւնը<sup>13</sup> դեռ չի եկել- տեսնենք երբ կը գայ, վախենում եմ խեղճը հոն փտանգուի...

Այօր պատահական կերպով առիթ ունեցայ կարգադրել եւ մի ուրիշ խնդիր, որի մասին հետաքրքրիր է ձեր կարծիքը- բացի Մելքոնից ես աչքի առաջ ունեմ եւ մէկ ուրիշին որը թէ կարեւոր է այստեղի գործերի համար եւ թէ մանաւանդ այստեղ այնտեղ ուղարկելու համար ոտքով կամ ձիով- դրա մասին կարող էք հարցնել Ընծայրից- նա վանքի հին ծառայ Առաքելն է, ամբողջ տարւայ վարձը 10 թուման է եւ 2 թումանի էլ չորեր, այնպէս որ դրան եւ թումոյին տարեկան եթէ տանք 25 թուման, չորս զինւորի չափ կ'աշխատեն եւ մենք կ'ազատենք շատ անդիւրեկանութիւններից- նկատի ունեցէք որ հոս գարնանից դժուար է մարդիկ հանել մեր գործի համար- որովհետեւ զբաղւած են լինում: Կարծում եմ ամենալաւ զինւոր կոչեցեալը տարեկան 20 թումանից աւելի է նստում մեզ վրայ:

Եթէ իմբագրութեան մեքենայի մասին դեռ չես գրել, շուտ գրիր որ անպատճառ ուղարկեն- երբ հարցը գալիս է եւրոպական այս եւ այն քաղաքում միտինգ կազմելու փողերը չեն խնայում, իսկ երբ հարցը գալիս [է] երկրի համար որեւէ բան առնել, ասում են թանգ է- դրանից մեծ վիրաւորանք չկայ Երկրի ընկերների եւ գործի հասցէին: Խնդրում եմ այդպէս էլ իրենց գրես:

ԱՐԱՄ

**Փետր. 1-ին**

- 1.- Խօսքը կը վերաբերի Ս. Թադէի վանք հասնելուն. նախորդ շաբաթ Արամ զացած էր Սալմաստ:
- 2.- Մաշտոց, Մեսրոպ Մաշտոց, բուն անունով Աւետիսեան Մեսրոպ, մակուեցի, ուսուցիչ եւ կուս. գործիչ նախ Ատրպատական, ապա Վասպուրական:
- 3.- Մելքոն – վանքի զինուորներէն: Յակովբը մոկացի փորձուած զինուոր էր, մինչեւ Ատրպատական ուղեկցած էր Արամին:
- 4.- Իմա՝ գիւմրեցոց:
- 5.- Կիրճը ծածկանունն է քրտաբնակ Զեաղուկ գիւղին (Բերկրի գաւառակ), Աւետարանը Խաչան գիւղն է նոյն գաւառին մէջ:
- 6.- Չորթան: Պատուելի – կուս. գործիչ Խոյի մէջ. մահացած 1906ին:
- 7.- Ատրճանակի պատեան:
- 8.- Մրգաստանը Երեւանն է:
- 9.- Խնձորը ռումբն է, նոնակ, խմորը՝ վառօղ, պայթուցիկ նիւթ:
- 10.- Սանամերիկ – Սալմաստի հայաբնակ գիւղերէն:
- 11.- Ակնարկութիւն այն իրողութեան, որ Արտիւրը մեկնած էր իւրացնելով իր մօտ Արամի պահ դրած գումարը:
- 12.- Խմբագրութիւն, հոս եւ այսուհետեւ պէտք է հասկնալ ժընէ՝ «Դրօշակ»ի խմբագրութիւն եւ առ հասարակ շ.Յ.Գ. Արեւմտեան քիւրօ: Դաշնակցութեան Խորհուրդը, ինչպէս ծանօթ է, կուսակցութեան վերին մարմինն էր, որ 1905 թ. Փետրուար ամիսէն սկսեալ պիտի գումարուէր ժընէ:
- 13.- Յարութիւն Միրաբեան, Ամերիկայէն եկած երիտասարդ, որ ընկերացած էր Արամին. վերջինիս կողմէ ուղարկուած Կովկաս ծանօթանալու ելեկտրական ինչ որ մեքենայի:

11

Միրելի Կոմս!

Ես մի քանի օր է վերադարձել եմ Մինարէթից. լսեցի որ նամակներ էք ուղարկել բայց մնացել է Աւետարան<sup>1</sup>. այդ լրբերին պատուիրեցէք խստիւ որ նամակները չուչացնեն ճանապարհին. սպասելով նամակներին , հանգամանքից օգտուում եմ այս անգամ գրելու ձեզ մի քանի խնդիրների մասին, որոնց պատասխանը բարի եղէք շուտով ուղարկելու...

Երեւի իմացած կը լինէք որ Մինարէթի սուրհանդակ քրոյին\* ձերբակալած են թերթերով\* եւ ցամակներով\*. ստացած կը լինէք նոյնպէս եւ 100 ոսկին, որը փոխադրւած էր Մինարէթից. այդ փողից 128 ռուբլին\* որ կ'անէ 14 ոսկի\* ուղարկւած է Ոսկանապատի<sup>2</sup> Կարմիր Խաչից\* ձեզ հետեւեալ կերպով բաժանելու. Վազգէնի\*<sup>3</sup> մօրը 50 ռուբլի – Այգեստանի<sup>4</sup> կարօտեալներին\* 50 ռուբլի\*, իսկ մնացած 28 ռուբլի – Բաղէշի կարօտեալներին\* բանտի:

Այս բոլոր[ն] այսպէս դասաւորելուց յետոյ պիտի այդ գումարների համար յստակ կնքուած ստացական ուղարկէք նրանց հասցնելու համար. շուտ ուղարկեցէք որովհետեւ շատ պահանջող են:

Գրել էի ձեզ որ Վրէժում ռայոնական – ժողով\* է եղել եւ ի միջի այլոց որոշել է իրենց շրջանում եղած թեքանցի 10 զինուորներին\* ներս ուղարկել<sup>5</sup> մէկ-մէկ, երկու-երկու, այն էլ առանց զէնքի\*: Որոշուել է ոչ մի խումբ չուղարկել, որովհետեւ անցեալ տարւայ փորձերը մխիթարական ոչ մի փորձ չեն տալիս: Ես կարծում եմ հարցը պէտք է աւելի լայն դնել.— Արդեօ՞ք դուք կարիք ունէք սովորական (փորձածի մասին կարծեմ հարց չի կարող լինել) զինուորների\* թէ ոչ եւ եթէ կարիք ունէք, ի՞նչ ձեւով պիտի ներս ուղարկենք... կամ առհասարակ այդ հարցին դուք ինչպէ՞ս նայում եւ ի՞նչ լուծում էք առաջարկում. ինձ առաջարկւած էր, մէկ-մէկ ներս ուղարկելու, բայց առանց ձեր կարգադրութեան անյարմար եմ համարում եւ յետաձգել եմ մինչեւ դուք որոշ պատասխան տաք:

Գրել էի որ Արտուրը գնացել է Սարուստան, վերադարձել է Վրէժ, բայց ցաւօք սրտի պիտի գուժեմ որ ընկերների յոյսերը չարդարացրեց եւ մինչեւ անգամ այնտեղ հասցրեց որ ստիպւած են եղել բոլորովին հեռացնելու մեր շրջանից... Մանրամասնութիւնները հետաքրքիր չէ, թերեւս պ. Տիգրանին<sup>6</sup> գրեն Վրէժից: Ընկերները Արտուրի փոխարէն այստեղի համար նշանակել են Փայլակին<sup>7</sup>, որը շուտով կը գայ հոս. ես որոշ խնդիրներ նկատի ունենալով առաջարկել եմ այստեղի համար կամ Մ.Ք.ի Սաքոյին\* կամ Ջրաբերդի Արամայիսին\*<sup>8</sup>. այս երկուսին կարծում եմ դուք էլ կը ճանաչէք. դոցա լաւ կը ճանաչէ մանաւանդ Ֆարհադը<sup>9</sup>. հարցրէք նրանից: Այս առթիւ նամակներ եմ գրել Վրէժ եւ Մ. Ք.-ի ընկերներին. յուսով եմ մէկն ու մէկին կ'ուղարկեն եւ թերեւս կանոնաւորութեան Մենաւորի խնդիրը:

Խմբագրութիւնից եկել էր Դ[աշնակցութեան] Խ[որհրդին] առաջարկելիք խնդիրների տեղեկագիրը. դժբախտաբար մոռացայ եւ թողի Աւարայր<sup>10</sup>, յուսով եմ

որ երկրորդ նամակիս հետ կ'ուղարկեմ:

Քաղաքական աշխարհում նորութիւններ չկան, օրւայ նորութիւնը Պորտ-Արտոուրի առնուամն է դեկ. 18-ին, անձնատուր են եղել, շատ սրտաճմիրկ կերպով. ամբողջ 15000 գինւոր է եղել եւ միայն 5000 կուտղ, այն էլ ինչպէս Ստեպլերն[?] է ասում – Մարդիկ չէին այլ ուրականներ – ինքը Ստեպլերն, ազնիւ խօսք տալով – որ չի մասնակցիլ պատերազմին – վերադառնում է հայրենիք:

Պետերբուրգում Պորտ-Արտուրի առնման առթիւ մի մեծ ժողովրդական ցոյց է եղել, ուր պահանջել են պատերազմը դադարեցնել. մի քահանայի առաջնորդութեամբ, երբ գինւորներին առաջարկել են ցրել ամբոխը գէնքով, նրանք գէնքերը թափել եւ միացել են ժողովրդի հետ. վերջապէս կանչում են կազակներին եւ ցրում ամբոխը. հազարաւոր վիրակոտներն է եղել եւ 100 մարդիկ մեռել են:

Կառավարութիւնը շատ յիմար դրութեան մէջ [է] եւ բռնել է գիջողութեան ճամբան, բայց մինչեւ այժմ արած գիջողութիւնները շատ չնչին [են] եւ անգոհացուցիչ. Ռուսաստանը մեծ դէպքերի նախընթաց օրն է ապրում. –

Ուղարկում եմ նամակիս հետ մի ճուխտ կօշիկներ ձեզ համար, ուղարկւած Սամսոնից եւ Մալխասից եւ երեք հատ էլ Եւրոպայի Հայ ուսանողները] քարտէզից: Չկարողացայ հասկանալ թէ ստացաք իմ ուղարկած 4 ձեռք լցնելու կոնպլէկտները, բոլոր թախտամներով. այս մասին չհասանք գրել:

Աւետարանի գուրնաչի վարժապետի մասին գրել էի. նա եկող գնացողից լսել էր որ գիւղացիներին կարգադրել եմ նրան իբրեւ մեր մարդ չճանաչել. վերջին օրերս նա մի թխած նամակ է գրել, որի մէջ առաջարկում է որ ես Աւետարան նամակ գրեմ եւ իրեն յանձնարարեմ իբրեւ մեր մարդ. դրա վրայ աւելացնում է, որ ինքը ձեր հաւանութեամբ է հոն նստել եւ հեռու է նեղսրտութիւններից: Այս բոլորը թիւրիմացութիւններ է: Իսկ իրականութիւնը այն է, որ գրել եմ շուտով կարգադրութիւններ արէք եւ մի մարդ ուղարկէք հոն:

Սահակը բարեւում է ձեզ եւ ընկերներին:

Առայժմ այսքանը: Բարեւներ եւ յարգանքներ բոլոր ընկերներին:

ԱՐԱՄ

1905 թ. փետր. 1-ին

Մենակոր

- 1.- Աւետարանը Բերկրի գաւառակի Խաչան գիւղն է:
- 2.- Ոսկանապատը ծածկանունն է Պաքուի Կեդր. կոմիտեութեան:
- 3.- Վազգէն – Տերոյեան Տիգրան (1872-1898), Վան-Վասպուրականի անուանի յեղափոխական մարտիկներէն:
- 4.- Այգեստան – Վանի հայկական քաղաքամասը:
- 5.- Ներսը՝ Երկիրն է:
- 6.- Տիգրան, բուն անունով Տէր Սկրտչեան Յարութիւն (1880-1915), անդամ Վասպուրականի Կ. կոմիտէին:
- 7.- Փայլակ, նաեւ Բժիշկ, իսկական անունը Ռուբէն Դերձակեան:
- 8.- Սաքոն Սեփարեցի Սաքոն է (Շովիանեան). Ջրաբերդի Արամայիսը՝ Ազնաուրեան Արամայիս:
- 9.- Ֆարիադ – ծածկանունն է Օհանջանեան Սարգիսի:
- 10.- Աւարայրը Խոյ քաղաքն է:



**Միրելի Մալխաս!**

Սուբհանդակները եկան բազմաթիւ նամակներով եւ պահանջներով. գործի սկսելու ժամանակ [է], բայց ես չեմ կարող ձեռնամուռի լինել մի քանի պատճառներով. ա) մշտական չեմ լինելու. բ) պայմաններին լաւ ծանօթ չեմ, գ) նոյնիսկ պահեստների ապրանքների մասին գաղափար չունեմ: Երէկ ցանկացի նորի ծայրեր փոխադրել. երեք պահեստը բացի բայց չկար, իսկ մնացած տեղերի մասին գաղափար չունեմ. ուրեմն ըստ ամենայնի Ռուբէնը<sup>1</sup> շտապելու է հոս. իսկ որ այնքան պնդում է [ի] թէ պիտի արագացնել մեր հոս լինելը, չէիք հաւատում. ահաւասիկ գործի ժամանակ է, մարդ չկայ, վերջապէս փող չկայ. գալուց ես բերի միմիայն 10 թուման, այն էլ մինչեւ տեղ հասնելս վերջացաւ, իսկ սուբհանդակները աջ-ձախ գալիս եւ պահանջներ են անում:

Կոմսը իւր նամակում ի միջի այլոց գրում է. (նամակը չեմ ուղարկում որովհետեւ առայժմ կարեւոր է հոս) — եթէ այսուհետեւ ղրկւելու են, պիտի ղրկւեն շատ վստահելի կոթեր\*<sup>2</sup>, իսկ եղածների սաղացնելու տեղը երկիրը չէ. մեր ունեցած կոթեր-ն-էն\* միայն շատ փոքր մասին վրայ կարելի է վստահել. այդ պահանջը յայտնեցէք Վրէժ (ինչ եղան Շահէնի<sup>3</sup> իմբի կոթերը): Խմորի պիստոններ եւ ֆիտիլ մեծ քանակութեամբ (չատ պէտք են): Մանրուքների չա[փա]զանց կարիք ունենք. բոլորովին սպառւել է. մոս[իւնի] մանրուքներ (ամէն տեսակի) մեզ համար, իսկ բերդ[անկաներ] ժողովրդի համար. բերդանի գատուորներ, ուռցնելու բերդանի գործիքներ 5-6 հատ, մեծ վինտով, շատ շատ կարեւոր են: Մի շատ հմուտ արհեստաւոր. Լեւոնը նախ երկաթագործ չէ, բերդանկայից էլ չէ հասկանում: Մեր Վրէժի ծանօթ ընկերները պահանջում են Անուշաւանին (Արամայի\*<sup>4</sup>, Նիկոլ\*<sup>5</sup>, նա կարող [է] անցնել ձեզ հետ: Թէ բերդանի եւ թէ մոսիւնի սարոչկա (պատրոններ փորելու գործիք): Գրածներս անշուշտ կը հաղորդէք Աւարայր, Մինարէթ եւ Վրէժ<sup>6</sup>, ու խորհրդակցեցէք նրանց հետ թէ դրածս հարցերի եւ [թէ] պահանջների վերաբերեալ...

Տեսնում ես սիրելիս! Խեղճերի պահանջը որչափ համեստ է եւ միւս կողմից էլ որքան կրիտիկական դրութեան մէջ են ամենահասարակ խնդիրների հանդէպ: Ինչպէս խօսել ենք, նորից կրկնում եմ օր առաջ այդ եւ նմանօրինակ պահանջներին բաւարարութիւն [չ]ստանալու դէպքում տեղերից չչարժէք, մանաւանդ դրամականի հարցը, որի մասին էլ այս անգամ ինձ յիշեցնում է Իշխանը<sup>5</sup> իւր նամակում. Մ. Ք.-ից եթէ պատասխան գրեն մեր նամակներին ինձ իսկոյն հաղորդիր. ես դեռ 15-20 օր հոս եմ. Բժիշկը<sup>6</sup> անպայման շտապելու է... Պահանջները անշուշտ կը գրես Վրէժ եւ կը պահանջես անմիջապէս գոհացում այդ բոլոր խնդիրների, որոնք կարելի [է] լուծել մեր արհեստանոցի յարմարութիւններով եւ Վրէժի ունեցած ապրանքներով, իսկ մնացածների մասին գրելու էք Սարուստան<sup>7</sup>, ես իմ կողմից բազմաթիւ նամակներ կը գրեմ այդ խնդիրների մասին Սարուստան կարեւոր տեղերը:

Ընձայրի մասին գրել էի, երկու օր այստեղից հեռանալով հիմա գգում եմ նրա

Հոսս լինելու կարեւորութիւնը. ուղղակի անթեւ թուչունի նման եմ, այսքան գնացող եկողին պահել եւ ճանաչել, մանաւանդ վտանգի ըրպէնքերում տէր լինել, իմ եւ ինձ նմանների ուժերից վեր է, այնպէս որ ես իբրեւ նրան մի մօտ մարդ մի խնդիր ունեմ. կարծում եմ դու էլ կը միանաս ինձ հետ, որ առ այժմ Սարուստան եւ Վրէժ գնալու մտադրութիւնը թողէ եւ մի քանի օրից վերադառնայ Հոսս. այս խնդիրը ես առաջարկում եմ նրան իբրեւ դաշնակցականի մօտ մարդու, քո ձայնն էլ միացրու եւ թող ուրիշներն էլ միանան մեզ հետ եւ խնդրեն նրանից որ առայժմ այդ միտքը թողնէ: Ախր վանքը այնքան կարեւոր չէ ներկայ պարագայում որքան գործը. մեր միակ յոյսը Հոսս է, եթէ այստեղ էլ խելացի կերպով գործ չկատարեցինք խայտառակ կը լինենք, մանաւանդ որ Զուրնաչիներն<sup>8</sup> էլ ցանկանում են օջախ հիմնել. ինքը եթէ անմիջապէս ներկայ լինի աւելի ազդու կը լինի քան իւր նամակը կամ մենք... Այս բոլորից յետոյ ի հարկէ մենք մեր կողմից պիտի նրան կողմնակի կերպով նպաստենք, որ նա կարողանայ գոնէ այստեղի ջրաղացը շինէ, յաջողեցնելով որ Վրէժում Ռուբէնի յանձնած 100 թումանը ստացւի եւ 100 թուման էլ այստեղից ճարել եւ մի կերպ եղաւ գնալ. վերջապէս թող նա էլ մի քիչ պահանջները այս տարի մեղմացնէ... Կամուրջում<sup>9</sup> բացի Աւետ[իւս]ից (որը դեռ չէ եկել, շտապեցնելու էք...) կարեւոր է մի աւելի ձեռնհաս մարդ ունենալ, լաւ կը լինի որ Պատեւելին հոն փոխադրուի. պատմում են որ Սարդարը կարգադրել է անպայման բոլոր եկողներին բռնեն... եթէ որքան ճիշտ է չգիտեմ. վերջապէս համաձայնեցէք նրան Հոսս ուղարկելու, տեղից քարտուղարի եւ Մեսիօ Գլաւնիի նամակներով, սրանց ապահովութեան եւ հեղինակութեան համար. հակառակ պարագայում մեր դրութիւնը շատ գէշ կը լինի. եթէ մի թարգմանի<sup>10</sup> լինի աւելի լաւ կը լինի, իբրեւ արհեստաւոր կարող է վստահելի լինել. Պատեւելին պիտի խանութ ունենայ:

Ես կարծում եմ քո Մ. Ք. գնալը կարեւոր է, առանց գնալու նրանք դրամ չեն ուղարկելու...

Գալիս [է] ձեզ մօտ Աւետարանի վարժապետը, որը իմ նամակի հիման վրայ Կոմսը հեռացնել է տւել. հոն ուղարկի մերոնցից մէկին...

Վարժապետը պահեցի ինձ մօտ եւ թոյլ չտւի գիւղ գնալու. Ռ. Թ. բերին վանք եւ մօտը եղած նամակները առաւ. համոզեցի որ նրա հետ յարաբերութիւնը անկարելի, անօգտակար է իրենց համար. նոյն մտքով նամակ գրեց Շամ իրենց մարդկանց. Կոմսը գրել է, որ նրանց հետ պայմանաւորուել են առանց մեր գիտութեան գործ

1.- Խօսքը Ռուբէն Դերձակեանի (Փայլակ) մասին է:  
 2.- Կոթը հրացանն է:  
 3.- Շահէն – 1904 թ. Սասնոյ պապստամբութենէն ետք, նահանջող ֆետայիները անցան Վասպուրական, Վանի մէջ գաղտնապահութեան նկատմամբ հայրուկապետ Անդրանիկին համար գործածուած անուն: Այստեղ հարցը կը վերաբերի այդ խումբի Ատրպատական թողած հրացաններուն:  
 4.- Յաջորդաբար՝ Խոյ, Սալմաստ եւ Թարիզ:  
 5.- Իշխան – Նիկոլ Պօղոսեան-Միքայէլեան:  
 6.- Բժիշկը նոյն Փայլակն է, Ռուբէն Դերձակեան:  
 7.- Սարուստան – Կովկաս:  
 8.- Հնչակեանները:  
 9.- Կամուրջ – թուրք-պարսկական սահմանի վրայ Կարէ գիւղի ծածկանունը:  
 10.- Դերձակ:

չկատարեն, եւ միայն մեր միջոցով փոխադրութիւն ու նամակներ ստանան. նրանք համա[ձա]յնեւէլ են. Կոմսը առաջարկել է այդ որոշումը ընդունենք եւ մենք. կարծում եմ երկու չարեաց փոքրագոյնը դա է...

Վարժապետը եթէ փողի կարիք ունենայ մի երկու թուման տւէք, խեղճ է... թող ձեզ մօտ չմնայ... մանրամասնութիւնները այլ նամակով... փող անպատճառ տւէք, որովհետեւ Շամ գրեց թէ այնքան բարի են որ փող էլ տւին.

Ուղարկում եմ Մրգաստանի եւ Մ. Ք.-ի նամակները...

Յարգանքներով  
ԱՐԱՄ

1905 թ. 3-ին փետր.  
Մենաւոր

Փաստ. 468-298

### 13

Անթուակիր, մատիտով մակագրուած՝ 1905: Բովանդակութիւնը ցոյց կու տայ որ Արամի այս մամակը գրուած է Թաղէի վանքէն դէպի Վան ուղևորուելու մատիտին, այսինքն Փետրուար 6-7ին:

*Սիրելի Մայրս!*

Պայմանները այնպէս դասաւորուեցին որ ես այս անգամ Աւետարանցի Որսորդի հետ պիտի Սահակի հետ գնամ. ուրեմն կարիք կայ վերջին խօսք ասելու. սկսիմ Մենաւորի խնդրից. ոչսի խնդիրը պայտիկաբար համար[եա] լուծեց, մեր վերջին ձեռնարկած միջոցները այնպէս ազդեց նրա վրայ, որ ինքը երէկ անձամբ եկաւ մօտս եւ խոստովանեց, որ իւր ընթացքը զգում է որ իրեն հեռու կը տանի եւ իւր յօժար կամքով առաջարկեց հրաժարել ոչսութիւնից եւ խնդրեց ինձ ժողովրդին յայտնեմ այդ ու նոր ոչս ընտրենք. ես երեկոյեան ժողովրդեան հաւաքեցի մօտս, նրանց յայտնեցի ոչսի հրաժարելը ու առաջարկեցի նորը ընտրել. այդ խորհրդակցական ժողով էր եւ վերջին եզրակացութիւնն այն էր որ պիտի ընտրենք կամ Տէրտէրի Մկոյին, կամ Մնէի Պօղոսին (մեր Թաթոսի եղբայրը). երկուսն էլ մեր մարդն են, բայց Մկոն աւելի յարմար է, այդպէս էլ կը լինի, որովհետեւ մեծամասնութիւնը նրա կողմն է: Այս գիշեր էլ կը հաւաքեմ եւ վերջին ընտրութիւն կ'անենք եւ ստորագրութիւններ հաւաքելով, թերեւս խնդիրը նամակիս հետ ուղարկեմ, վարդապետը իւր կնիքով եւ ստորագրութեամբ վաւերացնէ: Ուրեմն այս խնդիրը կը լուծուի եթէ մինչեւ վերջ հասցնենք. դրա համար վարդապետի կամ Փայլակի ներկայութիւնը կարեւոր է. առանց դրանց ինձնից յետոյ գուցէ փոխեն. Ընձայրից կրկին խնդրում եմ յանուն գործի համաձայնուի վերադառնալ, պայմանով որ ըստ իւր սովորութեան չսսէ. նահապիթ կայ ձեզի... ու ելնէ գայ. թող սիրով եւ ընկերաբար համաձայնի:

Փայլակի հոս մնալու խնդրի մասին խօսել եմ քեզ եւ Սամսոնի հետ ու գրել եմ Վրէժ․ նորից շեշտում եմ որ նա հոս երկար չէ կարող ապրել, ուստի օր աւուր առաջ պահանջեցէք Քարի Արամայիսին, նա շատ յարմար է: Յետոյ ինչպէս կը տեսնէք Կոմսի նամակից, կրկին առաջարկում է այստեղացիների միջոցով մինչեւ Կիրճ<sup>1</sup> փոխադրութիւն կատարել ձրով․ ես էլ շատ յարմար եմ գտնում եւ խօսելու եմ կիրճեցի Հասոյի հետ․ նա համաձայնել է ամսեկան երկու անգամ գալ եւ առաջնորդել նրանց․ այնպէս որ սա պարագան ի նկատի է ունենալու ապագայ ընկերը․ նոյն Հասոյի հետ խօսել եմ հազարը երեք մեջիտիէ մինչեւ Կայան<sup>2</sup>․ որ մի ճի եւ մի րովեյ<sup>3</sup> էլ տանք, կարծում եմ սրանք այնպիսի պայմաններ է որ շուտով պիտի ընդունենք եւ ի կատար ածենք․ հոս կանոնաւոր ձիւներ ենք ունենալու, եղածներից ոչ մէկը մի փարայի արժէք չունեն, փչացել են...

Տեղացի տղաների հետ խօսեցի իրենց աջակցութեան եւ մինչեւ Կիրճ գալու մասին․ նրանք առաջարկում էին, առանձնապէս Թաթոսը որ ինքը որպէսզի ազատ լինի, իր տան համար մեր հաշուով ծառայ ենք վարձելու․ կարծում եմ Առաքելը կարեւր է նրան տալ, կամ մի ուրիշը վարձել նրա համար․ իսկ Մելքոնի մասին արդէն գրած եմ...

Գալով թերթերի փոխադրութեան խնդրին, եկել եմ այն եզրակացութեան որ Շահպաղի<sup>4</sup> գծով է յարմար եւ այդ գործը ձգելու [է] Մելքոնի եւ Արշակի վրայ, մանաւանդ վերջինի վրայ․ սրանք յաջողութեամբ կը հասցնեն Աղքատին, իսկ սրան էլ գրելու էք որ առանց բանալու ուղարկէ Մրգաստան․ Քիչմի[չ]թապայով<sup>5</sup> ձմեռը գիծը փակում է, աւելի լաւ է մի անգամից մի անգամ խնդիրը ապահովեցնենք․ Մելքոնին կը խօսեմ եթէ Փայլակը գայ թող ուղարկի ջրի ափը, գայ այնտեղ գիծ պատրաստէ ու վերադառնայ...

Յարութիւնը<sup>6</sup> դեռ չէ եկել․ գալուց ինձնից յետոյ անմիջապէս նրան էք ուղարկելու․ մնացածների մասին ես կարգով գիծ կը պատրաստեմ... Սրանով Մենաւորի խնդիրը փակում է․ կրկնում եմ որ շտապեցէք մարդ ուղարկել փողով․ նոյն իսկ փող չկայ հետս վերցնելու․ ինձ մօտ եղածների մի քանիսը աւրեցի...

Իսկ ինչ վերաբերում է Շամի պահանջին, կարծում եմ դա եւ բոլորիս պահանջը պիտի լինի․ հարիւրերորդ անգամ էլ կրկնում եմ որ դու եթէ չզնաս Ս․ Ք․ եւ վերջին տեղեկութիւններ չառնես եւ պահանջներին գոհացում [չ]ստանաս, բան չէ դուրս գալու․ վերջապէս այդ կարելի է պահանջել Վրէժից․ ինչ դառաւ Պետրոսը! այսչափ անտարբերութիւն կը լինի<sup>6</sup>․ այդ մանր մուկը պահանջներին թող Վրէժում անմիջապէս բաւարարութիւն տան:

Մնացածների մասին գրիր Ս․ Ք․ եւ Մրգաստան<sup>7</sup>, գրիր, էլի գրիր, կրկին գրիր տեսնենք ինչ դուրս կը գայ...

Ինձ համար եթէ կարող ես Վրէժից բերել տուր մի ժակէտ, տուժուրկայ, հողագոյն, մի ճուղատ սապոկ, ոտս 28 նումէր է, բայց կրունկս շատ հաստ է, — Պատիում-ճիթկերը լայն լինի․ չափը դնում եմ նամակիս հետ:

Ձեզ եւ Փայլակի վրայ ընկերական-սրբազան պարտք եմ դնում․ անպայման ուղարկել ինձ համար, պատուիրածս ձեռով երկու շարք լիքը ծայրաման եւ հոս եղած կարճ մոսինը․ յատկապէս ինձ համար յանձնարարական նամակով իմ հասցէին:

Ուրիշ բան չունեմ աւելացնելու, ձերի[?] մասին տպաւորութիւններ կը գրեմ,

բայց խորհուրդ-գաղտնիք էք պահելու, ես հոս ոչ ոքին չեմ խօսել: Թո՛ղ նոյն անէ եւ Փայլակը:

Դէ՛հ մնաք բարով, կամ ցտեսութիւն, սահմանից անդին հարիւրաւոր ընկերներ եւ մի հոծ բազմութիւն, բայց դժբախտ բազմութիւն, իւր ազատութիւնը, իւր Յարութիւնը մեր խաչելութեամբ է ակնկալում: Թո՛ղ օրհնեալ լինի յեղափոխութեան կամքը. եւ օն-անդր առաջ...:

**Ձեր ճանպարհին սպասող – Ձերմ համբոյրներով –  
ԱՐԱՄ**

**Յ. Գ.**– Նամականերս ի հարկէ չէք գլանայ ինձ ուղարկել. մի ուսուսական թերթ էի պահանջել, եթէ գայ անպատճառ ներս ուղարկէք... Համբուրում եմ բոլոր ընկերներին, թող աւել պակաս հալալ անեն...:

**ՆՈՅՆ**

Այս օր ժողով գումարեցի, ընտրեցինք Մկոյին. խօսեցի զուրնաչիների մասին. երգեցին եւ խոստացան քա[հա]նայի ներկայութեամբ ճանաչել միայն Դաշնակցութեան. ու ամէն բան ինչ որ կարելի է պիտի անեն. շատ յուզեցին:

Առիթը այնպէս դասաւորուեց, որ ստիպւած եղայ խոստանալ 20 չանաղ նոխուս սերմացուի համար, ամբողջ հասարակութեան. այդտեղ պիտի առնէք, իրենք կը գան կը բերեն. 2-3 թուման կ'անէ, բայց շատ լաւ կ'ազդէ. անպատճառ գնէք եւ նւիրէք. ի հարկէ երբ կը գան տանելու այն ժամանակ կը գնէք:—

Միրելիք! Երկար մտածելուց յետոյ եկանք այն եզրակացութեան որ հէնց մի քանի օրից պիտի Կամուրջում<sup>8</sup> մարդ ունենալ, քանի ձիւները չեն վերջացել. իսկ այդ միջոցը ուղիղ երկու ամիս կը քաշէ. եթէ մի բան անենք այս գծով, այս միջոցին պիտի լինի: Ուրեմն շտապեցէք կամ Պատուելուն կամ մի թարգի Մինարէթից<sup>9</sup> բերել տալ եւ հոն հաստատել. դրա համար յատկապէս Մելքոնին<sup>10</sup> ուղարկում եմ խորհրդակցելու եւ մարդը վերցնելու հոն բերելու. Մելքոնի հետ անպատճառ մարդ ուղարկէ իւր ձեռքով հոն հաստատի եւ գործի ձեռնարկենք. առանց դրան ոչինչ չենք կարող անել: Թեհրանցի տղաներից Ալեքսանը թարգի է, ուղղակի Մելքոնը ուղարկեցէք Մինարէթ նրան վերցնի գայ. այդտեղից էլ մի ձեռքի մեքենայ առէք, տէք հետը բերէ:

**ԱՐԱՄ**

- 1.- Կիրճ – Հեքիարի գաւառի Քեադուկ գիւղի ծածկանունը:
- 2.- Կայան – ծածկանուն Բերկրի գաւառակի Պստիկ Գեղի:
- 3.- Բովել – ատրճանակ:
- 4.- Շահպաղի – գիւղ Վանի մօտակայքը:
- 5.- Մակուի շրջան, Թաղէի վանքի մօտ գիւղ:
- 6.- Յարութիւն Միրաքեան, Կովկաս ուղարկուած:
- 7.- Մ. Ք. – Մեծ Քաղաք Թիֆլիս, Արեւելեան բիւրօ. Մրգաստան՝ Երեւան:
- 8.- Կամուրջ – Մ. Թաղէի շրջանի Կարէ գիւղ:
- 9.- Մինարէթ – Մալմաստ:
- 10.- Մելքոն – Վանքի զինուորներէն:



**Սիրելիք!**

Ապահով հասայ Աւետարան<sup>1</sup>. այսօր գնում եմ, կը գրեմ Կայանից<sup>2</sup>. հոս խօսեցի նամակաբերին – Արամի – հետ տեղափոխութեան մասին, նրան տուի մի ոսկի, որ մարդը վարձի ու բերէ. գործը յարատեւելու համար դուք էլ երկու ոսկի տւէք եւ պատւիրեցէք, որ շաբաթեկան մի անգամ անպատճառ գան եւ տանեն: Ապրանքները յանձնելու էք Կամուրջում իրենց առաջարկած չափով. իրենք լուր կը տան Կամուրջէն թէ այսքան մարդ ենք եկել, այսքան ապրանք ուղարկեցէք, դուք էլ իսկոյն ուղարկելու էք մեր մարդկանց ձեռքով եւ ապահովութեան համար մեր մարդիկ սրանց անձամբ ուղեկցելու են Կամուրջէն դուրս:

Նամակների արագութեան համար էլ խօսեցի եւ առաջարկեցի եթէ մարդիկ չգտնեն՝ վարձելու է մարդ եւս ուղարկել – թէ ձերը եւ թէ ներսինը: Սրա համար էլ որոշ գումար էք տալու. ամսեկան մի անգամ դրամականի հաշիւ կը տան ձեզ: Դրամ անպատճառ տւէք եւ պահանջեցէք գործ կատարել...

Համբոյրներով  
ԱՐԱՄ

1905 թ. փետ. 8-ին  
Աւետարան

1.- Աւետարան – Աբաղայի դաշտի Խաչան գիւղ (Բերկրի գաւառակ), ուրեմն Արամ սահմանը անցած եւ մուտք գործած է Վանի նահանգ:  
Ընդհանրապէս Ս. Թադէի վանքէն մինչեւ Վան, շուրջ 150 քլմ. տարածութիւն, Արամի երթուղին, ձմեռնային բուք ու բորան օրերուն, տեղի կ'ունենայ հետեւեալ հանգրուաններով.– Վանքէն Կարանի գիւղ, ապա սահմանագլուխի Ալազան սարը. անկէ Աբաղայի դաշտի Չալուխու եւ Խաչան գիւղերը – Բերկրի գաւառակի Պատիկ Գեղ եւ Տիրամէր Աստուածածին գիւղերը – Մարմետ – Վան՝ բերդի պարիսպներուն տակ, Թարիզի Դուռ, Հայկավանք, Այգեստան՝ Ղարաղաղ քաղամաս (Փաշի Փողան):  
2.- Կայանը ծածկանունն է Բերկրի գաւառակի Պատիկ Գեղի:

## Բ.– ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԷՋ

1905 թ. Փետրուարի սկիզբը, չսպասելով այլևս «եղանակի բացուելուն», ձիւն-ձմեռ օրերուն, եւ առաջնորդութեամբ վատահեղի ուղեցոյց վալադներու, Արամ Մանուկեան ճամբայ ելաւ Ս. Թաղէի վանքէն դէպի Վան, ուր հասաւ շաբաթ մը ետք, անցնելով շաբթ մը քրտական եւ հայկական գիւղերէ:

– Վանի մէջ այդ օրերուն կեդրոնական դէմքը Վահան Փափազեանն էր (Կոմս), որ փոխարինելով բանտ գտնուող Գիսակը (Սերենկիլեան) կազմակերպական հսկայ գործ կատարած էր շրջանին մէջ: Մեծ հեղինակութիւն կը վայելէր եւ, իբրեւ տեղացի, սիրով ու յարգանքով ընդունուած էր բոլորին կողմէ: Յաջողած էր դիւանագիտութեամբ շրջանցել այն վտանգաւոր կացութիւնը, որ ստեղծուած էր Մասնոյ 1904 թ. ապստամբութենէն ետք Վանայ շրջանին մէջ Անդրանիկի մեծաթիւ խումբին ներկայութեան պատճառով: Կոմսն էր դարձեալ որ կանոնաւորած էր Ատրպատականէն դէպի Վան ռազմամթերքի փոխադրութեան գիծերը, որոնք յարատեւօրէն վտանգի ենթարկուած ըլլալով մերթ ընդ մերթ փոփոխութեան կարիքն ունէին:

Այս բոլորով մէկտեղ, Արամի համար առաջին օրէն պարզ պիտի դառնար նաեւ, որ որոշ դժգոհութիւններ կային Կոմսի դէմ: Վերջինիս «մենատիրական» գործելակերպը ընդունելի չէր համարուէր Վասպուրականի Կեդր. կոմիտէի «դրսեցի» նկատուող ընկերներուն կողմէ,– Իշխան, Վարդան Շահապազ, Տիգրան: Վէճը պիտի հարթուէր ի վերջոյ Կոմսի հեռանալով Կովկաս, ուրկէ այսուհանդերձ ան պիտի չզլանար իր աջակցութիւնը բերելու Վասպուրականի զինման աշխատանքներուն:

– Վանի վիլայէթը ընդարձակ եւ հայաշատ նահանգ էր շուրջ 39.000 քառ. քիլոմէթր տարածութեամբ եւ ատէլի քան 2200 բնակավայրերով: Բնակչութեան մեծամասնութիւն կը կազմէին հայերը, սպա կու գային քիւրտերը. թուրքերը մեծ մասամբ քաղաքաբնակ էին. իսկ Հ. Յ. Դաշնակցութիւնը, այլ խօսքով Վասպուրականի կամ Շամիրի Կեդր. կոմիտէիները կ'ընդգրկէր ոչ միայն ամբողջ վիլայէթը, այլեւ յարակից շրջաններ Կարին-Էրզրումի եւ Պիթիսի նահանգներէն:

1903 թ. Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներուն Կոմսի հետ Վան անցած Իշխանը (Պօղոսեան-Սիքայէլեան) իր գործունէութեան կեդրոն ընտրած էր նահանգին հարաւային գաւառները եւ բուռն թափով ձեռնարկած անոնց կազմակերպութեան: Շուտով լեռնային այդ գաւառներէն առաջացաւ նոր շրջան Լեռնապար անունով, կազմելով Վասպուրականի երկրորդ Կեդր. կոմիտէիներ\*:

Ինչ կը վերաբերի Արամին, Կոմսի հեռանալէն ետք, ան դարձաւ Վանի առանցքային մարդը, որո ձեռքերուն մէջ կեդրոնացան շրջանի կուսակցական-կազմակերպական, զինական, տնտեսական եւ կրթական բազմաբնոյթ աշխատանքները: Շնորհիւ իր անցեալի հարուստ փորձառութեան, այլեւ իր ժողովրդանուէր գործունէութեան, շուտով Արամ պիտի դառնար վանեցիներէն սիրուած եւ հարազատ մարդ, որ գիտէր իր շուրջ հաւաքել ու գործի լծել բոլոր կենսունակ ուժերը:



– Վասպուրականի ընդարձակ երկրամասին մեջ, Արամի գործունեության այս առաջին շրջանը կ'ընդգրկե համեմատաբար երկար ժամանակամիջոց, 1905 թ. Փետրուարին մինչև յաջորդ տարուան Հոկտեմբեր ամիսը, որու ընթացքին, բացի կազմակերպական բնոյթի աշխատանքներէն, Արամ ծանրացաւ գլխաւորաբար շրջանի զինման գործին վրայ՝ ամուր հիմներու վրայ նախապատրաստելու համար Վասպուրականի հայութեան ինքնապաշտպանութիւնը, այնքան կենսական՝ մէկ կողմէ կառավարական սաղրանքները դիմագրաւելու եւ, միւս կողմէ, շրջակայքի քրտական ցեղերու աւագակային բռնարարքները սանձելու տեսակէտէն: Այս նպատակին համար կարեւոր էր կարգի բերել հաղորդակցութեան ու մանաւանդ ռազմամթերքի փոխադրութեան ճամբաները, մասնաւորաբար Ատրպատականի գիծերը, որոնց միջոցով կը հայթայթուէր Կովկասէն ուղարկուած զէնք ու զինամթերքի մեծագոյն մասը: Կային անշուշտ Երեւանի ու Կարսի գիծերը, նուազ բանուկ սակայն այդ տարիներուն, Կովկասի մէջ ծայր առած հայ-թաթարական կռիւներու պատճառաւ:

– Արամի Ատրպատականէն Վասպուրական անցնելու օրերուն, 1905 թ. Փետրուարին բռնկած հայ-թաթարական զինեալ բախումները, արագօրէն տարածուելով եւ բուռն թափ ստանալով՝ պիտի ալեկոծէին բովանդակ կովկասահայութիւնը, տագնապալի կացութեան մատնելով նոյնպէս բուն երկրի մէջ գործող ուժերը, անոնց կարգին բնականաբար եւ Արամը: Արդարեւ, կուսակցութեան վերին մարմինները՝ Արեւելեան եւ Արեւմտեան բիւրոները, այլեւ արտասահմանեան միատրոներու ամբողջ ջանքը – դրամական, մարդկային ու զինական – պիտի ուղղուէր կովկասահայութեան ինքնապաշտպանութեան գործին: Առաջնակարգ կարեւորութիւն ներկայացնող այս խնդիրը այնքան կլանած էր կուսակցութիւնը, որ բուն երկրի հազար ու մէկ դժուարութիւններու մէջ տուայտող ժողովուրդին եւ գործիչներուն վրայ կը ձգէր այն տպաւորութիւնը, թէ իրենք եւ իրենց հետ Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան դատը մոռացութեան են տրուած:

Ահա այսպիսի դժնդակ պարագաներու տակ պիտի սկսէր Արամի գործունեութիւնը Վասպուրականի մէջ, առանց խօսելու տակաւին հարեւան Տարօն աշխարհի մասին, որ 1904 թ. Մասնոյ ապստամբութեան ձախողանքին հետեւանքով կը գտնուէր ծանրագոյն կացութեան մէջ, եւ որուն օժանդակելու պարտքը նոյնպէս, զէք մասամբ, կ'իյնար Վասպուրականի ուսերուն:

Ահա նաեւ այս պայմաններուն մէջ է որ երիտասարդ յեղափոխականը, սեփական ժողովուրդին նուիրեալ հաւատաւոր մարդը, Արամ, պիտի գլխոնար երեւան բերել գաղափարական հզօր կամք եւ կազմակերպական բնածին տաղանդ, որոնք միացած իր կողմէ ցուցաբերուած համբերատար ու մեղուաջան աշխատանքին, կարելի պիտի դարձնէին ոչ միայն հարթելու ամէն կարգի դժուարութիւն, այլև Վասպուրականը հետզհետէ դարձնելու մէկը հայ ազատագրական պայքարի ամրակոտ դարբնոցներէն:

ԽՄԲ.

---

*\*) Լեռնապարի Կեդր. կոմիտեի մասին տեղեկացած էր Վան նահանգի Հայոց Չոր, Գաւաշ, Շատախ, Մոկս, Կարկառ եւ Պիթլիս նահանգի Խիզան, Շենիճոր, Սպարկերտ, Մամետանք գաւառակներէն: Դաշնակցութեան Խորհուրդը 1905 թուականին հաստատած ըլլալով այս նոր Կ. կոմիտեի մասին, 4րդ Ընդհ. ժողովը վաւերացուց զայն:*

**Սիրելի Մալխաս!**

Ի մեծ ուրախութիւն քեզ եւ ընկերների յայտնում եմ, որ ապահով տեղս հասայ: Մանրամասնութիւնները չեմ գրում, բայց առանձին դէպքեր չպատահեց... Ձների մասին մի քիչ յետոյ կը գրեմ, երբ լաւ կը հանգստանամ եւ կարող կը լինեմ երեւոյթները մի յայտարարի վերլուծել, միայն շտապելու է...

Սիրելիս! պէտք է պնդել պահանջների վրայ, մանաւանդ դրամի. մեծ սով է. առանց որոշ յարաբերութեան ձեւ մշակելու չէք մեկնելու...

Այստեղի կեանքի մասին գրելը վաղ եմ համարում յայտնի պատճառներով... Երբ մի քիչ աւելի մօտից կը ծանօթանամ, եւ որոշ դիրք կը բռնեմ, միայն այն ժամանակ կրնամ գրել քեզ եւ մնացած ընկերներին:

Մենաւոր գրել էի որ հինի ծայրերը առանց գնդակների\*\* ուղարկեն. դուք էլ ձեր կողմից այդպէս էք վարւելու, այդտեղերից<sup>1</sup> Մենաւոր ուղարկելուց. աւելորդ բեռ է եւ կարելի է այդտեղ ծախել... կամ պահել ապագայի համար:

Խմբագրութեան նորից դիմեցէք մեքենայի համար. թող որքան կարելի է թելերը երկար լինեն:

Զուռնաչիները այստեղ սկսել են մեքենայութիւններ եւ ամերիկական յայտնի գրականութիւնը հոս էժան գնով ծախում են: Բարի եղիր գրելու «Հայրենիքի»<sup>2</sup> խմբագրութեան, որ յատուկ Շամի համար 10-15 համար ուղարկեն մշտականապէս. դա շատ կարեւոր է, իսկ «Դրօշակը» ուղարկելու է աւելի մեծ քանակութեամբ, 100-150 օրինակ:

Զարմանալի բան է, կարծես պրոպագանդայի հարցը նոր է ասպարէզ իջնում... Տղաներին պահեցէք մինչեւ նոր կարգադրութիւն լինի (խօսքս 10-ի մասին է):

Աշխատեցէք որքան հնարաւոր է գրականութիւն ուղարկել, նոյնիսկ օրին[աւոր]. օր[ինակ] Րաֆֆիի, Ծերենցի, Ղարիբի<sup>3</sup> եւ այլն եւ այլն, որոնք էլ կարեւոր են:

Համբոյրներով՝  
ԱՐԱՄ  
(ՍԱՐԳԻՍ)

1905 թ. 14 փետր.  
Շամ

**Յ. Գ.— Սիրելիս! Ձների մասին խօսեցի ընկերների հետ. ասում են որ պիտի յա-**

1.- Այսինքն Խոյէն, ուր կը մնար Մալխաս:  
2.- Պաշտօնաթերթ Հ.Յ.Գ. Ամերիկայի Կ. Կոմիտէի:  
3.- Ղարիբ – ծածկանունն է Ա. Ահարոնեանի:  
4.- Գարեգին – բուն անունով Ստեփան Թադէոսեան. կը մնար Սալմաստ:

Ջողեցնէք մինչեւ մարտի վերջը: դրանից յետոյ ուշ կը լինի եւ վտանգաւոր եւ կարող է գործ փչացնել միայն:

Եթէ այդ օրերը ձեր ցանկացած ձեւով անկարելի լինի, պիտի հետեւէք իմ օրինակին, այլապէս անկարելի է:

Գարեգինի<sup>4</sup> ցանկացած վայրում արդէն որոշ գործ ձեռնարկուած է, այնպէս որ որոշ չափով պէտք է համակերպէք սրանց, որովհետեւ այդ ուղղութեամբ աշխատել են եւ շարունակում են աշխատել: Գարեգինի եւ առհասարակ եկողների ծրագիրները ի նկատի կ'առնելին եւ եթէ յարմար գտնուեց ի հարկէ կը յարգուի:

Մանրամասնութիւններ այլ անգամ:

Համբոյներով՝  
ԱՐԱՄ

Փաստ. 658-8

## 16

### Միրելի Փայլակ!

Երեւի լսած կը լինէք որ ապահովութեամբ տեղս հասայ, ճանապարհների մասին երկար չեմ գրում որովհետեւ շատ հետաքրքիր չէր, բայց կապուած էր մեծ նեղութիւնների հետ. եթէ Զարուքիսը\*<sup>1</sup> եկել է թող լաւ ծայտի\*, կարեւոր իրերը իր հետ վերցնի ու Աստուծո անունը տալով ճանապարհուի\*, միայն մի պայմանով, որ ոչ մի կէտում մի գիշերից աւելի չէ մնալու, ես էլ այդպէս վարուեցի եւ մեծ բան շահեցինոյնպէս վարուելու է եւ Նիկոլի\*<sup>2</sup> հետ, բայց պէտք է առաջինից ապահովութեան լուր առնել, ապա երկրորդը սկսել...

Խմորի, կապսիւլի եւ թիթեղի փոխադրելու վրայ առանձին ուշադրութիւն է դարձնելու. ինձորներ առայժմ այնքան կարեւոր չէ, թերեւս հոս յաջողեցնենք նմանը ձեռք ձգելու. դուք ուժ էք տալու խմորին եւ կապսուլին... մեքենան\* ելեկտրական եթէ Մրգաստանից ստացուեց անմիջապէս փոխադրելու էք, թէ ոչ կրկին պահանջելու էք որ շտապով ուղարկեն...

Ինչ ասել կ'ուզէ որ փոխադրութեան վրայ առանձին ուշադրութիւն էք դարձրնելու. եւ ինչպէս խօսել եւ կարգադրել եմ անմիջապէս գործի է ձեռնարկելու: Առաջ էլ բերանացի խօսել եմ ձեզ հետ, նորից տեղիս ընկերների համաձայնութեամբ գրում եմ, որ հինի ծայրերը մեծ քանակութեամբ փոխադրելու համար, պէտք է ծայրերից հանել գնդակները\* ու այնպէս ուղարկել, դա կրկնակի ու եռակի թեթեւութիւն կը լինի. իսկ գնդակները\* տեղդ կամ կամուրջում<sup>3</sup> կարելի է ծախել մեզ համար ձեռնտու գնով... եթէ չծախուի էլ հոգ չէ, միայն աշխատելու էք այդպէս անել. նորից եւ նորից կրկնում եմ որ այսպէս էք վարուելու ի նկատի ունենալով եւ այն հանգամանքը որ հոս մօտաւորապէս 10-15 հազար գնդակներ\* թափած պատրաստի ունենք, այնպէս որ հոս անցնելուց յետոյ իսկոյն կը շտկուի:

Մի մոռանաք եւ մի հանգամանք. տեղիս ընկերների յորդորների ազդեցութեան

տակ ժողովուրդը բոլոր կողմերում բաւարար չափով զէնք\* է ձեռք բերել եւ աշխատում է նորերը գնել. բայց դժբախտաբար ծայրեր համարեա չունեն, բոլոր կոթերը հին տեսակի են, ուրեմն աշխատելու էք եւ հին ծայրերի այդ տեսակ փոխադրութեան առանձին ուշադրութիւն դարձնել, որով կարող ենք եւ ժողովրդի պահանջներին բաւարարութիւն տալ: Շտապեցէք քանի պայմանները ներում են եւ քանի ուշ չէ...

Աւետարանի<sup>4</sup> Գրիգորին մի ոսկի էի տւել այդ գործի համար. դուք էլ տւէք մի քանի ոսկի (պայմանով խիստ հաշիւ պահանջել ամսէ ամիս) եւ պահանջեցէք գործ կատարեն: Նա ընդունակ տղայ է եւ թերեւս աւելի օգտակար լինի այդ ձեռով: Դրան խոստացել եմ մի գլխի փուշի, խնդրում եմ անպատճառ տալ:

Աւետարանի Որսորդը ինձ հետ շատ գէշ վարեց, ցանկանում էր ուշացնել Աւետարանում (նա ինձ մինչեւ Աւետարան բերեց, տւել եմ տեղը նրան 2 մեջիդէ): Նրան մի ոսկի կարծում եմ շատ կը լինի, որովհետեւ կայուն չդառաւ. նրանից խօսք առէք եւ պահանջեցէք ուրիշների հետ այդպէս չվարւել. Յարութիւնը\* աւելի լաւ կը լինի, եթէ մէկ աւելի վստահելի մարդու հետ դնէք, լաւ կը լինի. շատ յարմար է Աւետարանի Գրիգորը...

Իմ անցազիրը\* անպատճառ ապահով մարդու ձեռքով ուղարկելու էք ինձ... Հոս մեծ կարիք կայ առքնանակի\* ծայրերի. եթէ վրէժից եւ Սարուստանից ուղարկելու լինեն, սրանց էլ բաժին հանէք:

Տեղիդ նորութիւնների մասին չմոռանաք գրել, մանաւանդ ռէսի եւ փոխադրութեան հետ կապաւածները...

Թոմասի քոջ տղան տեսայ, դեռ փոքրիկ է 15 տարեկան, երկու տարուց յետոյ միայն կը վերջացնի. դեռ դրամները չի ստացել. թող դրամները մեր միջոցով ուղարկի. նոյն եւ նամակները: Իմ անմաշ գրիչը Յարութիւնի քովն էր մնացել, անպատճառ ուղարկէք:

Զուրնաչի վարժապետին ձեզ մօտ բռնել էին նամակներով, ի՞նչ դառաւ, չմոռանաք գրել:

Տեղիս ընկերների կողմից Բուկրէշտ անունով մէկը կ'երթայ Աւետարանի բէյի մօտ բանակցելու, եթէ ֆոնոգրաֆը\*\* պահանջեց իսկոյն ուղարկեցէք. դա շատ կարեւոր է:

Նամակներ ուղարկեցէք ըստ պատկանելոցն:

Բարեկներ Նիկոլին, Մելքոնին, Թաթոսին, Մկոյին, Յովհաննէսին, բոլոր ծանօթներս:

Համբոյրներով  
ԱՐԱՄ

1905<sup>5</sup> թ. 14-ին փետր.

Շամ

- 1.- Յարութիւն Սիրաքեան, Կովկասէն ընկերակցած էր Արամին մինչեւ Խոյ. անցած էր Կարս, Թիֆլիս ելեկտրական գործիքի հետ ծանօթանալու:
- 2.- Գանձակեցի Նիկոլ, նոյնպէս Արամի հետ Ատրպատական անցած:
- 3.- Թադէի վանքի մօտ Կարէ գիւղին ծածկանունը:
- 4.- Աւետարան – Բերկրի գաւառակի Խաչան գիւղի ծածկանուն:
- 5.- Չեռազիրը ունի 1904, ինչ որ բացայայտ սխալմունք է:

17

Սիրելի Փայլակ!

Անցեալները գրել էի իմ գալու մասին. երեւի ստացած կը լինես. համարեա մի ամբողջ ամիս դառաւ քո Մենաւոր գալու չգալու խնդիրը. դեռ այժմ էլ հաստատ չգիտեմ թէ այդտե՞ղ ես, թէ Աւարայր<sup>1</sup>. Ինչեւէ, քո կամ տեղդ եղած ընկերոջ միակ պարտականութիւնը լինելու է ամէն մի առիթից օգտուել եւ փոխադրութիւնը շտապեցնել:

Մի մոռանաք որ գծերը միշտ նոյն դրութեան կը մնան. լաւ գիտես սեւանալու հետ կապւած բոլոր դժուարութիւնները<sup>2</sup>. ուստի դրամի ուժով շտապեցնելու էք: Նորից կրկնում եմ որ հինի ծայրի ծանր մասը հանելով թեթեւացնելու եւ ապա ուղարկելու է:

Սարուստանից Յ[արութիւ]նը վերադարձա՞ւ թէ ոչ. նրա մասին լուր չունենալու համար շատ կ'երկմտիմ. եթէ եկել է նրան իսկոյն ուղարկելու էք եւ օգտւած ձեռով...

Նրանից յետոյ հերթը Ն[իկոլ]ին է, ապա Մ[սո]-ին:

Զուրնաչին խոհեմաբար յետ է նահանջում, չէք գլանայ բարի երթ մաղթելու...

Սարուստանից արդե՞ք խմոր եւ պարագաներ ստացաք թէ ոչ. գրելու եւ պահանջելու էք:

Դարտակ խնձորներ չէք ուղարկելու եւ գրեցէք Մրգաստան որ այսուհետեւ ոչ մի նոր խնձոր չուղարկեն, այլ ուժ են տալու խմորին եւ պարագաներին. խնձորներ հոս հնարաւոր է ձեռք ձգել: Աւարայրում եղած 24 խնձորը իբրեւ բացառութիւն կարող էք ուղարկել:

Զէք մոռանայ Սարուստանից իմ հասցէին եկած նամակները եւ յանձնարարութիւնները յատուկ ծրարով – անձնական – ինձ ուղարկելու:

Եթէ իմ կօշիկները Յ[արութիւ]նը բերել է, շուտով ուղարկելու էք. ոտերս բոբիկ է, ջէբս ոչ մի կոպէկ չկայ ինձ համար բան գնելու: Յար[ութիւ]նի միջոցով ինձ մի քանի ոսկի ուղարկեցէք անձնական ծախսերի համար:

Աւետարանի հռչակաւոր Բրախուլյամը<sup>3</sup> իմ ապրանքների մի մասը պահել է. ինձ համար ամենակարեւորը դիտակն է. ես էլ չգիտեմ ինչ են արել. այսօր ապրանքների ցուցակը ստացայ. դիտակի մասին խօսք չկար. նոյն եւ մասերի, ելեկ[տրական]-լամպարի եւ ուրիշ բաների. նրան գրեցէք որ իմ իրերը անմիջապէս ճանպեղէք: Գրել էի որ Աւետարանցի Գրիգորին մի ոսկի եմ տւել փոխադրութեան կանոնաւորութեան համար. դուք էլ դրամ տւէք եւ կանոնաւոր հաշիւ պահանջեցէք:

Աւերորդ եմ համարում իմ ուզած կոթի մասին կրկին գրելու. հաւատացած եմ, որ առաջին պատահած յարմար դէպքում կը ստանամ. վրան գրելու էք՝ Արամին:

Այստեղի ընկերների կողմից համարեա սառն ընդունելութիւն գտայ. պատճառները բարդ են, ապագան կը պարզէ: Սեւանալու հետ մնաս բարեւ կ'ասեմ Շամին եւ գաւառ կ'երթամ: Այս մասին տեղացիներին ոչինչ չէք գրելու. չեմ ուզում բամբասանքի դուռը բանալ:

Տեղիդ նորութիւնների մասին ինձ առանձին նամակով հաղորդեցէք. առհասարակ ինձ վերաբերող խնդիրների մասին առանձին էք գրելու:

Ընծայրի ձեռքով, նոյնպէս եւ Մելքոնի<sup>4</sup>, նամակ է[ի] գրել Մրգաստան Ս[արգիս] Օհանջանեանին, ինձ դրամ ուղարկելու մասին. դուք էլ կրկնեցէք: Աշխատեցէք այսուհետեւ ժամանակ շահելու համար նամակները Սարուստան այդտեղից ուղարկել:

Թոմասի քրոջ որդին դրամի կարիք ունի, ոչ մի կոպէկ դրամ չունի. Բրախուլամից առէք եւ իմ նամակների հետ ուղարկէք. ես կը յանձնեմ. նամակներ բերողին յայտնելու էք որ մէջը դրամ կայ կամ այնպէս կապեցէք որ չնկատեն. եթէ դրամ ունենաք այդ ձեւով ինձ մէկ-մէկ չզլանաք մի քանի կոպէկ ճանպելու:

Եթէ իմ անունով ռուսական լրագիր գալու լինի շուտով ճամբեցէք:

Ի՞նչ դառաւ Ընծայրը, վերադարձաւ թէ ոչ. չմոռանաք նրան խորին յարգանացս հաւաստիքները ուղարկելու: Բարեւում եմ տեղիդ բոլոր ընկերներին, Մելք[ոն], Մկօ, Թաթուլ, Յովհաննէս եւայլն, եւայլն:

Ընկերական յարգանքներով՝  
ԱՐԱՍ

Շամ, 1905 թ. փետր. 19ին

Յ. Գ.— Հնարաւոր չէ՞ արդեօք խնդրելու Վրէժի ընկերներից, որ Արտուրի ստացած 100 ռուբլին ինձ ուղարկէին: Փողի մեծ կարիք ունեմ, մեծ գործ արած կը լինեն. գրիր եւ խնդրիր իմ կողմից.

ՆՈՅՆ

Մ. Ք.ից ինձ համար եկած լուսանկարչական ապարատը իւր պարագաներով ուղարկեցէք ինձ. եթէ հնարաւոր է Մենաւորինը ուղարկէք ինձ. իսկ Սամսոնի քովը եղածը տեղդ պահէք, հոս սարում աւելի կարելոր է քան այդտեղ:

Պարագաները շատ հարուստ է լինելու, որովհետեւ հոս չի ճարուում, առանձնապէս գլանակները բազմաթիւ լինեն: Մեզ համար տեղդ եւ Մինարէթում եղած դեղերից, հայերէն գրերով մի ապտիկա<sup>5</sup> պատրաստիր ու ճանաչիր:

Եթէ կարող էք մեզ համար ուղարկէք երկաթաջրով բամբակ, արիւն կանգնեցնելու համար:

ՆՈՅՆ

- 1.- Աւարայր – ծածկամուն Խոյ քաղաքի:
- 2.- Սեւանալու – այսինքն ձիւներու հալելու:
- 3.- Բրախուլամ – խաչանցի հայ, յեղափոխականներուն մեծ աջակցութիւն ցոյց տուած, ապա ստրիանդակութիւն կատարած ազդեցիկ մարդ: Իսկական անունը անծանօթ. կու տային նաեւ Որտորդ անունը: Բրախուլամ քրտերէն կը նշանակէ «եղբորս ծառայ», իմա՝ քու ծառայ:
- 4.- Ընծայրը – Գեորգ վրդ. Նալպանտեան – Ս. Թադէի վանահայր. Մելքոն եւ Թոմաս վանքի զինուորներէն էին:
- 5.- Դեղագիր:

**Վրէժի Կ. Կոմիտէին**

**Ընկերներ!**

Երեւի լսած կը լինէք որ վերջերս հնչակեան կուսակցութեան մի ներկայացուցիչը եկել էր հոս գործ սկսելու: Պայմանները այնպէս էին դասաւորուած որ տեղիս ընկեր[ներ]ը ստիպուած էին բանակցելու սրանց հետ եւ համերաշխութեան որոշ ծրագիր մշակելու գոնէ այս շրջանի համար, ի նկատի ունենալով որ վերջին Ընդհ. ժողովը ընդունել է, որ երկրի մարմինները կարող են համերաշխութեան ծրագիր մշակել **հնչակեան\*** խմբերի եւ անհատների հետ: Մեր եւ նրանց մէջ մշակուած ծրագրի օրինակը դնում ենք նամակի մէջ: Մինչեւ հիմա մեր յարաբերութիւնը նրանց հետ եղել է ընկերական եւ սիրալիր. բայց որովհետեւ այս քանի օրը վերոյիշեալ պ. ներկայացուցիչ Աշոտը ցանկութիւն ունի երկրից որոշ պատգամաւորութեամբ հեռանալու եւ իբր թէ առաջիկայ կայանալիք պատգամաւորական ժողովում դնելու որոշ պահանջներ եւ այդ պահանջները յարգուած դէպքում միայն կը վերադառնայ իւր տեղը, ի միջի այլոց նա պահանջների կարգում դնելու է համերաշխութեան այդ ծրագիրը:

Քանի որ խնդիրը այդ ձեւով բարդանում է եւ ծայրը հասնում է մինչեւ ձեզ, բարւոք սեպեցինք այդ խնդրի մանրամասն տեղեկագիրը ձեզ գրելու, ի գիտութիւն:

Պէտք է ի նկատի ունենաք որ մեր սիրալիր վերաբերմունքը եւ համերաշխութեան ծրագրի կազմւելը, որոշակի կերպով կապուած է եղել նրանց ներկայացուցիչ պ. Աշոտի անձնաւորութեան հետ: Դեռ Մենաւորից նա նկատուել է իբրեւ անկեղծ մարդ եւ այդ հողի վրայ ստեղծւել մեր ընկերական յարաբերութիւնը. այլապէս մեզ լաւ յայտնի էր նրանց ամբողջութեան բարոյական մակարդակը:

Նկատելով եւ շեշտելով նրանց երկրի բացառիկ դրութիւնը, համոզել էինք երկրում որքան համերաշխութիւնը կարեւոր է. մարդիկը ուրախութեամբ ընդունել են, եւ ստիպուած էին ընդունել մեր բոլոր աշխատանքները եւ իրենց գործերը դնել այնպիսի հողի վրայ, որ չվնասէ ոչ մեր գործին եւ ոչ էլ առհասարակ երկրի ընդհանուր գործին:

Խնդիրը ահա այս դրութեան մէջ էր, դեռ գործնական քայլեր անելու մէջ էինք, երբ առաջ եկաւ պարոնի հեռանալու խնդիրը: Ուստի բարւոք համարեցինք պարոնին կանչել եւ վերջին խօսքը ասել,— որ մենք համերաշխութեան ծրագիր մշակել եւ հոս անկախ մարմին իրենց ճանաչել ենք միայն այն պատճառով որ ինքը հոս այդ գործի գլուխն էր եւ իւր ձեռքով էր ղեկավարում տեղիս ընկերներին. իսկ այլապէս առանց իրեն պէս մի վստահելի մարդու, մենք հրաժարուում ենք կապ պահպանել եւ նոյնիսկ անկախ մարմին ճանաչել: Պնդել ենք որ այդ ծրագիրը ի գործ կը դրւի միայն այն ժամանակ երբ ինքը կամ իր պէս մէկը կը գայ հոս:

Պարոնը մեր դրած հարցին պատասխանեց, որ ինքը մի քանի ամիս ապրելով երկրի մէջ, անձամբ, իւրեանց ընկերներինց եւ մեր տւած տեղեկագիրներին հիման վրայ եկել է այն եզրակացութեան, որ առանց դրսի լուրջ օգնութեան, բոլոր տեսակի, հոս անկարելի է բարեխղճութեամբ գործ սկսել. ուստի ինքը գնում է այդ պարագան ընկերներին առաջ դնելու եւ հասկանալու, թէ արդե՞օ տրամադրութիւն եւ ուժ ունեն հոս լուրջ գործ սկսելու եւ այդ յոյսերը, իրական են թէ վերացական, թէ արդեօք նրանք հոս անւան համար են իրեն ուղարկել թէ գործի: Երբ իրեն կը պարզուի այդ խնդիրները, նա ըստ այնմ գործ կը սկսի: Եթէ լուրջ յոյսեր տւին, կրկին [կը] վերադառնայ, եթէ ոչ ինքը կը հեռանայ եւ ամէն բան կը պարզէ մեզ:

Մենք հաւատալով նրա անկեղծութեանը եւ օգտակար գտնելով նրա ցանկութիւնները, մեր կողմից էլ դրինք մեր պահանջները, որ այս շրջանում ինչ կարող են անել, ինչ վայրերում պիտի գործ սկսեն եւ ինչ ձեւով: Նա ընդունեց եւ մեր պահանջները ու խորհուրդները եւ խոստացաւ դնել իւր ընկերներին առաջ ու բաւարարութիւն պահանջել: Մենք նրա համար ամէն դիւրութիւն ստեղծեցինք անվտանգ ձեզ մօտ հասնելու եւ իւր միսիան կատարելու:

Դուք էլ ձեր կողմից նոյն հողի վրայ եթէ կարիք լինի բանակցեցէք միայն այն պայմանով, որ նրանք հոս դրսեցի մի կանոնաւոր մարդ ունենան, ընդունեն մեր առաջարկները եւ մեզ հետ համերաշխ ապրեն, այլապէս բոլոր աշխատանքները ի գուր կ'անցնեն:

Մի քանի խօսք էլ նրանց հոս ունեցած ուժի մասին: Նրանք մինչեւ հիմա կազմակերպութիւն չունէին, միայն կային համակրող անհատներ. կոթեր եւ ծայրեր չնչին գումարով 8-10 հատ. պարոնի գալուց յետոյ նոր բան չէ աւելացել, միայն կազմւել են 5-10 խումբ եւ մի մասնաճիւղ, ուրիշ ոչինչ: Նոցա հոս եղած ընկերները առանձին բարոյական նկարագիր չունեն եւ մասամբ շահագործում էին սրա պարզամտութիւնը եւ գործիք դարձնում:

#### ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

Շամ, 1905 թ. փետր. 20-ին

Յ. Գ.– Պայմանագրութիւնը (պատճէն) կը դրկուի հետեւեալ անգամին: Եկող պարոնի մօտ կը գտնուի մի օրինակ (բնագիրը)<sup>1</sup>:

1.- Յետ գրութեանը աւելցուած է Վահան Փափագեանի (Կոմս) ձեռագիրով:



### Արեւելեան Բիւրոյին

Թիֆլիս, Արեւելեան բիւրոյին ուղղուած Արամի այս նամակը գրուած է գաղտնի թանաքով. այս վերջինը «բացուած» է բաւական յաջողութեամբ. այսուհանդերձ շատ տեղեր, մելանը տարածուած կամ «չբացուած» ըլլալու բերումով, կը մնան բացեր (կիտաւորով նշուած) եւ հարցականներ [?], առանց էապէս անընթեռնելի կամ անհասկնալի դարձնելու գրութեան ընդհանուր բովանդակութիւնը:

Ինչպէս սովորութիւն էր գաղտնի թանաքով գրուած նամակներու պարագային, առաջին էջին վրայ կը շարադրուէր շատ սովորական եւ անմեղ, ընտանեկան կամ գործի վերաբերեալ գրութիւն մը: Այս բնոյթի էջով մը կը սկսի նաեւ Արամի նամակը, այս անգամ «Արամ Սարումեանց» ստորագրութեամբ:

#### Սիրելի ընկերներ!

Ձեր որոշումով եւ համաձայնութեամբ ձեզ [անից] բաժանւեցի հոս գալու դիտաւորութեամբ. անշուշտ գիտէք ինչու, ինչ պատճառներից դրդւած մի 2 ամիս մնացի Աւարայր, իսկ վերջերս ամենայն յաջողութեամբ հասայ Շամ : Իմ հոս գալը ընդամէնը 8 օր է: Լայն խնդիրների մասին գրել առանց մօտիկից ծանօթանալու, կարծում եմ իմ կողմից անտակտութիւն կը լինի. ուրեմն այս անգամ բաւականանում եմ թուղցիկ տպաւորութիւններով, ինչ ստացել եմ ճանապարհին եւ Շամում այս ութ օրւայ ընթացքում:

Ընդհանրապէս ժողովրդից ստացած տպաւորութիւններս շատ մխիթարական էին. ամէն տեղ գրկաբաց ընդունում էին մերոնց. պատրաստ են յետին մաղը ծախելու եւ գէնք գնելու եթէ յարմարութիւններ ստեղծող լինին: Այս վերջին տարին եթէ թերթէք ժողովրդի տւած նպաստը տեղիս կազմին եւ ի նկատի ունենաք ժողովրդի տնտեսական տագնապալի դրութիւնը, ուղղակի հրաշք կը համարէք: Մի մոռանաք որ այդ նպաստը ժողովուրդը տալիս [է] իր ինքնապաշտպանութեան համար գէնք գնելու համար: Բայց ցաւալի է ասել որ ի դէպ ժողովրդական այդ մեծ ու ծով տրամադրութեան, երկիրը զուրկ է կազմակերպութիւնից, մանաւանդ ղեկավարելու ընդունակութիւն ունեցող մարդկանցից:

Տեղիս կազմը ամենայն բարեխղճութեամբ եւ վստահութեամբ կարելի է պնդել, որ բոլորովին անձեռնհաս է այդ գործը ղեկավարելու. ոչ միայն անձեռնհաս է այլեւ զուրկ է յեղ[ափոխական] գաղափարից[?] եւ հասարակական խնդիրները ըմբռնելու եւ ընդհանրացնելու ընդունակութիւնից: Մասամբ պատմական ուժակցիան, մասամբ Գիսակի<sup>1</sup> վտանգւելը այնպէս դրութեան մէջ են դրել այստեղի գործերը, որ պարզ ապրանքապահները այսօր դառել են կենտ. պատաս[խանատու]

մարմնի անդամ եւ իրենց ձայների մեծամասնութեամբ խախտում են բոլոր բարի զգացմունքները: Վերջերս այդ բանը մասամբ մեղմանում է շնորհիւ դրսեցիների ներկայութեան, բայց հեռու է չէզոքանալուց մինչեւ այդ տեսակի ուժերը մէջտեղից չվերանան. ցաւալին այն է որ ինձ անյայտ պատճառներով Կոմսն էլ դրանց հետ միացել է եւ դառել է նրանց իդիոլոգը<sup>2</sup>: Դրութիւնը փոխելու համար հարկաւոր է շատ աշխատանք, բայց ամենագլխաւորը ձեր բարոյական ազդեցութեամբ ժամանակի ընթացքում աշխատելու էք այդ խոչընդոտները մէջտեղից հեռացնելու, ներչնչւելով [?] այն անաչառ տեղեկութիւններով ինչ կը տան Երկիր մտած դրսեցի վստահելի տիպերը:

Իսկ մինչեւ այդ որպէսզի մեր գործերը ռէալական հողի վրայ դուրսին չըջանիս այն վայրերի համար որտեղ ծրագրուում է ձեռնարկներ եւ գործեր, ընտրել ենք մի գուտ ինքնուրոյն մարմին, գուտ դրսեցիներից եւ յուսով ենք որ այդ կերպով գործը շատ կը շահի: Չկասկածէք որ «դրսեցիների եւ ներսեցիների» խնդիր կայ. վստահ եղէք որ ձեռնհասութեան եւ անձեռնհասութեան խնդիր է, ուրիշ ոչինչ. այդ մասին կը գրի Կոմսը, դուք անմիջապէս համաձայնութիւն տւէք եւ ընդունեցէք Լեռնապարը իբրեւ նոր մարմին<sup>3</sup>: Լեռնապարի բոլոր չըջանների տեղեկագրերը Իշխանը պատրաստել է եւ կամաց-կամաց կ'ուղարկւի ձեզ. իսկ նախ քան այդ, ներքին թիւրիմացութիւնների առիթ չտալու համար, այդ խնդիրների շուրջ չգրէք այստեղի ընկերներին – տեղացի – մինչեւ խնդիրը պաշտօնական հողի վրայ կը դրուի:

Հոս շատ շահաւէտ գնով կարելի է գէնքեր ձեռք ձգել, 80-100 ռուբլով մոսին եւ 40-50 ռուբլով բերդան: Ժողովրդի ինքնապաշտպանութեան համար դրանցով կարելի է լրացնել, բայց ցաւօք սրտի դրամ չկայ առնելու համար: Ձէնքեր եւ ծայրեր բերում են ամենամտչելի գնով եւ ստիպւած ենք լինում մերժել: Ա՛խ այդ դրամի հարցը շատ է զբաղեցնում ինձ: Սարուտանում ինձ ոսկի յոյսեր էին տալիս, իսկ հոս բառիս իսկական իմաստով մի կոպէկ չունեմ, ոչ ես եւ ոչ էլ մնացած ընկերները: Իսկ հազար անգամ գրւել է ձեզ, դուք ոչ մի պատասխան չէք տալիս եւ մենք համարեա անգործ, օդով ենք կերակրւում: Դրամ ուղարկելու բազմաթիւ ճանապարհներ կան. օր[ինակ] Մրգաստանից, Մինարէթից, Ջրաբերդից<sup>4</sup> – էրզրումի վրայով եւ ձեր մօտից ուղղակի հոս, Աղթամարի հասցէով իբրեւ վանքին ուղարկելիք նպաստ: Մանրամասնութիւնները եւ հասցէն կը գրեմ եթէ համամիտ էք[?] դրամ ուղարկելուն, այլապէս ի գուր աշխատանք կը լինի:

Կարմիր խաչերին առաջարկելու էք որ իրենց միջոցներից որոշ տոկոս յատկացնեն տեղիս բանտարկեալներին (Գիսակ, Մուշեղ, Արմենակ եւ այլն) եւ կարօտ ընտանիքներին. Վազգէնի ընտանիքը յետին չբաւորութեան մէջ է. եթէ ամսեկան (8) ութը (ռուբլի) ուղարկէք, շատ գոհ կը լինեն եւ շնորհակալ, այլապէս ամօթ է այդպիսի մի ընկերի յիշատակին, նրա ընտանիքը անօթի պահելով:

Հարիւր անգամ գրել եմ, էլի գրելու եմ, որ խմոր ունենք .....<sup>5</sup> եւ իրենց պարագաները կարգադրելու էք շուտով փոխադրեն Մենաւոր հոս ուղարկելու համար: Խնձորներ ոչ մի հատ հարկաւոր չեն. նոյն տեսակի հոս ձեռք կը ձգենք եւ կը պատրաստենք. ի նկատի ունեցէք, որ ամբողջ երկրում միայն 10 լիքը խնձոր կայ եւ 4-5 գրուանքա խմոր: Կարծում եմ թւերը պերճախօս են եւ ամօթաբեր փոխան այն պաշարին որ ունենք Սարուտան...

Նաեւ մեր ձեռքի տակ եղած բոլոր զէնքերը անվստահելի է. բոլորը արշաւանքի .....<sup>6</sup> որ Վրէժը ազգասիրաբար հոս է տեղաւորել: Զէնքերը կանոնաւորելու համար կարիք կայ մի հմուտ արհեստաւորի. ուղարկելու էք կամ Միհրանին, կամ Զրաբերդի Աստուածատրին եւ Ոսկանապատում մէկը կայ դրան, բայց ամէնից յարմարը Միհրանն է: Եկողը հետը բերելու է կարեւոր գործիքները եւ բազմաթիւ մասեր:

Զրաբերդում կամ Քարում բազմաթիւ կարոպկաներ եւ զատվորներ կային. դրանք, թէ հինի եւ թէ նորի, բոլորը ուղարկելու էք մեզ:

Հոս կան մի քանի դիտակներ, բայց բոլորն էլ հասարակ տեսակի են. եթէ կարող էք երկու կանոնաւոր, մեծ քայլաչափով հեռաչափ ուղարկեցէք: Եթէ լաւերը չկան հասարակները ի գուր են...

Որովհետեւ բացարձակ կենտրոնացման անգործնականութիւնը տեսանք Բարձրաւ[անդակի] փորձից<sup>7</sup>, ուստի հոս վճռել է մեծ քանակութեամբ դրսեցի զինւորներ [չ]պահել եւ մի վայրում չկենտրոնանալ բացարձակապէս (այս մասին մանրամասնաբար մի այլ անգամ). ուստի կարգադրեցէք բոլոր մարմիններին որ երկիրը զինւորների մեծ կարիք չունի եւ ներս զինւորներ այժմ իբրեւ նախապատրաստական շրջան չեն ընդունւելու: Գալով ինտելիգենտ ընկերներին, եթէ նոքա փորձառութիւն ունեն ուղարկելու էք, եթէ ոչ էլի կարիք չկայ: Վրէժի ընկերները եթէ ապահով հասնեն բաւական է: Տեղիս ժամանակակից պահանջն է, գոնէ գործնականապէս խմորային գործողութիւններին հմուտ եւ էլեկտրական միջոցներից օգտւող մէկը, որ շատ կարեւոր է. այդպիսի մէկին եթէ ուղարկէք շատ գոհ կը լինենք:

Ի՞նչ դառաւ Թռուցիկը<sup>8</sup>. արդեօք նա աշնան չէ կարող այդ պատգամաւորութեամբ ներս գայ: Ինչ ասել կ'ուզէ որ խմբեր ոչ մի պարագայում չէք ուղարկելու:

Հակառակ ձեր յանձնարարութեան՝ ինձ տեղիս մարմնի մէջ ձայն չտւին. հոգ է ինձ համար, որովհետեւ ես եթէ ընդունակութիւններով առանց ձայնի էլ օգտակար կը լինեմ, ապագան ցոյց կը տայ ամէն բան:

Ընդհանուր մեռելային դրութիւն է. հարկերի հաւաքման ժամանակ անտանելի

---

1.- Գիսակ, Ժամօք նաեւ Զարմայր եւ Վարդգէս ծածկանուններով – Յովհաննէս Մերենկիւեան (1871-1915): Դաշնակցութեան ներկայացուցիչը Վանի մէջ 1899էն սկսեալ. 1903 թ. Յունուարէն կը գտնուի բանտ, նախ Վան, ապա Տիարպեքի, մինչեւ 1908 Օսմ. Սահմանադրութիւն. ապա պետական երեսփոխան. կը նահատակուի 1915ին:

2.- Գաղափարախօսը:

3.- Լեռնապար անունը ստացաւ Վանի եւ Պիթլիսի նահանգներու հարաւային լեռնոտ գաւառներու շրջանը (Շատախ, Մոկս, Մպարկերտ եւայլն). կազմակերպուած էր Իշխանի կողմէ 1903 թ.ին եւ շուտով վերածուեցաւ առանձին կեդր. կոմիտէութեան:

4.- Յաջորդաբար՝ Երեւան, Մալմաստ եւ Կարս:

5.- Անընթեռնելի բառ:

6.- Ռուսերէն անընթեռնելի երկու բառեր: Իմաստը սակայն պարզ է, խօսքը կը վերաբերի 1897 թ. Խանասարի արշաւանքին մնացած զէնքերուն, որոնք Ատրպատականէն (Վրէժ) ատենօք որկրւած էին Վասպուրական:

7.- Ակնարկութիւն 1904 թ. Սասնոյ (Բարձրաւանդակ) ապստամբութեան օգնութեան փութացող շատ մը զինեալ խումբերու, որոնք սահմանին վրայ կամ ներս մտնելէ տեք, կռուի բռնուելով թուրքերու եւ քիւրտերու հետ, մեծ կորուստներու ենթարկուեցան:

8.- Թռուցիկ Գեորգ, Տէր Աբրահամեան (1877-1909). մասնագետ պայթուցիկ (խմորային) նիւթերու:

եւ անլսելի տանջանքներ են տալիս. տնտեսական կատարեալ կրիզիս է. կառավարութիւնը միջոցներ է փնտռում մեզ քաղաքից քշելու — տեսնենք: Խուսափում ենք որեւէ ցուցական եւ անժամանակեայ գործողութիւններից, պատրաստուում ենք] աւելի յարմար ընտանիքի եւ այդ տրամադրութեան փոխելուն...

Գէորգ Չառուչը Բարձրաւանդակ է բարձրացել. շատ խեղճ դրութեան մէջ է. շատ ղժգոճ է արտասահմանի ընկերներից, որոնց կարգադրութեամբ ինքը գնաց հոն ժողովրդին յուսադրելու, բայց ընկերները երեսի վրայ ձգեցին նրան. դրամի մեծ կարիք ունի. անպատճառ Ջրաբերդից կամ Քարից նրան փող փոխադրէք:

Ինձ համար փող անպատճառ ուղարկելու էք. ինձ համար ամենակարեւոր իրերի առնելու համար դրամ չունեմ, այստեղի ընկերներին էլ Աստուծ տւել է. հօ չունեն...

Ընկերական համբոյրներով  
ԱՐԱՍ

1905 թ. փետր. 20  
Շամ

Գնումս չէր կարողանալիս եւ յետոյ մտի մը ինչ զորեւ ի միջի կը կար յոյս  
կըր իս իմոյ փոքրեակի. այսլ անոր իշտեւ օտարաց կեանքի. որքա յոյս կարս անեւ.  
Ճիշտաց փոքրեակի յրաւիս է. կրկնի կաւտիւս ձեռնի անպարտեւ անեւ իս իս  
անիս փոքրեակի կարիքի իշտեւ է. կարողանալից միջոցից օտարաց իս իս  
փոքրեակի կարողանալիս իս իս փոքրեակի կարողանալից միջոցից օտարաց իս իս  
փոքրեակի կարողանալիս իս իս փոքրեակի կարողանալից միջոցից օտարաց իս իս

Փնտրում եմ ինչպէս կարողանալիս իս իս փոքրեակի կարողանալից միջոցից օտարաց իս իս  
փոքրեակի կարողանալիս իս իս փոքրեակի կարողանալից միջոցից օտարաց իս իս  
փոքրեակի կարողանալիս իս իս փոքրեակի կարողանալից միջոցից օտարաց իս իս

Ինչ կերպ փող կարողանալիս իս իս փոքրեակի կարողանալից միջոցից օտարաց իս իս  
փոքրեակի կարողանալիս իս իս փոքրեակի կարողանալից միջոցից օտարաց իս իս

Կարողանալիս իս իս փոքրեակի կարողանալից միջոցից օտարաց իս իս

1105թ. փետր. 20  
Շամ

[Թաղէի վանքի ընկերներուն]

Սիրելիք՛!

Ուղիղ մի ամիս դառաւ իմ գալը, բայց տեղիցդ ոչ մի լուր չստացայ, ի՞նչ եղաւ Փայլակը, եկաւ թէ չէ. առանձնապէս շատ անապահով եմ Յարութիւնի վերաբերմամբ, արդեօք Սարուստանից եկաւ, թէ ուրիշ բան պատահեց. այս առթիւ անպատճառ գրէք:

Անցեալ օրերին լսեցի որ ապրանքներ էք ուղարկել, բայց առանց նամակի. ախր չէ որ ես ձեզ պատուիրեցի որ ապրանքների հետ նամակ դնէք, գրէք թէ որքան, ո՞ւմ ձեռքով եւ երբ էք ուղարկել:

Ի՞նչ եղաւ Կամուրջում մարդ նստեցնելու խնդիրը: Ուղարկում եմ երկու նամակ. նրանցից մէկը՝ Ոսկանապատինը ուղարկեցէք հետեւեալ հասցէով – Բագու\* փողոց Կրիվայա, Կերմեի տուն, Մ. Տէր Սկրուչեանի մանուֆակտուրայի խանութ, Ավագիմ Յովսէփեանցի\*\* . աւելացնելու էք հայերէն – յանձնել Աբրահամին կամ Նիկոլին<sup>1</sup>:

Երկրորդ նամակը ուղարկելու էք Ապառաժ<sup>2</sup> այս հասցէով – Շուշի\* տիկին Շուշանիկ Շախագեղովնային\*\* ինչ ասել կ'ուզէ որ ծրարները փոխելու էք:

Այդտեղ խօսել էի եւ այստեղից էլ խնդրել էի որ տեղիդ կարճ մտքին\* ուղարկել ինձ. նորից խնդրում եմ որ անպատճառ ուղարկէք եւ չսպասէք սեւանալուն. դիւրութեան համար զոնդադը<sup>3</sup> հանեցէք. առաջին անգամ ուղարկեցէք զատվոր\* եւ քովքը\* – յետոյ կ'ուղարկէք լուսն<sup>4</sup>\* – Աւետարանցոց միջոցով շատ յարմար է, պատուիրեցէք մինչեւ Կայան տանեն առանց ուշացնելու: Եթէ իմ այս խնդիրը շուտով կատարէք, իմացէք որ մեծ պատիւ արած կը լինէք:

Ի նկատի ունեցէք որ ես շուտով պիտի գալաւ գնամ. այնպէս արէք որ շուտ հասնեն:

Ինչո՞ւ հանգամանքից չօգտուեցիք տղաներին ճանապարհ, բա էլ ինչի՞ կը սպասէք: Առաջի պատահած առիթից օգտուեցէք եւ անմիջապէս Յ[արութիւն]ին ճանապարհ գրէք, իսկ եթէ նա չեկաւ Ն[իկոլ]ին անպայման ուղարկէք:

Լսեցինք որ Մինարէթում կուր է եղել Սանամերիկի<sup>5</sup>\* գիւղում եւ երկու արմնակական\* են մեռել. ճի՞շտ է թէ ոչ: Վերջապէս ինձնից յետոյ պատահած բոլոր նորութիւնների մասին գրէք: Այստեղերը դեռ եղանակները չեն բացուել, ինչպէ՞ս է ձեզ մօտ:

Թւերով գրելուց աշխատեցէք սխալներով չգրել: Փայլակի նամակը մինչեւ բացինք հոգիներս մաշուց: Կանոնաւոր բանալին բացէք յետոյ գրէք, այլապէս մի գրէք: Վերջապէս միայն կարեւոր տեղերը գրէք բանալիով: Ինչ կարիք կայ եւն եւն եւ նման բաները թւերով գրելու:

Սպասում եմ մանրամասն նամակի:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

28-ին փետ. Շամ

**Միրելի Փայլակ!**

Վերջապէս Ն[իկոլ]ն եկաւ նամակներով եւ երկար անպատեհութիւններէից մասամբ ազատեցի. միայն բողոքում եմ ընկերաբար քո դէպի ինձ ունեցած անուշադրութեան համար. տնաշէն, տես թէ որքան հետաքրքրուում եմ տեղիդ ներքին գործերով, նորա յաջողութիւններով եւ ձախողութեամբ. իսկ դու այդ մասին լուում ես: Մալխասը գրում է որ դրամ չլինելու պատճառով ստիպւած պիտի լինես թերեւս վերադառնալ Աւարայր. Աստուծոյ խաթեր, չլինի թէ այդպէս քայլ անես. հակառակ պարագայում գրիր. եթէ դրամ չես ստացել, ես թերեւս շուտով դրամ ստանամ. քեզ էլ բաժին կը հանեմ, կարճ՝ քարին քացի տալով եօլայ գնա. հակառակ պարագայում ձիաներից մէկը ծախիր:

Յ[արութիւն]նից մի կանոնաւոր լուր ուղարկի՛ր. այդ ծպտեալներին առանց դրամ տալու սուրհանդակ ուղարկիր մինչեւ Մինարէթ եւ վեր վարի, ուր կ'ուզեն թող երթան. տնաշէն, մեր անմիջական կարիքների համար դրամ չունենք, դու էլ խաչագողներին ես տալիս.-

Նամակներիս հասցէն քո ձեռքով Փրանսերէն կամ ռուսերէն գրի՛ր, Մալխասը թերեւս չկարողանայ ռուսերէն կարդալ. Ոսկանապատինը կրիվայիս ուլիցա, դօմ կիրենայ մանուփակտարնի մակագին Մ. Տէր Մկրտչեան, Աւագիմ Յովսէփեանին, յանձնել Նիկոլին կամ Աբրահամին: Իսկ Ապառաժինը Շուշանիկ Շախգելդեանին:

Հա մոռացայ գրել որ քեռքանցի\* տղաներին ներս չէք ուղարկելու, որովհետեւ երկրի պայմանները այնպէս են դասաւորուած որ մեծ քանակութեամբ դրսեցի չի կարելի պահել. իմ տղաների վերաբերմամբ այդ բացառութիւնը անուում է, իբրեւ կարեւոր ուժեր, որ կազմակերպական եւ այլ խնդիրներով օգտակար պիտի լինին:

Ուրեմն բարի եղէք այս առթիւ գրելու եւ Վրէժ եւ Մինարէթ, որ նրանք իրենց անելիքները անեն, այլապէս ի զուր աշխատանք կ'անեն. արդէն տեսնում էք այստեղ եղածներին էլ դուրս ենք ուղարկում, վերջապէս դրամ էլ չկայ:

**ՆՈՅՆ**

Ընձայրին ուղարկում եմ ընկերային համբոյրներ եւ յարգանքներ: Նոյն եւ Պատեւելուն. սրա առողջութեան եւ դրութեան մասին գրէք: Նրա հասցէով պիտի նամակներ գան. թող ուղարկէ Մենաւոր ինձ հասցնելու պայմանով: Թերթեր մանաւանդ հասցրէք շուտ-շուտ եւ մեծ քանակութեամբ ուղարկել:

**ՆՈՅՆ**

1.- Աբրահամ Գիլիսանդանեանին եւ Նիկոլ Դումանին: Ոսկանապատը Պաքուն է:  
2.- Ապառաժ – ծածկանունն է Ղարաբաղ-Արցախի, Շուշիի:  
3.- Դոնդաղ – հրացանի կոթ:  
4.- Չատվոր, քոփք, լուլա – հրացանի մասերու անուններ են. զատվորը փակադակն է, հրացանի փականք:  
5.- Մանամերիկ – Մալմաստի (Մինարէթ) գիւղերն է:

Առաջին էջը կամ էջերը կորսուած ըլլալով, ներկայացուած փաստաթուղթը անսկիզբ է, ապա նաեւ անստորագիր: Արձանագրութիւնն է ան Վասպուրականի Կեդր. կոմիտէի մէկ նիստին, Արամ Մանուկեանի կողմէ գրուած: Ուղղուած պէտք է ըլլայ Արեւելեան բիրոյին, որուն իրաւասութեան սահմաններուն մէջ կ'իյնային Վասպուրականն ու Երկրի միւս շրջանները: Կազմակերպական քիչ մը ընդհանրական բնոյթի հարցերու քննարկումէն ետք, արծարծուած գլխաւոր խնդիրը կողբեցի Տիգրանի (բուն անունով՝ Յարութիւն Տէր Սկրտչեան) անդամակցութիւնն է Կեդր. կոմիտէին. կարծիքները այս մասին բաժնուած են. չորս ձայն, Կոմսի գլխատրութեամբ դէմ է անոր կազմին մէջ պահուելուն, իսկ երկուքը՝ կողմ: Արամ, հակառակ ընդունուած կարգի՝ որ Բիրոյի յանձնարարութեամբ շրջան առաքուած գործիչը ինքնաբերաբար իրաւասու անդամ կը դառնայ գործադիր մարմնին, դարձեալ Կոմսի կարգադրութեամբ միայն խորհրդակցական ձայնով ներկայ է ժողովին (մինչդեռ Արեւելեան բիրոյն 2 Նոյ. 1904ի գրութեամբ (փաստ. 14-25) Արամի մասին յստակօրէն գրած էր. «Մեր ինտելիգենտ ընկերներից մէկը] ճանապարհեցաւ Մինարէք դէպի ձեզ անցնելու համար... Նա եռանդուն կերպով աշխատել է Ջրաբերդի] շրջան. Թումանի եւ Մենակի ընկերն է. խնդրում ենք մտցնել ձեր Կ. կոմիտէի] մէջ, ծանօթացնէք գործերի ընդհանուր դրութեան հետ): Տարակարծութիւնները փաստօրէն աւելի խորն էին քան Կ. Կ.ի կազմին մէջ Տիգրանի մնալ-չմնալը. կասուած էին անոնք առաւելաբար գործելակերպի տարբերութեան: Մէկ կողմը կանգնած էր վանեցիներու մօտ մեծ հեղինակութիւն վաստկած Կոմսը, ինքն ալ բնիկ վանեցի, միւս կողմը՝ «դրսեցի» նորեկները (Իշխան, Արամ): Հետեւանքը եղաւ այն, որ քիչ ետք Կոմս ժամանակաւոր կերպով անցաւ Կովկաս, իսկ կողբեցի Տիգրան, Արամի անմիջական հսկողութեան ներքեւ, գործուղուեցաւ գաւառական շրջանները կազմակերպելու համար:

*... Անմիջապէս դիմելու էինք գործի, բայց Ատրպատականի մասին լաւատեսութեան վերջին յոյսեր ունեցողներին առաջարկենք, նախ քան ձեռնարկներին դիմելը մի վերջին անգամ էլ դիմել Սարուստան եւ մինչեւ մայիս վերջը ժամանակ տալ. եթէ մինչեւ մայիս վերջ 1000 լիրայի բաւարարութիւն տրուեց, լաւ, եթէ ոչ ապագայ անակնկալների պատասխանատուութիւնը ձեզ թողնելով, կը դիմենք վերոյիշեալ միջոցներին:*

*Չմոռանանք յիշեցնել ձեզ որ Դ[աշնակցութեան] Խ[որհուրդին] մենք 130.000 Ֆրանկի պահանջ ենք դրել, առանց պարտքերի, նոյնպէս եւ խնդրել էինք առանձին նպաստ բանտի ընկերներին (Գիսակ եւ բազմաթիւ քաղաքական բանտարկեալներ մեր գործի համար). մինչեւ հիմա մեզ չչաջողուեց, նոյնիսկ Սարուստանի Կ[արմիր] Խ[աչերից] որոշ նպաստ ստանալ բանտարկեալների եւ թշուառացած ընտանիքների համար... Թէեւ քանիցս նամակներով, թէ իրենց եւ թէ Բիւրոյին ու զանազան Կ.*

Կո[միտէ]ների այդ առթիւ գրել ենք:

Մի ամբողջ տարի է որ գրուում է երկրի զանազան մասերից որ խմորային եւ խնձորային գործողութիւնները մեծ յաջողութիւն կ'ունենան, ուստի ուժ է տալու եւ այդ գործին: Ի նկատի ունեցէք որ մեր նախկին զէնքը (մոսին-մավուզէրի դէմ) իր հմայքը կորցրել է. նոր զէնք է հարկաւոր, այն էլ այնպիսի զէնք որ թշնամին չու-նի, իսկ դա խմորն է ու խնձորը. բայց ի՛նչ գոհացում ստացանք. կարմրելով ու ամաչելով գրում ենք որ երկրում ընդամէնը (ամբողջ հինգ վիլայէթում) 20 [?] հատ խնձոր կայ. գեղեցիկ է չէ՞, նոյնիսկ հրաշալի. գեղեցկութիւնը աւելի զօրեղանում է, երբ աւելացնենք որ դա տարու կիսուց լցրած բաներ են, որից երեւի կէսը իւր նպա-տակին չեն ծառայի. դէ՛հ, եկէք էլի հին պատմութիւնները կրկնեցէք: Մի բուռն մարդիկ դուրս եկէք, հարիւր հազարների դէմ մի քանի հերոսական դէպքեր կատա-րեցէք եւ հորիզոնից չքացէք, մինչեւ որ նորերը կը գան էլի նոյն մեթոտով եւ ուղ-ղութեամբ...

Խոստովանում ենք որ այս ուղղութեամբ փոխանակ մեր գործը առաջ քայլելու պիտի վիժեցնել տանք, եւ հասարակ[կա]կան ու յեղափոխական բարոյականութիւնը պահանջում է գործադուլ հրատարակել, քան աւելի պարագաներով գործ շարու-նակել... Չկարծէք որ մենք հրաչքներ ենք սպասում արտասահմանից եւ մեր ամ-բողջ յոյսերնիս դնում ենք նրա վրայ. ոչ, ոչ եւ հազար անգամ ոչ. մեր յոյսը տա-ւապեալ ժողովուրդն է իւր շղուտ ձեռքերով. բայց դուք մեզնից լաւ գիտէք որ տաճկահայտակ ոչ մի ժողովուրդ առանց դրսի օգնութեան չէ կարողացել ազատ-ւել. մենք պատմութեան մէջ բացառիկ երջանկութիւն ունենալու բախտին դեռ չենք արժանացած, ուրեմն կարեւոր է եւ դրսի նպաստը...

Առհասարակ դրսի յարաբերութեան խնդիրը մեզ մօտ գլխիվայր է հասկացւում. երբ Բիւրոյից մենք խնդրում ենք մեզ գիտակ պահել արտասահմանի մեր գործերի եւ քաղաքական աշխարհի նորութիւնների հետ, այդ ուրիշ կերպ է հասկացւում եւ պատասխանուում՝ որ մենք Բիւրոյի վրայ նայում ենք իբր մի ղեկավար մարմնի եւ նրանից սպասում ենք հրահանգներ: Ոչ սիրելիք: Մենք հեռու ենք այդ մտածողու-թիւններից, մենք պնդում ենք որ մի ժողովրդի ազատագրութեան գործ վարողնե-րը, քաղաքական կռիւ ունեցողները, պիտի գիտակից լինեն իրենց կազմակերպու-թեան ներքին ուժին եւ եւրոպական դիպլոմատիայի տրամադրութեան ելեւէջնե-րին, առանց այս երկու պարագաներին քաղաքական կատարեալ կռիւ չի լինի, այլ դիւցազնական կռիւներ...

Ախ, եթէ մենք հնարաւորութիւն ունենայինք անձամբ հետեւելու վերոյիշեալ երկու պարագաների զարգացման պատմութեան, հէջ Բիւրոններին նկատողութիւն չէինք տալ. մենք գիտենք եւ լսեր ենք, թէ որքան ծանր է Բիւրոնների դրութիւնը, թէ որքան շատ է նրանց աշխատանքը. հէնց մենք էլ ի նկատի ունենալով այդ դրու-թիւնը, խնդրում ենք ձեզ այդ հիւանդ դրութեան համար մի ելք գտնել:

Մենք առայժմ իբրեւ ելք կանգ ենք առել հետեւեալ երկու դրութեան վրայ. կազ-մել մի գատ մարմին — զուտ գործադիր բնոյթով — Մրգաստանի, Ոսկանապատի, Քարի, Ջրաբերդի եւ Մեծ Ք[աղաքի]՝. Կ. Կ[ոմիտէ]ների մէկ-մէկ ներկայացուցիչ-ներից, որի միակ պարտականութիւնը լինի, ծրագրի եւ ժողովների ընդգծած իրա-ւունքների շրջանակներում՝ երկրի պահանջներին բաւարարութիւն տալ. մանա-



լանդ կանոնաւորել յարաբերութիւնները: Դա յատուկ մարդիկ պիտի անեն սահմանազրուխներում...

բ.- Եթէ անհնարին է մի նոր մարմնի ստեղծելը գործադիր բնոյթով անգամ, գէթ Սարուստանի<sup>2</sup> Կ. Կոմիտէներէց մէկի վրայ առանձնակի պարտականութիւն դնել, տալով նրան հնարաւորութիւն, որ նա կարողանայ երկրի յարաբերութիւնը կանոնաւորել եւ նպատակայարմար ուղղութեան մէջ դնել: Բիւրոն էլի կը մնայ նոյն դրութեան մէջ ի հարկէ:

Թերեւս առարկէք որ Վրէժը<sup>3</sup> ձեր շրջանի վերաբերմամբ համարեա այդպիսի դեր ունի. խոստովանում ենք որ իրաւաբանօրէն այդպէս է, բայց դէ Ֆակտօ — նա անգոր է այդ դերը կատարելու: Որովհետեւ մի կողմից աշխարհագրական պատճառներով ինքը գիտակ չէ արտասահմանի նորութիւններին, դրամական մեծ ոյժ չունի, եւ վերջապէս, ինչպէս երեւում է, նա կարիքի համեմատ հեղինակութիւն չունի... Թէ ինչո՞ւ, այդ թերեւս դուք մեզնից աւելի լաւ իմանաք, բայց փաստը այն է, որ նրա բոլոր պահանջները մերիներէի պէս ձայն բարբառոյ յանապատի է մնում...

Ուրեմն Սարուստանում գատ մարմնի գոյութիւնը օրւայ պահանջ է, մանաւանդ ներկայ պարգաներում երբ այդքան մեծացել է տեղական խնդիրը:

\* \* \*

**Տիգրանի վերաբերմամբ նախկին վճիռը** — Ուղարկել գաւառ կազմակերպութեան եւ մինչեւ երկու ամիս աշխատել անպատճառ նոր կազմ ստեղծել, որին պիտի անդամակցէ եւ Տիգրանը — ընդունեց Տիգրանի կողմից հետեւեալ պայմանով — որ այդ երկու ամսում անպայման նոր կազմ ստեղծի եւ ինքը դրական երաշխաւորութիւն ունենայ որ կը լինի: Իսկ հակառակ պարագայում ինքը անկարող է ենթարկուել այդ վճռին, որովհետեւ անորոշ դրութեան մէջ գործել ինքը անկարող է: 27-ի մարտի<sup>4</sup> նիստում լսելով այս վճիռը, դրան կից կարդալով եւ Տիգրանի վերջին նամակը, որով առաջարկում էր հետեւեալ պայմանները.—

1.- Առանց ձգձգման եւ առարկութիւնների կազմել ընկերական ատեան. ես վիրաւորւած եւ անպատւած պատւիս վերականգնումն եմ պահանջում:

2.- Անկախ դրանից խնդրում եմ բարի լինել՝ ուղարկել ինձ իմ մասին որոշումները (իմ հեռացման Կ.Կ.ի անդամակցութիւնից եւ թէ երկրից հեռացնելու — մի խօսքով ինչ որ իմ շուրջն է պտտել), արձանագրութիւնների պատճէնները — վաւերացրած ընկերների (թէ ձեր եւ թէ նրանց) ստորագրութեամբ (պաշտօնական վաւերականութիւն), որպէսզի ես հնարաւորութիւն ունենամ դրսի ընկերներին եւս պարզել իմ այս ապուշ դրութիւնը եւ ընկերների դէպի ինձ ունեցած վերաբերմունքը:

3.- Եթէ զանազան պատճառաբանութեամբ անյարմար կը նկատէք ընկերական ատեան հրաւիրելը, այն դէպքում կը խնդրէի պատշաճաւոր օրինաւորութեամբ իմ ձեռքս տալ մեղադրական ակտ եւ առանց ժամավաճառ լինելու դիւրութիւն տալ անցնելու արտասահման:

Ժողովը երկար ու բարակ խորհրդակցութիւնից յետոյ եկաւ այն եզրակացութեան, որ թէեւ նոր կազմ ստեղծելու ջանքեր է լինում, բայց գրաւական չունենա-

լով որ տրևած երկու ամսւայ ընթացքում անպայման կը ստեղծուի այդ նոր կազմը, ուստի վճռեց Տիգրանին երկրից հեռացնել, հետեւեալ պատճառաբանութեամբ:

Նրան տալու ենք մեղադրական ակտը, իւր Կ.Կ.ից եւ երկրից հեռացնելու պատճառներով:

**Կ. Կոմիտէի կազմից հեռացնելու պատճառները:**

1. Տիգրանը առանց անցեալ գործունէութեանը գործնականապէս ծանօթանալու եւ առանց ծանօթանալու ջանք ունենալու, իւր տեսական համոզմունքները կրքոտ կերպով ուզում էր փաթաթել Կ. Կոմիտէի վզին, եւ դրանով աններդաշնակութիւն առաջ բերում:

Այս կէտում համաձայն են Կոմս, Թորգոմ, Սուրէն եւ Բաբկէն: Իշխան եւ Վարդան չորսամսեայ գործունէութեան ներկայ չլինելով չեն երաշխաւորում սրա ճշտութեան:

2. Տիգրանը անվստահելիութեամբ էր վերաբերում ներկայ կազմի թէ անցեալ եւ թէ ներկայ գործունէութեան եւ կարծես միշտ ուզում էր կեղծիքներ տեսնել:

Համաձայն են Կոմս, Թորգոմ, Սուրէն եւ Բաբկէն. Իշխան եւ Վարդան համաձայն չեն:

3. Կոմսը վերոյիշեալ երկու պատճառների հիման վրայ Տիգրանին համարում է հոգեպէս անմաքուր մարդ եւ գտնում է որ այդ յատկութեամբ մարմնի մէջ աններդաշնակութիւն առաջ կը բերի. ուստի դնում էր, կամ ինքը պիտի մնայ մարմնի մէջ կամ Տիգրանը:

Ամբողջ կազմը չէ ընդունում Տիգրանի հոգեպէս անմաքուր լինելուն եւ ձայների մեծամասնութիւն[ը] վճռում է Կոմսին իբրեւ նախկին փորձած ընկերի պահել, իսկ Տիգրանին հեռացնել կազմից: Իշխան եւ Վարդան համաձայն չեն եւ հնարաւոր են գտնում երկու[սի] նոյն մարմնում մնալը:

Այս հիմքերով վճռում է չորս ձայնով (Կոմս, Թորգոմ, Սուրէն եւ Բաբկէն) Տիգրանի հեռացումը Կ.Կ.ից ընդդէմ երկուսի (Իշխան եւ Վարդան):

Պաշտօնական վճիռ կայացնելուց յետոյ նամակով հարցրեց եւ Գիսակի<sup>5</sup> կարծիքը, որին պատասխանեց հետեւեալ կերպով — Տիգրանի\* մասին ես ալ չեմ գիտեր ինչ ըսեմ. արդէն խնդիրը այն աստիճանի հասցնելու չէր, որ Կ. Կ.էն հրաժարէր. քանի որ այդ դժբախտութիւնը պատահեցաւ, քանի որ ձեզմէ ոչ ոք կը համաձայնի կրկին Կ. Կ.էի մէջ առնել զայն, եւ քանի որ նա այդչափ շղային է դարձել որ ոչ ոքի հետ հաշտ չէր կարող ապրել, աւելի լաւ է որ անցնի [?] Պարսկաստան\*.— բայց սպասելու է մինչեւ նոր ընկերներ հասնին\* թերեւս անոնց հետ\* կարողանայ ապրել: Ա՛խր, մի քիչ ալ խղճամիտ լինելու է. եւ պէտք չէ բոլորովին երեսի վրայ թողնել:

Յանցանքը ձերն է որ առանց նախապէս քննելու, զիրար հասկանալու Ա. Կոմիտէի\* մէջ առիք: Այնչափ գիտեմ եթէ անհնար է կրկին մասնակցի Լ[եոնապարի]<sup>6</sup> Ա. Ա.ին\* լաւ է հեռանայ\* եւ եթէ թոյլ [կը տայ] Կ. Կ.ն ես իրեն կ'առաջարկեմ:—

Որովհետեւ ձայների մեծամասնութեամբ որոշուած էր Տիգրանին հեռացնել Կ. Կ.ից, ինքնըստինքեան իբրեւ նպաստող ընկեր նա չէր կարող ապրել Շամի շրջանում նոյն մարմնի տրամադրութեան տակ, ուստի առաջարկեցաւ գնալ Պուրակ կամ Բարձր[աւանդակ]<sup>7</sup>. բայց գտնելով, որ նա դեռ հարկաւոր փորձառութիւն ձեռք չէ բերել երկրում եւ վերոյիշեալ տեղերում կանոնաւոր դեկավար ուժեր

չկան, որ նրանց հետ կարողանայ աշխատել, ուստի անյարմար գտնւեց եւ վերոյիշեալ վայրեր գնալը: Չմոռանալով որ Շամի շրջանից վատ տրամադրուած գնալով, երկրում մարմինների մէջ համերաշխութեան գործը կը տուժէ:

Ընդունում են բոլորը (Կոմս, Իշխան, Վարդան, Թորգոմ, Սուրէն եւ Բաբէյն):

2. Առաջարկեց գնալ Լեռնապար. Իշխան եւ Վարդան հակառակ են, պատճառաբանելով, որ վերջերս նրան երեսի վրայ ձգելով, բացառիկ դրութեան մէջ ենք դրել, վատ տրամադրել եւ դէպի մեզ, ուրեմն այնտեղ էլ կարող է անդիւրականութիւններ առաջ գալ եւ աւելի վտանգաւոր լինել քան հոս, որովհետեւ հոն գինւորական դրութիւն է:

Ընկեր Արամը, որ ժողովին մասնակցում էր խորհրդակցական ձայնով, անում է նոր առաջարկ հետեւեալ կերպով.

«Ի նկատի ունենալով որ երկրից ինտելիգենտ ընկերների հեռացնելը վատ կ'ազդի արտասահմանի ընկերների վրայ եւ Տիգրանը վատ տրամադրուած գնալով Շամի շրջանի ընկերների վերաբերմամբ, նոյն տրամադրութեամբ կարող է վարակել եւ դրսի ընկերներին եւ դրանով անվստահութիւն կը ստեղծուի դրսի եւ ներսի ընկերների միջեւ, որ առանց այն էլ լաւ դրութեան մէջ չէ. ուստի Տիգրանին վեց ամսով ուղարկել Լեռնապար եւ Արամը առանց ձայնի [իրաւունքի] մնայ հոս եւ միասին աշխատեն կազմ ստեղծել ու Տիգրանին նրանց հետ ընկերացնել:

Կամ՝ Տիգրանը եւ Արամը միասին քաղաք մնան. Արամը երաշխաւորում է, որ Տիգրանի անձնական կրքոտութիւնը եւ անվստահելի վերաբերմունքը դէպի ընկերները ժամանակի ընթացքում կը չէզոքացնի. դրան կից, միացեալ ուժերով կ'աշխատենք մարմինը ուժեղացնել եւ հաշտութիւն առաջ բերել վիրաւորուած կողմերի մէջ:

Առաջարկը չէ անցնում եւ վերջնականապէս ընդունւում է երկրից դուրս գալը:

Ընկերական դատի վերաբերմամբ միաձայն վճուեց, որ այդ դատը պաշտօնապէս յանձնել եւ Արեւ[ելեան] Բիւրոյի քննութեան, առաջարկելով Տիգրանին իւր բացատրութիւնները տալ Բիւրոյին եւ վերջինը բացատրութիւնը ուղարկելով Շամի ընկերներին [որպէսզի] լսեն նրանց վերջին խօսքը եւ ըստ այնմ որոշ եզրակացութեան յանգեն: Բիւրոյի վճիռները ընդունւելու է երկու կողմից անպայման:

Վճուեց Գիսակի կարծիքը լսելուց յետոյ յարմարութիւններ ստեղծել Տիգրանի համար արտասահման անցնելու:

Համաձայն են բոլորը:

1-ին մարտ, 1905 թ.

- 1.- Յաջորդաբար՝ Երեւանի, Պաքուի, Ալեքսանդրապոլի, Կարսի եւ Թիֆլիսի:
- 2.- Սարուստան – ծածկանուն Կովկասի:
- 3.- Ատրպատականի Կ. կոմիտէն:
- 4.- Արդեօ՞ք Փետրուար, որովհետեւ այս անվանը թուագրուած է 1 Մարտ:
- 5.- Գիսակ, Վարդգէս – իսկական անունը Յովի. Սերենկիլիեան, որ բանտ կը գտնուէր եւ, սակայն, կը համարուէր անդամ Կեդր. կոմիտէի ու, կարեւոր խնդիրներու պարագային, կ'առնուէր իր կարծիքը:
- 6.- Լեռնապար – Վասպուրականի հարաւի լեռնային գաւառները, որոնք Իշխանի կողմէ կազմակերպուած նոր շրջաններ են:
- 7.- Պուրակ – կուս. ծածկանունն է Խլաթ քաղաքի, Բարձրաւանդակ՝ Սասունի:

**Միրելի Փայլակ!**

Աւետարանի Բրախուլամը (որսորդը) տղային ուղարկել է հոս մեզ մօտ, մեր տրամադրութիւնը իմանալու: Ձեզ մօտ եկածները նրանց ձեր կողմից պատմել են, որ իբր եթէ նրանք ձեզ գան, ճանապարհին ինձ նեղացնելու պատճառով պիտի տփէք: Թէեւ հաւատացած եմ դա չափազանցութիւն կը լինի՝ յամենայն դէպս խոստացէք եւ արգելեցէք նրանց համազիւղացիներին այդպիսի լուրեր տարածելու համար:

Արդէն գրել է [ի] Աւետարանի Գրիգորի մասին. միակ վստահելի մարդ նա է. նրան մէկ ոսկի էի տւել եւ գրել՝ եթէ դուք էլ դրամ ունէք 2 ոսկի տւէք, նա մարդիկ վարձէ ու գործ տեսնի: Եթէ դրամ չունէք գրէք, այստեղից նրան մի երկու ոսկի ուղարկեմ:

Զարմանալին այն է, որ հէջ նամակներ չի գալիս. ստացել [եմ] միայն քո մէկ առանձին նամակը, ուղիղ մի ամսւայ. է՛հ սիրելիս, այս յարաբերութեան խնդիրը կանոնաւորելու է. ինչ լաւ կը լինէր եթէ նամակագրութիւնը գատէինք փոխադրութիւնից: Միթէ մինչեւ հիմա թերթի<sup>1</sup> No 1-ը չեկաւ. ինչու չես ուղարկում: Եթէ Անդրոնիկէն<sup>2</sup> հասել է ձեր քով կամ Աւարայր, մէկ-երկու օրինակ ուղարկէք:

Խօսեցի Կնեազի<sup>3</sup> հետ որ վեց մարդով խկոյն գայ ձեր քով ապրանքներ բերելու. եթէ կամենայ անմիջապէս յետ ուղարկեցէք: Մտածում ենք մի այլ միջոցով ուղիղ Աւարայրից տեղափոխութիւն կատարել, տեսնենք կը յաջողւի՞. այդ մասին կը գրեմ եթէ որոշ եզրակացութեան կու գանք:

Միրելիս! գիտեմ շատ կը ցաւիք այսքան եկողների համար: Թէեւ ես մաս ու գաղափար չունեմ եկողների գործում, բայց հաւատացնում են որ դա կարելոր է...

Աստուծոյ սիրոյն նոր մարդիկ մի ուղարկէք. լսեցինք որ տղաներից մէկը ճանապարհին է. երեւի նամակները դեռ ձեռքդ չի հասել: Ախր, չէ որ Մալխասին գրել էինք այդ առթիւ, նա ինչո՞ւ քեզ չէ յայտնել:

Աստուծոյ սիրոյն նամակում գրիբ տեղիդ պայմանների մասին. գիտես թէ որչափ եմ հետաքրքրւում. դա մեր «լինել չլինելը» վճռող ճիւղն է:

Լսեցինք որ նոր ապրանքներ է եկել. թէ որ ձեռքով եւ որչափ, չգիտենք, դեռ նամակներ չկան:

Ի՞նչ դառաւ .....<sup>4</sup> խնդիրը. եկողը գնաց թէ տեղդ է...

է՛հ, երեւի կը գանգատուես որ այստեղի գործերի մասին ոչինչ չեմ գրում. հաւատացնում եմ որ հետաքրքիր բաներ չկան. նոր-նոր կանաչ խոտի վրայ կրակ անել

---

1.- Խօսքը «Դրօշակ» պաշտօնաթերթի 1905 թիւ 1 համարի մասին է:  
2.- Մ. Քսէնոսի համանուն վէպը, հրատարակութիւն «Հայրենիք»ի:  
3.- Կնեազ – ծանօթ Բրախուլամի որդին է, ստրիանդակ:  
4.- Ռուսերէն անընթեռնելի բառ:  
5.- Ֆարիսի – ծածկանուն հին յեղափոխական Օհանջանեան Սարգիսի:

ենք սկսում. տեսնենք ինչո՞վ կը վերջանայ: Յարուժիւնի մասին լուր չառա՞ք:

Եկող Ֆարհադին<sup>5</sup> դու կը ճանաչես, քո նախկին ընկերներից է եւ մեր լաւ փորձը-  
լած մարդկանցից: Նա Ջրաբերդի շրջանում գբաղւել է անձամբ տեղափոխութեան  
գործով. մենք խօսել ենք, ինքն էլ համաձայն է որ դայ տեղը եւ առայժմ քեզ հետ եւ  
յետոյ մի ուրիշի հետ այդտեղ աշխատի. իմացութեան եւ փորձառութեան մասին  
բոլորովին վստահ եղիր:

Համբոյրներով՝  
ԱՐԱՄ

1905 թ. 10-ին մարտ

Շամ

Փաստ. 661-40

## 24

Սիրելի Գարեգին եւ Մալխաս!

Եկող ընկերը Բարձր[աւանդակ]ի մարդկանցից է, ամբողջ 16 տարի աշխատել է  
գործերում: Ջրաբերդի շրջանում գբաղւել է յատկապէս տեղափոխութեան գոր-  
ծով: Այնպէս որ այդ խնդրում մեծ փորձառութիւն եւ հմտութիւն ունի. մի փոքր  
աւելի կարգալ իմացող ընկերի հետ կարող է Մենաւորի համար շատ օգտակար ըն-  
կեր լինել: Ինքը համաձայն է մնալու. ուրեմն մտածեցէք եւ աշխատեցէք սրան Մե-  
նաւորում անպատճառ պահել:

Առ այժմ այսքան:

Ընկերական բարեկներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. 10-ին մարտի

Շամ

Փաստ. 661-41

## 25

Սիրելի Մալխաս!

Նամակաբեր Տաճիկը այստեղ մեզ մօտիկ մարդկանցից է, որ ձեր կողմից ծայ-  
րեր է բերում հոս մեզ վաճառելու. ինչպէս փաստերը ցոյց են տալիս նա համարեա  
ուզում է միշտ մեզ վրայ ծախել իւր ապրանքները, որովհետեւ նա շահագրգռւած  
է...

Այս անգամ էլ նա ծախեց մեզ վրայ 2140 նոր ծայր 4152 ղուրուշի, որից ստացել  
է 932 ղուրուշ (ինն հարիւր երեսուն երկու), իսկ մնացած երեք հազար 2 հարիւր

քսան ղուրուչը (3220 ղրչ.) իբրեւ դրամ խոստացանք նամակ տալ որ ստանայ ձեր քով. նորից եմ շեշտում 3220 ղրուչը ձեզ մօտ պիտի տրւի: Բայց վերջը մենք նրան խօսեցինք, որ եթէ այդ դրամդ իբրեւ գրաւական թողնես մեր քով, եւ մեր ապրանքները բերես որոշ վարձատրութեամբ: Այս անգամ խօսեցինք որ երեք հազար (3000) հինի ծայր բերէ եւ իբրեւ վարձ ստանայ այդ երեք 3000[ին] վեց ոսկի (6 ոսկի), իսկ իւր 3220 ղրուչը կը մնայ էլի մեր քով, կրկին կը գայ, կրկին կը բերէ, այդպէս շարունակաբար: Նորան խոստացել ենք իբրեւ իւր ապրելու միջոց, գարին եւ ձիերին ձեզ մօտ ղուլք պիտի հոգաք: Ուրեմն երբ այս մարդը կը գայ, առանց շատ երես տալու,— ի դէպ ձեզ իբրեւ վաճառական ենք ներկայացրել — բայց բերանը մի լաւ քաղցրացնելով — ձ Լձ պարսկական կեղծաւորութեամբ, մանաւանդ չայփուշիով, յետ ուղարկեցէք շուտով:

Գործը որոշ չափով ապահով պիտի համարել, որովհետեւ նրա դրամը մեր քով մնալով կը հրաժարւի լրբութիւններ անելուց:

Կարող է պատահել եւ այլ պարագայ. նա իրեն հետ իբրեւ վալադ<sup>1</sup> վերցնելով իբրեւ ծանօթ մի քուրդ միայն այն պայմանով ապրանք կը բերէ եթէ այդ քուրդը հետը գայ, իսկ եթէ չգայ, թիւրքը այնքան է բերելու որքան կարող է. կարող է պատահել որ հէջ չկրնայ բերել այս անգամ մեր ապրանքներից. (ուրիշ անգամ յոյս ունենք որ կը բերէ). ուրեմն եթէ չբերէ բարի եղէք նրա մեզ վրայ պարտք մնացած 3220 ղուրուչը իրեն դրամով յանձնել. թէեւ գիտենք որ դրամի սով է, բայց չէինք կարող այդքան մեծ քանակութեամբ ապրանքը երկրում ձեռքից տալու: Հակառակ պարագայում դիմելու ես Գարեգնին եւ միասին հոգալու էք այդ 3220 ղուրուչը: Ճար չունենք սի[րե]լիս, մենք էլ պարտքերի մէջ խրլած ենք: Ինչ չափ ապրանք կը վերցնի, այն չափով էլ համեմատաբար դրամից վեր էք դնելու, ի հարկէ մնացածը տալու էք իրեն. իսկ այլպէս առանց դրամի ապրանք չէք տալու:

Կարող էք նրան նամակներ եւ թերթեր տալ բերելու. նամակները գաղտնի թանաքով էք գրելու:

Հաշիւը նորից եմ գրում. 2140 ծայր գնել ենք 4152 ղրչ. տւել ենք 932 ղրուչ. ղուլք պիտի տաք [երեք հազար երկու հարիւր] քսան ղրուչ:

Ուրիշ նորութիւններ չկան:

Ընկերական համբոյրներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. մարտ 11, Շամ

1.- Սուրհանդակ, ուղեցոյց:

**Միրելի Փայլակ!**

Ստացայ մարտ 2 գրած նամակդ, շատ ուրախ ենք բոլորս, որ այդպէս բացառիկ պարագաներում այդպէս եռանդով աշխատում ես, յուսով ենք որ նոյն հոգևով կը շարունակես եւ այսուհետեւ դրամի մասին շատ հոգ մի անիլ. երեւի մենք էլ կարող կը լինենք մեր կարեցածին չափ քեզ օգնել. Ֆարհադի<sup>1</sup> հետ ուղարկեցինք 3 ոսկի, սպասում եմ Սրգաստանից դրամի, դրանից էլ անպատճառ քեզ մաս կը հանեմ: Այդ ինչպէս բան է, որ Գարեգինն<sup>2</sup> էլ չի կարողանում գոնէ մի քիչ պարտք վերցնել. դա ինչ անտարբերութիւն է:

Միրելիս! ների՛ր մարդկանց փոխադրութեան համար, այլ կերպ անկարելի էր. բայց բարեբախտութիւնը այն է որ վերջացել է եւ դրականապէս. հաւատացնում ենք, որ այսուհետեւ ոչ մի մարդ չի անցնիլ այդ կողմով: Եղածը եղել է, այսուհետեւ կը խուսափենք...

Գուրգէնի մասին աւելի քան մեծ կարծիք ես ունեցել: Նա միայն վերջին ամիսներին է մեր գործի մէջ մտել: Բացարձակ կերպով ապացուցւել է որ նա կեղտոտ է եւ մեր մէջ պահել չենք կարող. Բարձր[աւանդակ]ի մարդկանց փառք Աստուծոյ տեսար թէ ի՞նչ բարքեր ունէին, կ'ուզէին որ այստեղ էլ շարունակի նոյն գործողութիւնները. կարծեմ ուշ եւ աւելի լաւ է մի քիչ նեղութիւն կրէք եւ վերջ տաք:

Դեռ ապրանքներից ոչ մի կտոր հոս չենք ստացել եւ նոյն իսկ իմ երկրից [բերածի] մի մասն էլ մնացել է ճանապարհին չգիտեմ որի ձեռքը: Ստանալուց մանրամասն կը գրեմ: Ի դէպ անձաւցի Մելո-ին\*<sup>3</sup> կանչել ենք հոս համոզել որ գործ սկսի մի քանի մարդկանցով, որ պիտի ինքը հաւաքէ իր շուրջը. նա գնացել է գիւղ եւ մեր պատէհը կատարել: Երեւի շուտով գործի կը ձեռնարկէ. գալուց դուք էլ կարեւոր բաների մասին խորհեցէք եւ մի լաւ տրամադրւելով գործի դրէք:

Կայան<sup>4</sup> կարեւոր կարգադրութիւնները կ'անւի եթէ վերոյիշեալը գործերը կանոնաւորուեց: Թերեւս կարողանանք անջատել այդ անիծեալներից:

Այստեղ արտասահմանի լրագրներից արդէն տեղեկացել էինք Բագուայ դէպքերի մասին<sup>5</sup>. այո՛ ցաւալի է մանաւանդ նոյն պատճառով, որ դրանք ազդելու են մեր գործերի վրայ:

Եկող տղաներին պատւիրիր որ շորերից ոչ մի կտոր՝ չհամաձայնեն թողնել ճանապարհին. կամ թողնեն այդտեղ կամ հետները վերցնեն, թող մի քանի հատ իրար վրայ հագնեն... Յ[արութիւն]ի<sup>6</sup> մասին լաւ հոգ տա՛ր եւ ապահով ճամբայ դի՛ր...

Միրելիս! Շուտով նամակ գրի՛ր Սրգաստան, որ առ այժմ Սարուստանէն նոր ծայրեր ուղարկելը դադարեցնեն եւ ուժ տան հներին, որովհետեւ հոս բաւականի կոթեր կան հին, առանց ծայրերի: Նրանց էլ գրելու էք որ անպայման ծանր մասերը հանելով թեթեւացնեն ապա ուղարկեն, կարծեմ իրենց համար էլ մեծ դիւրութիւն կը լինի:

Միրելիս! Գրել էի Սրգաստան որ մարդիսի\* 15,000 ծայր ուղարկեն, դու էլ կրկին

գրի՛ր պահանջիր անպայման ուղարկեն. սա էլ պիտի բաժանէք ծանր մասերից:

Սարուստան գնացող տղաներից մէկով նամակ ուղարկել, կամ եթէ չկայ Ջամանին տուր մինչեւ ջրի փըր տանի եւ այնտեղ ուղարկեն Ամուն. նրան էլ գրի՛ր որ շուտով ուղարկեն ուր հարկն է:

Է՛հ պատիւ ունեմ հաղորդելու որ ուղարկել ենք Մենաւորի համար երկու ջրի գիւղում[?] եւ շուտով ուղարկելու ենք քեզ եւ Ընձայրին մէկ-մէկ սիգարի տուփեր եւ մի հատ էլ Սարուստան ուղարկելու համար՝ Աւետիք Իսահակեանին<sup>7</sup> – յուսով ենք որ ապահով տեղ կը հասցնէք:

Հա՛, մոռացայ գրել որ բարեւները սաստիկ էժանացել են, ուղարկում ենք մի Ֆուրգոն բարեւներ իմ, Վարդանի, Իշխանի եւ Տիգրանի կողմից:

Համբոյրներով – ԱՐԱՄ

1905 14-ին մարտ

Շամ

1.- Ֆարիադ – Օհանջանեան Սարգիս:

2.- Գարեգին կամ Սամսոն – Թադէոսեան Ստեփան:

3.- Անձաւցի Մելօ, ծածկանունը Պարսպ – զինուոր, փոխադրութեան գործով զբաղող սուրհանդակ Բերկրիի շրջանին մէջ:

4.- Կայան – Բերկրի գաւառակի Պստիկ Գեղ:

5.- Ակնարկութիւն 1905 թ. Փետրուարին Պաքուի դէպքերուն, որոնք ազդանշան հանդիսացան հայ-թաթարական ծանօթ ընդհարումներուն:

6.- Յարութիւն Միրաքեան, Ամերիկայէն եկած. ընկերացած է Արամի մինչեւ Ատրպատական:

7.- Երեւի այս նուիրին առիթով է որ Ա. Իսահակեան, «Շատ սիրելի եւ թանկագին Սարգիսին» ուղղեալ անթուակիր նամակով կը գրէ. «Մրտի մեծ ուրախութեամբ ստացայ ուղարկած ծխախոտի տուփը. յայտնիք շնորհակալութիւնս բոլոր ընկերներին. դրանից մեծ հաճոյք կարելի է ասել, որ ես չէի ստացել...» (փաստ. 665-793):



Վասպուրականի Կեդր. կոմիտեին այս նամակը, գրուած Արամ Մանուկեանի կողմէ, անթուակիր է եւ անհասցէ: Բովանդակութենէն դատելով, ուղղուած պէտք է ըլլայ Հ.Յ.Դ. գերագոյն մարմին հանդիսացող Դաշնակցութեան Խորհուրդին: Այս վերջինը նստաշրջանի մէջ էր ժընեւ 1905 թ. Փետրուարէն Ապրիլ երկարող ամիսներուն, երբ կարճատեւ ընդմիջում մը ունեցաւ, իբրեւ հետեւեանք Քրիստափոր Միքայէլեանի եղերական մահուան (4/17 Մարտ): Ուստի խնդրոյ առարկայ անթուակիր նամակը պէտք է տեղադրել Մարտ ամսուան վերջերուն, մանաւանդ որ հոն խօսք կայ «գարնան բացուելուն» մասին: Նշենք վերջապէս, որ գոյութիւն ունի ուրիշ փաստաթուղթ մը (տես նամակ թիւ 30, էջ 75-79, փաստ. 661-51ա), դարձեալ Վասպուրականի Կեդր. կոմիտեի Կովկասի (Մարուստան) Շրջանային ժողովին ուղղեալ Արամի գրչով շարադրուած մէկ նամակը, որուն առաջին բաժինը գրեթէ նոյնութեամբ կրկնութիւնն է ներկայ գրութեան եւ որ թուագրուած է 1905 թ. Մարտ 28:

Ի դէպ, Խորհուրդի այս նստաշրջանի օրերուն, տեղի ունեցան կարգ մը ծանրակշիռ դէպքեր, ինչպէս հայ-թաթարական ընդհարումներ, որուն առիթով Խորհուրդը փութաց անմիջական հրահանգներ յղել կովկասեան մարմիններուն՝ ինքնապաշտպանութեան գործի կազմակերպման համար: Միեւնոյն այս նստաշրջանին, Խորհուրդը մշակեց նաեւ կուսակցութեան Կովկասեան գործունէութեան Նախագիծը:

*Ընկերներ!*

*Մի պաշտօնական նամակով գրել էինք Արեւել[եան] Բիւրո[յին] Ռայոնական ժողով գումարելու եւ մի քանի կարեւոր խնդիրներ դնելու մեր կողմից: Դա մասնաւորապէս մեր շրջանի եւ առհասարակ երկրի գործերի տեսակէտից շատ կարեւոր է. կարեւոր է մանաւանդ այն կողմից որ ի մեծ ցաւ երկրի կարիքների մենք ժամանակին չկարողացանք տեղեկագրերի կամ ներկայացուցիչի միջոցներով երկրի կարիքները դնել Դաշ[նակցութեան] Խորհ[րդի] առաջ ու կանոնաւոր բաւարարութիւն ստանալ, հաստատած լինելով որ Շամի կարիքները իւր մաքսիմումով չի ընդունելու եւ ընդգծելու Դաշնակ. Խորհ.ը եւ մանաւանդ երկրի մէջ մեր գործերը այնպէս են դասաւորուած, որ մենք կարեւոր ենք զգուժ մեր պահանջները եւ դրութեան մանրամասնութիւնները բանալ Սարուստանի ռայոնական ժողովին եւ նրա քննութեան ենթարկել:*

*Հակառակ ձեր բոլոր գոհողութիւններին եւ Բարձր[աւանդակ]ի մեր հերոս ընկերների բոլոր ջիգերին, չկարողացանք ժամանակին բաւարարութիւն [տալ] այն-*

տեղի մինիմալ պահանջներին ու դիմադրությունը երկարատեւ դարձնել, ու Բարձր[աւանդակ]ի գործը, որի վրայ այնքան յոյսեր կային, ի դերեւ ելաւ բազմաթիւ պատճառներով, պատճառներ, որոնց քննութեան տեղը հոս չէ, եւ որոնց քննութեան անկողմնակալ [?] դատաւորը մենք չենք. ուստի այդ թողնում ենք աւելի ձեռնհաս եւ հարցով շահագրգռած մարմիններին եւ ընկերներին, իսկ մենք առայժմ բաւականանալու ենք այն պատմական դասով, ինչ տւաւ այդ ձեռնարկը իւր բոլոր մանրամասնութեամբ: Թէ որ այդ փորձերից յետոյ մեր ներքին գործողութիւնների եւ տակտիկի մէջ որոշ փոփոխութիւն ենք մտցնելու, այդ փաստ է: Բայց ի՞նչ փոփոխութիւն,— այդ մասամբ ժամանակի հետ կապւած եւ մասամբ էլ մասնագիտական խնդիր է, որի քննութիւնը պիտի տեղի ունենայ յատուկ մասնագէտ մարդկանցից կազմւած մի մարմնի կողմից ու ապա յայտարարւի ի գիտութիւն. ուստի առայժմ այս անգամ կանգ չենք առնի այդ խնդրի վրայ, այլ կը շատանանք ընդգծելով այն ազդեցութիւնը — ինչ ունեցաւ Բարձր[աւանդակ]ի գործի վիժումը — Շամի եւ իր շրջանի գործ[ող]ութիւնների եւ ձեռնարկների վրայ:

Բարձր[աւանդակ]ի եւ շրջակայ գաւառակներից յետոյ, բուն երկրում միակ կազմակերպւած վայրը մնացել էր Շամը եւ իւր լեռնային գաւառակները. ուստի թէ՛ երկրի եւ թէ՛ արտասահմանի ամբողջ ուշադրութիւնը դարձաւ դէպի Շամ. ոչ միայն ուշադրութիւնը այլեւ ամբողջ հոգատարութիւնը, սկզբի ամիսները դարձաւ դէպի այս կողմերը, նոյնիսկ հակառակ Ընդհ. ժողովի ընդգծած պայմանների: Ըստ Ընդհ. ժողովի<sup>1</sup> այս շրջանը պիտի ստանար 19.000 Ֆր. նպաստ արտասահմանից<sup>2</sup>. բայց երեք-չորս ամսւայ մէջ ստացաւ երեք անգամ աւելին: Ըստ Ընդհ. ժողովի որոշման այս շրջանների գէնքի կէսը պիտի գնար Բարձր[աւանդակ], բայց ինչո՞ւ, ի՞նչ պատճառներով տեղիս մարմինը չուղարկեց. Բարձր[աւանդակ]ի վիժումից յետոյ նրա համար գնւած ռազմամթերքի մի խոշոր մասը աւելի յաջողութեամբ մտաւ այս շրջանը. մի յաջողութիւն՝ որ համարեա չենք ունեցել մեր ամբողջ 15ամեայ պատմութեան մէջ: Վերջապէս անսպասելի եղաւ եւ կարեւոր ընկերների սովորականից սոււար թւով դէպի այս շրջան գալը եւ գալ ցանկացողների քանակութիւնը: Ահա մի շարք պարագաներ, որ ինքնըստիսքեան մեր դիրքը այստեղ գորեղացրեց, եւ մենք՝ չբաւականացանք Ընդհ. ժողովի ընդգծած շրջանակով ու խրախուսւած արտասահմանից եկած դրամական, ռազմական, ընկերների լայն հոսանքով, ձեռնարկեցինք եւ սկիզբը դրինք մի շարք գործողութիւնների եւ մեզ համար անգգալի կերպով լայնացրինք կազմակերպական շրջանները, լայնացրինք եւ նրա պահանջները, առանց մտածելու, որ արտասահմանի վերաբերումը կարող է փոխւել եւ հասնել նոյնիսկ անտարբերութեան: Խոստովանում ենք որ մենք այդ անփորձութիւնը կատարեցինք, բայց ոչ առանց հիմքի. մեզ համար իբրեւ հիմք ծանօթ էր արտասահմանի աւելի քան սիրալիք վերաբերմունքը, այն ահագին ուժը որ ստացանք եւ այն ահագին յոյսերը, որ նամակով մեզ ներշնչում էին արտասահմանի ընկերները եւ մարմինները:

Կարճ. մենք ձեռնարկներ սկսեցինք, պատրաստութիւններ տեսանք. հակառակ բոլոր անյաջողութիւններին եւ բացառիկ պարագաներին, ժողովուրդը կազմակերպեցինք, տրամադրեցինք որ նա էլ իր կողմից իւր պաշտպանութեան համար միջոցների դիմէ. նա ընդունեց մեր հրաւեր, արաւ ու անում է զգալի զոհողութիւններ

այդ հոգի վրայ: Բայց ի դէմ այս բոլոր ցանկալի երեւոյթների, մեր գործերը եւ ձեռնարկները այսօր կրսածանալին մնալու վտանգին են ենթարկւած արտասահմանի յարաբերութեան արտասովոր փոփոխութեան պատճառով:

Նախկին սիրալիր յարաբերութեան փոխարէն, առհասարակ արտասահմանը, մասնաւորապէս Արեւ[ելեան] Բիւրոն մեզ մոռանալու դժբախտութեան մատնեց: Ուղիղ 5 ամիս առաջ Արեւել- Բիւրոյից ստացել ենք մի նամակ, այն էլ մի մասնաւոր խնդրի մասին (հաղորդւած էր մի նոր ընկերոջ գալու մասին), իսկ մենք այդ ժամանակամիջոցում իրենց գրել ենք ամբողջ ութը նամակ, այն էլ տարբեր գծերով: Երբ նամակ չկար, ինքնաստիճեան պահանջների բաւարարութիւն չէր լինի մենք էլ մեզ խաբելով այսօր վաղը յոյսերով, մի կերպ եօլայ էինք տանում գործը ու պարտքերով շարունակում մեր գոյութիւնը: Բայց ցաւալի է ասել, որ այդ պարտքերը մենք վերցրել էինք ոչ թէ հարուստ բուրժուաներից, այլ աղքատ ժողովրդից, որ իւր ոչխարն ու իւղը, հացն ու կնոջ գարդերը ծախել էր մեզ տւել, որ իւր ինքնապաշտպանութեան համար գէնքեր գնենք: Տեղիս ընկերները, առանց հաշւի առնելու ապագայ անակնկալները, այդ դրամները յատկացրել էին ընթացիկ ծախսերին, որոնց հաշիւները եւ ծախսելու պատասխանատուութիւնը բնականաբար վերցրել էին իրենց վրայ: Այսօր երբ նրանց յոյսերը չարդարացան, երբ արտասահմանից սպասւած դրամական նպաստներ չեկան, նրանք մնացին պատասխանատու եւ ժողովրդի առաջ, եւ, կարծում ենք, կազմակերպութեան առաջ, որի հեղինակութիւնը մեծապէս ընկնելու պարագաների տակ է այդ քայլի պատճառով:

Այս է երեւոյթը իւր ամբողջ մերկութեամբ եւ այսօր, երբ բացւում է գարնան հետ եւ ժողովրդի պահանջների շրջանը, մենք գտնւում ենք ամենակրիտիկական դրութեան մէջ եւ անկարող ենք բռնել այնպիսի դիրք, որ ժողովրդին ազատենք լքումից, իսկ մեզ եւ կազմակերպութեան՝ անկումից...

Ձեզ ուղարկում ենք պարտքերի մանրամասն ցուցակ, որից կը հասկանաք մեր դրութեան բոլոր սարսափելիութիւնը:

Որոչ ելք գտնելու համար, շրջանիս բոլոր ընկերները, որ ձեռնալ պատճառով (մանաւանդ դրամ չլինելու համար) հաւաքւած էինք Շամում, բազմաթիւ միջոցների դիմեցինք, բայց չկարողացանք ոչ մի դրական եզրակացութեան գալ: Ընդհանուր տրամադրութիւնն այն էր, որ պէտք է յոյսներս կտրենք արտասահմանից, եւ մասնաւորապէս Սարուստանից, ուր տեղական շարժումները<sup>3</sup> լայն չափեր ստանալով՝ ընկերների ամբողջ ուշադրութիւնը գրաւել, մեզ մոռացութեան [են] տւել: Նոյնիսկ, ինչպէս մասնաւոր նամակներից եւ ընկերներից լսում ենք, մեզ համար ուղարկելիք նիւթերը (խմոր) ճանապարհից յետ են դարձրել — յատկացրել տեղական շարժումներին: Մենք այդ մասին ոչինչ չունենք. խոնարհւում են[ք] բոլոր ազատագրական շարժումների առաջ, ուղարկում ենք մեր ընկերական ողջոյնները, ցանկանում ենք լիակատար պսակում ձեր բոլոր յոյսերի... Բայց ընկերներ, մի՛ մոռանաք եւ կազմակերպական պարտականութիւնները. վերջապէս մենք ձեր նպաստների վրայ վստահած եկանք երկիր եւ գործի ձեռնարկեցի[ն]ք:

Անցնենք բուն խնդրին. վերջապէս գտնելով որ կազմակերպութեան վարկը վտանգի է ենթարկւում, որ դա անպատուութիւն է ամբողջ Դաշնակցութեան հասցէին, վճռեցինք դիմել մի քանի միջոցների.—

Ա- Կազմակերպական զէնքերը դնել ժողովրդի տրամադրութեան տակ, նրա դրամների դիմաց:

Բ- Թէեւ Ընդհ. ժողովում վճռել է որ բռնի միջոցներով, մասնաւոր մարմինները իրաւունք չունեն դրամ հանգանակել, բայց որոշեցինք դիմել եւ այդ միջոցին: Շեշտում [ենք], որ երկրի բացառիկ պարագաներում դա կարող է առիթ տալ կոտորածի, մեր բռնելուն, գործի վիժման եւայլն եւայլն, բայց ուրիշ ելք չկայ... առանց դրան էլ պիտի վիժէ...

Եւ Գ- Եթէ այս միջոցներով չկրցանք փրկել կազմակերպութիւնը վերջնական անկումից, բոլոր պատասխանատուութիւնը ձգելով ձեզ վրայ, եթէ կենդանի մնանք, մենք էլ պիտի գանք ձեզ մօտ ձեր շարքերը խտացնելու, տեղական շարժումները արագացնելու համար:

Ընկերներ! Ահա մեր աննորմալ դրութեան պատկերը խոշոր գծերով. առաջարկում ենք ձեր սիրալիր ուշադրութեան եւ խնդրում ենք, յանուն գործի եւ ընկերական յարաբերութիւնների, անկեղծութեամբ հարցը քննել եւ մեզ պատասխանել:

Մեզ համար ամենահետաքրքիր պատասխանը այս պիտի լինի.— թէ արդեօք Դաշնակցութիւնը մտադիր է ներկայիս [?] Տաճկաստանում կանոնաւոր քաղաքական կռիւ ունենալ, եւ եթէ ցանկանում է, պիտի միջոցներ ձեռնարկէ այդ կռիւն նպատակալարմար ուղղութիւն տալ: Սա հարցի սկզբունքի կողմն է, իսկ գործնականը մեր պահանջներն են: Արդեօք կարող էք բաւարարութիւն տալ մեր այդ դրամական պահանջներին, եւ հնարաւորութիւն պիտի ունենաք ռազմական ուժ ներս մտցնել, թէ՞ ձեր տեղական շարժումները այնքան յախուռն է, որ ամբողջ հոգով պիտի նւիրէք նրան եւ ձեր ուժերի մաքսիմալը դնել նրա յաջողութեան վրայ: Աւելի լաւ կը լինի յանուն նոյն գործի որոշէք եւ մեր դրութիւնը եւ անելիքները...

Սպասելով ձեր շուտափոյթ պատասխանին,

Ընկերական ողջոյններով՝  
**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ**

1.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. Երրորդ Ընդհ. ժողովին, գումարուած Մոֆիա 1904 թ. Փետրուար - Մարտ ամիսներուն:

2.- Արտասահմանը պէտք է հասկնալ ընդհանուր իմաստով. այս պարագային նաեւ ու մանաւանդ Կովկասը:

3.- Ակնարկութիւն Կովկասի տարածքին լայն ծաւալ ստացած հայ-թաթարական ընդհարումներուն:

Ընկերներ<sup>1</sup>!

Երեք ամսից ի վեր ստեղծել ենք մեր գործերի մէջ մի անիշխանական դրուժիւն-ակնատես եղանք անբնական դրուժեան բոլոր վիժմունքներին, ճաշակեցինք ընկերական երկպառակութեան բոլոր դառնութիւնները. այդ բոլորը մի կողմը, գործը դէպի կորուստ ենք տանում մեր զանազան քմահաճոյքների համար. մտածեցինք այս դրուժիւնից ազատելու համար բազմաթիւ ձեւեր, ոչ մէկը չկարողացանք իրագործել, բացարձակապէս այն պատճառով որ չենք ուզում իրագործել. ի վերջոյ կանգ առինք կազմը փոխելու վրայ եւ դրա մէջ գտանք թէ մեր եւ թէ գործի փրկութիւնը: Այդ վճիռը եղաւ ճիշտ 10 օր առաջ եւ մենք ընկերաբար միջոցներ առաջարկեցինք կազմի շուտափոյթ փոփոխութեան համար: Դուք իրաւաբանօրէն ընդունեցիք բոլոր առաջարկութիւնները, իսկ իրականապէս շարունակում էք (դէ՛ ֆակտօ) նախկին գործունէութիւնը: Չգիտենք ինչո՞վ բացատրել այդ երեւոյթը: Այժմ երբ հարցը ծայրայեղութեան է հասել ստիպւած ենք ուլտիմատում դնել, հետեւեալ պայմանների տակ:

- ա. Հին կազմը դադրելու է գործելուց:
- բ. Կոմսը եւ ընկերները տալու են իրենց գրաւոր հրաժարականը:
- գ. Կազմը տալու է գրաւոր կերպով — իւր բոլոր անդամների ստորագրութեամբ եւ կնիքով — ռազմական (թէ կազմակերպական եւ թէ ժողովրդական), դրամական (մանրամասն հաշիւ ելեւմտից եւ պարտքերի դոկումենտալ հաշւեցուցակ), կազմակերպական ստացւածքների ցուցակ, հաց, հագուստեղէն, գործիքներ, արխիւ, ձիա-ներ եւ այլն իրերի...:
- դ. Կազմակերպական տեղեկագիր գրաւոր կերպով (արած եւ անելիք ձեռնարկների համար):

Առայժմ կանգ ենք առնում այս չորս դրական առաջարկների վրայ. եւ դնում ենք հետեւեալ պայմանները:

- ա. Եթէ չտաք դրամականի մանրամասն հաշիւ, չենք ընդունելու պարտքերը:
- բ. Եթէ Կոմսը եւ ընկերները չտան գրաւոր հրաժարական եւ չդադարեցնեն գործունէութիւնը, կազմը փոփոխւած չէ համարելու եւ մենք այլեւս այս դրուժեան մէջ անկարող ենք մնալ:
- գ. Եթէ բոլոր դրւած պայմաններին մինչեւ վաղը առաւօտ բաւարարութիւն չտրուեց, խնդրում ենք մեզ հետ կտրել ընկերական յարաբերութիւնները:

Մենք կը հեռանանք քաղաքից:

**ԻՇԽԱՆ, ՎԱՐԴԱՆ, ԱՐԱՄ, ՏԻԳՐԱՆ**

1905 թ. մարտ 17ին

1.- Վերջնագրի բնոյթ ունեցող այս գրութիւնը ուղղուած է Վասպուրականի Կեդր. կոմիտէին – որուն իրենք՝ ստորագրողները եւս կ'անդամակցէին – եւ մասնատրաբար Կոմսին (Վ. Փափագեան):

Քիչ անց այս վերջինը հեռացաւ (ժամանակատրայէս) Կովկաս, ուրկէ սակայն աշխատեցաւ ամէն ձեռով օժանդակել Վասպուրականի գործերուն:

Հետաքրքրական է նշել որ Արամ Մանուկեան իր գրի առած համառօտ օրագրին մէջ Կոմսի հետ իրենց ունեցած տարակարծութեանց մասին անդրադառնալով կը գրէ («Արամը», Պէյրութ 1969, էջ 385-387).

*X-ը<sup>2</sup> երկրից հեռացաւ. երբ ինքս ինձ հարցնում եմ՝ ինչո՞ւ, չեմ կարողանում ոչ մի բանատր պատճառ գտնել: Պատճառները զուտ անձնական են. մենք առաջարկած էինք, որ պէտք է ընկերակցական գործ սկսենք, իսկ ինքը շարունակում էր իւր դիկտատորութիւնը: Ախր, եթէ հմուտ դիկտատոր լինէր, ոչ ոք չէր ցաւի, բայց այդ էլ չկար: Վերջապէս, այդ մարդէն ես բան չհասկացայ. կարծես երկիրը նրա համար մի լաւ կահատրուած, սալոնական յարմարութիւններով հիւրանոց էր, իսկ ինքը հիւր. եկաւ, մի տարի վայելեց ու անցաւ-գնաց. բայց, յամենայնդէպս, անմահացաւ եւ կարծես թէ շատ էր ձգտում այդ կոչման:*

*Գիսակը<sup>3</sup> սկզբում համաձայն էր նրա հեռանալուն, բայց վերջը փոշմանեց եւ դիմեց մեզ բացատրութիւն տալու: Ես նամակ էի գրել եւ բացատրել, որ ոչ մի պատճառ չկայ, զուտ անձնական սինպատիայի կամ անտիպատիայի խնդիր է<sup>4</sup>...*

*Նամակիս իբրեւ պատասխան գրել էր.*

*– Սիրելի Արամ. Չեմ ուզեր ծանրանալ այլեւս Իքսի հարցի վրայ, եւ առ այժմ ատելորդ վիճաբանութիւնների դուր բանալ, եւ արդարութիւն ալ չէ, քանի որ ինքը հոս չէ եւ չէ ալ կարող իր վրայ բտուելիք մեղադրանքներու պատասխան տալ. խնդիրը ներկայումս (ինչպէս կ'ըսէք) կացութիւնը դարմանելու մէջ է:*

*Նախ երբեք չեմ կասկածիր, որ Կոմսը դրամական զեղծում ըրած լինի, ինչպէս անշուշտ դուք ալ կը հաւատաք, բայց թէ կարողութենէն վեր ծախսեր եղած են, այդ կարելի է. բայց ինչ որ ալ լինի՝ պարտք կայ, տեղիս համար ծանր եւ սպառնալից, որու անմիջական դարման մը մտածել եւ գործադրել անհրաժեշտ է. Պապիկի կարծիքով պէտք է՝*

*ա) Խնայողութիւն ընել եւ չձեռնարկել այնպիսի գործ, որ մեր պիտոճէն չի ներեր:*

*բ) Զէնքի համար առնուած դրամներուն փոխարէն անպատճառ մի կարգադրութիւն ընել եւ գոհացում մը տալ. ամենամեծ վարկաբեկումը այդ է:*

*գ) Կանոնատր հաշուապահութիւն եւ առանց կոմիտէի հաւանութեան եւ որոշման ոչ մի կոպէկ չծախսել...*

*դ) Պարտքի համար գրել Բիւրոներուն, եւ ես կը մտածեմ անձամբ դիմել նաեւ Ամերիկայի կոմիտէին եւ անոր անմիջական աջակցութիւնը պահանջել... եւ*

*ե) Եթէ դուք կ'ուզէք կանոնատր մի գործ տեսնել՝ զգոյշ կեցեք ուրեմն դիկտատորական ձգտումներէ...*

*Իքսը հեռացած օրերը գուժած էր Էլլէնի<sup>5</sup> մահը, ինչպէս նաեւ մի կասկած յայտնած էր՝ թէ վախ կայ, որ դաշնակցական ուժեր երկուքի կը բաժնուին: Կը խնդրէի այս երկուքի մասին ալ մանրամասն գրէք:*

Համբոյրներով  
ՖԷՏԱՅ

Դշ., 7 Ապրիլ, 905

2.- Իմա՝ Կոմսը (Վ. Փափագեան):

3.- Գիսակ – Յովի. Սերենկիլեան, այլապէս ծանօթ նաեւ Վարդգէս ծածկանունով. այս վերջինը կը գտնուէր բանտ, բայց կը համարուէր անդամ Վասպուրականի Կեդր. կոմիտէին. կարեւոր հարցերու պարագային ընկերները յաճախ կը դիմէին իր կարծիքը ստանալու: Բանտէն գրած նամակներուն տակ Գիսակ, այլապէս նաեւ Պապիկ, կը ստորագրէր Ֆէտայ:

4.- Նշուած հրատարակութեան մէջ «համակրանքի կամ հակակրանքի խնդիր է»:

5.- Էլլէն – Քրիստափոր Սիբայլեան:

**Սիրելի Մայրսա!**

Այսօր ստացանք մի անթևակիր նամակդ թերթերի հետ. կ'աշխատենք բերողից օգտել հէնց այն ձեւով ինչ դու ես մտածել: Ձարմանալի է թէ ինչո՞ւ այդքան կարճ ես գրում նամակներդ, մանաւանդ մեծ մասամբ անթևակիր, որ հնարաւորութիւն չէ տալիս մեզ ստուգելու, թէ երբ է գրուած եւ երբ է հասել... Ձեր կողմերի մասին հրէշաւոր լուրեր ենք լսում, իբրեւ թէ հազարաւոր մարդիկ են մեռել, դէպքեր են տեղի ունեցել, իսկ քո նամակում ոչինչ չկայ... Շատ գէշ են խօսում մանաւանդ Վրէժ[ի] մասին, գրիր՝ տեսնենք որքան ճիշտ է... Հաստատում ենք մեր ձեզ 11/II գրած նամակը մի տաճկի\* ձեռքով ուղարկուած, որի մէջ գրուած էր 3220 դահեկանի մասին. աշխատեցէք նրան համոզել որ ապրանք\* բերէ, մանաւանդ որ դրամ էլ չունէք:

Մեր դրութեան մէջ նոր փոփոխութիւններ չկան. էլի նախկին դրամական տագնապն է. Մ. Ք.-ից ամբողջ հինգ ամիս է նամակ չկայ. ինչպէս երեւում է նրանց ներքին գործերը ամբողջապէս կլանել է ուշադրութիւնները եւ մեզ բաժին չէ մնացել<sup>1</sup>... Չգիտենք ինչով կը վերջանայ. պաշտօնական գրութեամբ մեր դրութիւնները ներկայացրել ենք եւ պահանջներ դրել. եթէ չուտով բաւարարութիւն տուին լաւ, եթէ ոչ մի կերպ կ'անենք...

Պարագաները այնպէս դասաւորւեցին որ Կոմսը\* երկրից հեռանում\* է ձեր քով. գալու\* պատճառները պաշտօնական գրութեամբ ուղարկւում է Մ. Ք.-ին եւ Վրէժին: Երեւոյթը ինքնըստինքեան տխուր է, բայց ի զուր անցան բոլոր ճիգերը, մի այլ ելք տալու խնդրին: Շուտով բախտ կ'ունենաք տեսնելու, երեւի ինքը կը պատմէ իրերի իրական դրութիւնը... Ապագայում թերեւս առիթ ունենանք աւելի մանրամասն կանգ առնելու այդ խնդրի վրայ. անցնենք ուրիշներին:

Քրիստափորի մահուան լուրը, ամենամեծ գոյժն էր որ կարող էիր հաղորդել. ուղղակի գժւեցինք. այդպէս անակնկալ ո՞վ կը սպասէր. ինչ արած, հաշտւելու ենք դառն իրականութեան հետ. եթէ դրամ եւ հնարաւորութիւն ունես ցաւակցական հեռագիր ուղարկիր մեր կողմից...

Մեզ մնում է բարձր պահել այն դրօշը, որի համար մեր պաշտելի ընկերը ամէն գոհողութիւն յանձն [էր] առնում. դրանից աւելի մեծ արձան չկայ նրա յիշատակին յարմար. թող քաղցր լինի նրա յիշատակը բոլորիս համար, հանգիստ տառապեալ ոսկորներին...

Գարեգնից ոչ մի լուր չունենք, ինչ է պատահել նրան, ինչո՞ւ չի նամակներ ուղարկում գոնէ քո միջոցով:

«Դէպի կռիւ» եւ «Անդրոնիկէն» չստացանք, գոնէ մէկ-մէկ օրինակ ուղարկեցէք մեզ. խնդրել էինք մեզ «Հայրենիք» ուղարկել, մոռացութեան տուիք... ի՞նչ լուր ունէք Ամերիկայից եւ Սարոուստանից:

Չմոռանաս գրել թէ ինչ պարագաների տակ է պատահել Ք[րիստափոր]ի մահը.

չէ որ նա հոն չպիտի լինէր...

Երէկ տեղս հասան ապահով Արթինը\* եւ իւր ընկերը. մարդկանց գալու մասին գրել էինք, – Աստուծոյ խաթեր էլ ըրադիՖներ<sup>2</sup> մի՛ ուղարկէք:

Երէկ լուր առանք որ Գարեգիւնը Մինարէթէն 70 լիւր է ուղարկել եւ էլի շուտով պիտի ուղարկէ. ինչո՞ւ չէք այս դրամի մի մասը յատկացնում Մենաւորի գործին: Զէ՞ որ նա էլ այստեղի հետ անմիջապէս կապւած է... Սարուստանից երեւի դրամ ստացած էք: Ներսիս (սապոնի գործարան) նամակները ուղարկելու էք Վրէժ եւ Մեծ Բ., իսկ Յակովբ Զիլինկարեանինը՝ Սարուստան հետեւեալ հասցէով – Վլատիկակաս\* օճառի գործարան\*\* (սապոնի գործարան) Վահան Չարակեան-ցին\*\* – յանձնել Յակովբին...

Լօ-լօ-ին<sup>3</sup> խօսել ենք որ թէ 10 օրից պատասխան չբերէ դրամը պիտի յետ առնենք, ամէն մի ոտքին չորս թուման է վերցնում (գնալ-գալ). դա արդէն մեծ գումար է. բախշիչը աւելի հասարակ է լինելու:

Այսուհետ բարի եղի՛ր պաշտօնական նամակները ուղղել տեղիս մարմնի հասցէ-ին. այդ առթիւ թիւրիմացութիւններ է լինում:

Դարվիլիչ<sup>4</sup> նամակ առանք որ իբր թէ խմոր է ուղարկել ձեզ մօտ. գանգատուում է որ դուք ապրանքների մանրամասն ելեւմտից հաշիւ չէք ներկայացրած. որքան ճիշտ է չգիտեմ...

Խմորներ եւ մեքենաներ գրի՛ր Փայլակին որ շուտով ճանպուղ դնէ...

Նամակները՝ Արամը խնդրում է առանց ուրիշ .....<sup>5</sup> ծրարի ուղարկես. մի կողմը թողնելով հասցէներով ծրարները. եւ առհասարակ Արամ անունով էք գրելու...

Խնդրել էինք որ հնի ծայրերը անջատել ծանր մասերից. էլի չյաջողեց չգիտեմ ինչ պատճառով: Աշխատեցէք քանի ուշ չէ. շուտով մի քանի ոսկի կ'ուղարկւի Փայլակին... մեր պարտքերը հասել է 4000 ռուբլի...

Բարեւներ եւ համբոյրներ Վարդանից, Տիգրանից, Արամից եւ բոլոր ընկերներ-ից:

**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ**

1905 թ. մարտ 27-ին

Շամ

1.- Ալնարկութիւն Կովկասի մէջ ծայր առած հայ-թաթարական ընդհարումներուն, որոնց վրայ կեդրոնացած էր բոլորին ուշադրութիւնը:

2.- Ըմբոստները, խռովարարները:

3.- Լօ-լօ – քիւրտ սուրհանդակ-փոխադրող:

4.- Դարվիլ – ծածկանուն Ալոյեան Գալուստի. անդամ Երեսնի Կեդր. կոմիտէի:

5.- Անընթեռնելի բառ:



### Սարուստանի Շրջանային ժողովին

Ընկերներ!

Մի պաշտօնական նամակով դիմել էինք Արեւել. Բիւրօ, Ռայոնական ժողով գումարելու եւ մի քանի կարեւոր խնդիրներ դնելու մեր կողմից: Դա առհասարակ երկրի եւ մասնաւորապէս մեր շրջանի գործերի տեսակէտից. շատ կարեւոր է. կարեւոր է մանաւանդ այն կողմից, որ ի մեծ ցաւ երկրի կարիքների – անկանոն յարաբերութեան պատճառով – մենք ժամանակին ներկայացուցիչի կամ տեղեկագիրների միջոցով երկրի կարիքները չկրցանք դնել Դաշ[նակցութեան] Խորհ[րդի] առջ ու կանոնաւոր բաւարարութիւն ստանալ: Հաւատացած լինելով որ Շամի եւ երկրի կարիքները իւր մաքսիմումով չի ընդունուելու եւ ընդգծուելու Դ. Խ.-ից, մանաւանդ վերջերս երկրում մեր դրութիւնը այնքան բարդւեց, որ մենք կարեւոր ենք համարում մեր պահանջները եւ դրութեան մանրամասները պարզել Սարուստանի Ռայոնական ժողովի առջ ու նրա քննութեան ենթարկել:

Հակառակ ձեր բոլոր գոհողութիւններին, եւ Բարձր[աւանդակ]ի մեր հերոս ընկերների ջանքերին, չկարողացանք (Դաշնակցութիւնը) ժամանակին բաւարարութիւն տալ այն տեղի միւսմալ պահանջներին ու դիմադրութիւնը երկարատեւ դարձնել: Ուստի Բարձրի գործը, որի վրայ այնքան յոյսեր կային, ի դերեւ ելաւ բազմաթիւ պատճառներով: Պատճառներ որոնց քննութեան տեղը հոս չէ եւ որի քննութեան արտօնեալ դատաւորները մենք չենք, ուստի այդ թողնում ենք հարցով չհահագրգռւած մարմիններին ու ընկերներին. իսկ մենք առայժմ բաւականանալու ենք այն պատմական դասով, ինչ տուաւ այդ ձեռնարկը իւր բոլոր մանրամասնութեամբ: Թէ որ այդ փորձերից յետոյ մեր ներքին գործողութիւնների ու տակտիկի մէջ որոշ փոփոխութիւն ենք մտցնելու, այդ փաստ է. բայց ի՞նչ փոփոխութիւն, այդ մասամբ ժամանակի հետ է կապւած եւ մասամբ էլ մասնագիտական խնդիր է, որի քննութիւնը տեղի պիտի ունենայ յատուկ մասնագէտ (գոնէ գործին օկօրան<sup>1</sup>) մարդկանցից կազմւած մի մարմնի կողմից ու ապա յայտարարելի ի գիտութիւն. ուստի այս անգամ կանգ չենք առնի այդ խնդրի վրայ, այլ կը շատանանք ընդգծելով այն ազդեցութիւնը – ինչ ունեցաւ Բարձրի գործի վիժումը – Շամի եւ իւր շրջանի գործողութիւնների եւ ձեռնարկների վրայ:

Բարձրի եւ շրջակայ գաւառակներից յետոյ, բուն երկրում, միակ կազմակերպւած վայրը մնացել էր Շամը եւ իր շրջանի լեռնային գաւառակները. ուստի թէ երկրի եւ թէ արտասահմանի ամբողջ ուշադրութիւնը դարձաւ դէպի Շամ. ոչ միայն ուշադրութիւնը այլ եւ ամբողջ հոգատարութիւնը... նոյն իսկ հակառակ Ընդ. ժողովի ընդգծած պայմաններին:

Ըստ Ընդ. ժող[ովի] այս շրջանը պիտի ստանար 19,000 Ֆրանկ նպաստ արտասահմանից, բայց ստացւեց որոշածից աւելին: Ըստ այդ ժողովի որոշման այս շրջանի գէնքերի կէսը պիտ գնար Բարձր[աւանդակ]. բայց ինչո՞ւ, ի՞նչ պատճառով տեղիս մարմինը չուղարկեց:

Բարձր(աւանդակ)ի գործի վիժումից յետոյ, նրա համար գնւած ռազմամթերքի մի մեծ մասը անսպասելի յաջողութեամբ մտաւ այս շրջանը․ մի յաջողութիւն որ համարեա չենք ունեցել մեր ամբողջ 15-ամեայ պատմութեան մէջ: Վերջապէս անսպասելի եղաւ եւ կարեւոր ընկերների սովորականից ստւար թւով դէպի այս շրջանը գալը եւ գալ ցանկացողների քանակութիւնը:

Ահա մի շարք պարագաներ, որ ինքն ըստ ինքեան մեր դիրքը այստեղ զօրեղացրեց եւ մենք չբաւականացանք Ընդ․ Ժողովի ընդգծած շրջանակով եւ խրախուսւած արտասահմանից եկած դրամական, ռազմական եւ ընկերների լայն հոսանքով, ձեռնարկեցինք եւ սկիզբը դրինք մի շարք գործողութիւնների, մեզ համար անզգալի կերպով լայնացնելով կազմակերպութեան շրջանները, լայնացրինք եւ նրա պահանջները, առանց մտածելու, որ արտասահմանի վերաբերմունքը կարող է փոխել եւ հասնել նոյնիսկ անտարբերութեան...

Մտտովանում ենք որ մեր այդ քայլը անփորձութեան հետեւանք էր, բայց բարեխտաբար ոչ առանց հիմքի․ մեզ համար իբրեւ հիմք ծառայել էր արտասահմանի աւելի քան սիրալիր վերաբերմունքը եւ այն ահագին ուժը, եւ այն ահագին յոյսերը որ նամակով մեզ ներշնչում էին արտասահմանի ընկերները ու մարմինները:

Կարճ․ մենք ձեռնարկներ սկսեցինք, պատրաստութիւններ տեսանք, հակառակ բոլոր անյաջողութիւններին ժողովուրդը կազմակերպեցինք ու տրամադրեցինք որ նա էլ իւր կողմից, իւր ինքնապաշտպանութեան համար, միջոցների դիմէ: Նա ընդունեց մեր հրաւէր, արաւ եւ անում է զգալի զոհողութիւններ այդ հողի վրայ․ բայց ի դէմ այս բոլոր ցանկալի երեւոյթների, մեր գործերը եւ ձեռնարկները այսօր կիսաճանապարհին մնալու վտանգին են ենթարկւած, արտասահմանի յարաբերութեան արտասովոր փոփոխութեան պատճառով:

Նախկին սիրալիր յարաբերութեան փոխարէն առհասարակ արտասահմանը, մասնաւորապէս Արեւ[ելեան] Բ[իւրօ]ն, մեզ մոռանալու դժբախտութեան մատնեցին: Ուղիղ հինգ ամիս առաջ Ա․ Բ[իւրոյից] ստացել ենք մի նամակ, այն էլ մի մասնաւոր խնդրի մասին (հաղորդւած էր մի նոր ընկերով գալը), իսկ մենք այդ ժամանակամիջոցում իրենց գրել ենք ամբողջ ութը նամակ այն էլ տարբեր գծերով: Երբ նամակի պատասխան չկար, ինքն ըստ ինքեան պահանջների բաւարարութիւն տալու մասին հարց չէր կարող լինել: Իսկ մենք էլ մեզ խաբէրով «այսօր-վաղը» յոյսերով մի կերպ եօլայ էինք տանում գործը եւ պարտքերով շարունակում մեր գոյութիւնը: Բայց ցաւալի է ասել, որ այդ պարտքերը մենք վերցրել ենք ոչ թէ հարուստ բուրժուաներից, այլ աղքատ ժողովուրդից, որ իւր ոչխարն ու եզը, հացն ու կնոջ գարդերը ծախել էր, մեզ տւել, որ իւր ինքնապաշտպանութեան համար զէնքեր գնենք: Տեղիս ընկերները առանց հաշուի առնելու ապագայ անակնկալները, այդ դրամները յատկացրել էին ընթացիկ ծախսերին, որոնց հաշիւների տալը եւ ծախսելու պատասխանատուութիւնը բնականաբար վերցրել էին իրենց վրայ: Այսօր երբ նրանց յոյսերը չարդարացան, երբ արտասահմանից սպասւած դրամական սպասելիքները չեկան, նրանք մնացին պատասխանատու եւ ժողովուրդի առաջ, եւ կարծում ենք կազմակերպութեան առաջ, որի հեղինակութիւնը մեծապէս ընկնելու պարագաների տակ է, այդ քայլի պատճառով:

Այս է երեւոյթը իւր ամբողջ մերկութեամբ․ այսօր երբ գարնան հետ բացւում է ժողովուրդի պահանջների շրջանը, մենք գտնւում ենք ամենակրիտիկական դրութեան մէջ եւ անկարող ենք բռնել այնպիսի դիրք, որ ժողովուրդին ազատենք լքումից,

իսկ մեզ եւ կազմակերպութեան՝ անկուծից...

Ձեզ ուղարկում ենք պարտքերի մանրամասն ցուցակ, որից կը հասկանաք մեր դրուժեան բոլոր սարսափելիութիւնը:

Որոշ ելք գտնելու համար, շրջանիս բոլոր ընկերները, որ ձեռնարկ պատճառով (մանաւանդ դրամ չլինելու պատճառով) հաւաքած էինք Շամուս, բազմաթիւ միջոցների դիմեցինք, բայց չկարողացանք, առանց արտակարգ միջոցների, ոչ մի դրական եզրակացութեան գալ:

Ընդհանուր տրամադրութիւնը այն էր, որ յոյսերնիս կտրելու ենք առհասարակ արտասահմանից եւ մասնաւորապէս Սարուստանից, որի տեղական շարժումները լայն չափեր ստանալով<sup>2</sup>, ամբողջ ուշադրութիւններին գրաւել է եւ մոռացութեան տւել մեզ: Նոյնիսկ ինչպէս նամակներից եւ ընկերներից լսում ենք, մեզ համար ուղարկելիք նիւթերը (խմոր) ճանապարհին յետ են դարձրել, յատկացնելու տեղական շարժումներին: Մենք այս մասին ոչինչ չուենք, խոնարհուում ենք բոլոր ազատագրական շարժումների առաջ, ուղարկում ենք մեր ընկերական ողջոյնները, ցանկանում ենք լիակատար պսակում ձեր բոլոր յոյսերի... բայց ընկերներ մի մոռանաք եւ կազմակերպական պարտականութիւններ, վերջապէս մենք ձեր նպատակների վրայ վստահացած եկանք երկիր՝ եւ գործի ձեռնարկեցինք:

Անցնենք բուն խնդրին. վերջապէս տեսնելով որ կազմակերպութեան վարկը վտանգի է նիւթարկում, որ դա անպատուութիւն է ամբողջ Դաշնակցութեան հասցէին, վճռեցինք մի քանի միջոցների դիմել:

ա) Կազմակերպութեան գէնքերը դնել ժողովրդի տրամադրութեան տակ, նրա դրամների փոխարէն

բ) Թէեւ Ընդ. ժողով[ում] վճռել է բունի միջոցներով, մանաւանդ մարմինները, իրաւունք չունեն դրամ հանգանակել, բայց որոշեցինք դիմել եւ այդ միջոցին, ընդունելով նոյնիսկ որ երկրի բացառիկ պարագաներով, դա առիթ կը տայ կոտորածի, մեր բռնելուն, գործի վիժման եւայլն, եւայլն, եւայլն, բայց ուրիշ ելք չկայ... առանց դրան էլ, եթէ այս դրութիւնը շարունակեց՝ պիտի վիժէ...

եւ գ) Եթէ այս միջոցներով չկրցանք կազմակերպութեան վարկը փրկել անկուծից, բոլոր պատասխանատուութիւնը ձգելով ձեզ վրայ, եթէ կենդանի մնանք, մենք էլ պէտք է գանք ձեզ մօտ, ձեր շարքերը խտացնելու ու տեղական շարժումը արագացնելու...

Անմիջապէս դիմելու էինք գործի, բայց Սարուստանի մասին լաւատեսութեան վերջին յոյսեր ունեցողները առաջարկեցին, նախքան գործ սկսելը մի վերջին անգամ էլ դիմել Սարուստան եւ խնդրել մինչեւ մայիս վերջը բաւարարութիւն տան մեր պահանջներին. եթէ տւին լաւ, եթէ ոչ ապագայ անակնկալների պատասխանատուութիւնը ձգելով ձեզ վրայ, կը դիմենք վերոյիշեալ միջոցների:

Չմոռանանք յիշեցնել ձեզ որ մենք Դ. Խ[որհրդին] 130,000 Ֆրանքի պահանջ ենք դրել, առանց պարտքերի. նոյնպէս եւ խնդրել էինք առանձին նպաստ բանտի ընկերներին (Գիսակ եւ բազմաթիւ դաշ[նակցական] ընկերներ մեր գործերի համար դատապարտւած): Մինչեւ հիմա մեզ չյաջողեց նոյն իսկ Սարուստանի Կ. Խ[աչեւր]ից սխտեմատիկ նպաստ ստանալ բանտարկեալների եւ թշուառացած ընտանիքների համար... Թէեւ քանիցս նամակներով, թէ իրենց եւ թէ Բիւրոյին ու զանազան Կ. Կ.-ների այդ առիթը գրել ենք: Մեր այժմէական կարիքը 1000 օսմանեան լիրա է, որի կէսը յատկացնելու ենք մեր պարտքին եւ կէսն էլ ընթացիկ ծախսերին, մինչեւ

կը գայ եւ մնացած մասերը:

Մի ամբողջ տարի է որ երկրի զանազան մասերից խնդրում ու աղաչում են որ խմոր ու պարագաներ ուղարկէք, շեշտելով որ այդպիսի գործողութիւնները մեծ յաջողութիւն կ'ունենան, ուստի ուժ տալու է եւ այդ գործին: Ի նկատի ունեցէք որ մեր նախկին գէնքը (մոսիւն-մաուզերի դէմ) իւր հմայքը կորցրել է, հարկաւոր է նոր գէնք, այն էլ անյալիսի գէնք որ թշնամին չունի: Իսկ դա խմորն ու խնձորն են: Բայց ի՞նչ գոհացում տւիք. կարմրելով ու ամաչելով գրում ենք, ամբողջ երկրում (հինգ վիլայէթ) ընդամէնը 20 հատ խնձոր ունենք լիքը — գեղեցիկ է, չէ՞... նոյնիսկ երեւոյթի համար...

Բայց գեղեցիկութիւնը աւելի զօրեղանում է, երբ աւելացնենք, որ դրանք 1.5 [տարուայ] լեցւած բաներ են եւ կիսով չափ փչացած կը լինեն...

Դէ՛հ եկէք էյի հին պատմութիւնները կրկնեցէք. մի բուռն մարդկանցով դուրս եկէք, հարիւր հազարներ դէմ. մի քանի հերոսական դէպքեր կատարեցէք ու հորի-զոնից չբացէք, մինչեւ որ նորերը կու գան էյի նոյն մեթոտով եւ ուղղութեամբ...

Խոստովանում ենք որ այս ուղղութեամբ փոխանակ մեր գործը առաջ քայլելու պիտի վիժեցնել տանք. ուստի թէ հասարակա[կա]ն թէ յեղափոխութեան բարոյականութիւնը պահանջում է կամ կանոնաւորել մեր ամբողջ դրութիւնը կամ գործադուլ հրատարակել...

Չկարծէք որ մենք հրաշքներ ենք սպասում արտասահմանից, ու մեր ամբողջ յոյսերը դնում նրա վրայ. ոչ, ոչ եւ հազար անգամ ոչ. մեր ուժը տառապեալ ժողովուրդն է իւր ջլուտ ձեռքերով: Բայց դուք մեզնից լաւ գիտէք, որ ոչ մի տաճկահայատակ ժողովուրդ առանց արտասահմանի օգնութեան չէ ազատագրւել. մենք պատմութեան մէջ բացառիկ երջանկութիւն ունենալու բախտին դեռ չենք արժանացել, ուրեմն կարեւոր է եւ դրսի նպաստը...

Առհասարակ դրսի յարաբերութեան խնդիրը մեզ մօտ գլխիվայր է հասկացուում. — երբ Բիւ[րոյց] մենք խնդրում ենք մեզ գիտակ պահել արտասահմանի մեր գործերի, ուժի եւ քաղաքական աշխարհի նորութիւնների հետ, այդ այլ կերպ է հասկացուում, եւ պատճառաբանուում, որ իբր թէ մենք Բիւրոյի վրայ նայում ենք իբրեւ մի ռեգուլատոր<sup>3</sup> մարմնի վրայ եւ նրանից սպասում մեր բոլոր հրահանգները: Ո՛չ սիրելիք! մենք հեռու ենք այդ մտքից, մենք պնդում ենք, որ մի ժողովուրդի ազատագրական գործը վարողները, քաղաքական կռիւ ունեցողները, պիտի գիտակից լինեն իրենց կազմակերպական ներքին ուժին եւ եւրոպական դիպլոմատիայի տրամադրութեան ելեւէջներին — առանց այդ երկու պարագաների կատարեալ քաղաքական կռիւ չի լինի, այլ դիւցազնական դէպքեր...

Ա՛խ եթէ մենք հնարաւորութիւն ունենայինք անձամբ հետեւելու վերոյիշեալ երկու պարագաների զարգացման պատմութեան, հէչ Բիւրոյին նեղութիւն չէինք տայ: Մենք գիտենք եւ լսել ենք, թէ որքան ծանր է Բիւրոներու դրութիւնը, թէ որքան շատ է նրանց գործը. հէնց մենք էլ ի նկատի ունենալով այդ դրութիւնը, խնդրում ենք ձեզ, այդ հիւանդոտ դրութեան մի ելք գտնել:

Մենք առայժմ իբրեւ ելք կանգ ենք առել հետեւեալ երկու դրութեան վրայ.

ա) Կազմել մի գատ մարմին — զուտ գործադիր բնոյթով — Մրգաստանի, Ոսկանապատի, Քարի, Ջրաբերդի եւ Մ. Ք.-ի Կ. Կ.-ների<sup>4</sup> մէկ-մէկ ներկայացուցիչներից, որոնց միակ պարտականութիւնը պիտի լինի՝ ծրագրի եւ ժողովների ընդգծած շրջանակներում Երկրի պահանջներին բաւարարութիւն տալ. մանաւանդ կանոնա-

ւորել թղթակցութիւնները: Իսկ եթէ այդ մարմինը յատուկ մարդիկ ունենայ սահմանազրկում աւելի լաւ կը լինէր...

բ) Եթէ անհնարին է մի նոր մարմնի ստեղծելը (պարագրաֆ<sup>5</sup> չաւելացնելու տեսակէտից) գործադիր բնոյթով անգամ, գէթ Սարուստանի յարմարութիւն ունեցող Կ. Կոմիտէներից մէկի վրայ առանձին պարտականութիւն դնել, տալով նրան հնարաւորութիւն, որ նա կարողանայ երկրի հետ յարաբերութիւնը կանոնաւորել եւ պահանջներին բաւարարութիւն տալ: Բիւրոն ի հարկէ կը մնայ էլի իւր դերի մէջ:

Թերեւս առարկէք որ Վրէժը<sup>6</sup> – ձեր շրջանի վերաբերմամբ համարեա այդպիսի դեր ունի, խոստովանում ենք որ իրաւաբանօրէն այդպէս է: Բայց դէ Փակտո նա անգոր է այդ դերը կատարելու: Որովհետեւ մի կողմից աշխարհագրական պատճառներով նա անգոր է ինքն անգամ գիտակ լինել արտասահմանի նորութիւններին, դրամական մեծ ուժ չունի, եւ վերջապէս ինչպէս երեւում է նա սպասուածին չափ հեղինակութիւն չունի դրսում... Թէ ինչո՞ւ, այդ թերեւս դուք մեզնից լաւ իմանաք, իսկ փաստը այն է, որ նրանց պահանջները մերինների պէս «ձայն բարբառոյ յանապատի» է մնում: Ուրեմն Սարուստանում զուտ մարմնի կազմելը օրւայ պահանջ է, մանաւանդ ներկայ պարագաներում երբ այդքան մեծացել է տեղական խնդիրը:

Ընկերներ! Ահա մեր դրութեան անորմալութիւնը իւր խոշոր գծերով, առաջարկում ենք ձեր սիւլի՛ր ուշադրութեան եւ խնդրում ենք յանուն գործին եւ ընկերական բարոյականութեան, անկեղծութեամբ հարցը քննել ու շուտափոյթ մեզ պատասխանել: Մեզ համար ամենահետաքրքիր պատասխանը այս պիտի լինի – թէ արդեօք Դաշնակցութիւնը մտադի՞ր է ասիական Տաճկաստանում կանոնաւոր քաղաքական կռիւ ունենալ եւ եթէ ցանկանում է, պիտի միջոցներ ձեռնարկէ՞՞ այդ կռիւն նպատակաշարմար ուղղութիւն տալու:

Սա հարցի սկզբունքային կողմն է, իսկ գործնականը՝ մեր պարտք՛ը րը արդեօք կ'որոշէք մինչեւ մայիս վերջ ծածկել, եւ մեր ընթացիկ ծախսերի եւ փոխադրութեան համար դրամ յատկացնել, թէ ձեր տեղական շարժումները այնքան յախուռն է որ ամբողջ հոգով պիտի նւիրւէք նրան եւ ձեր ուժերի մաքսիմալը դնէք նրա յաջողութեան համար: Աւելի լաւ կը լինի, յանուն նոյն գործի որոշէք եւ մեր դրութիւնը եւ անելիքները...

Սպասելով ձեր շուտափոյթ պատասխանին,

Ընկերական ողջոյններով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. մարտ 28-ին

Շամ

1.- Իրագել, լատտեղեակ:

2.- Ակնարկութիւն հայ քաքարական ընդհարումներու լայն ծաւալ ստանալուն:

3.- Կարգաւորող, կանոնաւորող:

4.- Յաջորդաբար՝ Երեւանի, Պաքուի, Ալեքսանդրապոլի, Կարսի եւ Թիֆլիսի:

5.- Բառացի՝ պարբերութիւն. ինս՝ յաւելեալ մարմին անելցնելու նշանակութեամբ:

6.- Ատրպատականի Կեդր. կոմիտէն:

**Սիրելի Տիգրան!**

Պայմանները այնպէս դասաւորւեցին որ գիշերը չկրցայ ձեր քով գալ. ուստի ստիպւած եմ նամակ[ով] մի քանի խնդիրներ ժամանակով գրելու. դու էլի մոռացել ես իմ առաջի օրւայ խորհուրդները... այլապէս անհասկանալի է քո երէկւայ աւելի քան կրքոտ տոնով գրած նամակը:

Ինչ ասել կ'ուզէ որ նամակդ ինչպէս պահանջել էիր կարգացի բոլորին...բոլորի վրայ թողած տպաւորութեան մասին չեմ խօսում. ես կը գրեմ քեզ իմ տպաւորութիւնները եւ խորհուրդները զուտ ընկերական հողի վրայ:

Շեշտում ես որ Կոմսի հեռանալով կազմը չի փոխուում. մոռանում ես որ ամէն բան նրա ձեռքով էր դառնում, իսկ մնացածները պալիատիւ<sup>1</sup> դեր ունէին: Վերջապէս մոռացել էիր՝ որ երեքը ժամանակաւոր էին, մինչեւ գործերի հետ ծանօթացնեն նորերին. սկզբից ասեմ, որ երեքից երկուսին (Ալէս, Արմենակ) հէնց երէկ վճռեցինք էլի չէզոքացնել, առ այժմ նրանց տալով որոշեալ գործ, ապա դիւրութիւններ ստեղծելով արտասահման երթալու: Ուրեմն հներից մնում է, այն էլ մեր ցանկութեամբ Թէոսը<sup>2</sup>, որի հետ առ այժմ եօլայ կարելի է տանել. մէջերնին էլի նա է մի բանի նման. վերջապէս յարաբերութիւնը պահպանելու համար հարկաւոր է գործերին մի ծանօթ մարդ, իսկ նա եթէ իւր խելքով կամ վարքով (որի մասին ես անձնապէս ոչինչ չգիտեմ) չկարողացաւ օգտակար լինել, գոնէ տեխնիկական գործերում օգտակար կը լինի:

Գալով նորերին (որոնց դժբախտութիւն չունես ծանօթ լինել) այդպէս հեշտութեամբ չենք համաձայնել ու ներս բերել որքան երեւակայում ես<sup>3</sup>. Համարեա իմ գալու առաջին օրից, թէ ես, թէ Իշխանը յարաբերել ենք նրանց հետ եւ գտել ենք, որ եթէ նրանք զարդ [?] դաշնակցական չեն, բայց յամենայնդէպս մտքի ու գաղափարի մարդիկ են, որոնցից ոչ մի վնաս չենք սպասում բացի օգտից. իսկ միւս կողմից էլ նրանց առաջ այդպէս շուսյութեամբ չենք բանայ մեր գործերը, ինչպէս երեւակայած ես. նրանց բացարձակապէս յայտնեցինք, որ իրենց մասնակից չենք անելու ոչ ձեռնարկային, ոչ արտաքին յարաբերութեան եւ ոչ էլ կազմակերպական գործերում մինչեւ որոշ ժամանակ երբ վստահա[նա]նք նրանց անկեղծ յեղ[ափոխական] եւ դաշնակցական լինելու վրայ: Մենք այժմ կասկածելու առիթ չունենք, բայց փաստեր էլ չունենք այս կամ այն կերպ հաւատալու. բայց որ նրանք գաղափարի մարդ են՝ վստահ եղիր: Նրանք մի տարի է որ հոս են, Սարուստանում համարեա անցել են այն շկոլան, ինչ որ մեզնից ամէն մէկը:

Կարծում եմ վերոյիշեալ երկուսին հեռացնելով, եւ այն երկուսի գալով մենք ամբողջապէս կազմ փոխած ենք համարում. չմոռանաս որ մենք դեռ երկու թեկնածու էլ ունենք (Մենիկ եւ Փաստաբան) որոնց մասին կարծիք ենք հարցնում Գիսակից: Այս բոլոր երեւոյթները ի նկատի ունենալով ես պնդում եմ, եթէ այնպէս ինչպէս ընդգծեցի՝ եղաւ, պիտի կազմը փոխուած համարել:

Պալով այն ներքին ոչ ցանկալի երեւոյթներին, որ մինչեւ հիմա տեղի է ունեցել մեր մէջ, դրա վերջ տալու համար վճռեցինք, առանց այդ նորերի հաւաքել քեզ հետ, բոլոր հին հաշիւները մաքրել եւ նոր գործերը այնպիսի դրուժեան մէջ դնել, որ առիթ չտայ նման երեւոյթներին:

Պալով գործնականապէս դրամի եւ մնացած խնդիրներին, բոլորս էլ մտածում ենք եւ միջոցներ ձեռնարկում: Դու պիտի հասկանաս, որ դու հոս լինելով չլինելով հարցը չի փոխուում. չէ որ մեր նպատակն է կազմակերպութեան վարկը անկումից ազատել, եւ ոչ թէ այս կամ այն ընկերի. այստեղ գուտ կազմակերպական վարկ է եւ ոչ անհատական. ուրեմն մնաս չմնաս, այդ վարկը այսպէս կամ այնպէս պէտք է տուժէ: Յատկապէս եթէ դու անկեղծ դաշնակ[ցական] ես՝ մնա, աշխատանք եւ միջոցներ առաջարկիր կազմակերպութիւնը այդ դրուժիւնից հանելու համար, այլապէս միայն խօսելով եւ յուզելով գործը անկումից չենք ազատի:

Պալով գանազան Դաւիթների [?] եւ ընկ[երք] վերաբերմունքներին կամ ժողովրդին, ես իմ փորձառութիւնից այսքանը կ'ասեմ, որ այդ բոլոր տեսակի մարդկանց ուղեղները շաբլոն<sup>4</sup> են. երբ դրուժիւնը փոխւեց, փոխւելու է դրանց շաբլոնականութիւնը եւ եթէ դու մի քիչ մեծ լինես, հաշիւներ չմաքրես այդպիսի մանր մարդկանց հետ, հաւատացիր որ ինքնըստինքեան կը հարթւեն:

Իսկ ինչ վերաբերում է իմ երկու ամիս մնալուն, այդ այն պատճառով յանձն առի, որ այդ յարաբերութիւնները մեղմացնեմ, որովհետեւ ես ոչ մի կողմով չահագրգւած չեմ եւ գործերը կարգի դնելով կ'երթամ: Չմոռանաս որ նրանք շատ են ցանկանում որ ես հոս մնամ, բայց ես գտնում եմ որ Լեռնապարում նոյնքան կարիք կայ իմ գնալու որքան հոս. ուրեմն այդ քայլը եւս խօսակցութիւն չէ, այլ գուտ պրակտիկա:

Առ այժմ այսքանը. այլապէս գնացքը այնպէս կը լինի ինչպէս դու ես ցանկանում, բայց ընկերաբար թոյլ եմ տալիս ասել որ դա գործից փախչել է...

Բարեւներ  
ԱՐԱՄ<sup>5</sup>

1.- Մասնակի, ոչ հիմնական:

2.- Թէոս Տեղորիկեան:

3.- Նորերը – հաւանաբար խօսքը նախկին արմենականներ՝ Ղեւոնդ Մելոյեանի եւ Համազասպ Բաղէշեանի մասին է, որոնց Դաշնակցութեան մէջ ներգրաւուիլը բաղձալի կը համարուէր:

4.- Միատեսակ, կադապարեայ:

5.- Գրութիւնը թուական չի կրեր. հաւանաբար մարտի վերջերուն է:

**Սիրելի Տիգրան,**

Ստացանք 31 մարտ թվականի նամակդ, շտապում ենք պատասխանել: Յամենայն-դէպս կարգադրելու էք, որ գծերը չվտանգելու համար այսուհետեւ ենթակոմիտէն իրաւունք չունենայ մարդիկ ուղարկել եւ ոչ մի պարագայում:

Զէնքերի խնդիրը աւելի լաւ է քո վերադարձին կարգադրենք, երբ մանրամասն ցուցակ կը բերես, որից կ'իմանանք թէ որքան կը նստէ դրանց վարձը: արդէն խոսել ենք, որ քեզնից անմիջապէս յետոյ Վարպետին պիտի ճանպենք: Ո՛վ ունեւոր է դրամ կը տայ, ով ոչ, ի հարկէ չի տայ: Կարգադրելու էք, որ այսուհետեւ առանց գէնք գնող մարմնի, ոչ մի կտոր գէնք չգնեն: Արծիւի մասին արդէն գրել ենք, ինչպէս յարմար է այնպէս կ'անէք:

Զինուորների գինաթափութիւնը կը կատարենք այստեղից, դու միայն գրի՛ր քո դիտողութիւնները:

Ենթակոմիտէի փոփոխութեան մասին, ի հարկէ դու պիտի մտածես. ի նկատի ունեցիր որ դրանք ազդեցիկ մարդ են, եթէ փոխենք միանգամից մեծ թիւրիմացութիւններ առաջ կը գան...

Պիտի աշխատես Զուարթը<sup>1</sup> լաւ կանոնաւորել, իբրեւ գաւառի կեդրոն դա կարելու է... գիւղերում ամէն բան նոր էք գնելու:

Նորութիւններ քաղաքական աշխարհից այն է, որ Պոլսում երկու պալատական գեներալներ գողացել են բոլոր կարեւոր թղթերը եւ փախել են Եւրոպա. ամբողջ 8 օր խուզարկութիւն [է] եղել Պոլսում, բայց չեն գտել... Դրանով պիտ բացատրել կառավարութեան լռութիւնը... բայց յամենայն դէպս զգուշութեամբ ես շարժելու:

Ընկերական բարեկներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. ապրիլ 1-ին

Յ. Գ.— ԲԺԻՉԿը<sup>2</sup> տեղափոխութեան համար ծրագիր է առաջարկել, դու էլ մտածիր, ջրով պիտի լինի, իբր թէ...

ՆՈՅՆ

1.- Զուարթ – ծածկանուն Ալիւր մեծ գիւղի: Կեդրոնն էր էր Թիմար գաւառակի ենթակոմիտէին:  
2.- Խօսքը Կոմսի (Վ. Փափագեան) մասին է, որուն կուս. ծածկանուններէն մէկը ԲԺԻՉԿ էր:



**Միրելի Տիգրան:**

Ստացանք նամակդ, ուրախ ենք յաջողութեանդ համար: Աշոտի<sup>1</sup> մասին այսքանը կարող ենք ասել, որ նրա ծախսերի համար կարծում ենք անձամբ բացատրութեան պիտի կանչէք ձեր ներկայութեամբ. այդ կերպ կարելի կը լինի պատուել նրա դիմակը իւր ամբողջ մերկութեամբ: Իսկ եթէ դու անյարմար ես համարում նորա ներկայութիւնը, Կ. Կ.ի կողմից յայտարարիր որ նա եւ Թռչնակը շուտով գան քաղաք:

Քո գլխաւոր գործը պիտի լինի համարեա նորից կազմակերպել շրջանը եւ գործերը այնպիսի դրութեան մէջ դնել, որ նման վիժմունքներ չպատահեն: Անցեալը անցել է. այնուհետեւ ենթակոմիտէն իրաւունք չպիտի ունենայ առանց մեր կարգադրութեան ծախսեր անելու. մանաւանդ պարտաւոր են ամսեկան մի անգամ հաշիւ տալ Կ. Կոմիտէին. եթէ այսուհետեւ երկու ամսի հափ հաշիւ չտան, պիտի խիստ պատասխանատուութեան ենթարկեն: Եղած հացերը եւ ռազմամթերքը կենտրոնացնելու ես համաձայնած վայրը: Այդ վայրի վրայ առանձին ուշադրութիւն պիտի դարձնես, որովհետեւ ապագայ փոխադրութիւնը հոն պիտի կեդրոնանայ:

Ուղարկում ենք մի նամակ որից կ'իմանաս, որ գէնքի դրամ է դրած ենթակոմիտէն] եւ պահանջ է անում. դու էլ նամակում գրել էիր նոյն խնդրի մասին. մենք համաձայն ենք որ հացից մի մասը ծախի եւ ժողովրդական գէնքի դրամի պարտքը գոցելի, այլապէս կը խայտառակենք. հացն էլ լաւ գին է գնում, այնպէս արա որ չխաբեն, էժան գնով գնեն... Լսում ենք որ հոգ գաղտուկ պահած հացեր կան, որ իբրեւ նուէրներ հաւաքած է գիւղերից. այդ առթիւ խիստ քննութիւն պիտի անէք գիւղերից, հաշիւները առայժմ չգտանք. որ արխիւի մէջ եթէ լինի, շուտով կ'ուղարկենք:

Նորից խնդրում ենք, որ սառնարիւնութեամբ քննէք եւ աշխատեցէք չխաբել: Այդ Աշոտի խնդիրը մի լաւ լուսաբանիր: Հոս նորութիւններ չկան. Գարեգինը<sup>2</sup>, 70 լիրա է ուղարկել, մեծ մասամբ յատկացրինք պարտքերի եւ 20ն էլ տւինք Իշխանին<sup>3</sup>, որը վաղը կ'երթայ: Դուրանից եւ Բարձր[աւանդակ]ից նամակներ են եկել, որի մէջ գանգատում են որ այստեղից հրահանգներ են տրւում Բարձրին, առանց Տարօնի Կ.Կ.ի գիտակցութեան. առաջարկում են խոսափել այդ տեսակ քայլերից: Է՛հ, հին վէրքեր են...

Սարուստանից նոր բաներ չունենք. Կոմսը չորրորդ օրն է որ ելել է, ոչ մի լուր չունենք. դուք եթէ լուր ունէք գրեցէք: Առանձին ուշադրութիւն էք դարձնելու փոխադրական պայմանների վրայ:

Ինչպէ՛ս [է] Կարէնը. մի բանի հարկաւոր կը լինի. դրան լաւ փորձիր:

Առայժմ այսքանը. Արմենական պարոնները չեն համաձայնում մեր դրած պայմաններով կազմի մէջ մտնել<sup>4</sup>. մի անգամ տեսանք, այսօր վերջին պատասխան պիտի տանք:

*Պատերազմից նորութիւնը. Կուրոպատկինի հեռացնելն է եւ Լինեվիչի նրա տեղ կարգելը: Տելինգը գրաւել են ճապոնացիք: Նահանջը դեռ չէ վերջացել:  
Զշտապես. վերադարձին աշխատիր մտնել եւ Շահպաղին<sup>5</sup>...*

*Բարեկներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ*

1905 թ. 1 ապրիլի

- 1.- Աշոտ – հնչակեան գործիչ:
- 2.- Գարեգին – Ստեփան Թաղեոսեան:
- 3.- Իշխան – Նիկոլ Պողոսեան-Սիքայելեան, Լեոնապարի կազմակերպիչ:
- 4.- Տեսնել յաջորդ նամակը:
- 5.- Շահպաղի – գիտ Վանի նահանգի Թիմար գաւառակի մէջ:

*Փաստ. 661-56*

## 34

*Պ. Պ. Հ-ին եւ Ղ-ին<sup>1</sup>*

*Յարգելի պարոններ!*

*Ընկերները ձեզ հետ վերջին տեսակցութիւնից յետոյ այսօր ժողովում դրին ձեր պահանջը – մասնակցել եւ գիտակ լինել շրջանի բոլոր գործերին: Քննելով ձեր այս առաջարկը, ինչպէս ձեզ առաջ էլ յայտնել ենք, անկարող ենք ընդունել, ներքին կազմակերպական նկատումներով: Ուստի ստիպւած ենք ի մեծ ցաւ մեզ մերժել ձեր առաջարկը եւ կանգնել մեր առաջապայմանի վրայ. եթէ բարի եղաք ընդունելու լաւ, իսկ եթէ ոչ, այսուհետեւ ձեզ հետ պիտի շարունակենք սոսկ ընկերական յարաբերութիւն, մինչեւ մօտիկ ապագան կ'որոշէ ձեր եւ մեր դիրքը:*

*Ուղարկում ենք «Մյոչեմու արմեայնէ բունտոյուտ»\*\* («Ինչո՞ւ են հայերն ապրատամբում»): Շուտով կը ստանաք եւ վերջին կանոնագիրը: Կարեւոր դէպքերում պարտաւոր ենք այս եւ այն կերպ ձեր պահանջներին ու խնդիրներին բաւարարութիւն տալու:*

*Խնդրում ենք կարգացած թերթերը յետ ուղարկէք:*

*Ընկերական ողջոյններով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ*

1905 թ. 2ին ապրիլ

1.- Համազասպ Բաղէշեանն եւ Ղեւոնդ Մելոյեան արմենական երկու երիտասարդ գործիչներ, ճեմարանաարտ, որոնց հետ բանակցութիւններ կը վարէին Ղաշնակցութեան մէջ ներգրաւելու նըպատակով:

[Ռուբէն Տէր Մինասեանին]

Սիրելի Ռուբէն!

Ստացայ քո 27/1 թւակիր նամակը Յ[արուժիւն]ի հետ, որ ապահով տեղս հասաւ։ Այդ նամակը եկաւ վերջնական կերպով ինձ յուսախաբ անելու ձեր շրջանի վերաբերմամբ։ Հոգ չէ, ես կարծում էի կարող կը լինեմ իմ ընկերական կապերով բացառիկ դիրք բռնել, բայց փաստերը ցոյց տւին, որ ես էլ արժանանալու եմ միւս ընկերների բախտին, որոնք իրենց խաչը կամաւոր կերպով շալակում են Գողգոթայ ելնելու... այս ասպարէզում... Նորից եմ կրկնում հոգ չէ, մի կերպ կ'անեմ այն, ինչ կարող եմ անել իմ տափակ խելքով եւ ջրոտ ձեռքերով, իսկ մնացածը անելու ուժ չունեմ եւ պատասխանատու էլ չեմ ոչ պատմութեան առաջ եւ ոչ ընկերների... եւ ամենագլխաւորը խղճիս առաջ հանգիստ եմ։ Իսկ եթէ դուք այնքան լաւատես էք Մ․ Ք․ վերաբերմամբ, որ կարծում էք նա մեր բոլորին պահանջներին ժամանակին բաւարարութիւն է տալիս, ուրեմն ձեր մասնակցութիւնը միայն դիսսոնանս<sup>1</sup> կը լինի։ այդ մասին ոչինչ չունեմ, իսկ առայժմ կը բաւականանամ ընդգծելով մի փաստ որ շատ տիպիկ եւ բնորոշող է այդ դրութեան — Այստեղ ուղիղ վեց ամիս է ոչ մի կտոր նամակ չեն ստացել — ոչ Մ․ Ք․ից եւ ոչ ձեր շրջանի այլ տեղերից... Ահա ձեզ պատկերի ամբողջ գեղեցկութիւնը... է՛հ, սրանից յետոյ էլ մեզ ստիպում էք որ էլի հաւատանք ձեր խօսքերին եւ գրածներին։ Լաւատեսութեանս համար սեւերես դառայ թէ այստեղի եւ թէ Վրէժի ընկերների առաջ։ Թէեւ դուք եւ բոլորդ իբրեւ անձնական ընկերներ ինձ այդ դրութեան մէջ չէիք ձգելու... Չկարծէք ես հրաշք էի սպասում կամ պահանջում, ես խնդրում է[ի] մինիմալ պահանջների բաւարարութիւն, բայց իմ այդ խնդրի ալիքը ժայռի զարկէց եւ փշրած թեւերով յետ դառաւ դէպի ինձ... Աստուած վերջը բարի անի... բայց յամենայն դէպս ճիշդ է ռուսական այն առածը որ ասում է․

– Ամէն մարդ խօսում է իր ցաւից\*\*։ (Բառացի՝ ամէն մարդ խօսում է այն տեղի մասին, որ տեղը որ ցաւում է)։

Շնորհակալ եմ տւածդ տեղեկութիւնների համար...

Գոնէ աշխատեցէք պաշտօնական նամակներով մեզ ձեր շրջանի գործերի վերաբերմամբ գիտակ պահել...

Հա՛, մոռացայ գրել քեզ եւ իմ տեղս գալու մասին, այս երկու ամսում այնքան բան տեսայ եւ զգացի, որ կարծես ահագին տարիներ եմ ապրել... Վստահ կարելի է ասել. ամէն բան կարելի է անել, եթէ արտասահմանի յարաբերութիւնը կանոնաւորւի. իսկ առանց դրան հին պատմութիւնները դեռ շատ պիտի կրկնեն...

Յիշում ես անցեալ տարի այս օրերը քեզ մօտ նստած խօսում ու քննադատում էինք Բարձր[աւանդակ]ի երեւոյթները, եւ զգացմունքներ էինք արտայայտում երեւոյթը այս եւ այն կերպ դարձնելու համար... Այժմ երբ ապրում եմ այդ երե-

ւոյթները վայրում ու մանաւանդ նման երեւոյթները նախընթաց օրը, ուղղակի եկել եմ այն եզրակացութեան որ անցեալ տարւայ անյաջողութիւնները կէսի պատճառը մեր անտարբերութիւնն էր եւ ժամանակին նպաստներ չհասցնելը: Իսկ երբ բանը բանից անցել էր, խիղճ հանգստացնելու համար այնքան ապարդիւն զոհողութիւններ արինք, գիտակցելով նոյն իսկ որ աննպատակ պիտի անցնեն... Առանց մարգարէ լինելու, նախատեսնում եմ, որ նման երեւոյթները հոս կրկնելու են, միայն Աստուածային ձեռք եւ ուժը կարող է փրկել, իսկ մենք դժբախտաբար այդ էլ չունենք...

Եղբօրդ մի անգամ եմ տեսել. այստեղից Յ նամակ գրել եւ խնդրել որ տեղս ճանապարհէի, բայց ոչ մի լուր ու պատասխան դեռ առած չեմ...

Լաւ կը լինի որ այսուհետեւ փոստով թղթակցէինք ուղղակի այստեղից. այս անգամ ես կը տամ մի հասցէ, դուք մեզ գրեցէք Դուրանի ձեռով, իսկ դուք էլ նամակի մէջ հասցէ դրէք:

Նորութիւններ քիչ կան, օրւայ նորութիւնը սովն է ու թանգութիւնը: Ժողովուրդը շատ նեղուում է...

Ա՛խ, եթէ Աստուածատուրին համոզէիք զար մեզ մօտ լաւ կը լինէր, ամենամեծ ծառայութիւնը ժողովրդին, այօր նա կարող է մատուցանել իւր արհեստով – Ամէն բանի սով է...

Հա՛, ձեր քաղաքում մի Վարդան կար, կարծեմ այժմ գինուոր է. Վաղինակը նրան գիտէ. ի՞նչ դրութեան մէջ է, թերեւս ես նրան կանչեմ, նրա մասին շուտով ինձ տեղեկութիւն հաղորդէք:

Զմուռնաս առեւտրական գործերիդ մասին ինձ գրել, շատ եմ հետաքրքրուում:

Նորապսակին<sup>2</sup> ուղարկում եմ խորին յարգանացս հաւաստիքները... Ա՛, քաֆր օղի, դառուսը ինձ կը գրես, որ ես էլ քեզ գրեմ: Բայց որ մեռնիս էլ չեմ գրի. դեռ վա՛ղ է... Իսկ իմ վերաբերմամբ ամենամեծ հեղնութիւնն էր որ կարող էիր անել... է՛հ այսպիսի պայմաններում երբ այդպիսի տողեր կարդացի ծիծաղելուց մեռայ...

Ուղարկում եմ ողջոյններ եւ համբոյրներ բոլոր նոր ընկերներին, համբերութիւն եւ եռանդ եմ ցանկանում այդ պատասխանատուութիւնից բաց ճակատ ելնելու...

Կ[արմիր] Խ[աչը] արդեօ՞ք չի համաձայնի իւր եկամուտներից որոշ տոկոս յատկացնել այստեղի համար...

Գիսակը<sup>3</sup> ամենախայտառակ դրութեան մէջ է...

Ամօթ է մեր պատւին, որ այդ մարդուն այդպէս ի սաստ ճակատագրին ենք թողել...

Համբոյրներով – Ընկերդ ԱՐԱՄ

1905 թ. ապրիլ 4-ին, Շամ

Յ. Գ.— Մոռացայ գրել որ Պարտիզաւանի<sup>4</sup> վրայով նամակ ենք գրել, ստացա՞ք?

1.- Անյարմար, անտեղի:

2.- Նորապսակը Մալխասն է (Արտ. Յովսէփեան, որ նոր էր ամուսնացած):

3.- Գիսակ – Յովի. Սերեճկիլեան, որ բանտ կը գտնուէր Վան:

4.- Պարտիզաւանը ծածկանունն է Կաղզուան քաղաքի:

**Միրելի Փայլակ!**

Ստացանք մարտ 27 թվակիր նամակդ, շատ ցաւում ենք այդքան թիւրիմացու-  
թիւններ առաջ գալու մասին: Է՛հ, հրաժարւում եմ պատճառների մէջ մտնել: Թե-  
րեւս ապագան ինքն ըստ ինքեան այդ պարզէ...

Ուղարկածդ ապրանքները դեռ տեղս չէ հասել. լսում ենք որ ճանապարհներին  
է, գալուց անպայման կը գրեմ.—

Կարդացի տեղս գալու ցանկութիւնդ. ես եւ Վարդանը առայժմ անյարմար ենք  
գտնում ա) այդտեղ մարդ չլինելու պատճառով. բ) այստեղ մեծ տարածայնութիւն-  
ներ է ընկել նոր մարդկանց գալու մասին, որի հետեւում է խստութիւններ եւ գ) քո  
Ֆիզիկականը հագիւ տանի այստեղի փակ կեանքը: Ուրեմն առայժմ այդտեղ մնա-  
լու ես. աշխատի՛ր բանալ նախկին գիծդ, նրանով մեծ օգուտ տւած կը լինես:

Տեղիս նորութիւնների մասին անձամբ կը պատմէ Կ[ոմ]սը, որը յուսով ենք  
ապահով տեղ կը լինի հասած. նորութիւն համարեա չկայ. դուք եթէ Բիւրոններից  
նամակներ էք առնում, բովանդակութիւնը մեզ գրէք: 6 ամիս է Արեւել. [բիւրոյից]  
ոչ մի կտոր նամակ չեն ստացել հոս: Ի՞նչ նորութիւններ ունէք գրեցէք: Նամակներս  
խնդրում եմ շուտով ուղարկէք ուր հարկն է...

Վերջերս Կ[ոմ]սի հետ կրկին ուղարկեցինք 4 ոսկի. դրանով Մենաւորի հաշւին  
դրինք 10 ոսկի. այս կերպ 1 ոսկի ես թողել եմ Աւետարան Գրիգորին. 3 Ֆարհադն  
է բերել. 4-ը Կոմսը եւ 2-ը հոս ըստ ձեր պահանջի տւինք Թոմասի քրոջ որդուն, իւր  
պարտքի դիմաց: Է՛հ, դրամ ստացա՞ք. եթէ ոչ 30 ոսկին որտեղից շտկեցիք:

Ստացել ենք Գարեգինի ձեռքով ուղարկւած 70 ոսկին. բայց աւելի լաւ է չստա-  
նայինք, քան թէ ստանայինք այդքան քիչ... ուղղակի պարտատէր[եր]ը իրար ձեռ-  
քից խլել են. ստացող վաճառականը իւր պարտքերը վերցրել է, իսկ մնացածներն էլ  
ուրիշին բաժանեցին... 500 ոսկի պարտք ունենք, դրան կից եւ ընթացիկ ծախսեր...

Աստուծոյ խաթեր ոչ ոքի չուղարկէք. անկարող ենք ընդունել եւ Յակովբին...  
մարդու պէտք չունենք, դրամ չկայ մեր գոյութեան համար. չենք կարող նոր  
չրջաններ աւելացնել...

Ի՞նչ արիք Մոսոյին:

Համբոյրներով ԱՐԱՄ

1905 թ. ապրիլ 5-ին  
Շամ

Յ. Գ.— Խնդրում եմ այսուհետեւ պաշտօնական նամակները ուղղել Կ. Կ-ի հաս-  
ցէին. բաւական է որքան թիւրիմացութիւններ առաջ եկան այդ պատճառով...

ՆՈՅՆ

Վարդանը բարեւում է...

**Միրելի Գարեգին!**

Հէնց նոր ստացանք քո մարտ 26 թւակիր նամակը, քեզնից այդ երկրորդ նամակն է որ ստանում ենք. չգիտենք [ուրիշ] էլ էք գրել թէ ոչ... Ստացել ենք Տ. Ն. Լ. եւ Կ-ի անձնական նամակները: Գրում էք թէ բացի 14-էն ուղարկել ենք եւ յիսուն վեց. բայց չգիտենք ե՞րբ. 14-ը Արամի ասելով — 100-ի մէջ է եղել, իսկ վերջերս ստացանք կրկին քեզնից 70 լիրայ, որի ստացականը ուղարկում ենք այս նամակի հետ: Անցեալ հաշիւները հազիւ թէ կարողանանք պարզել, որովհետեւ Կոմս-ը\* հեռացաւ (պատճառների մասին, Մայիսսի միջոցով գրել ենք Վրէժ) իր հետ տանելով բոլոր դրամական հաշիւները Մ.Ք. ներկայացնելու համար... Ուրեմն ինչ որ լինելու է պիտի այսուհետեւ լինի, իսկ անցածի մասին կարող էք բացատրութիւններ ուղղել իրենից... Ընկերները խնդրում են, որ դրամներին կից կամ նրանից յետոյ նամակով յայտնեցէք թէ որքան դրամ էք ուղարկում, ո՞ւմ միջոցով եւ որի՞ վրայ... դա կարեւոր է ստուգութեան համար:

(Զուռնաչիների հետ մենք նամակ ուղարկել ենք Մենաւոր. զարմանում ենք թէ ինչպէս է որ ձեր ձեռքն է ընկել... Դէ՛հ, դրանք սկզբից սկսեցին շահագործել մեր միամտութիւնը: Իսկ պատկերը լրացրին այս երկու օրը: Հոչակաւոր Հաջին<sup>1</sup> գործիք ծառայեցնելով մի սրիկայի, որ նոր է ելել բանտից. Գիսակի վրայ հրէշաւոր զրպարտութիւններով մի թուղցիկ է գրում (ինքը անձամբ), տալիս այդ սրիկային, նրա անուկով բաց թողնելու. այդպէս էլ անում է այդ լիրբը եւ անցեալ շաբաթ օր, ապրիլ 2-ին եկեղեցիների պատերի վրայ եւ այլ տեղերում կարդում են այդ թուղցիկները... բովանդակութիւնը չենք ուզում տալ, որովհետեւ աւելի քան սրիկայական է. Գիսակը շատ վատ է ազդւել այդ դէպքից յետոյ... մեղաւորը բռնել ու բանտարկել ենք, տեսնենք ինչպէս պիտի վարւենք Հաջիւ հետ. շատ գէշ դրութեան մէջ ենք...)

Գրում էք որ մեր գործերը շատ աննախանձելի դրութեան մէջ է, իսկ մենք կ'ասենք մերը շատ անյուսալի դրութեան մէջ է... կ'ուզես իսկական պատկերը հասկանալ, պատմենք... Ուղիղ հինգ հարիւր ոսկի\* պարտք ունենք, դեռ մի կողմն ենք թողնում ընթացիկ ծախսերը, որ նա էլ իւր կողմից ամսական 100 ոսկի գալիս է աւելացնելու նրա վրայ: Ուղիղ վեց ամիս է Արեւել. [Բիւրօ]-ից ոչ մի կտոր նամակ չունենք. է՛հ, նոյնիսկ սկսել ենք կասկածել թէ դրսում ընկերներ կան, թէ ոչ... Մանրամասնաբար լսեցինք Սարուստանի դէպքերի մասին, նոր ընկերներ-ը\* մանրամասն պատմեցին: Իսկ պատերազմի մասին Պոլսի թերթերը աւելի մանրամասն եւ ազատ կը գրեն...

Լսեցինք ձեր չգալու մասին, շատ ցաւում ենք այդ առթիւ. է՛հ, մենք ի՛նչ էինք ծրագրում, ի՛նչ դուրս եկաւ. այդ առթիւ մենք կը գրենք Մ. Ք. եւ կը պահանջենք դրական լուծում, այլապէս հոս հին պատմութիւնը պիտի կրկնւի: Գոնէ թող Պետրոսեան-ը\* անպայման գայ: Ա՛խր այլապէս ի՞նչ դրութիւն կը լինի. գործ-ը\* աւելի քան լայնացել է. շրջանները շատացել են, իսկ ընկերներ\* Աստուած տայ: Մեր մաս-

նաև որ համոզմունքն է, եթէ ուզում ենք կանոնաւոր գործ կատարել\* պիտի մի շրջանում մի քանի\* ինտելիգենտ ընկերներ մի անգամից մտնեն եւ ընկերակցական գործ սկսեն, փոխանակ անհատականի, որի արդիւնքները վայելել եւ վայելում ենք. դէ՛հ, մեզ պէս հասարակ մահկանացուները չեն կարող լինել Վահան, Հրայր կամ Գիսակ<sup>2</sup>, նոյնիսկ այդ տիտաններն էլ չկարողացան գլուխ հանել, ուր մնաց մեզ պէս գաճաճները... Այս հարցը մեզ շատ է մտածել տալիս...

Ի՞նչ դառաւ այն խենթ Սիմասը<sup>3</sup>. նրան Արամը մի քանի նամակ է գրել, ոչ մի պատասխան չէ ստացել. չի լինի՞ թէ նորէն Սարուստան է թռչել... Ա՛խ, գոնէ նա գար, էլի օգնութիւն է:

Այս անգամ խնդրում ենք նամակաբերից, որ թերթեր էլ բերէ. դու էլ խնդրիր որ անպայման համաձայնւի... Այստեղ մեծ կարիք կայ լեզալ յեղափոխական գրականութեան, մանաւանդ Րաֆֆիի, Ծերենցի, Ահարոնեանի եւ նման հեղինակների. ա՛խ ինչ լաւ կը լինէր, որ կարողանայիք քիչ-քիչ ուղարկել... «Անդրոնիկէ»ն եւ «Դէ-պի կռիւը» չստացա՞ք, եթէ ստացել էք ինչո՞ւ մէջէն բաժին չէք հանում...

Խորին ցաւով լսեցինք Ք[րիստափո]րի մահը. այդ արդէն սարսափելի է, բայց հաշուելու ենք դառն ճակատագրի հետ. իսկապէս մենք մեզ որք ենք զգում... բառիս իսկական իմաստով. բայց նրա յիշատակը յարգելու համար երգուել ենք, նրա թարմ գերեզմանի առաջ, միշտ բարձր պահել նրա պարզած դրօշը. հանգիստ տառապեալ հոգուն...

Գրում ես որ Մենաւորի դրամական տագնապի համար դիմենք Արեւել. եւ Արեւմ. [Բիւրոներին]. հիմա մեր պահանջներին շատ գոհացում տւին, մնաց ուրիշի համար էլ խնդրենք. քեչալը դեղ ունենայ, իւր գլխին կ'անէ...

Բայց մերը աւելի սարսափելի է, որովհետեւ ժողովրդական գէնքի դրամ է, այսօր պահանջում են, բայց դրամ չկայ գնելու. եթէ երկու ամիս էլ դրամ չհասաւ կատարեալ վարկաբեկում պիտի լինի... Այդ մասին գրել ենք եւ մինչեւ մայիս վերջ ժամանակ դրել, այնուհետեւ պիտի դիմենք ծայրայեղ միջոցների... այլապէս փրկութիւն չկայ:

Լսեցինք որ Փայլակը Մենաւորից հեռանում է. ընկերական խորհուրդ կը տայինք որ Ֆարհադին<sup>5</sup>, որ նոր եկաւ, հոն ուղարկէիք, նա կրնայ յարմարել եւ եօլայ գնալ, մանաւանդ շատ հմուտ ու փորձաւոր է նման գործերում...

Ընկերական ողջոյններով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. ապրիլ 5-ին, Շամ

Յ. Գ.— Գործերի շատութեան պատճառով Արամը չկարողացաւ անձնական նամակ գրել. անշուշտ կը ներէք. Յով. եւ Ադաշին կը բարեւէք:

ԱՐԱՍ

- 1.- Հաջի Յակոբ, հնչակեան գործիչ:
- 2.- Խօսքը Սասնոյ ծանօթ գործիչներէն Վահան Մանուէլեանի, Հրայր Դժոխքի, ինչպէս նաեւ Վանի մէջ բանտ գտնուող Սերենկիլեան Յովհաննէսի մասին է:
- 3.- Խօսքը Ռուբէն Տէր Սիմասեանի մասին է, որուն իսկական անունը Սիմաս էր:
- 4.- Ֆարիադ – Սարգիս Օհանջանեան: Փայլակը Դերձակեան Ռուբէնն է:

**Սիրելի Ընծայր!**

Ստացանք Աւետարանցոց ձեռքով Փայլակի մարտ 27 [Թւակիր նամակը եւ դրան կից Մալխասինը. շտապում եմ պատասխանել, որովհետեւ ինչպէս կ'երեւայ շատ յուզւած էք...

Ծպտեալների մասին այսքանը կ'ասենք, որ դա մի պատմական սխալ էր, որ կատարւեց եւ վերջինը Կ[ոմ]սի գալով. էլ այսուհետեւ եթէ Աստուած էլ իջնէ երկնքից ոչ մի մարդ չի գայ, մինչեւ որ դուք չհամաձայնէք:

Նամակից իմացանք որ Փայլակը գացել է Աւարայր եւ տեղդ դուք էք մնացել մենակ. յուսով ենք որ այս բացառիկ պարագաներում կ'աշխատէք արդարացնել մեր յոյսերը. իսկ մենք մեր կողմից խոստանում ենք ըստ կարելոյն բաւարարութիւն տալ ձեր պահանջներին...

Առայժմ ձեր միակ պարտականութիւնը եւ գործն է լինելու որ այս գարնանային միջոցից լաւ օգտւէք. էլ ուրիշ տեղերի վրայ յոյս չունենք. յուսով ենք որ տարածայնութիւնները վերջ կ'ունենան, երբ վերջնայ տեղիդ երթեակութիւնները... Թէեւ դժուար կը լինի ձեզ համար միանակ դեկավարելը, բայց երբ ճար չկայ ինչ պիտի անէք. մենք մեր կողմից կը խնդրենք եթէ հնարաւորութիւն կայ ձեր քով պահէք նոր եկած Ֆարհատին – Քեռուն<sup>1</sup> նա շատ հմուտ է այդ գործերում եւ կարող է ձեզ հետ լաւ եղայ գնալ... Լսեցինք որ դրամ ստացել էք. Կ[ոմ]սի հետ մենք էլ ուղարկեցինք կրկին 4 ոսկի. իսկ Թոմասի քրոջ որդուն տուինք 2 ոսկի. այդ հաշիւներով Մենաւորի համար ուղարկել ենք 10 ոսկի (1 ոսկի Արամը թողել է Աւետարան Գրիգորին. 3 ոսկի Ֆարհատն է բերել. 4 ոսկի Կ[ոմ]սն է բերել, իսկ երկու հոս ենք տւել Մենաւորի հաշիւին):

Դէ՛հ, ձեզ տեսնենք որ պատւաւոր դուրս գաք այդ դերից... Ի՞նչ էք գործում, լաւ չի լինի որ Աւետար[ան]ից մարդիկ վարձւեն եւ դրամ հոն ստանան ու ապա գան ձեզ մօտ առանց աղմուկների ապրանք վերցնեն...

Մեր կողմից Պուկրէշտը հոն ներկայացուցիչ է, նա կարող մարդ է, աշխատեցէք կանոնաւոր կերպով գործադրել եւ օգտւել:

Դեռ ուղարկւած ապրանքներից ոչ մի կտոր հոս չենք ստացել, այնպէս [որ] չենք կարող ոչինչ գրել. մնացել են Կայան եւ Աւետարան<sup>2</sup> ճանապարհների գէշութեան պատճառով:

Արդե՞ք ձեր կողմերը չսեւացան<sup>3</sup>. այս կողմերը համարեա սեւացել է: Նորից ենք կրկնում աշխատեցէք օգտւել այս գարնան օրից. մինչեւ սարերի բացւելը:

1.- Ֆարխատ – Զեռին – Արշակ Գաւաթեանն է, կամատրական գումդի ապագայ հրամանատարը, որ ատեն մը ծանօթ էր նաեւ Ֆարխատ ծածկանունով:  
2.- Աւետարան – Բերկրի գաւառակի Խաչան, իսկ Կայան՝ նոյն գաւառակի Պատիկ Գեղի ծածկանուններ:  
3.- Մեւանալ – ձիւները հալիլ իմաստով:  
4.- Ռուբէնը՝ Գերձակեանն է (Փայլակ), Կամուրջ՝ ծածկանունն է Ս. Թադէի մօտ գտնուող Կարէ գիւղին:



Չէ՞ր կարող Ռուբէնը մնալ Կամուրջում<sup>4</sup> գոնէ տղաների ապահովութեան համար, կարծում ենք այդ շատ լաւ կը լինէր:

Կ[ոմ]սի հետ ուղարկել ենք երկու սիգարի տուփը, մէկը քեզ մէկը Փայլակին, երեւի ստացած կը լինէք:

Ջրամանները ստացանք, Արամը դժգոհ է որ նամակ չէք գրում:

Ընկերական ողջոյններով  
ՎԱՍ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. ապրիլ 5-ին

Շամ

Յ. Գ.— Աւետարանցիք սովորութիւն են արել մինչեւ հոս գալու, ստիպեցէք մինչեւ Կայան գան ու վերադառնան, այդ յիմար երթեւեկութիւնները, հոն էլ պիտի վտանգւի...

Ուղարկում ենք մի շարք նամակներ. եթէ կարող էք այդտեղից ուղղակի ջրի ափից փոստը ձգէք, շատ լաւ կը լինի, իսկ եթէ անկարող էք, ուղարկեցէք Աւարայր:

ԱՐԱՄ

---

Փաստ. 661-59

39

Սիրելի Տիգրան!

Մեզ զարմացրեց ձեր վերջին նամակի այն տողերը որ գրում էք, թէ վերադառնում եմ քաղաք նոր խորհրդակցութիւնների համար: Ա՛խր ինչ պիտի խորհրդակցենք, մենք վաղուց ենք գիտակցում որ գործերը խայտառակ դրութեան մէջ են, եւ հէնց այդ պատճառով էլ քեզ ուղարկեցինք. չէ՞ որ [մի] անգամից չէ կարելի հիմնական փոփոխութիւն մտցնել ամէն բանի մէջ: Մեր կարծիքով առանց հոս գալու, պտտելու ես բոլոր գիւղերը, լսելու ես բոլոր բողոքները եւ հնարաւորութեան շրջանում նոր կազմակերպութիւններ ես անելու ամբողջ գիւղի հասարակութեան հաւանութեամբ: Այս կերպով մի կերպ բաւարար կազմակերպութիւն առաջ կը բերէք. մի կերպ եօլայ կը տանեն, մինչեւ տեսնենք կանոնաւոր շրջիկներ կարող կը լինե՞նք ստեղծել. հիմնական փոփոխութեան համար պէտք [է] հող մի գիտակից մարդ նստի Աշոտի<sup>1</sup> փոխարէն եւ գործերը վարէ, առանց դրան բան չի դուրս գալու. իսկ առաջժ պիտի յայտարարել, որ դատերից վերցնելու են միայն այնպիսիները որոնք իրենց յօժար կամքով երկու կողմն էլ առաջարկում են կազմակերպութեան քննութեան, իսկ հակառակ պարագայում մենք գործ չունենք, ուր ուզում են կարող են գնալ: Պիտի հասկացնել մեր ընկերներին որ նրանք պրոպագանդի միջոցով օգտակար դարձնեն դատերը մեզ մօտ վճուել եւ ապա ինքն ըստ ինքեան ժողովուրդը իւր գործերը առանց մեր միջամտութեան ինքը կը վերջացնէ: Խստիւ արգելելու է ծեծի մեթոտը եւ գործադրողներին էլ պատասխանատուութեան ենք ենթարկելու այսուհետեւ: Աշոտը իսկոյն հեռանալու է շրջանից, նրա ներկայութիւնը աւելի պիտի գործերը փոխէ:

Գիւղերին աւելի ինքնուրոյնութիւն է տալու իւր գործերը (յեղ․) վարելու, դատերը չէզոքացնելով: Մեծ ուշադրութիւն ես դարձնելու մանաւանդ փոխադրող ընկերների կազմակերպելու վրայ. մի մոռանա մենք իդէյալ կազմակերպութիւն չենք կարող մտցնել ոչ մի վայրում. առ այժմ մեր նպատակն է լինելու եօլայ տանել մինչեւ բարեպատեհ հանգամանքներ ստեղծեն, իսկ այդ կը լինի այն ժամանակ, երբ ժողովրդական մինիմալ պահանջներին (բողոքներ, թիւրիմացութիւններ, գէնքի խնդիրը, դատեր — մի կերպ կարգադրենք) բաւարարութիւն տանք: Վաղը միւս օրը դաշտային աշխատանքները սկսուում են, ճանապարհները բացւելու են, երթեւեկութիւնը շատանալու է, մենք չենք կարող էլ գիւղ իջնել, ուրեմն հանգամանքից օգտուելիք եւ ինչ կարող ես արա...

Ախր ահագին նշանակութիւն ունի հէնց այն դրութիւնը, որ խօսեն թէ լիազօր է եկել եւ գործերը կարգադրել, դրանով մի քանի ամիս եւս կը կանոնաւորուի: Յետոյ անձամբ կը ծանօթանաս խնդիրներին եւ այստեղից կարող կը լինես նամակներով դեկավարել, մարդիկ կանչել, տեսնել եւ հրահանգներ տալ. իսկ եթէ այդպէս դաս հաւասար է ոչինչ անելուն... մի մոռանա նոյն հանգամանքը, որ եթէ գալու լինես հագիւ թէ կարողանաս վերադառնալ կրկին, տեղիս գործերի շատութեան պատճառով. գոնէ գնացել ես վերջացրու...

Կարճ, մեր ցանկութիւնն է մնալ, գոնէ դրութիւնը ուսումնասիրել եւ այստեղ նամակներ ու մարդիկ կանչելով դեկավարել, մինչեւ տեսնենք ինչ կը լինի... Ուղարկածդ հրացաններից մէկը մերը չէ, փոխւել են, ուղարկւած է N 331, 1873, 58, 134, իսկ մեր հրացանի N-ը հոս չկայ, նա Բարձր[աւանդակ]ից<sup>2</sup> եկած հրացաններից է որի NN-ը յայտնի չեն: Տեղեկաց[իր] թէ որտեղ է փոխւել...

Աշոտին ուղարկելու էք հոս:

Ապրանքների մասին գրել ենք. նորից ենք գրում, պիտի ուղարկել Հեփթաղէմ<sup>3</sup>:

Ուրեմն կեղրոնացնելու էք հոս: Ի՞նչ եղաւ Թաթար եւ ընկերը. նրանց յայտնելու էք, որ իրենց երթեւեկութիւններով պիտի իրենց վտանգեն, աւելի լաւ է այս կողմերը չգան:

Նրանք այն Աւետիս գիւնորի շորերը ուղարկել են, այդ կողմերը պիտի լինի, ինչո՞ւ չեն ուղարկում...

Նամակները ստացանք ամսի 4-ին. պատւիրելու էք որ ոչ մի բոլոր նամակները չկանգնեցնեն. մէկ սուրհանդ[ակ]ը միւսին ճամբայ է դնելու, նոյնիսկ գիշերն էլ... այլապէս շաբաթներով ուշանում է...

Դէ՛հ, սիրելի՛, քեզ տեսնենք մի լաւ պտոյտից յետոյ բազմաթիւ տպաւորութիւններով վերադառնաս հոս եւ դրանով կարող կը լինենք մասամբ այդ շրջանի վէրքերը մեղմացնել...

Ընկերական ողջոյններով  
ՎԱՍ. Կ. ԿՈՄԻՏԷ

Յ. Գ.— Բոլոր նամակներիդ ժամանակին պատասխանել ենք:

5 ապրիլ 1905 թ.

1.- Հնչակեան գործիչ:

2.- Բարձրաւանդակ — Սասուն:

3.- Հեփթաղէմ — ծածկանուն Կոտոց անապատի: Արամ կը գրէ նաեւ Յեփթաղէմ:

**Միրելի Մալխաս!**

Ստացանք Կոմսին ուղղած նամակդ: Ինքը արդէն անցաւ ձեզ մօտ. քեզ հետաքրքիր խնդիրների մասին անձամբ կը պատմէ...

Կոթուրի գծով քիւրդը\* վերադարձրինք նամակներով, երեւի ստացած կը լինես:

Ծպտեալների հարցը փակեց կռուով[?] այսուհետեւ ոչ ոք չի գայ առանց ձեր կարգադրութեան: Միայն Փայլակի հեռանալուց յետոյ հազիւ Ընծայրը կարողանայ կանոնաւոր վարել գործը. ամառային աշխատանքները սկսւում են. նա պիտի զբաղւի իւր տնտեսութեամբ. լաւ կը լինի որ Քեռուն-Ֆարհատին այնտեղ մի կերպ տեղաւորէք:

Ձեր մասին պաշտօնապէս գրելու ենք Մ. Ք. եւ պահանջելու որ համաձայնեն... Թերթեր մեծ քանակութեամբ ուղարկէք, No 2ը<sup>1</sup> քչութեան պատճառով չենք ցրել, սպասում ենք մեծ քանակութեամբ ստանալուն...

«Անդրոնիկէ» եւ «Դէպի կռիւր» ստանալուց իսկոյն ուղարկեցէք:

Ոչ մի մարդու չուղարկէք, անկարող ենք ընդունել եւ Յակովբին. մեզ ինտելիգենտ ընկերներ է պէտք, կտրիճներ շատ կան Յակովբի հայրենիքում...

Նորութիւններ քիչ կան. ուղարկեցինք Գարեգինին նամակ ձեր գծով, իսկ սուր-հանդակը մի քանի օրով կ'ուշանայ. այնտեղից էլ կը գրենք:

Ընկերական բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐ[ԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. 6-ին ապրիլ  
Շամ

Յ. Գ.— Նամակները խնդրում ենք շուտով ուղարկել Սարուստան:  
ՆՈՅՆ

1.- Խօսքը կը վերաբերի «Գրօշակ»ի 1905 թ. քիւ 2-ին:

Սիրելի Տիգրան!

Զարմանում ենք որ մեր նամակները չէք ստանում. ամէն մի նամակի պատասխանում է կամ նոյն օրը կամ միւս օրը. վերջին անգամ գրել ենք քեզ ապրիլ 5-ին: Ա՛խր մենք խնդրեցինք որ ամէնից առաջ այդ սուրհանդակային գործը կանոնաւորէիք, որ նամակը այսպէս չուշանար, օր[ինակ] Դարվէզում<sup>1</sup> միակ մի մարդ է գբաղում (Մնջիկը)<sup>2</sup> այդ գործով, հասկանալի է որ ամէն անգամ նա չէ կարող ժամանակին նամակները տեղ հասցնել. ինչպէս կ'երեւայ, մէկ այնտեղ է ուշանում եւ մէկ է[լ] վերջին կէտում...

Պիտի կարգադրել որ ամէն գիւղում չորս յատուկ սուրհանդակներ լինեն յատկապէս նամակների համար. եւ երբ մի տեղի սուրհանդակը գալիս է, առանց միւս սուրհանդակին ճամբու դնելու չպիտի վերադառնայ. թէ գիշեր եւ թէ ցերեկ, պիտի հերթապահութիւն նշանակել, որ գործը կանոնաւորի եւ յայտնելու էք, որ այսուհետեւ ո՛ր կայարանում նամակը ուշացաւ, ամէն մի օրուայ համար այդ գիւղի պատասխանատուից որոշ դրամական տուգանք ենք վերցնելու.— Մի քանի փորձեր արա՛ եւ գործանապէս իւրացնել տո՛ւր որ հիմք բռնի... նոյն եւ փոխադրութեան համար: Զարմանալի է որ կարծում ես որ ապրանքների փոխադրութեան համար մենք այստեղ անկախ, առանց քեզ գործադրութիւն կ'անենք. չէ՞ որ դա յանձնեցինք քո լիազօրութեան, էլ ինչպէ՞ս կարող ենք նոր կարգադրութիւններ անել. իսկ մենք միայն համաձայն էինք որ կեդրոնանայ առ այժմ Փարհադի քով. քսակներ պատրաստելու համար նիւթ կ'ուղարկենք, նոյնպէս եւ հրահանգներ Փարհադին, միայն դու գծերը կանոնաւորիր. Կոմսի ծրագիրը չգործադրեց...

Յորեն ուղարկեցէք քաղաք ծախելու համար... ալիւրների համար թալիսներ կ'ուղարկենք. բայց կարգադրելու էք մի քանի չափ ալիւր պահեն (Մուռ, Նշանի եւ մնացած ընտանիքներ) մեր այստեղի կարիքների համար, իսկ մնացածները փոխադրէք գնան:

Ամիի հետ գէնքերը ստացել ենք լրիւ, բայց մէկը փոխել էինք, N-ը գրւած է նախընթաց նամակով, շուտով ստուգիր...

Մենք նորից պնդում ենք, առ այժմ մի կողմը թողնելով Ա. ենթակոմիտէի<sup>3</sup> խնդիրը իջնելու էք գիւղեր եւ գործերը կարգադրելու էք, առանձնապէս սուրհանդակային գործը, գոնէ շրջանի պարագաներին հետ ծանօթանալու համար...

Ապրանքները առ այժմ մնալու է հոն, մինչեւ նոր կարգադրութիւն:

Գարեգիւնից նամակ ստացանք, էլլէնի<sup>4</sup> մասին գրում է որ մահը պատահել է Սոֆիայում խնձորային փորձերից... Ուրիշ նորութիւններ չէ գրում, շեշտում է որ իրենք էլ դրամական տագնապի մէջ են եւ Սարուստանը պահանջների բաւարարութիւն չէ տալիս:

Որտեղի՞ց դրամ ճանպենք Համբոյի ընտանիքին (եւ ո՛վ յոյս ունի թէ նրա ընտանիքը անպայման իւր ստանալիքը պիտի ստանայ). չէ՞ որ խօսեցինք, որ մենք նրա ընտանիք[ին] չենք կարող նպաստ տալ, եղածները բաւակա՞ն չէին...

Նորից պնդում ենք, որ նոյնիսկ ոչ յեղ[ափոխական] գործերով Հաջուն գործի էջք ուղարկելու... Բաւական է որքան շահագործեց մեր բարութիւնը... Այդ յեղ-գործերի վրայ խաչ է դնելու, մենք աշխարհի բոլոր դարտերը չենք կարող մեր ուսերի վրայ տանել. մերն էլ բաւական է...

Արտասահմանի նամակները ուղարկեցինք Կոմսի հետ, գրել ենք եւ նոր կազմը կցել ենք եւ տեղեկագիր Ռայոնական ժողովի համար... Բայց մնացած ելքի խնդիրը քո ներկայութեամբ վերջ[աց]րինք (Նշանի տան) որ այդ առթիւ գրենք Մ. Ք. Թող այնտեղ բացատրութիւն տայ. այդպէս էլ արինք, եկած դրամներէն մօտ 6000 դահեկան յատկացրինք էն չարսուրի պարտքերին, աւելին անկարող էինք, 15 ոսկի էլ իշխանը տարաւ...

Զէնքերի հաշիւը դեռ կոնտրոլի չենք ենթարկել, բայց ստուգութիւնը վերջացրել<sup>5</sup>:

- 1.- Դարվէզ – Մարմետ գիւղ, Թիմար գաւառակին մէջ:
- 2.- Մնջիկ – Մարմետցի Յունան, ստրիանդակ, կուսակցական գրականութիւն փոխադրող:
- 3.- Ա. Ենթակոմիտէ – Թիմարի կուս. շրջանն է, կեդրոնը Ալիար գիւղը: Տիգրան (Տէր Սլրոչեան Յարութիւն) գործողութեամբ էր Հայոց Չոր եւ Թիմար գաւառակները կազմակերպելու համար:
- 4.- Էլլէն – Քրիստափոր Սիքայէլեան:
- 5.- Գրութիւնը անաւարտ կը թուի:

---

Փաստ. 661-64

## 42

### Ա. Ենթակոմիտէին

Ընկերներ!

Ստացանք ձեր ապրիլ 7 թւակիր նամակը Աշոտի ձեռքով:

Շնորհակալ ենք մեր քննիչին<sup>1</sup> ցոյց տւած դիւրութիւններին համար, յուսով ենք որ կ'օգնէք նրան գաւառում էլ գործը կանոնաւորելու եւ վերջ տալու այն բոլոր թիւրիմացութիւններին որ ծագել են ձեր շրջանում:

Այգեստանցի Մախսուդը 1000 նոր ծայր է բերել մինչեւ Սալոր<sup>2</sup> գիւղ. դուք ստացել էք միայն 838-ը. ապա ո՞ր եւ մնացածները. շուտով կարգադրէք որ մնացածը բերեն եւ ուղարկել ուր հարկն է...

Խնդրում ենք եկած նամակները չուշացնել. մի սուրհանդակի ձեռքից առնելով, ճանաչելու էք անմիջապէս երկրորդին, այլապէս նամակները շատ են ուշանում...

Ընկերական ողջոյններով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. 8 ապրիլ  
Շամ

- 1.- Խօսքը Տիգրանի մասին է:
- 2.- Սալոր – ծածկամունն է Ճանիկ գիւղի, Թիմար գաւառակ:

**Միրելի Տիգրան!**

*Ստացանք ապ[րիլ] 7 թևակիր նամակդ. շատ ուրախ ենք որոշմանդ համար. ուղարկել ենք երէկ (ամսիս 7-ին) մի նամակ, երեւի ստացած կը լինես:*

*Մենք էլ ժողովրդական զէնքի դրամի մասին նոյն կարծիքի ենք, եւ կարծենք թէ գրած ենք. պէտք է թողնել իրենց կամքին, բայց խրախուսելու է որ անպայման զէնք գնեն. դրամները առայժմ կարելի է] թողնել իրենց քով. տեսնենք ինչով կը վերջանայ մասնաժողովի խնդիրը:*

*Նորից ենք կրկնում. պիտի մեծ ուշադրութիւն դարձնել անպայման սուրհանդակային խնդրին...*

*Այգեստանցի Մախսուդը մինչեւ Սալոր 1000 ծայր է բերել, բայց Ա. ենթակոմիտէն կը գրէ որ ստացել ենք 838 հատ. պէտք է տեղեկանալ թէ մնացածը ուր է եւ անմիջապէս հասցնել հոն (Յեպթաղէմ):*

*Առհասարակ սովորութիւն է դառել, որ ճանապարհին եկած ապրանքներից, ծայրից եւ ռովելներներից վերցնում են: Խիստ կարգադրեցէք որ բոլոր իրերը ամբողջութեամբ տեղ հասցնեն, այն էլ բոլորը միասին, իսկ մեծ բան չի լինում որ այդպէս մաս-մաս են տանում:*

*Քաղաքում նորութիւններ չկան. եղածը գրել ենք: Դեռ նոր նամակներ չկան, եթէ գալու լինեն անմիջապէս ճանպեցէք:*

*Գործի եւ հրահանգների հետեւողականութեան մասին ապահով եղիր...*

*Թաթարը եւ ընկերը 5 ոսկու հաշիւ են բերել. զայրացանք եւ մերժեցինք նրանց ծառայութիւնը... Տեսնենք ինչպէս կը վերջանայ: Եթէ լսեցիք որ Կայան նոր ապրանքներ է եկել, գրեցէք որ Սահակի հետ անմիջապէս փոխադրեն. մեզ սպառնում են որ եկած ապրանքները ետ պիտի ուղարկենք:*

*Բարեւներով՝  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ*

1905 թ. 8 ապրիլ

44

Սիրելի Իշխան

Յուսով ենք որ ապահով տեղ հասած կը լինես: Քեզնից յետոյ հոս առանձին նորութիւններ չպատահեցին: Դրամ դեռ չենք ստացել. էլի սկսում են պարտքերի սկիզբը:

Կոմսը Թորգոմին<sup>1</sup> ասել է որ Մայիսասին պիտի տեսնեմ. ինչպէս կ'երեւայ մենք մայիս վերջին չենք ստանայ մեր պատասխանը. նա այդ ձեւով հազիւ մայիսին հասնի Մեծ Քաղաք:

Պապիկը<sup>2</sup> ինձ գրում է — Չեմ ուզեր Կոմսի մասին գրել եւ առայժմ վիճաբանութեան դուռ բանալ. պարտքերը ծածկելու համար առաջարկում է

ա- խնայողութեամբ շարժւել. մեր պարտքերի համեմատ ձեռնարկներ սկսել, բ- ժողովրդի գէնքի հարցը մի կերպ (հոն) լուծել...

գ- Կանոնաւոր հաշիւ պահել եւ առանց Կ. Կ.ի գիտութեան ոչ մի կոպէկ չծախսել...

դ- Դիմել Բիւրոներուն եւ խնդրել անմիջական օգնութիւն. ինքն էլ անձնակառուցութիւն գիմելու է Ամերիկա...

ե- Եթէ դուք կ'ուզէք (ես) մի կանոնաւոր գործ տեսնել զգոյշ կեցէք ուրեմն դիկտատորութիւնից<sup>3</sup>...

Տեսնում ես սիրելիս! Հարցը ինչպէս է դասաւորուում, բայց հետաքրքիր է իմանալ թէ որտեղից նա իմ քայլերի մէջ դիկտատորութիւն նկատեց... այդ յետոյ:

Ըստ մեր խոստման գրել եմ թքի դեղի ձեւով. ուրեմն կը կարդաս եւ միւս երեսը:

Համբոյրներ եւ բարեկներ բոլոր եկողներին,

Համբոյրներով՝  
ԱՐԱՄ

[1905 թ.] 8-ին ապրիլ

Շամ

\*  
\*\*

45

Սիրելի Իշխան!

Քիչ յետոյ Գարեգնից եւ Մայիսասից մի քանի նամակներ եկան եւ տեղին պատահեց մի քանի դէպքեր, որոնց մասին քեզ գրելը աւելորդ չենք համարում: Գարեգնի նամակի մէջ Ք[րիստափոր]ի մահուան մասին այսքանն է յիշում, որ դէպքը տեղի է

ունեցել Սոֆիայու (Պուլկարիա) դինամիտային փորձի ժամանակ: Տեսնում ես այդ անիրաւիք մենք հէջ չկրցանք օգտուել, բայց որքան զոհեր տարաւ. բայց երանի այս ամենամեծ զոհը վերջինը լինէր... Իւրեանց զարու մասին այսպէս են գրում.— Մեր գայլը չյաջողեց. Բիւրոները արգելում են. երեւի չե[ն]ք արժանանայ այդ աւետեաց երկրի տեսութեան — Մալխասը գրում է, Բիւրոները գրած են — եթէ գնաք յանցաւոր կը նկատուէք... կարծում ենք կարեւոր է այստեղ մի նամակ գրել Բիւրոներին եւ գոնէ պահանջել որ Սամսոնը<sup>4</sup>

..... Իբր թէ սուրհանդակի եւ ծպտեալների համար է արել ամբողջ 1.5 ամսուր-լայ ընթացքում. դրա վրայ եթէ աւելացնենք մեր 5 ոսկին ամէնը կը լինի 10 ոսկի, ուրեմն երկու ամսուայ մէջ ծախսել է 10 ոսկի, իսկ փոխադրել են 5000 ծայր: Ի դէպ ծայրերը բոլորը կենտրոնացած է Յեպթաղէմ<sup>5</sup>. Ինչպէս խօսել ենք առ այժմ բոլորը պիտի ուղարկենք քեզ. ուրեմն որոշ պայմաններ մշակիր եւ մեզ գրիր որ կարգադրենք փոխադրելու. բոլորը 6000 են: Վարժապետը չեկաւ. դորան անպատճառ պիտի ուղարկէիր ..... Կայարանի<sup>6</sup> գիւղերը գնացիր թէ ոչ...

Մալխասը գրում է որ մարդիկ չենք ուղարկի, բայց իւր հին բարեկամներից մէկին, ..... Յակովբ, ուղարկելու է ..... Երեւի Ֆարհատը<sup>7</sup> կ'արգելէ ..... Այժմ մինչեւ Աւետարան ապահով գնացել է, այն կողմից դեռ լուր չունենք ... Մենաւորից էլ նոյն է<sup>8</sup>

..... հեղինակներին գտանք, բայց սարսափելի բան է. գրողը եւ իւր մեղսակիցը (?) եղել է հովիւ Ակոպը. Գիսակը առաջարկում է տեւոր, չգիտենք թէ ինչով կը վերջացնէ ... երեք մարդու ծեծ ուտելուց յետոյ նոյն խոստովանութիւն: Սարսափելի դրուժիւն է, մարդ չգիտէ թէ ինչով կը վերջանայ այս դրուժիւնը:

Ուրիշ նորութիւններ չկան: Տղաներին Կենտրոնական Կոմիտէի հասցէին ուղղած նամակին պատասխան կ'ուղարկենք շուտով. թող ներողամիտ լինին որ մի քիչ ուշացրինք:

- 
- 1.- Թորգոմ – ծածկանուն Վասպուրականի Կ. կոմիտէի անդամներէն Թէոս Տեղափոխեանի, որ Կոմսին հետեւելով դուրս ելած էր Կովկաս անցնելու համար:
  - 2.- Պապիկ – ծածկանուններէն մէկը Յովի. Սերենկիլեանի (Գիսակ):
  - 3.- Այս մասին տես նաեւ Արամի 1905 թ. Մարտ 17-ի նամակը (փաստ. 661-46, էջ 71-72):
  - 4.- 13 տող անընթեռնելի, գաղտնի մելամի անյաջող բացուելուն հետեւանքով:
  - 5.- Յեպթաղէմ կամ Հեպթաղէմ – ծածկանուն Կոտուց անապատի:
  - 6.- Կայարան – ծածկանուն Թիմարի եւ Հայոց Վարի Ձորի ենթակոմիտէին:
  - 7.- Ֆարիատ – Գաւաթեան Արշակ (Քեռի):
  - 8.- Հինգ տող անընթեռնելի, միտնոյն պատճառով:
  - 9.- Ջրաբերդ – ծածկանուն Կարսի. Դարվիշ – ծածկանուն Ալոյեան Գալուստի, անդամ Երեւանի Կ. կոմիտէի:
  - 10.- Վարդան – Վարդան Շահպազ (Տօնիկեան), անդամ Վասպուրականի Կ. կոմիտէի:
  - 11.- Հնադարեան – ծածկանուն Լիմ անապատի եւ Վանքի «Դրսի տան»:
  - 12.- Մելօ – ծանօթ Պարսպ ծածկանունով, զինուոր, փոխադրող, սուրհանդակ Բերկրի շրջանի:
  - 13.- Ս. Հեղինէ – ծածկանուն Աղթամարի կղզիի:
  - 14.- Վիշապ – ծածկանուն Կ. Պոլիս քաղաքի:



Արամ նամակներ գրեց Դարվիչին, Ջրաբերդ<sup>9</sup> եւ Բագու քեզ ծանօթ մ'ըջոցներով:

Ուրիշ նորութիւններ չկան: Ընկերական համըոյրներով՝

ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

8-ին ապրիլ, Շամ

Յ. Գ.— Մոնտէն յայտնել է, որ առանց Իշխանի թղթին ես դրամ չեմ տալ յանձնաժողովին: Մի նամակ գրիր նրան որ դրամների համար այդ թուղթը պիտի տայ Կ. Կ[ոմիտէ]ն, որ նրա տրամադրութեան տակ է մնալու կոնտրոլի խնդիրը:

Վարդանը<sup>10</sup> դեռ ոչ մի բանի չի ձեռնարկել. գատկական տօնի պատճառով ոչ ոք յանձն չէ առնում աշխատել...

Հնադարեանի<sup>11</sup> պակասութիւնները հոգացինք:

Թաթարի եւ ընկերների աշխատութիւնը մերժեցինք եւ դուրս վճարեցինք. այսօր նամակ գրեցինք Մելոյին<sup>12</sup>, նրան պիտի յանձնէի այդ գործը. տեսնենք ինչ կը լինի:

Եթէ Ս. Հեղինէի<sup>13</sup> հասցէով նամակներ եւ դրամ գալու լինի, անշուշտ մեզ կը գրէք:

Վիշապի<sup>14</sup> դրամը դեռ չեն ստացել:

ՆՈՅՆ

Սիրելի Տիգրան!

Ստացանք քո 7-ին եւ 8-ին [ապրիլ] գրած նամակները միաժամանակ:

1- Ձիաների մասին կը կարգադրենք Ա. ենթակոմիտէին.

2- Համբոյի ընտանիքին դրամ կ'ուղարկենք.

3- Ֆարհատին հարկաւոր հրահանգները գրւած է. նորից կը գրենք. Թաթարը ասում է որ 15 դահեկան նաւավարին է տրւած. որքա՞ն ճիշտ է... գրել էիք, որ Թաթարին դուրս ենք վճարելու. մարդիկ կատարելապէս լրբացել են. դու շտապիր, մարդ ուղարկիր որ Սահակ այնտեղ եղած ապրանքները իսկոյն վերցնէ եւ քեզ մօտ հասնի:

4- Թուռցիկը գործը շատ գէշ տեղ է կապել. Պապիկ կը պահանջէ անպայման սատկացնել, բայց նա էլ լուրերին նայելով փախել է: Շուտով գրիր քո կարծիքը. այնպէս արա որ ամենաուշը 12-ին հոս հասնի այդ նամակը:

5- Գարեգինի եւ Մայրապետի չգալու պատճառների մասին մանրամասնութիւններ չկան... եղածը գրել ենք...

6- Բիւրոներից նամակ չունենք. հին նամակներին էինք պատասխանում... Արդէն գրել ենք որ Գարեգինի համար բողոք պիտի գրենք... Վահանեանի մասին ոչ մի լուր չունենք. այդքան շուտով չի կարող լինել...

7- Իշխանը գնաց. Վարդ[անը] հոս է. դեռ կը մնայ մինչեւ քո գալը եւ արտասահմանից լուր ստանալը (մայիս վերջ):

8- Մենաւորի նամակները մենք միշտ շորի մէջ ենք կարել. գարմանայի է թէ ի՛նչ[պէս] բացւած պիտի լինի, աւելի գարմանային այն է որ այդ նամակները յատկապէս ուղարկւած են Աւետարանցիների ձեռքով. ի՛նչպէս ընկել է այդ կողմերը...

9- Գրել էինք որ Բարակից ստացուեց 996 նոր ծայր. չկարողացանք հասկանալ, դա Այգեստանցի Մախսուդի բերածն է, որ թողած է Սալոր գիւղ, թէ ուրիշ է. եթէ նա է, պիտի 1000 լինի, մէկը փչացած . ինչո՞ւ 995 է դառել. այս անգամից կարգադրելու էք, որ ամէն մի փչացածին եւ կորուստի համար երկուական ղրուշ պիտի վերցնենք եւ հէնց այս անգամից պիտի կորսւած տեղից այդ տուգանքը պահանջել: Սալորցիք գրել են, որ ստացանք 1000 հատ Մախսուդի ձեռքով՝ միայն մէկը փչացած. բա, ուր է մնացած 4-ը... Մէկ էլ պատւիրի՛ր որ գրեն թէ որի՛ ձեռքով բերւած ապրանքներ են. հէնց օրինակ այս անգամ չգիտենք ո՛ր պարտիւսն է որի՛ ձեռքով բերւած: Առհասարակ քսակների մէջ է լինում. ինչու պիտի փչանան. հրահանգներ [?] եւ պրիոմներ առաջարկիր կանոնաւոր եւ ապահով փոխադրութեան համար...

10- Աշոտը հոս է, բայց չենք տեսել. հոս է եւ հռչակաւոր Վարժապետ-Տաճատը. դուրս է գալիս. դուրս է եկել որ դա խաչագող է եղել... տեսնենք ի՛նչ կը լինի. այդ շրջանի համար էլ մարդ է հարկաւոր...

Աշոտի գործը կը թողնենք քո գալուն, բայց Աստուծոյ խաթեր շտապես. ամէն անգամ չի յաջողում մարդ ուղարկելը, ուրեմն հանգամանքից օգտուիր...

11- Թռչնակին ոչ ոք չի ուզել. կարող էք ձեզ մօտ պահել մինչեւ վերջ... Անագատները [?] այնպէս յարմարեցրու որ գոնէ մեր հացով 4-5 ռադիֆներ պահեն մինչեւ

կարողանանք տեղափոխութեան գծեր բանալ. այլապէս հոս կը խայտառակուենք: Վերջին կոպէկներս ծախսեցինք, բոլոր տղաներին դուրս ենք ուղարկել, մնացել են 4-5 հոգի, այլապէս անկարելի էր...

Բարեւներով՝  
ՎԱՍՊ[ՈՒՐԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. 10-ին ապրիլ, Շատ

Փաստ. 662-250

## 47

Յարգելի բարեկամ<sup>1</sup>!

Ստացած ենք ձեր երկու նամակները, անձամբ ինդրեցինք կաթոլիկներին որ միջամտեն Տօնօ գիւղացիներին, որ ձեզ բերան չտան: Նրանք խոստացան եւ հէնց մեր ներկայութեամբ հրահանգեցին:

Մենք էլ կանչեցինք մեր ներկայութեան Տօնօ գիւղի քահանային, իւր ունի եղբոր, հարկ եղածը խօսեցինք. նրանք ասացին որ ինչպէս առաջ խօսել ենք, այնպէս էլ պիտի խօսենք. այսինքն ձեր անունը չեն տալու, այլ ընդհակառակը ասելու են որ դուք զայրացաք մարդասպանների վրայ, — Թէ ինչո՞ւ էք անմեղ մարդ սպանում. իսկ նրանք քեզ պատասխանած են, որ մեր դուշմանն է, վրէժ կը լուծենք: Ուրեմն դուք այդ խնդրի վերաբերմամբ անհոգ եղէք:

Զկրցանք հասկանալ, թէ արդեօք վերջին փամանակներս ձեզ յանձնած նամակները ուղարկեցիք ուր հարկն է, թէ դեռ կը մնայ ձեր քով: Այս մասին բարի եղէք մեզ շուտով պատասխանելու:

Ձեր հայերէն գրած նամակը ձեր ազգական Աբրահամ բէկին, ինչպէս գիտէք, ուղարկել ենք մեր արտասահմանի ընկերներին նրան յանձնելու: Մեր ընկերները Աբրահամ բէկին կանչել են իրենց քով եւ ձեր նամակը իրեն կարդացել. շատ ուրախացել է, որ դուք զբաղուում էք այդ բարի գործով, որ իւր ցեղի մարդիկ չեն մոռանում իրեն՝ Աբրահամ բէկի ճանապարհով գնալու: Շատ շնորհակալութիւններ եւ բարեւներ է ուղարկած ձեզ. միայն ինդրում է որ իրեն այսուհետեւ շուտ-շուտ, յաճախ նամակ գրէք եւ այն էլ թուրքերէն լեզուով: Ուրեմն շտապեցէք մի թուրքերէն նամակ գրել որ ուղարկենք իրեն:

Ձեզ հետ խօսելիք ունենք. եթէ կարողանաք մի անգամ քաղաք գալ մեր քով, շատ լաւ կը լինի:

Բայց ազգականիդ նամակը շուտ ուղարկեցէք, որ շուտով էլ իրեն հասցնենք. բայց չմոռանաք թուրքերէն գրել եւ ձեր մոհրն<sup>2</sup> էլ զարկել...

Բարեւներով եւ յարգանքներով, ձեր անկեղծ բարեկամ՝  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. ապրիլ 10-ին, Շատ

1.- Բարեկամը՝ քիւրտ յայտնի ցեղապետ Իպրահիմ (Աբրահամ) փաշայի մէկ ազգականն է. ցեղապետը թուրք կառավարութենէն հալածական՝ ապաստանած էր Երոպա եւ բարեկամական յարաբերութեան մէջ էր ժընեւի դաշնակցական ընկերներուն հետ:

2.- Կնիքը:

**Ա. Ենթակոմիտէին**

**Ընկերներ!**

*Ստացանք ձեր ապրիլ 9-ը թւակիր նամակը, շտապում ենք պատասխանել:*

1.- Ուրախ ենք որ Թաթարը սուտ է խօսում, միայն թէ աշխատեցէք այդ ապացուցանել գործով:

2.- Յորենի մասին շուտով կարգադրութիւն կ'անենք: Դարվիզի Մնջ[իկ]ի համար էչ ենք գնել, չէր կարելի նրա միջոցով տեղափոխել կամ օգտւել ձիաներից՝ աւելորդ ծախսերի տեղիք չտալու համար: Քանի՞ չափ ցորեն է...

3.- Նամակների շուտ տեղ հասցնելու համար Դարվիզ<sup>1</sup> էլ նամակ գրած ենք...

4.- Ձիաների մասին վաղը կամ միւս օրը կը կարգադրենք եւ [կը] հեռացնենք ձեր շրջանից...

5.- Չկարողացանք հասկանալ թէ նոր եկած ծայրերը Այգեստանցի Մախսուդի բերածն է, թէ նոր է, խնդրում ենք ամէն ապրանքի հետ գրէք թէ Կայանից<sup>2</sup> մինչեւ ձեր շրջանը որի ձեռքով է եկել...

6.- Լսում ենք որ շրջիկները եւ առհասարակ գինւորները աւելորդ պահանջներ են անում գիւղերում. մենք յայտարարում ենք, որ մեր գինւորները եւ ընկերները բաւականա[նա]լու են այն համեստ հիւրասիրութեամբ ինչ կարող է տալ գիւղացու տունը. աւելին պահանջել յանցագործութիւն [է] ... դուք էլ այդ ուղղութեամբ պատւիրեցէք ձեր գինւորներին եւ շրջիկներին եւ խօսեցէք գիւղերում որ օրէնքին հակառակ գործող գինւորների եւ շրջիկների վրայ բողոք տալու իրաւունք ունեն թէ՛ Ա. Ենթակոմիտէին եւ թէ մեզ: Այլապէս չենք կարող չարիքը վերացնել...

7.- Ձինւորները առանց Կ. Կոմիտէի կարգադրութեան իրաւունք չունեն գիւղական ոչ մի գործով զբաղւելու կամ յանցաւորներին պատժելու. այդ ձեր գործն է. եթէ այդպիսի դէպքեր պատահեն անմիջապէս գրէք մեզ. մինչեւ հիմա նման դէպքեր պատահել են, բայց չէք գրել...

8.- Մենաւոր գնացող նամակները Աստուծոյ խաթեր մի ուշացնէք. մի սուրհանդակի ձեռքից միւսը հասցրէք:

*Ուրիշ նորութիւններ չկան:*

*Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ*

1905 թ. 10-ին ապրիլ

**Շամ**

1.- Դարվիզ – ծածկանուն՝ Թիմար գաւառակի Մարմետ գիւղի:  
2.- Կայան – ծածկանուն՝ Բերկրի գաւառակի գիւղերէն Պստիկ Գեղի:

*Արեւմտեան Բիւրոյին*

Քրիստափորի դառնադէտ մահուան առիթով (4/17 Մարտ, 1905 թ.), Վասպուրականի Կ. կոմիտէի կողմէ (Արամի ձեռագրով) ուղարկուած ցաւակցական գիր Արեւմտեան բիւրոյին ժընեւ. գրուած է գաղտնի թանաքով եւ «բացուած» բաւական յաջողութեամբ: Այսուհանդերձ կը մնան մէկ քանի անընթեռնելի բառեր, սեւցած կամ «չբացուած», որոնք նշուած են բազմակէտերով:

*Ընկերներ!*

*Աւարայրից Մայիասը գուժեց մեզ Քրիստափորի մահը, մի մահ որ եկաւ մեր այս սեզոնի անաջողութիւնների պատկերը լրացնելու... Մենք երկրի ընկերներս, չըջպատուած մեր երկրին յատուկ դժոխային պայմաններով, սովորել էինք մինչեւ հիմա բուն երկրի այս եւ այն մասէն ժողովրդական դժբախտութիւնների գուժեր լսել, բայց այս տարի կարծես արտասահմանը կ'ուզէ մրցել երկրի հետ. բայց այս գոյժը արդէն վեր էր բոլոր գուժերից եւ խոր վէրք բացեց բոլորիս հոգու մէջ. մենք երկրի ընկերներս բառիս իսկական իմաստով այժմ մեզ որք ենք զգում. չենք կարող հաշտուել այն գաղափարի հետ, որ հորիզոնից մարել է այն աստղը, որ այնքան լուսաւոր կերպով կը լուսաւորէր մեր փշոտ ճամբան... բայց դառն իրականութիւնը անողոք կերպով փաստում է, որ այդ ճիշտ է... Հաշտենք դառն ճակատագրի հետ, բայց Քրիստափորին եւ նրա գործը չմոռանալու պայմանով: Խոնարհուում ենք նրա թարմ գերեզմանի առաջ եւ երդում բարձր պահել այն «Դրօշակը», որ այնքան տաղանդաւոր կերպով ամբողջ 15 տարի նա բարձր պահեց...*

*Ամենամեծ..... առ այժմ նրա յիշատակը յարգելու համար պիտի լինի մինչեւ փշրենք այն ծանր շղթաները, որ նամարդ թուրքը կապել է մեր ձեռքերին. այն ժամանակ հայկական բարձունքների վրայ կը կանգնեցնենք..... հայկական տաղանդի յաղթանակին: Դրօշակի իմբագրութեան ուղարկում ենք մեր բուն ցաւակցական ողջոյնները. նրա հետ միացած ողբում ենք մեծ ուսուցչի մահը: Հանգիստ տառապող հոգուն. հոգի, որ այնքան տառապեց, բայց չտեսաւ հայկական դատի յաղթանակը...*

*Ընկերներ, հաւատացած ենք, որ Քր[իստափոր]ի մահը աւելի կը խրախուսէ եւ հոգի կը ներշնչէ ձեզ, արտասահմանի նրա սկսած գործը յաջողութեամբ պսակելու, մանաւանդ բարձր պահելու նրա գուրգուրած «Դրօշակը»... Դրանով կը մեղմացնէք եւ մեր ցաւերը, որ իբրեւ որք այսքան դառն կերպով տառապում ենք...*

*Մեզ մօտ նորութիւններ չկան. երեւի ստացած կը լինէք մեր մարտ 15 թւակիր*

նամակը, ուղարկած Աւարայրից: Երկրում դրուժիւնը սպասածից խաղաղ է, բայց կառավարութիւնը սուսիկ-փուսիկ իւր հարկահանութեամբ տնտեսապէս ուժասպառ է արել ժողովրդին: Միսիոնարները այդ առթիւ հեռագիր են տւել եւրոպական կառավարութիւններին, բայց ինչպէս լսում ենք Պոլսում արգելած է...

Անօթի ժողովրդին տեղիս ամերիկեան որբանոցը ցորեն [է] բաժանել. կառավարութիւնը իւր հարկահանների ձեռքով այն էլ ժողովել է... Այսպիսի մեքենայութիւններով ցանկանում է ժողովրդին տնտեսապէս քայքայել եւ հայկական գիւղերը ցրել եւ հայ տարրերին գաղթեցնել... Գաղթականութեան առաջ հազիւ ենք կարողանում առնել...

Վերջերս Ախլաթի մեր ընկերները դէպքի են պատահել գիւղում. գիւղից դուրս գալով բարձունք [?]..... մերոնցից ոչ ոք չէ վնասւել. մանրամասնութիւններ դեռ չունենք. ստանալուց կը գրենք...

Կոմսը ընկերական թիւրիմացութիւնների պատճառով երկրից հեռացաւ. այս առթիւ գրել ենք Արեւել. Բիւրոյին երկարօրէն: Ինտելիգենտ ընկերների մեծ կարիք ունենք. սիրողներով գործը փոխանակ առաջ գնալու կը վիժէ...

Լսեցինք որ Գարեգինի եւ Մալխասի<sup>1</sup> ներս գալը արգելած էք. այդ առթիւ շատ դժգոհ ենք. մենք մարդկանց ահագին կարիք ունենք, իսկ դուք արգելում էք մարդկանց այնպիսի վայրերում, ուր այնքան կարիք չկայ որքան երկրում: Չէ՞ որ Մինարէթի եւ Աւարայրի գործերը ամէն ոք կարող է ղեկավարել: Առանձնապէս կը խնդրենք, որ գոնէ համաձայնէք Գարեգինի ներս գալուն. նա փորձած է եւ բաւական ծանօթութիւններ ունի այս շրջանի մասին, կարող է աւելի օգտակար լինել... Ի նկատի ունեցէք որ բոլոր գծերը փակւել են եւ նա առայժմ զբաղած է տեղական գործերով. հոս ահագին պատրաստութիւններ ենք տեսնում, չըջաններ լայնացնում այն յոյսով, որ նոր ընկերներ պիտի ունենանք, իսկ դուք ցանկացողների առաջ էլ երկրի դռները փակում էք...

Ուղարկում ենք հատով Դրօշակ ուղարկելու համար այս հասցէն<sup>2</sup>.

Դուք ուղարկեցէք այնտեղ, իսկ այստեղից գրած են, այնտեղից ներս կ'ուղարկեն. առ այժմ ուղղակի հասցէ չկրցանք ճարել. թերեւս ապագայում յաջողենք:

Աբդրահիմ բէկի<sup>3</sup> համար շուտով Աւարայր նամակ կ'ուղարկենք իւր ազգականին, տաճկերէն լեզուով. պրոպագանդի համար [լաւ] կը լինէր, որ նա գոնէ թոռուցիկներով դիմէր քիւրդ ցեղապետներին դէպի հայերը հաշտ աչքով նայելու. եթէ համաձայնի հարկաւոր աջակցութիւնը չզլանաք տալ. ի՞նչ լաւ կը լինէր եթէ համաձայնէր մեր քիւրդ բարեկամներին անձնական նամակներ գրել եւ խրախուսել...

Արտասահմանում ի՞նչ նորութիւններ կան. ճի՞շտ է որ պալքան-տաճկական յարաբերութիւնները լարւել են եւ պիտի առիթ տայ պատերազմի. ի՞նչ դիրք պիտի բռնենք մենք պատերազմ լինելու պարագայում: Ա՛խ, ինչքան լաւ կը լինէր որ Սարուստանը շտապէր մեր մինիմալ պահանջներին բաւարարութիւն տալ:

Պարտքերը մեզ խեղդել են. ուղիղ 10.000 ֆրանկ պարտք ունենք, իսկ դրամ, Աստած տայ. ուղիղ 2 ամիս դառաւ Սարուստանից ոչ լուր ենք առել եւ ոչ դրամ ստացել:

Աւարայրում Մալխասը դրամ չունի փոխադրութեան համար, եւ գծերը ու ժամանակները փակւելու են եւ մենք չենք կարողանալու այն անել, ի՛նչ կ'անէինք եթէ դրամ լինէր: Ապրանքները ահագին քանակութեամբ թափել են հոն, առանց դրամի ինչ կարելի [է] անել: Այս առթիւ խնդրում ենք, որ շուտ կարգադրութիւն անէք. ամերիկացիք<sup>4</sup> չե՞ն համաձայնւի մեզ մի քիչ դրամ ուղարկել: Ախր այսպէս խայտառակութիւններ չի՛ լինի: Վիչապի<sup>5</sup> վրայով ձեր ուղարկած 2000 ֆրանկից միայն 25 ոսկի ստացանք. մնացածները դեռ չէ եկել. գրեցէք երբ կը գայ...

Առ այժմ այսքանը:

Ընկերական բարեւներով՝  
ՎԱՍՊ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. ապրիլ 11  
Շամ

1.- Գարեգինը՝ Թադէոսեան Ստեփանն է, կուսակցական ներկայացուցիչ Ատրպատականի մէջ (Սալմաստ), Մալխասը՝ Արտ. Յովսէփեան (Խոյ). երկուքն ալ տրամադրութիւն յայտնած էին անցնելու Վասպուրական, բայց Արեւելեան բիրոն արգելք հանդիսացած:

2.- Լատինատառ հասցէ, գրեթէ անընթեռնելի. կը կարդացուին միայն Italia եւ Napoli անունները:

3.- Տեսնել «Յարգելի բարեկամ»ին ուղղուած նամակը, Ապրիլ 10ին (փաստ. 662-250, էջ 101):

4.- Իմա՝ Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտէն:

5.- Վիչապ – ծածկանուն Կ. Պոլիս քաղաքի:

**Միրելի Տիգրան!**

Ստացանք ձեր 9 ապրիլ թևակիր նամակը, հաստատում ենք մեր ապրիլ 10 թևակիրը: Ձարմանալի է որ դու քո այցելած գիւղերից տեղական տպաւորութիւններ չես գրում, որ մենք էլ գիտակ լինենք տեղական-ժողովրդական կեանքի տնտեսական ու բարոյական կողմերին. չմոռանաս ստատիստիկա կազմել. քանի՞ տուն է, ամէն մի տուն միջին թւով քանի անդամ կայ. քանի հայ գիւղ եւն եւն: Լաւ կը լինի որ այդտեղից ուղղակի Դրօշակի համար թղթակցութիւններ ուղարկես...

Առաջիկայ նամակով անպայման բոլոր գիւղերի կեղծ անունները եւ իսկականները Խմբագրութիւն կամ Պապիկի բալանիով<sup>1</sup> (գրի՛ր թէ որն է). գրի՛ր մեզ շատ հարկաւոր է... նամակները գալիս են չգիտենք որ գիւղից են...

Կարէնը գրում է որ եթէ ինձ իբրեւ շրջիկ չէք պահելու, պ. Տիգրանին գրէք որ ինձ Ծովածոց<sup>2</sup> գիւղում ուսուցիչ նշանակէ եւ գիւղացիներին պատւիրէ որ ընդունեն. եթէ կարիք չկայ նրան ազատ պահելու, լաւ կը լինի որ հոն ուսուցիչ նշանակես, թերեւս այդ կերպ աւելի օգտակար լինի թէ իրենց ընտանիքին եւ թէ մեզ. բայց միայն նրա իրաւունքները որոշ շրջանակի մէջ էք դնելու եւ պատւիրելու որ այդ շրջանակից դուրս չգայ:

Չգրեցիք թէ այդ տղան ինչ կարողութեան տէր է եւ ինչ կրնայ անել:

Թաթարի վճարելու մասին արդէն գրել ենք, կրկնելը աւելորդ ենք համարում, միայն շտապեցէք նրանց մօտ եղած ապրանքները, վկայականը, հրացանները եւ ռեվոլվերները բերել տալ եւ յայտարարել որ նա մեր մարդը չէ եւ մենք նրա հետ այլեւս գործ չունենք. հետը եղած Գէորգ տղան լաւ է. եթէ կարողանաս նրան կանչել քովդ եւ համոզել որ նրանից հեռանայ եւ մեզ աշխատի, լաւ կը լինի. բաժանել-տիրել...

Գրում էք որ նամակները այսուհետեւ աւետարանացոյ ձեռքը մի տաք. ճիշտ որ դա ապահով է, բայց դժբախտաբար շատ կ'ուշացնէ . չէ՞ որ մինչեւ Ձուարթ<sup>3</sup> շուտ կը գայ, ապա նրանից յետոյ, կամ ի՞նչ գրաւական որ կայանցիք այդքան բարեխղճութիւն կ'ունենան իսկոյն տանելու, իսկ աւետարանցիք ուղղակի գնում են եւ կա-

1.- Պապիկ – Գիսակն է, իսկ բանալին (բալանի), այսինքն թուանշաններով գաղտնագիրը, Կոմի կողմէ եւս գործածուած, հետեւեալն էր.

Որ մեռնում եմ քաջի մման,  
Կոյի տալով մինչեւ վերջ:

Իսկ «Դրօշակ»ի խմբագրութեան ուղղուած նամակներ, նոյնպէս նաեւ Արամինը՝  
Մայր Արաքսի ափերով քայլամոլոր գնում եմ:

2.- Ծովածոց – ծածկանունն է Թիմար գաւառակի գիւղերէն մէկուն:  
3.- Ձուարթ – ծածկանունն է Ալիւր մեծ գիւղի, ենթակոմիտէի կեդրոն, Թիմար գաւառակին մէջ:





**Սիրելի Տիգրան!**

Հէնց այս րոպէին ստացանք նամակդ. շտապում ենք պատասխանել.

1.- «Թռուցիկ»ի եւ առհասարակ տւած տեղեկութիւնները գրւում է քեզ իբրեւ ի գիտութիւն որ դուք էլ գիտակ լինէք տեղիա գործունէութեան: Իսկ վճիռների վերաբերմամբ հարցը քննելու ու համաձայնելու ենք սկզբունքով. մենք այնքան յարմարութիւն եւ հնարաւորութիւն չունենք, որ այդքան մանրամասն գրենք քեզ, որ ինքնըստինքեան հետաքրքիր չէ. չէ՞ որ օրեկան մի քանի տասնեակ նամակներ պիտի գրեն եւ մի քանի մարդ տեսնեն. փառք Աստուծոյ գիտես մեր ուժերը...

2.- Վիշապէն այսօր 30 ոսկի կրկին եկաւ, նամակ չկար. դրամ դեռ չենք ստացել, ստացողը մերժել եւ ասել է որ յետ պիտի ուղարկէ. տեսնենք ինչպէս կը վերջանայ:

3.- Աշխուժի խնդիրը կարգադրեց. նա իբրեւ խաչագող վռնդեց եւ յայտարարեցէք որ նա մեր մարդը չէ. իսկ մասերը ձեր անմիջական հսկողութեան տակ ծախեցէք եւ դրամ[ը] ըստ պատկանելոյն յանձնէք...

4.- Մենք անաստների մասին գրած են[ք]. ծպտեալների համար 3-4 հոգի. ո՛վ ասաց որ զինւած զինւորներ պահեն հոն. այդ անկարելի է: Խօսքը նրանց մասին է որ պիտի ուղարկեն արտասահման. գծեր չլինելու պատճառով առայժմ պիտի մնան...

5.- Արդէն գրել [ենք] որ Թաթարին վռնդեցինք. յուսով ենք որ ապրանքները շուտով տեղափոխած կը լինէք եւ ազատած լրբերի ձեռքից: Տեսնենք ինչո՞վ կը վերջանայ այդ խնդիրը:

6.- Փոխադրութեան համար յատուկ տոպրակներ կան թէ Մենաւոր (մինչեւ Կայան), թէ Կայան (մինչեւ Յեպթաղէմ), թէ Յեպթաղէմ, որ վերջերս ուղարկեցինք. ուրեմն Կայանից տոպրակները կնքւած կը գան մինչեւ Յեպթաղէմ, հոն կը դատարկուեն եւ յետ կը տարւեն Կայան. նոյնիսկ Յեպթաղէմի վերջին պատառոտած տոպրակները կարելի է գործադրել այդ նպատակի համար եւ այնտեղի համար նորերը ուղարկել:

7.- Ի նկատի ունեցիր որ Կայանում մնացել է ահագին տոպրակներ թէ այստեղից եւ թէ Մենաւորից ուղարկւած. դու պահանջելու ես ե՛ւ դրանք ե՛ւ վկայականը եւ հրացանները, եւ ռեվոլվերները ու յայտարարելու ես որ Թաթարը այսուհետեւ մեր մարդը չէ: Լաւ կը լինի որ նրա ընկերին — Գէորգին (ձեզ վախդ է եղել) կանչես քովդ եւ խօսես որ նա անկախ կերպով գործի. նա օգտակար մարդ է...

8.- Չշտապելը, շեշտում ենք ոչ թէ քեզ մեզնից հեռու պահելու նկատումներով [է], ընդհակառակը գործերի տակ ճնշւել ենք, այլ որ քանի որ հոտ էք գոնէ բաւարար գործ ստեղծւի, այն էլ փոխադրութեան գծերում...

Ուրիշ նորութիւններ չկան:

Բարեւներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. 12-ին ապրիլ, Շամ

52

Ա. Ենթակոմիտէին

Ընկերներ!

- 1.- Ձիաները հէնց վաղը փոխադրէք մեզ մօտ Ամրոց<sup>1</sup>:
- 2.- Մնջիկին կանչէք եւ ցորենները փոխադրել տւէք:
- 3.- Յորենը ինչո՞ւ միայն 20 չափ կրնաք տալ, չկա՞յ, թէ այլ պատճառ կայ...
- 4.- Տոպրակները Յեպթադէմի ապրանքների համար է:

5.- Խնդրում ենք փոխադրութիւն եւ առհասարակ նման գործողութիւնների վերաբերմամբ խիստ գաղտնիք պահել. եւ այն սուրհանդակները եւ ընկերները որ այդ բանում թոյլ են եւ ամէն պատահողի գործողութիւնների մասին խօսում են, մեզ իսկոյն գրէք դրանց անունները, որ հարկաւոր կարգադրութիւնները անենք:

Մեզ մօտ էլ նորութիւններ չկան. չէ՛ք կարող արդեօք ձեզ մօտ տեղիս բանտարկեալների համար մի փոքրիկ հանգանակութիւն անել եւ մինչեւ ուրբաթ տեղս հասցնել որ մենք էլ իրենց հասցնեն[ք]:

50-ի չափ քաղաքական բանտարկեալներ կան որոնք մեծ կարիք ունեն. արժէ գատկական տօների առթիւ ընկերներն էլ մասնակից անենք մեր ուրախութիւններին. յուսով ենք որ չէք մերժի հարկաւոր նպաստը հասցնել...

Բարեւներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. ապրիլ 12  
Ամրոց

1.- Ամրոց – ամենայն հաւանականութեամբ Վանի Ղարաղաղ թաղն է (Փաշի Փողան), Գաշակցութեան միջնաբերդը: Այստեղ գրուած են ընդհանրապէս Արամի նամակները:

**Միրելի Գարեգին!**

Ա.- Քո մարտ 26 թևակիր նամակին պատասխանել ենք Մենաևորի գծով, այս սուրհանդակի ուշանալով պատճառով: Այսօր երբ սրա հետ վերջնականապես պայմանաւորուեցինք, գրում ենք եւ այս գծով: Մեր պայմանները հետեւեալներն են. ա) նա պէտք է արագութեամբ կատարէ իւր դերը. բ) ամէն անգամ այդտեղից ցամաք կը բերէ քեզ\*. այդտեղից էլ պատասխան հոս\*. ապա կրկին կը վերադառնայ ցամաքով\* այդտեղ\* ու կը ստանայ իբրեւ վարձ մի օսմանեան լիրա... Ուրեմն այսուհետեւ այդպէս էք վարուելու: Առաջի ոտի համար իբրեւ բացառութիւն հոս վճարեցինք\*. ուրեմն այս անգամ ոչինչ չէք տայ...

Խոստացաւ բացի ցամաքներից\* բերել եւ Դրօշակ\* եւ այլ գրականութիւն\* ու մանր իրեր: Ուրեմն ի նկատի ունեցէք եւ այդ պարագան:

Բ.- Ուղարկում ենք մի նամակ շուտով Խմբագրութիւն ուղարկելու համար. պատրաստել էինք այստեղից ուղղակի փոստով\* ուղարկելու, բայց կոմսը մոռացել էր հասցէն\* մեզ թողնելու. եթէ ձեր շրջանումն է խնդրեցէք նրանից Վիշապի\* հասցէն ու անմիջապէս մեզ ուղարկէք. վերջերս նամակ ստացանք, բայց մնաց անպատասխան հասցէ\* չլինելու պատճառով:

Գ.- Սարուստանից նամակ ու դրամ՝ Աստուած տայ. մեռելային լուծութիւն է. չգիտենք ինչն՞ վ կը վերջանայ:

Դ.- Կ'երեւայ որ Մենաևորի գիծը\* փակել է. ուղիղ մի ամիս է լուր չկայ. առանց մեր մարդուն<sup>1</sup> հոն գործ չի կատարուելու. աշխատեցէք Տարհադին<sup>2</sup> հոն տեղաւորել:

Ե.- Մենաևորով ուղարկուած նամակում գրել էինք Պետրոսեանի\* մասին. այս անգամ էլ կրկնում ենք. հազար անգամ էլ աղաչելու ենք, որ աշխատէք անպայման նրան ուղարկել հոս\*. այլպէս մեր դրութիւնը շատ գէշ կը լինի: Ի նկատի ունեցէք որ Իշխանը\* գնաց իւր տեղը Լեռնապար\*. Շահբազն էլ շուտով նրա մօտ կ'երթայ. Տիգրան\* էլ Շամի գաւառն\* է. ուրեմն հոս մնալու են երկուսը՝ Արամ\* եւ Թորգոմ\*<sup>3</sup>, որոնք էլ անկարող են ե'լ տեղի գործերը վարել, ե'լ արտաքին ու ներքին յարաբերութիւնները շարունակել:

Մի՛ մոռանաք որ Բարձր[աւանդակի] վիժումից<sup>4</sup> յետոյ ամենահեռաւոր ծայրերից հոս են դիմում. այսպէս կամ այնպէս բաւարարութիւն պիտի տալ:

Ուրեմն Պետրոսեանի\* եւ Մինասի<sup>5</sup> գալը\* շտապեցրէք, մինչեւ տեսնենք ինչպէս կը վճուի ձերը. այս մասին գրել ենք քեզ, շուտով տեղ հասցնելու համար:

Զ.- Այստեղ կառավարութիւնը\* աւելի քան հանգիստ է այս օրերը. մարդ չգիտէ թէ ինչն՞ վ բացատրէ: Յամենայն դէպս ընդհանուր կարծիքը այն է, որ իբր թէ մերոնք դուրս\* են գալիս արտասահման\*. այդ պատճառով խստութիւն չեն անում... Այդպէս մտածելու առիթ տւել են «Ազգերի մեծ գաղթականութիւնը» եւ Կոմսի\* հեռանալը, որ բոլորն էլ իմացել են... Այսպէս կամ այնպէս երեւի այս տարի փոստներս կը քամեցնենք:

Է.- Ձեր կողմերից լաւ լուրեր չենք առնում. ահա թէ ինչ են գրում. մի պարսիկ\* վաճառականի նամակից — «մօտերս բաւական թւով հայեր\* սահմանագլխի վրայ ցոյցեր\* պիտի ընեն, յարձակելով քիւրդերու վրայ. ատոր համար կարաւանը կը վախնայ երթեկեկել. իբրեւ թէ Սալմաստ\* սով է, ազգաբնակութեան աղքատ դասակարգ փորձ կ'ընեն յարձակելու շուկայի վրայ եւ շփոթութիւններ ծագեցնելու»: Իսկ ուրիշներին գրւած է եղել «թէ հայ պարագլուխներ\* ժողովի մէջ են եւ ֆիդա-ցներ\* հաւաքելով պիտի յարձակեն Օերիֆ\* եւ Սեմէդ\* պէյերու վրայ»:

Մենք ի հարկէ գիտնալով տեղիդ պարագաները հաւատ չենք ընծայում այս լուրերին, բայց հետաքրքիր է իմանալ առիթ եղող պատճառները:

Վերջերս էլ մի գերմանացի միտոնարուհի եկաւ. նա էլ պատմել է որ մերոնք եւ գուրնաչիները<sup>6</sup> իրար են գարնել եւ մարդիկ են ընկել երկու կողմից էլ. սա ի՛նչ լուր է. չլինի թէ ձեր գլխին էլ կ'ուզեն խաղ խաղալ:

Ը.- Վրէժից խնդրել էինք մի արիստատր\* եւ մասեր, ի՛նչ եղաւ. գոնէ բարեհա-ծին պատասխանել, որ չենք կարող գոհացում տալ. բա ինչի՞ համար է այդ արհեստանոցը<sup>7</sup> երբ երկրի համար տարեկան գոնէ մի արիստատր\* չէ պատրաստում... Ամէն տեղ Երկիրը բացարձակապէս մոռացութեան են տւել: Աստուած վերջը բարի անէ:

Թ.- Արամ դրամ ունէր Մրգաստան Ֆարհադի (Մարգիս)\* քով. մինչեւ հիմա դեռ չէ ստացել, թէ եւ քանիցս պահանջել է. այդտեղից հեռագրէք որ իսկոյն ուղարկեն:

Ժ.- Խայտառակ սովը շարունակում է. ժողովուրդը ամէն կողմից մեզ է դիմում. ի՛նչ կարող ենք անել: Ուղարկում ենք մի սեւ զանգւած, որ հոս հաց է կոչ-ւում եւ դրանով են կերակրւում այն փոքրաթիւ երջանիկները, որոնք հացի տէր են կոչւում. եթէ կարող էք ուղարկեցէք Խմբագրութեան:

Ի.- Մեր դրութիւնը, դրամ չլինելու պատճառով, գնալով աւելի բարդանում է. վիժմունքը սարսափելի կը լինի եթէ շուտափոյթ օգնութեան չհասնեն: Ամէն կողմից պարտատէրերը աղմուկ են բարձրացրել: Աստուծոյ խաթի՛ր օգնութիւն!!!

Ի՞նչ դառաւ N 2 թերթը<sup>8</sup>, կամ «Անդրոնիկէն» ու «Դէպի կուրը». ինչո՞ւ չէք գո-նէ Մենաւորով ուղարկում:

Լ.- Ախլաթում\* մերոնք դէպքի են բռնել գիւղի մէջ, բայց մերոնցից ոչ ոք չի ընկել. թշնամու վնասները դեռ յայտնի չէ: Այնտեղի ընկերներն էլ գրել են որ ծախսի դրամ չլինելու պատճառով, եւ յոյս չունենալով որ այստեղից դրամ կ'երթայ, նրանք էլ խմբով կ'ուզեն գալ հոս: Վայը եկել է մեր գլխին, եթէ այդպէս մի բան լի-նի...

Խ.- Փայլակը վերջին անգամ գրել է Մենաւորից, որ իբր թէ դուք եւ Մալխասը պատւիրել էք բոլոր նոր կոթերը տեղափոխել Աւարայր եւ նա էլ իր հետ վերցրել գնացել է: Ի՞նչ նկատումներով էք արել այդ քայլը. արդե՞օք մտադիր չէք ներս ու-ղարկելու: Երեւի ներսում շատ կան որ այդ մի քանի լաւերն էլ պահում էք: Չէ՞ որ այս մի ամսւայ մէջ հնարաւոր էր փոխադրել, որովհետեւ սեւացել էր եւ դեռ ապա-հովութիւն կար, որովհետեւ դեռ սարերը չէր բռնւած<sup>9</sup>:

Խօսեցէք Մալխասին որ Յակովբին էլ չուղարկի. մենք չենք կարողանում եղած-ներին կերակրել, հիմա կ'ուզէ նորը աւելցնել. մեզ ինտելիգենտ ընկերներ է հարկա-ւոր եւ ոչ զիմարներ\*...

Կոմսին շտապեցրէք որ շուտով անցնի Սարուստան եւ մեր պահանջներին բաւարարութիւն պահանջի. մենք նրանց տւել ենք մինչեւ մայիս վերջը ժամանակ. վաղը միւս օրը մայիս կը լինի, բայց դեռ ոչ մի լուր չկայ...

Մախասը Վրէժից մեր բարեկամի (Աբդրահիմ\* բէկ) համար մի գոյգ սապուկներ էր բերել. ինչո՞ւ էք պահել, ինչ[ո՞ւ] չէք ուղարկում յանձնենք իրեն եւ սիրտը շահելով գործի դնենք:

Ի՛նչ նորութիւններ որ ունէք մանրամասն հաղորդէք մեզ. արդեօ՞ք վերջացաւ Դ[աշնակցութեան] Խ[որհրդ]ի նիստը եւ արձանագրութիւնը ձեզ ուղարկւեց...

Արամ\* եւ Վարդանը\* խնդրում են Պետրոսեանից\*<sup>10</sup>, որ մեր հրակէրին ինքն էլ անձամբ պատասխան գրէ...

Շնորհաւորում ենք ձեր բոլորի Ձատիկը:

Ընկերներ! աշխատենք որ մեր խաչելութեանն էլ յարութիւն յաջորդէ...

Ընկերական ջերմ բարեկներով ու համբոյրներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. ապրիլ 13-ին

Շամ

- 1.- Ակնարկութիւն Ս. Թադէի (Մեմատր) վանահայր Գեորգ վրդ. Նալպանտեանին է (Ընծայր):
- 2.- Ֆարիադ – Մարգիս Օհանջանեան:
- 3.- Արամ Մանուկեան եւ Թէոս Տեղորիկեան:
- 4.- Սասնոյ 1904 թ. ապստամբութեան վիժումէն ետք:
- 5.- Սինաս – Ռուբէն Տէր Սինասեան: Պետրոսեանը կրնայ զինագործ Պետրոսը ըլլալ, բուն անունով Տէր Յովհաննիսեան Բագրատ:
- 6.- Հնչակեանները:
- 7.- Խօսքը Թարիզի Դաշնակցութեան արիեստանոցին մասին է, որ սահմանուած էր զէնքերու նորոգութեան:
- 8.- Ակնարկութիւն «Դրօշակ»ի (խմբագրութիւն) 1905 թ. համար 2-ին:
- 9.- Այսինքն դեռ քիւրտերը սար չեն բարձրացեր:
- 10.- Աստղանիշ կրող բառերը բնագրին մէջ ծածկագիր են (շիֆրէ):

**Արեւել[եան] Բիւրոյին**

Գաղտնի քանարով եւ Արամի ձեռագրով ցամակ: Առաջին էջին «բաց» ցամակ՝ «Ուղարկել Մ. Զ.» մակագրութեամբ:

**Ընկերներ!**

Կոմսի հետ երկար նամակներ ենք գրել. երեւի ստացած կը լինիք: Զարմանում ենք թէ ինչ է պատճառը որ այսքան երկար ժամանակ է մեզ նամակ չէք գրում: Թերեւս գրում էք, մենք չենք ստանում. գոնէ ապահովութեան համար գրեցէք Մալխասին Աւարայր կամ Սամսոնին Մինարէթ. նրանք մեզ կ'ուղարկեն. մեր յարաբերութիւնները նրանց հետ շատ կանոնաւոր է սուրհանդակներով:

Միշտ սովորական է դառել դրսից գէշ լուրեր լսելը: Քրիստափորի մահը մեզ ուղղակի շշմեցրեց. չգիտենք այս ինչ դժբախտութիւն է որ գտել է մեզ: Է՛հ մեզ մնում է բարձր պահել նրա ականդը. էլ ինչ կարող ենք անել:

Զա[րմա]նալի է թէ ինչն<sup>ո</sup> չէք [չտապում] Սարուստանում գումարւած ռայոնական ժողովների արձանագրութիւնները մեզ էլ ուղարկել, որպէսզի իմանանք ինչ էք վճռում երկրի կամ դրսի մասին: Այսուհետեւ աշխատեցէք Աւարայրի վրայով անպայման ուղարկել:

Լսեցինք որ արգելել էք Սամսոնի եւ Մալխասի գալը. այդ էր պակաս. երկիրը առանց մարդու տառապում է, եղածներն էլ ինչ-ինչ թիւրիմացութիւններով դուրս են գալիս, իսկ եկողի առաջ էլ դռները փակում էք: Դրանով Շամի եւ շրջանի գործի վրայ կիսով չափ խաչ էք դնում. բաւական չէ որչափ երկիրը «լիազօրներով» տուժեց [?]: Անհատական գործունէութիւնը բացի վնասից ոչ մի օգուտ չէ բերելու. մենք բացարձակ դէմ ենք. այս եղած ուժերով գործերը այնքան լայնացել է որ անկարող ենք բաւարար կերպով գոհացնել պահանջները: Բաւական չէ առանց դրամի բարոյապէս մեզ կոտորում էք, դրա վրայ աւելացնում էք անընկեր մնալը: Այդ արդէն սարսափելի է: Երկրի շահերի տեսակէտից մեղք է այդպիսի կէտերում ինտելիգենտ ընկերները թողնել, իսկ երկիրը մնայ թերամիտների [?] ձեռքը կամ երեսի վրայ:

Ուստի խնդրում եւ պահանջում ենք որ գոնէ Սամսոնին համաձայնէք ներս գալու. նա այս շրջանին արդէն ծանօթացել է եւ կրնայ օգտակար լինել: Ի նկատի ունեցէք որ նրա գծերը փակւել են. նա զբաղած է միայն տեղական գործերով: Մեր գործ միշտ այդպէս է եղել: Տաճկահայ դատի անունով արտասահմանում ահագին կազմակերպութիւն ենք յառաջ բերել, իսկ երկրում՝ Աստուծ տայ: Բայց ո՞վ մտածողը...

Մեղքը ձեր վիզը, միայն պարտականութիւն է յիշեցնել. եթէ կը լսէք՝ լաւ, չէք

լսի՝ դուք գիտէք. երեւի հեռու ապագան ամէն բան ցոյց կը տայ եւ փաստերը իր ամբողջ մերկութեամբ երեւան կը գայ:

Մեզ մօտ նորութիւններ չկան: Կառավարութիւնը վերջերս աւելի քան թոյլ է վերաբերուում, երեւի այն պատճառով որ լսել է զինուորների եւ Կոմսի դուրս գալը: Ընդհանուր ժողովրդական կարծիքը այն է որ յեղափոխականները գնում են Ռուսաստան օգնութեան: Ինչպէս երեւում է պիտի այդ ճշտւի, որովհետեւ եթէ այսպէս շարունակւի ինչպէս գրել ենք երեւի շատերս կը գանք:

Գիտակը բանտում շան դրութեան մէջ է դրամ չլինելու պատճառով: Ուղարկում ենք այս նամակի հետ Կ. Խաչերին տեղեկագիր: Միջնորդեցէք որ օգնութիւն շուտ հասցնեն, այսպէս շատերը սովամահ կը լինեն:

Մի մոռանաք որ նախկին նամակով մեր դրած պայմանաժամը մայիսի վերջն է. եթէ մեր պահանջները չէք յարգելու, հեռագրէք. հեռագրի հասցէ տուել ենք Կոմսին:

Բարեւներով՝  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄՍԻՏԷ

1905 թ. ապրիլ 14-ին  
Շամ

«Բաց» նամակի նմոյշ. այս մէկը ուղղուած է Թիֆլիս Արեւելեան բիրոյին, ծածկելու համար այս վերջինիս յղուած գաղտնի քանաքով գրուած նամակը: Բարսեղեան՝ ծածկանունն է Բիրոյի անդամ բժիշկ Յովսէփ Տէր Դաթեանի (1870-1946): «Բաց» նամակներու տակ Արամ յաճախ կը ստորագրէ Սարումեանց:

Յարգելի պ. Բարսեղեան!

Քանի ժամանակ է ձեզանից ոչ մի լուր չունենք, չգիտենք ինչ է պատճառը:

Արդեօ՞ք շատ էք զբաղւած, թէ նամակները ձեզ չի հասնում:

Յամենայն դէպս հին բարեկամներին մէկ-մէկ յիշելու էք:

Ես մայիս վերջին դպրոցական գործերս վերջացնելով կու գամ ձեզ մօտ:

Այստեղ նորութիւններ չկան. շատ թանգութիւն է, եւ համարեա սով:

Խոլերան կարծես կրկնելու վրայ [է]: Լրագիրները գրում են որ ներքին նահանգներում խորերա կայ. որքան ճիշտ է:

Եթէ այդպէս լինի կը հրաժարւեմ գալ:

Բարեւներով՝  
Ա. ՍԱՐՈՒՄԵԱՆՑ

1905 թ. ապրիլ 14ին



**Գարեգին ջան!**

Ընդհ. ժողովից<sup>1</sup> յետոյ բլանկներ բաժանեց Կ. Կոմիտէներին եռամսեայ հաշիւ-  
ների համար. ես տեսայ դրանք Ջրաբերդում, եթէ ձեզ մօտ էլ կայ, մի քիչ ուղար-  
կեցէք այս նոյն ձեւով հաշւեցոյցներ կազմելու:

է՛հ, շատ եմ փափաքում քեզ անձնական նամակներ գրելու բայց չի յաջողում:

Երանի քեզ այնքան ժամանակ ունես, որ բաշխեցիր<sup>2</sup> նրբութիւններն էլ ես  
նկատում:

Դոքտորի ապերացիան իմ ատամները բոլորովին փչացրեց, լցրածներն էլ թափ-  
ւեցին<sup>3</sup>: Չկարողացայ հասկանալ թէ այն խելառ Մինասը ուր մնաց:

Տղերքը պատմում են որ ճանապարհներ պատրաստող վարպետները բաւական  
քանակութեամբ խմոր են բերել Վրէժի ճանպորդների համար, չէ՞ք կարող նոցանից  
մի քանի փուլթ գնել:

է՛հ տրամադրութիւնս լաւ է, բայց գործը շատ է, մանաւանդ մաքրելու շատ  
կեղտեր կան, փառք Աստուծոյ գիտես:

Քո մասին երկու տեղն էլ<sup>4</sup> շատ խիստ նամակներ ենք գրել. տեսնենք ինչ դուրս  
կը գայ: Յամենայնդէպս այս սեզոնին ուշացաք:

Վարժապետներդ ինչպէս են...

Յանկարծ յիշեցի Կոկոնին. նրան համբուրիր իմ փոխարէն: Է՛հ, կեանք էլի, ո՞վ  
կարող է վաղւան համար գրաւական տալ:

Այդ լիրբ գուռնաչիների շանտաժի համար ահագին աղմուկներ է ընկել հոս. դեռ  
վերջ է ստացել, տեսնենք ինչ կը լինի: Դրամ չլինելը մեզ խեղդեց, ծախսելու կոպէկ-  
ներ չունենք, տղաներից շատերը չամաշոր<sup>5</sup> չունեն: Ես էլ քեզնից գողցած չամաշոր-  
ներն եմ հագնում:

Պետրոսը ինչ խաբարներ բերաւ Մ. Ք. [ից]: Քեզ նամակ չի՞ գրել:

Վրէժը ինչո՞ւ չէ բարեհաճում մեր նամակներին պատասխանել:

Կոմսին տես եւ խօսիր: Հետաքրքիր է, թէ ի՛նչպէս կը բացատրէ իր հեռանալը:

Ես մանրամասն կը գրեմ եթէ խոստանաս ուրիշին չկարդալ եւ չձաղկել [?]:

Երւանդին պատահելուց իմ կողմից էլ բարեւ արա՛: Իսկ Ադաշիս խորին յարգա-

1.- Խօսքը Հ.Յ.Գ. Երրորդ Ընդհ. ժողովի մասին է, գումարուած Սոֆիա 1904 թ. Փետրուար-  
Մարտ ամիսներում:

2.- Բաշխիք, բաշխիս – մինչեւ ականջները ծածկող զլխանոց:

3.- Դոկտորի ապերացիան – Դեռ Ատրպատական գտնուած միջոցին սափրիչ-դոկտոր մը տ-  
վորական արցանով քաշած էր Արամի ցաւած մէկ ակռան, սարսափելի ցաւ պատճառելով:

4.- Այսինքն թէ՛ Արեւմտեան եւ թէ Արեւելեան բիրտներում:

5.- Սպիտակեղէն:

նացս հաւաստիքները հաղորդիր համբոյրներիս հետ. ասա քաճի օղի ինձ մենակ թողեցիք, ձեր խոստումները չկատարեցիք:

Ձեզ ո՞վ է ասում, գրէք որ չթողնեն, վեր կացէք ինձ պէս թաւաքալի չքցէք ամէն բան վերջանայ:

Բոլոր պատասխանատուութեան արժանիները պատասխանատուութեան են- թարկեցին. մնացիք դուք. գործ չունէք!

Շահ-բազը քով[ս] Բիւզանդիոն է եւ աղօթում ձեր կեանքի համար. շատ կրիոզ մարդ է, իրար լաւ գտել ենք, ափսոս որ գնալու է:

Իբր թէ ես էլ պիտի գնայի, քեզ պէս շորեր կարել տուի եւ թուխս հաւի պէս տեղս նստեցի, իսկ ձեր պատասխանը պակասը լրացրաւ:

Համբոյրներով  
ԱՐԱՄ

14 ապրիլ [1905]

Քանբախդ Շամից

Փաստ. 663-15

## 56

### Կարօտեալ ընտանիքներ

1.- Վազգէէնի<sup>1</sup> մայրը. 2 աղջիկ եւ որդի. մեծ աղջիկ աքսորուած. տղան սովորում է. այս տարի պիտի աւարտէ. նպատակ ունի շարունակելու. ընդունակ տղայ է, եթէ բարերար ճարուի շատ լաւ մարդ դուրս կը գայ. տանը միակ աշխատող ձեռքը փոքր քոյրն է իբրեւ վարժուհի, ստանում է ամսական 50 դահեկան.- 5 ռուբլի. դեռ մի քիչ էլ պակաս. եթէ ամսեկան 8 ռուբլի նպաստ լինի բաւարար կ'ապրեն:

2.- Լէօենց տուն. մի մայր, 4 աղջիկ, երկու հարս, ոչ մի աշխատող ձեռք. Գիսա- կի օրով միակ ապաստարանն է եղել. յեղափոխ[ականների] համար. տղան վտանգ- ւել եւ անցել Ռուսաստան, բայց լուր չունեն թէ ուր է. մի կողմից տնտեսական անապահովութիւնը, միւս կողմից որդուց լուր չունենալը խեղճերին հալումաշ է արել...

3.- Մուսայենց. մի տղայ 3 քոյր. աշխատող ձեռքը մեծ քոյրն է, վարժուհի է, ստա- նում է ամսեկան 70 դահեկան. եղբայրը փախստական է. եւ մեր գինւորը:

4.- Մուռ Դաւիթի<sup>2</sup> ընտանիքը. Ինքը փախստական է, մեր լաւ զինւորներից. ոչ մի աշխատող ձեռք չկայ:

5.- Նշանի<sup>3</sup> ընտանիք. կին, 3 երեխայ եւ քոյր, ոչ մի աշխատող ձեռք. ինքը մի յեղ[ափոխական] ձեռնարկի պատճառով վտանգւած:

6.- Չոջ-Աղի տուն<sup>4</sup>. անցեալ տարի իբրեւ պատգամաւոր գնացել էր Ընդ. Ժողո-

վի, վերադարձին մեռաւ, ընտանիքը աշխատող ձեռք ունի, բայց անկարող է բաւարարութիւն տալ:

7.- **Դաշօ** (թիւրք գօրք). ջերմ մասնակցութիւն է ունեցել մեր շատ գործերով, այժմ կառավարութիւնից նկատուել է եւ ռոճիկ չէ տրուում. երբ գնում [է] ռոճիկ առնելու ասում են ձեր մեծերը հայ յեղափոխականներ են, գնացէք նոցանից ստացէք:

8.- **Դաշոյի կին** (քիւրդ). մարդը իբրեւ սուրհանդակ բռնուած է, մի կին, երեք երեխայ. ընկերներից մէկին ճանաչում է. թէ նպաստ չտանք, սպառնում է մատնել:

Առայժմ սրանք են կարօտեալները, որ ձեր անմիջական օգնութեան կարօտ են: Ի նկատի ունեցէք որ երկրի ամէն կողմից նոյն նպատակներին համար մեզ են դիմում նպաստի. լաւ կը լինի որ մեզ որոշ գումար յատկացնէք, բաշխման ձեւը թողնելով մեզ եւ մենք ձեզ ամսէ ամիս կնքուած հաշւեցոյցներ կ'ուղարկենք, որից կ'իմանաք ուր է ծախսուած: Նպաստները կարելի [է] ուղարկել Արեւել. Բիւրօ, Ոսկանապատի, Մրգաստանի եւ Վրէժի Կ. Կոմիտէների միջոցով:

Ընկերական ողջոյններով  
**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ**

1905 թ. 14-ին ապրիլ  
**Շամ**

- 1.- Անուանի հին յեղափոխական մարտիկ Տիգրան Տէրոյեան, նահատակուած 1898ին:
- 2.- Թումանեան Դաիթ
- 3.- Շուշանցի Նշան (Աճեմեան) (1881-1944):
- 4.- Չոօ-Աղա - Ֆլէեան Յովհաննէս (1878-1904):

Արամի ձեռագրով այս ցամաքը գրուած է գաղտնի քանաքով եւ «բացուած»՝ ոչ այնքան յաջողութեամբ: Տեղ-տեղ բոլորովին սեւցած եւ անընթեռնելի վերջինները կը տրուին բազմակէտերով:

*Սիրելի Իշխան!*

Երէկ, ամսոյս 14, ստացանք քո առաջին նամակը եւ Մոնղէին յանձնելու թուղթը: Այս չորրորդ նամակն է, որ գրուած ենք ձեզ. յուսով ենք որ բոլորն էլ ստացած կը լինիս:

Տեղս նորութիւն չկայ. մեզ մօտ օրուայ խնդիրը, ինչպէս գրել էինք, յայտնի թռուցիկի հարցն է. երեք վկաներով ստացուած է Հաջի Ակոպի<sup>1</sup> վրայ: Բայց նա եզրիտութիւն է անուամբ ազատելու համար: Նամակներ է գրել Գիսակին, Վարդանին<sup>2</sup>, որի մէջ խօսուած է եւ իդէալներից եւ գաղափարներից...

Մեր .....<sup>3</sup> պատժի խնդիրն է

Պապիկ<sup>4</sup> կ'առաջարկէ անպայման տեւորը բայց Արամ համաձայն չէր եւ առաջարկուած էր մեր հսկողութեան տակ Երկրից հեռացնելու խնդիր: Վերջը Պապիկն էլ համակերպւեց այդ դրութեան: Հիմա դժարանում ենք կրկին քննութեան ձեւը որոշելու: Նրանք<sup>5</sup> պահանջում են մի չէզոք մարմնի ներկայութեամբ եւ դատարանով քննութիւն, բայց մենք ընդունելով չէզոք մարմնի նպատակայարմարութիւնը, վախենում ենք ապագայ անակնկալներից, կասկածում ենք որ երբ մենք վճռենք պատիժ լինի, վախենում ենք որ այդ լրբերը մատնութիւն անեն: Սպասում ենք զատկական տօների վերջացնելուն որպէսզի գործի սկսենք: Չմոռանաս գրել քո կարծիքը:

Ինչպէս գրել էինք, Բիւրոներին նամակ գրեցինք եւ պահանջեցինք անպայման Գարեգնի գալը: Դու էլ քո կողմից ուժ [տուր], գրիր որ առանց ընկերի անկարող ես գործերը վարել. պահանջիր ընկեր. անպայման պահանջելու էք Գարեգինին: Մենք նամակներ ուղարկեցինք Գարեգինին որ նա էլ ճամբէ Արեւ[ելեան] Բիւրոյին, որին անցեալ անգամ գրել էինք որ Վիշապէն ձէն չկայ .....

Չմոռանաս Դրօշակի համար թղթակցութիւն .....

Գրել էինք որ հինգ ոսկի ուղարկել Ախլաթցիներին. այստեղ մենք կը տանք Վարդանին տեղական ծախսերին յատկացնելու: Աստուծոյ խաթեր չուտ ուղարկիր. չինի թէ ուշացնեն, այն բաշիբոզուկները վեր կենան քչեն գան մեր քով...

Ձէնք գնող կոմիսիան նոր գէնքեր դեռ չի գնել. երէկ մի լաւ որսի հրաց[ան] առանք. տեսնենք կը յաջողի որսալ թէ յուսախաբ կը լինենք:

Փոխիկի<sup>6</sup> գէնքերից 7 հատ 1000 ծայրով — մոսինի — բողազքասանցի քրդերը ձեռք են ձգել առանց աղայի գիտութեան. հիմա կ'ուզեն ծախել որ աղան ձեռքից

չիլէ: Մօտեցել են մի հայի եւ առաջարկել նրա միջոցով ծախել մէկը 9 [?] ոսկիով-  
բայց վախենում են որ ..... եկաւ մեզ մօտ եւ մեզ վստահութիւն անելով վերա-  
դարձաւ բերելու:

.....

Է՛հ ինչ գրենք. անդրամ ենք գինւորներով. մեր կողմից էլ մի լաւ հոգեհանգիստ  
..... տւինք մեր լուսահոգի զոհերի յիշատակին – Վահան, Հրայր, Թորգոմ, Կայ-  
ծակ, եւայլն ..... ընկերների Զատիկը: Յանկանում ենք բոլորիդ անպայման յա-  
ջողութիւն:

Ընկերներ! Իմացէք որ առանց խաչելութեան յարութիւն չկայ. ուրեմն պատ-  
րաստենք փառաւոր խաչելութեան որ փառաւոր յարութիւն լինի մեր դժբախտ  
ժողովրդին – Յարութիւն՝ որ մեզ պիտի բերէ ոչ թէ կարմիր ձու, այլ կարմիր օր,  
կարմիր ազատութիւն... Կռւենք այդ ցանկալի օրւայ համար:

Համբոյրներ եւ յարգանքներ բոլոր ընկերներին:

Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. ապրիլ 15-ին  
Շամ

- 1.- Հաջի Յակոբ – հնչակեան գործիչ:
- 2.- Յովի. Սերենկիլիւեանին եւ Վարդան Շահպազին (Տօնիկեան):
- 3.- Անրնթեռնելի երեք բառ:
- 4.- Պապիկ՝ նոյն Գիսակն է, Յ. Սերենկիլիւեան:
- 5.- Այսինքն՝ հնչակեանները:
- 6.- Փոխիկ – Օհանեան Վահրամ (1873-1904), նահատակուած մարտիկ, զբաղած նաեւ զէնք-զի-  
նամքերի փոխադրութեամբ:

**Սիրելի Մալխաս!**

Այս անգամ քեզնից նամակ չառանք, մեզ անյայտ պատճառով եւ ոչ էլ N 2 թերթը: Իսկ փոխադրութեան գործը կ'երեւայ որ կամ փակել էք կամ փակելու վրայ էք, այլապէս առիթները բաց թողնելը չենք հասկանում... Երեւի նորէն կը կրկնէք յայտնի դարձած ճշմարտութիւնը – Որ մենք մեր մարդկանցով խանգարեցինք – Այո՛ այդպէս եղաւ – այժմ պատճառների մէջ մտնելը մեզ հեռու կը տանէ, իսկ գործը մնացել է կամ մնալու է շուտով երեսի վրայ: Անցեալ անգամ գրել ենք, նորից շեշտում ենք որ Ընձայրը մենակ գործը անկարող է ղեկավարել: գոնէ ձեզանից մէկն ու մէկը մի ամսով, մինչեւ մայիս վերջ – անցէք հոն – Մենաւոր – մի քիչ էլ դաշաղ ապրեցէք, ցորեկները մի երեւաք դուրսը: Հիմա այդ ինչպէ՛ս դասաւորուեցին իրերը, որ Շահերի կլասիկ անիշխանական երկիրը այդքան շրջահասցեաց է դառել: այդ հաշուով երեւի երկրում գործ չպիտի ունենայինք... Ինչ ուզում էք արէք, ինչ ուժ կ'ուզէք գործադրել – գէնք, դրամ – միայն Աստուծոյ խաթեր այս գարնանային սեզոնից լաւ օգտուեցէք: Սեւութիւնը արդէն ասագին դիւրութիւններ ստեղծեց. եթէ ձիաների կարիք էք զգում, այստեղից կարող ենք 2-3ը ուղարկել... Այսպէս կամ այնպէս մեզ ապագայում յուսախաբ չանէք:

Յ[արութիւն]ի եւ ընկերի բերած ապրանքները մնացել են ձեր կողմի ջրի ափը. նրանք կարեւոր իրեր են, Աստուծոյ խաթեր շուտ տեղափոխէք Մենաւոր, այստեղից էլ հոս...

Կոմսը եթէ դեռ ձեր քովն է իսկոյն ճամբու դրէք Մեծ Քաղաք մեր պահանջների համար. ի դէպ նա Վիշապի հասցէն չի թողել, առէք եւ իսկոյն մեզ ուղարկէք:

Կայանցի Թաթարին վերջապէս վռնդեցինք գործից, իւր ծայրայեղ լրբութիւնների պատճառով. գործը առայժմ յանձնել ենք նրա համագիւղացի Բագրատին. գիւղում ազդեցիկ մարդ է, ու՛սի եղբայրն է, իսկ վերջնականապէս կ'ուզենք յանձնել նրանց դրացի գիւղացի Մելոյին, որ մեր հին աշխատողն է եւ մաքուր մարդ:

Պահանջել էինք 1904 թ. ուղարկւած ապրանքների ցուցակը. պատահական կերպով արխիւից գտանք Տրդատի վերջին նամակը (Դեկ. 1) որի մէջ կար նրա ուղարկած ապրանքների մանրամասն ցուցակը... Այստեղի հաշիւները այդ տեսակէտից շատ պակաս են: Կոմսը Մենաւորից գրում է նորից ստուգենք հաշուեցուցակները ու տեսրները. այդպիսի ստուգութիւններով ապրանքը չէ ուշանալու. մեզ թւում է, որ այստեղի սխալ եւ անփոյթ հաշուապահութեան համար, այդ կորուստը կամ Կայան է եղել կամ Կիրճ<sup>1</sup>, այլապէս անհասկանալի է մի քանի հազարի անյայտացումը: Այդ մասին լաւ կը լինի որ դուք էլ քննութիւն բանաք, իսկ այս տարի նման երեւոյթներից խուսափելու համար կարեւոր միջոցների դիմած ենք...

Մեր դրութեան մէջ փոփոխութիւն չկայ. գերեզմաններին յատուկ լռութիւն է... Արտասահմանէն նամակ կամ դրամ՝ Աստուծ տայ. խոր քնից զարթնելու տրամադրութիւն չկայ. գոնէ գրեցէք որ ձեր միջոցով թղթակցեն. ձեզ գոնէ գրում են... Արտասահմանեան նորութիւնների մասին չմոռնաք մեզ յաճախակի գրել: Զեր լոյս սուրհանդակին ճիշտ 25 օր առաջ ճամբեցինք. քեզ մօտ չհասա՞ւ. ուղարկել ենք եւ

Գարեգնի սուրհանդակը, ի՞նչ եղան...

Անցեալ սուրհանդակներով արտասահմանի համար նամակներ էինք ուղարկել, ինչքան կարելի է շուտ ուղարկեցէք: Հնարաւոր չէր ամսական գոնէ մի անգամ այդ նամակների համար յատուկ սուրհանդակներ հանէիք մինչեւ ջրի Ափը<sup>2</sup>, կամ գոնէ մինչեւ Ամուն: Նա հեշտութեամբ Մրգաստան<sup>3</sup> կը հասցնէր:

Ուրիշ նորութիւններ չկան, պարտքերը օր օրի վրայ աւելանում են: Պուրակից<sup>4</sup> գրում են, որ հոն ձմրան դէպք է պատահել, մերոնցից վնաս չէ եղել, իսկ թշնամուց անյայտ է... Նրանք էլ գրում են որ դրամ չլինելու պատճառով եւ յոյս չունենալով որ մենք կ'ուղարկենք, ամբողջ ընկերներով պիտի գան մեր քով – այդ էր պակաս – եթէ այդ էլ եղաւ պատկերը կատարեալ կը դառնայ:

Վրէժը ինչո՞ւ այսքան երկար լուում է եւ չէ բարեհաճում մեզ նամակ գրել կամ գոնէ մեր նամակներին պատասխանել:

Զէ՞ք մտածում այս գարնան նոր կոթերից ներս ուղարկել: Վրէժ գրեցէք որ կողքի հայի եւ կատուի ու առ հասարակ մասերի մեծ կարիք ունենք. եթէ իսկականները չկան, գոնէ իրենց շինածներից ուղարկեն, բայց լաւ ջրած լինի:

Թերթեր եւ նամակներ շուտ-շուտ ուղարկէք, մանաւանդ յեղ. գրականութիւն. եթէ համաձայնէք ձեր հին թերթերը մեզ ուղարկէք, շատ գոհ կը լինենք:

Այսօր թէեւ Զատիկ է, բայց միայն տոմարական բնոյթով. անօթի եւ դժբախտ ժողովրդի համար ի՞նչ Զատիկ. մենք դեռ խաչելութեան սեզոնում ենք, սպասում ենք մեր մեծ Յարութեան տօնին, մեծ օրւան, օր, որ մեզ համար պիտի բերէ ոչ թէ կարմիր ձու, այլ կարմիր ազատութիւն...

Արժէ գոհաբերել միայն այդ մեծ տօնի համար, մեծ օրը շուտ հասցնելու համար... Օ՛հ այն ժամանակ, միայն այն ժամանակ կը կատարենք մեր համազգային մեծ Զատիկը, իսկ մինչեւ այդ թո՛ղ կորչեն, բռնաւորների ձեռքով սրբագործւած բոլոր Զատիկները... Ուղարկում ենք մի կտոր հաց իբրեւ նմուշ. հաց, որով պիտի գատիկ անէ մեր ժողովուրդը... Այդ հացի կտորը աւելի պերճախօս է, քան մի հմուտ վիպասանի ձեռքով գրւած ամբողջ մի վէպ...

Խաչելութեան վայրերից ուղարկում ենք ձեզ ընկերական ջերմ համբոյրների հետ եւ ջերմ ողջոյններ...

Յարգանքներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. 17ին ապրիլ

Շամ

- 1.- Կիրճ – ծածկանուն քրտական Քեաղուկ գիւղի, Բերկրիի գաւառակ:
- 2.- Ջրի Ափը – պարսկական սահմանի վրայ գտնուող Հին Ջուլֆա քաղաքը:
- 3.- Մրգաստան – ծածկանուն Երեսանի շրջանի:
- 4.- Պուրակ – ծածկանուն Խլաթ աւանի:

**Սիրելի Ընձայր**

Այսօր ստացանք ձեր ապրիլ 3 թվակիր նամակը, նոյնը եւ Կոմսինը, որի մէջ գրած էիք որ ուղարկել էք 1352 նոր ծայր Աւետարանցի Գրի[գորի] միջոցով եւ 5 ինձոր. սրանք մնացել են առայժմ Աւետարան<sup>1</sup>, հոս ստացել են միայն թերթերը 7 հատ եւ հնչ[ակեանների] կապոցը: Ի դէպ այսուհետեւ հնչակ. ոչ մի կտոր նամակ կամ այլ բան չէք ուղարկելու. նրանք իրենց դիմակը պատռեցին...

Մի անգամից մի անգամ ապագայ թիւրիմացութիւններին վերջ տալու համար գրենք այս ամսւայ հոս ստացած ապրանքների ցուցակը: Հին ծայր 3579 հատ + կրկին վերջին օրս հին 1962 = 5541 հատ:

Խնձորներ ընդամէնը 9 հատ:

Առայժմ այս [է] մեր ստացածը իսկ մնացեալները մնում են Աւետարան:

Մեր բոլոր նամակներում էլ շեշտել ենք, կրկին շեշտում ենք. քանի որ սեւացել են, քանի որ այսուհետեւ միայն մի ամիս է մնացել եւ քանի որ գիշերը հնարաւոր է ներս ու դուրս անել, անպայման աշխատելու էք, ինչ ուժով լինի — թէ զէնքի, թէ դրամի — մեծ քանակութեամբ ապրանք ներս մուծել. թողնելու ենք մեր սխալների քննադատութիւնը... Վերջապէս իրողութիւն է որ սխալ գործել ենք, այսուհետեւ չենք գործի. Աստուծոյ սիրոյն ուժ:

Արամ ու Վարդան<sup>2</sup> յատուկ խնդրում են տեղական ընկերներին — առանձնապէս Մելքոնին ու ընկերին — որ աշխատեն ուժ տալ եւ նպաստել ու մեծ քանակութեամբ տեղափոխութիւն անել... Գոնէ աշխատեցէք այս գարնան 30 հազարը լրացնել. դուք հասցրէք Աւետարան, այս կողմը քաշելը մեզ թողէք:

Թաթարին վերջապէս վռնդեցինք, նրա տեղ նշանակել ենք[ք] տեղացի ընկերներից մէկին Բագրատ անունով, այսուհետեւ նամակները ուղղելու էք նրան:

Յարմարաւոր դէպքում ներս էք մուծելու եւ նոր ու հին կոթեր:

Լսեցինք որ հոգ կայ մի քանի հատ գատուոր եւ մակագին. ինչո՞ւ չէք ներս ուղարկում, դրանց մեծ կարիք ունենք:

Յարութիւնի եւ ընկ. ապրանքները մնացել են ջրի ձեր կողմը Մախսուդի քով, ինչո՞ւ չէք Արշակի միջոցով բերել տալիս. Աստուծոյ խաթեր թօթափեցէք ծուլութեան բոլոր մղձաւանջը եւ գործի ձեռնարկեցէք: Հասկացէք որ ամէն պատեհ առիթից չօգտուելը մեծ յանցանք է երկրի պահանջների տեսակէտից:

N 2-ը թերթը ինչո՞ւ չէք ուղարկում. անպայման ուղարկելու էք մեծ քանակութեամբ մօտ 100-150 հատ: Ամբողջ երկրին այստեղից ենք ուղարկում:

Արամը Ընձայրին Սարգսի հասցէին նամակ էր տուել Աւարայր<sup>3</sup> գնալուց փոստը ձգէ, արդեօք ձգե՞լ է...

Մեր դրութեան մէջ փոփոխութիւն չկայ, մեր երջանկութիւնը առայժմ ձեր ջերմ աշխատակցութեան մէջ է, աշխատեցէք մեզ չզրկել այդ վերին աստիճանի կարեւոր երջանկութիւնից:



*Խնդրել էինք ուղարկել Յ[արուլթիւն]ի ընկերոջը սապուկները, մեծ կարիք կայ հոս, դրամ էլ չունենք նորը պատրաստել տալու: Առաջի յարմար դէպքում դրանք ճանապեղէք: Գրել էինք եւ հող եղած խմորի մասին, ինչո՞ւ չէք ուղարկում:*

*Աստուծոյ խաթեր ջրի մօտ եղած ապրանքները շուտով մեզ հասցրէք:*

*Ձեզ մօտ եղած նորուլթիւնները պարբերաբար մեզ հաղորդէք:*

*Գործի ենք հրաւիրել Կայանի<sup>4</sup> հարեւան գիւղացի Մելոյին. յուսով ենք նրա աջակցութեան վրայ. Կիրճեցիք բոլորովին լռեցի՞ն. Սողոն գնաց է՛լ չեկա՛ւ... Այդ լրբերի մօտ ինչպէս կ'երեւայ մեծ քանակութեամբ ապրանք կայ, հոս հաշիւները խառնել են, յայտնի չէ որքան...*

*Առ այժմ այսքանը:*

*Ընկերական ողջոյններով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ*

1905 թ. 17ին ապրիլ

*Յ. Գ.— Մոռացանք շնորհաւորել ձեր եւ ընկերների Յարուլթեան տօնը:*

*Ընկերներ! Իմացէք որ առանց Խաչելութեան Յարուլթեան չկայ. պատրաստենք փառաւոր Խաչելութեան, որ մեր Յարուլթիւնն էլ փառաւոր լինի... այլապէս մեզ փրկութիւն չկայ:*

*ՆՈՅՆ*

- 1.- Աւետարան – ծածկանուն Աբաղայի Խաչան գիւղի:
- 2.- Արամ Մանուկեան եւ Վարդան Շահպազ:
- 3.- Աւարայր – ծածկանուն Խոյ քաղաքի:
- 4.- Կայան – ծածկանուն Բերկրիի գիւղերէն Պատիկ Գեղի:

**Միրելի Տիգրան!**

*Ստացանք քո ապրիլ 13 թվականը նամակը.*

1.- Թաթարի մասին արդէն գրել ենք, նրան վռնդելու ենք: Նրա տեղ ներկայացուցիչ ընտրել է նոյն գիւղացի Բագրատը. դեռ վերջնական եզրակացութեան չենք եկել:

2.- Վիշապէն<sup>1</sup> կրկին ստացւած [է] 30 լիրա (25+30). նամակ չկար. 15 լիրան յատկացրինք պարտքերին (հին), 5 լիրա ուղարկեցինք պուրակցիներուն, իսկ մնացածը տեղական գործերուն ենք յատկացրած: Նամակներ չգիտենք Աստւած տայ:

3.- Առաջին ենթակոմիտէն<sup>2</sup> առաջ գրել էր որ 27 չափ ցորեն կայ, յետոյ 20 չափ. չգիտենք, սա ի՛նչ օյին է. կարգադրւած է փոխադրել:

4.- Վերագարձին Ա. ենթակոմիտէի ամբողջ արխիւը հետդ բերելու ես. այս վերջինը Հաջու համար [է], ամբողջ արխիւի պատճէնները ուղարկել են, ի հարկէ գրուեցինք. խօսիր գալուց որ այդպիսի բաներ չի կարելի անել:

5.- Գրեցինք Ա. ենթակոմիտէին որ ուսուցչի վարձը կարգադրէ տայու. ուղարկում ենք Հաջու բացատրութիւնը. զարմանում ենք, որ այդքան մեծ կարեւորութիւն էք տալիս նրա հրամաններին: Դուք էլ ձեր կողմից գրէք այն գեղացոց որ անպատճառ յանձնեն:

6.- Տաճատ վարժապետը Հաջու հետ բանտ է նստած:

7.- Եղած ապրանքները փոխադրեցինք Հեպթաղէմ<sup>3</sup>. ո՞վ [է] այդ Հնադարեանի<sup>4</sup> վահանը, որի անունով ստացական է եկել:

8.- Եթէ Կայան մնացած ապրանքները չեն եկել, աշխատիր բերել տալ, յատուկ սուրհանդակ ուղարկիր Համբոյի հետ, թող առաջ քաշեն: Այն լրբերի վրայ վստահութիւն չկայ:

9.- Վիշապի հասցէն իսօ քեզ մօտ չկայ. Կոմսը չի թողել. նամակը մնաց անպատասխան. եթէ գիտես շուտով ուղարկիր:

*Ուրիշ նորութիւններ չկան:*

**Զատկական բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ**

1905 թ. ապրիլ 17ին

**Շամ**

1.- Վիշապ – Կ. Պոլիս:  
2.- Ա. ենթակոմիտէն – Թիմար գաւառակն է. կեդրոնը Ալիար գիւղ:  
3.- Հեպթաղէմ – Կոտուց անապատ:  
4.- Հնադարեան – Լիւմ անապատ եւ Դրսի տուն:

### Ա. Ենթակոմիտէին

Ընկերներ!

1.- Ստացանք ձեր ապրիլ թվականի նամակը 16-ի երեկոյեան: Շնորհակալութեամբ ստացանք եւ 5 մէջիտէն յօգուտ բանտարկելոց. շատ ուրախ [ենք] որ առաջին անգամը լինելով Ա. ենթակոմիտէն այդքան շուտով արձագանք տւաւ մեր կոչին:

Առհասարակ վերջերս Ա. ենթակոմիտէն աշխատում է կանոնաւորել իւր գործնէութիւնը եւ եռանդով գործի ձեռնարկել. այդ աւելի քան ցանկալի եւ ուրախալի [է], առանց ներքին համերաշխութեան եւ ներքնականապէս զօրեղ կազմակերպւելու անկարելի է թշնամու դէմ կազմակերպւած կռիւ ունենալ. միայն ներքնապէս կազմակերպւած կուսակցութիւնը ընդունակ է կազմակերպւած քաղաքական կռիւ ունենալ...

2.- Շնորհաւորում ենք Ա. ենթակոմիտէի բոլոր ընկերների Զատիկը. է՛հ թէ եւ սովորութիւն է դառել շնորհաւորել, բայց ընկերներ! այսպիսի գատիկները եւ Յարութիւնը մեզ համար է՛. ժողովուրդը երբ անօթի է, երբ քաղաքականապէս ճնշւած է, նրա համար ի՛նչ Զատիկ կարող է լինել: Մեզ համար կարմիր Զատիկը մեր կուռի յաղթանակը պիտի բերէ:

Բայց դուք իմացէք եւ նոյնը ներշնչեցէք ժողովուրդին, որ առանց ինչեւէ թեան Զատիկ չկայ, Յարութիւն չկայ. գաղափարի մեծ Մարդը իւր յաղթանակը տանելու համար, ուրախութեամբ յանձն առաւ իւր խաչը շալակած Գողգոթա բարձրանալ եւ իւր գաղափարի համար խաչ բարձրանալ. մեր ժողովուրդն էլ Յարութիւն առնելու համար առաջ պէտք է խաչել:

Ընկերներ! Պատրաստենք փառաւոր ինչեւէ թեան, որ մեր ժողովուրդի քաղաքական Յարութիւնն էլ փառաւոր լինի. մի Յարութիւն որ մեզ պիտի բերէ ոչ թէ կարմիր Զատիկ, այլ կարմիր ազատութեան Զատիկ... Յանկալի օր, երբ վերջ պիտի ստանան մեր բոլոր տառապանքները... Կուենք եւ գոհաբերւենք այդ մեծ օրը շտապեցնելու համար...

3.- Խնդրում ենք կարգադրէք որ Մովսէսայեաց<sup>1</sup> գիւղի նախկին ուսուցչի վարձը, որ պ. Աշոտ արգելած էր տալ, կարգադրէք որ յանձնեն ուսուցչին. պ. Տիգրանը գործը քննած է եւ բանաւոր պատճառ է գտել ուսուցչին վարձից զրկելու:

Ուսուցչիչը խեղճ եւ անօթի, աշխատեցէք շուտով յանձնել նրա վարձը:

4.- Զիւնները տեղ հասան, բայց ճանապարհին այնքան էին քշել որ ոտերնին խամացել են եւ բռնել. կարգադրէք եւ հասկացրէք տղաներին որ այդպէս էլ կարելի

1.- Ծովախայեաց – կուս. ծածկանուն Խժիշկ գիւղի, Թիմար գաւառակ:  
2.- Մնջիկ կամ Մարմնեցի Յունան, կապագործ, կուս. գրականութիւն փոխադրող, սուրհանդակ:

անխնայող լինել դէպի կազմակերպութեան մայրը, ընդհակառակը կազմակերպութեան ապրանքները աւելի լաւ պիտի խնամել եւ պահել քան անձնականը, որովհետեւ դա մի ամբողջ ժողովրդի ազատագրութեան գործի համար աշխատող պիտի լինի...

5.- Յորեանը անցեալ անգամ գրել էիք որ 27 չափ պիտի լինի. օր-առօրը թիւը քչանում է, չլինի թէ բոլորովին մարէ... աշխատեցէք շուտով տեղափոխել, եթէ Մնջիկը<sup>2</sup> չկարողանայ, էժան վարձով տեղափոխէք, մենք հոս վարձը կը տանք:

6.- Եթէ գիւղերի համար կարիք էք զգում N 1 թերթին, կարող ենք մի քանի օրինակ ուղարկել:

Առայժմ այսքանը:

Ձատկական բարեւաններով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. ապրիլ 17ին

Ամրոց

Փաստ. 661-82

## 62

### Ա. Ենթակումիտէին

Ընկեր!

1.- Անցեալ նամակով գրել էինք որ ցորեանները անմիջապէս փոխադրել տաք կամ Մնջիկի հետ կամ վարձով. մինչեւ օրս լուր չառանք:

Խնդրում ենք նամակաբերիս հետ անպայման փոխադրէք: Լաւ կը լինի որ ձեր գիւղի սայլերով փոխադրէք մինչեւ Դարվէզ<sup>1</sup> իսկ այնտեղից էլ հոս. եթէ այդ անկարելի է, կարգադրէք այնպէս, ինչպէս յարմար է:

2.- Վրոյրը նամակով խնդրել էր իբր գէնքի դրամ 108 դահեկանը. կամ ուղարկենք իրեն կամ յանձնարարենք որ դուք տաք. այժմ այս օրերին մեր տրամադրութեան տակ դրամ չկայ, իսկ շուտով կարող ենք տալ. կարծում ենք ձեզ մօտ էլ դրամ չպիտի լինի, իսկ պարտք վերցնել, առայժմ չենք կարող համաձայնել, թող համբերէ մի քանի ժամանակից կը [կար]գարդրենք:

3.- Աշոտի ապրանքները յանձնել իրեն, բայց սօլերը, փափախը, թաթերը չէին բերել, չգիտենք ուր են մնացել:

4.- Շատ դժգոհ ենք որ առանց մեզնից նախապէս կարծիք իմանալու ձեր արխիւների մի մասի պատճէնները ուղարկել էիք պ. Աշոտին<sup>2</sup>: Դրանք ներքին կազմակերպական խնդիրներ են, որ ամէն ընկեր իրաւունք չունի իր քով պահել:

Ուրեմն աշխատեցէք այդպիսի պարագաներում հարցնել մեր կարծիքը, ապա զանազան ընկերների պահանջին բաւարարութիւն տալ:

Ձեր մօտ եղած նախկին բոլոր թղթերը խնդրում ենք խնամքով պատրաստել-կապել, լաւ ցուցակ կազմել եւ մեզ ուղարկել, որ մենք էլ ուղարկենք մեր կողմից ար-

տասահման պահելու համար. հոն են կեդրոնանալու մեր բոլոր արժէքաւոր թղթերը:

5.- Պ. Աշոտը վերջնականապէս կանչուած է քաղաք. այսուհետեւ նրա հետ միայն կարող էք ընկերական յարաբերութիւն ունենալ, իսկ զուտ կազմակերպական խընդիրներով դիմելու էք մեզ:

6.- Գրեցէք թէ որչա՞փ գէնք[ի] դրամի պարտք ունէք ժողովրդեան, եւ որքանը որ գիւղին:

7.- Ձեր շրջանի նորութիւնների մասին բարի եղէք պարբերաբար մեզ հաղորդելու:

Պ. Տիգրանից քանի օր նամակ չենք առել, ո՞ւր է մնացել, ե՞րբ կը վերջացնէ իւր գործերը:

Մեզ մօտ նորութիւններ չկան, շուտով կը հրատարակւի թուոցիկ, որից ձեզ էլ կ'ուղարկենք:

Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. 19-ին ապրիլ

Ամրոց<sup>3</sup>

Յ. Գ.— Նոր ապրանքներ պիտի ստացւէր: Ինչո՞ւ լուր չեկաւ, ոչ էլ ստացականներ:

ՆՈՅՆ

1.- Դարվէզ – ծածկանուն Մարմետ գիւղի, Թիմար գաւառակ:

2.- Աշոտ – հնչակեան գործիչ:

3.- Վան-Այգեստանի թաղամասերէն Փաշի Փողան. կուս. ծածկանունով Ղարաղալ:

**Միրելի Գարեգին**

Հանգամանքից օգտուում [եմ] կրկին նամակ գրելու, բայց ձեզնից նամակ սպասելով մեռանք. տնաշէններ, դուք էլ ձեր կողմից միջոցներ ձեռնարկէք, որ այս անպիտան յարաբերութիւնը կանոնաւորենք: Է՛հ, փառք Աստուծոյ, Մենաւորում էլ գործադուլ էք արել՝ Փայլակին կանչելով: Մենաւորի պայմաններին ծանօթները ուղղակի զարմանում են, որ չէք կարողանում յաջողեցնել, հոն դրսեցի մէկը դնէք, որ գործերը ղեկավարէ: Արդէն ձեզ համար պարզ է. պարզ է եւ մեզ համար, որ Ընծայրը չէ կարող մենակ գործերը ղեկավարել. մարդը կարող է լաւ նպաստող ընկեր լինել, ուրիշ ոչինչ... Է՛հ, երեւի արդարացուցիչ հանգամանքներ կ'ունենաք, բայց Փայլակի բերանով այդ բոլորը լսեցինք. ամէն բան կարելի էր անել, եթէ մարդ մի փոքր գոհողութիւն ունենայ: Միթէ չէ՞ր կարելի այնտեղ մինչեւ Մայիս վերջ ապրել զապտուկ\*: Ի հարկէ կարելի էր, հարկաւոր էր միայն ցերեկները փախել սենեակում եւ գրկէլ մի քանի յարմարութիւններից: Մենք կ'ուզենք եւ գործ կատարել, եւ լեզալ մնալ... Դժբախտաբար միշտ այդ երկուսը միասին ոչ ոքին չի տրուում: Այդ հաշուով երեւի մենք չպիտի կարողանայինք մի շաբաթ էլ ապրել: Ինչքան որ Մենաւորի գործին — փոխադրութեան\* — վնասել է զինտրների անցնելը\*, որի համար այնքան մեզ կարմրացրիք, նոյնքան, թերեւս ավելի, վնասել է այդ գործին Մենաւորում տարւայ սկզբից կանոնաւոր մարդ չունենալը: Սա մի պարագայ է, որ նկատուած է դեռ ձմեռանից, բայց չկարողացանք ժամանակին դարմանել եւ մեր միակ ծանրութեան կենտրոնը փրկել վտանգումից\*: Բայց ո՛ւմ հոգն է, ամէն մարդ խօսում է իր ցաւից\*\* իսկ գործը թողնում ենք Աստուծոյ յաջողութեան... Պարզ իրողութիւն է, որ մեր ուժերի մակսիմալը մնում է դուրսը... Բայց թողնենք մեր հին դարտերի քամուն տալը:

Ի՞նչ պատահեց Մ. Ք.-ի ընկերներին, որ նամակ չեն գրում, գոնէ ձեզ գրո՞ւմ են: Նոյնիսկ կասկածում ենք, թէ այնտեղ ընկեր ունենք թէ ոչ, այլ կերպ անհասկանալի է 7 ամսեայ լուրթիւնը, որ Աստուծով միամեայ կը դառնայ...

Եթէ Պետրոսեանի գալն\* էլ ջուրն է ընկնելու, շուտով մեզ գրէք, որ մեր գլխի ճարը տեսնենք եւ մեր գործերը ըստ այնմ դասաւորենք. ապա թէ չէ յիմար դրութիւն է յոյսերով կերակրուելը:

Կոմսը\* հոս մեզ խոստացաւ, որ Մենաւորից ուղղակի Սարուստան պիտի անցնի եւ մեր պահանջներին գոհացում պահանջէ մեր կողմից եւ մինչեւ մայիսի վերջ այո՛ կամ ոչ մեզ պատասխանեն: Բայց նամակ առանք որ անցել է Աւարայր<sup>1</sup> եւ թերեւս այնտեղից էլ կը գալ ձեզ մօտ եւայլն. ինչպէս երեւում է նա ժամանակին չէ հասնելու Մ. Ք. եւ մինչեւ մայիս վերջ մենք չենք կարողանալու մեր պատասխանը ստանալ: Ուստի խնդրում ենք ձեզ, եթէ դեռ այդտեղ է շտապեցնէք. իսկ եթէ գնացել է, հեռագրով կամ յատուկ սուրհանդակով իմաց տէք, որ մենք մայիս վերջից ավելի չենք կարող սպասել. պատասխան չեղած դէպքում դիմելու ենք մեր առաջարկած

ձեւերից որեւէ մէկին... Թող ուրեմն գոնէ մեզ հեռագրով իմաց տան իրենց որոշումը. Կոմսը\* հեռագրի հասցէ գիտէ, իսկ մեր պայմանը\* մեր բարեկամի մօր առողջութեան մասին է:

Կոմսը\* նամակով գրում է որ Աւարայրում պիտի խորհրդակցենք ձիով տեղափոխութեան\* մասին. Ի՛նչ ուզում էք խորհրդակցէք, ինչ ուզում էք վճռէք, բայց մի մոռանաք անցեալ փորձերը եւ դրան անգործնականութիւնը: Այդ ուղղութեամբ, այն էլ մինչեւ Մահման<sup>2</sup>\* խօսք եղել է, իսկ դրա ժամանակը աշնան երկար զիշերներն\* է, ոչ հիմա: Այն դրամները որ յատկացնելու էք ձիաների\*, աւելացրէք վարձքի վրայ. տանողները շան պէս կու գան կը տանեն. հէջ այդ էլ չէ հարկաւոր. կարեւորը այսօր այնտեղի համար մի խելքը գլխին մարդ է. մի մոռանաք, որ սեզոնին մի ամիս մնաց:

Եթէ ձիաւոր փոխադրութեան\* հարկ եւ յարմարութիւնը եղաւ, այդ մէկը կը կարգադրենք եւ այդ մասին խորհում եւ միջոցներ ենք ձեռնարկում:

№ 2 թերթին անհամբեր սպասում ենք. մի քանի հատ որ ուղարկել էր Մայիսսը, բոլորը ճանպեհինք Դուրան<sup>3</sup>, քիչ լինելու պատճառով. տնաչէններ, այնտեղ այնքան թափած մնում է, իսկ հոս մեզ ուտում են թերթերի համար:

Մեր դրութեան մէջ փոփոխութիւն չկայ: Ֆարհադ\* եւ Լեւոն\*<sup>4</sup> ո՞ւր գնացին, ինչպէ՞ս է վերջինի առողջութիւնը. անշուշտ չէք մոռանայ մեր կողմից նրանց բարեւելու: Եկող ընկերները\* ջրի ափը (ձեր կողմը) բաւական կարեւոր նիւթեր էին թողել մի շարք ապրանքների հետ. գոնէ դրանք շուտ հասցրէք որ հարկաւոր պատրաստութիւնները ժամանակին տեսնենք:

Այս գարնան սեզոնին ստացել ենք միայն 10.216 հիւն\* եւ ւոք\* ծայր, այն ինչ եթէ ժամանակին հոն մարդ լինէր կրկնակին ու եռակին կը ստանայինք. չմոռանանք աւելացնել եւ 24 խնձորները\*<sup>5</sup>:

Ուրիշ նորութիւններ չկան:

Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. 20-ին ապրիլ  
Շամ

- 1.- Աւարայր – Խոյ քաղաքն է, Ատրպատական: «Ձեր մօտ»ը Սալմաստն է, ուր կը մնար Ստեփան Թադէոսեան (Գարեգին):
- 2.- Մահման – Դերօ գիւղն է, Բերկրի գաւառակ:
- 3.- Դուրան – Տարօն
- 4.- Ֆարհադը՝ Օհանջանեան Սարգիսն է, Լեւոնը՝ Հաջի Լեւոն, ախալցխացի, բուն անունը՝ Անդոյեան Լեւոն: Չինագործ, քաջ ֆետայի:
- 5.- Ծայրը՝ փամփուշտն է, խնձորը՝ ումը, նոնակ:

**Ա. Ենթակոմիտէին**

**Ընկերներ!**

1.- Յօգուտ բանտարկելոց ձեռնարկել ենք մի վիճակախաղ. ձեր շրջանին էլ մասնակից անելու համար ուղարկում ենք ձեզ 100 տոմս, ձեր շրջանի բոլոր գիւղերում ծախելու եւ դրամ անմիջապէս մեզ հասցնելու համար:

Հաշւելիք իրերը ընտանեկան եւ առօրեայ պէտքեր են, երեսուրբիչ, թաշկինակ, ասեղնագործւած իրեր, ածելի, զմեղի եւն եւն:

Յուսով ենք որ շուտով կը ծախէք այդ 100 տոմսը, որ կ'անէ 200 դահեկան եւ անմիջապէս մեզ կ'ուղարկէք:

2.- Աման ուղարկել ենք ցորենների համար փոխադրելու, յուսով ենք որ կը փոխադրէք:

3.- Պ. Տիգրանի նամակները յանձնեցէք իրեն:

Բարեւներով  
**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ**

1905 թ. 22-ին ապրիլ

Ամբոց



**Սիրելի Իշխան!**

Ստացանք 17 ապրիլ թվականի երկու նամակներդ՝ շտապում ենք պատասխանել որքան մեր նամակը ըստ ձեզ տարօրինակ էր, նույնքան թերեւս աւելի տարօրինակ էր ձեր նամակը՝ անցնենք փաստերին.

ա) Գրում էք. «ես կարծում եմ միանգամայն դուրս պիտի ձգէինք իմ-ի եւ քո-ի խնդիրը». որ մենք երբեք չենք էլ մտածել եւ այդ խնդրի մասին, դրան իբրեւ փայլուն ապացոյցներ մեր նամակները (այս 20 օրւայ) եւ մեր վերաբերմունքը. ամէնից առաջ մենք ձեզ ընդունել ենք եւ ընդունում ենք Վասպուրականի Կ. Կ-ի անդամ, ուրեմն եւ մեր ընկեր. բ) Տեղիս բոլոր խնդիրները որոնք ընդհանուր կազմակերպական գոյն են կրել, տեղեկացրել ենք քեզ եւ պիտի տեղեկացնենք, ոչ թէ քո փորձած կարծիքը միայն իմանալու, այլ եւ իբրեւ ընկեր լսելու քո վետոն:

գ) Մենք մեր մէջ վճռել էինք եւ գրել քեզ, որ այսուհետեւ մի որոշ ժամանակ բոլոր եկած եւ գալիք ապրանքները առանց տեղիս տոկոսները հանելու ուղարկենք ձեզ. եւ

դ) Իբրեւ մարդիկ եւ մանաւանդ իբրեւ գործի ընկերներ միմիանց խոստացել ենք որ առանց հին երգերը կրկնելու պիտի անկեղծութեամբ իրար հետ յարաբերինք եւ գործից հանենք իմ-ի եւ-ի խնդիրը. մի բան որ քայլ առ քայլ աշխատում ենք ի կատար ածել: Ի՛նչ վերաբերում է չարաբաստիկ 10 ոսկու խնդրին, այդ մասին փոխանակ զգացմունքներ արտայայտելու նամակի վերջը դնում ենք այս 20 օրւայ ելքն ու մուտքը, որից կ'իմանաք թէ մեծ տոկոս ուր է գնացել. բայց կը խնդրէինք չմոռանալ մի քանի պարագաներ. ա) բանտ ուղարկուում է ամսական 6-8 ոսկի. դա միակ Շամի ելք է, այլ ընդհանուր<sup>1</sup>. բ) սուրհանդակներին եւ փոխադրութեան տրուում է մի պատկառելի գումար, որ կը տեսնէք հաշվից, դա բացարձակապէս 2/3-ով Լեռնապարի գործ է եւ ոչ Շամի. գ) իբրեւ քաղաք ինչպէս գիտենք առանց դրամի չենք կարող մի օր անգամ ապրել. իսկ դուք փառք Աստուծոյ միշտ խօսում էիք որ մեր ծախսը միմիակ շաքարն է ու թուլթունը...

դ) Մի մոռանաք որ ձեր համաձայնութեամբ Պուրակն<sup>2</sup> էլ համարուում է եւ համարւելու է Լեռնապարի շրջան, ուրեմն հոն գնացած դրամները հաշւելու ենք ընդհանուր Լեռնապարին տրւած...

բ) Գրում էք.— «Ուրեմն բարի եղէք պարոններ, մէջտեղից վերցնելու բոլոր կապերը մինչեւ նոր տնօրինութիւն. այսուհետեւ ես չեմ ընդունի ոչ մի փարա ձեր դրամներից...»: Մենք երբեք տրամադիր չենք յանուն գործի մէջտեղից վերցնելու ոչ մի կապ. կապ որ պահպանում ենք ոչ թէ մեր ընկերական յարաբերութիւնների համար, այլ ընդհանուր գործի համար. մենք պնդում ենք, որ կապերը կտրելով պիտի մեռնենք ընդհանուր գործը, կամ նրան մահացու հարւած տանք, իսկ այդպիսի դաւաճանութիւն մենք յանձն չենք առնի. մենք մեր պարտականութիւնը կը կատարենք, իսկ դուք կը պատասխանէք կամ չէք պատասխանի, կ'ընդունէք, չէք ըն-

դուռնի, բացարձակապէս միեւնոյնն է: Չգիտենք այդ փառաբանւած «նոր Տնօրինութիւնը» որ երրորդ երկնքից է իջնելու. կամ այնքան լաւատես ենք, որ կը կարծենք որ այսպիսի խայտառակ երկպառակումներով կարող ենք պարզապէս մեր պահանջները դնել արտասահմանի ընկերների առաջ: Նրանք ի՞նչ պիտի հասկանան մեզանից, մի ամիս չէ անցել այն օրից որ բոլորիս միաձայն համաձայնութեամբ մէջտեղից վերացրինք երկպառակութեան քարը եւ եկանք այն եզրակացութեան որ ամէն բան վերջացած է եւ ժամանակ է լուրջ գործի ձեռնարկելու. միթէ սխալեցի՞նք, միթէ դաւաճանեցի՞նք մեր տւած խօսքին: Քաւ լիցի, ընդհանուր կազմակերպական կամ ժողովրդական դրամը չենք կարող «մեր դրամ» համարել...

Գրոււմ էք — «Բարի եղէք յետագայ իմ հրաժարականը եւ պահանջները դրկել Բիւրօ»: Հնարակացանք թէ ի՞նչ բանից էք հրաժարուում, իսկ Բիւրօյին պահանջների նամակ չգտանք, մի նամակ կար միայն Գարեգինի եւ Մայիսի մասին:

դ) Գրոււմ էք.— «Յետոյ ստացանք Կենտրոնական Կոմիտէի (ընդգծումը ձերն է) գրած նամակը անմիջապէս գինւորներին» եւն: Ամէնից առաջ ծրարի վրայ գրւած էր — «Իշխանին — կարգալ գինւորների առաջ»: Երկրորդ երբ Կ. Կոմիտէի անունով մի նամակ է գալիս, Կենտրոնական Կոմիտէն իրաւունք չունի չպատասխանել եւ հարկաւոր բացատրութիւնը չտալ. եթէ դուք խմբապետական հեղինակութեան պաշտպան էք, պաշտպան պիտի լինիք եւ կազմակերպական պատւին եւ հեղինակութեան:

Ներկայ կազմի համար հետաքրքիր չէ ձեր հին տոմսի, հին պատմութիւնը:

ե) Գրոււմ էք — «Իսկ եթէ Վասպուրականի Կ. Կ.-ն կ'ուզէ դիկտատորութիւն անել բոլոր գործերի վերաբերմամբ, այդ ուրիշ բան, թող գրէ. մենք էլ մեր պատասխանը կը տանք» — քաւ լիցի. մենք հեռու ենք դիկտատորութիւն անելու գաղափարից, դրան իբրեւ գրաւական մեր այնքան խայտառակութիւնները: Վաս. Կ. Կոմիտէի գէթ նպատակն է ա) պարտքերը տալ, բ) ներքին բոլոր երկպառակութիւնները վերջացնել, գ) եղած գործերը պահպանել, մինչեւ կը գան ձեռնհաս եւ փորձած ընկերներ, որոնք ընդունակ կը լինեն ձեռնարկներ ձեռնարկելու... «Մնացածը թողնելու ենք աւելի ձեռնհաս ընկերներին եւ մարմիններին ի կատար ածելու»: դ) ընդհանուր կազմակերպական խնդիրներ շօշափելիս ոչ մի խնդիր չի կարող լինել «Արամի նորեկութեան կամ անփորձութեան» մասին:

Այս է առաջով մեր վերջին խօսքը ձեր յայտնի նամակի մասին:

Անառիկից՝ Ձարմայրը մի քանի նամակով իրենց շրջանի գործերի վերաբերմամբ հրահանգներ է խնդրում, մենք գրեցինք որ Անառիկը իբրեւ Լեռնապարի շրջան դիմելու էք Լեռնապարի կոմիտէին.

Ուղարկում ենք Շրջանակի կազմած վիճակախաղի տոմսերից 200 հատ, թէ եւ խնդրած էիք 300. ընդամէնը 500 էր, 200 քեց, 100 Ա. Ենթակոմիտէին, 100 Քաղաքային Կոմիտէին<sup>4</sup>, իսկ 100-ը իրենց...

Ուղարկում ենք եւ նրանց գրած նամակը:

Արտասահմանէն կամ Վիչապէն<sup>5</sup> նամակ չունենք:

Եկած ապրանքները — հասել է 10,000, կը մնայ մինչեւ ձեր վերջնական կարգադրութիւնը. տեղը ապահով է:

Տիգրանը շուտով կը վերադառնայ: Հաջող քննութիւնը կը կատարւի նրա ներ-

**կայուցեամբ: Տաճատին դուրս կը քշենք:**

*Զարմանալի է որ էլի նոր գինւոր կ'ուզեն ուղարկել. այստեղ եղածները ոչ պահելու եւ ոչ դուրս ուղարկելու հնարաւորութիւն չունենք. եթէ ձեզ մօտ ձեր անմիջական հսկողութեան տակ մարդ չդառաւ, մեզ մօտ ինչպէս կարող է մարդ դառնալ, որ շաբաթական մի անգամ գինւորի երես չենք տեսնում:*

*Շահմիրի խնդիրը դեռ չենք վերջացրել, մերժեց վերջին անգամ դատին ներկայ լինելու. համաձայնութեան ենք եկել մեր հսկողութեան տակ դուրս ուղարկել, իբրեւ պատիժ: Տեսնենք ինչով կը վերջանայ:*

*Շուտով կ'ուղարկենք Աշոտի 10-նոցը. առայժմ անցնող մարդ չկայ:*

**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ**

1905 թ. ապրիլ 23-ին

**Յ. Գ.— Հաշիւները վճռեցինք ուղարկել ամսուս — ապրիլ— վերջին երբ կը կազմենք ընդհանուր ամսեկան ելքն ու մուտք:**

**ՆՈՅՆ**

- 1.- Այսինքն՝ ընդհանուր Վասպուրականի եւ ոչ միայն Վանի շրջանի ելքը, այլ նաեւ Լեռնապարի:
- 2.- Պուրակ — Խլաք:
- 3.- Անառիկ — Թաղ աւան, Շատախ գաւառակ:
- 4.- Քաղաքային կոմիտէն՝ Վանի կոմիտէն է:
- 5.- Վիշապ — Կ. Պոլիս:

**Սիրելի Մալխաս!**

Ձեր այս վերջին անակնկալ լուսթիւնը մեզ ուղղակի զարմացրեց, թէ եւ գնացող եկող լինում է բայց առանց նամակի. իսկ վերջին անգամ Պարապը (ՄԱՅՈՅ\*) եկաւ. նոյնիսկ ապրանքները առանց նամակի էր: Այնպէս էք դասաւորել գործերը որ այժմ 3000-5000 ծ[այրի] պակասը չգիտենք որեւորդ երկինք է համբարձել... Աստուծոյ սիրոյն գոնէ Ընձայրին մշտականապէս պատւիրեցէք որ Մենաւորից չհեռանայ: Թէ եւ ինչպէս գրել ենք, նա մենակ չէ կարողանալու գործ կատարել:

Վերջերս ահագին դիւրութիւններ ենք ստեղծել, բայց Մենաւորում մարդ չլինելու պատճառով առկախ է մնում:

Թաթարին վռնդել ենք, բայց նրա հետ հաշիւները դեռ չենք մաքրել. երեւի որ շատ պիտի տուժէ: Պատմում են որ նրա մօտ դեռ ապրանք կայ. անկանոն հաշւապահութեան պատճառով ամէն բան տակնուվրայ է դառել:

Պարապին վերջապէս յաջողեցինք գործի կանչել. սրա մասին երեւի լսած կը լինէք. մեր հին աշխատաւորներից է եւ հաւատարիմ մարդ է. յուսով ենք որ պիտի յաջողինք այս սեգոնին անցեալ բոլոր թիւրիմացութիւններին վերջ տալու:

Ինչպէս գրել ենք մինչեւ Պարապի բերած 900 ծայրը, որ չգիտենք նորն է, հինն է... Մինչեւ Կայան եւ մեծ մասը մինչեւ մեզ մօտ եկել է 10216, որից մօտաւորապէս 60 հատ ճանապարհին կամ փչացել է կամ կորել. դրա հետ եւ 24 խնձոր: Այս անգամ էլ Պարապը բերել է 900 հատ:

Պարապի հետ որոշ ծրագիրներ ենք որոշել. այնպիսի ծրագիր է, որ առայժմ դուք դրամ չէք ծախսելու Մենաւորում. ամէն բան առ այժմ մենք կը հոգանք, մինչեւ կը կանոնաւորենք եւ կը գրենք ձեզ եւ Մենաւոր: Ծրագրի մանրամասնութիւնները Մենաւոր գրել ենք. լաւ կը լինի որ դուք էլ անձամբ ներկայ լինէք եւ տեղն ու տեղը ամէն բան կարգադրէք:

Ի՞նչ անում էք արէք, բայց այնպէս արէք որ Պարապին եւ նրա ընկերներին չյուսահատեցնէք: Ծրագրի ձեռք բերելը իրագործելու համար հարկաւոր է տեղական ընկերների աջակցութիւնը. ուրեմն ամէն բան սկզբից կարգաւորէք, որ յետոյ թիւրիմացութիւններ չպատահի:

Մեր դրութեան մէջ փոփոխութիւն չկայ: Գերեզմանային հանգստութիւն է, բայց կարծես ոճիրներով յղացած հանգստութիւն. տեսնենք ինչո՞վ կը վերջանայ մեր այս անորոշ դրութիւնը: Արտասահմանից նամակ՝ Աստուած տայ: Կատարեալ լուսթիւն է:

Նամակի մէջ դրուած հասցէն ուղարկէք Խմբագրութիւն, այդ հասցէով թող թերթ ուղարկեն. այնտեղից] հոս կ'ուղարկեն, այդ մասին հարկաւոր կարգադրութիւնները արուած է:

Ուրիշ նորութիւններ չկան, դրամական տագնապը շարունակուում է սաստկուած թեամբ:

Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. ապրիլ 23-ին, Ամրոց

**Միրելի Գարեգին**

Առանց պատասխան ստանալու այնքան գրեցի՛նք, որ նամակների թելն էլ կտրւեց, մեր յոյան էլ կտրւեց:

Այս անգամ բաւական դիւրութիւններ ենք ստեղծել այս կողմից տեղափոխութեան\* համար. եթէ Մենաւորի ընկերները ճարպիկ գտնւեն, ամէն բան կը լինի եւ մենք այս գարնան ասագին յաջողութիւն կ'ունենանք: Եթէ ոչ պիտի փառահեղ կերպով խայտառակենք, թէ մենք եւ թէ դուք:

Արդէն ուղարկել են[ք] բազմաթիւ նամակներ քո եւ Մալխասի խնդրի առթիւ երկու Բիւրոներուն էլ: Յուսով ենք, որ գոնէ մինչեւ աշուն կը յաջողէք հասնել ձեր նպատակին: Եթէ կենդանի կը մնանք միասին կը շարունակենք սկսած գործը, եթէ ոչ, ձեզ իբրեւ անմիջական ընկերոջ վրայ սրբազան պարտք ենք դնելու շարունակել մեր սկսած գործը. է՛հ, ի՛նչ որ կարող ենք անել, պիտ լարենք մեր ամբողջ ուժերը աւելին եւ աւելի շահաւէտ անելու: Եւ եթէ չկրցանք, այդ վերագրեցէք մեր ուժերի թուլութեան եւ արտասահմանի քար անտարբերութեան. երկիրը ոչնչով այդ կողմից մեղաւոր չէ...

է՛հ, ինչ եւ է. մեր ձեռնարկների մասին մանրամասն գրել ենք Մենաւոր, որովհետեւ այնտեղին է վերաբերուում. եթէ հետաքրքրուում էք այնտեղից իմացէք:

Այնքան ենք լաւատես այս գարնան յաջողութեան վրայ, որ նոյնիսկ պատրաստ ենք խնդրելու քեզ, որ այս գարնան սեզոնը աշխատիս դու անձամբ անցնելու Մենաւոր եւ ղեկավարելու գործը, գոնէ մինչեւ մայիս վերջ: Յետոյ շատ պիտի փոշմանենք: Աստուծոյ սիրոյն, պատուիրէք Ընծայրին, որ ոչ մի պարագայում Մենաւորը չթողնէ եւ զանազան գործերով այս եւ այն կողմը գնայ: Այս անգամ սուրհանդակները եկան եւ հոն չգտան. դէ՛հ, հիմա երկրորդ անգամ մարդիկը կը գա՞ն եւ ի՞նչ սրտով: Վերջապէս ոչ մի ջանք մի խնայէք, նոյնիսկ զոհերով — լաւ շահագործելու այս սեզոնը:

Այս նամակի գրելու գլխաւոր պատճառը հետեւեալ դէպքն էր: Վազգէնի քոյրը Չարոտից\*<sup>1</sup>, որ աքսորուած\* էր Երուսաղէմ\*, յունւարից տեղափոխել են, մինչեւ, իւրեանց ընտանիքին անյայտ պատճառներով, Դամասկոս\*. խնդրում ենք այս մասին գրէք իմբագրութեան, Ամերիկա եւ Ոսկանապատ, որ հարկաւոր միջոցների դիմեն եւ իմանան տեղափոխելու պատճառը եւ եթէ կարող են նրա համար որեւէ միջնորդութիւն առաջ բերեն:

Ինչպէս կ'երեւայ շատ վատ դրութեան մէջ է: Ընտանիքը, թէ տնտեսական եւ թէ այդ դարտերից, կատարեալ դժբախտութեան մէջ է: Զկարողացանք մեր մի լաւ ընկերոջ նոյն[քան] լաւ ընտանիքի վէրքերին մի մշտական սպեղանի դնել:

Կ. Խաչի տեղեկագիրը շուտով ուղարկիր Մ. Ք. թերեւս մի բան անեն: Ի՞նչ նորութիւններ ունէք հաղորդեցէք:

**Բարեւներով՝ ՎԱՍ. Կ. ԿՈՄԻՏԷ**

1905 թ. ապրիլ 23-ին, Շամ

1.- Տերոյեան Չարոտի – ծանօթ Ժենիա ծածկանունով, Վասպ. Կեղր. կոմիտէի անդամ, որ աքսորուած էր Երուսաղէմ, ապա Դամասկոս. ազատութիւն պիտի գտնէր Օսմ. սահմանադրութեան հռչակումով (1908):

Սիրելի Ընծայր!

Մենք գանգատուում ենք որ մարդ չկայ, խստութիւնները սարսափելի են եւն եւն. դուք էլ փոխանակ այդտեղ մնալու, ամիսը մի անգամ Աւարայր էք գնում եւ գործերը երեսի վրայ ձգում. փառաւոր գործի վրայ էք. է՛հ, այս կողմից ամէն յարմարութիւններ ստեղծում ենք գործը արագացնելու, իսկ դուք եղածն էլ դանդաղացնում էք: Այսուհետեւ բարի եղէք ամէն մի սովորական բանի համար չգնալ Աւարայր, այլ մնացէք տեղը եւ եկող զնացողներին հարկաւոր գործերը կարգադրեցէք:

Գրել էինք որ Թաթարին վռնդեցինք գործից — նրա լրբութիւնների պատճառով. նոյն գիւղից ի նկատի ունենք Բագրատ անունով մէկին, նրա տեղը նշանակել, բայց առհասարակ կայանցոց վրայ վստահութիւն չմնաց: Այդ պատճառով նրանց պայմաններ ենք առաջարկել. եթէ ընդունեցին, նրանց հետ գործ կը շարունակենք, եթէ ոչ, Կայանից կատարելապէս ձեռնթափ պիտի լինենք: Իսկ մինչ այդ մենք կանչել էինք Անգործ գիւղացի Պարապին (Մելոյիճ\*)<sup>1</sup>, որ քեզ քաջ ծանօթ է եւ մեր հին աշխատաւորներից է. նրա վրայ մենք վստահութիւն ունենք եւ յուսով ենք, որ կանոնաւոր կ'աշխատէ (լաւ յիշեցէք նրա կեղծ անուն եւ գիւղի անուն. Պարապ, Անգործցի): Նա արդէն առաջի փորձնական քայլը արաւ, երբ դժբախտաբար դուք Մենաւոր չէիք: Նրա հետ ամէն բան խօսել ենք. նոյնպէս եւ պայմանների մասին. առայժմ դուք նրան կամ նրա ընկերներին վարձատրութիւն չէք տալու. ի հարկէ հոգալու էք նրանց անմիջական կարիքները — չարուխ, թուլթուն, հագուստ եւն: Իսկ դրամի մասին կը սպասէք մեր կարգադրութեան: Այս անգամ Պարապին մենք 1 ոսկի\* տւինք ծախսելու\* համար. Պարապի հետ աշխատակցելու է եւ կիրճեցի Սողոմ<sup>2</sup>\* որի հետ Արամը այդ մասին ձեր ներկայութեամբ երկար խօսել է եւ որոշ գումար տւել ի հաշիւ ապագայ գործունէութեան: Մենք Սողոյիճ\* առաձին պայմաններ չենք առաջարկելու: Նա պիտի կապւի Պարապի հետ, իսկ Պարապին ամէն բան խօսել ենք: Դուք ի նկատի պիտի ունենաք հետեւեալ մի քանի պարագաները: Մենք Պարապին խոստացել ենք, որ ձեր կողմից ձեր մարդկանցով ապրանքներ\* տեղափոխելու\* էք մինչեւ Արագան<sup>3</sup>, որոշած տեղը, իսկ այնտեղից այս կողմը իրենք են կատարելու: Մենք խօսեցինք որ առաջին մի քանի անգամ իրենք անձամբ կ'ընկերակցեն այդտեղի տղաներիճ\* մինչեւ ձերոց\* կը սովորեն որոշեալ տեղը\*, ապահով կը լինեն, որ առանց այս կողմի մարդկանց կարող են որոշեալ տեղը\* կամ պահարանը\* գտնել\* եւ տեղատրեցնել\*. իսկ այս կողմից կիրճեցի Սողոմ\* յաճախ կ'երթայ ստուգելու որոշեալ տեղը\*, թէ արդեօ՞ք ապրանքներ բերած\* են թէ ոչ. եթէ այո՛, իսկոյն կը տեղափոխեն\* այս կողմը\*: Մանրամասնութիւնների մասին կը խօսիք անձամբ Սողոյի\* կամ Պարապի հետ, երբ այս նամակը կը բերեն ձեզ: Իսկ թէ ձեր կողմից մինչեւ Սահման\*<sup>4</sup> ի՞նչ միջոցով, ի՞նչ ձեւով էք տեղափոխելու, այդ ձեզ ենք թողնում, իբրեւ ձեր շրջան. իսկ մենք այսքանը կ'ասենք, որ լաւ կը լինի այդ գործով զբաղուեն Յովհաննէսը, Յակոբը, Մելոյնը եւ Թաթարը\*. սրանց պ. Վարդան<sup>5</sup> անձնական նամակ կը գրէ եւ հարկաւոր հրահանգները եւ պատւէրները կը տայ:

Հա՛, մոռացանք գրել, որ լուր է մեր ականջին հասնում, որ իբր Թաթարը ապրանքների մի մասը պահել է իւր քով եւ մեզնից ծածկել է՝ իբր թէ կիրճեցի Խոսրովը\* պիտի գայ մեր քով, որ այդ խնդրի մասին խօսի։ շատ ուրախ կը լինենք, բայց որքան գեղեցիկ բան կը լինէր որ մէկ գնդակով երկու որս անէինք, ահա ինչպէս։ դուք գրեցէք Խոսրովը\* հանդիպի Թաթարին եւ նրան իր հետ վերցնելով մեզ մօտ գայ քաղաք, բայց այն պատրւակով որ իբր թէ բերում է մեզ հետ հաշտեցնելու։ Այնպէս էք դասաւորելու որ կիրճեցին մեր միտումը չիմանայ։ դուք նրան գրեցէք, որ Թաթարը խռովել է տղաներից, գնա՛ նրան տար տղաների քով եւ հաշտեցրու։ Եթէ այդ չյաջողւեց այն ժամանակ Թաթարին յատուկ նամակով հրաւիրէք ձեզ մօտ, Ֆարսանգ [?] տալով, որ նրան իբրեւ հին աշխատող չէք ցանկանում երեսի վրայ ձգել, այլ ձեր կողմից կ'ուզէք գործի դնել նորէն։ Եթէ մեզ մօտ կը գայ մենք կը բանտարկենք, իսկ եթէ ձեզ մօտ կը գայ, դուք կը բանտարկէք եւ մեր ասածները կ'անենք։ Իսկ եթէ այս միջոցներից ոչ մէկը չյաջողւեց, մի ուրիշ կերպ նրա հետ հաշիւ կը մաքրենք։

Պարապը մինչեւ Անգործ 900 ծայր է բերել, չգիտենք հին է թէ նոր։ ախր գոնէ երկու տող նամակ գրէին։ այսպէս է լինում գործը, որ Թաթարի պէս ջուր պղտորելով ձուկ են որսում, բա ե՞րբ պիտի կանոնաւորենք մեր գործերը։

Եթէ Մալխասից եւ Գարեգնից նամակներ լինի, իսկոյն ճանպեղէք։ մեր նամակները ըստ պատկանելոյն շուտ հասցրէք։

Առ այժմ այսքանը։ է՛հ, այսքան ժամանակ բազմաթիւ նամակներ գրեցինք, իսկ ոչ մէկին պատասխանը ստանալու պատիւը չունեցանք։

Բալանին<sup>6</sup> սովորականն է. «Մայր Արաքսի», եթէ չգիտէք անմիջապէս դիմէք Մալխասին։

Ի՞նչ դառաւ եւ ո՞ւր մնաց Յ[արու[թիւն]]ի բերած ապրանքները, երեսի Ք[րիստո]սի երկրորդ գալստեան կ'արժանանք տեսնել։ ա՛խ ձեր այդ թուրու[թիւն]ը եւ ծուրու[թիւն]ը մեզ խեղդելու չափ նեղում է...

Եթէ N 2 թերթ կայ ուղարկեցէք, շատին քչին մի նայէք։ ինչ որ կայ ուղարկէք։ լաւ կը լինի որ N 1 գոնէ մէկ հատ ուղարկէք։

Չմոռանաք նորու[թիւն]ների մասին գրել։ եթէ ձիւր կարիք ունէք կարող ենք մէկը կամ երկուսը ուղարկել։

Առ այժմ այսքանը։

Ողջոյններով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. ապրիլ 23-ին  
Ամրոց

- 1.- Անգործ – ծածկանուն Բերկրի գաւառակի մէկ գիւղի։
- 2.- Կիրճ – ծածկանուն Բերկրի գաւառակի Քետաղուկ գիւղի։ Սողո – խլաթցի խիզախ ֆետայի, Արամի քիկնապահ. նահատակուած 1915ին։
- 3.- Ալազան – լեռնագագաթ՝ թուրք-պարսկական սահմանագլուխի վրայ, պարսկական կողմ։
- 4.- Սահման – ծածկանուն Բերկրի գաւառակի
- 5.- Վարդան Շահապալը (Տօնիկեան)։
- 6.- Այսինքն թուանշաններով գրուածները կը բացուին «Մայր Արաքսի» բանալիով։

**Սիրելի Տիգրան!**

1.- Ա. Ենթակոմիտէի հետ ինչ որ հարկաւոր է իբրեւ վերջին հրահանգ տուր եւ անմիջապէս անցիր մեզ մօտ:

2.- Կարէնին եթէ յարմար ես գտնում թո՛ղ նոր այցելածդ գիւղերի վրայ, միայն որոշ հրահանգներով. թող նա էլ Բ. [Երկրորդ] Աշոտ չդառնայ մեր գլխին:

Այժմ անից լաւ կը լինի որ խօսես նրա պայմանների մասին. նրան կարելի է մի 3-4 չափ ցորեն տալ ընտանիքի համար, ուրիշ ոչինչ, իսկ իւր ծախսերը կը լինի շատ չափաւոր եւ այժմ անից որոշելու է. Հաջին նրա շուայրութեան վերաբերեալ մի ինչ որ է 400 դրուշի հաշիւ էր գրել, կարծենք քեզ ուղարկեց. ուսուցչի համար այդ ի նկատի ունեցիր:

Նա կը լինի Ա. Ենթակոմիտէի սոսկ անդամներից մէկը:

3.- Այս կողմը մնացած գիւղերը ի հարկէ կ'այցելես:

4.- Լաւ կը լինի որ մտնես Հեպթաղէմ եւ սրանց հրահանգներ տաս ապրանքների համար:

Այլուրներից վեց թալիս կարգադրուած է բերել հոս:

Մնացած խնդիրների մասին անձամբ:

Բարեկներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. ապրիլ 23-ին, Շամ

**Ա. Ենթակոմիտէին**

**Ընկերներ!**

1.- Ուղարկում ենք Մենաւորի համար երեք կտոր նամակ, որը պիտի հասցնէք անձաւցի Մելոյի ձեռքը. լաւ կը լինի որ ուղարկէք այգեստանցի Մախսուղին եւ բերանացի պատւիրէք որ տանէ յանձնէ Մելոյին, սա գիտէ թէ որ նամակ, որին պիտի ուղարկել: Կարճ. ամենաարագ կերպով այդ երկու նամակն կը հասցնէք Մելոյի ձեռքը:

2.- Ուղարկում ենք ձեր շրջանի գիւղերից մէկի վերաբերմամբ մի դատ. խնդրում ենք շուտով կարգադրել եւ իսկոյն մեզ պատասխանել:

3.- Ցորենները եկան առանց նամակի. երեւի պիտի գուշակութեամբ իմանանք որ դուք էք ուղարկել:

4.- Վերջերս բոլորովին նամակ գրելը մոռացութեան տւիք. ի՞նչ [է] պատճառը. գրած ոչ մի նամակին չէք բարեհաճում պատասխանել:

Բարեկներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. 24-ին ապրիլ



**Սիրելի Մալխաս!**

Ստացանք Կոմսի 10/IV թվակիր նամակը. զարմանում ենք ձեր տրամաբանութեան վրայ. այնտեղ ուր կարելի է մեր անմիջական կարիքներին գոհացում ստանալու, փոխանակ հոն ուղարկելու Կոմսին, վճռել էք Վրէժ գնալ. Աստուած բարի ճամբայ տայ. երբ մենք մի տեսակ վճիռներ պիտի տանք, դուք միւս տեսակ, ոչինչ չունենք ասելու, արէք ինչպէս ձեր քէֆն է...

Փոխադրութեան\* մասին գրել ենք. մենք քորդ\* սուրհանդակով հակառակ ենք եւ կանգ ենք առնում վերջնականապէս այն ձեւի վրայ, ինչ ընդգծել ենք նախորդ նամակով, որի համար յատկապէս աշխատելու է Պարապը (Մելոն\*), իսկ եթէ դուք առաջի տեսակը աւելի յարմար էք գտնում արէք ձեր ռիսկով եւ պատասխանատուութեամբ:

Արդէն ձեռք ենք ձգել մի քանի քրդերի\* եւ մի տաճիկ\*, ամենալաւ եւ ձեռնտու պայմաններով. եթէ յաջողեցինք դրանց գործը մշտական դարձնել, այն ժամանակ մեր փոխադրութիւնը\* կիսով չափ ապահով կը լինի, էլ կարիք էլ չենք ունենայ արտաքոյ կարգի միջոցներով ծանրաբեռնել Մենաւորը:

Արդէն ձեզ մօտ ուղարկւած տաճիկը\* վերադարձաւ բերելով 3 հազար\* հին եւ իսկական ծայր\* եւ չորս հին կոք\*<sup>1</sup>. դժբախտաբար նամակ չկար (գուցէ կար եւ մեզ ցոյց չտուեց) եւ պնդում է որ ինքը իւր դրամներով է գնել. մեզ համար մեծ հարցական է այդ խնդիրը, որովհետեւ որտեղից է ճարել նա իսկականները եւ այդքան դրամը: Այս մասին բարի եղէք շուտով մեզ տեղեկացնելու. եթէ նա կրկին կը համաձայնի բալ նրա միջոցով կրկին նամակ կը գրենք, ի հարկէ դրամը այդտեղ վճարելու պայմանով:

Մի հետաքրքիր կոմպինացիա<sup>2</sup> ենք արել այսօր մի քորդի\* հետ, շատ լաւ պայմաններով. նա մեզ մօտ գրաւական է դնում 50-60 ոսկու արծաթ, եւ պիտի տեղափոխութեամբ\* գբաղւի Աւարայրից<sup>3</sup> մինչեւ հոս: Ամէն մի կոթի համար, թէ հին թէ նոր, ստանալու է 1 ոսկի\* եւ ամէն մի հազար\* ծայրի համար, թէ հին, թէ նոր կրկին ստանալու են 1 ոսկի\*. տեսնում էք որքան լաւ պայմաններով է. չորս մարդ են, եւ չորսն էլ ձիաւոր: Յուսով ենք որ սրանք մեծ գործ պիտի կատարեն. սրանց հետ պայմանների մասին առանձին նամակ կը գրենք:

Մի ուրիշն էլ կայ. դեռ նրա հետ վերջնականապէս չենք պայմանաւորուել:

Մատանիները դեռ չենք ստացել. ստանալուց կը գրենք:

Շնորհակալ ենք Փայլակի<sup>4</sup> ստացած հաշւեցոյցի համար, բայց մոռանում էք գրել, թէ արտասահմանէն նամակներ ունէի թէ<sup>5</sup> ոչ: Մի զլանաք մեզ նորութիւններ ուղարկել:

Գարեգնին<sup>5</sup> գրեցէք որ դրամի հարցին\* մէջ փոփոխութիւն\* չմտցնէ.սրա մասին արդէն գրել ենք որ 90 ոսկի ստացել ենք: Եղածը շատ ապահով էր, փոփոխութիւնների մասին մենք կը գրենք: Այսօր ստացանք Մրգաստանէն երկու հարիւր քսան\* եւ երկու ոսկի\*. չգիտենք որ մասը Արամինն է, որը որտեղից է եկել. երեւի նամակով

ձեզ կը գրեն: Այդ բոլորը մեր պարտքերի կէսը չի ծածկելու:

Մենաւորից գրում են որ սուրհանդակների վարձը մենք տանք, որը շատ դժւարութիւններ ունի. ա) դրամ չունենք, եւ երկրորդ մեզնից շատ հեռու է, մենք չենք կարող հսկել: Մենք գրել էինք որ Աւետարան<sup>6</sup> Պուկրէշտի մօտ միշտ 1-2 ոսկի դրամ դրէք որ նա գործադրէ: Նորից կրկնում ենք, որ եթէ այդպիսի մի բան անէք լաւ կը լինի. արդէն գրել էք որ փոքր ի շատէ ապահոված էք, ուրեմն Մենաւորից կարգադրէք որ ուղարկեն, այս անգամ մենք թերեւս մի քանի մեջիտէ ուղարկենք:

Թերթեր եւ գրքեր շատ-շատ ուղարկէք — պատւիրեցէք որ իսկոյն մեզ հասցնեն:

Այսուհետեւ զուռնաչիւների<sup>7</sup> եւ ոչ մի կտոր նամակը կամ թերթը մեր գծերով չէք ուղարկի. այս անգամայ ուղարկածն էլ արքունիս գրաւեց: Պատճառները գրելու ենք Վրէժի<sup>8</sup> նամակում: Աւելորդ չենք համարում նրանց նամակներից մի քանի հատածներ հոս արտագրելու: Նամակը գրած է Աւարայրից մի ինչ որ է Վահանի ձեռքով:

Ահա ինչ են գրում — պ. Երւանդ Ապաստան է, շուտով կը վերադառնայ Ծովակ (հոն) Սուրէնի եւ երկու ուրիշների հետ. իսկ Արամը սպասում է Ապաստարանի գործադրութեանը. նախքան Երւանդի գալը արդէն Արամը ամէն պատրաստութիւն տեսնած եւ վերջացած էր. շուտով պիտի ճանապարհ ընկնէր գար ձեզ մօտ (հոս), բայց Երւանդի գալը Արամի ուշանալու պատճառ դառաւ: Գծերը լաւ են:

Մերոնք եւ Դ-ները մի մեծ կռիւ ունեցան որի հետեւանքը այն եղաւ [որ] մերոնցից մէկը վիրաւորւեց, իսկ նրանցից երկու զոհ (ընդգծումը իրանցն է): Պատճառը մի մարդ կ'ուզէ իրա աներոջ կինը առնել. Մաշտոցը, փոխանակ պատժելու այդ մարդին դեռ պաշտպանել է, ահա պատճառը:

Ս-ից Մինարէթ ուղարկւած սուրհանդակի մասին գրէք, եթէ յաջող է, բերեն այսուհետեւ նոյն գծով փոխադրենք, այնպէս որ չմնանք ուրիշների միննաթին, որովհետեւ իրենց խօսքը յարգել չգիտեն...: Ուղղագրութիւնը եւ կէտերը իրենցն է:

Առայժմ այսքանը, բազմաթիւ նամակներով մեր կարիքները գրել ենք, կրկնելը աւելորդ է:

Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. ապրիլ 26-ին

Շամ

Քոյի\* եւ տաճիկի\* նամակները գրելու ենք զաղտնի մելանով\*. բանալու էք երկաթաջրով\*:

ՆՈՅՆ

Բանտարկելոց ցուցակները եւ ոտանաւորները (Արմենակի եւ Մուշեղի) ուղարկեցէք խմբագրութեան:

Ուղարկում ենք Ա. Իսահակեանի համար մի տուփ, Ապաստան<sup>9</sup> գնացողների հետ ուղարկէք իրեն:

*Ընձայրի խնդրանք Սարգարի համար ուղարկում ենք երկու արժաթէ բաժակ – խնդրում ենք այսուհետեւ մեր կողմից նման իրեր չպահանջել:*

**ՆՈՅՆ**

*Այսօր կառավարական շրջաններից մի տեսակ լուր առանք, իբր թէ Սարհադ Դուրանում<sup>10</sup> դէպքի է բռնել գիւղում. իբր թէ մերոնցից ընկել է 15 հոգի, 7 վիրաւոր բռնած: Կառավարութիւնից 20 գինւոր եւ մի ոստիկան ընկած:*

**ՆՈՅՆ**

- 1.- Ծայրը փամփուշտն է, կոթը՝ հրացան:
- 2.- Դասատրում:
- 3.- Աւարայր – ծածկանուն Խոյ քաղաքի:
- 4.- Փայլակ – ծածկանուն Դերձակեան Ռուբէնի:
- 5.- Գարեգին – ծածկանուն Թաղէոսեան Ստեփանի:
- 6.- Աւետարան – ծածկանուն Բերկրի գաւառակի Խաչան գիւղ:
- 7.- Հնչակեանների:
- 8.- Վրէժ – ծածկանուն Թարիզ քաղաքի եւ Ատրպատականի Կ. կոմիտէոսին:
- 9.- Ապաստան – ծածկանուն Սոչի քաղաքի:
- 10.- Սարհադ ծածկանունն է Գեորգ Չաուշի, Դուրան՝ Տարօնի:

### Վրէժի Կ. Կոմիտէին

Ընկերներ!

Ստացանք ձեր մարտ 30 թւակիրը. շտապում ենք պատասխանելու: Գանգատուում էք որ իբրեւ անմիջական եւ հարեւան Կ. Կ-է ձեզ միշտ չենք գրում եւ մեր պահանջները ձեզ պարզ կերպով չենք դնում. դուք մոռանում էք որ մենք Վրէժի շրջանի երեք կէտերի հետ անմիջական յարաբերութեան մէջ ենք եւ միշտ նոցա գրում ենք մեր կարիքների մասին եւ միշտ էլ աւելացնում որ այս մասին գրեն եւ ձեզ. եթէ մեր նամակները ձեզ չեն ուղարկւում, կամ մեր պահանջների մասին Մենաւորից, Աւարայրից կամ Մինարէթից<sup>1</sup> ձեզ չեն գրում այդ մեղքը մերը չէ... Այս անգամ հանգամանքից օգտուում ենք պատասխանելու ձեր դրած մի քանի հարցերին:

ա) Չուռնաչիները<sup>2</sup> խնդիրը. Արդէն մեր պաշտօնական նամակով գրել էինք որ մենք նրանց չենք հաւատում, որովհետեւ նրանց ի՛նչ մասաբի լինելը վաղուց մեզ յայտնի [է], բայց երբ մի պատմական սխալի պատճառով նրանք երկիր էին ընկել, ստիպւած էինք երկրի գործը չվտանգելու համար համերաշխութեան դիմել. բայց այստեղ էլ սխալւեցինք, որովհետեւ Չուռնաչիները ամէն տեղ Չուռնաչի մնացին:

Բացի այն բոլոր արտասահմանեան սրիկայուլթիւնից որ նրանք արտասահմանում արին մեր գլխին, նոյն մեթոտով, այստեղ էլ կ'ուզէին շարժել, բայց խաչագողը իսկոյն բռնեց. պատմենք դէպքը. մի գեղեցիկ օր քաղաքի պատերից կպցնում են երկու յայտարարութիւն, մի մասնաւոր մարդու ստորագրութեամբ, որ վերջերս էր ելել բանտից, որի մէջ անւանարկում էին մասնաւորապէս Գիսակին, նրա անձնաւորութիւնը կապելով մի կեղտոտ գործի հետ եւ ընդհանրապէս մեզ... Մանրամասն քննութիւնից յետոյ եկանք այն եզրակացութեան, որ այս կեղտոտ գործի հեղինակը եղել է տեղիս Չուռնաչիների (այսպէս է նրանց անունը) մասնաճիւղը եւ նրանց տաղանդաւոր ներկայացուցիչ Հաջին: Գործը դեռ չէ վերջացած եւ թերեւս այդ կեղտը արիւնով մաքրուի: Մանրամասնութիւնները կը գրւի իր ժամանակին: Այս եւ մի քանի ուրիշ փաստերի հիման վրայ մենք բացարձակապէս մերժել ենք նրանց հետ բանակցել այսուհետեւ եւ նրանց մասին յայտարարելու ենք հոս թուրքիկով իբրեւ խաչագողներ. չմոռանանք աւելացնել, որ նրանց անդամներից մէկը Նշան անունով պ. Աշոտի հետ ընկերակցելով անցել է ձեր շրջանը, այստեղից փախցնելով 200 օսմանեան լիւրա. այնպէս որ հասարակութիւնն էլ զգւած է: Ուրեմն կարգադրելու էք որ մենք ոչ մի տեղ եւ ոչ մի պարագայում նրանց հետ համերաշխութեան ծրագիր չենք մշակի եւ ամէն կերպ արգելեցէք նրանց ներս գալը: Լսում ենք որ Աւարայրում եւ Մենաւորում պատրաստութիւններ են տեսնում, Աշոտ, Սուրէն եւ մի ի՛նչ որ է Արամ միասին ներս գալու. ոչ մի աջակցութիւն ցոյց չէք տալու:

Այս էր յայտնի դրամային, նոյնքան յայտնի վերջաբանը:

բ) **Դուրս եկող ընկերների խնդիր**։ Ինչ վերաբերում է Շահէնի<sup>3</sup> եւ իւր ընկերների դուրս գալուն, արդէն ձեզ քաջ ծանօթ է, որ նա դուրս եկաւ արտասահմանի ընկերների համաձայնութեամբ, իսկ առանց գործնական նպատակի ոչ մի միտք չունէր ներկայ պարագաներում զինուորներ պահել, առանց պատրաստութիւն ունենալու, առանց ծրագրուած ձեռնարկ ունենալու եւ վերջապէս առանց դրամ ունենալու... Պարագաներ որ մեզ ստիպեցին դուրս ուղարկել նրանց, իսկ նրա խմբի մի քանի կարեւոր ընկերներին, խնդրեցինք մնալ մեզ մօտ եւ մասնակցել մեր նախապատրաստական գործերին. չհամաձայնեցին եւ անցան արտասահման:

Գալով այս տարւայ ուղարկուածներին, դրանք մեծ մասամբ խաչագողներ են, որ իբրեւ պատիժ դուրս են վտարւել եւ իրենց ձեռքը դրել է իրենց մեղադրական ակտը:

Մենք ի՞նչ մեղաւոր ենք երբ սահմանագլխի մեր ընկերները նրանց ծայրը հասցրել են ձեզ ի դիմաց Խաչագող Գուրգէնի: Դրանց մասին կարգադրուած է հասցնել մինչեւ Աւարայր կամ Մինարէթ եւ թողնել իրենց կամքին եւ ոչ հասցնել Վրէժ: Մենք այստեղ դրամի համար հոգի ենք տալիս, երես սեւեցնում, դուք այդտեղ խաչագողներ կերակրեցէք:

գ) **Կարիքներ**։ Մեզ առ այժմ հարկաւոր են ինտելիգենտ ընկերներ եւ խմորային գործողութիւնների լաւ մասնագէտ մի երկու կամ գէթ մի ընկեր. մէկը արդէն ունենք: Ուրեմն մնացած տեսակի մարդկանց կարող էք մնաք բարեւ ասել:

էլ[եկտրական] մեքենաներ հարկաւոր են, նոյնպէս եւ էլեմենտներ ու թելեր, միայն պայմանով որ նրանք շուտ փչացող չլինեն եւ իրենց ուժը կարողանան գէթ մէկից երկու տարի պահել, իսկ մի քանի ամսւայ ուժ ունեցողը հարկաւոր չէ:

Հարկաւոր չէ նոյնպէս մօտիկից ազդողները, առնւազն մի վերստից ազդող է լինելու մերը... այն էլ մի մեքենան ուժ պիտի ունենայ միաժամանակ ազդել մի քանի կէտերի վրայ. փորձեցէք, եթէ ձեր քով եղածները այդ բաներին ընդունակ են ուղարկէք, եթէ ոչ ի դուր է:

Լեզալ ուղարկելու մասին առայժմ ոչինչ չենք կարող ասել, մանաւանդ որ կարիք էլ չկայ, քանի մենք միշտ յարմարութիւն ունեցել ենք եւ ունենք մեր ունեցած միջոցներով նման իրերը փոխադրելու. յարմարութիւններ կան, դուք յարմարութիւններից օգտւող ասացէք...

Խմոր եւ պարագաներ որքան կարող էք շատ ուղարկեցէք եւ շուտ:

1905 թւաշրջանին ոչ մի կտոր մաս չենք ստացել, թէեւ ամէն անգամ գրել ենք մասերի մասին. այս անգամ գրուած էր որ ուղարկել էք, բայց դեռ տեղ չէ հասել: Կողքի եայի մեծ կարիք ունենք:

Կը գրենք ձեզ Աւարայրի բալանիով, նրանց գրեցինք որ ձեզ ուղարկեն, կամ՝ ի նկատի ունեցէք, «Մայր Արաքսի» առաջին տունն է...

դ) **Մեր գրութիւնը**։ Աւելի քան խաղաղ է, բայց թերեւս ոճիրներով ողողած խաղաղութիւն է: Պարտքերի տակ խեղդւեցինք. վերջերս Մինարէթէն Գարեգնից եւ Մրգաստանից ստացանք քիչ դրամ, առաջինից 70, երկրորդից 220 ոսկի. դրանք մեր

պարտքերի կէսը չեն ծածկի, ո՛ւր մնաց մեր ընթացիկ ծախսերը հոգան:

Փոխադրութեան պայմանների մասին գրել եւ գրելու ենք Աւարայր․ բարի եղէք այնտեղից տեղեկանալու: Մենաւորը ձեռնհաս մարդ չլինելու համար թերեւս այս տարի շատ տուժենք․ չկարողացաք հոն մի կանոնաւոր մարդ դնել:

Ի՞նչ անում էք արէք, միայն աշխատեցէք երկրի կարիքներին եւ պահանջներին օր աւուր առաջ բաւարարութիւն տալ, յետոյ կը փոշմանենք, ինչպէս փոշմանեցինք Բարձր[աւանդակ]ի վերաբերմամբ եւ վերջերը խիղճերնիս հանգստացնելու (sic) համար այնքան վիժմունքներ արինք:

Եթէ կարող էք տեղիս համար մի թեթեւ յեղ․ լեզալ գրականութիւն պատրաստեցէք եւ Աւարայրի կամ Մինարէթի վրայով մեզ ուղարկեցէք: Հնի եւ նորի մասեր որքան կարող էք շատ ուղարկեցէք, մանաւանդ հնի մասեր․ Ժողովրդի ձեռքը բազմաթիւ կոթեր կան, անդարմանելի պակասութիւններով: Քանի՞ կարելի է առնել այդտեղ հնի ծայրերը, Ժողովրդի համար դա կարեւոր է:

Ներկայումս մեր ամենամեծ կարիքը մի արհեստաւոր ընկեր ունենալն է․ բոլոր կոթերը պակասութիւններ ունեն եւ առանց մասնագէտ վարպետի գլուխ չեն կարող գալ․ ուրեմն աշխատեցէք մեզ վարպետ հասցնել․ բայց այնպէս մարդ ուղարկէք որ աշխատող լինի եւ կարողանայ դիմանալ տեղիս պայմաններին, մանաւանդ բարոյական մաքրութիւն ունենայ:

Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. ապրիլ 26

Շամ

1.- Յաջորդաբար՝ Ս. Թադէի վանք, Խոյ եւ Սալմաստ: Վրէժը Ատրպատականի Կեդր. կոմիտե-  
ուքիւնն է, Թաւրիզ կեդրոնով:

2.- Հնչակեաններու:

3.- Շահեմի եւ ընկերներու դուրս գալուն – խօսքը կը վերաբերի 1904 թ. Սասնոյ ապստամբու-  
թեան ձախողութենէն ետք, հայդուկապետ Անդրանիկի եւ իր ընկերներու հեռանալուն: Վասպուրա-  
կանէն անցնելու ճանապարհին, յատկապէս Վանի մէջ, գաղտնապահութեան նկատումով Անդրա-  
նիկին համար (որ այլապէս ծանօթ էր Պարոյր ծածկանունով) գործածուեցաւ Շահեմ անունը:

### Հնչակեան Վասպուրականի մասնաճիւղին

Պարոններ!

Դուք եւ ձեր ընկեր պ. Շահմիրը առանձին-առանձին դիմել էիք յայտնի Թուրքիկի խայտառակ դատը յանձնելու մի չէզոք մարմնի քննութեան. մենք լուրջութեամբ մերժել էինք այդ չէզոք մարմնի ատեանը մի քանի նկատումներով:

ա) Որ մենք եղած փաստերով առնւազը եկել էինք այն եզրակացութեան որ ձեր ընկերոջ՝ Շահմիրի մատը խառն է այդ կեղտոտ դատի մէջ:

բ) Որ չէզոք ատեանը՝ կազմած ազատ մարդկանցից, դատի վճիռները գործադրելու ատեն ծագած անակնկալների պատճառով թերեւս վտանգւէին, տեղիս յայտնի անգաղտնապահութեան պատճառով. անգաղտնապահութիւն որի գեղեցիկ օրինակը տւաւ ձեր ընկեր Պետրէն, երբ քննութիւնից անմիջապէս յետոյ կառք նստած չարսու<sup>1</sup> է հասել եւ ամէն պատահողի մանրամասնօրէն խօսել է, թէ՛ տեղը (որտեղից է գալիս, ի՞նչ քննութիւն է եղ[ել] այդտեղ), թէ՛ ընկերների անունները եւ գործողութիւնը (փաստ որ ապացուցելու դժւարութիւնները չենք կրի):

գ) Որ պ. Շահմիր թէ իւր բերանացի բացատրութիւններով եւ նամակներով չկարողացաւ ոչ մի բանաւոր փաստ բերել իւր անմեղութիւնը հաստատելու համար, այլ միայն բաւականացաւ սենեակի ձեւերի նկարագրութեան մէջ սխալներ նկատելով:

դ) Որ դուք եւ ձեր ընկերներից շատերը զանազան միջոցներով ջանացել էք եղած վկայութիւնները փոխելու, նոյնիսկ դիմելով տեղիս առաջնորդական տեղապահի միջնորդութեան. պարագայ որ ցոյց է տալիս որ դուք ոչ թէ ցանկանում էք ճշմարտութիւնը վերականգնելու, այլ ձեր ընկերոջ հեղինակութիւնը փրկելու, եւայլն, եւայլն:

Ահա այդ նկատումով մենք վերջին անգամ դիմեցինք պ. Շահմիրին եւ առաջարկեցինք որ նա միայն երկու չէզոք մարդկանց ներկայութեամբ քաղաքացիական արիութիւն ունենայ ինքզինքը արդարացնելու. բայց նա ճարպիկութեամբ խուսափել ուզեց եւ այդ միջոցին մի սպառնալիքներով եւ կեղտոտ ակնարկներով լիքը նամակով արդարացրեց իւր մերժումը: Մենք ոտից ցզլուխ չհամաձայնելով եւ ոչ մի կարեւորութիւն չտալով պ. Շահմիրի նամակին թերեւս գործի դիմէինք, եթէ Շահմիր եւ ընկ[երք] իրենց ոչ գովելի քայլերը չվարագուրէին բարձր ճշմարտութիւնների եւ յեղափոխական զանազան դոգմաների քողերով: Յանկանալով նրան զրկել այդ միակ ապաստանից յանուն ճշմարտութեան եւ միայն ճշմարտութիւնը վերականգնելու համար, առաջարկում ենք ձեզ ձեր կողմից ընտրել չէզոք մարմին (երկուսը ձեր եւ երկուսը մեր կողմից) որ քննութեան կ'ենթարկի այդ կեղտոտ գործը. մարմին, որի դերը լինելու է որոշել, թէ այս կամ այնինչ անձնաւորութիւնը յանցա-





**Յարգելի բարեկամ!**

Ստացանք քո նամակը Հասոյի ձեռքով, շատ շնորհակալ ենք բարեկենդանուդ համար. փոխադարձ բարեկենդանի ենք յայտնում բոլորս եւ նորեկ բարեկամը:

Անցեալ անգամ նամակ էինք գրել ձեր գործի մասին. լսեցինք որ չէք ստացել այս անգամ երկրորդում ենք. մենք խօսեցինք տեղիս կաթոլիկ էֆէնտուն որ գրէ ինձ գիւղացիներին որ ձեր մասին լաւ վկայութիւն տան (չաատլըկ). մենք էլ մեր կողմից կանչեցինք ինձ գիւղի քահանային եւ ռէսին, որ մեր ներկայութեամբ խոստացան, որ ձեր անունը մինչեւ հիմա չեն տւել, էլի չպիտի տան երբ կառավարութիւնը իրենց կանչէ հարցնելու: Այդ կողմից դուք ապահով եղէք, մենք ամէն միջոցի կը դիմենք որ դուք ազատուէք եւ մեզ օգտակար լինէք:

Ձեր ազգական Աբդրահիմ բէկը արտասահմանէն մեր նամակի միջոցով ձեզ բարեկենդանի է ճամբած, շատ ուրախ է որ դուք համակիր էք մեզ եւ չէք մոռանում իւր գործը: Խնդրում է որ իրեն յատուկ տաճկերէն նամակ գրէք, ձեր մոհրն<sup>1</sup> էլ զարկէք, որ նա հաւատայ որ ձերն է. ուրեմն այս անգամ դուք մի նամակ գրեցէք նրան տաճկերէն, որ մեր նամակի հետ ուղարկենք արտասահման նրան:

Արտասահմանէն լուր առանք որ արաբները կուռում են տաճիկների դէմ, ահագին յաղթութիւններ են արել, գէնքեր են խլել, այնտեղի փաշային գերի են վերցրել: Կուռող արաբները (նրանք էլ ունեն յեղափոխական միութիւն) պահանջում են որ Արաբիան բաժանւի Օսմանեան կառավարութիւնից եւ իրենց համար անկախ կառավարութիւն լինի. ամենագլխաւորը արաբները պահանջում են որ Սուլթանը չպիտի խալիֆ կոչուի, որովհետեւ նա Մուհամէտի դրած օրէնքով չի նստում-կանգնում այլ բռնութիւններ կատարում, չայրաթի օրէնքները բոլորովին չի յարգում. արաբները ասում են որ այսուհետեւ խալիֆան պիտի արաբներից լինի եւ պիտի նստէ Մեղինայում եւ ոչ մի յարաբերութիւն չպիտի ունենայ Սուլթանի հետ:

Արաբները պահանջում են, որ Արաբիան արաբներին լինի: Հայերի հողերը՝ հայերին, քրդերի հողերը՝ քրդերին, իսկ տաճիկների հողերը՝ տաճիկներին եւ ամէն մարդ իր երկիրը կառավարէ:

Հասոն եկաւ. նրա հետ պայմանաւորեցինք որ մեզ համար աշխատէ, բայց մենք նամակին մասամբ չհաւատացինք, որովհետեւ ձեր մոհրը չկար. միամտութեան համար խնդրում ենք Տէրտէրի ձեռքով մի հայերէն նամակ գրէք մեզ:

Բարեկենդանուդ  
[Անստորագիր. Արամի ձեռագիր]

1905 թ. ապրիլ

1.- Կնիքը:

**Սիրելի Մայրսա!**

Լուսլուծիչ շատ տարօրինակ է, մանաւանդ կան խնդիրներ որոնց վերաբերմամբ քո անմիջական կարծիքները լսելու մեծ կարիք կայ: Անցեալ նամակով գրել էինք Տաճիկի\* մասին որին նամակով ուղարկել էինք ձեր քով հոս մեզ վրայ ծախած ծայրերի\* գինը ձեզնից առնելու եւ նամակով գրել էինք, որ եթէ համաձայնեց իւր դրամները մեզ մօտ (այսինքն իր դրամը չվճարէիք) գրաւական թողնի. նրան ապրանք կը տանք բերէ, վարձը խօսելով... Նա վերադարձաւ հետը բերելով 3 հազար հինգ\* – իսկական ծայր, բայց առանց նամակի (թերեւս տւել էք, մեզ ցոյց չէ տալիս) եւ պնդում է որ ինքը այդ ապրանքը ձեր միջոցով գնել է մի պարսիկից\* հատը 85 փարայ:

Առաջին անգամ համաձայնեց դրամի կէսը վերցնել եւ կէսը՝ գալ ձեզ մօտ ստանալ, բայց վերջը չհամաձայնեց եւ բացարձակապէս յայտարարեց որ պիտի ուրիշներին ծախենք. ի հարկէ այդպիսի մի պատկառելի ուժ չէինք կարող ձեռքից թողնել եւ դա էլ դառաւ մեր գլխին մի երկրորդ դրամական պատուհաս խլելով մեր սնանկ պիւտոթից ընդամէնը եօթանասուն ոսկի\*: Սրանից մեծ պատուհաս մեր գլխին չէիք կարող բերել: Դեռ սա բաւական չէ. խօսում է որ 3-4 օրից պիտի կրկին նոյն չափով եւ նոյն տեսակի ապրանքներ [բերի]: Մենք կիսով չափ հաւատացած ենք որ շուներ արդէն մեր ապրանքներն է բերել եւ մեր գլխին փառաւոր խաղ կը խաղայ... Այս նամակին առանց ըստէ անգամ [կորցնելու] պատասխանեցէք պարզելով իրողութիւնը. իսկ մինչ այդ երեւի օրերս կու գայ դէպի ձեզ. եթէ լրբութիւն է արել, բռնեցէք հաշիւը գոցեցէք... Լաւ նայեցէք որ ձեռքից չտաք:

Ամերիկայի նամակը շուտով ճանապարհէք. ի՞նչ նորութիւն կայ այնտեղից: Երէկ միայն ստացանք լուսանկարչական ապարատը իւր պարագաներով, 2 եւ 3 ՆՆ-ը [Դրօշակի], մի քանի Հայրենիք եւ մի կապոց մանրուք. բայց Կոմսի նամակում Անդրոնիկէն եւ Դէպի կուիւր չկար: Մանրուքների համար յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնները Վրէժի ընկերին, կը ցանկայինք որ շարու [նակու]թիւն լինի: Առանձնապէս մեծ կարիք ունենք կողքի եայի, ասեղների, պրումիւնի, վինտաների, ուռցնող կոթերը կանոնաւորելու համար պատրոննիկ փորող գործիքի, ուռցրած ծայրերը սղմող դալիպի, մանաւանդ հին կոթի մասերի:

Եթէ կարողանաք 10-20 գաւորներ\* եւ մես\* ուղարկել, դրանով մեր 20-է աւելի անգործադրելի կոթերը գործադրութեան մէջ կը դնենք, որոնք անյիշելի ժամանակից միայն պահարանների բաժին են դառնում:

Եթէ կարողանաք էլեկտրական մի քանի Փանարներ ուղարկել, ի հարկէ շուտ չփչացող – ականներով\* աշխատելու համար շատ կարեւոր են:

Պ. Վարդան բարեւում [է] քեզ հայհոյելով, որ տնաչէն այսքան լուրեր տարածեցիր թէ գալիս եմ, բայց ջրի պէս ճանապարհեցար, աւազի պէս կանգնեցիր: Սա ինչ խայտառակութիւն է, շատ էլ ականջ մի կախէք Բիւրոնների խօսքերին. նրանք



**Սիրելի Ընծայր!**

Ինչպէս Վարդանի նամակից տեսնում ես, նա վստահացած [է] քո ընկերական ուժի եւ հաւաստիների վրայ: Ուղարկում եմ վերջին անգամ, իբրեւ դրւած օրէնքի դէմ մի բացառութիւն, վեց մարդ, որոնք գործ չլինելու, մանաւանդ դրամ չլինելու պատճառով, իբրեւ սովորական ուժերի դուրս է ուղարկւում: Վարդանը իր կողմից խնդրած է որ առանց աղմուկների այդ զոհողութիւնը յանձն առնէք եւ այդտեղից ճանաչու դնէք ուր հարկն է:

Նամակները շուտով հասցրէք տեղ:

Ձեզ մօտ եղած մանր իրերը, մանաւանդ մակասիները եւ կարոպկաները, Յարութիւնի բերած իրերը իսկոյն ներս ուղարկէք. քանի անգամ է կը գրենք, դուք ոչ մի պատասխան չէք տալիս:

Արամը բարեւում է ձեզ:

Անցեալ անգամ Սարգարին նուէր ուղարկեցինք Աւետարանի Խաչոյի ձեռքով. երեւի ստացած կը լինի. դու էլ քո կողմից իբրեւ մեզ նուէր այս անգամ մի բացառութիւն արա առանց պահանջի սրանց ճանապարհ ձգելով...

Սրանց ամէն մէկի առանձին պահանջներին ականջ չէք կախելու, այլ ըստ յարմարութեան կարգաւորելու էք:

Աւոյին 15 մէջիդէ եւ 10 դրուշ ենք տալու: Գրիր Մալխասին եթէ հոն են գալու, յանձնէ, եթէ ոչ մի մասը տուր, իսկ միւս մասի համար Մրգաստանի վրայ նամակ տուր տանեն եւ ստանան:

Իսկ մնացածների հետ այնպէս վարուէ ինչպէս հարկն է:

Մեր կողմից նամակ գրիր Մրգաստան ընկերներին որ սրանց համար կամ մի պաշտօն ճարեն, կամ դիւրութիւն ստեղծեն իրենց ցանկացած տեղը գնալու:

Բարեւներով  
**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ**

1905 թ. մայիս 3

Ամրոց

Առաջին երեսին Արամի կողմէ Մալխասին ուղղուած նամակ է՝ գաղտնի մելա-  
նով, որ մասամբ միայն ընթեռնելի է: Երկրորդ երեսին դարձեալ Արամ այս ան-  
գամ բաց երկտող մը կ'ուղղէ Տիգրանին համառօտ կերպով եւ քիչ մը այլաբանօ-  
րէն պարզաբանելով գաղտնի նամակին բովանդակութիւնը: Յաջորդաբար կու  
տանք զոյգ գրութիւնները:

*Սիրելի Մալխաս!*

Իբրեւ փորձ ուղարկում ենք այս Ասորի Սահակին, որը երկու ընկերով փոխադ-  
րութեամբ պիտի զբաղւի: Այս անգամ իբրեւ փորձ կը տաք մի ձիաւորին 1000-ից ոչ  
աւելին: Ասորին մեզ համար վաղուց աշխատել է եւ իբրեւ վալադ եւ բաւականի  
վստահելի է: Դրա ընտանիքն էլ հոս է, այնպէս որ ապահովութեան մասին 100-ի  
վրայ 90-ով վստահ ենք:

Սա փորձ է, որ կ'ուզենք ասորիներին միջոցով գործ տեսնել, այնպէս որ աշխա-  
տեցէք ամէն կերպ այնպէս .....

Դուք վարձատրութեան մասին ոչինչ չէք խօսի. այդ թողեցէք մեզ. դուք հոգա-  
ցէք միայն ձի եւ իւրեանց .....: Սահակի ձին մեր սեփականն է .....

\*  
\* \*

*Յարգելի պ. Տիգրան!*

Նամակաբերս մեր ծանօթներէն է. կու գայ ձեր կողմէ մեր վաճառականական  
գործերով. ինչը ում ենք ցոյց տաք մեր բարեկամ Մալխասին, որ հարկաւոր օգնու-  
թիւնը ցոյց տայ եւ շուտով ճանաչու դնէ:

Կարգադրութիւնների մասին գրւած [է] նախընթաց երեսում<sup>1</sup>, որ եթէ ուշադ-  
րութեամբ կարդալու լինիք կը հասկանաք:

Բայց դուք 1000էն աւելի չտաք եւ գնի եւ վարձի մասին չխօսէք:  
Մնացածը ինքը բերանացի կը պատմէ:

*Բարեւներով  
ԱՐԱՄ*

1905 թ. մայիս 7-ին

1.- «Նախընթաց երեսը» գաղտնի թանաքով եւ այլ գրիչով գրուած նամակ է, ուր կը յայտնուի  
նոր փորձ մը փոխադրութեան համար ատրի վալադներու միջոցով:

**Սիրելի Մալխաս!**

Ամսոյս 6-ին առաւօտեան աստրիճ\* եւ ընկերներ ապահով տեղս հասան իրենց հետ բերելով ձեր նամակը եւ 3 հազար\* նոր ծայր. գրում ես ապահովութեան մասին, ի հարկէ ցանկալի էր նման ապահովութիւնը, բայց մոռանում ես որ եթէ այդ մարդիկ 100 ոսկի ունենան, մեզ համար չեն աշխատի. մեր գործը եւ մեր ճակատագիրը այդպէս է. միայն աշխատելու ենք ծայրայեղ զգուշութիւններով գոնէ մեղմելու մեր դժբախտ պայմանները. ինչեւէ. կրկին գալիս են, այսպէս կամ այնպէս մարդիկ գործ են սկսել եւ խոստումներ են անում. այս անգամ ապահովութեան համար 5-6 ոսկու ապրանք գնեցինք, որ ծախելով դան. մի ձի էլ տւինք աւելորդ բեռի համար, որ իրենք թեթեւ վերցնեն. այս անգամ 4 հազարեճ\* աւելի չէք տայ. մանաւանդ դրանց շատ երես չտաք, ի հարկէ լաւ կը պատւէք. գնի եւ վարձատրութեան մասին ոչինչ չէք ասի եւ ոչինչ էլ չէք տայ. ամէն բան այստեղից են առնելու:

Մենաւորի գծի մասին արդէն լսած էք. առայժմ գործը կանգնեցնելու էք, մինչեւ մենք այս կողմից կը բանանք, եղած ապրանքները շտապով ներս կը քաշենք. Սաֆոյի<sup>1</sup> տեսանք 3 անգամ. երկու անգամ Շահպազը առանձին, վերջին անգամ Արամ եւ Շահպազը. ամէն բան խօսուեց, այդ մասին ապահով եղէք, ամէն դիւրութիւն պատրաստ է ցոյց տալու, միայն խնդրում է առայժմ հանգստացնել, մինչեւ ձայները լռեն: Խօսակցութիւնը բաւական բարդ էր, եւ փոխադարձ խոստումներով. մեծ մասամբ քաղաքական գոյն էր կրում. այս մասին կը գրուի Բիւրոններին: Յայտնի դէպքից յետոյ ոչինչ չէ պատահել:

Մինասը<sup>2</sup> (այսուհետեւ Ռուբէն) ապահով տեղ հասաւ, անցեալ նամակը գրւած էր նրա ձեռքով, չճանաչեցի՞ ք...

Արտաշէսի<sup>3</sup> մասին արդէն գրած ենք, նորից կրկնում ենք, նրան ուրախութեամբ կ'ընդունենք բայց այդ դժբախտութիւնը պատահեց. թող լաւ կազդուրւի եւ սպասէ մեր կարգադրութիւններին. շատ շտապելու կարիք չկայ, այստեղ առողջանալու դիւրութիւն չկայ. այստեղ գործ կայ, որ կենդանիներին էլ դիակ է դարձնում: Թող պատրաստւի առողջ մարմնով նոյնքան եւ առողջ հոգով ներս գալու եւ գործ տեսնելու: Սրանց հետ փորձ չանէ գալ, ապահովութիւն չկայ: Սրանց հետ միացնելու էք քուրդ Սահակին, որ վերջերս եկաւ դէպի ձեզ որոշ յանձնարարութեամբ. անցեալ անգամ էլ գրել էինք, բայց այդ մասին ոչինչ չէիք խօսել:

Կոմսի ուղարկած գրքերի մի մասը այս անգամ սրանց հետ ուղարկեցէք. թերթերը ինչո՞ւ այսպիսի ժլատութեամբ էք ուղարկել. Մենաւորով առայժմ ոչինչ մի ուղարկէք. պատկերը կատարեալ է դարձրել Ընձայրը իւր մի անտակտութեամբ, յետ ճամբելով մի խումբ գաղթականներ, որոնք թերթերի հետ բռնակ են Կիրճում եւ եղած կասկածների վրայ, նորերը աւելացնելու. ի՞նչ կարիք կար յետ ճամբելու կամ նրանց հետ թերթերի եւ նամակներ ուղարկելու: Չենք ստացել ոչ «Դէպի կուիւ» եւ

ոչ «Անդրոնիկէ»։ Նոր հրատարակութիւններէից չստացա՞ք. թերթեր մի քիչ շատ ուղարկեցէք...

Նախիջեւանի դէպքի մասին մի քիչ մանրամասն գրեցէք: Նամակները ինչո՞ւ չէք փոստով ուղարկում, թէ փոստերն էլ է կանգնել այդ քամբախտ երկրում. էլի փառք այստեղին: Կառավարութիւնը աւելի քան թոյլ է. արաբական շարժումը մեծ ազդեցութիւն է արել քրդերի վրայ. ամէն տեղ խօսում են...

Իշխանը առաջժամ անկարող է քարտէզի համար իւր շրջանը գծել, գործերի շատութեան պատճառով. ուղարկում ենք Վանում տարածած մի քարտէզ, իմբարուութիւն ուղարկելիք արխիւի մէջ. օգտելուց յետոյ խնդրում ենք ուղարկէք նրանց. թղթերը խնամքով կապեցէք եւ ուղարկեցէք իմբարուութեան. արխիւից արգելում է կողմնակի մարդ օգտել...

Վրէժը ինչո՞ւ չէ բարեհաճում մեր նամակներին պատասխանել:

Կոմսից մի քանի օր առաջ նամակներ էինք ուղարկել քո քուրդ\* մարդու միջոցով. մինչեւ հիմա լուր չառանք. մեզ խաբար է ճամբել որ իբր թէ նամակները ձեզ է բերել եւ պատասխան չէք տւել:

Հայրենագիտութեան Գ. գիրքը միայն գտանք. եթէ յաջողեցինք մինչեւ երեկոյ ճարել կ'ուղարկենք այս անգամ, եթէ ոչ կը մնայ առաջիկային: Մենք պատրաստել ենք քաղաքի մակարդակը շրջանի գիւղերով. շուտով կ'ուղարկենք իմբարուութեան եւ Մ. Ք.ի համար, իսկ ընդհանուր շրջանի համար նիւթեր ենք հաւաքում մանրամասն եւ ուղիղ կազմւելու. դա կը վերջանայ 3-4 ամսէն:

Ուրիշ նորութիւններ չկան:

Արամի համար անձնական նամակներ չեկա՞ն:

Բոլորիս կողմից բարեւներ յիշիր Պատւելուն, Արտաշէսին, Յակովբին եւ Մոսոյին:

Գարեգնի հասցէով բազմաթիւ նամակներ գրեցինք, բայց ոչ մէկի պատասխանը առնել չարժանացանք: Վերջին 70 ոսկին չստացանք. ուշացնելու պատճառը ի՞նչ է: Նրա հասցէով ուղարկել ենք ապրիլ[ի] հաշւեցոյցը. խնդրում ենք շուտով ուղարկէք ուր հարկն է (մէկ Արեւել., միւսը Արեւմտ. Բիւրօ): Նրանք գանգատում են, որ հաշիւ չենք ուղարկում: Այս անգամ ուղարկեցինք մայիս[ի] հաշւեկշիւը. իսկոյն ուղարկեցէք, գոնէ Արեւմտ. Բիւրոյին:

Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. մայիս 7-ին

Շամ

Յ. Գ.— Ստացած ապրանքները ժանգի եւ կեղտի մէջ թաղւած էին. ախր դա պէտք է դեռ երկար տարիներ պահուի. ինչպէ՞ս կարելի է այդքան անփոյթ վերաբերել դէպի ապրանքների կանոնաւոր պահպանութիւնը: Եթէ մնացած ապրանքներն էլ նոյն դրութեան մէջ են, մաքրել տւէք, ապա թէ չէ մի ամսէն կը փտին:

Ժեստերը<sup>5</sup> հանեցէք, որովհետեւ ծայրերը դրանց մէջ մնալով մեծ մասը դրանց

ուժից ճեղքւում է: Այս անգամ բազմաթիւ ճեղքւածներ եւ թափւածներ կար: Աստուծոյ սիրոյն ապրանքների լաւ պահպանելու վրայ մեծ ուշադրութիւն դարձրու: Անցեալ նամակում գրել էիր որ հեռանալու ես Սամսոնի հետ. այդպիսի քայլ չանէք, քանի որ Մենաւորը փակելով թերեւս այդտեղից էլ հնարաւոր լինի բան անել. գոնէ Պատւելուն պատուիրելու ես քեզնից յետոյ մեր պահանջներին բաւարարութիւն տալու:

Գարեգնի գծով<sup>6</sup> էլ մարդիկ ենք ուղարկել ապրանքների. չգիտենք ի՞նչ եղան: Սրանց միշտ նոր ծայր կը տաք. հները իբրեւ շատ գործածական եւ թանգ աւելի գրաւիչ են նրանց համար...

Ճարեցինք Հայրենագիտութիւն Բ. Գ. գիրքը:

ՆՈՅՆ

Կնքւած ստացագիրը ուղարկելու էք նամակի հետ վրէժի ընկերներին:

Երկու ստացագրերը [?] Մուշեղին է, շուտով ուղարկեցէք Խմբագրութեան, մեր հաշկեցոյցի հետ: Վահանի նամակն էլ շուտով փոստան ձգէք:

1.- Սաֆօ – հայտարանցի քիլոտ ցեղի պետերէն Մեհմէտ բէկի կեղծանունն է. հրամանատար էր թրքական Համիտի զօրքին:

2.- Մինաս իսկական անունն էր Ռուբէն Մէր Մինասեանի, որ այդ օրերուն Ատրպատականէն անցաւ Վան:

3.- Արտաշէսը (Յովսէփեան) Մալխասն է:

4.- Կիրճ – Քեաղուկ գիտ, Բերկրի գաւառակին մէջ:

5.- Ժեստ, զեստ – փամփուշտի տուփ:

6.- Այսինքն՝ Ս. Թադէի (Մենաւոր) զիծը փակուելու պարագային, փոխադրութեան գործը կարելի ըլլայ շարունակել այդտեղէն (Խոյ): Գարեգինի զիծը՝ Սալմաստէն է: Գարեգին եւ Սամսոն միեւնոյն անձնաւորութիւնն է – Թադէոսեան Ստեփան:



**Վրէժի Կ. Կոմիտէին**

**Ընկերներ!**

Թէեւ ապրիլ 26-ին ձեզ արդէն նամակ ենք գրել, բայց պայմանները այնպէս են դասաւորուած որ մի քանի անմիջական կարիքների մասին մենք ստիպուած ենք կրկին գրելու: Նամակը ուղարկում ենք յատուկ ստրիանդակով\*, որ սպասում է Մե-նաւոր կամ Աւարայր ձեր վերջնական պատասխանին:

Ա. Արդէն մի քանի անգամ գրել եւ շեշտել ենք այն որ ժողովուրդը իւր ինքնա-պաշտպանութեան\* համար բաւականի զէնք\* է ձեռք բերել, բայց մեծ մասը մանր պակասութիւնների հետ ունեն եւ մի մեծ պակասութիւն. մեծամասնութիւնը քոր-ցընում\* են. մի բան որ գերոյի է հաւասարեցնում գէնքը: Եթէ ձեզ համար թանգ է մի ամբողջ ժողովուրդի ինքնապաշտպանութեան\* խնդիրը շտապեցէք հէնց այս ան-գամ, այս ստրիանդակի\* հետ, ուղարկել պատրոննիկ\*<sup>1</sup> փորելու սարքկա\*<sup>2</sup> որ գոնէ Շահբազը կարեցածին չափ ուղղէ պակասութիւն ունեցողները. եթէ այդ քայլը չա-նէք, պիտի իմանաք որ ջուրը պիտի թափւի այն բոլոր ջանքերը, ինչ թափել են ձեր խեղճ ընկերները այսքան երկար ու ձիգ տարիներ. հասկանալի է որ ժողովուրդի ձեռքը եղածները բերդանկաներ\* են...

Նոյնիսկ պահանջը այնքան ստիպողական է, որ կը խնդրէինք ձեր ձեռքի տակ ունեցածները ուղարկել, մինչեւ ձեզ յարմարը կրկին ձեռք կը ձգէք:

Բ. Նոյնը, թերեւս աւելի գէշ վիճակի մէջ են մեր անմիջական ձեռքի տակ եղած կազմակերպական մօսիւններ\*: Եթէ նրանց համար էլ սարքկա\*\* չղրկէք պատրոն-նիկ\*\* փորելու համար, մեծամասնութիւնը անգործածելի կը մնան, եւ հոս Բարձ-ր[աւանդակ]ից աւելի խիստ վիժում կը լինի:

Նոյնիսկ մեզ համար այսօր հարցական է, թէ մեր ընկերները լաւ գիտենալով մեր ձեռքը եղած ապրանքները ի՛նչ մալ են, ի՞նչ տրամաբանութեամբ միայն գօռ են տա-լիս ծայրերին, առանց հասկանալ ուզենալու, որ առանց հրացանների\* ի՛նչ նշանա-կութիւն ունեն ծայրերը: Միշտ այդպէս է եղել մեր բոլոր գործերը. մենք նոյնիսկ հնա[րա]ւոր եղած պարագայում անգամ մեր քայլերի մէջ չենք կարողանում ներ-դաշնակութիւն մտցնել: Օր[ինակ] ինչ մի բան էր Վրէժի արիստանոցի\* համար, որ մինչեւ հիմա չկարողացաւ գոնէ երկու սարքկա\*\* պատրաստել եւ ներս ուղարկել: Մարդ կարմրում է երբ մտածում է որ Վրէժում ունենք մի անւանի արիստանոց\*, հմուտ վարպետներով\*, եւ այդ չնչին պահանջը մնում է «ձայն բարբառոյ անապա-տի». իսկ եթէ հերթը գայ խօսքին, մանաւանդ կուսակցական շրջանակներում, մին-չեւ 7-րդ երկինք կը բարձրացնենք նրա նշանակութիւնը:

Ուրեմն մեր անմիջական պահանջն է, մէկ հնի եւ մէկ նորի սարքկաները\*\*. ի հարկէ չէք մոռնանայ թէ՛ մաքրելու եւ թէ կտրելու մասերն էլ ուղարկել. մէկը առանց միւսի անպէտք կը լինէր...

Գ. Մեր նոր կոթերի մեծ մասը մեր\* եւ գաութները\* փչացած են. եթէ մինչեւ աշուն մեզ 30 գաութը կարոպկա\*\* չուղարկէք, 30 զէք\* պիտի մնայ անգործադրելի:

Դ. Բացի վերոյիշեալ խոշոր մասերից, մանր մասերի անմիջական կարիքներ կան. 1- Կողքի եայ, 2- փոքրիկ վինտաներ, 3- կատու, 4- ասեղ, 5- պրափին եւայլն եւայլն:

Մեր պահանջներից առաջին երկուսին բաւարարութիւն էք տալու հէնց այս սուր-հանդակի\* հետ, որը եկել է յատուկ դրա համար եւ պիտի սպասէ մինչեւ ձեր պատասխանը. իսկ մնացած պահանջները, իբրեւ ժամանակ պահանջող, թողնում ենք ձեր բարի բայց ընկերական ցանկութեան:

Ընկերներ! անկեղծ կերպով հաւատացնում ենք ձեզ, որ եթէ մեր այս մինիմալ պահանջներին դուք կամ առհասարակ արտասահմանը մինչեւ աշուն բաւարարութիւն չէք տայ, վճռել ենք այդ բոլոր փասպանդեայ<sup>4</sup> կոթերը, ինչ գոհողութեամբ, ինչ դժուարութեամբ լինի, պիտի յանձն առնենք եւ մի ռուբլով\* ուղարկենք մինչեւ Սարուստան, ի ցոյց մեր դրսի մեծախօս ընկերների:

Մեզ մօտ առանձին նորութիւններ չկան. դրութիւնը նոյն է ինչ որ անցեալում: Պարտքերը\* մնում են նոյնութեամբ, եկած դրամները հազիւ ծածկում են ընթացիկ ծախսերը. նոյնիսկ վերջին օրերը պարտքերով ենք ապրում: Չէ՞ր կարելի արդեօք մի 100 ոսկու փոխանակութիւն անել եւ մեզ ուղարկել, որ այդ պարտքերից ազատուենք. ախր մեր պատիւն էլ ձերն է...

Փոխադրութիւնը\* այս տարի աւելի քան յաջող է. մինչեւ այժմ ստացել\* է մօտաւորապէս քսան հազար ծայր\*, հին եւ նոր: Եւ բաւականի խմոր ու պարագաներ:

Ձեզ մօտ եղած ելեկտրական ապարատները\*\* չուտով ուղարկէք, Մենաւորով:

Մեզ համար եթէ ուղարկէք մի քանի էլեկտրական գրպանի լամպաներ, բայց շուտ չփչացող, շատ լաւ կը լինի: Ականներ փորելու\* ժամանակ շատ կարեւոր է. կամ նման մի բան ուղարկեցէք, բայց շուտ փչացող չլինի:

Այստեղից Կոմսի հետ եկաւ հօտ՝ Պօղոս անունով մի տղայ. նա հո՞ղ է եւ ինչ դրութեան մէջ է: Հաջի Լեւոնի առողջութիւնը ինչպէ՞ս է. ինչու չի նամակ գրում. հաղորդեցէք նրան ջերմ համբոյրներ:

Համբոյրներով՝  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵ

1905 թ. 10-ին մայիս, Շամ

Յ.Գ.— Եթէ մեզ համար մի քանի «Դէպի կռիւ», «Անդրոնիկէ», մանաւանդ Ահա-րոնեանի գրած քերից ուղարկէք, շնորհակալ կը լինենք. գոնէ մէկ-մէկ հատ<sup>5</sup>:

ՆՈՅՆ

- 1.- Փամփուշտ:
- 2.- Փամփուշտ փորելու գործիք:
- 3.- Փակադակներ. փամփշտանոցի անցքը փակելու եւ բանալու յարմարանք:
- 4.- Հնամաշ, քափուելիք:
- 5.- Նամակը մակագրուած է «Պատասխանած յունիս 9»:

**Սիրելի Ընձայր!**

1- Մայիս 9-ին ստացանք — երեւի Պարապի ձեռքով ուղարկված — քո մի անթւա-  
կիր նամակը: Տնաչէն, գոնէ թիւ դրէք որ իմանանք երբ է գրուել կամ երբ է եկել...

2- Մենք խնդրել էինք որ Աւարայր չերթաք ոչ թէ այն պատճառով որ քէֆի կ'եր-  
թաք, այլ այն պատճառով որ Մենաւորը առանց մարդու չթողնւի. ահա մեր միակ  
նպատակը:

3- Յայտնում ենք խորին ցաւակցութիւն քո տանջանքների եւ չարչարանքների  
համար. ի՛նչ կարող ենք անել. մեր ճակատագիրն է, պիտի քաշենք:

4- Որպէսզի կարող լինենք մեր անմիջական հսկողութեան տակ պահել թէ սուր-  
հանդակներին եւ թէ փոխադրութիւնը, ատոր համար հարկաւոր է որ մանրամաս-  
նօրէն թէ դուք եւ թէ մենք իմանանք ի՛նչ է կատարուում ամբողջ գծի ընթացքում:  
Դուք ինչքան որ դրամ կամ այլ նպաստ էք տալիս սուրհանդակներին, պիտի գրէք  
մեզ. մենք էլ ձեզ օրինակ, այս անգամ Պարապը կը գրէ կիրճեցիներին մէկ փարդ  
էք տուել (5 դրոս), իսկ իւր չորս մարդուն՝ ոչինչ. որքան ճիշտ է, կամ իբրեւ ի՞նչ  
էք այդ 15 դրոսը տւել:

Անցեալ օրը երկու նոր կոթ էք ուղարկել, բայց չիմացանք ի՞նչ N. չէ որ կոթերի  
NN-ը գրելու է. եւ վերջապէս այդ կոթերը պիտի գան հոս, թէ մնալու են Կիրճ կամ  
Աւետարան, այս էլ չհասկացանք: Ահա խնդիրներ, որոնց մասին պիտի աւելի քան  
ընդարձակ եւ մանրամասն գրէք:

Պուկրէշտին 3 ոսկի էինք տւել (մէկը Արամը Գրիգորին, մէկը Ֆարհատը եւ մէ-  
կը Կոմսը), իսկ անցեալ անգամ 20 մէջիդէ կրկին նրան ուղարկեցինք Բրախուլամի  
հետ: Այդ հաշիւները պիտի ներկայացնեն եւ ձեզ. չէ՞ որ դուք անմիջապէս կապված  
լինելով Աւետարանի հետ հսկելու աւելի դիւրութիւն ունէք: Վերջապէս ի՛նչ վստա-  
հութիւն տգէտ մարդկանց վրայ: Պիտի մեր գործերը այնպէս դասաւորենք, որ ոչ  
ոք հնարաւորութիւն չունենայ ջուր պղտորել եւ ձուկ որսալ: Ուրեմն մանրամասն  
հաշիւ էք պահանջելու Պուկրէշտից: Զեզ մօտ դրամ կա՞յ թէ ոչ:

5- Թաթարը եթէ գայ մեզ եւ ձեզ մօտ անկեղծութեամբ իւր մեղքերը խոստովա-  
նի, մանաւանդ կորսւած ապրանքների տեղը ասէ, բնականաբար կ'արժանանայ  
ներման...

6- Պուկրէշտի ձեռքով եկած նամակները առել եւ Բրախուլամի հետ էլ պատաս-  
խանած ենք: Ապրանքները մեզ չհասաւ: Առայժմ կ'ուղարկենք 1 ձի քուրդ Սահակի  
հետ:

7- Խնդրում ենք, այսուհետեւ ոչ մի ապրանք բացի ծայրերից (եթէ հնարաւոր է  
եւ ծայրեր) առանձին կապոցների մէջ դնել եւ կնքել. նոյնը եւ ռեվոլյները:

8- Դեռ մինչեւ հիմա չենք ստացել Յ[արութիւն]ի հետ եկած, Աւետարան մնացած  
7 կրականին. նոյնը եւ Կոմսի հետ բերւած եւ յետ ուղարկված 5 հարւածանին: Եթէ  
կապոցների մէջ լաւ տեղաւորէք, տեղ կը հասնի շուտով. եթէ ոչ ամիս կը քաշէ:

9- Քանի որ «Դէպի կուի» եւ «Անդրոնիկէ» կորան, խնդրիր մեր կողմէն Մալխասին եւ Գարեգինին որ կրկին ուղարկեն:

10- Կորսուած 300 ծայրը ո՛ր հաշւից ենք անելու:

11- Նամակները կանոնաւորապէս ստացուում է, բայց զարմանում ենք Մալխասի եւ Գարեգինի երկար լուռութեան վրայ. չլինի թէ նրանց նամակները շուտով տեղ չէք հասցնի: Կամ թերեւս գնացել են Վրէժ. ի՛նչ պատահեց դրանց:

12- Մեր միակ խնդիրն է Ընձայրին եւ մնացած ընկերներին, որ նրանք աշխատեն հանգամանքէն լաւ օգտուել եւ որքան կարելի է շուտ ապրանքը ներս մուծել. մանաւանդ հաշիւները մանրամասն պահել եւ մեզ գրել: Ահա մեր ցանկացածը:

13- Եթէ կ'ընդունէք Թոմասի եղբօր հետ 4-5 հոգի էլ ուղարկել, այն ժամանակ նրան էլ հետը կը միացնենք:

Շանթին եւ բոլոր ընկերներին բարեւներ եւ յարգանքներ ունենք. պ. Վարդան եւ Արամ կը խնդրեն Շանթէն եւ մնացած ընկերներէն, որ լաւ աշխատեն եւ այս տարի մեր երեսը պարզ անեն:

14- Տղաները ինչո՞ւ կ'երթան արտասահման. ի՛նչ հասկցանք. շատ աշխատեցին:

15- Այդ ինչպէս դառաւ որ այդ լիբբ Ռէսը տեղը մնաց: Նրան պ. Վարդան նամակ է գրելու եւ եթէ չկանոնաւորեց, այստեղից մարդ կ'ուղարկենք եւ շան պէս կը սատկացնենք:

Վերջերս Պուկրէշտից նամակներ կամ լուր չառանք, իսկ ապրանքները քնած են Աւետարան. ինչո՞ւ չեն հասցնում Կայան<sup>1</sup>:

Կայանի գործերը այսուհետեւ աւելի ապահով եւ կանոնաւոր կը լինի. դուք անհոգ եղէք:

Եթէ Արամը անձնական նամակներ ունենայ, իսկոյն ուղարկեցէք: Առհասարակ նամակները շորէ լաթի մէջ կապեցէք, որովհետեւ թուղթը ճանապարհին փչանում է:

Բարեւներով՝  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905թ. մայիս 10-ին

Շամ

1.- Աւետարան – ծածկանունն է Բերկրի գաւառակի Խաչան գիւղի. Կայան՝ նոյն գաւառակի Պատիկ Գեղի:

**Արեւել[եան] Բիւրոյին**

**Ընկերներ!**

Արդէն Գիսակ<sup>1</sup> մանրամասնաբար դրուծիւնը պարզել է, կրկնելը աւելորդ է. մի բան որ մեզ շատ է զարմացնում, դա այն է, որ մենք կարծում էինք թէ միայն մեր յարաբերութիւններն են դադրած, բայց կ'երեւայ որ խեղճ դուրանցիք մեզնից աւելի դժբախտ պարագաների տակ են. Տատրակ<sup>2</sup> կը գրէ, որ յունւարից մինչեւ մայիս 1-ը 20 նամակ են գրել եւ ոչ մէկի պատասխանը բախտ չեն ունեցել առնել. ինչո՞վ բացատրել... Մենք արդէն մեր տեղեկագրի մէջ դրել ենք մեր պայմանները. այժմ միայն այսքանը կ'ասենք, որ եթէ մեր դրած ժամանակին մեր մինիմալ պահանջներին բաւարարութիւն չտրւի, Դուրանին եւ մեզ նամակներ չգրուի, մենք բացի Կոմսի հետ դրած մեր պայմաններից, այս անգամ այսքանը կ'ասենք, որ եթէ դրուծիւնը շարունակեց, պիտի չըջաբերական բաց թողնենք, «Արտասահմանի ընկերներին» եւ բացարձակ պիտի դնենք դրուծեան բոլոր այլանդակութիւնը. բաւական է որքան իրողութիւնները մնացին քողի տակ:

Իշխանը արդէն գրել է, նորէն շեշտում ենք որ Սամսոնին<sup>3</sup> պիտի թոյլ տաք մինչեւ աշուն ներս գալու, նրա ներկայութիւնը շատ կարեւոր է:

Ստացել ենք Վիշապէն<sup>4</sup> (Արեւմտեան Բիւրոյի հաշւին 2000 Փ.) 86 օսմանեան լիրա, իսկ Մրգաստանէն 222 ոսկի, Օննիկի ձեռքով, 70 ոսկի էլ Սամսոնն է ուղարկել. դրանք բոլորն էլ յատկացրած է տեղական ընթացիկ պէտքերուն: Դուրանից դրամ էին խնդրել մեզնից, ընկերները անօթի մեռնում են, չենք կարող անարբեր մնալ, որովհետեւ պիտի երկրում լինել, գործերով ու զինւորներով չըջապատւած լինել ու դրամ չունենալ, որ մարդ կարողանայ հասկանալ ուրիշի դրուծիւնը: Բարեբախտաբար հեռու էք այդ դրուծիւնից...

Ի՞նչ ունէինք 400 ոսկու պարտքի վրայ աւելացրինք կրկին 50 ոսկի պարտք. կրկին փոխառութիւն անելով այդ 50 ոսկին ուղարկեցինք Դուրան. ամօթ է մեզ, ընկերներին սովամահ խեղդել: Է՛հ պատրաստ ենք այս երկու ամսւայ հաշիւները տալ, բայց որին, ոչ մի կողմից լսող չենք տեսնում, այդ կը մնայ մինչեւ ձեր ջին պատասխանը:

1.- Արամի ձեռքով գրուած Վասպուրականի Կ. կոմիտէի այս գրութիւնը կ'ընկերանայ Գիսակի (Յ. Մերենկիւլեան) կողմէ Արեւելեան բիւրոյին յղուած մէկ ընդարձակ ու սրտառուչ նամակի, Վանի բանտէն գրուած, ուր կը պարզուին շրջանի նիւթական եւ այլ կարիքները:  
2.- Տատրակ – ծածկանունն է Տարօնի (Դուրան) վաստակատր գործիչներէն Գեղամ Տէր Կառապետեանի (1865-1918):  
3.- Սամսոն – ծածկանուն Ստեփան Թադէոսեանի, կուս. գլխաւոր գործիչ Ատրպատականի մէջ, որուն Վասպուրական անցնելու արտօնութիւնը կը պահանջուէր բիւրոններէն:  
4.- Վիշապը Կ. Պոլիսն է:

Գոնէ յանձնարարեցէք մրգաստանցիք գրեն, կամ եթէ ուղղակի անյարմար է մեզ գրելը, գրեցէք Մինարէթի եւ Աւարայրի վրայով:

Մեր դրուժեան մէջ փոփոխութիւնն չկայ. մասնակի կոտորածները թէ հեռաւոր գաւառներում եւ թէ քաղաքի շուրջը շարունակւում են. անցեալ օրը [մտել են] քաղաքի մօտ գտնուող Բերդակ գիւղը եւ սպանել են մի հայի՝ արտը հերկելու ժամանակ, առանց բաւարար պատճառի. խեղճին սպանել են քարով:

Փոխադրութիւնը աւելի քան յաջող է. դրան կրկնակին կը լինէր եթէ դրամ ունենայինք. այս բոլորի մասին մանրամասն կը գրւի եռամսեայ հաշւեցոյցը ներկայացնելու ժամանակ:

Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. մայիս 13-ին

---

Փաստ. 662-358

82

Սիրելի Տիգրան!

Սրանք վերջին խումբն են, սրանց հետ վերադառնալու էք:

Ուրիշ նորութիւններ չկան, գործերի մասին՝ անձամբ:

10-նոցը բոլորովին փչացել է:

ԱՐԱՄ

1905 թ. մայիս 16-ին

**Միրելի Մալխաս!**

Միմասը\*<sup>1</sup> յաջող տեղս հասաւ\*: Չարմանում ենք ձեր լուսթեան վրայ, այսքան նամակներ եւ ոչ մի պատասխան. դա՛ նոյնիսկ տարօրինակ է: Միւս կողմից էլ նախագուշակութիւններս արդարացաւ, լսեցինք որ Վրէժ էք գնացել: Ի՞նչ կայ որ այդքան շուտ-շուտ գնում էք Վրէժ: Ա՛խր մի նախկին որոշումները ի գործ դրէք, յետոյ նոր որոշումներ տւէք. ի՞նչ ուզում էք արէք, ի՞նչ որոշում ուզում էք տւէք պայմանաւ, որ դրանք համաձայն պիտի լինեն մեր պահանջներին եւ երկրի ներկայ դրութեան: Հազար անգամ գրել ենք, կ'երեւայ որ հազար անգամ նորէն պիտի գրենք, որ առանց մեր հաւանութեան ոչ մի մարդ չպիտի ուղարկէք, առանձնապէս առաջժմ զինտրական\* ուժեր, մանաւանդ անուն հանածները երբեք չէք ուղարկելու: Իբրեւ նախապատրաստութիւն չենք ուզում զինտրական\* ուժեր կենտրոնացնել\* որոնք կապած են միշտ աղմուկների հետ: Ինտելիգենտների մասին արդէն գրած ենք, դրանց մասին նախ պիտի գրէք թէ ինչ ուժեր են, ի՞նչ ընդունակութեան տէր են, ի՞նչ ֆիզիքական կազմ ունեն. սրանց մէջ չեն մտնելու այն ընկերները որոնց մասին մենք պահանջ ենք դրել Բիւրոներուն. իսկ եթէ այդ մարդկանց դէմ դուք կամ Վրէժը առարկութիւններ ունէք, կարող էք գրել մեզ, պատասխանը ստանալ եւ այնպէս վարել: Այդ որոշումը ձեզ յայտնւած էր Յամիս առաջ: Էլի վեր էք կացել, առանց մեր համաձայնութեան Միմասի\* հետ ուղարկել Արտաշ\* անունով մէկին, որը մի դժբախտ արկածի պատճառով մնացել է Աւետարան\*: Է՛հ ուրեմն այսքան գրելը ի գուր էր. եթէ երկրի այս մասի ընկերները մենք ենք, եթէ կ'ուզէք մենք գործ կատարենք, դուք էլ պիտի յարգէք այն որոշումները եւ օրէնքները, ինչ որ մենք դրել եւ գրել ենք ձեզ, ի նկատի ունենալով երկրի եւ գործի շահը, իսկ եթէ արտասահմանի համար դրանք գոյութիւն չպէտք է ունենան, մենք ոչինչ չունենք, թող մեզ գրեն, մենք իմանանք մեր անելիքները: Մենք ստիպւած ենք նման դէպքերում յետ ուղարկել եկողներ, բայց մեզ մի ստիպէք անել այդ քայլը, որով կը հարւածենք թէ եկողին եւ թէ գործը. սա լինի առաջին եւ վերջին քայլը:

Լսեցինք որ Մալուհը\*<sup>2</sup> եւ Հաջին եկել են Մինարէթ եւ կ'ուզեն ներս գալ եւ գնալ Ախլաք\*: Որովհետեւ այնտեղ էլ գտնուում է մեր անմիջական հսկողութեան տակ, ուրեմն պարտք ենք համարում գրել այնտեղի վերաբերեալ մեր որոշումը:

Ճիշտ է այնտեղ մարդ է հարկաւոր, այն էլ մի ուժեղ ղեկավարող ընկեր, բայց նախքան Մալուհի\* հոն գնալը պիտի յարգւի մեր հետեւեալ պահանջը:

Ա. Այնտեղ հարկաւոր է Մալուհի\* հետ մի ինտելիգենտ ուժ, մէկը առանց միւսի անպէտք է եւ մենք անկարող ենք ընդունել:

Բ. Մինչեւ մենք մեր գրած դրամական պահանջների բաւարարութիւն չստանանք, հոն չենք կարող ընկեր պահել եւ գործ ստեղծել: Չաւուշը\*<sup>3</sup>, իւր ընկերները եւ հոն գտնւած զինուորները առանց դրամի սովամահ են լինում, մեզնից են դրամ ու-

զուամ, իսկ մենք որտեղի՞ց կարող [ենք] ուղարկել, քանի որ մենք էլ նոցանից անօթի ենք:

Այլաթի\* ընկերները, նոյնպէս եւ Չաւուշը գրում են որ կ'ուզեն մեր կողմերը գալ. մարդիկը գլխի տակ քար դնելու տեղ չունեն, նորերը աւելացնել, սարսափելի քայլ կը լինի, նոյնիսկ դաւաճանութիւն:

Ուրեմն հասկանալի չեղա՞ւ որ երկրի ընկերներ բարոյական եւ տնտեսական կրիգիսի մէջ են. դեռ այս կնճռոտ խնդիրները չորոշած, ինչ բարեխղճութեամբ մենք նոր գործ ստեղծենք, հոն ընկերներ ընդունենք եւ դրանց գլուխն էլ բալի տակ դնենք: Թէեւ լսեցինք, Դ[աշնակցութեան] Խ[որհուրդի] որոշումները, բայց հեռու ենք հաւատալուց որ այդ որոշումները գործ[ի] վեր կ'ածուի. տեսանք արդէն Ընդ-ժողովի որոշումների գործադրութիւնը: Երբ Յ ամիս անընդհատ նամակ էլ ստաց-ւում հոս, երբ Դուրանի 20 նամակին յունւարից մինչեւ հիմա ոչ մի պատասխան չտւեցին, երբ մենք կասկածում ենք անգամ դրսում ընկերներ ունենալու մասին, այսպիսի պարագաներում նոր գործ ստեղծել չենք կարող, արտասահմանեան յոյսերին ոչ մի կոպէկի արժէք չենք տալ, մինչեւ այդ յոյսերը ուշալ հողի վրայ չդրուի:

Կարճ. առանց մեր համաձայնութեան, առանց մեր թոյլտուութեան ոչ մի մարդ չպիտի ուղարկէք: Մնացած խնդիրների մասին բազմաթիւ նամակներ ենք գրել, նորից կրկնել աւելորդ են[ք] համարում: Միայն սպասում ենք ձեր (քո, Գարեգնի եւ Վրէժի) վերջնական պատասխանին մեր դրւած խնդիրների եւ պահանջների: Խնդրում ենք նոյն խնդիրները մեր կողմից էլ դնէք Մ. Ք. եւ Արեւմտեան Բիւրօ: Նրանց արդէն մենք նամակներ ենք գրել, մինչեւ պատասխան չստանանք, նորերը գրելը ոչ միտք ունի եւ ոչ նպատակ:

Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. մայիս 18-ին

- 1.- Մինաս – Ռուբէն Տէր Մինասեան:
- 2.- Սեպուհ – ծանօթ խմբապետ, հետագային զօրավար. իսկական անունը Արշակ Ներսէսեան (1872-1940):
- 3.- Խօսքը Գեորգ Չաւուշի մասին է:



**Սիրելի Ընձայր!**

Միճաւը\* յաջողութեամբ տեղ հասաւ. նամակագրութիւնը փառաւորապէս դադարեցրիք, չգիտենք ինչ համոզումով:

Հազար անգամ գրեցինք որ ուժ տւէք փոխադրութեան\*, բայց մենք ասացինք մենք լսեցինք. ամէն դիւրութիւն ստեղծեցինք, ձեր բոլոր պահանջները կատարեցինք, Պոլկրէշտին դրամ ուղարկեցինք, բայց էլի այս ամիսը վերջանալու վրայ է, բայց համարեա ոչինչ չարիք: Բացարձակ կերպով դժգոհութիւն ենք յայտնում:

Յետոյ լսեցինք որ դուք պատճառաբանում էք որ ապրանքները Կայան\* մնալու վրայ մտածում էք, եւ ասել էք որ փոխանակ հոն մնալու աւելի լաւ է Մեճաւոր\* մնայ. չգիտենք ի՞նչ տրամաբանութեամբ այդպէս էք մտածում, բայց այսքանը կ'ասենք, որ ապրանքները հոն մնալու մասին հէջ մի մտածէք, որովհետեւ մենք ամէն դիւրութիւն ունենք այնտեղից դէպի մեր կողմը քաշելու. վերջապէս այդ մեր պատասխանատուութեան տակ եղած շրջան է, դուք մինչեւ հոն հասցրէք եւ հաւատաքէք որ հաւասար է հոս հասնելուն:

Քանիցս գրեցինք որ առանց մեր թոյլտուութեան չպիտի ոչ ոքի ներս ուղարկէք. էլի վեր կացաք Միճաւի\* հետ ուղարկեցիք մի ուրիշին, որ մի դժբախտ դէպքի պատճառով մնաց Աւետարան: Սրանով վերջնականապէս յայտարարում ենք, որ եթէ հող մարդիկ կը գան ներս անցնելու, առաջ դրանց մասին նամակ կը գրէք, մեր համաձայնութիւնը կ'առնէք, յետոյ միայն թոյլ կը տաք ներս գալու. այլապէս եկողներին յետ պիտի ուղարկենք:

Լսեցինք որ Հաջի Գէորգը\* պիտի դայ ձեզ մօտ եւ այդ տեղից էլ անցնի հոս: Վերջնականապէս յայտարարում ենք եւ նրան որ չենք կարող ընդունել, դիւրութիւններ եւ հնարաւորութիւն չունենք պահելու: Եթէ նրանք անգամ փաստաբան[են] որ վրէժի կամ այլ տեղերի պատասխանատու մարմինների կողմից են յանձնարարուած, նշանակութիւն չպիտի տաք: Հաջին կարող է ասել որ պիտի անցնի Իշխանի\* քով, նրա կողմից էլ յայտնում ենք որ չենք կարող ընդունել:

Աստուծոյ սիրոյն փոխադրութիւնը\* շտապեցրէք քանի դիւրութիւն եւ հնարաւորութիւն կայ:

Նամակները շուտով ուղարկեցէք ըստ պատկանելոյն:

Բարեկներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. մայիս 20-ին

**Միրելի Գարեգին!**

Բազմաթիւ նամակներ ենք գրել Մենաւորով եւ քո սուրհանդակով, բայց մինչեւ օրս պատասխան չառանք:

Այս քուրդը\* մեզ հետ խօսեց փոխադրութեան\* մասին. մենք երաշխաւոր ուզեցինք, բայց ասաց որ ձեր մօտ եղբայրներ ունի եւ դուք լաւ ճանաչում էք նրանց եւ կարող է երաշխաւոր տալ: Գալիս է. եթէ խելքերնիդ բան կտրեց եւ երաշխաւոր տւաւ կամ վստահացուց, կարող էք գործի դնել, ի հարկէ սկզբէն որոշ վերապահութեամբ: Մենք ոչինչ չուենք, մեզ ծախու ապրանքներ բերել է ու մեզ վրայ ծախել է:

Միմասը\* ապահով տեղ հասաւ: Ընկերը մնացել է մի դժբախտ արկածի պատճառով Աւետարան\* տեսնենք երբ կը գայ:

Այսօր մի դժբախտ լուր առանք, որը խիստ կ'ազդի մեր գործի վրայ եւ երեւի վիժմունքներ կը լինի: Բերկրիում\* բռնել են 2 մար[դ] բաւական քանակութեամբ նոր ծայրերով. երեւի մերոնցն են. մանրամասնութիւններ դեռ չենք առած: Աստուած վերջը բարի անէ: Հակառակ պարագա[յի]ն շատ ցաւալի է լինելու:

Նամակները շուտով ուղարկէք ըստ պատկանելոյն. Ջրաբերդի հասցէն սեւ թանաքով գրէք:

Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. մայիս 21  
Շամ

**Ա. Ենթակոմիտէին**

1.- Չալիկին եւ իւր ընկերին իսկոյն ուղարկեցէք մեզ մօտ տեսակցելու համար:

2.- Մոսինի հրացանը կը թողեն ձեզ մօտ, դուք միայն կը տաք ստացագիր եւ կը պահէք մինչեւ մեր կարգադրութիւնը:

3.- Եթէ կայանցի Գարեգինը ձեր կողմն է կամ Հնադարեան, իսկոյն ուղարկեցէք հոս:

4.- Իշխանի ուղարկած ծպտեալներին տեղաւորեցրէք մինչեւ մեր կարգադրութիւնը, նրանց համար անելու էք ամենաանհրաժեշտ ծախսերը, չայ եւ շաքար չէք տայ:

Ուրիշ նորութիւնների մասին յատուկ սուրհանդակով տեղեկութիւն տւէք:

Բարեւներով

**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ**

1905 թ. մայիս 22-ին

**Միրելի Գարեգին!**

Նամակաբերը ձեզ ծանօթ սուրհանգրվալի\* որդին [է], որ խնդրում է մեզ միջնորդենք քեզ որ իրեն, ինչպէս իւր հօրը, չմերժենք գործ տալ. պատրաստականութիւն է յայտնում ամէն կերպ օգտակար լինել: Ծանօթները պատմում են որ սա շատ անգամ առանց հօրն էլ օգտակար է եղել. ուրեմն հարկ եղած ժամանակները ի նկատի ունեցէք եւ միշտ օգտակար: Սա արդէն միշտ բերել է ներս նամակ\*: Եթէ Գրիգոր Վարդանեանը\*<sup>1</sup> շուտով գալու լինի հող, թող սպասէ մինչեւ մեր վերջին նամակը իրեն:

Շահապազ կը խնդրէ որ քեզ մօտ եղած բերդանի\* պատրօննիկները (փորելու գործիք) ուղարկես ժողովրդական ապրանքները շտկելու համար:

Խնդրում ենք ձեզ շուտափոյթ կերպով կատարել մեր այս յանձնարարութիւնը. շուտով մի նամակ գրեցէք Ջրաբերդ եւ յայտնեցէք որ մենք այստեղից մի քանի հայերի\* եւ քրդերի\* միջոցով ուզում ենք փոխադրութիւն անել ուղղակի Պարտիզաւանից – Կաղզուանից\* –: Թող նրանք իմանան եւ պաշտօնական կերպով գրեն Պարտիզաւան որ եթէ մարդիկը գնալու լինեն հոն, ընդունեն եւ անմիջապէս ճանապարհ դնեն. մենք կը գրենք թէ ի՞նչ պիտի տան նրանց. թող նրան 2-4 փութ պատրաստեն, որ հասած ժամանակը էլ չսպասեն:

Թող ձեւականութիւնները մի կողմ թողնեն եւ նման պահանջներին բաւարարութիւն տան. դա շատ ապահով եւ կարճ զի՞ծ է եւ իրանք էլ շատ ճարպիկ մարդիկ են:

Եթէ Մ. Ք. [ի] համաձայնութիւնը առնելու են, թող նախապէս առնեն, որ նրանք երկար չեն կարող սպասել հոն:

Ուրիշ նորութիւն չկայ. արդէն գրել էինք որ Մենաւորի գծի վրայ 5 հարիւր\* ծայր է բռնուել եւ ընկերներից շատերն էլ կամ վտանգւած են կամ բանտարկւած, առայժմ անորոշ դրութեան մէջ է: Երեւի մի ամսու չափ այդպէս էլ կը մնայ:

Քեզ բազմաթիւ նամակներ ենք գրել բայց չարժանացանք ոչ մէկի պատասխանը առնել: Ի՞նչ է պատահել որ չէք գրում: Գրեցէք Վրէժ որ Դ[աշնակցութեան] Խ[որհուրդի] արձանագրութեան զաղանի քանաքով\* գրւածը քո միջոցով իսկոյն մեզ ուղարկեն. Կոմսի գրած չստացանք:

Սպասում ենք [ք] N4 թերթի եւ Հայրենիքների: Ինչո՞ւ այսքան ուշացրիք:

**Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ**

1905 թ. մայիս 24-ին  
**Շամ**

1.- Գրիգոր Վարդանեան – անցազրային անունն է Օտապաշեան Պօղոսի (1875-1915), ատլի ծանօթ Բարսեղեան Սարգիս, Վանայ Սարգիս, Շամիլ ծածկանուններով:

**Սիրելի Ընձայր!**

Նամակաբերս ձեզ ծանօթ Հասուն\* է. Բէկը վստահութիւն ցոյց տուաւ: Մենք խօսեցինք որ (1) հազարը\* 1 ոսկի 4 մէջլիդով բերէ. եթէ յաջող լինի 2 ոսկի էլ պիտի տանք:

Ապրանքները բերելու են մինչեւ Փարուխ\*<sup>1</sup> գիւղ, մեզնից շատ մօտիկ տեղ է: Հոն նամակ գրեցէք Նշանին\*, մենք արդէն խօսել ենք: Եթէ լաւ պահենք սրանց, թերեւ [ս] օգտակար լինեն: Չմոռանաք նամակներ եւ թերթեր էլ ուղարկել:

Բէկի կօշիկները առանձին քսակի մէջ կը կապէք եւ մեզ կ'ուղարկէք. մենք կը կանչենք եւ իրեն կը տանք:

Ուղարկում ենք նորէն հինգ հոգի Իշխանի վկայականով: Վկայագիրը իրենց ձեռքը չէք տալու, այլ նամակով ուղարկեցէք այն վայրի ընկերներին, ուր պիտի ուղարկէք իրենց: Ուրիշ նորութիւններ չկան: Սահակը ձին բերա՞ւ թէ ոչ: Չրդ պատրաստ է, բայց բերող չկայ: Ասենք առայժմ հարկաւոր էլ չէ:

Մահմադ բէկը\* հոս է. հարկաւոր խնդիրների մասին նրա հետ կը խօսենք: Եւ երեւի կ'ապահովեցնենք:

Դուք ձեր կողմից գրեցէք Աւետարան որ յիմարութիւններ չանեն եւ ապրանքները դուրս տան:

Արտաշէսը<sup>2</sup> թող հող հանգստանայ եւ բժշկւի մինչեւ մենք էլ սուրհանդակ կ'ուղարկենք իրեն բերելու. ցաւում ենք պատահմունքների համար:

Բարեւներով՝  
**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ**

1905 թ. մայիս 25-ին  
Շամ

Յ. Գ.— Հասոյին\* դուք կը գոհացնէք այս մարդկանց բերելու համար, իսկ ապրանքների փոխադրութեան վարձ կը ստանան հոս մեզնից:

Սրա [հետ] չմոռանաք թերթեր եւ նամակներ շուտ ուղարկել:  
**ԱՐԱՄ**

1905 թ. մայիս 26-ին

1.- Փարուխ, Ֆարուդ – գիւղ Վան-Տոսպ գաւառակին մէջ:  
2.- Արտաշէս – Մալխասն է:

**Պարտիզաւանի կոմիտէին՛!**

**Սիրելիք՛!**

Այս մարդիկ – Չալիկ եւ ընկերներ – գալիս են ձեզ մօտ փոխադրութիւն անելու: Պայմանների մասին գրած էինք Ջրաբերդ<sup>1</sup>. Նամակը իսկոյն հասցրէք եւ պահանջեցէք որ մեր պահանջին իսկոյն բաւարարութիւն տան:

Մենք ձեզ երկար գրելը աւելորդ ենք համարում – մանաւանդ որ արդէն լսել ենք, որ անկեղծ կերպով փափաքում էք այդ գիծը բանալ եւ երկրին օգտակար լինել. ուրեմն շտապեցէք օր աւուր առաջ սրանց յետ դարձնել, որ կարողանանք այդ գործողութիւնները մշտական դարձնել:

Չմոռանաք գրել Հ. Ք. Հրաչին որ նամակին[?] սուրհանդակ բանայ այս կողմը: Գիծը շատ լաւ է. վեց օրում ձեր շրջանից կարող են հասնել մեզ մօտ:

Դուրուբախին<sup>2</sup> կանչեցէք ձեզ մօտ. նա կարող է օգտակար լինել այդ բանին: Սրանց հաւատացրել ենք որ ձեզ կը գրենք որ վերադարձին ապրանքները բերելու համար 3 ձի պիտի տաք: Այդ պայմանը անպայման յարգելու էք:

Ձեզ մօտ ինչ նորութիւններ կան. չմոռանաք նամակներով հաղորդել:

Եթէ կարողանաք մեզ համար մի փութի չափ անծուխ վառօդ ուղարկել, շատ շնորհակալ պիտի լինենք:

Ձեր եւ մեր գործերը այն ժամանակ միայն աջող կը լինեն, երբ մեր ձեռնարկները եւ քայլերը բացարձակ գաղտնապահութեան քողով ծածկւած կը մնան. հակառակ պարագային վիժմունքներ շատ պիտի լինեն:

Մեզ մօտ նորութիւններ չկան. բոլորս հետեւում ենք ձեզ. հետաքրքիր է իմանալ թէ հիմա քանիսի է ծախւում ձեզ մօտ նոր ծայրերը եւ արդեօ՞ք դուք հնարաւորութիւն ունէք մեծ քանակութեամբ ձեռք ձգելու:

Անցեալները ձեզ եւ Ջրաբերդին մի նամակ ենք գրել, սուրհանդակային գծի համար. պատասխան չառանք. չլինի թէ ձեզ չհասաւ:

Մանաւանդ հետաքրքիր է մեզ համար ձեր շրջանի խստութիւնների մասին գիտակ դրութեան մէջ լինել: Անցեալ տարւայ խստութիւնները շարունակւո՞ւմ են թէ թուլացան:

Մեզ մօտ է ձեզ ծանօթ Ջրաբերդի ընկերը (Արամ)<sup>3</sup>. Նա բոլոր ընկերներին բարեւուում է: Երեւի կը յիշէք նրան, տեսել էք Դուրուբախեց տանը:

Դէ՛հ, տղերք ջան! ձեզ տեսնենք, մեր երեսը պարզ անէք:

**Ընկերական բարեւներով՝  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ**

1905 թ. մայիս 27-ին, Շամ

1.- Ջրաբերդը Կարսն է, Պարտիզաւանը՝ Կաղզուան:  
2.- Դուրբախ – ծանօթ յեղափոխական մարտիկ Յարութիւն Կիրակոսեանի (1866-1913):  
3.- Նոյնիմբն Արամ Մանուկեանն է, որ 1893-4 տարիներում կը գործէր Կարսի (Ջրաբերդ) շրջանին մէջ:

**Սիրելի Ռուբէն<sup>1</sup>!**

Մի քանի անգամ նամակ եմ գրել, բայց բախտ չունեցայ պատասխան առնել. չգիտեմ ինչո՞վ բացատրել. այդքան շուտ մոռացար ինձ: Չէի սպասում... ինչեւէ, թերեւս այլ պատճառներ կան, թերեւս զբաղւած ես. ո՞վ ինչ թերեւսներ, բայց այսպէս կամ այնպէս, ես էլ ձիւղ չափ զբաղւած եմ, բայց երբեք ընկերներին, մանաւանդ մօտ ընկերներին մոռանալու տրամադրութիւն չունեմ:

Անցեալները տեղիդ գինւորները ինձ մի ընկերական նամակ էին գրել իմ անունով. դրանց յայտնիր որ նոյն անունով ինձ թող չգրեն եւ առհասարակ թող նման նամակագրութիւն չանեն, որից ոչ մի շահ չկայ, թէ իրենց, թէ ինձ. սիրալիր բարեւներս եմ ուղարկում իրենց. թող ինձ մոռանան, բայց միշտ սիրեն իմ սկսած եւ սիրած գործը...

Այս նամակը կարդալու էք երկաթաջրով. մէջը եղած պահանջներին յուսով ենք շուտով բաւարարութիւն պիտի տաք: Խնդրել էի ինձ համար մի կարճ կոթ. ի՞նչ եղաւ. համաձայնեցի՞ր տալ թէ ոչ: Ի՞նչ է անում Հաքիմ բաշին եւ Սեւուկը: Բարեւներս հաղորդիր անոնց:

Ողջոյններ եւ սիրալիր բարեւներ բոլոր ընկերներին:

Դուրսդեալին յայտնիր որ այժմ թող գլխից հանէ ներս գալը. հաղորդիր նրան ջերմ բարեւներ. թող նամակ գրէ:

**Ջերմ համբոյրներով՝  
Ընկերդ ԱՐԱՄ**

1905 թ. մայիս 27-ին  
Շամ

**Ջեր Մուռը բարեւում է քեզ. երեւի լսել էք որ նա հոս է<sup>2</sup>:  
Շուտով կ'երթայ գաւառ:  
ԸՆԿԵՐ**

1.- Արամի այս գրութիւնը կցուած է Վասպուրականի Կ. կոմիտէի մէկ ցամակին՝ ուղղուած Կարսի (Ջրաբերդ) Կ. կոմիտէին: Յատկեալ էջով սը, Արամ կը գրէ Ռուբէնին. այս վերջինը պէտք չէ շփոթել Ռուբէն Տէր Սիմասեանի հետ, որուն բուն անունը Սիմաս էր, քէտ այս Ռուբէնը, նոյնպէս Տէր Սիմասեան եւ իսկական անունով Երուանդ ու անդամ Կարսի Կ. կոմիտէին, երեց եղբայրն էր Սիմասին: Աւելի պարզ, Տէր Սիմասեան երկու եղբայրները, Երուանդ եւ Սիմաս, կը գործածէին նոյն Ռուբէն ծածկանունը, այնքան որ իրարու հետ թղթակցելու ատեն երէցը՝ Երուանդ իրատունը կը համարէր ստորագրել Ռուբէն Ա.:

2.- Չեր Ծուռը – խօսքը Ռուբէն (Սիմաս) Տէր Սիմասեանի մասին է, որ նոր էր հասած Վան:

## 91

### Առաջին Ենթակոմիտէին

Նամակաբերները մեր տղաներէն են, դիւրութիւններ ստեղծեցէք շուտով իրենց ցանկացած վայրը հասնելու:

Եթէ կարիք լինի փոխեցէք սրանց նոր շորերը հներով:

Չալիկի գէնքերը յանձնելու էք իրեն, գէնքերից մէկը — մակազինով մոսին — մերն է. պահելու էք ձեր քով մինչեւ մեր կարգադրութիւնը:

Նաւի համար հարկաւոր դիւրութիւնները ստեղծեցէք: Թող կարէնը տանէ ճամբու դնէ:

Դիւրութիւններ կան արդեօ՞ք Կայանէն փոխադրութիւն անելու նաւով, ի՞նչ նոր լուր առաք, շուտով մեզ գրեցէք:

Այսօր ձեզ մօտ ընկերներից մէկը պիտի գար առկախ մնացած խնդիրները կարգադրելու, բայց լսեցինք որ գիւղը զօրքեր կան, որքան ճիշտ է:

Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. մայիս 27

## 92

### Ա. Ենթակոմիտէին

Ընկերներ!

Երկու օր է փորձեցինք ձեզ մօտ գալ, բայց մի քանի պատահարների պատճառաւ չյաջողեցինք եւ վերջապէս վճռեցինք Յեպթաղէմ մտնել ու ձեզ էլ հոս կանչելով խօսենք մի քանի կարեւոր խնդիրների մասին: Ուրեմն նամակս ստանալուց շտապեցէք հոս գալ: Ձեզ հետ բերեցէք եւ կայանցի Յարութիւնին:

Չալիկի բերած մոսինը եթէ յարմարութիւն կայ վաղը գիշեր փոխադրեցէք հոս:

Սպասելով ձեր գալստեան  
Բարեւներով — ԱՐԱՄ

1905 թ. մայիս 30-ին

Յեպթաղէմ



**Միրելի Տիգրան!**

Ուշ ատեն ստացանք նամակդ. մանրամասնութիւնների մէջ մտնելու ժամանակ չէ, այդ վաղը: Առայժմ ուղարկում ենք Ոսկեհանքի<sup>1</sup> հրացանը, դա նոր տեսակը չէ այլ հինը. ուղարկած էր շտկելու. ուրեմն № գրել, 50 ծայր ուղարկել աւելորդ է առ այժմ. պատուիրեցի ուղարկել եւ Ջինասէրինը<sup>2</sup>. չգիտեմ կը յաջողին թէ ոչ. այս մասին վաղը կը գրեմ: Սօլերը կ'ուղարկենք վաղը ուղղակի հոտ, պատուիրէ որ քեզ բերեն:

Այսուհետեւ նամակները որտե՞ղ ենք ճանաչելու:

Մասերը կը պատրաստենք վաղը. բայց բոլորը պատրաստ չի լինի. երեւի մի քանի[սը] պիտի նոր պատուիրենք. այդ դրամները պիտի կազմակերպութիւնի՞ց հոգացւի թէ իրենք կը վճարեն. մեր ունեցածները ինչ ասել կ'ուզէ ճրի եւ լինելու:

Երեւի դրանք Կայարանի շրջանի<sup>3</sup> պակասութիւններն են, ինչպէս էք հոգալու. պիտի վերադարձին հոգաք, թէ ուղարկելու էք իրենց, նրանք հազիւ կարողանան բան անել:

Ախր լաւ կը լինէր հէնց այդ բանը սկզբից հետներդ վերցնէիք: Ինչ եւ է: Ամենակարճ ժամանակում կը կարգադրուի:

Յարութիւնի ապրանքները չի եկել. դեռ Աւետարանումն<sup>4</sup> է. եթէ այդպէս մի բան լինի անշուշտ կը գրեմ:

Ուղարկում ենք Բիւզանդիոնները<sup>5</sup>. Գարեգնից եւ Մայիսից նամակ առանք. առաջին օրը Նախիջեւանում թողրքերն են յարձակել, մի քանի հայ սպանել, իսկ յետոյ հայերը յարձակել, մի քանի հարիւր են կոտորել եւ խանութներ այրել: Դեռ կռիւր շարունակում է:

**ԱՐԱՄ**

Ուրիշ նորութիւն չկայ. քաղաքի մասին ապահով եղիր, գէնքեր կան. եթէ դրամը այդտեղ անգործադրելի է, ուղարկիր հոտ:

[1905, Մայիս]

1.- Ոսկեհանք – ծածկանուն Գզըլտաշ գիւղի, Գաւաշ գաւառակ:  
2.- Ջինասէր – ծածկանուն Բերդակ գիւղի, Արճէշ գաւառակ:  
3.- Կայարանի շրջան – ծածկանուն Թիմար եւ Վարի Հայոց Ձոր գաւառակներու շրջանի:  
4.- Աւետարան – ծածկանուն Բերկրի գաւառակի Խաչան գիւղի, Հեքիարի գաւառ:  
5.- Բիւզանդիոն – Կ. Պոլիս հրատարակուող օրաթերթ (1896-1918):

ՀԱՇՈՒԹՑՈՅՑ ՄԱՅԻՍ ԱՄՍԻԱՅ [1905]

ՄՈՒՏՔ  
դահեկան

Արտասահմանէն

Վիշապէն

Արեւմտեան Բիւրոյի հաշիւ	3348
Մրգաստանէն Արամի դրամը	10800
Վրէժէն Սինասի հետ	
[Ռուբէն Տէր Սինասեան]	<u>2148</u>
	16296

ՏԵՂԱԿԱՆ

Սուրակի [?] ծախելուց	<u>648</u>
	16944*

ԵԼՔ

Հին պարտքերից	3832
Ռազմամթերք կազմակերպութեան	350
Դուրան [Տարօն]	5400
բանտի ընկերներին	1103-5
Ընկերների եւ զինուորների ապրուստ	321-10
Ընկերների եւ զինուորների կարիքներ	1186-10
Արտաքոյ կարգի	486-10
Չիաների	166-20
Կանցելերիական պետքեր	36
Սուրհանդակ + փոխադրութիւն	1991
Նպաստ Վարդանի միջոցով	<u>3382</u>
	19254

Ընդհ. ելք	19254
Ընդհ. մուտք	<u>16944</u>
	2310 դահեկան պարտք

Առ 1 յունիս

*\*Ծանօթ.- Մրա մէջ չէ մտնում Վիշապէն ստացած վերջին 174 ոսկին, որը մտնելու է յունիս հաշի մէջ եւ որից արդէն 100 ոսկի յատկացրած է զէնքի:*

**Սիրելի Տիգրան!**

**Առանք 2 յունիս թևակիրդ. պատասխանենք հարցերիդ:**

**Ա.** **Ձէնքի խնդիրը ինչպէս գիտես բոլորի մտածողութեան առարկան է. եկած ամբողջ 100 ոսկին յատկացնելու ենք դրան. բայց ցաւալին այն է որ առայժմ ստիպւած ենք 100 ոսկու ձեռք բերածները յատկացնել Իշխանի շրջանին<sup>1</sup> քեզ յայտնի պատճառներով: Ուրեմն այդ շրջանի գէնքերը թերեւս ուշանայ մինչեւ յուլիս սկիզբները: Եթէ շուտով ստացւեց Կոմսի յիշած դրամները, թերեւս աւելի շատ բաւարարութիւն տրւի: Այդ շրջանում բաւականի գէնք է ծախուում, լաւ կը լինի որ քո ձեռքի տակ եղածներ[ով] տեղն ու տեղը գնել եւ տալ ըստ պատկանելոյն. ախր մենք հնարաւորութիւն չունենք 200 ոսկու միանգամից առնել, կամ առնւազը մի ամսում լրացնել: Դու եւ բոլոր[դ] այսքանը հաւատացած եղէք, որ մակսիմալ ուժերով աշխատելու ենք ծածկել այդ պակասը, որ թերեւս մեր մարմնի ամենամեծ վէրքն է:**

**Բ.** **Ֆէզոյի<sup>2</sup> գէնքի համար առաջ կարգադրութիւն էր եղել. ցաւում ենք, որ անհետեւանք է մնացել: Գրել էինք նրան որ անձամբ ներկայանայ[?] դէմ առ դէմ խօսեցնենք, բայց չէր եկել. այսօր կրկին գրեցինք. վաղը յուսով ենք որ կարգադրած կը լինենք:**

**Գ.** **Ծոռ եւ Ռուբէնի շարվարները արդէն ուղարկւած է, երեւի ստացած կը լինէք:**

**Դ.** **Փամփուշտներ էլ բաւական ձեռք է բերուում. երեւի այդ պահանջներին էլ մասամբ կարող կը լինենք բաւարարութիւն տալ. համբերութիւն եւ վստահութիւն է հարկաւոր:**

**Իշխանի եւ մնացած խնդիրների մասին այսօր մասնաւորապէս քեզ գրւած է, երեւի կը ստանաք այս նամակի հետ:**

**Ուրիշ նորութիւններ չկան:**

**Ձերմ բարեկներ բոլորին  
Վ[ԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ**

1905 թ. յունիս 4-ին

**Շամ**

**Յ. Գ.— Իշխանի նամակը առաւօտ մոռացմամբ մնաց, ուղարկում եմ այս անգամ:**

**ԱՐԱՍ**

**Աշխատի՛ր մօտաւորապէս գծել թղթի վրայ այցելածդ գիւղերը:**

1.- Իշխանի շրջանը Լեռնապարն է, Վանի եւ Բաղէշի ցահանգներուն հարաւային լեռնային գաւառակները (Գաւաշ, Շատախ, Մոկս, Կարկառ, Սպարկերտ եւայլն):  
2.- Ֆէզօ – Մարիֆեան Օհաննէս, սրճարանատէր Այգեստանի մէջ, գէնքի վաճառական:

**Միրելի Տիգրան!**

Երէկ եկանք Ա. Ենթակոմիտէի շրջան, տեսանք ընկերներին եւ հարկաւոր կարգադրութիւնները արինք: Կոմսը Մրգաստանից նամակ էր գրել Իոսուֆի<sup>1</sup> մասին. պատճէնը ուղարկում ենք Իշխանին քո միջոցով: Կը կարդաս ապա կ'ուղարկես:

Հոս նորութիւններ չկան. դեռ չեմ կարդացել նամակները: Կ'աշխատեմ շուտով պահանջներիդ բաւարարութիւն տալ: Ծռու շալվարը ուղարկեցինք, այսօր էլ կը ստանաք Ռուբէնինը: Ենթակոմիտէի ծրագիր ձեռքի տակ չկայ. շուտով կ'ուղարկեմ:

Ռուսները կատարեալ պարտութիւն են կրել. ամբողջ նաւատորմը փչացել է. Ռոստեպիենսկին գերի է: Թերթերը վաղը կ'ուղարկեմ, իբրեւ նորութիւն կը կարդաս:

Իշխանն էլ դժգոհ է եւ չգիտեմ այդ մարդը ինձնից ինչ է ուզում. հիմա էլ իմ օճիքս է բռնել. վճռեցինք որ դու հոտ մնաս մինչեւ նա էլ կը գայ այդ շրջանը, միասին վերջնականապէս կը կարգադրէք. երեւի այնտեղից կը գան եւ Վարդանը ու Ռուբէնը<sup>2</sup>:

Ինչպէս գիտես 170 ոսկի դրամ եկաւ: Փռք Աստուծոյ պարտքերից կը վերջանանք: Զէնքեր գնւում է. երեւի ամենակարճ ժամանակում բոլոր պահանջներին բաւարարութիւն կը տրւի:

Երեւի առիթ կ'ունենամ էլի գրելու, բայց աշխատի՛ր Իշխանի հետ տեսակցելու ժամանակ բոլոր խնդիրները բէալ հողի վրայ դնել. ես թերեւս խնդիրների ցուցակ ուղարկեմ. այստեղի գործերը երեսի վրայ դնել անկարելի [է], այնպէս որ ես հոս կը մնամ:

Պուկրէշտը եկաւ. նոր բաներ քիչ կան. գիծը փակւեց:

Այսօր Գարեգնից մի երկտող ստացանք. նոր սուրհանդակային գիծ է բանում. պատասխանեցինք. տեսնենք ինչ կը լինի:

Այդտեղի գործերի մասին ի հարկէ մեզ կը գրես:

Բարեկէ՛ր Յարութիւնին եւ բոլոր տղաներին:

Համբոյրներով՝  
**ԱՐԱՄ**

1905 թ. յունիս 4-ին

Շամ

1.- Իոսուֆեան Յովհաննէս:

2.- Վարդան Շահպազը եւ Ռուբէն Տէր Միգաստանը:

**Միրելի Գարեգին!**

Ստացանք ձեր մայիս 22-ի թևակիր նամակը: Մեր նախկին սուրհանդակը չի եկել դեռ: Այս անգամ սրա հետ ուղարկում ենք այս երկտողը եւ Իշխանի մի շարք նամակները ըստ պատկանելոյն ուղարկելու համար:

Մեզ մօտ նորոթիւններ չկան. Մայիսի մօտ 10-10ներ<sup>1</sup> ենք ուղարկել ապրանքներ բերելու. իսկոյն ճանապարհ դրէք:

Այս սուրհանդակի մասին մենք ոչինչ չենք կարող ասել, որովհետեւ չենք ճանաչում. եթէ դուք վստահ էք, ուղարկեցէք:

Մենաւորի գիծը առայժմ փակելու էք մինչեւ այստեղից մենք չգրենք:

Թերթերի N 4-ը դեռ չենք ստացել. այն կողմից եկածները բռնւել են: Աստուծոյ սիրոյն, այն սուրհանդակների գործը աւելի քան ճապարհեցին. այսքան մարդկանց բացակեցինք, բայց ոչ մէկը չարդարացրեց մեր յոյսերը. սրա մասին թողնում ենք ձեր կարգադրութեան: Զիմացանք թէ ինչ Յակովբէ է, որի միջոցով ուղարկել էիք նամակները. կարիք չկայ գրելու Կոմսին կամ Բժշկին<sup>2</sup>: Ուղղակի Վ[ասպուրականի] Կ. Կ[ոմիտէ], մեզ կը հասնի:

Առայժմ ոչ ոքի ներս չուղարկէք, մինչեւ տեսնենք ինչով կը վերջանայ այս խառնակ դրութիւնը:

Բոլորս ողջ եւ առողջ ենք:

Քո վերջին 70 ոսկին դեռ չենք ստացել. ինչո՞ւ այդպէս ուշացաւ. երեք անգամ գրել էր թէ պատրաստ է, բայց մինչեւ հիմա չեկաւ:

Դրամ ուղարկելուց գրեցէք թէ այդտեղից է ուղարկւած եւ ինչքան գումար. սա կարեւոր է, որովհետեւ մեզ զանազան տեղից գրում են, թէ այսքան դրամ ուղարկեցինք, իսկ մենք չենք ստացել... Անդորրագրերը ինչգրում ենք իսկոյն ուղարկէք ըստ պատկանելոյն:

Հաշվեցոյցները չպահէք ձեզ մօտ, այլ անմիջապէս ուղարկէք Բիւրոններին. գրում են որ հաշիւները չենք ստանում:

Բարեւում ենք քեզ եւ բոլոր ընկերներին:

Բարեւներով՝  
**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ**

1905 թ. յունիս 4-ին

Շամ

**Յ. Գ.— Նամակաբերին մենք դրամ չենք տւել:**

**ՆՈՅՆ**

1.- 10-10 – քիւրտ սուրհանդակ-փոխադրող:

2.- Կոմս եւ Բժիշկ միեւնոյն անձին համար է հոս (Վահան Փափագեան): Վանի մէջ Կոմսին եւս Բժիշկ անունը կը տրուէր:

**Ա. Ենթակոմիտէին**

*Ձեր խոստացած նամակները եւ ապրանքները չստացանք:*

*Վիճակախաղից ուղարկել էիք 120 դահեկան. ձեզ մօտ մնացած 80 դահեկանից 27ը կը վերցնէք ձեր ծախսերը, իսկ 50 կը զրկէք Սուրէն[ին] յայտնելով որ Կ. Կոմիտէն ուղարկում է ձեզ 50 դահեկան պարտքը:*

*Հրացանները շուտով կ'ուղարկուի:*

*Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ*

1905 թ. յունիս 5-ին

Ծով

**Ա. Ենթակոմիտէին<sup>1</sup>**

*Ստացանք ձեր 5 յունիս թւակիրը. շտապում ենք պատասխանել*

*1.- Վարպետի մասին մտածում ենք եւ կարգադրութիւն կը լինի:*

*2.- Շրջանը Տասնեակ ուղարկելու խնդիրը այդպէս հեշտ կերպով չէ լուծելու մենք ձեզ նամակներով եւ ընկերները անձամբ խօսեցինք, որ դուք պարտաւոր էք դեռ առանձին պտտել գիւղերը եւ գործերը կարգաւորել: Այդ բոլորից յետոյ ամէն մէկը գրաւոր իւր շրջանի տպաւորութիւնները, բարդւած խնդիրների բնոյթը տար, եւ եթէ մենք գտնէինք որ գիւնտորների ներկայութիւնը անհրաժեշտ է՝ կ'ուղարկենք իսկ այժմ քանի որ դուք ոչ մի գործնական քայլ չէք արել, քանի որ չէք բարեհաճում մի քիչ գաղափարական միջոցներով ազդել ժողովրդի վրայ, այլ կ'ուզէք նորէն «արդարութեան գաւազանը» շարժել<sup>2</sup>, հրաժարուում ենք գիւնտորներ ուղարկել, նորէն կրկնելով որ դուք պիտի անձամբ իջնէք Գաւաչ եւ անձամբ ամէն բան դիտելով տեղեկագիրը ուղարկէք. չմոռանաք ամէն բան մանրամասն գրելու:*

*3.- Նպաստաւորի<sup>3</sup> գէնքերը ինչպէս ասել ենք պատրաստ է, միայն փոխադրելու դիւրութիւն չկայ. եթէ կարող էք դուք փոխադրելու դիւրութիւն ստեղծել, գրեցէք մեզ, մենք կը հասցնենք մինչեւ Սֆինկս<sup>4</sup>: Հետաքրքիր է իմանալ թէ Նպաստաւորը ինչքան գէնքի դրամ ունի մեր քով. գէնքերը արժեն 10 ոսկի, իսկ ցորենը դառաւ միայն 8 ոսկի: Եթէ պակասորդ դրամ կայ, առէք եւ իսկոյն ուղարկեցէք մեզ: Ոչ մի*

պարագայում գէնքի դրամը ձեզ մօտ պահելու իրաւունք չունենաք: Առ այժմ աւելորդ գէնքեր չենք կարող ուղարկել. դա ապագայի գործ է:

4.- Ըմբոստի անունը մոռացել ենք. գրեցէք մեզ, որով հնարաւորութիւն ունենանք նրան կանչել:

5.- Չորս մէջիդի խնդիրը կարգադրել ենք:

6.- Ուղարկում ենք շրջիկների եւ Ա. Էնթ[ակոմիտէի] յանձնարարականները:

7.- Վիճակագրական հարցերը կը ճանպենք յետոյ:

8.- Բուժարանի<sup>5</sup> ուսուցիչը կ'ուղարկենք ձեզ:

9.- Նամակները եւ յանձնարարականները ստացանք: Ուր մնաց պ. Աշոտի չանթիկը եւ ածելին:

10.- Լճեցի Գուրգէնին ստիպեցէք անպայման գնայ. նրա մասին ոչինչ չկայ, ինչու վախենում է: Փոխադրութեան վրայ մեծ ուշադրութիւն էք դարձնելու:

11.- Կարէնին գրեցէք որ մենք վարձովի սուրհանդակութեան հակառակ ենք: Մէջտեղից վերացնելու էք այդ վարձկանութիւնը: Եթէ մի ժողովուրդ այնքան գոհողութիւն չունի որ առանց վարձի սուրհանդակ հանէ, վարձով կամ դրամով այդպիսի ժողովուրդը չի կարելի ազատագրել: Բայց մենք այդ աստիճան ստորացած չենք: Առ այժմ Լիճի եւ Դաշտի կողմերը սուրհանդակները մեզ հարկաւոր չեն. ժամ է միայն եղածները փոխադրել եւ գիծը հանգստացնել:

12.- Կարէնը Հնադարեանի<sup>6</sup> Ժիրայրի համար սաքօ[?] կ'ուզէ մեզնից. նրան գրեցէք որ տեղս յեղ[ափոխութիւնը] բարեգործական ընկերութիւն չէ որ սրան-նրան սաքօ ուղարկէ: Խնդրում ենք այսուհետեւ նման պահանջներ մեզնից չանել:

13.- Հին փոխադրութեան համար նաւավարը ստացել է 15 դահեկան վարձ. նորէն անկարող ենք տալ:

14.- Պարսկաստանում ոչինչ չէ պատահել. միայն Ռաստանում[?] էլի հայ-պարսկական ընդհարումներ է եղել. մանրամասնութիւններ չունենք:

Ուրիշ նորութիւններ չկան:

Բարեւներով՝  
Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. 8 յունիս

Ծով

- 1.- Ա. Ենթակոմիտէ – Թիմար գաւառակի Ենթակոմիտէն է:
- 2.- Գանակոմէլ:
- 3.- Նպաստաւոր – ծածկանուն Էրեքին գիւղի, Թիմար գաւառակ:
- 4.- Սֆինկս – ծածկանուն Լէգք գիւղի, Վանի գաւառ:
- 5.- Բուժարան – ծածկանուն Ս. Աստուածածին գիւղի, Թիմար գաւառակ:
- 6.- Հնադարեան – ծածկանուն Լիւն ամապատի եւ «Դրսի տան»:

**Մենաւորի ընկերներին**

**Սիրելիք!**

Ստացանք ձեր յունիս 3 թւակիրը Բէկի ծառաների հետ. նրանք բերին հազար\* նոր ծայր. միայն մէկը պակաս էր. նրանց մօտից առանք եւ 20 հատ հինը ինչպէս դուք էիք գրել:

Մեզ զարմացնում է այն հանգամանքը, թէ ինչո՞ւ դուք սրանց հետ վարձի մասին խօսում էք կամ դրամ էք տալիս, քանի որ ձեզ գրւած է որ սրանց ոչ մի կոպէկ դրամ չտաք: Սա լինի առաջինը եւ վերջինը. մենք ուզում ենք ձեր գործը թեթեւացնել, իսկ դուք աւելի բարդացնում էք: Գնի մասին դուք հոգ մի տանէք, հազարիս\* մինչեւ Ամրոց<sup>1</sup> 1 ոսկի 4 մէջիդ, ոչ թէ թանգ է այլ շատ էժան. երանի թէ բոլորն էլ այսպէս ինչէր եւ սրանք այդ ուղղութեամբ ու հաւատարմութեամբ աշխատեն. քանի որ մեծի համակրութիւնը մեր կողմն է ոչինչ չի լինի:

Գրում էք ձի տալու մասին. ի՞նչ ասել կ'ուզէ որ շատ յարմար կը լինի. իրենք էլ են խնդրում. մեր կողմից այսքանը կ'ասենք, որ մենք վախենում ենք սահմանից, որ հոն ձրով նկատեն. եթէ այդ պարագան անպատեհութիւն չէ, տէք. մենք իրենց խոստացանք, որ գրենք ձեզ ձի տաք: Հետաքրքիր է իմանալ թէ ձեզ մօտ ձի կայ թէ ոչ. հոս չկայ. եղածները գործադրութեան մէջ են:

Աւետարանի եւ Կայանի<sup>2</sup> մասին մենք էլ մանրամասն տեղեկութիւն ունենք. առայժմ այդ գիծը փակելու է մինչեւ եղած ապրանքները քաշենք եւ կասկածներն էլ վերանայ, այլ խօսքով մինչեւ աշուն. ապրանքների քաշելու մասին մենք հոգում ենք այստեղից եւ մօտ ապագայում գործի կը դիմենք: Սաֆոյին<sup>3</sup> երեք անգամ տեսել եւ ամէն բան խօսել է. դուք անհոգ եղէք. նրա տրամադրութիւնը առաջնայ պէս լաւ է. փոխադարձ խոստումներ ենք արել. նա երեւի շուտով կ'երթայ: Պարապին<sup>4</sup> կը կանչենք եւ կը կարգադրենք:

Պուկրէշտը ապահով հոս հասաւ. նոյնպէս եւ Մինասը. այս մասին ձեզ գրւած է Աւարայրի եւ Մինարէթի գծերով:

Հետաքրքիր է իմանալ թէ Մենաւորում որքան ապրանք կայ. դուք պատրաստութիւն տեսէք աշնան համար. այդ մանր-մոլերը հաշիւները այս ամառայ ամիսներում կը կարգադրենք: Նոր դիւրութիւններ շատ ենք ստեղծում. դուք միայն ապրանք պատրաստեցէք եւ այդտեղ ձեր գլուխը լաւ պահեցէք...

Սրանց այս անգամ եթէ ձիաներ տալու լինիք, ապրանքը (2) հազարից\* աւելի չէք տալու: Ամենագլխաւորը սրանց երես չտաք եւ խոստումներ չանէք. ամէն բան մեզ վրայ ձգեցէք:

Այս անգամ ստացան թէ տղաների բերողչէք 4 մէջիդը եւ ապրանքի վարձ 1 ոսկի 4 մէջիդը: Դուք դրամ չէք տայ: Դուք ձեր կողմից խօսեցէք որ ճանապարհներին չուշանան:



Երեւի լսեցիք ձեր գեղեցիկ եւ խելօք քայլերի հետեւանքները – յետ ճանաչած գաղթականները – բռնուել են Կիրճում<sup>5</sup> թերթերի հետ. նամակները ստացող խեղճերին 7 – 7 տարի կը կտրեն. ախր ի՞նչ կարիք կայ փչացած գիծը նորէն փչացնել. եկել էին, մի կերպ ռազ անէիք: Մարդիկ առաջմ չենք ուղարկի:

Ձեր շրջանի դրութեան մասին եւ Սարուստանի վերջին դէպքերի մասին մեզ գրեցէք: N N 4 եւ 5 ոչ մի կտոր չստացանք, մի մասը բռնուել է, միւս մասը Աւետարան է մնացել. եթէ կայ, սրանց հետ մի քանիսը ճանաչեցէք: Մալխասը գրում է, որ ձեր մօտ գրքեր է ուղարկել մեզ հասցնելու. եթէ ճիշտ է, սրանց հետ մէկ երկու կտոր ուղարկեցէք:

Գարոցի խնդիրը ի՞նչ դառաւ. գլուխը ծածկեցիք թէ այնպէս մնաց:

Մեզ մօտ նորութիւններ չկան. այստեղից երեք թաբուր զօրք են տանում Արաբ-իա:

Եթէ «Հայրենիք» ունէք, մէկ-մէկ օրինակ մեզ ճանաչեցէք:

Մեր կողմից Գարեգինին Մինարէթ նամակ գրէք – հարցրէք թէ իր գծով բազմաթիւ նամակներ ենք գրել, ստացան թէ ոչ: Յայտնեցէք որ խոստացած 70 ոսկին դեռ չստացանք, թէեւ քանիցս պարսկական քարվանը եկաւ: Կ'երեւայ որ Կարապետը վաճառականական խաղեր է սարքում: Թող նրան ստիպեն որ շուտով ուղարկի: Դրամի մեծ կարիք ունենք:

Մալխասին ուղղեալ մի նամակը ուղարկել էիք հոս. խելքերնիդ ո՞ւր [է] փախել:

Թաթառի քիրվան լսեցինք որ 1500 ծայր կերել է. ճի՞շտ է, թէ ոչ. եթէ ճիշտ է ի՞նչ արիք:

Նամակում դրած բոլոր հարցերին պատասխանէք:

Այդտեղ կարո՞ղ էք մի երկու հարիւր վարանդելի<sup>6</sup> իս[կ]ական փամփուշտ առնել, եւ որքանով կը լինի:

Հին կոթերը քանիսով կը տան. արդե՞օք չենք կարող Կամուրջում<sup>7</sup> 10-15 հատ գնել: Այս մասին բարի եղէք գրել մեզ: Չմոռանաք այդտեղ եղած ապրանքների թւի մասին գրել:

Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. յունիս 12-ին

Շամ

1.- Ամրոց – Վանի Ղարաղաղ թաղ:

2.- Աւետարան – ծածկանուն Բերկրի գաւառակի Խաչան գիւղի. Կայան – ծածկանուն Բերկրի Պսաիկ Գեղի:

3.- Մաֆօ – կեղծանունը քիւրտ հայտարանցի ցեղապետերէն Մեհմէտ բէկի, Համիտի գօրքի գայմազամ:

4.- Պարապ կամ Մելօ – զինուոր, սուրհանդակ, փոխադրող:

5.- Կիրճ – ծածկանուն Բեադուկ գիւղի, Բերկրի գաւառակ:

6.- Չէնքի տեսակ:

7.- Կամուրջ – ծածկանուն Թաղէի վանքին մօտ Կարէ գիւղի:

**Միրելի Տիգրան!**

Այսօր առաւօտեան, հէնց նոր, առայ նամակդ. ես մենակ եմ, շտապում եմ պատասխանել նամակիդ եւ բաւարարութիւն տալ մի քանի պահանջներին:

ա- Ռուբէնի շալվարը եւ ժակէտը (Մուռ) ուղարկւած է. երեւի ստացած կը լինիք:

բ- Այսօր ուղարկում ենք 2 գոյգ սօլեր եւ գոյգ թաթ<sup>1</sup>, մի շիշ սեւ թանաք:

գ- Իշխանը յունիս 4 թևով Վարդանին նամակ էր գրել, որ անցնում է Անառիկ<sup>2</sup> եւ 10 օրից կը գայ ժողովի. ուրեմն երկու երեք օրից նա այդ շրջանը կը լինի:

դ- Ի՞նչ ասել կ'ուզէ որ Վերին Հայոց Ձորն էլ այցել[ւե]լու էք, ի հարկէ Իշխանի հետ տեսակցելուց յետոյ: Եթէ գործերը այդ շրջանում վերջանայ, կարելի է մի քանի օր սպասել, կամ Յարութիւնին մի քանի ընկերներով ուղարկիր հոտ. թող զէնքերի գործը դրստի, իսկ դու Գասպարի հետ սպասիր մինչեւ Իշխանի գալը: Յամենայն դէպս դու նայելու ես յարմարութեանը:

ե- Ես անկարող եմ ներկայ լինել այդ ժողովին ոչ այն պատճառով որ անձնական հաշիւներ ունեմ, մի բանտորի համար ամօթ է ընդհանուր գործը կաղացնել, այլ ուրիշ նկատումներ ունեմ: Վերջերս Իշխանի բռնած դիրքի պատճառով սկսել է էլի գորտերի ձայներ լսել եւ դրսեցիների դէմ խուլ դժգոհութիւն է լսում նեղ շրջանից բռնած մինչեւ խմբերը: Ես վախենում եմ Վարդանի օրերի «ճշմարտութեանը» պաշտպան հերոսները կրկին ասպարէզ իջնեն, իսկ այդ մեզ համար անպատուութիւն է: Այդ եւ ուրիշ մի քանի նկատումներով ես վճռել եմ հոս մնալ եւ թորգոմին<sup>3</sup> ուղարկել տղաների հետ: Վերջապէս տեղացիներին էլ նշանակութիւն ենք տալու. իսկ հոս բոլորովին երեսի վրայ թողնել 6-7 օր, այդ անկարելի [է] ներկայ պայմաններում:

զ- Գանգատում ես որ քեզ նորութիւններ չենք հաղորդում. մտնում եմ դրութեանդ մէջ, մասամբ մեղաւորը ես եմ, որովհետեւ ես պիտի գրեմ, բայց այդ անպիտան տրամադրութիւնը ինձնից փախել է. ա՛խ, երբ ընկերականութիւնը վերջանում է մեր գործի մէջ, գոնէ ես դառնում եմ սոսկ չինովնիկ<sup>4</sup> եւ անկարող եմ լինում գործ տեսնել: Իսկ արտասահմանի լուրերը աւելի են փչացնում իմ տրամադրութիւնը: Հին Նախիջևանում դէպք է պատահել<sup>5</sup>: Պատմում են որ Յ հազարի չափ երկու կողմից մարդիկ են ընկել: Մալխասը եւ Մենաւորէն ոչինչ չեն գրում. թէեւ սուրհանդակներ գնում գալիս են, բայց միշտ դատարկ: Ապրանքների մի մասը Մենաւորէն եւ Աւարայրէն տարւած է Վրէժ եւ Մինարէթ<sup>6</sup>: Մենաւորում եղած երկու կանոնաւոր հրացանը տարել են Վրէժ, կամ խմորները եւ կապսուլները Աւարայր. ամէն մարդ խօսում է իր ցաւից\*\*, մեզ մոռանալու վրայ են. անցեալ անգամ Աւարայրէն 7 հազար նոր ծայր փոխադրել տւինք մինչեւ հոս, շատ լաւ պայմաններով, լօ-լօների միջոցով. կրկին գնացին. գրել էինք որ հրացան էլ տան: Մալխասը գրում է որ չեմ կարող տալ որովհետեւ ինձ էլ հարկաւոր է:

Մենաւորէն էլ Բէկի մարդկանց միջոցով հազար նոր ծայր ստացանք, էլի մինչեւ հոս. ուրեմն քեզնից յետոյ ընդամէնը 4 հազար, բաւական յաջող է: Բայց դրսի այդ անտարբերութիւնը եւ ապօրինութիւնը մեզ չշղկեցրել է:

Ստացա՞ր Բիւզանդիոնները եւ 4-5 թւերը Դրօշակի. ինչո՞ւ այդ մասին ոչինչ չես գրում:

է- Վերջին 174 ոսկիէն 100-ը յատկացրինք գէնքերի համար. ամբողջ գնւում է: Ընդհանրապէս կարելի է ասել որ Իշխանի շրջանի պարտքերը գոցւեցին: Ինչ ասել կ'ուզէ որ Իշխանի թողած դրամներով էլ ապրանքներ են գնւած: Բայց այս վերջերս դրամ չեկաւ. էլի սկսւում է պարտքերի սեզոնը. անցեալ ամսուն եւս 2 հազար դահեկանի պարտք մ'նաց. այս ամիս կրկնակին եւ եռակին կը լինի: Գիսակին տանելու մասին լուրեր են պտտւում. զգուշութեան համար 15 ոսկի ուղարկեցինք մօրը տրւելու համար: Է՛հ, չգիտեմ, այս դրամը ինձ խեղդեց. այս ամսւայ հաշի մէջ ըստ Իշխանի պահանջման բանտի ելքը ընդհանուր մուտքից հանցի. դա էլ նոր դժգոհութիւններ առաջ բերաւ. ես մ'նացել եմ երկու կրակի մէջտեղ: Ա՛խ, երանի այդ դրամների դասաւորողը ես չլինէի, երեւի երկու անգամ աւելի գործ կը տեսնէի եւ ուրախ կը լինէի. իսկ հիմա Աստուած դուշմանիս ցոյց չտայ. ինչ եւ է: Աստուծոյ սիրոյն այդ դրամի հարցը վերջնական կերպով կանոնաւորեցէք փոխադարձ համաձայնութեամբ եւ իմ օճիքս էլ ազատեցէք:

Քաղաքում օրուայ նորութիւնը՝ այստեղից գօրքեր տանելն է. 3 թաբուր գօրք են պահանջել, կարծեմ Արաբիոյ համար, իբր թէ Քէօռ Հիւսէին փաշէն էլ իւր մարդկանցով կանչւած է. երեւում է մեծ դէպքեր է եղել:

Մուրճի 4րդ [համարում] տպւած է կովկասահայերի պահանջները ներկայացրած ռուս կառավարութեան. թուուցիկով տպել կը տամ:

Իշխանի նամակը ուղարկիր:

Բարեւներ — Յարութիւնին եւ բոլոր տղաներին:

Համբոյրներով՝  
ԱՐԱՄ

1905 թ. յունիս 12ին

Յ. Գ.— Մոռացայ գրել Վերին Հայոց Ձորի Կզըրզաշ<sup>7</sup> գիւղում Սահակի մօտ ունենք մի հրացան եւ 23 հատ ծայրեր: [Հրացանի] համարը եւ ծայրերի քանակը իւր ստորագրութեամբ ուղարկեցէք: Նոյն գիւղը 1 հատ բերդան ունի. թող գայ տանէ, աւրւածը շտկւել է:

ՆՈՅՆ

- 1.- Թաք – գուլպայ իմաստով:
- 2.- Անառիկ – ծածկանուն Շատախի Թաղ աւանին:
- 3.- Թորգոն – ծածկանուն Տեղտրիկեան Թէոսի, անդամ Վասպուրականի Կ. կոմիտէի:
- 4.- Կառավարական պաշտօնէայ, բացասական իմաստով:
- 5.- Արդարեւ, Մայիս ամսուան երկրորդ կիսուն, արիւնալի դէպքերու թատր հանդիսացաւ Նախիջեւանի շրջանը, ուր թաթարները յարձակած եւ քանդած են բազմաթիւ հայկական գիւղեր:
- 6.- Յաջորդաբար՝ Ս. Թաղէի վանք, Խոյ, Թարիզ եւ Սալմաստ:
- 7.- Կզըրզաշ – Գաւաշ գաւառի գիւղերէն:

**Միրելի Տիգրան!**

13 յունիս թւակիրդ ստացանք. պահանջած հարցերիդ պատասխանը կիրակի օրը յուսով ենք ստացած կը լինես, երէկ Մինարէթէն 72<sup>1</sup>/<sub>2</sub> օսմանեան ոսկի եկաւ. գրեւոր դրամն է: Ուրիշ նորութիւն չկայ:

Ուղարկեալ ցուցակը միայն նախկին պարտքերի ցուցակն է. նորը ինչ ասել կ'ուզէ որ դրա մէջը չի մտնիլ: Իշխանի թէ նոր եւ թէ հին գէնքերի հաշիւը վերջապէս: Ուրեմն սկսուում է այստեղի գէնքերի գնումը: Յաւալին այն է, որ գէնքերը նախկին քանակութեամբ չի գալիս: Ասենք դրամ էլ չկայ: Այս անգամ հազիւ 30 ոսկի կարողացանք յատկացնել գէնքի:

Իշխանին սպասելու ես մի յարմար տեղ. եթէ վերեւի գիւղերից մօտիկները կան այդ շրջանին, կարող էք անցնել, հոն գործերը կանոնաւորել մինչեւ նա կը գայ: Այդտեղ կարող էք պայմանաւորուել որ գալուց իսկոյն լուր տայ: Եթէ այդ անյարմար է սպասեցէք մինչեւ վերջը:

Առայժմ այսքանը. ժակէտը եւ շալվարը յետ ուղարկեցէք շտկելու համար. եթէ այդ դրութեամբ հագնին կարող է շուտով փչանալ:

Մնացած կարիքները ուղարկեալ են: Նամակը բերել է Պալարցի<sup>1</sup> Յովհաննէսը:

Բարեկներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. յունիս 14-ին

1.- Պալար – ծածկանուն Արտամէտ գիւղի, Վան-Տոսպ գաւառակ:

**Սիրելի Տիգրան!**

Ստացանք 17 յունիս թւակիրդ, աւելորդ ենք համարում վէրքոտ խնդրի վրայ մատ դնելու. մենք էլ կարծում էինք որ իրար մօտ գալով ամէն բան կը վերջանայ, բայց օրէ օր փոխւում է դրութիւնները... Ինչ եւ է, մենք բոլորս էլ պատրաստ ենք առաջարկիդ համար. քեզնից անկախ մենք էլ վճռել էինք բոլորս գալ, որովհետեւ Կոմսի նոր ստացւած նամակը նոր յայտարարութիւններ է անում: Սարուստանը հրաժարւում է ռազմական օգնութիւն տալ մեզ, եղածն էլ իրենք գործադրել եւ գործադրելու են. հէնց այս պարագան ստիպում էր մեզ բոլորը լինել եւ շուտով կայացնել ժողովը:

Ցաւալին այն որ քո գնալը անյարմար է, շատ հեռու [է], ինչպէս պիտի երթաս եւ ինչպէս պիտի գտնես:

Վարդանը ցանկանում է գնալ եւ հէնց երեկոյեան կը գայ քովդ. աւելի լաւ է դու քո շրջանի գործերը կանոնաւորես, նա կ'երթայ կը բերէ, միասին կը տեսնենք յետոյ:

Պուկրէշտը իր գործով է գնացել եւ ոչ մի յանձնարարութիւն արւած չէ, միայն մոմպատը եւ նամակը յանձնել էինք իրեն Մուռին տալու:

Ուրեմն երեկոյեան կը սպասեն Վարդանին: Սօլերը կը բերեն երեկոյեան:

Բարեկներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

[1905 թ.] 17 յունիս  
Շամ

**Ա. Ենթակոմիտէին**

Ստացւեց ձեր յունիս 13 թւակիրը. թէեւ կարէնին ամէն բան բերանացի խօսւել է, կարիք ենք զգուժմ մի քանի բան էլ գրել:

Ա. Միւս ընկերները որոնք դեռ չեն այցելած իրենց շրջանը, պարտաւոր են մինչեւ ամսոյս վերջը այցելել. հակառակ պարագային իբրեւ պատասխանատուներ պիտի ներկայանաք հոս եւ դատուէք:

Բ. Զինուորների մասին հազար անգամ գրուժմ ենք, նորէն կը գրենք, մինչեւ դուք գիւղեր չիջնէք եւ ամէն բան տեղն ու տեղը չուսուժնասիրէք եւ փաստերը մեզ չբերէք, մենք գիւնուր չենք ուղարկի, որովհետեւ ինքներդ ձեր կաշու վրայ զգացել էք գիւնուորների արածները...

Ի դէպ ի՞նչ իրաւունքով խուրչուողին եւ Յարութիւնին կրկին թոյլ կը տաք ինքնագլուխ գիւղերը պատելու եւ կարգադրութիւններ անելու օրը մի անգամ. երբ պէտք է կարգի տակ դնէք ձեր գործերը. նրանց անմիջապէս յետ կ'ուղարկէք Հեպթաղէմ՝ եւ ամէն բան պարտաւոր են ձեր միջոցով գրել, այլ կերպ նրանք կը մնան անպատասխան:

Գ. Իշխանի Յարութիւնը բացարձակ խաչագողութիւն կ'անէ. նա իբրեւ լիբբ աքսորելու էր դուրս, բայց խնդրեց որ իրեն թոյլ տանք իր ընտանիքով ապրելու մի որեւէ շրջանում, որ իբր թէ ինքը ունէր եզ, տաւար եւն: Մենք նրան ոչ [մի] յանձնա[րա]րական չենք տւել եւ չենք էլ տայ. ինչ ուզուժմ է թող անէ. եթէ իբրեւ հայ կ'ընդունէք լաւ, եթէ ոչ ձեր գործն է...

Դ. Զէնքերը կ'ուղարկենք ձեր ցանկացած գիւղը երեքշաբթի երեկոյեան, դուք էլ ձեզ մօտ եղածը (մոսիսի) ուղարկեցէք նոյն օրը հոն, որ գնացողները բերեն, հասկնանք ինչ պակասութիւններ ունի... զէնքերի գինը եւ ցուցակը կը տանէք հետներդ, մնացորդ դրամը գանձեցէք եւ մեզ ուղարկեցէք:

Ե. Գիւղերում եղողները թող հագուստները դրամով ծախեն. մենք պատասխանատու կը լինենք այն ժամանակ երբ մեր նամակը լինի:

Զ. 4 մէջիդի մասին գրել էինք որ կը կարգադրենք: Նա երկու ամիս ժամանակ է խնդրում, իբրեւ թէ կարողութիւն չունէ, ի՞նչ կ'ըսէք...

Է. Դրամների ստացագրերը հոս է տրւելու. չտրւած դրամների ցուցակը գրեցէք, որ ստացագրեր ուղարկենք:

Ը. Ընկերներէն մէկը անպայման գնալու է Գուգէ[?]\* գիւղը այնտեղի գործերը կանոնաւորելու. Աւետ անունով հոն մէկը կայ, նրան պատւիրելու էք մեր կողմէն որ երբ իրեն կը կանչէ մեր բարեկամներէն մէկը, թող անպայման երթայ եւ նրա առաջարկած գործը անպայման կատարէ: Հոն ապրանքներ է գալու. տեղ պատրաստեն ընդունելու եւ առաջ ուղարկելու: Այս գործը անմիջապէս էք տեսնելու, նրան կը կանչեն. չի իմանալ որ մեր կողմից է:

*Թերթեր չկան, ուղարկում ենք թուղցիկներ թւով 5 հատ: Գալպներ եւ ազաքա-  
կի[?] կան, մէկը 20 դրուչ, դրամ ուղարկեցէք դնենք ձեզ հասցնենք. ձեզ քանի հատ  
է հարկաւոր:*

*Ձեզ մօտ մնացած վիճակախաղի դրամներէն 50 դրուչ տւէք Կարէնին, իսկ 17  
դրուչ էլ վերցրէք ձեր մայիսի ծախսը, իսկ մնացածը ուղարկեցէք:*

*Կարէնի յարմարութիւնների մասին խօսեցինք, նրան առայժմ ժամացոյց չէք  
կարող տալ: Իսկ ռէվոլվէր, ինչպէս խօսել ենք այդ մէկն է, պէտք է փոխադարձ  
կերպով գործադրէք: Խնդրել էինք այդ ռէվոլվէրի ստացագիրը. ինչո՞ւ չուղարկե-  
ցիք:*

*Փոխադրութեան մասին ինչ լուրեր ունէք: Ինչ դառաւ ձեր ներկայացուցիչների  
ժողովը. հարցեր մշակեցի՞ք, ինչո՞ւ մոռացաք...*

*Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ*

1905 թ. յունիս 20ին

**Շամ**

1.- Հեպրադէմ – ծածկանուն Կոտուց անապատի:

**Միրելի Տիգրան!**

Ստացանք 20 յունիս թվականը, շտապում ենք պատասխանել:

ա. Դեռ նոր ենք լսում որ Իշխանի հետ ժամադիր էք եղել, կամ նա ցանկութիւն է յայտնել քեզ հետ տեսնել. նամակ[ում]դ այդ պարագան չկար, Վարդանն առաջարկեց ինքը գնալ, մենք էլ համաձայնեցինք:

բ. Մենք էլ տեղեկութիւն չունենք թէ Իշխան եւ Վարդան ուր են եւ ուր պիտի լինի... Նրանք մեզ նամակ կը գրեն, մենք էլ քեզ կը գրենք:

գ. Այդ շրջանում աշխատելու ես գործերը կենտրոնացնել մի որեւէ մարմնի ձեռքը, կամ ենթակոմիտէ հաստատել:

դ. Ծովաբերի<sup>1</sup> գէնքի հարցն էլ խաղ է որ սարքում են ձեր գլխին. նրան կանչեցինք, ուղարկեցինք որ փորձեն. այդ օրը պատրաստ չէր, պիտի երկու օրից գային եւ փորձէին. եթէ լաւ լինէր տանէին, եթէ ոչ դրամը ստանային. մինչեւ հիմա էլ չեկան, իսկ որ նրանք երկու օր հոս մնացել են — միմիայն 2 ժամ են մնացել...

ե. Մասերը բոլոր պատրաստել ենք տալիս, երկու օրից պատրաստ կը լինի. անմիջապէս կ'ուղարկենք: Մենք պատրաստել ենք տւել իսկականի չափով, աւել պակաս դուք էք հոգալու: Դրամը կը տրւի կազմակերպութիւնից:

զ. Մեր շրջաններին համար տրւած է միայն 4 գէնք, դրա մէջ է եւ Յարութիւնի բերած դրամը: Վերջին գումարից տրւեց 40 ոսկի. ուրեմն ընդամէնը 140 ոսկի դրամ: Դրանցից միայն 2 գէնք ուղարկւած է Սասունիկ<sup>2</sup> (Ուսուլի դրամը) 2 հատ Ա. Ենթակոմիտէին. մնացածը մնում է. աւելի ճիշտն ասած հաշիւները չենք մաքրել, այնպէս մնում է, որովհետեւ Իշխանի գէնքերի հաշիւներն էլ խառն է: Միւս կողմից էլ կ'ուզէինք որ դուք էլ հոս լինէք, դասաւորութիւն միասին անենք, որպէսզի կարողանանք ըստ պահանջի դասաւորել:

է. Նամակների պատճէնները կը բերւի ժողովին. Գարեգինը եւ Մայիսը ոչինչ չեն գրում, սովորական ճառեր են: Իսկ Կոմսը կը գրէ Երեւանի եւ Նախջեւանի դէպքի մասին: Նախապարձակը էլի եղել են պարսիկները. մերոնք տեսնելով որ նրանք շատ են երես առնում, դիմում են կառավարութեան միջամտելու. նահանգապետը յայտնում է որ ինքը անզօր է, եւ ինչ ուզում էք արէք. մերոնք յարձակում են պարսիկների վրայ, 200 կոտորում եւ շատերին վիրաւորում, մերոնց[ից] 10 ընկնում, 20 վիրաւորում. յետոյ կառավարութիւնը տեսնելով հայերի ուժը միջամտում է եւ տները խուզարկում, հոն այժմ ռազմական դրութիւն է\*\* հրատարակւած...

Նախջեւանի դէպքի մասին մանրամասնութիւններ չկան: Նամակի հետաքրքիր կէտ այն է, որ նրանք եղած ծայրերը հոն գործադրել են: Երեւանի դէպքի ժամանակ վառել են 26 հազար [ծայր], մնացածներն էլ պահելու են իրենց համար. Կոմսը առաջարկում է հոս աղբիւրներ գտնել եւ յոյսերնիս այնտեղից կտրել: Այսպէս եւ այնպէս դրութիւնը շատ է կրիտիկական եւ մեր կողմից այսքան ուշացնել (խնդիրների



կարգադրուածիւն) կատարեալ դաւաճանուածիւն է, որ յետոյ շատ պիտի փոշմանենք... Մեզ մնում [է] օր աւուր առաջ հաւաքուել եւ վերջին կարգադրուածիւն անել: Ամբողջապէս զբաղուած ենք այդ ինդիւրներով եւ ուրիշ բան չէ գալիս գլուխներնիս: Պարսկաստանից գէշ լուրեր ենք առնում, իբր թէ դէպք է եղել, կոտորած է եղել. մանրամասնութիւններ եւ ստոյգ տեղեկութիւններ պակասում են. մերոնք դեռ չեկան:

Խնձոր<sup>3</sup> պատրաստի չկար, դրամ էլ չկայ որ պատրաստել տանք:  
Այստեղ ուրիշ նորութիւններ չկան:

Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. յունիս 21ին

Յ. Գ.— Կը լսենք որ ձեր այդտեղ լինելը շատ է տարածայնուել. եթէ վտանգ էք սպասում, աւելի լաւ կը լինի խորհրդակցելով Պուկընէշտի հետ (որ տեղիդ պայմաններին լաւ ծանօթ է) այդտեղ եւ Ուսուրը միասին մի եզրակացութեան եկէք. լաւ կը լինէր գայիք հոս. էլի ժողովէն վերջ կարելի էր նորէն գնալ, վերջապէս ապահովութեան վրայ լուրջ մտածեցէք:

ՆՈՅՆ

- 1.- Ծովաբեր – ծածկանուն Ծվստան գիւղի, Վան-Տոսպ գաւառակ:
- 2.- Սասունիկ – ծածկանուն Շուշանց գիւղի, Վանի գաւառ:
- 3.- Խնձոր – ռումբ, նռնակ:

**Միրելի Գարեգին!**

1. Ստացանք քո երկու նամակը (մայիս 24 եւ յունիս 2 թւակիրը) եւ Մալխասի նոյն թւակիրը: Այս սուրհանդակի\* հետ մենք խօսել էինք եւ փոխադրութան\* մասին, այդ առթիւ դուք ոչինչ չէիք գրում:

Ա՛խր դատարկ սուրհանդակութիւնից ինչ դուրս կը գայ. մենք դրանց պահում ենք, որ արագ եւ կանոնաւոր յարաբերութիւն ունենանք դրսի աշխարհի հետ, գիտակ լինենք քաղաքական կեանքի ելեւէջների հետ, գրքեր եւ թերթեր ստանանք, իսկ այս պարագաները վերջերս բոլորովին անկարելի դառաւ, մի քանի պատճառներով: Արագութիւն բոլորովին չկայ, ամենաշատը դրանք 15 օրից են գալիս հոս, ուրեմն մի նամակ գրել եւ պատասխան ստանալը 30-40 [օր] է տեւելու, իսկ այս նորութիւնների ժամանակ այդպիսի դանդաղութիւնը հաւասար է գրոյի: Դրանք թերեւս ուշանում են վարձի քչութեան պատճառով, իսկ ամէն ատեն գնալ-գալուն մի ոսկոց աւելի անկարող ենք տալ եւ միտք էլ չունի, երբ նրանք բացի մի դատարկ նամակից, ուրիշ ոչ մի բան չեն համաձայնում բերել:

Հիմա կարեւոր նորութիւններ չկան միմեանց հաղորդելու, ուրեմն դրամով ըիսկ անելու ժամանակ չէ, մանաւանդ որ դրամի համար այսքան նեղում ենք:

Մենք հիմա մի կողմը թողած սուրհանդակային խնդիրը, մեր բոլոր ուժերը լարում ենք փոխադրութան\* համար. ամօթ է մեզ համար, այսպիսի խաղաղ պարագաները բաց թողնել. յետոյ շատ պիտի փոշմանենք, բայց ուշ կը լինի: Մեր պատմական սխալներից մէկն եւ ամենագլխաւորը ժամանակից օգտուել չիմանալն է: Այս մարդկանց դեռ չենք տեսել. այսօր կը տեսնենք եւ ինչ հարկաւոր է կը խօսենք:

Բացի սրանից եկաւ եւ Կոտորաշ-ի\*<sup>1</sup> վրայով ուղարկւած նամակը. նամակաբերին հէնց նոյն օրը յետ ուղարկեցինք, երեւի ստացած կը լինէք:

2. Գաղթականների գալու խնդիր. դա մի պատմական չարիք է որ գրչի մի հարւածով չի լուծւում. քանի որ գոյութիւն ունի հազար գլխանի հրէշը, քանի որ երկրում սով ու տնտեսական ճգնաժամ է, քանի հոս գործ չկայ, քանի ապրելու միջոց չկայ, քանի որ հայր իւր վաթանում անկարող է իւր ֆիզիքական ու հոգեկան պահանջներին բաւարարութիւն տալ, պիտի գաղթի. չարիքը արմատից է կոտորելու մենք թէեւ հաւատացած ենք որ այդպիսի արհեստական միջոցներով անկարող ենք կանգնեցնել այդ հոսանքը, բայց մեր կարեցածին չափ արգելում ենք եւ միջոցներ ենք ցոյց տալիս հոս ապրելու, եւ գծերի վրայ պատուիրել ենք որ գնացողներին յետ ուղարկեն: Այդտեղ ով խօսում է մեր անունից, չհաւատաք, խաչագողներ են: Կարիք չկայ թռուցիկի. ժողովուրդը մեզինից լաւ գիտի արտասահմանի պարագաները եւ Ռուսաստանի նամակները ժողովրդի հասցէին միաբերան գողում են, չգալ, չգալ... բայց հաց չկայ հաց...

3. Արտաչէսի գալու\* մասին թէ իրեն թէ Մալխասին – Աւարայրի գծով – գրել ենք, նա կը սպասէ մինչեւ մենք այս կողմից դիւրութիւն կը ստեղծենք: Այլ խօսքով

մինչև աշուն: Ի դէպ քո մայրս 12 թւակիր նամակը Աւարայրի գծով չենք ստացել. որի հետ էք ուղարկել:

4. Ստացել ենք 72.5 ոսկին որի անդորրագիրը կը ստանաք այս նամակի հետ:

Մենաւորից նամակները ստացանք. յիշածդ ապրանքները ճիշտ է, ուղարկւած է, բայց ճանապարհին է, շոտով կը ստանանք: Խնդրել էինք, նորից գրու՞մ ենք որ Մենաւորի գիծը այդ կողմից չբանաք, այդ թողէք մեզ. այդտեղից մի նոր գիծ ենք բացել: Ստացանք առաջին պարտիան թւով հազար\* հատ. նոյն մարդկանց նորից ուղարկեցինք. ձի էին խնդրել, աշխատեցէք տալ: Երեւի լսեցիք եւ Աւարայրի նոր գծի մասին. այնտեղից էլ առաջին պարտիան թւով 3 հազար\* եկաւ մինչև հոս:

Յոյս ունենք դրանց վրայ: Զարմանալին այն է, որ Մալխասը քո նամակի հետ գրու՞մ է, որ ուղարկւածը 2 հազար\* է. սա ինչ խաղ է:

5. Տեղիս գրու՞թիւնը. ինչպէս գրել ենք դրու՞թիւնը խաղաղ է, թերեւս ոճիրներով յղացած, բայց նշանները աւելի են հաստատում այդ դրու՞թիւնը. այս քանի օրը երեւի բաւարար զօրք է գնացել եւ էլի կ'երթայ. ռազիֆները<sup>2</sup> հաւաքում են. դեռ գործի չեն ձեռնարկել. տեղիս կուսակալը գրել է, որ ժողովուրդը անօթի է, եթէ ռազիֆները հաւաքենք չարսուի մէջ աղմուկներ կը ձգեն եւ խանութները կը թալանեն...

Ալճավազի<sup>3</sup> քէօռ Հիւսէին փաշէն կանչել են իւր ալայիներով<sup>4</sup> պատերազմի գնալու. նա ինքն էր խնդրել. այդպիսի մի խաղ էր խաղացել եւ յունական պատերազմի ժամանակ, այն նկատումով որ հեռու է, իրեն չեն կանչի. այն ժամանակ իբրեւ հաւատարմութեան նշան եւ սիրոյ առհաւատչեայ նրան տւել էին մի ոսկի մեղալ. այս անգամ այդ խաղը անյաջող անցաւ. նրան կանչեցին եւ նա այժմ սոփեստութիւնների է դիմել ազատելու համար, շատ լիւրք է եւ մեր դատին ամենամեծ ախոյեան<sup>5</sup>. է՛հ, ինչ եւ է, ամէն բան լաւ է, բայց ցաւալի է, որ այս հանգամանքից օգտւել չենք կարող:

Հետաքրքիր է իմանալ թէ առհասարակ Մենաւոր, Աւարայր եւ Մինարէթ<sup>6</sup> Գերսգալու\* համար որչափ ռազմամթերք\* կայ:

Գրում էք որ Մենաւորէն ես եւ կարծեմ Մալխասը ոչ մի կտոր կոթ եւ ապրանք չենք բերել, գնել — չգիտենք որին հաւատանք, ձեզ թէ Մենաւորին:

Փայակը վերջին անգամ նախքան Մենաւորէն հեռանալը գրում էր որ Գարեգին եւ Մալխաս կարգադրել են, հոս եղած նոր կոթերը տեղափոխել Աւարայր. ես էլ վաղը վերցնելով հոն պիտի երթամ վերջնականապէս:

Իսկ Շանթը իւր վերջին նամակում գրում է.— Երեւակայեցէք. Ատրպատական այնքան կը կասկածին որ վերջերս Վրէժէն պահանջեցին ծայրեր եւ Աւարայրէն փոխադրեցին տարան. իսկ Աւարայրէն Կ. Կոմիտէի որոշմամբ այստեղ գտնւած նոր երկու կոթեր եւ խմորներ եւ կապուղներ փոխադրել Աւարայր... եւն ... Ուղղագրութիւնը եւ կէտադրութիւնը իրենցն է... Ուրեմն կասկած չկայ որ տարել էք եւ շարունակում էք տանել. Աստուած ձեզ հետ. գոնէ մեզ էլ գրեցէք որ մեր անեղծները իմանանք: Սարուստանը բացարձակ կերպով մեզ խաբեց. երկրի համար գնւած բոլոր ապրանքները հոն գործադրւեցին եւ վերջն էլ մեզ յայտարարեցին որ մեզնից յոյսերնիդ կտրեցէք. սա որտեղի ազնութիւն է: Նոյն բանը սկսում է Վրէժի շրջանում. նորից եմ կրկնում, վերջնական կերպով մեզ յայտարարեցէք թէ երկ-

րի համար հոտ եկած ապրանքները մեզ էք ուղակելու թէ պահելու էք ձեր շրջանի ինքնապաշտպանութեան համար: Դա կարեւոր է, ինչ անում էք արէք, բայց աշխատենք միմեանց չխաբել...

6. Դուրանի<sup>7</sup> դէպքերը. Արդէն գրել էինք որ Գէորգ Չաւուշը երեք դէպք է ունեցել. Ղարս<sup>8</sup>, Ալուարինջ<sup>9</sup> եւ Ս. Աղբերիկ<sup>10</sup>. մերոնցից միայն մինը նահանջի ժամանակ ջրում խեղդուում է: Թշնամուց յայտնի մարդիկ են ընկել թւով 22 հոգի. հիմա լուռ թիւն է:

Մանրամասնութիւնները գրած է խմբագրութեան<sup>11</sup>:

7. Մենք էլ լսեցինք փոքր Սարգիսի<sup>12</sup> մասին, բայց չհասկցանք թէ ուր մնացին. եթէ նրան նամակ էք գրելու մեր կողմից էլ գրեցէք. թող մեզ նամակ գրէ իւր անեղիքների մասին եւ իւր մասին տեսնենք ինչ է արել եւ ինչ պիտի անէ:

8. Այստեղից ուղարկել էինք քուրդ Սահակին\* քեզ մօտ մի քանի նամակներով եւ պահանջներով. գոնէ Վրէժ գրեցէք որ հինի եւ նոր վիճակներ ուղարկեն: Սահակին\* լաւ կը լինի որ միացնէք Աւարայրի լօ-լօ-ների հետ: Այդ մասին գրել էինք Մալխասին, բայց լուր չառանք. նա ո՞ւր է եւ ի՞նչ է անում:

9. Գրել էինք Վազգէնի քրոջ<sup>13</sup> մասին տեղեկութիւն առնէք խմբագրութիւնից եւ Ամերիկայից, ոչինչ չգրեցիք թէ ի՞նչ եղաւ:

10. Կարմիր-խաչի տեղեկագիրը եւ ապրիլի հաշւեցոյցը ստացա՞ք եւ ուղարկեցի՞ք ուր հարկն է: Մայիսինը ուղարկել ենք Մալխասին, լաւ կը լինի որ հաշւեցոյցները չուշացնէք:

11. Խնդրել էինք որ ամէն անգամ դրամ ուղարկելուց գրէք թէ<sup>14</sup>

## 107

Փաստ. 661-149

որտեղից է ստացւել եւ ինչ կոմիտէի հաշւին է. դրան կից գրելու էք իրենց դրամով ինչ քանակութեամբ է եկել եւ ինչքա՞ն է ուղարկւել:

12- Մալխասը կը գրէ թէ Հաջի Գեորգը\* կ'ուզէ գալ եւ այստեղի վրայով գնալ իւր հայրենիքը: Չենք կարող ընդունել. [Գէորգ] Չաւուշը խայտառակ դրութեան մէջ է, օր օրի փախստականներ են աւելանում. նա էլ դէպի մեզ է ուղարկում: Այստեղ 10-ի չափ մարդիկ կան, որ դուրս պիտի երթան:

Նոյնը եւ Մեայուհի\*<sup>15</sup> մասին:

13- Աստուծոյ սիրոյն, դուք էլ շտապեցուք փոխադրութիւնը\*: Մի բան որ մեզ վրայ շատ վատ ազդեց եւ որի մասին պարտք ենք համարում գրել քեզ: Անցեալ անգամ Մալխասի ուղարկած ապրանքները\* սարսափելի կերպով կեղտ ու մուրի մէջ թաղած էին եւ մեծ մասամբ ճեղքած: Երեւակայեցէք 3 հազարից հարիւր\* փչացած էր. ախր ինչպէս կարելի է փչացածները ներս ուղարկել. մեղք չէ եւ ափսոս չէ այն դրամը որ տալիս ենք իբր վարձատրութիւն: Նոյնը եւ Մենաւորինը. առ հասարակ ապրանքների պահպանման վրայ լուրջ ուշադրութիւն չեն դարձնում:

Այդ կերպ պահպանված ապրանքները մեզնից լաւ գիտէք որ երկար չեն դիմանայ: Եթէ գործ ենք անում, լաւ անենք. եթէ չենք անում, հէջ էլ կիսատ-պուտտ չանենք...

Ի դէպ, մենք Մալխասին Վրէժ գնալու համար մի ընկերական նկատողութիւն էինք արել. փոխանակ լսելու մեր խորհուրդները նա մեզ այսպէս է պատասխանում – Վրէժ երթալու համար ձեր կծու նկատողութեան բնաւ կարիք չկայ, քանի որ ոչ մի գործ երեսի վրայ չի մնայ. իմ բացակայութիւնը տեւեց միայն 20 օր եւ այդ մտտութիւնը [?] ան էր որ այդ ժամանակամիջոցում չկրցայ ձեզ նամակ գրել: – Գեղեցիկ է չէ՞. հէնց այդ նամակ չգրելն էր որ մեզ վրայ նստեց 71 ոսկի. ապրանք բերողին ամբողջ 15 օր ձգձգում ենք լուր իմանալ[ու համար], իսկ լուր չկայ ու չկայ, իսկ վերջը ապրանքը ծախւեց...

14- Հետաքրքիր է իմանալ թէ ձեր շրջանում եւ Վրէժում քանիսով կարելի է ժողովրդական զէնքեր\* ձեռք ձգել. օր[ինակ] հոս գնում ենք հետեւեալ գներով. բերդան\*՝ 5-7 ոսկի, մարդիցի\*՝ 10-12 ոսկի, մոսիցի\*՝ 10-15 ոսկի, վարանդեղ\*՝ 10-12 ոսկի:

Ծայրեր բերդանի 100-ը թարվիզի լիցք՝ 180-200 դրուչ: Իսկական չկայ: Մնացածները մի քիչ աւել պակաս:

15- Կոմսը գրում է որ գրքեր է ուղարկել հոս ուղարկելու համար. ամէն անգամ ինձ 1-2 [համար] չէք ուղարկում: Խնդրել էինք Դրօշակի 1904 թ. NoNo 2 եւ 11, դուք ուղարկել էիք 905 No 2ը, իսկ վերջին 4 եւ 5ը Մենաւորի գալուց քննել\* է. 2-2 օրինակ ստացել [ենք] Մալխասից եւ մէկ-մէկ քեզնից: Դրանցով ինչ կը լինի. դա աւելի կուսածաղիկ պիտի դառնայ: Հազար անգամ խնդրեցինք Պրօ-Արմենիա, Ռեւոլյուցիոնիստ\*\*[?], «Անդրոնիկէ», «Դէպի կուլ» եւ վերջին – յեղափոխականներ – Գո-լոշեան եւ Ագրիպասեան. – Պոպիլիզի ցարիզմա\*\*<sup>16</sup> ինչ եղաւ, ինչո՞ւ գոնէ մէկ մէկ չէք ուղարկում:

Բարեկներ ենք ուղարկում Հաջի Լեւոնին, Սարգսին, Տարհադին<sup>17</sup> եւ բոլորին. Քեռին<sup>18</sup> մեզ մոռացաւ, իսկ Լեւոնի հետ հաշիւներ ունենք, յետոյ կը մաքրենք. լաւ է անում, ինչո՞ւ նրան այստեղ չթողեցիք որ նա մեզ լաւ յիշէր...

Այստեղի մեր ոսկերիչ ընկերների համար մի երկու գրականքայ սխանուռ ուղարկեցէք: Մի անգամ էլ ուղարկել էիք, երեւի կը յիշէք:

Ձերմ համբոյրներով՝  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. յունիս 16-ին

Շամ

Յ. Գ.— Նախկին սուրհանդակը ուշանալու պատճառով ուղարկում ենք սրան. անմիջապէս յետ ուղարկեցէք: Շատ գէշ լուրեր ենք առնում Մենաւորէն, Աւարայրէն եւ ձեր շրջանից – ժողովրդական լուրեր են – չգիտենք ինչ է պատահել: Մրգաստանի դէպքի մասին Կոմսը գրել է:

*Սրան իբր վարձ մի օսմանեան ոսկի կը տաք, որ ձեր նամակները եւ թերթեր ու գրքեր հետեւէ բերելու պայմանով: Այդպէս էլ իրեն խօսուել է:*

*Աւարայր գնացած լօ-լօ սուրհանդակները եւ ապրանք բերողները չեկան, թէեւ այսօր 15 օր է գնալները: Աստուծոյ սիրոյն շուտ լուր հասցրէք:*

*Հոս նորութիւններ չկան:*

**ՆՈՅՆ**

**21-ին յունիս**

**Շամ**

*Ոտանաւորը Արմենակինն է. ուղարկել «Դրօշակին»․ հասցէն էլ ուղարկել նոյն տեղը․ արդէն մի անգամ էլ ենք գրել, թող նոյն տեղը թերթ ուղարկեն Իտալիա\*\* նրանք էլ մեզ կ'ուղարկեն:*

- 1.- Կոտուպաշ – գիւղ Վանի գաւառին մէջ:
- 2.- Պահեստի զինուորները:
- 3.- Ալճաւազ, Ատլճաւազ, հայկական Արծկէ գաւառ եւ համանուն քաղաք Վանայ լճի հիւսիսը:
- 4.- Գումղերով:
- 5.- Ոսխ, թշնամի իմաստով:
- 6.- Յաջորդաբար՝ Թաղէի վանք, Խոյ եւ Սալմաստ:
- 7.- Տարօնի:
- 8.- Դարս կամ Խարս – գիւղ Մշոյ գաւառին մէջ:
- 9.- Ալուառինջ – գիւղ Մշոյ հարաւը:
- 10.- Ս. Աղբերիկ – վանք, Մասնոյ Բռնաշէն գաւառին մէջ:
- 11.- Իմա՝ Ժըմեւ «Դրօշակ»ի խմբագրութեան:
- 12.- Միեւնոյն Սարգիսն է, Շամիլ, Կոլոտ Սարգիս ծածկանուններով. բուն անունը՝ Օտապաշեան Պօղոս:
- 13.- Վազգէնի քոյրը՝ Տէրոյեան Զարուհի, Ժենիա ծածկանունով, Վասպուրականի Կեղը. կոմիտէի նախկին անդամ, թուրք կառավարութեան կողմէ քարտի դատապարտուած, նախ Երուսաղէմ, ապա Դամասկոս:
- 14.- Փաստ. 661-259-ը կանգ կ'առնէ հոս, անաւարտ: Շարունակութիւնը բարեբախտաբար կը գտնենք թիւ 661 թղթածրարի 149րդ փաստաթուղթին կից:
- 15.- Մեպուհ – Ներսէսեան Արշակ, ապագայ զօր. Մեպուհ:
- 16.- Մէկ աստղանիշ կրող բառերը բնագրին մէջ ծածկագիր են (շիֆրէ), իսկ զոյգ աստղանիշ կրողները՝ ռուսատառ կամ ռուսերէն:
- 17.- Յաջորդաբար՝ Ախալցխացի Լեւոն (Անդոյեան), Բարսեղեան Սարգիս, Օհանջանեան Սարգիս:
- 18.- Քեռի – Արշակ Գաաֆեան. Լեւոն – Ախալցխացի Լեւոն, Հաջի Լեւոն (Անդոյեան):

**Միրելի Տիգրան!**

Լսեցինք որ եկել ես. դժբախտաբար աղանին գնացել է. չգիտեմ ինչ տրամաբանութեամբ նամակը ուղարկած օրը աղանին էլ ուղարկել են. նամակը գրւած է 20-ին, հասաւ մեր ձեռքը 23-ի առաւօտեան, նոյն գիշեր անձրեւի պատճառով չյաջողեցինք գալ, իսկ այսօր ուշացանք... ինչեւէ. հիմա աշխատելու է մի կերպ աղանի բերել տալ: Ամրոցում գործը բոլորովին երեսի վրայ մնաց. սուրհանդակների օրերն են: Սլաքի<sup>1</sup> դատը երկու շաբաթ [Երկուշաբթի<sup>օ</sup>] օրը վերջանալու է... Վերջապէս ամէն ջանք ի գործ դրէք աղանի ճարելու. մենք ուղիղ ժամը 2-ին քեզ մօտ կը լինենք:

Բարեւներով  
ԱՐԱՄ

1905 թ. յունիս 25-ին  
Պալար

1.- Սլաք – ծածկանուն Օխիկեան Արմենակի (1874-1915), կուսակցական գործիչ Բաղէշի շրջանին մէջ: Բանտն էր եւ կը սպասուէր դատավճռին:

**Մենաւորի ընկերներին**

**Միրելիք!**

Հէնց այսօր Պարապին<sup>1</sup> կանչեցինք հոս եւ խօսեցինք որ այսուհետեւ ապրանքները նա ընդունէ եւ այս կողմը նա ճանաչէ: Նա սիրով ընդունեց եւ պատրաստականութիւն յայտնեց ամէն կերպ համակերպել մեր պահանջներին: Ուրեմն դուք այսուհետեւ կը ճանաչէք Պարապին եւ նամակները կ'ուղղէք նրան: Եթէ գծերը կանոնաւորեց լաւ կը լինի որ բոլոր կայարանների ճանպարհան փոխենք. արդէն շատ տարածւած են... Այս բոլորը մենք կը կարգադրենք ապագայում:

Կիրճեցի Խոսքովը\* եկաւ մեր քով եւ ընկերների կողմից պատրաստականութիւն յայտնեց շրջիկ աշխատել. մենք ճիշտն ասած ոչինչ չունենք նրան դէմ, թէեւ հաշիւների մէջ թիւրիմացութիւններ կային անցեալ տարի, բայց չհասկացանք թէ ո՞ւր է եղած: Քանի որ այդպէս է եւ քանի որ Աւետարանցիք էլ այդպէս արին, լաւ կը լինի որ որոշ ու խիստ հաշւապահութեամբ եւ մեր անմիջական հսկողութեան տակ սրանց կրկին գործ տանք, միայն մի պայմանով, որ տարւած ապրանքը մինչեւ

Թասլիմ չանեն<sup>2</sup> Պարապին եւ մինչեւ նրա ստացագիրը չբերեն, նրան ապրանք չյանձնէք. նոյն իսկ եթէ ապրանքի մի մասի ստացագիրը լինի էլ չհաւատար: Այս պայմանը մենք հոս իրեն դրինք, ընդունեց, դուք էլ կրկնեցէք եւ վերջին խօսք առէք: Իբրեւ վարձ խօսեցէք ամէն հազարին մի օսմանեան ոսկի մինչեւ Պարապի մօտ, եւ դրամն էլ կը ստանան այն ժամանակ երբ ստացագիրը կը բերեն:

Սրանք ճարպիկ մարդիկ են, եթէ սրանց լաւ հսկողութեան տակ պահենք մեծ գործ կը ստացուի: Այս է մեր կարծիքը. սրանց դուք էլ լաւ ծանօթ էք, գիտէք եւ պարագաները անցեալի: Եթէ յարմար կը գտնէք գործ կը սկսէք:

Աստուծոյ սիրոյն սրանց առաջի քայլից գէնք չտաք իրենց մօտ պահելու համար: Եթէ այս կողմը բերելու համար կոթեր ուղարկէք, ամբողջը չուղարկէք, այլ մաս-մաս: Եթէ ամբողջ լինի պիտի մնայ ճանապարհներին:

Հասոն եւ ընկերները բերին ապրանքները, մի հազար (մէկը պակաս էր), կրկին վերադարձան. մինչեւ հիմա լուր չկայ, չգիտենք ինչ եղան: Լսում ենք որ տեղդ խստութիւններ կան եւ դուք էք պատւիրել որ առայժմ չգան. որքա՞ն ճիշտ է: Հետաքրքիր է իմանալ թէ Մենաւորում որչափ ապրանք կայ եւ յոյս ունէ՞ք նորերը ստանալու: Աչնան համար այժմանից պիտի պատրաստութիւններ տեսնէք:

Ինչ նորութիւններ ունէք Սարուստանէն, Աւարայրէն եւ Մինարէթէն<sup>3</sup>. Սահակը ո՞ւր մնաց, ինչո՞ւ չէք յետ ուղարկում:

Մեզ մօտ նորութիւններ չկան:

Անմիջապէս գրեցէք Գարեգնին, որ հոս ստացւեց Մ. Ք.-ից. 114 ոսկի. թող հոն հեռագրեն, որ ստացել ենք եւ թող նոյն հասցէներով կրկին ուղարկեն:

N 4 եւ N 5ը չստացանք. գոնէ ձեզ եկած «Հայրենիքները» կարդալուց յետոյ մեզ ուղարկէք: Եթէ հոտ «Կովկասեան վէրքեր» կան հատոր Ա., մէկ օրինակ մեզ ուղարկեցէք, իսկ Բ. հատորը ուզելով մեռանք:

Ինչ նորութիւններ որ կը ստանաք անմիջապէս մեզ ճանապարհէք:

Բարեւներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. յունիս 30ին

Շամ

1.- Պարապը նոյն Մելոն է, զինուոր, փոխադրութեան գործով զբաղող Բերկրիի մէջ:

2.- Չյանձնեն:

3.- Յաջորդաբար՝ Կովկասէն, Խոյէն եւ Սալմաստէն:



**Արեւել[եան] Բիւրոյին**

**Ընկերներ!**

Վերջապէս ձեզնից առանք երկու նամակ. մէկը Բարսեղեանի<sup>1</sup> գրածը, միւսը Կոմսի: Բարսեղեանի նամակը ապրիլ 10 թւակիր էր, ստացանք մայիս 24-ին: Ախր ինչո՞ւ ուղղակի հոս չէք գրում որ շոտով մեզ հասնի. ներքեւ կը դնենք մի քանի հասցէներ, պարբերաբար օգտւեցէք եւ միշտ գրեցէք:

Այս անգամ շտապում ենք մի քանի խօսք ասել Կոմսի նամակի մի քանի կէտերի վերաբերմամբ:

Ա- Այստեղ առանք Դ[աշնակցութեան] Խ[որհրդի] մեզ վերաբերող մասը, դժբախտաբար Վրէժի վրայով. ա՛խր, ինչ նկատումներ. աւելի քան գաղտնի եւ մեզ վերաբերող այդպիսի գրութիւն բաց գրւած ուղարկում են Վրէժ, պատճէնը մեզ ուղարկելու... խնդրում ենք յանուն գործի յաջողութեան այդպիսի գոյն կրող խնդիրները գաղտնի թանաքով գրել եւ բացառապէս մեզ ուղարկել: Ի հարկէ կարելի է Վրէժ կամ Աւարայր, պայմանով որ հոն կարդալու իրաւունք չպէտք է [է] ունեւ[նա]ն: Բաւական է որքան անհաշիւ եւ ցրւած գործեր կատարեցինք:

Լսեցինք որ Դ[աշնակցութեան] Խ[որհուրդը] 80 հազար ռուբլի է նշանակել մեր շրջանի ռազմամթերքի համար. շատ շնորհակալ ենք. աւելի քան բարի են եղել մեր վերաբերմամբ այդ կէտում: Այդ առթիւ մենք շատ բան ունենք ասելիք, բայց քանի որ ընկերները գաւառ են գնացել, մենք առ այժմ կը բաւականանանք մի քանի թռուցիկ դիտողութիւններով, մինչեւ ընկերներ կը գան. հէնց առաջիկայ փոստով կը գրենք ձեզ մեր վերջին որոշումները: Նկատելով Բարձրաւանդակի շուրջը տեղի ունեցած թիւրիմացութիւնները, նկատելով անցեալ տարւայ սահմանագլխի բազմաթիւ վիժմունքները, նկատելով փոխադրութեան արտասահմանից ղեկավարելու բոլոր անգործնականութիւնները, նկատելով Սարուստանի ընկերների բազմաթիւ զբաղումները տեղական գործերի համար, նկատելով աշխատանքի բաժանում չլինելուց առաջ եկած բոլոր դժբախտութիւնները,— այս եւ ուրիշ բազմաթիւ նկատումներով մենք մտածել ենք այդ 80 հազարի գործադրութիւնը եւ տեղափոխութիւնը դնել այնպիսի պայմանների մէջ, որ խուսափեն այն բոլոր անակնկալներից ինչ առաջ է գալիս մեր անփորձութիւններից եւ գործերին ծանօթ չլինելուց. թէ ի՛նչ պայմանների տակ պիտի դուրս, ըստ մեզ այդ գործը, ինչպէս ասացինք դրա մասին մանրամասն դիտողութիւնները կ'անենք հէնց առաջիկայ փոստով, իսկ մինչ այդ առաջարկում ենք այդ 80 հազարը անձեռնմխելի պահել մինչեւ մեր վերջին խօսքը. ի նկատի ունեցէք որ եթէ տեղիս 2 Կ. Կոմիտէներէ<sup>2</sup> ակտիւ ձայնը չլինի այդ դրամների գործադրելիութեան եւ շահագործման մէջ, այլ լոկ թամաշաչու<sup>3</sup> դեր պիտի ունենանք, մենք բացարձակապէս մերժելու ենք այդ տեսակի գործունէութիւնը:

խսկ եթէ արտասահմանի ընկերները համաձայն չլինեն այդ առաջարկութեանը, մենք պատրաստ ենք ամենայն ուրախութեամբ մեր տեղերը զիջել նրանց եւ առանձին տեղ փնտուել մեր գործունէութեան վայր, կամ լոկ [իբրեւ] ժողովրդին յուսահատութիւնից ազատողները՝ կ'ապրենք մեր շրջանում եւ տեղական ուժերով կ'անենք, ինչ որ հնարաւոր է անել: Մենք հրաժարուում ենք անմեղ արեան պատասխանատուութիւն վերցնել մեզ վրայ...

Բ- Դ[աշնակցութեան] Խ[որհրդ]ի արձանագրութեան մէջ գրւած էր թէ Պարոյրը (Շահէնը)<sup>4</sup> պիտի գայ ներս միայն պատրաստութիւնները տեսնելուց յետոյ. աւելի քան խելօք եւ գործնական որոշում էր, որ ուրախութեամբ ընդունեցինք: Բայց դժբախտաբար ուրիշ բաներ ենք լսում մասնաւոր աղբիւրներից. ահա ինչ են[ք] կարգում Մալխասի [նամակում]. «Պարոյրից նամակ առայ, որով կ'իմացնէ թէ տեղս գալու մտադրութիւնը ունի եւ ձեր կողմը անցնելու. թերեւս Սամսոնի հետ<sup>5</sup>».

Իսկ Կոմսի նամակի հետեւեալ տողերը աւելի հաստատում են այդ լուրերը. «Պարոյրին կանչեցինք այստեղ (Մ. Բ.). նա գալուց յետոյ պիտի խորհրդակցենք երկրի պահանջների վերաբերմամբ...»: Նոյն բովանդակութեամբ մի նամակ էլ ստացել է Սամսոնը, որ պ. Պարոյր կը գրէ նրան որ սպասեն միասին ներս գնալու...

Չգիտենք որին հաւատանք, Դ. Խ.ի որոշումներին, թէ մասնաւոր նամակներին, որոնք կարծես աւելի իրական լինելու գոյն ունեն. ինչ եւ է. եթէ ուզում էք հէնց այս տարի դէպքեր ունենանք, կամ չկարողանանք երկիրը խաղաղ պահել, համաձայն-ւեցէք նրա գալուն, իսկ եթէ դուք անկեղծ կերպով ցանկանում էք (ինչպէս ձեր բոլոր նամակներից կ'երեւայ) երկիրը հանգիստ պահել, յարգել[ու էք] Դ. Խ.ի գեղեցիկ վճիռը նրա վերաբերմամբ: Մենք անկեղծ կերպով կը ցանկանայինք նրան մեր մէջ ունենալ, բայց լոկ նրա անուսը բաւական է ամէն բան տակնուվրայ անելու: Արդէն գրել ենք որ Սարհատը Դուրանում անկարող է ապրել. պիտի անցնի մեզ մօտ. մենք մտածում ենք նրա համար մի ճար տեսնել, իսկ այդ կողմից էլ, այդպիսի լուրեր ենք առնում. գոնէ մեզ հանգիստ թողեցէք մեր սեւ ազ[ա]տութեան մէջ: Վերջապէս ի՞նչ կարիք կայ մասնաւոր ընկերներին գրել այդպիսի աւելի քան կարեւոր գաղտնիքները. խոմ գիտէք Վրէժի շրջանի ազատութիւնը եւ նրանից առաջ եկած չարիքները. նոյնիսկ մեզ էլ գրելու կարիք չկայ: Է՛հ, այսքան դժբախտութիւններ տեսնելուց յետոյ կրկին անփորձ լինել աւելի քան ցաւալի է:

Խնդրում ենք շրջանային ժողովների արձանագրութիւններից մէկ-մէկ օրինակ, գոնէ երկրին վերաբերող մասերը, Աւարայրի վրայ[ով] մեզ ուղարկել:

Ստացել ենք Մրգաստանից 222 ¼ ոսկի Օննիկի միջոցով, 105 ոսկի Արամի դրամը Ֆրանգեանի միջոցով. վերջապէս 86 ոսկի առաջ, իսկ այսօր 174 ոսկի. Սամսոնէն միայն 75 ոսկի: ապրիլի հաշւեցոյցը ուղարկել ենք Սամսոնի գծով: Մայիսինը կ'ուղարկենք Աւարայրով:

Բարսեղեանը կը գրէ, որ մտադիր ենք ձեզ համար 50 տասնոց ատրճանակ ուղարկել. եթէ այդ նւէր է ուղարկում մեզ, ուրախութեամբ կ'ընդունենք, իսկ եթէ 80 հազարից է, աւելորդ շուսյութիւն է, որովհետեւ միեւնոյն է. հրացան վերցնողը պիտի վերցնի եւ տասնոցը. եղածները մեզ բաւական է. ուժ էք տալու հրացանին, մանաւանդ խմորին. այդ 50 ատրճանակի դրամով 50 կողակի մոսին գնէք եւ մեզ

ուղարկէք, գեանից մինչեւ երկինք շնորհակալ կը լինենք ձեզնից: Իսկ մինչ այդ սպասելու էք մեր վերջին համաձայնութեան: Բացի Դ. Խ. ի որոշած ընկերներէից, ոչ մի մարդու առանց մեր նախապէս համաձայնութեան՝ ներս ընդունել չենք կարող, թէ ինտելիգենտ, թէ գինւորական. հակառակ պարագային ստիպւած կը լինենք յետ ուղարկել:

Բարեւներով՝  
[ԱՐԱՄ]

Քանի որ երկու Կ. Կոմիտէներ են ստեղծուած, լաւ կը լինի որ շուտով պատրաստել տաք եւ մեզ ուղարկէք մի երկրորդ կնիք. թէեւ Դ. Խ.-ը անունները դրել է՝ Վասպուրական եւ Շամ Կ. Կ., բայց լաւ կը լինի որ լինի՝ Վասպուրականի եւ Լեռնապարի Կ. Կ.ներ:

1.- Այս Բարսեղեանը ծածկանունն է Արեւելեան բիւրոյի անդամ բժիշկ Յովսէփ Տէր Գաւթեանի (1870-1946):

2.- Ալմարկոսիւն Վան-Վասպուրականի եւ Լեռնապարի Կ. կոմիտէութիւններուն:

3.- Դիտողի:

4.- Խօսքը հայդուկապետ Անդրանիկի մասին է, որ այդ շրջանին կը գտնուէր Ժընէ եւ, իբրեւ Սասնոյ ներկայացուցիչ, մասնակցած էր Դաշնակցութեան Խորհուրդի նիստերուն: Հայ-թաթարական ընդհարումները սկսելէն ետք, կը ծրագրուէր զինք գործուղել Կովկաս: Յարական իշխանութիւններու բացասական դիրքը պատճառ եղաւ որ հրաժարին այդ մտքէն: Հոս կը խօսուի անոր Երկիր անցնելու անպատեհութիւններուն մասին:

5.- Սամսոն, Գարեգին – ծածկանուններ Ստեփան Թադէոսեանի (1870-1945), քրոջորդի Քր. Միքայելեանի: Տասնամեակէ մը ի վեր Դաշնակցութեան ներկայացուցիչն էր Ատրպատական:

### Դուրանի ընկերներին

Սիրելիք!

Որոտին ձեր գրած նամակը կարդացինք, զարմանում ենք որ մինչև հիմա մեր ուղարկած նամակը եւ 50 ոսկին դեռ չէք ստացած: Սուբհանդակը հանել է Իշխանը իւր շրջանից մայիս 26-ով: Պիտի անցնէին Պուրակ<sup>1</sup> եւ այնտեղից ձեզ մօտ: Յուսով ենք որ կը ստանաք եւ իսկոյն պատասխանելով մեզ կը միամտեցնէք:

Մեզ մօտ նորութիւն չկայ. արտասահմանի դէպքերը ուժգին բնաւորութիւն են ստացել եւ զգալի կերպով պիտի ազդեն եւ երկրի գործերի վրայ. այդ պատճառով մենք մտածում ենք որքան կարելի է մեր քայլերը չափել եւ մեր գործողութիւնները նեղցնել, ամենագլխաւորը խուսափել ընդհարումներէ, որ մեր կորուստեան ամենագլխաւոր գործն է: Արտասահմանէն առայժմ ռազմական նպաստ ստանալու յոյսերնիս կտրեցինք, բնականաբար եղածները հոն են գործադրելու: Երեւի լսեցիք որ Երեւանում եւ Հին-Նախջեւանում նորէն դէպք է եղել հայերի եւ պարսիկների<sup>2</sup> մէջ. էլի նախայարձակ եղել են պարսիկները. մերոնք տեսնելով որ պաշտպանողական գործողութիւններից բան չէ դուրս գալիս, դիմում են յարձակողականի եւ մի լաւ դաս տալիս պարսիկներին. վերջիններից Երեւանի դէպքի ժամանակ ընկնում է 350 հոգի, մերոնցից 18 ընկնում է եւ 20 վիրաւորւում: Կուրի ուժգնութիւնը չափելու համար աւելի լաւ է դնենք վառած փամփուռների թիւը, որ մեզ համար երազական է — 26.000...

Այդ ուղղութեամբ ընդհարումները երեւի դեռ շատ պիտի շարունակւի: Ընդհարման (հայ-պարսկական) պատճառները երկու են. Ա.- Ռուս կառավարութիւնը երկու ժողովրդեան իրար հետ կուսացնելով ինքը ազատւում է մի մեծ չարիքից, ի դիմաց հայ կուռղ ժողովրդի: Բ.- Այնտեղ եւս խառն է Սուլթանի մատը: Վերջերս պարզւել է, որ Սուլթանը Պան Իսլամիզմից (Համաիսլամութիւն) բան չհասկանալով, մի ուրիշ գաղափար է յղացել՝ Պան թուրքիզմ — որի նպատակն է ամբողջ թուրք-թաթարական ցեղերը միացնել, մի զօրեղ պետութիւն կազմել Սուլթանի հովանու տակ եւ Շահը արհամարհել իբրեւ թոյլ եւ քրիստոնեաներ սիրող թագաւորի: Այդ շարժման գլխաւոր նպատակն է կանգնացնել հայկական յեղափոխութիւնը եւ չորացնել այն բոլոր աղբիւրները որոնցով ապրում է տաճկահայ դատը... այլ խօսքով — կովկասահայերին զբաղեցնել իրենց տեղական խնդիրներով, որ նրանք ժամանակ եւ հնարաւորութիւն չունենան օգնելու տաճկահայերին:

Առայժմ դրանք են գլխաւոր պատճառները, որոնք երեւոյթներ են որ շատ մտածել են տալիս եւ երեւի շատ կը վնասւենք մենք երկրի ընկերներս: Չարիքը արմատից բուժելու համար մտածել ենք Սարուստանում կազմել մի անկախ մարմին որի դերը լինելու է.

ա) պահել կանոնաւոր յարաբերութիւն երկրի մարմինների հետ:

բ) Հայթաջթեկ եւ մղում տալ երկրի պահանջներին եւ հսկել փոխադրութեան վրայ: Այս կերպ միայն մեր կարծիքով հնարաւոր է գործ տեսնել եւ նպաստ ստանալ. ապա թէ ոչ կորած ենք: Այսպէս կամ այնպէս քանի որ դրութիւններն իս անորոշ է, խնդրում ենք ձեզնից եւ Սարհադից, որ զգուշ շարժւէք, խմբերի եւ փախտականների թւերը չչատացնէք, խուսափէք ընդհարումներից, մեզ էլ թեւ ու թիկունք դառնաք ձեր խոհեմ եւ եռանդուն գործունէութեամբ որ մենք յաջողինք մեր ծրագիրները իրագործել եւ յարաբերութիւնները կանոնաւորել դրսի հետ: Դրամը խնայողութեամբ ծախսէք: Մենք դեռ չազատւեցինք պարտքերից: Հետաքրքիր է իմանալ ովքեր են Բժշկի<sup>3</sup> օգնականները եւ ինչպէս են վերաբերում ժողովրդի եւ ձեզ հետ. եթէ կարող էք գրեցէք անունները. Բժիշկը ինչո՞ւ մնացել է Բաղէշ:

Համբոյրներ եւ բարեւներ բոլորիդ:  
**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ**

1.- Պուրակ – ծածկանուն Խլաք քաղաքի, Բաղէշի նահանգ:

2.- Իմա՝ քաթարների:

3.- Այս Բժիշկը Տոքթ. Յակոբ Չարիեւն է (Չարեան) (1865-1920), դաշնակցական յայտնի գործիչ, որ ռուս կառավարութեան արտօնութեամբ անցած էր Երկիր, Մուշի մէջ հիւանդանոց հաստատելու համար: Ծրագիրը յաջողութիւն չգտաւ քրքական կառավարութեան արգելքին պատճառով:

**Սիրելի Կոմս!**

Ստացել ենք քո մայիս 10 եւ 16 թւակիրները. առաջին[ին] պատասխանել ենք Ժեյեզնիյէ Ռ-յադրի\*\* հասցէով (Թորոնթոն էլ<sup>1</sup> գրած է քո տւած հասցէով). երկրորդիդ էլ պատասխանում ենք, որ 80 հազարի գործադրութիւնը դնելու են այն մարմնի տրամադրութեան տակ, որը պիտի հոտ Վասպուրականի բոլոր յանձնարարութիւնները կատարէ: Այս մասին մենք երկար պիտի գրենք առաջիկային երբ Իշխանն էլ կը գայ, միասին կը խորհրդակցենք: Առայժմ անցնենք մնացած կէտերին:

**Ա- Դրամի խնդիր:** Գրում էք որ արդէն 1000-ը ուղարկւած է. իսկ մինչեւ օրս այդ քանակութեամբ չստացանք. ահա մեր ստացածների մանրամասն ցուցակը.— Մինարէթէն 70, Վիշապէն 30+31+174 (25-ն էլ քո օրով), Մրգաստանէն<sup>2</sup> Օննիկից 222, Ֆարհադից Արամի դրամը 105: Ընդամէնը 632. մի գումար որ էլի մեզ չփրկեց մեր հրէշից (?), մանաւանդ որ մի քանի անակնկալներ մի խոշոր գումար տարան: Սարհադը Դուրանէն յուսահատական կոչերով դրամ կ'ուզէր. նրան ուղարկեցինք 50, իսկ այն Տաճիկը որ Աւարայր էր գնացել ապրանք բերելու, 3000 բերաւ եւ փառաւոր կերպով 71 ոսկի մեզ վրայ նստեց. նամակ չկար, իսկ Մալխասը Վրէժում քէֆ կ'ընէր... Այդ բոլոր դրամներէն պարտքին հազիւ կրցանք 270 յատկացնել, իսկ ընթացիկ ծախսերի պարտքերը էլի աճում են...

Եղած հասցէները շատ ապահով [են]. ուրեմն շարունակեցէք ուղարկել: Մրգաստանի վաճառականը դիմել է այստեղի Թ-եանի, թէ Հեպթաղէմի եւ Հնադարեանի<sup>3</sup> հասցէով յարմար է փոխադրելը: Դրական պատասխան է ուղարկւած, ինչո՞ւ այդքան ձգձգում են: Այստեղից ապահով եղէք. ինչ ուղարկէք կը ստանանք: Մինարէթից էլ ահագին յարմարութիւններ կան, բայց 3 անգամ քարւան եկաւ, բայց խոստացած 70-ը չեկաւ. ի՞նչ նշանակում է այս թուլութիւնները: Ի դէպ, բոլոր տեղերը հասցէ տւէք, որ դրամ փոխադրելուց անկախ մեզ նամակ գրեն, որպէսզի իմանանք ի՞նչ գումար որտեղից է գալիս. դեռ մինչեւ հիմա մեզ համար պարզ չէ, թէ եկածները որտեղից են եւ ինչ հաշուով: Արամի 100 ոսկին մտնելո՞ւ է 1000-ի մէջ, թէ անկախ է: Ապրիլ ամսւայ հաշւեցոյցը ուղարկել ենք Սամսոնին՝ 2 Բիւրոներուն ուղարկելու. ստացա՞ն: Այսօր ուղարկեցինք մայիսինը՝ Մալխասի գծով. հետեւի որ կանոնաւոր ստանձնեն: Այսուհետեւ պիտի ամսէ ամիս ուղարկենք: Նամակների համար գործ ածեցէք եւ այս հասցէն (չրջանակ-Մելիքսէթ Մուրատեան, յանձնել մօրս). շուտով դրամի համար կ'ուղարկենք Մոնտէի հասցէն, բայց այլ պարագաներով...

**Բ- Իւսուֆի խնդիրը<sup>4</sup>:** Սպասւած մերժումը ցաւելով լսեցինք. մեր կողմէն խնդրեցինք երկու օր[էն] իւր մերժելու պատճառները եւ առհասարակ իւր կարծիքները մեր գործերի աննորմալութեան մասին՝ թող բարի լինի մեզ անձամբ գրէ:

շատ գոհ եւ շնորհակալ կը լինենք, թերեւս կարողանանք օգտուել: Այս առթիւ երեւի Գիտակը իրեն կը գրէ:

**Գ- Եւրոպացու գալու խնդիրը:** Այս մասին այսքանը կ'ասենք, որ լաւ կը լինէր որ մեզ չգրէք հէշ. ախր գիտէք մեր դրուժիւնը եւ գաղտնիքներ պահելու պայմանները: Մեզ համար զարմանալին այն է, որ մեր արտասահմանի ընկերները մեր անյաջողութիւնների գաղտնիքը որոնում են լեռների եւ բերդի յարմարութեան եւ անյարմարութեան մէջ: Դու նրանց ներշնչիր այն գաղափարը, որ մեր անյաջողութիւնը որոնեցէք այն բանի մէջ, որ մենք չենք կարողանում ուժ կ'ենտրոնացնել, կանոնաւոր փոխադրութիւն անել, մանաւանդ արտասահմանի յարաբերութիւնը կանոնաւորել: Եթէ ուսումնասիրելու խնդիր կայ, դարմանելու վէրք կայ, դրանք են, թող մտածեն եւ բուժեն այդ բաները:

Նամակները աւելի լաւ թղթերի վրայ գրեցէք. ամէն բան երեւում էր:

**Դ- «Կովկասեան պատասխանատու մարմնի» խնդիր:** Է՛հ, մարդիկ միշտ իրենց գործն են սաղլամ<sup>5</sup> անում. թէ Դաշ[նակցութեան] մնացած մարմինները ինչպիսի ճախարակներ են, դրանց փայլուն ապացոյցները տարիներ շարունակ վայելեց երկիրը: Հասկացրէք նրանց, որ եթէ այդ բոլոր մարմինները զբաղեն տեղական գործերով, աւելի շահաւէտ կը լինի, իսկ եթէ երկրի համար մի անկախ մարմին աշխատէ աւելի շահաւէտ կը լինի: Աշխատելու ես երկրի գործերը սրտի մօտ համարող մարդիկ ընտրեն:

**Ե- Թերթեր եւ գրքեր:** Այստեղ խօսեցինք մեր բարեկամի հետ (Թարգմանի). նա համաձայնեց իւր հասցէով «Մշակ» ընդունել, իսկ լեզու գրքերը «պատուէրով» ծանրացով\*\* էլի ուղարկեցէք նրա հասցէին. ի հարկէ ուղղելու էք նրանց հիմնարկութեան հասցէին, թարգմանին յանձնելու:

Մենաւորի գիծը փչացաւ. մի երկու ամիս, կը կանգնի: Կայանի ճանապարհի վրայ 500 ծայր բռնեց. Թաթարին եւ մի ուրիշին բռնեցին, ծեծի տակ լրբութիւններ են արել: Սաֆոն<sup>6</sup> հոս էր, տեսանք, յուսով ենք որ կը կանոնաւորէ: Նա մերժեց Փոնոգրաֆը ընդունել, ասելով որ գործ ածել չենք կարող. խնդրեց մի իսկական մոսիւն. խոստացանք տալ: Այդտեղ հետեւիր եւ աշխատիր մէկը գտնել եւ նրան ուղարկել. ամէն օգնութիւն պատրաստ է անել:

Արամի հեռադիտակէն մի երկուսը ուղարկեցէք շուտով. Վարդանը հոս [է], մի քանի օրէն կ'երթայ. Մինասը<sup>7</sup> ապահով տեղ հասաւ:

Պուլումետրից<sup>8</sup> ձեռք քաշէք. մեր ուժը այդքան չի յաղթի:

Նորութիւններ եւ նամակներ յաճախ գրէք. կարող էք գրել եւ Թաթուլի հասցէով:

Ձէնք հոս բաւական քանակութեամբ ձեռք է բերւում. քեզնից յետոյ գնեցինք (ժողովրդի համար). եթէ դրամ լինէր մեզ համար լաւ մարտիններ կ'առնէինք. թանգութեան համար ժողովրդին չենք գնում, բերածները մերժում ենք:

Մեր դրութեան մէջ փոփոխութիւն չկայ. երկիրը աւելի քան խաղաղ է. կառավարութիւնը թոյլ, երեւի արաբական շարժման պատճառով. քրդերի վրայ մեծ

տպաւորութիւն է թողել այդ շարժումը. աստու որ մանրամասնութիւններ չունենք նրանց հաղորդելու, իսկ «Դրօշակում» այդ մասին ոչ մի խօսք... Այդ ի՞նչ նկատումներով «Դրօշակի» յարգելի խմբագրութիւնը պաշտօնապէս յայտարարում է որ ուսու-տաճկական սահմանում խմբեր չկան եւ հնարաւոր[ութիւն] չունեն ներս գնալու: Լաւ տակտիկա է, իսկ դրա վերջը այն կը լինի որ կառավարութիւնը վստահացած դրա վրայ, աւելի կը լայնացնէ իւր վայրագութիւնների շրջանը, իսկ մեզ էլ մի գեղեցիկ օր, իբր դրսից ոչ մի օգնութիւն չստացող, յանկարծակիի կը բերէ եւ հաշիւ կը մաքրէ: Աստուած իրենց հետ. այդ եւրոպական պրոպագանդից երկիրը բացի վնասից ոչ մի շահ չստացաւ: Առանց երկրում իրական պատրաստութիւնների երբ արտասահմանում այդքան աղմուկներ ձգենք, ի հարկէ միշտ վիժմունքներ կ'անենք<sup>9</sup>...

[1905 Յունիս]

- 1.- Թորգոմ – ծածկանուն Թէոս Տեղտրիկեանի, Վասպուրականի Կեդր. կոմիտէի անդամ, որ անցած էր Կովկաս (Թիֆլիս):
- 2.- Յաջորդաբար՝ Սալմաստ, Կ. Պոլիս, Երեւան:
- 3.- Հեպթաղէմ – ծածկանուն Կտուց անապատի, Հնադարեան Լիմ անապատ եւ «Դրսի տուն»:
- 4.- Խօսքը կը վերաբերի Բուսուֆեան Յովհաննէսի (1850-1920), Դաշնակցութեան հիմնադիր սերունդի ակնատար դէմքերէն, հիմնադիրը Կ. Պոլսոյ եւ Ամերիկայի դաշնակցական կազմակերպութեանց: Կը մտածուէր Երկիր, յատկապէս Վասպուրական հրախիւն զինք իբրեւ փորձառու գործիչ:
- 5.- Պինդ, ամուր:
- 6.- Քիւրտ ցեղապետ, Համիտիէ գունդի հրամանատար Սեհմէտ բէկի կեղծանունը:
- 7.- Վարդան Շահպազ եւ Ռուբէն Տէր Սիմասեան (Սիմաս):
- 8.- Գնդացիք:
- 9.- Գրութիւնը հոս կ'աւարտի. հաւանաբար կը պակսի վերջին էջ մը՝ բարեւագիր, ստորագրութիւն եւ բուական: Ըստ բովանդակութեան, կը տեղադրուի 1905 թ. Յունիս ամսուն:



**Սիրելի Կոմս!**

Ստացանք 30/V թվականի Քարէն, հաստ[ատ]ում ենք մեր Ժելեզնիյէ Ռյադրի\*\* հասցէին գրածը, Մուշեղեանի հասցէին. Ոսկանապատ Ռուբէնի գրած Մելիքեանի հասցէով եւ 2 նամակ Թորգոմի՝ Մուշեղեանի հասցէին: Մէկն էլ ուղարկւած է Մալխասի գծով գրածները: Բացի դրանից բազմաթիւ նամակներ ենք գրել Բիւրոններուն եւ ոչ մէկի պատասխանը չենք առել եւ երեւի չենք էլ առնի, քանի որ պայմանները այդպէս է դասաւորւած: Ինչ եւ է. մեր սառնարիւնութիւնը չենք կորցնելու եւ յուսահատուելու էլ կարիք չունենք. Սարուստանի դիմակը փառք Աստուծոյ որ այդպէս շուտով պատուեց. բայց դա մի կողմը թողնենք, անցնենք բուն գործնական խնդիրներին:

**Ա. Դրամի խնդիր.**— Ամէն նամակում կը գրէք թէ դրամ որքան կ'ուզէք կ'ուղարկեմ, բայց սպասելով մեռանք. անցեալ նամակում գրել էինք որ դեռ չէ լրացել նոյն իսկ 1000ը. վերջերս միայն նոր ստացանք Մինարէթի 72.5 կէսը. ուրեմն մտաւորապէս եկել է 700: Պարտքը մնացել է անշարժ դրութեան մէջ, իսկ ընթացիկ ծախսերը եւ պարտքերը աճում են. մեր ծախսերը հասցրել է մինիմումի. բոլորովին գինւորներից թ[եթ]եւացել ենք, ինչ կ'ուզէք արել ենք, ձմեռը թեթեւանալու համար. յամենայնդէպս էլի եկած գումարները անկարող է մեր մինիմալ պահանջներին բաւարարութիւն տալ. Աստուծոյ սիրոյն դրամ հասցրէք. Թաթուլի հասցէն ապահով է. շարունակեցէք ուղարկել: Վերջերս նորէն լուր տարածւեց Պապիկի գնալու մասին, ստիպւած էինք մի գումար էլ յատկացնել նրան, որ մօտը պահէ. ի՞նչ եղաւ Կարմիր-խաչերի խոստումները: Ա՛խ այդ խոստումները որ միշտ մնացին եւ մնալու են խոստումներ. գոնէ այդքան բարոյականութիւն ունենան խոստումներ չանել եւ մեզ յուսահատութեան մէջ խեղդել... Հա՛, վերջերս Մ. Ք. Կարմիր-խաչից ստացանք 2.5 ոսկի Վազգէնենց համար: Աւելի լաւ է այդ էլ չլինէր. ինչ կարելի է անել 2.5 ոսկով... Ուղարկել էինք տեղեկութիւններ բանտի եւ ընտանիքների: Ստացէք եւ յանձնեցէք ուր հարկն է: Սպասում ենք այդ առթիւ վերջնական կարգադրութեան. աւելացել են նոր բանտարկեալներ թվով 10 հոգի...

**Բ. Սարուստանից յոյս կտրելու խնդիր.**— Երանի այս յայտարարութիւնը վաղուց լինէր կամ այս անգամ վերջնական. բայց թող իմանան մեր մեծապատիւ ընկերները եւ Սարուստանի ժողովուրդը որ մենք դատարկ յոյսերով ապրող չենք եւ ժողովուրդին չենք կարող ապրեցնել: Մենք չենք հաւատում որ այդտեղի շարժումները ժամանակաւոր է կամ ինքնապաշտպանութիւն, եւ ոչ մէկ գրաւական էլ չունենք որ շարժումների յաղթութիւնից կամ պարտութիւնից յետոյ ռէակցիա չի լինելու եւ երէկւայ սրբութիւնների վրայ չեն թքնելու մարդիկ, որ ընդունակ են մի օրւայ մէջ առանց խղճահարւելու 26 հազար ծայր վառելու<sup>1</sup>. մի քանակութիւն որ չէ վատնել

Սասունի ամբողջ կռիւները ժամանակ. այդ մարդկանցից ամէն բան սպասելի է. հասկացրէք որ տաճկահայ ժողովրդի հասցէին ամենամեծ վիրաւորանքը այն է որ այդտեղ խարկուում [?], բանակներ եւ զինւորներ են պատրաստում այս ժողովրդի գլխին դալակութիւն<sup>2</sup> անելու. դա մեր կորուստն է եւ ոչ փրկութիւնը. փորձառութիւնը, բանակները եւ ամէն բան պիտի այստեղ ժողովրդի մէջ, ժողովրդի հետ եւ ժողովրդի կրօնի վրայ լինի. արտասահմանը միշտ վիժմունքներ պիտի անէ եւ արել է. պատմութիւնը փառաւոր դասեր ունի... Թող կորչի այդ տեսակի օգնութիւնը... Թողնենք այդ յոյսերը. էլի գործնականը, խնդրում ենք հետաքրքրուէք պաշտօնական աղբիւրներից եւ մեր հետեւեալ հարցին մի դրական պատասխան տաք. Արդե՞ք իրաւունք ունեն Սարուստանի մարմինները եւ սահմանագլխի կոմիտէները, տաճկահայ դատի համար գնւած ապրանքները եւ հանգանակած դրամները այդպէս շուկութեամբ վատնել եւ երկրի պահանջներին բաւարարութիւն չտալ... Այս առթիւ պաշտօնագլխի բողոքել ենք Արեւմտ. Բիւրօ եւ յայտարարութիւններ ենք ուղարկելու Ամերիկա եւ արտասահմանի մնացած կոմիտէներին... Հնչակեաններին էլ ինչո՞ւ ենք մեղադրում. երկրից ինչո՞ւ դիսցիպլինա<sup>3</sup> ենք պահանջում, եբ մի օրուայ մէջ 26 հազար են վառում եւ անպատիժ մնում... Աստուած իրենց հետ. դա էլ փորձութեան դաս է:

Գրում ես այստեղ գէնք ձեռք բերելու աղբիւրներ ստեղծենք. հնարաւորութեան մասին անցեալ անգամ գրել ենք, նորից կրկնել աւելորդ ենք համարում. դուք դրամ հասցրէք: Բայց մի մոռանաք մի փաստ որ ձեզ քաջ ծանօթ է. Երկրում ձեռք բերած գէնքերով չենք կարող թշնամու դէմ դուրս գալ... Դէպի առաջ ենք գնալու եւ ոչ դէպի յետ. մենք մեր գէնքերը պիտի կատարելագործենք եւ ոչ փչացնենք. եղածները գիտես. այսպէս թէ այնպէս մենք կարիք ենք ունենալու արտասահմանէն կանոնաւոր գէնքեր ստանալ. այլ կերպ անկարելի է. ուրեմն ինչ է մնում մեզ անել եթէ ոչ խոզից մազ քաշել. ահա թէ ինչպէս. ամէնից առաջ ասենք, որ սխալած էք կարծելով որ Աւարայր 40 հազար կայ. 30-ից աւելին ներս է եկել. մնացածներն էլ այս քանի օրը կը գան. նոր դիւրութիւններ ենք ստեղծել. ուրեմն հոն ամէն բան վերջացած է. դրա վրայ աւելացրէք եւ այն, որ նրանք էլ իրենց կողմից են ապրանքները իրար մէջ բաժանում եւ ինչո՞ւ յետ պիտի մնան Սարուստանէն... Ասել կ'ուզէ առաջիկայ սեզոնին համար, երբ ստեղծուում է ամենամեծ դիւրութիւնը, մենք փոխադրութեան նիւթ չունենք. նայեցինք, կրկնում [եմ], գոնէ խոզից մազ ենք քաշելու. երեւի գիտէք որ այստեղ հնարաւոր է մարտիսիներ ձեռք բերել ուսաց ծայրերի հետ. այդտեղ ծայրեր ունենք բաւական մեծ թւով. կարծում ենք որ դա անգործադրելի մնացած կը լինի, որովհետեւ մարտիսի քիչ է ճարուում: Արդեօք չէր կարելի որ դրանից մի 20 հազար եւ մի 20 հազարն էլ այստեղից-այնտեղից մուրալինք եւ 40-50 հազար ապրանք դրստէինք սեզոնի համար: Ինչ ասել կ'ուզէ որ խմորները շտապեցնելու էք. հրաշալի դիւրութիւններ ունենք. դրանք փոխադրելու. մի խումբ ուղարկելու ենք Չալիկի հետ Ջրաբերդ հէնց դրա համար. եկա՞ւ եւ ի՞նչ արինք ... ամենապիտաւոր գործը է լինելու է այդտեղից չարժեւել — եւ ի՞նչ նպատակ ունի շարժելը. ի՞նչ դրական յոյսեր էք ստացել շարժելու: Յանուն Երկրի գործի եւ յանուն մեր ընկերական շահերի այդտեղ մնա. շուրջը հաւաքիր երկրացիներ կամ երկրի գործը սրտներին մօտ համարող մարդիկ, դուք էլ մի կողմից աշխատեցէք գէնք ձեռք բե-

րել եւ մեզ հասցնել. այս ուղղութեամբ պաշտօնապէս կը գրւի եւ լիազօրութիւններ կը տրւի: Այլ կերպ մենք կորած ենք. բայց չյուսահատուէք արտասահմանի անտարբերութիւնից. երկրի ընկերներս կանգնած ենք եւ պատրաստ ենք քեզ թեւ եւ թիկունք լինելու. մոռացիր բոլոր անդիւրականութիւնները եւ յանուն գործին եռանդով շարժուի՛ր. այս կերպ թերեւս յաջողենք վճռել ամենակնճռոտ խնդիրը:

Ի՞նչ եղաւ Վարդանեան<sup>4</sup>. չեկա՞ւ. եթէ նա էլ կ'ասէ նոյն բաները, նրան ներշնչիր եւ միացած ուժերով այդտեղ գործ սկսեցէք մինչեւ որ այստեղից էլ մենք կը հասնենք ձեզ օգնութեան. նա կը սպասէ մինչեւ ուշ աշուն... գործերը մենք եօլայ կը տանենք,— Լայնացնել ներկայ պարագաներով աննպատակայարմար է. եղածը պահպանելը մեծ բան է:

**Գ. Մեր գրութիւնը.**— Ըստ երեւոյթին պայմանները նպաստաւոր են. երեք թաբուր զօրք բոլոր պատրաստութիւններով տարան. Քէօն Հիւսէին փաշային պատերազմի են կանչել իրենց ալայիներով. առաջ ինքն էր դիմել այն նկատում[ով] որ չեն տանի եւ իբրեւ հաւատարիմ՝ պարգեւ կը ստանայ. բայց սխալեց հաշի մէջ: Այժմ սոփեստաբար ձգձգում է. տեսնենք ինչո՞վ կը վերջանայ: Կարգադրութիւն էր եղել ռադիֆները ժողովեն, բայց վախին հեռագրում պնդեց որ ժողովուրդը խեղճ է եւ այստեղ հանգստութեան կարիք չկայ ռատիֆների. փոլիսներով էլ կը կառավարւեմ... Այսպէս կամ այնպէս, երբ նա ծրագիր [է] կազմում արտասահմանի աղբիւրներով չտարւել (մի բան որ կը յաջողի, քանի որ այդ փառահեղ կերպով խրուում է, այդ ճահճի մէջ) բնական է որ այդ բոլորից յետոյ մտածէ էժան գնով մեզ յանկարծակի բերելու, մանաւանդ որ մենք պաշտօնական յայտարարութիւն ենք անում մեր անելիքների եւ չանելիքների մասին...

Թալան եւ մասնակի կոտորած շարունակուում է. սովը դեռ չէ վերջացել:

Մեր տրամադրութիւնը այն է ինչ տեսել ես: Գործը բաւական կանոնաւորել ենք. Ա. ենթակոմիտէի շրջանից Հաջուն հեռացրինք եւ դուրս ուղարկեցինք. Վան-Փուչը եթէ կարող է այդ շրջանը կառավարել՝ ուղարկիր, ծանօթները լաւ են խօսում: Ռշտունին մի անընդունակ եւ լիրբ մարդ է. եթէ մեր գիտեցածն է դարձել է Երեւան: Տուրբախի<sup>5</sup> մասին գրել ենք, առ այժմ անկարող ենք ընդունել: Միհրանին մեր կողմից խնդրիր անպայման ներս գալու. գոնէ մասեր ուղարկեցէք, ամէն բան, նոյնիսկ վիճտաներ, մի քանի գատվոր եւ կարոփկաներ. մեռանք գոռալուց, բայց չուղարկեցին...

Գրածքը ամբողջ երեւում է. մի քիչ հաստ թղթի վրայ գրեցէ՛ք<sup>6</sup>:

1.- Ակնարկութիւն հայ-թաթարական ընդհարումներու ընթացքին Երեւանի մէջ գործածուած փամփուշտներուն:

2.- Աշկերտութիւն, (անփորձ) վարժութիւն:

3.- Կարգապահութիւն:

4.- Անցագրային անուն Բարսեղեան Մարգիսի:

5.- Տուրբախ – ծածկանուն Կիրակոսեան Յարութիւնի (1866-1913), կուս. ծանօթ գործիչ Կարին, Կարս եւ Թիֆլիս:

6.- Գրութիւնը անաւարտ է. կը պակսի վերջին էջը: Նամակը կը տեղադրուի 1905 թ. Յունիսի վերջերուն:

Արամի ձեռքով գրուած այս նամակը թուական չունի եւ հասցեատէրը ճշդուած չէ. ընդհանրապէս գրուած է նաեւ անփոյթ կերպով, մատիտով, եւ վատ վիճակի մէջ կը գտնուի: Հաւանաբար սեւագրութիւնն է գաղտնի թանաքով շարադրուելիք նամակի մը, որ պիտի ուղղուէր Ժըննէ՝ Արեւմտեան բիրոյի: Բովանդակութենէն դատելով պէտք է տեղադրել Յունիսի վերջերուն:

**Ընկերներ!**

Ստացանք Վիշապի վրայով ձեր մի անթւակիր նամակը. բարի եղէք թւեր դնելու, որպէս [զի] մենք իմանանք երբ է գրուած եւ երբ է տեղ հասնում. Վրէժի ճախարակի [?] մասին վաղուց յայտնի է. ցաւալին այն է, որ Վիշապի ընկերներն էլ կանոնաւոր հասցէներ չեն տալիս նամակների համար: Հազար անգամ նրանց գրել ենք 87 ոսկու եւ վերջին 174 ոսկու ստանալու մասին, բայց նրանք միշտ գրում են թէ՛ չիմացանք ի՞նչ եղան դրամները: Այդ դրամների ստացագրերը ուղարկուած է Վրէժի վրայ[ով] ձեզ, ինչպէս եւ վերջին երեք ամսւայ հաշւեցոյցերը. ուղղակի մեզ ապշեցնում է Վրէժի այդքան անտարբերութիւնը: Տեղեկագրերի ուղարկելը ուղիղ 6 ամիս դառաւ:

Զհակացանք ինչպէ՞ս պարզուած եւ կարգադրուած [է] Դուրանի խնդիրը, երբ յունիսի սկիզբներէն նրանք կրկին մեզնից դրամական օգնութիւն էին ուզում եւ պնդում որ նամակ չեն ստացել: Խնդրում ենք այս մասին մեզ մանրամասն գրէք, թէ որտեղով նրանց ինչ է ճանաչուած:

Առայժմ դրամները ճանաչելու էք Սարուստանէն եւ Մինարէթէն՝ մինչեւ Վիշապի հետ յարաբերութիւնները կանոնաւորենք: Լաւ կը լինի նամակների համար մեզ հասցէ տաք Պուլկարիայում. այստեղից հոն նամակներ շատ է գնում. աշխատեցէք, վախ ունենք ուշ կը լինի:

Շատ ցաւում ենք որ յետաձգում են փայտ, փող [?] գնումը, յետոյ էլ փոխադրութեան գործը կը դժւարանայ. այնպէս արէք որ Բարձրի դէպքերը հոս էլ չկրկնուեն եւ յետոյ 2 ձեռք ունենք մի գլուխ. ամէն անգամ այնպէս հանգստութիւններ եւ դիւրութիւններ չի լինի:

Կառավարութիւնը աւելի քան հանգիստ է եւ խուսափում է ընդհարումների: Երեւում է որ արաբական ապստամբութիւնը որի մասին դուք ոչինչ չէք գրում ոչ թերթում եւ ոչ նամակներում — մեծ ազդեցութիւն է արել: Այստեղից եւ գաւառից մեծ զօրք է տարւել: Ալճաւազի (Արճէշի շրջանակ) Քէօռ Հիւսէին աղան հայդարանցի իւր ալայիով (600 հոգի) տարաւ Արաբիա. շատ լիւր մարդ էր: Առհասարակ այսպիսի թուլութիւն եւ ձեռնպահութիւն կառավարութեան կողմից դեռ տեսնուած չէ. թէեւ բոլոր կուսակալութիւններ[ում] նման խաղաղութիւն չկայ. օր[ինակ] Բիթլիսի կուսակալութիւնը նախկին դրութեան մէջ է. հոն հայերին նեղել, թալանել, կողոպտել՝ սովորական բան է, իսկ Վանի շրջանում, եթէ ասենք այդ բոլորը մինիմալի է հասցրած — նշան այս վերջի ամիսները — չգարմանաք, շատ քիչ թալան է եղել. պատճառների մասին՝ այլ անգամ. բայց մենք վախենում ենք, որ սա ոճիրներով յղացած մի լուութիւն լինի:

Զարուհու մասին տեղեկանալուց մեզ էլ գրէք:

**Մենաւորի մեր ընկերներին**

**Սիրելիք!**

Ստացանք ձեր վերջին նամակը, որը թւակիր չէր եւ չգիտենք երբ է գրւած. դրան հետ եւ Մայիսի ու Մաշտոցի նամակները: Բէկի մարդկանց վաղուց ուղարկել ենք նամակներ. լսում ենք որ մնացել են իրենց գիւղը, իբր թէ դուք կարգադրել էք որ այդ կողմերը եկող չլինի. որքան ճիշտ է չգիտենք: Այսպէս կամ այնպէս նրա մարդիկ կը գան, եւ նամակներում ձեր գրուած հարցերին պատասխանած ենք, բայց յամենայն դէպս նորէն կրկնենք: Աւետարանի<sup>1</sup> ապրանքները մինչեւ հիմա էլ կը մնան հոն: Պարապին<sup>2</sup> կանչեցինք եւ խօսեցինք, նա համաձայնեց իւր մօտ ընդունել թէ եղած եւ թէ գալիք ապրանքները: Պարապին իրեն ուղարկեցինք անձամբ Աւետարան խօսելու, որ եղածները տեղափոխեն: Յուսով ենք որ շուտով կը տեղափոխի հոն եղածները: Այսուհետեւ Աւետարանով ոչինչ չէք անի, մինչեւ մենք այստեղից կը բանանք, իսկ մինչ այդ աշխատելու են Բէկի մարդիկ եւ Կիրճեցիք՝ Պարապի հետ: Կիրճեցի<sup>3</sup> խոսրովը եկաւ հոս, պայմանաւորեցինք, նրան նամակով ուղարկեցինք ձեր քով, դուք էլ նայեցէք եւ ըստ այնմ գործ սկսէք. քանի ապրանքները այդքան քիչ են, աշխատելու էք բոլորովին ապահով մարդկանցով եւ միջոցներով տեղափոխել. իսկ առայժմ այդպիսի մարդիկ Պարապին է եւ Բէկինը: Իսկ Կայանի<sup>4</sup> եւ Պարապի մօտ եղած ապրանքները կամաց-կամաց կը փոխադրեն:

Դուք Կայանցոց ոչինչ չէք գրի եւ ոչ մի յարաբերութիւն չէք ունենայ, նրանք սարսափելի վախենում են. եւ գործ էլ չեն կարող կատարել. նրանք եւ Աւետարանցիք առայժմ բաց կը մնան:

Ապրանքների ցուցակը ինչո՞ւ հարիւր անգամ կ' ուղարկէք. ձեզնից ո՞վ է ցուցակ պահանջում. դուք նամակով մի անգամ ճիշտ թիւը գրեցէք արդէն բաւական է, նորից գրելու ոչ մի կարիք չկայ: Մենք լաւ գիտենք ի՞նչ ապրանքներ են տեղափոխուած եւ որը ուր է մնացել:

Շատ ուրախ ենք որ խոզարկութիւնից յաջող դուրս եկաք. զգուշ կացէք ոչինչ չի լինի:

Հետաքրքիր է իմանալ թէ Սարգարը ի՞նչ է խօսել Ընձայրի հետ: Ինչո՞ւ է գնացել Աւարայր:

Թերթերից մեր ձեռք հասաւ միայն 6 հատ: 3 «Մշակ», 3 Դրօշակ. քանի-երորդ անգամն է գրում ենք որ ուղարկուած բոլոր իրերը կապեցէք յատուկ շորի մէջ եւ կնքեցէք, նոյն եւ նամակը. նամակն էլ բացուած էր: Է՛հ լաւ է չուղարկէք, քան այդպիսի պայմաններում ուղարկէք. ամբողջ ժողովուրդին կը հանէք մեր դէմ. հասկանալի պատճառներով նամակների գաղտնիքները իմանալով խօսուում է եւ վտանգում գործը: Իսկ թերթերը ինքնագլուխ կերպով իրենց մէջ բաժանում են, այնպէս որ մեզ էլ չի հասնում: Վերջնական կերպով յայտնում ենք, ուղարկելուց կնքեցէք,

եթէ այդ չէք անի, երբեք մի ուղարկէք, չենք ուզում: Վերջապէս երբ պիտի լսէք մեր առաջարկներին: Մեզ համար յատուկ «Մշակ» պիտի գար Աւարայր, դուք էլ մեզ պիտի ուղարկէիք, ի՞նչ եղաւ. թէ գալիս է եւ դուք էք բանեցնում: Թերթերի եւ առհասարակ գրականութեան մեծ պահանջ կայ. աւելորդ գրքերից մէկ-մէկ օրինակ ուղարկեցէք մեզ. «Հայրենիք» եթէ ստանում էք, կարդալուց յետոյ մեզ ուղարկեցէք. մտէք եւ մեր դրուժեան մէջ. Արտասահմանէն նամակներ չենք առնում, գոնէ թերթեր ուղարկեցէք դրանցով մխիթարուէք: Գրել էինք թէ կամուրջում<sup>5</sup> կարելի է հին կոթ գնել կամ հին ծայր գնել. նոյնիսկ կեղծերը — ժողովրդի համար. ինչո՞ւ չէք պատասխանում. հետաքրքիր է իմանալ որքան կը լինի եւ ինչ գնով. երբ ապրանքները այդքան քիչ են մնացել եւ նորերը ստանալու յոյս չունէք, գոնէ դրամ ուղարկենք գնեցէք ձեր շրջանում:

Ներփակեալ նամակը եթէ կարող էք յատուկ մարդկանցով ուղարկէք Մրգաստան, եթէ ոչ հասցրէք Գարեգինին — Մինարէթ —:

Մեզ մօտ նորութիւններ չկան, հացը կամաց-կամաց էժանանում, հունձը ծախւել է. արտերը այս տարի լաւ են:

Ուրիշ նորութիւն չկայ մեզ մօտ. մեր դրուժեան մէջ փոփոխութիւններ չկան: Լսում ենք որ Մակում կռիւ է եղել, որքա՞ն ճիշտ է:

Եթէ կարող էք մէկ-մէկ «Մշակ»ներ ուղարկէք մեզ:

Բարեւներ ենք ուղարկում տեղական բոլոր ընկերներին, Արամը բարեւում է ընկերն[եր]ին եւ ամբողջ գիւղացիներին. թող չվախենան եւ տղամարդու պէս աշխատեն. Աստուծով մենք կը հասնենք մեր նպատակին եւ կ'ազատուենք այդ բոլոր նեղութիւններից. առանց խաչելութեան յարուժիւն չկայ. պատրաստուենք լաւ խաչելութեան որ մեր յարուժիւնն էլ փառաւոր լինի:

Թոմասի<sup>6</sup> նամակը յանձնեցէք իրեն. նա սխալւել է. այդ խնդրում մեղաւոր է իր եղբայրը եւ քրոջ որդին: Բարեւներ եւ թոմասին, թող լաւ աշխատի. գնացինք իրենց գիւղը, լաւ կազմակերպւած են:

Բոլորիդ ջերմ համբոյրներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. 5 յուլիս

Շամ

Յ. Գ.— Ձեր սուրհանդակը հոս չեկաւ, այլ ճանապարհից մի հայի միջոցով է ուղարկել, այնպէս որ իրեն չտեսանք: Նա սօլ եւ մանուսա էր ուզել, չուղարկեցինք, որովհետեւ ոչինչ չէք գրել մեզ:

Սա ի՞նչ մարդ է եւ որտեղացի:

ՆՈՅՆ

1.- Աւետարան — ծածկանուն Խաչան գիւղի, Բերկրի գաւառակ:

2.- Պարաս կամ Մելօ — գիւմուր, փոխադրող, սուրհանդակ Բերկրի շրջանին մէջ:

3.- Կիրճ — ծածկանուն Քեսաղուկ գիւղի, Բերկրի գաւառակ:

4.- Կայան — ծածկանուն Պստիկ Գեղի, Բերկրի գաւառակ:

5.- Կամուրջ — Ս. Թադէի վանքին մօտակայքը Կարէ գիւղ:

6.- Թոմաս — Ս. Թադէի վանքի զինուորներէն, Հայոց Չորի Աքանան գիւղացի:

Արամ Մանուկեանի ձեռագրով Վասպուրականի Կ. Կոմիտէի այս նամակը, ուղղուած Կոմսին (Վահան Փափազեան), արխիւներու մէջ գոյութիւն ունի երկու տարբերակներով (փաստ. 661-161 եւ 662-767): Տարբերութիւնները աննշան են: Հաւանաբար նամակը իր հասցէին ապահով կերպով հասցնելու նպատակով, Արամ Մանուկեան միաժամանակ երկու տարբեր ճամբաներ օգտագործած է: Կու տանք համադրաբար:

*Սիրելի Կոմս!*

Ստացանք Թաթուլի միջոցով երկտողը եւ 233 ոսկին. զարմանում ենք որ մինչեւ հիմա չէք ստացել մեր բազմաթիւ նամակները, որը ուղարկել է ե՛լ այստեղից ե՛լ նոյնը Վրէժից: Նամակները ուղարկւած են Ժելեզոբրիյէ Ռյադրի\*\* Բագու, Մուշեղեանի եւ Լալայեանցի հասցէներին: Անպատճառ նոյն տեղերից տեղեկացէք եւ մեզ գրեցէք. մէկ էլ աւելի լաւ կը լինէր ուրիշ ապահով հասցէներ գրէիք: Լուսանկարները ըստ երեւոյթին պրակտիկ չեն այստեղի համար. ինչեւէ: Անցեալները ստացանք եւ Ստեփանի փոխադրած 115 ոսկին Մոնտէի եւ առաջնորդի հասցէին. աւելի լաւ կը լինի հեռագրի հասցէներ տաք, ստանալուց հեռագրենք: Օր[ինակ] Մրգաստանից եկածների համար թող Թաթուլի բարեկամը հեռագրէ իւր Մրգաստանի բարեկամին թէ «դրամները ստացւեց կամ դրամները ինչո՞ւ ուշացան». դրանով դուք էլ կ'ապահովէք շուտ ստանալու մասին: Առ հասարակ դրամներ եւ նամակներ հասնում են 20 օրէն ամենաուշը. հիմա յարաբերութիւնը բաւական կանոնաւոր է:

Մի քանի օր առաջ Մ. Ք.ի ընկերներին նամակ գրեցինք գէնք[ի] 80 հազարի գործադրութեան համար առանձին կոմիսիա կազմելու. մեր կողմից ընտրել էինք քեզ, Դումանին, Անմեղեանցին եւ Մրգաստանցի Ֆարհադին (Մարգիտ)<sup>1</sup>. նոյն նամակում շեշտել էինք՝ եթէ այդ մարդկանցից ոմանք չհամաձայնեն աշխատել, դու եւ Վարդանեանը — որի մասին լսեցինք որ անցել է այդ կողմը — իբրեւ լիազօրներ մարդիկ գտնէք եւ կոմիսիա կազմէք. բայց ի նկատի ունեցիր որ առանց քեզ բան դուրս չի գալ. դու պիտի անցնես գործի գլուխը եւ քո յետեւից էլ մնացածներին քաշ տաս: Մրգաստանցի Ֆարհադը շատ յարմար է մասնաւոր յարաբերութիւններ պահպանելու եւ հաշիւներին պահելու գործում. ինքը մաքուր եւ երկրի մասին մտածող ընկեր է. նրան մեր եւ Պապիկի<sup>2</sup> կողմից խնդրիր, որ անպայման ընդունէ եւ գործի դիմէ. Պապիկ նրան նամակ կը գրի:

Նոյն նամակում գրել էինք որ 80 հազարից 10 հազարը փոխադրես հոս կոթեր գնելու համար. վերջերս բաւական դիւրութիւններ ենք ստեղծել. ամենազխաւորը խնդրել էինք այդ 10 հազարը փոխադրել մի անգամից Մրգաստանի միջոցով. այստեղ խօսեցին թուլ[թուն]ճեանի հետ, նա համաձայնեց, նամակը ստանալու օրից 20 օրւայ ընթացքում լրացնել այդ գումարը: Եւ պայման ենք դրել այս. փոխանակ

գրելու յանձնեցէք Թաթուլին — Թող գրէ՝ հաշւեցէք մեր հաշւին. նա էլ գրել է նոյն բանը, դուք էլ հաստատեցէք: Թէեւ ոչինչ չկայ Թաթուլի վրայ գրելուց: Ի դէպ, դրամները հետ զատ հասցէով միշտ նամակ գրեցէք, առանձնապէս այս անգամ: Որովհետեւ հոս մեր դրուժիւնը կապւած է միշտ անակնկալների հետ, լաւ կը լինի որ Մրգաստանի մարդու հետ պայմանաւորուէք եւ եթէ հոս անկարող եղանք ստանալ, այդտեղ պատրաստ է յետ տալ. սա ծայրայեղ զգուշութեան համար է: Ինչպէս ասացինք այս դրամը պիտի 80 հազարից լինի, իսկ մեր ընթացիկ ծախսերի 20 հազարը Թող իր կարգով ուղարկեն. բացի 500 ոսկու պարտքից, եթէ 20 հազար ուղարկեն այս տարի, եօլայ կ'երթանք. թէեւ դրամ որչափ շատ ուղարկէք այնչափ շատ ռազմական ուժ ձեռք կը բերենք:

Այս անգամ քո ուղարկած դրամները ստանալով Թերեւս կարող լինենք մեր պարտքերը վերջնականապէս փակել: Դրամ շատ է հարկաւոր, մանաւանդ նպատակ ունենք «գողերին» գործի կանչել. սա միայն դու պիտի իմանաս:

Պապիկի եւ ընկերների համար խոստացածները չեկան. ի՞նչ եղան Մրգաստանի եւ Գարի Կ[ոմիտէ]ին խոստումները, խոզից մազ քաշելն էլ Փայտա է, էլի գոնէ մի բան գոնէ քաշ տւէք:

Չայիկին ուղարկել էինք Ջրաբերդ փոխադրութեան [համար]. համարեա դատարկ են ճանապարհները, իսկ նամակները այնպէս էին գրել որ պարզ կարդացուում էր: Կնքելու սովորութիւն էլ չուուն. ճանապարհին ամէն բան բացել եւ կարդացել են: Եթէ մի նամակ գրելու եւ երկու կտոր պարանք ուղարկելու էլ փորձառութիւն չկայ, էլ ինչ մեծ դրդողներ է որ ձգել են ամբողջ աշխարհը... իրենց յայտնեցէք որ ուղարկւածները ամբողջութեամբ ստացանք. երբ այդպիսի գեղեցիկ առիթները ձեռքից տալիս ենք, ապագայում շատ կը փոշմանենք:

Հազար անգամ գրեցինք որ Թարգմանի<sup>3</sup> հասցէին ուղղակի հոս «Մշակ» եւ գրքեր ուղարկեցէք. ի՞նչ դառաւ. նրանց մեծը հոս չէ, նորն էլ ուշ կը գայ. լաւ կը լինի շուտ ուղարկել, որ նորը գիտենայ թէ հնի օրով էր գալիս: Ի դէպ, ինքը Թիֆլիսում մտել էր Մուրճի խմբագրութիւնը, խմբագիրը ասել էր որ 2 օրինակ Մուրճ է ուղարկուում, մէկը իրեն, միւսն էլ իրենից ուղղողներ կան, նրանց կը տայ: Ովքե՞ր են այդ ուղղողները. գուցէ մեզ համար է. բայց եկել է միայն աւելորդ 2 օրինակ, 2 եւ 3: Վերջապէս Թիւրիմացութիւնը պարզիր եւ «Մշակը» անպատճառ գտիր, եթէ չես գտել: «Մուրճի» կարիք չկայ, արդէն կարդում ենք: Լէոյի, Գրիգոր Արծրունու վերջին հատորը եւ առհասարակ լեզալ գրքեր, նոյն հասցէով շուտ ուղարկիր: Ամէն անգամ դատարկ սուրհանդակները կ'երթան կու գան, բայց Աւարայր ուղարկւած գրքերը չեն ուղարկուում:

Մալխասը լսելով Աւարայրից փախել է...

Հա՛, մոռացանք գրել որ Սարհադին 50 ոսկի ենք փոխադրել. մենք դա հաշւել ենք իբրեւ պարտք է տրւած, քանի որ բանտի համար առանձին գումար չէ յատկացրուած. ինդրում ենք այդ գումարը իսկոյն փոխադրել: Արեւմտ[եան] Բիւրոյից գրուած էր, որ նրանց դրութիւնն էլ որոշուել է, բայց ի՞նչ է որոշուած՝ չիմացանք. յամենայն դէպս մեր 50 ոսկին փոխադրել տուր, քանի որ Կ[արմիր] խ[աչերը] նպաստ չուղարկեցին եւ Պապիկը մնաց մեր վզին, դա կարեւոր է:

Մեր դրութեան մէջ փոփոխութիւն չկայ. 3-4 անգամ Հալս<sup>4</sup> մայրաքաղաքը խու-



զարկել են. վերջին անգամ խուզարկելուց յետոյ 3 զօրք կ'երթան Անտառ<sup>5</sup>, կը հանդիպին Եղիշին եւ Մաշտոցին, 3-ից 2ը գետին կը փուլեն, մէկը կը յաջողի փախչել եւ խաբար տանել Բիթլիս. թողել են մի մատուզէր եւ մի բերդան: Այս կողմից գնացին կրկին խուզարկեցին. ի հարկէ ոչինչ չգտան. առհասարակ շատ [է] անհասարակ թիւնը:

Քէօռ Հիւսէյին փաշան այսօր գնաց 600 ձիաներով Արաբիա. կուսակալը գնացել էր ճանապարհ դնելու: Այլաւազը ժամանակաւոր կերպով ազատեց հրէշից:

Քեզնից յետոյ մինչեւ հիմա 500 ոսկու կոթեր է գնւած ժողովրդի համար. շատ առատ է. ափսոս որ շատ պակասաւոր են: Մարտինիներ սկսել ենք գնել կազմակերպութեան համար. ափսոս որ ծայրեր չկայ. մտածիր ծայրերի մասին:

Մենիկենց տանն ենք. Մայրիկը եւ Սաթենիկը բարեւում են քեզ: Ուրիշ նորութիւններ չկան: Նամակներ շուտ-շուտ գրիր եւ դու էլ կանոնաւոր հասցէ գտիր, որ մենք էլ քեզ ուղարկենք:

Վան-Փուշը շուտ ուղարկիր: Ի՞նչ եղաւ Միհրանը. նրան հասկացրու որ բոլորիս չափ օգտակար կարող է լինել գործին. Աստուծոյ սիրոյն թող դայ:

Որքա՞ն ճշտութիւն կայ Վարդանի Լեռնավայրից<sup>6</sup> հեռանալու մէջ եւ ինչո՞ւ է հեռացել: Լսեցինք որ Վարդանեանը անցել է այդ կողմերը: Նրան քեզ մօտ պահիր մինչեւ Օգոստոսի վերջերը. գործերը վերջացրէք ապա թող ելնէ ուղղակի անցնի Մենաւոր. Վրէժ մտնելը աղմուկների հետ [է] կապուած:


Արեւի դիտակից խնդրել էինք. ի՞նչ եղաւ: Աստուած սիրէք խմոր եւ պարագաներ շուտ եւ շատ հասցրէք:

Բարեւներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. 11-ին յուլիս

1.- Յաջորդաբար՝ Նիկոլ Դումանին (Տէր Յովհաննիսեան), Մեքաբեցի Սաքոյին (Շովիանեան) եւ Օհանջանեան Սարգիսին:  
2.- Պապիկը, յիշենք, բանտ գտնուող Գիսակն է (Մերենկիլեան):  
3.- Խօսքը կը վերաբերի Վանի ռուսական հիւպատոսարանի հայ թարգմանին:  
4.- Հալս – այս անունով գիտակ կար Վան նահանգի Կարկառ գաւառակին մէջ: Անհասկնալի է «նայրաբաղաբ»ը:  
5.- Անտառ – ծածկանուն Խիզան գիւղախումբի, Բաղէշի նահանգին մէջ:  
6.- Վարդանը Խանասորի Վարդանն է (Մեհրաբեան Սարգիս), այդ օրերուն անդամ Լեռնավայրի (Կիլիկիա) Պատասխանատու Կեդր. կոմիտէին:

ՆԻՐԱՏՈՄ  
ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ



Արեմտ. Բիրոսի հաշիւն. Վիշապէն, Թորգոմի ձեռքով:

Գումար.— 174 օսմանեան ոսկի.  
Սէկ հարիր եօթանասուն եւ չորս

20 յուլիս 1905 թ.

**Միրելի Գարեգին!**

Ստացանք քո 26 յունիս եւ 6 յուլիս թւակիրները համարեա միաժամանակ. այսպէս է մեր յարաբերութեան ճակատագիրը. ինչ եւ է. սա յունիս 26 թւակիրը բերողն է, առարկում է որ հիւանդ է եղել, 20 ղրուշ փէշկէշ տւինք. տեսնենք վերջը:

Թերթեր եւ բրոշուրներ դեռ չենք ստացել, չհասկցանք թէ որի միջոցով էք ուղարկել: Մենաւորի վերաբերմամբ, ո՞վ է այդ վճիռը արձակել, երբ դուք էլ համակարծիք չէք. բոլորովին անգործնական ծրագիր է. մի մոռանաք որ մենք միայն վանքի դիմակի տակ պիտի գործ կատարենք: Հոն գուտ յեղ[ափոխական] վայր դարձնելը շատ վտանգաւոր է եւ երկար էլ ապրել չի կարող. Դերիկ-ը\*<sup>1</sup> դեռ թարմ է մեր յիշողութեան մէջ: Միշտ ցանկալի է որ վանահայրը լինի ոչ ամբողջապէս յեղ[ափոխական] այլ համակրող. առաջինը երկար ապրել անկարող [է]. ի՞նչ պիտի անէ անփորձ Մուրադը, այն հրէշների մէջ. դա կատարեալ մի պատուհաս կը լինի մեր գլխին. աւելի լաւ էր հին ծրագիրը. Ընձայրը կը մնայ իբրեւ վանահայր, իսկ դպրոցի համար դրէք մեր ընկերներից մէկին. չափաւոր շրջանակում չենք կարողանում յաջողութիւն ունենալ, հիմա կ' ուզենք արմատական գործողութիւններ անել. վերջապէս այս տարւայ անյաջողութիւնների մէջ ի՞նչ մեղք ունի Ընձայրը. դեռ հարց է թէ մի ինտելիգենտ մարդ, լայն պահանջներով, կրնա՞յ հոն ամբողջ տարին ապրել, կտրւելով դրսի աշխարհից. վերջապէս թոյլ չէք տալու որ այդպէս բաներ անեն. մենք կը գրենք Սարուստան:

Զարմանալի է որ դուք հաշիւները ուղարկած լինելով, խմբագրութիւնից յունիս թւագրով նորէն կը գրեն թէ ոչ հաշիւները ստացանք եւ ոչ տեղեկագրութիւնները. սա ի՞նչ հանելուկ է. արդեօ՞ք ուղարկել էք եւ մայիս հաշւեցոյցը. այն ուղարկւած է Մալխասի գծով. յունիս հաշւեցոյցը եւ եռամսեակը ուղարկւեց Մենաւորից. դրանք էլ չուտ ուղարկեցէք:

Մրգաստանից Ֆարհադի (Արամի դրամը) ուղարկած դրամի ստա[ցա]գիրը վաղուց է ուղարկւած ձեզ, բայց նրանք կրկին ստացագիր կը պահանջեն:

Վերջին անգամ Մենաւորի գծով ուղարկւեց Մ. Ք.ից եկած 115 ոսկու ստացագիրը. իսկ այս անգամ ուղարկուում է Կոմսի Մրգաստանից ուղարկած 283 ոսկու ստացագիրը. անմիջապէս ուղարկէք իրենց: Այսօր ստացւել է 174 ոսկի, բայց դեռ չգիտենք որտեղից է. հեռագրեցէք Մ. Ք. որ բացի Մրգաստանի միջոցից, առայժմ ուրիշ հասցէներով դրամ չուղարկեն, կասկածուի\* է. հեռագիրը իսկոյն ուղարկեն. իսկ Մրգաստանի հասցէն շատ ապահով է: Վերջին անգամ այդ հասցէով մի խոշոր գումար ենք ուզել. եթէ դա ուղարկեն բաւական կը լինի. ապահով է եւ ձեր միջոցը. այնպէս որ այդ մասին էլ գրէք:

Խնդրել էինք որ մեզ համար մէկ-մէկ Մշակի հետաքրքիր N N-ից ուղարկէք. մոռցաք: Թերթերը ինչպէս գրել ենք քիչ ուղարկելը միտք չունի:

Մալխասին գրեցէք որ մեր պահանջների մասին գրւած է Կոմսին եւ Մ. Ք.: Թող

Կոմսի եւ Գրիգորի հետ միացած մեր պահանջներին բաւարարուծիւն տան:

Քիւրդ Սահակը չեկաւ, սրա մասին լուրեր է պտտուում որ ձեր շրջանում սպանուել է քրդերից: Որքա՞ն ճիշտ է:

Վերջին նամակի մի քանի կէտերին աւելորդ ենք համարում պատասխանել. ահադեմական խնդիրներով զբաղւելու ոչ ժամանակ ունենք եւ ոչ գլուխ... Վրէժի նամակին էլ չենք կարող պատասխանել. երբ մարդիկ անկարող են մեր ամենամինիմալ պահանջներին բաւարարուծիւն տալ, էլ ի՞նչ միտք ունի հետաքրքրուծեան համար լինելիք պլատոնական յարաբերուծիւնները. երբ ազատ ժամանակ կ'ունենանք, թերեւս գրենք:

Այստեղ բերում ենք մի կտոր Դուրանի վերջին նամակից, որից կարող էք գաղափար կազմել նրանց դրուծեան մասին:

— Սարհադը իր խմբով շարունակ հալածուում է. 2 օր առաջ 400 գինւորներով եւ թնդանօթով հետապնդեցին. մազապուր ազատուել էր: Վերջերս այս կողմեր ձերբակալուծիւնները շատացել են. բանտը այնքան խճողեց դժբախտ հայերով, որ ստիպւեցան յիսուն հոգի քշել Բիթլիսի եւ Սղերդի բանտերը... Խորին վշտով յայտնում ենք ձեզ, որ բժշկական բարերար խումբը՝ գրեթէ բոնի հեռացրին այս կողմից. որոնք յունիս 26 մեկնեցին Կարին՝ Կովկաս վերադառնալու...<sup>2</sup> Ձենք կարող բացատրել մեր դառն ցաւերը այս մասին. եւ չենք կարող բացատրել թէ նրանք որքան օգտակար պիտի լինէին. ծանօթացանք նրանց հետ, խօսեցինք, մեկնած ատեն էլ լացինք... Չնայելով որ նրանք երկու կառավարուծիւններից<sup>3</sup> բարձրագոյն հրաման ունէին, բայց տեղական իշխանուծեան ձեռք առած ստորին միջոցներով եւ չարախօսուծիւնների հետեւանքով, հրամայեց նրանց վերադառնալ... նրանց այստեղ անցուցած մի քանի օրերը՝ համարեա բանտարկուծիւն էր...

Մի հինգ օր առաջ ծանօթ աւագակ Մեհմէտ էմին քիւրդը Հերկերա<sup>4</sup> գիւղում գնդակահար սպանեց Սրտէ Վրդոյին եւ մի երկու հայեր էլ վիրաւորեց... Լսեցիք, 100 տնից բաղկացած Կոմս գիւղի դէպքը... փախստական մի քանի հայեր անխոհեմուծեամբ գիւղի մէջ սպանեցին կալածատէր Իպրապիմ աղայի տղային. եւ դա լաւագոյն պատրւակը եղաւ այդ պատական գիւղը բոլորովին աւերակ անելու: Ամբողջ գիւղը կողոպտուեց, ոչ մի բան կարելի չեղաւ յետ խլել կողոպուտից. բոլոր տնական գոյքերը, բոլոր կենդանիները աւար առին. անձի կորուստ չկայ, բայց բոլորը ցիր ու ցան փողոցներով անտուն եւ անտիրական... եղած վնասները ահագին բան է. գիւղը ամայի է. ահա անփորձ եւ վնասակար ձեռնարկներ. դուք լաւ էք անում որ ամփոփուում էք եւ խաղաղ էք անցնում. մերը մի հարցնէք — գործը շաւիղից դուրս է պոռթկացել...

— Յուլիս 4-ին Դուրան:

Ահա եւ նրանց դրուծիւնը. մեզ մօտ նորուծիւն չկայ. Քիօն Հիւսէինը գնաց: Այսօր քաղաքում լուր է տարածուել, որ Սուլթանը մեջիտ<sup>5</sup> գալիս ռումբ են ձգել եւ թեթեւ ու անվնաս վիրաւորուել է. հոս հեռագրուել է իր անփորձ ազատուելու համար Ալլահին աղօթքներ անեն. մանրամասնուծիւններ չկան. եթէ այս առթիւ եւրոպական թերթերում լուրեր կան, ինչ է — գրէք:

Ուղարկում ենք այս նամակի հետ Իշխանի մի աշխատուծիւնը — Երկիր եւ յեղա-

*Վոխուլթիւն – ուղարկելու էք Մ. Ք. իսկ մնացածները Հայրենիքի խմբագրութեան: Սոցանից ի՞նչ լուր կայ. քանի նամակ գրեցինք, ոչ մէկին էլ չպատասխանեցին: «Հայրենիքներ» եթէ գալիս են մեզ էլ բաժին հանէք: Առանձնապէս կը խնդրէինք տոք. Ռէյնոլդսին՝ պատասխանի N-ը:*

*Միւս նամակն էլ ուղարկէք Ամերիկա:*

*Ուրիշ նորուլթիւններ չկան:*

*Ֆարհադին եւ Սարգսին ջերմ համբոյրներ:*

*Ընկերական բարեւներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ*

1905 թ. 20-ին յուլիս

Շամ

1.- Դերիկ – վանք եւ գիւղ Պարսկահայքի Սալմաստ գաւառին մէջ: Թրքական սահմանին մօտ գտնուող կիսաւեր այս վանքը, 1890ական թուականներուն, յատկապէս Բագրատ վրդ. Թաւաքալեանի (1850-1902) վանահայրութեան տարիներուն, նորոգուած էր եւ յեղափոխականներու կողմէ կ'օգտագործուէր դէպի Երկիր մարտական խումբերու եւ զէնք-զինամթերքի փոխադրութեան համար: Իբրեւ այդպիսին ալ, ան բազմիցս յարձակման թիրախ դառնալով՝ շրջակայքի քիւրտ ցեղախումբերէն, վերստին աւերուած ու անայացած էր:

2.- Խօսքը կը վերաբերի տոքք. Յ. Չաւրիեւի գլխաւորած բժշկական խումբին:

3.- Այսինքն՝ ռուսական եւ օսմանեան կառավարութիւններէն:

4.- Հերկերտ – Մշոյ դաշտի գիւղերէն:

5.- Մզկիթ: Հարցը կը վերաբերի Հ.Յ.Դ. Յուցական մարմնի կողմէ Սուլթան Համիտ Բ.ի դէմ կատարուած մահափորձին:

6.- Ամերիկացի երկարամեայ միսիոնար եւ բժիշկ Վանի մէջ:

**Սիրելի Իշխան!**

Վարդանը եկաւ. անշուշտ բերանացի կը պատմէ այստեղի անց ու դարձից. որովհետեւ առիթը ներկայացաւ, հանգամանքից օգտուում եմ մի քանի տող էլ ես գրելու: Սկզբից ասեմ, որ խոստացածդ **գախտնրի\*\*** (գաղտնի) թանաքը մինչեւ հիմա չուղարկեցիր. ինձ համար դա շատ կարեւոր է, եղածը վերջացաւ:

Վարդանից յետոյ անցեալ փոստին դարձեալ 174 ոսկի եկաւ Վիշապէն. ուրեմն մինչեւ հիմա այս ամսում եկաւ 522. Վարդանը հետը 100ը բերաւ. այժմ էլ 100ը պատրաստել էի ուղարկել, բայց բերողի առաջ կանգ եմ առել. շաբաթական մի գինւորական քարվան հանել, մի շատ անգործնական բան է եւ գաղտնապահութեան տեսակէտից: Այս Վարժապետով կ'ուզէի ուղարկել բայց չվստահեցայ: Մնում է ձեր կարգադրութեան. լաւ չէ՞ր լինի որ Ս. Հեղինէի<sup>1</sup> սեւերից մէկը գար եւ տանէր, ի հարկէ եթէ գաղտնիք կը մնայ. կ'ուզէք առանձին շորի մէջ կապենք եւ նա իսկ չիմանայ թէ ինչ բան եւ ում, որքան է. միւս կողմից էլ հետաքրքիր է իմանալ, թէ այժմ ձեզ որչափ դրամ է հարկաւոր. եթէ ուղարկեա՞ծ եւ ուղարկելիք 100ները քիչ են, գրիր աւելին ուղարկենք. հոս պահելուս նպատակը գէշք առնելն է. էլի նախկին ձեռով գնում է մանաւանդ մարտինիներ: Մի ուրիշ նախագգուշութիւն էլ միւս կողմից է ինձ տանջում. մտածում եմ որ թերեւս մեզ բացի 20 հատորից<sup>2</sup> աւելին չուղարկելի. այժմ երբ մենք այսպիսի վաճառականական ուսուցիչ ենք անում, ծայրը ուր կը հասնի. միւս կողմից էլ ինչպէ՞ս ձեռքից տալ լաւ գէշները:

Վարդանի հետ խօսեցի այս առթիւ. նա ասաց որ պէտք է գնել. հակառակ պարագային ժողովրդից կը հաւաքենք. սա որչափ վստահելի գրաւական է՞... Իմ դարտը ապրելը չէ, հոս հնարաւոր է ծախսերը մինիմում դրութեան մէջ պահել. եթէ ձեր ծրագրի համար 500-ը լինի, մնացածը հեշտ է. դու ի՞նչ ես կարծում: Բայց միւս կողմից էլ այն պարագան որ այսպէս առատ դրամ է գալիս, առիթ է տալիս հաւատալու, որ կը շարունակուի:

Ա՛խ եթէ գոնէ Արեւել. Բիւրօ մի նամակ գրէր, հանելուկը թերեւս ինքն իրեն լուծէր. բայց այդ փրկարար նամակը չկայ ու չկայ... ես զարմանում եմ քո խելքին որ այդ աշխատութիւնը ուղարկում ես Արեւել. Բիւրօ. այժմ հոն ով է հետաքրքրուում երկրով. ես թերեւս պատճէնը հանէի Խմբագրութեան համար<sup>3</sup>. բայց որովհետեւ սուրհանդակ եկաւ, չուշանալու համար ուղարկեցի հասցէագրած տեղը... Սուրհանդակը երկու անգամ նամակներ բերաւ, մէկը Գարեգինից միւսը Վրէժից. Վրէժինը ուղարկում եմ ձեզ. դրան հետ եւ Սեպուհի նամակը Սարհադին: Աւելորդ համարեցի Վրէժի նամակին պատասխանել, որովհետեւ պատոնական յարաբերութիւնների համար գոնէ ես նամակ գրելու տրամադրութիւն չունեմ. դու գիտես, ինչ կ'ուզես արա: Գարեգինին գրեցի մի քանի գործնական խնդիրների մասին. նա էլ իրենց արդարացնում է ապրանքները բաժանելու համար — որովհետեւ կ'ուզեն մարդավարի մեռնել... իսկ երկրի քաղաքական կուրը հէջ... նամակը, Վարդանի

մօտ մ'նաց. եթէ հետաքրքրուում ես կ'ուղարկեմ:

Հոս նաեւ Տէր-տէրին եւ ընկերին այժմեանից ուղարկել ես ինձ .....<sup>4</sup> կը տեղեկացնեմ ի՞նչ դառաւ. ճանապարհները բոլորովին փակ է: Մայրսաւ եւ Գարեգին սպառնում են մեր ուղարկելիք մարդիկը յետ դարձնել, Աստուած իրենց հետ: Առ այժմ նորերը չուղարկեն, տեսնենք ի՞նչ է դառնում տեղական գործերը: Երեւի Վարդանը պատմեց իմ դէմ սարքած որոգայթներին եւ խայտառակութիւններին մասին. ճահիճները չորանալու պատճառով, գորտերը սկսել են աղմկել... Առ այժմ բեմի վրայ երեւացել են հետեւեալ պ.պ. Ֆէզօ, Վրոյր (քաղաքային կոմիտէի անդամ) Մասիս-Պեղոտին, Սուսիկ, Թռչուն, Մռայլ, Վազգէն (Թարգին?) եւ Նիկոլ...

Առ այժմ մեղադրական ակտը նրա մէջ է, որ ես զինւորներին մերկ եւ անօթի եմ պահում, իսկ գօտիս ոսկիներով լիքն է. եւ խմբերի պահանջներին բաւարարութիւն չեմ տալիս, տեղացիներին արհամարհում եմ եւս եւս — առայժմ սրանք են գլխաւոր մոտիւնները. այսպէս դիմել են Գիսակին, իսկ ինձնից բացատրութիւն են պահանջում. ես մերժել եմ տալ. սպառնում են իրենց կուսակիցների շրջանը լայնացնել. տեսնենք ինչով կը վերջանայ. ոչ հոգեկան հանգստութիւն կայ եւ ոչ... Է՛հ, Աստուած իրենց հետ. առանց այս տարւայ սեզոնը փակելու — այդպէս եւ խօսել եմ Վարդանին — տեղից չեմ շարժւի եւ ոչ մի կոմպրոմիս<sup>5</sup> չեմ անի. դա իմ կողմից կը լինի թուլամորթութիւն. իսկ նրանից յետոյ ընկերները գիտեն. իմ համոզմունքս այս [է] իմ ուժերի մասին.— որ ո՛ւր որ լինեմ կարեցածիս չափ օգտակար կը լինեմ. ո՛ւր արեւ եղաւ չուրաթանս հոն կը պլիթեմ...: Այժմ միակ ինձ տանջողը մենակութիւնն է. մենակ հոգեպէս. մենակ Ֆիզիքապէս միայնակ մարդիկ\*: Այժմ եմ լաւ ըմբռնում մեծ գրողի տիպերը... Թերեւս գաւառ դուրս գալով մի քիչ թեթեւանայի, բայց այդ էլ հնարաւոր չէ ներկայ պարագաներում. որի ձեռքը տալ այս անսանձ ձիւլ սանձերը...

Պոլսում պատմում են որ Սուլթանը աղօթքի գնալու ատեն մի ռումբ են ձգել. բայց վնասել են ձիւները եւ կառապանները. ինքը վնասել է 2 մատից. այսպէս է քիօռ բախտը. խօսում են, որ թնդանօթի է բռնել թաղերը. ստուգութիւն եւ մանրամասնութիւններ չկան: Մերոնք ոչինչ չեն գրում:

Հետաքրքիր է նոյնպէս իմանալ, թէ նամակ որի հասցէին ուղղենք եւ ուր. արդեօ՞ք նախկին ձեռով ուղարկենք Ս. Հեղինէ քո անունով, թէ ի՞նչ անենք. հարցնելու պատճառը այն է, որ դու միշտ թափառական ես, իսկ Վարդանը նստակեաց. որի՞ն ուղարկել... Նոյնը եւ ապրանքների վերաբերմամբ:

Հա՛, մոռացայ գրել որ Դուրանէն նամակ առանք, որի մէջ կը գրեն որ 50 ոսկին դեռ չեն ստացել. կամ Սարհազը դիտմամբ իրենց չի յայտնում. հանելուկը ինչպէս լուծել. դու նամակ առա՞ր... բժշկական կոմիտիային դուրս են քշել բռնի կերպով.

1.- Ս. Հեղինէ — ծածկանուն Աղթամար կղզիի. սեւերից մէկը — վանականներէն մէկը:

2.- Հատոր — կուսակցական գաղտնագրութեամբ կը նշանակէ հազար. 20 հատոր՝ 20 հազար:

3.- Խօսքը կը վերաբերի Իշխանի: «Երկիր եւ յեղափոխութիւն» աշխատութեան, որ Թիֆլիս ուղարկուած էր (տես փաստ. 661-165, 20 Յուլիս): Խմբագրութիւնը, Ժըննէ, «Դրօշակ»ի համար գործածուած է:

4.- Անընթեռնելի երկու բառ:

5.- Փոխ-գիշում:

սա մի աւելորդ անգամ եկաւ շեշտելու որ Տաճկաստանում լեզալ միջոցներով անկարելի է գործ դարձնել. ամէն անգամ ա-բ[են]ից կը սկսենք...

Հետաքրքրիւ է իմանալ թէ Վարդանի ժամանակից որքան զէնքի դրամ կայ: Բաց մնացած հաշիւը ստուգիր եւ գրի՛ր որ շուտով այդ պակասն էլ լրացնենք: Է՛հ ուրիշ նորութիւններ չկան. առ այժմ այսքանը:

Համբոյրներով  
ԱՐԱՄ

1905 թ. յուլիս 22-ին  
Շամ

Փաստ. 662-673

119

### Արեւելեան Բիւրոյին

Ընկերներ!

Յուլիս 26 ունեցանք մեր Շրջանական ժողովը ուր նեկայ էին — Իշխան, Վարդան, Թորգոմ, Տիգրան, Ռուբէն եւ Արամ<sup>1</sup>. Ժողով գումարելու պատճառը Դ[աշ-նակցութեան] Խ[որհուրդի] արձանագրութեան մեզ վերաբերող կէտերի մասին խորհել է եւ մասամբ էլ այն պարագան, որ վերջերս Արտասահմանի յարաբերութիւնները բոլորովին դադրել են եւ բոլոր տեղերից — Վրէժ, Ջրաբերդ, Քար, Մ. Ք., Մրգաստան<sup>2</sup> եւն. եւն. — սխտեմատիկ կերպով պատասխանել են որ անկարող ենք ձեր պահանջներին բաւարարութիւն տալ եւ եղած ռազմամթերքներն էլ յատկացնելու ենք տեղական ինքնապաշտպանութեան, որ[ի] փայլուն օրինակը տւաւ Մրգաստանը, միայն մի օրում վառելով 26,000 ծայր, մի թիւ, որ Սասունի ամբողջ ապստամբութեան ժամանակ եւ նրան յարակից կռիւններում չէ վատնել: Ինչ եւ է. Վասպուրականի շրջանի ընկերներս հաւաքելով մի քանի որոշումներ ենք արել, որ առաջարկում ենք ձեզ ի գործադրութիւն: Թէ որոշման գործադրութիւնը եւ թէ նրա մասին եղած թեր եւ դէմերը լինելու են շուտ եւ մեզ անմիջապէս յայտնելու էք: 10 ամսւայ լուծութիւնից յետոյ Աստուծոյ սիրոյն դուք այս անգամ շուտ պատասխանեցէք, որովհետեւ դրանից է կախած մեր «լինել չլինելու» հարցը: Անցեալները ստացանք Ստեփանի ձեռքով փոխադրւած 116 ոսկու երկու չէկերը. ինչո՞ւ դրամների հետ նամակ չէք գրում զատ հասցէով. քանի անգամ պիտի գրուի այդ մասին:

Անցնենք մեր ժողովի որոշումներին.

ա. 80 հազար ռուբ. ռազմամթերքի յատկացրւած դրամի գործադրութեան ինդիր: Այս մասին՝ որոշ[ում]. այս դրամը դնել առանձին մարմնի տրամադրութեան տակ, որի անգամները ընտրւեցին մեր կողմից հետեւեալ ընկերները. 1. Կոմս, 2. Ֆարհադ (Մրգաստանցի Սարգիս), 3. Դուման, 4. Անմեղեան<sup>3</sup> եւ Ծրդ էլ Բիւրոյի



անդամներէն մէկը, որի կը ցանկանան Բիւրոյի ընկերները:

Եթէ վերոյիշեալ ընկերներից ոմանք չցանկացան կամ չկարողացան մտնել կոմիտիայի կազմի մէջ, մենք մեր կողմից իրաւունք ենք տալիս Կոմսին եւ մեր նոր ընկեր Գրիգոր Վարդանեանցին<sup>4</sup> խորհրդակցելով Բիւրոյի հետ կազմեն մարմին ուրիշ բայց ձեռնհաս ընկերներից: Կոմիտիայի դերը լինելու է. ա. Երկրի պահանջները դրամական կամ ռազմական- հայթայթել եւ հասցնել Երկրի ընկերների ցոյց տւած վայրերը սահմանագլուխներում: Տեղափոխութիւնը լինելու եւ ղեկավարելու է ներսից:

բ. Պահպանել յարաբերութիւնը Երկրի ընկերների հետ. լինել միջնորդ երկրի ընկերների եւ Բիւրոններու միջեւ:

գ. Մասնախումբը պատասխանատու է երկրի ընկերների եւ Դաշնակցութեան Խորհրդի առաջ:

դ. Հաշիւներ է տալու երկրի ընկերների եւ պատկանեալ Բիւրոյին:

ե. Սահմանագլխի կոմիտէները միայն կոնտրոլի եւ կոմիտիայի հաշիւները վաւերացնողի դեր են կատարելու:

զ. Կոմիտիայի կարիք ունեցող ընկերների պէտքերը հոգացելու է կազմակերպութեան միջոցներով:

է. Սահմանագլխի զուտ տեղական ծախսերը հոգացելու է տեղական միջոցներով, կամ այլ՝ դրա համար յատկացրեալ դրամով: Երկրի համար գնւած եւ որոշուած դրամները եւ ռազմամթերքը ոչ մի պարագայում իրաւունք չունեն վար դնել: Եթէ կարիք ունեն կարող են դիմել նոյն աղբիւրին:

ը. Գնելիք ռազմանիւթերը լինելու են հրացաններ, մոսինի իսկականը: Այս տարւայ համար 50-60 բաւական է: Փամփուշտներ՝ մարտինի, բերդանի, մոսինի: Խմոր եւ պարագաներ: Բազմաթիւ հրացանի մասեր, թէ հնի եւ թէ նորի, առանձնապէս 40-50 մոսինի կարողակա, մակագին եւ զատվոր, այստեղ եղած եւ վնաս[ւած] կոթերը գործադրութեան մէջ դնելու համար:

Կոմիտիայի կազմելու պատճառները յայտնի են:

ա. Ռուսական ներկայ շարժման լայն ծաւալ ստանալը:

բ. Աշխատանքի բաժանում չլինելը եւ

գ. Մեզ ի սպառ մոռանալը եւ մերժելը մեր պահանջների բաւարարութիւն տալու:

Իսկ երկրորդ կէտը դրամի խնդիրն է. տեղական պէտքերի համար յատկացրեալ 20 հազարով ետլայ կ'երթանք այս տարի, որովհետեւ վեց ամիս է մնացել. միայն ի նկատի էք ունենալու որ մեր 500 ոսկի պարտքը չէ մտնելու դրա մէջ, այլ զուտ նպաստով է տրւելու: Իսկ առաջիկայ տարւայ մասին կը գրւի յունւարին:

80 հազարն էլ ռազմամթերքի համար բաւարար է. միայն դրանից 10 հազարը անմիջապէս ուղարկելու էք հոս, ռազմամթերք գնելու եւ փոխադրութեան պէտքերը հոգայու համար: Վերջերս հոս դիւրութիւններ ենք ստեղծել բերդան եւ մարտին գնելու, եթէ շուտով դրամ հասցրիք, երեւի կարող կը լինենք գնել եւ կազմակերպութեան համար. 10 հազարը իսկոյն էք փոխադրելու Սրգաստանի գծով. թերեւս յաջողինք հէնց ստանալ մի անգամից, այս մասին կը գրենք կամ այս նամակի վերջում կամ առաջիկայ նամակում: Խնդրում ենք որոշել եւ բանտի ընկերների դրու-

*Թիւնը: Կ[արմիր] խաչերի խոստացած նպաստները չեկան:*

*Վերջին կէտը Դ[աշնակցութեան] Խ[որհրդին] հոս Պ[ատասխանատու] Կ. Կ. կազմելու խնդիրն էր. ժողովում շեշտեց Պատասխանատու մարմնի կարեւորութիւնը հէնց այժմանից, բայց բաւականաչափ ընկերներ չլինելով յետաձգեց աշնան, մինչեւ կը գան նոր ընկերներ, շեշտելով որ ուշ աշնան Սամսոն եւ Վարդանեան անպատճառ պիտի ներս գան: Հետաքրքիր է իմանալ Բիւրոն կամ Դ[աշնակցութեան] Խ[որհուրդը] այստեղի Պ. Կ. Կոմիտէի համար իրենք յատուկ մարդիկ ունեն՞ան աչքի առաջ, թէ ընտրութիւնը թողնելու են մեզ, ձեռքի տակ եղած մարդկանցով: Ժողովում շեշտեց եւ այն պարագան, որ ընդունելով այստեղ – ինչպէս եւ Դ[աշնակցութեան] Խ[որհուրդը] որոշել էր – 2 Կ. Կ[ոմիտէներ] Վասպ[ուրականի] եւ Լեւոնապարի: Պատ. մարմինը երկու տեղերի համար պիտի լինի մէկը, որովհետեւ տեղական գործերը շատ սերտ կերպով կապուած են իրար հետ: Խնդրում է ուղարկել Լեւոնապարի Կ. Կոմիտէի համար կնիք:*

*Մեր ժողովի մասին ու այս խնդիրների մասին աւելի մանրամասնօրէն կը գրենք Վրէժի գծով:*

*Մնանք ընկերական բարեկներով  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ  
ԼԵՌՆԱՊԱՐԻ Կ. ԿՈՄԻՏԷ*

- 1.- Յաջորդաբար՝ Պօղոսեան-Սիքայէլեան Նիկոլ, Վարդան Շահալազ (Տօնիկեան), Տեղտրիկեան Թէոս, Տէր Սկրտչեան Յարութիւն, Տէր Սինասեան Ռուբէն (Սինաս) եւ Մանուկեան Արամ:
- 2.- Յաջորդաբար՝ Ատրպատական, Կարս, Ալեքսանդրապոլ, Թիֆլիս, Երեւան:
- 3.- Յաջորդաբար՝ Փափագեան Վահան, Օհանջանեան Սարգիս, Տէր Յովհաննիսեան Նիկոլ, Ծովիանեան Սարգիս (Մեքարեցի Սաքօ):
- 4.- Ինչպէս նշած ենք, Վարդանեանը կեղծ անցագրի անունն է. իսկականը՝ Օտապաշեան Պօղոս, աւելի ծանօթ Բարսեղեան Սարգիս անունով:

**Մենաւորի ընկերներին**

**Սիրելիք՛!**

Ստացանք Շանթի<sup>1</sup> 25 [յուլիս] նամակը. բայց չհասկացանք թէ մեր նոյն սուրհանդակի ձեռքով ուղարկած նամակը ստացա՞ք եւ ուր հարկն է ուղարկեցիք թէ ոչ. օրինակ Մրգաստանի նամակը շատ կարեւոր է. բայց չիմացանք թէ ուղղակի այդ տեղից ուղարկեցիք թէ Գարեգինի գծով: Ընծայրը ինչո՞ւ էր գնացել Աւարայր<sup>2</sup>. հոն ի՞նչ նորութիւններ կան: Մայիսսը արդէն անցե՞լ է թէ նոր պիտի անցնի: Ձեզ մօտ հանգստա[ցա]լ թէ ոչ: Աստուծոյ սիրոյն մի 5-6 մարդ պիտի դուրս ուղարկենք. այստեղ պահել անկարելի է, գործերը խիստ կը տուժեն. լաւ կը լինի որ այս սուրհանդակի հետ պայմանաւորուէք որ առաջիկայ անգամ գալուց հետը 5-6 մարդ բերէ եւ փոխանակ Մենաւոր մտնելու ուղղակի Աւարայր գնայ. այսպէս կամ այնպէս ամէն միջոցի դիմեցէք դրանցից մեզ ազատելու համար. եթէ դրամի կարիք զգաք մենք կ'ուղարկենք:

Ժամացոյցը Հասոյի մօտ է. այս անգամ գրեցինք որ յանձնէ այս սուրհանդակին, տեսնենք ի՞նչ կը լինի: Այդ ինչպէ՞ս է եղել որ կիրճեցիք եկել ու դատարկ են վերադարձել. ո՞ւր էր Շանթը. նրանց կանչեցէք. առայժմ մեր յոյսը նրանք են եւ Պարապը:

Աւետարանցիք լրբութիւններ են անում. մարդ ենք ուղարկել ապրանքների յետեւից. առաջինը՝ շատ պակաս հաշիւ են տւել. երկրորդ՝ յարմարութիւն չեն ստեղծում գիւղից հանելու համար: Նրանց մի սպառնական նամակ գրեցէք յիշեցնելով որ եթէ ապրանքները լրիւ եւ շուտ տեղ չհասցնէք, Մենաւորից մի գինւած խումբ կը գայ եւ ձեր գիւղը կը վառէ. այս կերպ թերեւս յաջողցնենք: Մարդիկ նորէն գնացին Աւետարանի գծով Վարդանի նամակով, եւ լօ-լօներ եկան փոխադրութեան. տեղ հասա՞ն թէ ոչ: Դրանց շուտով ուղարկեցէք, դա առաջին փորձն է: Այս սուրհանդակից չի՞ կարելի արդեօք օգտւել եւ Տոնոյի հետ ձիով փոխադրութիւն անեն մինչեւ իւր ապաստանած գիւղը. այնտեղից այս կողմը մենք կ'անենք, ընդամէնը երկու գիւղերայ ճանապարհ է:

Ի դէպ, ի՞նչ դառաւ քուրդ Սահակը<sup>3</sup>. դրա մասին լուրեր է պտտւում իբրեւ թէ Աւարայրում քրդերը նրան զարկել են. Գարեգինը գրում է որ Աւարայրի գծով պիտի գար. բայց մինչեւ հիմա չեկաւ. որքան ճիշտ են տարածւած տարածայնութիւնները. երանի թէ սխալ լինէր. նրա գլուխն էլ կերաք. ափսոս տղայ. այդպիսի մարդիկ քիչ են ճարւում:

Մարուստանէն նոր ընկերներ չեկան. Աւարայր Մոսօ անունով մի գինուոր կայ. եկել է Արամի հետ. նրան անպատճառ դիւրութիւններ ստեղծեցէք ներս ուղարկելու. չմոռանաք... Փայլակը չեկա՞ւ:

Մարուստանէն նոր ապրանքներ ստանալու յոյս կա՞յ, թէ ոչ: Աւարայրում որ-

քա՞ն ապրանք կայ:

Հագար անգամ խնդրել ենք որ ուղարկված ապրանքների մանրամասն ցուցակը գրեցէք նամակում. այս անգամ գրում էք թերթեր եւ գրքեր. իսկ գիրք չկար, սա ինչ թիւրիմացութիւն է. աշխատեցէք միշտ «Հայրենիքներ» ճանպել:

Ներփակեալ նամակները շուտով հասցրէք իրենց տեղերը:

Մեր դրութեան մէջ փոփոխութեան չկայ:

Ընկերական բարեւաններով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

[1905] 2-ին օգոստ.

Շամ

1.- Շանթ – Ս. Թադէի մէջ փոխադրութեան գործի ղեկավար:

2.- Աւարայր – ծածկանուն Խոյ աւանի, Ատրպատական:

3.- Քիրոյ Սահակ, Սեւանցի Սահակ, Ջաֆար – քրտացած հայ, վալադ – ուղեցոյց:

Փաստ. 661-192

## 121

Սիրելի Կոմս!

Ստացանք Քարից<sup>1</sup> գրած երկտողը, որի մէջ գրել էիր նոր սկսելիք գործին դիւրութիւնների եւ կարգադրութիւնների մասին. մեր կարծիքով այդ բոլոր ձեռնարկները ի գուր են. գծի վրայի բոլոր գիւղերում տարածայնութիւնը ձգելը, մանաւանդ Գարեգիւնին եւ Հաջիի ներս գալը, բոլորովին մի աւելորդ ու անգործնական ձեռնարկ է, կապւած վտանգների հետ: Չայիկի հետ մենք այնպէս ենք պայմանաւորուել, որ եթէ նրան դուք ձի տաք, կարող էք եւ Պարտիզաւանից<sup>2</sup> բերել: Իսկ եթէ դուք կարողանաք Նոր-Մծբինում<sup>3</sup> մի մարդ ձեռք ձգել եւ ապրանքները իրան փոխադրել, այդ արդէն հրաշալի կը լինի. եթէ կ'ուզէք Չայիկին խօսէք որ վերադարձին մտնէ հոն եւ ձեր կողմէն կարգադրէ:

Արդէն գրել ենք որ արժէքաւոր բան չտաք: Լսեցինք որ Ոսկանապատում<sup>4</sup> 50 մաւուզեր\*\* էք գնել. թէեւ հաւատացած ենք որ վերջին դէպքերի ժամանակ այդ էլ գուլյուր[թու [?]] է գնացել, եւ այս տարի ոչինչ չենք անելու, բայց այս անգամ էլ իբրեւ վերջինը փորձում ենք – եթէ թիւրիմացութեամբ վերոյիշեալ 10-նոցները մնացած լինեն, անպայման թէ՛ նրանք եւ թէ՛ ուրիշ բաներ, այնպիսի ձեռով էք ուղարկելու, որ եթէ սրանք իւրացնելու լինեն, չկարողանան օգտուել. օրինակ, մաւուզեր\*\* բաժանելու էք 2 մասի. մի անգամում մի մասն էք ուղարկելու, իսկ երկրորդ անգամ մնացած մասը... այսպէս էլ՝ ուրիշ ապրանքները: Մելիք-Արծրունիի հասցէին գրած փոխանցել մօրը\*\* նամակը համարեա թէ չկրցանք բանալ:

ինչ որ է: Գաւազի հետ դիտակներ եւ նամակներ էք ուղարկել, մենք չենք ստացել. եթէ մեր մարդն է, դատարկ է վերադարձել. չենք ստացել եւ հրաւիրագիրը<sup>5</sup>:

Յուլիս 5-ից մինչեւ հիմա մենք ստացել ենք միայն մի նամակ. մնացածները թէ ինչ են եղել այդ մասին գրեւծ է ներփակ նամակում: Հազար անգամ գրեցինք թէ կանոնաւոր թղթի վրայ գրեցէք եւ այն գախկուլ [?] թանաքը մի քիչ պարզ արէք. ոչ լսող եղաւ եւ ոչ էլ կատարող. եթէ զադունի\*\* չէք գրում, այն ժամանակ պարզ գրէք... է՛հ, ցաւալին այն է, ո՛վ որ այս գախկան [?] երկրից ոտը կտրոււմ է, իսկոյն մոռանում [է] այս դժոխքի բոլոր դժւարութիւնները: Այդ անուշադրութեան գոհ գնաց եւ Թորգոմի անմեղ եղբայրը: Եթէ գրում էք ուշադիր կերպով գրէք, եթէ չէք կարող, գրեցէք Մինարէթով. թող ուշ լինի, միայն ապահով. եւ կարեւոր բաները միշտ գրեցէք բալանիով<sup>6</sup>: Ոչ տրամադրութիւն կայ եւ ոչ սիրտ ուրիշ բաներ գրելու. արդէն ոչ մի սիրտ չթողեցին արտասահմանի մեր ընկերները. գոնէ թողէք մեր ցաւերով բաւականանանք եւ ձեր անզգոյշ քայլերով նոր ցաւեր մի աւելացնէք:

Հրաւիրագիրը շուտով ուղարկեցէք. Գրիգորին շտապեցրէք ներս գալու. հաւանօրէն եթէ կարողացնենք մարդ պիտի ուղարկենք. միայն ժամանակի խնդիրն է մեզ տանջում. չգիտենք երբ կը լինի:

Համբոյրներով՝  
ԱՐԱՄ

1905 թ. 13 օգոստոսին

Շամիր

**Յ. Գ.— Աստուծոյ սիրոյն սրանց ձի տւէք:**

1.- Քար – ծածկանուն Ալեքսանդրապոլի:

2.- Պարտիզաւան – ծածկանուն Կադգուանի:

3.- Նոր Մծքին – ծածկանուն Ալաշկերտի:

4.- Ոսկանապատ – ծածկանուն Պաքուի:

5.- Խօսքը Հ.Յ.Գ. Չորրորդ Ընդհ. ժողովի հրաւիրագրի մասին է. կը սպասուէր որ ժողովը գումարուի 1905 թ. վերջերուն. հայ-թաթարական ընդհարումները, սակայն, պատճառ եղան անոր յետաձգման:

6.- Արամ միշտ բալանի կը գրէ, փոխանակ բանալիի: Հարցը կը վերաբերի թուանշային (շիֆրէ) գաղտնագրով գրելուն:

**Սիրելի Տիգրան!**

Առանք նամակդ. առաջին ուրախալի լուրը որ կարող ենք հաղորդել, գողերի վերադարձն է ապրանքների հետ. դեռ մանրամասնութիւններ չգիտենք:

Նպաստաւորի<sup>1</sup> լիրբը երաշխաւոր տալով ազատւել է. մի ամսէն 60 չափ ցորեն պիտի տայ մեզ, ուրիշ ոչինչ. ոչ քննութիւն է հարկաւոր եւ ոչ էլ նրանց գիւղը գնալու կարիք կայ: Մենք խոստացել ենք նրա գործը նորէն քննել երբ նա ցորենը կ'ուղարկէ, իսկ մինչ այս ոչինչ չենք անի. ուրեմն ուշադրութիւն չէք դարձնելու: Ի՞նչ խառնակ գործեր կան. ուրախալի չէ՞ որ տղաները հոն մտել են:

Դէ՛հ շատ բնական է տղաների մեծ աղմուկներով շարժւելը. այդ շրջանի համար այդպէս էլ արժէր. ի՞նչ ասել կ'ուզէ, նկատողութեան արժանացել են եւ հարկաւոր հրա[հա]նգները տրւած է:

Ձիաները ինչո՞ւ պիտի ձեզ խանգարեն. ո՛ւր հարկաւոր է արագ շարժւել ձիով էք գնալու, ուր ապահով չէ, ձիաները թողէք մի կենտրոնական գիւղում եւ վերադարձին օգուտեցէք:

Հեպթաղէմի եւ Հնադարեանի<sup>2</sup> ցորենները եւ հաշիւների խնդիրները կարգադրելու չմոռանաք: Ա. ենթակոմիտէի տւած պարտք ցորենները – 30 չափ մի տեղի է տւած, 15 թէ որչափ միւս տեղ. դէ՛հ դու հաշիւները աւելի լաւ գիտես:

Հեպթաղէմի Ծոռը այստեղից մի գիրք է տարել կարդալու – Մոսուսի եւ Զօրի արշաւանքը<sup>3</sup>. չմոռանաս առնել:

Այս նամակաբերի մասին խօսւած է. ուղիղ 4 ամիս է զահլաս կը տանի. սրա գործը մի կերպ կարգադրել տուր. ինքը անձամբ կը պատմէ մանրամասնութիւնները: Վերջին ամիսներու հաշիւները անցեալ օրը ենթակոմիտէն ճամբել էր մեզ. այդ հաշիւն էլ ծածկեցի՞ք, թէ դեռ մնա՞ց:

Աշխատիր շուտով վերադառնալ. այդ կողմի գիւղերից կրկին դիմումներ է լինում:

Ի դէպ. Նորածիլ խմբի անդամներէն մէկը, Արցախցի<sup>4</sup>, որ այս տարի նոր է աւարտել շրջանակը, ցանկանում է իրենց գիւղում ուսուցիչ լինել. ասում են որ Շաւարշը եւ Յոլակը նրան հակառակում են դեռ. ճի՞շտ է. աշխատիր յաջողեցնել որ նա

1.- Նպաստաւոր – ծածկանուն Էրեբին գիւղի, Թիմար գաւառակ:  
2.- Հեպթաղէմ – ծածկանուն Կոտոց անապատի: Հնադարեան – ծածկանուն Լիմ անապատի եւ «Դրսի տան»: «Դրսի տուն» կը կոչուէին կղզիներու՝ լճափին ունեցած սեփական հողերը:  
3.- «Մոսուս եւ Զօրի արշաւանքները», հրատարակութիւն «Հայրենիք»ի մատենաշարին: 1904 թ. Սասնոյ ապստամբութեան օրերուն ֆետայական շատ խումբեր փորձեցին Կովկասէն օգնութեան հասնիլ ապստամբներուն. քիչեր, սակայն, յաջողեցան հասնիլ Սասուն. մեծ մասը ճանապարհին կռուի բռնուելով քիւրտ եւ քուրք զօրքերու հետ, ստիպուեցաւ նահանջել, այս անգամ ենթարկուելով սահմանապահ ռուս զօրքի կրակին: Յուլիս ամսուն, երբ գրեթէ վերջ գտած էր Սասնոյ ինքնապաշտպանութիւնը, զինեալ երկու խումբեր, «Մասիս» եւ «Արտաւագ», Հին Պայազէտի կողմէն կ'անցնէին սահմանը եւ Մոսուսի եւ Զօրի մէջ, քրքական զօրանցի մը եւ քիւրտ զինեալներուն վրայ յարձակելով, մեծ ջարդ կու տան անոնց:  
4.- Արցախ – ծածկանուն Թիմար գաւառակի գիւղերէն մէկուն:

իրենց գիւղում պաշտօն ստանձնի. օգտակար տղայ է:

Ուրիշ նորութիւններ չկան...

Հեպթադէմի փայտը անպատճառ փոխադրել կը տանք, իսկ ալիւր անպատճառ պիտի փոխադրել. մեռանք բազարի կեղտոտ հացերը ուտելով: Ուշադրութիւն չես դարձնելու Հեպթադէմի պետի կեղծաւորութիւններին:

Արցախի ցորենը քո ձեռքով մարդիկ վարձիր եւ փոխադրել տուր. այստեղից շատ անյարմարութիւններ կան. ամէնից առաջ՝ գաղտնիք չմնաց:

Առայժմ այսքանը. Մուռը արդէն մնաց. այսուհետեւ ուշ է:

Բարեւներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. օգոստ. 14-ին, Մով

Փաստ. 661-175

## 123

Միրելի Գարեգին!

Չգիտեմ վերադարձար թէ ոչ. յամենայն դէպս գրում եմ իմ մասնաւոր կարծիքով<sup>1</sup>. Եթէ վճռել ես գալ եւ Գրիգորն էլ պիտի գայ 4-6 հոգով Վարդանի ձեռով պիտի շարժւէք հէնց մինչեւ սեպտեմբերի վերջ. եթէ այդպէս մտադիր էք գալ, անմիջապէս նամակ գրէք որ ներսից կանոնաւոր առաջնորդներ ուղարկենք ձեզ: Ամենամեծ յաջողութիւնը նրա մէջ է, որ գաղտնիք մնայ եւ արագ շարժւէք: Ադաշիս անպատճառ էք բերելու, առանց նրան եթէ գալու լինէք չենք ընդունի...

Հոս գործերու լաւ ժամանակն է, շտապեցէք. այս խաղաղ ժամանակում արժէ ծանօթանալ երկրի հետ. երբ հարսանիքը սկսւեց, ուշ կը լինի:

Իշխանը անդադար թերթեր կ'ուզէ, իսկ դուք հէջ չէք ուղարկում, 100 օրինակից պակաս մի ուղարկէք: Մենաւորի գիծը բացւեց, շտապէք օգտւել:

Խնդրում եմ շուտով մի քիչ կարծի գաղտնի թանաք ուղարկես. եղածը բոլորովին վերջացել է: Եթէ նոր միջոցով թանաքներ ուղարկէք լաւ կը լինի. սա շատ տարածւեց, բայց յամենայն դէպս հինից ուղարկեցէք:

Այսօր Ամերիկայից 50 ոսկի ստացանք. նամակ գրելուց յիշիր: Մի ամիս հիւանդ պառկել էի, հազիւ առողջացայ: Ինձ հետ եկած գինւոր Մօսոյին անպատճառ ներս ուղարկի:

Ձերմ համբոյրներ քեզ, Սարգսին եւ Ֆարհադին: Վերջինն շատ եմ կարօտցել. երանի թէ մնար մօտս. այդպիսի մի ընկերի ներս լինելը երջանկութիւն է...

Բարեւներով ԱՐԱՄ

16 օգոստ.

Քարդդ յետ ենք ուղարկել. եկա՞լ:

1.- Արամի այս նամակը կ'ընկերանայ Իշխանի մէկ գրութեան, ուր փափաք կը յայտնուի նոյնպէս Գարեգինին – Ատրպատականի կոս. ներկայացուցիչ Ստեփան Թադէւոսեանի – Վասպուրական գալուն:

**Քաջայոյսի եւ Լեռնաքարի շրջանի ընկերներին**


Ստացանք շնորհակալութեամբ ձեր բանտարկելոց համար 16 մէճիտ նւէր, ձեր շրջաններից Տէր-Տէրի եւ Փոլաղի միջոցով դրամ 210 դահեկան Լեռնաքարի եւ Քաջայոյսի<sup>1</sup> շրջանէն:

Լսեցինք որ նորէն էլ պիտի ժողովէք, բայց չէք հաւատում բերողներին. սրանով յայտարարում ենք որ ձեր տւած բոլոր նւէրները տեղ կը հասնեն եւ կը գործադրուեն իրենց նպատակին. ուրեմն աշխատեցէք օր աւուր առաջ ձեր բանտարկելոց համար ցորեն եւ այլ նւէրներ հաւաքել որ ձմեռւայ պատրաստութիւն տեսնենք: Ուղարկուում է 16 մէճիտի ստացագրերը կնքւած:

Բարեւներով՝  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. օգոստ. 18ին (կնիք)

1.- Լեռնաքար – ծածկանուն Անթրպ գիւղի, Հին Պայազտի գաւառ. Քաջայոյս – ծածկանուն Քոզուն գիւղի, Արճէշ գաւառակ:





*Արեւմտեան Բիւրոյին*

Փաստ 661-182-ը գաղտնի մելանով գրուած է եւ բաւական յաջողութեամբ «քացուած»։ Վասպուրականի Կեդր. կոմիտէի անունով գրողը Արամ Մանուկեանն է։ Այս նամակին մէկ ուրիշ տարբերակը (փաստ. 661-226) կը գտնուի արխիւներուն մէջ, նոյնպէս Արամի գրիչով եւ գրեթէ միեւնոյն բովանդակութեամբ, որ յայտնապէս ապահովութեան համար տարբեր ճամբայով ուղարկուած է Ժընեւ՝ Արեւմտեան քիւրոյին։

Ներկայ փաստաթուղթին կը հետեւի «քաց» նամակ մը, նոյնպէս Արամ Մանուկեանի ձեռագրով, բայց ստորագրուած Արամ Մարումեանց։ Վերջին այս անունը կը գործածէր Արամ ամէն անգամ երբ գաղտնի թանաքով գրուածը ծածկելու համար կ'ընկերացնէր նման անմեղ բովանդակութիւն կրող «քաց» նամակ մը (տեսնել էջ 229)։

*Ընկերներ! Վաղուց է ձեզնից նամակ չենք ստանում. երկու ամիս առաջ ձեզնից – Վրէժի գծով<sup>1</sup> – մի նամակ առանք եւ պատասխանը անմիջապէս նոյն գծով գրեցինք. կ'երեւայ որ չէք ստացել, որովհետեւ նամակը ուղարկելուց 8 օր յետոյ Վիշապէն Թորգոմը<sup>2</sup> 174 ոսկի էր փոխադրել եւ գրել որ նամակ չգրենք մինչեւ նոր հասցէ չուղարկեն. մինչեւ հիմա նոր հասցէ չստացանք. ձեզ գրած էր հին հասցէով։*

*Զհասկցանք թէ մի ամսեայ եւ վերջին եռամսեայ հաշուեկշիռները ստացա՞ք թէ ոչ։ Վրէժէն կը գրեն որ ուղարկած է ձեզ. Վիշապից ստացել է հետեւեալ դրամները. 87+174+174=436 օսմանեան ոսկի։ Խոստացած գումարները ժամանակին չէք ուղարկում որ մեր պատրաստութիւնները տեսնենք. վաղը միւս օրը ձմեռ կը լինի. բայց մենք ոչինչ չենք արել!... Արեւել. Բիւրոյէն եւ ձեզնից ինդրել էինք որ գէնքի դրամէն 100 ..... ոսկի փոխադրէք հոս գէնք գնելու. մենք ձեռնարկել ենք մարտիններ գնել եւ 20 հատ էլ գնել ենք. եթէ դրամ լինի կը շարունակենք գնել. մեզ համար հոս գէնք գնելը շատ ձեռնտու է։ Շտապեցէք դրամ հասցնել։ Ա[մերիկայից] կարող էք դրամ փոխադրել. վերջերս նրանց համար դրութիւն ենք ստեղծել. Ամէն անգամ կ'ուզենք 100ական ոսկի փոխադրել (հարիւր ոսկի)։ Իսկ Սարուստանէն (Մրգաստանով) կարելի է 1000 եւ [աւելի] միանգամէն տեղափոխել. գրել ենք բայց լսող չկայ։ Ամբողջ տարին լրացաւ, Արեւել. Բիւրոն միայն մի նամակ է գրել. Զգիտեմ մեր վրայ կը ծիծաղեն թէ գործի. գոնէ միանգամէն յայտարարէք որ երկրի համար Բիւրոն գոյութիւն չունի որ մենք էլ իմանանք մեր անելիքները։ Մինչեւ երկրի համար մի անկախ մարմին չկազմուի միշտ մեր պահանջները մնալու են «ձայն բարբառոյ անապատի»։ աշխատեցէք անկախ մարմին անպատճառ ստեղծել. մա-*

նաւանդ այդ մարմնի անդամները ազատ են լինելու: Ամերիկայէն մի երկու ընկեր նշանակեցէք այդ մարմնի մէջ. նրանք լաւ են այդ խնդիրներում: Վիշապէն վաղուց է նամակ չունենք. կ'երեւայ որ վերջին դէպքերը շատ են ազդել<sup>1</sup>. այդտեղի անկանոնութեան պատճառով անկարող ենք ձեզ հետ կանոնաւոր յարաբերութիւն պահպանել. աւելի լաւ է հասցէ դնէք Պոլզարիայի կամ արտասահման որեւէ տեղ: Դուք մեզ կարող էք գրել Պոլզարիայից հետեւեալ հասցէին (հոս Սիմէոն Թիւթունջեանին, յանձնել նշանին. գրեցէք ժամացոյցային առեւտուրի մասին)<sup>4</sup>:

Մեր դրութեան մէջ փոփոխութիւն չկայ: Կառավարութիւնը սկսել է խստութեամբ բախեաներ<sup>5</sup> ժողով[ել] ամբողջ Ձև տարւայ միանգամէն. կը կանչեն բանտ, կ'ուզեն տուրք. եթէ տւիր, բաց կը թողնեն, եթէ ոչ ներս կը դնեն: Այս տարւայ վերջին (հողային տուրք) փոխարէն տրւած է պաշտօնեաներին գանձելու. պաշտօնեաները առանց հարցնելու տուն կը մտնեն եւ եղած չեղածը կը քաշեն կը տանեն: Գիւղերում թաւաչիները (հարկահաններ) կ'երթան հարկ կը պահանջեն դրամով. այսօր գիւղացու ձեռքին դրամ որտեղից է. խեղճերը ստիպւած ցորենը ծախում են իրեն թաւաչուն, որը միեւնոյն ժամանակ եւ վաճառականն է, 27 դրուշով չափը, այն ինչ չափը քաղաքում 45-50 դրուշ է, եւ հարկ տալիս:

Նոր գոմանդար է եկել (ընդհանուր զօրաց հրամանատար) Տէրիկ փաշայ. ազգով առնաւուտ է<sup>6</sup>. չգիտենք ինչ պտուղ է. բայց սոխին անուշը չի լինի:

Բանտերը լցեցուած են հայերով. տեղիս միամիտ առաջնորդական փոխանորդը եւ վաճառականների մի քանի ներկայացուցիչներ Սուլթանի Կարմիր գահակալութեան առթիւ քաղաքի (Վան) յանցաւորների համար ներում են խնդրել. սպասենք եւ յուսանք...

Արհեստական կերպով հացի գինը սղացրել է կառավարութիւնը՝ գիւղերը թանգ ծախելու համար: Կ'երեւայ որ այս տարի էլ սովը անխուսափելի է լինելու եւ թերեւս աւելի սարսափելի քան անցեալ տարի... Կառավարութիւնը երկու առաջատար տարու նաւ է շինել տւել յեղ[ափոխաններին] բռնելու համար. փոխանակ յեղ. բռնելու ժողովրդեան նաւերին չէզոքացրել է եւ ինքն է աշխատում. փոխադրութեան համար վաճառականական նաւերից մեծն է միայն աշխատում. փոքրը անգործնական է դուրս եկել առայժմ...

Մեր յարաբերութիւնը դրսի հետ բոլորովին դադրել է. փոխադրութեան յարմար օրերը եկան եւ մենք փոխադրելու նիւթ չունենք սահմանազուլիններում: Աստուած վերջը բարի անի: Վարդանեանը<sup>7</sup> ո՞ւր մնաց. գրել էիք որ անցաւ Սարուստան, բայց լուր չառանք. ինչո՞ւ այսքան ուշացաւ... Մեծ կարիք ունենք երկու մասնագէտների. մէկը լինելու է գինագործ, միւսը ռմբային եւ ակնային գործողութիւններ հասկացող. մանաւանդ վերջինը շատ կարեւոր է: Մենք չգիտենք թէ հողի մէջ խմորը առանց վնասելու քանի ժամանակ կարող է մնալ. ի՞նչ տեսակ պիտի տեղաւորեցնել հողի մէջ: Ամենագլխաւորը՝ մենք չգիտենք ուժի համեմատական չափը. փորձեր անելու ոչ շատ յարմարութիւն կայ եւ ոչ էլ շատ մատերիալ<sup>8</sup>. օրինակ այս ինչ ժայռը կամ այս ինչ շինութիւնը խորտակելու համար որչափ է հարկաւոր. որ մասում պիտի դնել, այդ մեզ համար խոր անյայտութիւն է... Գիտցող ընկերներն էլ գաղափար ունեն միայն ռմբային գործողութիւններից. գոնէ այդ բաների մասին կամ ձեռնարկ<sup>9</sup> էք ուղարկելու, կամ նամակներով գրելու էք: Լաւ կը լինի որ

մասնագէտ լինի. բաւական է որչափ այդ ճանապարհին զոհեր տուինք...

Զարուհու<sup>10</sup> մասին լուր չառա՞ք... առնելուց մեզ էլ գրէ՞ք:

Լսեցինք որ Վարդանը վերջերս Լեռնադաշտէն<sup>11</sup> դուրս է եկել. որքան ճիշտ է. չէր կարելի արդեօք նրա գործերի ընդհանուր դրուժեան մասին մեզ տեղեկութիւններ հաղորդէիք: Առաջները գործերի մասին շրջաբերական կ'ուղարկէիք, վերջացա՞ւ, թէ շարունակու՞մ են. եթէ շարունակու՞մ են մեզ ինչու չէք ուղարկու՞մ:

Հաշկեցոյցների համար յատուկ բլանկներ կար տպւած. ինչո՞ւ մեզ հէջ չուղարկեցիք... եթէ կան Մինարէթով<sup>12</sup> ուղարկեցէք...

Հետաքրքիր է իմանալ թէ այս տարւայ ռազմական ելեւմտից հաշիւը ձեզ հարկ կ'ա՞յ ուղարկելու թէ ոչ...

Առհասարակ ի՞նչ կարծիք եւ տրամադրութիւն է տիրում արտասահմանում երկրի գործերի վերաբերմամբ, Սասունի եւ Սարուստանի դէպքերից յետոյ. այդ շատ հետաքրքիր է մեզ համար...

Առայժմ այսքանը:

Ընկերական բարեկեցութիւն  
ՎԱՄՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. օգոստ. 23ին

Շամիր

Յարգելի բարեկամ!

Վաղուց է մեզ նամակ չէք գրում. բաւական նորութիւններ կան որ պիտի հարորդէիք, բայց նամակ չգրելու պատճառով մնաց:

Արտասահմանեան թերթերում կարդացինք որ Եւրոպ. հայ ուսանող. միութ. մէջ ֆրակցիա է առաջ եկել. հետաքրքիր է իմանալ շէֆերը ովքե՞ր են: Շուշեցի եւ քազուեցի ուսանողները ի՞նչ դեր են կատարում: Է՛հ Աստուած իրենց հետ. առաջ ի՞նչ էին անում մեզ համար որ այսուիտե տե ինչ անեն: Աչքերնիս խաւարեց սպասելով որ այդքան մեծանուն Եւրոպայի հայ ուսանողներից մէկը գոնէ երկիր կը գայ եւ մեզ հետ լծակից կը լինի, բայց չեկան ու չեկան... Չգիտենք, եւրոպական կրթութեան մեղադրե՞նք, թէ իրենց անգոյն անհատականութեան... մի կողմը թողնենք ֆրանկցիոնիստներին... ի՞նչ արին մերոնք, նոցանից քանի՞սը հաստատարիմ մնաց իւր կոչման, նոցանից քանիսը դրականի վեր ածեց այն գաղափարները, որ Եւրոպայում իդիոլոգաբար այնքան պաշտպանում էին, եւ ոչ մէկը... հայ ազատագրութեան պատմութեան մէջ մենք գոնէ չենք ճանաչում եւ ոչ մի ակտիւ ուսանող գործիչ... նոյնն է եւ Սարուստանում:

Գոնէ աշխատեցէք նրանց հրատարակութիւններից մեծ քանակութեամբ ուղարկել երկրի ժողովրդի համար. ծարաւի են գրականութեան. բայց միայն սաղմոսներ է ձեռք ընկնում, որ միսիոնարները այնքան առատութեամբ ցրում են, մեր հոգու փրկութեան համար: Նոյնը թերթի մասին. միշտ թերթի պակասութիւն ենք քաշում: Մեզ համար յատկապէս 100-ական հատ ուղարկելու էք եւ գրելու Շամիր

համար: Նոյնպէս եւ գրքերի համար:

Արմենականները Պոլզարիայում մի ինչ որեւէ գումարելիք ժողովի մասին եւ խօսում. դա ի՞նչ բան է եւ ովքե՞ր են...

Մի մոռանաք մեզ եւ մէկ-մէկ գրեցէք որով շատ կը պարտատրեցնէք մեզ.

Ուղարկում ենք ողջոյններ բոլոր ծանօթներին: Մնացածը ձեզ յայտնի միջոցով:

Ձերն համբոյրներով  
ԱՐԱՄ ՍԱՐՈՒՄԵԱՆՅ

1905 թ. 23 օգոստ.

Շամ

- 1.- Իմա՝ Ատրպատականի կամ Թարիզի վրայով:
- 2.- Վիշապը՝ Կ. Պոլիսն է, Թորգոմ՝ Տեղտրիկեան Թէոս:
- 3.- Ակնարկութիւն Սուլթան Ապտիլ Համիտի մահափորձին:
- 4.- Իմա՝ գաղտնի քանաքով գրուած նամակին ընկերամայ ժամացոյցի առետուրի վերաբերեալ գրութիւն:
- 5.- Բախեա – Թուրքիոյ մէջ՝ պարտք յետնեալ տուրքի:
- 6.- Ալպանացի:
- 7.- Վարդանեանը կեղծ անցագրի անունն էր Օտապաշեան Պօղոսի, ծանօթ Բարսեղեան Սարգիս, Շամիլ ծածկանունով:
- 8.- Նիւթեղէն:
- 9.- Գիրք, գրականութիւն (մասնագիտական):
- 10.- Տէրոյեան Տիգրանի (Վազգէն) քոյրը, Ժենիա ծածկանունով. նախապէս անդամ Վասպուրականի Կ. կոմիտէի. արտորում Շրուսաղէմ թուրք կառավարութեան կողմէ:
- 11.- Վարդանը, Խանասարի Վարդանն է, բուն անունով Մեհրաբեան Սարգիս: Լեռնադաշտը սխալ է, պէտք է ըլլայ Լեռնավայր (Կիլիկիա), ուր կը գտնուէր ան իբրեւ անդամ Լեռնավայրի Պատասխանատու մարմնին:
- 12.- Սալմաստի ճամբով:

Գաղտնի քանաքով գրուած Արամի այս նամակը հետաքրքրական է մէկէ աւելի նկատումներով: Արխիւներու մէջ պահուած է անոր մէկ ուրիշ տարբերակը (փաստ. 661-257), դարձեալ Արամի գրչով, բայց «բաց» եւ վերջին մասին մէջ պակասատր: Յայտնաբար այս վերջինը, որ աննշան տարբերութիւններով մեր ներկայացուցած փաստաթուղթին մէկ պատճէնն է, գրի առնուած է իբրեւ նախատիպ գաղտնի մելանով արտագրուելիք նամակին: Արխիւներուն մէջ կը գտնուի, նոյնպէս փոքր տարբերութիւններով, այս նամակին մէկ ուրիշ տարբերակը (փաստ. 661-188բ), որ պարզապէս վերծանումն է նոյն գաղտնի քանաքով գրուած նամակին, այս անգամ կատարուած, ինչպէս սովորութիւն էր, Ժընեւ գտնուող դաշնակցական ուսանողներու կողմէ: Այս բոլորին մէջ նախընտրեցինք ստորեւ տրուած տարբերակը, որ ամէնէն վաւերականն է եւ ամբողջականը: Կը տրուի նոյնպէս գաղտնի մելանով գրուածին հետեւող «բաց» երկտողը, ուղղուած դարձեալ Վահան Փափազեանին եւ ստորագրուած՝ Արամ:

*Սիրելի Կոմս!*

*Ստացանք Պարտիզաւանից գրած երկտողդ օգոստ. 15ին, շուտով պատրաստութիւն կ'անենք Չալիկին<sup>1</sup> ճանպելու. բայց հազիւ թէ յաջողինք մեծ բան անել, նոյնիսկ այս անգամ էլ ուղարկել, յամենայնդէպս փորձելու ենք. պատճառը առաջին անգամուայ թուրութիւնն էր. ձի էինք գրել 2 հատ. մէկն էին տւել, այն էլ կիսաճանպիւն էր մնացել: Մի քանի ուռբլի էին տւել սուրհանդակների համար. մզամմաթ<sup>2</sup> էին գրել մեզ. սրանք քրդեր են եւ դրամի համար են աշխատում. եթէ լաւ չգոհացնենք՝ չեն աշխատի, պէտք է ի նկատի ունենալ որ սրանք թանգ կը նստեն: Եթէ մեր միջոցները ներեց՝ սկսենք, եթէ ոչ թարկը տանք<sup>3</sup>: Սրանց ոչ մի արժէքաւոր բան չէք տալու. այնպիսի բաներ կը տաք որ քրդերը չկարողանան գործածել: Մեծ մասամբ խմոր<sup>4</sup> է լինելու. հրացանի մասերը լաւ կապելու եւ խմորի մէջ էք տեղաւորացնելու. իսկ կոթ եւ ծայր<sup>5</sup> բոլորովին չի լինելու: Սար[գիսը]<sup>6</sup> եթէ գալու լինի, մինչեւ Սեպտ. 5-10 հազիւ գայ: Իշխանը նամակդ ստացել եւ պատասխանը ուղարկել է:*

*Տնաչէն, նամակների պատասխանին սպասելով մեռանք. ի՛նչ սեւ մտքեր չանցաւ մեր գլխից: Ի՞նչ դառաւ մեր առաջարկած կոմիսիայի խնդիրը. դրա կազմւելը մեր «լինել չլինելն» է. ամէն ջանք թափելու ես որ յաջողի եւ լաւ մարդիկ գլուխ անցնեն: Յաջողութեան գլխաւոր գրա[ւա]կանը այն է, որ դրանք մեզ հետ անմիջական յարաբերութեան մէջ լինեն:*

*Գրում էք թէ ի՛նչ կարիք ունէք գրէք. մենք նոր կարիքներ չունենք, այն է ինչ հազար անգամ գրւել է. դրա [մասին] հազար անգամ էլ գրւելու է: Խնդրել ենք գէնք, եղա՞ւ. ախր ժամանակը հիմա է, եթէ չուղարկէք յետոյ ուշ կը լինի. ձմեռը ի՞նչ պիտի անենք դրամը. դու գիտես մեր դրութիւնը: 20 մարտինի ենք առել,*

առանց ծայրի, սպասում ենք ծայր: Առ հասարակ ապրանքները Մենաւոր հասցրէք. գիծը կանոնաւորել ենք. եթէ բաւականաչափ դրամ լինի եւ փոխադրութեան վերաբերմամբ մի քիչ շուսյ լինենք, ամէն բան կարելի է անել Աւարայրի եւ Մենաւորի<sup>7</sup> գծերով, դրամն է որ մեր խէրը անիծում է... Մեզ համար որոշած դրամը ժամանակին չէք փոխադրում որ մեր կարիքները հոգանք. վաղը միւս օրը ձմեռ կը գայ եւ մեր (Նոյնպէս եւ Իշխանի) կարիքները չենք հոգացել: Կ'երեւայ որ այս տարի ի գուր պիտի անցնի: Հետաքրքիր է իմանալ, մեր պարտքերի համար 500 ոսկի է յատկացրած, թէ պակաս. ցուցակից դուրս նոր պարտքեր են դուրս եկել, 100-150 ոսկի. եթէ յատկացրածը 500 ոսկի է, այդ էլ կը գոցւի. եթէ ոչ մեր պիտածէից ենք ծածկելու: Նորէն դիմելու գլուխ չկայ:

Ցուցակները կանոնաւոր ստացւում է Վրէժէն թէ ոչ. մինչեւ յուլիս վերջ ուղարկւած է. քանի օրէն կ'ուղարկուի օգոստոսը: Բիւրոն մեր նամակները ստանում է Ժնէպոլի<sup>\*\*</sup> հասցէով է թէ ոչ: Երբ պիտի բարեհաճեն նամակ գրել մեզ. մի ամսէն կը լրանայ մի տարին, մի նամակ են գրել: Ի՞նչ դառաւ արհեստաւորի ինդիքը. քեզից յետոյ մինչեւ հիմա գէնք ենք գնել ժողովրդի համար. բոլորն էլ պակասութիւններ ունեն. առանց արհեստաւորի չեն աշխատի: Միհրանին կամ մի ուրիշին յաջողեցնելու էք որ այս սեզոնին անպատճառ ներս գան: Եթէ արհեստաւոր գտաք կամ չգտաք, յամենայնդէպս ժամանակի ընթացքում հասցնելու էք հետեւեալ պէտքերը. այս ցուցակը տալու ես նրանց, որոնք կ'ուզեն մեր պահանջներին գոհացում տալ. թող ականջի օղ դարձնեն...

Հրացանի մասեր, վիտտեր, թէ գատվորի եւ թէ տակի, ամէն մէկից առնալը 500-ական, փողի վիտտ, մուշկաններ, սաղլամ պրիցելներ, պրիցելի աստիճաններ եւ ռոմկաններ թւանչաններով, թէ կազաջու թէ պեխօտու, բերդանի ասեղ, պրուժին, կարոպկայ (մէր) եւ սաղլամ գատվորներ: Մրրկի ձայնով մի 50 հատ սղոց: Մոսի[նի] մասեր, կողքի եայ (թէ սա եւ թէ առհասարակ բոլոր մասերը իսկական լինեն. կեղծերը չեն դիմանում. մի քիչ ուշ լինի իսկական լինի), կատու, տակի ոտքի եայ, ոտք, պրուժին եւ ասեղ, պոչի վիտտ, սաղլամ մագազին 30-40 հատ եւ մախլինի միջի մասեր, սաղլամ գատվորներ եւ կարոպկաներ, սաղլամ պրիցելներ եւ պրիցելի մասեր, մուշկաններ եւ մոսինի ամէն տեսակի վիտտաներ, գատվորի գլուխներ թէ հնի եւ թէ նորի: Մեր հին ունեցած պատրոնի ուռացնելու գործիքից երկու նոր եւ ալաքակիչ. վերջին երկու ճղէն լինի: Ղալիպները հարկաւոր չեն. ազափկիչի ասեղները 3-4 հատ աւելի լինի: Ուռացնող հրացանի պատրոնիկ փոխելու գործիք: Հրացանի սրբելու թախումներ: Մի փութի չափ հրացանի կազոյնի եւայլն: Մոսինի, բերդանի պիստոններ: Մարտինու փամփուշտ, ուռացրած հաւաքող գործիք: Պերիկսիլինայի շուլկայ, անտիմոնի եւ բերդոլտեան աղ: Տասնոց ատրճանակի կատու, եայ, մակազինի միջի պրուժին, ասեղ, պրուժին եւ այլ մասեր, բրաունիկ ատրճանակի աբայմաներ (ժեստեր, մոսինի հրացանի կալտոններ եւ կամուրջներ: 1000-ի չափ 10-նոցի ծայրեր: Այս բոլորի հետ էլ 30-40 հատ իսկական մոսիններ եթէ ճարուի, մեր քէֆին քէֆ չի հասնի:

Առայժմ այդքանը, յետոյ կամաց-կամաց նոր կարիքների մասին կը գրուի ընդարձակ նամակ. գրեցինք ուղղակի այստեղիդ: Սա նրա համառօտն է:

Ի՞նչ դառաւ Վարդանեանը<sup>8</sup>:

Վազգէնէնց Վարազդատին<sup>9</sup> շուտով ուղարկելու ենք արտասահման. աշխատիր բարերար գտնել եւ արտասահման ուղարկել. եթէ չյաջողեցիր կ' ուղարկւի Ամերիկա:

Ուրիշ նորութիւններ արդէն չկայ: Բոլորս էլ ողջ եւ առողջ ենք: Նամակներ գրիր ամէն փոստի. ինչո՞ւ ծուլացել ես:

Դրամ շուտ հասցրէք. մանաւանդ 1000 ոսկին անմիջապէս փոխադրէք...

Հետաքրքիր է իմանալ, անցեալ տարիների պէս առատ դրամական մուտք կա՞յ, թէ պակասել է:

Ջերմ համբոյրներով՝  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. օգոստ. 23-ին  
Շամ

Ծանօթ. խմբ.– Գաղտնի քանաքով գրութեան կը հետեւի այս «անմեղ» բաց նամակը ուղղուած Վահանին (Փափազեան).–

Միրելի Վահան!

Խոստացար ինձ շուտ-շուտ նամակներ գրել. բայց գնացիր եւ մոռացար: Մեզ մօտ նորութիւն չկայ. մի քանի օրէն դպրոցները կը բացուեն եւ ես դասերիս կ'երթամ. պաշտօնս շատ ծանր է. արդէն գիտես իրողութիւնները:

Մի փոքր թիրիմացութիւն ծագեց. ուզում էր լայն բնատրութիւն ստանալ, բայց Պապիկ եւ Թորգոմ<sup>10</sup> եւ բոլորիս աջակցութեամբ վերջացրիւք: Մասնատրապէս իմ դէմ էր. թերեւ Թորգոմ քեզ կը գրէ:

Բազուեցի ընկեր ունեմ Ա. Գիւլիսանդանեան<sup>11</sup>. նրա անունով նամակ եմ գրել իր հասցէին. ստացե՞լ է թէ ոչ:

Խնդրում եմ նորութիւններ հաղորդիր իմ ընկերներից. ովքե՞ր այնտեղ են եւ ի՞նչ են անում:

Համազասպ եւ Ղեւոնդ<sup>12</sup> լաւ են. էլի նախկին յարաբերութիւններ. չկարողացանք մարդ դարձնել:

Հետաքրքիր նորութիւններ եւ գրքեր միշտ ուղարկիր: «Մշակ» եւ<sup>13</sup> մի անգամ եկաւ եւ դադրեց. ի՞նչ էր պատճառը. վերջինը հարկատր է: «Մշակ» միշտ ուղարկեցէք:

Ով կայ, ով չկայ այդտեղ. ի՞նչ նոր մարդիկ կան: Ի՞նչ են խօսում, ի՞նչ են անում մեր մասին: Մանրամասն գրիր հին հասցէին. հոս ինձ կ'ուղարկեն:

Ջերմ համբոյրներով  
ԱՐԱՄ

23-8-905

1.- Չալիկ – Կարս-Վան գծի վրայ աշխատող սուրհանդակ:

2.- Գանգատ:

3.- Դադրեցնենք:

4.- Վառօդ:

5.- Կոթը հրացանն է, ծայրը՝ փամփուշտ:

6.- Սարգիսը՝ Բարսեղեան, Շամիլ ծածկանունով, իսկական անունը Օտապաշեան Պօղոս:

7.- Աւարայր ծածկանունն է Խոյ քաղաքի, Սենաւորը՝ Թաղէի վանքն է:

8.- Միեւնոյն Սարգիսն է (տես ծանօթ 6). Գրիգոր Վարդանեան անունով կեղծ անցագիր կը գործածէր: Կը գտնուէր Նախիջեւանի շրջան եւ նախքան Վան անցնիլը պիտի անցնէր Դարաբաղ եւ ղեկավարէր թաթարներուն դէմ տեղոյն ինքնապաշտպանութիւնը:

9.- Վազգէնեց Վարազդատ – Վազգէն ծածկանունն է ծանօթ յեղափոխական մարտիկ (նահատակուած) Տէրոյեան Տիգրանի: Վարազդատը իր պատանի եղբայրն է, նախատիպարը Ա. Ահարոնեանի «Վագրիկը» պատմութեան:

10.- Պապիկ գործածուած է Գիսակի համար (Սերենկիւլեան Յովհ.) Թորգոմը՝ Վասպուրականի Կ. կոմիտէի անդամ Տեղորիկեան Թէոսն է, որ Թիֆլիս պիտի մեկնէր:

11.- Աբրահամ Գիւլխանդանեան (1875-1946) – անդամ Ոսկանապատի (Պաքո) Կեդր. կոմիտէի:

12.- Համազասպ Բաղէշեան եւ Ղեւոնդ Մելոյեան, նախկին արմենականներ, որոնք շուտով պիտի յարէին Դաշնակցութեան:

13.- Ռուսերէն անընթեռնելի բառ, հաւանաբար թերթի մը անունը:



Արամի այս գրութիւնը պատճենն է գաղտնի թանաքով գրուած իր նամակին, «ընկերներ» ստորագրութեամբ: Կը հետեւի, ըստ սովորութեան, «բաց» նամակը բոլորովին աննեղ բովանդակութեամբ, բայց Արամ ստորագրութեամբ:

*Սիրելի Կոմս!*

Փոստով արդէն մանրամասն գրեւած է գործերի դրուածքի մասին եւ մեր կարիքների մասին. այստեղից ուղարկեւած է Մ. Ք. Մուշեղին, նոյնը ուղարկեւած է Մինարէթին<sup>1</sup>: Այս անգամ մարդ ուղարկեցինք որ Չալիկին ճանաչու ղնէ. նա համաձայնեց գալ. կը գայ, եթէ ոչ կը գան նրա ընկերները: Միեւնոյն է. քուրդը աւելի լաւ է քան Չալիկը: Գլխաւոր պայմանը այն է, որ արժէքաւոր բան չտաք. գլխաւորապէս խմոր է լինելու, իսկ եթէ մասեր եւ ուրիշ իրեր էլ լինեն, տեղաւորելու էք խմորի մէջ. լաւ կապելու եւ կնքելու էք: Աւելի լաւ է փոքր-փոքր կապոցներ անէք եւ առանձին-առանձին կնքէք, ոչ թէ ընդհանուրը միասին, ինչպէս արել էիք անցեալ անգամ: Խմորները իրենց ցոյց կը տաք եւ կ'ասէք՝ ձեր տարածները սրանք են լինելու, նախապէս ապահովացրած, որ ճանապարհին չբանան:

Երկրորդ պայմանը այն է, որ սրանց մէկ-մէկ ձի էք տալու. առ այժմ մենք սրանց խոստացել ենք 3 ձի, որովհետեւ եկողները երեք ընկերներ են լինելու. աւելին իրենց քէֆը... Եթէ ձի չտաք մեծ խայտառակութիւն է լինելու եւ մենք հազիւ կարողանանք այսուհետեւ նրանց գործի ղնել եւ այդ գծից օգտուել: Դէ՛հ ուրիշ տեղեր զոհողութիւններ շատ ենք արել, թող մի 300 ուռլլի զոհողութիւն էլ այս գծի վրայ լինի: Սրանց այդ սիրաշահեցէք եւ միշտ յոյս տէք եկող անգամով... Եթէ հրացան եւն ուզեցին, ասացէք եկող անգամ... Աստուծոյ սիրոյն հրացան եւ փամփուշտ չէք տալու: Ձին չմոռանաք լաւերը տալու. անցեալ անգամայ բերածը կիսաճանապին է մնացել:

Սրանք որ աշխատեն մեծ կարիք չենք ունենայ Մծբնի<sup>2</sup> եւ այլ տեղերի ընկերների. սրանք ամէն տեղ մարդիկ ունեն եւ կարող են գլուխ հանել եւ սրանց [եւ] նրանց: Ինչ ծախսեր անելու էք նրանց վրայ, արէք սրանց համար. սրանք լաւ եւ յաջող կ'աշխատեն:

Աշխատելու էք շուտ վերադարձնել եւ հոտ երկար չպահել: Ամէն մէկին առնւազը 2 փութ ապրանք էք տալու: Եթէ հետաքրքիր գրքեր լինեն, մի երկու կտոր մեզ ուղարկեցէք սրանցով:

Աշխատեցէք այս անգամ գոնէ հանգամանքից կանոնաւոր օգտուել, առաջին անգամայ խայտառակութիւնները չպատահի: Ի՛նչ ուզում էք արէք, միշտ այս համոզումը ունեցէք սրանց եւ այս գծի մասին, որ մշտական չեն կարող լինել, ոչ սրանք են վստահելի, ոչ գիծը: Այդ պատճառով շատ չտարւէք այս գծով եւ մոռացութեան տաք Վրէժի գծերը: Աշխատեցէք որքան կարող էք նոյն ապրանքներ հաս[ց]նել. մեզ

Համար առ այժմ վստահելի եւ պատրաստ են նրանք: Եթէ ապրանքներ հասցնէք Մե-  
նաւոր եւ Աւարայր այս աշնան 50 հազարի չափ փոխադրութիւն կարող ենք անել:

Մենաւորից գրում են թէ Սարուստանէն նոր ապրանք ստանալու յոյս չկայ.  
արդեօք պատճառը այն է ինչ նրանք են գրում թէ այլ է. նրանք գրում են որ  
առւայժմ եղած ապրանքները յատկացրած է տեղական պէտքերին եւ վերջինները  
այնքան մեծ են, որ մեզ բաժին հանել չեն կարող:

Մի ուրիշ խնդիր էլ ունենք քեզնից. նամակներում ինչ որ խոստանում ես, ան-  
պայման կատարի՛ր, կամ հէջ մի գրի՛ր, որովհետեւ երբ գրում ես, մենք էլ ըստ այնմ  
մեր գործերը դասաւորում ենք եւ յանկարծ խոստումը մնում է խոստում:...  
Օր[ինակ] գրել էիր, որ Մրգաստանի եւ Քարի Կարմիր խաչերը խոստացան 20-30  
մարդ պահել: Այդ յոստով մենք էլ խոստումներ արեցինք եւ խայտառակեցինք:  
Վերջին երկտողովը գրում ես, թէ 2 օրէն ձեզ 2000 ոււրբի կը տեղափոխուի, բայց  
այդ հաշուով չեկաւ. թէ [եւ] այդ օրւանից մինչեւ ուղիղ մի ամիս 13 օր անցաւ. մենք  
այդ յոստով զէնք գնեցինք եղած դրամներով եւ այժմ ծախսի դրամ էլ չունենք.  
Օգոստոսը անցաւ եւ մենք ոչ մի կոպէկ մուտք չունեցանք, իսկ ելք՝ որքան կ'ուզես:  
Փոխադրութեան եւ գործի օրերը աշունն է, իսկ առանց դրանց ինչ գործ կը լինի,  
իսկ առանց դրամի էլ փոխադրութիւն չի լինի. Աստուած տւել է Վրէժին, նրանք էլ  
մի կողմից են ծանրացել մեզ վրայ: Համարեա բոլոր փոխադրութիւնները վարձատ-  
րում ենք թաւրից. ապրանք եւ դրամ, դրամ եւ ապրանք... Մինա[րէթ]ում ընդա-  
մէնը 3000 երեք հազար ծայր կայ. այն էլ մարդ ուղարկեցինք բերելու, ուրեմն  
նրանք կը մնան անգործ. հոն ապրանք հասցրէք:

15 օր առաջ այստեղի Գաւազը գնացել էր Մ. Ք. խմոր բերելու. նամակ էինք  
յանձնել Բիւրոյի հասցէին: Հասցնում է խաժակին<sup>3</sup>. բայց 3 օր սպասելով անպա-  
տասխան է մնում է եւ յետ դառնում... Մի քանի մանր մուկներ բաներ էինք ուզել, որ  
չատ կարեւոր էր. հաւատացած լինելով, որ Բիւրոն չի բարեհաճի այդքան բարի լի-  
նել, մենք նրան մի ոսկի դրամ էինք տւել, որ ինքը առնէ եւ բերէ. որովհետեւ ցու-  
ցակը նամակի մէջն է եղել, այդ էլ չեն տւել — թէեւ քանիցս խնդրել է խաժակից, որ  
գոնէ ինքը առնէ. մի ոսկին էլ յետ էր բերել... Այս անգամ Արեւել. Բիւրոն թքեց մեր  
երեսին էլ, գործի երեսին էլ. այժմ ամէն բան կորաւ. երկրի համար Արեւելեան Բիւ-  
րօ գոյութիւն չունի. այդպէս էլ գրել ենք Արեւմտ. Բիւրօ. ոչ խիղճ կայ ոչ ազնու-  
թիւն եւ պատասխանատուութիւն, ամէն մարդ ինչպէս կ'ուզէ այնպէս էլ կը շարժը-  
ւէ... մենք նրանց հետ կտրում ենք մեր բոլոր յարաբերութիւնները...

Այս բոլորը մի աւելորդ անգամ էլ շեշտում ենք՝ անկախ մարմին ունենալու  
անհրաժեշտութիւնը. առանց դրան երկրի գործը կը մեռնի: Այնպէս ենք կարծում  
որ եթէ դու էլ չգայիր, երեւի դրամ էլ չենք կարող ստանալ... գոնէ դրամ հասցրէք:

Հոս տարածայնութիւն է ընկել, որ իբր թէ մի նամակ է բռնւել, որի մէջ գրած է  
եղել Մոնտէի հասցէին, Առաջնորդի հասցէին եկած դրամների մասին. ի՞նչ բան է,  
Բիւրոն նամակ գրել է մեզ: Այսօր մի անակնկալ պատահեց. հնչակեանները գնացել  
էին Սեւերկի[?] պատժել հոն եղած մի խումբ դաշնակցականների որոնք յանդը-  
նել[?] էին խումբ ընդունել. մէկ-մէկ ոսկի տուգանք կ'առնեն եւ կը ծեծեն. երէկ  
եկել էին մեզ բողոքելու. տեսնում են եւ բռնում ու բանտարկում. երեկոյեան տղա-  
ները գնացին գիւղացիներին ազատելու. Սեւանցի Աւտոյի տանն էր. լիրբը տղանե-

րի վրայ 5 անգամ ատրճանակ կը բանայ եւ մէկին էլ կը վերաւորէ թեթեւ. մերոնք պաշտպանւելու համար կը կրակեն եւ կը զարկեն լրբին. այսպէս գնաց եւ լրբերից մէկը. առայժմ խստուժիւն չկայ. իբր թէ Նիկոլի եւ Ամիրի անունն է տուել կինը՝ տեսնենք ինչ կը լինի:

ԸՆԿԵՐՆԵՐ

1905 թ. օգոստոս 25ին

- 1.- Սալմաստէն:
- 2.- Մծքին կամ Նոր Մծքին – ծածկանուն Ալաշկերտի:
- 3.- Գարեգին Խաժակ – Չազալեան (1867-1915), դաշնակցական ծանօթ տեսաբան:

---

Փաստ. 661-188

## 128

Սիրելի Սարման<sup>1</sup>!

Ուղարկում եմ քեզ Խնամակալութեան նամակը. խնդրում եմ այդ մասին յայտնէք ձեր կարծիքը, որ ես ըստ այնմ պատասխանեմ նրան. որքան ճիշտ [են] նրանց առարկութիւնները...

Ես ցաւում եմ մի բանից. մեր պ. Եփրատը<sup>2</sup> փաստերը ինձ անաչառութեամբ չի հաղորդում, որ ես ըստ այնմ դասաւորեմ իմ անելիքները եւ կանոնաւոր բան դուրս գայ: Հազար անգամ ձեզ խնդրել եմ որ այդպիսի հասարակական խնդիրների վերաբերմամբ դուք ձեր կարծիքները մեզ յայտնեցէք, ձեզ աւելի կը հաւատանք քան Եփրատին. այդ մարդուն ես չեմ սիրում, մի բան որ պատրաստ եմ իր ներկայութեամբ էլ ասելու:

Նրա մէջ մի բան որ ինձ համար ատելի է, այդ նրա ինտրիզանտ<sup>3</sup> բնաւորութիւնն է, միշտ սիրում է կռիւներ սարքել. միւս կողմից էլ նա խիստ անզաղտնապահ է. ձեր մասին ըստ երեւոյթին ամէն տեղ խօսում է. այդպիսիով մի գեղեցիկ օր ձեզ պիտի վտանգէ:

Այն բոլոր գրոյցները որ պիտի գաղտնի մնար մեր եւ ձեր մէջ, գիտեն նրա ամենասովորական ընկերները:

Անցեալները մի խմբապետական ժողովում նրա ընկերներից մէկը այսպէս մի հարց է դնում.— Լսել եմ որ դուք կարող ազատ մարդկանց դեր չէք տալիս ասելով. եկէք փախտական դառէք ամէն բան կը ստանաք... Սա այն խօսքերն է որ ես կատակով ձեզ ասացի, որ նոյն իսկ ինքը Եփրատն էլ ներկայ չէր: Դրանից յետոյ ինքը ինձ անձամբ պատմեց ամէն բան, ինչ խօսել ենք մեր մէջ. դա ինձ վրայ շատ գէշ ազդեց:

Այսպէս եթէ շարունակեց, հագիւ եւ կարողանամ նրա հետ որեւէ ընկերական կամ բարեկամական կապ պահպանել:

**Ձեզ իմ անձնական խորհուրդներս է. նրա հետ շատ քննադատաբար վարեել եւ նրա վրայ ազդել, որ ամէն պատահած մարդու ձեռ մասին չխօսէ:**

Այս գրում եմ որ միայն դուք գիտնաք եւ վաթանը<sup>4</sup>: Իսկ եթէ դուք ըստ նախկին սովորութեան նրան կրթնէք դա ինձ համար կատարելապէս միեւնոյն է. աւելի լաւ, վերջնականապէս կը պատուեմ դիմակները... Չկարծէք որ ես այս տողերը գրում եմ միտումներով կամ ուրիշների դրդումներով. սա գրում եմ այն պատճառով որ ես երկուսիդ ինձ ինտելիգենտ ընկեր եմ համարում. ընկեր՝ բառիս ամենալաւ իմաստով. այս է իմ համոզումը. չգիտեմ ձերը... Ես իմ մի քանի ամսի գործու[նէ- ու]թեամբ աշխատել եմ բարձրացնել յեղ[ափոխութեան] պրեստիժը մեր շրջանից հեռացնելով եւ չէզոքացնելով մութ ուժերին. թէ որքան է ինձ յաջողել եւ այդ քայլերը ինչ տպաւորութիւն է թողել ժողովրդի (սրա կարծիքներին ես մեծ կարեւորութիւն եմ տալիս) վրայ, դա ապագայի գործ է: Իսկ դուք որ ընդունեցիք իմ առաջարկները եւ միացաք մեզ հետ գործօն կերպով, որքան մեծ գործ պիտի կատարէինք, այդ էլ ապագայում կը հասկնաք... Այս բոլոր դարտերը քո առաջ վաղուց պիտի բանայի, բայց նրա ներկայութիւնը ինձ համար կոչմար<sup>5</sup> է, այն էլ ճնշող կոչմար:

**Ինչ եւ է, ապագան ամէն բան կը պարզի:**

**Նամակիս առաջին կէտին գոնէ այսօր պատասխանէք:**

**Բարեւներով  
ԱՐԱՍ**

1905 թ. 30 օգոստ.

**Յ. Գ.— Ստացանք «Դէպի կռիւ», կարդալուց կ'ուղարկեմ ձեզ:**

1.- Սալման – ծածկանուն Համազասպ Բաղէշցեանի (1883-1907) նախկին արմենական, որ արդէն յարած էր Դաշնակցութեան: Նոյնը պիտի ըսել իր ընկերներուն մասին, յատկապէս Դեւոնդ Մելոյեանի:

2.- Եփրատ – ծածկանուն Թումաղեան (Թովմասեան) Յարութիւնի:

3.- Բանասրկու, չարախօս:

4.- Վաթան – ծածկանուն Դեւոնդ Մելոյեանի (1877-1967):

5.- Միճաւանջ:

### Մինարէթի ընկերներին

Սիրելիք՛!

Ստացանք ձեր օգոստ. 18 թևակիր երկտողը եւ թերթերը: Զարմանում ենք, թէ ինչպէ՞ս [է] որ մի ոսկի վարձատրութիւն էք տալիս սուրհանդակին մի չոր ու ցամաք նամակ բերելու համար, բայց չէք աշխատում սուրհանդակներին համոզել որ թերթեր էլ բերեն: Ներկայումս սուրհանդակները պահում են միայն թերթերի համար, իսկ դուք էլ այդ կողմից միշտ ծոյլ էք: Եթէ վարձատրութիւնը քիչ է, շատ տւէք: միայն պահանջեցէք որ անպատճառ թերթեր եւ գրքեր բերեն: Կոմսը գրել էր որ Աւարայր եւ Վրէժ գրքեր է ուղարկել հոս հասցնելու համար. մինչեւ հիմա չստացանք եւ չգիտենք էլ ի՞նչ եղան... Այս անգամ պահանջեցէք անպատճառ թերթեր բերեն. եթէ չբերին սպառնացէք գործ չտալ: Ճիշտ է որ ապագայում հարկաւոր կը լինեն սրանք իբրեւ սուրհանդակներ, իսկ մինչ այդ երկրում հարկաւոր է յեղլափոխական] գրականութիւն, որը բերող չկայ... Աշխատեցէք Աւարայր եղած թերթեր եւ գրքերը ձեզ մօտ փոխադրել, որովհետեւ հոն մարդ չլինելով սուրհանդակ չենք կարող ուղարկել:

10-15 օր առաջ ուղարկել էինք նախկին 10-10 սուրհանդակին. երեւի հասած կը լինի տեղդ: Նրան շուտ ուղարկեցէք եւ պատգամաւորութեան մասին մանրամասն գրէք, մանաւանդ թէ Աւարայրում փոխադրելու ապրանք կա՞ն, թէ ոչ, եւ եթէ կայ, որին ենք դիմելու...

Գարեգինը գրել էր որ Սարուստան է գնում, այդ ինչպէ՞ս է որ Վրէժ փոխւեց. քանի-քանի անգամ Վրէժում ռայոնական ժողովներ գումարւեց. ի՞նչ շահ ստացանք. մեզ մօտ ժողովները գումարողները շատ են իսկ ժողովների որոշումները գործադրողները քիչ...

Ներքեւ դնում ենք այս տարւայ փոխադրւած ծայրերի մանրամասն ցուցակները. գանց ենք առել ռազմական այլ ապրանքները դնել, որովհետեւ ոչ դուք եւ ոչ վրէժցիք չգիտէք ի՞նչ [է] եկել, որ ըստ այնմ ստուգէք: Միայն այսքանը կ'սսենք որ բացի ծայրերից մնացածները եկել են քիչ վնասւած եւ կորած. հրացանները փոխադրւած է հինգ հատ, որից միայն մէկն է տեղ հասել. մնացածները կորուսած է հաշւելու: Աւետարանցիք յանձնել են իրենց Աղային Սաֆոյին. սա խոստացել է ուղարկել, բայց մինչեւ հիմա չեկաւ:

**Ռազմական հաշիւ**  
**1905 թ. փետրւարից – յուլիս վերջ**

	<b>Հին ծայր</b>			<b>Նոր ծայր</b>		
	<i>Ուղարկւած</i>	<i>ստացւած</i>	<i>կորսւած</i>	<i>ուղարկ.</i>	<i>ստացւ.</i>	<i>կորս.</i>
<i>Մենաւորէն</i>	13929	10453	3476	13677	10564	3113
<i>Աւարայրէն</i>	3000	—	3000	7000	3000	4000
	16929	10453	6476	20677	13567	7113

***Կորուստ է եղել այս կերպ***

**1. Հին ծայրի կորուստ (6478)**

<i>Աւարայրից Տաճիկի բերածը</i>	3000*
<i>Մենաւորի ճանապարհին կորսւած</i>	300
<i>Աւետարանի Ուստի մօտ կորսւած</i>	824
<i>Կիրճ Աստուրի մօտ մնացած</i>	55
<i>Պարապի ապրանքից</i>	
<i>Սրգոյի ձեռքով կորած</i>	278
<i>Կայան կորած</i>	38
<i>Աւետարան կորած</i>	
<i>խուզարկուածեան առթիւ</i>	1983

**Ընդհ. գումար** 6478

**2.- Նոր ծայրի կորուստ (7113)**

**Աւարայրէն Ասորու II**

<i>բերած քրդերի հետ</i>	4000
<i>Մենաւորէն Թաթոսի</i>	
<i>քիւրդ Աւտոյի բերած</i>	1500
<i>Կառավարուածեան ձեռքը</i>	
<i>ընկած Կայանում</i>	500
<i>Կիրճեցոց մօտ մնացած</i>	313
<i>Աւետարանում կորած</i>	800
<b>Ընդհ. գումար</b>	<b>7113</b>

***Աւետարանում կորածները բերել են տեղացի հայերը***

\*) Այդ երեք հազարը հոս մեզ ծախեցին դրամով, որովհետեւ նամակը պահեցին եւ ուրիշ գծով էլ նամակ չստացանք ժամանակին, Մալխասի Վրէժ լինելու պատճառով:

Ինչպէս կը տեսնէք ցուցակից ուղարկած ապրանքների 1/3-ը կորել է: Չմոռանանք յայտնել, որ «ուղարկած» ապրանքների ցուցակը մենք կազմել ենք թւերը հանելով Մենաւորէն եւ Աւարայրէն եկած նամակներէն: Կորուստների գլխաւոր պատճառներից մէկը գծի վրայ պատահած դժբախտութիւնն է որի մասին գիտէք եւ որի պատճառով երկար ժամանակ մնալով կայաններում՝ ենթարկեց ակերածութեան: Երկրորդ պատճառը օտար տարրերի (տաճիկ, քիւրդ) անհաստատութիւնը եւ բեբախտութիւնն է: Վերջինը մի պատմական դժբախտութիւն է որից դժուար է ի սպառ խուսափել, բայց մինիմումի հասցնել հնարաւոր է որոշ պրակտիկ պատճառով: Երրորդ պատճառը այն է, որ մենք շատ քիչ վարձատրութիւն ենք տալիս փոխադրողներին. մի պարագայ որ առիթ է տալիս նրանց մի անգամուց ուտել[?] եւ ոչինչ չանել: Երեւակայեցէք դուք ջրի արհից մինչեւ Մենաւոր կամ Աւարայր շատ վարձատրութիւն էք տալիս՝ (փութին 15 ռուբլի) քան մենք վերոյիշեալ տեղերից մինչեւ Շամ, պարզ պատճառներով՝ որովհետեւ մեր պիւտճէն անքան սուղ է, որ անկարող ենք շուսյլ լինել այդ կէտում... Նոյն կերպ են վարուում եւ սահմանագլուխների ընկերները, երեւի նոյն պատճառներով:

Խնդրում ենք հաշուեցուցակ եւ դիտողութիւնների պատճէն ուղարկէք Մենաւոր եւ Վրէժ: Դրան կից կը խնդրէինք որ դուք էլ Մենաւորի եւ Աւարայրի հաշիւները պահանջէիք եւ ստուգէիք մեր ցուցակների հետ եւ եզրակացութիւնները մեզ գրէիք: Կորուստների վերաբերմամբ մենք միջոցներ ենք խորհում եւ մի բան կ'անենք նրանց վերաբերմամբ, որոնք մեր շրջանում են, իսկ Մենաւորի ընկերները պարտաւոր են պատժել Թաթոսի քիրւա Աւտոյին եւ կիրճեցիներին. դա նրանց անմիջական հսկողութեան տակ եղած մարդիկն են...

Մեզ մօտ վերջերս պատահեց երկու ցաւալի դէպքեր. թուրքերը այգիի մէջ յանկարծակիի բերելով սպանեցին Միհրան անունով (Կլոր դար<sup>1</sup> — Զգմածեան) մի երիտասարդի. շատ ափսոս տղայ էր:

Երկրորդ դէպքը մեզ հետ էր: Հնչակեան մի քանի սրիկաներ գլուխ ունենալով յայտնի Հաջուն շարունակում են շահատակութիւններ. անցեալ օրեր կ'երթան մի գիւղ, մեր մի խմբին կը ծեծեն, ատրճանակ կը բանան վրանին եւ մէկ-մէկ ոսկի էլ տուգանք կը նշանակեն խումբ գրւելու պատճառով: Գիւղացիք եկան հոս մեզ գանգատելու. տեսնելով սրանց՝ բռնում բանտարկում են. մերոնք գնացին գիւղացիներին ազատելու եւ բացատրութիւն պահանջելու. նրանց զինւորներից մէկը Սեւանցի<sup>2</sup> Սեւօղօ տեսնելով մերոնց, 5 անգամ ատրճանակով կրակում եւ թեթեւ կերպով վիրաւորում է մերոնցից մէկին. մերոնք ինքնապաշտպանութեան համար պատասխանում են եւ զարկում է լիրբը: Շրջանի բոլոր գիւղացիներին կը վառէր. Այգեստանում հարս չէր մնացել որ չտանէր թուրքերի քով, նոյն իսկ իր հարազատ կնոջն է տարել.— ահա թէ հնչակները որոնց են պահում... Կառավարութիւնը ոչ մի ուշադրութիւն չդարձրեց...

2 օր առաջ նոր ստացանք «Դէպի կռիւ» եւ մի քանի թերթեր եւ մի նամակ Գարեգինից գրւած մայիս 4 թւակրով. բերել էր մեր նախկին սուրհանդակի մարդին:

Անդորրագիրը իսկոյն հասցրէք Մ. Ք.: Դուրանում մի ցաւալի դէպք է պատահել. նոր փախստական եղած տղաներից 12 հատ պաշարում են զինւորներից. խմբապետը՝ Մուրադ անունով, երբ դուրս է գալիս շէմքից զարկում է. մնացած-

ները շշկուելով չեն կարողանում լաւ դիրքեր բռնել եւ շուտով բոլորը միասին զարկուում են. սրա պէս դէպք դեռ երկրի ներսը, մանաւանդ Դաշտում դեռ չէր պատահել. բոլորը զարկւել եւ գէնքերը թշնամու ձեռք ընկել... Սերոբ փաշայի գիւղում – Սղորդ – էլ դէպք է պատահել. յայտնի կուտան Այի բէկը յարձակուում է գիւղում գտնւած 3 գինուրների վրայ եւ կռիւ է սկսուում. մերոնք կուուում են մինչեւ երեկոյ եւ խաւարից օգտւելով գիւղից հեռանում. գիւղի կէսը թալանուում եւ կոտորուում է: Հաշուելիչները ուղարկեցէք ըստ պատկանելոյն:

Բարեւներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. օգոստ. 31

- 1.- Կլոբ Դար – Վան, Այգեստանի թաղամասերէն:
- 2.- Սեւան – գիւղ Վանի գաւառին մէջ:

Փաստ. 661-228

## 130

### Ամերիկայի Կ. Կոմիտէին

Ընկերներ!

Ձեր օգոստոս 4 թւակիր նամակը եւ 50 օսմանեան ոսկին շնորհակալութեամբ ստացանք: Խոստացել էիք նամակ գրել, սպասում ենք: Չգիտենք պատճառը ի՞նչ է որ մեր նամակներին ուշ էք պատասխանում. նամակ գրւած էր մայիս 4-ին (հին տոմար). նոյնպէս չհասկացանք այստեղից ուղարկւած նամակը ստացա՞ք (նախկինի հասցէին) թէ Վրէժէն ուղարկւածը:

Այստեղից թէ Իշխանը եւ թէ ուրիշները «Հայրենիքին» թղթակցութիւններ են ուղարկում, չգիտենք ստացւո՞ւմ եւ տպագրուում է թէ ոչ: Հոս «Հայրենիքի» մեծ պահանջ կայ, ամէն կողմէն «Հայրենիք» կ'ուզեն, ամենահեռաւոր գիւղերէն էլ դիմումներ կը լինեն. իսկ մենք մէկ-մէկ օրինակ էլ կանոնաւոր չենք ստանում:

Արդէն գրել եւ խնդրել էինք խմբագրութեան (Հայրենիքի) որ յատուկ Երկրի համար 30 օրինակ ուղարկեն ցրելու համար. եթէ այդ յաջողեցնէք, շատ գոհ կը լինենք եւ երկրի պրոպագանդի գործին մեծ օժանդակութիւն արած կը լինէք. հակառակ պարագային պատրաստ ենք եւ գինը վճարելու: Մեզ համար ուղարկելուց խնդրում ենք յատուկ կապոցներ անել եւ գրել Շամի համար: Նամակով յայտնելու էք Աւարայր որ չբանան: Եթէ այդ յաջողեցնէք մենք խոստանում ենք <sup>3</sup>-<sup>4</sup> թղթակիցների օժանդակութիւնը եւ մշտական թղթակցութիւնը:



Մենք առ այժմ կարիք ենք զգուժ կերպով կիսախնտելիզեցնու արհեստաւոր ընկեր- ների:

ա.- Իմանալու [է] զինագործութիւն — մասնագիտաբար. ծանօթ է լինելու մա- նաւանդ մոսիւնի եւ բերդանի հրացանի պարագաներին եւ պիտի կարողանայ աւեր- ւած մասերը շինել:

բ.- Իմանալու է մասնագիտաբար խմորային գործողութիւն. թէ ումբային եւ թէ ականային. մանաւանդ վերջինը, թէ ինչպէ՞ս պիտի պահել. որ ժայռը կամ այս ինչ տունը որչափով կարող է խորտակել. խմորը ինչպէ՞ս պիտի պահել հողի մէջ, ինչ- պէս պէտք է տեղաւորեցնել. ինչպէ՞ս պիտի օգտուել էյլքտրական մեքենաներից եւն, եւ խմորից:

Խմոր եւ պարագաներ յոյս ունենք ստանալու: Եկողները իրենց հետ բերելու են գործիքներ եւ հետեւեալ իրերը. մէկ-մէկ սմիտ կամ 10-նոց ատրճանակ եւ դիտակ: Ձեր ուղարկած ընկերներէն Յարութիւն Միրաքեանը հոս է. շատ գոհ ենք իրենից եւ ձեզնից որ այդպիսի մարդիկ էք պատրաստում. թէեւ նա փոքր ի շատէ ծանօթ է խմորային արհեստին, բայց ականային մասի վերաբերմամբ ծանօթութիւն չունի. ամենագլխաւորը նա, իբրեւ զինւորական, մի տասնեակ է ղեկավարում եւ գիւղա- կան շրջիկ է, այնպէս որ ժամանակ չունի վերոյիշեալ գործի համար. յուսով ենք որոշ փորձառութիւնից յետոյ Յարութիւնը օգտակար ընկեր պիտի դառնայ մեզ համար... Նա դրամ ունի ձեզ մօտ. քանիցս խնդրել էր որ ուղարկէք, բայց մինչեւ հիմա չուղարկեցիք, կամ այնպիսի տեղ ուղարկեցիք որ նրան անյայտ մնաց. այս մասին բարի եղէք մեզ գրելու. իսկ եթէ դրամը ձեզ մօտ է փոխադրեցէք ձեզ յայտ- նի հասցէով:

Չհասկցանք թէ ուղարկուած 50 ոսկին մեզ համար է թէ բանտի ընկերների հա- մար. եւ ամենագլխաւորը՝ դա առաջինը եւ վերջինն է, թէ էլի պիտի փոխադրէք: Հասցէն ապահով է: Խօսում են մի ինչ որ է կանոնաւոր ամերիկեան հրացանի մա- սին. շատ են գովում. դա ի՞նչ հրացան է եւ քանի կը տան. հնարաւոր չէր արդեօ՞ք Վրէժ ուղարկել, Հնդկաստանի գծով:

Արեւմտեան Բիւրոյին բարի եղէք յայտնելու որ իրենց վերջին նամակը ստացել եւ Վիշապի գծով պատասխանել ենք. կ'երեւայ որ չեն ստացել. Վիշապէն վերջին անգամ ստացանք 170 ոսկի եւ գրել էին որ նամակ չգրենք մինչեւ հասցէ չուղար- կեն. թող Բիւրոյի ընկերները մեզ ուրիշ տեղերի հասցէ տան. շատ յարմար է Պոլ- գարիան. կարող ենք գրել եւ ձեր հասցէով: 20-25 օրում է հասնում ձեր նամակը. յայտնեցէք նրանց որ հաշուեկշիռները եւ դրամների ստացագրերը ուղարկուում է իրենց Վրէժի գծով. ստացա՞ն թէ ոչ<sup>1</sup>: Ձեր 50 ոսկու ստացագիրը ուղարկեցինք Վրէժ ձեզ ուղարկելու:

Մեր գրութիւնը.— Երկիրը խաղաղ է. գլխաւոր պատճառը ըստ երեւոյթին Արաբական շարժումն է. չրջանի գօրքերի մեծագոյն մասը տարել են հոն. Ալճավա- զի (Արճէշու չրջան) Քէօու Հիւսէին աղան իւր 600 ձիաներով տարան Արաբիա: Ա- րաբական շարժումը մի պաղ ջուր էր թուրք եւ քիւրդ ամբոխի գլխին: Տրամադրու- թիւնների մէջ փոփոխութիւն է նկատուում: Այս չրջանումն էլ լարումն հայերի եւ օտարների միջեւ, մանաւանդ կառավարութեան — սկսել է եւ խոչոր քայլերով ա-

ուաջ է գնում. կառավարական շատ ֆունկցիաներ չէզոքացել են. առանձնապէս դատական մասը: Ինքնապաշտպանութեան եւ գինման գործը կանոնաւոր առաջ է գնում. գինուում են ոչ միայն յեղափոխականները այլ եւ չէզոքները: Կազմակերպւած գիւղերի ունեցածը կարելի է հետեւեալ ձեւի վեր ածել. ամենաքիչը 5 գէնք (մէկ գիւղում) ամենաշատը 30. ցաւալին այն է որ փամփուշտներ չկան: Արտասահմանի վերջին գէնքերը խիստ թանգացրել են. գարնանից մինչ այժմ — այս սովի օրերում — ժողովուրդը միայն մեր միջոցով 700 ոսկու գէնք է գնել: Ժողովրդի տրամադրութիւնը աւելի լուրջ է քան ոգեւորւած: Սարուստանի դէպքերը սառը կերպով են ազդում այստեղի գործերի վրայ: Ընդհանուր կարծիքը այն է, որ քանի որ նրանք զբաղւած են՝ չեն կարող մեզ օգնել. լրջութեամբ գործելու ենք որ ոչինչ չպատահի եւ նրանք էլ առիթ ունենան մեզ օգնել. երկրի տնտեսական պայմանները այնպէս են դասաւորուել, որ արտասահմանի օգնութիւնը անհրաժեշտ է. առանց դրա կանոնաւոր կազմակերպւած քաղաքական կռիւ ունենալ անկարելի է: Մեր դրութիւնը շատ անմխիթարական է. ամբողջ տարին անցաւ Արեւել. Բիւրոյից նամակ չենք ստանում. առհասարակ յարաբերութիւնները բոլորովին դադարել է. այս խաղաղ տարին մեծ բան կարող էինք անել, բայց ընկերները օգտուել չկարողացան: Կառավարութեան նաւերից միայն մէկն էր աշխատում, միւսը անգործնական դուրս եկաւ: Խնդրում ենք խիստ լինել (այսպէս խնդրեցէք Հայրենիքի խմբագրութիւնից) սահմանագլխի թղթակցութիւնների վերաբերմամբ. Ազիզը կանոնաւոր եւ ստոյգ տեղեկութիւններ չի կարող ունենալ: Եթէ յարաբերութիւնները կանոնաւորենք, մեզնից կարող էք ամէն տեղեկութիւն առնել եւ այդ տեղ[եկ]ութիւններից կ'ազատւէք<sup>2</sup>:

[1905, Օգոստոս]

1.- Պատկերացնել որ ժընեի հետ յարաբերելու համար Վանէն, պէտք էր դիմել Ամերիկայի միջնորդութեան..

2.- Փաստաթուղթը անուարտ է. հաւանաբար կորսուած է վերջին էջը:

**Տիգրան ջան<sup>1</sup>!**

*Ինչպէս գրւած է այնպէս ես վարւելու իսկապէս. եթէ ապահով ես Յ[արու-  
թիւն]ին յանձնարարիր հող մնալու, եթէ ոչ, մասերը (Կայարանի շրջանի գէնքերի)  
պատրաստ կը լինի կամ այսօր կամ վաղը, թող Յ-ն նամակ գրի Սուրէնին եւ Բաբ-  
կէնին, սրանք կ'ուղարկեն մասերը, նա էլ կը վերցնէ անձամբ կ'երթայ ամէն բան կը  
շտկէ. կարծեմ այսպէս է ձեր որոշումը:*

*Քաղաքում էլ խօսում են ձեզ հետ պատահած անակնկալների մասին, Աստուծոյ  
սիրոյն զգոյշ. եթէ տղերքը հոտ մնալու լինեն, լաւ կը լինի որ Քասպարին էլ թող-  
նես եւ դու էլ մէկի (գիւղացիի) հետ մենակ գաս:*

*Թերթերի մէջ նորութիւններ չկան:*

*Նոր նամակներ չստացանք:*

**Բարեւներով  
ԱՐԱՄ**

**Յ. Գ.— Յարութիւնին եւ ընկերներին բարեւներ:**

1.- Արամի այս նամակը կցուած է Վասպ. Կ. կոմիտէի նոյն Տիգրանին ուղղուած կարճ նամակի  
մը. յիշենք որ Տիգրան (Տէր Մկրտչեան Յարութիւն) անդամ էր Կ. Կ.ի եւ գործուողուած գաւառ. կը  
յանձնարարուի իրեն Ս. Վարդան գալ (Վանի գաւառ, լճափին), ուր Կ. կոմիտէի միւս անդամները  
Վանէն պիտի միանային, ըստ երեւոյթին ժողով գումարելու համար: Իրենց հետ պիտի ըլլան Իշ-  
խան եւ Վարդան Շահպազ, որոնք պիտի գան Ադրամար:

**Սիրելի Կոմս!**

Վաղուց է որ քեզնից ոչ նամակ ունենք եւ ոչ լուր. չգիտենք քեզ ինչ պատահեց: Քեզ գրել ենք Չալիկի հետ Պարտիզաւան<sup>1</sup>, որի մասին լսեցինք, որ ո՞ւր լինելուդ մասին տեղեկութիւն չունենալով մնացել է հոն. դրանից յետոյ գրել ենք Քարի հասցէով:

Ինչ եւ է. այս խորհրդաւոր ժամանակներում, երբ շատ բան կար Սարուստանէն գրելու, երբ շարժումներէն շատ բան կար օգտւելու, շնորհիւ ընկերների դէպի մեզ ունեցած անտարբերութիւն այդ բոլորը ի դերեւ ելաւ...

Մի կողմը թողած այդ լայն պահանջները, որ երբեւիցէ երկրի ընկերները բախտ չեն ունեցել գոհացում ստանալու, գոնէ կարեւոր է կազմակերպական նեղ ու պաշտօնական պահանջներին բաւարարութիւն տալ. օր[ինակ] դրամի խնդիրը, ուր մեզ ի՞նչ յոյսեր ներշնչեցին եւ տակից ի՞նչ դուրս եկաւ. 20.000 էին որոշել, վերջերս էլ խոստացան 500ի պարտքը տալ, բայց ոչ այս արին եւ ոչ այն. դեռ մի կողմը թողնենք պարտքերը, գոնէ որոշած բիւդժէն հասցրէք մեզ որ կարողանանք մեր անելիքները դասաւորել. մինչեւ այժմ ստացել ենք միայն 1600 ոսկի, այդ հաշուով 500 ոսկու չափ էլ ստանալիք ունենք. այժմ Շամը 200 ոսկի պարտք ունի եւ ոչ մի կոպէկ առաջիկայ ձմեռուայ համար. ի՞նչ պիտի լինի մեր դրութիւնը: Այս մասին քանի՞ անգամ գրեցինք եւ ոչ մի պատասխան չառանք: Թորգոմը<sup>2</sup> եկաւ, միասին խորհրդակցեցէք եւ վերջնական կերպով մի բան գրէք...

Նոյն կերպ էք վարւելու առաջիկայ սեզոնին փոխադրւելիք ապրանքների մասին. մենք այժմ չգիտենք դարնան ի՞նչ պիտի հասցնէք սահմանագլուխները, որ ըստ այնմ պատրաստութիւն տեսնենք: Գիտենք որ շատ զբաղւած էք, գիտենք որ շատ հարեցած էք ձեր տեղական յաղթանակներով, բայց խօ՛ մեզ մոռանալու աստիճանին չէք հասել: Ուրիշները եթէ մեզ մոռանան իրաւունք ունեն, քանի որ մեր դրութեան մէջ չեն եղել. իսկ դու...

Ուրեմն անմիջապէս գրելու ես թէ հաւանաբար մենք կարողանալու ենք առաջիկայ սեզոնին սահմանագլուխներում ապրանք ունենալ, թէ ոչ. եւ թէ խոստացածդ մարտինի փամփոռչտները ի՞նչ դառան. հաւանական է ձեռք բերելը, թէ անհաւանական. նրանից մենք 15.000ի չափ ունէինք Մրգաստանում, ի՞նչ եղաւ:

Ի՞նչ արիք ժողովրդական կոթերի համար ծայրերը կամ գովաներ [?] գնելու խնդիրը. ա՛խր տրւած հարցերին պէտք է պատասխանէք, որ մենք էլ մեր անելիքը իմանանք. եթէ դու չես կարող մի ուրիշին ցոյց տուր, որ նրան գրենք եւ մեր պահանջները եւ հարցերը նրան ուղղենք: Կ'երեւայ որ հոս էլ Բարձրաւանդակ<sup>3</sup> պիտի դառնայ եւ յետոյ պիտի ուղքի գան սարուստանցիք, բայց այն ատեն ուշ է լինելու...

Սարհադը<sup>4</sup> ամենագարշելի դրութեան մէջ է դրամ չլինելու պատճառով, նրա համար մի ճար մտածեցէք:

Բժիշկի դրամի մասին հարց էիք դրել. մենք յարմար ենք դատում, որ այդ դրա-

մը փոխադրէ՞ք հոս, մենք գարնան այստեղից մի տասնեակ կը հանենք եւ մեզնից մէկն ու մէկը կ'երթայ ու անձամբ կը կարգադրէ այդ խնդիրը. միայն գրելու էք թէ միայն Բարձրաւանդակին պիտի տրուի թէ Դուրանին եւ այդ շրջանի բանտարկեալներին էլ. միայն մի բան իմացէ՞ք. եթէ այդ դրամը գաղտուկ յեղ[ափոխութեան] միջոցներով չտրուի, ժողովուրդը չի օգտուի, որովհետեւ կառավարութիւնը կ'երթայ իր տուրքի դիմաց կը գանձէ, եւ գիւղացուն ոչինչ չի մնայ. այդ խաղերը դու լաւ գիտես. առ այժմ այսքանը կ'ասենք այդ խնդրի մասին. Որոտի կարծիքն էլ նոյնն է...

Ընդ. Ժողովը ե՞րբ է լինելու, եւ ո՞ւր. այդ մասին մեզ գրեցէ՞ք եւ մի մոռանաք մեր շրջանին վերաբերեալ խնդիրների մասին մեզ գրել եւ մեր կարծիքները լսել...

Մի խնդիր կայ, որ թերեւս առ այժմ ամենակարեւորն է. երեւի գիտես որ Բաղէշի Եղիշէ վարդապետը պիտի գայ էջմիածին եպիսկոպոս ձեռնադրուելու. այդ լրբի մասին դու էլ լաւ գիտես. Եղիշէ վարդապետ կամ Բիթլիսի կուսակալ, դրանք նոյն հասկացողութիւններն են. մէկի առաջ միւսը ոչ մի քայլ չի անում. դրան հարկաւոր է մի լաւ պատժել, եթէ կ'ուզէք նոյն իսկ սատկացնել. եթէ այդ չեղաւ գոնէ պիտի ի սպառ արգելէ՞ք նրա եպիսկոպոսանալը. եթէ դուք այդ բանը չանէ՞ք մեր վարկը մեծապէս պիտի վտանգուի. բոլորը աչքերը բացած մեզ են նայում եւ մեզնից սպասում նրան պատժելը. եթէ կազմակերպութիւնը այդ բանը իր վրայ չվերցրեց, մենք պիտի այդ գլուխ բերենք մեր անհատական եւ ընկերական միջոցներով... դա կեանք[ի] եւ պատուի խնդիր է:

Մրգաստանի վաճառականի եղբայրը չեկաւ եւ նրա հետ եկած ապրանքները չի մացանք թէ ինչ եղաւ. նոյնպէս եւ դրամները. ժողովրդական դրամներ էլ կան, որ այստեղի լրբերը պատճառաբանում են թէ մինչեւ հոս եկող եղբայրը չգայ չենք տայ. սաստելու էք այդ լրբերի վրայ որ այդպիսի շառլատանութիւններ չանեն... ինչ եղաւ սիկրետնի մեկանը<sup>5</sup>. շուտով հասցրէ՞ք, սրա գաղտնիքները բոլորը իմացան:

Մեր դրութեան մէջ փոփոխութիւն չկայ. կառավարութեան պոլիտիկան նախկինն է. սովոր այս տարի շատ գէշ է լինելու. ինչ եղաւ Ս. [Հ]եղինէի<sup>6</sup> եւ Ս. Գրիգորի նպաստների խնդիրը: Առաջինի համար մի քանի պատմական եւ գիտական դասագրքեր ուղարկիր Սամսոնին<sup>7</sup>, մենք բերել կը տանք. ստիպւած եղանք դրամ ուղարկել Մինարէթ այդ առթիւ: Չէ՞ր կարելի մի «Մուրճ» ուղարկել Ս. Հեղինէի համար, ի հարկէ Սամսոնին<sup>8</sup>:

1.- Չալիկը Վան-Կարս գծի վրայ երթեւեկող սուրհանդակ-փոխադրող է. Պարտիզաւանը ծածկանունն է Կաղզուանի, Քարը՝ Ալեքսանդրապոլի:  
2.- Թորգոմ – Տեղորիկեան Թէոս:  
3.- Իմա՝ Սասունի ճակատագրին ենթարկուի: Մրգաստանը Երեւանն է, Սարուստանը՝ Կովկաս:  
4.- Սարիատ – Գէորգ Չաուշ:  
5.- Գաղտնի քանաքը:  
6.- Ս. Հեղինէ – ծածկանուն Աղթամար կղզիի:  
7.- Սամսոն – Թաղէոսեան Ստեփան, կուս. ներկայացուցիչ Ատրպատականի մէջ (Սալմաստ):  
8.- Նամակը անուարտ վիճակի մէջ է, թէև հիմնականը արդէն ըսուած է: Տեղադրելի է 1905 թ. վերջերուն կամ 1906ի սկիզբը:

**Սիրելի Շանթ!**

*Ստացանք քո օգոստոս 27 թվակիր նամակդ:*

**Ա.** Ընձայրի խնդիրը<sup>1</sup> մեզ անյայտ պատճառներով դարձեալ միջազգային սեղանի վրայ դրիք. չգիտենք իրարից ի՞նչ էք ուզում. միանգամից մի անգամ իրար երես եղէք ընկերների ներկայութեամբ, հարցը քննեցէք եւ ով մեղաւոր է թող տուժէ. խօ՛չի կարելի անձնական պատւասիրութիւնների համար գոհել մի ամբողջ գործ. վերջապէս պէտք է մի կերպ տանել ամէն վիրաւորանքներ եւ զոհողութիւններ յանուն գործի. եթէ գործի շահը չլինէր ինչ կ'ուզէք արէք:

**Բ.** Աւարայրի ապրանքները անմիջապէս փոխադրել էք տալու Մենաւոր<sup>2</sup>. Գարեգինին էլ գրուած է այդ մասին: Զարմանալի խելք է Վրէժցոց խելքը. մի կողմից կ'աւերեն միւս կողմից էլ կ'ուզեն շինել. մենք երկրից յատուկ Մենաւորի համար ձի ուղարկեցինք, ի՞նչ իրաւունքով ծախեցին. ինչ եւ է. կը գրւի նորէն թէ Աւարայր, թէ Գարեգինին եւ թէ Վրէժ. Մրգաստան էլ նամակ կը գրւի ապրանքների մասին. Կոմսին արդէն գրել ենք. դուք լաւ կ'անէք որ Աւարայրէն Կոմսին մի նամակ գրէք հետեւեալ հասցէով— Թիֆլիս Փոտոգրաֆիա Մուշեղեան, յանձնել Վահանին.— նամակով յայտնեցէք որ գծերը բացւել է, ոչ ապրանք կայ եւ ոչ դրամ եւ ոչ էլ ձիաներ եւ պահանջեցէք իսկոյն ինչ որ հարկաւոր է հասցնէ...

**Գ.** Դրամի մասին առայժմ այսքանը կ'ասենք որ ապրանքների եւ տղաների բերելու վարձը մենք կը տանք հոս. իսկ եթէ մինչ այդ դրամ չստանաք,— քեզ համար էլ այստեղից դրամ կ'ուղարկենք:

**Դ.** Զեր գրած ապրանքների ցուցակի մէջ մեծ սխալ կայ. մօտաւորապէս 2690 հատի տարբերութիւն կայ:

Հոս կը դնենք փետուարից մինչեւ յուլիս վերջ հաշուելիով, որից հասկանալի կը լինի ձեր սխալը: Յուլիսի մէջ ուղարկւածներ գլուխը կազմել ենք Մենաւորէն եկած նամակներով. օրինակ այս անգամ գրել ես թէ ուղարկեցինք 1000 հատ ծայրայեղպէս էլ մենք մտցնելու ենք տետրակի մէջ. իսկ ինչ որ ստացուում է հոս գրուում է ստացւած, իսկ կորածները արդէն յայտնի է:

**Ռազմական հաշիւ**

1905 թ. փետրւարից – յուլիս վերջ

	<b>Հին ծայր</b>		<b>Նոր ծայր</b>			
	<i>Ուղարկւած</i>	<i>ստացւած</i>	<i>կորսւած</i>	<i>ուղարկ. ստացւ.</i>	<i>կորս.</i>	
<i>Մենաւորէն</i>	13929	10453	3476	13677	10564	3113
<i>Աւարայրէն</i>	3000	—	3000	7000	3000	4000
	16929	10453	6476	20677	13567	7113

**Կորուստ է եղել այս կերպ**

**1. Հին ծայրի կորուստ (6478)**

<i>Աւարայրից Տաճիկի բերածը</i>	3000*
<i>Մենաւորի ճանապարհին կորսւած</i>	300
<i>Աւետարանի Ուստի մօտ կորսւած</i>	824
<i>Կիրճ Աստուրի մօտ մնացած</i>	55
<i>Պարապի ապրանքից</i>	
<i>Սրգոյի ձեռքով կորած</i>	278
<i>Կայան կորած</i>	38
<i>Աւետարան կորած</i>	
<i>խուզարկութեան առթիւ</i>	1983
<b>Ընդհ. գումար</b>	<b>6478</b>

**2. Նոր ծայրի կորուստ (7113)**

<b>Աւարայրէն Ասորու II</b>	
<i>բերած քրդերի հետ</i>	4000
<i>Մենաւորէն<sup>3</sup> Թաթոսի</i>	
<i>քիւրդ Աւտոյի բերած</i>	1500
<i>Կառավարութեան ձեռքը</i>	
<i>ընկած Կայանում</i>	500
<i>Կիրճեցոց մօտ մնացած</i>	313
<i>Աւետարանում կորած</i>	800
<b>Ընդհ. գումար</b>	<b>7113</b>

Նոր մուտքի մէջ եւ կիրճեցի Խոսրովի բերած 300 հատ նոր ծայրը հրացանի հետ: Այս ցուցակը, ստացւած եւ կորածը: Ստուգեցէք եւ նորէն գրէք. կը նշանակէ կամ

ձեր նամակում վաղուց սխալների մէջ էք ընկել, կամ տետրակներում թւերը սխալ էք գրել. մէկ կամ միւսը:

Ե. Թերթերը շատ քիչ էք ուղարկում. մինչեւ Երկրի մասը չհանէք մնացածները Ապաստան չուղարկէք. մեզ հարկաւոր է ամենաքիչը 80 հատ ամէն N-ից իսկ եթէ շատ լինի ամենաշատ՝ 180 հատ ամէն N-ից:

Թերթերի մեծ կարիք ենք գգում, ամէն անգամ գրում ենք թերթեր, թերթեր եւ թերթեր... լսող չկայ...

Նորից ենք կրկնում. ինչ գնով լինի Աւարայրէն ապրանքները հասցրէք Մենաւոր:

Այս անգամ էլ ուղարկում ենք երեք մարդ, որոնց էլ կ'ուղարկէք Մինարէթ եւ մանրամասները գրւած է յանձնարարականների մէջ:

Աւետարանցիներին աշխատեցէք ապրանքներ շատ տալ. Աստուծոյ սիրոյն ապրանքները կը պնդացնէք փոքրիկ քսակների (տոպրակների) մէջ եւ լաւ կը կնքէք, կամ 300-ական կամ 600-ական. իրենք համաձայն են այդ ձեւով բերելու. եթէ ուրիշ կերպ ուզեն չտաք, փոխանակ կորչելու եւ փչանալու թողէք հող մնայ:

Նոր ծայրի ժեստերը (աբացմաները)<sup>4</sup> հանեցէք եւ այնպէս լեցրէք տոպրակի մէջ. դրանից ծայրերը եւ ձեղքում են եւ ժանգոտում. եթէ ժեստերը ժանգոտած են չլեցնէք տոպրակի մէջ, իսկ եթէ ժանգոտած չեն առանց ծայրերի լեցրէք տոպրակի մէջ. հոս մեծ կարիք չկայ, որովհետեւ ժեստեր շատ ունենք:

Սահակը եթէ շատ նազ է ծախում վռնդեցէք գնայ Սարուստան. դա էլ մեր գլխին աղա դառաւ:

Այս անգամ սրանց երկու օսմանեան ոսկի տւինք. մէկը այս տղաներին բերողէք, միւսը ձեր ուղարկած ծայրերի գին:

Դու դրամ չես տալ. կ'ուղարկես մեր քով:

1.- Ընծայրը Ս. Թաղէի վանահայր Գեորգ վրդ. Նալպանտեանն է, դաշնակցական նուիրեալ գործիչ, մեծ հեղինակութիւն կը վայելէր պարսկական ղեկավար շրջանակներուն մէջ: Այսուհանդերձ կը մեղադրուէր ոմանց կողմէ, որ ատլի վանքի շահերուն մասին կը ստածէ քան յեղափոխական գործին: Շանքը, որուն ուղղուած է նամակը, Ս. Թաղէ մնացող եւ փոխադրութեան գործին հսկող ընկեր է:

2.- Աւարայր – ծածկանունն է Խոյ քաղաքի. Մեմաւորը Ս. Թաղէի վանքն է:

3.- Ծածկանունով յիշուած տեղանունները.– Աւարայր – Խոյ, Մեմաւոր – Ս. Թաղէի վանք, Աւետարան – Բերկրիի Խաչան գիւղ, Կիրճ – Քեադուկ գիւղ, Կայան – Բերկրիի Պատիկ Գեղ:

4.- Փամփուշտի տուփերը:



**Սիրելի Տեղացի!**

Լօ-րօ եկաւ հետը բերելով նամակը եւ թերթերը. շատ շնորհակալ ենք մանաւանդ թերթերի համար. բայց N 8-ից Մենաւորից մեծ քանակութեամբ ստացանք, այնպէս որ բաւական է. միանգամից մի անգամ գիտենալու էք մեր թերթերի պահանջի չափը. մեզ ամենաշատը հարկաւոր է 150 ամէն N-ից. ամենաքիչը 100 հատ, իսկ «Հայրենիք» որքան կարող էք շատ... Աւարայրում մեզ համար «Մշակ» է ստացուում. մինչեւ հիմա Մենաւորի գծով ուղարկել են շատ անկանոն ձեւով. եթէ կարելի է ուղարկեցէք ձեր գծով: Լսեցինք որ նորերս լոյս է տեսնում «Արշալոյս» անունով մի թերթ կովկասում<sup>1</sup>. խնդրում ենք մի օրինակ մեզ համար բաժանորդ գրէք եւ ձեր գծով ուղարկէք: Եթէ դրամ չունէք մի անգամ սուրհանդակի, վարձը մենք հոս կը տանք, բայց չենք կարծում թէ 8 ռուբլու առաջ կանգնէք...

Աստուծոյ սիրոյն Աւարայրում եղած ապրանքները շուտով ուղարկեցէք Մենաւոր որ ներս քաշենք. Ընծայրը երեմիականներ է կարդում, դանգատում է որ դրամ չենք տալիս: Առայժմ Մենաւորի սուրհանդակների եւ փոխադրութեան վարձը մենք ենք տալիս, այս ի նկատի ունեցէք. դուք եթէ կարող էք հոգացէք միայն տեղական պէտքերի ծախսերը, սուրհանդակների համար չայ-շաքար, անակնկալ ծախսեր եւն եւն: Նորից ենք կրկնում որ ապրանքներ շուտ հասցրէք Մենաւոր. եթէ կարող էք մի քանի հին կոթ հասցրէք Մենաւոր. դիւրութիւն կայ փոխադրելու:

Իրերդ Սահակը յաջողութեամբ եկաւ. վաղը կամ միւս օրը կրկին կ'երթայ Մենաւոր, մի նոր ձեռնարկի համար. հէնց դրա համար էլ հոն ապրանք է հարկաւոր... Տղաներին աշխատեցէք շուտով Սարուստան ուղարկել. նորեր էլ կան, որ շուտով գալու են...

Մոռացանք վերեւ յիշեցնել որ երբ մեր պահանջած քանակութեամբ թերթ ուղարկում էք, գրելու էք Մենաւոր, որ այսչափ թերթ Շամ ուղարկուեց. այդ հարկաւոր է... Այդպէս էլ նրանք են անելու: Թէ եւ Վրէժի վերաբերմամբ, մանաւանդ արհեստանոցի<sup>2</sup> — յուսահատուած ենք, բայց առաջին եւ վերջին անգամ մի բան էլ խնդրենք. գրեցէք որ մեզ համար ուղարկեն 100-200 մուշկաններ, մասնաւորապէս հնի, թէ կարողանան եւ նորի — լինելու են կազաչու եւ պեխնորու. նոյնպէս եւ պրիցելի ըամկա իւր թւանշաններով ու աստիճանով. այս վերջին երկուսից 50ական հատ գատ գատ լինի (50 ըամկա եւ 50 էլ աստիճան): Փոքր եւ մեծ վինտաների մասին, առանձնապէս գատվորի վինտաներ, գրել եւ խնդրել էինք ի՞նչ եղաւ:

Զմոռանաք գրել Աւարայրի ընկերոջ հասցէն. լսեցինք որ այժմ հոն Պատուելին է. ճիշտ է, թէ ոչ: Պատուելու մօտ մի շամեցի տղայ կայ, նա գողին եւ աւագակին մէկն է եւ անպատուաբեր մեզ համար. կարգադրեցէք քանի վաղ է, հեռացնեն այնտեղից, եթէ [ոչ] խաղ պիտի խաղայ ձեր գլխին. մենք նրան վկայական տւինք Գարեգինի մօտ, իբրեւ լիւր մարդ երկրից հեռացնելու համար. մեծ անպատուութիւն է նրա ներկայութիւնը...

Հէնց նոր ստացանք Մենաւորի գծի վրայ հսկող ընկերից մի նամակ, որով գրոււմ է, թէ փոխադրութիւն կատարելու մեծ դիւրութիւն կայ, միայն ապրանք չկայ. Աստուծոյ սիրոյն, առանց Ընձայրին սպասելու Աւարայր եղած ապրանքները հոն հասցրէք. Ընձայրը անկարող է այդ անել մանաւանդ որ հոն ձիաներ էլ չկան. ձեզ մօտ եղած տղաներով 5-6 հոգի միանգամից տեղափոխէք եւ ազատեցէք: Նոր ապրանքներ հասցնելու մասին լուրջ մտածեցէք. գրեցէք Կոմսին որ շուտով ապրանքներ հասցնէ:

Ուղարկոււմ ենք մի կտոր արխիւ Խմբագրութեան<sup>4</sup> ուղարկելու համար: Առայժմ այսքանը:

Միւսը ուղարկեցէք «Հայրենիքի» խմբագրութեան:

Համբոյրներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

[1905, Օգոստոս]

**Յ. Գ.— Մոռացանք գրել որ Արամից, Մաշտոցից եւ Տիգրանից յստակ բարեւներ ենք ուղարկոււմ — Վանայ Լճակից, Հայոց ձորերից եւ բարձր լեռներից եւ միաբերան խնդրոււմ ենք քո ներս գալը: Աղաչդ շատ լաւ է:**

ՆՈՅՆ

1.- Տեղացի – ըստ երեսոյթին Ս. Թաղի մէջ փոխադրութեան գործի պատասխանատու նշանակուած Շանթն է:

2.- «Արշալոյս» – Թիֆլիս հրատարակուող օրաթերթ 1905-1906ին: «Հայրենիք»ը, յիշեցնեք, Հ.Յ.Գ. Ամերիկայի Կ. կոմիտէի պաշտօնաթերթն էր:

3.- Խօսքը Թարիզի (Վրէժ) Դաշնակցութեան զէնքերու նորոգման արհեստանոցին մասին է:

4.- Խօսքը կուսակցական արխիւի մասին է, որ Ատրպատականի ճամբով կ'ուղարկուէր Ժընև «Դիօշակ»ի խմբագրութեան:

135

Սիրելի Տիգրան!

Նամակում գրեցի՞ր Եփրատի յայտնածները. «Նովոյէ օրոզրեննիյէ»\*\* չուղարկել. ինքը որովհետեւ ստանում է. նամակները լաւ թանաքով գրել եւ աշխատել նախկին թարգմանի վրայ ճնշում գործ դնել, որ նա հրաժարուի հոս գալուց:

ԱՐԱՄ

Յ. Գ.— Նամակը յետ եմ ուղարկում. որ մասը չես գրել վերոյիշեալ կէտերից աւելացրու: Կը պահէք եւ երեկոյեան կը յանձնէք Արշակին. մենք կը յայտնենք թէ ո՛ւր է տանելու:

ՆՈՅՆ

136

Սիրելի Տիգրան!

Ալէսին գրեցի որ եղածները ուղարկէ. ինչ ալ կ'ուզէ, որ ձեռք մանկանոց այսուհետեւ չես կարող ստանալ, որովհետեւ ձեռքի տակ չկայ. Յ օր է գոռում եմ թէ ի՞նչ հարկաւոր է գնել տուր. երեկոյեան հէնց յատկապէս դրա համար էլ կանչեցի Մենիկին, դրամ էլ տւի, բայց էլի ինձ ես գրում մանկանոցի համար: Նորից եմ կրկնում ի՞նչ հարկաւոր է դու անձամբ կարգադրիր որ Մենիկը գնէ, երեւի դրամի կարիք կը լինի, նորէն կ'ուղարկեմ:

Եթէ մօտակայ գիւղերում գէնքերի մասին խօսին յայտնեցէք որ առաջիկայ շաբթին էլ իրենցը կ'ուղարկուի:

Իշխանի գէնքերի ցուցակը — կնքւած — Մենիկի քով պիտի լինի. նա վերցրու, այս մնացած թղթերի հետ կապիր շորերի մէջ եւ շուտով նրան ուղարկիր:

Գասպարը երեկոյեան կը գայ, մնացած մարդիկը Մենիկի ընկերներն են լինելու:

Ծայրերը հաշուելու է 2-ական դրուշ. թէեւ մեզ վրայ աւելի է նստել: Եթէ 1000ը վերցնէ ինչքա՞ն կը մնայ:

Բարեւներով  
ԱՐԱՄ

**Սիրելի Տիգրան!**

Այստեղ հին պատրոնդաչ չկայ. ստոյկաները կը մնայ մեր տղաների համար: Ապրանք այսքան ես գնելու, որ չափի դրամ կայ. ապառիկ ոչ մի պարագայում մենք չենք կարող ապրանք տալ: Քաղաքի գէնքերը պիտի մնան անձեռնմխելի:

Աղթամարից վերադարձել են. Թուշունին հոն բռնել եւ բանտարկել են Իշխանը եւ Վարդանը. Ծովաբերի<sup>1</sup> ներսոն էլ հետներն է եղել. հետաքրքրւիր թէ ինչո՞ւ է գնացել:

Ալէսի<sup>2</sup> հետ այս խնդրով շատ չբացուես. նա էլ նրանց հետ է:

Շուտ վերադարձիր:

Պալարցի<sup>3</sup> Յովհաննէսին կ'ասես որ իւր մօտ եղած փամփուշտի դրամը կամ փամփուշտները եթէ չուղարկեց, իրենց գիւղի դրամը պիտի հաշւենք մեր դրամի դիմաց: Դու էլ շուտ վերադարձիր:

**Բարեւներով՝ ԱՐԱՄ**

- 1.- Ծովաբեր – ծածկանուն Ծվստան գիւղի, Վան-Տոսպ գաւառակ:
- 2.- Ալէս – ծածկանուն Արմենակ Պարսամեանի, նախկին անդամ Վասպ. Կ. կոմիտէի:
- 3.- Պալար – ծածկանուն Արտամէտ ասանի, Վան-Տոսպ գաւառակ:

**Սիրելի Տիգրան!**

Սասունիկում<sup>1</sup> եւ նրա հարեւան գիւղում կարեւոր գործեր կան. այնպէս որ վաղը երեկոյեան վերադարձին մտնելու էք Սասունիկ, իսկ կիրակի ցերեկը պիտ կարգադրէք հարեւան գիւղի գործերը:

Վաղը երեկոյեան Ուսուլը կը գայ Սասունիկ, եւ ձեզ կ'առաջնորդէ միւս գիւղը ու վէճերի մասին անձամբ կը պատմէ:

Ուղարկում եմ Իշխանին քեզ գրած նամակները, մեզ էլ գրել էր, էլի հին երգերն է, որ շարունակում է երգել:

Դուրանից<sup>2</sup> նամակ առանք, երկու անգամ դէպքի են բռնել, տղայքը ապ[ահ]ով ազատեցի...

Մրգաստանէն դեռ նոր եկաւ մի 100 ոսկին, իսկ Վիշապէն<sup>3</sup> էլ եկաւ 30-ը: Է՛հ, էլի մի բան է, տեսնենք վերջը:

Մնացածը անձամբ:

**Բարեւներով՝ ԱՐԱՄ**

- 1.- Սասունիկ – ծածկանուն Շուշանց գիւղի, Վան-Տոսպ գաւառակ:
- 2.- Դուրան – ծածկանուն Տարօնի, Մշոյ դաշտի:
- 3.- Մրգաստանը Երեսան է, Վիշապը Կ. Պոլիս:

**Սիրելի Տիգրան!**

Շրջիկներին կանչիր, ինչ հարկաւոր է խօսիր. եթէ ամէն բան հնարաւոր եղաւ վերջացնել՝ լաւ. եթէ ոչ՝ թող երեկոյեան ժամը ութին հաւաքւեն երէկւայ մեր եղած տեղը, մենք էլ կու գանք հոն. իսկ եթէ հնարաւոր եղաւ վերջացնել, Ա. ենթակոմիտէի նամակին էլ պատասխանիր եւ ճամբու դիր: Թող հաւաքւեն մնացած խնդիրները վերջացնեն եւ աշխատեն իրենց ուժերով եօլայ տանել, իրենց վրայ չվերցնելով ծանր աշխատանքներ... Այս գիշեր կ'երթանք հոգ: Լաւ կը լինի որ ամբողջ շաբաթը հոն մնաս, կամ թէ Յարութիւնը մնայ եւ իրար յետեւից բոլորին քշենք, այդ խնդիրն էլ վերջացնենք: Առ այժմ առանձին խնդիրներ չկայ հոս: Խմբական խնդիրները մենք եօլայ կը տանենք մինչեւ ձեր գալը:

Բարեկամը խոստացաւ 50 լիրա ճարել եւ այս շաբաթւայ ընթացքում պիտի պատասխանէ: Եթէ այդ յաջողւեց, մի 2-3 հոգի կ'ուղարկենք քրդերի մէջ ապրանք գնելու: Այստեղից բան չի դուրս գալու...

Մենաւորից նամակ կայ, բայց առանց նորութիւնների. 2100 ծայր է եկել Մելոյի ձեռքով...

Ուրիշ նորութիւններ չկան. մեզ մօտ չենք կարող մարդիկ ընդունել. այնպէս որ եթէ մարդիկ կան տեսնելու, գնա երէկւայ տեղը եւ տես:

Դրամները երէկ թողեցի հոն. վերցրու մնացածները, ուղարկիր ասպտեկաք\*\* (դեղագործ) Վաղարշակին\*\*:

ԱՐԱՄ

**Յարգելի պարոն!**

Ձեր խոստման տէր չեղաք. դուք խոստացաք շաբաթ օրը նախկին դրամի մնացորդը լրացնել, իսկ 174 մնացորդը երեքշաբթի. ոչ այս եղաւ, ոչ այն. այսօր անպայման ամբողջ հաշիւը փակելու էք. դրամը յանձնելու էք նամակաբերիս. նախկին պայմանաւորւած տեղը չէք տար այն պատճառով, որ ձեր նախկին խօսքին տէր չեղաք:

Ստացւեց 110 ոսկի:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

**Ջրաբերդի Կ[եղբ.] Կ[ոմիտէ]՝<sup>1</sup>**

**Սիրելի ընկերներ՝**

Արդէն քանիցս ձեզ գրել ենք, բայց բախտ չունեցանք գոնէ մէկի պատասխանը առնել. կ'երեւայ որ ձեր ցաւերը այնքան են շատացել որ մեզ մոռանալու աստիճանին ենք հասել: Բայց ի նկատի ունեցէք որ մեր ցաւերն էլ այնքան շատ են, որ դուք ինչքան էլ մեզ մոռանալու լինէք, բայց մենք չենք թողնելու ձեր օձիքը: Է՛հ ինչ եւ է: Այս անգամ հանգամանքից օգտուում ենք ձեզ մի աւելի քան փափուկ առաջարկ անելու. յուսով ենք որ դա կը համարէք ձեր սրտին շատ մօտ մի գործ, եւ մի կողմը թողած ձեր սովորական անտարբերութիւնը, անմիջապէս գործի կը դիմէք:

Մեր բարեկամ քրդերից մէկի ծառաները, հայ եւ քիւրդ, առաջարկութիւն են անում ձեր գծով մեզ համար փոխադրութիւն անելու Պարտիզաւանի<sup>2</sup> վրայով: Մարդիկ այդ գործում մեծ հմտութիւն ունեն եւ կարող են շատ օգտակար լինել, միայն հարկաւոր է փորձել եւ շատ երես չտալ: Բէկը երաշխաւորելու [է] նրանց հաւատարմութեան մասին:

Բայց յամենայնդէպս մենք մտածեցինք այս անգամ փոխադրութիւնը անել այնպիսի նիւթերով, որ նրանց համար հրապուրիչ չլինի. օր[ինակ] խմոր եւ նման պարագաներ:

Ուրեմն շտապեցէք այս մարդկանց հետ 3-5 փութ խմոր ուղարկել: Որքան դիտենք ձեր շրջանում պիտի լինի — Հանքում<sup>3</sup> — իսկ եթէ չկայ դիմեցէք Մ. Ք. կամ Գանձակ պիտի լինի. դիմելու էք հոն եւ անմիջապէս յետ էք դարձնելու: Սրան կից դրանց խոստացել ենք որ Պարտիզաւանում դուք պիտի տաք սրանց 3 ձի. նրանք այդպէս են պահանջել: Ուրեմն սրանց կը տաք 3 ձի, խմոր եւ պարագաներ: Եթէ ձեր շրջաններում հրացանի մանրուքներ կան, միացրէք հետը: Մինասը արդէն դիմել էր Ռուբէնի<sup>4</sup> միջոցով տեղը եղած 3 կարճ մոսինին իրան ուղարկելու: Սրանց հետ եթէ կարողանաք ուղարկել գատուր, կարոպկան մակագինի հետ լաւ կը լինի, մնացածներն էլ եկող անգամ կ'ուղարկէք:

Առ հասարակ ապրանքները 5-10 դրվանքայով փոքրիկ քսակի մէջ կարեցէք կնքեցէք, ապա յանձնեցէք եւ պատւիրեցէք որ բանալու իրաւունք չունենան:

Աստուծոյ սիրոյն շխատեցէք օգտւել այս հանգամանքից: Գիծը հրաշալի է, որ եթէ բանանք երեւի մեծ օգուտներ պիտի ստանանք:

Դուրուբախը<sup>5</sup> լսեցինք որ կ'ուզէ ներս գալ. մենք մեր կողմից կ'առաջարկէինք որ շխատէր այս գծի վրայ:

Նամակաբեր Չալիկը նրան ճանաչում է: Աւելի լաւ կը լինի նրա հետ պայմանաւորւել եւ գալ գարնան սկսէ: Դա աւելի շահաւէտ կը լինի քան ներս գալը:

Առ այժմ մենք նոր ընկերներ չենք կարող ներս առնել, որովհետեւ դրանով աւելի պիտի վտանգենք երկրի գործը:

Մեզ մօտ նորութիւններ չկան, մասնակի թալան ու կոտորած շարունակուում է նոյն ուժով եւ ուղղութեամբ:

1.- Ջրաբերդը Կարսն է:  
2.- Պարտիզաւան — ծածկանուն Կադգուանի:  
3.- Հանք — ծածկանուն Օլթի քաղաքի:  
4.- Մինասը՝ Ռուբէն Տէր Մինասեանն է, իսկ Ռուբէնը՝ իր եղբայրը՝ Երուանդ Տէր Մինասեան, անդամ Ջրաբերդ-Կարսի Կեղր. կոմիտէի:  
5.- Դուրբախ — ծածկանուն Կիրակոսեան Յարութիւնի:

**Սիրելի Գարեգին!**

Այս նամակաբերներից ստացանք մի օրինակ «Դէպի կուր» եւ մի քանի թերթեր ու Մայիս 5 թւակիր մի նամակ: Չհասկցանք թէ սա ինչ պատմական հնուածիւն է...

Արդէն բազմաթիւ նամակներ ենք գրել երկու 10-10 սուրհանդակներով. սպասում ենք պատասխանի: Գործի օրերը բացւեց, իսկ թէ հող չէք եւ չգիտենք էլ եկա՞ք, թէ ոչ:

Մենաւորէն հէնց նոր նամակ առանք. Շանթը<sup>1</sup> գանգատուում է, որ ոչ ապրանք կայ եւ ոչ դրամ: Իբր թէ կարգադրել էք զէնքերը հաւաքել Աւարայր ուղարկել, իսկ ձիաները արդէն ծախել էք. Աստուած վերջը բարի անի. եթէ մի նորուածիւն կայ մեզ էլ գրէք, մենք մեր ունեցած չունեցածը հաւաքենք եւ աւելորդներն էլ ծախենք: Գուցէ որ մենք գրեցինք Մենաւորի գծի ժամանակաւոր փակման մասին, վրէժցիք կարծեցին թէ ամէն ինչ վերջացաւ. եւ այդ նկատումներով Աւարայրը մաքրեցին, ձիաներն էլ ծախեցին, բայց չարաչար սխալւել են բարեբախտաբար. ինչպէս առաջ էլ գրել ենք, այն գիծը փակւեց փոքրիկ դժբախտութեան եւ ամառնային սեզոնի պատճառով: Իսկ այսօր երբ գործի ամենակարեւոր ժամանակն է եւ գծերը բացւել, դուք ամէն բան մաքրել էք տւել (դուք ասելով միշտ Գարեգին չէք հասկնալու, այլ Վրէժի շրջանի ամբողջ ընկերները). այս տարւայ պէս մի սեզոն բաց թողնելը մեզ համար մահացու մեղք է... յետոյ ուշ կը լինի: Գոնէ Աւարայր եղած ծայրերը Մենաւոր փոխադրէք, Մենաւորինը բոլորովին վերջացել է: Հազար անգամ խնդրեցինք, թէ գրէք տեսնենք, ի՞նչ է պատճառը որ Սարուստանէն նոր ապրանքներ չեն ուղարկում. արդե՞ք ապրանքներ չկան, թէ ապահով միջոցներ պակասում են: Շանթը գրում է որ ապահով գիծ է բացել, հայու գիւղեր, ուղղակի Սարուստան, բայց Մրգաստանցիք ապրանքներ չեն պատրաստում: Գրեցէք Մրգաստան եւ խնդրեցէք որ անպատճառ ապրանքներ հասցնեն. գրեցէք Կոմսին. նա մի ճար կ'անէ:

Շատ կարեւոր է մանաւանդ մարդիկ\* կոթի ծայրեր. 30-ի չափ գնել ենք բայց ոչ մի հատ ծայր չկայ. առաջնանից հոն 15.000-ի չափ կար, ի՞նչ եղաւ: Աստուծոյ սիրոյն ապրանք եթէ այս սեզոնին Մենաւոր եւ Աւարայր 40 հազար\* ծայր լինի կարելի է փոխադրել: Ա՛խ, ախ, ախ. ժամանակին պատրաստութիւն չտեսնւելը այսպէս է լինում: Գոնէ եկող տարւայ համար լայն պատրաստութիւններ է տեսնւելու:

Շուտով Մենաւորէն ձեզ մօտ կը գայ հանգուցեալ Վազգէնի\*<sup>2</sup> եղբայրը – Վարազդատ-ը\*: Սա Շամում աւարտել է դպրոց. հոս ոչինչ չէ կարող անել. ուղարկուում է Սարուստան կամ հոն ուսումը շարունակէ կամ յաջողեցնեն ուղարկել արտասահման: Լաւ եւ ընդունակ տղայ է. ուղարկի՛ր Վրէժ կանոնաւոր անցագիր հանեն եւ ուղարկեն ապահով ճանապարհով. շատ քնքուշ սիրտ ունի. փափուկ վարւեցէք: Յարհաղը<sup>3</sup> արդէն նրան ճանաչում է:

Կոմսը գրել էր որ Վրէժ դիտակ եւ գրքեր է ուղարկել մեզ հասցնելու համար. ինչ եղաւ. ճանաչեցէք Մենաւոր:

Խմբագրութիւնից եւ Մ. Բ.ից ի՞նչ լուրեր ունէք, մենք վաղուց է նամակ չենք

ստանում. Վիշապի դէպքը ինչպէս ազդել է մեր տղաների եւ գործերի վրայ<sup>4</sup>: Թերթեր, թերթեր եւ թերթեր ուղարկեցէք:

Մենաւոր եթէ դրամ չէք կարող ուղարկել, այստեղ[ից] 1-3 ռսկի ուղարկենք տեղական պէտքերի համար: Սուրհանդակներին առայժմ կը վարձատրենք հոս:

Ինչ դառաւ պստիկ Սարգիսը<sup>5</sup>: Նրա մասին ոչինչ չլսեցինք, հիմա լաւ ժամանակն է, էլի ինչի՞ կը սպասէ. վաղը միւս օրը ձմեռ կը գայ եւ չենք կարող գործերի հետ ծանօթացնել, իսկ եթէ հիմա գար, մի երկու ամիս ժամանակ կայ. ձմեռը քնելու ենք...

Մինարէթ մի քանի ամիս առաջ Սուրէն Մալխասեան\* անունով մի տղայ էր եկել Ջրաբերդէն. նա եթէ հող է ուղարկեցէք Մենաւորով հոս. Շամի խմբերի համար նա շատ օգտակար կը լինի ձեռքի տակ: Դրա հետ ուղարկեցէք եւ Աւարայրում եղած Մոսոյին որ Արամի հետ էր եկել: Երկուսին էլ անպատճառ ուղարկեցէք: Լսեցինք որ Սահակը նազ է անում գալ, եթէ ճիշտ է վճնտեցէք, զնայ իր գործին...

Հաշւեցոյցը ուղարկեցէք «Դրօշակի» խմբագրութեան. անցեալ անգամ էլ հաշւեցոյցներ եւ անդորրագրեր ուղարկեցինք նամակների հետ. ուղարկեցի՞ք ուր հարկն է թէ ոչ: Աստուծոյ սիրոյն դրւած բոլոր հարցերին պատասխանեցէք, որովհետեւ կրկնելով զահլաս տարաւ: Գրել էինք որ Ջրաբերդից Միհրանը (արհեստաւոր) գայ. հոն ի՞նչ դառաւ. սրա մասին էլ գրեցէք:

Առ այժմ այսքանը. ի դէպ, Մենաւորից ստացանք ապրանքները ցուցակով. իրանց գրածով 2690 տարբերութիւն կայ. շատ են ուղարկել, այդքանով քիչ են գրել վերջին հաշւով. դէ՛հ եկ էլը չամուրից հանիր. ինչպէ՛ս ստուգենք. նամակներով գատ գատ, ուրիշ հաշիւ են գրել, վերջին գումարով ուրիշ հաշիւ: Ձեր սուրհանդակով գրեցինք մեր վերջին հաշւեցոյցը. ստուգեցէք եւ վերջին եզրակացութիւնը գրէք:

Բարեկներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. սեպտեմբ. 7-ին

Յ. Գ.— Լսեցինք որ Բագուում նորէն դէպք է եղել. որքա՛ն ճիշտ է:  
ՆՈՅՆ

- 1.- Շանթ – Թաղէի վանքի զինուոր, փոխադրութեան գործի հսկող:
- 2.- Վազգէն – անուանի յեղափոխական մարտիկ (մահատակուած) Տիգրան Տերոյեան:
- 3.- Ֆարհադ – ծածկանուն Օհանջանեան Սարգիսի:
- 4.- Ալմարկութիւն Ապտիլ Համիտի դէմ կատարուած մահափորձին:
- 5.- Խօսքը Սարգիս Բարսեղեանի մասին է, որուն կը տրուէր Պատիկ կամ Կոլոտ Սարգիս անունը:



**Միրելի Կոմս!**

Ստացանք Մ. Բ. [ից] քո գրած Օգոստոս 22 թվականի նամակը. եկել էր ուղիղ 14 օրում. նրա հետ նոյն հասցէին (Մելիք-Արծրունու) ստացանք Բարսեղեանի<sup>1</sup> 6 յուլիս թվականի մի պատմական հնուածիւն – չգիտենք ուր է ուղարկել: Սրա նամակն էլ փառաւոր կերպով կարդացուում էր... Աստուծոյ սիրոյն մի քիչ խնամքով գրէք. մի քիչ ծուլութիւն, եւ պատճառ կը դառնաք մէկի դժբախտութեան. նոյն օրը Բանտ տարան Թորգոմի եղբօրը... Ինչ-որ նամակի պատճառով, սատանան գիտի՝ ումից, յամենայնդէպս այսուհետ նրա հասցէով ոչինչ մի գրիր եւ ոչ մէկին մի տուր նրա հասցէն: Պատկերացնո՞ւմ ես՝ ինչ վիճակում է Թորգոմը: Այդ հասցէով մենք քեզանից ստացել ենք ընդամենը երկու նամակ:

Չալիկը կը գայ երեք ընկերոջ հետ: Բոլորին պէտք է ձիեր տաք, այդպէս ենք պայմանատուրել նրանց հետ, առանց ձիերի նրանք ոչինչ չեն կարող անել, նկատի ունեցէք... Հնարատրութիւն փնտռեցէք՝ Բէկին (Կայ-Բէկ) տեսնելու համար, նա համաձայնել է աշխատել, տեսնենք ինչ կը ստացի...:

Տպատրութիւնն այնպիսին է, որ կարելի է ինչ-որ բանի յոյս ունենալ... Խնդրում ենք Չալիկին տալ 100 նոր ծայր, իսկ ընկերների համար գնեցէք... Եթէ հնարատրութիւն կը լինի, Չալիկի համար գնեցէք մատուցել սխտեմի ատրճանակ, փողը ինքը կը տայ\*\*:

Կարճ. ամէն կերպ սրանց սիրտը շահեցէք. Չալիկի\*\* նոր խանութի համար լաւ կը լինի որ երկու բլրագոռկ ուղարկէք, ամերիկեան կամ անգլիական լաւ ոսկիից... Մեր ապրանքների մասին խօսելը նորէն աւելորդ կը լինի. առայժմ առաջնորդեցէք այն խորհուրդներով ինչ գրել ենք նախկին նամակներում: Պատրաստել էինք նրան ուղարկելու, յանկարծ եկաւ Շամ, ստիպեցանք սա էլ գրել...:

Շատ տարօրինակ էր վերջին նամակի գրածները... Թէեւ լաւ չկարողացանք կարդալ, մանաւանդ վերջին մասը, բայց կարդացածներից էլ շատ բան հասկացանք. հետաքրքիր էր Համոյի հեռացելու մոտիկները, Բարսեղեանի բռնելու հանգամանքները. տնաչէն, երկու Յամիս մի նամակ կը գրէք այն էլ այնքան համառօտ. գոնէ աւելի ընդարձակ գրեցէք եւ ուղարկեցէք Մինարէթի գծով. հոն ճանապարհները եւ յարաբերութիւնները կանոնաւոր են. շուտով կը ստանայինք: Մենք այս դժոխային պայմաններում միշտ պատճէներ կ'ուղարկենք Վրէժէն, իսկ դուք, դուք...:

Ամենատարօրինակը, գումարւելիք Ընդհանուր\* Ժողովի խնդիրն է<sup>2</sup>. ինչպէս յանկարծ ծագեց այդ խնդիրը: Հիմա ի՞նչ պիտի անենք, Աստուած գիտէ. Գրիգորի<sup>3</sup> սպասելը ի գուր բան է. ի՞նչ պիտի անի նա. իսկ եթէ մնայ, այս տարի էլ չի յաջողւի. իսկ եկող տարւայ համար ի՞նչ վստահութիւն. Ժամանակները փոփոխական են. քանի Սարուստանի բաները այդպէս դառաւ, պէտք է աշխատել այստեղ, տեղական

միջոցներով մի քան անել. թէեւ պիտի հաւաքւենք միասին եւ խորհրդակցենք ու գրենք պաշտօնապէս, բայց մասնաւորապէս մեր կարծիքը (Արամի եւ Թորգոմի – մնացածները հոս չեն) այն է, որ նա մի որոշ գումար պահանջէ 1-2 հազար ոսկի\*, առձեռն դնէ իր գրպանը, կամ յանձնէ մէկին որ յետեւից ուղարկեն... Մեզ համար օրւայ ինդիրը եւ «լինել չլինելու խնդիրը» անկախ մարմնի կազմելն է եւ դրամ ունենալը. պէտք է դրամները հէնց սկզբից դնել կոմիտիայի տրամադրութեան տակ... Վերջին անգամ գրեցինք Մալխասի հասցէին մի ամիս առաջ. ինդրու՞մ ենք դրած բոլոր հարցերին ժամանակին կամ հէնց սրանց հետ գրէք:

Մեզ համար 15-20 կազակի փափախներ ուղարկեցէք, աշխատեցէք գորշ գոյնի լինի: Իշխանից\* հէնց նոր նամակ առանք. նորէն գանգատու՞մ է իր մինակութեան համար. դժուար է նրա գործը. Գրիգորը անպայման հասնելու է նրան օգնութեան. տղան մենակ մնալով թէ Ֆիզիքապէս եւ թէ հոգեպէս հաշմանդամ կը դառնայ...

Անտիմոնի եւ Բերտոլդեան աղ չմոռանաս ուղարկել. սրանց հետ շուտ ճանապետեցէք: Արհեստաւոր Միհրանի ինդիրը ի՛նչ դառաւ, գալու է թէ ոչ:

Զրաբերդ մի Աստուածատուր էլ կար, նա ինչ եղաւ. եթէ Միհրանին սրանց հետ ուղարկէք բարիք կը լինի...

Եթէ կրնաք մի քանի հատոր գրքեր ուղարկեցէք գրադարանին. – Հայրենագիտութիւնը – թերեւս սրանց հետ ուղարկենք. Մալխասի համար ուղարկել էինք Աւարայր:

Եթէ 100-200 կտոր գիրք դրստէք «Գուտեմբերկի» մօտ<sup>4</sup>, հնարաւորութիւն կը ստեղծենք լեզալ միջոցներով տեղափոխելու:

Սրանց հետ անպատճառ մի քանի հատ սրբւելու թախում (կոթի), ստոյկաներ, պրատեկաններ ուղարկեցէք. մի ժամանակ Զրաբերդ լիքն էր, ի՞նչ եղաւ:

Համբոյրներով  
ԸՆԿԵՐՆԵՐ<sup>5</sup>

1905 թ. 9-ին սեպտ.

Շամիր

1.- Այս Բարսեղեանը տարբեր է. ծածկանունն է Արեւելեան քիւրդի անդամ բժիշկ Տէր Դարբեան Յովսէփի (1870-1946):

2.- Խօսքը Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. ժողովի մասին է, որ նախատեսուած էր 1905 թ. վերջին ամիսներուն, հայ-թաթարական ընդհարումներու պատճառաւ յետաձգուեցաւ. գումարուեցաւ 1907 թ. Փետրուարին:

3.- Այս մէկը Բարսեղեան Մարգին է, բուն անունով Օտապաշեան Պօղոս, որ Կովկաս էր եւ պիտի վարէր Ղարաբաղի ինքնապաշտպանութեան կոիւնտերը:

4.- Հրատարակչատուն Թիֆլիսի մէջ:

5.- Այս նամակը Արամ ստորագրած է Ընկերներ:

Յիշեցնենք որ մէկ աստղանիշ կրող բառերը ըկամ նախադասութիւնները գրուած են թուանշաններով, իսկ գոյգ աստղանիշներովը՝ քարգմանուած են ռուսերէնէ:

**Միրելի Տիգրան!**

*Ուղարկում [եմ] 5 հատ «Մշակ»․ առաջօրեան աշխատիր ուղարկել․ բարեկամն է բերել Սարուստանէն: Նորութիւն չկայ: Թորգոմի եղբօր մասին լուր չառանք․ չէ-կի լուրը սուտ լինելու է: Դեռ ոչինչ չենք ձեռնարկել․ սպասում ենք Իշխանի պատասխանին:*

*Մեր տունն էլ այրւել է... բայց չգիտեմ իրանք ինչ են եղել... Մարգար Ժամհար-եանը<sup>1</sup> մեր լաւ ընկերներէն մէկն է:*

*Չալիկը եւ իր Բէկը հոս են, տեսանք․ զբաղւած ենք նրանցով...*

*Բարեւներով  
ԱՐԱՄ*

1905 թ. սեպտեմբեր 11-ին

1.- «Մեր տունն էլ այրուել է» – Ամբողջովին հայրենիքին եւ սեփական ժողովուրդի դատին ըն-ծայարեքուած Արամ Մանուկեանի միակ յիշատակումը, այն ալ անողորակի եւ տարտամ կերպով, իր անձնական կեանքին կամ ընտանիքին վերաբերող:

Մարգար Ժամհարեան (1877-1905), ծանօթ Մուս ծածկանունով, հաստատոր դաշնակցական, որ իբրեւ անդամ Հ.Յ.Դ. Կովկասի ինքնապաշտպանութեան մարմնի, 1905 թ. սկիզբը կը մասնակցէր Ժընեւի Դաշնակցութեան Խորհուրդի նստաշրջանին, երբ պայթեցան հայ-թաթարական ընդ-հարումները. իսկոյն փութաց Կովկաս եւ ղեկավարեց Շուշիի պաշտպանութեան կռիւները. նոյն տարին ալ զոհուեցաւ այդ մարտերու ընթացքին:

**Միրելի Տիգրան!**

*Երեկոյեան մոռացայ ասել որ Յարութիւնը գաւառ է գնում հէնց այսօր․ առաջ կ'երթայ Վերին Հայոց [Ձոր], յետոյ եթէ դու մինչեւ 15 օր չլաւացար կ'իջնի ներքեւ:*

*Այժմ եթէ ասելիքներ կամ հրահանգներ ունես, գրիր, ամենագլխաւորը հրահան[ներ] կա՞ն Վերին Հայոց Ձոր տանելու թէ ոչ. նոյնը եւ ծայրերը: Ղալիպներից 14 հատ պատրաստէ հոն, զրանցից մի քանիսը տանեն եւ քանիսը պահեն:*

*Այս եւ ուրիշ բաների մասին մինչեւ երեկոյ գրիր:*

*Բարեւներով  
ԱՐԱՄ*

1905 թ. սեպտ. 17

**Յ. Գ.— Եթէ հրացան պիտի տանեն շուտով գրեցէք որ հանեն:**

Գաղտնի քանաքով գրուած այս նամակը կը պատկանի Արամի գրչին, Ընկերներ ստորագրութեամբ: Ուղղուած է անմիջական կերպով այդ օրերուն Կովկաս՝ Երեւանի շրջան գտնուող Կոմսին (Վահան Փափագեան), ըստ էութեան սակայն Արեւելեան Բիւրոյին: Գաղտնի մելանը բաւական յաջողութեամբ բացուած ըլլալով հանդերձ, տեղ-տեղ կը մնայ դժուար ընթեռնելի, երբեմն բոլորովին անընթեռնելի (մեր կողմէ հարցման նշանով կամ բազմակէտերով նշանակուած):

Նամակը առաջին առթիւ գացած է Երեւան, ուրկէ հասած Կոմսին, Օհանջանեան Սարգիսի (Ֆարիսադ) միջոցով: Այս վերջինին երկտողը բաց գրութիւն է:

*Միրելի Կոմս կամ ընկերներ!*

Արդէն Չալիկի հետ Պարտիզաւան ուղարկած նամակում գրել էինք, որ ստացել ենք Կոմսի Օգոստ. 22 թւակիր եւ Բարսեղեանի<sup>1</sup> յուլիս 6 թւակիրները միասին. չգիտենք վերջինը ուր է ուշացել: Արդէն գուժել էինք որ Թորգոմի եղբայրը (մեծը) բանտարկուել է Կոմսի նամակների պատճառով. բռնել է միանգամից 3 նամակ. բոլոր գրութիւնները պարզ կերպով երեւում էին. այս մասին քանի անգամ գրեցինք, բայց զգուշութեամբ: Աստուած ձեզ հետ. ձեր անտարբերութեամբ քիչ ցաւ էիք պատճառում մեզ, այժմ էլ անփութութեամբ էք ցաւեր աւելացնում: Մի ճար գտէք որ այդ անիրաւ թանաքը չերեւայ. երեւի կամ մելանը շատ թանձր է կամ թուղթը ծծող է եւ կամ թանաքից է: Միւս տեսակն էլ չի կարողացում: Կոմսի վերջին նամակի 1/3 հազիւ հասկցանք: Ճար գտէք այդ թանաքների մասին: Գրեցէք առ այժմ – յանձնել մօրս – հասցէին:

Հէնց այսօր ստացանք Ընդհ. Ժող[ովի] հրաւիրագիրները. զարմանալի բան է ձեր խելքը. 60 հատ միանգամից էք ուղարկում հրաւիրագիր. երեւի ամբողջ Վրէժի շրջանը այժմ իմացաւ Ընդհ. Ժողովի մասին: Այդ հրաւիրագիրներից երեւում է, որ դեռ ժողովը շատ կ'ուշանայ եւ ինչպէս որ անցեալ նամակներում էլ շեշտել ենք, այս անգամ էլ կրկնում ենք, որ Գրիգոր Վարդանեանի<sup>2</sup> հող մնալը եւ այդքան ուշանալը մի աւելորդ բեռ է: Այս տարի շատ դիւրութիւն կայ անվախութեամբ ներս գալու եւ իրբեւ հանգիստ ժամանակ կարելի է շուտով ծանօթանալ երկրի պայմաններին: Եթէ նա կարողանայ 20-30 հազար ռուբլիով ներս գալ, իւր ներկայութիւնը այդ դրամի հետ Ընդհ. Ժողովի մասնակցելուց շատ շահաւէտ կը լինի երկրի համար. ըստ ամենայնի նրա ներկայութիւնը կարեւոր է: Այդ կարծիքին է եւ Գիսակը:

Հազար անգամ դրամ պոռացինք բայց ոչ ոք լսող չեղաւ. մի անգամ չտեսանք որ 100 ռուբլի աւելորդ դրամ ունենանք: Այնքան գրեցինք որ մատչելի գներով հոս հնարաւոր է գէնք գնել, բայց ո՞վ է լսողը. ամէն բան մնացել է երեսի վրայ: Մի ժամանակ գրում էիք թէ՛ եթէ 100 հազար էլ ուզէք՝ դրամ կը լինի, իսկ մենք 100ի փոխա-

րէն 10ը ուզեցինք միանալ, չստացանք: Այս նամակների հետ խօսած ենք դրամ փոխադրելու պայմանների մասին: Դուք գոնէ սովորութիւն դարձրէք շաբաթական 100ական ոսկի փոխադրել Մրգաստանի գծով — Թաթուլի մարդու վրայ: Խնդրել էինք 1000 ոսկի ուղարկել նոյն հասցէով. ի՞նչ եղաւ:

Այս նամակաբերին արդէն ճանաչում էք. սա թէեւ առաջ լաւ դիրք չէր բռնել հասարակական որոշ խնդիրների նկատմամբ, բայց վերջերս իրեն բոլորովին շտկել է եւ ըստ ամենայնի մեր տրամադրութեան տակ աշխատում է օգտակար լինել: Սրա հետ կարող էք ուղարկել մի քանի լեզայ ապրանքներ, օր[ինակ] մի քանի եսփունջի, գինւորների համար Քարում եւ Զրաբերդում պատրաստած ճիւղով ծուղաներ<sup>3</sup>: Դրանցից հոս չեն կարող պատրաստել, իսկ տղաների ոտքերը սօլերով պիտի որ ունեւատիզմ ստանան. .... ուղբով լաւերը կրնաք առնել. այդ դրէք Քարի եւ Զրաբերդի վրայ: 10-15 հատ ..... բաժակներ ջրի համար: Մի քանի դիտակներ: Մի քանի կանոնաւոր էլեքտրական լանպաներ զապասներով — լամպաները երկարադիմաց լինեն: Եթէ դուք չպիտի առնէք՝ իրեն յայտնեցէք, ինքը գիտէ, մենք արդէն իրեն խօսել ենք:

Վարդոն<sup>4</sup> ի՞նչ Ֆրակցիա է ուզում կազմել. դրա մասին մանրամասն տեղեկութիւն տւէք:

Ի՞նչ պայմանների տակ է Համոն<sup>5</sup> հեռացել. այս մասին աւելի մանրամասն գրեցէք Սամսոնի գծով (Մինարէթ): Առ հասարակ նեղութիւն քաշեցէք նամակների պատճէնը ուղարկել Մինարէթով: Քանի որ նամակները բռնւել են, խնդրում ենք մեր դրած հարցերին պատասխանեցէք կրկին: Կարող էք գործ ածել եւ այս հասցէն՝ Ամերիկեան որբանոց, Տոբթ. Ռէյնոլդսի, յանձնել ազաչի Վաղարշակին. բայց զգուշութեամբ գրեցէք, մանաւանդ հասցէն ուրիշ ձեռքով գրէք: Այդ նամակում դեղագործական եւ Ֆե[լ]դշերական խնդիրների մասին գրէք: Աստուծոյ սիրոյն թանաքը զգոյշ:

Գէշ լուրեր ենք լսում Տրապիզոնի եւ Զմիւռնիայի մասին. ի՞նչ կարող էք անել այդ տեղի մասին, գրէք մեզ: Եթէ կարող էք տեղեկութիւն տուէք եւ Լեռնադաշտի<sup>6</sup> մասին. նրանք ի՞նչ դրութեան մէջ են. խօսքս գործն էլ չվի[ժի]: Ի՞նչ դառան մերոնք Վիշապում: Վաղուց է լուր չունենք. չլինի թէ վերջին դէպքին զո՞հ գնացին. ի՞նչ մասնակցութիւն ունէին մերոնք<sup>7</sup>...

Լսեցինք որ «Արշալոյս» անունով մի թերթ է լոյս տեսնում. դրանից մի N գրէք մեզ համար, ուղարկեցէք Մինարէթ Սամսոնին. նրա հետ յարաբերութիւնները կանոնաւոր է. 15 օրը մի անգամ սուրհանդակ կու գայ կ'երթայ: Խօսեցէք Արշալոյս թերթի խմբագրութեան հետ, թէ ի՞նչ պայմաններով կարելի է թղթակցել իրենց թերթի մէջ եւ ի՞նչ նիւթերի մասին կարելի է գրել. ցենզուրան<sup>8</sup> որքան է ազատ Տաճկաստանի գործի վերաբերմամբ: Մենք թղթակցութիւնները պիտի ուղարկենք Մինարէթին. եթէ կ'ընդունեն, պայմանների մասին մեզ գրէք. բայց չմոռանաք բաժանորդ գրել մեզ համար: Սամսոնին էլ գրել ենք. այնպէս արէք երկուսդ էլ չգրէք. ասենք եթէ գրելու լինէք չենք վնասի. մէկը Իշխանին կը տանք, մէկը հոս կը պահենք:

Մինչեւ հիմա դեռ ընդամէնը 3 կտոր գիրք ենք ստացել:

Մինարէթէն եւ Աւարայրէն կը գրեն որ հոն գրքեր չկան:

Մայիսի սուր ո՞ւր է եւ ի՞նչ [է] անելու: Գրել էինք որ շուտով ներս ուղարկէք Մրգաստանցի Արտաշէսին, որ եկաւ եւ ճանապարհին վիրաւորելով վերադարձաւ, եւ Վան-Փուշին. ի՞նչ եղաւ, ի՞նչ դառաւ արհեստաւոր Միհրանը...

Քանի քանի դիւրուծիւններ է ստեղծել փոխադրութեան, բայց ապրանք չկայ Մենաւոր. ինչ կը դառնայ մեր դրուծիւնը: Աստուծոյ սիրոյն ապրանք հասցրէք Աւարայր, գոնէ խմոր: Գրքերը եթէ կարող էք հասցրէք Աւարայր եւ Մինարէթ: Մենաւորում գրում են որ դրամ չկայ: Շանթը այնտեղից հեռացել է. մի կանոնաւոր մարդ դրէք նրա տեղը:

Հարցերի ցուցակը կ'ուղարկենք առաջիկայ ամսի 10-ին. մեր կողմից առայժմ մտադրութիւն կայ Թորգոմին ուղարկելու իբրեւ պատգամաւոր, թէ եւ դեռ վերջնական որոշում չէ:

Մեր դրուծիւնը.— Նորուծիւն դեռ չէ մտել մեր դրուծեան մէջ. վերջին դէպքերը Թորգոմի եղբօր բանտարկութիւնն է. դրան կից ուզում են բռնել Նիկոլին, Ֆեզոյին: Աստղիկին եւ Ֆեզոյին արդէն բռնել եւ բանտարկել են. մատնութիւն է եղել լակոտներից մէկին բռնել են, ծեծի տակ դրանց անուները տւել է:

Կազմակերպութիւնից հեռացրին[ք] Թուշունին եւ Մոսային:

Զինուորների մէջ խլրտում է ընկել դէպի արտասահման գնալ. բարձի[?] խնդիր են բարձրացնում: Առ այժմ հոս կը մնան Յարութիւն, Ռուբէն եւ Աւետիս. մնացածները դուրս կ'երթան. դրանց թուում եւ Մուռը եւ Գասպարը: Արտասահմանում դրանց բոլորովին երես չէք տալու:

Կառավարութեան դիրքի մէջ փոփոխութիւն չկայ. նոր զօրքեր չեն աւելացել. խուզարկութիւններ բնաւ... Հարկերը խստիւ սկսել են գանձել. սարսափելի նեղութեան մէջ է ժողովուրդը:

Արտասահմանեան թերթերը բաւական կանոնաւորութեամբ ստանում ենք. մի օրինակ Մշակ է գալիս Աւարայրով, բայց շատ անկանոն կերպով:

Աստուծոյ սիրոյն դրամ հասցրէք. եթէ ձմեռը գայ, յարաբերութիւնները կը նօսրանան եւ մեծ մասամբ կը կանգնեն. այն ժամանակ դժւար կը լինի: Շտապեցէք մինչեւ ձմեռ 2 երկու հազար ոսկի հասցնել եւ միանգամից մի անգամ մեզ ազատեցէք մուրացիկի դերից:

Ի՞նչ եղաւ բանտարկելոց համար գալիք նպաստը: Վերջին դրամի հետ 2 ոսկի էլ կար. չլինի թէ դա բանտի համար է. դրամի հետ գոնէ թաթուլի հասցնով բաց գրութեամբ մի նամակով էլ գրեցէք ոսկին ղրուշի փոխելով (գրեցէք թէ այս ղրուշ ուղարկւեց մեր տան կարիքների համար է), իսկ շաբաթական 100 ոսկի անպայման հասցրէք:

Առ այժմ այսքանը դրամի մասին. կը գրենք մի քիչ յետոյ երբ կը տեսնենք այս նամակաբեր պարոնին հետ — Շատերը հիւանդ են, Վարդանը, Տիգրանը եւ Մեսրոպը...

Այս նամակաբեր պարոնի հետ խօսեցինք դրամի փոխադրութեան մասին. առաջին պարտիան լինելու է (1000) հազար օսմանեան լրբա (1000), որ փոխադրելու էք այս կերպ.— Պարոնի [?] հետ Կոմսը 1000 ոսկի կը փոխադրէ Վիշապ այս տեղի Երեմեանի եղբօրը. սա լինելու է հեռագրով, իսկ երկու հեռագիր էլ տալու էք Շամ, մէկը այս նամակաբերի եղբօրը, մէկն էլ վերոյ[իշ]եալ Երեմեանին: Երբ հեռագիրը հոս

ստացւեց, մենք կը գանձենք: Պայմանաւորուած ենք հեռագրի համար, որ 1000 ռուբլի նշանակելու է հազար ոսկի: Մանրամասնութիւնները ինքը կը պատմէ: Սրան այս խնդիրներում հաւատալու էք. իսկ Կոմսը սրա հետ գործողութիւններին հետեւելու է ապահովութեան եւ դիւրութեան համար. եթէ Կոմսը չկարողանայ, դրէք տեղիս պայմաններին ծանօթ մի ուրիշ մարդ: Եթէ Թաթուլի մարդու հասցէին Մրգաստանէն փոխադրել էք 1000 ոսկին, նրա միջոցով կրկին փոխադրէք. դա շատ կարեւոր է: Ամբողջ ձմեռը կ'ապահովենք դժւարութիւններից եւ խոշոր գումարով դրամ ունենալով կը սկսենք ձեռնարկը: Շատ կողմերով դա կարեւոր է: Սրա միջոցով դրամ փոխադրեցէք որքան կարելի է շուտ: Սա այդտեղ կը մնայ 2-3 ամսւայ չափ. այնպէս արէք որ առաջին ամսում գործողութիւնը վերջանայ եւ դուք էլ նրա ներկայութեամբ պատասխանը առնէք մեզնից: Մենք ստացման մասին կը հեռագրենք Մինարէթէն:

Առայժմ այսքանը. համբոյրներով  
ԸՆԿԵՐՆԵՐ

Շամ, սեպտ. 19ին [1905]

Յ. Գ.— Տրւած հասցէն (ազաչի Վաղարշակ) անյարմար սեպւեց. առ այժմ գրէք հետեւեալ հասցէներով որ շատ ապահով են — Ամերիկեան միսիոնար դոկ. Ռէյ-նոլդս\*\*:

- Յանձնել 1.- Տիկ. Սրմայ Կարապետեանցին
- 2.- Մաթենիկ Կիրակոսեան\*\*:
- 3.- Աննա Մարկոսեանց\*\*:

Առ այժմ այս երեքից պարբերաբար օգտուեցէք. կարող էք գրել եւ Մելիք Արծ-րունու հասցէով. շատ ապահով են վերոյիշեալ 3-ը:

ՆՈՅՆ

- 1.- Բարսեղեան – ծածկանուն բժիշկ Տէր Դաւթեան Յովսէփի, անդամ Արեւելեան բիւրոյի. տարբեր՝ Սարգիս Բարսեղեանէն (Շամիլ):
- 2.- Գրիգոր Վարդանեան – կեղծ անցագրային անուն. իսկականը Օտապաշեան Պօղոս՝ ծանօթ Կոլոտ Սարգիս, Վանայ Սարգիս, Բարսեղեան ծածկանուններով:
- 3.- Երկարավիզ ոտնամաններ:
- 4.- Վարդօ – Վարդպատրիկեան Յակոբ, խմբագիր Վառնայի «Շարժում» թերթի. դաշնակցական. դրամական իւրացումի եւ այլ յանցնաբներու ամբաստանութեամբ կուս. դատի եւ ասպա, 1907ին մահապատիժի ենթարկուած:
- 5.- Արդեօ՞ք Օհանջանեան Համոն է, անդամ Արեւելեան բիւրոյի:
- 6.- Պէտք է ուղղել Լեռնավայր – կուս. ծածկանուն Կիլիկիոյ:
- 7.- Խօսքը Ապտիլ Համիտի մահափորձին կը վերաբերի, յայտնաբար Արամ Մանուկեան եւ շրջանը տակալին անտեղեակ էին մահափորձի հեղինակներուն մասին:

**Գաղտնի քանարով գրուած նամակին կցուած Մարգիս Օհանջանանի (Ֆար-  
Հայ) երկտողը՝ ուղղուած Վահան Փափագեանին (Կոմս):**

Միրելի Վահան,

Այս նամակը Հայրենիքից ուղարկած են եւ բերողը կ'ուզէր անձամբ ձեզի տեսնել. բայց որովհետեւ դու այստեղ չէիր, իսկ ինքն էլ վնաս գործ ունէր, նամակը յանձնեց ինձ ուղարկելու քեզ, իսկ ինքը մէկ ամսի չափ կը մնայ Բագիր. եթէ կարիր ունես հետը տեսնուելու, ինքը պատրաստ է գալու մտող:

Եթէ պատասխան էլ դրկելու լինիս, Տէր Արիստակէսեաններուն դրկէ, նրանք կը հասցնեն իրեն:

Բարեկամարար  
ՖԱՐ-ՀԱԴ

10 հոկտ., Երեւան

Փաստ. 661-197

**147**

**Միրելի Ընձայր!**

1. Ք[իւրդ] Ս[ահակ] եւ իւր ընկերը եկան ապահովաբար հոս. ի նկատի ունենալով այդ գծի կարեւորութիւնը նրան նորէն յետ ենք ուղարկում, այս անգամ անմիջապէս յետ դարձնելու պայմանով. դրանց կը տաք ծայրեր որքան կարող են բերել իրենց ձիաները:

Սրանց հետ կը վարձես Տոնոյին\* եւ կը պատւիրես որ մի անգամ գայ սրանց հետ եւ Ալոյի չգիտցած տեղը ցոյց տայ. մի անգամ բաւական է. շատ կարեւոր[?] է չիմացած տեղը. դրամ մենք կը տանք հոս. նա եթէ կարող է թող մինչեւ մեզ մօտ գայ, եթէ ոչ կարող է կիսաճանապէս վերադառնալ, սա շատ կարեւոր է. համոզիր նրան անպայման գալու. ձիով պիտի գայ եւ ձիով էլ վերադառնայ:

Նրանց համագիւղացին չգիտենք ի՞նչ համար չէք գցել. եթէ մինչեւ իրենց գիւղը պիտի բերեն թերթեր եւ նամակներ, դա հէջ. եթէ կարող են մինչեւ Արճակ\* կամ Խառակոնի\*<sup>1</sup> բերել դա շատ լաւ կը լինէր... վերոյիշեալին անպատճառ կը դնես սրանց հետ եւ իսկոյն յետ կը դարձնես: Ծայրերը ինչպէս սրանց նոյնպէս եւ բոլոր սուրհանդակներին 300-ական կամ 500-ական կապելու էք փոքրիկ քսակների մէջ, կնքելու եւ այնպէս էք ուղարկելու:

Սա շատ կարեւոր է, այլապէս բոլոր ապրանքները փչանում են կիսով չափ. մանաւանդ հանեցէք նոր ծայրերի ժեստերը<sup>2</sup>. դրանք վրան մնալով եւ ճեղքւում են ծայրերը եւ ժանգոտեցնում են. եթէ մաքուր են կը դնէք հետը, եթէ ոչ պահեցէք. դրանից շատ կայ հոս: Սա չմոռանաք:

2. Զաֆարին<sup>3</sup> տրւած է ծախսի դրամ թէ այս եւ թէ այդ կողմի համար. դուք ծախս չէք տայ: Ալոյին դրամ չտւինք բայց շատ թանգ նստեց. ոտից գլուխ զարդարեցինք:



3. Մենք գրել էինք որ իմացէք ծայրերի եւ կոթերի գինը կամուրջում<sup>4</sup>, դրամ ուղարկենք ժողովրդական կոթեր գնեցէք, դուք ի՞նչ էք պատասխանում. երբ պէտք է իրար հասկանանք. կարծէք մենք չգիտենք դուք ինչ դրամական պիւտո՞ւ է ունէք:

4. Սուրհանդակներին եւ ծայրի վարձի դրամ կը տանք այսուհետեւ մենք. իսկ Մենաւորի տեղական ծախսերին չենք միջամտի, որովհետեւ հաշիւը մեզ չէք տալիս. թող Վրէժը բոլորովին ձեռք քաշէ Մենաւորէն, մենք ամէն բան կը հոգանք...

5. Ուղարկում ենք Մենաւորի համար 2 փորկուղ [?] եւ մէկ հատ բժիկ. քո ցանկացած կտորը այս անգամ չճարեց:

6. Սրանց հետ եկող գինուր թուղունը<sup>5</sup> քսորում է երկրից դուրս. վկայականում պարզեւծ է պատճառը. ուղարկեցէք Մինարէթ<sup>6</sup>:

7. Աւետարանցիներին<sup>7</sup> ի՞նչ որ տալիս էք մի ուրիշ գծով էլ հաշիւ գրէք:

8. Ներփակ նամակները հասցրէք Մինարէթ:

9. Սարուստան գնալու համար յանձնարարական տալ. Արամը եւ Վարդը անկարող են 2 պատճառով. ա. իրաւունք չունեն այդ շրջանում եւ բ. Սարուստանի ներկայ դէպքերի պատճառով դա ի գուր կը լինի. մի կերպ այս տարի էլ եօլայ էք գնալու:

10. Ձեզ մենք մինչեւ հիմա պաշտպանել ենք. այս անգամ վերջնականապէս յայտնում ենք ձեզ, որ եթէ առիթ տաք թիւրիմացութիւնների կամ գործերի խանգարման, մենք ինքներս կը լինենք առաջինը, որ առանց դէսի դէնի կը դնենք ձեր հեռանալը:

Անկարող ենք այստեղ եղբօր տանը նամակ գրել. դա մեզ համար անպատուութիւն ենք համար[ում]. մեզ թոյլ չենք տայ մի քանի կոտ ցորենի համար նամակ գրել:

11. Գրեցինք Մինարէթ որ Աւարայրի ապրանքները անմիջապէս ձեզ մօտ փոխադրել տան իրենց միջոցներով. դուք էլ ձեր կողմից մտածեցէք. եղած չեղածը հաւաքեցէք հող. շուտով մարդիկ կը լինեն փոխադրելու համար: Այնպէս արէք որ Աւարայր ապրանք չմնայ: Նոր ապրանքներ ստանալու յոյս կա՞յ թէ ոչ:

12. Վրէժում ի՞նչ ռայոնական ժողով է եղել. ի՞նչ վճիռներ է տւել. շատ հետաքրքիր է մեզ:

13. Երբ դուք մեզ թերթեր կ'ուղարկէք, այդ մասին, ինչպէս եւ թիւ մասին գրէք Մինարէթ որ նրանք էլ ըստ այնմ ուղարկեն կամ չուղարկեն:

14. Սկանդարի շորերը հող Առաքելի եւ Շանթի մօտ է եղել: Առէք եւ ուղարկեցէք սրանց հետ. մանրամասնութիւն Ս. կը խօսէ:

Առայժմ այսքան:

Բարեւներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. սեպ. 19, Ամրոց

- 1.- Արճակ – գիտ թիմարի գաւառակին մէջ. Խառակոնիս – գիտ Վանի գաւառին մէջ:
- 2.- Փամփշտատուփերը:
- 3.- Չափար – իսկական քրտացած հայ, սուրհանդակ, բուն անունը Սեւանցի Սահակ:
- 4.- Կամուրջ – ծածկանուն Կարէ փոքր գիտի, Ս. Թաղէի վանքի մերձակայքը:
- 5.- Թուղուն – մոկացի զինուոր, գէնք փոխադրող:
- 6.- Մինարէթ – ծածկանուն Սալմաստի:
- 7.- Խաչանցիներին:

**Սիրելի Տիգրան!**

Ինչո՞ւ լռեցիք, ինչո՞ւ ձեր մասին տեղեկություններ չէք տալիս: Դուրսը նորու-  
թիւններ չկան, մենք ընկած ենք առօրեայ հոգսերի յետեւից: Իշխանից լուր չա-  
ռանք, զարմանալի է նրանց անտարբերութիւնը:

Ձաֆարը ճամբու դրինք, բայց ձիւնից յոգնելով կիսաճանպէն վերադարձան.  
այսօր նոր ձիեր առնելով պիտի ճանպուղ դնենք: Նրանց հետ գնացել է եւ Թռչունը:  
Նկատելով որ սպասելը անյոյս է եւ Իշխանից շուտ լուր չենք առնի, վճռեցինք մեր  
հարցերի ցուցակը ուղարկել<sup>1</sup>: Գիտակը հարցերը դասաւորել է հետեւեալ ձեւով:

1. Տակտիկա.— Ցոյցերու եւ շարժումներու համերաշխաբար գործադրութիւնը.  
առանց երկրի համաձայնութեան սահմանազխում ոչ մի շարժում. յարգել երկրի  
մարմիններու իրաւունքները եւ կարծիքները:
2. Հայ-քրդա-թրքական յարաբերութիւն.
3. Տաճկահայերու եւ Կովկասեան գործերու անջատում եւ առաջինի համար յա-  
տուկ մարմնի կազմութիւն:
4. Ներկայիս մէջ եւ ապագային — Բարձրաւանդակը եւ իր անելիք դերը ապրս-  
տամբական շարժման մէջ եւ այդ տեսակէտով ո՞ր աստիճան ոյժ եւ կարեւորութիւն  
տալու է իրեն:
5. Շամի եւ Լեռնապարի համար ուրոյն եւ անջատ Պ[ատասխանատու] Կ[եդր.]  
Կ[ոմիտէ] պէ՞տք է կազմել, թէ՛ երկուսին համար մէկը. եւ արդե՞ք ժամանակ չէ  
զայդ որոշելու եւ գործադրելու:
6. Ընկերներ եւ մարմիններ զինւորական պատասխանատուութեան ենթարկել:  
Ի՞նչ աստիճան եւ ի՞նչ պարագաներու մէջ:
7. Որոշեալ պիւտճէի հայթայթման եւ գործադրութեան հարցը:
8. Ինչպէ՞ս հայթայթելու է Երկրի ռազմական պահանջները:
9. Երկրի բանտարկելոց նպաստ պէ՞տք է թէ՛ ոչ եւ եթէ պէտք է, ի՞նչ աղբիւրնե-  
րէ եւ ի՞նչ պարագաներու մէջ:
10. Ի՞նչ ձեւի տակ դնել թերթը (պաշտօնական օրգան) որ Տաճկահայաստանի  
գործը մոռացութեան չտուի ինչպէ՞ս ներկայիս:
11. Դրա վրայ մենք կ'աւելացնենք՝
12. Արտասահմանում ոչ մի պրոպագանդա չէ լինելու առանց ներսի լուրջ պատ-  
րաստութեան:

Այս ձեւով կ'ուզենք ուղարկել, հարցերի մանրամասն քննութիւնը թողնելով  
Ընդ. Ժողովին:

---

1.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. Ընդի. Ժողովին ուղարկուելիք հարցերուն:  
2.- Մաշտոց, Մակուեցի Մեսրոպ, իսկական անունը Աւետիսեան Մեսրոպ:

Շտապեցնում ենք այն պատճառով որ հարցերը շուտով կ'ուզվի եւ ինչ է [որ կ'ուզեն], որպէսզի իմանանք ի՞նչ հարցեր են դրել եւ ի՞նչ պէտք է պատասխանենք: Մաշտոցը<sup>2</sup> ի՞նչ դրուժեան մէջ է. տանը երեկոյեան կարող է ինձ հետ գիւղ (հող) գալ ձիով: Քեզ եւ Մաշտոցին համար սապոգներ կարել պատրաստել են. այսօր կ'ուղարկեմ. փորձէք ձեր ոտքերին:

Նամակիս շուտ պատասխանիր, որ պատրաստեմ:

Բարեւներով  
ԱՐԱՄ

1905 թ. 25 սեպտ., կիրակի

Փաստ. 662-560

## 149

### Արեւմտեան Բիւրոյին

Ընկերներ!

Վիշապի գծի փակման պատճառով վերջին անգամ ձեզ նամակ գրեցինք Վրէ-ժով. թէեւ կ'ուշանայ, բայց ինչ արած:

Նոր ստացանք Ընդ. Ժող[ովի] հրակիրագիրը. գարմանում ենք, որ այդպէս յանկարծակի որոշում է եղել եւ նախապէս մեզ նամակով ոչինչ չէք գրել, որ նախապատրաստական քայլեր անենք:

Ինչ եւ է, այս անգամ ուղարկում ենք Շամի Կ. Կ-ի կազմած հարցերի ցուցակը. չկարողացանք պատահել Լեռնապարի Կ. Կ[ոմիտէի] ընկերների հետ եւ միասին կազմել. նրանք էլ գուցէ մի քիչ յետոյ ուղարկեն:

Խնդրում ենք ընդհանուր հարցերի ցուցակը շուտով մեզ ուղարկել, որ մենք էք ժամանակին կարողանանք մեր կարծիքները ուղարկել ուր հարկն է: Շամը թերեւս իւր տեղական ընկերներից մէկին ուղարկէ մասնակցելու համար... Գլխաւորը հարցերի ցուցակը ժամանակին հասնելն է:

Գրամի մեծ կարիք ունենք. կրկին ընկանք պարտքերի. այս անգամ մեզ, մեղադրելու հիմք չունէք. հաշիւները ամսէ ամիս ուղարկւում է եւ միշտ աշխատում ենք մնալ որոշեալ պիւտճէի շրջանում. բայց այդ էլ չէք հասցնում: Վաղը միւս օրը ձմեռ կը գայ եւ մեր օրերը կը սեւանայ: Վռամեանցին<sup>1</sup> հասցէ էինք ուղարկել եւ մի անգամ էլ նրանցից որոշ գումար ստացանք: Գրել էինք իրենց եւ ձեզ որ նոյն ճանապարհով շարունակէք ուղարկել, բայց եւ ամիսը լրացաւ եւ ոչինչ չստացանք: Իսկ Սարուստանի միջոցները միշտ ապահով են, բայց նրանք էլ լռել են: Աստուած վերջ բարի անէ:

Մեր դրուժեան մէջ նորութիւն չկայ: Լսեցինք որ Վարդօ եւ ընկ[երութիւն] պատերազմ են հրատարակել... հետաքրքիր է այդ պատմութիւնները. կտրուած դրսի աշխարհից, չգիտենք ինչ [է] անցնում դառնում արտասահմանում:

Գ[րիգոր] Վ[արդանեանը] մնաց Սարուստան<sup>2</sup>. շատ զարմանալի է նրա դանդաղութիւնը. ի՞նչ մտածում, կամ ի՞նչ է ուզում անել, մեզ անյայտ է մնացել. մինչեւ

Հիմա ոչ մի կտոր նամակ չգրեց:

Նորութիւններ քիչ կան: Անյայտութեան մէջ խեղդւեցինք. Աստուծոյ սիրոյն նամակներ գրէք:

Հարցերի ցուցակ<sup>3</sup>

1. Տակտիկա.— ցոյցերու\* եւ շարժումներու\* համերաշխաբար գործադրութիւնը: Առանց երկրի համաձայնութեան, սահմաններու\* վրայ, ոչ մի շարժում\*. յարգել երկրի մարմիններու\* իրաւունքները եւ կարծիքները:

2. Հայ-քրդա-թրքական\* յարաբերութիւններ.

3. Տաճկահայերու\* եւ Կովկասի\* գործերու անջատումն եւ առաջինի համար յատուկ մարմնոյ կազմելը\*.

4. Ներկայիս մէջ եւ ապագային Սասնոյ\* եւ իր անելիք դերը ապստամբական\* շարժման մէջ. եւ այդ տեսակէտով որ աստիճան ոյժ եւ կարեւորութիւն տալու է իրեն:

5. Շամի\* եւ Լեռնապարի\* համար, ուրոյն եւ անջատ Կ. Կ\*[ոմիտ]-է պէ՞տք է կազմել, թէ երկուսի համար մէկ Պ\*[ատասխանատու] Կ\*[ենտրոնական] Կ\*[ոմիտ]-էի եւ արդեօք ժամանակ չէ՞ գալը որոշելու եւ գործադրելու...

6. Ընկերներ եւ մարմիններ զինտրական\* պատասխանատուութեան ենթարկել — ի՞նչ պարագաներու մէջ եւ որ աստիճան.

7. Որոշեալ պիտոյքներու\* հայթայթման եւ գործադրութեան հարցը:

8. Ինչպէ՞ս հայթայթելու է Երկրի ռազմական\* պահանջները:

9. Երկրի քանտարկելոց\* նպաստ պէ՞տք է, թէ ոչ. եւ եթէ պէտք է, ի՞նչ աղբիւրներէ, ո՞ր աստիճան եւ ի՞նչ պարագաներու մէջ:

10. Ի՞նչ ձեւի տակ դնել քերթը\* (պաշտօնական օրգան\*) որ Տաճկահայաստանի\* գործը մոռացութեան չտրուի, ինչպէս ներկայիս:

11. Առանց լուրջ պատրաստութեան, երկրում, արտասահմանում\* ոչ մի պրոպագանդա\* չանել:

12. Վրէժից, արտասահմանից\* եւ երկրի\* մասնագէտ ականայ-ին\* եւ խնձորայ-ին\* եւ զինած ընկերներու ներս գալու\* խնդիր:

13. Փորձուած եւ ինտելիգենտ ընկերների ներս գալու\* խնդիր:

Առ այժմ այսքանը:

Բարեւներով  
ՎԱՍՊ[ՈՒՐԱԿԱՆԻ] Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. սեպտեմ. 27-ին

Շամ

1.- Վռամեան Արշակ, իսկականը՝ Գերձակեան Օննիկ (1871-1915): Տուեալ ժամանակաշրջանին Ամերիկա էր իբրև գործիչ եւ «Հայրենիք»ի խմբագիր:

2.- Գրիգոր Վարդանեան – անցագրային կեղծ անուն Օտապաշեան Պօղոսի, ծանօթ նաեւ Շամիլ եւ Սարգիս Բարսեղեան ծածկանուններով. պիտի անցնէր Ղարաբաղ՝ ինքնապաշտպանութեան կռիւները վարելու համար:

3.- Հարցերու ցուցակը նոյնն է ինչ որ Արամ գրած էր արդէն Տիգրանին (տես փաստ. 661-200, Սեպտ. 25). նամակը արտասահման դրկուելուն համար, շարադրանքը մեծ մասամբ եղած է թուանշային (շիֆրէ). հոս տրուած է սեւագիր (bold) տառերով եւ աստղանիշով:

**Արեւելեան Բիւրոյին**

**Ընկերներ!**

Շատ վաղուց է ձեզնից նամակ չենք ստանում. Վիշապի դժբախտ դէպքերն էլ եկան պակասը լրացնելու<sup>1</sup>. Ինչ եւ է. այժմ ընթացիկ խնդիրներ կան որ պէտք է լուծուին, բայց յարաբերութեան անկանոնութեան պատճառով առկախ են մնում:

**Ա. Դրամական խնդիր.**— Մինչեւ այժմ ստացել է միայն 1600 ոսկու չափ դրամ. արդէն հաշուեցոյցները ուղարկւում է ձեզ, դուք էլ կը տեսնէք ինչպէս է ծախսւում. այս անգամ ուղարկեց Սեպտեմբեր եւ եռամսեայ հաշուեկշիռները նամակի հետ. առանց պարտքի ամիս չի լինում. այժմ մենք մեր ոտքը պիտոճէի համեմատ ենք մեկնում, բայց դժբախտաբար այդ պիտոճէն ժամանակին չենք ստանում. մեզ որոշած է 20 հազար. դրան կից խնդրել էինք 500 ոսկի մեր պարտքերի համար, առանց վերջինին մեր պիտոճէն մեզ չի բաւականացնի: Այդ հաշուով մենք մօտաւորապէս 1200 ոսկի դրամ առնելիք ունենք: Այդ մասին գրեցինք Սարուստանի ընկերներին եւ դիւրութիւն ստեղծեցինք այդ դրամը մի անգամէն փոխադրելու. նրանք պատասխանում են, որ այդպիսի մի գումար մի անգամէն չի կարող վճարել Սարուստանի եւ ոչ մէկ Կ. Կ[ոմիտէ] եւ առաջարկում են դիմել ձեզ եւ Ամերիկա: Վերջինին դիմեցինք. նա ուղարկեց միայն 50 ոսկի եւ տեղը նստեց. ձեզ էլ գրեցինք որ նրանց միջոցով փոխադրէք. դուք էլ չպատասխանեցիք. նորէն ենք խնդրում որ նրանց միջոցով դրամ փոխադրէք: Դրան կից մեզ մի խոշոր գումար փոխադրեցէք Սարուստանի գծերով (Կոմսին եթէ ուղարկէք, նա դիւրութիւն ունի մեզ ուղարկելու). շուտով ձմեռը կը գայ եւ մեր յարաբերութիւնը կը դադարի. այն ժամանակ դժար թէ կարողանանք դրամ ստանալ: Եթէ մեզ դրամ չհասցնէք, անցեալ տարւայ պարտքերի խայտառակութիւնները պիտի նորէն կրկնուի: Եթէ որոշած պիտոճէն եւ պարտքերի գումարը չէք կարող ուղարկել, ինչպէս ասում են սարուստանցիք, գրեցէք որ մենք էլ մեր անելիքները դասաւորենք:

**Բ. Հիւպատոսների խնդիր.**— Տեղիս բոլոր հիւպատոսները փոխել են. նոր է եկել Ֆրանսիական հիւպատոսը. հինը գնաց. վերջին խօսքերը սա է եղել. ես արմենոֆիլ եկայ, արմենոֆուպ<sup>2</sup> կ'երթամ, որովհետեւ յեղափոխականները անարդարացի կերպով զրպարտում էին իմ թարգմանի: Թարգմանը մնաց նախկին լիրը Միհրանը. շարունակում է իւր շահատակութիւնները. ուզում ենք հիւպատոսին մի պաշտօնական գրութեամբ պարզել նրա դէմքը փաստերով եւ հեռացում պահանջել. բայց վախենում ենք բոլոր հիւպատոսները իրար հետ սեւ համաձայնութեան գան եւ չհրաժարեցնեն ու աւելի դժարանայ մեր գործը: Լաւ չէ՞ր լինի, որ դուք քանի որ հիւպատոսը փոխել [է], նորէն դիմէիք մեր բարեկամներին եւ խնդրէիք որ նոր արտաքին գործոց նախարարին դիմեն եւ պահանջեն սրա հեռացումը: Ռուսականն էլ փոխեց. նախ[կին] չինովնիկ հիւպատոսը, որ Մշոյ դաշտում պրովասլաւ կրօն տա-

րածելու հեղինակներից մէկն էր, գնաց. նորը պահպանողական ռուս է, ստանում «Մվետ», «Նովոյէ Վրեմյա», «Ռուսակի Ինվալեդ»\*\* սրանից հասկացէք թէ ինչ մարդ կը լինի: Սաստիկ հակառակ է յեղափոխական շարժման, ճնշումների եւ թալանների համար, դիմումներ է անում եւ կարգ պահանջում. ի՞նչ կը լինի վերջը, այդ դժուար չէ գուշակել, քանի որ ռուսական ներկայ քաղաքականութիւնը պարզ է:

Անգլիական հիւպատոսը շուտով կ'երթայ, թէ այստեղի եւ թէ Բիթլիսի: Այստեղի հիւպատոսի տիպ ձեզ յայտնի է. սաստիկ հակառակ է յեղ. շարժման. հայերի մասին այն կարծիքին է ինչ որ թուրքերի եւ քրդերի. թարգմանը մի իտալացի լրտես է... Վերջերս գիտական նպատակներով տեղս եկաւ մի դանիացի պրոֆեսոր, Օտէն Փիլոպովիչ Բենեդիկտոսէն. բացի գիտնական խնդիրներից շատ հետաքրքրուում էր եւ մեր խնդրով ու ժողովրդով. առանձնապէս ուշադրութիւն է դարձրել այն փաստի վրայ, թէ ի՞նչ ձեւով մեծ դէպքից մինչեւ հիմա քրդեր եւ թուրքեր գրաւել են հայկական գիւղերը... դրան կից եւ յեղափոխութիւնը խաղաղ ժամանակ ի՞նչ օգտակարութիւն է ներկայացնում հայ ժողովրդին (ժողովրդական դատեր, վաշխառուների չէզոքացում, դպրոցական եւ այլ հասարակական խնդիրների կարգաւորում, քրդական հալածանքների չէզոքացում եւ այլն եւ այլն): Այս բոլորի մասին տեղեկութիւններ եւ փաստեր հաւաքեց, իբր թէ պիտի այդ մասին յօդաւածներ տայ. տեսնենք ինչ կը լինի. եթէ այդպէս բան լինի, այդ յօդաւածները Վրէժով մեզ ուղարկէք:

Ի՞նչ եղաւ Ընդհ. ժողովի խնդիրը, ո՞ր մասին պիտի լինի. այդ մասին հեռագրեցէք Սամսոնին, նա մեզ յայտնի. մեր ընկերներէն մէկը (Թորգոմ) պիտի գայ, իսկ Լեռնապարի կողմից մասնակցելու է Կոմսը<sup>3</sup>: Ի՞նչ եղաւ Գրիգորը<sup>4</sup>. մենք գրել էինք որ նա չսպասէ ժողովին, այլ այս սեզոնին ներս գայ. գծերը մի ամսէն կը փակւեն, բայց նա դեռ չկայ ու չկայ...

Սովը այս տարի էլ սկսեց աւելի կանուխ քան անցեալ տարի. կոտորածի լուրեր ենք ստանում հեռու տեղերէն. կառավարութիւնը լուռ ու մունջ պատրաստութեան մէջ [է]. անցեալ օրը<sup>6</sup> գրադի դաշտային թնդանօթ եկաւ էրզրումէն, ջանքեզարները եւ համիդիաները շարժման մէջ են. թուրք ժողովուրդը մի ինչ որ է քսփսուկի մէջ է. ժողովուրդը շատ [է] վախենում ընդ [հանուր] կոտորածից, իսկ մենք, մեզնից մի հարցնէք. խայտառակ դրութեան մէջ ենք. 10 կանոնաւոր հրացան չկայ Շամում. այսքան գրեցինք մասերի համար, որ գոնէ եղած մի քանի տասնոցները կանոնաւորենք, այն էլ չուղարկեցին. վրէժցիք, ինչքան լաւ զէնքեր կրեն, պահել են իրենց ինքնապաշտպանութեան համար. իսկ մենք նստել ենք սեւ փոստի վրայ եւ մեր գլխին մոխիր պիտի ցանենք: Երեւի սա էլ մեր ճակատագիրն է...

Ընկերական բարեւներով՝  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1.- Ալնարկութիւն Ապտիլ Համիտի մահափորձին ձախողութեան:

2.- Արմենոֆիլ՝ հայասէր. արմենոֆոպ՝ հակահայ, հայատեաց:

3.- Արդարեւ, Հ.Յ.Դ. Ընդի. ժողովը 1905-ին գումարուելու պարագային, ինչպէս որոշուած էր Երրորդ Ընդի. ժողովին, Վասպուրականէն պատգամատր ընտրուած էին Թէոս Տեղորդիկեան (Թորգոմ) եւ Վահան Փափազեան (Կոմս): Մակայն Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդի. ժողովը յետաձգուեցաւ եւ գումարուեցաւ միայն 1907 թ. Փետրուարին: Պատգամատրները եւս փոխուելով՝ պիտի ընտրուէին նորերը. – Արամ Մանուկեան, Համազասպ Բաղէշցեան եւ Նիկոլ Պօղոսեան-Միքայէլեան (Իշխան):

4.- Գրիգոր Վարդանեան, որ կեղծ անցագրի ամուսն էր Օտապաշեան Պօղոսի (Շամի):

151

Սիրելի Տիգրան!

Ուղարկում եմ հաշվետետրը, խնդրում եմ կազմես մի ամսեայ (սեպտեմբեր) եւ եռամսեայ հաշվեցոյցերը, ամէն մէկից 3-ական օրինակ, չմոռանաս արձանագրել նոյնը եւ հաշվետետրակի մէջ:

Այսօր եղած բոլոր ռազիֆներին կ'ուղարկեմ. Դաւիթ, Թուշուն, Գասպար, Ազատ, Տէր-Տէր, Իշխանի 2 գինւոր (հետս էի բերել) Նշան: Այնպէս որ կ'ազատենք: Ուրիշ նորութիւն չկայ:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

1905 թ. հոկտ. 7-ին

152

Սիրելի Տիգրան!

Երէկ մոռացայ գրել սեպտեմբերի մուտքը, որ մի չնչին բան է: Եթէ անցեալ ամսից մնացորդ կայ, թէ աւելցած կամ պակաս՞ դրամի, այդ էլ չես մոռանայ դնել: Դրան կից գրիր մեզ անմիջապէս թէ առհասարակ մինչեւ հիմա արտասահմանէն ինչքան դրամ է եկել, որպէսզի ըստ այնմ դասաւորենք մեր անելիքները:

Մուտք սեպտեմբեր ամսուայ

Արտասահմանէն

Կարմիր խաչի կոմիտէից — 216 դահ.

Տեղական

Յոյս խմբէն — 60 դահ.

Արթուն խմբէն — 16 »

Պերճ խմբէն — 40 »

Բազւի գողերէն — 45 »

Գիսակ խմբէն — 22,20

Բարեւներով ԱՐԱՄ

1905 թ. հոկտ. 8-ին

Յ. Գ.— Եթէ կարելի է հաշիւները կազմելուց յետոյ մեծ տետրակը ուղարկիր մեզ մի նորէն ստուգենք, յետոյ անցեալ օրուայ պէս թիւերիմացութիւն կը լինի:

ՆՈՅՆ

## ԵՐԵՔ ԿՆՔՈՒԱԾ ՎԿԱՅԱԳՐԵՐ

153

Փաստ. 663-23

Սոյն վկայագիրը ներկայացնող երեք անձինք, իբրև վտանգված եւ անօգտակար մարդիկ դուրս է ուղարկւում: ա) Ազատ (Շամի շրջանի – Դուրանի գինւոր), բ) Վարդան (Իշխանի շրջանից – սա ապահով է եւ կարող է ճանապարհորդել իր դրամով), գ) Տէր-Տէր (Դուրանի շրջանէն, Սարհաղի ուղարկած):

ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. հոկտ. 7ին

---

154

Փաստ. 663-24

Սոյն վկայագիրը ներկայացնող Բէկը եւ իւր երկու ծառաները մեր մարդիկ են, որ երկրում վտանգված լինելով անցնում են ձեր շրջանը ապրելու համար, մի առ ժամանակ մինչեւ մենք կանչենք: Ծառաները մնալու են Մենաւոր աշխատելու համար (գործին), իսկ ինքը մնալու է Մինարէթ Գարեգինի քով:

Խնդրում է ամէն դիւրութիւն ցոյց տալ:

ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. հոկտ. 7ին, Շամ

---

155

Փաստ. 663-25

Վկայագիրս ներկայացնողը Վասպուրականի Կ. Կոմիտէի զինւորներէն է, որ առանց բանաւոր պատճառների Երկրից հեռանում [է]:

Խնդրում է հարկաւոր դիւրութիւն տալ:

Անունը Անդրէ է:

ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. հոկտ. 12ին



**Սիրելի Գարեգին!**

Այնքան գէշ հոգեկան տրամադրութեան մէջ եմ, որ չգիտեմ ի՞նչ գրել. երեւի լսեցիք եւրոպական Տաճկաստանում պատահած դէպքերը. լուրեր կան որ Դիար-բաքիրում էլ դէպքեր է եղել, Շէյթանը պատրաստուում է հոս էլ աւերելու. այսօր էրգրումէն 7 դաշտային թնդանօթ բերին, զօրքերը եւ համիդիաները շարժման մէջ են: Ամէն բան վարպետութեամբ եւ լրջութեամբ են անում, դրսից ոչինչ յայտնի չէ, յուզմունք չկայ, բայց սարսափելի լուռութիւն է, մեռելային...

Այս բոլորը ոչինչ, եթէ ներքնապէս մենք չկազմալուծւէինք. արդէն տարին լրացաւ, այն օրից երբ սկսեց զինւորների արտագաղթի շրջանը: Զինւորներին շրջապատելով հանդերձ ամէն դիւրութեամբ հոս պահել չի լինում: Սատանան գիտէ պատճառները. դրանք շատ բարդ են. ա) կամաւորութեան հասկացողութիւնը, որ իրենց ազատ են գգում: բ) դիսցիպլին չլինելը, գ) Երկրում ապրելու դժարութիւնները եւ դրան կից արտասահմանի կեանքի գեղեցիկ հեռանկարները. մեր տունը այն օրից քանդուեց, երբ այստեղի զինւորները լսեցինք, որ դուրս եկողները կամ վռնդւածները, արտասահմանում իբրեւ զինւոր են ապրում, մանաւանդ երբ դրանք կողմնակի աղբիւրներով սկսեցին նրանց նամակներ գրել եւ ներկայացնել իրենց դրութիւնը:

Բանը այնտեղ է հասել որ մի Սեպուհ թոյլ է տալիս իրեն ինքնագլուխ Սարհադին<sup>1</sup> եւ իր մաբողջ ընկերներին արտասահման հրաւիրել, առանց Բիւրոների կամ որեւէ մարմինների համաձայնութեան: Մենք այդ նամակը վար դրինք եւ վճռեցինք, ինչ գնով էլ լինի, Սարհադին պահել Երկրում, նոյն իսկ մեր պիւտճէներով:

Խիստ ցնեզուրայի է ենթարկելու զինւորներին նամակները, մանաւանդ կարեւորութիւն չէ տալու դուրս եկողներին. առանձնապէս սրանց այնպէս դաս կը տաք եւ այնպէս վկայական կը տաք Սարուստանի համար, որ լաւ օրինակ լինի մնացածներին. աւելորդ է ասել որ ասէկօսէներ կ'անեն, բայց կարեւորութիւն չէք տալու...

Է՛հ, գուցէ կազմալուծելու պատճառներից մէկն է մեր անընդունակութիւնը. գուցէ մենք անկարող ենք նրանց ղեկավարել: Երկրի ընկերները միշտ աշխատել են եւ խնդրել են, որ տաղանդաւոր մարդիկ ներս գան. միշտ էլ խոստովանել ենք եւ բարձրաձայն խոստովանելու ենք որ մեզ պէս սովորական մահկանացուներով գործ չի դառնայ:

Եթէ կառավարութեան նշանները ճիշտ դուրս եկան, հաւանօրէն բոլորս էլ կ'երթանք: Աղաչում եմ դրսի ընկերներից, մեզնից յետոյ անպայման լաւերը ուղարկել, մեզ պէսները գործը միայն փչացնում են:

Գուցէ ընկերական վերջին նամակն եմ գրում ձեզ...

**Զերմ համբոյրներով՝ ԱՐԱՍ**

1905 թ. 8-ին հոկտ., Շամիր

1.- Սեպուհ – ծածկանուն Ներսէսեան Արշակի (1872-1940), ապագայ զօրավար. Սարիաղը Գ.էորգ Չաուշն է:

Սիրելի Գարեգին!

Այս անգամ ուղարկում ենք հաշկեցողյոցներ եւ մի նամակ Կոմսին ուղարկելու համար: Ձեզնից բաւական ժամանակ է լուր չունենք. չգիտենք ի՞նչ պատահեց. հերթական խնդիրներ կային որ պիտի այս սեզոնին լուծւէին առանց յետաձգելու եւ ապագայ սեզոնին թողնելու, բայց շնորհիւ նրան որ ոչ Մինարէթում ոչ էլ Աւարայրում մարդ չլինելով, այդ խնդիրները յետաձգեց եւ այսօր սպառնում է մնալ ապագայ սեզոնին:

Մեզ մօտ դրուժիւնը բարդւեց եւ եթէ կ'ուզէք փոխեց. գէշ լուրեր է ստացւում հեռաւոր վայրերից, իբր թէ Դիարբէքիրում, Շաբին Գարահիսարում, Էրզրումում եւն եւն դէպք է եղել. ժողովուրդը ահ ու սարսափի մէջ է. նորէն սկսեց ընդ [հանուր] կոտորածի երկիւղը դամոկլեան սուրի պէս կախել ժողովրդի գլխին. իսկ նա պատրաստ չէ եւ պատրաստ էլ լինել չէր կարող. իսկ մենք, մեզնից մի հարցնէք. մենք փոխարէն առաջ գնալու յետադիմում ենք. տեսաք զինուորների արտագաղթի հոսանքները, տեսաք այս տարւայ փոխադրութեան յաջողութեան չափը եւ վերջապէս տեսաք Սարուստանի եւ առհասարակ արտասահմանի հետ ունեցած յարաբերութիւններնիս. այս ընդհանր — գոնէ Շամի շրջանում — 10 կանոնաւոր կոթ չկայ, որ դնես մէկի ձեռքը որեւէ դէպքի ատեն. գոռացինք, գոռացինք, բայց լսողը ով էր. տարին անցաւ չկարողացանք գոնէ 10-20 կարողակա զատուր ստանալ եւ եղածներից մի քանին կանոնաւորել ու պատրաստ ունենալ. տարին լրացաւ չկարողացանք գոնէ 2 փութ խմոր ունենալ ներսը (այս տարի ընդամէն 20 գրուանի չափ խմոր եկաւ!?) է՛հ, էլ ի՞նչ ասենք...

Մեզ համար օրւայ խնդիրներն են հետեւեալ հարցերը որ դնում ենք քո առաջ, պահանջելով շուտափոյթ լուծում եւ պատասխան:

Ա. Վրէժի շրջանների համար վերցւած եւ Աւարայրում մնացած մի քանի հազար ծայրերը պիտի՞ ներս ուղարկէք թէ ոչ:

Բ. Վրէժի շրջաններում եղած եւ Շահէնի<sup>1</sup> բերած մի քանի կանոնաւոր կոթերը պիտի ներս ուղարկէք թէ ոչ:

Գ. Նոր ապրանքներ ստանալու յոյս կա՞յ այս սեզոնին թէ ոչ:

Դ. Բարսեղեանը<sup>2</sup> յուլիս 6 թւակիր նամակներով գրում է, որ ձեր գծով (Վրէժ եւ Մենաւոր) մեզ համար ուղարկւած [է] 2500 դրամ. դրանից մենք ստացել ենք ընդամէնը 140 ոսկի (70+70). մնացածները պիտի ստանա՞նք թէ ոչ: Երբ մենք ձեզ գրում էինք թէ դրամները որտեղից են գալիս եւ ի՞նչ չափով, դուք նեղանում էիք եւ մեզ պատասխանում, որ ոչ ոք ձեզ դրամ չէ ուղարկել, այդ մենք մեր պիւտոժից ենք ուղարկում — այժմ ինչպէս հաշտեցնենք երկու դրուժիւնները. սա հետաքրքիր չէ. հետաքրքիր բուն խնդիրը՝ Վրէժը պիտի կարողանայ մնացորդ դրամը ուղարկել թէ ոչ:

Ե. Մենք ուղարկել էինք այս տարւայ մինչեւ սեպտեմբեր սկիզբը ռազմական հաշկեկշիռը, եւ խնդրել էինք ստուգել Մենաւորի եւ Աւարայրի հետ ու մեզ գրել:

ի՞նչ եղաւ: Ընձայրը նորէն ուղարկել էր մի չարչու հաշւեցոյց, որից կրկին պակաս է 3-4 հազար, ինչպէ՞ս պիտի կանոնաւորել այդ հաշիւները: ուղարկւածը շատ է, քիչ էին գրել: Թիւրիմացու թիւնները ինչպէ՞ս էք ճշտելու: գիտէ՞ք որքան ծայր է ուղարկւած այս սեգոնին Մենաւոր եւ որքան կար հոն անցեալ տարւանից: Եթէ գիտէք հեշտ կը լինի գործը:

2. Այս տարի դու անպատճառ մտադիր ես ներս գալու թէ ոչ: մենք այնպիսի մտադրութեան մասին ենք հարցնում, որ կանգ չէ առնելու ոչ մի արգելքի առաջ, ոչ Բիւրոյական եւ ոչ Վրէժական: Այս մեզ համար կարեւոր է, որովհետեւ մենք մեր գլխի ճարը պիտի տեսնենք: Գրիգորից էլ լուր չառանք:

Առ այժմ դրանք են:

Սովը կրկին սկսեց, գիւղացու ունեցած չունեցածը կառավարութիւնը եւ վաշխառուները խլեցին: Կառավարութիւնը լուռ ու մունջ պատրաստութեան մէջ է. 3 օր առաջ եկաւ էրգրումէն 6 դաշտային կրատի թնդանօթ. Աստուած վերջը բարի անէ...

Վերջերս ուղարկեցինք (դուրս վռնդւեց երկրից) Թուչուն կեղծ անունով մէկին: Նա ճանապարհէն որ [ովհետեւ] զինւորներից մէկի միջոցով հայհոյական խօսքեր է ուղղել տեղիս ընկերների հասցէին, եւ ինչ որ է սպառնալիքներ է կարդացել: բոլոր ընկերներով խնդրում եւ պահանջում ենք, զինւորների ներկայութեամբ նրան մի լաւ տփոց (ծեծ) տալ. այլապէս դրանք չեն խրատուի: Դրան եւ միւսներին բոլորովին երես չէք տալ: Նոյնիսկ լաւ կը լինի որ նրանց թոյլ չտաս քո ներկայութեան գան, արհամարհիր դրանք իբրեւ երկրի քանդողների (մանաւանդ Դաւիթին):

Ուրիշ նորութիւններ չկան:

Համբոյրներ Սարգիսին:

Բարեկներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. 11-ին հոկտ.

Շամիր

3. Գ.— Մոռացանք գրել որ տեղական ընկերներից մէկի մի թղթակցութիւնը ուղարկում ենք «Մուրճ»ի խմբագրութեան ուղարկելու համար. դրան կից դուք մի նամակ էք գրելու, որ այդ յօդւածը այստեղից է ուղարկւած, եւ հեղինակը շուտով առանձին նամակ կը գրէ խմբագրութեան...

Ի դէպ, արդէն գրել ենք զինւորների դուրս գալու մասին. դոցանից երկուսը հակառակ (Դաւիթ եւ Գասպար) մեր կամքին լսում ենք, որ իրենց մօտ եղած տասնոց ատրճանակը չեն թողել այնտեղ ուր հարկն է, այլ իրենց հետ բերում են ձեր կողմը: Եթէ այդպէս բան անեն, նոյնիսկ մինչեւ Մենաւոր էլ բերելու լինեն, իմացէք որ դա հակառակ մեր կամքին է, եւ դրանց այնպիսի մի պատիժ տւէք, որ հաւասար լինի մեզ չլսելու յանցանքին, եւ այն դիւրութեան որ մի ատրճանակով ներս կ'ուղարկուի:

Մոռացանք նոյնպէս գրել որ եթէ ապրանքներ կան ուղարկելու շուտով հասցը-

րէք Մենաւոր որ բերել տանք. դիւրութիւններ շատ կան, բայց չենք կարող օգտուել, որովհետեւ չգիտենք հոն ի՞նչ կայ:

Հետաքրքիր է եւ մի ուրիշ ինդիւր. Մենաւորէն ստացանք Կոմսի նամակը, որի մէջ գրւած էր թէ ուղարկում եմ նամակի հետ ինչ որ է Փանար, դիտակներ, կողմնացոյցներ եւայլն եւայլն. դրանք որտեղ են... եթէ ձեզ մօտ են՝ ձեր սուրհանդակներով ուղարկէք. եթէ Մենաւոր են, մենք բերել կը տանք. Փանարը կ'երեւայ մեզ համար անգործնական է. եթէ լուսաւորութիւն ունի, ծաւալով մեծ է, վար դրէք, թողէք, ի գուր է հոս բերելը, գործադրել չենք կարող:

Յարգանքներով՝  
ՆՈՅՆ

1.- Իմա՝ Անդրանիկին: Այս վերջինը ծանօթ էր Պարոյր ծածկանունով. 1904 թ. Սասնոյ ապրստամբութենէն ետք, նահանջի ճանապարհին, Վանի մէջ, գաղտնապահութեան նկատմամբ իրեն համար գործածուած է Շահէն ծածկանունը:

2.- Բարսեղեան – ծածկանուն Բժիշկ Յովսէփ Տէր Դաւթեանի, անդամ Արեւելեան բիւրոյի:

Գաղտնի թանագրով գրուած այս նամակը արխիւներում մէջ կը գտնուի երեք տարբերակներով (փաստ. 664-156, 661-207 եւ 661-208), հաւանաբար տարբեր ճամբաներով հասցնելու համար Կոմսին (Փափագեան Վահան), որ հայ-թաթարական ընդհարումներու օրերում կը գտնուէր Կովկաս եւ կը տեղափոխուէր քաղաքէ քաղաք՝ Թիֆլիս, Ալեքսանդրապոլ, Երեւան եւ Նախիջեւանի շրջան: Բովանդակութեան տեսակէտէ երեք տարբերակները ըստ էութեան նոյնական են, բայց եւ կան զգալի տարբերութիւններ եւ կարգ մը յաւելումներ. ուստի յաջորդաբար կը տրուին երեքն ալ:

*Սիրելի Կոմս!*

*Ստացել ենք Վրէժի վրայով օգոստոսի 30, Մրգաստանի դրամի հետ (222) երկտողը եւ 22 օգոստոս թլակիրները: Վերջին երկու նամակներում գրած էր դիտակների, Փանարների, կողմնացոյցների եւ այլ առարկաների ուղարկման մասին, բայց մինչեւ օրս տեղ չհասան. որի՞ միջոցով էք ուղարկել, կամ ի՞նչ ճանապարհով, չէք գրել: Տանարը մի աւելորդ բան է մեզ համար. մենք այդ անկարող ենք գործադրել եւ ոչ էլ յարմարութիւն ունենք գործադրելու: Վրէժ գրեցինք որ չուղարկեն: Զեռքի լապտերներ ուզել էինք քեզ յայտնի աշխատանքների համար... Չմոռանաք գրել թէ դրանք որի միջոցով էք ուղարկել:*

*Բարեկամի հասցէով ստացւեց (թարգմանի) չորս բրոշուր. այսուհետեւ լաւ կը լինի նրա հասցէով գրքեր առայժմ չուղարկէք, իսկ մայրաքաղաքի թերթերի բոլորովին կարիք չկայ: Նրանք շատ բան են ստանում, թէ մայրաքաղաքներէն եւ թէ Մ. Ք. էն, այնպէս որ մենք էլ դիւրութիւններ ունենք օգտւելու. այդպիսի բաների համար վտանգել այն մարդուն միտք չունի. նրա հասցէով ուղարկելու էք միայն հայերէն գրքեր եւ իբրեւ ապահովութիւն խօսելու էք «Մութը»ի\*\* խմբագրութեան, որ նորա պահանջներին գոհացում է տալիս խմբագրութիւնը բարեկամի խնդրանք. այսպէս է խօսել նա իր մեծին: Կարծում եմ խմբագրութիւնը կը համաձայնի այդ փոքրիկ աշխատանքը յանձն առնելու, մանաւանդ որ միշտ ուղարկում են լեզու գրքեր:*

*Դրամական տագնապի մէջ ենք: Հիմնւած քո խոստումների վրայ՝ սկսեցինք ռազմամթերք եւ կոթեր առնել, բայց յետոյ կիսաճանապիհ մնացինք եւ այժմ էլ չգիտենք ձմեռայ ապրուստի եւ ծախսերի դրամ կ'ունենանք թէ ոչ: Գրում ես որ դիմենք Արեւմտ. Բ. եւ Ամերիկա: Քանի-քանի անգամ ենք դիմել, բայց Ամերիկան մի անգամ 50 ոսկի ուղարկեց եւ տեղը հանգիստ նստեց. նոյնիսկ խոստացան նամակ գրել, այդ էլ չարին: Միւս կողմից էլ նրանց գծերը փչացան: Գիտէք արդէն Վիչապի վիժմունքները: Առ այժմ դրանք մեզ հետ յարաբերում են Վրէժի գծերով, իսկ թէ վրէժցիք դրամական խնդիրներում ինչպէ՞ս են, այդ դու լաւ գիտես: Նրանց գծով*

մեզ ուղարկված է ըստ Բարսեղեանի նամակի 2500 ռուբլի, իսկ նրանք մեզ ուղարկել են քո դրոմամբ 70+70, ուրիշ ոչինչ։ նոյնիսկ երբ հարց դրինք, թէ այդ դրամները որտեղից է գալիս եւ ինչ չափով, մեզ պատասխանել էին, որ դրամները իրենցն է եւ ի նկատի ունենալով մեր նիւթական դրուժիւնը, մեզ նպաստ է ուղարկել... Ահա քեզ բարք։ Կարճ՝ դրանք էլ մեզ պէս սովեալ են. աւելի լաւ կը լինի դու այդտեղից դիմես խմբագրութեան եւ դրանից պահանջելով ուղարկես քո գիտցած միջոցներով։ Ամերիկայից դիւրութիւններ կայ ուղարկելու. այդ իրենց գրեւծ է. դա էլ յիշեցրու։

Այսօր ուղարկուեց Վրէժի գծով Սեպտ.ի հաշուկշիւրը եւ եռամսեայ հաշուկշիւրը (յուլ. օգոս. սեպտ.)։

Արդէն գիտես Թորգոմի եղբօր դրութիւնը. նա պառկեց, երեւի չի էլ ազատւի։ Բացի քո նամակներից, թակարդ է ընկել եւ Բիւրոյի (Արեւել.) 2 նամակը. գոնէ այդպէս է երեւում Իշխանին գրած քո առաջին նամակից։ Ի դէպ, գրել էիր նոյն նամակում թէ Մոնտէի հասցէով 1500 է ուղարկված, ստացել էք թէ ոչ. այդպէս բան չենք ստացել. դա թիւրիմացութիւն է լինելու. Բարսեղեանը 6 Յուլիս թուագրում գրում է որ Մոնտէի եւ Հայ Սուրբի? (երեւի Տէր-Տէրի) հասցէին 500-ական է ուղարկված, ստացել է՞ք թէ ոչ։ Այս գումարը (1000 ռուբլի) ստացել ենք. քո ասածն այժ էլ լինելու. ուրեմն ստացածը (այն է երկու մարդու հասցէով) եղել է 1000 եւ [ոչ] 1500։ Վերջնական կերպով ստուգիր եւ գրիր։ Թորգոմի եղբօր հասցէին գրած նամակները երկրորդելու էք (նոյնը Բիւրոյին), որովհետեւ չհասկցանք թէ ի՞նչ է գրած։

Հրաւիրագիրը ստացեց եւ հարցերի ցուցակն էլ ուղարկեց. մենք էլ հաւաքեցինք եւ խորհրդակցեցինք։ Վճուեց որ Շամի կողմից մասնակցէ Թորգոմը, իսկ Լեոնապարի կողմէն դուն. առաջժմ դրեց հետեւեալ պահանջները։ Պահանջել յառաջիկայ տարում Շամի համար դրամ՝ 20.000 ռուբլի, ծայր՝ (հին-նոր) 30.000, կոթ՝ 100 հատ, խմոր՝ 5-10 փութ. դրան կից՝ եղած կոթերը վերանորոգելու համար՝ 50-60 կարողակա եւ զատուր (նորի). առանց դրանց, ոչինչ չի կարելի անել։ Կրկնապատուիր (չատ քիչ տարբերութեամբ) դրել են Լեո[նապար]ի ընկերները։ Պահանջները անւելու են գատ-գատ։ Բացի ապրանքային պահանջները, մնացածը ուղարկելու է գատ-գատ (այսինքն ամէն կոմիտէի համար անկախ)։ Այս բոլորը չհասկանաս թէ մեր յարաբերութիւնները լարած են, ընդհակառակը, սա եղել է ապագայ թիւրիմացութիւններից խուսափելու համար։ Վճուեց Գրիգորին անպատճառ այս սեզոնին ներս բերել, իսկ Սամսոնին նոյն կերպ։ Չհասկացանք թէ ժողովը երբ պիտի լինի. հրաւիրագրի մէջ անորոշ էր։

Մեր դրութիւնը.— Երեւում է որ սեւ սուգի օրերը պիտի մօտենան. գէշ լուրեր է ստացում Դիարբեքիւն եւ ուրիշ վայրերէն. կառավարութիւնը լուռ ու մունջ պատրաստութիւնների մէջ է։ Անցեալ օրը եկաւ Յ դաշտային թնդանօթ. ջանքէզարները եւ էլ — Աղասիները գնում գալիս են. սովը սկսել է, ժողովուրդը ահ ու սարսափի մէջ, կոտորածի երկիւղը դամոկլեան սրի պէս կախւել է ժողովրդի գլխին. ընդհանուր յուսահատութիւն, մանաւանդ որ քաղաքական պայմաններն էլ աննպաստ են. այն ժամանակ երբ Եւրոպան իր գէնքով է ճնշում կրետական ապստամբութիւնը, ո՛ր պիտի ուշադրութիւն դարձնէ մեր խնդրին... թէեւ կոթեր կան ժողովրդի ձեռքը, բայց ինչպէս գիտես ծայրեր չկան. ի՞նչ եղաւ ժողովրդական ծայրեր

գնելու խնդիրը մոռացաք: Ներքնապէս մեր դրուժիւնն էլ շատ աննախանձելի է. գինւորներից բոլորովին մաքրեցինք. դուրս եկան Մուռ, Գասպար, Թուշուն: Հիները լրբութիւնների համար վռնտեցինք. արդէն փորձեա՞ծ գինւոր չմնաց, ոչ մեր եւ ոչ էլ Իշխանի քով. ներքին կազմալուծում է. մարդ չգիտէ պատճառը ի՞նչ է. դուրս գնալու համաճարակ է ընկել մէջերնին: Յամենայն դէպս պատճառներից մէկը այն է, որ դուրս եկողներին, թէ Վրէժում եւ թէ Սարուստանում, երես են տալիս, կամ ընդունում գինւորական շարքերի մէջ. հէնց այդ բովանդակութեամբ էլ նամակներ են գրում այստեղ եղածներին եւ հրաւիրում դուրս: Նոյնիսկ Սեպուհը թոյլ է տւել իրեն՝ Սարհաղին, Կորիւնին ամբողջ ընկերներով դուրս հրաւիրել: Նամակը վար դրինք եւ վճռեցինք ինչ գնով էլ լինի Սարհաղին պահել: Վերջերս նորէն դէպք է եղել Ալվառինչ գիւղում (Դուրանի).....

Փաստ. 661-207

## 159

Սիրելի Կոմս<sup>1</sup>!

Ստացել ենք Վրէժի վրայով օգոստ. 30 թւակիրդ. առաջ էլ Մելիք Արծրունու հասցէով ստացել ենք օգոստ. 22-ը, իսկ այս վերջերը ստացանք 22<sup>1/2</sup> ոսկին եւ նամակը. զարմանում ենք որ այդպիսի վտանգաւոր նամակը ուղարկում էք այդ կերպ: Գրում էք այդ նամակներում որ դիտակներ, կողմնացոյցներ, Փանարներ եւ այլն եւ այլն ուղարկեցի: Որի՞ հետ եւ ի՞նչ ճանապարհով յայտնի չէ. մենք այդպէս բան չենք ստացել: Արտամէտցու գրքերը գտանք եւ առանք մեր քով: Նրանք պատճառաբանում են որ «իրենցն է եւ մեզ չեն տայ». նա գրելու է սրանց, որ մեզ համար է, ուրիշ ոչինչ:

Բարեկամի (Թարգմանի) հասցէով ստացեց չորս բրոշիւր ուսերէն. առաջում նրա հասցէով ուսերէն գրքեր մի ուղարկէք, այլ հայերէն: Մայրաքաղաքի թերթեր նրանք ստանում են (պահպանողականները) եւ մենք էլ օգտուելու դիւրութիւն ունենք. «Արշալոյս» էլ կը ստացւի, այնպէս որ նրա հասցէին չուղարկէք. եթէ ուղարկելու լինիք, Սամսոնին ուղարկեցէք, մենք բերել կը տանք: Հայերէն եւ առհասարակ գրքերի մասին խնդրելու ես Մուրճ-ի\*\* խմբագրութեան, որ երբ հարցնելու լինեն, թող ասեն, որ իրենք են ուղարկում գրքերը, Թարգմանի պահանջի համեմատ, այդպէս է խնդրում բարեկամը: Սրանց մեծը նրա հետ լաւ է, բայց այս տեսակ բաների վրայ ուշադրութիւն է դարձնում:

Դրամական տագնապի մէջ ենք. հիմնւած քո խոստումների վրայ, սկսեցինք ռազմամթերք եւ կոթեր առնել, իսկ այժմ ստիպւած ենք կիսաճանապիւն մնալ եւ ձմեռուայ պարտքերի հեռանկարի առաջ դողալ: Ամերիկա եւ Արեւել. Բիւրոյին նամակներ գրեց դրամի համար, հազար անգամ: Առաջինը 50 ոսկի ուղարկեց եւ տեղը նստեց. վերջինի հետ յարաբերութիւնը ընդհատեց, Վիշապի դէպքերի պատճառով: Մնում է Վրէժի գծերը, իսկ թէ նրանք ինչպէս են դրամական խնդիրներում, այդ դու լաւ գիտես: Նրանց գծով մեզ ուղարկեա՞ծ է, ըստ Բարսեղեանի<sup>2</sup> 6 յուլիս

նամակի, 2500 ռուբլի, իսկ նրանք քո թելադրութեամբ ուղարկել են ինչպէս գիտես 70+70, ուրիշ ոչինչ: Երբ հարցնում ենք թէ դրամները որտեղից է գալիս, վիրաւորւել էին եւ պատասխանել որ՝ ի նկատի ունենալով մեր նեղ դրութիւնը իրենց պիւտոժէից են ուղարկել — ահա քեզ պարտքեր: Կարճ, նրանց ճանապարհով դրամ անկարելի է ամբողջութեամբ ստանալ: Կամ գուցէ մեղաւորը Բիւրոններն են, որ չեն գրում թէ այդ դրամները երկրի համար են:

Խմբագրութեան գրւեց որ դրամները ուղարկեն քեզ՝ դու փոխադրես. նոյն բանն էլ դու յիշեցրու... Արդէն գիտես Թորգոմի եղբօր դրութիւնը.— նա պառկեց — եւ երեւի չի էլ ազատուի: Բացի քո նամակներից բռնւել է եւ Բիւրոյի 2 նամակները: գոնէ այդպէս է երեւում քո Իշխանին գրած նամակից: Ի դէպ, նոյն նամակում գրած էր որ Մոնտէի հասցէին փոխադրւած է 1500 ռուբլի: դա թիւրիմացութիւն է լինելու, որովհետեւ յուլիս 6 թւակիր նամակով գրում է որ 500-ական ռուբլի է փոխադրւած Մոնտէի — եւ Հայ-Սուրբի (երեւի Տէր-Տէրի) հասցէներին: այդ դրամները ստացւել է: երեւի ձեր ասածը այս 1000 ռուբլին է: եթէ սա չէ իսկոյն մեզ գրէք: Մոնտէն լրբացել է մանաւանդ Թորգոմի եղբօր դէպքից յետոյ: նրա հասցէին ոչինչ չուղարկէք այսուհետեւ:

Հրաւիրագիրը<sup>3</sup> ստացւեց եւ հարցերի ցուցակն էլ ուղարկւեց: մենք էլ հաւաքեցանք եւ խորհրդակցեցանք: Վճուռեց որ Շամի կողմից մասնակցէ Թորգոմ, Լեռնապարի կողմից դու: Առայժմ Շամի համար դրւեց հետեւեալ պահանջները՝ առաջիկայ սեզոնին փոխադրելու համար:

20 հազար դրամ, 30 հազար ծայր (հին-նոր), 100 կոթ, 5-10 փութ խմոր, 50-60 կարողա եւ գատուոր: Եթէ վերջինները չլինի եւ շուտ չհասնի մենք 10 կանոնաւոր կոթ չենք կարող հանել: արդէն գիտես եղածները: Սրան կից շուտ ուղարկելու էք մանաւանդ պատրոննիկ փոքրելու գործիք (ուռեցնողների) թէ հնի եւ թէ նորի: Սա շատ եւ շատ կարեւոր է: ինչ գնով էլ լինի, սա շուտ հասցրէք: Թէ այստեղի եւ թէ Լեռնապարի) պահանջները զատ-զատ է առնելու մի քանի գործնական նկատումներով:

Մեր դրութեան մէջ փոփոխութիւն չկայ: բայց կ'երեւայ որ սեւ օրերը հեռու չեն: հեռու տեղերից գէշ լուրեր ենք առնում: Կառավարութիւնը լուռ ու մուռ պատրաստւում է: անցեալ օր բերին էրգրումէն 6 դաշտային թնդանօթ: Չանբէզարները եւ համիդիաները շարժման են: Ժողովուրդը ահ ու սարսափի մէջ է: կոտորածի ուրւականը դամոկլեան սուրի պէս կախւած է նրա գլխին: ընդհանուր յուսահատութիւնը, մանաւանդ որ քաղաքական պայմանները աննպաստ են: անգլիական պետական խնդիրներ են շօշափուում թէ նեղ կառավարական շահերն են...

Ներքնապէս մեր դրութիւնը շատ աննախանձելի է: գինւորներից համարեա մաքրւեցինք: ոչ հոս եւ ոչ էլ Իշխանի մօտ փորձւած գինւորներ չմնացին: Դուրս եկան Մուռ, Գասպար եւ այլն: Թուրքներն վռնտեցինք լրբութիւնների համար: Դուրս գնալու համաճարակ է ընկել մէջերնին... Մարդ դժւարանում է հասկանալ պատճառները: յամենայն դէպս մի պատճառ պարզ է, որ դուրս եկողներին թէ Վրէժում եւ թէ Սարուստանում երես էք տալիս եւ բանն այնտեղ է հասնում, որ իրենց երջանիկ դրութեան մասին նրանք նամակ են գրում եւ այստեղիներին դուրս հրաւիրում: Նոյնիսկ մի ինչ որ է Սեպուհ թոյլ է տալիս ինքնագլուխ Սարհադին իր ընկերներով դուրս հրաւիրելու... Սա ինչ խայտառակութիւններ որ խաղում են երկրի



գլխին, մարդ չգիտէ:

Ո՞ւր մնաց Գրիգորը. սպասելուց մեռանք: Հետաքրքիր է իմանալ. երկրի համար հէջ ռազմամթերք գնւո՞ւմ է թէ ոչ:

Նամակներ գրեցէք եւ այս հասցէներով:

**Դոկ. Ռէյնոլդս տ. Մրմայ Կարապետեանին կամ Մաթենիկ Կիրակոսեանին կամ Աննա Մարկոսեանին\*\*:**

Մենք կը ստանանք, շատ ապահով է: Հասցէները ուրիշի ձեռքով գրել տւէք, որովհետեւ ձեռքդ<sup>4</sup> արդէն ճանաչել են:

Ուրիշ նորութիւն չկայ: Սովը սկսւել է: Այս տարի աւելի սարսափելի կը լինի անցեալ տարւանից:

Բիթլիսից ցորեն են առել բերելու. այնտեղի կուսակալը արգելել է... Դուրանի Ալվառինջ գիւղում նոր դէպք է եղել. սպանւել են 4 գիւղացի եւ 4 էլ ասկիար:

Ջերմ համբոյրներով՝  
**ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ**

1905 թ. հոկտ. 11-ին

Շամ

1.- Գաղտնի մելանով գրուած նամակ:

2.- Այս Բարսեղեանը Յովսէփ Տէր Դաթեանն է, Արեւելեան քիւրդի անդամ:

3.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդի. ժողովին, որ նախատեսուած էր գումարել 1905 թուի վերջերուն, բայց հայ-թաթարական ընդհարումներու հետեանքով ան պիտի գումարուէր 1907 թ. Փետրուարին. ըստ այնմ պիտի փոխուէին նաեւ Վասպուրականի պատգամաւորները:

4.- Իմա ձեռագիրը:

**Սիրելի Կոմս!**

Ստացել ենք վերջին անգամ օգոստոս 30 թվակիրը (Քարից), իսկ առաջ ստացել ենք օգոստոս 22 թվակիրը, իսկ վերջերս Թաթուլի մարդու միջոցով 222½ը եւ թւանշաններով նամակը: Չարմանում ենք քո անզգուշութեան վրայ. ինչպէս կա-  
րելի է բաց, այդ ձեւով նամակներ գրել:

Նամակների [մէջ] գրւած էր ինչ որ է որեւէ փանարների, դիտակների, կողմնա-  
ցոյցների եւ այլ իրերի մասին: Գրում էք որ ուղարկում եմ. որի՞ միջոցով, որ ճա-  
նապարհով չգիտենք. մենք դեռ ոչինչ չենք ստացել: Նկարագրածդ փանարը մեզ  
համար աւելորդ բան է. մենք ոչ դիւրութիւն եւ ոչ էլ յարմարութիւն ունենք գոր-  
ծադրելու: Մենք խնդրել էինք ձեռքի մանր բայց դիմացկուն լամպաներ, քեզ յայտ-  
նի գործողութիւնների համար: Չմոռանաք գրել թէ դրանք որի միջոցով էք ուղար-  
կել: Այսուհետեւ Մոնտէի հասցէին բան չէք ուղարկեր. նա սարսափելի լրբացաւ,  
մանաւանդ Թորգոմի եղբօր դէպքից յետոյ:

Վերջին նամակումդ խոստացած Մելիք-Արծրունու եւ Մոնտէի հասցէին գրւելիք  
նամակները չստացանք: Մենք նամակ էինք գրել Արմենակ-Վահանի հետ. ստացաք  
թէ ոչ: Բարեկամի հասցէին առայժմ ռուսերէն գրքեր մի ուղարկէք. Մեծը նկատո-  
ղութիւն է արել կատակով, ստացւածների բովանդակութեան վրայ... Իսկ մայրա-  
քաղաքի թերթեր՝ բոլորովին կարիք չկայ. նա ստանում է թէ մայրաքաղաքէն եւ թէ  
Թիֆլիսէն բազմաթիւ թերթեր եւ մենք էլ օգտւելու դիւրութիւն ունենք: Բարեկա-  
մի հասցէին ուղարկելու էք միայն հայերէն գրքեր, խնդրելով Մորճի\*\* խմբա-  
րութեան, որ եթէ իրանցից հարցնող լինի այդ մասին, թող ասեն որ բարեկամն է  
մեզ խնդրել, որ իր հաշիւն նոր գրքերը ուղարկեն. այսպէս է առաջարկում բարեկա-  
մը: Խմբագրութիւնը դժկամակելու առիթ չունի, մանաւանդ որ գրքերը լեզալ են:

Դրամական տագնապի մէջ ենք: Հիմնւած քո խոստումների վրայ, սկսեցինք  
ուզամամթերք եւ կոթեր առնել, բայց այժմ կիսաճանապին մնացինք, դեռ չգիտենք  
էլ, թէ դրամ պիտի ստանանք այսուհետեւ, եւ անցեալ տարուայ պէս ձմեռը անօթի  
չենք մնա՞յ... Այժմւանից պարտքերի տակ ենք ընկել: Մինչեւ հիմա ստացւել է 1600  
ոսկի. եթէ մեզ տալու լինեն 20.000 [անընթեռնելի մէկ բառ] էլ պարտքին, ուրեմն  
դեռ 1000 ոսկու չափ առնելիք ունենք: Եթէ այս գումարը չկայ, շատ պիտի նեղւենք:  
Ի՞նչ ես կարծում, այսուհետեւ դրամ կ'ուղարկե՞ն թէ ոչ: Գրում ես որ դիմենք  
Արեւմտ. Բ[իւրօ] եւ Ամերիկա: Քանի-քանի անգամ դիմել ենք, բայց Ամերիկան  
միայն 50 ոսկի ուղարկեց եւ տեղը հանգիստ նստեց: Նոյնիսկ խոստացան նամակ  
գրել, այդ էլ չարին: Իսկ Արեւմտ. Բ.ի գծերն էլ փչացան: Գիտէք արդէն Վիշապի  
վիժմունքները. այժմ նրանց յարաբերութիւններն էլ ընդհատւել են. եթէ լինի էլ,  
Վրէժով պիտի լինի. իսկ թէ վրէժիք դրամական խնդիրներում ինչպէս են, այդ դու  
լաւ գիտես: Նրանց գծով մեզ ուղարկւած է, ըստ Բարսեղեանի 6 յուլիս թվակիր նա-  
մակի, 2500 ռուբլի, իսկ նրանք քո թելադրութեամբ ուղարկել են 70+70=140: Նոյ-

նիսկ երբ հարց դրինք թէ այդ դրամները որտեղից են գալիս եւ ինչ չափով, մեզ պատասխանել էին կարճ. դրանք էլ մեզ պէս սովեալ են. աւելի լաւ է դու էլ այդտեղից դիմես խմբագրութեան եւ բերել տալով ուղարկես քո գիտցած միջոցներով: Ամերիկայից էլ դիւրութիւն կայ ուղարկելու, այդ իրենց գրեած է, դուն էլ յիշեցրու:

Այսօր ուղարկեց Վրէժի գծով սեպտ.ի եւ եռամսեայ (յուլիս, օգոստ., սեպտ.) հաշեկշիռները:

Արդէն գիտես թորգոմի եղբօր դրութիւնը. նա պառկեց, երեւի չի էլ ազատւի: Բացի քո նամակներից բռնուել է եւ Բիւրոյի երկու նամակը բատ քո գրածին: Ի դէպ, Իշխանին գրեած մի նամակում (նա միայն այդ է ստացել) գրում էք որ Բիւրոյից Մոնտէի հասցէին ուղարկեած է 1500 ռուբլի. Բարսեղեանը յուլիս 6 թւակիր նամակում գրում է, որ ուղարկեց 500-ական Մոնտէի եւ Հայ-սուրբի (Տէր-Տէրի) հասցէին. այդ ստացել է եւ դա 1000 ռուբլի է, այն էլ 2 մարդու հասցէին: Այս բանը ստուգեցէք եւ իսկոյն մեզ գրէք. ուղարկեածը Գֆորգեանի չէքով էր, Տէր-Մկրտչեանի ուղարկածը...

Թորգոմի եղբօր հասցէին գրեած նամակները դուք եւ Բիւրոն երկրորդելու էք, որովհետեւ մեր դրած հարցերի պատասխանը դեռ չառանք:

Հրաւիրագիրը ստացեց եւ հարցերի ցուցակն էլ ուղարկեց: Մենք էլ հաւաքեցինք եւ խորհրդակցեցանք: Վճուեց, որ Շամի կողմից թորգոմ, իսկ Լեռնապարի կողմէն դուն: Առայժմ դրեց հետեւեալ պահանջները Շամի համար. դրամ՝ 20.000 ռուբլի. ծայր՝ (հին-նոր) 30 հազար հատ. կոթ՝ 100 հատ. խմոր՝ 5-10 փութ: Դրան կից, եղած կոթերը վերանորոգելու համար 50-60 կարողակա եւ զատուր: Առանց դրանց մենք 10 նոր հրացան չէինք ունենալու: Ի դէպ, Աստուծոյ սիրոյն, մի պատրոննիկ փորելու գործիք (ուռեցնողների, թէ հնի եւ թէ նորի), պատրաստել տէք եւ իսկոյն ուղարկեցէք: Քանի անգամ խնդրեցինք, եթէ կարող է Ջրաբերդի Միհրանը կամ ոեւէ մի զինագործ [ուղարկէք]: Այս պահանջներից մի քիչ աւելին դրել է եւ Լեռնապարը: Սա միայն մի տարում փոխադրելու չափ է. եթէ առաջիկայ տարին այսչափ փոխադրեցինք, յետոյ նորէն կը գնենք: Պահանջները անելու են զատ-զատ: Դրամները նոյնիսկ զատ-զատ պիտի ուղարկեն: Այս բանից չհասկնաս որ իրար հետ լարեած ենք այդ պատճառով զատ-զատ ենք դրել.— այդ անում է մի քանի գործնական նկատումներով: Վճուեց Գրիգորին այս սեզոնին անպատճառ ներս բերել. Սամսոնին նոյն կերպ: Չհասկցանք ժողովը երբ պիտի լինի. հրաւիրագրում անորոշ է:

Մեր դրութիւնը.— Երեւում է որ սեւ սուգի օրերը շուտ պիտի մօտենան. գէշ լուրեր է ստացւում Դիարբէքիրէն, Շապին Գարահիսարէն, եւն. եւն.: Կառավարութիւնը լուռ ու մոռնջ պատրաստութեան մէջ է: Անցեալ օրը էրզրումէն եկաւ 6 դաշտային թնդանօթ: Ջանբեգարները եւ քիւրդ էլ — աղասիները շարժման մէջ են: Կոտորածի երկիւղը դամոկլեան սուրի պէս կախել է ժողովրդի գլխին: Ընդհանուր յուսահատութիւն է, մանաւանդ որ քաղաքական պայմաններն էլ աննպաստ են. այն ժամանակ, երբ Եւրոպան իր գէնքով ճնշում է կրետական [ապստամբութիւնը]:

Բայց ինչպէս գիտես ծայր չկայ. ի՞նչ եղաւ ժողովրդեան ծայրեր գնելու խնդիրը. մոռացա՞նք:

Ներքնապէս մեր դրուժիւնն էլ շատ աննախանձեւի է. զինւորներից բոլորովին մաքրւեցինք. դուրս եկաւ Մուռը, Գասպարը. Թուշուկն իր լրբուժեան համար վռնտեցինք. արդէն փորձած զինւոր չմնաց ոչ մեր եւ ոչ Իշխանի քով: Ներքնապէս կազմալուծուում ենք, բայց չգիտենք պատճառը ի՛նչ է: Դուրս գալու համաճարակ է ընկել մէջերնին, յամեն[այն]դէպս պատճառներից մէկն այն է, որ դուրս եկողներին թէ վրէժուում եւ թէ Սարուստանում շատ երես են տալիս կամ ընդունում զինւորներին շարքում. հէնց այդ բովանդակութեամբ էլ նամակ են գրում հոս եղածներին եւ դուրս հրաւիրում նրանց: Նոյնիսկ մի ինչ որ է Սեպուհ ինքնագլուխ թոյլ է տալիս իրեն նամակ գրելու Սարհաղին եւ Կորիւնին, ներկայացնելով արտասահմանի դրուժիւնը, որ իրեն օգնութիւն չպիտի ուղարկեն, աւելի լաւ կը լինի դուրս գալ ամբողջ ընկերներով: Նամակը վար դրինք եւ վճռեցինք ի՛նչ գնով էլ լինի Սարհաղին երկրում պահել:

Դուրանի Ալվառինջ գիւղում նորէն դէպք է եղել. սպանուել են 4 գիւղացի եւ 4 ասկարներ:

Նամակների համար ի նկատի ունեցէք եւ այս հասցէն. Տոք. Ռէյնուդս — յանձնել տիկին Սըմայ Կարապետեանին\*\* կամ Աննա Մարկոսեանին\*\* կամ Սաթենիկ Կիրակոսեանին\*\*, պարբերաբար գրեցէք այդ հասցէներով, մենք կը ստանանք: Գրել էիք որ դրամ ստանալուց հեռագրենք, բայց որի հասցէին, այժմ չգիտենք, թէ ո՞վ է մնացել, ով է փոխել: Ոսկանապատում կան մի քանի արձակցիներ. նրանք դրամ են հաւաքել գիւղի համար 30-50 ոսկի. իրենց գիւղացիք խնդրում են որ ստանաք եւ մեզ ուղարկէք իրենց գէնք առնենք. դիմեցէք այս հասցէով

Կրասնովսկայա, Չաֆարով — Համբարձումեան — Ղլաթեանի տուն\*\*:

Այս մասին կարգադրութիւն արէք:

Է՛հ, էլ ինչ գրենք. ձմեռը գալիս է. սարերը արդէն ձիւնել են. մեր օրերն էլ սեւացան: Իշխանը կը գայ մեզ մօտ: Վարդանը եւ Մինասը կը մնան հոն:

Բոլորս էլ լաւ ենք: Թորգոմ եւ Սուրէն շուտով կը գան դէպի ձեզ:

Համբոյրներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. հոկտ. 11ին

Շամ

**Սիրելի Գարեգին!**

Նամակները պատրասել էինք երբ եկաւ լօ-լօն. հետը բերաւ բոլոր ուղարկւածները: Գրքերի եւ թերթերի մասին յատուկ շնորհակալութիւններ. բայց 100 հատից աւելի մի ուղարկէք, ամենաշատը 130 տալու էք. No 8-ից եւ յաւելւածից շատ են ստացել այս անգամ, ուղղակի աւելորդ էր. Ընծայրը Ջաֆարին հետ մի բեռ ուղարկել էր: Ջաֆարին դրկող ընկերների հետ ուղարկեցինք ապրանքները բերելու. 20 օրը լրացաւ դեռ խաբար չկայ, չեմոտանը<sup>1</sup> ինչ եղաւ. Մարգիւ-ը\* թող շտապէ իր տեղը. ամենագլխաւորը՝ ապրանքները կենտրոնացրէք հոն: Արդէն գիւրութիւններ շատ կան, մի երկու ոտքով կը վերջացնենք եթէ բոլորը պատրաստ լինեն:

Մեր հաշիւներից երեւում է որ եկած ապրանքների 1/3-ն է կորել ոչ 1/2ը, ինչպէս դուք էք գրում: Նորից ենք կրկնում՝ հաշիւները ստացէք Մենաւորի հաշիւների հետ:

Վրէժից եկած մասերը չնչին բաներ են. այդպիսի մասերով անկարելի է գոհացում տալ ժողովրդական պահանջներին. մնացածները եւ գալիքները շուտ հասցրէք, որ ձմեռայ չընկնի եւ անգործադրութեան մատնւի:

Վրէժի նամակներին կը պատասխանենք յետոյ. Սեպուհից յետոյ էլ մի ի՛նչ որեւէ անհատ է խորհուրդ տալիս Սարհաղին դուրս գալու համար. ե՞րբ պէտք է վերջանայ այդ անկանոնութիւնները: Այդ նամակն էլ վար դրեց: Եթէ այդպիսի բովանդակութիւններով շարունակեն նամակներ գրել եւ երկրի ընկերների թիւրիմացութիւնների մէջ ձգեն, մենք կը դժարանանք այսուհետեւ ընկերական եւ ընտանեկան նամակները անգամ փոխադրել. լաւ քննելու ապա է ճանպելու նամակը:

Այսօր գէշ լուրեր առանք Սարհաղից-Ալվառինջի դէպքի մասին խօսում են որ 12 հոգով է եղել, բայց դրանից բոլորը ընկել են. գիւղը ամբողջապէս վառւել է: Սպանւած է գիւղացիներից մօտաւորապէս 100 հոգի... գօրքերից 4:

Այս տարի մեր օրը սեւացաւ, գոնէ մի քանի կոթեր հասցրէք, որ դէպք պատահած դէպքում նամուսով շարժենք:

Եթէ լօ-լօն բերաւ ուղարկելու ենք մի րադիֆ, փախչողներից:

Համբոյրներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

12-ին հոկտ., Շամ

Յ. Գ.— Եղած մասերը քո գծով ուղարկիր: Այստեղ ժամանակին ստացւում է Թիֆլիսի եւ մայրաքաղաքի (ուռս) թերթերը. առհասարակ նեղութիւն մի կրէք հին լուրերը հաղորդելու. ստացւում է «Մուրճ»:

ՆՈՅՆ

Հրաւիրագրերը մեզ արդէն մեծ քանակութեամբ ուղարկւած է:

1.- Պայուսակը, ճամպրուկը:

**Սիրելի Սարման<sup>1</sup>!**

Այսօրւայ նամակդ ստացայ, կարիք եմ զգում մի քանի բացատրութիւններ տալ. քանի որ ինքը ինձ տեսնելուց յետոյ նորէն եկաւ ձեր քով եւ ո՞վ գիտէ ինչ հրէշաւոր կերպով ներկայացրեց ինձ:

Հարցը նրանումն է, որ այդ ինչորդ այնքան պարզ եւ այնքան արդարութիւնից հեռու է, որ նոյն իսկ կուսակալ եւ ընկերութիւն խղճի դէմ համարելով աշխատել են լուծում տալ այն ձեւով, ինչ որ ժողովուրդն է ցանկանում կամ մենք ենք ուզում: Բայց մի կողմը թողած այդ, թէեւ մենք իրաւունք ունէինք այդ հիմք ծառայեցնել եւ ազմինխտարային ձեւով<sup>2</sup> վճռել արձակել, մենք առաջարկել ենք նրան, նոյնպէս եւ ձեր ուղարկած պարոնին, որ մեզ մուրհակ տան 200 ոսկու թիմարի մարդու անունով ու զան տրաքուելու. թէ մեզ չեն վստահանում մուրհակը կը տանք ձեր քով կամ մի որեւէ չէզոք մարդու քով. ոչ նա եւ [ոչ] էլ սա չեն համաձայնում այդ դրական պայմանին եւ պնդում են որ ազատ արձակենք եւ այնպէս դատենք. իսկ եթէ չընդունեցինք կամ չներկայացան, ո՞վ պիտի լինի պատասխանատուն, ոչ ոք: Ուղարկածդ մարդը առաջարկում է ինքը նրա տեղ նստել. եթէ մարդ պահելու լինենք կը պահենք իրեն եւ ոչ կողմնակի մարդկանց:

Նրա ընկերների վտանգելը այնքան կարեւոր է մեզ համար որքան հասարակութեան խղճի հանգստութիւնը. հարցրէք առաջի պատահած մարդու եւ կը տեսնէք ինչ ողբերգական ձեւով կը ներկայացնեն թիմարու մարդու դրութիւնը եւ որքան լիբը նրանց դիրքը: Պատճառաբանում են որ սա գործողութիւնից տեղեակ էլ չէ. ա.- դա սուտ է, բ.- նա եթէ տեղեակ էլ չլինի գիտակցութեամբ գործիք է եղել իր մեծ եղբոր ստոր ինտրիզներին<sup>3</sup>, վերջինը փախած լինելով. նրա մեղքը սա է քաւելու, այս է պահանջում եւ հասարակական եւ յեղափոխական բարոյականութիւնը: Այդպէս էլ վարւելու ենք մենք: Եթէ այդ լիբը հարուստներից մէկին վաշխառութեան համար կախաղան չհանենք, մնացածները գոնէ ժամանակաւոր չեն դադարի լրբութիւններ անելուց — չէք իմանում թէ դրանք ինչե՛ր են անում գիւղում, չտեսնած չլսած անաստածութիւններ: Ա՛խ երանի թէ մի օր մեր տեղը լինէիր եւ ժողովուրդը անկեղծութեամբ եւ հոգու ամբողջ մերկութեամբ եւ Ֆիզիքական մերկութեամբ քեզ իր դարտերը ներկայացնէր. այն ժամանակ սիրում եմ հաւատալ, որ նոյն իսկ այդ լրբին թոյլ էլ չէիր տայ որ բացատրութիւն տայ:

Այսքանն էլ իմացիր որ դա քեզ մօտ եկել է որբանոցի լրբերի թելադրութեամբ:

**Բարեկներով՝ ԱՐԱՍ**

1905 թ. 17 հոկտ.

**Յ. Գ.— Ռուսերէն նոր եւ հետաքրքիր գրքեր ենք ստացել:**

1.- Մալման – ծածկանուն Համազասպ Բաղէշցեանի:  
2.- Վարչական եղանակով:  
3.- Չարախօսութիւնների, քանսարկութիւնների:

**Միրելի Տիգրան!**

**Ստացանք քո 16 հոկտեմբեր թվակիրդ.**

1- Նեղուցի<sup>1</sup> քահանայի դրամը կը մնայ մինչեւ քո գալը:

2- Ուղարկուում է մի ձեռք պատրոնդաշ<sup>2</sup> քեզ համար լիքը: Ծովաբերի<sup>3</sup> հրացանը չտուկեց. այս գիշեր երեւի կը տանեն գիւղ (կազմակերպական):

3- Ազաների, կատուի եւ վառօդի մասին միջոցների ենք դիմել: Այն լիրբ Տաճիկը որ մեր 3000-ը մեզ ծախեց, 1500 հին բայց շատ փչացած ծայրեր է բերել. հազիւ կարելի է մէկ-մէկ անգամ վառել, այն էլ գիլգիւն<sup>4</sup> մէջը կը մնայ: 60 փարա ենք առաջարկել. չգիտե՞նք ունենք թէ ոչ, եթէ մենք չառնենք, երեւի ժողովրդին թանգ գնով կը ծախէ:

4- Բողոքականների ոչխարները տանելը ճիշտ է. գնացել են գտնելու. Աստուծով կը գտնեն:

5- Շամուամ օրւայ նորութիւնը՝ մեր ձեռքով ջոջերից մէկի բանտարկուութիւնն է, դատական խնդրով: Մենիկի փեսայի խնդիրը տեսնեք ինչ կը լինի:

6- Քաղաքական աշխարհը փոթորկեց: Անգլիական դեսպանը հեռացել է Պոլսէն սեպտ. 24ին. մի ինչ որ է երկաթուղային գիծ, որ խոստացած էր Անգլիային, Գերմանիայի ճնշման տակ մերժ[ւ]ել է. իբրեւ ցոյց դեսպանը հեռացել է. իսկ երէկ լսեցինք որ հիւպատոսներին էլ են կանչել եւ 40 գրահաւոր եկել են Պոլսի առաջ:

Տեսնենք ի՞նչ դուրս կը գայ. ընդհանուր նշանակութիւն էլ չունենայ, երեւի կոտորածների լուրը ժամանակաւորապէս կանգ կ'առնէ. հասկանալի պատճառներով, այս գէշ ժամանակում հայկական հարց յարուցանելը խոհեմութիւն չի սեպւի:

7- Կոմսից նոր նամակ առանք Մենաւորէն: Նորութիւններ քիչ կան. հնի կրկնութիւնն է: Նոր դրամ ստանալու յոյս չկայ. մնաց Արեւմ[տեան] Բիւրոն: Ինքը եւ Գրիգորը գացել են Նախիջևան տեղական գործերով:

8- Իշխանի համար այսօր մի պարտիա ապրանք էլ ենք ուղարկում:

9- Եթէ կ'ուզես ժողովրդական գէնքերի համար մատուցերի ծայրեր, գնենք. դրանից շատ է գտնուում: Վերջերս 1500 գնեցինք, ուղարկում ենք Իշխանին:

Մաշտոցը դուրս է եկել, իրեն բաւական վատ [է] զգում:

10- Գնացող ընտրութիւններից լուր չկայ: Չափարը նոյն օրը եւ Բրախուլամը հասել են Մենաւոր, բայց ապրանք չլինելով գնացել են Աւարայր բերելու: Դեռ չեն եկել: Չալիկից լուր չառանք դեռ:

Տղաները մի երկու օր է հոն չեն. գործերով զբաղւած են. Թորգոմը եւ Սուրէնը գուցէ այս 2 օրերս գնան:

**Բարեւներով ԱՐԱՄ**

1905 թ. հոկտ. 18, Շամ

1.- Նեղուց – ծածկանուն Կոռնուպաշ գիւղի, Վան-Տոսպ գաւառակ:  
2.- Փամիշտակալ:  
3.- Ծովաբեր – ծածկանուն Ծվստան գիւղի, Վան-Տոսպ գաւառակ:  
4.- Գիլգիւն պարկուճն է, դատարկ փամփուշտ: Ազա, կատու եւայլն՝ զէնքի մասեր են:

**Միրելի Տիգրան!**

Արդէն ստացած կը լինիս նախկին նամակս. նրա մէջ գրւած 1500 հին ծայրը գնւած է հատը 60 փարայ. մարդիկ ուղարկիր փոխադրե՛նք. քանի այդտեղ ես ցրիր եւ դրամներն էլ հաւաքիր:

Թորգոմ, Սուրէն եւ Բաբկէն վաղը իրիկուն կ'երթան: Ջաֆարը եկաւ. հետը բաւական ապրանքներ բերեց. քեզնից յետոյ ուղիղ հոս 8000ի չափ ապրանք ստացանք. ճանապարհին 2000-ի չափ մնացել է: Դրանով էլ երեւի կը վերջանայ ամէն բան: Իշխանի բաժինը ամբողջութեամբ այսօր փոխադրեցինք:

Նամակներ ինչո՞ւ չես գրում. գործերը սարսափելի շատ են, իսկ ես մենակ: Յարութիւնը վերադարձաւ. շուտով կ'երթայ Ա. ենթակոմիտէի շրջան:

Բարեկներով  
ԱՐԱՄ

21 հոկտ. [1905]

**Յ. Գ.**— Թորգոմի եղբօր հասցէին եկած նամակի պատճէն հանեցինք, ոչինչ չկար. Բարսեղեանի գրածն էր:



**Սիրելի Տիգրան**

*Ուղարկում եմ «Մշակ»ներ եւ «Հայրենիք»։ Կարդալուց յետոյ ուղարկիր Իշխանին եւ նրան նամակով շտապեցրու հոս, որ կարողանանք տեղեկագիր պատրաստել քանի ուշ չէ։*

*Կը ստանաս ներփակ եւ մի քանի նամակ ինձ եւ Ռուբէնին, կարդալուց ուղարկիր Իշխանին։*

*Դրութիւնս շատ գէշացաւ. դրամական տագնապի մէջ եմ, այժմ 30 ոսկու չափ պարտք կայ. տղաների գնալը 50 ոսկի նստեց։ Շատ պիտի նեղուենք ձմեռը. այդ կողմը եղած տաւար եւ ոչխար ուղարկիր Նեղուց<sup>1</sup>։ Մանաւանդ այիւրները, հացի սով է... Գոնէ մի քանի կարեւոր ուսեյիքներ պատրաստենք, որ անօթի չմնանք. առայժմ կայ 2 ամսւայ հաց, չայ, շաքար։ Լաւ կը լինի որ 10-ական լիտր սոխ, բողկ եւ կարտոֆիլ ճարես։ Եթէ հանգանակես լաւ կը լինի. եթէ ոչ էժան գնիր եւ պարտաւորեցրու որ տեղափոխեն հոս։ Եթէ կարող ես մի լիտրի չափ էլ Փասուլիա ճարիր։*

*Գրիր Իշխանին որ մեզ անպատճառ փայտ ուղարկեն, ցրտից կոտորւում ենք եւ աւելի պիտի գէշանայ։ Մաշտոցը դժբախտաբար նորէն հիւանդացաւ հէնց մի քանի ժամ առաջ, տեսնենք ինչպէս կը լինի, ոչ մէկս պալտօ չունենք. իմ հինը Թորգոմը տարաւ. դրան հետ եւ նոր սեւ պինժդակս<sup>2</sup>։ Կոմսը Նախջեւան լինելով՝ դրամի յոյս չկայ։*

*Այստեղ ուրիշ նորութիւններ չկան։ Մթերքների կանոնաւորման գործով եմ զբաղւած։*

*Քո հետ եղած ընկերներից ոչ մէկին խօսք չես տալ վերցնելու. պոլրակցիներից<sup>3</sup> 2ը մնացին — Սողոն եւ Միհրանը — մնացածները ճամբու դրի։*

*Առայժմ դուրս ուղարկելու մարդ չմնաց։*

*Տեսնենք յետոյ ինչ կը լինի։*

*է՛հ, Մաշտոցի հիւանդանալը շատ վատ ազդեց վրաս։*

*Առայժմ այսքանը, Մուշեղին պատւիրիր որ ապրանքները շուտ ներս ուղարկէ. Իշխանը նրանց է սպասում։*

**Բարեւներով  
ԱՐԱՄ**

1905 թ. հոկտ. 26

**Շամ**

1.- Նեղուց – ծածկանուն Կոռուպաշ գիւղի, Վան-Տոսպ գաւառակ։  
2.- Պիջակ – կիսաքաճկոն։  
3.- Պոլրակ – ծածկանուն Խլաթի, Պիթլիսի Պոլսանուխ գաւառ։

**Սիրելի Տիգրան!**

**Ստացայ վերջին նամակդ. պատասխանում եմ դրած հարցերիդ:**

1. 2000 ծայրը կորած չէ, այլ կիսաճանպին է:

2. Թորգոմ եւ ընկերներ դացել են. հետեւանքների մասին անհոգ եղիր. ոչինչ չի պատահի. ոչ մի բան չկայ յոռետես լինելու:

Թաթուլի խումբը ներողութիւն խնդրելով նորէն ընդունեց: Առայժմ ինձ մօտ նոր մարդիկ չկան, բացի Նիկոլից, որ, երեւի լսել ես, արդէն փախստական է. 5 տարի կտրել են. նրանից ոչ մի վնաս չեմ սպասում:

3. Համոյին դեռ չեմ տեսել. տեսնելուց յետոյ պիտի առաջարկեմ հաւասար իրաւունքով միայն ինքը կազմի մէջ մտնէ:

4. Սուրէնի եւ Բաբկէնի գործը առայժմ ոչ ոքի չի յանձնւած, իմ մասնաւոր հոսկողութեան տակ է. յետոյ պիտի ծանօթացնեմ Թաթուլին եւ իր ընկեր Ջաքուչին եւ մեր զինւորներէն մէկին: Անհնարին եղաւ անձամբ ստուգել, թէ ինչ ունենք չունենք, միայն գրեցի թէ որ տեղ ինչ կայ: Բացի գաւառից: Այդ մասին եղած մնացած խնդիրների մասին կը խօսենք անձամբ:

5. Ծայրերի մասին թէեւ գրած էր, բայց չկարողացայ ուղարկել:

6. Չալիկը եկաւ. հետը բերել էր 4-5 փութ խմոր եւ պարագաներ եւ մի քանի մասեր:

Լիրբը շատ թանգ նստեց, այնտեղ ահագին քանակութեամբ բաներ է առել. մօտ 600 ծայր են տուել եւայլն, եւայլն. մօտ 1000 ռուբլի նստեց երկու ոտքը:

Ինչ եւ է. նամակներ են գրել. լիքը դատարկութեամբ. Ջրաբերդը քայքայել եւ երկպառակել է: Գրողները պարտիզաւանցիք են. քեզ բարեւում են. չգիտեմ որտեղից են ճանաչում:

7. Ամենահետաքրքիր խնդիրը Սարհադինն է. նա այս տարի հոն ապրել չի կարող. ես համաձայն եմ նրա 3-4 հոգով մեր շրջանը գալուն. գրել եմ Իշխանին, որ իրանք էլ խորհեն, դու էլ քո կարծիքները գրիր Իշխանին:

8. Ըստ քո խորհրդի այս վերջին ապրանքները – Չալիկի բերած – ուղարկեց Տոհմիկ<sup>1</sup>: Կարգադրեցէք իսկոյն փոխադրեն, թէ նախկինը եւ թէ սա, ահագին ապրանք է:

1500ի մի մասը կը տրւի այստեղի գիւղերին: Յարութիւնը<sup>2</sup> մօտաւորապէս 100 ոսկի դրամ է բերել: Ձէնքեր գնւում է:

Քաղաքական աշխարհում նորութիւն չկայ եւ առիթ չեմ ունեցել հետաքրքրե-

1.- Տոհմիկ – ծածկանուն Իշխանիգոմ գիւղի, Հայոց Չոր գաւառակից մէջ:

2.- Յարութիւն Սիրաբեան, Ամերիկայէն եկած եւ Արամի հետ Կովկասէն անցած Ատրպատական, ապա Վասպուրական:

3.- Մաշտոց, Մակուեցի Մեսրոպ, իսկական անունը Մեսրոպ Աւետիսեան:

լու. այնքան զբաղւած եմ որ քիթ սրբելու ժամանակ չկայ:

Թերթեր շատ կան. բայց համբերութիւն ունեցիր հոս գալու... մենք էլ չենք կարողացել:

Մաշտոցը<sup>3</sup> լաւ է, կը բարեւէ:

Համբոյրներով  
ԱՐԱՄ

1905 թ. հոկտ. 23

Շամ

Փաստ. 468-261

## 167

Արամի քելադրած եւ Մաշտոցի (Մակունցի Մեսրոպ) կողմէ գրի առնուած գրութիւն է Թադէի վանք ուղարկուելու համար:

Սիրելի Տեղացի,

Ձեզ ներկայացող Գ հոգի տղաները, որոնց որտեղացի, կամ ինչ մարդ լինելը արդէն վկայագիրներէ մէջ նշանակուած է, առանց Աւարայր կամ Մինարէթ ուղարկելու, հէնց Քիչմիշթափի գծով ղրկէք թող գնան: Դու գրում ես որ մարդ չուղարկեն, բայց մենք ընդհակառակն ենք անում. թափուած են գլխներէս, ի՛նչ պիտի անենք, ստիպուած ենք ուղարկել, մի կերպ հաւաք[?] արէք:

Հին թերթեր եւայլն ուղարկելն աւելորդ է. ի՞նչ պիտի անենք, բեռ ենք շինում ուրիշ ոչինչ. երեւի այս եկողները վերջինը պիտի լինեն, եթէ ուրիշ անակնկալ չպատահի:

Յամենայն դէպս՝ այդ կողմով յարմարութիւններ պիտի ստեղծէք, որ եկողները թէ՛ ձեր գլխին չծանրանան, եւ թէ՛ ստիպուած չլինիք Մինարէթի կողմեր ուղարկել:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

Պ. Արամի մի քիչ տկար լինելու համար ես գրեցի երկատոր: Թերեւս լսած կը լինես որ տկարութեան պատճառով հիւանդանոցում պառկեցի բաւական ժամանակ, այժմ առողջացած դուրս եմ եկել, եւ կը մնամ պ. Արամի քով:

Բարեւներդ ստացել եմ ժամանակին եւ փոխադարձ բարեւել քեզ:

Բարեւէ Ընծայրին եւ ընկերներին: Վաղուց է որ մեր տանից նամակ չեմ ստանում: Եթէ յարմարութիւն ունիս տեղեկացիր, թէ ինչպէ՞ս եմ ապրում. եւ ինչո՞ւ չեմ գրում, եւ եթէ նամակ կը լինի դրկէ սուրհանդակների հետ:

ՄԱՇՏՈՑ

905, հոկ. 27-ին

Շամ

**Միրելի Տիգրան!**

Երէկ գիշեր (28-ի լոյս 29-ի) Ջաֆարը երկու լօ-լօների հետ վերադարձաւ հոս: Տղաները ապահով տեղ են հասել եւ Մենաւորից երկրորդ օրը մեկնելու են Աւարայր:

Ջաֆարը բերել է 2 հազար նոր ծայր եւ նոր կոթ եւ մէկ հին: Նոր կոթերից մէկը իսկական է եւ կազաչի<sup>1</sup>. դա կը պահեմ քեզ. հոտը չհանես: Իրենց հետ տարած 3 տասնոց ատրճանակներն էլ յետ են դարձրել: Ուրեմն այս օրն էլ շատ յաջող եղաւ եւ շատ էփան. այդ բոլորի համար տւինք ընդամէնը 4 ոսկի:

Ապրանքները բոլորովին վերջացաւ Մենաւոր եւ Մինարէթ: Ընծայրը գրոււմ է որ Ջաֆարը մի լօ-լօ-ի հետ թող գայ, վերջին մնացորդ մանր մուկնր բաները տանէ:

Երկու երեք օր հանգստանալուց յետոյ կ'ուղարկեմ: Է՛հ այս բոլորը լաւ է. բայց դրամ չկայ ու չկայ: Այս ամսին 40 ոսկի պարտք մնաց. երէկ հագիւ հագ կարողացայ 4 ոսկի ճարել եւ սուրհանդակներին վարձատրել. դրուժիւնս շան դրուժիւն է. ամէն կողմից պահանջ, բայց ոչ մի կողմից նպաստ...

Չգիտեմ ինչպէս պիտի լուծուի դրամի խնդիրը. Իշխան եւ ընկ[երներ] 300 ոսկու չափ դրամ ունեն. եթէ նոցանից պահանջելու լինենք ինչպէս կը լինի: Երբ մենք տեսակցուժիւն ունեցանք հոն այդ հարցը ես դրի. բայց ինձ պատասխանեցին որ ձեր գնած 14 մարտինին տւէք մեզ, դրա փոխարէն ձեզ դրամ տանք. ինչպէս կարելի է անել այդ քայլը, մանաւանդ որ գնացողներին ասել [ենք] որ մեզ համար է. այդպիսի քայլ եթէ անենք, կամ ասելու են գէնքերը ծախեցին կերան, կամ թէ ապօրինաբար գէնքերը հոն ուղարկեցին... ինչ եւ է:

Մնում է առաջմ ծախսել գէնքի դրամներէն, որից արդէն 10 ոսկու չափ գնացել է. իսկ սա էլ հին յիմարուժիւնների կրկնողուժիւնը կը լինի:

Բայց ինչպէս անել. Աստուծոյ ողորմութեամբ գծերը փակեց. եթէ չփակէին էլ ես պիտի փակէի, որովհետեւ առանց դրամի փոխադրուժիւն չի լինի...

Բայց ինչպէս բաւարարուժիւն տալ Պապիկի եւ ընկ[երներ] պահանջներին<sup>2</sup>. որտեղից նրանց դրամ հասցնել. ահա ամենադժուար խնդիրը. դեռ մի կողմն եմ թողնում ընթացիկ ծախսերը եւ ապրուստի կարիքները:

Կարող ես արդե՞ք մի քանի ոսկի դրամ հասցնել ինձ գոնէ մի ամսով:

Իշխանից լուր չ'առար. ո՞ւր մնաց այն տնաչէնը:

Մաշտոցը գնաց նախկին տեղը հիւանդանոց\*\* այժմ մի քիչ լաւ է գգում իրեն:

Ուրիշ նորուժիւններ արդէն չկայ:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

1905 թ. հոկտ. 30-ին

Շամ

1.- Կազաչի – կոզակներու գործածած հրացան:  
2.- Խօսքը կը վերաբերի Գիսակի (Պապիկ) եւ բանտ գտնուող միւս ընկերներուն:

**Միրելի Թորգոմ!**

Ուրախութեամբ առանք ձեր Մենաւոր հասնելու լուրը եւ նամակները. երանի միւս ձեռնարկների մէջ էլ նոյն յաջողութիւնը ունենաք: Առանց դժւարութեան յաջողութիւն չկայ: Տոկացէք եւ յաջողութեանց ձգտեցէք:

Դրութիւնս սարսափելի դարձաւ. չեմ խօսում մենակութեան, գործի շատութեան, զանազան վայրահաչուութիւնների մասին. դրանք կարող էք երեւակել: Բայց անտանելի է դրամական տագնապը. թէեւ ձեր ներկայութեամբ հաշւեցինք 30 ոսկի մնաց, բայց չարսուի<sup>1</sup> պարտքերը գոցելուց յետոյ դեռ 6 ոսկի էլ պարտք մնացինք: Ձեր սուրհանդակներին վարձատրելու համար 4 ոսկին մինչեւ ճարեցինք երեսներնիս սեւցաւ. ախր գիտես է՛հ... Պապիկը դրամ ուզեց, գրեցինք որ չկայ: Այս բոլորը մի կողմը թէեւ ցաւ, բայց կայ աւելի մեծ ցաւ. արդէն գիտես որ Սլաքի<sup>2</sup> համար 15-20 ոսկի է հարկաւոր, դեռ 20 ոսկի էլ հիւպատոսին: Սրա վրայ աւելացաւ եւ պ. Մոնդէի առաջարկը քեզ յայտնի գործի վերաբերմամբ — նա առաջարկում է որ մենք 55 ոսկի տանք, նրան կաշառքով ազատելու համար. պայմանները լաւ են. նպաստաւոր է վստահելի մարդոց ձեռքով պիտի լինի. բայց այժմ ես որտեղից կարող եմ տալ այդքան գումար եւ այն էլ սկզբից... Չկարծես թէ իբրեւ գանգատ եմ գրում, եթէ այպիսի տրամադրութիւն ունենայի հէջ էլ չէի գրել, որովհետեւ գանգատելուց ի՞նչ դուրս պիտի գայ:

Ընթացիկ ծախսերը կրճատելու համար, ստիպւած եմ բոլորին Յարութիւնի հետ քշել Ա. ենթակոմիտէի շրջանը եւ մենակ մնալ. ինչ կ'ուզի թող լինի. գոնէ հանգիստ խղճով կ'ապրեմ... Մաշտոցը հիւանդացաւ միայն այն պատճառով որ պալատ<sup>3</sup> չկար որ հագնի. իսկ դրամ էլ չկայ նորը կարել տալու. պարտքով արդէն ես արքայութիւն չեմ գնայ. ինչ կ'ուզէք ասեցէք. կամ որից պարտք առնել:

Ես Սարուստանէն յոյս բոլորովին կտրել եմ. մեզ համար ամենաջերմ մտածողը Կոմսն էր. երբ նա էլ գնացել, խրոնել է տեղական գործերի մէջ այն աստիճան, որ Չալիկը 10 օր մնացել է Պարտիզաւան<sup>4</sup> եւ չի կարողացել նրան անձամբ տեսնել եւ շուտով յետ դարձել հակառակ իր խոստումներին: Կ'ուզէի նրան նամակ գրել բայց շատ էի գայրացած, պէտք էր շատ զօրեղ կերպով բողոքէի նրա անտարբերութեան դէմ. մէկ էլ մտածեցի, որ ես տանջւում եմ, բաւական չէ՞, ի՞նչ բարոյականութեամբ ուրիշներին էլ տանջանքների մէջ ձգեմ, դու արդէն կը տեսնես եւ կը խօսես:

Եթէ Աստուած մի արասցէ Մենաւորում կամ այլ վայրերում ապրանք լինէր, ստիպւած պիտի լինէի փոխադրութիւնն էլ դադարեցնել: Նոյնիսկ սուրհանդակներին 20 դահեկան էլ չեն տալիս ճանապարհին ծախսելու համար. դեռ մի կողմը թողած վարձատրութիւնը, որ այս ամբողջ տարին մենք տւինք, ինչո՞վ պիտի արդարանան Վրէժի պ. պ. ընկերները...

Չալիկի բերածները ստացւեց. բաւականաչափ իրեր են. բայց շնորհիւ Կոմսի բա-

ցակայութեան լաւ քամել է պարտիզաւանցոց. երեւակայիր միայն 600 հատ ծայր է նուէր ստացել եւն եւն... Նրանց յայտնիր որ իրերը ամբողջութեամբ ստացուեց: Զիւների պատճառով չեն կարող գնալ. լիբբ շան որդին էլ 3 ձի է բերել եւ մերժում է հոս ուղարկել. տեսնենք վերջը ինչպէս կ'անենք: Աստուծոյ սիրոյն այնտեղից ձեռք քաշեցէք որ սարսափելի թանգ է նստում: Աշխատեցէք Մենաւոր հասցնել Ծռու գնացած ճանապարհով:

Այստեղ արդէն նորութիւն չկայ, ասենք գործից էլ աչք չենք թափում նորութիւն իմանալու համար: Աստղիկը առանց ասելու թողեց եկաւ այդ կողմերը, Շէյխի երկրով...

Արհեստաւորենց տունը ես կարծել եմ մեր դրացու տունն է. (Գրի քով) բայց բան հարկաւոր լինելով հարցրի. ասացին հոս այդպիսի բան չկայ. սա ինչ թիւրիմացութիւն է: Զլինի դա այն արհեստաւորն է որ Ծռու հրացանի համար կողքի եայ էր շինել եւ որի տունը բանտարկել էինք Նպաստաւորի<sup>5</sup> արջը. այս մասին Սուրէնը թող գրէ...

Սուրէնից եւ Բաբկէնից շատ դժգոհ եմ, կ'երեւայ որ այս վերջերս շատ էին ծուլացել. ապրանքները շատ անհոգ դրութեան մէջ էին, շատերը ժանգոտած, մանաւանդ դրներ:

Տիգրանը դեռ չի եկել եւ երեւի շուտով էլ չի գայ. Սուրէնից եւ Ռուբէնից լուր չկայ. Ի[շխա]նը 8-10ը օրէն հոս կը լինի:

Արդէն մի առանձին փոփոխութիւն չի եղել. նախկին դրութեան շարունակութիւնն է:

Եղանակները շատ ցրտել են. սենեակներում շատ կը նեղւենք ցրտից:

էլ չենք կարողանում նախկին կերպով ուրախանալ. սիրտերնիս մի տեսակ վշտացել է:

Նիկոլը միշտ քովս է լինում եւ բաւականին էլ օգնում է ինձ: Ի[շխա]նը գալուց մանրամասն տեղեկագիր եւ պահանջներ կ'ուղարկենք: Առայժմ այսքանը կ'ասեմ որ խօսքերով չխաբւենք. մինչեւ գործը կանոնաւոր հիմքերի վրայ չդրւի, մինչեւ քո աչքով գործ չտեսնես, չհաւատաս եւ ոչ մէկի գեղեցիկ խօսքերին եւ խոստումներին. միշտ յիշիր ներս եկող ընկերներիս օրինակը. մեզ ինչէ՛ր չխոստացան. բայց ի՞նչ արին. ամենաշատը այն է որ դուք (դու, Կոմս, Գրիգոր) ձեր գործը ձեր ձեռքով սկսէք եւ հաւատացած լինէք, որ շարունակող կը լինի: Միանգամից միանգամ պահանջելու էք եւ կազմակերպութիւններից եւ Երկրի գործին նուիրուող մարդկանցից, որ չի կարելի երկու տիրոջ ծառայել. կամ Երկիր կամ Սարոստան. երկուսից մէկը եւ ոչ երկուսը միասին: Կոմսին յայտնելու ես մեր բոլուն դժգոհութիւնը իր անուշադրութեան պատճառով. շատերը կային մեզ համար մտածող որ նա էլ գնաց Ն[ախիջե]ան:

Վան-Փուշը գրել է Զրաբերդէն որ իր ընտանիքը ուղարկենք իւր մօտ — մենք իրեն էինք սպասում, ինքը ընտանիք [կը] կանչէ, Աստուած մեր վերջը բարի անի: Առայժմ ձմեռայ պատճառով անկարելի է. իսկ եկող տարի Աստուած ողորմած է:

Պարտիզաւանցոց յայտնիր որ ամբողջ ապրանքները ստացուել է: Ռուբէնի եղբօրը (Երևանդ Զրաբերդում<sup>6</sup>. այժմ հեռացել է գործից) յայտնիր որ ստացել եմ Զայիկի հետ ուղարկած նամակը եւ ոչ մի բժշկական դեղ չէին ուղարկել իմ խնդրածնե-

րից. նոյնիսկ Զրաբերդի մարմնից նամակ չկար. ասենք լսելով հոն մարմին էլ գոյութիւն չունի: Երևանդին իմ կողմից բարեւիր եւ յայտնիր, որ ներկայ պարագաներում գործից փախչել, դեռ չմեռած, ամօթ է. մեր կոչ[ու]մն է կուսել եւ գործը միշտ բարձր պահել զանազան բախտախնդիրներից, եւ ոչ տեղի տալ եւ գործը թողնել զանազան չարչիների եւ էֆէնդիների ձեռքը... Նոյնը յայտնելու ես Հանգոյցին<sup>7</sup> (Նիկոլ) սա էլ Զրաբերդ է:

Աշխատեցէք «Արշալոյս» թերթը ուղարկել Գարեգինի գծով: Գրքեր չմոռանաք ուղարկել: Զեզնից յետոյ կրկին մի քանի կտոր գիրք եկաւ նախկին հասցէով, նորէն գրաւեցինք: Գրիգորին (Պալարի<sup>8</sup> վարժապետ) յայտնիր որ թող աշխատէ որքան կարելի է շատ գործեր ուղարկէ: Անգլիական հիւպատոսը գնաց, այդ ի նկատի էք ունենալու: Վերոյիշեալ Գրիգորը Սուրէնին (ենթակոմիտէ – դու չմանա ենթակոմիտէ չլինի ??!) գրել է որ մի քանի ընկերներով կ'ուզէ հոս գալ. տեսնէք ինչ մալեր են – բոլորը չարժէ, բայց այն Գրիգորը եթէ խելքերնիդ կտրեց գարնան ուղարկեցէք: Բայց նախ քան գալը լաւ կը լինի որ այս ձմեռ մի գործնական բան սովորի:

Բոլորս էլ առողջ ենք: Պապիկի հետ յարաբերութիւնը դեռ չենք կանոնաւորել: Նորութիւններ չկան: Սարհաղից նամակ չառանք:

Չմոռանաք Վրէժից ուղարկել Ատրպետի «Երկիրը»: Արհեստանոց պատւիրեցէք որ բերդանի մուշկաներ եւ պրիցեյի մասեր (աստիճան եւ դախտակ թէ կազաչու եւ թէ պիխտու շատ շինեն եւ ուղարկեն. դրանք շատ հարկաւոր լինում: Երկրից կտրելով չմոռանաք Երկրի կարիքները, ցաւերն ու դարտերը: Աստուծոյ սիրոյն դրամ շուտ հասցրէք: Համբոյրներ Սուրէնին եւ Բաբկէնին:

Բարեւներ տուր իմ ծանօթ ընկերներիս:

Համբոյրներով  
ԸՆԿԵՐ

1905 թ. 1 նոյեմբեր  
Շամ

Յ. Գ. – Այս անգամ Զաֆարի հետ ուղարկեցի հոկտեմբերի հաշւեցոյցը. 4636 դահեկան պարտք մնաց: Գարեգինի հաբին[?] մինչեւ հիմա դեռ չի եկել:

ՆՈՅՆ

- 1.- Շուկայի: Խօսքը վաճառականներուն նկատմամբ ունեցած պարտքի մասին է:
- 2.- Սլաք – ծածկանուն Օյսիկեան Արմենակի, որ բանտն էր եւ դատը կը տեսնուէր:
- 3.- Վերարկու:
- 4.- Պարտիզատան – ծածկանուն Կաղզուանի:
- 5.- Նպաստատըր – ծածկանուն Էրեբին գիւղի, Թիմար գաւառակ:
- 6.- Խօսքը կը վերաբերի Ռուբէն Տէր Միմասեանի եղբոր՝ Երուանդին, որ անդամ էր Կարսի (Ջըրաբերդ) Կ. կոմիտէին:
- 7.- Հանգոյց – ծածկանուն Աղբալեան Նիկոլի, որ այդ օրերուն Կարսի Կեդր. կոմիտէի գործավարն էր:
- 8.- Պալար – ծածկանուն Արտամէտ գիւղի, Վան-Տոսպ գաւառակ:

**Միրելի Տեղացի<sup>1</sup>!**

**Ջաֆարը իր ընկերներով տեղս հասաւ, բերելով իր հետ ձեր ուղարկած ապրանքները:**

Հին կոթ (մէկը 10-10-ի)	2 հատ
Նոր կոթ (մէկը մակագին)	2 հատ
Նոր ծայր	2070 հատ
Հին ծայր	2 կապ
10-նոց ատրճանակ	3 հատ
10-նոցի ծայրեր	3 կապ

Այս բոլորը ամբողջութեամբ ստացւեց հոս: Ինչպէս տեսնում էք նոր ծայրերը ձեր գրածից ճիշտ 70 հատ աւելի է. այն էլ չգիտեմ ինչ թիւրիմացութեամբ այդ ամբողջը 70-ը ճեղքւած ու փչացած էր:

Ըստ ձեր պահանջի Ջաֆարին մի 10-10-ի հետ ուղարկում եմ դէպի ձեզ: Ինչ որ կայ հաւաքեցէք տւէք բերէ:

Ցաւում եմ որ այս անգամ չկարողացայ ձեր խնդրած շալը ուղարկել. յուսով եմ որ առաջիկային անպատճառ կ'ուղարկեմ: Ինչպէս լինի մինչեւ գծերը փակւելը կը ստանաք: Չուղարկելուս պատճառը դրամ չլինելն էր. սուրհանդակների վարձն անգամ չկար որ տայի, ստիպւեցայ պարտք վերցնել:

Աւետարանցի Մանուկը դեռ Վարագդատի բերելուց 2000 ծայրի միայն 1000 է ուղարկել, մնացածը լիբը շան որդին մինչեւ հիմա թողել է դուրսը սահմանում:

Աւետարանում<sup>2</sup> բացի այդ հազարից մնացել է եւ Ջաֆարի բերած վերջին 2000ը:

Պարապին ուղարկեցին որ փոխադրէ իրենց գիւղը, իսկ այնտեղից էլ հոս կը փոխադրենք:

Օգոստոսից մինչեւ հիմա միայն 100 ծայրի չափ տարբերութիւն է եղել, եթէ միայն այդ 3000ը անվնաս տեղս հասնի:

Ուրեմն բացի այդ 3000ից մնացածը հասել է տեղս, յուսով ենք, որ այդ էլ այս քանի օրը բերել կը տամ:

Ադաշիս համար ուղարկեցի մի գոյգ սօլ. ոտի չափը չիմանալով միջին չափով ուղարկեցի, իր բախտը...

Այդ ի՞նչ կոնսուլներ է գալու Մենաւոր, այս տարի հարուստ ուխտաւորներ ունեցաք:

Ուղղակի Սարուստանէն մի քանի օր առաջ յաջողութեամբ 3 բեռ ապրանք ստացանք. բոլորը խմոր, 5 փութի չափ:

Ուրեմն սրանով էլ գծերը կը փակենք, սպասելով 1906 թւի բարեբեր գալստեան: Անցեալի փորձերից օգտւեցէք եւ ապրանքները ժամանակին տեղ հասցրէք. մանաւանդ լաւ պատրաստութիւն ունեցէք աշնանային սեզոնի համար:



Ինչպէս տեսնում էք, դիւրութիւններ եւ մարդիկ շատ ունենք. ափսոս որ ապրանք չկար:

Ադաշս ի՞նչ պիտի անէ ձմեռը. հող մնալը աւելորդ է. աւելի լաւ է գնայ Մինարէթ, միայն գարնան վերադառնալու պայմանով: Աստուծոյ սիրոյն ձեռք քաշեցէք վարժապետների եւ գանազան շլապաւորների [?] ձեռքով գործ տեսնելուց: Մեզ դարաչուխալու է հարկաւոր:

Դրութիւնս շատ գէշ է. մինակութիւնը եւ գործերի շատութիւնը ինձ սպանում է: Ա՛խ, ինչպէս կ'ուզէի Մենաւորի հանգիստ եւ անխռով կեանքը գոնէ մի ամսով վայելել:

Կարօտագին համբոյրներ եմ ուղարկում ձեզ. մէկ-մէկ գոնէ նամակներ եւ թերթեր ուղարկելով յիշեցէք մեզ. մեր փոխ-յարաբերութիւնը միմիայն ձեր նամակները պիտի լինի դառն ձմեռայ օրերում:

Հոս բաւականին ձիւն եկաւ: Հացը թանգացաւ: Զուկ անպատճառ կ'ուղարկեմ ձեզ:

Զրադացի քարերը՝ այս սեզոնին ուղարկել անհնարին է. կ'աշխատեմ գարնան անպայման ուղարկել:

Ձերմ համբոյրներով  
ԱՐԱՄ

1905 թ. 1 նոյեմբերի  
Շամ

Յ. Գ.— Տիգրանը գաւառ է. ձեր բարեւները նամակով հաղորդեցի իրեն:

ՆՈՅՆ

Գարեգինը ե՞րբ կը վերադառնայ: Մեր տղաները ո՞ւր հասան:

ՆՈՅՆ

1.- Նամակը ուղղուած է Թադէի վանք (Մենատր):

2.- Աւետարան – ծածկանուն Աբաղայի դաշտի Խաչան գիւղին:

3.- Ս. Թադէի ջրաղացին քարերը ջարդուած էին. երեւի նորերը Վանէն պիտի ուղարկուէին:

**Միրելի Տիգրան!**

Ստացայ 1 նոյեմբեր թվակիրդ: Գրամների խնդիրը այնպէս կը կարգադրեմ, ինչպէս բոլորի ցանկութիւնն է. իսկ մինչ այդ բոլորովին խոյս պիտի տամ այն գործողութիւններէրց ինչ որ դրամ է պահանջում. թէեւ դրանով մեծապէս վնասելու լինենք: Օր[ինակ] Աւետարանում եղած 3000 ծայրը կը մնայ հոն. որովհետեւ 8 ոսկու չափ դրամ կ'ուզեն. նախկին պարտքերն են: Սլաքի հարցը կը մնայ երեսի վրայ, այդպէս էլ իրենց գրեցի: Այստեղի պարտատէրին բացարձակ կերպով կը յայտարարուի որ դրամ չկայ, պիտի սպասել: Զինւորներին առանց բացառութեան կը քչեմ Ա. ենթակումիտէի շրջանը, եւն եւն եւն:

Այս բոլորը ոչինչ. դու կամ Իշխանը շտապելու էք հոս գալ. ես էլ՝ հիւանդանոց, եւ յոյս չունեմ շուտով կազդուրւելու. իսկ ընթացիկ գործերը երեսի վրայ թողնել, ներկայ կրիտիկական պայմաններում, շատ մեծ յիմարութիւն կը լինի:

Մանաւանդ Ընդ. Ժող[ովի] խնդիրը, պէտք է նրանց միշտ հրահանգներ եւ տեղեկութիւններ հաղորդել ապա թէ ոչ հոն էլ կը տարւենք:

Գարեգինից նամակ եկաւ. ոչինչ նորութիւն չկար: Ուղարկել է N 10 եւ մի քանի հին «Հայրենիք»- Երուանդ Ֆրանկեանը<sup>1</sup> ուղարկել է իր աշխատութիւնը «Ատրպատական»...

Թէ դու եւ թէ Իշխանը եթէ կ'ուզէք գործի ընթացքը կանգ չառնէ, դրամ պիտի հասցնէք հէնց այս երկու օրերը. երբ ձիւնը եկաւ, ոչ փոխադրութիւն կը լինի եւ ոչ էլ հնարաւորութիւն եղած ապրանքները առաջ շարժել: Այս ամսին միայն 70 ոսկի փոխադրութեան, սուրհանդակի է գնացել: Գաղթականական ահաբեկիչ շարժումները գիտէք որքան թանգ է նստում մեզ վրայ: Ինչեւէ, անցեալ ամսւայ հաշիւը փակեցի, ուղիղ 40 ոսկի պարտք մնաց...

Ուրիշ նորութիւններ արդէն չկայ. Մաշտոցի հիւանդութիւնը աւելի ծանրացաւ, մի ոսկի չկար որ նրա համար մի պալտո առնէի չմրսէր. դէ՛հ արի գործ տես...

Բարեւներով  
ԱՐԱՄ

1905 թ. նոյեմ. 3-ին

**Յ. Գ.—** Ուղարկւեց այս նամակի հետ քեզ եւ Իշխանին N 10ը. աշխատիր Վերին [Հայոց Զոր] շրջան էլ ուղարկել:

1.- Ե. Ֆրանգեան (1878-1928) – դաշնակցական մտաւորական, տեսաբան:

**ՆՈՐ ՍԱՐՍԱՓՆԵՐ**

Արամ Մանուկեանի գրչին պատկանող այս գրութիւնը ուղարկուած է Ժընևի՝ «Դրօշակ»ի խմբագրութեան: Գրուած է գաղտնի թանաքով եւ յաջողութեամբ «քացուած»: Խմբագրութիւնը լայնօրէն օգտուելով անոր փաստագրական տըրեալներէն, ինչպէս նաեւ այլ աղբիւրներէ քաղուած տեղեկութիւններէ, կազմած է «Նոր փաստեր Վասպուրականի կեանքից» խորագրով յօդուածը (Տես «Դրօշակ» 1905 թ. 13րդ համար): Ներկայացուող փաստաթուղթը անթուակիր է. յիշեալ յօդուածին համար խմբագրութիւնը թուական կը ճշդէ «Նոյեմբեր 5, Վան»:

*Արդէն ձեզ գրել ենք տուրքերի գանձման համար կառավարութեան կողմից ձեռք առնուած բոլոր բռնութիւնները, որ չափ ու սահմաններից անցել է: Չգիտենք ո՞ւմ գրենք եւ որին ապաւինենք: Ժողովուրդը լքած ամէն կողմից մեզ է դիմում. մենք որի՞ն դիմենք: Փաստերը դնենք արտասահմանի հայ հասարակութեան առաջ՝ կ'ըսեն — դա նորութիւն չէ Տաճկահայաստանի կեանք — եւ սրանով կը վերջացնեն իրենց բարձր ազգասիրութիւնը: Եւրոպական հասարակութեան դնելու լինենք, — պէտք է ասեն՝ այս չափազանցութիւն է. ի՞նչ մեղադրենք հեռու Եւրոպայում ապրող հասարակութեան, երբ նրանց պաշտօնական ներկայացուցիչ — հիւպատոսները առանց կարմրելու հոս պնդում են որ հայերը կարողութիւն ունեն, բայց կառավարութեան տուրքը չեն տալիս, որովհետեւ հայերը այլասերած ժողովուրդ են: Այս է քաղաքակիրթ երկրի ներկայացուցիչների տրամաբանութիւնը. այսպէս են եւրոպական կառավարութեան պաշտօնական ներկայացուցիչները հոգում իրենց ռայոնի հանգստութեան եւ արդարադատութեան վրայ: Իսկ տաճիկ կառավարութիւնը — օ՛հ նրա մասին մի հարցնէք. նա հրճուանքի մէջ է. նա հէնց այդ կ'ուզէր. իւր քայլերը արդարացնել եւրոպացու բերանով... բայց անցնենք փաստերին:*

*Թերեւս լսեցիք որ վերջերս Սուլթան Համիդը իր հաւատարիմ եւ հպատակ հայերին անհուն երջանկութիւն պատճառելու դիտաւորութեամբ մի հրովարտակ է հրատարակել, որով տրամադրում է 1895-96 թվականի դէպքերից յետոյ բռնութեամբ եւ կամայականութեամբ հայ գիւղերում հաստատուած քիւրդ համայնքների հեռացումը: Ահա այս հրովարտակն է որ առիթ տւաւ նոր սարսափների հայ ժողովրդի գլխին:*

*Խրախուսուած քրդերից ազատելու հեռանկարով՝ խառը հայ գիւղերը սկսեցին մի անհաւասար կռիւ — քիւրդ աղաների եւ վաչխառուների դէմ:*

*Շատ հետաքրքիր է այդ ուղղութեամբ գիւղերից մէկի պատկերը: Թիմարների*

Աստուածածին գիւղը պատկանում է շաւրցի ցեղապետ — աւելի ճիշտ աւազակապետ — Քամալ բէկին, յայտնի հերոս իւր սիրագործութիւններով եւ թալաններով: Վերջերս սա իւր հաւատարիմ եւ տաճիկ կառավարութեան պատիւ բերող գործողութիւնների համար արժանացաւ Համիդից գալմագամութեան աստիճանի — աշխարհիկ լեգուով՝ ազատ շահատակութիւններ անելու իրաւունքի: Երբ վերոյիշեալ Աստուածածին գիւղի հասարակութիւնը ծախելով իւր ունեցած չունեցածը, կարողացաւ կաշառքներով եւ պարտքերը գոցելով՝ հեռացնել գիւղում եղած 12 տուն քրդերին, այդ անմեղ քայլը դուր չեկաւ աղային. հակառակ պետական կարգադրութեան. 12 տան փոխարէն 15 տուն նոր քրդեր հաստատեց այդ գիւղում... Բայց երանի թէ դա միակը լինէր: Գիւղացիներից վրէժ լուծելու համար նա դիմեց եւ հետեւեալ միջոցներին: Օգոստոսին այրել տւեց նոյն գիւղացի Սողոմոնի 300 խուրճանոց խոտի դէզը, իսկ սեպտ. 21ին այրել տւեց գիւղացիների 11 դէզ խոտը եւ անօթութեան մատնեց ամբողջ գիւղի տաւարն ու մայր: Սեպտ. 20, խոտը այրելուց մի օր առաջ մտնում է գիւղը եւ բոլորի առաջ հետեւեալ բարձրակոչ յայտարարութիւնն է անում.— Տիրամէր (Աստուածածին) իմ գիւղն է եւ ժողովուրդը իմ ժողովուրդն էր այն ժամանակ երբ նրանք միամիտ էին եւ երբ նրանց դատերի համար ամենաքիչը տարեկան 20-30 օսմ. ոսկի դրամ կ'առնէի եւ կաշառքներ կը ստանայի: Այս երկու տարի է, որ դուք Փիղաների հետ միաբանել էք եւ ձեր դատերն ու վէճերը ձեր մէջ կը վերջացնէք եւ ինձ կը գրկէք. այս բաւական չէ, կը համարձակէք իմ ղոլամներին՝ էլ ձեր գիւղից հանել. տեսնենք, այդ շատ թանգ կը նստի ձեզ վրայ... Եւ իսկապէս թանգ նստեց. միւս օրը վառւեց գիւղի խոտերը...

Անցեալ օրերը ներքին Հայոց-Ձորի հայերից մէկը Կարապետ Մելիքսէդեան, Աստուածաշէնցի, Աստուածաշէն գնալիս ճանապարհին պատահում է քուրդ փախստական աւազակապետ Օմար օնբաշուն: Սա այն յայտնի Օմարն է, որ դէպքից առաջ սրախողխող արաւ Կուռուբաշցի 4 հայի. դէպքին՝ չարիքներ ասես որ չգործեց Հայ[ոց]-Ձորերում: Մի քանի տարի առաջ շատախցի կանանց քաղաքից գիւղ գնալու ժամանակ ճանապարհին բռնում, բոլորին բռնաբարում, ծամերը կտրում եւ ճանապարհ է դնում: Ահա նոյն այս սրիկան է որ պատժում է վերոյիշեալ խեղճ գիւղացիներին եւ հետեւեալ խաղը խաղում.— նրանց օձիքից բռնելով գոռում է թէ՛ իմ դրամի քսակը կորցրել եմ եւ դուք գտել էք. նրա մէջ եղել է մի ոսկուց աւելի դրամ. այս ըոպէին պիտի տաք, թէ ոչ կը սատկացնեմ ձեզ: Խեղճ գիւղացիք աղաչում պաղատում են, բայց լսողը ո՞վ է: Ճանապարհից դուրս է դնում գիւղացիներին եւ հրացանը շտկում դէպի նրանց կուրծքը: Գիւղացիները յաջողում են սրան համոզելով տանել շրջանի միւղիրի մօտ. միւղիրը հոն չլինելով դիմում են ոստիկաններին. ոստիկանները վճռում են հայերին երդւեցնել եւ դրանով գործը փակել. սկսում է սովորական երդման պրոցէսը — Ես, Աստուած, եւ իմ [որ]դին եւն. եւն. խաբար չենք այդ մարդու քսակից: Բայց Օմար օնբաշին գոհ չէ երդման այդ ձեւով. նա առաջարկում է երդման մի օրիգինալ բայց բոլոր սրբութիւնները ոտքի տակ տուող օրիգինալ ձեւ: Թող հայերը բերանով շան լակոտը բռնեն եւ տանեն եկեղեցու սեղանի վրայ դնեն եւ այնպէս կծեն շան պարանոցը, որ նրանից արիւնը ծորայ եկեղեցու սեղանի վրայ: Միայն այն ժամանակ ես կը հաւատամ երդման անկեղծութեան... Ահա ձեզ երդում: Սա արդէն հայի սրբութիւնը անարգող

գերագոյն ձեւերից մէկն է միայն... Հետեւանքը դուք եզրակացրէք...

Այստեղ դնում ենք մի փոքրիկ ցանկ այն բոլոր խժոժուածիւններից ինչ պատահեց վերջերս:

1.- Աղոս գիւղի մօտ կարճկանցի ջանքեզար քիւրդերը սպանել են աւանցի Մնոյին. սա իբրեւ նաւավար գնացել էր այդ կողմերը. ճանապարհին պատահելով, ջանքեզարները սրան թալանում մերկացնում են եւ իբր թէ կեանքը իրեն են բաշխում. բայց խեղճ Մնոն երբ Յ քայլ է անում, յետեւից գնդակ ստանալով տեղն ու տեղը փռւում է գետին...

2.- Բերդակ գիւղացի մի հայ իր արտում ցանք անելու ժամանակ, Սեւ Ակրակ գիւղացի մի քուրդ յետեւից քարով ջախջախում է խեղճ հայու գլուխը եւ տեղն ու տեղը սպանում է. մարդասպանը ազատ է...

3.- Վանեցի Միհրան ճգմանեանին իրենց այգում գիշերը սպանում են դրացի ջանքեզար տաճիկները. երբ ոստիկանները քննութեան են գնում, մի տաճիկ երեխայ անմեղութեամբ բացականչում է որ՝ գիտեմ ո՛վ է սպանել. իսկոյն կոմիսէր Աբոն յարձակւում է վրան եւ գոռում՝ շան լակոտ, ձայնդ կտրիր, դու ի՛նչ գիտես...

4.- Բերկրիի քով արտը ջրելու ժամանակ քրդերը սպանել են մի Պստի գեղացու:

5.- Աբաղայի դաշտում քրդերը սպանել են հայրենիք վերադարձող Յ գաղթակահարի:

6.- Տօնօ գիւղում (հայ, ասորի, քիւրդ խառն) վառել են Հայրոյի Մովսէսի 300 խուրճանոց 2 դէզ խտոր:

7.- Վերջերս բռնեցին 10ի չափ անմեղ մարդկանց, որոնց մեղադրում են այս կամ այն յեղափոխական գործողութիւնների համար:

8.- Երկու օր առաջ դատւում է մի հայ սրիկայ մատնիչ. սա մի քանի տարի առաջ յայտնի Հիւսնիի թելադրութեամբ կեղծ յեղ[ափոխական] նամակներ էր գրում եւ այս կամ այն հային կրակի մէջ ձգում: Բռնելով՝ ամէն կեղծիք բանում եւ խոստովանում է որ իրեն թելադրողը Հիւսնին է եղել. բայց ով է լսողը. տղային Յ տարի վճռում են: Երկու ամիս առաջ երեք տարին լրանալով դուրս է գալիս եւ նոյն մարդու միջոցով սկսում է նոյն նամակային խաղերը եւ կրկին բռնւում է: Երբ դատը վերջանալու էր եւ պիտի անպայման նորէն կտրէին թերեւս 5 տարի, տղան ասում է որ՝ դատարանի նախագահին առանձին ասելիք ունեմ. խնդրում եմ դատը այսօր յետաձգել. եւ յետաձգւում է: Աստուած գիտէ ինչ հրէշուածիւններ պիտի անէ. բայց պարզ է որ նրան Հիւսնին եւ Նայում բէկ կ'ազատեն, նոր դաւերի համար:

1.- Ծառանքում:

**Սիրելի Տիգրան!**

*Ստացայ այսօրւայ նամակդ, շատ ցաւում եմ որ էլի հիւանդութիւնդ վերսկսեց. ես լաւ եմ եւ գործերի գլուխ եմ անցել:*

*Զէնքեր շատ կան, իսկ դրամ ոչինչ. քո ուղարկած 10 ոսկին էլ ստիպւած եղայ նախկին պարտքի փոխարէն տալ զէնքի. եթէ դրամ ունես վաղը հասցրու. 5-6 հրացան կան, դրամ չկայ:*

*Իշխանից նամակ չառանք, դեռ ոչխարները եւ ալիւրը չեկան:*

*Կովկասէն նորութիւն չկայ. երեւի հանգստացել է: Կ'ուղարկեմ 2 օրինակ նոր «Հայրենիք»:*

*Ջաֆարը այսօր նորէն եկաւ, հետը բերելով 8 կոթ. 5 նոր, երեքը հին. բոլորը մեր մալերից. լաւ տեղ են գտել խարջելու Փոստբանտեսները [?]:*

*Ուրիշ նորութիւններ չկան:*

*Բարեւներով  
ԱՐԱՄ*

1905 թ. 11-ին նոյեմբեր  
Շամ

**Միրելի Թորգոմ!**

Ստացայ Մինարէթէն հոկտեմբ. 27 թւակիրդ. երեւի ստացած կը լինէք իմ առաջին նամակը:

Այդ բոլորը ինչ պատահել է քեզ գոնէ ինձ համար նորութիւն չէր. դեռ հոս էիր, որ ես խօսում էի այդ դէպքերի մասին:

Ռուսական մի առած կայ – Ամէն մարդ խօսում է իր ցաւից\*\* – ո՛ւմ որ տեղը կը ցաւայ, այնտեղի մասին կը խօսէ:

Հիմա դրանք են, ամէն մարդ իր գլխու դարտն է քաշում – ընդհանուր գործը մոռացած է:

Ինչ որ լինի, անցեալը անցել է. դրանք մի քանի հարիւրներով [են] մենք Հայաստան չենք փրկի. նոյն իսկ աւելորդ էլ է այդքան ծանրանալ. առհասարակ այնտեղ խօսեցէք եւ ծանրացէք խնդիրների վրայ ուր շահ ունէք: Վրէժը իւր մասնաճիւղներով ուղտի պոչ է. ոչ կ'երկարի եւ ոչ էլ կը կարճանայ: Այդ բոլորը մի աւելորդ անգամ էլ գալիս է շեշտելու, որ մեր գործը անջատելու ենք դրսի գործից եւ դնելու ենք մի այնպիսի մարմնի տրամադրութեան տակ, որի համար միայն երկիր գոյութիւն ունի, եւ ոչ այս կամ այն ստանցիւհան<sup>1</sup>: Այդ բանը լաւ միտող պահիր եւ միշտ պնդիր դրա վրայ: Միշտ մի՛ աշխատիր հարւածել. տեղ-տեղ էլ սիրաշահելու ես:

Չ<sup>2</sup> որ մեր գործը դրանց հետ է: Մանաւանդ այդ կարեւոր է առաջիկայ հաւաքման ձայն շահելու համար:

Այո՛, մենք էլ կրկնում ենք եւ կրկնելու ենք. մեզ ենթարկող, դիսցիպլինա ճանաչող գինւորներ է հարկաւոր եւ ոչ պատասխանատու մարմիններ. այդ պարոններ թող երկիր մտնեն, գինւոր դեկավարեն ապա խօսեն բարձր գաղափարների մասին:

Ծռուն եւ ընկերներին շատ էլ կարեւորութիւն մի տաք. այնպէս կը պարծեն թէ հոս մի բացառիկ դեր ունեցել են. միշտ դու շեշտիր որ դրանք հասարակ մահկանացուներ են եւ երկիրը միշտ կարող է այդպիսի ուժեր տալ:

Ամօթ իրենց որ դուրս եկող գինւորներին կարեւորութիւն են տալիս, լրբացնում եւ այստեղ եղածների համար էլ վատ օրինակ դառնում:

Մենք այսպէս կարող կը լինենք աւելի գործ կատարել. եթէ մեզնից ընդունակները կան թող ներս հրամեն, մենք նրանց առաջ գինւորութիւն անենք:

Ց հատ կոթ ստացանք, մէկը մեր Ծաղիկն էր որ Ալոյի ձեռքն էինք տւել, ի՞նչ ենք սպասում, ի՞նչ են ուղարկում:

Այստեղ նորութիւններ քիչ կան. Բաբկէնի հայր մեռաւ, դուք ողջ մնաք:

Սաթը եւ ընկերները վերջապէս յաջողեցին աստիցնել Ալքաւազի\* լիրբ Մելիքներից մէկին, Ատէմոց Ալոպիւն\*. այս մասին յայտարարութիւն կը տանք «Դրօշակ»ին. գործողութիւնը եղել է բարեբեր: Ծ-ից մէկը գնաց. տեսնենք մնացածը:

Ուղարկում եմ Պապիկի<sup>2</sup> քեզ գրած նամակը. քէ՛Քը եւ դրութիւնը այնքան լաւ չէ:

Պարտքերով ենք ապրում: Աստուծոյ սիրոյն լինի դրամ հասցրէք:

Իշխանը\* 5 հոգով եկաւ: Լէոյենց Հոստոնիան կրկին հիւանդանում է. դրա հիւանդութեան նշանները հոն յայտնիր եւ մի դեղ խնդրիր:

Մոռացայ գրել ամենակարեւորը. Սարուստանում<sup>3</sup> քո առաջի գործը լինելու է ստուգել մի բան, ոչ խօսքերին հաւատալով, այլ գործին. արդեօ՞ք առաջիկայ սեզոնին Մենաւորում պիտի կարողանաք ապրանք հաւաքել թէ պէտք է սեւ փոստի վրայ նստենք: Դա կարեւոր է այն տեսակէտից որ մեր անելիքները մենք այժմեանից կը դասաւորենք:

Աշխատելու էք բաւականաչափ անգլիական կամ գոնէ ռուսական վառօդ հասցնել մեզ: Արհեստանոցում պատւիրեցէք ժողովրդական կոթերի համար. մուշկա, պրիցելի մասեր, տակի ոտքեր, եայեր եւն եւն, մանաւանդ բլազոնկ եւ կամուրջ-թող եպիմա լինի վնաս չունի. մեծ քանակութեամբ են պատրաստելու. առնուազը 100ական, չմոռանան եւ կատուներ. թող յոյս չդնեն ուղարկւածների վրայ. եղածները հատան:

Կոմիտիան նոյն ուղղութեամբ շարունակում է կոթերի գնում, էլի գալիս է. Յարուլթիւնը<sup>4</sup> բաւական դրամ հաւաքեց քեզնից յետոյ: Լաւ տղայ է, բայց անցեալ օրը քէֆը կտորեցի. Ա. ենթակոմիտէի շրջանը պիտի երթային, մի քանի պահանջներ արաւ, մերժեցի ուղարկել. բաւական ազդեց. ի՞նչ արած:

Օրւայ նորութիւնը Հեպթադէմի<sup>5</sup> Մուռ վարդապետ ձեռնադրւելն է. նոր կարգով երդուում է աւելի եռանդուն աշխատելու...

Տիգրանը դեռ չի եկել. նա էլ տկար է: Պուրակցիներին<sup>6</sup> եւ Ափոյի (եւ Միհրանին) դուրս ուղարկեցի. նրանք արդէն Սարուստան են Ազարիկից եւ Տէր-Տէրից լուռ չառանք. ի՞նչ եղան:

Մաշտոցը բաւական կազդուրւել է. կը բարեւէ ձեզ: Սլաքի գործը դեռ կը մնայ երեսի վրայ, նոյնը եւ եղբօրդ խնդիրը:

Խմբերի մէջ արդէն շարժում չկայ: Բոլորն էլ հանգիստ իրենց գործին են:

Աստուծոյ սիրոյն լինի. աշխատեցէք ինչ գնով լինի ժողովրդեան կոթերի համար ծայրեր գտնել. յետոյ ուշ կը լինի եւ մեծ բան կը կորցնենք:

Կոմսին եւ Վարդանեանին յատուկ համբոյրներս տուր. այդ քաֆուրները ինչո՞ւ չեն նամակ գրում. գոնէ այս դժուարութիւնների մէջ նամակ ստանալն էլ մխիթարութիւն է:

Չայիկը ձիաները պահեց, չի տալիս: Մեզ լաւ ձիաներ է հարկաւոր. ժամանակին դրամ հասցրէք որ գնենք: Աշխատեցէք ծայրեր շատ հասցնել Մենաւոր. այն էլ «թերթեր» փոխադրւող գծով:

Ասում են Մալխասը մինչեւ Ամերիկա է փախել. դա ի՞նչ զօռ է եղել...

Կառավարութեան վերաբերմունքի մէջ նոր փոփոխութիւն չենք նկատում: Ժողովուրդը նոյնն է. դատերը մեր հոգին առաւ. բայց բօլ-բօլ տանձեր ենք ուտում...

Աստղիկը կամեցել էր ձեր կողմը գալ բայց ճանապարհից վերադարձրել են:

Սուսիկը նորէն վերցրի գործի մէջ. նրանից լաւն էլ չկար եւ ուզում էր փախչել Պրախուլամի հետ. ստիպւեցայ վերցնել:

Վրոյրը ներողական նամակ գրեց եւ խնդրեց իրեն ընկեր ճանաչենք, առայժմ պաղ յարաբերութիւն ենք պահպանում:



*Սողոն եւ մի ընկեր մնացին. եօլայ ենք գնում:*

*8 օր կրկին հիւանդացայ. այդ անտէր ատամիս ցաւը ինձ խեղդեց:*

*Նիկոլը քիչ տկար է. լաւ աշխատում է: Սալմանին (Վարժապետին) առաջարկու-  
թիւն արի, դեռ պատասխան չեմ առել:*

*Շուտով կ'ուղարկենք հարկաւոր տեղեկագիրը. գործերի շատութիւնը ինձ նե-  
ղում է, անկարելի է ուրիշ բանով զբաղւելը:*

*Արհեստաւորենց հասկցայ. առաջարկում է վերցնել. ինքը այնտեղից հեռացել է:  
Համբոյրներ Սուրէնին եւ Բաբկէնին:*

*Համբոյրներով ԸՆԿԵՐ*

1905 թ. նոյեմբեր 13

Շամիր

- 1.- Կայարան, կայան:
- 2.- Պապիկ – բանտ գտնուող Գիսակն է:
- 3.- Սարուստան – ծածկանուն Կովկասի:
- 4.- Միրաքեան Յարութին:
- 5.- Հեպթաղէմ – ծածկանուն Վանայ լճի Կտուց կղզիի:
- 6.- Պուրակ – ծածկանուն Խլաք սաւանի:



Չախէն աջ՝ Խմբապետ Յարութին,  
Արամ, Վանայ Իշխան, Սողո

**Սիրելի Կոմս եւ Թորգոմ<sup>1</sup>!**

Փոստով նամակ գրեցինք Քարի հասցէներով (Իշխան եւ մենք)։ Երեւի ստացած կը լինիք։ Ուրիշ նորութիւն համարեա չկայ, եթէ չհաշուենք զօրքերի շարժումը։ այստեղից եւ շրջանից մեծ քանակութեամբ զօրքեր են գնում իբր թէ Մուսուլի կողմէրը եւ իբր թէ պարսիկների հետ պատերազմ կայ։

Վերջին օրերը ուրիշ փոփոխութիւններ չկան։

Կառավարութեան նաւը երէկ խորտակեց եւ 5000 ոսկու չափ վնաս բերաւ վաճառականներին։ Նաւի վնասի մասին ճշգրիտ տեղեկութիւններ դեռ չի կարելի տալ։ [նաւը] դեռ ջրի երես չի հանել։

Թորգոմը գրել էր որ բարեկամի հասցէով «Արշալոյս» ուղարկենք. նա արդէն ստանում է. խնդրում ենք նրա անունով առայժմ ոչինչ մի ուղարկէք։

Դուք ուղարկեցէք մեզ «Մուրճի» այս տարուայ N N 4, 10, 11 եւ 12. այդ կարող էք ուղարկել ուղղակի անգլիական հիւպատոսի\*\* հասցէին, մենք կը ստանանք. աւելի ճիշտ նոյն միջոցով ինչ մինչեւ հիմա Պալարցի<sup>2</sup> Գրիգորը կ'ուղարկէր։

Աշխատեցէք Մինարէթի գծով մի քանի օրինակ «Մուրճեր» եւ այլ թերթեր ուղարկել, մանաւանդ վերջին դէպքերի վերաբերեալ N. N.ից. մի քանի հատ ուղարկեցէք ժողովուրդին տալու համար։

Կոմսը ինչ<sup>o</sup>ւ նամակ չի գրում։ Գրիգորը ինչ կ'անէ։ Մեր պատմական Ընդհ. ժողովը երբ կը լինի։

Համբոյրներով՝  
**ԱՐԱՄ**

2 դեկտ.  
Շամ

1.- Նամակը գրուած է գաղտնի մելանով եւ ուղարկուած կովկաս՝ Վահան Փափագեանին (Կոմս) եւ Թէոս Տեղորիկեանին (Թորգոմ)։  
2.- Պալար – ծածկանուն Վան-Տոսպ գաւառակի Արտամէտ գիւղի։

**Միրելի Գարեգին!**

*Մենաւորի գծով ուղարկեցինք Ընդ- ժող[ովին] ներկայացուելիք տեղեկագիրը.— խնդրել էինք նրանց, որ իրենց գծով անմիջապէս հասցնեն Կոմսին եւ Թորգոմին. եթէ չկրցան քեզ պիտի հասցնեն: Անմիջապէս ուղարկելու ես ըստ պատկանելոյն եւ պատուիրելու որ ճանապարհին ոչ ոք իրաւունք չունենայ բանալ:*

*Տեղացին քանի ժամանակ է նամակ չի գրում. կ'երեւայ որ եկել է քեզ մօտ: Նրա օրով փոխադրւած ապրանքները ամբողջութեամբ ստացւել է:*

*Հոս նորութիւններ քիչ կան. Սարուստանի փոստան 4-րդ անգամն է չի գալիս ներքին խառնակութիւնների պատճառով: Այստեղից զօրքեր են տանում Մուսուլ, իբր թէ պարսիկների հետ կռիւ կայ:*

*Կառավարութեան նաւերից մէկը խորտակեց, 3000 ոսկի վնաս պատճառելով հայ վաճառականներին:*

*Շուտով փոխգիրով կը ստանաս 6 օսմանեան լիրա պ. Կարապետին միջոցով. այդ դրամը գիւղացիք են տւել, իրենց համար ժողովրդական յեղափոխական գրքեր գնելու համար: Խնդրում եմ ուղարկես Ե. Ֆրանկեանին եւ իմ կողմից խնդրես, որ յարմար գրքեր գնէ, եւ եթէ կարելի է մի մասն էլ նուէր ստանայ եւ անմիջապէս քեզ ուղարկէ: Մենք փոխադրելու դիւրութիւն կը ստեղծենք: Մանր գրքերից (5-10 կայ) թող ծական օրինակներ գնէ: Շուտով կ'ուղարկւի նորէն 10 ոսկի Ս. Հեղինէի (Աղ- քամար\*) համար:*

*Աշխատեցէք որքան կարող էք գրքեր հաւաքել մեզ համար:*

*Ինչ նորութիւններ ունէք գրեցէք:*

*Զեր 10-10 սուրհանդակը երկու ամիս է չեկաւ. չգիտենք ի՞նչ է պատահել:*

*Համբոյրներով  
ԱՐԱՄ*

15 դեկտ.

Շամիր

**Սիրելի Ընձայր!**

Քանի ժամանակ է ձեզնից ոչ մի լուր չառանք: Չգիտենք պատճառը ի՞նչ է: Կ'երեւայ որ Մենաւոր չէիք կամ այժմ էլ չէք:

Ինչ եւ է. Սարուստանի դէպքերի պատճառով ոչ փոստա կու գայ եւ ոչ էլ խարներ կարող ենք առնել դրսից, մեր յոյսը դուք էիք, դուք էլ ծուլացել էք:

Պարապը առանց մեզնից բան հասկանալու կիրճեցի Հասանին եւ Ֆանտիին հասարակ նամակներով ձեզ էր ուղարկել. դրանք եկան թէ ոչ:

Վերջերս էլ մի քանի կտոր արխիւ ուղարկեցինք Ադէին եւ Աւետարանի Կնեազի ձեռքով, չգիտենք ստացաք թէ ոչ:

Այժմ ուղարկում ենք մի քանի կտոր թղթեր, որոնք շատ կարեւոր են եւ շտապողական: Պէտք է ի՞նչ գնով էլ լինի, թերթերի գծով ուղարկես Կոմսին կամ Թորգոմին: Դրանք այնպիսի նիւթեր են, որ պէտք է ժողովին հասնեն<sup>1</sup>. չլինի թէ ուշացնես:

Սուրհանդակին (Սարուստան գնացող) վարձատրելու համար եթէ դրամ չլինի կազմակերպական, դու քո քովէն [?] տուր, մենք դրա փոխարէն կ'ուղարկենք քո խնդրած շալը, որ ի դէպ քո ցանկացածի պէս նոր պատւիրել ենք գործելու:

Ուրիշ նորութիւններ չկան. սարսափելի ձիւն է. մատնութիւնների լուրեր ենք լսում, տեսնենք վերջը ինչ կը լինի:

Այստեղից գորքեր են տանում Մոսկու, իբր թէ պարսիկների հետ կռիւ կայ:

Կառավարութեան նաւերից մէկը խորտարկւեց եւ 3000 ոսկու վնաս տւաւ հայ վաճառականներին:

Եթէ Աստուած մի արասցէ, ձեր գծով չկարողացաք ուղարկել, անմիջապէս հասցնելու էք Գարեգինին եւ պատւիրելու որ առանց բանալու ուղարկել շուտով ըստ պատկանելոյն:

N 4 «Դրօշակ», նոր «Հայրենիք», «Մշակ» եւ այլն եթէ լինի առատութեամբ ճանապետէք: Այն N. N. որոնց մէջ կան ազատութեան խաբրիկներէն, աւելի մեծ թւով ճանապետէք. ժողովուրդը շատ է հետաքրքրուում:

Սարուստանէն ի՞նչ նորութիւններ գիտէք նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներէն գրէք:

Պատւելու գործը մնաց գարնան. հիմա ճանապարհները փակւեց:

Համբոյրներով՝ ԱՐԱՄ

1905 թ. 15 դեկտեմբեր  
Ամրոց

1.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Գ. Չորրորդ Ընդ. ժողովին, որ ինչպէս գիտենք հայ-քաթարական ընդհարումներու պատճառով պիտի յետաձգուէր եւ գումարուէր միայն 1907 թ. Փետրուարին: Այնուհետեւ միւրեք կը վերաբերին զխատորաբար 1905 թ.ի Վանի եւ Լեռնապարի շրջանի տեղեկագիրներուն, որոնք արդարեւ պահուած են արխիւներուն մէջ (հրատարակուած «Նիւթեր Հ.Յ.Գ. պատմութեան համար» շարքի Դ. եւ Ե. հատորներուն մէջ):

**Սիրելի Տիգրան!**

Նորատէնց գիւղացիք նորէն նամակ են գրել իրենց գիւղի մասին: Այդ առթիւ մի կտրական պատասխան տւէք, բոլոր գիւղերից մի 4-5 չափական գարի եւ տարեկան<sup>1</sup> հաւաքեցէք եւ տուէք. իբրեւ սկզբնական նպաստ քո մօտ եղած դրամներէն, 5 ոսկու տարեկան առէք էժան գնով, տուէք ուտեն, մինչեւ լայն նպաստ պատրաստւի:

Մոնի\*\* գիւղէն կեղծ անուն Մառան\*\* կը խնդրեն իրենց գիւղը կապել Եռլքասանի<sup>2</sup> հետ. այդպէս էլ անելու էք. նա կարեւոր տեղ է եւ մեզ համար շատ հարկաւոր. կազմակերպած է Թորգոմի եւ Յարութիւնի ձեռքով:

Այս առթիւ հարկաւոր կարգադրութիւնը արէք:

Բարեւներով  
ԱՐԱՄ

1906 յունւար 1-ին

1.- Հաճար:

2.- Եռլքասան – ծածկամուն Նոր Գիւղի, Վան, Թիմար գաւառակ:

**Սիրելի Կոմս!**

Քեզ նամակ գրելուց մեռայ. այս խայտառակ փոստային յարաբերութիւնը, մանաւանդ վերջին անակնկալ ընդհատումը (ուղիդ 10 փոստա է նամակ չկայ այդ կողմից եւ ոչ մի մարդ) բոլորովին սեւացրեց մեր, առանց այն էլ սեւ օրերը: Ինչ եւ է. լսեցի որ այնտեղ հանգստացել է, Աստուած տայ որ տեւողական լինի: Նոյեմբեր 12-ից դէս, տեղ[եկ]ութիւն չունենք Կովկասէն, ճիշտ «Մշակները» մինչեւ այդ օրն են: Իսկ քո վերջին նամակը օգոստոս 30-ին է: Բիւրոյի մասին գրելը աւելորդ է: Աստուած անոնց հոգին լուսաւորէ, էֆէջա աղէք մարդեր էին... Չգիտեմ որտեղից բռնեմ եւ ուր վերջացնեմ. ճիշտն ասած, նոյն իսկ կասկածում եմ քո եւ առհասարակ ընկերների ողջ լինելու մասին, առանձնապէս Գրիգորի<sup>1</sup>. կարծես թէ մէկը զգացմունքներիս վրայ ճնշում է գործ դնում հաւատացնելու թէ նա վնասել է: Այդ տղային հեռուից եմ տեսել. անձնական ծանօթութիւն չունեմ, բայց կարծես Քրիստափորը<sup>2</sup> երկուսիս էլ իրար հետ կապել է:

Մեր դրութեան մասին ի՞նչ գրեմ. ամէն կողմից հետաքրքիր իրողութիւններ

կան հաղորդելու. բայց սկսեմ գործնականից — դրամից: Ուղարկում եմ ձեզ 9 ամսեայ եւ վերջին Դեկտեմբեր հաշուեկշիռը:

Դրանից առաջ էլ, քեզ եւ Բիւրոններուն պարբերաբար ճանաչել ենք. ստանալու մասին ոչինչ չգիտենք: Ինչպէս տեսնում էք հաշիւներից, այս տարին էլ պարտքով փակեցինք, ուրախալին այն է որ քիչ է. բայց ո՞վ գիտէ մինչեւ գարուն չի քառապատուի: Մախսերը քչացնելու ոչ մի դիւրութիւն չկայ. մեր եւ զինուորների թիւը հասցրել ենք գերոյի. եթէ ասեմ 10-15 օրէ մե՞նակ ես եմ մնացել Շամում\*, չես հաւատալ. բայց դա իրողութիւն է եւ թերեւս ցաւալի իրողութիւն... գի՞ս՝ սկնա՛... լրտեսները կը վխտան, ձմեռւայ սեզոնի սուտ-մուտ լուրերը եւ ծրագիրները որքան կ'ուզես: Անցեալ օր Իշխանը\*\* պիտի գնար. մատնութիւն-ով\*\* իմացել էին աղաւնու\*\*\* մասին եւ մարդիկ\*\* դրել ուր հարկն է. բայց բարեբախտաբար Կլոք Դարի<sup>4</sup> մօտ\*\* պատահեցին, մի խումբ այլ զինուոր-ների\*\*, որոնք պատահական կերպով տուն էին գնում. փառք պատահականութեան. իրար վրայ մի քանի գնդակ\*\* կը ձգեն եւ առանց ոեւէ վնասի տուն\*\* կը վերադառնան: Դրանով էլ կ'ազատեն Պալարում\*\*<sup>5</sup> պատրաստած թակարդից. իսկ աղաւնուն կը բռնեն եւ կը խուզարկեն. նախապէս ամէն բան տեսնած էր, այնպէս որ ուշացել էին... Այս առթիւ մի քանի օր դաւրիա<sup>6</sup> պտտեց եւ վերջացաւ. Իշխանին մատնիչիւն\*\* 150 ոսկի են խոստացել, բայց չկերան:

Մտածում ենք մի քանիսին սատկացնել\*\* որ օրթալը<sup>7</sup> հանգստանայ. տեսնենք ինչպէս կը վերջանայ այդ դաւերը:

Ամենահետաքրքիր նորութիւնը այն է, որ արմենականները ներկայացուցիչ\*\* են բերել տւել. ձեմարական է, դեռ չեմ տեսել. բայց կ'երեւայ որ ուշացել է: Համազասպիւն\* եւ ընկերոջ վերցրինք կազմի\* մէջ<sup>8</sup>. առաջինը հրաշալի ձգտումներով եւ կարմիր\*\* համոզմունքներով տղայ է. Երկրորդը ակադեմական բնաւորութեան տէրն է:

Դրանցից առաջ եւ դորանից յետոյ կարողացել էինք արմենական\*\* մի քանի ազդեցիկ խմբեր գրաւել, ոչ եթէ նրանց ներկայի պատճառով, այլ ուղղակի տրամադրութիւնը ծով է դառել, այնպիսի շրջաններից են յարուում դէպի մեր կողմը որ զարմանալի է:

Այդ տեսակէտից չեմ կարողանում երեւակայել թէ այս նոր եկող պարոնը կարողանայ դեր կատարել. եթէ բռնել չտան, շուտ կը փախչի: Ինչպէս լսեցի Ամերիկայում\*\* գաղտնի մի օջախ են հաստատում, սրանց նպաստ հասցնելու համար:

Թորգոմից եւ ընկերներից լուր չառանք, նոյեմբեր 3-ից մինը կար, որով իրենց վրէժ գնալը կը գրէին. նրանից յետոյ չկայ. նամակ գրելու վերաբերմամբ ի՞նչ յոյսեր էին տալիս, ինչ դուրս եկաւ: Նոյնը եւ Վարազդատ-ի\*\* մասին, մեզ եւ մեր ականջները մաշեց: Զարուհին<sup>9</sup> ազատւել է, եւ պիտի վերադառնայ Երկիր, որքան ճիշտ է գալը չգիտեմ:

Ինչպէս հաշիւից կը տեսնէք պարտքը հասաւ 67 հազար, թէ այստեղ եւ թէ Լեռ- [նապար]ը. բազմաթիւ կնքւած ընկալագրեր դուրս եկան: Եթէ շուտով քիչ դրամ չհասցնէք մեզ, շատ գէշ կը լինի հալը: Ցաւալին այն է որ ինչպէս որոշած էր 2/3-ը պիտի տրւէր Իշխանիւն\*\* . այդ հաշուով էլ 170 ոսկի նրանց մնացինք պարտք. նրանք էլ այնտեղից կ'ուզեն, այս մասին մի բան մտածեցէք:

Տեղեկագիր թէեւ կազմել էի չուղարկեցի. մի կողմից մտածելով որ ուշ կը լինի, միւս կողմից էլ որովհետեւ ներքին հրէշը գլուխ էր բարձրացրել: Է՛հ, չազատեցինք այս խայտառակ վէճերից. երանի նրանց որ գոնէ սկզբունքի խնդիրներում կարող են համաձայն լինել:

Գծերը այս տարի ինչպէս կ'երեւայ շատ շուտ պիտի բացւեն, բայց ապրանքներ Աստուած տայ: Սուրէնը<sup>10</sup> լաւ կ'անէ որ անցնի Վրէժ եւ այստեղից դրամ ուղարկենք հոն գոնէ ժողովրդական կոթեր, մանաւանդ ծայրեր գնէ:

Գոնէ քանի դիւրութիւններ կան մեծ քանակութեամբ գրքեր ուղարկեցէք թէ Մինարէթ եւ Մ. Քաղաքից այն պալարցու օգտւած ճանաչով:

Մեզ համար ուղարկեցէք Աւարայր «Մշակ», «Արշալոյս», «Սուրճ» եւ «Ռուս-կիյէ Վերոմոստի»<sup>\*11</sup> հայերէնները, աշխատեցէք 2-ական անել, որ Իշխանին էլ ուղարկենք: Նիկոլը հէնց եկաւ մօտս եւ կը պատմէ թէ Թորգոմի մայրը գիրք է բանալ տւել եւ հասկացել նրա ներկայ վիճակը.— իբր թէ կռուի է բռնել ազատել. ընկերները ցանկացել են զարկել իրեն, բայց յետոյ հաշտւել են:

Առայժմ ուրիշ նորութիւններ չկան: Սարհազը յուսահատական դրութեան մէջ է:

Չգիտեմ բարեւներ եւ համբոյրներ որին ուղարկել. ո՞վ է նահատակ կամ ո՞վ կենդանի. յամենայն դէպս համբոյրներ բոլորիդ: Ո՞վ գիտէ թերեւս այս ձմեռ էլ բախտ չունենամ քեզ գրելու. գէշ լուրեր եմ լսում...

Ուղարկում եմ իմ եւ Իշխանի պատկերը:

Ձերմ համբոյրներով  
ԱՐԱՍ

1906 թ. յունւար 26-ի

Շամիր

1.- Խօսքը կը վերաբերի Վանայ Սարգիսին, Շամիլ ծածկանունով. իսկականը՝ Օտապաշեան Պօղոս:

2.- Խօսքը կը վերաբերի Քրիստափոր Միքայլեանի:

3.- Խօսքը կը վերաբերի հաւանաբար Արամի կողմէ օգտագործուած աղանձներուն, որոնց միջոցով նամակագրութեան արագ հաղորդակցութիւն կը ստեղծուէր:

4.- Կլոր Դարը Վան-Այգեստանի քաղամասերէն մէկն էր:

5.- Պալար – ծածկանուն Արտամէտ գիւղի, Վան-Տոսպ գաւառակ:

6.- Պահակախումբ:

7.- Մէջտեղերը, հրապարակը:

8.- Խօսքը կը վերաբերի Համագասպ Բաղէշցեանի եւ Ղեւոնդ Մելոյեանի, նախկին արմենականներ, որոնք յարած էին Դաշնակցութեան եւ առնուած Կ. կոմիտէի կազմին մէջ:

9.- Չարուիի Տէրոյեան (Շենիա), ծանօթ յեղափոխական մարտիկ Վազգէնի քոյրը: Եղած էր Վասպուրականի Կ. կոմիտէի անդամ. 1896ին ձերբակալուած եւ աքտրուած էր Երուսաղէմ: Պիտի ազատագրուէր 1908ին Սահմանադրութեան հռչակումէն ետք. հետեւաբար անհիմն է Արամի տեղեկութիւնը Չարուիիի ազատուելուն մասին:

10.- Սուրէն – շրջիկ գործիչ գիւղական շրջաններուն մէջ:

11.- Մէկ աստղանիշ կրող բառերը բնագրին մէջ ծածկագիր են (շիֆրէ), իսկ զոյգ աստղանիշ կրողները՝ ռուսատառ կամ ռուսերէն:

### Արեւմտեան Բիւրոյին

Ընկերներ!

Ստացել ենք ձեր յունւար 5 թւակիր նամակը, իսկ դրանից մի քանի օր առաջ Վիչապէն ուղարկւած ութսուն\* եւ եօթը\* ոսկին, առանց նամակի. չգիտենք դրամի հետ նամակ չկա՞ր, թէ եղել է ու տեղ չի հասել: Վիչապի սովորական հասցէները վտանգւած են, եթէ այնտեղից կամ Պուլգարիայից գրելու լինէք օգտւեցէք – պարբերաբար – այս հասցէներէից: Բոլորի համար այս ընդհանուր հասցէն – ամն-րիկեան որբանոց\* – իսկ այս անունները մէկ-մէկ ա) տիկին Սրմա Կարապետեան\* բ) Սաթնիկ Կիրակոսեան\* գ) Աննա Մարկոսեան\*: Դուք անպատճառ հասցէ տւէք Պուլգարիայի կամ այլ վայրերի. անցեալ փոստին չկարողացանք ձեզ գրել որովհետեւ հասցէ չգիտենք. այս մասին գրել էինք Ամերիկա որ ձեզ հաղորդեն:

Թէ այս անգամ եւ թէ անցեալները ուղարկել ենք Շամի թէ հին եւ թէ նոր ար-խիւները. այդ մասին ոչինչ չէք գրում. չինի թէ վրէժցիք արխիւները կը պահեն իրենց քով:

Անցեալները քանիցս գրել ենք, որ մեր դրամական հաշիւները 1905 թ. ապրիլից սկսեալ, ուղարկել ենք ամսէ ամիս. այդ մասին էլ ոչինչ չէք գրած. կը ստանա՞ք թէ ոչ: Այս անգամ ուղարկում ենք վերջին – դեկտեմբեր ամսւայ եւ ամբողջ իննը ամ-սեայ հաշւեցոյցները: Այդ առթիւ արժէ մի քանի բացատրութիւններ տալ:

Ինչպէս կը տեսնէք ձեր խոստացած զուտ դրամական պահանջը ամբողջապէս չուղարկեցինք. պատճառների մէջ չենք մտնում: Այս տարի մեզ համար դրամական տեսակէտից, ըստ ամենայնի ողբերգական էր. հին կազմը իբրեւ աւանդ մեզ կտա-կեց ինչպէս կը տեսնէք հին պարտք 42.681 դահեկան, ցուցակով պարտք. իսկ դրա-նից դուրս յանկարծ դուրս եկաւ նորէն 24.324 դահեկան. ուրեմն մօտ 67.000 դահե-կան պարտք տւինք: Ինչպէս կը տեսնէք բանտը մեր ապրուստի չափ դրամ է նստել մեզ վրայ: Սարհադին ուղարկել ենք 5400 դահեկան, եւն եւն. Ի լրումն այդ բոլորի 3600 դահեկան պարտք միայն անցեալ տարւայ հաշւից. մի 4-5 հազար կը մնայ յուն-ւարի հաշւէն, եւ այդպէս անվերջ: Չպէտք է մոռանալ եւ մի ուրիշ պարագայ. նախ-կին կազմի օրով վճուած է եղել դրամի 2/3-ն ուղարկել Լեոնապարի Կ. Կոմիտէին, այստեղի վրայ թողնելով բոլոր ծախսերը, եւ բանտ, եւ փոխադրութիւն, եւ սուր-հանդակ եւն եւն. այդ հաշուով էլ նրանց մենք պարտք ենք մնացել մօտ 170 ոսկի. նրանք այժմ պահանջում են այդ դրամը. չգիտենք որտեղից պիտի գոցենք այդ պարտքը, քանի որ դիւրութիւն չունենք գոցելու դուրսէ դուրս օտարների պարտ-քերը: Պէտք է ի նկատի ունենաք, որ հոս իբրեւ կեդրոնատեղի (գործերի ի մի հա-ւաքման եւ աշխարհագրական տեսակէտից) եւ իբրեւ քաղաք անհամեմատ աւելի մեծ ծախսեր է լինում, քան գաւառում, այլ կերպ էլ լինել չէր կարող: Այս տարի եթէ ժողովուրդը մեզ ուտեստի պաշարեղէն (հաց, իւղ, պանիր, միս եւն եւն) չտար,



ծախսերը եւ պարտքերը քառակի պիտի լինէր: Ժողովուրդ ու դրամ եւայլն հաշւի մէջ չեն մտնում: Այս գումարներով օգտուել ենք մօտաւորապէս 50 ընկերներ (միակ Շամին հաշիւն է այս. Լեռնապարը գատէն է), դրա մէջ հաշւելով եւ ժամանակաւոր փախստականներ եւ սուրհանդակներ եւ պատահական գործիչներ: Տարւայ սկզբից ի նկատի ունենալով մեր եկամուտների աստիճանը, սկսեցինք կրճատել զինւորներին, այսօր հազիւ եօթը\* զինւոր ունինք, երեք փախստական\* գործիչներ, 3-4 ձեռքի տակի գործակատարներ, հաշւեցէք թէ ընդամէնը որքան կը լինեն: Վաղը միւս օրը գարուն է եւ այս թւով բաւականանալ անկարելի է, գործերը կը բացւեն, չըջաններ մարդ պէտք է գնայ, իսկ մարդ, մանաւանդ մարդիկ պահելու միջոցներ, չկան ու չկան: Իսկ այս տարւայ շանսերը աւելի բացասական են, քան անցեալ տարւայ: Սարուստանը ընկաւ, իսկ մնացած տեղերը արդէն յայտնի են թէ դրամական տեսակէն ի՞նչ են ներկայացնում. առանց մարգարէ լինելու գուշակում ենք այս տարին մի սեւ տարի պիտի լինի, երկրի ընկերների սեւ գլխին: Աստուած վերջը բարի անի, մեր ճակատագիրն է, պէտք է անտրտունջ քաշենք:

Չգիտենք ի՞նչ պատասխանենք, մենք միամիտներս ձեր վերջին նամակների մեղադրական կէտերին. այս դժոխային պայմաններում, այսքան ուժերից վեր գործի մէջ խրած լինելով. մենք միշտ ձեզ եւ առհասարակ արտասահման ուղարկած նամակների պատճէնները կ'ուղարկենք եւ Վրէժի գծերով, գոնէ մէկն ու մէկի ապահով տեղ հասնելու համար. դուք կամ ուրիշները երբ փորձեցի՞ք նոյն նամակը երկու տեղով էլ ուղարկել եւ մենք չստացանք: Միամիտ ենք չէ՞ ... Այդ ովքեր են ընկերները որոնց ասենք եւ համոզենք թէ Բիւրոնները, երկրի նամակներին պատասխանում են անմիջապէս: Եթէ մենք ասելու էլ լինենք ով կը հաւատայ: Իշխանը որ ամբողջ 2 տարի է ներսում եւ ամբողջ մի տարի է որ չըջանի գործերը բարդւելու [?] համար Կ. Կոմիտէ հաստ[ատ]եցինք, քանի՞ նամակ առաւ... կամ Սարհադին համոզենք, որ թողնւած է ի սաստ ճակատագրի. իսկ թէ այդ լքման դրուժիւնից ի՞նչ չարիքներ կարող են ծնել, թող այդ մասին էլ դարտոտ դուրանցին խօսէ: Է՛հ, ինչ ասենք, միամիտ, անգոյն եւ տափակ մարդիկ ենք, չենք կարող մնացած չըջանի ընկերների նման երկնքից աստղեր վար բերել, որպէսզի կազմակերպու՞թեան մէջ հեղինակաւոր ձայն ունենանք: Ի՞նչ ուզում էք արէք, ի՞նչ ուզում էք մտածեցէք. բայց միշտ հաւատացած եղէք մի բանի վերաբերմամբ, որ մեզ հոս կապողը, ոչ թէ մեր կուսակցական պարտականութիւններն են, ոչ թէ արտասահմանի ընկերների առ մեզ ունեցած (ի հարկէ գործի վերաբերմամբ) բարի վերաբերմունքն է, այլ այս թշուառ ժողովրդի զոհողութեան մեծութիւնն է, եւ այն յոյսերը ինչ ստեղծւել է այդ ժողովրդի մէջ շնորհիւ մեր մի շարք նահատակ ընկերների անձնագոհ գործունէութեան. նրանց ուրուականներն են որ մեզ կապել ու կաշկանդել են հոս...

Թողնենք հին դարտերը, որոնք ինչպէս կ'երեւայ ո՛չ չափ պիտի ունենան ոչ էլ սահման: Անցնենք մեր ներքին գործերին:

Արդէն գրել էինք ձեզ (Ընդ. Ժող. ներկայացնելիք հարցերի նամակի հետ) որ մեր ընկերներից մէկին (Թորգոմ) ուղարկել ենք Սարուստան իբրեւ մեր կողմից ներկայանալիք պատգամատր\*. դրանից յետոյ մնացինք ընդամէնը Կ. Կոմիտէի մէջ 2 հոգի, եթէ հաշւելու չլինենք Գիսակը որ միշտ դիւրութիւն չունի իւր կարծիքները յայտնելու... Ի նկատի ունենալով այդ պարագան երկու նոր ընկերներ աւելացրինք

կազմի մէջ տեղացիներինց. երկուքն էլ իրենց կրթութիւնը ստացել են Ճեմարանում\*<sup>1</sup> եւ երկու տարի է որ հոս են, այստեղի դպրոցներում պաշտօն\* ունեն. Ռոստոմ-ը\* դոցանից մէկին, Ղետնդ Սեթյեանցին\* պատահել է Մ. Ք. ում: Երկուսն էլ ձեռնհաս տղաներ են. որոշ փորձառութիւնից յետոյ օգտակար պիտի լինեն. ժողովրդի մէջ էլ բաւական հեղինակութիւն ունեն: Սրանց հետ յարաբերել է եւ Կոմսը. այն ժամանակից կամաց-կամաց մօտեցնելով գործին, վերջապէս ընդունեցինք: Ուրեմն այժմ Շամի կազմը ըստ երեւոյթին ուժեղ է սեպւելու: Բայց գործը վերջնական կերպով կանոնաւորելու համար, մեզ հարկաւոր [են] երկու գիւղական ինտելիգենտ կամ գոնէ կիսաինտելիգենտ, բայց յամենայն դէպս որոշ զինւորական կրթութիւն ունեցող (գոնէ գործնական յեղափոխական կամ բանակի) շրջիկներ, որոնք ընդունակութիւն ունենան մի քանի մարդ ղեկավարել եւ մի քանի գիւղական-կազմակերպական գործեր տեսնել: Բացի սրանից մեզ անպայման հարկաւոր է Շամի համար 2 զինւորական կրթութիւն ստացած տղաներ, որոնք ընդունակութիւն ունենան զինավարժութիւն եւ նշանաձգութիւն սովորեցնել խմբերին: Գերապատուութիւն է տալու պուլգարական բանակի մէջ սովորածներին, որովհետեւ դրանք շփւելով մակեդոն յեղափոխական շերտիկների հետ, թերեւս կարողանան եւ նրանց գործածական պրիոմները<sup>2</sup> բերել մեզ իբրեւ նորութիւն. իսկ եթէ այդ չլինի գոնէ ամերիկեան բանակի կամաւոր է լինելու: Այս մարդիկ ամենաուշը հասնելու են աշնան: Եթէ կարող էք ճարել գրեցէք, որ Սարուստանէն չուզենք: Եկողները ունենալու են երկու յատկութիւն, որ շատ կարեւոր է մեր պայմանների մէջ. ա) առողջ ֆիզիքական եւ բ) ընկերական բնավորութիւն: Շամի եւ շրջանի զինուորական\* գործերը կանոնաւորելու համար մտածել ենք կազմել մի զինուորական\* կոմիտէ: Առ այժմ ձեռքի տակ ունենք 3-4 յարմարաւոր ընկերներ, բայց պակասում է մի ձեռնհաս-մասնագէտ ընկեր, որ անցնէ նրանց գլուխը եւ գործը ղեկավարէ: Աչքի առաջ ունենալով այդ կարիքը մենք վճռել ենք զուտ այդ նպատակի համար ներս հրաւիրել Թոմոցիկին\*<sup>3</sup>. նա այդ ուղղութեամբ թերեւս կարողանայ օգտակար լինել, մանաւանդ որ վերջերս, ինչպէս լսեցինք, մասնագիտաբար սովորում է: Նրան մեր կողմից առաջարկեցէք եւ եթէ համաձայնի, ամենաուշը աշնան հոս պիտի լինի: Նրանից յետոյ շատ ուշ կը լինի, ու գործը կը մնայ երեսի վրայ: Այս մասին շուտ գրեցէք մեզ:

Գանգատուում էք թղթակցութիւնների մասին. միշտ ուղարկւել է, եւ այսուհետեւ ընկերների շատանալու առթիւ աւելի դիւրութիւններ պիտի ունենանք գրելու:

Մի հասցէ էինք տուել «Դրօշակ» հատով ուղարկելու համար, չստացանք, չգիտենք դուք չուղարկեցիք, թէ նա չի ուղարկում հոս: Խնդրել էինք այստեղի համար անցեալ տարիների ամբողջ թերթերը (ի հարկէ եղածներէն), տարիները ամբողջութեամբ կազմել եւ մեզ համար ուղարկել Մինարէթ<sup>4</sup>. ուղարկեցիք թէ ոչ: Եթէ չէք ուղարկել, կազմել տւէք, ապա ուղարկեցէք: Առհասարակ մեզ համար ուղարկած իրերի մանրամասն ցուցակը նամակով ուղարկեցէք – Մինարէթի գծով – մեր հասցէին:

Մեզ համար ինչո՞ւ մի քանի օրինակ շարունակաբար Պրօ-Արմենիա<sup>5</sup> չէք ուղարկում. եւրոպական շրջանակները հետաքրքրում են:

Մենք Ամերիկա չենք գրել պարտքով երկարներ<sup>6</sup> առնելու մասին, այլ գրել էինք – լսել ենք որ նոր տեսակի երկարներ է դուրս եկել, եթէ դիւրութիւն ունէք իբրեւ

նմուշ 2 հատ ուղարկեցէք Վրէժ: Ի՞նչ գիտենք, ի՞նչ պարագաներ կան որ այդպիսի առաջարկութիւններ անենք: Այդ ձեզ է մնում. անցեալները գրել էիք պարտիով փոխադրութեան մասին. եթէ յաջողիք մինչեւ Վրէժ հասցնել, այս կողմի [անցնելու] համար աննման դիւրութիւններ ենք ստեղծել, որ շատ քիչ վնասներով պիտի յաջողենք, բայց ափսոս որ նիւթ չկայ... Եթէ դրամ առատութեամբ ունենանք հոս էլ կարող ենք գնել. բայց թանգ է, մեզնից լաւ մրցողներ կան եւ մենք յետ կը մնանք, դրամ չլինելու պատճառով: Ափսոս պատեհութիւններ, որ ձեռքից անցնում են:

Ժողովրդի վիճակը շատ գէշ է. սովը սոսկալի կերպով սկսաւ. ամբողջ գիւղեր եւ գաւառներ սովամահ են լինում. ձեզ ուղարկում ենք այդ ուղղութեամբ մի նամակ. մեզ են դիմում, հնարաւոր եղած պայմաններում հասարակական օգնութիւններ ենք կազմակերպում. տեսնենք վերջը ուր կը հասնի. սովից առաջացած հիւանդները գիւղերը լցել են: Ռուսաստանի փոստան էլ փակած լինելուն խեղճերը դրամ էլ չեն կարողանում ստանալ այն կողմերից:

Կառավարութիւնը շարունակում է իր շահատակութիւնները. տուրքերը գանձւում են ամենաանարգ ձեւերով. կողոպուտի մի նոր ձեւ հնարեց, համիտիա քոչանները (հպատակութեան թուղթ) կը փոխէ, իբր թէ ստատիստիկա կը կազմեն. ամէն մարդ, կին, երեխայ, տղամարդ, մարդագլուխ 100 փարա պիտի տան, մօտաւորապէս 20 ռուբլի [?]:

Ահագին քանակութեամբ զօրքեր (նոյնիսկ թնդանօթներ) տարան դէպի Մուսուլ, բոլոր գաւառներից:

Զգիտենք ի՞նչ կայ այն կողմերը: Դուք էլ զլանում էք գրել ընդհանուր քաղաքական խնդիրների մասին: Վերջերս շատ բան պատահեց բայց մենք ոչինչ չհասկցանք:

Մեր վերաբերմամբ շատ հանելուկային ընթացք է բռնել [կառավարութիւնը]. ըստ երեւոյթին ցոյց կը տայ անտարբերութիւն. բայց ներքուստ լրտեսները կը վիստան: Դաւադրութիւններ է պատրաստում, տեսնենք մեզնից որին թակարդ պիտի ձգեն: Անցեալները Իշխանի համար մի թակարդ լարեցին, բայց իրենք ընկան մէջը: Տեղափոխութեան առթիւ մատնութիւն էր եղել, բայց պատահական կերպով քաղաքի ծայրով ընդհարեցին մի պատահական խմբի հետ եւ դրանից զգուշացւած ճանապարհը չչարունակեցին. այնպէս որ քիօւ փոշման կառավարութիւնը իր զօրքերը յետ կանչեց... Երկու կողմից ոչ մի վնաս չի եղել, միայն մի քանի գնդակ են ձգել:

Այս մասին թերթերում ոչինչ չգրէք. այլ գոյն ենք տւել հոս: Այս քանի օրը պէտք է [է] մի քանի գողտուկ տետրներ\* անենք, գլուխներնիս ազատելու համար: Անցեալները տետրի\* ենթարկեցինք Բզնունեաց գաւառի (այժմ Ալճաւազ) Առէն\* գիւղացի Մելիք Յակովբ Քանքանեանցին, իբրեւ պրովակատոր Հիւսէին փաշայի քով, իբրեւ մատնիչ Պետօ եւ երկու ընկերների (համագիւղացիներ) որոնց քրդերը Հիւսէին փաշայի հրամանով չարաչար տանջանքներով մահացրին, իբրեւ յեղափոխական գործի ամենակեղտոտ հակառակորդ են. եւն. այս մասին յայտարարեցէք թերթում (որոշումը արել է Վասպ. Կ. Կոմիտէն):

Այս բախտին պիտի արժանանան եւ նոյն շրջանի մի քանի այլ Մելիքներ:

Յամենայն դէպս ընդհանուր լարած դրութիւն չկայ, կարող է մասնակի դէպքեր տեղի ունենալ այս տարի, բայց ընդհանուր գործողութիւններ անկարելի է թւում:

Արդէն գրել էինք որ կառավարութեան նաւերից մէկը խորտակեց, մօտ 3-4 հազար վնաս պատճառելով հայ վաճառականներին:

Բարբարոսական տանջանքներ են տալիս բանտի ընկերներին, ամէն օր չարչարկութիւններ եւ քալիսներ [?] (առանձնարան) խցել... Արտաքին նպաստ ստանալու դիւրութիւնները փակել են, իրանք էլ ոչինչ չեն տալիս:

Խօսք կայ համիրիա գօրքերի մոբիլիզացիայի մասին, որքան ճիշտ է, ապագան պիտի ցոյց տայ:

Այդ սովորական մեղանով\* այլեւս չգրէք: դրա գաղտնիքը գտել են. գրեցէք անօն-իակով\*:

Հիւպատոսական շրջանակներում նորութիւններ չկան. սովորական ձեւով հետաքրքրում եւ տեղեկութիւններ են հաւաքում թալանների, կողոպուտի մասին: Ռուսական հիւպատոսը մի քանի տեղ խօսել է, որ յեղափոխական շարժումից այլեւս շահ չկայ. ինչ որ արիք բաւական է. սպասեցէք ռուսական ճգնաժամի յաջող լուծման, որը իւր անխուսափելի ազդեցութիւնը պիտի ունենայ հայկական խնդրի վերաբերմամբ: Ժամանակները փոխել են...

Առ այժմ այսքանը. մոռացանք գրել որ դրամ փոխադրեցէք առայժմ Ամերիկայի ունեցած դիւրութիւններով. իսկ յետոյ գրեցէք թէ որ երկիրներից պէտք է տեղափոխէք. Վիշապից դիւրութիւն կա՞յ, թէ ոչ՞:

Ընկերական բարեւներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1906 թ. 26-ին յունւար

Շամիր

1.- Խօսքը կը վերաբերի Համազասպ Բաղէշցեանի եւ Ղեւոնդ Մելոյեանի, որոնք ուսանած էին Էջմիածնի Գեորգեան ճեմարանի մէջ:

2.- Հնարքները, ճարպիկութիւնները:

3.- Թռուցիկ – ծածկանուն Գեորգ Տէր Աբրահամեանի (1877-1909):

4.- Մինարէք – ծածկանուն Սալմաստի:

5.- Դաշնակցութեան նախաձեռնութեամբ Փարիզ հրատարակուող ֆրանսերէն թերթ, հայ դատի քարոզութեան համար:

6.- Երկարը՝ հրացանն է:

7.- Գրութեան արարտին կայ հետեւեալ նշումը.– Պատասխան 15 մայիս 1906:

**Միրելի Թորգոմ!**

Անցեալ օրը ստացանք քո Քարէն (միակը Սարուստանէն) գրւած յունւար 3 թւակիրը: Նամակումդ յիշած դրամը եւ նամակը դեռ չենք ստացած: Մրգաստանի լիրբը, թէ մեր եւ թէ ժողովրդական դրամները շատ ուշ կը փոխադրէ Վիշապ. այս մասին նրան ի՛նչ հարկաւոր է խօսեցէք. բաւական է որքան խաչագողութիւններ արին: Մ. Ք.ից այս Կրդ նամակն է որ ստանում ենք, մէկը Մենաւորէն, մէկը Աւարայրէն, մէկը Մինարէթէն, իսկ Կրդը Քարէն: Դրանից առաջ կամ յետոյ լուր չունենք: Քեզ եւ Կոմսին գրած նամակների հաշիւը կորցրինք. ուղարկւած է թէ Վրէժով եւ թէ ուղղակի այստեղից: Կ'երեւայ վրէժցիք ձեր տեղը չգիտեն: Մեզ կանոնաւոր հասցէներ ուղարկեցէք: Այս նամակումդ դրուած հասցէն վտանգւած է սեպտեմբեր քեզ յայտնի պատճառներով: Մեզ գրեցէք բացի Մելիք-Արծրունի հասցէից – նոյն տեղը եւ հետեւեալ հասցէներով 1. տիկին Մրմայ Կարապետեան\*\* 2. Մաթենիկ Կիրակոսեան\*\* եւ Աննա Մարկոսեան\*\*, ամէն անգամ մէկով: Այս մասին գրւած է եւ Կոմսին: Անցնիմ քեզ հետաքրքրող գործերին:

Պապիկի վիճակը շատ խայտառակ է. 2 ամիսից աւելի է յարաբերութիւններնս դադարել է. դրամ չենք կարող ուղարկել (ասենք չկայ էլ), քեզ ծանօթ բոլոր սուրհանդակներին վռնդել են... Սլաքի գործը համարեա թէ վիժեց: Լիրբ Գիյզը\*\* հակառակեց եւ մեր մարդիկ չկարողացան շահել. նոր քննութիւն է նշանակւած, վկաներին պիտի կանչուի հոս: Այս ոչինչ, կ'ուզեն տեղափոխել ուրիշ քաղաք...

Հոս օրւայ նորութիւնը արմենական նոր ներկայացուցիչի գալն է. չէինք հաւատում բայց եկաւ: Անունը Մեայուն\*\* է. դեռ չենք պատահել, խորհրդաւոր կերպով մեզնից պահում են: Պատում է 3-4 տեղացիներով: Բայց յաջողութիւն ունենալ անկարող է. մեզ յաջողեց 10-15 խմբեր գրաւել մեր կողմը. բոլոր ազդեցիկ մարդկանց գլուխը «թաքտար թալեցի» էլ ուշ է. ոչինչ չեն կարող անել:

Քաղաքային կոմիտէն\* վերակազմեցինք. անդամները հետեւեալներն են. ա. Թաթուլ. բ. Ահարոն Յովնանեան\* – ուսուցիչ է, Վիշապի դէպքի<sup>1</sup> առթիւ աքսորւած է հոս. գ. Յարութիւն Հիւսեան\* ..... թաղից, նախկին արմենական վարչութեան անդամ. դ. Համազասպ\*: Այնքան մեծ տրամադրութիւն կայ, մեր կողմը յարեւրու, որ ժամանակ չունենք բոլորին գոհացում տալու<sup>2</sup>:

Գիւղական\* գործերը բաւական կանոնաւորւած է. 2 հատ են թակոմիտէներ հաստատեցինք: Ձեմքի\* դրամը ծովի պէս լեցել է, բայց ապրանք չկայ գնելու: Մեծ կարիք ունենք ազի-վառօղի\*, մանաւանդ ծայրի. Աստուծոյ սիրոյն մի ճար արէք այդ մասին: Ափսոս է այսքան գոհողութիւնները եւ պատրաստութիւնները ու կոթերը<sup>3</sup>, առանց ծայրերի: Այս անգամ գրեց Գարեգինին, որ հոն կոմիսիոն շտկէ, որ դրամ ուղարկենք հոն եւ յատուկ այդ ուղղութեամբ ապրանք առնեն մեզ ուղարկեն: Լաւ կը լինի որ Սուրէնը այդ գործի գլուխ անցնի: Մեզ համար եթէ կարող ես մի 20 հատ կանոնաւոր փափախ գնիր եւ ուղարկիր, տղաները գահլաս տարան ուղեւորով: Չմո-

ուանաք անտիմոն\* եւ բերդոլեւտեան\* աղ հասցնել մեզ. ամէն մէկից 10-ական գրւան-  
քայ. քանի անգամ գրեց այս մասին:

Երբօրդ\* հասցէին մի նոր նամակ\* էլ բռնեց. այդ պարոններին քանի անգամ  
գրեցինք որ նոյն հասցէով էլ չգրեն, բաւական չէ՞ եղածը: Մեծ Քաղաքում մի Գրի-  
գոր կայ. նրան լաւ կը ճանաչես. Պալարի<sup>4</sup> ուսուցիչն է. նա ցանկութիւն է յայտնել  
գալու: Նրան անմիջապէս ուղարկեցէք Մենաւոր. մենք բերել կը տանք. իրեն յայտ-  
նեցէք որ աշխատէ հետը բազմաթիւ գրքեր բերել, գաւառի համար:

Ջրաբերդում իմ ժամանակ մի «Զինւորական ծրագրի» օրինագիծ կար. նրանից մի  
օրինակ գտիր եւ Մինարէթով մեզ ուղարկիր. Քարում էլ կարող է գտնուել դրանից:

Մեր նոր պատկերներից մի քանի հատ ուղարկեցինք Մինարէթ ձեզ էլ ուղարկե-  
լու. պահանջեցէք: Քանիցս գրել եմ, նորէն կը յիշեցնեմ ուղարկեցէք 1905 թ. Սուր-  
ճի N 4-ը N 10, 11 եւ 12-ը. մնացածը ունենք. Լէոյի «Հայկական տպագրութեան» II  
հատորը, եւ այլ հետաքրքիր գրքեր... Այս բոլորը ուղարկելու էք Մինարէթով:

Այնպիսի համառօտ նամակներով բան չի դուրս գայ. աւելի լաւ կը լինի Մինա-  
րէթով մանրամասն նամակ գրէք գործերի ներկայ վիճակի եւ մեզ ծանօթ ընկերնե-  
րի մասին: Առհասարակ ի՞նչ տպաւորութիւն էք ստանում, կամ աչքի ընկնող ըն-  
կերները ի՞նչ կարծիք են յայտնում. կազմակերպութիւնը պիտի կարողանա՞յ ըստ  
առաջնոյն բաւարարութիւն տալ երկրի պահանջներուն... Թէեւ առաջ էլ մի բան չի  
եղել: Պիտի կարողանա՞ք ինձ համար մի իսկական կարծ կոթ բերել: Եթէ չբերիք ձեզ  
ներս չեմ ընդունի...

Մանրութիւններ, ազայի եւ այլ ապրանքների վրայ մեծ ուշադրութիւն դարձրէք.  
ազա անհնարին եղաւ հոս գնել. Վիշապի դէպքերի առթիւ էլ չեն բերում. 50.000 հա-  
զար գնելու էք: Արդէն մեր ունեցած պակասութիւնների մասին Սուրէն եւ Բաբէն  
լաւ գիտեն, նորէն կրկնելը աւելորդ է:

Բոլոր տղաները լաւ եւ առողջ են. բարեւում են բոլորիդ: Լէոնց Արտաշէսի մա-  
սին մի բան գտէք, նրանք շատ անմխիթար վիճակի մէջ են: Նոր մարդիկ կա՞ն,  
որոնք ցանկութիւն ունենան ներս գալու: Կարծես երկիրը իր հմայքը կորցրել է:

Եթէ վաճառականը դեռ չի եկել, ինձ համար մի քանի չեչունչայ շապիկ առ, թող  
բերէ. այստեղ նրանից չկայ. եսխէն ծալած տեսակէն. ի հարկէ սպիտակ գոյնի:

Գարնան պիտի կարողանա՞ք Մենաւոր ապրանք հասցնել: Կարծես այս տարի  
աւելի գէշ պիտի լինի մեր վիճակը, քան անցեալ տարի:

Ամբողջ տարւայ հաշուեկշիռը անցեալ անգամ ուղարկել եմ Կոմսին եւ քեզ ներ-  
փակ մի նամակով:

Ուրիշ նորութիւններ չկան. համբոյրներ Բաբէնին եւ Սուրէնին. մեզ մոռացան  
այդ անպիտանները. երկու տող նամակ էլ չեն գրում:

Համբոյրներով՝ ԱՐԱՄ

1906 թ. փետրւար 8-ին

Շամիր

- 1.- Ալնարկութիւն Ապտիլ Համիտի մահափորձին:
- 2.- Ալնարկութիւն արմենականներու Դաշնակցութեան յարելուն:
- 3.- Ծայրը փասփուշտն է, կոթը՝ հրացան:
- 4.- Պալար – ծածկանուն Արտամէտ գիղի:

**Արեւմտեան Բիւրոյին**

**Ընկերներ!**

Այս անգամ ուղարկում ենք, «Դրօշակ»ում տպագրելու համար, մեր ինը ամսեայ տեղական մուտքը. դրա վրայ աւելացրինք եւ Արտասահմանի Կ. Խաչի կոմիտէներէից ստացած մի չնչին նպաստի գումարը, այն նկատումով, որ ժամանակին չենք կարողացել նրանց ընկալագիր ուղարկել:

Այս նամակի հետ ուղարկեցինք եւ չորս կապոց արխիւներ, դրանով էլ վերջանում է մեր շրջանի հին եւ անցեալ տարւայ արխիւները: Իշխանը իր արխիւները առայժմ չի ուղարկում, որովհետեւ մերի տեղ հասնելու նամակ ենք գրել, ի պատասխան ձեր յունւար 5 թւակրին: Այժմ նորութիւններ չկան հաղորդելու:

Մտադիր ենք Շամի դէպքի<sup>1</sup> տասնամեակի առթիւ (յուլիս 2-ին) նիւթեր հաւաքել եւ առանձին գրքով հրատարակել տալ. Շամի դէպքը եւ Շամի յեղ[ափոխական] գործիչների կենսագրութիւնը, պատկերներով: Դուք դիւրութիւն պիտի ունենա՞ք տպագրելու թէ դիմենք ուրիշ տեղերի: Արդէն աշխատանքները սկսել ենք եւ գարնան թերեւս պատրաստ լինի:

Լսեցինք որ Մակեդոնիայում ռեֆորմներից յետոյ կոտորած է եղել, որքա՞ն ճիշտ է: Սարուստանից ոչ նամակ առանք եւ ոչ դրամ: Կատարեալ անուշադրութեան ենք մատնւած:

Առայժմ այսքանը. մեզ հասցէ ուղարկեցէք նամակներ գրելու համար ուղղակի այստեղից:

**Բարեւներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ**

1906 թ. փետրւար 8-ին  
**Շամիր**

**Յ. Գ.— Մուտքի հաշիւը խնդրում ենք շուտ տպագրել:  
ՆՈՅՆ**

1.- Խօսքը 1896 թ. Վանի ինքնապաշտպանութեան մասին է, երբ Արմենական, Հնչակեան եւ Դաշնակցական մարտիկները միասնաբար կռուեցան թուրք ջարդարարմերուն դէմ:

**Սիրելի Տիգրան!**

Երեւի լսեցիր Արիսի\*\* մահը. միայն 24 ժամ ապրեց: Կառավարութիւնը հասկացաւ եւ դիակը քննութեան ենթարկեց. թէ քանի մարդիկ գոհ կ'երթան այդ թիւրիմացութեան դեռ յայտնի չէ: Լրտեսութիւնների եւ խուզարկութիւնների լուրերը այնքան շատացել են, որ առաջւայ պէս ազատ չենք կարող երթեւեկել կամ գործել:

Թորգոմից մի բաց նամակ եկաւ, դէպքերի պատճառով Ընդ. Ժող. չի լինի, այլ Խորհուրդ:

Նորէն փոխադրւած է 105 լիրա. առաջինի մասին հէջ լուր չկայ. սրա մասին յայտնել են որ ստացւած է: Բայց մաս մաս են ուզում տալ:

Նամակում ուրիշ նորութիւն չկար:

Կազնաւ-ները\*\* գրում են որ նոյեմբեր 18[-ին] Գանձակում է դէպք եղել, իսկ 23-ին Թիֆլիս. առաջինում վնաս շատ է: Նոր դէպքերի մասին կը խօսուի, բայց չի ստուգւում: Իբր թէ Պարսկաստան նոր ռեֆորմներ է եղել Անգլիայի թելադրութեամբ:

Ուղարկւած է կարիքների մնացորդը. ցուցակը Նիկոլ կը գրէ:

Հեպթադէմ եւ Հնադարեան<sup>1</sup> մտնելու եւ դպրոցական խնդիրը վերջնական կերպով ձեւակերպելու է. առանց մեր գիտութեան ուսուցիչ չեն վարձելու: Լաւ կը լինի որ վռնդւած ուսուցչին քո ներկայութեան կանչես եւ երկուստեք լաւ քննես: Ուսուցչի վարձը պիտի տան ըստ իրենց խոստման:

Առաջարկիր որ ձիաների համար 1 կամ գոնէ 1/2 քիլոնոց գարի ուղարկեն հեպթադէմցիք:

Ուրիշ նորութիւն չկայ:

Ի դէպ, Սուրէնի<sup>2</sup> յայտնիր որ Մեծ Ք. եղած իր ընկեր Գրիգորին նամակ գրէ, գալու մասին: Ակնարկներով թող հասկցնէ որ Թորգոմը հոն [է] եւ նրա հետ աշխատի տեսնել:

Բարեւներով  
ԱՐԱՄ

15-ին փետրւար [1906]  
Ի Շամիր

1.- Հեպթադէմ – ծածկանուն Կոտոց անապատի, Հնադարեան՝ Լիմ անապատի եւ «Դրսի տան»:  
2.- Սուրէն – գիւղական քրջաններու մէջ քրջուն գործիչ-կազմակերպիչ էր:



**Միրելի Թորգոմ!**

Ներփակ կը ստանաք Ընդ- Ժող- ներկայացնելիք մեր տեղեկագիրը: Պահանջագիրը ուղարկված է Իշխանի տեղեկագրի մէջ:

Ուշացնելու պատճառների մասին արդէն գրել ենք ուրիշ առիթներով:

Քեզինից ստացել ենք ընդամէնը 2 նամակ- մէկը Մելիք Արծրունու, իսկ միւսը Նիկոլի հասցէով: Ստացել է եւ 105 լիրա, որը մինչեւ այսօր չենք գանձել- առաջարկում են ճական ոսկի, իբր թէ այդ պայմանով էք տւել:

Առաջին նամակովդ գրած 3050 ոսկու մասին լուր չկայ- չլինի թէ միայն խոստում է- դրամ յանձնելուց ձեր ներկայութեամբ փոստը ձգել տւէք, բաւական է որ- քան լրբութիւններ արին:

Ինչպէ՞ս գրել էի փոստով (փետր. 10-ին) Արիսը մի թիւրիմացութեան զոհ դառաւ- Ջրաղացում<sup>1</sup> խմբին ուղեկցելու ժամանակ, ընկերներից մէկը (գինասէրցի<sup>2</sup>) Բաբկէնի ատրճանակի հետ կը խաղայ եւ կը բանայ Արիսի վրայ- խեղճը 24 ժամ ապրեց: Թէ որքան ծանր վիշտ պատճառեց բոլորին, չեմ կարող գրաւոր կերպով արտայայտել:

Կառավարութիւնը մանրամասնութիւնը հասկացել է եւ քննութիւն կը կատարի- տեսնենք քանի զոհ կը լինի...

Լրտեսները հրէշաւոր կերպով գլուխ են բարձրացրել: Խօսում են ինչ որ է 200 ոսկու մասին- մի գիշեր էլ փորձ է եղել, բայց մենք արդէն հոն չէինք: Դեռ չենք կարողացել հոտ հանել: Աքլոն ազատւել է եւ լրբութիւններ կ'անէ...

Պապիկի դրութիւնը շատ գէշ է- մտածեցէք մի կերպ հիւպատոսներու միջոցով դրան հասցնել արտասահման:

Ուրիշ նորութիւններ չկան- Կոմսի եւ Գրիգորի մասին մանրամասն գրեցէք Սամսոնի հասցէով, ինձ ուղարկելու համար:

է՛հ էլ ինչ գրեմ- տրա[մա]դրութիւնս տեղը չէ:

Գուցէ՜ վերջին նամակը լինի...

Համբոյրներով  
ԱՐԱՄ

1906 փետր. 16-ի  
Շամիր

1.- Ջրաղաց – ծածկանուն Սղկա գիւղի, Վանի գաւառ:  
2.- Չինասէր – ծածկանուն Բերդակ գիւղի, Արճէշի գաւառակ:

**Սիրելի Տիգրան!**

*Քիչ առաջ ստացայ 16 փետրւար թւակիր նամակդ: Ոչինչ չէիր գրել ապրանքները ստանալու մասին: Ապրանքները ուղարկւած է Արցախեցու միջոցով:*

*Նորութիւններ չկան. խուզարկութեան լուրեր կան. քաղաքամիջում 5-6 տուն խուզարկել են:*

*Անպատճառ եւ անմիջապէս ուղարկիր ենթակոմիտէի մօտ գտնւած զէնքերի մանրամասն ցուցակը. թէ զէնքի եւ թէ ատրճանակի ու ծայրի:*

*Ուրիշ նորութիւններ չկան:*

*Բարեւներով  
ԱՐԱՄ*

1906 թ. փետր. 18-ին

**Շամիր**

**Սիրելի Տիգրան!**

*Ուղարկուում է քեզ մի քանի նամակներ. դրանց պատասխան պիտի տալ, Յուլիի նամակին մի երկտողով պատասխանիր որ Պետրոսին եւ միւսին քաղաք ճանպիղատուելու. ուշացնելը վնասակար կը լինի:*

*Լսեցինք որ Աւետարանցիք թէ Կայանցիք թերթեր են բերել եւ Սալոր<sup>1</sup> գիւղի մօտ հանդիպում են ունեցել անուրարի՞ն\*\* թերթեր պատուել եւ փախել են: Սա ի՛նչ բան է: Ենթակոմիտէի նամակ եւ բողկերը [?] ստացանք:*

*Ուրիշ նորութիւններ չկան. այս փոստով նամակ չկար:*

*Բարեւներով՝  
ԱՐԱՄ*

1906 թ. փետր. 21

**Շամ**

1.- Աւետարանը ծածկանունն է Խաչան գիւղի, Կայանը՝ Պստիկ Գեղի. երկուքն ալ Բերկրի գաւառակին մէջ: Սալոր – ծածկանուն Ճանիկ գիւղի, Թիմար գաւառակ:

Միրելի Սարման!

Ուղարկում եմ մի շարք նամակներ եւ ի միջի այլոց Սեպուհի նամակը:

Տէրի մասին բազմաթիւ խմբեր եկան ինձ մօտ նորէն խնդրելու, որ արգելեմ զրան կից լսել էի որ Սեպուհ առաջնորդարանին սպառնազիր է գրել: Ես դրանց պատասխանեցի որ այդ սպառնազիրը յետ վերադարձըք եւ դուք էլ տեղի տւէք մենք ըստ օրինի կը կարգադրենք: Ի պատասխան դրան ստացայ այդ նամակը. չմոռանամ ասել, որ ես չեմ գրել իրեն:

Դրանով քաղաքավարի – թէեւ մի քանի անտեղի նկատողութիւններով – հրատարուում են: Ես նամակս երկրորդեցի Իշխանին եւ պատւիրեցի որ չձեռնադրեն մինչեւ իրողութիւնը կրկին ստուգենք:

Ես չգիտեմ խաբւեցի թէ համոզւեցի Մենիկի եւ Միքոյի խօսքերից, սրանք պնդում էին որ մեծամասնութիւնը կը ցանկանայ: Այսօր ես մեր սովորական ժողովատեղին եմ. երեկոյեան կը սպասեմ ձեզ:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

1906 թ. փետր. 25-ին

Յ. Գ.— Մարկոսի նամակները եւ ոտանաւորները ուղարկում եմ իբր զւարճալի նիւթեր, ճաշից յետոյ կարդալու համար:

Միրելի Տիգրան!

Ուղարկում եմ մի շարք նամակներ. Ծովակ եւ Ատոմ հոս եկան այն խլրտումների առթիւ: Բանից դուրս է գալիս, որ դա միայն թիւրիմացութեան արդիւնք է, որը առաջացել է իրենց դերի լաւ չհասկանալուց: Օր[ինակ], այդ տղան Ատոմի շրջանի մարդ է. մի ի՛նչ որ դէպքի առթիւ յայտնւել է: Առանց ընկերական խորհրդակցութեան, Ծովակ եւ Յուլակ, զինւորներով քշել գնացել են պատժելու. իսկ հետեւանքը արդէն նամակներից կը հասկանաս: Այդ մասին բերանացի խօսեցի երկուսին, որ առհասարակ ընդհ. խնդիրների առթիւ պէտք է խորհրդակցել ապա գործի դիմել:

Անցեալները գրեցի Սալոր գիւղում այդ պատահած դէպքի մասին, թերթերի առթիւ:

Լօլօները թերթեր եւ գրքեր են բերել ու թողել Պարապի քով. չլինի՞ թէ դրանք են: Չե՞ս կարող մի քանի կանայք ուղարկել եւ այդ բոլորը փոխադրել տալ:

Վանքից նամակ չկար. հոն մարդ չկայ:

Սաթը եւ ընկերը ֆուտկու համար շրջան ելան:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

28 փետր. [1906]

**Միրելի Թորգոմ!**

Ստացել ենք քո փետր. 9 Մ. Ք. եւ 13 Քարէն գրւածները, դրան կից եւ մի քանի եկրտողներ: Ուղարկուած դրամներէն տեղ է հասել 105 դահ. [?] + 55 դահ. չէկ եւ Պարոնի միջոցով 182 դահ: Պարոն անունը քեզ քաջ ծանօթ է (քո մարդը որին պարտք էինք 20 ոսկի), իսկ Վաղարշակը այսուհետեւ Դելտա է: Անցեալ փոստին եկաւ եւ 7 հատ «Լոյս», թէեւ 14 էր գրւած:

Ուրեմն առայժմ չեն եկել Մրգաստանի վաճառականին տրուած 2000 դահ. եւ Վրէժ ուղարկուած 1000ը: Զարմանում ենք քո խելքին, որ Վրէժ դրամ կ'ուղարկես, կարծես նրանց չես ճանաչում: Քանի-քանի անգամ ասացինք որ սովորական ճանապարհով ուղարկեցէք եւ առանձին նոյն նամակով, նոյն փոստայով գրեցէք, մենք կը ստանանք. միշտ ստուգելու էք, թէ արդեօ՞ք յանձնուած օրերը կը ճանպէ՛ թէ ոչ. եթէ կարող էք այսուհետեւ ձեր ներկայութեամբ ուղարկել տւէք:

Կարող էք այսուհետեւ ուղարկել Պարոնի հասցէով 100ական սովորական ձեւով – իբր Վաղարշակին. նա այս անգամ չիմացաւ թէ մերն է եւ երեւի չի էլ իմանայ. թող վաճառականը գրէ, որ աղքատ գաղթականների դրամ է, խնդրում է շուտ վճարել:

Այսուհետեւ չէկեր չուղարկէք, որովհետեւ թուջարներ<sup>1</sup> գալու օրերն են, դրանք չեն ծախուում: Մրգաստանցին շատ յոյսեր է տալիս, տեսնենք պիտի կարողանա՞ յ տեղը բերել:

Այսքանը դրամի մասին. ընկալագրերը կ'ուղարկենք Վրէժով. ի դէպ հաշւեցոյցները ուղարկեցինք նոյն միջոցով, ստացա՞ք թէ ոչ. դրան հետ եւ բազմաթիւ նամակներ: Քրդերը լուր բերին բերանացի, որ Սամսոնը գարկել է գուրնաչիներից<sup>2</sup>. եթէ ճիշտ լինի կուլը կ'ուտենք:

Գրում ես որ մեր ստանալիք ռազմական օգնութիւնը շատ չնչին բան է լինելու. այդ էլ մի բան է. էրուած սրտին ա՛խն էլ հովութիւն է. չկարողացաք մասնաւոր միջոցներով գոնէ մի քանի տասնեակ հազար ազա, մի քանի փութ վառօղ, խմոր եւայլն գնել ու ճանպէլ Մենաւոր, որպէսզի այս գարնան անգործ չմնանք. նոյն իսկ կարող ես ուղարկելիք դրամներէն 100 ոսկի յատկացնել դրան:

Գրքեր եւ թերթեր աշխատեցէք ուղղակի Մենաւոր հասցնել, քանի որ Սամսոնը այդպէս եղաւ, Մինարէթ դժւար պէտք է շտկւի:

Խնդրել էինք մեզ ուղարկել անցեալ տարւայ Մուրճի 4, 10, 11 եւ 12 N Ուր. ի՛նչ եղաւ. մեզ համար, Աւարայրի կամ Մինարէթի վրայով ուղարկելու էք մշտապէս Մշակ, Արշալոյս, Յառաջ եւ Մուրճ. եթէ դրամ չկայ դարձեալ մեզ ուղարկելիքներէն վերցրու:

Նամակների համար յատուկ հասցէներ տւինք, թէ քո գնալու օրեր եւ թէ նամակներով. բաւական է, որքա՛ն մարդ վտանգեցինք, մեր այդպիսի անգգուշ քայլերով. միշտ ի նկատի ունեցիր որ գրածդ մելանի գաղտնիքը հասկացել են, չէ՞ որ դա

քո ներկայութեամբ եղաւ...

Նորէն կրկնում ենք՝ ի նկատի ունեցէք հետեւեալ հասցէները. Վաղարշակի ծառայած վայրը 1. տիկին Մրմայ Կարապետեան\*\* 2. Սաթեմիկ Կիրակոսեան\*\* եւ 3. Աննա Մարկոսեան\*\* Սրանք կարող ես գործածել պարբերաբար:

Անցնենք մեր դրուժեան. քանիցս կասկածնք ենք յայտնել մեր դրուժեան վտանգաւորութեան մասին. միշտ այդ արել ենք, որոշ վերապահութեամբ, որովհետեւ չէինք ցանկանում արտասահմանի մեր ընկերների դարտերի վրայ նոր դարտեր աւելացնել: Բայց վերջերս իրերի դրուժիւնը այնպէս դասաւորուեցին, որ անհնարին [է] լուել կամ սառնարիւնութեամբ դիտել:

Արդէն մեզ մօտ (ամբողջ շրջանում) ոչ միայն մենք, այլ եւ ամենապահանջողական մարդիկ կոտորածի հոտ են առնում, նոյն իսկ եղել են ընկերներ, որ բոլորովին յոյս չենք ունեցել վաղուան: Ամենագէշը այն է, որ դէպքի լուրերը առայժմ դառնում են չարսուռի շուրջը:

Այստեղ կը դնենք լուի փաստերը, որոնք ընդ. տրամադրութեան արտայայտութիւններ են, եզրակացութիւնները ձեզ ենք թողնում:

Ա.- Ջամիներում միշտ ժողովներ է լինում եւ բացարձակ կոչեր անում թալանելու եւ կողոպտելու. ժողովուրդը նոյն իսկ երեւակայութեամբ քանիցս թողել չարսուռից փախել է:

Բ.- Արձէշում բացարձակ կերպով արտայայտել է. մի ամիս առաջ հոն թիրք ամբօր կը պատրաստել յարձակելու հայոց եկեղեցու վրայ. բարեբախտաբար ժողովուրդը ցրուած է լինում. միայն 10-15 հոգու վիրաւորում ու լաւ տիում են սրերով եւ փայտերով. կառավարութիւնը յանցաւորներին նոյնիսկ չբռնեց. մինչեւ հիմա էլ եկեղեցին չի բացել, որովհետեւ տաճիկները յայտարարել են ժամ չզարկել, եկեղեցի չգնալ:

Գ.- Հոս կլոր Դարում<sup>3</sup> անցեալները պատրաստել են յարձակելու հայերի վրայ. հայերը մինչեւ առաւօտ որոշ վայրերում հաւաքուած լուսացրել են, իբր թէ դրանք են գնացել տաճիկներին արգելել է:

Դ.- Լուրջ կերպով լուրեր է տարածուում որ կուսակալը հրաժարել է եւ պիտի երթայ Պոլիս...

Ե.- Լսում է որ Պոլսէն 5 պալատականներից մի կոմիսիոն պիտի գայ հոս բարեփոխութիւններ մտցնելու. երեւի կոտորածը ղեկավարելու. ճիշտ դէպքի նախընթաց երեւոյթների նմանութիւն...

Զ.- Այլըր գիւղը խուզարկեցին 200 հոգով Տիգրանին բռնելու համար, բարեբախտաբար ճողոպրեց...

Է.- Տաճիկները միշտ բացարձակ գաճիքի կը տան<sup>4</sup>, սպառնալիքներ կը կարդան. նոյնիսկ պաշտօնական անձինք գնած ապրանքների գները չեն վճարում... եւն. եւն. եւն.: Այս բոլորի հանդէպ կառավարութիւնը սառն հանելուկային դիրք է բռնել. մարդ ոչինչ չի կարող հասկանալ. մի բան պարզ է, որ ամենախիստ միջոցներով մտածում են պարագլուխներին ձեռք բերել: Քիւրդ ժողովուրդը առայժմ անտարբեր վիճակի մէջ է... Ի՞նչ կը լինի վաղը, Աստուած գիտէ. մենք մեր ունեցած ուժերը մոբիլիզացիա (պատրաստ դրուժիւն) ենք անում, բայց ի՞նչ անենք, ձեզ քաջ ծանօթ է, դրուժիւններնիս ըստ ամենայնի ողբերգական է:

*Թերեւս էլ բախտ չունենանք երկար գրելու... Տեղացի ընկերները լաւ են եւ յուսով ենք, որ պիտի կարողանան վտանգի ըռպէներում յարաբերութիւնները կանոնաւոր վարել... Կոմսին եթէ ժամանակ ունեցանք կը գրենք...*

*Պապիկի<sup>5</sup> հետ յարաբերութիւնը ի սպառ կտրուել է դէպքերի պատճառով: Համբոյրներով բոլորիդ:*

[ԱՐԱՄ]

- 1.- Վաճառականներով:
- 2.- Սամսոն, Գարեգին – ծածկանուններ Ստեփան Թադևոսեանի. գունաչիւները հնչակեաններն են: Լուրը ճիշդ չէր անշուշտ:
- 3.- Կլոբ Դար – Այգեստանի թաղամասերէն:
- 4.- Կը հայիոյն:
- 5.- Գիսակ, բանտի մէջ:

---

Փաստ. 665-109

## 190

### Սիրելի Սարման!

*Երէկ հոն էի. հաւաքւած էին ամբողջ Որբանոցականները. առայժմ բան դուրս չեկաւ. դրանք կ'ուզեն միանալ 10 խմբով, հնչակեան հատւածներով. այնպէս կ'երեւայ որոշ պահանջներ պիտի դնեն: Քեռիդ [ուռսատառ [?]] եկաւ եւ մեզ խանդարեց. բանից դուրս է գալիս որ նրան չեն կանչել. եկաւ եւ ասաց որ քեզնից է հասկացել իմ հոն լինելը եւ նրանց հոն հաւաքուելը. բաւական գէշ եղաւ տպաւորութիւնը. թելերը բացուում են. ա՛խր ի՞նչ կարիք կար նրան յայտնելու, կամ նա ինչո՞ւ ասաց...*

*Այսօր եթէ կարեւոր գործ ունէք ք[աղաքում]... Կ. Կոմիտէի ժողով անենք. ես ինդիւրներ չունեմ: Գրքեր եւ թերթեր եկել են. ես չեմ տեսել. այսօր ես Տէր Արիստակէսեանց\*\* փողանն եմ Բարբառոժեան-ի\*\* տունը. եթէ կարող ես մտիր:*

*Տիգրանը Կտուց\*\* է հասել. երեւի շուտով կը գայ:*

ԱՐԱՄ

[1906 թ. մարտ 3]

191

Սիրելի Տիգրան!

Այս տղան գալիս է դպրոցի գործի համար եւ իր ռոճիկի խնդրի համար անձամբ քո ներկայութեամբ կարգադրութիւն անելու:

Այդտեղից երեւի շուտով քաղաք կու գաս. նորութիւններ չկան:

Բարեւներ  
ԱՐԱՄ

1906 թ. 6 մարտ

192

Սիրելի Տիգրան!

Երկու նամակներդ էլ Հեպթադէմից<sup>1</sup> եւ Արցախից<sup>2</sup> ստացանք. ներփակները ուղարկեցի ըստ պատկանելոյն:

Պարապի<sup>3</sup> մօտ եղած ապրանքների մեծագոյն մասը եկել է. այնպէս որ ի գուր պիտի լինի մարդ ճանպելը. ներփակ կը ստանաս N 13<sup>4</sup> մի օրինակ. քիչ թւով լինելու պատճառով ամէն շրջան մէկ-մէկ օրինակ է ուղարկել: Գրքերից էլ ուղարկեց մնացած շրջանները. եթէ այդտեղ Ղարիբի<sup>5</sup> գրքոյկներից կարիք ունեն կրնանք մէկ-մէկ օրինակ ուղարկել:

Թորգոմից նամակ առանք եւ 237 ռանկի\*\* ընդամէնը փոխադրել է 6050 ռուբլի\*\* որից ստացել է առայժմ վերոյիշեալը եւ 10-ը. գանձել է միայն վերջինը. մնացածները դեռ չեն հասել:

Գրում է որ ռազմական\*\* օգնութիւն չսպասենք, դէպքերի պատճառով:

Ուրիշ նորութիւնների մասին կը պատմեմ անձամբ. գրելը մի քիչ վտանգւած է:

Բարեւներով  
ԱՐԱՄ

1906 թ. մարտ 10-ի

Ամրոց

- 1.- Հեպթադէմ – ծածկանուն Կտուց անապատի:
- 2.- Արցախ – ծածկանուն Ա. եմթակոմիտի, Թիմար գաւառակի գիղերէն:
- 3.- Պարապ կամ Մելօ, զինուոր, փոխադրութեան գործով զբաղող:
- 4.- No 13 – լռելեայն պետք է հասկնալ «Դ-րօշակ»ի թիւ 13ը, այսինքն՝ 1905 թ. Դեկտեմբերի հաւմարը (Նոյեմբերին 2 համար լոյս ընծայուած էր):
- 5.- Ղարիբ – ծածկանունն էր Աւետիս Ահարոնեանի:

**Սիրելի Սարման<sup>1</sup>!**

**Տիգրանը\*\*** այս գիշեր կու գայ հոս. լաւ կը լինի վաղը միասին մի ժողով անենք:  
 Այսօր առանձին նորութիւններ չպատահեց. եթէ կայ էլ ես չգիտեմ:  
 Ուղարկում եմ Ք[աղաքի] Կ[ոմիտէին] մի ծրար: Վաթ[ան]ը<sup>2</sup> այն մեղանը չպատ-  
 րաստեց որ նամակներ գրենք. զարմանալի ծուլութիւն է...  
 Ի՞նչ կայ չկայ գրեցէք. մինչեւ ես նամակ չգրեմ, երեւի դուք չէք շարժւի:  
 Բարեկամների մօտ գնացի՞ք. ի՞նչ կը խօսեն:

**Բարեւներ  
ԱՐԱՄ**

1906 թ. մարտ 13-ին

**Շամիր**

1.- Սարման – ծածկանուն Համազասպ Բաղէշցեանի:  
 2.- Վաթան – ծածկանուն Ղեւոնդ Մելոյեանի:

**Մենաւորի ընկերներին**

**Սիրելիք!**

Մեր դրութիւնը գէշացաւ. կոտորածի լուրջ լուրեր կան. յամենայն դէպս ամէն  
 միջոցի կը դիմեն մեզ բռնելու: Գլուխս արդէն 200 ոսկի է գնահատուած: Այս մասին  
 գրել եմ Սամսոնին, ներփակ նամակով. անմիջապէս հասցրէք իրեն:  
 Եթէ լուրեր ունէք, հաղորդեցէք. իմ մասին չմտածէք. ջրի կուժը, ջրի ճանապար-  
 հին պիտի կոտորի: Հոս նամակներ կը գրէք Կ. Կոմիտէի հասցէին:  
 Ուղարկում եմ համբոյրներ, թերեւս վերջին:

**Բարեւներով  
ԱՐԱՄ**

1906 թ. մարտ 13-ին

**Շամիր**



**Միրելի Թորգոմ!**

Անցեալները միաժամանակ ստացանք նոյ. 16, դեկտ. 14, յունւար 2, եւ 21 ու 22 թւակիրները. ուշ ստանալու պատճառը Սամսոնի Մինարէթ չլինելն էր եւ Ընձայրի Մենաւորից բացակայելը: Իսկ անցեալ փոստին ստացանք Քարից գրեւծ փետր. 27 թւակիրը:

Միշտ կը խնդրես նամակներ գրել. արդէն բաւականաչափ գրել ենք Գարեգինի միջոցով, որը դեռ չի ուղարկել, իսկ այս կողմից միշտ գրել ենք եւ պիտի գրենք: Ամէն անգամ էլ նամակ գրելուց յամենայն դէպս այն համոզումը ունենք, որ մեր պահանջներին գոհացում տւող չկայ, որ ամէնքը մեզ մոռացել են կամ մոռանալու վրայ են: Ի՞նչ խորհուրդ տանք, ի՞նչ խնդրենք քեզ, քանի որ քեզ էլ լսող չկայ: Մեզ համար ամենալաւ դրութիւնը այն է, որ մի անգամից մի անգամ մեզ ասեն, թէ Ձեզ ընկեր չենք ճանաչում, կամ ձեր պահանջներին գոհացում չենք կարող տալ: Թող չարդարանան որ ներկայ պարագաները կրիտիկական է եւ իրենց համար. ամէնից առաջ, լաւ ժամանակն էլ այդպէս էին, իսկ գալով կրիտիկականութեան, մեր դրութիւնը — մանաւանդ այժմ — իրենցից ոչնչով պակաս չէ, եւ չի էլ լինի... Եթէ յեղափոխական եւ այլ հասարակական պարտականութիւնները ստիպում են Կազմակերպութեան ուժերի մակսիմումը պահել Կովկաս, նոյն յեղափոխութեան բարոյականութիւնը պահանջում է որ գոնէ ուժերի միմիմումը (ամենաքիչ մասը) ուղարկուի երկիր: Եթէ Կովկասի մի գիւղ, մի շրջան, մի քաղաք պահելու համար, հերոսական ճիգեր է անուում, որքան աւելի հոգածութեան արժանի է մի ամբողջ երկիր, դարերով նահատակած մի ամբողջ ժողովուրդ... բայց ո՞վ է լսողը... կամ էլ հաւատացողը. Նախիջևանը մօտ է իրենց քթին, իսկ Երեւանի հարցը իրենց կաշու խնդիրն է: Իսկ այստեղ... այստեղ միայն հեռու, ամէնքից մոռացած, ամէնքից ատւած մի երկիր է, իսկ նրա գործի ղեկավարները, մեզ պէս թշուառ մահկանացուները ո՞վ է մեզ մարդ[ի] տեղ դնողը: Թէ մենք, թէ մեզնից առաջ, յուսամ թէ մեզնից յետոյ, ի՞նչ որ նպաստ ստացել ենք արտասահմանից, դա եկել է ոչ կամաւոր, ոչ ժողովրդի այս կամ այն որոշումը յարգելու նախանձախնդրութեամբ, այլ միայն եւ միայն բռնի կերպով ենք կորզել կամ խլել. փաստերը պերճախօս են. անցեալ տարի եթէ մի Կոմս չլինէր սովամահ կը լինէինք, այս տարի եթէ քո մուրացկանի խնդիրները չլինէր, պիտի ժողովրդի առաջ խայտառակէինք: Այժմ էլ ամենալուրջ կերպով մտածում ենք, աշխան համար նոր մարդ ուղարկել: Բայց համբերութիւնն էլ չափ ու սահման ունի, էլ չենք կարող համբերել, այս դրութիւնը մեզ հոգեպէս եւ Ֆիզիքապէս փչացրեց. մենք չենք ուզում մուրացի[կի] դեր ստանձնել մեր ընկերների հանդէպ. մենք պահանջում ենք, կամ մեր իրաւունքները յարգել, կամ միանգամայն կազմակերպութեան սնանկութիւնը յայտարարել երկրի գործի վերաբերմամբ... Բաւական է, որքան մեզ երեք հրացանով եւ 1000 ուռբով խաբեցին:

Մեզ համար պարզ չէ եւ մի խնդիր. դուրս գնացող բոլոր ընկերներից խնդրել

ենք մեզ համար բազմաթիւ մասեր գնել, մանաւանդ զատուոր եւ կարողակաւ: Բայց ո՛չ մէկն էլ այդ չի յաջողել: պատճառը մեզ համար կատարեալ գաղտնիք է: Եթէ դրամ չկայ, միշտ էլ ասել ենք, որ կամ մեզ ուղարկելիք դրամից վերցրէք, կամ թէ չէ այստեղի ուղղակի դրամ փոխադրենք: Եթէ մարդ չկայ, ինքներդ արէք դրամի ուժով, եթէ այլ կազմակերպական արգելքներ կան, գրեցէք որ մի անգամից ձեռք քաշենք այդ երազական մտքից: Եթէ այս հարցերին մանրամասն չպատասխանէք, ինչպէս ասացինք, աշնան ստիպւած պիտի լինենք նոր մարդ ուղարկել:

Շուտով ապրիլ կը լինի դեռ խոստացածդ ապրանքները Մենաւոր չհասան: Ա՛խ, այս խոստումները, մանաւանդ նրանց չկատարելը մեզ հոգեկան հիւանդ դարձրեց:

Գրամներից միայն Վրէժի 1000 ուռբլի չէ ստացւել, մնացածները ստացանք: Ընկալագրերը ուղարկեցինք Մենաւոր: Վրէժ ուղարկւած գումարների վրայ խաչ դրէք:

Գործը վերջնական կերպով անորոշ դրուժիւնից փրկելու համար, մենք մի դարման գրեցինք, իսկ այս դարմանը, մեր գործերի համար առանձ[ին] կոմիսիոնի ընտրուժիւն է, որոնք ո՛չ մի տեղի հետ կապ չեն լինելու եւ ո՛չ մի տեղական գործով էլ զբաղւելու իրաւունք չէ ունենալու: Եթէ այս յաջողեցիք՝ լաւ, մանաւանդ երբ այդ ընտրի ձեր ներկայութեամբ եւ ձեր աչքով էլ տեսնէք նրանց աշխատանքի արդիւնքը: Այլպէս ոչ մի խօսքի, եթէ նա նոյնիսկ անկեղծ մարդու բերանից էք լսում, չէք հաւատարու, խօսքեր միշտ մնացել են խօսքեր...

Միւս կողմից էլ աշխատեցէք ի՞նչ կարող էք ձեր ձեռքով անել, ձեր ձեռքով ճանպէհ, ձեզ հետ բերել: Ժամանակները փոփոխական են, նրա վրայ յոյս դրէք, ի՞նչ բան ֆ.....:

Հայտարանցոց Քէօռ Հիւսէինի զօրքերը յետ են ուղարկել, իսկ ինքը իբր թէ մէկ գնալուց նաւը խորտակւել է եւ բոլորին ծովի յատակ տարել, մի քանիսն էլ ասում են որ Պոլսոյ մէջ են խեղդել ծով թալել:

Սրանց մասին գրածդ միջոցը չարժէ գործադրել: աւելի լաւ կը լինի յայտնի թուրք յեղ[ափոխականների] անունով թուուցիկներ տպագրել տաք եւ հոս ուղարկէք ցրելու համար, մանաւանդ Արաբական շարժման մասին, մեր նպատակների մասին եւ Տաճկաստանի շուրջը դառնող խնդիրների մասին: Ինչպէս գիտես այս շատ մեծ տպաւորութիւն է թողնում, մանաւանդ երբ թուրքի կողմից է, այս մասը թող իրեն վրայ վերցնէ խմբագրութիւնը:

«Յառաջին» կանոնաւոր կերպով թղթակցութիւններ ուղարկելու համար, թող մի քանի հասցէ տան, որ պարբերաբար ուղարկենք: Ի հարկէ գրելու ենք մեր ունեցած միջոցներով: Թո՛ղ մէկն ու մէկը ընկերներից բանայ եւ ուղարկէ խմբագրութեան: Մեր կողմից խնդրեցէք «Յառաջի» խմբագրութեան, որ «Հայկական խնդրի» վերաբերեալ թէ հայ եւ ուսու թերթերի մէջ լոյս տեսած յօււածները կտրեն մեզ ուղարկեն, Գարեգինի հասցէին, պատիկ յօււածները կարող են ուղարկել եւ ձեզ տրւած հասցէներով: Այդ կարեւոր է, որովհետեւ մենք չգիտենք ի՞նչ տեսակ նիւթեր աւելի հետաքրքիր կը լինեն: Յամենայն դէպս, մինչեւ ձեր հասցէներ տալը, Մենաւորով յօււածներ ուղարկեցէք:

Հաւաքած գրքերը շուտով Մենաւոր ուղարկեցէք, ապրանքների հետ: Աշխատեցէք մի քիչ էլ այնալիի ծայրեր գտնել:

Մեր վիճակի մէջ զգալի փոփոխութիւն չկայ: Կառավարութիւնը անորոշ դիրք է բռնել. ըստ երեւոյթին հրահանգների է սպասուում կենտրոնից: Թուրք ժողովուրդը շարունակում է ատամներ կրճտացնել: Հիւպատոսները Պոլսէն իրաւունք են խընդրել, խուզարկութիւններին անձամբ մասնակցելու. սա էլ նոր մոդա է. մինչեւ հիմա չի նովնիկ հիւպատոսներ գիտէինք, այսուհետեւ բախտ կ'ունենանք եւ ժանդարմ հիւպատոսներ տեսնելու: Սովը սոսկալի է, անօթութիւնից մահանալու շատ դէպքեր է եղել: Թէեւ հացը չի թանգացել — 50-60 դահեկան չափը. աշխատանք չկայ. դեռ կատարեալ ձմեռ է, թէեւ ապրիլ 2ն է:

Եղբորդ 3.5 տարի վճիռ տուին: Տուրքերի գանձումը սոսկալի ձեւերով շարունակուում է: Կառավարութեան սնտուկը կատարելապէս դատարկւել է, անցեալ շաբթեան արձակուող (տուն գնացող) զինւորները ռոճիկ չստանալու համար ցոյցեր են արել եւ մի քանի պաշտօնեայ տփել: Հեռագիր եկաւ որ մեր Կայ-բէկին մուշուրը կանչել է Երզնկա, երեւի Հիւսէինի մօտ ուղարկելու. լսեցինք որ մտադիր է գնալ: Մուստաֆա բէկը ամբողջ Ապաղէն տիրեց, Կոփը փախել է Բերկըր<sup>1</sup>:

[2 Ապրիլ, 1906]

1.- Գրութիւնը կը թուի անաւարտ ըլլալ, թուական ալ չունի: Վերջընթեր նախադասութեան աւարտին յիշուած «դեռ կատարեալ ձմեռ է, թէեւ ապրիլ 2ն է», իրատունք տուաւ մեզի նամակը թուագրել Ապրիլ 2ին: Գալով անաւարտ ըլլալու իրողութեան, կարելի է ենթադրել որ այս գրութիւնը պարզապէս սեւագրութիւն է զաղտնի թանաքով արտագրուելիք իսկական նամակին, ուր պիտի աւելցուէր բարեւագիր, ստորագրութիւն, թուական եւայլն:

Միրելի Մինաս<sup>1</sup>!

Առանք — ես եւ Վարդանը<sup>2</sup> — քո նամակը: Վերջին անգամ եկար մեզ աւելի զարմացնելու քո տարօրինակ կարծիքներով. որպէսզի մենք մեզ ազատած լինենք քո կողմից մեզ յատկացրած մի քանի ածականներից, ստիպւած ենք քեզ մի առաջին եւ վերջին պատասխան տալու. թէ եւ Վարդանն էլ կ'ուզէր առանձին գրել բայց երկուսիս կարծիքները միացնելով գրում ենք քեզ այս վերջին նամակը:

Մեզ ամէնից առաջ զարմացնում է քո այն կարծիքը, որ կարծում ես այսքան տարիներ գործի մէջ լինելով, հազար անգամ ատամի զարկած լինելով արտասահմանի բոլոր ընկերներին, գործնականապէս ակա[նա]տես եղած լինելով արտասահմանի խոստումներին եւ նրա գործնական արտայայտութիւններին — որ մենք այդ բոլորից յետոյ էլի վարդագոյն ակնոցներով ենք նայում արտասահմանի վրայ եւ մեծ յոյսեր ենք տածում դէպի նրանց օգնութիւնը... է՛հ մտածելու իրաւունք ունես, բայց բարի պիտի լինես մտածելու որ քո ընկերները եթէ ոչ աւելի, քեզ չափ խելք ունեն, եւ երեւոյթները կարող են այնպէս լուսաբանել ինչ որ լուսաբանում ես դու: Մի կողմը թողած քո «կրախմալաւոր» [?] եւ այլ բառերը, որոնք հասարակական գոյն չեն կրում, մենք միանում ենք եւ վաղուց միացած ենք եղել քո համոզմունքների հետ: Մի բան որ մեզ համար պարզ է եղել եւ քեզ համար ոչ, այդ այն է, որ մենք երկիր ենք եկել ոչ այն յուսով որ արտասահմանը մեր նոյն իսկ մինիմալ պահանջներին բաւար[ար]ութիւն պիտի տայ, կամ լաւատես ենք մեր արտասահմանի կազմակերպութիւնների վերաբերմամբ, կամ կարծում ենք թէ Սարուտանը իրեն շապիկը թողած այստեղի շապիկի մասին կը խորհէ, եւ այլն, եւ այլն, ամենեւին ոչ: Մեր երկիր գալու դրդիչ եւ հասարակական պատճառները եղել է այն, որ մենք մեր կրթութեամբ, խառնածքով եւ իտէալներով պատրաստւել ենք այս ժողովրդի դատի վերաբերմամբ որոշ դեր կատարելու, դեր ոչ թէ սիրողի, այլ խօսկան արտիստի... նկատելով հանդերձ որ քեզ մօտ գործողութիւնները հեռու են կազմակերպական կոլեկտիւ գոյն կրելուց, այլ կախած են այս կամ խումբ ընկերների արտագոյ կարգի ճիգերով եւ եռանդով գործելուց — մենք չէինք կարող համոզմունքների մէջ գաղափարական դաւաճանութիւն կատարել, մենք պէտք է կամ ի սպառ հրաժարենք հասարակական գործունէութիւնից կամ իբրեւ որոշ գաղափարական պրոպագանդի աշակերտներ, պիտի մեր գործողութիւնները եւ ճիգերը թափէինք այն վայրում, որի համար պատրաստւել ենք, կամ որի համար այնքան խօսել ու վիճել ենք. եթէ այդ բոլորը անկեղծ էր, մենք պիտի գնայինք երկիր եւ եկանք, մեր գալով կարմրացնելու այն բոլորը Փանֆարոններին, որոնք միշտ բարձր գաղափարների անուկով գիտեն խօսել, բայց բարձր գաղափարների համար զոհաբերելու արժանիք չունեն... Ահա այս է մեր դրդիչ անհատական պատճառները որ մեզ ստիպեց երկիր գալ. մենք չէինք կարող բաւականանալ եւ ոչ մի ամիս չէինք մնալ ոչ Մենաւոր, ոչ Աւարայրում, ոչ Մինարէթում, ոչ Վրէժում<sup>3</sup> եւ գործունէութեամբ այնքան

Հետաքրքիր Սարուստանում, որովհետեւ այդ քայլը ըստ մեզ կամ գաղափարի դա-  
ւաճանութիւն է, կամ մի այնպիսի դրուժիւն է, երբ մարդու մէջ դեռ զարգացման  
բարձր աստիճանին չէ հասել ներս գալու գաղափարը, կամ մէկը կամ միւսը... Ի  
հարկէ քեզ եւ բոլոր հասարակական մոտիւններով մտածողներին քո այդ բացատ-  
րութիւնը բաւարար չէ, որովհետեւ այդ բացատրութեան մէջ թերեւս ամէն բան  
կայ բացի հասարակական մոտիւններից<sup>1</sup>... Քեզ եւ քեզ պէս մտածողն իրեն այդ վեր-  
ջին ապաստանից էլ զրկելու համար այսքանը կարող ենք ասել, որ մեր եւ առհասա-  
րակ բոլոր ընկերների նպատակը է, – գործերը այնպիսի հիմքերի վրայ դնել որ եր-  
կիրը կարողանայ ինքը իւր միջից գոնէ կարեւոր տարրերից մեծագոյնը արտադրէ,  
կամ գոնէ ինքնապաշտպանողութիւնը կատարեալ պայմանների մէջ դնել – մի բան  
որի սկիզբը դրել ենք եւ եթէ գլուխներնիս ուսերնիս վրայ մնայ, կը շարունակենք:  
Մեզ ուղղակի ծիծաղ է պատճառում եւս այն բառերը – թէ Աստուծոյ սիրոյն հրա-  
ժարւեցէք յարձակողական դիրքից – խեղճ ընկեր! Ինչ յարձակողականութիւն, ինչ  
ձեռնարկ, ի՛նչ երազ. մենք առայժմ մտածում ենք մեր գոյութիւնը պահպանել եւ  
որքան կարող ենք մեր անմիջական ընկերներին ներս բերել եւ ապա գործ սկսել:

Իսկ թէ նամարդ դուշմանը յանկարծակի կը բերէ եւ մենք չենք կարող մեր հա-  
սարակական իդէալները լրիւ իրագործել, գէթ իբրեւ անհատներ խիղճերնիս հան-  
գիստ կը մեռնենք, անիծելով բոլոր կեղծ փարիսեցիներին...

Իսկ թէ ինչպէս ենք հաշիւ մաքրելու Սարուստանի կամ այլ առհասարակ դրսի  
ընկերների հետ, այդ արդէն մօտիկ ապագայում կը տեսնես եւ արդէն սկսած կը լի-  
նես տեսնել: Կարծածիդ չափ էլ միամիտներից չենք...

Ահա այս է մեր պրոգրամը եւ այս մեր վերջին եւ առաջին խօսքը քեզ – դու մեր  
տղամարդ ընկերն ես, բաց ճակատով արի, մենք քեզ զրկաբաց կ'ընդունենք, իսկ  
եթէ այնքան քաջութիւն չես կարող ունենալ, մնաս բարեւ, այլեւս մեզ համար Մի-  
նասը պիտի մեռած համարենք եւ անուճը անգամ չենք տալ...

ԱՐԱՄ  
ՎԱՐԴԱՆ

1906 թ. մայիս 10-ին  
Շամ

1.- Մինասը՝ Տէր Մինասեան Ռուբէնն է, որ այդ օրերուն կը գտնուէր կը գտնուէր Վասպուրական՝  
Լեռնապարի շրջան:

2.- Վարդան Շահպազն է (Տօնիկեան):

3.- Յաջորդաբար՝ Ս. Թադէ, Խոյ, Սալմաստ, Թարիզ: Սարուստանը Կովկասն է:

4.- Պատճառներից, առիթներից:

**Սիրելի Ընձայր!**

*Ստացել ենք քո, Աւետարանցի Արամի, եւ կիրճեցի Չարքազի ձեռքով ուղարկուած նամակները եւ հետեւեալ ապրանքները:*

*Մի սմիտ ատրճանակ 39 ծայրով, կէս փութ խմոր:*

*Չարքազից 931 հատ մարտինի ծայր: Ինը հարիւր երեսուն եւ մէկ հատ: Սրանք ապահովաբար հասան մինչեւ հոս: Ծայրերից կորել է 10 հատ:*

*Թերթերը ճանապարհն են, շուտով կը գայ: Աւելորդ բեռ են այդ թերթերը: Հազար անգամ գրեցինք, թէ մեզ ուղարկեցէք 100 Դրօշակ, իսկ մնացած թերթերից՝ որքան կը լինի. միայն պայմանով որ նորերը լինեն. մեծ քանակութեամբ թէ դուք եւ թէ Սամսոնը ուղարկել էք NN 11, 12, 13, 1, 2 բայց էլի այս անգամ նորէն կ'ուղարկէք. ա՛խր նախկին ուղարկածները մի մոռանաք եւ իրար յայտնեցէք, թէ այսչափ թերթ ուղարկեց: Դրանց փոխարէն եթէ ապրանք ուղարկէիք, կամ գոնէ գրքերը ուղարկեցէք:*

*Արամին (Աւետարանցի) եւ իր ընկերին ու եղբօրը, վստահաբար կարող էք միշտ ապրանք տալ. այս գիծը առայժմ շատ ապահով է. աշխատեցէք օգտուել: Զաֆարը կը գայ ընկերներով, բայց գիշերների կարճութեան պատճառով չեմ կարծեր թէ յաջողութիւն ունենան:*

*Առ այժմ օգտուելու էք Աւետարանի<sup>1</sup> գծերէն. գծերը կանոնաւորուած է եւ մարդիկ պատրաստուած:*

*Սաֆոյի<sup>2</sup> մօտ եղած կոթերը կ'առնենք. այս քանի օրը նրա մօտ մարդ կ'երթայ: Ապրանքները երբ սահմանից ներս անցաւ, արդէն մեր պատասխանատուութեան տակն են. վրէժցիք կարող են մեզնից բացատրութիւն պահանջել — մենք ինչ ասում ենք այն արէք, պատասխանատուութիւնը թողնելով մեզ վրայ:*

*Դա ի՞նչ գինւոր Գրիգոր է. գինւոր Ազիզից բան չհասկցանք եւ երկուսն էլ չտեսանք. խենթին մէկն է:*

*Այդպիսի մարդիկ որ գալիս են իրենց տանը ապրելու, գոնէ իբրեւ գաղթական ուղարկեցէք որ գծերը չվտանգեն եւ աւելորդ տարածայնութիւն չլինի. մի ժամանակ կ'ասէիք մարդու տեղափոխութիւն չլինի. հիմա ի՞նչ պատահեց:*

*Նամակները կ'ուղարկենք ըստ պատկանելոյն, Թոմասի մարդը եթէ գալիս լինի կ'ուղարկենք:*

*Մոռացայ գրել որ 4000 պիստոններ էլ են ստացուած:*

*Շալդ պատուիրեցի չարսուից առնեն եւ Մանուկի հետ ուղարկեն:*

1.- Աւետարան – ծածկանուն Խաչան գիւղի, Բերկրի գաւառակ:

2.- Սաֆօ – կեղծանուն հայտարարցի Մեհմէտ բէկի, համիտիէ գօրքի հրամանատար, որ կը գործակցէր փոխադրութեան գործին:



**Սիրելի Թորգոմ!**

Գարեգինին ուղարկված գրքերի հետ նամակը ստացայ:

Քո բոլոր նամակները ստացել եւ պատասխանել է:

2 ամիս է հիւանդ անկողնու բաժին եմ, Ֆիզիկապէս մի քիչ կազդուրւեցի, իսկ աչքիս մէկը կուրացաւ կամ աւելի ճիշտ կուրանալու վրայ է, շնորհիւ բայլթուլ [?] դոքտոր Աշերին<sup>1</sup>:

Այս առաջին նամակն է որ գրում եմ: Տղաները քեզ գրել են Մ. Ք. եւ Քարի բոլոր հասցէներով: կը զարմանամ որ չես ստացել:

Վիճակներնիս շան դրուժիւնից գէշ է, ես հիւանդ, բանտը դժոխք, Պապիկ<sup>2</sup> եւ 26 ընկեր Փուլիս [?], Արմենականները աջ եւ ձախ շահատակուժիւններ են անում. գիւղերը խառնուած. խուզարկութեան եւ դաւաճանութեան լուրերը հրէշաւոր, ամէն բան երեսի վրայ. գործերը բացւած, մարդ, մարդ, մարդ աղաղակելիս. իսկ մարդ՝ Աստուած տայ:

Այս վիճակով ինչ կ'ուզէք որ անենք, հրաշք ստեղծենք, բայց այս բոլոր անյաջողութիւնները բան թողի՞ն մեր մէջ:

Գոնէ Գրիգորը<sup>3</sup> շուտով գար. այդ էլ մեծ մխիթարութիւն է. հազար անգամ գրեցինք, գոնէ մի կողմը մնայ գործը: Բա, հասարակ ընկերական պարտականութիւններ էլ չեն գրում այդ մարդիկ. եթէ աչքս տեսնէր, Ֆիզիքապէս առողջ լինէի, ձեր քէֆ. բայց գիշերները շատ անգամ շալակով ման կու գամ. է՛հ վերջապէս չգիտեմ ինչ գրեմ. երանի թէ գնդակից մեռնէի, եւ այսպէս կենդանի մեռեալ չլինէի եւ այսքան ցաւերն էլ չգգայի:

Գծերը բացել են. ապրանքների մի մասը արդէն ստացւել են: Զաֆարը եւ ընկերները կ'երթան, էլ ի՞նչ գրեմ. ո՛չ մի մխիթարական բան չկայ:

Բայց եւ այնպէս ի՛նչ որ էլ լինի, երկրից հեռանալ չկայ. թէկուզ կոյր, յամենայն դէպս աշխատելու եմ...

Դրախտի տղային մի տեղ դրէք, աշխատելու եկաւ հոտ:

Քանի օր Նիկոլ է եւ ընկերներ Հոգեվանք<sup>4</sup> ուխտի են գնացել, նրան[ց] քէֆն էլ հիմա է «կանգնել»:

է՛հ, յոգնեցի:

Համբոյրներով  
ԱՐԱՄ

15 մայիս, Շամիր

1.- Ամերիկացի միսիոնար, բժիշկ Վանի հիւանդանոցի:  
2.- Պապիկ – Գիսակն է, Յովի. Սերենկիլեան:  
3.- Խօսքը Շամիլի մասին է, բուն անունով Օտապաշեան Պօղոս:  
4.- Հոգեվանք կամ Հոգեաց վանք – վանք եւ գիւղ Հայոց Չոր գաւառակի մէջ:



**Միրելի Ընձայր!**

Ջաֆարը երեք ընկերներով կը գայ: Սրանց այս անգամ աշխատեցէք խմոր, մանաւանդ կոթերի մասեր տալ. գիծը կասկածելի է առ այժմ. մինչեւ աշուն պէտք է գգուշ լինել:

Սրանց (չօլօներին) լաւ մը սիրաշահեցէք, փէշկէշ-մէշկէշ տւէք, եթէ դրամ չունէք պարտքով էլ լինի սրանց մի նուէր տուէք. մենք դրամ կ'ուղարկենք:

Սրանց միշտ հրապուրեցէք ապագայի հեռանկարով, ասացէք որ եկող անգամ 10 կոթ պիտի տանէք, եկող անգամ դրամ պիտի տանէք եւ այլն:

Մեր Յոլակը<sup>1</sup> հոս վտանգւելու պատճառով կ'ուղարկենք հոտ. Ջաֆարը շատ է աղաչում, ձեր Յոլակը փոխարէն տուէք բերէ:

Ջաֆարին բերանացի խօսւած է. նա մանրամասները կը պատմէ:

Մեր կանչած ընկերներէն եթէ եկող լինի, աշխատեցէք Աւետարանի գծով ուղարկել. մինչեւ սահման ձիով, իսկ ապա ոտքով, գաղթականի կըլլով:

Չէք գրում թէ որքան ապրանք կայ, որ ըստ այնմ մարդիկ ուղարկենք կամ պատրաստութիւն տեսնենք: Դուք սուրհանդակներին վարձատրեցէք — եթէ կարող էք — միայն կիրճեցոց, իսկ Աւետարանցոց եւ Խուփ գիւղի մարդկանց մենք կը գոհացնենք:

Խուփ գիւղի ուէսին մի նամակ գրեցէք այդ կողմից եւ յայտնեցէք որ մենք ձեզ նրա մասին յայտարարել ենք, իբրեւ խմբապետ գիւղի եւ գործող. ամբողջ է, ցաւացի է, թէ Ընձայր մեզ նամակ չի գրեր:

Աւետարանցոց եւ կիրճեցոց հետ ուղարկւած ապրանքները տեղ հասան բացի թերթերէն, որոնք շուտով կը գան: Աստուծոյ սիրոյն հին Դրօշակ մի' ուղարկէք. միշտ էլ Մինարէթին իմաց տուէք չուղարկելու. մեզ հարկաւոր է N 4-ը, 100 հատ, (միշտ այդպէս) իսկ Յը բաւական է: Սրանցով թերթ չուղարկէք, ապրանք տւէք ու մեզ վերաբերեալ նամակներ. աշխատեցէք միշտ եղած ապրանքների տեղափոխութեան առաջնակարգութիւն տալ:

Աւետարանցի Արամին եւ ընկերոջ միշտ վստահաբար ապրանքներ տւէք: Այդ գծից օգտուեցէք քանի քոչւորները չեն եկել:

Եթէ քաղաքացիներ են գալիս երկիր անցնելու, իբրեւ գաղթական կարող էք յանձնարարել սուրհանդակներին որ բերեն. իսկ գինուր անւան կամ ընկեր անւան տակ ոչ ոքի չուղարկէք, առանց մեր գիտութեան:

Մանրամասները Աւետարանի գծով:

Համբոյրներով  
**ԱՐԱՄ**

1906 թ. մայիս 16-ին յԱմրոց

1.- Յոլակ – ձիու անուն:

200

Միրելի Տիգրան!

Ծովակիրն մի ինչ որ է լիրբ վիրաւորել է. եկաւ հոս, ուղարկում եմ քովդ, դրան  
այնպէս պատժիր, որ այդպիսի լրբեր էլ չհամարձակուեն գործիչներին վիրաւորել:

Այսօր Թորգոմէն մի նամակ առանք, 226 ոսկի\*\* դրամ է եկել. առանձին նորու-  
թիւն չկայ. ինքը գնացել է Բագու:

Իշխանի դէմ ի՛նչ որ է լուրեր են պատրաստուում, Հաթամ բէկ գնացել է այն  
կողմերը:

Հոս նորութիւն չկայ:

Համբոյրներով  
ԱՐԱՄ

1906 թ. մայիս 31-ին

201

Միրելի Թորգոմ!

Լօ-լօների բերած նամակից յետոյ (մայիս 7 թւակիր) քեզից նամակ չառանք, թէ-  
եւ մենք շարունակ գրել ենք. վերոյիշեալ նամակին պատասխանել ենք փոստով Կա-  
րապետի հասցէով: Աշխատիր շուտ-շուտ գրել նամակներ:

Տղաները հասել են Մինարէթ եւ հոն նստել: Գրիգոր եւ Մալխաս Վրէժ են նստել  
եւ աղմուկներ կ'անեն. եկող գաղթականները կը խօսեն որ իբր թէ իմբով զինւած  
պիտի գան. սա ի՞նչ խայտառակութիւն է. ի՞նչ կարիք կար այդքան աղմուկների,  
եթէ սուս-փուս գային Մենաւոր, հիմա հոս էին: Դրամները վերջացաւ. պ. վաճա-  
ռականի ձեռքով ուղարկւած 166 1/2 լիրայից յետոյ դրամ չենք ստացել: Խմբագրու-  
թիւնից կը գրեն, որ մեզ Մ. Քաղաքէն 3000 Ֆրանկ է փոխադրւած Վիշապի վրայով.  
սա ի՞նչ դրամ է, ո՞վ փոխադրել եւ որի՞ անունով. այս մասին գրիր. դու կարող ես  
չեկեր գնել եւ Թիֆլիսի Կոմերչեսկի բանկից, իմանալով թէ Վիշապում ով է վճա-  
րում այդ չեկերը, վստահելի՞ աղբիւր է. հակառակ պարագային եթէ հոս չծախուի,  
կ'ուղարկենք հոն եւ հնչուն դրամ բերել կը տանք. դա շատ լաւ կը լինի քան Մրգաս-  
տանցու լրբութիւնները...

Դելտան եւ ընկերները մի ինդիր ունեն որ պիտի կարգադրես. ներքեւ դրւած  
հասցէով կ'երթաս այդ միսիոնարի քով եւ կ'առնես 10 օսմանեան ոսկի (նրան գրւած  
է որ 10 ոսկի տուր Յակովբ Մ. Յակովբեանին) եւ գրքերի ցուցակ:

Այդ ցուցակի ամբողջ գրքերը կը գնես տրւած դրամով. աշխատիր գնել հեղի-

նակներից, որ էժան լինի, կամ հին գրքեր ծախողներից: Եթէ դրամ աւելացաւ վերջին ժամանակի ժողովրդական հրատարակութիւններից կը գնես: Աշխատիր մի քանի կտոր էլ ձրի հաւաքել: Այս բոլորը պիտի կատարես շատ արագութեամբ, ընդամէնը 2-3 օրուամ, որովհետեւ բերողը (այստեղի մեր Պատւելին<sup>1</sup>) յուլիս 8 հոգ կը լինի եւ կը հասցնէ հոս: Գրքերը գնելուց եւ հաւաքելուց յետոյ կը տաս նոյն մարդուն, որից դրամը առել ես: Նա արդէն կը տայ Պատւելուն:

Այդ մարդու միջոցով կարող ես եւ դրամ փոխադրել մեզ. այս մասին խօսիր իրեն, ի հարկէ ոչ Պատւելու ներկայութեամբ:

Մենաւորից կը գրեն, որ նոր ապրանքներ դեռ չի ստացել. աշխատեցէք արագացնել եւ ուղղակի Մենաւոր հասցնել. Վրէժի վրայով շատ կ'ուշանայ:

Գծերը բացել [են]. գործերնիս յաջող է, Ջաֆարը ընկերով մի անգամ գնաց. նորէն կ'երթայ:

Շուտով դրամ հասցրէք եւ Մենաւոր. թէ չէ այստեղից պիտի ուղարկենք:

Մեր վիճակի մէջ նորութիւն չկայ. իմ աչքս դեռ չի լաւացել. մի հմուտ բժշկի հարցրու դարմանի եւ ըէցէպտի<sup>2</sup> մասին: Նշանները այս են հիւանդութեան: Աչքս բորբոքեց (երեւի տրախուման նորոգւեց), արիւնով լեցւեց, յետոյ դեղեր արին, բայց փոխանակ լաւանալու, եղջրաթաղանթն էլ բորբոքեց եւ բիբիս վրայ թոզ եկաւ. առաջները ոչինչ չէի տեսնել այդ աչքով (միայն մէկն էր), հիմա քիչ կը տեսնեմ, բայց մռայլ եւ մութ. եղջրաթաղանթի ներքեւի մասն է բորբոքած, վերեւի մասը եւ բիբի կէսը մաքուր է: Չգիտեմ տրախումայի III շրջանի հիւանդութեան նշաններ են, թէ այլ հիւանդութիւն է. պատճառը (եղջրաթաղանթի բորբոքման այս է լինելու), աչքս տաք ջրով (բորիկ ասիտով) լալուց յետոյ պաղ ջրով էլ պրիմոչկա կ'անէի. սկզբի օրերը եւ գիշերը երբ դուրս կը գայի աչքս կը պաղէր եւ տաք ու հով կ'անէր: Այս տողերը կարդայ Բարսեղեանին<sup>3</sup>, թող ըէցէպտ ուղարկէ նամակով, իսկ դեղեր Մինարէթով<sup>4</sup>:

1.- Պատուելի – կուսակցական գործիչ Խոյի (Աւարայր) մէջ:

2.- Դեղատոմսի:

3.- Բարսեղեան – ծածկանուն ակնաբոյժ Յովսէփ Տէր Դաւթեանի, անդամ Արեւելեան բիրոյի:

4.- Մատիտով գրուած սեւագրութիւն է Արամի ձեռագրով. սահմանուած էր գաղտնի քանաքով արտագրուելու. պիտի աւելցուէր բարեւագիր, ստորագրութիւն եւ թուական:

202

Սիրելի Տիգրան!

Ուղարկում եմք մի կապոց N 4. Ա. Ենթակոմիտէին էլ ուղարկեցինք: Յարու-  
թիւնը դեռ չի եկել:

Աչքս դեռ նոյն վիճակի մէջ է. գինագործը գնաց Եօլ-Քասան<sup>1</sup>:

Շատ նորութիւններ չկան. տղաները աւելի երկար կը գրեն:

Բարեւներ  
ԱՐԱՄ

1906 թ. յունիս 3-ին

Յ. Գ.— Թուոցիկներ պատրաստել եմք, գաւառ էլ կ'ուղարկենք:  
ՆՈՅՆ

1.- Եօլ-Քեասան – ծածկանուն Նոր Գիւղի, Թիմար գաւառակ:

203

Սիրելի Տիգրան!

Ուղարկում եմ դոնդաղը<sup>1</sup>:

Տղաները եկան, քովս նստած խօսում եմք:

Ուրիշ նորութիւններ չկան:

Բարեւներով  
ԱՐԱՄ

1906 թ. յունիս 7-ին

1.- Հրացանի կոթ:

**Փարոս կոմիտէին<sup>1</sup>**

**Ընկերներ!**

Այս նամակաբերները կարեւոր գործով գալիս են ձեր շրջանը եւ պէտք է անմիջապէս տեսնեն Մինարէթի մեր ընկեր Սամսոնին<sup>2</sup> կամ նրա ուղարկած մի որեւէ այլ ընկերոջ:

Սրանք կարեւոր գործով են գալիս, եւ չեն կարող երկար սպասել հոտ. ուրեմն Սամսոնին վերաբերող ներփակ նամակը անմիջապէս հասցրէք իրեն. իսկ մինչեւ Սամսոնի գալը կամ կարգադրութիւն անելը, սրանց եւ իրենց ձիւներին կազմակերպութեան ծախսով պահելու եւ ճամբուէք դնելու:

Սրանք մինչեւ որտեղ որ ուղեկից պահանջում են, պէտք է տաք: Մի խօսքով ամէն աջակցութիւն ցոյց էք [տալու] իբրեւ մեր մարդկանց:

Աշխատեցէք ամէն կերպ սիրաշահիլ սրանց եւ լաւ պաշտպանութիւն ցոյց տալ:

**Բարեւներով  
Հ.Յ.Դ. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ**

1906 թ. յունիս 20-ին  
ի Շամիր

1.- Փարոս – ծածկանուն Ուրմիա քաղաքի, Ատրպատական:  
2.- Մինարէթ – ծածկանուն Սալմաստի, որ կը մնար Ստեփան Թադէոսեան (Սամսոն կամ Գաբեգին):

**Միրելի Թորգոմ!**

Լօ-լօ-ները հետ Իգդիր-ից\* ուղարկածդ ապրանքները եւ նամակները ստացել եւ նամակիդ պատասխանել ենք Քարի Կարապետի հասցէով — փոստայով:

Դրանից յետոյ առել ենք Մինարէթով գրւած նամակդ, Ռայոնական ժողովի մասին: Դրանից յետոյ եւ ոչ մի լուր՝ աշխատիր այսուհետեւ շուտ շուտ գրել:

Սուրէն, Բաբգէն եւ Գրիգոր հասել են Մինարէթ, իրենց հետ բերել են եւ Մալխասին ու Պօղոս անուկով մէկին. հազար անգամ ասացինք աւելորդ մարդիկ չլինեն: Էլի անցեալ տարիների պէս պէտք է հաւաքւեն Մինարէթի շրջան, մեր գահլէն տանեն եւ հազար ու [մի] խստութիւնների պատճառ դառնալ. լուրեր է, որ քողերն ու հայերը բերում են դրանց մասին. հա՛յ այսօր ձիով կը գան, վաղը զինւած խմբով եւն են:

Դրամները վերջացաւ, պ. վաճառականի ձեռքով ուղարկածդ 166<sup>1/2</sup> լիրայից յետոյ էլ բան չենք ստացել: Խմբագրութիւնից գրել էին մայիս 4 թւակրով, որ իբր թէ Մ. Ք. Վիշապի վրայով 3000 Ֆրանկ է փոխադրւած մեզ. ո՞վ է ուղարկել, որի՞ միջոցով, կամ որին, յայտնի չէ: Այս մասին դու կը գրես. աւելի լաւ չէ՞ր լինի որ ուղարկւածների լուրերը մի աղբիւրից հաղորդւի, որ մենք էլ չչլլւենք:

Այսուհետեւ կարող էք գնել եւ Թիֆլիսի կամերչանթ\* բանկի չէկեր: Միայն իմանալով, թէ որոնք են վճարում այդ չէկերի դիմաց Վիշապում. դա ապահով բանկ է. հակառակ պարագայում, եթէ հոս չծախւեց, կարող ենք ուղարկել Վիշապ եւ հնչիւն դրամ բերել տալ. այդ մի ամսում կ'անենք առանց դժւարութեան: Այս չմոռանաք: Կարող էք փորձի համար առաջին անգամ 100 ոսկիի գնել: Սա եւ էժան պիտի նստի մեզ վրայ. այդ հաշիւը տեսել ենք հմուտ մարդկանց հետ:

Վաճառականի մարդը, դրամը արագ եւ առանց նեղացնելու տալիս է, նրա միջոցով ինչքան կարող էք արէք: Մրգաստանցու միջոցով այսուհետեւ ոչ մի կոպէկ չուղարկէք. դրամների մի մասը դեռ անցեալ շաբաթ տուին: Մենաւորից կը գրեն, որ նոր ապրանքներ դեռ չեն եկել. եղածը չնչին բան է, մի երկու օրէն կը վերջանայ: Գիծը կանոնաւոր է եւ գործը յաջող. կը յուսամ որ այս տարի աւելի քիչ վնասներով պիտի յաջողինք գործ կատարել:

Դու շտապեցրու ապրանքները դէպի Մենաւոր: Ինչո՞ւ ուղղակի Մենաւորի գիծը չէք բռնում. Վրէժի վրայով եւ թանգ կը նստի եւ ուշ կը լինի, դեռ մի կողմը թողած հեռաւորութիւնից առաջ եկած վտանգը: Աւետարանցոց եւ կիրճեցոց վարձատրելու համար Մենաւորում դրամ է հարկաւոր. շուտ հոն դրամ հասցրէք: Եթէ ո՛չ, մենք ստիպւած ենք այստեղից ուղարկել:

Ինչո՞ւ կարճերը մինչեւ հիմա թողել ես Մրգաստան. մի բան պատահելիս, էլ հոն պիտի մնայ. ա՛խր մեր ունեցածը աչքովդ տեսար: Մի բան չմոռանաս, եթէ տրւած կոթերը իսկական չլինեն, չվերցնես, որովհետեւ մեռանք գէշերի ձեռքից: Ինչ որ է նոր կոթի (գերմանական) մասին կը խօսեն, ի՞նչ բան է. եթէ կարող ես մէկը ինձ հա-

մար ուղարկիր, ի հարկէ բազմաթիւ ծայրերով:

Դեյտան եւ ընկերները խնդրեցին ինձ, քեզ մի բանի մասին գրեմ եւ խնդրեմ, որ իրենց համար մի փոքր ծառայութիւն յանձն առնես. նրանք կ'ուզեն իրենց գրադարանի համար գրքեր բերել տան. ես ցուցակը կազմեցի. ցուցակը եւ դրամ ուղարկուեց Մ. Ք. իրենց միսիոնարի ձեռքը, որ ապրում է էլիզաբէտեան փողոցում N 108 տունը. դու անմիջապէս մտիր նրա մօտ եւ պահանջիր, 10 օսմանեան ոսկի եւ գրքերի ցուցակը. նրան գրեա՞ծ է դրամը յանձնել Յակովբ Մ. Յակոբեանցին: Այդ ցուցակի գրքերը կը գնեն մեծ մասամբ հեղինակներէց եւ հին գրքեր ծախողներէց, որպէսզի էժան լինի. հեղինակներին յայտնիր որ այստեղի համար է, թող մեծ գեղջ տան. եթէ դրամը, ցուցակի գրքերը գնելուց յետոյ աւելացաւ, 4 հատ ժողովրդական հրատարակութիւններ կը գնես ընկերների աջակցութեամբ. աշխատիր եւ մի քանի կտոր ձրի առնել:

Այս բոլորը շտապով պիտի անես եւ յանձնես դրամ տուող պարոնին. իսկ նա կը տայ Պատուելուն (Ռէյնոլդս\*<sup>1</sup>), որը յուլիս 8-ին հոն կը լինի: Եթէ ինչ որ թիւրիմացութեամբ չկարողացար հասցնել, գրքերը կը գնես եւ կը պահես մինչեւ նոր կարգադրութիւն:

Դրամը որից պիտի ստանաս, (այս մասին գրեցինք եւ փոստով, Քար եւ Մ. Ք.): Նրա հետ բարեկամացիր եւ նրա միջոցով դրամ փոխադրիր պ. Յարութիւնի<sup>2</sup> անուամբ (50ական ոսկուց ոչ աւելի):

Շուտով հոտ կը գայ եւ Կառազ Սահակը\* նրա հետ էլ կը գրեմ. աշխատիր նրա հետ մի քիչ մանր-մուկ բաներ ուղարկիր, մանաւանդ Պապիկին<sup>3</sup>. անցեալ իրերը կորել է, էլ չենք կարող ազատել ձեռքէն: Սրանց վիճակը լաւ է. Սլաքի<sup>4</sup> գործը թերեւս մինչեւ մի ամիս վերջանայ: Երեւի 3 տարի կը վճռեն: վերոյիշեալի հետ եթէ կարող ես ինձ համար մի նոր տասնոց ուղարկիր, 100 ձգող:

Մի ջուխտ սապուկ կ'ուզէի բայց չափս չկայ. դրա հետ մի լաւ երեսացու ուղարկիր, ես հոս կարել կը տամ:

Մոռացայ գրել աչքիս մասին: Մի հմուտ բժշկի հարցրու դարմանի եւ ռեցեպտի մասին: Հիւանդութեանս նշանները սրանք են: Աչքս բորբոքեց (երեւի տրախոման նորոգեց), արիւնով լեցւեց. դեղով արին. առաջին օրը անտրոպին լեցրին բիբի հանգստութեան համար. դրանց կից եւ ցինկի կապլի կաթեցրին. յետոյ կոպիս տակը մի վառող սեւ կաթիլով սրեցին (անունը մոռացել եմ), դրանից յետոյ մի կարմիր դեղ կաթեցրին, որը աւելի փչացրաւ աչքս. այս բոլորը անուամբ էր բժշկի խորհրդով. այնուհետեւ հինգ եաղի տուաւ. այս էլ չօգնեց, դրանից յետոյ յուսահատեա՞ծ բժիշկից (2 ամիս տեւեց, ոչինչ չեղաւ, բացի գէշանալուց). դիմեցի ժողովրդական դեղերի. մոռացայ ասել որ աչքիս գէշանալը արտայայտեց եղճրաթաղանթի բորբոքումով եւ բիբիս վրայ թող գալով. այդ օրերը ոչինչ չէի տեսնի. դրանից յետոյ ժողովրդական բժիշկները աչքիս մէջ լեցրին ելոզ շաքարի, որը արիւնը տարաւ եւ աչքս էլ քիչ բացեց. բայց դեռ չեմ տեսնում, տեսածս մոռայ եւ ամպոտ է. այն էլ շատ մօտիկ պիտի լինի որ տեսնեմ:

Եղճրաթաղանթիս բորբոքման ինչպէս եւ թող գալու պատճառը ես լաւ չհասկըցայ. իսկ բժիշկը հէջ չհասկացաւ. բայց կարող է պատահել, որ պատճառը տաք ու հով լինելն է, որովհետեւ երբ տաք ջրով (բորիք ասիւղով) կը լուսայի, յետոյ աչքիս ցա-

ւը հանգստացնելու համար պաղ ջրով պրիմոզկայ (թաց շոր կը դնէի աչքիս վրայ) կ'անէի. իսկ երեկոյեան փոխադրւելուց ցուրտը կը տար եւ աչքս կ'ուռացնէր... Այս կարող է մասամբ պատճառ լինել. կարող է եւ տրախումայի III շրջանը լինի: Այդ կարող են իմանալ բժիշկները: Դու բժիշկից կ'առնես ուեցեպտ, ինձ կ'ուղարկես նամակով. իսկ դեղեր՝ կամ վերոյիշեալով, կամ Մինարէթի վրայով:

է՛հ, աչքիս պատմութիւնը շատ երկարեց. մի՛ աչքով էլ եօլայ կ'երթամ, ազգը անուշ մնայ... Ռուբէնը եկել է քովս. մի կերպ կ'անցնենք մինչեւ տղաների դալը եւ աչքիս լաւանալը:

Հա՛ մոռացայ գրել, որ Ռուբէնի եղբօր<sup>5</sup> մասին կարդացինք որ Մ. Ք. դէպքից վիրաւորւել է ծանր, այս մասին գրի՛ր տեսնենք ողջ է, թէ մեռել է:

Ուրիշ նորութիւններ չկան. բաւական խաղաղ է, միայն ինչ որ է խաղեր է սարքըւում Իշխանի շուրջը, տեսնենք ինչ կը լինի վերջը. կարծես ինձանից յուսահատւեցին:

Յանքերը այս տարի լաւ են:

Ուղարկում ենք մի թղթակցութիւն Ալիքի համար. միւսն էլ անցեալ նամակի պատճէնն է:

Թերթերը կանոնաւոր ստացոււմ է. գրքերի մի մասը ստացել ենք, մնացածն էլ կը ստանանք:

Ապրանքներ, ապրանքներ եւ ապրանքներ. աշխատեցէք շատ ու շուտ ճանպել, քանի հանգիստ է, քանի դիւրութիւն կայ, արէք, յետոյ ուշ կը լինի եւ բոլոր զոհողութիւնները ի գուր:

Անցեալները գրեցինք, որ յաջողեցնես մեր դրամական պիւտճէի մի մասը Ամբրիկան տայ. նա նաղդ<sup>6</sup> է եւ դիւրութիւն էլ կայ ստանալու. այս մասին աշխատիր եւ մեզ գրիր:

Ձերմ համբոյրներով  
ԱՐԱՄ

1906 թ. յուլիս 1-ին

Շամիր

1.- Ռէյնոլդս – ամերիկացի երկարամեայ միսիոնար Վանի մէջ:

2.- Միրաքեան Յարութիւն, Ամերիկայէն եկած յեղափոխական զինավարժ գործիչ:

3.- Գիսակիւն:

4.- Սլաք – ծածկանուն Արմենակ Օխիկեանի, որ բանտարկուած էր եւ որուն դատը կը տեսնուէր:

5.- Ռուբէնը՝ Տէր Մինասեանն է, եղբայրը՝ Երուանդ:

6.- Առձեռն, պատրաստ:



*Սարհաղին, Տատրակին եւ բոլոր ընկերներին...*

Ստորեւ տրուած փաստաթուղթը՝ Վասպուրականի Կ. կոմիտէի կողմէ կնքուած՝ վկայագիր-յանձնարարագիր է Ռուբէն Տէր Մինասեանին, որ շուրջ տարի մը գործել է ետք Վասպուրական՝ յատկապէս Լեռնապարի շրջան, կը գործուղուէր Դուրան-Բարձրաւանդակ (Տարօն-Սասուն): Սարհաղը Գեորգ Չաուշն է. Տատրակ – ծածկանունն է Գեղամ Տէր Կարապետեանի (1865-1918), երկուքն ալ անդամ տեղւոյն Կեդր. կոմիտէին:

*Ընկերներ!*

*Սոյն երկտողը ներկայացնողը – պ. Ռուբէն – տեղիս մեր ընկերներէն է: Սրան ուղարկում ենք ձեր շրջանը իբրեւ ընկեր:*

*Վերջերս Կովկասում գումարւած Դաշնակցութեան [եան] խորհուրդը վճռել եւ դիմել է մեզ, մի ընկեր ուղարկելու ձեր շրջանը. ի նկատի առնելով այդ վճիռը եւ ձեր բազմիցս պահանջները ընկեր ուղարկելու մասին, ուղարկում ենք սրան, միաժամանակ գրելով արտասահման մի նոր ընկեր ուղարկելու մասին, որ գալով մեր շրջանը, կամ մեզանից մէկն ու մէկն էլ կը գայ ձեզ մօտ, կամ հէնց նոր եկողը ընկերով կ'ուղարկենք, գործերը վերջնական կերպով անկումից ազատելու համար:*

*Մանրամասնութիւնները փոստայով կը գրենք Տատրակին:*

*Բարեւներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ*

1906 թ. յուլիս 4-ին  
Շամիր

**Սիրելի Հայրիկ<sup>1</sup>!**

*Ստացանք քո յուլիս 8 թվականի նամակը. ինչպէս եւ 16 կապոց ապրանքները:*

*Սրանք առաջով չեն գալիս, առարկելով որ գործ ունեն: Բացի իրենց ծախսերից դուք ո՛չ մի բանի չէիք խառնուելու. ի գուր էր մնացած դրամների տալը: Առհասարակ պէտք է այն անել ինչ գրուած է], իսկ երբ ակելին կը պահանջեն, դրանից խուսափելու մի ճանապարհ կայ.— մեզ այդ մասին գրուած չէ — ուրիշ ոչինչ:*

*Այս նամակաբերը մեր լաւ բարեկամն է. գալիս են պտոյտի: Սրանց հետ եթէ կարող էք մի քանի ատրճանակներ ուղարկեցէք:*

*Առհասարակ ինչ որ ուզեն եւ կարողական բերել, կը տաք, ի հարկէ եթէ ապրանքներ ունէք:*

*Այստեղի նորութիւնների մասին կը պատմէ նամակաբերը:*

**Բարեւներով  
ԱՐԱՄ**

1906 թ. յուլիս 20-ին  
Շամիր

1.- Հայրիկ – ծածկանուն Սիմասեան Տիրանի, որ այդ օրերուն կը գտնուէր Ատրպատական:

**Միրելի Թորգոմ!**

Ստացել ենք վերջին ժամանակներս քո հետեւեալ թւակիրները. Մայիս 20, յունիս 1 եւ 9-ին, յուլիս 5, երկու անգամ:

Համարեա ամէն փոստով քեզ նամակներ գրուում է, ինչպէս եւ Կոմսին ու Բիւրոյին: Առհասարակ նամակները վերջերս գրուում էր Սարգիս<sup>1</sup>. մենք երկուսս ենք հոս, մնացած բոլոր ընկերներին, ինչպէս եւ տեղացիներին քչել ենք գաւառ, գործերով կամ հանգստանալու համար: Եթէ նամակների պատասխանները քո ցանկացած ձեւով չի լինում, դա վերագրելու ես Սարգսի անփորձութեան:

Գործերը սարսափելի շատացել են. գիտես այս օրերը ի՞նչ է լինում մեր հայր. յիշիր՝ Դրախտի<sup>2</sup> երջանկայիշատակ օրե՛րը... Անցնեմ քո վերոյիշեալ նամակներում դրւած խնդիրներին:

ա) Հեպթադէմի<sup>3</sup> պետի գալը դեռ որոշ չէ. եթէ հարցը դրական մտքով որոշւեց, պիտի աշխատենք նրա հետ ուղարկել Սալմանին, նրա մասին որոշուած է որ իբրեւ տեղացի մասնակցի առաջիկայ Ընդ. Ժող[ովին]. իսկ թէ բացի դրանից ո՞վ պիտի գնայ, այդ մասին կը կարգաս ներփակ մեր Ռայոնական ժողովի արձանագրութեան մէջ. թէեւ դա վերջնական ձեւակերպում չէ<sup>4</sup>:

բ) Յիմար Բաբկէն եւ Սուրէն վեր են ընկել Աւարայր ու Մինարէթ<sup>5</sup>, թէեւ հազար անգամ գրել ենք, որ միշտ էլ դիւրութիւն կայ ներս գալու. եթէ Մենաւոր գային հազար անգամ հիմա հոս էին եկել: Փոխանակ իրենք գալու ուղարկեցին Վարժապետին եւ Սէյդոյին, որոնք բելա դառան մեր գլխուն, առանձնապէս երկրորդը. ճանապարհին Պարապենց գիւղից կը գան իրենց փափաղներով եւ շորերով, ձիով, Չաֆարին եւ մի ուրիշի հետ: Կը պատահեն քրդերի. ձիաները (5 հատ), կը թողնեն խուրջիներով ու կը փախչեն. եղել է 250 հին ծայր եւ մի սմիտ ատրճանակ եւ մի քանի մանր մոնր շորեր: Հոս գալուց անմիջապէս հարց դրաւ, որ Մուրադ<sup>6</sup> եւ Կոմս իրեն ուղարկել են Դուրան անցնելու համար եւ կոպիտ ու տխմար միջոցների է դիմում մեզ համոզելու, աւելի ճիշտ ստիպելու, որ մենք նրան հոն ճամբենք: Այդ չի լինի, որովհետեւ հոն բաշխողներով լիքն են, նորերը աւելացնելու գլուխ չունենք:

Երեւի սրան յետ կը դարձնենք. իր հետ դնելով եւ Սողոյին ու Միհրանին: Մենք կը զարմանանք Մուրադի վրայ, որ ինքնագլուխ կերպով այդպիսի խոստում է անում սրան: Հէնց այս եւ մի քանի այլ պատճառներով վճռել ենք եւ ոչ մի հին գինւորի յետ չկանչել, ինչքան էլ նրանք հերոս լինեն. այնպէս որ զրածներիցդ եւ ոչ մէկին չենք ընդունի, բացառութեամբ Ափոյին, այն էլ նրա համար որ արհեստաւոր եւ խեղճ տղայ է. եթէ սա մենակ կը գայ, ճամբեցէք, եթէ ոչ՝ իր քէֆ: Մնացածներին վերջնական մերժում տուր:

գ) Դրամները խնդիր. Արդէն քանիցս գրւած է Դելտայի, Յարութիւնի եւ Վաճառականի միջոցով ուղարկուած վերջին դրամների ստանալու մասին. առաջին երկու-

սի ընկալագրերը ուղարկել ենք, իսկ վերջինինը կը ստանաք ներփակ, ինչպէս եւ Կ. Խաչի 100 ուղբընը. նախկին 100 ուղբընը՝ ընկալագիր չուղարկելու յանցանքը ես եւ իմ հիւանդութիւնն էր. ի գուր ես դու այդպէս կասկածներ յայտնում ընկերների մասին. հազար անգամ քեզ ասել եմ, որ մի անգամից այդ կասկածները դուրս վանիր, էլի քո էշը ամէն նամակի մէջ կը քէս: Ինչ որ գրելիք եւ ասելիք ունես ինձ ասա որովհետեւ այդ դասաւորութիւնները ես եմ անում. ուրիշները մաս չունեն: Իսկ ինչ կը վերաբերի խմբագրութեան 3000 Փրանկին, իրանք էլ են գրել. մենք ստացել ենք Մոնդէի անունով 87 ոսկի դրամ, որը ուղարկած է Վիշապէն Դելտա-ենց հասցէով, նրան յանձնելու համար: Սա մօտաւորապէս 2000 Փրանկ է. յայտնի չէ թէ ո՞վ է ուղարկել. ո՛չ նամակ կար եւ ո՛չ էլ չէկ. այս թիւրիմացութիւնը չի պարզւի, մինչեւ խմբագրութիւնից չգրեն, թէ ո՞վ է ուղարկել, ինչքա՞ն գումար, որի՞ միջոցով (մեր ստացածը Վիշապի պատուելին է ուղարկել) եւ հոս որին տալու համար. այս լինելու է յանուանէ ականէ: Տեղիդ ընկերների ցանկութեան համեմատ որոշ քանակութեամբ դրամ յատկացնում ենք գէնքի, լաւ տեսակից. սրանց հաշիւները կը տանք տարւայ վերջը: Բայց այնպէս պէտք է անէք, որ մեր ապրուստի կամ փոխադրութեան համար ստիպւած չլինենք նորէն այդ դրամներից ծախսել:

Դրամների առնելը կամ փոխադրելը եւ ո՛չ մի պարագայում համաձայն չենք, որ յանձնես ուրիշի. ուրիշի ձեռքով փրակ ուտել չենք ուզում, այլ մեր ձեռքով թան կ'ուզենք... Մինչեւ մենք չգրենք քո ճանապարհւելու մասին տեղիցդ չես շարժիր: Այնպէս արա որ հոս գալուց մեզ պէս չայրւես եւ չխղճահարւես. մի մոռանար որ առայժմ մեր գործի վէրքոտ մասը հոտ է. այստեղ, այսպէս կամ այնպէս եօլայ ենք գնում: Երբ մենք յանձն ենք առնում հիւանդ ու յոգնած հոս տոկալ, դու էլ պէտք է յանձն առնես, զգացմունքներիդ եւ տրամադրութեանդ հակառակելով հոտ մնաս եւ գործ կատարես. այս է դրականը եւ խելացին:

Այդտեղ ձեր ծախսած դրամների մանրամասն հաշիւները կը տաք Բիւրոյին եւ պատճէնը մեզ կ'ուղարկէք Գարեգինի գծով: Այս անգամ կը ստանաք 100 ոսկու ընկալագիրը, որ տուել էք ռազմամթերքի: Լէօ-ենց հարկաւոր նպաստները կանոնաւոր կերպով տրուում է. մենք նոցանից ենք գոհ, որովհետեւ թէ մեզ եւ թէ Պապիկի<sup>7</sup> կարիքները լաւ հոգում են. իսկ նրանք էլ մեզնից են գոհ: Արտաշէսի դատի մասին գոնէ ինձ մանրամասն գրիր: Դրամները աշխատեցէք պարբերաբար ուղարկել. յիշեցէք ձմեռւայ անդրադարձութիւնները եւ անյարմարութիւնները:

Պապիկի մասին չգիտենք ի՞նչ գրենք որ հանգստանաս. վերջին խայտառակութիւնների մասին գրել եմ Կոմսին գրածս նամակով, Մ. Ք. — Մուշեղեանին. այս անգամ ուղարկում եմ Սլաքի<sup>8</sup> գրածները, որոնցից դու կարող ես քաղել մանրամասներ. դրանից թո՛ղ Կոմսը յօդւած պատրաստի «Ալիք»ին<sup>9</sup>. առայժմ գրող չկայ:

դ) Մայրերի խնդիր. Ամէն անգամ գրում ես որ նոր ծայր չկայ, այլ հին. կը վարմանամ խելքիդ վրայ. ներկայում ամենամեծ պահանջը հին ծայրն է. ինչքան կարող ես դրանից հաւաքիր. եթէ ամբողջ պիւտճէն էլ դրանից լինի, հէջ հոգ չունես, Ղափաղի շատ հարկաւոր չէ. մանաւանդ մենք առայժմ զբաղւած ենք մեր ապրանքների փոխադրութեամբ. վերջրւած 2000ը յամենայն դէպս ուղարկիր. մեծ ուշադրութիւն դարձրու եւ մարդիկնու ծայրերի ու մասերի վրայ:

ե) Մանրուքներ. Ուղարկւած մանրուքների մեծ մասը տեղ է հասել. չգիտեմ

դուռք էք քէօռացել թէ մենք. ուղիղ կէսը անպէտք է. տնաշէններ, ի՛նչ գիբիլ որ կը տեսնէք, կը վերցնէք ու հայդէ կ'ուղարկէք. մի քիչ խնամքով ընտրուած թիւն արէք եւ անգործածելի կամ հնացած ու ժանգոտած մասեր երբեք մի՛ ուղարկէք: Ուղարկըւածները մեծ մասամբ նոյն տեսակներն են. առանձնապէս ուշադրութիւն դարձըրէք նորի կողքի եայլի, կատուի, պրուժինի. ասեղը եւ այլ մանր-մուշները կողքի եայլ եւ կատու հէջ չունենք եւ դուք էլ հէջ չէք ուղարկում:

դ) Մենաւորի եւ Կռուադաշտի<sup>10</sup> նոր գիծ. Այդ մասին ես մանրամասն գրել եմ անցեալ տարի Բիւրոյին. իր ժամանակին խօսել եմ եւ Գարեգինին: Տեսածդ Յովսէփը իմ ծանօթս եւ ձեռնհաս մարդ է. եթէ ուզէ եւ կամք տայ, մեծ բան կարող է անել. այդ գիծը բաց է լինում մինչեւ նոյեմբեր սկիզբը: Թէ այդ գծի եւ թէ Միր-Աւետարան գծի բախտը կապած է Մենաւոր նստող ընկերոջ կամքից. եթէ լաւ եղաւ, կամ Ընծայրի հետ վարւել իմացաւ, կարող է թէ այն կողմը դեկավարել եւ թէ այս. իսկ եթէ ներկայ վիճակով մնայ, երբ ամբողջ ամիսներ հոն նոյն իսկ նամակներ գրող չի լինի, Սարհադին ճանապարհոջ չի լինի, ինչպէս վերջերս եւ անցեալ ձմեռը... է՛հ փրկեցէք սահմանի գործը սիրողներից, փրկած կը լինէք եւ ընդհանուր] գործը: Միշտ մի բան ի նկատի ունեցէք, աշխատեցէք մարդիկ մշտական լինեն եւ ոչ ամիսը մէկը փոխուի: Ամենագլխաւորը մեզ լսող լինեն:

Ջարմանում եւ վշտանում եմ այն ընկերներից, որոնք միամտաբար պնդում են, թէ ապրանքները սահմաններում փթացնում ենք. գոնէ ի նկատի ունենան վերջին 3 տարւայ գործունէութիւնը. գոնէ համեմատեն իրանց դիւրութիւնները, իրանց կորուստների հետ եւ ապա մեզ հետ խօսեն: Ամբողջ գարնան սեզոնին սուրհանդակները «Հայրենիք» եւ «Ալիք» կրելով մեռան, որովհետեւ ապրանք չկար. մի անգամ հաշւեցինք 4 փուլ թերթ էին բերել խեղճերը. այն էլ 1905 թւի հնութիւնները. ահա թէ ո՛ւր է բարեխղճութիւնը. իսկ անցեալ տարի Ջաֆարն եւ ընկ[երներ] չորս անգամ դատարկ վերադարձան. բան չլինելու պատճառով Մենաւորում եղած մի քանի գիրգիներն<sup>11</sup> էին բերում, կամ մոսինի գնդակներ... Այս էլ գեղեցիկ է չէ՞... է՛հ այս տարի փաստերով ցոյց կը տանք, որ ովքեր են փթացնում ապրանքները: Ամէն բան մի կողմը դրէք. այսքան մարդիկ կը գան ու կ'երթան, սա ի՛նչ դիւրութիւն է կամ ինչպէ՞ս [է] ստեղծւել, որ ո՛չ ոք չի վնասւում. սա էլ գաղտնիք է չէ՞... է՛հ վերջապէս մենք մեռանք գրելուց, ցոյց տալուց. վերջը կամ միամիտ եղանք, կամ լաւատես, կամ դրսի ընկերներին խաբողներ: Միշտ մի բան շեշտել եմ նորէն կը շեշտեմ. գոհողութիւնները անելու է մինչեւ գործի հասունանալը. իսկ երբ այդ եղաւ ուժերը խնայելու է, որովհետեւ ոչ մի նպատակի չեն ծառայում: Այսպէս օրեր քիչ կը լինեն. կառավարութիւնը ամէն անգամ այսպէս չի յիմարանայ. խայտառակ թուրութեան է մատնւած:

Ընդ. Ժողովի եւ փոխադրութեան վիճակի մասին ես մի անձնական նամակ եմ գրելու Բիւրոյին, որովհետեւ կան ասելիքներ, որ կ'ուզէի անկեղծ ասել եւ միայն պատասխանատուութիւնը ինձ վրայ վերցնել:

է) Մախու գէնքեր. Այս տարի հրապարակը աւելի լայնացել է, եւ անհամեմատ աւելի լաւ կոթեր են բերում, քան անցեալ տարի. բայց համեմատաբար թանգացել է. դրա վրայ ազդել է Ռուսաստանի դէպքերը. այժմ էլ այս կողմերից են գէնք բերում հոտ ծախսելու համար: Ժողովուրդը եղած միջոցներով կարող է բաւականա-

նալ. միայն ծայրեր չկան ու չկան:

ը) Աքրմենականներ. Սկսել են բաւական անհամութիւններ անել եւ գիւղերում խառնակութիւններ սարքել. մի փոքրիկ դաս տւել ենք եւ պէտք [է] աւելին տանք, եթէ առիթը եւ յարմարութիւնը բերէ: Էլի նախկին լուրերն են. լաւագոյն տարրերը բոլորը ձեռնթափ են եղել. անցեալները երբ Պապիկի մնացած տեղի դէպքի առթիւ հանգանակութիւն ուզեցինք անել, բացարձակ հակառակելու եւ չգալու պրոպագանդ էին անում. բայց չյաջողեցին. սպասածից եւ եղածներից աւելին հաւաքեցինք, ուղիղ 100 դահեկան. մեր հասկացած մտքով. Անսպասելի էր չէ՞...

Բարեկամը եւ ոչ էլ իր պետը այդ կողմերը գալու միտք չունին առայժմ. նրանք կ'երթան ասորոց մէջ: Թռուցիկի մասին ոչ մի կասկած չեղաւ. բաւական մեծ տպաւորութիւն թողեց Պոլսէն եկածների վրայ. այդ ազդեցութեան տակ շատերը առաջարկեցին տեսնել...

Միմիգրաֆիան եւ գրելու մեքենան ես լաւ փորձած եմ. մեզ համար բոլորովին անպէտք բաներ են. հեկտոգրաֆիան<sup>12</sup> էլ բաւական է. դրա փոխարէն օգտակար գրքեր առէք. հոս ժամանակ չկայ այդպիսի խնդիրներով զբաղւելու: Ի դէպ, ի՞նչ եղաւ խոստացածդ գրքերը. դրանց միայն մի մասը եկաւ, այն էլ անհետաքրքիր մասը. մնացածը ո՞ր մնացին...

Վիշապում<sup>13</sup> հասցէ չունենք. հոն ո՞վ կայ որ հասցէ ունենանք: Բոլորս էլ լաւ ենք. հիւանդութեանս մասին զգւեցինք գրելուց: Մի կերպ կ'ապրեմ:

Ջերմ համբոյրներ եւ բարեւներս հաղորդիր բոլոր ծանօթներիս եւ ընկերներիս. ասա ինչու մոռացան ինձ... Դէ՛հ խեղճերին, հիւանդներին եւ սովորական մահկանացուներին ո՞վ կը յիշէ...

Ջերմ համբոյրներով  
ԱՐԱՄ

1906 թ. յուլիս 20-ին  
Շամիր

**Յ. Գ.— Ետփունջիները ստացւած է:**

- 1.- Սարգիս Բարսեղեան, Շամիր, բուն անունով Պօղոս Օտապաշեան, որ արդէն անցած էր Վան: Յաճախ կը յիշուէր իր կեղծ անցագրային անունով՝ Գրիգոր Վարդանեան:
- 2.- Գրախտը Վան-Այգեստանի Ղարադաղ թաղն է, վանեցիներու Փաշի Փողան, Դաշնակցութեան միջնաբերդ – Ամրոցը:
- 3.- Հեպթաղէն – ծածկանուն Կոտուց անապատի:
- 4.- Արդէն մօտաւորապէս որոշուած էր Հ.Յ.Գ. Չորրորդ Ընդի. ժողովի թուականը: Վասպարականէն իբրեւ պատգամաւոր պիտի երթային Համազասպ Բաղէշեան (Մալման), Արամ Մանուկեան եւ Իշխան (Լեռնապարի շրջանէն):
- 5.- Յաջորդաբար՝ Խոյ եւ Մալմաստ:
- 6.- Խօսքը Սեբաստացի Մուրատի մասին է, որ այդ օրերուն կը գտնուէր Ջանգեզուրի շրջան:
- 7.- Պապիկը Գիսակն է, Սերենկիլեան Յովհաննէս:
- 8.- Մլաք – ծածկանուն Արմենակ Օխիկեանի:
- 9.- Թիֆլիս հրատարակուող դաշնակցական օրաթերք:
- 10.- Կռուադաշտ – ծածկանուն Մակու գաւառի մէկ տեղավայրի, Ատրպատական:
- 11.- Գիլգի – դատարկ փամփուշտի պատեան, պարկուճ:
- 12.- Միմիգրաֆիա եւ հեկտոգրաֆիա – տպագրական բազմացնող սարքուածքներ էին:
- 13.- Վիշապ – ծածկանուն Կ. Պոլսոյ:

**Սիրելի Մարգպետունի<sup>1</sup>!**

Ստացանք ձեր (աւելի ճիշտ Արամի գրած) յուլիս 16 թւակիրը. այս Լօ-լօն մենք բռնել ենք թերթեր եւ ապրանքներ բերելու, եթէ այս անգամ էլ չհամաձայնեց ապրանք կամ թերթ բերել, նամակ էլ չէք տայ. վռնդեցէք երթայ իր գործին. իբր թէ հիւանդութիւնն է պատրւակում:

Սրան, եթէ ապրանք չկայ, ատրճանակի թոփերը կամ որոշ մասեր հանեցէք եւ ձեզ մօտ թողէք, իսկ մի մասը ուղարկեցէք թող գայ: Այնպէս արէք որ իր համար անգործածելի լինի: Նոյն կերպ վարեցէք առհասարակ տրւած բոլոր լօ-լօների հետ: Ի հարկէ առաջին տեղը թերթերին էք տալու. այնպէս տէք [որ] Մենաւորի գծով թերթ եւ նման բաներ չտեղափոխենք:

Մինարէթ մարդ էինք ուղարկել տեղափոխութեան, 10 օրը լրացաւ, չեկան, ի՛նչ է պատահել:

Աշխատեցէք Աւարայր եւ Մինարէթ ապրանքներ պահել:

Այդ Մենաւորի շան պատմութիւնները մեզ կերան. հոն ուղարկեցէք Տեղացուն-բաւական է որքան երեսի վրայ թողեցիք:

Աստուծոյ սիրոյն Մենաւորում պահարաններ պատրաստեցէք եւ ապրանքները պահէք. եթէ մի բան պատահեց Սարոստանցիք մեզ է՛լ ապրանք չեն տայ. պիտի ասեն որ սահմաններում ապրանքները կ'ոչնչացնէք. այդ արդէն ձեր պատուի եւ պատասխանատուութեան հարցն է:

Մի՛ յուսահատէք ժամանակաւոր գործադուլից. աշնան ամէն բան ներս կը բերուի: Սարոստանէն աշխատեցէք ամէն կերպ ապրանքները ձեր շրջանը տեղափոխել. հոն եղած շարժումների պատճառով ապագայում դժւար թէ ապրանքներ կարողանան տալ. դեռ տւածներն էլ յետ կը վերցնեն եթէ այդպէս յուսահատական նամակներ գրէք եւ ապրանքները ապահով վիճակի մէջ դնէք:

Դէ՛հ ձեզ տեսնենք. մի ամբողջ ժողովրդի բախտի բանալին ձեր ձեռքն է. այս պիւտտէն եթէ կարողացանք ներս բերել, ամենամեծ յաջողութիւնը եւ ամենամեծ պրոպագանդը պիտի լինի երկրի գործին չհաւատող ընկերների պաղ վերաբերմունքի հանդէպ:

Խնդրում ենք ուղարկեցէք միայն ձեզ մօտ եղած ապրանքների ցուցակը. Մենաւոր գնացած ապրանքների ցուցակը հարկաւոր չէ. այնտեղից կ'ուղարկեն արդէն:

Ամերիկայի նամակները անմիջապէս ուղարկեցէք իրենց:

Մեր վիճակի մէջ նորութիւն չկայ:

**Ջերմ բարեկներով՝ ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ**

1906 թ. օգոստ. 4-ին, Շամիր

1.- Մարգպետ, Մարգպետունի – ծածկանուն Ղազարոս Ղազարոսեանի (1878-1918). մասնագիտութեամբ մանկավարժ. կուսակցական գործիչ նախ Պուլկարիա, ապա Ատրպատական:

**Սիրելի Նորապսակ<sup>1</sup>!**

Քանի ժամանակ է ձեզմէ ո՛չ լուր ունենք եւ ոչ էլ նամակ. չիմացանք թէ ինչ է պատահել ձեզ հետ:

Այս նամակաբերի որդին բանտարկւած է եւ, Հանքում<sup>2</sup> է դրւած. ձեր մարդկանցից մէկը 30 ոսկի է առել ազատելու համար եւ չեն յաջողել. այժմ էլ դրամը յետ չեն տալիս:

Այդ մարդկանց կանչիր եւ խստիւ պահանջիր որ անպայման այս մարդու դրամը յետ տան: Ապա թէ ոչ խիստ կերպով պիտի պատժենք:

Ձեր շրջանի նորութիւնների մասին միշտ մեզ գրեցէք:

Բարեկներով  
ԱՐԱՄ

1906 թ. օգոստոս 5-ին, Շամիր

- 1.- Նորապսակը՝ Մալխասն է, Արտաշէս Յովսէփեան:
- 2.- Հանք – ծածկանուն Օլթի աւանի:

**[Մալխասին]**

**Սիրելիս!**

Ստացւած նամակներդ ուղարկում ենք. մնացած նամակներում նորութիւն քիչ կայ: Մենաւորում Ընծայրը դարձեալ կուել է ընկերների եւ ժողովրդի հետ: Մարզպետունին գնացել է հոն: Գործը համարեա երեսի վրայ է. անդադար գրում ենք Սառուստան որ ապրանքներ չուղարկեն:

Կոմսը նամակ էր գրել. իր նամակը պատճէնն էր. տաճկահայ եւ ռուսահայ գործերի բաժանման մի ձեւ է առաջարկում, բայց շատ անորոշ. այնպէս որ մենք էլ չհասկացանք: Միտքը այն է որ բոլոր պիտի անջատուի եւ Նրկրի ներքին կազմակերպութիւն ունենայ եւ Բիւրօ. իսկ դուրսը՝ գործադիր մարմիններ: Ռուսահայ Բիւրոյի հետ պէտք է կապւած լինեն բարոյական կապերով, ուրիշ ոչինչ: Արտասահմանի կորնիրաները<sup>1</sup> միայն պէտք է նպաստող լինեն, առանց ձայնի (Ամերիկա, Պոլզարիա եւ Եգիպտոս). նպաստողները կարող են լինեն ամէն ազգից եւ դասակարգից, առանց ձայնի իրաւունքի: Վերջապէս մի խառն եւ մեծ մուրացկանութիւն:

Սուրհանդակները այսօր կ'երթան:

ԱՐԱՄ

5 օգոստոս [1906]

- 1.- Գաղութները, գաղթօճախները:



**Մենաւորի ընկերներին**

*Սիրելիք!*

Երկու լօ-լօների հետ ստացանք 19 դապօ [?] վառօդի մասեր եւ երկու գործիքք:

Սրանք դարձեալ կը գան դէպի ձեզ. այս անգամ էլ — ինչպէս անցեալ անգամ արիք — կը տաք մանրուքներ. եթէ գործիքներից կան, կը տաք անպայման գործիքներ, ինչպէս [անցեալ] անգամ տւել էք նոյն չափով էլ վառօդ. վերջինը կը տաք երբ մանրուքները եւ գործիքները քիչ կը լինեն: Առհասարակ լօ-լօներին տւէք մանրուք, զանազան գործիքներ (պայմանով որ իրանց համար գործադրելի չեն. օրինակ, ոււուացրած ծայրի գործիքներ. այս վերջին ուղարկւածներից չէ, այլ ձեռքի. Թորգոմի գրելով դրանից 10 ձեռք կայ: Սրանք երբ տեղդ են հասել, կը քանդէք, երկու մասի կը բաժանէք. մի մասը կը տաք մի ոտքին, միւս մասը միւս ոտքին): Ատրճանակը նոյնպէս բաժանեցէք (այսինքն քանդեցէք) երկու մասի. մի մասը մի անգամ տւէք, միւս մասը երկրորդ անգամ: Առհասարակ ինչ որ կը տաք, իրենց նախապէս ցոյց տւէք. թողէք առաջնաց հասկանան որ պէտքական բաներ չկան մէջը:

Ի դէպ, առհասարակ հայեր են (աւետարանցի, կիրճեցի, սահմանցի — սրանք նոր մարդիկ են. սրանց գիւղը Աւետարանի մօտ եղած քիւրդ Չուրթալի\* գիւղի հայերն\* են, որոնք քաժանեալով\* լօ-լօներից, իրանց համար առանձին գիւղ են շինել Դէրօ անուանով, իսկ մեր կեղծ անունը Սահման է: Պարապին ուղարկեցին հոն կազմակերպելու: Երեւի 10 հոգու չափ կը լինեն. Աւետարանից 1/2 ժամ միայն հեռու են: Նրանց խմբապետը կամ ներկայացուցիչը լինելու է Ընձայրին ծանօթ կայանցի Սիխնը\*, որ անցեալ տարի Մենաւորով-Սարուստանից — եկաւ գիւղ): Սահմանցոց կը տաք կոթերի լուլանք\*. կարճերն էլ կը քանդէք երկու մասի կը բաժանէք. մի մասը լուլան\*, իսկ երկրորդ մասը կը լինի մեր լուլան\* եւ մարգա-ի\* փայտը. դոնդաղ առայժմ չէք ուղարկելու մինչեւ ամբողջ ապրանքները կը տեղափոխենք: Եթէ ժամանակ եւ դիւրութիւն ունենանք, դրանք էլ կը տեղափոխենք, եթէ ոչ հոս շինել կը տանք. դրան մեծ կարիք չունենք:

Աւետարանցոց եւ կիրճեցոց կարող էք տալ ծայրեր: Հազար անգամ խնդրեցինք որ ձեզ մօտ եղած ապրանքների մանրամասն ցուցակը գրեցէք որ ըստ այնմ դասաւորենք մարդկանց եւ ուժերին. վաղը միւս օրը գործը կը բացւի, բայց որովհետեւ հաշիւ չունենք, ամէն բան պէտք է խառնենք եւ խտոն դարձնենք: Գոնէ այս ոտին անպայման գրեցէք:

Անցեալները քանիցս գրել ենք, նորէն կը շեշտենք. Աստուածնիդ սիրէք, Մենաւորում եղած ապրանքները ապահով տեղեր պահէք. եթէ պահեստներ չունէք, նորերը շինեցէք, դրամ եւ աշխատանք մի՛ խնայէք. դա մեզ կեանքի եւ մահու, եթէ կ'ուզէք նոյն իսկ պատուի խնդիր է: Սարուստանը միշտ դժւարութեամբ է մեզ ապրանք տւել առարկելով որ սահմաններով կամ բռնել կը տաք կամ կը փչացնէք:

Հէնց որ ձեր յուսահատական ճիչերը լսեցին, որ ասեղ դնելու տեղ չկայ, կամ փոխադրող չկայ, նրանք պէտք է մերժեն մեր պիւտժէն ամբողջութեամբ տալ, մանաւանդ երբ այնքան էլ նեղ վիճակի մէջ են, եւ կարիք ունեն ապրանքների: Վերջապէս եղածները ապահովութեամբ պահէք եւ գրեցէք որ առայժմ տեղափոխեն Աւարայր մինչեւ ճանապարհները ապահովի:

Կիրճեցիք եւ Աւետարանցիք սկսեցին գալ: Աւետարան ուղարկել ենք երկու ընկեր, Լորիսն եւ Եղուարդը: Երկրորդը վստահեցի գրագէտ եւ մաքուր տղայ է. այսուհետեւ նա պիտի յարաբերէ ձեզ հետ: Նրա ստացականները ստանալով պէտք է] ապրանքներ բաց թողնէք: Աւետարանից այս կողմը բերելու դիւրութիւններ շատ ունէք, դուք միայն հոն հասցրէք: Աշխատեցէք տեղիդ ընկերներին էլ ուղարկել Աւետարանցիների հետ, որ մեծ քանակութեամբ վերցնեն եւ որոշ տեղից վերադառնան, ինչպէս այդ եղաւ անցեալ տարի: Վերջապէս ամէն կերպ աշխատել եղածը արագ եւ ապահովաբար ներս ուղարկել:

Ապրանքների շատութիւնը թող ձեզ չչլմեցնի եւ անտակտ գործողութիւններ անել տայ. ամէն բան հաշուով արէք: Մանաւանդ առանց մեր գիտութեան եւ անմիջական հրահանգի ներս ապրանքներ չուղարկէք նոյն ձեւերով կամ միջոցներով: Մի յուսահատելիք. ոչինչ չմնայ հոտ. ամէն բան ժամանակին կը տեղափոխուի ներս: Միայն համբերութիւն ունեցէք եւ խոհեմութիւն եղածը պահելու եւ դժգոհութիւնների եւ բարդութիւնների տեղիք չտալու:

Սուրհանդակների վարձը ինչպէս ժամանակին գրել ենք կը տրւի հոս. դուք միայն անմիջական կարիքները հոգացէք. եթէ շատ պահանջներ են անում, ասացէք որ այդ մասին մեզ գրեա՛ծ չէ. կամ խրախուսեցէք ապագայ հեռանկարներով: Սրանք միշտ պահանջներ են անում կամ ատրճանակի կամ գէնքի. այդ պակասը աշխատում ենք այստեղից լրացնել. առհասարակ երբ մեծ քանակութեամբ ապրանք էք տալիս (խօսքս հայերի մասին), եթէ հին տեսակի կոթ կ'ուզեն, մէկը եւ ծայրամանով տւէք, ուղղակի ետ բերելու պայմանով: Նոր տեսակի կոթի մասին հարց չի կարող լինել. սրանք, մանաւանդ իսկականները ամբողջութեամբ ոչ ոքի վստահանալ չենք կարող. ինչպէս վերեւ ասացինք պէտք է քանդել, երկու բաժին անել եւ մաս առ մաս ուղարկել. նախապէս գրելով N Nը: Եթէ հին կոթ չեղաւ, հասարակ ատրճանակներից մէկ-մէկ կարող էք տալ, գրելով այդ մասին մեզ, ի հարկէ թէ տեղափոխելու եւ մեզ հասցնելու պայմանով. խոստացէք որ ամէն անգամ նորը կը տրւի: Առհասարակ ուղարկած ապրանքների մասին տարբեր գծերով միշտ գրեցէք, նոյն իսկ հաշիւը երկրորդ կամ երրորդ անգամ գրելու դժարութիւնը յանձն առնելով:

Օրինակ, անցեալ անգամ աւետարանցիք 5 մարդ եկել եւ ի՞նչ են բերել դեռ չգիտենք, որովհետեւ նամակը դեռ մեր ձեռքը չի հասել. լաւ կը լինի որ տաք ստակով կամ սրանց գծով եթէ եկող լինի. Աւետարանի գծի նորութիւնների եւ հաշիւների մասին գրէք. նոյն իսկ գրեցէք եւ Աւարայրով եւ Մինարէթով. ստացւածների մասին նոյն կերպ էլ մենք ենք վարւելու կը գրւի եւ ձեզ, եւ Աւարայր եւ Մինարէթ:

Ծայրերը եւ առհասարակ ապրանքները մի քիչ դիմացկուն կտորից արէք, որ ճանապարհին չփչանայ:

Հա՛ մոռացայ գրել եւ մի նոր գծի մասին որ կոմսն է գտել մեզ. գուցէ եւ ձեզ գրած լինի:

Իբր թէ ջալալցի\* մի լօ-լօ որ կ'ապրի Սահմանը (ինքը իբր թէ աղայ է) խոստացել է մեր յայտնի վալադ Սեթօ եւ երկու գինուորների հետ փոխադրուածիւն անել, երեւի ուղղակի Ապաստանից – մինչեւ Աւետարանի քով եղած լօ-լօ գիւղը. հոն միայն 5 տուն հայ կայ. մեզ համար դժւար է հոն ապրանքները ստանալ եւ այս կողմը բերել: Աւելի յարմար եւ դիւրին է վերոյիշեալ Սահման նոր գիւղը. եթէ կարողանան հոն բերել եւ գիշերով հեռանալ առանց ցորեկը մնալու, շատ յաջող բան կը լինի. հոն մնալ անկարելի է. շատ քիչ տնւոր են (ընդամէնը 15 տուն): Այս մասին դուք էլ խօսեցէք եւ գրեցէք իրենց (կոմսին, Փայլակին եւ Թորգոմին<sup>2</sup>), մենք Սահմանի<sup>3</sup> գիւղացոց կը յայտնենք եւ նրանց պատրաստականութեան մասին ձեզ եւ իրենց կը գրենք:

Այս երկու լօ-լօներին վարձը մենք տւինք:

Մալխասը, Սարգիսը եւ բոլոր ընկերները փոխադարձ բարեւներ ունեն:

Մոռացայ գրել, որ 5 գաղթականներ եկել են Պարապի<sup>4</sup> մօտ եւ ասել, որ իբր թէ դուք էք ուղարկել եւ վկայականները ի հարկէ կորել. սուտ է լինելու:

Ձերմ բարեւներով  
ԱՐԱՄ

1906 թ. օգոստոս 7-ին

յԱմրոց

1.- Աւետարան – ծածկանուն Խաչան գիւղի, Արաղայի դաշտ: Աւարայր – ծածկանուն Խոյի, Ատրպատական: Մինարէք – ծածկանուն Սալմաստի:

2.- Յաջորդաբար՝ Վահան Փափագեան, Ռուբէն Դերձակեան եւ Թէոս Տեղտիկեան:

3.- Սահման – ծածկանուն Դերո գիւղի, Բերկրի գաւառակ:

4.- Պարապ – ծածկանուն Անձաւցի Մելոյի, զինուոր, փոխադրող Բեկրիի շրջանին մէջ:

Արեւելեան բիրոյի թղթածրարներուն մէջ գտնուող նամակ, ուղղուած նոյն մարմնի անդամ բժիշկ Յովսէփ Տէր Դաւթեանին (Բարսեղեան): Ամենայն հաւանականութեամբ զաղտնի թանաքով գրուած իսկական նամակի մը «ծածկոյթ»ն է: Կը տրուի իբրև մէկ նմոյշ այս կարգի «բաց» գրութեանց:

*Սիրելի Բարսեղեան,*

*Քանի ժամանակ մեզ նամակ չէք գրուամ, չգիտենք պատճառը ի՞նչ է, մեզ մոռացա՞ք, թէ գործերով զբաղւած լինելով չէք կարող գրել մեզ:*

*Քանի ժամանակ է մենք էլ չենք կարողանում ձեզ գրել. դէ՛հ մոռանալը փոխադարձ է եղել:*

*Մենք միշտ կարիք ենք գգում լուրջ գրքերի, ուղարկւածները շատ տափակ բաներ էին: Աշխատեցէք մեր գրադարանի համար ժողովրդական-գիտական մի շարք գրքեր ուղարկելու: Մանաւանդ վերջին հրատարակութիւններից:*

*Այստեղի դպրոցական գործը բաւական յաջող է գնում, բայց դժբախտաբար շատ քանակութեամբ վարժապետներ չեն գտնուում: Խորհուրդ տւէք այստեղացիներին, որ անցնեն իրենց հայրենիք:*

*Մեզ մօտ շատ նորութիւններ չկան. հացը բաւական թանգացել է, չափը 60 դահեկան է:*

*Աշխատեցէք «Ալիք»ները աւելի մեծ քանակութեամբ ուղարկելու:*

*Ռուսական թերթերից հետաքրքիր Ն Ո Ղ մեզ ուղարկեցէք. մի մոռանաք եւ մեզ: Այստեղ հեռու եւ ամէնից մոռացած վայրը: Մէկ-մէկ յիշեցէք եւ բախտից մոռացւածներին:*

*Բոլորս լաւ ենք. ժողովուրդը կոտորուում է. հիւանդագին այս կարմրուկը եւ պկացաւը<sup>1</sup> մարդ չթողեց այս երկիրը:*

*Բարեւներով  
ԱՐԱՄ*

1906 թ. օգոստոս 7-ին

1.- Կարմրուկը երեխաների յատուկ վարակիչ հիւանդութիւն է – հարսանիք: Պկացաւը, աւելի ճիշդ բկացաւը, նոյնպէս մանկական հիւանդութիւն որկորի, կու տալու դժուարութեամբ յատկանշուող:

214

Սիրելի Տիգրան!

Ուղարկում եմ 9 կտոր «Ալիք»․ նոր ապրանքներ եւ մասեր ստացանք:

Մանրամասն գրելու ժամանակ չունեմ:

Տղաներն էլ հոս չեն:

Սալմանը կը խնդրէ Եօլ-քասանցոց համոզել որ իրենց գիւղացի վարժապետին կանչեն գիւղ եւ պաշտօն տան:

Մի քանի կապոց Հայրենիք եւ մէկը պատկերազարդ ուղարկեցի Ա․ Էնթակոմիտէին:

Բարեւներով  
ԱՐԱՄ

11-ին օգոստ. [1906]

215

Սիրելի Եղևարդ<sup>1</sup>

Ամենամեծ հաճոյքով ստացանք քո օգոստոս 3 թւակիրը․ հէնց նոյն օրն էլ ուրիշ գծով Մենաւորէն լուր առանք որ Լորիս գնացել է հոն եւ վերադարձել մի նոր ընկերի հետ․ անշուշտ ապահովութեամբ տեղդ հասած կը լինեն: Անցնիմ քո նամակի կէտերին:

ա) Կիրճեցիք բացի քո ստացած ապրանքներից բերել են այս վերջերը եւս 2 Խագար\* հին ծայր․ անշուշտ կը ստանաք եւ կ'ուղարկէք: Սրանց մասին արդէն ասել եմ․ նորէն ամէն հազարին մի ոսկի է տրւելու մինչեւ Խուփ գիւղը: Դրանց հետ յարաբերելու էք դուք․ վարձատրելու էք նոյնպէս դուք․ ստացագիր էք տալու դուք պայմանով որ ապրանքները հասնեն մինչեւ Խուփ․ Իսկ եթէ իրենց գիւղում երկար պահեցին, ինչպէս այդ սովորաբար պահում են, ո՛չ վարձը կը տաք եւ ո՛չ էլ նոր ապրանքներ բերելու ստացագիր․ անցեալ տարի նոյն կերպ վարուեցին եւ մի քանի հազար ծայր կուլ տւին: Ամէն ոտքի ապրանքը կը ստանաք Խուփ գիւղում, նոր ստացագիր ու վարձ կը տաք:

Իսկ ինչ կը վերաբերի նրանց գէնք ուզելուն այդ չենք կարող տալ․ բայց խաբելով նրանց պահելու է․ ամէն անգամ ասացէք, որ այս ոտին կը տան: Այստեղ մի կազիոնի N 12 ատրճանակ կայ․ կ'ուղարկեմ ձեզ․ որին կ'ուզէք տէք:

Նրանց ես խոստացել եմ մի ձի տալ եւ կը տամ. թող գան այստեղ եւ տանեն: Ձին տրւելու է միայն Աստուծոյ:

Այսքան կիրճի մասին. աշխատէք նրանցից լաւ օգտուել. նրանք աւելի կարող են աշխատել քան աւետարանցիք. միմիայն հոն թող չէք տալու որ ապրանքը երկար մնայ: Որին ինչքան դրամ ես տալիս իբրեւ վարձ, մեզ մանրամասն գրիր իսկական անուններով — ի հարկէ թւերով:

բ) Աւետարանի մասին<sup>2</sup>. Քո գնալուց երկար ու բարակ խօսել եմ. նորէն կրկնեմ որ աշխատեցէք յաճախ խումբ-խումբ ուղարկել եւ ամենագլխաւորը հոտ երկար ժամանակ չպահէք. այս պէտք է կիրառէք եւ բոլոր գիւղերի մասին: Այսինքն եղածը միշտ ուղարկէք: Սրանց էլ գէնք չի տրւի մշտական կերպով, ինչպէս այս ոտին Լորիսը արել է. այդպէս էլ միշտ կը լինի. ամէն անգամ կը տրուի մէկ, երկու կամ երեք տասնոց ատրճանակ\* եւ կամ բերդան հրացան\*: Միայն այն պայմանով, որ դրանք ոչ մի գիւղում չպահուի, այլ առաջ ճամբւի, որովհետեւ ամէն ոտին նորը կը տրւի: Ձեմ ուզում թողնել այն նկատումով, որ յանկարծակիի դէպքում չեն կարողանում պահել, այդ դուրս են տալիս, ինչպէս այդ արին անցեալ տարի. ի՛նչ եղել է անցեալում, չպէտք է կրկնել: Գործի տեսակէտից միեւնոյն է. նրա համար պէտք են ճանապարհներ. իսկ այդ ամէն անգամ կը տրւի. իսկ դարտակ գնալուց, ի՛նչ պէտք ունի այդպիսի ծանրութիւններ հետը տանելը: Դրանց միշտ խաբելու է. մի անգամ ասացէք չկայ. մի անգամ ասացէք՝ գրեմ քաղաքէն հրաման առնեմ. մի անգամ էլ ասացէք թէ կը գրեմ Մենաւորում կը տան: Եւ այսպէս անվերջ: Դրանց դրամը վարձն է. եթէ տաս ամէն բան կ'անեն:

գ) Խուփ գիւղի մասին անցեալները գրել եմ. նորէն կ'ասեմ. նրանց տրւած է մի ատրճանակ. այստեղ ամէն ոտին ինչպէս վերեւ ասացի նրանք գէնք կ'ունենան փոխադրելու համար, ուրեմն մշտականի մասին խօսք չի կարող լինել: Իսկ վարձի մասին Պարապ կ'ասի, որ 10 դահեկանով կարող եմ գոհացնել եւ այդ նպատակով էլ նրանց 200 դահ[եկան] տւի, տալու համար:

Այս մասին խօսեցէք Պարապի հետ. նա կը գայ ձեր կողմերը, մի նոր գիւղ կազմակերպելու համար. այս մասին գրած եմ քեզ առաջին նամակով. այդ գիւղը Դէրօն\* է, որը կազմւել է քեզ ծանօթ Չրոխի\* գիւղի հայերից: Դրանց կազմակերպելու համար դու էլ գնա: Դրանք յարմար տեղ են եւ կարող են օգտակար լինել: Եթէ Լորիս կարողանայ դրանց հետ 2-3 անգամ գնալ Մենաւոր, կարող է հոն եղած ամբողջ հրացանները\* փոխադրել այս ձեւով. դրանք կը քակեն. ամէն մարդու կը տրւի միայն 5 հատ լուսայ\* իսկ մնացած մասերը կ'ուղարկւի երկրորդ կամ երրորդ ոտին. փայտերը կարելի է առայժմ չփոխադրել: Այս ձեւով ամէն ոտքին կարելի կը լինի 20-30 հատ միւսնի լուսայ\* բերել: Այս մասին կը գրես եւ Մենաւորի ընկերներին: Ամէն բան անելուց յիշեցէք որ ամէն անգամ մեզ դիւրութիւն եւ հնարաւորութիւն չի տրուում գործ կատարելու. ուրեմն յարմար եղած պարագայում պէտք է լարւած ջղերով աշխատել: Իմացիր եւ այն որ երկար ժամանակ գուցէ չկարողանաս ապրել Աւետարանում. ո՞վ գիտէ ի՛նչ կը լինի. այսօրւայ գործը վաղւան չձգես. բայց եւ անփորձ ու բոշբոշազ մարդկանցով գործ չտեսնես:

*Խուսի գիւղի Տ. Զալլադի մասին. քանիցս գրել խօսել եւ խնդրել եմ, որ մի անգամ գայ հոս բայց չի եկել. ներփակը կը տաս նրան. վկայականով նրան կիրճ գիւղի խմբապետ-ներկայացուցիչ եմ նշանակել: Թող մէկ-մէկ հոն գնայ եւ գործերին վրայ հոսկէ. իսկ հոկտեմբեր ամբողջ ամիսը հոն պիտի մնայ: Ի դէպ, կիրճում մի գիրք կայ «Անդրոնիկէ» անունով. դա մերն է, որ քրդերը ծախել են նրանց – Խուրոցի\* քովն է. կարծեմ թէ 5 դահեկան են տւել. ա՛ռ եւ մեզ ուղարկիր:*

*Թերթերի մասին այսքանը կ'ասեմ որ եթէ Դրօշակ ուղարկելու լինեն N 5, 4, 3, 2, 1 պէտք է վառես. իսկ մնացած թերթերը (Հայրենիք, Ալիք, Ռազմիկ, եւայլն) վնաս չունի խմբերը կը կարդան:*

*Դրամական հաշիւները լաւ պահիր. ես Մանուկին տւել եմ 168 դահ. Ռուբէնի ձեռքով. իսկ 162 դահ. էլ ես եմ տւել: Նրա հաշիւը կարգադրիր որ յետոյ թիւրիմացութիւն չլինի – ինչքան ապրանք է բերել ըստ այնմ հաշի՛ր. այդ հաշւելու ես յունիս սկզբից. տղաներին բերողչէքը արդէն ստացել են իրանցից: Աւետիսին երկու ոսկի (2 ոսկի) էի տւել իսկ վերջին անգամ նրա ֆուսուլայով նորէն 2 մեծիտ էլ տուի:*

*Ուրեմն դու կը տաս աւետարանցոց, կիրճեցոց եւ սահմանցոց – Դերո-ի վարձը. Պարապը՝ Խուսի – իսկ Վասիլը այս կողմէն մինչեւ Իջեւան<sup>3</sup>: Ամէն մէկդ դրամ կը ստանաք ինձնից:*

*Հոս առանձին նորութիւն չկայ. ձերոնք լաւ են. նամակդ յանձնեցի իրենց. կարիք եղած դէպքում նպաստներ էլ կը տանք:*

*Լորիս[ի] տունը լաւ են. երեխան հիւանդացաւ, բժիշկ ուղարկեցի. հիմա լաւ է. հացի դրամ ուզեցին այդ էլ տուի. թող ապահով մնայ եւ լաւ աշխատի:*

*Ընկերներդ ամէնքը բարեւուամ են քեզ եւ յաջողութիւն ցանկանում:*

*Շուտով թերեւս Աւետարանի համար մի ուսուցիչ ուղարկեմ:*

*Այդտեղի գործերի եւ գիւղական ժողովրդի մասին մանրամասն գրիր:*

*Հետաքրքիր է իմանալ, ամբողջ Ապաղայում քանի տուն հայ կայ, եւ որ գիւղերում:*

*Ուրիշ նորութիւններ չկան:*

*Ամենաջերմ բարեւներով երկուսիդ  
Բարեւներով  
ԱՐԱՄ*

1906 թ. օգոստոս 15-ին

յԱմրոց

1.- Եղուարդ – Խաչան գիւղ (Աւետարան) ուղարկուած ընկեր փոխադրութեան գործին հսկելու համար: Նոյնպէս նաեւ Լորիս:

2.- Աւետարան – ծածկանուն Խաչան գիւղի, Արաղայի դաշտ:

3.- Իջեւան – ծածկանուն Խառակոմի գիւղի, Արճակի գաւառակ:

**Սիրելի Մալխաս!**

Նամակդ ստացել եմ ձիու մասին. թէ գործերի շատուժիւնը եւ թէ ձիաներ չի-  
նելը մի օր ուշացան, փոխանակ Գչ. [Երեքշաբթի] օրուան, ուղարկում եմ Դչ. [Զո-  
րեքշաբթի]:

Այս շաբաթ յաջողութեան նշաններ են երեւում, մի նոր քիւրդ եմ գտել, որ եր-  
կու ոտ գնաց եւ եկաւ. բաւական ապրանքներ բերաւ, մեծ մասամբ գործիքներ:

Աւետարանի գծով էլ բաւականաչափ ապրանք է եկել. Գօշը գնացել է մինչեւ Մե-  
նաւոր եւ վերադարձել է բերելով 6000 գիլգի, 23 մաուզեր ատրճանակ. նրա հետ եկել  
է եւ Թարխանը: Մենք այս լուրերը առանք քրդերից. իրենցից դեռ լուր չունենք:

Բաւական ապրանքներ ունենք Բուժարան<sup>1</sup> (այն գիւղն է ուր մնացել էք շամեցի  
վաճառականի քով). եթէ Ա. ենթակոմիտէն փոխադրել տայ, լաւ կը լինի:

Մինարէթի համար սուրհանդակ չենք գտել: Դեռ Գոնտոն [?] չի եկել:

Ուղարկում եմ նաեւ ձին եւ Կորաղը. Յոլակի մէջքը ուռել է. այսօր պատուել  
պէտք է տանք:

Տիգրանը ո՞ր մնաց: Քո գալու օրւայ մասին այս նամակաբերի հետ գրիր, որ  
նոյն գիշեր Ջրաղաց<sup>2</sup> գիւղը մարդ դնեմ ձեզ սպասելու համար:

Աշխատեցէք Արցախից<sup>3</sup> մինչեւ Շամ հասնել, ես եկել եմ. այս հնարաւոր է ժամ-  
խարին էլ քաղաք մտնելը դիւրին է:

Ուրիշ նորուժիւններ չկան. Սարգիսը<sup>4</sup> Ս. Հեղինէ է<sup>5</sup>. դեռ Իշխանը չի եկել. լաւ  
լողանում է:

**Ջերմ բարեկներով ԱՐԱՍ**

16 օգոստոս

**Յ. Գ.— Յոգնակի գրել էի, երկուսիդ (քեզ եւ Տիգրանին) ի նկատի առնելով:**  
**ՆՈՅՆ**

**Յ. Գ.— Սիրելիս! Թէեւ խոստացայ Կորաղն էլ ուղարկել, բայց չեղաւ. նրան էլ  
ոտն է առել. չկրցաւ գալ: Ուղարկում ենք միայն Սեւը<sup>6</sup>:**

**Տիգրանից մի նամակ առանք, որով գանգատուում է, որ իրեն չենք գրում, ես քեզ**

1.- Բուժարան – ծածկանուն Ս. Աստուածածին գիւղի, Թիմարի գաւառակ:  
2.- Ջրաղաց – ծածկանուն Սղկա գիւղի, Վանի գաւառ:  
3.- Արցախ – ծածկանուն Ա. ենթակոմիտէի (Թիմար) կեդրոն գիւղի:  
4.- Սարգիսը Բարսեղեան, Շամիլ, բուն անունը՝ Պօղոս Օտապաշեան:  
5.- Ս. Հեղինէ – ծածկանուն Աղթամար կղզիի:  
6.- Կորաղ, Յոլակ, Մեւ – ձիերու անուններն են:  
7.- Սալման – ծածկանուն Համագասպ Բաղէշեանի, Վաթան՝ Ղետնդ Մելոյեանի. երկուքն ալ  
անդամ Վասպուրականի Կեդր. կոմիտէի:



գրելուց կարծում էի թէ նրան էլ տեղեկութիւններ կը հաղորդես. երեւում է դիւրութիւն չունէք իրար տեսնելու կամ գրելու:

Բայց իմացէք որ հաց ուտելու ժամանակ չկայ. Սալմանը տակաւին հիւանդ է. Վաթանը՝ հագիւ արտասահմանի նամակներն է գրում եւ դպրոցական գործով զբաղւում, իսկ ես արդէն գիտէք...

Աշխատիր այդտեղից մի ձի էլ գտնել եւ տալ, վաղը գիշեր շատ յարմար է, դօնամայի պատճառով շատ ապահով կը լինի:

Բարեկներով ԱՐԱՄ

1906 օգոստ. 17, հինգշաբթի

Նորութիւնը Տիգրանին էլ հաղորդիր. թող նա էլ գայ. շրջաններում գործ կայ:



ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՍՄԵՆ  
Չախէն աջ՝ Տիգրան, Իշխան, Համազասպ Բաղէշեան,  
Արամ, Սարգիս Բարսեղեան, Մալխաս

Միրելի Մարգալետունի<sup>1</sup>!

Այս երկու լո-լոն մի քանի օր առաջ եկան բերելով ձեր 13 օգոստոս թվականի նամակը: Դրան մանրամասն պատասխանեցի Աւետարանի գծով, ուրիշ բազմաթիւ նամակների հետ: Ստիպւած էի թէ Մինարէթի եւ Աւարայրի եւ թէ ձեր նամակները Աւետարանով ուղարկել<sup>2</sup>, որովհետեւ նախ Աւարայրի եւ Մինարէթի սուրհանդակները ժամանակաւոր կերպով դադարել են երթեկեկելուց, մի մասին վռնդել ենք եւ երկրորդ այս սուրհանդակները երկրորդ ոտին ասացին որ թոյլ տանք իրենց 10 օրով տուն գնալու, մենք համաձայնեցինք, բայց երէկ յանկարծ փոխեցին եւ այսօր նամակ կ'ուզեն գալու համար: Այս փոփոխութիւնը բաւական տարօրինակ է. մարդ չի հասկանում. ամենահաւանականը դրամի համար կը լինի. ամէն ոտին երկուսը 5 ոսկի կ'առնեն, մի 3 մէծիս էլ ծախս կը լինի, այնպէս որ 3 օրւայ ընթացքում 6 ոսկի կ'առնեն: Երեւի դրանից են գրաւ[ու]ել: Ինչ որ էլ լինի, նախկին ձեռով աշխատեցէք այնպիսի ապրանքներ տալ, որ իրենց համար անգործածելի լինեն, հրապարակի վրայ էլ չծախսի. սեւ հողից մինչեւ 20 տապօ կարող էք միշտ տալ:

Ուրեմն այս անգամ կը տաք 5 ուռացնելու գործիքի ներքեւի մասը — ի դէպ, Թորգոմը<sup>3</sup> գրել էր որ դրանք 10 հատ են, ինչո՞ւ 5 էիք ուղարկել. չլինի թէ չէր հասել, թէ՞ դիտմամբ էք արել, զգուշութեան համար. եթէ վերջինն է ուրեմն այս անգամ 10 հատի բոլոր ներքեւի մասերը կ'ուղարկէք, մնացած 5 վերեւի մասը թողնելով ուրիշ պատեհ առիթի: Պիտի գայ եւ երկու ատրճանակի թոփեր: Առհասարակ ատրճանակները այդ ձեռով (նոյնիսկ տասնոցները — մտուզերները) եթէ ուղարկէք, ամենապահովն է: Ատրճանակները ամբողջութեամբ եթէ Աւետարանի գծով ուղարկէք, եթէ բաց եղաւ պէտք է երկար ժամանակ պահեն գիւղերում գործադրելու համար, եթէ փակ եղաւ նորէն վտանգաւոր է եւ ուշ պիտի հասնի տեղս. սրանք ամենալաւ միջոցն են. մանաւանդ որ այսուհետեւ քոչերը գնացած լինելով ճանապարհները բացւում եւ ապահովանում են: Թէեւ բազմաթիւ զօրքեր կան սահմաններում, բայց նրանք շատ հմուտ են եւ զարտուղի միջոցներ գիտեն: Առհասարակ աշխատեցէք որքան կարող էք անգործածելի ապրանքներ այս ոտը շատ տալ. 6 ոսկի ենք տալիս, այնպէս արէք որ մի բան բերեն:

Արդէն գրել եմ Մինարէթից փոխադրւած 2000 ծայրի պատմութիւնը. բռնել է Շարաֆ բէկի էլի մէջ: Թէեւ գրաւական կայ, բայց դժուար թէ բան դուրս գայ:

Նաբէն անցեալ անգամ միայն նամակներն էր բերել, իսկ թերթերը ձգել էր գիւղը. նամակ չտւի որ երթայ թերթերը բերի, գնաց՝ էլ չվերադարձաւ. չիմացայ նորէն Մինարէթ գնաց նորերը բերելու, թէ ի՞նչ եղաւ:

Աստուածներդ սիրէք գոնէ գրեցէք թէ անվնաս ապրանքներով (այսինքն գործիքներ, ազեր, խմոր, պիստոն, քանդելու ատրճանակներ — կարճ՝ լո-լո-ներին տալու իրեր որքան կայ: Եթէ շատ են գրեցէք սրանց պէս մի երկու ձեռք լո-լո-ներ էլ պատրաստենք:

Այստեղ նորութիւններ քիչ կան. սովորական հանգստութիւն է. անցեալները 6 գիւղ կողոպտեցին, բայց բնորոշ փաստ է, կողոպտուած գիւղերից մէկը հայի, 2 քիւրդի եւ 3 ասորու են: Քիւրդը ոչ համիդիա է, ռայաթ: Հայ գիւղը օգնութեան է հասել, բայց ուշ է եղել. մի ուրիշ գիւղից — Ոսկեբակ<sup>4</sup> — փորձել են քշել բողոքականների ոչխարները, բայց չեն յաջողել, կուռով յետ են դարձրել: Հայկական գիւղերից շատ են վախենում:

Մի բնորոշ փաստ էլ. անցեալ օրեր քրդին մէկը կը մտնի հայ գիւղացու այգի եւ առանց հարց ու փորձի, ներկայութեամբ այգու տիրոջ, կը սկսի խաղող քաղել: Նա հայհոյանքներով եւ սպառնալիքներով կը մօտենայ եւ կ'ասի. ի՞նչ կ'ընես. քիւրդը կ'ասի — ի՞նչ պիտի անեմ, խաղող կ'ուտեմ. հայը կ'ասի՝ որի՞ խաղողը կ'ուտես եւ ի՞նչ իրաւունքով. քիւրդը յետ-յետ կը քաշի եւ կ'ասէ. հա՛ դուք էլ էք հասկացել թէ Արեւը որտեղից կը ծագի եւ ո՞ւր մայր կը մտնի...

Առհասարակ ժողովրդի տրամադրութիւնը շատ լաւ է. եթէ մի քանի հարիւր ճոթ սերմնացու լինէր տայինք գիւղացիներին մեծ բան կը լինէր. սովը, մանաւանդ թանգութիւնը սոսկալի կը լինի. մանաւանդ Հայոց ձորերը:

Թարխանից դեռ լուր չառանք. երեւի վաղը միւս օրը կ'երեւայ:

Առ այժմ այսքանը. մոռացայ ասել որ Սարգիսը թողել է հոտ մի շիշ հեղուկ ապակի, մելանի համար: Շատ կը խնդրէի այդ ուղարկէիք հէնց այս ոտին: Գրեցէք Վրէժ որ մեզ 2-5 շիշ հեկտոգրաֆիա-ի մելան ուղարկեն: Հոս չի գտնուում:

Բարեւներով  
ԱՐԱՄ

19 օգոստոս [1906]

Յ. Գ.— Մոռացայ գրել որ Աւարայրի Արամին անմիջապէս ուղարկեցէք դայ. նա շատ հարկաւոր է. դպրոցի ժամանակը կ'անցնի:

Աւարայրից անցեալ օրը ստացուեց մի քանի թերթեր եւ 3 կապոց խմոր: Զարմանում եմ թէ ինչո՞ւ այսքան քիչ ապրանքներ, մանաւանդ թերթեր են տւել: «Ալիքի» մասին գրել էի որ հոն 2 օրինակ է հրատարակուում<sup>5</sup>, մէկը պահել է իրենց, մէկը ամբողջ երկրին. չէ՞ր կարող արդեօք երկուսը մեզ ուղարկել եւ Մինարէթ իրենց համար ստանալ: Թէ կարծում են երկիրը կանոնաւոր փոստա եւ յարաբերութիւն ունի, որ միշտ կարող է ամէն բան ստանալ: Միշտ մի բան յիշեցէք եւ յիշեցնել տւէք բոլոր ընկերներին — որ ամէն անգամ առիթից օգտուելու է, երբ նա ներկայանում է. միշտ այն համոզումը պէտք է ունենալ որ անգամ Պապն քաթա չի ուտի: Մեր գործը միշտ կապուած է անակնկալների եւ թիւրիմացութիւնների հետ. հանգամանքից օգտուելը պէտք է լինի մեր գերագոյն հաւատամքը:

Մինարէթից էլ սուրհանդակին չնեղելու համար դարձեալ մի-մի օրինակ են տւել Ալիքները: Դրօշակ չկայ. իսկ «Ալիք» մէկ-մէկ օրինակ: Իսկ գիտէք ի՞նչ են անում մեր թշնամիները. ամենամեծ առատութեամբ բերում եւ տարածում են. Հընչակ, Երիտասարդ Հայաստան, Մշակ եւն... իսկ մենք...

Աշխատեցէք Աւարայրում էլ անվնաս տիպի ապրանքներ ունենալու (յօ-լօ-ներին

տալու) մանաւանդ թերթեր ու գրքեր:

Դուք էլ գոնէ մէկ-մէկ ձեր գծերով ուղարկեցէք. Աստուծոյ սիրոյն դուք բեռ չչինէք, ամէն սուրհանդակին մէկ-մէկ տէք:

ԱՐԱՄ

Արամին ասացէք Վրէժում եղած գերմաներէն բառարանները բերի:

ՆՈՅՆ

- 1.- Մարգպետունի, Մարգպետ – ծածկանուն Ղազարոս Ղազարոսեանի (Ատրպատական):
- 2.- Աւետարան՝ Խաչան գիւղ, Աւարայր՝ Խոյ, Սիմաղէթ՝ Սալմաստ:
- 3.- Թորգոմ – ծածկանուն Թէոս Տեղտրիկեանի:
- 4.- Ոսկերակ – գիւղ Վանի մօտ:
- 5.- Պէտք է ըլլայ «ստացում»:

---

Փաստ. 664-76

218

Սիրելի Եղևարդ!

Ձեր գիւղից ուղարկածդ նամակը առի: Պարապը եկաւ հոս եւ վերադարձաւ: Նրան յանձնեցի 200 դահեկան, Խուփ գիւղի սուրհանդակներին վարձատրելու համար: Ուրեմն դուք այդ մասը չէք վարձատրի, մինչեւ Պարապը չասի ձեզ: Պարապին յանձնարարական նամակ տւի որ գնայ Աւետարանի մօտ եղած նոր Դէրո\* գիւղը – կեղծ անուն Սահման – կազմակերպի: Նրա հետ եթէ կարող ես դու էլ գնա. դա քո ծանօթ մարդու գիւղն է: Հոն խօսեցէք որ նրանք կարո՞ղ են գնալ Մենաւոր ապրանք բերելու: Սրանց չկանչէք աւետարանցիների հետ – թողէք առանձին աշխատեն: Կամ թէ կարո՞ղ են 3-4 ձիաւոր քիւրդ եւ հայ փոխադրողների տեղ տալ. սրանք արտասահմանէն ապրանք կը բերեն, մի ցերեկ կը մնան Սահման գիւղում, ապրանքները հոն թողնելով կը վերադառնան կրկին բերելու: Սրանց կարող են մի ցերեկ պահել. ապրանքները տեղաւորել եւ ապա Խուփ գիւղը տեղափոխել եւ շարունակել նոյն գործը գոնէ 3 ամիս (սեպտեմբեր – հոկտ. նոյեմբ.):

Եթէ իրանք կը համաձայնեն Մենաւոր գնալ, նամակ կը տաս, ես արդէն գրած եմ Մենաւոր որ քո նամակով ապրանքներ յանձնեն գնացողներին: Թէ Մենաւոր գնալու եւ թէ հոտ գիւղում վերոյիշեալ քիւրդին եւ իր ընկերներին պահելու եւ ապրանքները Խուփ տեղափոխելու համար, անմիջապէս կը տեղեկանաս ու մանրամասն կը գրես թէ ինձ, թէ Մենաւորի ընկերներին: Կիրճեցիք 3 անգամ գնացել են Մենաւոր. այնտեղից կը գրեն որ ապրանք է տրւած իրենց. անմիջապէս տեղեկացէք եւ փոխադրել տուէք. հոն կարծեմ մնացել է եւ երկու անգամաւ բերած ապրանքները. առաջինը թերթ եւ մի կապոց թորփա[?] մասեր է, իսկ երկրորդը երկու կա-

պոց փոշիներ են: Աշխատեցէք շուտ խուփ հասցնել, նրանք էլ Պարապին. օրերը հասնում են — յետոյ իրար վրայ դիզւելով, աւելի կը ծանրանայ:

Մահման գիւղի վրայ մեծ ուշադրութիւն դարձրէք: Դա կարեւոր եւ յարմար տեղ է, մեզ կարող է օգտակար դառնալ:

Աւելորդ եմ համարում երկար գրելը զգուշութիւնների մասին. միայն մի բան կ'ասեմ, որ մեր գործի յաջողութիւնը արագութեան մէջ է, որքա՛ն կարող էք ձեզ մօտ, կամ ձեր հարեւան գիւղերում եղած ապրանքները շուտ այս կողմերը հասցընել, որ անակնկալի դէպքում — որ միշտ կարող է լինել — յանկարծակիի չգաք:

Հոս առանձին նորութիւն չկայ. Ակցիգի յանձնարարութեամբ 2 մեծիդ տաք մի աւետարանցու, որի որդին 5 ընկերոջ հետ ձեզնից առաջ գնացել էին Մենաւոր. այս ի նկատի ունեցէք: Շուտով հոտ կը գայ եւ Վարժապետը:

Բարեւներով  
ԱՐԱՄ

1906 թ. օգոստոս 19, յԱմրոց

Փաստ. 664-77

## 219

### Սիրելի Եղւարդ!

Ստացել եմ քո ն[ամակ]ն, օգոստոս 3, խուփէն գրւածը, որին պատասխանել եմ. Պարապը բերած կը լինի. Այսօր էլ առայ Աւետարանէն գրւած օգոստ. 15 եւ 17 թւակիրները: Արդէն պիտի պատասխանեմ վերջիններին:

ա) Դժբախտ դէպքը ոչ մի պարագայում չպէտք է յուսահատեցնէ մեզ. ընդհակառակը աւելի բորբոքէ մեր նախանձը. դրանով մեր պատրաստութեան մի մասը կորցրինք. ուրեմն աւելի պիտի աշխատենք այդ բացը ծածկելու: Բայց ամէն պատահած դժբախտութիւնից որոշ փորձառութիւն անելու ենք, որ ամէն անգամ նոյն յիմարութիւնները չկրկնենք: Լաւ պէտք է ուսումնասիրենք գործի եւ անելիքի բոլոր պարագաները:

Բժիշկի մասին մենք ոչինչ անել չենք կարող. մնում է Մենաւորի ընկերներին. այդ մասին նրանց գրեցինք, թող իրենք մտածեն:

բ) Կիրճեցոց խնդիր. Կիրճից եկած ապրանքների մասին այսքանը կ'ասեմ. քանի որ ճանապարհներին (Պարապի եւ Վասիլի գիւղերում) ապրանքները ուշանում է եւ խառնուում ուրիշ տեղերից եկած ապրանքների հետ, լաւ կը լինի, որ դու ցուցակները եւ ապրանքները ուղարկես Պարապին կամ Վասիլին: Նրանցից ստացազիր ստացէք ապահովութեան համար. մեզ էլ գրեցէք որ այսքան ուղարկեցինք Պարապին կամ Վասիլին, մենք նոցանից ըստ ձեր եւ ըստ Մենաւորի ցուցակին կը պահանջենք: Ուրեմն այսուհետեւ բոլոր տեղերից եկած ապրանքների ցուցակը կը ստուգէք Պարապից կամ Վասիլից. իսկ ես էլ նրանցից:

Ինչ կը վերաբերւի կիրճեցոց վստահելի լինելուն, այդ դեռ հարցական է: Նրանք

ճիշտ է շատ ճարպիկ են, մեծ գործ կարող են կատարել, բայց քիչ վստահելի են. անցեալները նրանք աւելի մեծ վնասներ են տւել մեզ: Այսպէս կամ այնպէս նրանց գործ է տրւելու, եւ վարձն էլ դու ես տալու: Եթէ դրամը քիչ է կ'ուղարկեմ: Միայն թէ դուք գործ կատարեցէք: Կիրճեցոց ասացէք, թող 3-4 ոսկինոց մի ձի առնեն, ես դրամը կը տամ իրենց: Միշտ մի բան կարիք եմ զգում կրկնելու, կիրճեցիք մինչեւ իրենց ապրանքները խուփ կամ Աւետարան չհասցնեն, նրանց նոր նամակ եւ իրաւունք չպիտի տաք Մենաւոր գնալու: Մենաւոր արդէն գրւած է որ քո ստորագրութեամբ գնացած նամակների պահանջներին գոհացում տրուի: Ուրեմն Մենաւոր ստացական տալու կարիք չկայ. վկայականը կը ստանաք ներփակ. բայց պահեցէք ձեզ մօտ: Մենաւորում ամէն բան կարգադրւած եւ այստեղից էլ գրւած է. մնում է դու գրես: Նրանք կը լսեն: Ասում եմ կիրճեցոց եւ աւետարանցոց ապրանքները իսկոյն հասցրէք խուփ: Մանաւանդ Կիրճ ապրանք չթողնէք եւ նորերը բերելու իրաւունք տաք: Նորից եմ ասում, կիրճեցոց վարձը դու ես տալու:

դ) Քո նամակում զարմանքով կարդացի այն կէտը որ իբր թէ կ'ուզես սուրհանդակների հետ Մենաւոր գնալ. դա մի յիմար քայլ է, որ ոչ մի միտք չունի. դու եւ գործը մեզ համար կարելու է Աւետարանում. այն կողմը գնալով ոչինչ չես շահիլ բացի վնասից. դրանով քեզ ի գուր տեղը պէտք է վտանգես եւ ստիպւած լինես հեռանալ այդ շրջանից, որ հէջ ցանկալի չէ: Ուրեմն տեղիցդ չես շարժւի. ամէն կերպ աշխատիր դու հոտ երկար եւ անվտանգ մնալ, հաշիւներ պահելու, նոր մարդիկ ուղարկելու եւ առհասարակ գործը ղեկավարելու համար: Մենք քեզանից այս ենք ուզում, իսկ դու կարծում ես Մենաւոր գնալը մեծ գործ եւ մեծ հերոսութիւն է: Գործ եւ հերոսութիւնը սոսու ու փոսու խոհեմութեամբ եւ մութի մէջ աշխատելու մէջ է, այնպէս որ ոչ մի մարդ տեսնի, միայն քո խիղճը զգայ... Այս է գործելու, մանաւանդ այդտեղ — մեծ գաղտնիքը: Չիմացայ թէ ի՞նչ նկատումով կ'երթաս խուփ. այստեղ ինչքան որ լաւ լինի հաշիւներ պահելու տեսակէտից, բայց իմացիր որ գործը միայն Աւետարանից կարելի է ղեկավարել: Եթէ անհնար է հոտ ապրել, ուրեմն պէտք է երթաս. բայց յամենայնդէպս այդտեղի եւ Կիրճի վրայ էլ դու պէտք է հսկես: Վասիլին գրեցի որ իր եղած խանութի ապրանքների մի մասը քեզ ուղարկի, քանի որ հոն չի ծախւում: Եթէ դրանով չգոհանաք նորերն էլ կ'ուղարկեմ:

դ) Կայնազի\* կազմակերպելու խնդիրը վատ չէ, միայն այդ մասին խօսելու եւ խորհրդակցելու եւ Պարապի հետ, նա լաւ ճանաչում է այդ շրջանի բոլոր մարդկանց: Ցանկութիւն յայտնելը դեռ բաւական չէ. պէտք է վստահելի լինեն եւ գոհողութեան արժանիք ունենան. մանաւանդ գաղտնապահ լինեն: Զգուշութիւն, զգուշութիւն եւ զգուշութիւն: Մի ուրիշ գիւղի մասին էլ գրել եմ. Պարապը քեզ կը խօսի. բոլոր տրամադրելի գիւղերում խմբեր կազմեցէք եւ գործի սկսեցէք, հէնց առաջին պատեհութեամբ, մանաւանդ երբ ճանապարհները կը բացւեն եւ գիշերները կ'երկարեն:

Նամակիս առաջին մասը վերջացրել էինք երբ վճռեցինք Աւետարանի եւ Կիրճի համար Չական ձի առնել. ուրեմն չորս ձի. այս նպատակով 20 ոսկի ուղարկեցինք Վասիլին, որ Պարապի, քո, Լորիսի հետ խորհրդակցութեամբ ձի առնէք եւ տաք գիւղացիներին: Կիրճի եւ Աւետարանի ձիաները ոչ մի անհատի սեփականութիւն չի

լինելու, այլ պէտք է պատկանէ կազմակերպութեան. ո՛վ որ աշխատեց, նրան պէտք է տրամադրելի լինի. մէկին տաս, ամսական մի անգամ զնայ մնայ, օրերը իր հաշ-  
ւին աշխատի կամ կապի, այդ հէջ օգտակար չէ. աւելի լաւ է ո՛վ կ'երթայ նա տանի:  
Բայց պէտք է շատ մեծ խնամքով պահեն ճիւղները, մէջքերը ետրա չլինի, չփչանայ,  
մանաւանդ չնիհարի: Այնպէս որ սնունդը լաւ պէտք է լինի: Գոնէ գարի միշտ պէտք  
է տրւի: Մի բան էլ չմոռանաք, խիստ պատուիրելու էք, որ այն կողմից (Մենաւորէն  
գալուց) բեռնւած ճիւղները չնստեն. ո՛վ որ այդ քայլը արաւ, խիստ պատժելու է.  
այդ կերպ միայն հնարաւոր կը լինի, ճիւղներից օգտակար ձեւով օգտուել: Եթէ իրենք  
գարի չկարողանան տալ դուք տուէք:

Անցեալ անգամ գրեցի թէ ով որքան հաշիւներ ունի եւ ինչքան ստանալիք: Ըստ  
այնմ նրանց հաշիւները գոցելու էք:

Դրամ եթէ պակասեց Վասիլից ուզեցէք, մենք էլ նրան կը հասցնենք:

Լորիսի ամբողջ կարիքները, շալվար, սօլ, իշիկ, չամաշուր ուղարկեցինք, ինչ-  
պէս եւ թուրքուն: Ուղարկեցինք եւ 3 օրացոյց. մէկը դուք վերցրէք, երկուսը ուղար-  
կեցէք Մենաւոր:

Դէ՛հ, վերջապէս ամէն բան սաղլամ տեղը կապեցէք եւ զգուշութեամբ շարժե-  
ցէք:

Լորիսին յատուկ բարեւս յիշիր — աստ անցած լինի — թող քէֆը չիփ շիտակ պա-  
հէ: Ազգը անուշ կենայ. միայն երկրորդ անգամ այդպէս յիմարութիւն չանի: Իրենց  
տանը այս օրերը երկու չափ հաց էլ կը տամ: Ըստ ամենայնի ապահով մնայ:

Տեղեկութիւններ անպակաս արէք, շուտ-շուտ գրեցէք: Աւետիսը ինչպէ՞ս է. քեզ  
կ'օգնէ՞ ... Նրա մօտ եղած հաշիւները մաքրեցի՞ք թէ մնաց:

Այստեղ շատ նորութիւններ չկան:

Բարեւներով  
ԱՐԱՄ

1906 թ. օգոստոս 23ին  
յԱմրոց

Պարտիզաւանի<sup>1</sup> կոմիտէին

Անցեալ անգամ Չալիկը ձեր մօտից վերադարձաւ, հետը բերելով ձեր ուղարկած ապրանքները եւ նամակները:

Փանգատուում էք որ սուրհանդակները թանգ նստեցին ձեզ վրայ. ընկերներ! Սրանք քրդեր են եւ շահի համար կ'աշխատեն. եթէ շահը չլինի ոտը-ոտի առաջ չեն դնի: Մեր գործերը այդպիսի դժոխային պայմաններում է դրւած, մանաւանդ մեր փոխադրութեան գործը, դա անմիջապէս դրամի ուժով է կատարուում. չլինի առատ դրամ, փոխադրութիւն էլ չի լինի: Հարցնում էք — արժէ՞ — այո՛, արժէ, դեռ մի բան էլ աւելի: Հաւատացած եղէք, որ ձեր ուղարկած այդ փոքրիկ կապոցների համար կարող է մեր կռիւը մի շաբթով երկարատեւ անել. եւ եթէ կ'ողզէք, այդ փոքրիկ օգնութիւնը երկրի ներսում աւելի մեծ գործ կը կատարէ, քան ձեր սահմանազուլիների մի լաւ խմբի կռիւը...

Իսկ եթէ առաջին անգամ հանգամանքից օգտուել կարողանայիք եւ շատ բան ուղարկէիք, որչափ հրաշալի կը լինէր: Ի հարկէ այս խօսքերը ձեզ չենք ասում, այլ առհասարակ արտասահմանի բոլոր ընկերներին:

Ամէն բան իր ժամանակին եւ իր տեղին: Քանի կոպէկ արժէին այն բոլոր գոհողութիւնները, որ արիք դուք Բարձրաւանդակի գործը վիժեցուց յետոյ. իսկ եթէ այդ գոհողութիւնների կէսը անէիք ժամանակին, տասնապատիկ եւ հարիւրապատիկ աւելի շահաւէտ կը լինէր: Նոյնը եւ մեզ համար:

Այս տարի ահագին բան կարելի էր անել. պայմանները նպաստաւոր էին, բայց մենք չօգտուեցինք: Շատերը առարկում են թէ մենք ամէն գոհողութիւն յանձն առանք, նոյն իսկ գոհերից ամենաթանգագինը — անձնականի գոհը — բայց պայմանները թոյլ չտւին Բարձրաւանդակին օգնութեան հասնելու: Այդ բոլորը ճիշտ է, բայց միայն մի կողմից, իսկ մետալի միւս երեսին գրւած է հետեւեալ խօսքերը.— Մենք կազմակերպւած եւ սխտեմատիկ գործ չենք կատարում. քնում ենք քնում. երբ բաժակը լեցւում է եւ պայթելու համար մի կաթիլի է սպասուում, միայն այն ժամանակ ենք արթնանում եւ հարայ-հրոց ձգում: Բայց արդէն ուշ է... Կարճ, հաւանաբար գործ կատարելու համար, հարկաւոր է շարունակական եւ լարւած աշխատանք եւ բոլոր հնարաւոր միջոցներից օգտուելու հնարագիտութիւն...

Սուրհանդակներին եւ առհասարակ այն բոլոր ձեռնարկների համար, ինչ անուում է ուժ հասցնելու երկրի ներսը, ամէն գոհողութիւն յանձն առէք, այն խորը գիտակցութեամբ, որ դա ի գուր չէ կորչելու եւ ընդհանուր գործի վերաբերմամբ փրկարար պլիւս է (+):

Որքա՛ն գեղեցիկ բան կը լինի եւ որչափ տեղին հպարտութիւն, որ ընդհանուր վրէժխնդրութեան օրերում, կարողանաք ձեռքերնիդ խղճներիդ դնել եւ ասել.— արինք այն կարող էինք եւ մենք էլ մասնակից ենք ընդհանուր վրէժխնդրութեան գործին:



Ընկերներ! Երկրի ձեր ընկերները եւ ժողովուրդը, պատրաստ է կեանքի գնով բարձր պահելու ազատութեան դրօշը եւ Դաշնակցութեան պատիւը. դուք էլ գոնէ ձեր նիւթական եւ ռազմական օգնութեամբ զօրավիզ եղէք երկրի կուռղներին...

Այս անգամ թերեւս Չալիկը չգայ, այլ գան իր ընկերները. հոգ չէ, միեւնոյն են: Ձի անպատճառ տալու էք երեք հատ եւ կանոնաւորները. անցեալ անգամայ տւածը կիսաճանաչին էր մնացել... Սուրհանդակների մինիմալ պահանջներին բաւարարութիւն տւէք. նրանց սիրտը սիրաշահելու էք եւ միշտ էլ խաբեցէք սրանց՝ ապագայի հեռանկարներով եւ յոյսերով...

Կոմսին անպատճառ կը յայտնէք սրանց գայլը:

Ընկերական ջերմ համբոյրներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

Արամը համբոյրներ եւ բարեւներ է ուղարկում բոլոր ընկերներին:

25-ին օգոստ. [1906], Շամիր

1.- Պարտիզաւան – ծածկանուն Կաղզուանի, Կարսի մարզ:

Փաստ. 664-81

## 221

Սիրելի Արամ<sup>1</sup>!

Այս նամակաբերները նախկին սուրհանդակներն են: Իրենց յանձնուած ամբողջ թերթերն ու խմորները բերին մեզ: Մի քանի օրով ուշացան, իրենց գործով:

Այս անգամ գալիս են. սրանց աշխատեցէք տալ մեծ քանակութեամբ թերթեր «Ալիք» N 50-ից սկսեալ, քանի համար էլ լինի, ամէն N-ից բոլորը ուղարկեցէք: «Հայրենիք» յուլիս ամսւայ N N-ները. որքան կարող էք շատ, նոյնը եւ Ռազմիկ: Մեզ համար թերթեր (Մշակ, Կեանք, Աշխատանք, Մուրճ եւ այլ) եւ գրքեր են գալիս Մինարէթ, սրանց 2-3 օր պահիր: Հոն մարդ ճամբի՛ր, որ բերեն եւ տաք սրան՝ բերեն մեզ: Այս անգամ չլինի թէ անցեալ անգամայ պէս աղքատ ճամբու դնէք. այնպէս արէք, որ եղած ամբողջ գրքերը (որի մասին արդէն Գարեգինը մեզ գրած է, որ մի արկղ ստացել է) սրա հետ ուղարկել. երբ այդ լրացաւ. կարելի է մի քիչ էլ ապրանքներ տալ, այն ձեւով ինչ անցեալ անգամ գրել եմ. հրացանի մասեր – վառօդ, գործիքներ (եթէ կան) խմոր եւ առհասարակ այնպիսի բաներ որոնք իրենց լօ-լօ-ների համար անգործածելի են կամ չեն ծախւի: Եթէ այդպէս ապրանքներ կան ան-

պայման յանձնեցէք: Կարող էք 2-3 փուլ ծանրութիւն ունեցող բեռ տալ այս ոտին:

Բայց անպայման թերթեր եւ գրքերը բերել տւէք Մինարէթէն:

Անցեալ անգամ գրել էիք որ «Ալիք»ները մի-մի օրինակ է գալիս Աւարայր. մէկը վերցրել էինք, մէկը ուղարկել: «Ալիք» մեզ համար գալիս է 10 օրինակից շատ, անշուշտ Մինարէթով. բարի եղէք ձեզ մօտ եղածը ամբողջութեամբ մեզ ուղարկել. իսկ ձեզ համար Մինարէթից բերել տուէք:

Դուք ի նկատի ունեցէք, որ ամէն անգամ դիւրութիւն չունենք սուրհանդակներ ուղարկելու եւ սիստեմատիկ կերպով թերթեր բերելու. երբ մէկ սուրհանդակ գալիս է, այնպէս արէք որ շատ բան գայ, ի նկատի ունեցէք, որ ահագին չըջան է – մէկ-մէկ օրինակ արդէն ուղարկոււմ ենք Լեռ[նապար] հոն եղած ընկերներին. իսկ քաղաքը իր հագարաւոր ընթերցողներով: Մի մոռնաք որ մեր թշնամիները ահագին քանակութեամբ «Մշակ», «Մուրճ», Երիտասարդ Հայաստան, Հնչակ եւ նման գրականութիւն են բերում, ժողովուրդը վատ տրամադրելու համար: Մեր միակ յոյսը մեր թերթերն ու գրքերն է, այն էլ մի-մի օրինակ պահում էք Աւարայր, երեւի 5-10 մարդ պէտք է կարդայ. ձեզ մօտ եկած նոր ապրանքների մանրամասն ցուցակը ուղարկեցէք սրանց հետ:

Մինարէթից մեզ ծայր բերող սուրհանդակը բռնել է եւ ապրանքը թողել փախել. չգիտենք որքան է յանձնւած: Առայժմ դուք Մինարէթ ապրանք մի՛ փոխադրէք մինչեւ նոր դիւրութիւն ստեղծենք: Անմիջապէս գրեցէք մեզ Մինարէթից ուղարկւած ապրանքների քանակը եւ տեսակը:

Ներփակ նամակը անմիջապէս ուղարկիր Գարեգինին եւ պատասխանները առնելով մեզ ուղարկեցէք սրանց հետ:

Սրանց անպայման կը պահէք եւ Մենաւորից նամակ, լուրեր եւ գրքեր ու թերթեր բերել տալով մեզ կ'ուղարկէք:

Մինարէթում երեւի մենք նամակներ էլ կ'ունենանք, այնպէս որ բերել տւէք:

Հոս առանձին նորութիւններ չկան. աշխատեցէք հնարաւորին եւ շուտ ճամբուղնել այդ մարդոց:

Բարեւներով  
ԱՐԱՄ

30 օգոստոս

Շամիր

1.- Արամ – կուս. գործիչ Խաչան (Աւետարան) գիւղին մէջ:

**Սիրելի Եղևարդ!**

Ստացայ քո օգոստոս 21-22 թվակիր նամակը. Պարապն էլ հոս է: Նրա հետ խօսեցինք մի քանի խնդիրների մասին, որ պարտք եմ համարում գրաւոր քեզ էլ յայտնելու ի գիտութիւն:

Ա. Սահմանցոց գործի ղնելու համար երկու լաւ առաջնորդներ գտէք Աւետարանէն եւ Կիրճէն. նրանց հետ լաւ կ'անի որ Լօրիսն էլ գնայ. եւ ինչպէս ժամանակին գրել եմ (այս մասին ուրիշ գծով Մենաւոր էլ գրեցի) սրանք միմիայն պէտք է փոխադրեն հրացանի լուսանք\*: Այս ի հարկէ պէտք է լինի ձեր խորհրդով եւ գիտակցութեամբ. լաւ խորհեցէք. ճամբաների ապահովութիւնը ուսումնասիրեցէք եւ երբ հարիւրէն հարիւր վստահ լինէք, նոր նամակ-յանձնարարական կը գրէք եւ Մենաւոր կ'ուղարկէք դրանց:

Սօլեր 6 գոյգ այս անգամ ուղարկեցինք, շորերը՝ եկող անգամ:

Բ. Նոյն գիւղում մի քիւրդ\* կայ որին ճանաչում է Ռէսը Վիսօն\* որը իբր թէ վստահելի է, եւ առաջարկութիւն է արել մեզ համար աշխատելու Մենաւորէն մինչեւ Սահման:

Դուք աշխատեցէք մինչեւ Պարապի գիւղը Անգործ անել տալ: Այս մասին խօսեցէք Պարապի եւ վերոյիշեալ Ռէսի հետ. եթէ խելքերնիդ բան կտրեց, նամակ տուէք թող երթայ Մենաւոր. հոն արդէն ես գրած եմ այդ մասին, որ առհասարակ Լօ-լօներին եւ մասնաւորապէս վերոյիշեալ Սահման գիւղացուն, տան այնպիսի ապրանքներ, որ իրենց (լօ-լօները) չեն կարող գործածել կամ ծախել: Այդպիսի ապրանքներ շատ կան: Դուսն էլ նամակ գրելուց, այս պարագան շեշտիր: Թէ ինչպէս քաղաքից էլ ձեզ (Մենաւոր) գրած է, Լօ-լօին այնպէս ապրանք տուէք, որ իրեն համար անգործածելի լինի: Աշխատեցէք ամէն մի ոտին մի ոսկուց աւելի վարձ չտալ. նա սեփական ձի ունի: Իսկ ապրանքները Անգործ են բերելու, կամ ամենաքիչը Խուփ գիւղ:

Գ. Կիրճեցի Սողոյն\* – Հասօ, մի ձի տալ, որ ընկերակցութեամբ Քիւրդ-Ֆանդի\* – սա մեր հին աշխատողներից է. վերջինը սեփական ձի ունի, առանձին աշխատեն մինչեւ Անգործ:

Այս մասին կը խօսէ Պարապ մանրամասն:

Դ. Այս անգամ ուղարկեցի ձեզ ծախելու համար 20 թոփ շիլա, 15 թոփ կտաւ: Սրանց գները կը գրի քո ընկեր Արամը, չարսուից առնելով. գիւրութիւն եւ ժամանակ չկայ ինձ բերելու: Դրանք ծախւելով դրամը ծախսեցէք եւ մեզ մանրամասն հաշիւ տուէք. ի՞նչ եղաւ Աւետիսի եւ քո Համիկին հաշիւը: Առհասարակ սուրհանդակներին սկզբից մի՛ տաք, այլ գործը կատարելուց յետոյ:

*Զիաների մասին արդէն գրել եմ. աւելորդ եմ համարում կրկնելը:*

*Ե. Ո՛չ մի գաղթական չպէտք է ուղարկէք այդ գծով. Մենաւորում կը տփեն սուրհանդակներին եւ յետ կ'ուղարկեն: Այս մասին ոչ մի զիջողութիւն:*

*Զ. Ուղարկում ենք քո Տ. Զալլադի եւ Աւետարանի Զալլադի վկայագիրները:*

*Է. Անցեալ տարւայ թուրք սուրհանդակին ոչ մի երես չտաք. նրանց հետ դու անձամբ չխօսես էլ: Թող Լօրիսը ասի որ այս տարի գործ չկայ: Մենք նրան ոչ խօսել ենք եւ ոչ էլ ուղարկել:*

*Ը. Կիրճեցոց 2000ը տեղս հասաւ. ըստ Վասիլի 10-ը պակաս է եղել. ինչն՞ այսպէս է: Առաջուց էլ մի կապ պակաս է մնացել Աւետիսի ուղարկած սուրհանդակների բերած կապերից պակաս են: Այս մասին ստուգիր ու գրիր: Խիստ եղիր, ամէն մէկի համար ահագին գոհեր են լինում: Զգուշութեամբ վարեցէք, այդ խաչագողները ձեզ կը խաբեն:*

*Դու լաւ կ'անես որ նստես Սահման գիւղում: Կը ստանաս քո դեղերը: Հոս առանձին նորութիւններ չկան:*

*Քեզ մօտ մի ծրագիր կայ — տպագրեալ, ո՞ւր է մնացել:*

*Բարեւներով  
ԱՐԱՄ*

31 օգոստոս [1906]

*Յ. Գ.— Մոռացայ գրել որ Խուփ գիւղին Պարապի առաջարկութեամբ ուղարկում եմ 2 թփի կտաւ: Սրանց վարձատրութեան մասին Պարապին խօսել եմ, հազարով պէտք է խօսել: Ըստ Պարապի իրենք ամէն հազարին 40 դահ[եկան] կ'ուզեն — դուք էլ նայեցէք, կամ 30 դահ. տուէք, եթէ չհամաձայնեցին 40 դահեկան էլ հազարին լաւ է: Եթէ ուրիշ ապրանքներ կը լինի, այդ համեմատութեամբ կը տաք ի նկատի առնելով մի հազարի ծանրութիւնը:*

*Նորից շեշտում եմ կորած ծայրերի մասին. Աւետիսի բերել տուածից ըստ Պարապի մի կապ պակաս է. գրեալ է եղել 12, ուղարկել են 11ը. այս մասին քննութիւն կատարիր եւ իմացիր թէ ո՞ւր է կորել. թող այդ մասին Աւետիսը բացատրութիւն տայ:*

*Այս անգամ Պապիկին<sup>1</sup> նորէն 10 ոսկի յանձնեցի ձեզ եւ Վասիլին բերելու: Մանրամասն հաշիւ մինչեւ չներկայացնէք (հաշիւը նամակից անկախ թղթի վրայ գրեցէք եւ ստորագրեցէք) նոր դրամ չպիտի կարողանամ ուղարկել, որովհետեւ մօտաւորապէս 40 ոսկի եղաւ:*

*Այսօր կամ վաղը կը ճանապարհեմ Աւետարան եւ Խուփ ուսուցիչներ. առաջինին՝ մշեցի Վիվայիճ\* իսկ երկրորդին՝ դիւանագէտին — Յակոբիճ\*. առայժմ սրանք զբաղւելու են միմիայն վարժապետութեամբ, եւ ոչ մի գործով զբաղւելու իրաւունք չունեն, մինչեւ որ ծանօթանան տեղի պայմաններին եւ դուք էլ ըստ այնմ*

ամէն մէկին որոշ գործ կը տաք: Աշխատեցէք հաշտ ապրել իրար հետ եւ մնալ երկար: Լաւ ծանօթացրու ժողովրդի հետ, թող ըստ այնմ վարուեն:

Ժողովրդին յանձնարարիր որ սրանք մեր մարդիկն են, մեր համաձայնութեամբ է առաջնորդարանը վկայագիր տւել:

Դեռ շուտով Կիրճի համար էլ մարդ կ'ուղարկեմ: Դու էլ ընդ հսկիչ պէտք է լինես բոլոր գործերի վրայ: Ի հարկէ նստելու ես Սահման գիւղում:

Ապրանքները ինչպէս միշտ գրել եմ, շուտ ուղարկեցէք Պարապին, չլինի թէ այստեղ-այնտեղ ուշացնէք: Այստեղ օրւայ նորութիւնը Արմենակեանների եւ մերոնց կռիւներն է:

Լէզկ\* գիւղում պ. Յարութիւնի խմբի վրայ կրակ են բացել մի քանի անգամ: Մերոնք մի քանի կրակով պատասխանել ու հեռացել են, գիւղը չվտանգելու համար: Իսկ Մոկա\*<sup>2</sup> մերոնք վերցրել են 3 մարդ, որոնք Արմենական են դառել. դրանցից պահանջուում է խմբական եւ անհատական զէնքերը, եւ ուր ուզում են կարող են գնալ:

Ուրիշ շատ բաներ չկան — առհասարակ հանգիստ է. մոռացայ ասել, որ մի .....<sup>2</sup> առինք — Պարապը բերաւ որպէսզի սուրհանդակներին տրեխ տաք. ինչ որ դու կը տաս, այս մասին գրէ Մենաւոր, որ նրանք էլ աւելորդ տեղից ծախսեր չանեն եւ նորից բծախնդիր եղէք այդ մանր ծախսերի մէջ, ամէն բան դրամով անելով յետոյ այնպէս կը փչանան այդ շրջանի ժողովուրդը, որ հէջ բան չես կարող անել առանց դրամի. մանաւանդ աշխատեցէք օր-օրին գները չբարձրացնել: Առայժմ այսքանը:

ԱՐԱՄ

31 օգոստոս [1906]

Լօրիսին յատուկ բարեւներս յիշէք:  
ՆՈՅՆ

Ջալլադին վկայական տրւեց. տեսնենք ինչպէս պէտք է աշխատի: Իմ կողմից ասա եթէ լաւ չաշխատես վկայականդ կ'առնեմ եւ քեզ էլ պատասխանատուութեան կ'ենթարկեմ:

ԱՐԱՄ

Յ. Գ.— Լօրիսը եկաւ. նա մի քանի օր կ'ուշանայ. Ջալլադին եւ ընկ. անպայման ուղարկիր. դու Լօրիսին եթէ սպասես ուշ կը լինի. Սահմանի 10-10-ին եւ Ադօ-ին գատ-գատ ուղարկիր. դրամ Լօրիսը կը բերէ:

1.- Այս Պապիկը տարբեր է Գիսակէն. սուրիանդակ-փոխադրող է:  
2.- Անընթեռնելի բառ:

**Միրելի Տիգրան!**

Քաջարինից<sup>1</sup> գրեալ նամակով կը գանգատուես իմ լուսթեան վրայ. իրաւունք էլ ունես, բայց սոսկալի զբաղեալ եմ:

Շտապում եմ մի քանի տեղեկութիւններ տալ գործերի մասին:

Մֆինկա<sup>2</sup> դէպքը, պատահական բան — Աբրահամի թախումը մերժել է ժողովին ներկայ լինել. երբ ցանկացել են ուժով տանել, կրակ են բացել մերոնց վրայ. Յարութիւնը խոհեմաբար փախել է: Դեռ որեւէ փորձ չենք արել. Ջրաղացէն<sup>3</sup> 3 մարդ վերցրել եւ բանտարկել ենք. կը պահ[անջ]ենք մեր բոլոր վճիռների գործադրութիւն. նոյնը կ'անենք եւ Մֆինկա:

Փոխադրութիւնը բաւական յաջող է, թէեւ մի քանի կորուստներ ունեցանք:

Գողը 50000 գում [?], 3 տասնոց, 2 ուրիշ ատրճանակ վրայ տուաւ. արդէն Մալխաս գրել է. Թարխանին գերի են տարել եւ Մակուի\*\* սարտարը ամէն բան արել, 10-լօներին բանտարկել է, իսկ Թարխանին յանձնել Հայերին:

Մինարէթ<sup>4</sup> գնացող թուրքերը 2 հազար բռնել են տուել Շարաֆ բէկի էլում: Դրանց գրաւականից միայն 40 ոսկի վերցրինք. աւելին անկարելի էր. Մասիս, Վազգէն, Մենիկ եւ ուրիշները պէտք է վտանգւէին:

Մի ուրիշ 10-լօ ենք գտել (3 ընկեր), որոնք փոխադրութիւն են անում (առանց գրաւականի). երեք անգամ եկան. լաւ աշխատողներ են: Առ հասարակ բերում են մասեր, վառօդ եւ ատրճանակներ կամ գործիքներ, մաս մաս. սա էլ մի նոր սխտեմ է. իրանց համար անգործադրելի ենք դարձնում: Հետաքրքիր գործիքներ ենք ստացել մանաւանդ ուռացնելու եւ նոր ծայր շինելու: Ինչ ես կարծում, միայն մեր ունեցած ուռացնելու գործիքից 10 ձեռք ենք ստացել: 2 եայ, վառօդ, ուռասկան մասեր, մասեր եւ անհամար մասեր: Վերջերս գալիս են այնալիի մասեր. սա մի յաջողութիւն է, որի նման չկայ:

Աւետարանի<sup>5</sup> ամբողջ գծերի վրայ վարժապետներ եւ գործակատարներ եմ դրել. Սաֆոյին (Աւետարանի պետին) մարդ ուղարկեցի եւ համաձայնութիւն արի, աւելի լայն չափերով օգտուելու գիւղից. մի ոսկի ժամացոյց նուէր տուի: Աստուծով այս տարի — թէեւ մինչեւ հիմա կէսից աւելին կորցրել ենք — մեծ բան պէտք է փոխադրենք: Շատ նորութիւններ ենք մտցրել սխտեմների մէջ:

Ջաֆարը 5 ընկերներով կ'երթայ 3-4 օրէն. միայն ձիաների պակասութիւնը ուշացնում է:

Բարեկամը Կապուտանէն<sup>6</sup> փոխադրել է 700 ծայր եւ մի տասնոց... Սա էլ մի հովութիւն է. վերջապէս բոլոր գծերով եւ բոլոր միջոցներով աշխատում ենք ներս բերել:

Փոխադրութեան մասին անհոգ եղիր. միայն ափսոս որ ամբողջապէս չեմ կարողանում այդ սիրած գործով զբաղւելու:

Սարուստանում զբաղեալ են էլ[ջիմածնի] ժողովի գործերով. ամբողջը մերոնք:

Բայց իրար միս կ'ուտեն ժողովներով: Կոմսն էլ պատգամաւոր է Նախիջեւանից: Նախագահը Սիմոնն<sup>7</sup> է: Ես դեռ չեմ կարդացել եւ ժամանակ էլ չունեմ: Մալխասը պատմեց ինձ:

«Մշակները» Միհրանինը\*\* ստիպւած ենք այդ լրբից առնելու. ցաւալի է ասել որ նամակներ եւ թերթեր բերող սուրհանդակներ չունենք: Բոլորը փախել են, այնպէս որ արմենական եւ հնչակեան թերթեր մեծ շրջան են անուժ քաղաքում: Ես էլ զբաղւել չեմ կարողանում գործերով...

Salman<sup>8</sup> տկար է. դպրոցներից համարեա քչել են. Կենտրոնականում դասեր չունեն. շատ մեծ խայտառակութիւն եղաւ այս տարի: Փոխադրութիւնը եւ ապրանքների շատութիւնը, Մենաւորի հաւարը մեզ ամբողջապէս զբաղեցրեց եւ մենք մոռացանք լեզալ գործերը:

Դրամ եկել է մօտ 500 լիրա. եւ կը գայ էլ:

Զէնքեր – ծախու – վերջերս հէջ չի գալիս: Ուղարկում եմ թերթեր. աւելի նորերը մէկ-մէկ էին, որ ուղարկեցինք Սարգսին եւ Իշխանին: Այսուհետեւ դիւրութիւններ կան շուտով տեղեկութիւններ տալու: Բաւականացիր սրանով. տղաներին էլ գրել կը տամ:

Բարեւներով՝  
ԱՐԱՄ

1 սեպտ. [1906]

- 1.- Քաջարին – ծածկանուն Խորզոմ գիղի, Հայոց Ձոր գաւառակ:
- 2.- Սֆինկս – ծածկանուն Լէզք գիղի, Վանի գաւառ:
- 3.- Ջրաղաց – ծածկանուն Սղկա գիղի, Վանի գաւառ:
- 4.- Մինարէք – ծածկանուն Մալմաստի, Ատրպատական:
- 5.- Աւետարան – ծածկանուն Խաչան գիղի, Բերկրի գաւառակ:
- 6.- Կապուտան – ծածկանուն Ուրմիա աւանի, Ատրպատական:
- 7.- Խօսքը Սիմոն Չաւարեանի մասին է, որ նախագահ ընտրուած էր Էջմիածնի 1906 թ. համագալթին ժողովին:
- 8.- Մալման – ծածկանուն Համազասպ Բաղէշցեանի, որ ծանր հիւանդ էր թոքախտով:

**Վրէժի Կ. Կոմիտէին**

Փաստաթուղթը անթուակիր է. այլ ձեռագրով մը մակագրուած է «մօտ 905», ինչ որ սխալ է: Նամակին մէջ կը յիշատակուի Ռուբէնին (Տէր Մինասեան) Տարօն երթալը, որ իրօք 1906 թ. Յունիսին է: Ապա նաեւ խօսք կայ Խորհուրդին եղած առաջարկին մասին «անցեալ տարի»: Դաշնակցութեան Խորհուրդը նիստեր ունեցաւ 1905 թ. Փետրուար-Ապրիլ ամիսներուն: Ուրեմն նամակի թուականը պէտք է ըլլայ 1906 թ. ամառը:

**Ընկերներ !**

*Ստացանք ձեր եւ Արմենակի<sup>1</sup> նամակները, որոնք աւելի քան չոր ու պաշտօնական էին: Միշտ կը խնդրէիք ձեզ հետ թղթակցութիւն պահպանել, բայց ժամանակին չէք պատասխանում մեր երկար նամակներին, ինչպէս այդ արիք 3 ամիս առաջ: Զեր քէֆը՝ պարտականութիւնները փոխադարձ են լինելու:*

*Այս անգամ շտապում ենք պատասխանելու ձեր դրած մի հարցին. խօսքը Զուլումաթի<sup>2</sup> երկիր գալու մասին է: Դրա պատասխանը դժբախտաբար բացասական է, հետեւեալ պատճառներով:*

*ա.- Այդ պարոնին Երկրի ամբողջ ընկերների համաձայնութեամբ կազմակերպութիւնից հեռացրել եւ այս մասին պահանջել ենք Խմբագրութիւնից, որ յայտարարեն, եւ ձեզ էլ խնդրել ենք որ չպահէք. ոչ մէկդ էլ չլսեցիք. գործը անցեալ տարի առաջարկեցինք [Դաշնակցութեան] Խորհրդի քննութեան եւ այս տարի էլ կը դնենք Ընդհանուր Ժողովի առաջ որովհետեւ դեռ բաւարարութիւն չենք ստացել:*

*բ.- Մենք արդէն ժամանակին գրել ենք, որ զինուորական ուժեր չենք ընդունում: Հակառակ մեր այդ ցանկութեան ընկերները բերել են եւ Սէյդոյին<sup>3</sup> — ի դէպ, որ շատ լաւ եւ կտրիճ է եղել Զուլումաթից — բայց ո՛չ մեզ ենթարկում է եւ ոչ էլ լսում, այսինքն՝ բալա<sup>4</sup> է եղել գլուխներնուս: Այդ մասին դարձեալ յանցաւորը սահմանադրի ընկերներն են, որովհետեւ փոխանակ երկրի ընկերներին եւ Մարմնին հաւատարու խաբւել են անգործ ընկերների խօսքերից:*

*գ.- Սարհադի մօտ ո՛չ մի պարագայում զինուոր չենք ուղարկել: Նրա զինուորների թիւը աճել է մինչեւ 100. Իսկ խեղճ ժողովուրդը Սարհադի բաշխողութիւնը անկարող է տանել. նորը աւելացնել, կը նշանակէ մի մեծ անբարոյական քայլ անել: Մեր ընկերներէն Ռուբէնը գնացել է դեռ եղածներին էլ մաքրելու եւ ոչ նորերին ընդունելու:*

*դ.- Այն տղան, որ ձեզ լաւ է երեւում, կարող է երկրում շատ անկարգ եւ անդիս-*





**Միրելի Մարգարեանի!**

Այսօր (օգոստոս 28-ին) տեղս հասան 3 լո-լո-ն. շատ անհանգիստ էինք. ամէն կողմից գծերը փակուել մնացել էինք անմխիթար վիճակի մէջ: Ոչ Աւարայրէն եւ ոչ էլ Մինարէթէն նամակ չկայ...

Ապրանքները դեռ չենք ստացել, որ ստուգութեան մասին գրեմ ձեզ. թողել են մօտակայ գիւղերը, որ շուտով կը ստանանք, եւ նամակի վերջը կը գրեմ: Անցնեմ հարցերին:

Ա) Թ-ի լուրը արդէն անմիջապէս հասաւ մեզ. Լորիս եւ ընկ. ոչինչ չեն բացուել. ինչ խօսել է Թ-ն պիտի խօսած լինի: Այդտեղ յանցանքը աւետարանցիներինը չէ, այլ պատահականութեանը... Լորիսը շուտով կը գայ եւ ամէն բան անձամբ կը խօսէ:

Բ) Մարդարի\* մօտ գնալը միտք չունի. այդ թող Ընձայրին, երբ ինքը կը գայ եւ անձամբ կ'երթայ: Նուէրը կը պատրաստենք եւ եկող անգամ կ'ուղարկենք: Ինչքան կարող էք զգուշ մնացէք եւ խուսափեցէք պաշտօնական յարաբերութիւններից. դրանից խեր չկայ:

Գ) Աւետարանցիք եւ կիրճեցիք շուտով կը գան. նրանցից նամակ առանք. կը գրեն որ շուտով պէտք է երթանք Մենաւոր. նրանք մտադիր են ձիով գալ: Նրանց համար դրամ ուղարկեցինք, որ երկու ձի Աւետարանի եւ երկուսը Կիրճի համար գնեն:

Եղուարդը եւ Լորիսը հոն են մնալու. շուտով մարդ կ'ունենանք (իբրեւ ուսուցիչ) Կիրճ եւ Խուլի<sup>1</sup>: Առայժմ ձեր նամակներին պատասխանողը, ստացականներ եւ մարդիկ ուղարկողը լինելու է Եղուարդը: Նրա եւ Պարապի նամակներ բերողին կարող էք ապրանք վստահանալ: Կիրճեցոց յանձնուած վերջին 2000 հին ծայրը արդէն հասել է Պարապի քով. ուրեմն Աւետարանի սահմանում առայժմ բան չմնաց, բացի կորսուածներից. մնացածները ապահովութեամբ տեղ հասան:

Դ) Մինարէթից նամակ չունենալով, չհասկացանք թէ ճիշտ 2000 է տրուած թէ աւելի, կամ այլ արժէքաւոր իրեր: Յամենայնդէպս մենք 2000-ի գինը առինք. սպասելով մինչեւ նամակի գալը, դուք էլ ձեր կողմից աշխատեցէք շուտ ստուգել եւ գրել մեզ: Աշխատեցէք մեր Մինարէթ ուղարկած նամակներ եւ այլ յանձնարարութիւններ առայժմ ձեր գծով ուղարկել: Մոռացայ գրել որ Ընդ. Ժողի հարցերը ուղարկուած է Մինարէթ. չլինի թէ Թ-ի հետ այդ էլ կորաւ: Եթէ դեռ Մինարէթ է անմիջապէս բերել տուր եւ մեզ ուղարկիր: 10-15 օր առաջ Մինարէթ մի սուրհանդակ ուղարկեցի, դեռ չէ վերադարձել:

Այսօր (օգոստոս 29-ին) ստիպուած եղանք 2000 ծայր կորցնող սուրհանդակներին հաշիւը գոցել. առայժմ վերցրինք նրա դրամներից 40 ոսկի, 2000ի գին: Աշխատեցէք Աւարայրից կամ Մինարէթից սուրհանդակ գտնել եւ մեզ թերթեր ու գրքեր հասցընել: Հակադաշնակցական պրոպագանդան լայն չափեր է ստանում: Անցեալ օրը մերոնց եւ արմենականների մէջ ընդհարում եղաւ. իրար վրայ կրակ են բացել եւ հեռացել: Վնաս չկայ եւ ոչ մի կողմից: Թերթ եւ գիրք: Այս անգամայ թերթերը շատ

Հին էին. մենք մէկ-մէկ օրինակ Աւարայրէն ստացել էինք մինչեւ N 7-ը յուլիս 30 — «Ալիք» մէկ-մէկ օրինակ դու ուղարկիր, այդ N-ից բարձր, իսկ Աւարայրից եւ Մինարէթից մեծ քանակութեամբ 50-ից բարձր լինի:

Լաւ կը լինի որ դու էլ մի 10-10 գտնես, ուղղակի մեզ թերթ փոխադրող: Դրանք կարող են բերել մինչեւ հայկական գիւղերը: Դրանց մասին յետոյ:

Ե) Այս ամսւայ ընթացքում Սարուստանէն եկած բոլոր նամակներում գանգատուում են Մենաւորի ընկերների վրայ, որ անդադար հաւար էք ձգել եւ փոխադրութիւնը դադարեցնել տուել: Աւելի զարմանալին այն է որ ձեր մուտքի ցուցակը չափազանց աղքատ է. բաւական է մի շաբաթւայ յաջող փոխադրութիւն եւ դուք ոչինչ չէք ունենայ: Պէտք է ըստ ամենայնի աշխատել, մեծ եւ ապահով պահարան ունենալու մասին: Դրա մէջ է փրկութիւնը: Ի դէպ, ձեր ուղարկած մուտքի ցուցակը շատ անկանոն էր. մեզ պէտք էր ընդհանուր թւերը: Մուտք-ելք եւ մնացորդ մանրամասնութիւնը, այն էլ որտեղից է, հէջ հետաքրքիր չէր:

Միշտ մոռանալու չէ մի բան. երբ կիսատ ապրանքներ է ուղարկուում (օր. գործիք, ատրճանակ, կարողակա եւ գատուոր հնոց) պէտք է միշտ գրել թէ սրա մի մասը մնացել է, կամ ամբողջ է: Այս անգամւայ ուղարկուած երկու կարողական երկու մակագինով (որ դուք սխալմամբ մի մակագին էիք գրել) չհասկացանք գալիք կոթերինն է, թէ՞ գուտ մասեր են. այս շատ հետաքրքիր է իրար չխառնելու եւ աւելորդ տեղը չգործադրելու տեսակէտից. եթէ այդ կարողակաների կոթերը գալու է, պահենք, եթէ ոչ գործածենք: Շատ անգամ պատահական գործիքի մասեր է լինում, որ մենք չենք իմանում ինչ[ի] համար է կամ որ գործիքին կը պատկանի. օր. այս անգամ մի անիւ պտտցնել[ու] ձեռք կայ, կըր գլխով. չիմացանք թէ որին է: Վերջապէս ամէն բան կարգով ուղարկեցէք եւ միշտ էլ յիշատակեցէք. գոնէ առաջը նշանակեցէք, շարունակելի...

Ձ) Այս անգամ մի անփորձութիւն էք արել, տալով ծայր եւ գատուոր ու կարողակա միասին: Ամէնից առաջ պէտք է տաք այն ինչ որ գրուում է, որովհետեւ երբ այդպիսի լաւատեսութեամբ բռնւենք 3-րդ եւ 4-րդ ոտին արդէն նշանակում է նրանց ամէն բան կը տանք, առանց հաշւի առնելու, թէ նրանք 10-10 են եւ երբ տեսան որ մի ոտք տրւածը 70-100 ոսկի արժէ, կ'իւրացնեն եւ ամբողջ կեանքերնին միանգամէն կ'ապահովցնեն. մենք դժւար կարող կը լինենք նրանց պատժել: Այդպէս փորձեր շատ է եղել անցեալ տարիները. դուք միթէ՞ չէք տեսել, գոնէ լսած կը լինէք: Այնպէս ապրանք տուէք, որ ինքնին իրենց համար անգործածական եւ ծախելուց էլ գին չունի: Իսկ եթէ ամբողջութիւնը չի լրանում, այն ժամանակ արժէքաւոր բաներից միայն կարելի է տալ, այն էլ շատ քիչ քանակութեամբ: Ըստ ցուցակի դեռ սրանց տալու շատ բաներ կան. ցինկի տուփերի մասին ձեր ասածները իբր թէ ընդունել եւ գործադրել են, կրակից հեռու պահելով. այդպէս են պատմել մեր տղաներին, բայց վախնամ հասկանան. ամէն անգամ 4-7 տուփ աւելի չէք տալու. զգուշութիւն եւ զգուշութիւն: Շուտով Ջաֆարն էլ ընկերներով կը գայ: Զիւաները պակաս են, այս շաբաթ կը լրացնեմ: Հէջ որ Աւետարանէն նամակ առայ. ըստ իրենց նամակի, կիրճեցիք եւ աւետարանցիք ամսոյս 26ին եկած պէտք է լինեն. ուրեմն նրանք էլի կը գան. դրա մասին հէջ չկասկածէք: Աշխատեցէք կամաց-կամաց փոխադրել եւ տասնոցները, անպայման քանդելով. նորից եմ կրկնում, երկու մասի

բաժանեցէք. մի մասը մի ոտին, մի մասը երկրորդ ոտին. նոյն իսկ հայերին էլ այդպէս պէտք է անէք: Յինկլի տուփերը տալուց զգուշութեամբ փորձէք, թէ բան հասկացել են թէ ոչ: Երանի թէ դրանք առայժմ չտաս, եթէ ուրիշ բաներով բեռը կարող ես լեցնել մի՛ տուր, ծայրայեղ պարագային տուր, այն էլ նախկինի մասին տեղեկութիւն առնելով: Սրանք ձի են ուզում, տեսնենք վերջը ինչ կը լինի. թերեւս տանք: Բեռներից առայժմ երկու խուրջին տեղս հասաւ. երկրորդը դեռ չեկաւ. դրանց մէջ մի քանի պակասութիւն եւ աւելի ապրանքներ կային. օր. N 12-ի ծայրը ոչ թէ 26 է այլ 40 հատ. մակագինը մէկի հետ երկուս են. մի տոպրակ տասնոցի ծայր, որից 200 հատ պակաս էր. գուցէ միւս խուրջինի մէջ էլ լինի:

Այսօրւայ ստացած նամակի հետ արդէն տեղս հասաւ կիրճեցոց 2000 ծայրը. դրանից էլ 10 հատ էր պակաս: Առաջւայ ուղարկած հայելիի ծայրերից [պակաս]ը 35 հատ է. չիմացանք թէ ո՞ւր է կորչում: Տոպրակները ամուր կտորից արէք. դրամ մի խնայէք. այդպէս աւելի թանգ է նստում. գոնէ Աւարայրից ամուր կտոր բերէք: Եթէ չէք կարող բերել տալ, գրեցէք մենք ուղարկենք:

Հէնց նոր Աւարայր գնացող մեր սուրհանդակը եկաւ — սա այն է, որ անցեալ օրը երեք կապոց խմոր եւ մի քիչ թերթեր էր բերել. նրանցով ուղարկեցի եւ Մինարէթի նամակները:

Նրանց մասին գրեցի որ մասեր եւ լօ-լօ-ներին յատուկ ապրանքներ տան: Մանաւանդ թերթեր եւ գրքեր: Դուք էլ գրեցէք գուցէ մինչեւ այդ հազիւ հասնի: Եթէ ի հարկէ դիւրութիւն կայ: Դրա համար յատուկ մարդ չուղարկէք:

Այսօր (30 օգոստոս) Կապուտանէն<sup>2</sup> ստացանք 400 ն[որ] ծ[այր] եւ 300 Հ[ին] ծ[այր] ու մի մարդիկ\* 50 ծայրով: Սա բերել է մեր բարեկամներէն մէկը, որ պատահաբար հոն եղած լինելով հանգամանքից օգտուել են: Գրեցէք — ի միամտութիւն — Գարեգինին:

Այսօր նոյնպէս տեղս հասաւ կիրճեցոց յանձնւած 2000 ծայրը, հին. սա կարծեմ ճանապարհուել է Լորիսի — վտանգւած — ապրանքների հետ: Սրանից էլ 10-ն էր պակաս. մարդ չգիտէ, թէ ո՞ւր է պակսում. լաւ տոպրակների մէջ դրէք եւ ամուր խրելով կնքեցէք: Միշտ այդ գծով ուղարկւածների մանրամասն հաշիւը ուղարկելու էք պ. Եղւարդին, որ նա կարողանայ ստուգել եւ ըստ այնմ հասկանալ կորսւելու պատճառները:

Հէնց նոր տեղս հասաւ Պարապը. նա եղել է Աւետարանի շրջանում եւ կազմակերպել է մի նոր գիւղ — Սահման<sup>3</sup> — իսկականը Դէրօ\*. սրանք դեռ անփորձ են. նրանք իրենց համար առաջնորդ պիտի վերցնեն Աւետարան գիւղէն: Սրանց հետ շատ յարմար է հրացանի\* խողովակների տեղափոխութիւնը: Ամէն մէկին 3-ական. իսկ ամբողջ խմբին կարելի է տալ 2-ական հին կոթ, երկու կամ երեք կապով: Խողովակները լաւ կը կապէք — 3-ը միասին — մէջերը կը իւղէք որ չժանգոտեն:

Այս կերպ շատ յարմար է, այնպէս որ կարելի է շատ ապահովութեամբ տեղափոխել մեր ունեցածները: Այս մասին կը գրեն ձեզ Եղւարդ եւ Պարապ, երբ ժամանակը յարմար կը սեպեն:

Նոյն Պարապը գտել է Սահման գիւղից մի վստահելի լօ-լօ. սրանց յանձնարարական նամակ պէտք է տան (Եղւարդ եւ Պարապ) ձեզ գալու եւ փոխադրութիւն անելու համար:

Սրան էլ տալու է նոյն տեսակի ապրանք, ինչ տեսակի տալիս էք առհասարակ մեր բոլոր լո-լո-ներին: Սրան կարելի է տալ եւ այս ցինկի տուփերից — նախապէս խօսելով որ զգուշ մնան, կրակից հեռու պահեն — ի հարկէ յայտնի նպատակով: Առաջին անգամ կը տաք ի հարկէ աւելի անվնաս իրեր:

Շուտով թերեւս գան կիրճեցի Սողոն ու մի լո-լո անունը Ֆանդի\* մեր հին աշխատողներից են, վստահացէք: Է՛հ այս նամակը շատ երկարեց. 3-րդ խուրձինը դեռ տեղ չհասաւ. այնպէս որ օր-օրին, ժամ ժամին, բաներ կը լինեն գրելու: Երանի թէ ընդհանուր հրահանգները նամակներով հանէիք եւ առանձին նշանակէիք, նոյնիսկ կախէիք պատից, ամէն անգամ յիշելու համար: Մենք էլ մեռանք նոյն բաների մասին գրելուց:

Մոռացայ գրել որ N 12 ատրճանակի — կազիոնի— ծայրերի մեծ կարիք ունենք. եթէ դրանից կայ, մի քանի հարիւր ուղարկեցէք: Այս անգամ 40 հատը շատ քիչ է:

Այսօր (31 օգոստոս) Լօրիսն էլ եկաւ. եկել է արհեստի համար թախումներ տանելու: Աւետարանցի Մանուկը գաղթականներով արդէն եկած կը լինի. երկուսին մենք ենք ուղարկել, իսկ մնացածին ինքնագլուխ է բերել. ծեծեցէք եւ յետ ուղարկեցէք այդ լրբերին, բաւական է այսքան մեզ խայտառակեցին:

Պարապը գնաց: Լօրիս կ'երթայ 4-5 օրէն:

Այսօր (1 սեպտեմբեր) վերջապէս 3-րդ խուրձին եկաւ. սրանց ձիաները լաւ չէ. մարդ չի վստահանում. այս անգամ մի ձի տուինք, սեւ ձի է:

Մախասը խնդրում է այս անգամ իր սմիտը ուղարկէք. մի փոքրիկ սմիտ է սպիտակ: Սրա թոփն էլ հանէք:

Այսօր էլ նամակ առանք Սարուստանէն<sup>4</sup>. Թորգոմը խօսում է, որ նոր ապրանքներ է գնել եւ շուտով կ'ուղարկէ. տեղեր պատրաստեցէք:

Նորութիւններ չկան. Ջաֆարն 3-4 օրէն անպայման կը գայ, ինչպէս ասացի 5 հոգով կը լինեն: Ես էլ հաւատացրի որ տուփերի մէջ վտանգաւոր նկարներ են:

Ձերմ համբոյրներով  
ԱՐԱՄ

1906 թ. սեպտեմբեր 2-ին

Յ. Գ.— Մոռացայ գրել, որ 500 ձուկ ենք ուղարկում. խնդրում ենք մի մասը ուղարկէք Գարեգինին:

Նոյնպէս կը ստանաք Իշխանի մի աշխատութիւն «Վասպ[ուրականի] Չարդը», ուղարկեցէք Մինարէթ, թող պահեն մինչեւ նոր կարգադրութիւն:

Պատւելու համար սպիտակ լոբի եւ գէյթին եաղի յետոյ:

Բարեւներով  
ԱՐԱՄ

1.- Կիրճ — ծածկանուն Զեադուկ գիւղի, Հեքիարի գաւառ. Խուփ — այս անունով գիւղ կար Պիքլիսի նահանգի Խիզան գաւառակիւն մէջ: Այս մէկը ծածկանունն է տարբեր գիւղի Բերկրի գաւառակիւն մէջ:  
2.- Կապուտան — ծածկանուն Ուրմիա աւանի, Ատրպատական:  
3.- Սահման — ծածկանուն Դեքո գիւղի, Բերկրի գաւառակ:  
4.- Սարուստան — ծածկանուն Կովկասի:

Պարտիզաւանի ընկերներին

Սիրելիք!

Չալիկը գալիս է. դրա մասին ընկերներով նամակ ենք գրել. կը խնդրէի իսկոյն հեռագրով կանչել Կոմսին, կամ Չալիկին ուղարկել Զրաբերդ գնայ, այն տեղից կը կանչէ:

Չալիկին եւ ընկերներին անպայման ձիաներ էք տալու: Եթէ այս անգամ էլ մերժէք, հաւատացած եղէք որ այս գծի վրայ խաչ ենք դնելու, գիծ որ մեզ համար մեծ ապագայ է խոստանում...

Երկրի համար շատ զոհողութիւններ էք արել, նորէն արէք:

Յոյսերնիս կտրել ենք Մեծ քաղաքներից, մնացել էք դուք, ջրաբերդից եւ քարեցիք. դուք ձեր Աստուած, կամ մեռցրէք մեզ կամ յարութիւն տուէք... Մենք ձեր ձեռքին նայող մուրացկաններ ենք դառել. մի փոքրիկ բարեացակամութիւն ձեր կողմից, դա երջանկութեան աղբիւր կը լինի մեզ համար:

Գրեցէք թէ ձեր գործերը ի՞նչ դրութեան մէջ են:

Ի՞նչ կայ, ի՞նչ չկայ, ո՛վ է մեռել, ով կենդանի...

Ձերմ համբոյրներով  
Ձեր ընկեր  
ԱՐԱՄ

1906 թ. սեպտեմ. 8-ին  
Շամ

**Սիրելի Եղևարդ!**

Լօրիս եւ ընկերներ կը գան. ամէն բան բերանացի կը խօսեն. բազմաթիւ նամակներ եմ գրել. արդէն ամէն բան պարզ է:

Վարժապետները եկան, մէկը Աւետարանի, միւսը Խոռոհի համար: Սրանք առ այժմ գրադէլու են իրենց դպրոցական գործերով:

Խոռոհ վարժապետին կարող էք հաշիւների եւ նամակագրութեան գործ յանձնել<sup>1</sup>: Ամէն բան իրենց խօսւած է. առ այժմ գործերի մէջ խառնուելու կամ կարգադրութիւն անելու իրաւունք չկայ. ամէն բան քեզ, Լօրիսին եւ Աւետիսին է վերապահւած: Մինչեւ որ գործերին ծանօթանան եւ նոր ձեր խորհրդով եւ կարգադրութեամբ կը սկսեն գործունէութեան:

Աշխատեցէք դրամները գիւղացիներից գանձել. վստահ եմ որ աւետարանցիք կը տան. քիչ կը կասկածիմ Խոռոհի մասին. նրանց համոզիր որ անպայման տան. եթէ այդքան չեն կարող, մի մասը մենք կը տանք. այս մասին իրենց հէջ չասես. թող իրենք այն կարծիքը ունենան որ պէտք է ուսուցիչներին իրենք վարձատրեն:

20 ոսկի ձիւղ դրամ էի տուել. դրանից 5 ոսկի 2 մէճիտ, մի ձիւղ առել Իջեւան<sup>2</sup>. Լօրիսի հետ ձեզ ուղարկեցի: Մնացած դրամների մասին էլ գրեցի, որ Լօրիս հոն բերէ, Աւետարան ձիւղներ գնէք:

Ձիւղների դասաւորութիւնը ձեզ եմ թողնում. լաւ կը լինի որ մէկը տաք Կիրճի Սողոյին, այս մասին գրել եմ ընդարձակ նամակում:

Ուրիշ նորութիւններ չկան. խօսեցի Աւետիսին եւ իմ բարեկամներին, որ ինչքան դրամ լինի հարկաւոր ձեզ տան, գրէք հոս ինձ, ես վճարեմ իրենց ցանկացած մարդուն. ուրեմն դրամի հարցը վերջացաւ:

Վերջնական ձեւով ծախսւած դրամների հաշիւները ամսէ ամիս մեզ ուղարկեցէք. իսկ մնացորդները կամ պահ դրւածները թողէք ձեզ մօտ իբրեւ դեռ չծախսւած դրամներ: Մանուկի ուշանալը նոր կասկածների առիթ է տալիս. երանի սուտ լինի:

Բարեւներով  
ԱՐԱՄ

1906 թ. սեպտ. 8

1.- Չեռագրին մէջ ստանձնել:  
2.- Իջեւան – ծածկանուն Խառակոնիս գիւղի, Արճակի գաւառակ:

**Սիրելի Մարգարետունի!**

Ստացանք – 3 լո-լո-ի – հետ քո 5 սեպտեմբեր թվակիր նամակը եւ ապրանքները միայն տասնոցի ծայրերը, փոխանակ 1280 լինելու 1010-ը էին. ուրեմն 270 պակաս էր. կնիքը եղծուած չէր. ուրեմն հաշիւի մէջ է լինելու սխալը: Ծայրերի հաշիւները աւելի զգուշութեամբ արէք: Այս անգամ քիչ էին բերել ապրանքները. աւելին կարելի էր տալ: Սրանք անմիջապէս չեն կարող գալ. ձիւները յոգնել են, մի 5 օր պէտք է հանգստացնեն:

Այսօր ճանապարհ ենք դնում Ջաֆարին 3 ընկերով. երկուսը լո-լո, մէկը ասորի\*: Սա եւ Ջաֆարը մեր ընկերներն են. Ջաֆարի մասին լո-լո-ները իրենց ցեղակից եւ կրօնակից գիտեն<sup>1</sup>. չլինի թէ սխալէք: Ջաֆարի հետ յարմար տեսանք որ ուղարկէք հետեւեալ տեսակի ապրանքներ (սրանք իբրեւ վստահելի եւ մերոնցից, ամէն բան կարելի է տալ) իրեն Ջաֆարին (որովհետեւ ձին դեռ անփորձ է) կը տաք միայն խոզովակ\* – առանց ուրիշ մասերի: Եւ այս ոտին կիսատ մնացած մատուցերի մնացորդ: Իսկ խուրջինում կարող էք դնել մի քանի կտոր թերթեր եւ նամակներ. ի հարկէ եթէ նորերը կը լինեն:

Իսկ մնացած ընկերներին տւէք 7 հարիւրական\* նորի ծայր. այս անգամ թեթեւ լինեն: Իսկ իրենց ծայրամասները 2-ական դատարկ ուղարկեցի որ այդտեղից լեցնէք: Ի հարկէ գրելով մեզ: Մենք կը վերցնենք եւ նորէն դատարկ ձեզ կ'ուղարկենք:

Սրանց բոլորին կը տաք եւ 2 մատուցեր ատրճանակ: Սա կը դնէք Ջաֆարի տրամադրութեան տակ, ինքը կը դասաւորէ: Վերջինները ի հարկէ ծայրով են լինելու: Ծայրերը (տասնոցի) շատ զգուշութեամբ տուէք, ամէն բան մեզ գրելով:

Թորգոմն ու Կոմսը Սարոստանէն կը գրեն, որ հին կոթեր է ուղարկւած. կ'երեւայ կամ Աւարայր է ուղարկւած կամ Կուսաղաշ<sup>2</sup> է մնացել: Ուզեցէք եւ ամէն պարտիայի հետ մէկը ուղարկեցէք. այս կերպ թէ ապահով կը լինի եւ թէ կը փոխադրեն կոթերը: Նորերի մասին արդէն գրել եմ. ամէն պարտիայի հետ միայն մէկ մասը ուղարկեցէք, ինչպէս այս անգամ միայն լուլու\* պէտք է տաք: Լաւ կը լինի, որ աւետարանցոց էլ մէկ-մէկ հատ ամէն ոտքին տաք բերեն. առհասարակ մի տեսակ ապրանքը մի ոտով ուղարկելը այնքան գործնական չէ: Հին կոթերը շուտ բերէք:

Սրանց համար ոչինչ չէք տալու, միայն լաւ հիւրասիրեցէք: Գարեգինը սրանց նուէր է խոստացել. եթէ չի ուղարկել գրեցէք ուղարկեն:

Ջաֆարի նախկին ընկեր Ալօ-ն\* լաւ ծանօթ է ճանապարհներին, եթէ ուզենայ լաւ կ'աշխատի. լաւ չէ՞ր լինի, որ նրան սեւ հող տայիք փոխադրելու, եթէ այժմ էլ վստահութիւն է ներշնչում եւ եթէ կարող է անել: Նա կարող է բերել մինչեւ Եղեգնուտ (Արճակ\*) կամ Իջեւան (Սառալիմի\*) գիւղերը. սրանք կազմակերպւած եւ լաւ գիւղեր են, մեծ ազգաբնակչութեամբ. շատ ընդունակ մարդիկ են եւ վստահելի: Երկու գիւղերին էլ նամակ գրելուց կարող էք գրել առհասարակ գիւղի Գործադիր Մարմին. իսկ վստահելի ընկերների ի նկատի ունեցէք Եղեգնուտ Պետրոսի\* իսկ Իջեւանում Օրիգին<sup>3</sup>. երկրորդը անպայման վստահելի եւ յեղափոխական) ընկեր է. եւ շրջանի ենթակոմիտէի անդամ է: Այդ եւ այդ շրջանի բոլոր գիւղերը կազմակերպւած են. մանրամասնութիւնները հարցրէք Ջաֆարից. նա այդ



չըջանը եւ գործողներին լաւ գիտէ:

Երէկ մի տխուր լուր առանք, Աւարայրի սուրհանդակը բռնուել է Սահմանում<sup>1</sup>, շատերին մատնել է. մէկին երէկ բռնեցին. շատ են ծեծել եւ նեղացրել. դրին բանա – Ֆլիս. Ջաֆարը մանրամասնութիւնները կը խօսի. հետաքրքիր է իմանալ, թէ բա – ցի թերթերից ինչ են տուել:

Առհասարակ բարի եղէք Մենաւոր եկած նոր մուտքերը մեզ ուղարկել, հետեւե – լու եւ սուրհանդակներին ըստ այնմ դասաւորելու համար:

Սարգսրիս\* նւէրի համար մի բան կ'ուղարկենք, եկող անգամ:

Թոմասի եղբօր եւ քրոջ որդուն ուղարկած դրամը Մալխասի հետ, յանձնուած է իրենց եւ Աւետարանի գծով ստացագիր եւ նամակ է ճամբուած իրեն: Կը զարմանամ որ դեռ չի ստացել: Նորէն կրկնել կը տամ: Բայց թող ապահով մնայ որ ստացել է:

Միրելիս! Ինչպէս ձեզ մօտ սուրհանդակ գալով ուրախանում էք, այնպէս էլ մենք, երբ ապահովութեամբ տեղս են հասնում, միշտ մեր յաղթութիւնը մի շաբթով երկար ենք համարում: Այս տարի պէտք է կամ խայտառակենք, կամ չհաւատացողներին (երկրի գործին) մի մեծ ապտակ տանք: Կ'երեւայ իմ նամակից վիրաւորել ես – է՛հ չարժէ այդպիսի ընկերական նկատողութիւններից ցաւել: Միշտ մտէք մեր հոգեկան վիճակի մէջ. սառնարիւն լինել չենք կարողանում. մանաւանդ երբ Սարուստանն էլ մեզ մեղադրում է անփութութեան եւ ծուլութեան մէջ. այդ բոլորը կ'անցնի. միւի – թարւենք միայն մեր արած գործով եւ մեր խղճի առաջ հանգիստ կը լինենք:

Առայժմ քո այդտեղից հեռանալու մասին հարց լինել չի կարող: Հագիւ ծանօթա – ցել էք ձեւերի եւ յարաբերութիւնների հետ. դուրս գնալով գործը երեսի վրայ կը մնայ: Կամ նոր վստահելի ընկեր պէտք է բերել տաք, ծանօթանաք եւ հեռանաք, կամ մինչեւ սեզոնի վերջը պէտք է մնաք: Այն հոգեկան բաւականութիւնը ինչ կա – րող է տալ Մենաւորի աշխատանքը – ինչքան որ նա դժւարին եւ ծանր լինի – ոչ մի տեղից չէք կարող ընդունել, մանաւանդ որ բոլոր գործերից երկրի գործն է ձեր սրտին մօտիկ:

Արմենակին գրեց Մալխասը. իսկ Վրէժին պատասխանեցինք բոլոր ընկերներով: Զ. մասին կը կարդաք Վրէժի նամակում: Այստեղ շատ նորութիւններ չկան. թա – րան-թուրան սկսեց. տարել են Ֆարուխ<sup>5</sup> գիւղի ոչխարները, մեծ մասամբ քրդերի:

Նորդուզում (լեռնային գաւառ հին Անձեւացոց երկիրը) շատ նեղութիւններ են տալիս հայերին տեղի քիւրդ աղաներ. Ֆիրպաղաշան [?] գիւղի քահանայի եղբօր սպանել են: Բոլոր հայ գիւղերից 5-20 ոսկի տուրք կ'ուզեն (քրդերը), վիճակներնին գէշ է. գուցէ գաղթեն. սովը այս տարի սոսկալի է. հացը շատ թանգ: Քաղաքում սո – վից մեռնողներ կան: Հիւանդութիւնը կոտորում է ժողովրդին. միայն քաղաքում 2000-ից աւելի երեխայ եւ պատանիներ են մեռել: Գիւղերը հաշիւ չկայ. միայն Թի – մարի Հիւանդաց գիւղում 130 երեխայ է մեռել. կոկորդի հիւանդութիւն է...

Առ այժմ այսքանը:

Բարեւներով  
ԱՐԱՄ

12 սեպտեմբեր [1906]

- 1.- Ջաֆարը քրտացած հայ էր, բուն անունով Սեւանցի Սահակ. կը գրադէր փոխադրութեան գործով:
- 2.- Կոռուդաշտ – ծածկանուն Ատրպատականի Մակու գաւառի մէկ գիւղին:
- 3.- Շիրին, խառակոնիսի Շիրին – Եղիազարեան Շիրինն է (1876-1920):
- 4.- Աւարայր – ծածկանուն Խոյ աւանի: Սահման – ծածկանուն Դերօ գիւղի, Բերկրի գաւառակ:
- 5.- Ֆարուխ – գիւղ Վան-Տոսպ գաւառակին մէջ:

229

Վկայական!

Սոյն վկայականը ներկայացնող Արճիճին տրւում է իրաւունք իրենց շրջանում յօգուտ բանտարկելոց հանգանակութիւն անելու: Կարգադրւում է բոլոր հայ գիւղերի հասարակութեան իրենց լումայով օգնել Ս[ուրբ] գործին:

Բանտարկելոց օգնելը քրիստոնէական պարտականութիւն [է], ուրեմն շտապեցէք կատարել ձեր պարտքը:

ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1906 13-ին սեպտ.

Ամրոց

230

Սիրելի Կոմս կամ Թորգոմ!

Մեր մարդկանց ուղարկեցի Արարատ<sup>1</sup>, իրենց հետ դնելով չորս ծպտեալ: Սրանց վկայականները առանձին են:

Զաման խանին եւ ընկերոջ 2 ոսկի տուէի, իրենց մօտ պահելու համար. ճանապարհներին եթէ պատահարներ չլինի, ուրիշ ծախսելու տեղեր չկան: Իսկ երկու տաճիկներին\* տուինք 5 մեջիտ պահելու համար: Սրանք 2 հատ մարդից\* են բերել իրենց հետ (մեզ համար) շատ լաւը:

Այդ երկուսի դիմաց – ըստ արժողութեան – մի որոշ գումար տուէք սրանց – էն քիչ երկուսին 100 ուռլի: Վերջապէս սրանց գործը աշնպէս դասաւորեցէք, որ ձեր գլխուն բալա չդառնան, եւ իրենք իրենցմով կարողանան ապրել: Կամ ուղարկեցէք Եզիպտոս\* մի անգամից ազատեցէք:

Մնացած խնդիրների մասին Մալխասը կը գրի: Սնտ\* գիւղի մասին դարձեալ կ'ասենք, որ հոն 10-10-ները շատ լինելով չենք կարող ընդունել. իսկ Դէքո-ին\* կազմակերպել ենք, հոն հարցնելու են ուէսին կամ կայանցի Սիոնից\*։ Սրան Թորգոմը ճանաչում է. անցեալ տարի Սարոստանէն եկաւ եւ հոն հաստատուեց: Վերջապէս գիւղը աւելի ապահով է մեզ համար քան ուրիշներ: Սրանց 8 ոսկի պէտք է տանք, 4-ը այս կողմի վարձ, 4-ը այդ կողմի վարձ: Ուրեմն աշխատեցէք հանգամանքից օգտուել, ուղարկելով թերթեր, գրքեր (բայց ընտրովի, մեծ մասամբ վերջին սոցիա-

լիստական գրականութիւն, Լէոյի պատմական ուսումնասիրութիւնները եւն):

Հազար անգամ գրել ենք որ մի քանի սրւակ մելան ուղարկեցէք հեկտոգրաֆիայի. ամէն անգամ մոռանում էք. գոնէ յիշողութեան տետրում գրեցէք որ չմոռանաք:

Տղաների դուրս գալու պատճառը կը գտնէք վկայականում:

Աւարայրից եկող մի սուրհանդակ բռնեց բաւական թերթերով ու նամակներով. մատնել է տաճիկ[?] մարդ. առայժմ ձեռք է ընկել Ֆէզոն<sup>2</sup>: Տեսնենք վերջը: Սլաքին<sup>3</sup> 3 1/2 տարի վճռեցին. աւելին չկարողացանք անել: Արդէն բաւական նստել է, քիչ բան մնաց:

Ուրիշ նորութիւնների մասին միշտ գրում ենք, փոստայի դրամների մասին ինչո՞ւ այդքան ջղային էք ստացագիր ստանալու համար: Տնաչէններ գիտէք, թէ ինչ պայմաններով է ուղարկւում ստացագրերը:

Այս տարի էլ բոլորը սուրհանդակները անյաջողութեան հանդիպեցին. ուրեմն աւելի կաշառք:

Ապրանքները աշխատեցէք ամբողջութեամբ հաւաքել-հասցնել Մենաւոր կամ Աւարայր: Արդէն կանոնաւորապէս բացւել են գծերը:

Եթէ պիտոճէի մի մասն էլ գարնան մնայ (ներս բերելու մասին է խօսքս) վնաս չունի, միայն եթէ որոշեալ տեղերում պատրաստ լինեն: Նոյն իսկ գործնական տեսակէտից այդ կարեւոր է. այս տարի ամբողջ գարնան սեզոնը ոչինչ չարինք, բան չլինելու պատճառով:

Առ այժմ այսքանը, փոստայով ընկերները կը գրեն. ընթացիկ խնդիրները եւ գործերը թոյլ չեն տալիս հակառակ իմ ցանկութեան որ շուտ-շուտ գրեմ ձեզ. գոհացէք եղածներով:

Ձերմ համբոյրներով  
ԱՐԱՄ

15 սեպտեմբեր  
Շամիր

1.- Արարատ – ծածկանուն Սուրմալուի շրջանի (Իգտիր):

2.- Ֆէզո – ծածկանուն Օհանէս Մարիֆեանի, սրճարանատէր Այգեստանի մէջ, գէնքի առ ու ծախով գրադող:

3.- Սլաք – ծածկանուն Արմենակ Օխիկեանի (1874-1915), յեղափոխական գործիչ Բաղէշի շրջանին մէջ:

**Միրելի Մարգարե!**

Յ 10-10-ները այսօր ճանապարհ դրի: Մի քանի օր դիտմամբ ուշացրի որպէսզի Ջաֆարի եւ ընկերներին չպատահեն Սահմանում\*: Սա այս անգամ էլ նորէն մի ձի առաւ, ուրեմն իրենց տւած կը լինենք երկու ձի:

Սրանց վերջին բերած ամբողջ ապրանքը ստացանք, բացառութեամբ տասնոցի ծայրի, որ գրւած էր 1280. ստացւեց 1010. կնիքը իր տեղն էր. այս մասին գրել եմ եւ Ջաֆարի հետ: Վերջինը եկաւ չորս հոգով: Երեւի տեղդ հասած կը լինի եւ յետ դարձած:

Աւետարանի կողմերից դեռ լուր չառանք. կիրճեցոց բերած 2000ը եւ աւետարանցի եղբօր բերած ծայրը սմիտի հետ դեռ լուր չառանք, որ հասած լինի Պարապի քով: Մենք այստեղից միշտ գրում ենք որ այս կողմը ուղարկելը շտապեցնեն. դուք էլ միշտ շեշտեցէք Եղւարդի նամակում. նոյնիսկ սպառնացէք, որ եթէ արագութեամբ չտեղափոխեն եղածները, նորերը չէք տայ. Սա ի հարկէ պիտի միայն գրէք... իսկ եկողներին միշտ ապրանք կը տաք: Մենք ամէն դիւրութիւն ունենք — մանաւանդ այսուհետ — այս կողմը բերելու: 4 մարդ ունէինք, որ Աւետարանի գրծով կ'ուզէինք ձեզ ուղարկել. պատահական կերպով յաջողեցինք ուղղակի Սարուստան ճամբել: Այնպէս որ առայժմ մարդ չունենք դուրս գնալու — եթէ չհաշուենք այն երեք երիտասարդներին, որոնք Լորիսի հետ գնացին Աւետարան, ձեր կողմը անցնելու եւ Սարուստան հասնել-գնալու համար: Ուրեմն դուք ազատ կը լինէք, եթէ աներեսաբար ինքնագլուխ սուրհանդակները բերին, կամ Եղւարդը ուղարկեց. մի անգամ ցոյցի համար յետ ճամբեցէք, բայց պայմանով, որ շատ հոգի չլինեն. դրանք գալով աւելի կը դժարացնեն եւ կը վտանգեն գործը:

Սրանց տալու էք սովորական ապրանքներ, թէ տասնոցի ծայր, սրանից կարելի է եւ 2000ը տալ. անցեալ անգամ բաւական թեթեւ էր բեռները: Հակառակ պարագային տէք եւ ցինկի տուփերից 2 հատ:

Արդէն գրել եմ որ Աւետարանի սուրհանդակը բռնուել է. իր հետ մի քանի անմեղների էլ բանտ տարաւ: Դեռ քննութիւնը չի սկսուել: Այս շաբթուն վերջացաւ մեր Արմենակի<sup>1</sup> դատը\*. սրան Ընծայրը գիտէ. կտրեցին 3 1/2 տարի\*, արդէն 30 ամիս\* նստել է. ուրեմն քիչ բան մնաց:

Կառավարութեան մէջ մի արտագոյ կարգի շարժում է երեւում. Յ օր առաջ գնացին Իշխանի կողմերը<sup>2</sup> խուզարկութեան. այսօր լսեցինք որ առանց բան անելու վերադարձել են. կարծեմ հոն եկած է եղել եւ Բաղէշի կառավարիչը...

Սովը սոսկալի է. հացը բարձրացաւ 65 դահ[եկանի]. սովորական գինը 40 դահ. էր, իսկ էժան ժամանակը 20-30. թէեւ իջնում էր եւ 10-15ի. դէ՛հ երեւակայեցէք ժողովրդի վիճակը:

Երէկ եկաւ Մինարէթի կողմու 10-10-ն — Կապիճ\*. նա չէ գնացել Մինարէթ. իր մօտ

Թողածները դեռ նոր [է] բերել, այն էլ գիւղերն է թողել: Երեւի սրան կը ճամբեմ Մինարէթ:

Սարուստանէն մի տղայ կը գայ Սուրէն Մալխասեան\* անունով. մենք ենք կան-  
չել, առաջին պատեհութեամբ ներս ուղարկեցէք:

Մենք ստացել ենք մինչեւ N 83 «Ալիք»․ Ձանգի միայն անունը լսեցինք: «Դրօշակ»  
աշխատեցէք մի քիչ շուտ ուղարկել:

Ուրիշ նորութիւններ չկան․ Ձիու պատճառով այս անգամ սրանց չուզեցինք  
գործ տալ․ գուցէ քիչ տրամադրութիւններնին տեղը չլինի․ միշտ խաբել ապագայ  
յոյսերով:

Այս մի շաբաթ է կառավարութիւնը թնդանօթային փորձեր է անում․ ամէն օր  
30-էն աւելի գնդակ են ձգում: Ինքն էլ պայթուցիկ է․ ինչ որ է պատերազմի պատ-  
րաստութիւնների մէջ են:

Ձգիտեմ 2րդ թէ 3րդ ոտին ուղարկել էք մի գործիք, ասելով թէ նոր տեսակի ու-  
ռացնելու գործիք է․ ինչպէս կ'երեւայ այդ հին ծայրի ոտքի (տակի մասը, ուր կը  
լցնուի կապսիւլ) մասի, շինելու գործիք է, բայց կիսատ է, մի որոշ մասը պակաս է․  
որոնեցէք ապրանքների մէջ եւ շտապով ուղարկեցէք մեզ, այդ շատ կարեւոր է:

Ուրիշ գրելիքներ եւ նորութիւններ չկան․ ընկերները դեռ գաւառ են․ երեւի կը  
գան մի ամսէն:

Առայժմ այսքանը: Լսեցինք որ Ընձայրը եկել է․ ճի՞շտ է․ Պատելուն ինչպէս թա-  
ղեցիք, ափսոս մարդ:

Եթէ դրամ է թողել, փոխանակ կազմակերպութեան վերցնելու յատկացրէք  
վանքի դպրոցին․ ա՛խ այս դպրոցը, ուղտի պոչ եղաւ, ոչ երկարում է եւ ոչ կարճա-  
նում:

Ձերմ համբոյրներով  
ԱՐԱՄ

1906 թ. սեպտ. 17-ին

Շամիր

Յ. Գ.— Անցեալ անգամ ուղարկեցի Իշխանի մի ձեռագիր մեծ աշխատանքի,  
ձկների հետ էր․ ստացա՞ք թէ ոչ․ ոչինչ չէիք գրած այդ մասին:

ՆՈՅՆ

1.- Մեր Արմենակը – Օխիկեան Արմենակն է (Մլաք):

2.- Իշխանի կողմերը – այսինքն Լեռնապար, Վասպուրականի հարաւային լեռնային գաւառնե-  
րը:

**Սիրելի Եղևարդ!**

*Ստացել ենք սեպտ. 4, 11 եւ 16 թւակիրները:*

Առ հասարակ նամակներից երեւում է որ միշտ ցրած էք եւ գործերը չէք կարողանում մի որոշ սխառեմի վերածել: Ասենք այս բոլորի մի մեծ խանգարողը եղաւ Լօրիս, որ 10-15 օր հոս անգործ նստեց եւ ուրիշների գործերին վերջանալուն սպասեց: Ինչ եւ է. ժամանակ քիչ մնաց. ընդամէնը մէկ ու կէս ամիս: Աշխատեցէք գործերը այնպէս կարգադրել, որ աւելորդ թիւրիմացութիւններ չլինի եւ լարած կերպով էլ գործ առաջ տարւի:

1) Դրամական խնդիրներ: Զարմանում եմ, որ մինչեւ հիմա չյաջողեցիք մեզ հաշիւ ներկայացնել, որ մենք էլ ըստ այնմ դրամ հասցնենք ձեզ. վերջապէս Աւետիս եւ Պօղոս խոստացան որքան դրամ հարկաւոր [է] հոտ ձեզ վճարել եւ այստեղ մեզնից ստանալ. միթէ՞ մոռացաւ իր խոստումը: Չէ՞ որ Լօրիսը ներկայ էր այս խօսակցութեան ժամանակ. եթէ նա այդքան դրամ չունէր, կամ չէր ուզեր տալ. ինչո՞ւ խոստացաւ:

Այս անգամ ուղարկում եմ 10 ոսկի Վասիլին, որից 5 ոսկին քեզ կ'ուղարկի. գրեցի նրան որ ձեր վերաբերեալ ապրանքները չպահեն եւ ձեզանից վերցրած դրամները յետ տան. Ա' իր ձեր խելքը, որ ձեր դրամները կամ ապրանքները ձեր կամքով կը տաք ուրիշին. միշտ ասել եմ զգուշացէք փոխ տալուց. ամէն մարդ թող իր գլխի ճար տեսնի ինքը:

Կիրճեցիք նախկին հաշիւ չունեն. ամբողջը քո օրով եղածն է. նախկին բերածների դիմաց, ես խոստով[ին] ջրաղացի քարի վարձ տւել եմ 3 ոսկի. յետոյ Չաթօ-ին էլ տւել եմ 1 ոսկի. դրանք դեռ մի բան էլ նախկինից մեզ պարտք կը մնան: Որպէսզի գլուխդ շատ չցաւացնեն, դու ասա, որ ես նախկին հաշիւների հետ գործ չունեմ. ստացէք նրանից որը ձեզ գործի է դրել. այլ խօսքով թող գան մեզ մօտ: Այսպէս վարւեցէք եւ բոլորի հետ: Չհասկացանք եւ եղբայրների հաշիւը. նրանց տւել էինք 330 դահեկան. սրա դիմաց ի՞նչ են բերել չիմացանք. սրանց բերած ատրճանակներից ստացել ենք միայն ամիսը 38 ծայրով. իսկ յունիս 12 բերած տասնոցի մասին խաբար չենք. թերեւս սա այն տասնոցն է, որ նրանց հետ եկած վարժապետ Գրիգորի\* վրայ է եղել. սա այն տղան է, որ մի ուրիշ զինուորի հետ Քամալ-բէկի էլի<sup>1</sup> մէջ դէպքի են պատահել: Սրանց հետ եղել է երկու տասնոց. մէկը զինուորի անձնակաճը, իսկ միւսը, վարժապետի վրայինը՝ կազմակերպականը. իմ գիտցածով այս է լինելու, բայց այս տեղեկութիւնը ի նկատի ունենալով քննութիւն կատարիր եւ գրիր Մենաւոր: Աւետիսին առաջին անգամ տւել եմ 216 դահ[եկան] իր յանձնարարականով. մի Աւետարանցի գեղականի տւել եմ 40 դահ. իսկ Լօրիսի հետ տւել 100 դահեկան, տեղիս ծախսերի համար. այս դրամներն էլ գրել եմ քո հաշիւն, պէտք է մանրամասն հաշիւներ տաք: Մինչեւ կանոնաւոր հաշիւ չտաք, չպիտի կարողանանք մեծ քանակութեամբ դրամ ուղարկել. մէկ էլ առանց գործ տեսնելու ոչ ոքի դրամ չտաք: Ըն-

ձայրի գրած վիճաբան սովորական հրացանի վիտաներն են. արդեօ՞ք Ձերքէզ եւ ընկ-վիտա բերել են 100-ի չափ:

2) Ոչ մի պարագայում, ո՛չ մի գոհողութեամբ չպէտք է նոր ստացական կամ յանձնարարական նամակներ տալ Չաթօ-ի եւ Սմոյին, մինչեւ եղածը ձեր ձեռքը չհասնի. առնուազը Սահման գիւղ բերենք. նրանք անցեալներում էլ նոյն ձեւերով են կեղտոտութիւններ արել:

Ձերքէզը, Հասոն եւ ընկերները աւելի վստահելի են. սրանց նամակները աշխատիր դու գրել. արդէն ասել եմ, որ սրանց կարելի է գործ տալ: Առհասարակ Աւետարանի, Խուփի, Կիրճի եւ Սահմանի<sup>2</sup> գործերի վրայ դու ես հսկելու, նամակ գրելու եւ ստացագիրներ ուղարկելու: Պարապը թէ եւ հաւատարիմ, անկեղծ, բայց գրել կարգալ չգիտէ եւ հաշիւ պահել անկարող է:

Ինչ որ ունիս, աշխատիր, ի՛նչ գոհողութեամբ էլ լինի, նոյնիսկ դրամական մի քիչ ծախսեր էլ անել եւ ապրանքները ամէնից առաջ Կիրճից հանել, ապա թէ՛ Կիրճի, թէ՛ Սահմանի, թէ՛ Աւետարանի եւ թէ՛ Խուփի ապրանքները անմիջապէս հասցնել Անգործ՝ Պարապին:

3) Պարապի եւ Վասիլի արածները տգեղ բաներ են. նրանց այս մասին յանդիմանագիր գրեցի. բայց դարձեալ կ'ասեմ, որ յանցաւորը Լօրիսն է. հաճախ ինչո՞ւ: Նամակները պահել են, որովհետեւ Լօրիսը ասաց որ ես երկու օրէն կը գամ եւ կը տանեմ. Պարապն էլ քաղաք էր: Լօրիսի սոլը առել են. թերեւս այն պատճառով, որ Լօրիս այստեղ իրեն սոլ առաւ: Իսկ իր եղբօր համար ալ իրաւունք չունէր առնելու, եւ Լօրիսը յիմարութիւն է արել տալով իրեն յանձնուած սոլը եղբօրը, մանաւանդ Պօղոսին. սա ի՞նչ իրաւունքով մեր սոլը կը հագնի. սրանից դրամը պահանջելու է:

Իսկ կաշին Լօրիս ասեց տարէք, ես կը գամ կը վերցնեմ. ինչո՞ւ թողեց որ Պարապ տանի, կամ ինչո՞ւ այնտեղից չառաւ. Բաւական չեղա՞ւ Լօրիսի արածները: Հազար անգամ հոս ինձ խաբեց գնալու համար. վերջն էլ գործերը կիսատ ձգեց:

Շեյա կտաւ չտւեցի, որովհետեւ Լօրիսը ասաց հարկաւոր չէ, մենք մեր արհեստով պիտի զբաղենք:

4) Վարժապետներ: Սրանց արդէն անձամբ խօսել եմ, քեզ էլ գրել, որ բացի իրենց վարժապետութիւնից, ուրիշ բանով զբաղելու իրաւունք չունեն. նրանց տրւած վկայականները գիւղերի հասարակութեան կը վերաբերի, այն էլ վարժապետութեան մասին. մի անգամ կարգալուց յետոյ, պէտք է պատուել: Նոր վկայականների մասին հարց չի կարող լինել: Գործի ամբողջ ղեկավարութիւնը եւ պատասխանատուութիւնը քո եւ Լօրիսի վրայ է ընկնում: Նրանց էլ այս մասին երկտող գրեցի:

Միշտ աշխատեցէք իրար հետ համերաշխ ապրել եւ գործ ստեղծել եւ ո՛չ թէ քանդել:

Չգիտեմ էլ գրելիք մնաց թէ ոչ. Մենաւոր արդէն գրեցի, որ հին հաշիւներով ձեզ [չ]ծանրաբեռնեն եւ շփոթեցնեն. միայն դու պահիր քո օրով եկածների հաշիւները, մնացածների հարցը ստուգենք մենք. արդէն գրել է որ 300 չափ պակաս ծայր կայ հին հաշիւից. դուք միայն քրքրեցէք հաշիւը գտնելու համար, ուրիշ ոչինչ:

1.- Մարդոց, ցեղախումբի:  
2.- Յաջորդաբար՝ Խաչան, Խուփ, Զեաղուկ, Դերօ գիւղերը, բոլորն ալ Բերկրի գաւառակին մէջ:

Վասիլը գրում է որ իրեն ուղարկվածների մէջ մի թիւրիմացու թիւն կայ. գրել ես 4324. Իսկ նա ստացել է 3784. Պարապը ո՞ւր է մնացել. անմիջապէս ստուգեցէք եւ մեզ էլ գրէք: Դուք ձեր ստացածների մասին գրեցէք Մենաւոր. ուղարկվածների մասին ստացագիրը առէք Վասիլից եւ նամակով էլ մեզ գրէք որ միշտ մենք դիւրութիւն ունենանք իմանալու, թէ ո՞ւր եւ ի՞նչ տեսակ գեղձումներ կամ գործողութիւններ է լինում: Իսկ մեր եւ Վասիլ — Պարապի հաշիւները մենք կը ստուգենք. դու միայն քո ստացագիրը առ Վասիլից, ուրիշ ոչինչ:

Ձեր տուներ ոչինչ նորութիւն չկայ. բոլորը լաւ են. ընկերներդ տաք բարեւներ ունեն:

Մեզ մօտ առանձին նորութիւններ չկան. գործերնիս բաւական յաջող է:

Բարեւներով  
ԱՐԱՄ

1906 թ. սեպտ. 22

Արամից քանի որ քեզ արտասովոր մէջ մի բանակցութեամբ  
 ուր ուր ետեւ թու 4324 ետեւ թու. եւր նա ստացել է 3784.  
 Երբեք այն որ թիւնը առ միջապէս արտասովոր է թիւնը ետեւ:  
 Պատ չոր արտասովոր թիւնը ետեւ արտասովոր — արտասովոր թիւնը  
 եւ արտասովոր արտասովոր — եւ արտասովոր եւ արտասովոր արտասովոր  
 մի արտասովոր արտասովոր, եւ արտասովոր արտասովոր արտասովոր  
 արտասովոր արտասովոր եւ արտասովոր արտասովոր արտասովոր  
 մի արտասովոր արտասովոր — արտասովոր արտասովոր արտասովոր  
 արտասովոր:

Զոր արտասովոր արտասովոր արտասովոր արտասովոր արտասովոր  
 արտասովոր արտասովոր:

Արտասովոր արտասովոր արտասովոր արտասովոր արտասովոր  
 արտասովոր:

1906թ. սեպտ. 22 Բարեւներով Արամ —



**Սիրելի Եղևարդ,**

Անցեալ անգամ Վասիլի հետ ուղարկեցի 10 ոսկի, որից 5 ոսկի քոնն էր, իսկ 5 ոսկին իրեննր. նրան գրեցի որ քեզնից վերցըրած դրամը յետ ուղարկի. այս մասին գրել եմ եւ քեզ:

Քանիցս գրեցի քեզ Սահման գիւղի մասին. հոն պէտք է արտասահմանէն ուղարկէք 3-5 ձիաւորներ, ապրանքներ բերեն եւ դառնան. պիտի՞ կարողանան ներս ընդունել, ապրանքները պահել եւ քեզ իմաց տալ:

Այս մասին քեզ կը գրէ պ. Բժիշկը<sup>1</sup> Ռուսաստանէն, այնպէս որ հոն պատուիրի՞ր որ պատրաստութիւն տեսնեն ընդունեն. պիտի հարցնեն Ռէսին եւ Սիրունին: Այս մասին չմոռանաս:

Աւետիսին պատւիրեցի որ քեզ դրամ տայ հոս վաճառականներին վճարեմ. ինչո՞ւ իր խոստումը չի կատարում: Զիտներ առի՞ք թէ չէ. չլինի թէ ձիու դրամը ուրիշ բանի գործադրել տաք: Եթէ դրամ չունէք մի վստահեցի մարդ ուղարկեցէք հոս, բերի ուղղակի ձեզ:

Մենաւորից նամակ առանք, որ կիրճեցիք եւ Զալլադը բաւական ապրանքներ են բերել, մանրամասները գրել աւելորդ է. երեւի ընկերները Մենաւորէն գրել են. հաշւածը 13-14 հազար ծայր է. աշխատեցէք արագութեամբ Անգործ<sup>2</sup> հասցնել. հաշիւների վերաբերմամբ խիստ եղէք. այնպէս արէք որ պատասխանատուութեան տակ չմնաք. ո՛չ մի պարագայում կիրճեցոց առանց հին ապրանքը ստանալու նորերը բերելու իրաւունք կամ ստացագիր չտաք. արդէն գրել ենք Մենաւոր որ ապրանք չտան այդպիսի պարագայում. այդ լրբերը անցեալում նոյն պարագաներից են օգտուել. խօսք՝ մի անգամ ասելուց լսեցէք:

Ապրանքները հասցրէք անմիջապէս Անգործ, Անգործ եւ Անգործ. շատ պահելուց խէր չկայ:

Անցեալները դեղեր ուղարկեցի, երեւի ստացած կը լինէք. ներփակ նամակները ուղարկեցէք անմիջապէս Մենաւոր:

Այստեղ նորութիւն չկայ. չմոռանաք հաշիւներ ուղարկել. Վանքից եկածների ցուցակը, դա էլ ճամբեցէք:

**Ձերմ համբոյրներ  
ԱՐԱՄ**

1906 թ. սեպտ. 26  
յԱմրոց

1.- Բժիշկ – այս անունով ծանօթ էր նաեւ Վահան Փափագեան (Կոմս):  
2.- Անգործ – ծածկանուն Բերկրի գաւառակի մէկ գիւղի:

**Սիրելի Սալման<sup>1</sup>!**

*Ուղարկում եմ 3 ծրար վերջին օրերի ընթացիկ գործերի նամակները:*

*Վաղը երեկոյեան անպատճառ կը պատահենք, եթէ անակնկալի չհանդիպենք:*

*Որոշումներից մէկը իրագործւեց. Խլու<sup>\*\*</sup>-լաճը գնաց: Եղել է կիրակի գիշեր. ըստ սովորական ձեւի եւ առանց որեւէ պատահարի. դեռ դուրսը ոչինչ չենք խօսում:*

*Պրոստիտուտկան<sup>\*\*</sup> [պոռնիկը] կամ այսօր կամ վաղը կը վերջանայ. բայց այնպէս է դասաւորուած որ սա էլ առաջինի ձեւով անյայտ է մնալու. հակառակ պարագային որոշ ուրիշ պիտի յանձն առնենք, իսկ նրա տեղի անյարմարութիւնը այդ ինձ թոյլ չէ տալիս. չէ՞ որ ըստ ձեր խմբապետի պահպանողական եմ. պիտի հաւատարիմ մնալ սկզբունքին:*

*Արեւել. Բիւրոյին մի նամակ գրեցի Ամերիկա-ին<sup>\*\*</sup>, ուղղակի բաց, որ նամակ եւ դրամ ստացել ենք, հասցէ չունենք, սպասում ենք հասցէի, նամակի եւ դրամի:*

*Ուրիշ նորութիւններ չկան, խմբերը ինձ սպանեցին: Հէջ ժամանակ չեն տալիս ուրիշ նիւթերի մասին խորհելու: Անցեալ անգամ խնդրել էի 2 կանցի [?] տոմսեր, ի՞նչ եղան:*

*Վաթանի<sup>2</sup> քէֆը ինչպէ՞ս է:*

**Բարեւներով  
ԱՐԱՄ**

1.- Սալման – ծածկանուն Համազասպ Բաղէշցեանի:  
2.- Վաթան – ծածկանուն Ղեւոնդ Մելոյեանի:

**Սիրելի Տիգրան!**

**Ստացայ հետեւեալ դրամները.**

Ա. անգամ ոսկի 10 հատ	1080	դ[ահեկան]
Բ. անգամ ոսկի 14 հատ	1512	»
Բ. անգամ մէծիդ 120 հատ	2400	»
Բ. անգամ քարտ 100 հատ	500	»
	5492	»

Երկու ոսկին այս [ան]գամ չէր բերել. ասում է մի ինչ որեւէ գիւղացու մօտ է, որ վաղը պիտի վճարէ:

Մաշտոցը լաւ է: Ուղարկում ենք 9 կտոր «Մշակ», նոր եկած «Հայրենիք», միայն մի համար ուղարկեցի, ուրիշը չկար:

Ջաֆարը վաղը վերջին անգամ կ'երթայ, եղած չեղածը բերելու:

Հոս առանձին նորութիւններ չկան. դրամ չլինելու պատճառով Աւետարանի ապրանքները դեռ մնաց հոն:

Երէկայ — Ջաֆարի ընկերներին — 5 ոսկի տւի. այնպէս որ գործի վրայ ենք...

Բարեւներով  
ԱՐԱՄ

Շաբ[աթ]

Յ. Գ.— Մոռացայ գրել որ երէկ ալճաւազցի մեյիքներից մէկը, որ մատնութիւններ էր անում Քէօռ-Հիւսէին փաշայի առաջ, եւ դրա մատնութեամբ 3 մարդ սպանւել է, հոս գալով, ըստ սովորական մեթոտի գամփացրինք [?]. հետեւանքը ոչինչ չկայ:

ՆՈՅՆ

**Սիրելի Տիգրան!**

Ստացել եմ նամակդ. այդ մասին առայժմ չեմ գրում. կարծիքների տարբերութիւն կայ, որ դուրս գալուց յետոյ կը խօսենք. միայն այսքանը կ'ասեմ որ ոչ մի կերպ չմտածես շուտ դուրս գալ, յիշիր այն բոլոր անգործ օրերը որ տառապում էիր հիւանդութեան պատճառով, աւելի լաւ է 10 օր էլ պառկել, աւելի առողջանալ...

Մաշտոցի մասին ես այսքանը կարող եմ ասել. քանի որ միայն դեղեր է գործածում, աւելի լաւ է դուրս գայ եւ պտոյտներ անէ ձիով, քան հոտ աւելորդ տեղը մնայ. եթէ քեզ մօտ լինելը մի կարեւոր բան է, այդ մասին ոչինչ չունեմ:

Երէկ եկաւ Գարեգինի լօ-լօ սուրհանդակը. բերաւ հրաւիրագրերից մի անագին բեռը, մէկը ուղարկում եմ քեզ, Իշխանին եւ ընկերներին էլ ուղարկեց: Դու աշխատիր հարցերի ցուցակ կազմել եւ մեզ ուղարկել, մենք մեր մէջ խորհրդակցենք. ապա միայն կ'երթանք Իշխանի քով. ուղարկեց եւ Գիսակին: Սուրհանդակը նորութիւն չբերաւ, բացի Շարժումից<sup>1</sup>, որը ուղարկում եմ ձեզ եւ կը տեսնէք ինչ խայտառակութիւններ է լինում դուրսը. խնդրում եմ ուրիշներին այդ թերթերը ցոյց չտալ. գոնէ երկիրը մաքուր պահենք... «Մշակներ» կ'ուղարկեմ յետոյ:

Մինարէթի Սարգիսը քեզ եւ Մաշտոցին բարեւներ է գրել, փոխադարձը իրեն գրեցի. Գարեգինը Վրէժէն շուտով իր տեղը պիտի գայ:

Հրաւիրագրից կ'երեւայ որ դեռ պիտի ուշանայ ժողովը. ինչպէս Գիսակի նամակից տեսար, նա առաջարկում է իր բարեկամին պատգամաւոր ուղարկել. ես էլ համաձայն եմ, կրկնակի օգուտ ունենք:

Տեսնենք ինչ կ'ասեն Իշխան եւ ընկերներ: Այսօր նորէն նամակ գրեցինք դուրս դրամի համար, յատուկ գնացող կայ:

Ուրիշ նորութիւններ չկան: Մաշտոցը եթէ կարող է այսօր երեկոյեան գայ մեզ մօտ «Դրախտ» կօչիկների չափը առնելու համար. գինին իբր թէ քացախել է, կամ աւելի ճիշտ կազ են տւել. նորը առնել հնարաւոր չեղաւ: Ջաֆարը դեռ հոս է: Առայժմ այսքան:

Մաշտոցը ինչ որ է խմբի մասին է գրել. դու կարգադրիր, ժամանակ չունեմ քիթ սրբելու:

Բարեւներով  
ԱՐԱՄ

Գ. շ. [Երեքշաբթի]

1.- Շարժում – Վառնա հրատարակուող եռօրեայ:

237

Սիրելի Իշխան!

Նամակդ ստացայ. ուղարկում եմ քեզ Տիգրանին ինձ գրած նամակը. ես գոնէ անկարող եմ այդպիսի կոմպրոմիս<sup>1</sup> անել. ուրիշների չհամաձայնած խնդիրների տակ ես անկարող եմ ուրիշ անուն դնել, բացի իմից, որի պատասխանատուն ես եմ: Ո՞վ գիտէ վաղը ի՞նչ պէտք է պատահի եւ եթէ հարց լինի, կուժի կուլան իմ գլխիս կը կոտրւի, աւելի անպատիւ կերպով:

Ես կը համաձայնեմ, այդ տեղեկագիրը ուղարկել միայն իմ ստորագրութեան տակ, այլապէս կ'ուղարկեմ միայն քոնը<sup>2</sup>:

Նկատողութիւնները այնպիսի կէտերի վերաբերմամբ է, որ ամենահասարակ բացատրութեամբ թերեւս վերջանար, եւ զարմանալին այն էր որ կարդալուց յետոյ չէր իր նկատողութիւնը անում, այլ այսօր այդքան ուշացած:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

Եշ. [հինգշաբթի]

- 1.- Փոխգիշում:
- 2.- Հարցը կը վերաբերի Ընդհ. ժողովին ուղարկուելիք տեղեկագրին:

238

Սիրելի Տիգրան!

Ստացայ նամակդ. շատ ցաւում եմ եւ զարմանում, որ այսքան երկար ժամանակամիջոցում դու չկարողացար քո նկատողութիւնները ժամանակին անել, մանաւանդ որ ես այդ նիստում էլ տւի կարդալու, որ եթէ նկատողութիւններ ունես՝ արա՛, որպէսզի ուղղենք եւ արտագրենք, բայց դու ոչինչ չասացիր:

Ինչ եւ է. այժմ մի քանի պայմաններ կ'առաջարկեմ.

Ա. Եթէ դու համամիտ չես այդ կարծիքներին, այդ տեղեկագրի տակ կը ստորագրեմ իմ անունը. բայց որպէսզի քո ձայնը ոչնչացրած չլինեմ դու էլ պէտք է քո կարծիքները գրես միաժամանակ, ինչքան էլ դա հակասական լինի:

Բ. Կամ պէտք է մարմնի անունը ստորագրելուն դու էլ համամիտ լինես գոնէ սկզբունքային կէտերում: Եւ

Գ. Կամ բոլորովին տեղեկագիր չուղարկել մեր կողմից բացի պահանջներից:

Այս պայմաններից որեւէ մէկին պէտք է համաձայնես որ սուրհանդակին ճամբու դնեմ, այլապէս նա կը սպասէ եւ վաղը:

Նամակս պէտք է կարդալ եւ Իշխանին:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

Եշ. [հինգշաբթի]

**Սիրելի Սարման!**

**Ժողովը կը թողնեմ շաբաթ օրւան, ցերեկով գումարելու համար:**

Հիւանդութեան իբրեւ բալասան, իբրեւ վերջին դեղ, ուղարկում եմ մի դատահան նամակ. փորձով համոզել եմ, որ քո հիւանդութիւնը բժշկւում է հոգեկան դեղերով: Այդ նամակը ուշադրութեամբ կարդայ, բայց չհամարձակես վճիռ արձակել. դա քաղաքային կոմիտէի իրաւասութիւնից վեր է. միայն ուղարկում եմ կարդալու համար. իսկ կարդալուց յետոյ կը ծրարես եւ կ'ուղարկես Կ. Կ.-ին Վաթանին<sup>1</sup>: Չլինի թէ առանց ծրարի ուղարկես. տանողը կը կարդայ եւ գաղտնիքները դուրս կը գայ... Եթէ այդ նամակը վերջնական կերպով քեզ չբժշկէ, պատրաստ եմ աւելի ազդեցիկները ուղարկելու... միայն թէ առաջինի ազդեցութեան մասին մանրակրկիտ նկարագրութիւն արա՛, որ ըստ այնմ քո հիւանդութեան հոգեբանութիւնը հասկանամ:

Տէր-ողորմիւսն չգիտեմ. լաւ չի լինի որ «Փառք քեզ...» երգես իբրեւ գոհունակութիւն, որ Աստուած այդ բոլ քեզ է տւել...

Աստուած հոգիդ լուսաւորէ. աղէկ մարդ էիր... վաղը մենք պէտք է նկարենք, արի դուն էլ նկարի, որ մեռնելուց «Դրօշակում» պատկեր ունենաս... Կեանքում չկրցար մարդ ոգեւորել, գոնէ մահանալովդ ոգեւորիր...

Հանգիստ ոսկրներիդ, չարատանջ գործիչ...

Այսուհետեւ ոչ բարեւներով  
**ԱՐԱՄ**

ԵՇ. [հինգշաբթի] Ժամը 12 25 վայրկեան...

1.- Վաթան – ծածկանուն Դետոնդ Սելոյեանի. Սալման – ծածկանուն Համագասպ Բաղէշցեանի. երկուքն ալ անդամ Վասպուրականի Կ. կոմիտէի: Նամակը գրուած է անշուշտ երգիծական ոճով:

**Սիրելի Տիգրան!**

Տղաները տեղափոխութեան գործով եկան – սրանց հետ յարմար կը լինի Ժամհարին [?] գալը. երեկոյեան թէ լոյս եւ թէ սրանք գալու լինելով վախեցի մի թիւրիմացութիւն լինի. քեզ կը սպասեն Դրախտ<sup>1</sup> – այնպէս որ այնտեղից կը բերեն մեզ մօտ:

Եթէ կարող ես վաղը մենակ դու եկ մեզ մօտ. իսկ զինուորները առանձին մնան, ժողով անենք. եթէ բազմամարդ լինի տեղ յարմար չի լինի ժողովի:

**ԱՐԱՄ**

Ուրբ[աթ]

1.- Դրախտը – Վանի Այգեստանի Ղարաղաղ թաղամասի մէջ (Փաշի Փողան) հաւաքատեղի:

## Գ. – ԴԷՊԻ ՎԻՇՆՆԱ Հ.Յ.Դ. ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ

1907 թ. Փետրուարին Մայիս երկարող ամիսներուն Վիեննայի մէջ պիտի գումարուէր Հ. Յ. Դաշնակցութեան 4րդ Ընդհ. ժողովը, ամենէն երկարն ու փոթորկալիցը՝ իր օրակարգին վրայ կուտակուած ծանրակշիռ հարցերով: Պիտի քննուէին անցնող երեք տարիներուն կարեւորագոյն իրադարձութիւնները, – Մասնոյ ապրտամբութիւն, Ապտիլ Համիտի մահափորձ, հայ-թաթարական կռիւներ: Պիտի քննարկուէր կուսակցութեան 1905 թ. որդեգրած կովկասեան գործունէութեան նախագիծը, որ տեղի տուած էր ներքին սուր տարակարծութիւններու եւ անջատողական շարժումներու, այն աստիճան որ երկփեղկումի սպառնալիք էր կախուած Դաշնակցութեան գլխուն: Ապագայ գործունէութեան նկատառումով, կարեւոր հարցեր էին նոյնպէս Օսմ. կայսրութեան ընդդիմադիր տարրերու հետ գործակցութեան, Միջազգային ընկերվարութեան յարելու, հայ դատի եւրոպական քարոզչութեան նոր թափ տալու խնդիրներ եւայլն:

Պատմական նշանակութիւն ունեցող այս Ընդհ. ժողովին համար Վասպուրականէն պատգամաւոր պիտի երթային Արամ Մանուկեան եւ, նորակազմ Լեռնապարի շրջանէն՝ Իշխան (Պողոսեան Նիկոյ): Երբորդ մըն ալ ընտրուած էր, բնիկ վանեցի Համազասպ Բաղէշցեանը, որ սակայն, ծանրօրէն թոքախտէ վարակուած, պիտի չկարենար մասնակցիլ ժողովին. Իտալիոյ մէջ բուժարան փոխադրուելէ ետք, երիտասարդ այս գործիչը պիտի մահանար եւ թաղուէր Ժընեւի մէջ:

– Նախքան Վիեննա մեկնիլը, 1906 թ. Հոկտեմբերի սկիզբը Արամ Վանէն մեկնեցաւ Ատրպատական, ուր մնաց շուրջ երկու ամիս եւ զբաղեցաւ Ս. Թադէի վանքին մէջ կուտակուած ռազմամթերքի Վասպուրական փոխադրութեամբ. գործով մը՝ որուն այնքան եռանդով լծուած էր վերջին երկու տարիներուն: Մինչ այդ, Կովկասէն վերադարձած էր Վահան Փափագեան (Կոմս), որ շուտով պիտի անցնէր Վան զինք փոխարինելու համար, իսկ Արամ Դեկտ. 13ին ճամբայ պիտի ելլէր դէպի Թիֆլիս, ուր իրեն կը սպասէր Իշխան՝ խորհրդակցելու եւ ապա միասին Վիեննա ճամբորդելու համար:

– Վիեննայի Ընդհ. ժողովին մէջ Արամ Մանուկեան առիթ ունեցաւ մօտէն շփում ունենալու կուսակցութեան ականաւոր գործիչներուն հետ, մէկ մասը ծանօթ իրեն կովկասեան գործունէութեան օրերէն: Հոն էին Ռոստոմն ու Ջաւարեանը, Վարանդեանն ու Սհարոնեանը, Ալկունիին, Վռամեանը, Ջարդարեանը. հայդուկապետներէն՝ Անդրանիկն ու Մեպուիը, Մերաստացի Մուրատն ու Սեւ-Ջարեցի Մաքոն, Խանասարի Վարդանը եւ շատ ուրիշներ: Դաշնակցութեան այդ մեծերու կողքին, Արամ, իբրեւ քաջատեղեակներէն մէկը Երկրի պայմաններուն ու պահանջներուն, զգալի ներդրում պիտի ունենար քննարկուող շատ մը հարցերու պարզաբանման համար:

Ընտրուեցաւ անդամ աշխատանքային մէկ քանի յանձնախումբերու, յատկա-

պէս Ապտիլ Համիտի մահափորձին պարագաները քննող յանձնաժողովին, որուն կողմէ ներկայացուց առանձին զեկուցագիր. կարդաց Վասպուրականի գործունէութեան տեղեկագիրը եւ պատասխանեց այդ առթիւ եղած հարցումներուն, լուսաբանական յաւելեալ տեղեկութիւններ հաղորդելով ժողովին\*։ Հետաքրքրութենէ զուրկ չէ իր մէկ հաստատումը այն մասին, որ միայն 1906 թուականին ինքնապաշտպանութեան նպատակով Երկիր մուտք գործած էր ատլի մեծ քանակութեամբ ռազմամթերք քան նախորդող 15 տարիներուն\*\*։

Անշուշտ այս գործին անձնապէս քիչ բաժին չէր ունեցած Արամ։ Հայ-թաթարական ընդհարումներու ամենէն թէժ շրջանին, երբ կուսակցութեան նիւթական եւ բարոյական ամբողջ կարողականութիւնը նետուած էր նժարի մէջ, եւ ուղղուած կովկասահայութեան ինքնապաշտպանութեան, Արամ չյուսահատեցաւ բնաւ. ընդհակառակն, բազմապատկելով իր ջանքերը, անդադար պահանջեց եւ Դաշնակցութեան զոյգ Բիւրոներէն, եւ պատասխանատու միւս ընկերներէն չանտեսել Երկիրը եւ անոր տառապող ժողովուրդին անմիջական կարիքները, որոնց մէջ, Ա. Մանուկեանի հաստատ համոզումով, հայ ժողովուրդի կանոնաւոր զինումն էր։ Այդ ճամբով միայն կարելի պիտի ըլլար դիմակայել թուրք եւ քիւրտ թշնամիներուն հզօր ոյժը, երկարաշունչ պայքար մղել եւ տոկալ։

ԽՄԲ.

---

\*) Տես «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», հատոր Գ.։ Ընդհ. ժողովի ընթացքին Արամի ելոյթներուն մասին, տեսնել նաեւ «Արամ Մանուկեան» (Փաստաթղթերի եւ նիւթերի հաւաքածու), Երեւան, 2009, էջ 31-56։

\*\*\*) «Նիւթեր» Գ. հատոր, էջ 105։



Անթուակիր ցամակ է: Յայտնաբար ուղղուած է Վան-Վասպուրակացի Կեդր. կոմիտէի ընկերներուն: Արամ 1906 թ. Հոկտեմբերի սկիզբը դուրս եկած էր Վասպուրականէն եւ անցած Ատրպատական, զէնք-զինամթերք ուղարկելու եւ ճամբաները ապահովելու գործով: Այս ցամակը պէտք է հետեւաբար գետեղել նոյն անսու սկիզբը, որովհետեւ կը թուի, որ Վանէն մեկնելէ ետք առաջին ցամակն է որ կը գրէ իր տեղ՝ այսինքն Ս. Թադէ-Մեմաւոր հասնելու մասին:

*Սիրելիք!*

Իջեաւնից<sup>1</sup> գրել եմ, մեր հոն հասնելու մասին. միւս գիշեր այնտեղից ելանք, այդ գիշերը անհամեմատ ապահով եւ հանգիստ հասանք. ոչ ոքի չպատահեցինք ճանապարհին: Անդադար անցնում էինք քրդական գիւղերի քովով. ընդամէնը 1/4 – 1/2 ժամ հեռու: Միայն մի գիւղի մօտ հաւար ընկաւ, երեւի գողեր էին մտել. մի քանի հրացաններ բացւեց եւ հանգստացաւ. մենք քշեցինք եւ անցանք: Ց ժամում հասանք ուղիղ սահման, իսկ չորս (4) ժամ սահմանով այս կողմը ճամբայ անցանք կամաց-կամաց այն էլ հանգստանալով: Գիծը անպայման լաւ է. եւ յարմար ձիւլ համար. բայց հեռաւորութիւնը փչացնում է ձիւներին. հարկաւոր են լաւ ձիւներ: Մեր ձիւներից լաւ էին իմ հեծած ձիւն, Սեւ ձիւն. շատ յաջող էր մանաւանդ նոր գնածը. միշտ խաղալով եկաւ. դրան լաւ խնամեցէք. մնացած ձիւները թէեւ չյոգնեցին, բայց ուժ չունեն վերադառնալու: Այնպէս որ սրանց տւինք վերոյիշեալ 3 ձիւն եւ այստեղի ձիւներից մէկը: Մնացած երկուսը մնաց. կը հանգստացնենք, կամ կը փոխենք եկող սուրհանդակների հետ, կամ կ'ուղարկեմ Աւետարանով<sup>2</sup> ձեզ:

Սուրհանդակները աւելի քան վստահելի եւ հմուտ են ճանապարհներին ու կրտորիճ. առանձնապէս Նուրոն<sup>\*\*</sup>. Ասորի<sup>\*\*</sup> էլ համեստ տղայ է եւ անպայման իբրեւ մեր մարդ օգտակար կը լինի սրանց հետ: Սրանց մանր-մունր նուէրներ հոս տուինք: Այդտեղի համար խոստացայ որ ամէն մէկին (երկու լօ-լօ-ներին) մէկ-մէկ քիլէ (Ցական չափ) գարի տաք. այս տարի հոտ չունեն. այս բանը արէք, սրանց վստահութիւնը միշտ մեր կողմը ունենալու համար: Բացի սրանից, սրանք մի օրի-գինալ պահանջ արին. ասում են այս[քան] ժամանակ է, մենք կը ծառայենք, բայց դեռ ոչ մի նշան չէք տւել մեզ. այն ինչ Ջաֆարը արդէն Չաւուշ է. ինչդրում էին իրենց էլ Չաւուշի կամ միլիազիմի պաշտօն տալ: Եւ դրա նիւթական արտայայտութիւնը գտնում են նշան ունենալու մէջ: Դէ՛հ ժողովուրդ են, այն էլ լօ-լօ. խելքերնին այդքան է հասնում. այդ էլ լինելու համար պատուի[րե]ցէք նշան, արծաթեայ, վրան գրելով Հ. Յ. Դաշն. գինուր, ի հարկէ գինանշանով. սա հասարակ բան է, բայց իրանց համար պատուի հարց է: Ջաֆարի մասին մանրամասներ իրենք արդէն լսել էին. այնպէս որ ես էլ խօսեցի, առաջարկելով իրենց եթէ իրենց հաշիւին կը գայ թող վերցնեն, եթէ ոչ մենք չենք զօռում նրանց: Բացի դրանից ես դրի, որ մեր վստահե-

լին դուք էք, որ գործ տեսնողը եւ պատասխանատու էլ դուք էք. իրենց անձնակա-  
նը շոյելու համար ասացինք որ այսուհետեւ խմբապետ պիտի լինի Նուրոն\*\* իսկ  
Ջաֆարը եւ մնացածները պէտք է լինեն սոսկ զինւոր եւ նրանց խօսքով պիտի շար-  
ժուեն: Սա որոշ չափով կարող է սանձել Ջաֆարի յիմար քայլերը. եթէ ցանկանում  
էք Ջաֆարին պահել, սրանց հետ լաւ է. եթէ վստահելու մասին էք կասկածում, այս  
մասին կարող էք հարցնել Բաբկէնի եղբօրը — Ջարքազին — նա նրանց Աստուածն  
է, եւ նրա խօսքից չեն բաժանւի. եւ ամէն բան էլ նրան կ'ասեն:

Ջաֆարին ուրիշ գործ տալ այս տարի անկարող ենք. ապրանքներ չկան եւ յոյս  
էլ չունեմ շուտ գալու, այնպէս որ եղածներով հագիւ պատրաստի ուժերին բաւա-  
րարութիւն տանք: Առայժմ հոս կայ 10 հազար\* ծայր, այն էլ Մարզպետի ասելով,  
որից մէկը [հազարը] ուղարկեցինք սրանց հետ. մնացածները երեւի կ'ուղարկենք  
այս շաբաթ. Աւարայրում էլ նոյն չափով. իսկ Մինարէթում այստեղի կէսի չափ.  
խօսում են որ ջրի միւս ափը ապրանքներ կան. բոլոր գծերը փակւած են. ֆայլակը  
դեռ Մինարէթ է, ինչ որ է դիպլոմատիկ խնդիրներով — Սարգսար\* տարած դրամը  
չի ընդունել. ամբողջ գումարը կ'ուզէ (2000 ուոլքի):

Այստեղ մնաց միայն երեք սաղլամ կոթ եւ ուղարկւածներին մասերը. եկած կոթե-  
րի մասերը մասամբ եկել է. Նիկոլը տեղը գիտէ. Մարզպետը դրանք չի գրել, որ գա-  
լիք կոթերի մասերն է. այնպէս որ այդ նկատի առէք եւ երբ այստեղից էլ մնացած  
մասերը ձեզ հասնի, հաշւեցէք եւ եթէ պակաս մաս եղաւ մեզ գրէք, որ իմանանք  
ո՞ւր է մնացել, որ բերել տանք:

Ուղարկւած կոթերը անպայման լաւերն են. չլինի թէ խամ մարդիկ փորձեն մա-  
սերը միացնել եւ փչացնեն. սպասեցէք արհեստաւորին. գոնէ Սարգիսի\*\* ասածը կը  
հասցնենք:

Բացի դրանից չմոռանաք մեր դրւած պայմանը. եկած ապրանքները անձեռնմ-  
խելի են, մինչեւ վերջնական դասաւորութիւնը: Պետրոս շուտով կ'երթայ եւ կ'աշ-  
խատի գծերի վրայ եղածները ներս դնել: Մաշտոցին դրինք Բլուր<sup>3</sup> գիւղում ուսու-  
ցիչ եւ մեր գործերին իբրեւ ղեկավար. տեսնենք վերջը:

Այս անգամ ուղարկւած ապրանքների մանրամասները կը գրէ Մարզպետը.  
միայն այսքանը իմացէք, որ բացի նրա ցուցակից ստանալու էք իմ տասնոցը, 100  
ծայրով, Պետրոսի կոթը երկու կապ ծայրով: Մնացած հագուստները կը ստանաք  
ըստ կարգին: Այստեղ եղած միակ տասնոցը եւ անտեղի մնացորդը հաւաքեցինք եւ  
ուղարկեցինք. նոյնպէս եւ սմիտը. այնպէս որ ատրճանակ չմնաց. նոյնիսկ ոչ մեզ  
վրայ եւ ոչ էլ տեղիս ընկերներու վրայ:

Բաբկէնը եւ Սուրէնը արդէն եկած կը լինեն. ձեր գործը մասամբ հեշտացաւ: Ինչ  
ասել կ'ուզէ որ սրանց հետ պէտք է շատ քաղաքավար լինէք, անպայման օգտակար  
տղաներ են: Բարեւներ եւ համբոյրներ հաղորդեցէք իրենց: Փոխ վերցրւած այսրը  
դրի այստեղի ձիու վրայ. այնպէս որ կը տաք տիրոջը. Նիկոլը գիտէ:

Յ. Գ.— Գանգատներ ունենք ձեզնից, բայց այս անգամ ձեզ խնայեցինք. կը  
գրենք յետոյ:

Նիկոլի միջոցով Բաբկէնի եղբօր խոստացել եմ, որ եթէ Համաձայնի մեզ հետ գալ, մօտ եղած 6 ոսկին կը ձգենք մինչեւ դարուն էլ պահի: Այս ի նկատի առէք եւ ներեցէք, որ վերջին ժամում եղած լինելով այս պայմանը, չկարողացայ ձեզ էլ խօսել:

Չգիտեմ ի՞նչ գրեմ, սոսկալի յոգնած եմ հոգեպէս եւ Ֆիզիքապէս. այնպիսի տրամադրութեամբ եմ համակել, որ կարծես ամենամօտիկներից մէկը մեռել է. միշտ ցաւելով եմ յիշում ձեզ: Է՛հ երեւի կ'անցնի. մի քիչ էլ հիւանդացայ այս գիշեր. ազատութիւնից օգտւելով շորերս հանեցի եւ յանկարծակիի եկայ:

Ի դէպ, մոռացայ գրել այստեղ ընդունելութեան մասին. ուղիղ ժամը 5-ին տեղս հասանք. ինչպէս ասում էի, այնպէս եկանք տեղաւորւեցինք, որ կարծես երկրից չէինք եկել, այլ մօտի գիւղերից. նոյնիսկ Մարգպետը կարիք չտեսաւ համբուրւելու... Միայն զգացողը եւ ուրախացողը Թոմասն<sup>4</sup> էր. Ընծայրը հոս չէ. գնացել է ՄԱԿՈՒ\*\*, դարձեալ դիպլոմատիկ խնդիրներով: Մարգպետին էլ կ'ուղարկեմ Աւարայր եւ մենակ կը մնամ հոս, աղօթելու եւ երագելու...

Տղաներին գրելու կարողութիւն չունեմ. բոլորից ներողութիւն խնդրեցէք չտեսնելուս համար. ասացէք ձեր եւ երկրի պահանջներին գոհացում տալու համար է, որ հեռացել եմ երկրից:

Սարմանին եւ Վահանին ջերմ համբոյրներս, ամբողջ ճանապարհներին Սարմանի մասին էի խորհում. լեզալ գործերում աշխատելու եւ կուլելու համար նրան մենակ չձգէք. միշտ խորհրդակցէք եւ աշխատակցէք. թող միշտ գրեն ինձ եւ ընկերներին: Թղթակցութիւնների նիւթ եթէ չունենան, թող իմաց տան, նամակներով նիւթեր տամ...

Դէ՛հ, վերջացրի. աւելի մանրամասն կը գրեմ ուրիշ անգամ. տեղական մի քանի խնդիրների մասին պէտք է գրէի, բայց հոգեկան հանգստութիւն չմնաց:

Ամենաջերմ համբոյրներով  
ԱՐԱՄ

Նորութիւնների մասին չմոռանաք մեզ գրել, մանաւանդ արտասահմանեան. այստեղ կորած վայր է. այնպէս արէք որ գործից չկտրւենք...

1.- Իջեւան – ծածկանուն Խառակոնիս գիւղի, Արճակի գաւառակ:

2.- Աւետարան – ծածկանուն Խաչան գիւղի, Բերկրի գաւառակ:

3.- Բլուր – Զիշմիշքեփէ գիւղ, Մակու գաւառ:

4.- Թոմասը Ս. Թադէի վանքի զինուորներէն է, Հայոց Չորի Աքանանց գիւղէն:

Սիրելիք<sup>1</sup>!

Մեր տեղ հասնելու մասին գրել եմ Չարկազի եւ ընկ[երների] հետ. յուսով եմ որ եկած կը լինեն հետերնին բերելով տրւած ապրանքները: Երէկ Իշխանն\*\* եւ Մարգպետ գնացին Աւարայր, նրանց գնալու առթիւ հոս եղած-չեղածը կոնտրոլի ենթարկեցինք եւ մի շատ անմխիթար եզրակացութեան եկանք. փոխանակ 10 հազար ծայրի ինչպէս գրել էի առաջին նամակով, դրա կէսն էլ չեղաւ. այդ գրել էի հիմնելով Մարգպետի տւած բերանացի հաշի վրայ: Այսօր հոս եղած ամբողջ ծայրերը կ'ողարկեն, որի բեռները չլրանալով ստիպւած պիտի լինեմ ուրիշ անմեղ ապրանքներ էլ տալ. ապրանք, որոնք հեշտութեամբ կարող կը լինէինք 10-10-ներով էլ ուղարկել:

Այստեղ, այսպէս լինելով կասկածում եմ եւ Աւարայրում եղածի մասին. ուրեմն ամենալաւ ժամանակը ապրանքներ չենք ունենայ: Գարեգինն էլ փոխանակ Փայլակին<sup>2</sup> շտապեցնելու դուրս, կանչել է իր մօտ, ինչ որ է քահանայական խնդրով. վերջապէս ո՛չ ոք չի կարողանում ըմբռնել եւ հասկանալ երկրի պահանջները, մանաւանդ գծերի վիճակը:

Գործը հիմքից է սխալ դրւած. միակ միջոցը ինչպէս մենք ենք խորհել այն է լինելու որ մենք Մենաւորը եւ Աւարայրը գատենք եւ ստեղծենք մի գուտ փոխադրող մարմին, որի միակ հոգն ու դարտը երկրի գործերը լինի. տեսնենք. իսկ մինչ այդ Իշխանը\*\* շտապեց դուրս, հնարաւոր եղած պարագաներով Սաննան-ը\*\*<sup>3</sup> եղածը ներս ուղարկել. ուրեմն առաջով պէտք է փոխադրելի հոս եղած զանազան մասի, սեւ հող (որ ինչպէս երեւում է հազիւ 6 փութ լինի) եւ Աւարայր ու Մինարէթ եղած ապրանքները. հոս բացի այս թւածներից, կայ եւ 3 հատ կոթ, որոնցից մէկը կարճ է, 2 երկար. 3-ն էլ հրաշալի բաներ են. սրանք ի հարկէ ամբողջութեամբ ուղարկել անկարող եմ, ինչպէս նախապէս էլ խօսած ենք. իսկ եթէ կը պահանջէք ամբողջութեամբ, պատասխանատուութիւնը ձգելով ձեզ վրայ, կ'ողարկեմ. եթէ մինչեւ նամակիս ձեզ հասնիլը առիթ ներկայացաւ, պէտք է ուղարկեմ. բայց կարողակաները չեմ հանելու. ափսոս են, կը փչանան եւ հոն էլ դիւրութիւններ չկան. կ'ողարկեմ եւ սրանց փայտերը. մնացածները (որոնք արդէն փոխադրւած են) փայտեր չունեն հոն. եթէ գալու լինեն, ըստ դիւրութեան եւ արժէքի, կ'ողարկենք: Ապրանքների մասին այսքան, եթէ ուրիշ նորութիւններ ունէք արտասահմանէն եկած նամակների մէջ, գրէք եւ մեզ, ի նկատի առնենք: Ինձ թւում է, սրանով միայն հազիւ բաւարարութիւն տանք Աւետարանի գծերին. բայց մնացած 10-10-ներին չլքելու համար, մանաւանդ մեզ բերողներին, արժէր դրանց համար երկու ոտ ապրանքներ ունենալ. այս դուք ի նկատի ունեցէք եւ 8-10 օրէն երբ ձիաները կը հանգստանան, կարող էք մի անգամ էլ ուղարկել: Հոս պահում են ձիաներից Յոլակը եւ Բալաբեղի համար գնուած 6 1/2 ոսկինոց կարմիր ձի. երկուսն էլ վէրքոտ են. լաւ կը լինի որ հոտ եղած դարմաններից բաւական չափով ուղարկէք եւ հոս, սրանց դարմանելու համար. անցեալ տարի մի կարմիր դեղ կար որ կորեկ[?] իւղի մէջ խառնելով կը քսէ-

ինք ձիաների մէջքը. նրանից առէք. Գարեգինը եւ Ս...կը տեղը գիտեն (Մնոյի մօտ): Այս տարւայ դեղերն էլ լաւ են. բայց ինչ որ ուղարկելու լինէք, վրան գրեցէք գործածելու ձեւը: Ինձ թւում է որ գնացող եկող ձիաները փչանում են եւ այն պատճառով, որ հոս կանոնաւոր խնամող չկայ. սրա միակ ելքը այն է, որ դուք այդտեղից Վարազի\*\* միականի սէխին ուղարկէք հոս մշտական մնալու եւ 2 ձիաները շահելու<sup>4</sup>. նա առաջարկել էր հոս մեր ձիաները շահել, կամ դուրս մեր գործով աշխատել. կարծեմ վարձատրութիւն էլ չէր ուզում որովհետեւ մենակ ինքն է... Եթէ համաձայնէք առաջին պատեհութեամբ աշխատէք ուղարկել:

Այս անգամ ուղարկում եմ 3 տոպրակ թերթեր. «Հայրենիք», Ռազմիկ եւ Զանգ<sup>5</sup>. ինչպէս երեւում է Հայրենիքը մեզ համար 30 օրինակից շատ են ուղարկում. մի օրինակից ես հոս 25 հատ հաշւեցի: Եթէ կ'ուզէք ամէն անգամ մէկ-մէկ տոպրակ ուղարկեմ Աւետարանի գծով, թէ թերթեր եւ թէ գրքեր: Այստեղից Աւետարան հեշտ է. այն կողմը դուք գիտէք:

Շուտով կ'ուղարկեմ Իջեւան — Եղեգնուտի<sup>6</sup> գծով մեր նախկին 10-10 սուրհանդակ Արմ\*\*։ Սրա հետ առաջին անգամ կ'ուղարկեմ բացառապէս թերթեր ու գրքեր. աշխատեցէք տեղեկագրի նիւթերը նրա հետ ուղղակի ինձ հասցնել, որ ժամանակը անցնում է, կարողանամ պատրաստել եւ ձեզ ուղարկել, որպէսզի ուղղէք եւ ինձ հասցնէք:

Հոտ մոռացայ խօսել, որ թռաշու հետ ես վերջնական կերպով չեմ խօսել. միջնորդը եղել է Գեորգ\*\* Աղան. ես ասել եմ տարին 3 ոսկի, իսկ նա 5 է ասել. նայեցէք որ յետոյ թիւրիմացութիւն չլինի:

Թէ այստեղ եւ թէ Սարուստան կոթերը ամէն տեսակի էփան են եւ լաւ. ինձ թւում է որ մեր դրամները աննպատակալարմար են այդտեղ այդքան թանգ, այն էլ այդ տեսակ գէնքեր գնելը. լաւ չէր լինի, որ դուրսը գնէինք, միայն բացառութիւն արէք մարդիներ\*\* հրացանը, որովհետեւ ծայրեր շատ ունենալով նպատակալարմար է հոտ գնելը. մանաւանդ որ դուրսն էլ այդ կոթերը շատ թանգ են. հոս 25-30 ոսկի են:

Միշտ ի նկատի ունեցէք որ կոթերի փոխադրութիւնը անհամեմատ դիւրին եւ էփան է:

Չմոռանամ գրել որ Բագոսի<sup>7</sup> Մեխակի Ղազար\*\* եւ Մտրակ խմբի վարժապետի (Արմէնի ընկեր) համար պատւիրել եմ 100-ական ծայր գնել. առաջինի համար նոր ծայր. իսկ երկրորդի՝ Տասնոցի. յայտնեցէք իրենց եւ թող ի նկատի ունենան,— բացի ճանապարհածախսից որ մեզ վրայ կը վերցնենք,— որ 100-ը 250 դահեկան կը նստի, թէ մէկը եւ թէ միւսը. եթէ այսպէս թեթեւ պատւիրումներ կան գրեցէք անենք, ի միջի այլոց կ'երթայ. իրենք էլ խեղճ են. ուրիշ տեղից չպիտի կարողանան ձեռք բերել: Եթէ Նորակազմի Միքրանը\*\* կ'ուզէ, իր նոր կոթի համար էլ 100 հատ գնել տամ. ասում են որ Վրէժ եւ Մակու\*\* այժմ շատ է գտնուում եւ գներն էլ ընկած են. բայց 2<sup>1</sup>/<sub>2</sub> դահեկանից ցած չի լինի:

Այս անգամ կ'ուղարկեմ եւ իմ սղոցը . մոռացայ Չարկազի հետ դնել:

Մարգիսի\*\* բերած հեղուկ ապակի-ն\*\* իբրեւ արաղ հոս խմել են. անցեալ օրն էլ բերին իբրեւ քացախ մեզ խմեցնելու. աւելի Եփրատի<sup>8</sup> հայրը խմեց եւ բաւական

տանջւել են. մնացորդը հոտ ուղարկուած եմ. եթէ մնայ աւելի բալա կը դառնայ մեր գլխուն:

**Ի դէպ. Եփրատի հօրը Տէր-Տէր\*\*** երէկ ուղարկեցի. նրա վրայ 7 մէծիտ ծախս եղաւ. պէտք [է] վճարեմ սուրհանդակներին. անպատճառ իրանից առէք: Ապահով տեղ հասնելու մասին ինձ գրէք:

**Դոկտորը եւ Ձուլումաթը\*\*** մի մանիխեր\*\* են բերել. Գարեգինը առել ծախել է, ասելով որ երկրում ծայր չկայ:

Իբր թէ Վրէժը մեզ 10 հատ կոթ է ուղարկել անկախ մեր պիւտժէից. բայց միայն 3-ն է հոտ հասել. մնացածը Մինարէթ են. Մարգպետը խոստացաւ առնել-ուղարկել. տեսնեք վերջը:

Հաւանօրէն կը հանդիպեմ Մինարէթ եւ Վրէժ. տպաւորութիւններս կը գրեմ. ասենք թերեւս նորութիւններ էլ չեն, որովհետեւ ամէնքդ պահաթ (?) էք:

**Ձուլումաթը\*\*** հոտ է. երէկ Մարգպետ գնալու ըոպէին, կանչեց ինձ առանձին եւ նրա մասին ասաց Ստեփանը\*\* Կ. Կոմիտէի կողմից յանձնարարել է ինձ պաշտպանել նրան եւ խնամել. ես էլ քեզ եմ յանձնում:

Աւարայրից Արամը\*\* կը գայ, նրա համար պաշտօն գտէք: Մեր ունեցած հասցէները յանձնեցի Մարգպետին\*\*, որ Աւարայրից, Մինարէթից եւ Վրէժից փորձեն նամակներ ուղարկել: Նայեցէք որ ստանաք. տւել է ուղղակի փոստատան\*\* հասցէն Աննա Ստեփանեանին\*\*, նրա միջնորդը պոտոգրաֆ\*\* է. նորա յայտնեցէք ի գիտութիւն:

Դրամների գանձման մասին գրեցէք մեզ: Յարութիւն\*\* էլ հասցէները վերցրաւ ձեզ գրելու:

Կոմս-ից\*\* կամ Թորգոմ-ից\*\*<sup>9</sup> լուր չկայ. թերեւս Աւարայրից վաղը միւս օրը լուր ունենանք:

Ձեր հրահանգները եւ խորհուրդները միշտ անպակաս արէք, թէ դուրսը եւ թէ հոտ:

Ձգիտեմ ինչպէս ենք մաքրելու այստեղի հաշիւները. ուղղակի անարխիա է. դուք գոնէ կանոնաւոր պահեցէք ուղարկւած-ստացւածները, որպէսզի կարողանանք գէթ ներս եկածի ճշգրիտ հաշիւները իմանալու եւ մնացածը դուրսէն պահանջելու:

---

1.- Ս. Թաղէի վանքէն (Մենատր), ուր հասած է Արամ, Վանի ընկերներուն ուղարկուած նամակ է:

2.- Փայլակ – ծածկանուն Ռուբէն Դերձակեանի: Գարեգինը՝ Թաղէոսեան Ստեփանն է, որ ծանօթ էր նաեւ Սամսոն խան անունով:

3.- Սահման – ծածկանուն Դերօ գիւղի, Բերկրի գաւառակ:

4.- Խնամելու:

5.- «Հայրենիք» – Ամերիկայի Դաշնակցութեան պաշտօնաբերքն է, «Ռեզումիկ»՝ Պոլկարիոյ (Սոֆիա), «Ջանգ»՝ Թիֆլիսի:

6.- Իջեան – ծածկանունն է Խառակոնիս գիւղի. Եղեգնոս՝ Արճակի:

7.- Բագոս – ծածկանուն Շահբաղի գիւղի, Թիմար գաւառակ:

8.- Եփրատ – ծածկանուն Յարութիւն Թումազեանի (Թովմասեան), նախկին արմենական:

9.- Մէկ աստղանիշ կողմ բառերը բնագրին մէջ ծածկագիր են (շիֆրէ), իսկ գոյգ աստղանիշ կողմերը՝ ռուսատառ կամ ռուսերէն:

10.- Համազասպ Բաղէշցեան եւ Ղեւոնդ Մելոյեան:

Երեք կապոց թերթերի մէկի մէջ դրի եւ «Հայրենիքի» հրատարակած «Անդրո- նիկէ»ն. Սա Միր-Նազարեանն է, որ նւիրել էր Ընծայրին, ես էլ նրանից առայ:

Հա մոռացայ գրել որ Ընծայրը իր համար մի մարդ-հացթուխ կ'ուզէ. ման եկէք կը գտնէք. լաւ կը լինի որ ուղարկէք շուտ, պէտքական է: Տարեկան 2 ոսկուց աւե- լի տալ չեն կարող. եթէ այդ գնով կը գան լաւ, եթէ ոչ ի գուր բեռը չչինէք զրկէք մեր գլխուն. ի հարկէ ապրուստ եւ հագուստ մեզնից է լինելու:

Առայժմ այսքանը:

Ձերմ բարեկներով  
ԱՐԱՄ

1906 թ. հոկտ. 8-ին  
Մենաւոր

Յ. Գ.— Սարմանին եւ Վաթանին<sup>10</sup> ասացէք որ նոր Շամի կերակուրները անուշ են թւում. այստեղ տեսնելով, Շամը երջանկութիւն էր: Այս պարտիա ապրանքը բե- րաւ կիրճեցի Չէրքէզը, նա կը խնդրէ իրեն մի հին այլ տանք, եթէ ունէք տէք:

Սրան անպատճառ տէք մի բերդանի մուշկի, մէկ մէկ սուրմէի վերին մասի (գլխի) վիտա:

Աւարտէ՛ք ձեր ինքնաշարժը, ինչ որ կարծիքով ձեր ինքնաշարժը  
այս քաղաքը կարծիքով ձեր ինքնաշարժը, որ Աւարտէ՛ք  
միջոցներէն 2 փոփոք փոփոք ձեր ինքնաշարժը: Ինչպէս  
որ կարծիքով. ինչ է 2 քաղաքը — Տոբա-նա կարծիքով  
Տոբա Եւրոպայի. ինչ որ ձեր ինքնաշարժը  
Արցախում է. ինչ որ ձեր ինքնաշարժը:  
Ինչպէս ձեր ինքնաշարժը — ինչ որ ձեր ինքնաշարժը  
կարծիքով ձեր ինքնաշարժը — ինչ որ ձեր ինքնաշարժը:  
Ինչ որ ձեր ինքնաշարժը — ինչ որ ձեր ինքնաշարժը:  
Ինչ որ ձեր ինքնաշարժը — ինչ որ ձեր ինքնաշարժը:  
Ինչ որ ձեր ինքնաշարժը — ինչ որ ձեր ինքնաշարժը:  
Ինչ որ ձեր ինքնաշարժը — ինչ որ ձեր ինքնաշարժը:  
Ինչ որ ձեր ինքնաշարժը — ինչ որ ձեր ինքնաշարժը:

**Սիրելի Եղևարդ<sup>1</sup>!**

Լօրիս եւ ընկ[երները] եկան բերելով քո նամակները. Մարգալետը ուղարկեցի Աւարայր մեզ ապրանքներ հասցնելու. առայժմ մենք կը մնանք հոս: Մարգալետին գրած բոլոր պահանջներին գոհացում կը տրւի ըստ կարգին:

Ա. եկող ոտքին անպայման 2 ատրճանակ կը տանք ձեզ մօտ պահելու համար, պայմանով որ թէ այս անգամ բերածները եւ թէ Խուփում եղածները ուղարկէք ըստ պատկանելոյն. դրանք մերը չեն եւ միշտ կ'ուզեն: Նոյնը անելու էք այս նոր տեսակի կոթի հետ 60 ծայրով:

Սահմանցոց մասին խօսեցին Լօրիսին եւ Սմբատին. խուփեցոց նամակ գրեցի, յանձնեցէք իրենց: Աւետարանցոց, հոտ եւ ձեր մնացած տանը մասին խօսեցինք. հօրը առայժմ կարեւորութիւն մի տաք, 1 ոսկին էլ թողէք մնայ. նրա հետ հաշիւները յետոյ կը մաքրենք. իսկ ձեր մնալու առթիւ վճարում չունենք տարւայ վերջը:

Լօ-րօ-ի մասին խօսեցինք, նրան պէտք է տաք հոտ եղած ծախու կոթը մի կապ ծայրեր էլ ես տուի բերաւ. հաշիւը բոլորի մէջ: Հագուստի մասին արդէն խօսել եմ, իր դրամով թող առնի:

Հաշիւները դրամական մեզ էլ ուղարկեցէք. այսուհետեւ սուրհանդակներին կը վճարեմ հոս. այս անգամ Սմբատին տուի 6 ոսկի, հաշիւները իրենք կ'ասեն:

Ապրանքները հոտ պահելու վտանգի մասին քանիցս գրել եմ. ուղղակի յոգնեցանք գրելով, բայց լսող չեղաւ. եթէ խուփեցիք չեն անում, գոնէ Պարապին կանչեցէք եւ աւետարանցիների հետ ուղղակի Անգործ ուղարկեցէք վերջանայ: Ամէն կերպ աշխատեցէք գլխից հանել հոտ եղածները եւ նորերին տեղ պատրաստել:

Քեզ մօտ եղած մելանից 2 կաղամար ուղարկիր ինձ. հոս եղածները շատ անպիտաններն են: Եթէ քեզ մօտ չկայ վարժապետներից առէք, ես նրանց գրեցի:

Ուղարկելիք ապրանքների ցուցակը միւս երեսին:

Այս անգամ ուղարկւած ատրճանակը ինչպէս ասացի ուրիշն է. այս եկող պարունի հետ ճամբու կը դնես ուղղակի Ամրոց: Նոյնը եւ կարճ տեսակի կոթը:

Լօ-րօ-ին առանց մեր տղաներից ընկերների ունենալու ապրանքներ ի հարկէ չենք տալ. արդէն առանց յանձնարարականի լինելու մասին հարց լինել չի կարող:

Ուղարկեցինք մի քանի ծրար:

1906 Հոկտ. 13

Լօրիսի եւ ընկ[երների] հետ  
2 տոպրակ գրքեր.  
Մի մանիխեր հրացան\* N 2911  
Մանիխեր հրացան\* ծայր 60 հատ մի ամանով.  
Մի սմիտ ատրճանակ N 486,467. ծայր 5



**Հնի ծայր**

**9 ցինկի տուփի մէջ**

- 1 – 150
- 2 – 150
- 3 – 150
- 4 – 150
- 600 **Հատ**

**9 տուփի 2200**

**2800 բերդան**

3600

**6400 ամբողջ.**

**ընդամէնը 29 կտոր ծայր**

**Այնալուի ծայր**

**տոպրակով**

- տոպրակ** 1 – 250
- տոպրակ** 2 – 250
- » 3 – 250
- » 4 – 250
- » 5 – 250
- » 6 – 250
- » 7 – 250
- » 8 – 250
- » 9 – 250
- » 10 – 250
- » 11 – 250
- » 12 – 250
- » 13 – 150
- » 14 – 150
- » 15 – 150
- » 16 – 150
- 3600 **Հատ**

**Երկու կապոց խողովակ նորի**

**1 – 4 Հատ**

**2 – 4 Հատ**

**8 կտոր**

**Ստացուած է**

**Լօրիսի եւ ընկերների հետ**

**2 տոպրակ մուրճեր եւ Արամ-ի գրքերը**

**Մի մանիխեր հրացան\* N 2911**

**Մի մանիխեր\* հրացանի ծայր 60 հատ, ամանով.**

**Մի սմիտ ատրճանակ N 486,467. ծայր 5**

**Հնի ծայր**

**9 ցինկի տուփով – 2808 հատ**

1 – 312

2 – 312

3 – 312

4 – 312

5 – 312

6 – 312

7 – 312

8 – 312

9 – 312

**տոպրակ 1. 150**

» 2. 150

» 3. 150

» 1. 150

**600 հատ**

**տուփերի 2808 հատ**

**3408**

**Այնալիի ծայր**

**տոպրակ 1 – 250**

**տոպրակ 2 – 250**

» 3 – 250

» 4 – 250

» 5 – 250

» 6 – 250

» 7 – 250

» 8 – 250

» 9 – 250

» 10 – 250

» 11 – 250

» 12 – 250

»	13 –	150
»	14 –	150
»	15 –	150
»	<u>16 –</u>	<u>150</u>

**ընդհ. գումար 3600 հատ**

**8 հատ նորի խողովակ N Nը դժբախտաբար չկարողացայ գրել. գոցած էր:**

**Հէնց այս ըոպէին եկաւ Աւարայրի Տէր-Տէրը, ապրանքների ծայրը բացւեց: Թորգոմը եկել է Աւարայր, Նիկոլայը հասել է Նախավկա՝<sup>2</sup>, այնպէս որ ժամանակին ամէն բան կը լինի:**

**Տէր-Տէրից բարեկներ ունէք բոլորիդ. առանձնապէս Սարգիսին եւ Մալխասին:**

**էլ չգիտեմ ի՞նչ գրել ուրախութիւնից, մնացածը այլ անգամ:**

**Հաշիւները միւս երեսին:**

**Յ. Գ.— Յինկի տուփերը Եղևարդ, ինչպէս եւ մնացածները կարծում եմ որ 250ն է. դուք ցինկի տուփերի հաշուով պահանջեցէք: Նրանց գրածի ամբողջի գումար՝ 6400 հատ. այնինչ՝ 7008 է:**

**ԱՐԱՄ**

1.- Եղուարդ – փոխադրութեան գործը կանոնաորելու համար Խաչան (Աւետարան) ուղարկը-  
ած գործիչ: Նամակը անթուակիր է. պէտք է թուագրել Հոկտեմբերի առաջին օրերուն, երբ Արամ  
անցած է Ատրպատական, Վիեննայի Ընդի. ժողովին երթալու ճանապարհին:

2.- Խօսքը Ս. Ստեփանոս Նախավկայ վանքի մասին է (Մաղարդավանք), որ կը գտնուի Արաք-  
սի աջ ափին, պարսկական սահմանէն ներս, Հին Ջուղայի հարաւը: Վանքը եւ մօտը գտնուող Ջրա-  
շամբ գիւղը կը գործածուէր որպէս զինապահեստ: Ընդհանրապէս կը ճանչցուէր Ափ, Ջրի Ափ,  
Գետ-Ափ ծածկանուններով:

Սիրելիք<sup>1</sup>!

Սա Ծրդ նամակն է, որ կը գրեմ ձեզ. դեռ պատասխան ստանալու փաստը չեմ ունեցել. թէ որքան դժևար է, այս սարի գլխին մենակ, մանաւանդ գործից կտրւած լինելը, այդ կարծում եմ ձեզ համար պարզ է:

Ամէնից առաջ պարտք եմ համարում տալ իմ գալուց յետոյ ուղարկւած ապրանքների ցուցակի կրկնողով[թիւնը. այն նկատումով, որ թերեւս ուրիշ տեղերով դեռ չէք ստացել կամ վտանգւել են:

I Մեզ բերող լօ-լօ-ների հետ:

- ա. Նոր հրացանի\* լոսլա — 11 հատ
  - բ. Հինգ\* ծայր — 342 հատ
  - գ. Նոր\* ծայր — 613
  - դ. Մալգեր\* — 2 հատ մէկը իմը
  - ե. Վմիչ\* — 1 հատ
  - զ. Մալգերի\* ծայր — 500 հատ 100-ը իմը
  - է. Մմիթի\*\* ծայր — 75 հատ
  - ը. Կապլեով\*\* — 12.000 հատ
  - թ. Մալգերի\* ետեւի մասը
- եւ տղաների հոս թողած կօշիկներ, փափուկներ եւ այլն:  
Մոռցայ Պետրոսի հին կոթը եւ 2 կապ ծայրը:

II Կիրճեցի Չերքէզ 3 ընկ. հոկտ. 8

- ա. Այնալիի\* ծ[այր] — 1983
  - բ. Կափաղուի ծ[այր]\* — 1301
  - գ. Պրատնինկ\*\* ծ[այր] — 49
  - դ. Պատարերում\*\* ծ[այր] — 56
- սրա մէկ ռետլները\*\* Աւարայր կայ...
- ե. Մմիթի\*\* ծ[այր] — 30
  - զ. Հնի զատվոր\*\* — 10
  - է. Հնի տուփ\*\* — 5
  - ը. Նոր 30 զատվոր, կարոպկա, մակազին \*\* — 4-ական
- եւ 3 կապոց թերթեր

III Այգեստանցի հայու հետ Վասիլին հոկտ. 9-ին:

Պիստոն\*\* — 12.000 հատ մի կապոցի մէջ:

IV Աւետարանցիների եւ Լօրիսի հետ (սրանց հետ եւ շամեցի Արամ) 13 հատ

- ա. Մանիխներ-ի\*\* կոթ — 1 հատ սաղլամ
- բ. Օվինի լուսայ\* — 8 հատ
- գ. Հին\* ծայր — 642  
(42 ծայրամասով պէտք է պահեն Աւետարան)
- դ. Մանիխներ-ի\*\* ծայր — 60 հատ ծայրամասով
- ե. Այնալուի ծայր\* — 35000 հատ  
սրանից 100ը ... ուսերէն... է
- զ. Մի Սմիթ ռետլվեր\*\* — 1 հատ
- է. Մմիթի\*\* ծայր — 5 հատ
- ը. Հին ծայրի ցինկի տուփեր — 9 հատ  
(312-ական իրենց 250-ականի ազայով)

Մինչեւ այսօր այս եւ ուղարկւածները հոս եւ Աւարայր 5 հազար\* ծայր կայ. 6 կոթ նորի, 8 նորի լուսայ\* եւ 10 հնի լուսայ\*: Յոյս ունենք նորերը ստանալու. թերեւս արդէն Աւարայր եկած լինի:

Այս նամակաբերին ճանաչում էք. սա մեր նախկին սուրհանդակ լօ-լօ Արն\* է. հնումը բաւական աշխատել է. Սամուէլին կարելի է սրա հետ աշխատցնել, ինչպէս եւ Ջաֆարին, եթէ յարմար չտեսաք իր նախկին ընկերների հետ: Եթէ լօ-լօ-ներից որեւէ մի խումբ պիտի գայ, սրան էլ դրէք նրանց հետ, մի ձի տալով:

Եթէ Ջաֆարին ուզում էք առանձին աշխատցնել, կարող էք մէկ ուրիշ եւ Սամուէլի հետ դնել սրա հետ. վերջապէս այնպէս արէք որ այս աշնան սրան շահագործել կարողանանք:

Սրանք եթէ աշխատելու լինեն, պէտք է մինչեւ Եղեգնուտ կամ Իջեւան<sup>2</sup> բերեն: Սրան 12 մէծիտ, առնելիք ունի Եղեգնուտ — Իջեւան. հոգ գանձէք վերցրէք, ես իրեն հոս կը վճարեմ. ի հարկէ ստանալու մասին պէտք է գրէք:

էլ չգիտեմ ի՞նչ գրել. մանրամասն գրէք. հոկտեմբերը վերջացաւ բայց տեղեկագրի նիւթերը չեկան. բա էլ երբ պէտք է հասցնէք:

Աստուածնիւր սիրէք չլինի թէ Մայխասական ու Սարգսական (այլ խօսքով լակոնական) համառօտաբանութիւն անէք:

Թորգոմը վաղը միւս օրը կը գայ. մի լաւ մատուցեք ռետլվեր\*\* է ուղարկել, նոր տեսակի, երկար ու կոթով. շատ յարմար է Շամի համար: Արդէն գրել էի որ 3 հատ էլ գերմանական մատուցեք\*\* են բերել Աւարայր:

Ներփակ նամակը յանձնեցէք Արծուաբոյնի<sup>3</sup> պ. Պետրոսին, գրել է Աւարայրի Տէր-Տէրը:

Վերջին[ին] պատւիրել եմ լօ-լօ սուրհանդակներ գտնէ եւ ձեզ թերթեր, գրքեր ու

նամակներ ուղարկի. Աւարայրէն վարձը դուք էք տալու: Տւել եմ Եղեգնուտի, Իջե-  
լանի, Ջրաղացի, Նեղուցի, Եոլքասանի, Քոչկուանի<sup>4</sup> հասցէները. նոյնը եւ Ամրոց Ա-  
րարուց Մուսիկի\*\* հօր եւ Մենիկի ընկեր Ս. Գէորգի – իսկ Նորաշէն-Քախկալ\*\*  
Ջոջ-Աղային: Այս բոլորը ի նկատի ունեցէք:

Թորգոմը գրում է, որ Աոմս-ը\*\* Մրգաստան եւ հագիւ թէ նոյեմբերին հասնի  
Մենաւոր:

Սրա հետ ուղարկում եմ մի քանի կտոր Հայրենիք եւ Ռագմիկ. դեռ «Երկիր» ես  
չեմ տեսել:

Բոլոր ընկերների մասին գրէք. մանաւանդ Տիգրանի եւ Մալմանի\*\* առողջու-  
թեան մասին:

Աւարայրի Տէր-Տէրին աշխատեցնելու համար խոստացայ մի տեղական շալ (Ֆա-  
րաչի համար), մէկը առէք ուղարկեցէք. կապտագոյն, Տէր-Տէրի համար յարմար:

Չգիտեմ բան մնաց թէ չէ:

Հա՛, գլխաւորը մոռցայ. ներփակ դնում եմ Գարեգինի նամակը իմ հասցէին.  
կարդացէք եւ տեսէք ինչ են պատրաստում առանց երկրի ընկերների գիտութեան  
Մենաւորի գլխին: Ես գրեցի, որ մինչեւ Ընդ. Փող. ոչ մի նոր կարգադրութիւն անե-  
լու իրաւունք չունեն, մինչեւ մեր առաջարկները անենք (Աւարայր, Մենաւորի  
առանձնացում): Դուք էլ ձեր կողմից ձեր կարծիքները գրեցէք Վրէժի Կ. Կոմիտէին  
եւ Գարեգինին. մի ասէք ես հոս եմ եւ գործերին ծանօթ. երկիրը միշտ պէտք է իր  
կամքը թելադրէ, այն բոլոր խնդիրներում ինչ որ իրեն կը վերաբերի: Մտածում եմ  
առաջարկել, իմ ներկայութեամբ քննութիւն կատարեն եւ բոլոր մեղադրողները ու  
յանցաւորները դէմ առ դէմ գան, տեսնենք իրողութիւնը ինչ է:

Պատւելու դրամը 500 ռուբլի էր. այդ մասին լաւ է թողնել Վրէժի Կ. Կոմիտէին:

Միշտ զգաստ եւ իրաւունքի տէր. ես արդէն թեւերս կտորտած եմ գգում. արդէն  
երկրի ուժգին թափը կորել է. օդը, հողը, շրջապատը, ջուրը եւ մանաւանդ իրա-  
ւունքների սահմանները փոխւեցին...

Ամենաջերմ համբոյրներով  
ԱՐԱՄ

1906 թ. հոկտ. 16-ին

Մենաւոր

1.- Վանի ընկերներուն ուղղուած նամակ:

2.- Եղեգնուտ – ծածկանուն Արճակ գիւղի, Իջեւան՝ Խառակոնիս գիւղի:

3.- Արծուաբոյն – ծածկանուն Վարազայ վանքի:

4.- Ծածկանուններով յիշուած տեղանունները, յաջորդաբար՝ Արճակ (Եղեգնուտ), Խառակոնիս  
(Իջեւան), Սղկա (Ջրաղաց), Կուռուպաշ (Նեղուց), Նոր Գիւղ (Եօլքասան): Քոչկուանը՝ Քոչգիրանն  
է, Վանայ լիճ թափող Մարմետ գետի ափին գիւղ: Ամրոցը՝ Վանի Ղարաղաղ թաղամասն է:

Վանի ընկերներուն ուղղուած նամակ է, անթուակիր եւ անուարա: Մեր հոս հասնիր «12 օր եղա». ուրեմն պէտք է հետեցնել, որ Հոկտեմբեր ամսուան շուրջ 12ի գրութիւն է, ուղղուած հաւանաբար Թադէի վանքէն (Մեմաւոր), ուր հաստատուած էր Արամ:

*Սիրելիք!*

Երկու օր է ինչ Լօրիս եւ 5 ընկ[երներ] այստեղ սպասում են ապրանքների. տեսնենք այսօր կը հասնի թէ ոչ: Պետրոս եւ Մարգպետ գնացել էին Աւարայրից ապրանքներ ուղարկելու, 6 օր եղաւ: Հակառակ բոլոր գրածներուս, Աւարայր եւ Մինարէթ այնքան ապրանքեր չեն եղել, միայն երկու տեղը 9 հազար\*, այն ինչ Մարգպետ 15 հազարի հաշիւ կը տար: Ինչ եւ է. ուրախալին այն է, որ պատահաբար Աւարայրում մի պարտիա ապրանք էր ստացւել ճիշտ իրենց գնացած օրերը, Զրի Ափից<sup>1</sup> հազար\* ծ[այր], 10 հնի կոթ, 16 նորի կոթ (երկար մառգէր) 2 սաղլամ գերմանական\*\* կոթ 2 մառգէր ռետիլեր\*\*, հեռադիտակ 3 հատ եւն. մասեր: Ամբողջը այսօր վաղը կը գալ հոս: Այս կողմերի գործի խառնակութիւնը բաւական չէ, դուք էլ ձեր լուսթեամբ մեր հոգին առիք. մեր գալը 12 օր (հոս հասնելը) եղաւ, դեռ մի կտոր նամակ չկայ. տնաչէննէր, այսքան դանդաղ յարաբերութեամբ ի՞նչ գործ կը լինի. մարդ սկսում է հազար ու [մի] կասկածների մէջ ընկնել: Հազար անգամ Մալխասին ասացի որ աջալայ՝<sup>2</sup> նամակները յատուկ մարդկանց ձեռքով հասցրէք Աւետարան. այնտեղից համար եայ շաբաթական 3-4 անգամ պատեհուութիւն կայ ուղարկելու. է՛հ ձեր քէֆ...:

Պետրոսը Փայլակի<sup>3</sup> հետ երէկ գնացած պէտք [է] լինեն. ուրեմն այսօր Սարուստան են, ապրանքները իրար յետեւից կու գան. կը մնայ ձեզ որ առաջ քաշէք:

Ի՞նչ եղան Զաֆար եւ ընկ. նրանց համար յատկապէս պահում եմ կոթի խողովակներ\*, թեթեւ կերպով եւ ուղղակի Շամ հասցնելու համար:

Նոյն իսկ չիմացանք թէ մեզ բերողները ապահովութեամբ վերադարձան թէ ոչ: Նոյնը եւ մեծ ՆՈՒՐՈՆ\*\* տնից չվերադարձաւ. եթէ նրան չէք ուղարկելու, նրան տրեւիք ապրանքները այլ ճանապարհներով ուղարկենք վերջացնենք, էլ մեզ համար բեռ չպահենք:

Զեր նամակներից եւ հրահանգներից շատ բան [է] կախած. երբ անորոշութեան մէջ ենք, կարծում ենք, թէ անակնկալներ է պատահել եւ գործերի ընդ[հանուր] ընթացքը խանգարւել. դիւրութիւն չկայ երկրի բոլոր ծայրերից լուր առնելու:

Աւարայրի շամեցի Արամը\* եկաւ. նա մանրամասն կը պատմի Աւարայրի եւ մնացած տեղերի իրողութիւնները, գրելը աւելորդ սեպեցի:

Նրանից Պետրոս եւ Գարեգին 17 լիրա են առել. ի հարկէ կը վճարէք: Ինձ մօտ եղած դրամների մանրամասն հաշիւը կ'ուղարկեմ սեզոնից յետոյ,

միայն այսքանը իմացէք որ Հոս 41 ոսկի ենք պարտք առել, սուրհանդակներին Հոս վճարելու համար, միայն աւետարանցոց եւ կիրճեցոց: Այս անգամից սկսեցի վճարել եւ 6 ոսկի արդէն տուի. մանրամասները յետոյ կը գրեմ ձեզ: Ինչպէս կը տեսնէք Պետրոսի երկտողից Թորգոմ Վրէժ է. երբեանից է կամ ինչ կ'անէ չգիտեմ. ինչպէս հարեւանցի լսեցի, «Դրօշակ»ի մուտքը նորէն արտօնուած է:

Արամը\* մի ցաւալի դէպք պատմեց, իբր թէ Գարեգինի կարճ 10-10-ն էլ (Նաքից\*) է բռնել այն էլ Շամիրի<sup>4</sup> քովերը. սա ինչ կրիգիս է: Չմոռանաք այդ մասին մանրամասեր գրել: Ի՞նչ եղաւ Ֆէզոն<sup>5</sup>:

Ինչպէս երեւում է դուք այս ձմեռ դիւրութիւն չէք ունենայ ո՛չ Աւարայրի եւ ոչ էլ Մինարէթի հետ յարաբերել: Մնում է Մենաւորը. ես մի նոր 10-10 եմ գտել, որ կարող է թերթեր, գոյքեր եւ նամակներ բերել մինչեւ Աւետարանի մօտ, կամ մի այլ գիւղ. Լօրիս եւ ընկ. խօսեցի այդ տեղերը մարդիկ ունենան, եւ ընդունեն. մնում է որ դուք էլ Աւետարանից այդ կողմը տանելու մասին խորհէք. ես կ'աշխատեմ Մենաւոր դատարկ չձգել եւ անպատճառ մէկը դնել, գոնէ նամակային յարաբերութիւնների համար:

Ընձայրը միշտ մնալ անկարող է, եւ նա չի կարող այն անել, ինչ յատուկ այդ գործով եկած մարդը:

Աւարայր 2 նոր տղայ են եկել, կարծեմ Շամ գնալու համար, տեսնենք ովքեր են, նոցանից մէկը կը դնենք: Գարեգինի սեմինարիստներին\*\* ուսուցչական պաշտօն է տւել եւ կապել իր պոչ Մինարէթից: Ամէն մարդ խօսում է իր ցաւից\*\*:

Աւետարանցիք մեր զահլէն տարան ռետլվեր\*\* ուզելով. մարդ կ'ուղարկեմ Արտազ երկուսը գնելու եւ նրանց ըրիւրը<sup>6</sup> տալու. արդէն երկուսը, Խուփ կայ. երկուսը Վասիլի մօտ, երկուսը Կայան. երկուսն էլ նրանց մօտ թողէք մնայ:

Հակառակ մեր ցանկութեան հին կոթերն էլ քանդուած են ուղարկում. թէ չէ ամէն ոտին մի երկուսը կը տրւէր բերելու համար եւ ինքնապաշտպանութեան համար:

Այս անգամ շատ երես ձգեցին, ստիպուած եղայ Թորգոմի Սմիթը\*\* 5 ծայրով եւ մանիխներ-ին\*\* կոթը 60 ծայրով տալու. սրա ծայրերից Աւարայր կայ, այնպէս որ կ'ուղարկեմ կը հասնի. սրանց անմիջապէս պէտք է հասցնեն ձեզ: Մինարէթից այս մանիխներ-ի\*\* հետ մի յիմար նոր կոթ էին ուղարկել (Արշաւանքի<sup>7</sup>), ի հարկէ չենք վերցնի եւ յետ կը դարձնենք:

Ջաֆարի եւ ընկ. գալը կարեւոր է եւ այն տեսակէտից, որ կիրճեցիք չեն կարող գալ, իրենց գիւղի գորքերի երկիրդից. ուղղակի եախաները<sup>8</sup> տւել են նրանց ձեռք:

Աւետարանում ապրանքները դարձեալ կուտակում են, Պարապին գրեցինք գնայ հոն, գոնէ աւետարանցիներով ուղղակի Անգործ տանի, փոխանակ Խուփ, չգիտեմ նրանք ինչու ծռել են. եկա՞ն ձեզ մօտ, ի՞նչ խօսեցիք. դուք ծանրացէք Պարապի վրայ, նա ամէն բան կ'անի: Այստեղ թերթ մերթ չկայ որ ուղարկեմ. միայն Ընձայրից շորթեցի Մուրճի-ի 1904 թուի N N. կարծեմ պակասներ կան. դա կը լրացնեմ. հարցրէք թէ մեր ունեցած 1905 թ. որ N-ն է պակաս որ այն էլ Սարուստանում ձեռք բերենք:

Մեր բերած ձիաներից մէկը Արամը\* հեծաւ. ուրեմն Հոս կը մնայ միայն Յոլակը. նրա մէջըը եարա է, դեղերը ի՞նչ եղան, շուտ հասցրէք դարման անենք, Հոս սաղ ձի



չկայ: Աւետարան եթէ ձի հարկաւոր եղաւ, պէտք է պահեն, եթէ ոչ կ'ուղարկեն ձեզ:

Պետրոսի տղաներին տանող լո-լօ-ները փոխանակ Արարատ գնալու եկել են Բլուր<sup>9</sup>, հոն են ձգել տղաներին եւ դարձել. չեմ գիտեր սա ինչ խողեր են, եթէ այս գծով պէտք [է] դային, ինչո՞ւ ալղքան դրամ պիտի տայինք դրանց: Կարգադրեցէք Վասիլին, չլինի թէ այսուհետեւ դրան ապրանք տան. կարող է խաղ խաղալ:

Այսօրւայ ուղարկելիք ապրանքների ցուցակը կը ստանաք ներփակ: Այս անգամ սրանց հետ եկել էր լօ-լօ Ադէն\* . սա մեր հին աշխատողներից է. սրան պէտք է տրւի Աւետարանում եղած (ծախու գնել են մեզ համար երկու եղբայրները շամեցի) հին կոթը, մի կապ ծայրեր էլ ես տւի, թողէք գործ ածեն մինչեւ սեզոնի վերջը, կը բերեն կը տաք ժողովրդին. արդէն այսպէս էլ անելու էինք: Գնի մասին իրենք կը խօսեն անձամբ. եկող անգամ ես էլ տեսնելով կը գրեմ արժէքը: Այս երկու եղբայրները (շամեցի) մի դատական գործ ունեն. կարեցածին չափ միջամտեցէք. շատ օգտակար են մեզ եւ աւելի կարող են օգտակար լինել:

Չուլումաք-ը\*\*<sup>10</sup> երեսիցս կախեց որ գրեմ իրեն մի ֆանելի վարտիկ եւ մի շապիկ ուղարկէք. եթէ կը բարեհաճէք ուղարկեցէք Ջաֆարի հետ: Ի հարկէ հասարակ տեսակից:

Ափոն եկաւ մինչեւ Մենաւոր. ինչպէս ժամանակին ասել եմ, սա լաւ վարպետ է եւ օգտակար տղայ. սրա մասին վճռել էինք իբրեւ ազատ մարդ գայ եւ ապրի. այժմ տրամադրուած թիւնից երեւում է, որ կ'ուզէ միայն մեր գործով գալ. ձեր որոշումը չխախտելու համար, սպասում եմ վերջին կարգադրութեան, պայմանով, որ այս անյետաձգելի խնդիրների մասին անմիջապէս գրէք:

1.- Ջրի Ափ, Ջրափ, Գետ-Ափ – ծածկանուն Ս. Ստեփանոս Նախավկայ վանքի եւ անոր կից գտնուող Դարաշամբ գիւղի, Արաքսի աջակողմ, պարսկական սահմանէն ներս: Հոս ժամանակատր կերպով կ'ամբարուէր Կովկասէն (Երեսան) փոխադրուող զէնք-զինամթերքը, նախքան Երկիր անցնիլը:

2.- Աճապարանօք:

3.- Պետրոս – ծածկանուն Տէր Յովհաննիսեան Բագրատի, յայտնի զինագործ: Փայլակ – ծածկանուն Դերձակեան Ռուբէնի:

4.- Շամիր, Շամ, Շամիրամ – ծածկանուններ Վանի համար:

5.- Ֆէզօ – ծածկանուն Մարիֆեան Օհաննէսի, սրճարանատէր Այգեստանի մէջ, զէնքի առեսուորով զբաղող:

6.- Ռեխին տալ – բերանը գոցել, լռեցնել:

7.- Խօսքը Խանատրի արշաւանքի ժամանակներէն (1897) մնացած հրացանի մասին է:

8.- Օձիքը:

9.- Արարատ – ծածկանուն Իգտիրի, Բլուր – ծածկանուն Քիշմիշթեփե գիւղի, Ս. Թաղէի վանքին մերձակայքը:

10.- Չուլումաք – ծածկանուն Պասեցի Յովհաննէսի (1875-1911):

**Սիրեկի Եղևարդ եւ Լօրիս!**

Տղաները ապահով եկան եւ այս գիշեր յետ կ'ուղարկեմ, թէեւ հարկաւոր քանակութեամբ ծայրեր չկային. բայց շուտով չէին ստացել. ուստի այս անգամ բաւականացէք զրուածներով, որոնց մանրամասները կը տեսնէք ցուցակի մէջ: Անցնեմ խնդիրներին:

Ա) Եղբօր հին հաշիւները կարգադրեցի. նորը արդէն դուք գիտէք ինչպէս է լինելու, իսկ տան վճարումի մասին իրեն խօսեցի, որ տարւայ վերջը միանաւզ ես մի բան կը տամ եւ իրեն գոհ կ'անեմ. պատւիրեցի, որ ըստ այնմ ենթարկւի ձեզ ու ձեր հրամանները յարգի իբրեւ իմը: Ուրեմն այսպէս կը վարէք:

Բ) Խոսիեցոց սիրտը լաւ շահեցի. հարկաւորները խօսեցի եւ իրենք էլ գոհ մնացին. խոստացել եմ մի ատրճանակ էլ աւելացնել. մեր գիտցածով երկու պէտք է լինի նրանց գիւղում, իսկ նա կ'ասի (բացի քո տւածից, որ ամանաթ է եւ պէտք է առնէք) ո՞ր մէկն է. այս ստուգեցէք Պարապի մօտից: Սրանք քեզանից պահանջներ անելու առիթներ չեն ունենայ. խօսեցի որ ամէն բան ինձնից ուզեն նամակով, դուք բան չանէք. միշտ ասացէք որ գրեն ինձ: Այսուհետեւ նրանց վերաբերեալ նամակները պէտք է իրենք կարդալ տան իրենց վարժապետին եւ պատասխանն էլ իրենց կողմից նա է գրելու. այս մասին համբերող էք լինելու:

Գ) Շատ ցաւեցի որ առանց կարեւոր պատճառների, մանաւանդ առանց ինձնից իրաւունք առնելու այս փոքրիկ (ատրճ[անակների]) ծայրերի տոպրակը բացել էք. կը խնդրէի ամբողջութեամբ տեղը հասցնել. եթէ դուք կարիքներ ունէք կարող էք գրել մեզ կամ Ամրոց, իրաւունք չկայ, ուղարկելիք ապրանքներից պահելու կամ օգտուելու, ինչքա՛ն որ էլ անհրաժեշտ լինի պահանջը: Այս մասին ոչ մի զիջողութիւն չկայ:

Դ) Շատ զարմացայ ձեր այս խօսքերի (նամակում) վրայ. հիմա հասկացա՞ք որ ապրանքներ հոս (Աւետարան) թողուլ եւ գալ Մենաւոր շատ-շատ վտանգաւոր է: Ո՞վ պէտք է հասկանայ. մե՞նք թէ դուք: Ամէն նամակով գրելուց մեռանք. բայց դուք ձեր էջը քշեցիք (առանց օգտուելու անցեալ դառն փորձերից) եւ այսօր էլ ձեր սխալը մեր գլխին էք կոտորում. մենք միշտ հակառակ ենք եղել հոտ ապրանք թողելուն եւ կը լինենք. լաւ է, որ դուք էլ էք եկել այդ համոզման. լաւ ո՛ւշ, քան երբեք...

Ե) Պարապի ինչպէս եւ Լօրիսի խնդիրների մասին գրեցի Ամրոց<sup>1</sup>. յուսով եմ, որ շուտ կարգադրութիւն կը լինի. կը զարմանամ որ Լօրիսը երեսայ դարձած կու լայ եւ կը կասկածի ընկերների վրայ, որ իր ընտանիքին դարտը չեն հոգում. կարծեմ մոռացել է անցեալը, որ երբ ինքը իր սեփական գործով քաղաք չէր, մենք առանց ասելու նրա ընտանիքի կարիքները հոգացել ենք. այժմ նոյն մարդիկն ենք. իմ հեռանալուց յետոյ տղաները թրեւս քիչ զբաղւած լինելու պատճառով, մոռացել կամ թիւրիմացութիւն է եղել. իսկ ես ինչ ասել եմ, այդպէս էլ կարգադրել եմ հոն, այդպէս էլ կը լինի. ամօթ է, թող տեղը ծանր նստի:

Զ) Գիւղի մասին կարգադրեցի որ ըստ ամենայնի լսեն ձեզ. բայց 15 կամ 25 զրուչի մաս[ին] եւ հարժէ. այդ ձեր գործն է. ինչպէս խոստացել էք այնպէս էլ արէք: Այս

անգամ էլ Հ-ին յանձնեցի 4 օսմանեան ոսկի- ուրեմն ձեր հաշւին տրւած կը լինի 10 ոսկի- մանրամասն հաշիւները դու պահիր քանի որ անցեալը քո ձեռքն է եւ խառն]: Եթէ դրամի կարիք ունէք այստեղից կ'ուղարկեմ- եթէ ոչ ձեր քէֆ- Ամրոցէն դրամ չուզէք- եթէ պարտք էլ ունէք ես կը տամ- միայն հաշիւներ պէտք է ուղարկէք եւ ինձ- այս անգամ էլ մոռացել էիք:

Է) Շատ ուրախացայ Արարատի գծի բանալով (Արարատ – Իգդիր<sup>6\*</sup> է, Իսկ Կոմսը՝ պ- Բժիշկը): Շատ եւ շատ յարմար է մեզ համար եւ էժան էլ կը նստի: Միայն մնում է ապահովութիւնը- այդ էլ ձեր բաժինն է- եթէ այդ էլ յաջողեցիք, այս տարւայ ձեր գործունէութիւնը յաջողութեամբ եւ փառքով փակած կը լինէք: Հետաքրքիր է իմանալ (հարցնելու է Ծոռն – Դաւիթի<sup>6\*</sup>), թէ այստեղից հնարաւոր չէ՞ արդեօք Կայան կամ Անգործ, կամ աւելի լաւ Այգեստան գնալու- դրանով մի գնդակից երկու որս արած կը լինենք: Եթէ այդ երեքից մէկն ու մէկը համաձայնեցին, իսկոյն պէտք է գրել Անգործ եւ Այգեստան<sup>3</sup>- Իսկ Կայանի մասին հարցնելու էք քաղաքից- հետաքրքիր է իմանալ, նրանք ինչ պայմանով են կազմակերպւել, կամ դուք պաշտօնական տեղեկութիւն ունէք, թէ այստեղից-այստեղից էք լսած... Այս մասին չմոռանաք գրել:

Ը) Մոռացայ գրել քո հոս գալու մանաւանդ Ռուսաստան գնալու գաղափարի մասին- վերջինը ուղղակի յիմարութիւններ են- դեռ գործին նոր ծանօթացած փախչել՝ վախկոտութիւն եւ յեղ- նկարագիր չունենալ կը նշանակէ- քաղաքի մասին առարկութիւն անելը անտեղի- նրանք քո վրայ ահագին յոյսեր ունեն եւ անպայման լաւ ընդունելութեան եւ ուշադրութեան պէտք է արժանանաս- ձմեռը հոն մի մասնաւոր գործով կը պարապիս, կամ ուղղակի գրադարանի գործով եւ մեր ընթացիկ գործերով, գարնան նորէն հոտ գալու պայմանով-ապրուստի միջոցների եւ հագուստի մասին ես կարգադրել եմ- կ'երթաս կը տեսնես եւ շատ գոհ կը լինես: Իսկ ինձ մօտ գալ տեսակցութեան համար, շատ գոհ պիտի լինեմ, միայն կը վախնամ մրսելուց եւ վտանգւելուց- եթէ այդ երկուսը չեն լինելու, եկ, եթէ ոչ երեւի դուք ինձնից շուտ կ'երթաք Ամրոց:

Ձիւների մասին գրեցի թէ Ջալլադի եղբօր եւ թէ Աստուածատուրին, որին յաջողեց տեղաւորւեցէք մինչեւ տեսնենք վերջը ինչ կը լինի- եթէ չեղաւ ոտաւորների հետ կ'ուղարկէք հոս կը պահենք- ձիւները մի ութ օր հանգստացրէք, խեղճ են, շատ են չարչարուում, լաւ ինամեցէք, գարի տւէք:

Ի դէպ ոտաւորները կարող են գալ Եշ- [Հինգշաբթի] օրւայ գիշերը այնպէս որ լոյս Ուրբ[աթ] հոս լինեն: Իսկ ձիւները թէ ձեր եւ Կիրճի սպասելու են ոտաւորների վերադարձին եւ իմ նամակին:

Հաշիւները յետոյ, չկրցայ ստուգել- գուցէ սխալներ լինէր:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

1906 թ. հոկտ. 18

Խուլիեցի Սիմոնինը 1000-ի հաշիւ է- Տէր-Տէր եւ Կարոյի – 800-ական են, 10-10-ինը – 1000-ական, Հմայեակինը դատել 1000-ական, մերոնք՝ բեռ չկար- կը տաք միայն 54 դահեկան:

ՆՈՅՆ

1.- Ամրոց – Վանի Այգեստանի Փաշի Փողան քաղամաս, կուսակցական կեդրոնատեղի:

2.- Ծոռ Դաւիթ, Սուրուջի Դաւիթ – բուն անունը Թումանեան Դաւիթ:

3.- Այս Այգեստանը ծածկանունն է Բերկի գաւառակի Գործօք գիւղի:

## 247

### Միրելի Մարգալես!

Թորգոմը<sup>1</sup> եկաւ, հետը բերելով տրւած ապրանքները. ստացագիրը կ'ուղարկեմ միասին երբ եզներն էլ գան:

Բժիշկի<sup>2</sup> բերող ձիաւորներին կարող ես տալ նամակներ եւ թերթեր եթէ արդէն ստացուել է:

Ձեմ գիտեր Վրէժը ինչպէս է նւիրել հրացանները, որ Թորգոմին յանձնուած դրամական հաշւեցոյցի մէջ հետեւեալ կէտերը կան:

1 մոսին իսկական – 950 դռան

1 մոսին 200 ծայրով – 1270 դռան

1 մաուզեր – 900 դռան

100 մաուզերի ծայր – 180 դռան

1 Վարանդել – 550 դռան: Սա դեռ չենք ստացել:

Տեսնում էք ձեր Վրէժի նուէրները որքան գեղեցիկ գներով է տրւած: Ինչ եւ է. այդ էլ բաւական է: Մնացած հաշիւները գրել հարկ չսեպեցի, որովհետեւ վարանդելը եւ ազաները մենք ենք պահանջել: Յետոյ Մինարէթ փոխադրուած է 900 դ., իսկ Աւարայր 7660 դռան: Սրանց մանրամասնութիւնները չկան: Կարճ, իմ կողմից խնդրեցէք Վրէժի ընկերներին որ իրենց ուղարկուած 3500 ռուբլու մանրամասն հաշիւները պատրաստեն եւ ուղարկեն երկիր. սրա մէջ մտնելու է Աւարայր եւ Մինարէթ ուղարկուած դրամների մանրամասնութիւնները օրակարգի ձեւով:

Ուղարկուած դրամների ստացագիր Սամսոն<sup>3</sup> էլ իր կողմից կ'ուզէ. չգիտեմ որին ուղարկեմ. ես չհասկացայ մի բան. այս դրամները փոխ է՞ք տուել եւ իբրեւ միջանկեալ հաշիւ պէտք է ստանա՞ք, թէ պէտք է մտնէ Վրէժ ընդ[հանուր] հաշիւների

1.- Թորգոմ – ծածկանուն Թեո Տեղորիկեանի, Վասպուրականի Կեդր. կոմիտէի անդամ:

2.- Բժիշկը Կոմսն Է, Վահան Փափագեան, որ Կովկասէն գալով պիտի անցնէր Խոյ, ապա Վան:

3.- Սամսոն, Գարեգին – ծածկանունները Թադէոսեան Ստեփանի, Դաշնակցութեան ներկայացուցիչ Ատրպատականի մէջ:

4.- Ափ, Ջրափ – Նախավկայի Ս. Ստեփանոս վանք եւ Դարաշամբ գիւղ, Արաքսի աջակողմ, պարսկական բաժնի մէջ:

5.- Արտագ – ծածկանուն Մակո քաղաքի, Ատրպատական:

մէջ. եթէ վերջինն է, ստացագիր կ' ուղարկեմ, եթէ ոչ Սամսոնին կը տանք իր պարտքը եւ կը վերջացնենք մեր գործը: Դրանից ինչքան քեզ մօտ է դուք դրա հաշիւները գատ կը պահէք եւ երկիր կ' ուղարկէք, նոյնը եւ ես, եւ Իշխանը:

Այստեղ նորութիւններ չկան, Աւետարանցիք եկան եղած չեղած հաւաքեցին տարան. նոյն իսկ վառօդների մի մասը: Այնպէս որ հոս մնում է Թորգոմի բերածները եւ վառօդներ: Աստուծոյ սիրոյն ապրանքներ հասցրէք, դեռ ապրանքի կէսը չենք փոխադրել. մնում է Ափը:

Առայժմ այսքանը. մնացածները յետոյ, ներփակները Արտագից է:

Բարեւներով՝  
ԱՐԱՄ

1906 թ. հոկտ. 20-ին:

Յ. Գ.— Ռէսի 19 թումանը ինչպէս ուղարկենք քեզ, քանի որ գարի ենք առել եւ դեռ կը պահանջես առնենք:

Իսկ ոսկիների կէսը արդէն տւել եմ սուրհանդակներին, մնացածներն էլ հոս չեն վերցնում 5 թումանով այլ  $4\frac{1}{2}$ :

ՆՈՅՆ

248

Վասպ. Կ. Կոմիտէին

Սիրելիք!

Նամակաբերս Վրէժը, Վրէժի յանձնարարութեամբ բարոյական օժանդակութիւն ցոյց տւէք իր տունը գալու: Սուրհանդակի վարձը ինքն է տւել:

Սա ինձ մօտ թողեց 4 1/2 օսմանեան ոսկի, խնդրում եմ հոտ անմիջապէս վճարէք եւ գրէք իմ հաշիւին: Կ'ուզէք Եղևարդին ուղարկածս 10 ոսկուց դուրս եկէք 5 1/2 ոսկի, հաշիւը չխառնելու համար. ուրեմն ես Եղևարդին տւած կը լինեմ միայն 4 1/2 ոսկի, փոխանակ 10 ոսկու: Մի ոսկին էլ Եղևարդը հոն կը տայ սուրհանդակներին:

Բարեւներով՝  
ԱՐԱՄ

1906 թ. հոկտ. 24-ին  
Մենաւոր

249

Սիրելի Եղևարդ!

Մի քանի անձնական խնդիրների մասին հարց կար քո նամակներում, ժամանակ չունեցայ պատասխանելու. արդէն խօսել եմ Լօրիսին. վերջին անգամ թախումով կը գաք հոս. երկար ու բարակ կը խօսենք եւ վերջին մնաս բարեւը կ'ասենք:

Բարեւներով՝  
ԱՐԱՄ

1906 թ. հոկտ. 24  
Մենաւոր

**Սիրելի Իշխան!**

Գնացի՛ր<sup>1</sup> եւ ո՛չ մի լուր չտւիր քո ո՞ր լինելու մասին: Փառք Աստուծոյ ապրանք էլ չհասցրի՞ք ոչ Կուսակազմով եւ ոչ էլ Աւարայրով<sup>2</sup>:

Քեզնից յետոյ Հոս եւ Աւարայր եղածները ամբողջութեամբ ներս ուղարկեցի. երէկ Աւետարանից 9 ձիւղերն էին եկել. ամբողջն էլ դատարկ ետ ճամբեցի: Լսել եմ որ Սամուէլն էլ պէտք է գայ 5 ընկերներով: Բան չկայ, նոյնիսկ վառօդ, ազա եւ այլն գնացին: Նոյնիսկ կոթերի փայտերը, կոթերը:

Վերջապէս սրբել եմ. ինչպէս ասացի վերջին 9-ը, ձին էլ դատարկ գնացին: Դէ՛հ թող ընկերները (Սարուստանի) հրճւեն իրենց բարեխղճութեան վրայ...

Աւետարանում վերջին անգամ մի դժբախտութիւն է պատահել. բեռներից 3 կը բռնւի. 1 ծայր, 2-ը սեւ սեւ հող: Իսկոյն իմաց կը տան աՓօ-ի Բէկի-ին\*\*, նա իր մոհ-րը<sup>3</sup> կ'ուղարկի եւ կը հրամայէ ամբողջութեամբ եւ անմիջապէս ետ դարձնել ապ-րանքները եւ դրանց հետ այն 2 կոթը, որ անցեալ տարւանից իր մօտն էր մնացել: Ֆախլի Մուստաֆան\*\* ետ կը տայ ապրանքների կէսը եւ անցեալ տարւայ 2 կոթե-րը. մերոնք շփոթւած լինելով հաշիւը չեն իմացել, որ ըստ այնմ պահանջեն. եկան Հոս. հասկացրի, եւ նամակ գրեցի Սաֆոյին որ անմիջապէս բարի լինի կարգադրե-լու, որ մնացածն էլ յանձնեն. յուսով եմ որ ետ կը տան:

Այդ Ֆախլիին\*\* բացարձակ կերպով ասել է, որ ինձ էլ քուռուֆո՛ւլ տւէք, ես ըստ ամենայնի ձեզ ազատ գործելու դիւրութիւններ տամ:

Դժբախտաբար դրամով չի գոհանալ, կը պահանջէ մի նոր կոթ, որի սուրմէն, մէրը եւ ամբողջը վերցրել է եւ պաղատել եւ աղաչել որ վերջին մասն էլ տանք:

Ես մերժեցի եւ դրամական վարձատրութիւն առաջարկեցի, տեսնենք:

Հոկտեմբեր ամսւայ հաշիւը մինչեւ օրերս հետեւեալն են. մօտ 30.000 ծայրեր. 50 կոթ իր մասերով: Եղած ամբողջ ազաները եւ սեւ հողը: Երեւի լսեցիր Արարատի գծի<sup>4</sup> մասին. Կոմսը արդէն երկու անգամ ուղարկել է, 5 ձիով. 3րդ անգամ այսօր պիտի գային. նրանք բերում են ուղղակի Սարուստանէն (Սարուստան) Աւետա-րան<sup>5</sup>: Մօտ 9 հազարը եկել է:

Դէպի Շամ յաջողութեամբ կ'երթայ եւ պատահարներ չեն եղած. տեսնենք վեր-ջը: Թորգոմը գնաց Գրիգորի հետ, մեզ բերողները տարաւ:

Շամից երկու նամակ եմ ստացել, որ ներփակում եմ. մնացածը իմացիր Նիկոլից: Աստղիկին էլ եկել է. նրան էլ քիչ յետոյ կ'ուղարկեմ:

Միհրանը նոր սրանց հետ եկաւ. ինդճը ամբողջ 15 օր մնացել է ճանապարհին. ամբողջ մարմնով տկար է. հագիւ կազդուրւի մինչեւ իմ գալը. հետս կը բերեմ. դու Երեւան նրա համար տեղ պատրաստիր. խօսեցէք որ IV դասարանից մի քանի առարկաների ազատ ունկնդիր լինի...

Գծերը կը փակւեն 15-20 օրէն. արդէն սարերը ձիւնել են:

Մենաւորի համար նոր կարգադրութիւններ չանէք, մինչեւ ես էլ գամ եւ կար-

ծիքները ու դիտողութիւնները քեզ եւ ընկերներին յայտնեմ:

Ուր մնաց Կոմսը. թէ որ պիտի թորգոմի հետ մտնէր ներս...

Այստեղ ուրիշ նորութիւն չկայ. բաւական հիւանդ եմ, աչքս գէշանում է:

Տեղեկագրի նիւթեր դեռ չեն ուղարկել:

Ես այստեղից չեմ շարժուի մինչեւ քեզնից նամակ կամ հեռագիր ստանալը. իմ հոս մնալը կարեւոր է եւ կրքերը հանգստացնելու տեսակէտից:

Յետոյ կը մտնեմ Մինարէթ ու Վրէժ հոն ուղարկեա՞ծ դրամների մանրամասն հաշիւները առնելու:

Երանի թէ ապրանքները շուտ հասնէր. էլ մի 15-20 հազար կարելի էր ուղարկել:

Յամենայնդէպս պէտք է ուղարկել. թերեւս ձիւնի վրայով էլ յաջողինք:

Քարում հին կոթեր<sup>6</sup> կան. դրանցից 100 հատ վերցրու ժողովրդի համար. կարծեմ 40 թէ 50 ուռբլիով են տալիս: Գարեգինից վերցրեա՞ծ պարտքերը անշուշտ կ'ուղարկես. 21 ոսկի էլ նոր ես առայ:

Բարեւներով ԱՐԱՄ

1906 թ. հոկտ. 25-ին

Մենաւոր

- 1.- Իշխանը (Նիկոլ Պօղոսեան-Միքայէլեան) արդէն անցած էր Կովկաս, ուրկէ պիտի մեկնէր Ընդի. ժողով:
- 2.- Կռուադաշտ – ծածկանուն Ատրպատականի Մակու գաւառի մէկ գիւղին: Աւարայր – ծածկանուն Խոյ սաւանին:
- 3.- Կնիքը:
- 4.- Իգտիքի:
- 5.- Սարուստան – ծածկանուն Կովկասի: Աւետարան – ծածկանուն Աբաղայի դաշտի Խաչան գիւղի:
- 6.- Քար – ծածկանուն Ալեքսանդրապոլ-Գիւմրիի: Կոթը հրացանն է:



Իշխան եւ Արամ



[Վանի ընկերներին]

Սիրելիք՛!

Ստացայ Սալմանի հետ Մալխասի եւ Սարգսի<sup>1</sup> նամակները. Մալխասից ստացել եմ այդ նամակով ընդամենը 3 նամակ. մի կարծ Մատոյի հետ եւ այս երկարը Սալմանի հետ, եւ միայն մի ընդարձակ նամակ Աւետարանէն, ուրիշ ոչինչ:

Ա. Աւետարանէն 15 օր է ինչ լուր չունեմ, չիմացայ ինչ եղան. Եղևարդը ինձ ո՛չ դրամական եւ ոչ էլ ռազմական հաշիւներ չի ուղարկել եւ ուղարկելու էլ տրամադրութիւն չունի. ամէն անգամ այսօր վաղը կը ձգէ. խիստ կերպով պահանջեցէք. ես ուղղակի դրամական հաշիւներից կասկածում եմ, մանաւանդ որ թիւրիմացութիւնների էլ առիթներ կան. օր[ինակ], Արարատի գծի<sup>2</sup> եղածները կարող է մեր վզին իբրեւ հաշիւներ դնել. մեր ձիւներով գնացածը (4-5 օտ, 2 ձի) կարող է նորէն գրել. վերջապէս ամէն պարտիայի մէջ 1-2 հազար աւելի ենք դնում, տանողներից գաղտնի. (ինքը եւ դուք անշուշտ ստանում էք լրիւ հաշիւ). էլ չեմ խօսում մանրմունը ծախսերի մէջ եղած թիւրիմացութիւնները. ինձ թւում է որ 10 հազարի տարբերութիւն պէտք է լինի. այնպէս որ այդքան պակաս էք հաշուելու: Այս բոլորը եւս նկատի ունեցէք:

Բ. Ցաւելով լսեցի Այգեստանից Վասիլի փախչելը. շատ գէշ եղաւ. առանց այնտեղի բան չի լինի. աշխատելու էք այն լրբերին կամ սիրտերնին շահիլ, ցոյց տալով իբրեւ բարեկամ մեզ եւ փոխթիքա անել (ինչպէս ես արել եմ մի ժամանակ) եւ կամ մէջտեղից վերցնել. գծերի վրայ եղած մարդկանց պատիժները այդքան մանրագնին չեն քննում. նոյն իսկ կարելի է այդ չյայտարարել, ինչպէս անցեալները քանիցս պատահել է...:

Գ. Արարատից Իշխանը գրում է, որ նորէն 3 հազար\* ն[որ] ծ[ալը] եւ 40 խոզովակ\* է ուղարկել. այս մասին շատ կասկածում եմ, որովհետեւ վերջինը 40 միանգամից տալը մեծ ռիսկ է. աւելի կասկածելի է, որ Աւետարանը եւ Այգեստանը այդպէս խայտառակ վիճակի մէջ ընկաւ:

Դ. Այգեստանը այդպէս եղած լինելով լաւ կը լինէր կայանցի Գէորգ-ին\*\* խրախուսել որ իր ընկերներով աշխատէ. ինչ որ էլ լինի այսքանը իմացէք Գէորգ-ի\*\* մասին, որ նա աշխատող, ռիսկով եւ մանաւանդ անօթի է. ուզէ չուզէ հաւատարիմ կը լինի:

Ե. Վերջապէս Նիկոլը\*\* եկաւ. սրա գալով արհեստանոցի եւ արհեստաւորի խնդիրը կը փակւի. սա Վարդանի հետ ամէն բան կ'անի. միայն թէ յարմարութիւններ ստեղծեցէք. ձեռքը այնպէս արէք որ ի գուր չկորչի եւ օգտուէք. գոնէ մեր ունեցածները (Շամում) չտիկելիք մասեր շատ ունեն. թող աշխատեն:

Զ. Պետրոսէն<sup>3</sup> նոր մի նամակ առայ. ներփակում [եմ], որից կ'իմանաք թէ ի՞նչ է արել եւ ինչ կ'ուզէ. Կոմս-էն\*\* լուր չկայ. այն տղան իր ուշանալով մեզ հասցրեց

այս ցուրտ օրերին. տեսնենք վերջը...

Է. Ինչպէս տեսնու՞մ էք Պետրոսի նամակէն մեր պիւտճէից դուրս ապրանքների ծայրը բացել է. այնպէս որ շատ բան կ'ունենանք. առ այժմ Կուսակառուցութեան<sup>4</sup> ստացանք 10 հազար\* ծայր. յոյս ունենք այդքան էլ ստանալու մինչեւ փակելը. իսկ Հին քաղաքի եւ Աւարայրի<sup>5</sup> եղածների մասին Նիկիոյ<sup>6</sup> անձամբ կը պատմէ:

Այնպէս որ ինչքան կարողանաք, իրար ետեւից կարող էք մարդ ուղարկել, եթէ բնութիւնը բարի լինի մեզ օգնելու...

Ը. Աւարայր գնացած 10-10-ներին Մարգպետը կոպտաբար է վարւել եւ համարեա սիկտիր է արել. պէտք է գրել իրեն ամէն բանի մասին. նոյնիսկ վարւելու ձեւի... Դրանք լաւ դիւրութիւն կը տան մեզ. մի բան մի' մոռանաք. 10-10-ները I [մէկ] եւ նոյն իսկ II [երկու] ոտքին միշտ հաւատարիմ են լինում ապագայի մեծ յոյսերով. այնպէս որ այդ պատեհութիւններից միշտ օգտւեցէք. դրանց կարելի էր տալ մատուցելուներ<sup>7</sup>, որ 30 հատ կային եւ ահա սրանց եմ դնում. վերջապէս միշտ անվրնաս ապրանքներ կարելի էր գտնել. եթէ նախապէս այդ մասին ինձ գրէիք ես պատրաստութիւն կը տեսնէի. ինչ եւ է. դրանք երկու գլան են. ինձ գրէք եւ երկրորդ ոտին անպայման մասեր կը տամ բերելու:

Թ. Ձափարի ընտանիքը ինչպէս խօսել եմ լաւ կը լինի որ բերէ այս կողմը, ես իրեն էլ խօսեցի. այնպէս որ դիւրութիւններ տւէք. եթէ դուրս գալու պատեհութիւնները դեռ չեն վերջացած: Լսեցի որ Դուրանէն<sup>8</sup> նոր մարդիկ են եկել. Աստուածներդ սիրէք չպահէք. եթէ ուրիշ տեղից հնարաւոր չէ, Աւետարանով ճամբեցէք ուղղակի Բլուր Մաշտոցին<sup>9</sup>, նա կ'ուղարկէ դուրս:

Ժ. Քանիցս գրել եմ ձեռքերի մէջքի դեղի մասին. ինչո՞ւ կը մոռանա՞ք. նամակին բոլոր պահանջներին կամ գոհացում տւէք կամ մերժեցէք. անպատասխան մի' թողէք: Կոնիակից ես համ չառայ. մէկը ճանապարհին են խմել, մէկը հոս խմեցին, իսկ միւսն էլ լիքը հետերնին կը բերեն: Այնպէս որ 3-ը իմ հաշւին գրելը ի գուր եղաւ. այդպիսի պայմաններով էլ չուզեցի: Միշտ մի բան ուղարկելուց. այնպէս էք անելու որ բերողը չիմանայ ի՞նչ է...

Ի. Միշտ կը գրէք թէ բոլոր նամակները առել էք. լաւ չէր լինի ասելք ո՛ր թւակիր, որովհետեւ ըստ այնմ ես կ'իմանայի, թէ ո՛ր պարտիա ապրանքի մասին լուր ունէք, եւ որի մասին ոչ:

Լ. Սալմանը գնաց Մինարէթ տղաներին ուղարկելու. այնպէս որ եթէ դիւրութիւն եղաւ կը գան. բայց մի բան իմացէք Դոնչօ-ի<sup>8</sup> մասին, Պետրոս լաւ կարծիք չի յայտնել. այնպէս որ ես եւ նա պատասխանատու չենք. ձեր ցանկութեամբ ենք ուղարկում:

Խ. Ձինուր Աւետիսի դուրս գալու պատճառը իմացէք. ինչ որ սիրաբանութեան հարց կայ. Ռուբէնի<sup>8</sup> մասին իբր թէ գործ է ունեցել Թամամ-ին<sup>8</sup> տան դիմաց կնոջ հետ, որի մասին ես արդէն կասկած էի յայտնել եւ արգելել հոն գնալը. յետոյ նոյնպէս խօսում են եւ Պրոպ-ենց<sup>8</sup> տան դիմաց եղած 2 կանանց մասին. ես այդ տանը չեմ եղած. տեսէք այդ ինչ բան է. ինչ որ խօսքեր կան եւ Թագաւոր Մուսնից տանը մասին. վերջապէս խիստ եղէք եւ հետեւեցէք. հսկողութիւնը միայն կը փրկի: Կասկածելի տեղերը արգելեցիք. եւ միշտ իմացէք թէ որ տեղերն են գնում. թող իրենք իրենց ցանկացած տեղերնին չերթան:

Ծ. Salman-ի<sup>9</sup> դուրս գալուն բոլորովին հակառակ եմ. այդպիսի մի ընկերոջ վերջնական կերպով իմիզդրանտ<sup>10</sup> դարձնելը բարոյականութիւնն է. անցեալ օրը թերթերում կարդացի որ Սարաֆովը<sup>11</sup> Մակեդոնիա է մտել առաջիկայ ընտրութիւնների համար ազիտացիա անելու. մեզ մօտ ընդհակառակն ենք անում. միշտ իմ իդէալն է եղել ուժեղ լինել ներսը եւ ոչ դուրսը. դրսի ընկերների մոդայիկ ցանկութիւններին արձագանք տալը գործնական բան է: Ինչ եւ է. տեսնենք ձեր նախագագուցները որքան ճիշտ կը լինեն. այստեղ էլ դեռ չեմ զգում այն ինչ որ դուք էք ասում. այնպէս որ հոս մնալը աւելի օգտակար կը սեպեմ:

Կ. Տոպրակներից պակասելը խրոնիկ[ակա]ն հիւանդութիւնն է. իմացէք որ դրանք Սարուստանէն եկած են. հոս բանալու դիւրութիւն չկայ. ինչ որ էլ անէք բան չի լինի. միակ փրկութիւնը ցինկլի տուփերն է. մտածել ենք Պետրոսի հետ Սարուստանէն ուղղակի ցինկլի տուփերով բերել. հէնց նոր տոպրակներ բացինք եւ 5 տուփի մէջ 60 հատ պակաս եղաւ. եթէ չստուգէինք պէտք է ուրիշների մեղքը առնէին:

Եւ վերջապէս վերջին անգամ ԼՆՍՊՕ-ի\*\* ձեռքը սաղլամ հնի գեք[մանական] մաուգեր\*\* տալը. ահա ինդիւրներ որոնց մասին անպայման հակառակ լինելու էիք դուք. լաւ ժամանակն էլ նկատողութիւն արէք, որ հասկանանք թէ իսկապէս իրողութիւնները ըմբռնել էք եւ ըստ այնմ էք հրահանգ տալիս:

Գ. Ինձ այն ժամանակը (ապրանքները ամբողջապէս ուղարկելուց) թւում էր որ պէտք է կոթերը անգործ դարձնել եւ ոչ կիսել. եթէ ըստ այդ պարագայի մի սխալ կար, այն էր որ գլխաւոր օղակները չպիտի տայի, բայց այդ տւի Ջաֆարին, որ ջէբը դնէ եւ վտանգի ըրպէին շարտէ դուրս եւ կորսնցնէ:

Դ. Ես այդ դժբախտ դէպքից աւելի շատ հետեւեալ հրահանգներն եմ հանում. 1.- մի տեսակի ապրանքները նոյն խուրճիկի մէջ չդնել, այլ մի թա՛յր մի տեսակի անել, միւսը մի այլ: Օր[ինակ] այս անգամ, մէկը ծայր, միւսը կոթ: 2.- թանկագին ապրանքները մի բեռ, նոյն իսկ եւ թա՛յ չանել, այլ ցրել բոլոր բեռների վրայ: Ուրեմն նորից ըստ իմ կարծիքի, մի մասը հոս պահելու բան չկայ, եթէ միայն բերողները վստահելի են, այլ պէտք է ցրել. այս պարագային ես ի նկատի ունեմ դրսից եկած անակնկալ եւ ոչ սուրհ[անդակների] դաւաճանութիւն: Հետաքրքիր է ձեր կարծիքները, որոնք կազմած էք երկրի մթնոլորտի ճնշման տակ...

Բ. Զիբերի մասին. հոս եղածները կը մնան հոս մինչեւ գարուն. խոտ, գարի գնեցի, պահող էլ կայ. Աւարայր չեմ թողնի. նրանք ձմեռը դիւրութիւն ունեն շահագործելու... իսկ Աւետարան եղած երկու ձին կը բերեն Շամ. այդտեղ եղածները ինչպէս պէտք է պահէք որ լաւ լինեն, մանաւանդ չվտանգեն, այդ արդէն ձեր գիտնալիքն է, միայն թէ ամբողջը մի տեղ չպահէք. ցրելը մեծ իմաստութիւն է, բաժանել՝ տիրել...

էլ չգիտեմ ինչ գրել. նկատողութիւններ անելուց մեռանք. նամակները միշտ հանգամանքօրէն գրէք: Զաֆարի հետ եղած նամակը շատ անորոշ էր. չիմացայ նոյն իսկ ԼՆՍՊՕ-ի\*\* հոս հասնելը. կարծեմ Զաֆարը բերանացի ասաց նրանց գալու մասին եւ նամակի վերջին տողից — Նիկոլը\*\* դեռ չի եկել հոս —: Է՛հ, այսքանով բան կը լինի. բա՛ ապրանքները, բա՛ ապահովութիւնը ու գծերի վրայ եղած նորութիւնները... Երեւում է որ միակ էջի գլուխը ես եմ: Մէկը հիւանդ է, միւսը սովորա-

կան ծուլութիւն. մէկը հէջ հոտ չի հանում (Թորգոմ), Վաթանը կարծես մեռել է. է՛հ, Աստուած ձեզ հետ:

Ապրանքների ստանալու մասին չէք գրում. գոնէ գրքերի, դիտակների եւ այլն գործիքների մասին գրէք: Անցեալ անգամ Սմբատի հետ ուղիղ քաղաք ուղարկեցի եւ Թորգոմի սապոկի ճիտքացունները. տնաշէններ ստանալուց գրեցէք, որ խալխի մեղքը մեր վրայ չառնենք: Չեմ գիտեր Մենաւորում ո՞ւմ պիտի դնենք. այն իսկ որ ես տեսայ, եթէ խելքը գլխին եւ անպայման վստահելի մարդ չլինի բան չի դուրս գայ. էլի երկու չտեսայ — փոքրագոյնը Տեղացին է. Գարեգինն էլ սրանից վազ չի գալու, ուղղակի դա նրա վարքի ինդիքն է. առանց նրան նա քայլ անել կարող չէ...

Լաւ չէ՞ր լինի, որ համաձայնէիք գարնանը Գարեգինը ձիաւորների հետ գայ եւ աշնան վերադառնայ. այդ մասին մենք էլ խօսել ենք ժամանակին եւ ես մասնաւորապէս համաձայն էի:

Այսուհետեւ ինձ գրելիք նամակները առանձին գրէք եւ վրան աւելացրէք — ուղարկել Արամին — իսկ փոխադրութեան վերաբերեալ ըստ կարգին: Այս նամակը հագիւ 10 օրէն հասնի ձեր ձեռքը. իսկ մինչեւ այդ, ես կ'երթամ. մեռանք սպասելուց:

Լօրիսին եւ Եղևարդին հարկաւոր օժանդակութիւնը արէք. վերջինին հայրը մեռել է, մի բան տւէք ձմեռայ ապրուստի, ես մի ոսկի թոյլ էի տւել ինքը վերցնի իր մօտ եղած դրամից:

Լօրիսը անպայման շատ է աշխատել եւ ամէնից շատ նա օգտակար եղել. իր վարպետութեամբ կարողացել է գլուխ ելնել Աւետարանցոց հետ: Վերջինի հետ մի քիչ փոխադրով վարւէք. մի քիչ ծուռ գծեր ունի. գայրացնէք տաճիկ կը դառնայ (իր խօսքերը անցեալ տարւայ — ուզում է ասել Արմենական): Սրա կակուղ դամարը<sup>12</sup> Թորգոմը լաւ գիտէ: Նրա հետ թողէք միայն Թորգոմը յարաբերէ:

Վերջին խօսք. անցեալ անգամ Սարգիսը իր երկտողով ինձ գրում է — քիօփօղլիք! գարնան ձիով եկէք.— իբր թէ ես դուրս գնացի հարստացայ, կամ արտասահմանցոց երեսը տեսայ, սկսեցիք նախանձել. դուք մեռնէք ձեր ընկերներին հանգստացնելու նպատակներով: Ես դեռ ինձ երկրումն եմ հաշուում. որ օրը մտայ Սարուստան, նոր կը հաշւէք արտասահման... Իսկ այնտեղից անցնելուց յետոյ պէտք է մերժեմ այդ շրջանը գալը, մինչեւ ինձ համար էլ հեռագիր տաք ու նամակներ գրէք... Ինչքան ես առաջ անցայ, դուք այնքան իմ հէրս անիծեցիք, հիմա եախէս ազատեցի, դուք վագեցէք իմ ետեւից... Բոլոր մեծամեծները — Մարգիս, Կոմս, Ռուբէն, Մալխաս\*\* եւ այլ այդպէս են արել, ես էլ կ'ուզեմ մեծանալու հովերով բռնակել... Եկայ երկիր՝ որ դուրս գամ, դուրս ինձ մարդու տեղ դնեն, այդ էլ չգտայ. իմ ձեռքս ձեր հոգին մնայ, հիմա տեսնէք ի՞նչ կը լինի... ????

Մեր ցուցակի հետ դրի եւ Արարատի երեք իմ գիտցած պարտիաների ցուցակը. նորերի եւ հնրերի մասին գրեցի որ պաշտօնապէս ձեզ գրեն ամենայն մանրամասնութեամբ:

Բարեկենդիվ  
ԱՐԱՄ

Կիրճեցի Աւղալի եւ խուփեցի Սուլէյմանի հետ ուղարկւած ապրանքների ցուցակը 1906 թ. նոյեմ. 26-ին

10-ի ծայր

նորի կոթ

4 տոպ[րակ] 500ական=2000

2. Կ. մակագին

3 կապ թերթ

16 կապոց 32ական(32 լրիւ թախում)

ԱՐԱՄ

Մալխասը ուզել էր եկած ապրանքների ցուցակը, արդէն մինչեւ իմ գալը ամբողջ գտնւած է, իսկ ես գտել եմ – Թորգոմի հետ – իմ գալուց յետոյ ամբողջ. դրա վրայ աւելացրէք եւ այս

Հոկտ. 22

Կիրճեցի Չաթօ-ի հետ

եայ ծ[այր]

հին ծ[այր]

2149

(.....օրինակ միայն 7000-ի հաշիւ է)

Աւետարանցիներ Լօրիս եւ ընկ. 412

150

95 դապօ վառօդ

Այս անգամ

Ամբողջ սարքով – 30 հատ Մաուզեր\*\* ամբողջը 8 տոպրակի մէջ. փայտերը աւանձին: Փայտերը այս անգամ 24 հատ են. մոռացայ ասել որ 2 սաղլամ են (Սալմանի բերածը չհաշւած որ Ջաֆարի վրան է) մէկը Նիկոլի\*\* վրան միւսը Սլօ-ի\*\* (վերջինը պիտի աշխատի սրանց հետ մինչեւ ընկերներ գտնենք):

Մաուզեր-ի\*\* ծայր

Նիկոլի-ի\*\* վրայ – 150 հատ

Սլօ-ի\*\* – նոր ծայր 3 ձեռ – 1800 հատ, 6 տոպրակ, 300ական տոպրակը

Մէկ մոսիհի\*\* կոթ Ջաֆարի վրայ N

Մոսիհի\*\* կոթ ծայր փակ – 220 հատ

Մաուզեր-ի\*\* կոթ առանց ծայր – N

Մաուզեր-ների\*\* NN-ը չեմ գրում. ի գուր աշխատանք է. եթէ տեղ հասան արդէն դուք կը գրէք. այս գծով բան չկայ. եթէ տեղ չհասան վրաս գրէք:

ԱՐԱՄ

Մենաւոր , 6 նոյեմբեր

Յ. Գ.– Ձիւները պատրաստել էինք Նիկոլի\*\* ճամբելու համար, բայց ձիւնը թոյլ չտւաւ, այնպէս որ նա մնաց. իր հետ կը մնայ եւ տասնոցը ծայրերով, 2 ձիու բեռ 600 հատ ն. ծ[այր]: Բացի սրանցից Ջաֆարին չտուի ն[որ] կոթ, ինչպէս եւ Ալոյի\*\* Մաուզեր-ի\*\* կոթ եւ ռետլվեր\*\* Դրա փոխարէն տւինք 2 հին կոթ, 4 կապ ծայրով: Դրանք հոս գործածելիք կոթերն են. մէկը պահեցէք, իսկ միւսը փոխեցէք եւ աւելի գործածւածը տւէք բերեն, բայց այնպէս լինի որ աշխատեն. եթէ մէկը չուղարկէք թերեւս ստիպւած լինենք նորը հոս թողնել գործածելու համար:

**Նիկոլ-ը\*\*** կը սպասէ կամ սրանց վերադարձին եւ կամ աւետարանցիներին: Ի դէպ, վերջիններին լօ-լօ եմ ուղարկել որ գան. 15 օր է լուր չկայ. ձեր կողմից էլ լուր տւէք որ գան, նոյն իսկ ոտով, գոնէ մի քանի թեթեւ բաները փոխադրենք:

է՛հ էլ չգիտեմ ինչ գրեմ. այս տարի բնութիւնն էլ մեզ դաւաճանեց. անցեալ տարի այս ամբողջ ամիսը անուշ եղանակներ էին: Ես սպասելու եմ մինչեւ ամսիս վերջը. հազիւ տեղեկագիրը պատրաստեմ:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

1906 թ. նոյեմբեր 7-ին

Մենաւոր

1906 թ. Հոկտ. 18

**Աւետարանցոց եւ խուփեցոց հետ**

<u>Հին ծայր</u>	<u>Այնպի</u>	<u>վառօդ</u>
1 – 200	1– 250	1 – 18 դապօ
2 – 200	2 – 250	2 – 18 »
3 – 220	3 – 250	3 – 18 »
4 – 200	4 – 250	<u>4 – 19 »</u>
5 – 288	5 – 150	73 դապօ
6 – 190	<u>6 – 150</u>	
7 – 150	1300	
<u>8 – 140</u>		
1608		

**Խոզովակներ**

Մոսինի – 8 հատ

Բերդան – 10 հատ

**Մասեր**

1) Կարոպկա, զատուոր եւ մակագին – 3-ական նորի

Կարոպկա բերդանի – 5 հատ

2) մոսինի զատուոր մակագին – 3 մասեր

3) Կարոպկա եւ մակագին – 5

4) Մոսինի զատուոր – 9 հատ, մի տոպրակ թերթեր

5) Մի տոպրակ մասեր – 1 թորգոմի ձեռագիր

6) Մի տոպրակ մասեր – 375 հատ

**Ազաներ**

1) 12.000

2) 12.000

վրան գրւած է 12 տուփ

3) 12.000

4) 12.000

5) 14.000

**Ջաֆարին հետ ուղարկված ապրանքները**


Նոր ծայր — 1200 հատ, չորս տոպրակով 300  
 Մաուզեր ռետիվեր\*\* — 28 հատ, տոպրակների մէջ  
 փայտերը 20 հատ էին  
 2 հին կոթ չորս կապ ծայրով:

Նոյեմբեր 8-ին

**Կիրճեցի Չաթոյին եւ Հասոյին**

- 1 տոպրակ — 300 նոր ծայր
- 2 » — 300 »
- 3 » — 330 »
- 4 » — 330 »
- 5 » — 420 »
- 6 » — 400 »
- 7 » — 200 »
- 8 » — 200 »

Ընդ. 2480 հատ



**Յ. Գ.— Ընձայրը կը բարեւէ բոլորիդ:**  
**ՆՈՅՆ**

- 1.- Յաջորդաբար՝ Համագասպ Բաղէշցեան (Մալման), Արտաշէս Յովսէփեան (Մալխաս) եւ Սարգիս Բարսեղեան (Սարգիս, Շամիլ):
- 2.- Արարատի գիծ – Սուրմալու-Իգտիրի գիծ:
- 3.- Պետրոս, զինագործ. իսկական անունը Բագրատ Տէր Յովհաննիսեան (1877-1937):
- 4.- Կռուադաշտ – ծածկանուն Մակու գաւառի մէկ գիւղի:
- 5.- Հին քաղաքը Քեօյնաշահրն է, Ատրպատականի մէջ. Աւարայր – ծածկանուն Խոյ աւանի, նոյնպէս Ատրպատական:
- 6.- Դուրան – ծածկանուն Տարօնի:
- 7.- Բլուր – ծածկանուն Մակուի գաւառի Քիշմիշթեփէ գիւղին: Մաշտոցը ծածկանունն է Մեսրոպ Աւետիսեանի, ծանօթ նաեւ Մակուեցի Մեսրոպ անունով:
- 8.- Դոնչօ – ծածկանուն Պետրոս Բալայեանի:
- 9.- Մալման – ծածկանուն Համագասպ Բաղէշցեանի:
- 10.- Պանդուխտ, գաղթական:
- 11.- Պորիս Սարաֆով – մակեդոնացի անուանի ղեկավար, բարեկամ Դաշնակցութեան:
- 12.- Ջիղը, կողմը:

252

Սիրելիք!

Երէկ ճամբեցի Զաֆարին, Նիկոլը\*\* նրանց հետ պէտք է դար, բայց եղանակները թոյլ չտուին:

Այսօր եկան կիրճեցիք, նրանց գիւղից գօրքերը քաշել են Աւետարան:

Աւարայրի գծից լուր չկայ. նորութիւններ Աստուած տայ:

Ուղարկեցէք ինձ քաղաքի խմբերի ամսական մուտքը. նոյնպէս եւ մինչեւ հիմա տրւած ընդ[հանուր] դրամների գումարը. ի հարկէ եւ կոմիտիոնի մօտ մնացած դրամները:

Լաւ կը լինէր որ մի քանի թղթեր կնքէիք եւ ուղարկէիք ինձ, ես հոս եմ մինչեւ ամսոյս վերջը: Տեղեկագիրը այսօր դեռ նոր սկսեցի: Սեւը<sup>1</sup> կ'ուղարկեմ ձեզ:

Եղարարը ինձ հաշիւներ դեռ չի ուղարկել, պահանջեցէք:

Բարեկներով  
ԱՐԱՄ

1906 թ. նոյեմբեր 8-ին

Մենաւոր

1.- Խօսքը Սեւ ձիու մասին է:

253

Սիրելի Մարգարէ!

Ահա գալիս է Խմբապետը եզներով. թէ ինչքան դարի են բերում, այս մասին յետոյ:

Մոռացայ գրել մի քանի հարց. Ա. Ի՞նչ պայմաններով է վարժապետը ուղարկուած հոս. Կը զարմանամ Վրէժի Կ. Կոմիտէի այդքան անտարբեր վերաբերմունքի մասին. մարդ են ուղարկում մեր կարեւոր կէտերից մէկը, առանց գրելու թէ ո՞վ է, ի՞նչ մարդ կամ ինչո՞ւ է գալիս: Ենթադրենք դու եւ Սամսոնը Յ[ետ] Գ[րութեան] չգրէիք թէ Ղազարը գալիս է իբրեւ վարժապետ... վերջապէս այդ ո՞վ է կարգադրել որ սա պէտք է լինի եւ երկրի ընկերների հետ յարաբերող, ուրեմն 4-5 ամսւայ համար. մեր ամբողջ գաղտնիքները բանա՞նք մի պատահական մարդու առաջ: Եւ վերջապէս սա իր անցեալով ինչ գրաւական է տւել: Է՛հ իրենց քէֆ. սա մի վերջին անգամ գալիս [է] ինձ համոզելու, թէ Վրէժը անկարող է Մենաւորի դարտին դարման լինի:



Բ. Ես Մենաւորի գործերը անցեալում անկանոն լինելու համար պահանջել էի ընկերական դատ. այս մասին գրել եմ Սամսոնին, որ նա էլ յայտնէ Կ. Կոմիտէին. այն ժամանակ ասել էի, որ ժողովի տեղ նշանակւի եւ կարեւոր մարդկանց հրաւիրւի (դու, Ընձայր, Սամսոն, Սարգիս, Տեղացի, Փայլակ, ես եւ Կ. Կոմիտէի ներկայացուցիչ). այս մասին դու էլ իմ կողմէն գրիր Վրէժ եւ պահանջիր, որ վերոյիշեալ մարդկանց ժամանակին — ամէն մէկին զատ-զատ նամակով պիտի հրաւիրւի, գրելով քննելիք հարցերի մասին: Եթէ այդ խնդիրները ժամանակին չկարգադրեն եւ նամակով մարդկանց չհրաւիրեն, այն ժամանակ ամբողջ գործի պատասխանատու պիտի ճանաչենք Կ. Կոմիտէին. ես այստեղից ուղղակի կ'երթամ Ռուսաստան եւ ամէն բան կը դնենք Ընդ. Ժող[ովի] առաջ եւ վերջնական բաժանման խնդիրը կը դնենք եւ այս տարւայ պատասխանատուութիւնների մասին էլ երեւի կարգադրութիւն կ'անենք:

Վերջ պիտի տալ այս բոլոր նամակային եւ գաղտնագրոյի ընդհարումներին եւ դէմ առ դէմ պէտք է գալ խօսելու համար:

Գ. Տղաները գալիս են. Մելքոնին տւի ռուսական 10 ռուբլի քեզ տալու համար, եւ 1 թուման իրեն ծախսելու, թէ այս կողմից եւ թէ այդ կողմից: Սրանց էլ տւի 2 թուման. ուրեմն դու բան չես տայ. իսկ 10 ռուբլով կը հոգաս սրանց ծախսերը եւ սոխ մոխ կը գնես:

Յովհաննէսը խնդրեց որ գրեմ քեզ, այդտեղ երաշխաւորես որ 5-10 թուման ապրանք առնի, ինքը հոս վճարի ինձ. այդպէս էլ կ'անես. ի հարկէ իրաշխաւորիր միայն. դրամ կը բերեմ իմ հետ ամսոյս վերջին:

Սրանց մի լաւ կը հիւրասիրես եւ միրգ կ'ուտացնես:

Ընձայրը Մտոյին պատւիրել էր տախտակներ գնել. եթէ պատրաստ լինի սրանց հետ ուղարկեցէք, նոյնպէս եւ գրատախտակը դպրոցի համար:

Մոռացած կարիքներ.

Դպրոցի համար մեխերը, 2 վերլուկ եւ 1+3: Չմոռանաս կարտոֆիլ, քոմոլու եւ մանաւանդ Թոմասի ճիճիու դեղը:

Մի քիչ էլ եօղ ուղարկիր. կապելու եւ կարելու թել չմոռանաս:

ԱՐԱՄ

1906 թ. նոյեմբեր 15-ի

Մենաւոր

Յ. Գ.— Գարին 55 կոտ. 5 սոմար 5 կոտ. եզները 15 հատ են, վանքի եզները չբարձեն որ բեռ բերեն:

ՆՈՅՆ

**Միրելի Տիգրան!**

Նամակդ ծպտեալների հետ տեղս հասաւ հէնց այսօր նոյեմբեր 18-ին: Ուրախու-  
թեանս չափ ու սահման չկայ երկտողիդ համար. շատ էի խորհում հիւանդութեանդ  
մասին, այնքան էի հեռու գնացել, որ ուզում էի առանց ձեզ գրելու, ուղղակի վե-  
րադառնամ... Ինչ եւ է:

Շատ լաւ [ես] արել որ այս անգեղներին քշել ես դուրս. ես արդէն գրել էի քա-  
ղաք, որ եթէ ուրիշ դիւրութիւն չկայ այս կողմը ուղարկեցէք. դու արդէն կանխել  
ես: Միայն մի բան սխալել ես, որ սրանցով ես ուղարկել, կամ սրանց մինչեւ հոս  
ճամբել. սրանք մինչեւ Խուփ պէտք է բերէին, այս կողմը ի զուր էր. իսկ այդտեղից  
արդէն գրել եւ խօսել էի անգամ Լօրիսին, որ ուղղակի Բլուր ճամբեն Մաշտոցին:  
Միեւնոյն է, այստեղից է[լ] հոն կ'երթան: Այս անգամ սրանց անմիջապէս յետ  
դարձրի մնացածներին բերելու պայմանով: Սրանք կը բերեն մինչեւ Խուփ, այս  
կողմի հետ գործ չունեն:

Արդէն գրեցի Աւետարան եւ Խուփ<sup>1</sup>, որ 10-10-ները պատրաստ պահեն եւ գալուն  
պէս ճամբեն. թէեւ վերջինները (Եղևարդ, Լօրիս եւ ընկ[երներ]) շատ դժգոհ են —  
իրաւացի կերպով — այդ օլամից: Բայց ճար չկայ, ես նրանց հասկացրի բան[ն] ին-  
չումն է: Եթէ որեւէ անակնկալ պատահած լինի պատւիրած եմ մանրամասնօրէն  
քեզ գրէ, որ ըստ այնմ վարէք: Բայց կարծեմ պիտի յաջողենք, որովհետեւ եղա-  
նակները շատ լաւ են, միայն թէ շտապեցրէք: Այսքանը սրանց մասին. ի հարկէ  
մնացածներին բերել են:

Այժմ մի քանի այլ խնդիրների մասին:

Արդէն արած հարցումներից մի քանիսի պատասխանը ստացած կը լինես քաղա-  
քէն: Զ[աֆա]րը վերադարձաւ եւ Իջեւանի<sup>2</sup> մօտ խայտառակեց նորէն փախչելով:  
Այսօր եկան հին Նուրօ-ն\*\* եւ ընկերներ. սրանց ճամբու կը դնեմ վաղը:

Փոխադրութիւնը շատ յաջող է, յուսով եմ որ դեռ 15-20 հազար\*\* պէտք է փո-  
խադրենք այսուհետեւ. ապրանք կան եւ կը գան. գործերը կանոնաւոր են գոնէ մեր  
ներկայութեամբ: Մնում է միայն որ դուք Խուփէն մի երկրորդ գիծ բանաք Հնա-  
դարեան<sup>3</sup>. այդ գործի համար ծառայեցրէք հէնց այս նամակաբեր կայանցուն,  
սրան արդէն դու լաւ գիտես:

Եթէ սրան իրաւունք տաք, ե՛ւ ընկեր կը գտնի եւ գործ կը կատարի Խուփ — Կա-  
յան — Զրափ — Հնադարեան:

Սա կարեւոր է եւ այն տեսակէտից, որ Այգեստանը<sup>4</sup> սկսել են լրբանալ. այս մա-  
սին խօսել եմ իրեն եւ գրել խուփեցոց ու Եղևարդին, որ սրան ապրանքներ տան,  
դու էլ համաձայնիր, թող գործ սկսեն. ընդամէնը 15 օրւայ գործ հազիւ լինի. յե-  
տոյ կ'ուշանայ: Ինքը կ'ուզէ հետը վերցնել եւ 2 10-10-ներին, շատ վստահ է, այդ մա-  
սին էլ խօսիր եւ կարգադրիր: Գոնէ առաջի ոտք ապահովութեան վրայ վստահ կա-  
րելի է լինել, նոյնիսկ եւ II-ի: Այս անգամ թէեւ գրել էիր որ ապրանք չտամ, բայց

օգտւելով կայանցու ներկայութիւնից տւի: Յուցակը վերջը:

Սրանց հոս տւի մէկ-մէկ մէծիտ 10-10-ին նւէր, իսկ կայանցուն 1 ոսկի, դու էլ մի 20-30 դրան կը տաս վերջինին նաեւ 40-ն: 10-10-ներին երկրորդ անգամ աւելի քիչ կարող ես վարձատրել, ճամբան ուղղակի կիսուում է: Նրանք այս կողմերի մասին գաղափար չունեն:

Այստեղի կռիւները դեռ չի վերջացել. Վրէժը ինձ մի նամակ է գրել որ միջնորդեմ Ձուլումաք-ին\*\* ներս ընդունէք. տեսէք լրբութիւնը ուր են հասցնում: Ուղղակի երեխաներ են եւ կուկլաներ<sup>5</sup>... պիտի մտնեմ հոն եւ մի լաւ ներկեմ:

Կոմսը \*\*պէտք է գար 5-10 նոյեմբեր, դեռ մինչեւ այժմ ոչ ձէն կայ ոչ ծպտուն:

Անցեալ օրը աւետարանցոց եւ կիրճեցոց միացեալ խմբի հետ ճամբեցի Մարգի-սի\*\* եղբօր Նիկոլ-ին\*\*<sup>6</sup> եւ արհեստաւոր Դանիէլ-ին\*\* երեւի արդէն հասած կը լինեն:

Նրանց հետ ուղարկել եմ եւ հետեւեալ ապրանքները:

հ[ին] խողովակ	ն[որ] խող.	ն[որ] կոթ	
10	35	1	
հնի ծայր	ն[որ] ծ[այր]	N 8	-ի կոթ
1720	4430	3850	2
200	1600 եւ մի կապ	50-60 լաւ չեմ յիշեր	

Սեւ հող — 120 դապօ եւ 5 տոպրակ

Ագա — 7000 հատ եւ մի կապ ցինտրոլի

7 կարոպկա բերդ[ան]

Սուխն — 6

Շիչ — 22

Մասեր — 2 տոպրակ

Վարժութիւն մօտէքրիստ հրացան — մէկ հատ

Գիլգի հնի — 135

Գիլգի նորի — 776 հատ

Թերթեր — N 15, 22 — 20ական հատ

Թերթերից N 17— 27 ուղարկում եմ քեզ. իսկ աւելի առատութեամբ ուղղակի քաղաք կը ճամբեմ ձիաւորներով. մտածեցի որ քիչ կ'ուշացնենք հասնելը սրանց: Աւելի նորից մէկ-մէկ օրինակ էր, որ ղրկեցի քաղաք: Հոս գրքեր եւ թերթեր չկան, ամբողջ սրբել ուղարկել եմ:

Մալխասը այս անգամ տւել է ապրանքների ցուցակը. դա խոմ բան է. պէտք է ճիշտ անցեալ տարւայ ձեւով գրել:

Ո՞ւրտեղից որչափ — ըստ տեսակի. ուղարկւած, կորած կամ փչացած եւ հասած տեղ. Աւետարանում եղածներն էլ մոռտք է համարւելու. այդ լաւ կը լինի ուղիղ դեկտեմ. 15-ին ուղարկել Արարատով ուղղակի Քար<sup>7</sup>. ճիշտ այդ օրերը ես հագիւ հոն հասնեմ. քանի եղանակները լաւ են, այստեղից չեմ հեռանայ:

Այնպէս տեղեր ենք պատրաստել որ 100.000ը [հիամփուշտ] ապահովութեամբ կը տեղաւորացնենք: Էլ տեղի մասին հոգ չենք անի հոս:

Արդէն Պետրոսի նամակներէից կը տեսնէք, որ մեր պիւտոժէից դուրս էլ մեծ քանակութեամբ ապրանք ենք ստանում:

Այս անգամայ Կազաչիմ\*\* Վրէժի կոթեր է, զարկել եմ, Աստուածդ սիրես եթէ չի ուռացնում ձեռքդ բռնի...

Արհեստաւորներէից ապահովեցինք Նիկոլը\*\*, շատ լաւ գիտէ իսկ պակասը կը լրացնէ Դանիէլը\*\* բայց առաջինը հրաշալի ընկեր է:

Մոռացայ գրել Տեղեկագրի մասին. գրել եմ մօտ 50 երես. հազիւ 10 երես մնացած լինի. քո ուղարկած նիւթերէից ստատիստիկաներ եւ ցիտատներ<sup>8</sup> եմ բերել. կարծում եմ աւելի հետաքրքիր եւ հիւթալի է քան անցեալ տարւանը. սեւ[ազրութիւն]ը կ'ուղարկեմ ձեզ: Յենգերը<sup>9</sup> չմոռանաք:

Է՛հ այսքան յաջողութիւններից յետոյ սիրտս չի բռնում որ տեղիցս հեռանամ. թէեւ խիստ թոյլ եմ եւ աչքս գէշ, ու տեղը տաղտկալի: Քանի գիծ կայ դեռ կը մնամ. ժողով մողով Ֆրազ է, իսկ իրականութիւնը՝ ձեռք բերւածները ներս տալը:

Էլ չգիտեմ ինչ գրեմ. դուք երեւի ինձնից շուտ լուրեր առած կը լինէք. ես միակ թերթերով եմ բան հասկանում. թերթերը առատութեամբ գալիս են 20-30ական օրինակ: Էլ չգիտեմ ինչ գրեմ. դուք երեւի ինձնից շատ լուրեր առած կը լինէք: Այնպէս որ ապահով եղիր որ շատ կը ստանաս. ձմեռայ համար գծեր եմ պատրաստել: Կայանի 10-10-ն մի բարեկամ ունի ճիշտ սահմանի բերանը. եթէ կարողացանք մենք հոն հասցնենք, իսկ ինքը այնտեղից դէպի ձեզ. ձմեռը որովհետեւ մերոնք չեն կարող երթեւեկել:

Այս մասին խօսիր իրենց: Այն գիւղը Ֆախի-ն\*\* է. էլ չգիտեմ ինչ գրել:

**Ահա սրանց դրամները.**

1.- Կայանցի հայի մօտ  
Մոսիմ\*\* կազաչի\*\* 94.149  
Մոսիմի ծայր 210 հատ. փակ ծայրամասի  
Նոյնպէս 2 տոպրակ նորի սեւ հող:

2.- Լօ-լօ-ներուն  
բերդանկայի պարկուճ\*\*  
600+600=1200  
կամ 906 լաւ չենք հաշուել:

---

1.- Աւետարան – ծածկանուն Խաչան գիւղի, Աբաղայի դաշտ. Խուփ – գիւղ Վանայ լճի հարաւը, Խիզան գաւառակ:  
2.- Իջեւան – ծածկանուն Խառակոնի գիւղի, Արճակի գաւառակ:  
3.- Հնադարեան – ծածկանուն Լիմ անապատի եւ «Դրսի տան»: Կայան – ծածկանուն Պատիկ Գեղի, Բերկրի գաւառակ:  
4.- Այգեստան – ծածկանուն Գործոք գիւղի, Բերկրի գաւառակ:  
5.- Պուպրիկներ, խամաճիկներ:  
6.- Այս Նիկոլը տարբեր է Գանձակեցի Նիկոլէն, թէեւ ինքն ալ գաձակեցի. երեց եղբայրն է Սարգիսի (Շամի), իսկական անունն է Օտապաշեան Նիկոլ:  
7.- Արարատը Սուրմալու-Իգտիրն է, Քարը՝ Ալեքսանդրապոլ-Գիւմրի:  
8.- Ստատիստիկա – վիճակագրութիւն. ցիտատ՝ մէջբերում:  
9.- Ամսավճարներ:  
10- Մաշտոց կամ Մակուեցի Մեսրոպ. իսկական անունը Աւետիսեան Մեսրոպ:

Սա եւ թերթերը ուրիշ բան չկար:

Նուրո-ն\*\* եւ ընկ. կ'ելնեն վաղը, նոյեմբեր 19-ին կիրակի:

Ջերմ համբույրներով՝ ԱՐԱՄ

1906 թ. նոյեմբեր 18, Մենաւոր

Յ. Գ.— Մօտդ եղած տղաներին բարեւիր. չգիտեմ որոնք են. ծպտեալների հետ նամակ գրիր Մաշտոցին<sup>10</sup>. նա է Բլուրի տէր եւ տնօրէնը: Իսկ Եղևարդի եւ Խոսիի Սարգարին, ինքն իրեն:

Մի քիչ մանրամասն նամակ գրիր ինձ, ծրարելով Մաշտոցի նամակի մէջ, որը ինձ կ'ուղարկի:

Դէ՛հ մնաս բարով — քեզ համար երկու քրտինքի Փանելա է թողել. վերցրե՞լ ես թէ ոչ. մի քանիսն էլ կ'ուղարկեմ դեռ: Հա, մոռացայ գլխաւորը, Նիկոլը ասաց որ սանրդ կորել է. քոնի պէս մէկ կոտորածը կար. ուղարկեցի քեզ թերթերին հետ. ստացա՞ր:

ՆՈՅՆ

Փաստ. 470-243

## 255

### Սիրելիք!

Երէկ միաժամանակ տեղս հասան Նուրո-ն\*\* եւ ընկ[երներ] ու Տիգրանի ուղարկած ծպտեալներ: Վերջիններին դուրս ուղարկել ա[մենա]մեծ գործն էր. սուրհանդակներին անմիջապէս յետ դարձրի մնացածներին էլ բերելու: Դրանց ուղղակի Խոսիէն—Աւետարանէն պէտք է ճամբել Բլուր Մաշտոցին:

Այստեղ էլ նոյն տեղ կ'երթան, ուրեմն հոս գալը մի աւելորդ բան է. պէտք է նոյն լօ-լօ-ներով ուղարկել մինչեւ Խոսի, իսկ այնտեղից տես ուրիշ լօ-լօ-ներ կան տեղացի. առաջինները Բլուրի գծին ծանօթ չեն: Սրանով կարծեմ հասկացած եւ ազատւած կը լինէք չարիքից. չլինի թէ Իջեւանի բէկի մարդկանց տաք, նրանք էլ հոս կը բերեն. առաջինները լաւ են. մանաւանդ նրանց այդ ձեւերով փորձէք. գուցէ կայանցի լօ-լօ-ները ապագայում ուրիշ բաների էլ գործադրենք: Թէեւ Տիգրանը գրած էր դրանց ապրանք չտալ, բայց օգտւելով եւ վստահանալով կայանցի Գէորգի ներկայութիւնից, մի նոր իսկական կարճ կոթ տւի Գէորգին 214 ծայրով. 600ական + 600 երկու լօ-լօ-ներուն ն.ծ.Գովա իսկ 4-րդ [?] 2 տուրակ նորի սեւ հող: Այս ի նկատի ունեցէք:

Ի դէպ. ուղարկւած հաշիւները այդ ձեւով չպիտի տաք. աւելի լաւ է պահէք մինչեւ դեկտ. 15-ը. երբ ամբողջը գոցւած կը լինի այն ժամանակ կը տաք լրիւ հաշիւ հետեւեալ կերպով:

Որտեղից ինչքա՛ն (Աւարայր, Մինարէթ, Մենաւոր, Արարատ, Պարտիզաւան, Կապուտան<sup>1</sup>) ըստ տեսակի, որքան փչացած, որքան կորած, լօ-լօ-ների ձեւքը որ-

քան, կառավարութեան որքան, զուտ որքան տեղ հասած: Ուղարկւածների գումարները վերցնել նամակներից, իսկ կորածների՝ յայտնի դէպքերի գումարներից կամ ստացւածների եւ ուղարկւածների մնացորդից. այս կերպ է տրեւել եւ անցեալ տարի: Տիրգրանը եւ Թորգոմը լաւ գիտեն:

Զարմանում եմ մի բանից. ես ամէն պարտիայի հետ նամակներ կը դնեմ եւ ուղարկւածների մանրամասն ցուցակը. այս բոլորից յետոյ ինչ կարիք կայ Եղւարդից սպասելու նոր ցուցակ. Արաւրա\տի ընկերներին էլ գրած եմ որ նոյն կերպ վարւեն. իրենց (Եղւարդին գրած որ ձեզ կ'ուղարկեմ) գրած նամակներից էլ երեւում է, որ ձեզ նամակներ են ուղարկում: Ինչ եւ է. բայց ինձ համար պարզ չի լինում թէ դուք մինչեւ որ պարտիա ապրանքն էք ամբողջութեամբ ստացել: Չէ որ կարելի է մտաւորապէս ըստ թւերի իմանալ, թէ մինչեւ որ թւակիր պարտիաներն են տեղ հասել... ինձ համար ամէն բան մութ է. մանաւանդ Մալխասի նամակների հոգեբանութիւնից երեւում է որ հաշիւները ուղղակի խառն են եւ չգիտէք ի՞նչը որտեղից է գալիս: Նոյն կերպ է եղել եւ Աւարայրի անցեալ տարիների հաշիւները եւ պահ դրած ապրանքները. Մարգպետը բաւականաչափ ծայրեր (նոյն իսկ լիքը ցինկէ տուփեր) գտել է մեծ քանակութեամբ, որոնց մասին ո՛չ մի յիշատակութիւն չկայ մատեանների մէջ. թէ ի՞նչ վայնասուն են բարձրացրել վրէժցիք, այդ դուք հասկացէք. ես ուղղակի խնդրում եւ պահանջում եմ որ հաշիւն վերահասու լինէք ամէնքդ. ախր էն անպիտան Թորգոմը իմ ժամանակ բաւական հետաքրքրւում էր փոխադրութեամբ, հիմա ինչ քաք կ'ուտի... ես այս ասում եմ վախեցած Աւարայրի դէպքից, թէ եւ այս խօսքերը կարող են վիրաւորել Մալխասի անձնականը. սա լուրջ հարց է եւ դուրս ամէնքիս անձնական վիրաւորանքից:

Աւարայր գնացող լուր-ների մասին գրւած հակասութիւնը բացատրելու է նրանով, որ Մարգպետը ձեր նամակի հիման վրայ, իբրեւ թերթեր փոխադրող էր գտել, իսկ Մալմանից նոր իմացայ իրողութիւնը եւ վերջին նամակը գրեցի, առանց առաջինը սրբագրելու, կարծելով որ կը հասկանաք. բայց սխալւած էի...

Պետրոսից, ինչպէս եւ Մալմանից լուր չունեմ: Վերջինը ուղղակի կորաւ առանց հետքի. Աւարայր չի գրել, նոյն իսկ տեղ հասնելու մասին եւ տեղի գործերի մասին, այնտեղից քայլ է Մինարէթ եւ նոյն լուրթիւնը. խոստացաւ տղաներին ճամբել (վարժապետներ եւ Դոնթօ). մինչեւ հիմա Աստուած տայ, թէ եւ մինչ [այդ] գնացող եկողներ կան: Դոնթոյին ես ո՛ւր պիտի տեսած լինեմ, քանի որ չի եկել. ես առաջնորդել եմ Պետրոսի տպաւորութիւններով. այնպէս որ ինձ ձեռնպահ սեպեցէք. իսկ Պետրոսն էլ ինձ չէր գրած. այդ հնարել է Թորգոմը (ինչո՞ւ այդտեղ լուր է) եւ տեղդ եկող Aram-ը, ուրեմն պարզ է հարցը. կ'ուղարկեմ ըստ ձեր ցանկութեան եթէ Մալմանը տեղս հասցրաւ ժամանակին:

Նիկոլը\*\* լաւ է խօսում նրա մասին. վերջինը եկաւ. նա եւ Դանիէլը\*\* երեւի տեղ հասած կը լինեն. անձամբ խօսեցէք. Կոմսը չեռ չի հասել. այսօր մի լուր առայ. Մաշտոցը նոյեմբեր 15 թւակրով կը գրէ.— բլուրեցիք եկան եւ Կուլաղաշտից. կը խօսեն որ սուրհանդակները շուտով կը գան, նրանց հետ եւ Կոմսը\*\* — որքան ճիշտ է, չգիտեմ. այսօր բզ.ն դեռ չհասաւ...

Եթէ նա գայ մտադիր եմ Աւետարանով ճամբել. առաջինը՝ այս գիծը արդէն մոռնադուռեց, Բ. Աւետարանը ապահով է եւ հանգիստ եւ Գ. անցնելով մեր կարեւոր գծով, անձամբ տեսնէ եւ մի քանի կարգադրութիւններ անէ. գարնան գայ էլ մտադիր եմ նոյն կերպ վարւելու: Հակառակ Եղւարդի ձեզ գրածներին, Տափառակը ըստ ամենայնի ազատութիւն է. ոչ միայն Աւետարանը եւ Խուփը. վերջինի աղան

իմացել է. հոգատարը մատնել է. աղան պատասխանել է. իմ ինչ գործս է. թող գան անցնեն, աշխարհը օգնում է, ես պէտք է մոլորանալ զառնամ. Սարգարը կ'ուզէ բացել. առ այժմ արգելել եմ եւ գրել որ դիմէ ձեր խորհուրդին, բայց հոգատարին բացել են. թէեւ բաների համար գործ կ'ուզեն. գրել եմ նոյն կերպով.— ծպտեալ, նամակ, թերթ եւ նման բաներ. շարունակեն մինչեւ տեսնենք տակից ինչ կ'ելնի. զարմանալի է լօ-լօ-ների այս համատարած համակրութիւնը եւ գործը դէպի գործ...

Ձիերի վիճակը ի նկատի ունենալով երկուսը փոխեցի, հոս ոչինչ չմնաց — լաւ կը լինի որ այսուհետեւ չգան, գոնէ միակ Ջաֆարը իր ընկերներով եթէ եկել է թող գայ մի ոտ. վաղը միւս օրը ուղարկեա՞ծ խող[ովակ], գատ[ւոր], կապ[սիւլ], մակագին բերեն: Ես եթէ վստահ լինեմ որ Անգործից—Անգեղտանից կարող է ապրանքները քաշել կրկնակին ու եռակին, կ'ուղարկեմ. բայց Եղևարդը մինչեւ [գէշ?] կը գրէ նրանց մասին: Այս լօ-լօ-ներուն գործ անեցէք Պարապի մօտից Իջեւան կամ Շամ. եթէ այս յաջողեցիք, այն ժամանակ այստեղ բան չեմ թողնի:

Գծերի մասին բան չեմ գրում, ձմեռը դեռ մտածելու ժամանակ ունենք. իսկ առայժմ ինչպէս ձեր, նոյնպէս եւ մեր ցանկութիւնն է բոլոր կէտերով աշխատել եւ նախապէս բոլոր կէտերում ընկերներ ունենալ: Գարեգինը 10 ամիս [?] է կոտորում են Մինարէթում...

Ես այստեղ[ից] չեմ հեռանայ մինչեւ գծերը բոլորովին չգոցեն. Ընծայրին հետս կը տանեմ եւ ինչպէս հարկաւոր է ընկեր[ական] դատ կ'անենք իրողութիւնները պարզելու համար: Հոս մի կիսատ-պռատ վարժապետ ունենք, Ղարաղաղի շրջիկ Ղազարը\*\* — խելքս բան չի կտրում եւ գարնան էլ փախչելիս նպատակ ունի. նրան գործերին չեմ ծանօթացնելու. միայն նամակներ կը գրէ եւ եղած թերթերը կ'ուղարկի. մնացածը կ'անի Թոմասը կամ Չուլումաթը\*\*, որը հաւանօրէն հոս կը մնայ. այդպէս է բարեհաճում Վրէժը. գրել են ինձ որ միջնորդեմ ձեզ ընդունէք ներս. տեսէք լրբութիւնը...

Այդ անպիտան Թորգոմը նրանց խօսք է տւել, որ կը մեղմի ձեր կարծիքները եւ ներս կ'ընդունէք. կարծեմ ձեզ էլ կը գրեն. պարզ երեւում է իրենց սխալը կ'ուզեն երկսով մաքրել. ա՛խ, կատաղութիւնս է գալիս. Աստուածներդ սիրէք, որ գրելու լինեն, մի լաւ կոթէք եւ ասէք որ երկրի խօսքը մէկ է, որ մենք երեսաներ չենք, որ օրեկան մի որոշում անենք եւ փոշմանենք: Նրանց պատասխանը ես եւ Մալխասն ենք գրել, այն էլ կնքած. կարծես խաղ էր...

Ձիւնը բոլորովին անցաւ. կատարեալ գարնանային եղանակներ են անում. միայն ինչպէս պատմում են սահմանները ձիւն է: Սրանք էլ վերադարձին մտել են քուրդ-ն\*\* քանդ. Մուլթանը\*\* վան ընդունելութիւն է արել. Ջաֆարն էլ գնացել է. բայց չգիտեմ որքան վստահելի է, մեզ լուր է ճամբել, թէ գիտեմ որ ձերոնք այստեղով կ'անցնեն, թող գան իմ տունը հանգստանան ու գնան: Յամենայն դէպս Աւարայր մեկնելուց մտադիր եմ այդտեղով գնալ. տեսնենք ինչ կը լինի. շատ յարմար կէտ է մեզ համար:

Տեղեկագիրը կազմել եմ. մօտ 50 երես գրել եմ. հազիւ 10 երես մնաց. հետեւեալ գլուխներն են մնացել. Ա. Մեր հակառակորդները (հարուստներ եւ վաշխառուներ, պահպանողականներ ի դէմս Արմենականների) եւ նրանց իտիլոգիան ու մեր վերաբերմամբ բռնած դիրքերնին: Բ. Յեղ. ազդեցութիւնը լեզալ հիմնարկութիւնների վրայ. Գ. Կազմակերպութեան տեղական պիւտոժէն. Դ. Արտասահմանեան յարաբերութիւն (Բիւրոներ, Վրէժի կէտեր, Սարուստանի կէտեր, Ամերիկա եւ այլն),

դրամի փոխադրութիւն: Ե. եւ վերջին կէտ. Գործելու ընդհանուր ուղղութիւն կամ տաքտիկ — մեր ընդգծած քաղաքականութիւնը խաղաղ ժամանան[ակ]ի գործունէութեան մասին. ներսի եւ դրսի դիրք — յարաբերութիւն: Մնացած մասերը բաւական խնամքով պատրաստել եմ, մանաւանդ գաւառը — կարմիր թելով անց եմ կացրել բոլոր կէտերի մէջ, որ ներսի շարժումը դեմոկրատիկ է աշխատաւորների աջակցութեամբ. ձեր վերջին նամակը արդէն ուշացած էր... եւ մի տեսակ հակասական բան դուրս կը գայ. ամէն մարդ այն տպաւորութիւնը կը ստանայ, որ իրարից բեխապար նոյն բաները կրկնել ենք. իսկ ես իմ տեղեկագրիս այն ձեւն էի տւել, որ բոլորիդ զգացմունքների թարգման լինի. մանաւանդ այնպէս լինի, որ չիմանան ես եմ կազմել այն էլ դուրսը: Գոնէ շեշտէիք, թէ մանրամասները եւ փաստերը տեղեկագրով: Ինչ եւ է կ'ուղարկեմ: Տեղեկագրի սեւը կ'ուղարկեմ ձեզ Մինարէթից:

Տեղեկագրի համար հարկաւոր են, Յարութիւնի շրջանի մի քանի գիւղերի ստատիստիկան, քաղաքի շրջանի պակաս մնացած գիւղերի ստատիստիկան, Բագոս, Զրաղաց, Սֆինկս, Սասունիկ, Ապառաժ<sup>2</sup>: Քաղաքային խմբերի տարեկան պիւտոժէն, նրանց վերջին թիւը: Կազմակերպութեան նախկին տարւայ (1904 եւ 1905 թւերի) ծայրերի քանակը, այս մասին բան չկար: Յետոյ խնդրել էի եւ մի քանի կնքած, այս նամակի թղթի Փորմատով թղթեր: Դեղերը ուզել եմ կիրճեցի Գրիգորի հետ, որ ուղղակի եկաւ հոդ. երկրորդ անգամ Զաֆարի եւ առաջին անգամ Aram-ին մէջքի եարի<sup>3</sup> դեղ կ'ուզեմ — Մնօ-ի\*\* մօտ կար կարմիր դեղ. կօրաքով կը լուծեն եւ կը քսէր... է՛հ, մեռանք գրելուց...

Զիաները լաւ չէք ինամուս կամ պահպանում. երկար ճամբու գնացողները տեղական բաների մի գործադրէք, վէրքոտները հոս մի ուղարկէք. այստեղ պահելու միջոց չկայ. ուզենք չուզենք վէրքոտները կը բանացնենք, նորերը չլինելու համար:

Սրանց ն[որ] ծայր խոստացանք բայց չտւինք. պէտք է 50-ի չափ Նիկոլը տար, դուք տւէք:

Կը ստանաք բազմաթիւ նամակներ, անձնական ու սիմպատիական. արդէն սուրհանդակները կաւալրեսկի<sup>4</sup> նամակներ բերել տանելու համար կը գան կ'երթան...

Թերթեր մեծ քանակութեամբ ուղարկել եմ Աւետարանով, սրանց հետ դրի եղած մէկ մէկ N N-ը 26-31ը. նորերը Աստուած տայ :

Կարծեմ մեզ համար ստացւած է 40-50 հատ, միայն Արտազ եւ Բլուր<sup>5</sup> 5ական օրինակ են ուղարկում պարոնները... դուք էլ դուրսը կը գրէք թէ թերթ հասցրէք, խեղճերը ի՛նչ անեն, ձուկը այստեղից է հոտած:

Եղւարդի ինձ գրած նամակը, տարւայ վերջը կ'ուղարկեմ ձեզ հաշիւների արագութեան համար: Ես եւս բացարձակ կերպով չէի կասկածում, այլ ասում էի հետեւեցէք բան չելնի...

Այս եւ այն կողմից ասում են որ ձեզ կոթեր ենք նւիրել, չգիտենք թէ որն է կամ ո՞ւր. աւելի լաւ չէր լինի, Թորգոմը իր ձեռք բերածների N N-ը ստուգէր, որ հասկա[նա]լինք դուրս ի՛նչ է մնացել եւ ո՞վ է տւել, ըստ այնմ ստացազիր տանք:

Յետոյ չիմացանք թէ Թորգոմի հաւաքած կոթերից եւ ռետլվեր-ներից\*\* քանիսն է դուրս մնացել. այնքանը իմացէք, որ հոս էլ տասնոց չկայ, բացի այս մէկից որ ուղարկեցի: Նոր կոթ հոս կայ սաղլամ, իսկա[կա]ն, ընդամէնը 4 հատ, իսկ զերմանակամ մաուզեր\*\* մէկ հատ, որ սրանց հետ ճամբեցի. վերոյիշեալ 4 կոթը կը քանդեմ եւ Աւետարանով կը ճամբեմ մաս-մաս: Ապրանքներ այսուհետեւ միշտ կը լինի գոնէ հոս. դատարկ մնալ անկարելի է, որովհետեւ Աւարայր կայ եւ բերել կը



տամ. վաղը կը գայ 15 եզան բեռ, իսկ Բլուերից դեռ անյայտ է:

Աւետարանի կարդացւորին կոթ տալը ուղղակի կատարեցրեց ինձ. եթէ Սաֆոն<sup>6</sup> իմանայ, պէտք է իսկապէս վիրաւորուի նա ինձնից եւ Վարդանից. մի հատ իրեն համար խնդրեց եւ մենք էլ խոստացանք եւ մինչեւ այժմ չուիք, իսկ իր ծառային իսկոյն:

Եթէ առաջին ո՛չ կարեւոր կոնպրոմիսը արւած է, կը խնդրէի թոյլ տայիք որ մենք էլ մեր խոստումը կատարենք, որովհետեւ նրա վրայ լաւ կ'ազդի, մանաւանդ եթէ չտաք, շատ գէշ կը լինի: Վերջին անգամ արդէն Սմբատին եւ Լօրիսին քաղաքավարի կերպով առաջարկել է:

Այս Նուրո-ն\*\* մի ինչ որ է մոսին առնելու խնդիր է կատարել. եթէ ծախու կայ, մէկը տէք իրեն, իր դրամով, դրա գնով մենք իսկականը կ'առնենք:

Չալիլը<sup>7</sup> ձեզ ուղղակի խաբել է, նոյն կերպ անցեալ տարի կերաւ եւ 3 ձի. բաւական է նրա արած լրբութիւնը. ուղղակի մարդ ուղարկեցէք Կայքէկի [?] մօտ. Ս. Գէորգը լաւ է, թող ձմեռը հոն էլ գնայ:

Նամակներին թւակիր դրէք, մանաւանդ գրեցէք ձեր ստացած նամակների թւակիրները, որպէսզի մենք իմանանք ինչ է մնացել ճանապարհին, չէ՞ որ մենք գիտենք թէ որ թւով ինչ ենք ուղարկել:

Ես դրսից խաբար չունեմ. Ընդ. Ժող[ովր] երբ եւ ո՞ր է լինելու: Եթէ ժամանակ լինէր տեղեկագիրը ձեզ ուղարկէի, կարդայիք, լրացնէիք եւ ապա ուղարկէիք լաւ կը լինէր, պատասխանատու բան... Թէեւ աշխատել եմ այն հայեացքները անցկացնել ինչ որ ժողովներով վճռել ենք: Ընդ. խնդիրների մասին չեմ գրել. սա ուղղակի կազմակերպական եւ միամեայ գործունէութեան տեղեկագիր է. իսկ դրւած հարցերի պատասխանը արդէն մեր արձանագրութիւններն են, ամէն հարցի [մասին] խօսելու սկզբին, մարմնի ի կորպորէ<sup>8</sup> յայտնած կարծիքը: Կը կարդանք, ապա մանրամասն կը խօսենք, ի հարկէ շեշտւած մտտիւներով: Ինչպէս տեսնում էք առաջին տեղը մերն է, հետաքրքիր է իմանալ Պետրոսը ժամանակ ունեցե՞լ է տեղեկագիր պատրաստելու. իսկապէս գրաւորը լաւ է. բերանացի ամփոփ բան դժւար թէ կարողանանք ասել, մեր այս գլխով եւ խելքով:

Է՛հ շատ երկարեց. դուք անուշ. խերտա\*\* տեւորը չյայտա[րա]րեմ Դրօշակի մէջ: Մեր 1905 թւի տեղական նէշնների ցուցակը չտպեց. երեւի կորել է. այս տարւան հետ միասին գրեցէք ուղարկեցէք. այս չմոռանաք. շատ անգամ բողոքեր եմ:

Բարեկներով՝ ԱՐԱՄ

1906 թ. նոյեմբեր 19, Մենաւոր

- 1.- Յաջորդաբար՝ Խոյ, Մալմաստ, Ս. Թաղէ, Իգտիր, Կաղզուան, Ուրմիա:
- 2.- Յաջորդաբար՝ Բագոս – ծածկանուն Շահրալի գիւղի, Ջրաղաց՝ Մղկա գիւղի, Սֆինկս՝ Լեզքի, Մասունիկ՝ Շուշանցի, Ապառաժ՝ Կողպանցի:
- 3.- Վէրքի:
- 4.- Ասպետական:
- 5.- Արտագ – ծածկանուն Մակո քաղաքի. Բլուր – ծածկանուն Քիշմիշթեփէ գիւղի, Ս. Թաղէի վանքին մերձակայքը, Ատրպատական:
- 6.- Մաֆօ – կեղծանուն հայտարանցի քիւրտ ցեղապետ Մեհմէտ բէկի, բարեկամ եւ գործակից հայ յեղափոխականներուն: Վարդանը՝ Վարդան Շահպազ (Տօնիկեան):
- 7.- Չալիկ – Վան-Կաղզուան գծի վրայ երթեւեկող սուրհանդակ:
- 8.- In corpore՝ լատիներէն ասացուածք, ամբողջ կազմով յայտնուած կարծիք իմաստով:

**Սիրելի Մարգարե!**

Երէկ երեկոյեան Բլուրէն լուր առայ որ Կոմսը եկել է Աւարայր<sup>1</sup> հոս գալու:

Կը զարմանամ որ Զաֆարի ներկայութիւնից չօգտւեցին նրան հոս ուղարկելու, կամ գոնէ նամակով ինձ լուր տալու, որ մարդ ճամբեմ բերելու: Ինչ եւ է. այսօր ուղարկում եմ Շապոյին եւ Մկրտչին. հին գինւորներից ո՛չ մէկը հոս չէր: Աւելի ձի էլ չկարողացայ ուղարկել, որովհետեւ բոլորն էլ՝ <sup>3</sup> ձի գնաց ապրանք բերելու: Մի կերպ եօլայ գնացէք:

Լսեցի որ նրա հետ կան եւ երկու ընկերներ, մէկը Շամեցի եւ մէկը մեր գինւոր Մուռը: Այսքանը իմացէք, որ ուղղակի ձիով գնալ անհնարին է, միայն պէտք է ձիով գնան մինչեւ սահմանի կէսը եւ այն կողմը ոտով, կամ Կիրճ կամ Աւետարան, նայած թէ որ տեղի սուրհանդակները կը գան: Կարող է պատահել որ ցերեկով էլ երթան, այնպէս որ թող այդ բոլորը ի նկատի ունենան ապա գան: Յետոյ Մուր մասին չգիտեմ ի՞նչ կարգադրութիւն կայ. միթէ՞ նա էլ պիտի երթայ: Սրա մասին երկրի ընկերները համաձայն չեն, այդ ի նկատի պիտի ունենայ Կոմսը:

Շամեցին պիտի ստիպւի քայել, թերեւս կարողանայ Աւետարանէն այն կողմը ազատ երթալ, հոն մենք երկու ձի ունենք պատրաստ, կարող ենք օգտւել:

Զաֆարը կարող է աւել պակաս խօսել. պէտք է ի նկատի ունենալ որ նեղութիւններով կ'երթան, բայց ապահովութիւնը երաշխաւորել ենք:

Չլինի թէ Զաֆարին էլ բերի իր հետ Կոմսը. նրա ներկայութիւնը բացի աղմուկից ո՛չ մի օգուտ չի տայ, այնպէս որ թողէք նրան իր տեղը:

Կոմսը կարող է գալ եւ ցերեկը որեւէ պատրւակով. ես սուրհանդակներին կ'արգելեմ (եթէ այս գիշեր գալու լինեն) մինչեւ կիրակի երեկոյեան, այնպէս որ շտապեցրէք:

Կոմսին չեմ գրում որովհետեւ ճիշտ համոզւած չեմ նրա հոտ լինելուն: Ես նրան եմ սպասում, գործերս վերջացած են: Եթէ հող ապրանքներ կան, թեթեւ-թեթեւ կը դնէք թարքերը<sup>2</sup>: Հոս ապրանքներ շատ կան, այնպէս որ ձիաները թող հանգիստ մնան:

Մեզ համար ուղարկեցէք կարելու եւ կապելու թելեր: Հազար անգամ գրեցինք, բայց ամէն անգամ 30 չափու կ'առնէք:

Պարտքերի մէջ խեղդուում եմ. 50 թումանից աւելի պարտք կայ: 30 ծպտեալների ուղարկեցին, որոնցից ամէն մէկի վրայ 2-3 թուման ծախս կայ: Իշխանի գրել եմ դրամ հասցնէ. եթէ կայ մի քիչ (գոնէ 50 թուման) ճամբեցէք:

Չեմ երկարացնում. երեւի Կոմսին ճամբու դնելուց յետոյ կը գամ, ամէն բան անձամբ կը խօսենք:

**Բարեկներով՝ ԱՐԱՄ**

1906 թ. դեկտ. 1-ին

1.- Բլուր – ծածկանուն Քիշմիշթեփե գիւղի, Ս. Թադէի մերձակայքը: Աւարայր – ծածկանուն Խոյ քաղաքի: Աւետարան – ծածկանուն Խաչան գիւղի:  
2.- Թարք – ձիու գաւակ:

[Վանի ընկերներին]

Սիրելիք!

Ճիշտ 8 օր առաջ ձեզ գրել եմ կիրճեցոց հետ. չգիտեմ այդ նամակը առել էք թէ ոչ: Այսօր մի քանի գաղթականներ են գալիս Անկիւն<sup>1</sup> գիւղացի, հանգամանքից օգտուում եմ մի քանի տող գրելու: Շատ նորութիւններ չկան: Կոմսը\*\* դեռ չեկաւ. հիմա էլ լուր կայ թէ գնացել է Աւարայր. ձիաւորներ ուղարկեցի որ բերեն. 4 օր է գնացել են, դեռ չեկան. երեւի կամ չի անցել, կամ Վրէժ է մտել: Վերջապէս նրա գալուց բան չհասկացայ:

Աւետարանցիք մի ամիս է ինչ չեն գալիս. չիմացայ թէ ինչ է պատահել. Կոմս-ի\*\* հետ ինչ եկել են այն է: Չլինի թէ մի բան է պատահել:

Հոս բան ապրանքներ եկաւ. Բլուրի<sup>2</sup> II պարտիան եկաւ, դոցա մեծ մասը պարկուճ\*\* էր. 10-12 հազար\* այնպէս որ սրանց հետ հոս հաշուելու էք 40 հազար\* ծայր, 5 N 1 եւ 2 N 4 կոթեր: Թէ Աւարայր նոր ապրանքներ է եկել լուր չունեմ: Չմոռանամ ի գիտութիւն յայտնել եւ այն որ եղած ծայրերից 9 հազար-ը N 11-ի են:

Ես մնացի հոս. չգիտեմ ի՞նչ անել. ո՛չ մի կողմից հարցնող ու փնտոող չեղաւ: Կը սպասեմ Աւարայր գնացողների գալուն եւ Աւետարանից գոնէ մի անգամ սուրհանդակի, որպէսզի վերջին տեղեկութիւնները առնելով կարգադրութիւններ անեմ ու հեռանամ:

Երկու ձի էլ Կոմսն է ուղարկել Կուլադաշտէն, խեղճը կարծում է որ այսուհետեւ ձիով պիտի կարողանայ անցնել:

Ձաֆարը գնացել է Մինարէթ. լսեցի որ Կոմս-ի\*\* հետ է եւ մեր գինւոր Մուռը. ինչո՞ւ է հետը վերցրել ինձ անյայտ է:

III խումբ ծպտեալներից էլ լուր չեկաւ. այս երկու խումբը մեզ խայտառակեց: Դրամի կատարեալ կրիզիս է: Ահագին պարտքեր եմ արել: Պետրոսից<sup>3</sup> եւ ոչ մի լուր. միայն բերանացի լսեցի որ Արարատ է կամ Մրգաստան կամ Ջհանգամը<sup>4</sup>:

Մալմանի գոյութիւնը իսկ կասկածելի է դառել ինձ համար. այստեղից հեռանալուց յետոյ եւ ոչ մի խօսք կամ լուր չկայ... էլ բան չկայ գրելու: Նոր թերթեր չկան:

Թերթերի մասին հետեւեալ եզրակացութեան եմ եկել. առանց Մինարէթ ուղարկելու եւ այնտեղից հոս քաշելու, ուղղակի 15 օրինակ ստանալ Կուլադաշտ, այնտեղից Բլուր, իսկ Բլուրից ուղղակի եզրիցներ-ով\*\* Անգործ<sup>5</sup>, Պարապին, կամ ցատկելով Աւետարան: Այս կերպ թերեւս կարելի լինի շուտ եւ կանոնաւոր կերպով թերթ հասցնել: Մալխասը մի ժամանակ եւ ես կարծում էինք, որ թերթերը այս գծով ուղարկելը, սրա համար ծանրաբեռնութիւն է. այդ չափազանցութիւն է գոնէ այստեղից Աւետարանի համար:

Ամէն եկող առանց ծանրանալու մի կամ երկու կապոց բերում է եւ դեռ մի կողմն են թողնում պատեհ առիթներ, գաղթականների գալ, հոս ապրանքներ չլինելու եւ այլն: Ուրեմն մենք մշտական կարող ենք եւ թերթ ուղարկել այս տեղով:

Մնում է ձեր կարծիքը իմանալը. կարծեմ Աւետարանից դէն էլ մեծ դժւարութիւն չի լինի. գոնէ ձմեռը կը փորձենք, քանի որ ուրիշ տեղերից ըստ երեւոյթին չէք յաջողել կանոնաւոր սուրհանդակ ունենալ: Ժամանակին գրել եմ որ մեր լօ-լօ Ալօն\*\* առնելիք ունի 12 մէծիթ դրամ իջեւան եւ Եղեգնուտ. այդ դրամի դիմաց ես հոս 168 դահեկան արդէն վճարել եմ. դուք հոս գանձեցէք որ հոս մնացածներն էլ տանք իրեն. ինեղձ է, մեր մարդն է, այդ գիտէ եւ Շաւարշը, Եղարարի եւ Լօրիսի ապրուստի դրամը «եղբայրների» տունը Աւետարան, պէտք է վճարել 4-5 օսմանեան ոսկի:

Անցեալ անգամ Նուրօ-ի\*\* հետ սխալմամբ իսօ մի N 2 կոթի զատվոր\*\* չի՞ եկել. խուրջինի մէջ պէտք է մնացած լինի: Դա կիրճեցի Խոսրով-ի\*\* կոթինն է, իսկ վրայինը այս ուղարկած նոր կոթերից մէկն է. եթէ եկել է փոխեցէք, կամ ուղարկեցէք նոր – աւելի լաւ Աւետարան – մենք փոխենք:

Նոյեմբեր ամսւայ հաշուէկշիւր չմոռանաք ուղարկել ինչպէս եւ իմ պահանջները. դրանք առանձին կապոցով ուղարկեցէք հոս Կուսակաշտով<sup>6</sup> ինձ (Բլուրի – Մաշտոց – ուղարկել Արամին):

Ընձայրը Թորգոմին 3 ոսկի տւեց իրենց տուն ուղարկելու, ի՞նչ եղաւ. ինչու լուր չէք տալիս մարդուն:

Վեց-7 խուրջին մնացել է Աւետարան, Կիրճ եւ Խուրճ, այդ ի նկատի ունեցէք:

Հակառակ իմ բոլոր պահանջներին, մինչեւ հիմա Վրէժի Կ. Կ.ին չուղարկեցիք իրենց ուղարկած դրամի մանրամասն հաշիւները. դրա մաքրելը մնաց ձեզ վրայ: Ի՞նչ որ է վարանդիլ հրացան էին գնել, նրա անունը լսեցինք, իրեն չտեսանք:

Այս 5 գաղթականները մեզ մօտ ձգեցին 2 ոսկի որպէսզի Աւետարան վճարենք, եթէ որեւէ թիւրիմացութեամբ չտրուի, դուք վճարեցէք:

Իսկ Տիգրան-ը\*\* Մաղկոտնի<sup>7</sup> տղաներից է. Ժորժ-ի\*\* հետ գնացել էին Տաք-Աղբիւրի<sup>8</sup> գիծը բանալու (մի տարւայ յանձնարարութիւն էր). ձիւնի պատճառով այս կողմից եկան: Իբր թէ մի բրաունինգ ատրճանակ է թողել Պետրոսին. Պետրոսը գրել է Կուսակաշտ Գալուստին որ տայ. իսկ վերջինը ինձ է յանձնարարել, իբր թէ հոս լեցած է. ես էլ ձեզ եմ գրում, կամ տւէք, կամ կ'ուղարկենք:

Դեկտ. 5-ին 6 գաղթականների հետ:

- |   |                               |
|---|-------------------------------|
| N 1 Զ[ատուոր] կ. մ.   | N 2 Զ. կ.*                    |
| Ա. տոպրակի 2-ական   | Զ. տոպրակ 6-ական              |
| Բ. տոպրակի 2-ական   | Է. տոպրակ 3-ական եւ 3 կարոպկա |
| Գ. տոպրակի 2-ական   | Ը. տոպրակ 4-ական              |
| Դ. տոպրակի 2-ական   |                               |
| Ե. տոպրակի 1-ական + 1 Զ. եւ կ. սրա մէջ եւ N 2-ի Զ. կ. 2-ական. |                               |

Ընդամէնը N 1-ի Զ. կ. մ.- 9 հատ եւ Զ. կ. մէկ հատ.  
N. 2-ի Զ. կ. – 15-ական իսկ սաղա կարոպկա 3 հատ:  
Ութ կնքւած տոպրակների մէջ:

**Այս պարիայից առաջ կիրճեցոց հետ ուղարկւած է:**

**N 11-ի ծայր S-ի**

**4 տոպրակ 500=2000**

**16 տոպրակ N 1 Ձ. կ. մ. = 32-ական**

**ԱՐԱՄ**

**(\*)- Մանօթ.— N 2-ի գ[ատուր]ը եղել 17 հատ, իսկ միայն կարողական 3 հատ. այս թւերով Ձ. գ. կ. պակասում է, նայելու է տոպրակների մէջ, գուցէ շատ դրւած լինի սխալմամբ:**

**ՆՈՅՆ**

- 1.- Անկին – ծածկանուն Աւերակի գիւղի, Վան-Sոսպ գաւառակ:
- 2.- Բլուր – ծածկանուն Քիշմիշթեփէ գիւղի, Մակուի գաւառ, Ատրպատական:
- 3.- Չինագործ Պետրոս (Տէր Յովհաննիսեան Բագրատ):
- 4.- Դժոխք, անդունդ: Արարատը ծածկանունն է Իգտիրի, Մրգաստանը՝ Երեւանի:
- 5.- Անգործ – ծածկանուն Բերկրի գաւառակի մէկ գիւղին:
- 6.- Կռուադաշտ – ծածկանուն Ատրպատականի մէկ գիւղին, Բլուր – Քիշմիշթեփէ գիւղի մտակայքը:
- 7.- Ծաղկոտն – ծածկանուն Արճէշ աւանի:
- 8.- Տաք-Աղբիւր – ծածկանուն Տիատինի Միրզաջան գիւղի, Պայազիտ գաւառ:

«Դրօշակի» խմբագրութեան

Ընկերներ!

Շամիրի (Վասպուրականի) ընկերներից Սալման<sup>1</sup> (Համագասպ Մանուկեան<sup>1</sup>), թոքախտով հիւանդ պառկած է Տիրոյի Արգօ քաղաքում (կամ գիւղաքաղաք), հիւանդութիւնը ծանր է, այնպէս որ կարող է մեռնել:

Վերջին պարագայում Սանատորիայից պիտի «խմբագրութեան» հեռագրեն. ինչպէս որ հարկաւոր կարգադրութիւնները եւ ծախսերը արէք:

Նրան տւել եմ 1000 Ֆրանկից աւելի դրամ. իսկ ինչպէս որ ինչպէս որ յանձնել եմ 1200 Ֆրանկ. եթէ երկար տեւելու լինի եւ դրամ պահանջի, բարի եղէք այդ գումարը փոխադրել: Իսկ եթէ աւելի դրամ պահանջի՝ տւէք եւ գրեցէք մեր հաշիւին:

Այս մասին բերանացի խօսել եմ ինչպէս որ ինչպէս որ:

Ես մի քանի օրէն կը ճանապարհուիմ դէպի Շամ<sup>3</sup>, ինչպէս որ եմ մեզ համար «Դրօշակի» գէթ եղած բոլոր N N-ները կազմել տւէք եւ ուղարկեցէք Միներթի, վրան գրելով Շամիրի համար. այս չմոռանաք, քանի անգամ երկրից գրել ենք, բայց չէք կատարել:

Ինչպէս որ եմ ձեր գծերով շարունակէք նամակներ գրել. Կովկասից գծերը վտանգւել են, գրել չի կարելի առայժմ:

Այս հասցէով ուղարկեցէք մի-մի օրինակ «Դրօշակ» երկրի համար, նամակի – ծրարով – համար:

Italia Dr. V. Sbardone, Napolie  
Landela (Avillino) Lervinara.

Վանի համար իբրեւ նամակի հասցէ ի նկատի ունեցէք հետեւեալ հասցէներ:

Rev. Dr. J. Raynolds. American Missionary at Van. Հաճեցէք տալ Միրավի Չատորի վրայ այլի Գայանէ Մկրտիչեանին:

Վան «Շան փողան» (փողոցի անուն. սա կարող էք գրել հայերէն. անուն ազգանունն էլ գրեցէք հայերէն. Ֆրանսերէնից յետոյ) տիկ. Սրբուհի Դաւիթեանին, կամ

1.- Նոյն Բաղէշցեան Համագասպն է, Վասպուրականի պատգամաւորներէն մէկը Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդի. ժողովին, որ սակայն ծանրօրէն թոքախտ բռնուած՝ փոխադրուած էր բուժարան: Քիչ անց պիտի մեռնէր ժընեի մէջ: Բաղձանք յայտնած էր իր ձայնը տալ Արամին կամ Իշխանին: Մանուկեան՝ ծածկանուններէն մէկն էր Բաղէշցեանի:  
2.- Խաչատուր Մալումեան, անդամ Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյի, ծանօթ Է. Ալմուցի ծածկանունով:  
3.- Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդի. ժողովի վերջին օրերն են, եւ Արամ Մանուկեան կը պատրաստուի վերադառնալ Վան:  
4.- Կոր-Դար – Վանի թաղամասերէն:

Վան – Կլոր-դար<sup>4</sup>, Ջաքարիա Յակոբեանին, կամ Խերանի փողան, Մաթէոս Մարգարեանին եւ կամ Չավուշ բաշու վրայ, Մարտիրոս Սողոմոնեան:

Սրանք վերջին նամակներն են որ ուղարկում եմ ձեզ:

Առայժմ այսքանը:

Ընկերական բարեկենդիվ  
ԱՐԱՄ

1907 թ. ապրիլ 10ի

Վիեննա

Յ. Գ.— Երկրից եկած վերջին նամակները ուղարկում եմ ձեզ, տեղեկութիւններից կարող էք օգտւել:

ՆՈՅՆ

Փաստ. 17-202

## 259

Սիրելի Սալման!

Նամակդ առայ, ինչպէս եւ Գարեգինը<sup>1</sup>. անմիջապէս չպատասխանեցի հիւանդութեանս պատճառով. գործերը նախկին վիճակով գնում են. քսան օր է զբաղւած ենք կազմակերպական կանոններով<sup>2</sup>:

Երկրից քանի օր է նամակ չկայ. կարծեմ կուսակալի հետ լաւ եօլայ չեն գնում:

Ինձ հեռագրով Կովկասից կանչել են. գծերը բացւել է, բայց մարդ չկայ. Սամսոնը<sup>3</sup> եկել է Կովկաս: Տղաները նամակները (իմ գրած) չեն ստանում, երեւի հասցէն նորէն վտանգւել է:

Գարեգինին չպիտի կարողանամ շուտով գրել. սոսկալի զբաղւած եմ. շուէցարական մի քանի սանատորիայի հասցէներ է[ի]ր ուզել. Համոյից եւ Մալումեանից<sup>4</sup> հարցնելով, նամակիս վերջը կը դնեմ. չեմ գիտեր ի՞նչ պիտի անէք: Դուրս գալու մասին կամ կը գրեմ կամ կը հեռագրեմ: Ամէնքը բարեւում են քեզ. Ռուբինան, Համոն, Արշակը, Ռոստոմը<sup>5</sup>:

Գարեգինին բարեկենդիս եւ համբոյրներս:

Համբոյրներով  
ԱՐԱՄ

1907 ապրիլ 20ին

1.- Գարեգին Բաղէշեան (1867-1937) – երէց եղբայրը Համազասպի (Սալման):

2.- Խօսքը կը վերաբերի Ընդի. ժողովի պարապմունքներուն:

3.- Սամսոն – ծածկանուն Թադէոսեան Ստեփանի:

4.- Համօ Օհանջանեան եւ Խաչատուր Մալումեան (Ակնունի):

5.- Յաջորդաբար՝ Արէշեան Սոֆի, Օհանջանեան Համազասպ, Չամալեան Արշակ եւ Զօրեան Ստեփան:

## Դ.– ՎԵՐԱԴԱՐՁ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

1907 թ. Մայիսի սկիզբը, Հ.Յ.Գ. 4րդ Ընդհ. ժողովի աւարտին, Արամ Մանուկեան Վիեննայէն մեկնեցաւ Թիֆլիս եւ Յունիսի սկիզբը վերադարձաւ Վան, շուրջ 8 ամիսներու բացակայութենէ ետք:

Վ. Փափագեանի, Ս. Բարսեղեանի եւ միւս ընկերներու հետ հազիւ ձեռնարկած Ընդհ. ժողովի որոշումներու հետետողութեամբ թափ տալ կազմակերպական աշխատանքներուն,– երիտասարդութեան (նոր սերունդ) գաղափարական կազմաւորում, արհեստակցական եւ գիւղացիական միութիւններու հիմնում, թուրք ազատական տարրերու հետ գործակցութիւն տւայլն,– երբ 1908 թ. Յունուար 23ին պատահեցաւ անակնկալ դէպք մը, որ ահ ու սարսափի մատնեց Վան-Վասպուրականի հայութիւնը: Այդ դաւաճանութիւնն էր դաշնակցական գործիչներէն Դեբեդի Դաւիթի. այս վերջինը տեղեակ ըլլալով Վանի կուսակցական զինապահեստներու թաքստոցներու մէկ որոշ մասին, մատնած էր զանոնք թուրք իշխանութիւններուն: Առաջին առթիւ գրաւուած էին շուրջ 300 հրացան, 600.000 փամփուշտ, մեծաքանակ ուժանակ եւ այլ ռազմամթերք: Նոր պահեստներ երեւան հանելու դիտաւորութեամբ տեղի ունեցան նորանոր ձերբակալութիւններ եւ խուզարկութիւններ, մինչ Կարինէն բերուած բանակային ուժեր շրջափակման կ'ենթարկէին քաղաքը, համատարած կոտորածներու սարսափը տարածելով քաղաքացիներուն մէջ\*:

Այս պայմաններուն մէջ, ահուդողի մատնուած Վանի հայութեան մէջ պիտի չպակսէին նաեւ մատնիչներ ու թուրք կառավարութեան հետ գործակցողներ: Եւ սակայն, հակառակ ամէն կարգի խտտութեանց, դաշնակցական ղեկավարութիւնն ու երիտասարդութիւնը ցոյց պիտի տային յեղափոխական արտակարգ կորով ու գործունէութիւն: Թռուցիկ խումբերը անընդհատ շարժման մէջ էին հայկական թաղերուն մէջ. չբացայայտուած շատ մը պահեստներ տեղափոխուեցան ապահով վայրեր. հսկողութեան տակ առնուեցան ոստիկանական գործակալներու շարժումները, ահաբեկուեցաւ խիստ հսկողութեան տակ գտնուող դաւաճան մատնիչը եւ, ամէնէն կարեւորը, կառավարութիւնն ու բանակը զգուշացուեցաւ ծայրայեղ միջոցներու դիմելու փորձութենէն:

Ճգնաժամային այդ օրերուն, կ'որոշուի աչքի զարնող եւ վտանգուած ընկերները հեռացնել քաղաքէն: Երոպացի հիւպատոսներն ալ այդպիսի խորհուրդ կու տային ընդհանուր կոտորածի վտանգը հեռացնելու համար շրջանէն: Մայիս ամսուն, աչքացաւ տառապող եւ ծանր յոգացաւ բռնուած Արամ Մանուկեանը խումբ մը ընկերներով կ'իջեցնեն Վանի ստորերկրեայ ջրհորները: Մատնութեան հետեւանքով թաքստոցը կը յայտնաբերուի եւ Արամ ու ընկերներէն մէկ քանին, որոնց շարքին դաւաճան Դաւիթը ահաբեկման ենթարկած Տաճատ (Թերլեմէզեան) կը կալանաւորուին ու բանտ կը տարուին: Գեկավարներու ուրիշ խումբ մը, Կոմսի եւ Շամիլի զլխաւորութեամբ, կը յաջողին ճեղքել քաղաքը շրջափակող



զինուորական շրջան ու անցնիլ Լեռնապար, Իշխանի տիրակալութեան ապահով շրջանը\*\*:

Վանի մէջ տիրող տագնապալի այդ դրութիւնը, որու ընթացքին կեանքը կանգ առած էր քաղաքին մէջ, շուկան փակ էր բանտերը լեցուած հարիւրատըր կալանատըրներով, պիտի շարունակուէր վեց ամիս, մինչեւ 1908 թ. Յուլիսին հռչակուած Օսմանեան սահմանադրութիւնը: Օգոստոս 4ին Արամ էր միւս բանտարկեալները, շուրջ 250 հոգի, ազատ արձակուելով ցնծութեամբ պիտի ընդունուէին թէ՛ ժողովուրդին էր թէ կառավարական շրջանակներուն կողմէ: Այսուհանդերձ, սահմանադրութեան առաջ բերած խանդավառութիւնը, ինչպէս զիտենք, տեղի պիտի տար շուտով մեծ հիասթափութեան: Ահա թէ ի՛նչ կը գրէ Արամ ամիս մը ետք Պոլսոյ կեդրոնին ուղղած նամակին մէջ. «Գաւառներում փառահեղ խանդավառութեան յաջորդեց սեւ ռեակցիան. ժողովուրդի յոյսերը ի դերեւ են ելնում. ոեւէ գործնական փոփոխութիւն չտեսնելով հանդերձ, նկատուում է սեւ ուժերի յաղթանակը էր այս ու այն պաշտօնների մէջ հաստատուելը»: Այս պայմաններուն մէջ Արամ ատեն մը էր մնաց Վան: Տակաւին բազմաթիւ հարցեր կային լուծման կարօտ, մտաւարտ երեսփոխանական ընտրութիւններուն հայոց մասնակցութիւնը, քիւրտերու կողմէ բռնագրաւուած հայապատկան հողերու վերադարձը, տեղահանուած էր Կովկաս ապաստանած գաղթական հայերու վերադարձը հայրենի օճախ էր այլն: Այս բոլորի մասին Արամ Մանուկեան անընդհատ պիտի գրէր Հ.Յ.Դ. Պոլսոյ Պատ. մարմնին, պահաջելով այդ խնդիրներու կարգադրութիւնը թուրք կեդր. կառավարութեան միջամտութեամբ:

ԽՄԲ.

---

*\*) 1908 թ. Յուլիս 20ին Արեւելեան բիւրոյին ուղղուած իր նամակին մէջ, Ս. Բարսեղեան (Շամի) Վանի էր շրջակայքի զինապահեստներէն գրաւուած ռազմամթերքը կը զնահատէ 2000 զէնքի էր 700.000 փամփուշտի: Փաստօրէն 1905-1907 տարիներուն առաւելարար Արամի ջանքերով Վասպուրական ամբարտած զէնքերուն մէկ կարեւոր մասը:*

*\*\*) Վանի զինապահեստներու գրաւման էր յաջորդող դէպքերու մանրամասնութիւններուն ծանօթանալու համար տեսնել Վահան Փափազեանի (Կոմս) «Իմ Յուշերը» Ա. հատոր, Պոսթըն, 1950, էջ 506-591:*

[Արեւելեան բիւրոյին, Թիֆլիս]

Ընկերներ!

Երկու ամսից աւելի է ինչ Սարուստանից նամակներ չենք առել — չգիտենք ի՞նչ եղաւ ձեզ, մեր ընկերներին եւ Բիւրոյին. միթէ՞ նամակները չէք ստանում, միթէ՞ այդ ժամանակը չունէք, որ գէթ գործնական հարցերին երկտողով պատասխանէք. մենք խեղդւեցինք այդ միթէների մէջ...

Քանի քանի անգամ գրեցինք, որ գէթ վաճառականների միջոցով գրեցէք թէ ուղարկւած դրամները որինն է կամ ինչի՞ համար. եթէ նպաստից է, գէթ գրեցէք որ բաժանենք. սովից ժողովուրդը տանջուում է, սերմ չունի որ ցանի իսկ 2-3 հարիւր ոսկի դրամներ մեր ձեռքի տակ ընկել են, չգիտենք ի՞նչ անենք:

Պարտիզաւանից<sup>1</sup> ստացանք մի երկտող նամակ եւ 15 կապոց խմոր<sup>2</sup>: Ջրաբերդի ընկերներին գրել էինք, որ գնացող սուրհանդակների վրայ ո՛չ մի կոպէկ ծախս չանեն, որովհետեւ դրանք գնացել են իրենց հաշուով մեր 10-10 բարեկամի համար ապրանքներ բերելու. դարձեալ վերցրել են 100 ռուբլու չափ, ծախսել եւ երեւի կը գրեն մեր հաշին. երբ պէտք է վերջանան այս խայտառակութիւնները. ոչ ոք իրաւունք չպիտի ունենայ երկրի հաշուով բարերարութիւն անել:

Արարատի<sup>3</sup> ապրանքները 27 տուփով ստացւեց. ինչպէս գրել ենք ձեզ ուղղած յուլիս 31 թւակիր նամակով, այդ հաշիւների մանրամասները Դժոխքը մեզ չի գրել. եւ չգիտենք էլ, թէ մէջը աւազ է, հող է, թէ ծայր է: Յետոյ 10-10ները ապրանքները չեն բերում խոստացած տեղը. այդ նրանք կարող են անել հեշտութեամբ, միայն թանբալանում են<sup>4</sup> եւ մեզ ի գուր ծախսի եւ դժւարութիւնների ենթարկում: Նրանց հետ վերջնական կերպով խօսեցէք եւ պայման դրէք անպատճառ Աւետարան<sup>5</sup> բերելու:

Անցեալ[ին] գրել ենք եւ մի հայերէն-թուրքերէն ձեռքի տպարանի մասին. այս անգամ էլ յիշեցնում ենք ձեզ. իսկ մինչեւ դրա հասնելը, մեզ համար անմիջապէս հասցրէք. ա) մոմաթուղթ Սմիս գլանատիպ կրկնագիրի համար\*\* 4-500 հատ, բ) նոյն մեքենայի թանաք — անրկ\*\* premier rotary ink — երեք գոյնի են, կապոյտ, կարմիր եւ սեւ. 3-ից էլ 10-ական հատ — ուրեմն 30 հատ երեքից: գ) ծակոտկէն մետաղական գլան\*\* (perforated cylinder) մի հատ — սա մի կիսաշրջանակ է, ծա[կ]ծկոտ, շատ առաձգական է, պէտք է տեղաւորցնել. ճիշտ ի՞ր ձեռով մի ցինկէ տուփի մէջ եւ լհեմել<sup>6</sup>. դ) գրելու տախտակ — որի վրայ դնելով մոմածոյ թուղթը գրուում է. դրանից միայն պէտք է ուղարկել տախտակի երեսի վրայ քաշուած մետաքսից 2-3 հատ. սա կարելի է ուղարկել եւ նամակով. տախտակ չենք ուզում, որպէսզի փոխադրութիւնը հեշտ լինի. այդ տախտակը քառակուսի տողերով է իսկ կտաւ-ն\*\* արբշուրէ, առանց տողերի հարթ է: ե) սրբագրելու մեղան. սա փոքրիկ սրուակով դեղ է, որը երբ մոմածոյ թուղթի վրայ գրելուց սխալուում են, դրանից քսում են,

սխալը ջնջում եւ վրայից նորէն գրում:

Այս բոլորը պէտք է տեղաւորել ցինկւի տուփերի մէջ, թեթեւ թեթեւ, որ կարելի լինի տեղաւորել խուրջիներէ մէջ:

Սրանք շատ կարեւոր կարիքներ են. անմիջապէս ձեռնամուկս եղէք եւ գտէք ուղարկեցէք: Եթէ կովկասում չգտնէք, գրեցէք Պետերբուրգ կամ Մոսկոնա, մենք գնել ենք տուել Պետերբուրգում: Այս յանձնարարելու է կամ մեր ընկեր ուսանողներին կամ Ֆարհադին<sup>7</sup>, որ իսկոյն բերել տայ: Աստուծոյ սիրոյն չուշացնէք, մեր եւ թիւրքական<sup>8</sup> թերթի համար դրանք անհրաժեշտ են, առանց դրան մեր գրաւոր պրոպագանդը կը մեռնի:

Ուղարկեցէք մեզ կովկասեան ռայոնական ժողովի արձանագրութիւնները<sup>8</sup>: Գրեցէք մեզ նորութիւններ, մեզ մի թողնէք անորոշ եւ տարտամ վիճակի մէջ, մի քիչ էլ մտէք մեր դրութեան մէջ:

Մեր վիճակի մէջ նորութիւններ չկան. գործերը յաջող կերպով գնում են. ժողովրդի տրամադրութիւնը շատ լաւ է. այս վերջին երկու շաբաթը յեղափոխութեան շաբաթներ էին, մի կողմից թուրքերէն թերթեր եւ թուրքիկներ էր որ թափուում էր հրապարակ, միւս կողմից էլ գործադուլներն է, որ հասարակութիւնը զբաղեցնում է: Կազմակերպել ենք արհեստական միութիւններ — կահագործները — հիւսն<sup>9</sup> — թարգիները<sup>9</sup>, կօշկակարները, ոսկերիչները, խիզարչիները, հիւսները եւ ամէնքն էլ տնտեսական պահանջներ են առաջադրել եւ պատրաստուում են գործադուլի. այդ տրամադրութիւնը այնքան է զարգացել, որ մեզնից անկախ էլ պիտի կազմակերպուեն եւ պահանջներ առաջադրեն. վիժլաժներ շառաջացնելու համար, միջամտում ենք եւ ինքներս կազմակերպում. այսօր դրանք մի քանի հարիւրներ են...

Գործադուլ են արել եւ տեղիս Ամերիկեան միսիոնարութեան արհեստաւորները եւ աշակերտները. վերջիները բացարձակ կերպով իրենց ժողովարանում ելել եւ քննադատել են միսիոնարների բռնակալ ռեժիմը եւ պահանջել անհատական ազատութիւն. հուսերը [?] փոխել են յեղափոխութեան: Միսիոնարութիւնը զիջել է կազմել է մի միջնորդ ատեան:

Կառավարութիւնը այս բոլորի հանդէպ կոյր է ձեւանում. կարծես ինքը գոյութիւն չունի: Նրա հոգսը հիմակուհիմակ թիւրքական շարժումն է, սկսել է հետա-

---

1.- Պարտիզայան – ծածկանուն Կաղզուանի: Ջրաբերող Կարսն է:

2.- Խմոր – Վառոջ:

3.- Արարատ – ծածկանուն Իգտիլի:

4.- Ծուլանում են:

5.- Աւետարան – ծածկանուն Աբաղայի դաշտի Խաչան գիղի:

6.- Ջօղել:

7.- Ֆարիադ – ծածկանուն Սարգիս Օհանջանեանի:

8.- Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդի. ժողովէն ետք, 1907 թ. Յուլիս 2-8 գումարուած կովկասեան Ռայոնական ժողով՝ մասնակցութեամբ շրջանի Կ. կոմիտէներու ներկայացուցիչներուն եւ կարգ մը գործիչներու:

9.- Դերձակներու:

10.- Ատաղձագործներու:

11.- Խօսքը կը վերաբերի հակահամիտեան տարրերու կողմէ հրատարակուած թուրքերէն թուրքիկներու եւ թերթերու:

պնդել թիւրքերին, գտնելու համար թերթերի եւ թուղթիկները<sup>11</sup> խմբագիրներին եւ ցրողներին:

Սովը շարունակուում է. թէեւ հացը էժանացել է, բայց ժողովուրդը տնտեսապէս քայքայւած լինելով, չի կարող էժանութիւնից օգտուել:

Ի՞նչ եղաւ Բիւրոյի Երկրի սեկցիան. երբ պիտի իր գոյութեան մասին զգացնել տայ մեզ: Այս նամակի պահանջները դուք անձամբ լրացնելուց յետոյ, իսկականը կամ պատճէնը ուղարկեցէք Բիւրոյին: Ամէնքս ողջ ենք եւ կը բարեւենք ձեզ:

ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

Այս նամակի խնդիրները կարգադրեցէք անմիջապէս:

ՆՈՅՆ

1907 թ. օգոստոս 14ին

Փաստ. 667-125

## 261

Իմ սիրելի .....<sup>1</sup> !

Գալուցս յետոյ մի քանի անգամ գրել եմ քեզ եւ տեղիդ ընկերներին. իսկ ձեզնից դեռ բախտ չենք ունեցել նամակ առնելու... Այն ի՞նչ դու խոստացար միշտ գրելու... մանաւանդ միջոցներ չէր պակասում: Մեր ընկերները — Տիգրան, Մալխաս եւ Իշխան ոտով — գլխով կորել են. ո՛չ մի խաբար չունենք, ո՛չ ոք նամակ չէ գրում: Անցեալ փոստին եւ այս փոստին քո հասցէով երկու նամակ ենք գրել տեղիդ Կ. Կ. [ին]. խնդրում ենք հետեւիւր եւ դրւած հարցերը կարգադրիր: Առանձնապէս մեզ համար շատ անհրաժեշտ է հետեւեալ կարիքները, որ պէտք է առաջին պատահու-թեամբ գտնէք, գնէք եւ հէնց օրս սուրհանդակի հետ սրանք [եթէ] կարելի է ճամբեցէք:

Ա) Մոնաթուղթ Մմիս գլանակերպ կրկնագիրի համար\*\* 4-500 հատ: Սա շատ եւ շուտ փչացող բան է, պէտք է խնամքով տեղաւորել ցինկէի տուփի մէջ եւ փակել, որ չփչանայ:

Բ) Նոյն մեքենայի — քանակ-մելան-նեռլի\*\* — մելանի տուփի վրայի թուղթեր ներ-փակած եմ. դրանք 3 գոյն են, կապոյտ, կարմիր կամ սեւ. 3-ից 10ական, ուրեմն 30 հատ գնեցէք:

Գ) Նոյն մեքենայի — ծակոտկէն մետաղական գլան\*\* (Perforated Cylinder) մի հատ: Սա մի կիսաշրջանակ ծակծկոտ բան է. շատ առաձգական. պէտք է տեղաւորացնել ճիշտ իր ձեւի տուփի (ցինկէի) մէջ եւ լհիմել:

Դ) Գրելու տախտակ. մոնաթուղթ\*\* դրուում դրա վրայ եւ գրուում. տողարանով մի տախտակ է, որի երեսը քաշած է մետաքսի մի կտոր — ..... — ճիշտ այդ կտորից

3 հատ. տախտակը հոս չգտանք:

Ե) Սրբագրելու մեղան. Սա փոքրիկ սրուակով դեղ է, եթերի հոտով – rotary duplicator-corrector – սրանից էլ մի 10 շիշ: Բոլորն էլ տափով պնդացնելու եւ խնամքով դասաւորելու է, որ յարմարութիւն լինի շալակելու կամ խուրջինի մէջ տեղաւորելու: Սրանք շատ կարեւոր են: Առանց դրանց կանգ է առնելու մեր պրոպագանդի մի մասը – գրաւորը: Սրանք եթէ հող չճարուի, կամ անձամբ գրեցէք Պետերբուրգ, կամ Ֆարհադին ասեցէք փոստայով բերել տայ. էլ չեմ խնդրում, պէտք է երեւակայես կարիքը:

Զ) Ինձ համար ուղարկիր 3-4 աչքի վաննա, դու տեսար՝ քեզ հետ գնեցինք Աւստրիայում. թէեւ մի հատ բերի բայց քրդերը տարան... Սա անպատճառ լինի: Աչքերս լուալու համար շատ կարեւոր են:

Է) Կովկասեան ռալոնական ժողովի արձանագրութիւնները

Ը) Եւ «Նւագագոյն ծրագրից»<sup>2</sup> սկսեալ բոլոր վերջին հրատարակութիւնը Յառաջը<sup>2</sup>. դրանք չենք ստացել. մանաւանդ Դեմոգրադիզմ եւ Ֆեդերացիա. – Դէպի Ֆեդերացիա, Կովկասեան Վանդէա. ուրիշների հրատարակած լաւագոյն գրքերից, գէթ մէկ-մէկ օրինակ վերջինը պիտի լինի, իմ գալուց յետ. դրանից առաջները բոլորը ունենք:

Գրիր մեզ փոխադրական գործերի մասին... Ի՞նչ վիճակի մէջ են գծերը. ապրանքներ կա՞ն, թէ ոչ. ապրանքների գինը որքա՞ն է. բարձրացել է թէ նոյն է: Ո՞ւր են մեր ընկերները:

Մեզ մօտ կեանքը շատ հետաքրքիր է դառել. այժմ գգում ենք որ իսկական յեղ[ափոխական] կեանք է. առաջւայ առանձնական գործնէութիւնը ոչ մի միսիթարական բան չունէր. ուղղակի ակամայից էին տանում. կեանքը հարստացաւ. գործելու նոր հորիզոններ բացեցին: Կոմս եւ Սարգիսն էլ գաւառներն են. ես եմ այստեղ եւ մեր ջահէլները. այստեղ էլ հներ եւ նորեր կան. այստեղի հներն էլ ես եմ, Կոմս, Սարգիս եւ այլն. քէֆը գալիս է չէ՞:

Խնդրում եմ գրիր բոլոր ընկերների մասին. ուր է Ռոստոմը, Ռուբինան, Նադիան, Համոն, Թաթուլը եւ մնացածները. Յովնանը հոտ է. Հորտանսի<sup>3</sup> համար վրէժով ուղարկել ենք մի շալ – տերիացու[?] եւ 3 քիսիկ. ստացե՞լ է: Զեզ համար էլ քիսիկներ ենք պատւիրել, բայց դեռ պատրաստ չէ. դա էլ կ'ուղարկենք: Ընկերների մասին մանրամասն գրիր: Տեղիս մնացած խնդիրների մասին գրեցինք Բիւրոյին, որը չի պարունակում մի առանձին կոնսպիրացիա<sup>4</sup>. այնպէս որ կարող ես կարդալ: էլ ի՞նչ գրեմ. լաւ ենք եւ գոհ. մնում է ձեր շնորհքը:

Համբոյրներով  
ԱՐԱՄ

1907 թ. 15-ին օգոստ., Շամիր

1.- Անունը գրուած, ապա արուած: Յայտնաբար Վիեննայի Ընդի. ժողովին մասնակից ընկեր է, քերես Թադնուեան Ստեփանը (Մամսոն, Գարեգին):

2.- «Յառաջ» – Թիֆլիսի նոյնանուն քերթի մատենաշար:

3.- Յովնանը – Դաւթեան Յոնանն է (1865-1918, Գաշնակցութեան առաջին սերունդի գործիչներէն, տեսաբան: Հորտանս – իր կինն է, գովիցերուի):

4.- Գաղտնի, դատադրական բնոյթի բովանդակութիւն:

**Միրելի Ռուբէն<sup>1</sup>!**

Այնքան եմ յոգնած եւ այնքան վշտացած քո անտեղի ակնարկներից որ հէջ տրամադրութիւնն չի մնացել քեզ գրելու: Քեզ համար արտասահմանում որքան վիրաւորանքներ ենք կրել — ես եւ մեր ընկերները — դա թող Աստուած գիտենայ, եթէ նա կայ. թէ որքան ենք աշխատել որ այդ շրջանը<sup>2</sup> կանոնաւորւի, ձեզ ենք թողնում. հէնց այդ անտէր Պ[ատասխանատու] Կ. Կոմիտէի հարցն էլ դրել էիք այդ հողի վրայ, որ այստեղի հետ կապւած լինելով վերանայ այդ Դուրանի եւ Շամիրի հարցը եւ այստեղի ընկերները պաշտօնապէս պարտականութիւն զգան այդտեղի մասին էլ հոգալու... մենք սխալած ենք եղել: Է՛հ, շուն-շան որդի մեր հէրը անիծեցիր! Երեւի մի անգամ ձեռքս կ'ընկնես: Արդէն փոստայով գրել ենք... Գնացի ձեր տուն, մայրդ շատ լաւ էր, բայց շատ վշտացել էր որ Ռուբէնին էլ<sup>3</sup> են ուզում հալածել զուրնաչիները. խեղճ տղան բաւական նեղւած, բայց անցաւ: Մի նամակ է ուղարկել, որ ներփակում եմ: Մեր վիճակը քոնից գէշ է:

Աստուած վկայ խեղդւում ենք. գործերը հազարապատկւել են. քո եւ իմ տեսածը չէ մնացել: Մի՛ վրդովեր քո հոգեկան հաւասարակչութիւնը, միշտ հաւատա գործի ընկերներիդ:

Քո  
ԱՐԱՄ

[18 օգ. 07 թ. Շամ]

1.- Արամի այս գրութիւնը կը հետեւի Վանէն Գարմէնի (Մկրտիչ Մեքրեման) կողմէ Ռուբէն Տէր Սինասեանին ուղղուած մէկ նամակի:  
 2.- Այդ շրջանը Տարօնն է (Դուրան):  
 3.- Այս Ռուբէնը՝ բուն անունով Երուանդ, եղբայրն է Ռուբէն (իսկական անունով՝ Մինաս) Տէր Սինասեանի: Երկու եղբայրներ կը գործածէին նոյն՝ Ռուբէն ծածկանունը:

### Արեւելեան Բիւրոյին

Ընկերներ!

Ձեզ նամակներ գրելուց մեռանք, բայց չարժանացանք գէթ մէկի պատասխանին: Այս անգամ առիթից օգտուելով գրում ենք մի քանի կարեւոր խնդիրների մասին, որոնց շուրջը հետաքրքիր է եւ ձեր կարծիքը:

**Ա.— Թիրքերէն քերք**\*<sup>1</sup>.— Սա ինչպէս գիտէք 7-8 ամսեայ գործ է, մեծ ընդունելութիւն գտաւ մեր շրջանում. մենք ուղարկեցինք եւ Դուրան, եւ Սալնոյ-ձոր<sup>2</sup> եւ այն բոլոր շրջանները ուր դիւրութիւն ունենք ուղարկելու:

Իբրեւ տեղական օրգան, իսկոյն արձագանք է տալիս ընթացիկ բոլոր հասարակական խնդիրներին: Արդէն պէտք է երեւակայէք թէ խուլ Ասիայում, ուր ազատ խօսքի մասին գաղափար անգամ չկար, յանկարծ լոյս է տեսնում այդ թերթը. եթէ ասենք դա եղաւ հիմնաքար դժգոհների շրջանակներ կազմակերպելուն, գրողների թիւը օր օրին շատանում են եւ աւելի լայն շրջաններ են ընդգրկում. N 1-ը լոյս տեսաւ 30 օրինակ. իսկ N 6-ը 200. իսկ N 7 300. այդպէս երեւի աւելի առաջ կ'երթայ: Ամէն անգամ ձեզ ուղարկում ենք, միայն չգիտենք հետաքրքրուում եւ կարդալ էք տալիս թէ ոչ: Մինչեւ հիմա առհասարակ զբաղած է եղել մերկացումներով, քննադատութիւններով, կառավարութեան եւ պաշտօնեաների գեղծումները մերկացնելով: Իսկ այսուհետեւ միտք ունեն տալ եւ իրենց քաղաքական, տնտեսական իդէալները: Երեւի ձեզ հետաքրքրում է եւ այն հարցը, թէ մենք ի՞նչ դիրք եւ մասնակցութիւն ունենք այդ խնդրում: Ամէնից առաջ դա ստեղծւել է մեր խորհուրդով եւ ջանքերով. մենք միշտ սկիզբները աշխատել ենք [ք] խորհուրդներ տւողի եւ օժանդակի դեր կատարել, իսկ երբ լսեցինք Ընդ. Ժող[ովի]. վճիռը<sup>3</sup> համերաշխ գործակցութեան մասին, աւելի մօտիկացանք եւ դարձրինք աւելի լայն խնդիրներով, մասնաւորապէս այդ համերաշխութեամբ զբաղող մի օրգան: Մենք ձգտում ենք մեր քաղաքական-տնտեսական իդէալները դրա միջոցով մատչելի դարձնել քիւրք\* հասարակութեան. Դա մեզ յաջողւել է անցեալ[ին] որոշ չափով, իսկ այսուհետեւ, էլ աւելի մեծ յաջողութեամբ պիտի առաջ տանենք. որովհետեւ մարդիկ ուրախութեամբ ընդունել են մեր ծրագրի էական կէտերը եւ ուրախութեամբ էլ հետեւել են թերթի մէջ այդպիսի յօդածները: Մի քանի խօսք էլ խմբագրական\* կազմի մասին. դա հաւասար չափով կազմած է մերոնցից եւ իրանցից եւ փոխադարձ համաձայնութեամբ առաջ է տարւում գործը:

Երկրի համար.— Երկրի տեսակէտով դա մի մեծ նորութիւն է եւ բովանդակութիւնն էլ շատ հարուստ է համարւում. հետաքրքիր է ձեր կարծիքը, որ կը լինի հեռուից դիտողի եւ ո՛չ շահագրգռածի կարծիք: Լաւ կը լինէր այս մասին տայիք որոշ դիրեկտիւներ<sup>4</sup>: Ձէ՞ որ դա հէնց ձեր պարտականութիւններից մէկն է:

**Բ.— Հայերն քերք\*.**— Երեւի գիտէք, որ տեղական երիտասարդութիւնը իրեն համար պաշտօնական հանգամանքներից դուրս հրատարակում է երկու թերթ. «Հայեացք» եւ «Նոր Սերունդ»: Սրանք իրենց համարում են դաշնակցական եւ մինչեւ վերջերս մնացել են կուսակցութեան ծրագրի եւ դիսցիպլինի սահմաններում. թէեւ նկատել են մէկ-մէկ, որ դուրս են եկել այդ սահմաններից, դա եղել է ոչ միտումով, այլ անփորձութիւնից: Այդ թերթերը մեծ դեր կատարեցին տեղիս երիտասարդութեան կազմակերպելու, միանալու եւ զարգանալու հարցում: Պէտք է խոստովանել եւ մի բան. այդ թերթերը որչափ որ պաշտօնական հանգամանք չունէին, յամենայնդէպս, թէ այստեղի հասարակութիւնը եւ թէ մանաւանդ դուրս[ը], դա կտրեցին մեր գլխուն եւ համարեցին պաշտօնական օրգան. այստեղ եղողներին դեռ մի կերպ համոզելու միջոցներ ունենք, իսկ դուրսեցիներին, մանաւանդ ամերիկացիները, ուղղակի մեզ համբերութիւնից հանեցին. այն բոլոր թիւրիմացութիւնները ինչ տեղի ունեցաւ Ընդ. Ժող[ովում], այն բացատրութիւնը եւ համաձայնութիւնները ինչ եղան փոխադարձաբար մեր եւ նրանց մէջ, կարծում ենք ամէն բան պէտք է փակած լինէր, եւ մանաւանդ Ընդ. Ժող[ովի] որոշումները պէտք է նրանց լռեցնէր. բայց այդ բոլորը կարծես նրանց համար գոյութիւն չունի. նրանք փոխանակ մեզ խրախուսելու, դարձեալ շարունակում են իրենց դժգոհութիւնները եւ նկատողութիւնները որոնք շատ գէշ տպաւորութիւն են թողնում հէնց տեղացի ընկերների վրայ. դրսեցիների մասին չենք խօսում, նրանք էլի նահատակ դարձան, որովհետեւ ամէնքը կարծում են (դրսում) որ այս բոլորը նրանց արածներն է, դրսից բերել եւ կեղծ կերպով պատւաստում են: Գաղափար կազմելու համար այդպիսի նկատողութիւնների մասին, բերում ենք Ամերիկայից եկած մի նամակից հետեւեալ կտորները:

«..... Ձեր լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրենք, այդտեղ հրատարակուող «Հայեացք» թերթի հրատարակման մասին: Ձեր կողմէ առնուած այդ քայլը մենք կը տեսնենք անպատեհ ներկայիս, ատով աւելի թիւրք կառավարութեան եւ ամբոխին ուշադրութիւնը (երեւի մոռացել են գրել – կը դարձնէք ձեր կողմը): Մենք ատանկ ռեւէ ձեռնարկի չենք կրնար աջակցիլ կամ խրախուսել վստահ ըլլալով որ ատոր վնասը աւելի մեծ է քան թէ օգուտը: Կրկին կը թելադրենք որ շուտով դադրեցնէք այդ թերթի հրատարակութիւնը եւ արհեստակցական միութիւններու կազմիլը: Սովի եւ ջարդի երկրի մէջ ատոնք չեն երթար: Գաղտնի կերպով կազմակերպեցէք հայ երիտասարդութիւնը: Բնաւ ժամանակ չէ տնտեսական հարցով զբաղել, երբ արդէն հայ ժողովուրդը տնտեսապէս քայքայուած է, եւ կարգը ֆիզիքականին եկած է: Այդ տեղ միայն ազգային հարց է որ գոյութիւն ունի: Թիւրք կառավարութիւնը հայն է որ կը կոտորէ եւ ոչ թէ թիւրք տարրը: Այդ գիտնալով հանդերձ դարձեալ կը շարունակէք այդ ընթացքը: Մեր վրայ եւ հասարակութեան վրայ շատ գէշ տպաւորութիւն ձգած է: Այս խնդիրը ձեր ողջմտութեան եւ առողջ դատողութեան կը յանձնենք: Կովկասի որոշ քաղաքները միայն կրնան զբաղիլ այդ յախտենական կնճռոտ հարցով...»:

**Իսկ անցեալներն էլ գրել էին մեր կողմից ուղղակի հրատարակող թուուցիկներու մասին:**



Դուք ի հարկէ պէտք է ասէք, որ ի՞նչ կարեւորութիւն նրանց, քանի ներքին խնդիրներով դուք լիագոր եւ ինքնավար էք. եթէ մի կողմը թողնենք իսկ, մեզ վրայ թողած ազդեցութիւնը — որը մեր պայմաններում քիչ բան չպիտի համարուի, որովհետեւ խեղդած գործի մէջ, արհամարհած ամէնքից, դժուար թէ մարդ կարողանայ գործ կատարել, եթէ երկաթէ ջղեր չունենայ: Բայց դժբախտաբար այդ մենք չունենք — պէտք է գիտնաք եւ այն, որ այս խնդիրները իբրեւ նոր սկսւող հարցեր եւ իբրեւ սկիզբը մի նոր գործելակերպի, շատ պատասխանատու մի խնդիր է: Ո՛չ արտասահմանում եւ ոչ էլ ներսը երկրում, ո՛չ ոք իրաւունք չունի անել, այն ինչ չի ընդգծել մեր Ընդ. Ժող.ը. եթէ մեզ նկատողութիւններ պէտք է անէ ոեւէ մարմին, պէտք է այդ հիմնած լինի Ընդ. Ժող.ի որոշումների վրայ, եւ ո՛չ ինչ որ հին-հին յիշատակների... բայց անցնենք մեր սկզբէն դրած հարցին:

Նկատի ունենալով որ այդ երկու թերթերը չեն կարողանում բաւարարութիւն տալ մեր ընթացիկ կեանքի պահանջին, նկատի առնելով որ դրանց սխալները եւ անտակտութիւնը մեզ է վերագրուում, ի նկատի ունենալով որ կեանքը բարդացել է եւ հրամայողաբար պահանջում է հէնց տեղն ու տեղը պատասխանել ու լուսաբանել առաջադրած հարցերը, ի նկատի ունենալով որ արտասահմանի թերթերը ուշ-ուշ են գալիս եւ չեն կարող բաւարարութիւն տալ երկրի ընթացիկ կարիքներին, իրենց յայտարարութիւններով, ներքին լուրերով, հեռագիրներով եւ գոտ տեղական հարցերով — որ վերջերս դառնում է միմիայն դպրոցի շուրջը —, այս եւ այլ բազմաթիւ նկատումներով մենք վճռել ենք հրատարակել մեր սեփական միջոցներով, մեր սեփական դրօշակի տակ մի տեղական օրգան, որը լայն չափով կը զբաղւի տեղական հարցերով, լուսաբանելով դրանք դաշնակցական տեսակէտներով, եւ արտասահմանեան թերթերից կ'արտատպէ այն բոլոր յօդածները որոնք կարող են շահեկան լինել երկրի ընթերցողներու համար:

Պէտք է աւելացնել եւ այն որ թուուցիկներով չենք կարողանում գոհացնել, որովհետեւ դրանք ուշ-ուշ են լինում եւ ոչ մշտական, թէեւ այդ թուուցիկները հրապարակում են մեծ քանակութեամբ, 300-350 օրինակ, իսկ առաջ կը լինէր 30-50 օրինակ: Յուլիս 29-ից մինչեւ այսօր օգոստոս 15 հրատարակել ենք 8 կտոր հայերէն եւ մի քանիսը հայերէն — թիւրքերէն թուուցիկներ — ընդամէնը 1950 կտոր:

Այս առթիւ բարի եղէք անմիջապէս գրելու ձեր կարծիքները եւ ձեր խորհուրդները: Այս գործը աւելի կանոնաւոր հիմքերի վրայ դնելու համար խնդրել էինք տպարան, ի՞նչ եղաւ: Անմիջապէս ուղարկեցէք **հայ-թիւրք\*\*** տպարան եւ երկու հմուտ ընկերներով, կամ գէթ մէկի հետ:

**Պ.— Արեւտակցական միութիւններ.**— Ահա եւ մի ցաւոտ խնդիր, որ բուսել է մեզնից անկախ պատճառով մեր առանց այն էլ վէրքոտ մարմնի վրայ: Շնորհիւ մեր պրոպագանդի, արտասահմանեան գրականութեան եւ մամուլի տարածելով եւ ընթերցանութեամբ, արտասահմանեան կեանքի հոսանքի արձագանքները հոս հասնելով, արհեստաւորների մէջ շարժում սկսեց եւ կազմակերպւեցին: Պէտք է առանձնապէս շեշտենք մի բնորոշ դէպքի վրայ, որ այդ շարժման գլուխը անցան բացառապէս դաշնակցական արհեստաւորները, իսկ արմենականները անտարբեր գտնւեցան եւ շատ տեղ էլ հակառակ դիրքի մէջ մտան. հակառակողները մեծ մա-

սամբ մեծ արհեստաւորներն էին եւ շահագրգռածները: Իսկ զուտ աշխատաւորները սկզբներում համակերպւեցին մերոնց: Բայց վերջը նրանք էլ պրովակացիայի զոհ գնացին: Նրանք առարկում են իրենց հակակարծիք լինելը հետեւեալ ձեւով.— Հոս բանւորական հարց գոյութիւն չունի, որովհետեւ մի վայր մի խանութ չկայ որ 20-30 աշակերտ ունենայ — 3-5 ոչինչ է նրանց համար — որ դա անժամանակ է, որ դա ըմբոստութիւն է, որ դա ժողովրդին կ'անբարոյականացնէ, որ էլ մեծերին չեն լսի, որ դա մի ազգադաւ ձեռնարկ է, որովհետեւ ազգը բաժանում է երկու դասակարգի, եւն եւն եւն... Սովորական տրամաբանութիւն: Բնորոշ է եւ այն, որ կառավարութիւնը ո'չ մի միջոցի չի դիմում, այլ կարծես չի էլ ուզում նկատած լինել: Նկատի ունենալով այս բոլորը, եւ աւելորդ վիժմունքներ չառաջացնելու համար, մենք ձեռնամուխ եղանք եւ ինքներս կազմակերպեցինք ու ընթացք տւինք: Գործադուլները դեռ չեն վերջացած, պահանջները թէեւ առաջադրւած է: Թիւրիմացութիւնների տեղի չտալու համար մենք ուղղել ենք մեր խմբերին եւ միութիւններին մի պաշտօնական ազդ, բացատրելու համար մեր տեսակէտը եւ մեր դիրքը: Բերում ենք այդտեղից մի քանի բնորոշ կտորներ, ձեզ գաղափար տալու համար...

«... Այս բոլորի հետ մենք պնդում ենք, որ այդ տնտեսական դասակարգային կռիւը միայն այն ժամանակ կ'անոնաւոր ու նորմալ ընթացք կը ստանայ մեր ապաբախտ երկրում, երբ կը լինեն տարրական քաղաքական ազատութիւնը՝ խօսքի, մամուլի, հաւաքումների, կազմակերպութիւնների, միութիւնների եւ այլն. այլապէս ներկայ բոլոր ձեռնարկները պայխատիւաներ<sup>5</sup> են, եւ արմատական յեղաշրջում չեն կարող մտցնել մեր կեանքում: Ուրեմն ներկայ քաղաքական դժոխք կացութեան մէջ, մեր առաջնակարգ հոգսը եւ նպատակը լինելու է քաղաքական կռիւր...

Բայց ի նկատի ունենալով այն դասակարգային դիֆերենցիացիան<sup>6</sup> որ սկսել է մեր իրականութեան մէջ, մենք չենք կարող մեր աչքերը կամաւոր կերպով կուրացնել եւ գոցել իրականութեան առաջ. մենք պարտաւոր ենք հնարաւոր չափով հետապնդել եւ դրան զարգացնել եւ շտապեցնել այդ դիֆերենցիացիան. հասկացնել ամէնքին որ մենք ժողովրդի որոշ — աշխատաւոր — մասի կուսակցութիւն ենք, որ այդ աշխատաւորների շահերը պատմական հակասութեան մէջ են հասարակութեան փոքրամասնութիւն կազմող արտօնեալ դասակարգի շահերի հետ. որ աշխատաւորների համար նոյնքան վտանգաւոր թշնամիներ են բոլոր շահագործողները ինչքան որ ներկայ բռնակալ կառավարութիւնը...

... Մենք միմիայն քաղաքական նպատակների հետապնդող կուսակցութիւն չենք այլ եւ որոշ տնտեսական իդէալներ ունենք, որ մեզ մօտ գաղափարական իդէալները ոչ թէ նպատակ են, այլ միջոց մեր տնտեսական նպատակներին հեշտութեամբ հետապնդելու համար...

... Բոլոր կուսակցական օրգանները — խումբ, ուսանողութիւն, արհեստակցական եւ գիւղացիական միութիւնները — պէտք է ենթարկւեն որոշ կազմակերպական դիսցիպլինի եւ իրենց քայլերը պէտք է յարմարեցնեն մեր ընթացիկ տակտիկին<sup>7</sup>...

... Որոշակի կերպով ձեզ համար պարզ պիտի լինի եւ այն, որ մեր ներքին կեանքում ունեցած դասակարգային-տնտեսական եւ դրան հետ կապ ունեցող հասարակական խնդիրների ժամանակ տեղի ունեցած պայքարում, գործ չենք ածում այն

շատ նեղ բռնի յեղափոխական միջոցները, որոնք այնքան ցայտուն կերպով արտայայտուել են մեր քաղաքական կուռի ընթացքում: Վերջին դէպքում մենք դիմում ենք այսպէս կոչւած պասիւ-կրաւորական միջոցների: Այսպէս [է] եւ բոլոր սոցիալիստական կուսակցութիւնների տակտիկը այդ հարցում, Եւրոպայում եւ յեղ. Ռուսաստանում...

... Այսինքն մենք կազմակերպում ենք մասսաները, նրանց մէջ զարգացնում ենք դասակարգային գիտակցութիւն, վստահութիւն դէպի իր սեփական ուժերը եւ այն ճանապարհները՝ գործադուլ, բոյկոտ, հասարակական կարծիք եւ օժանդակութիւն եւ այլն, որոնցով հնարաւոր է տնտեսական կրիզիս-ճգնաժամը, կամ հասարակական հիմնարկութիւնները — դպրոց, թաղականութիւն, քաղաքական ժողով, վանքեր եւ այլ, ազատել բուրժուա, աղայական, կղերական ուժակցիոն<sup>8</sup> անձնաւորութիւնների խնամատարութիւնից եւ տալ այդ հիմնարկութիւններին, որքան հնարաւոր է ներկայ դէպքում, դեմոկրատիկ<sup>9</sup> գոյն, այսինքն մատչելի եւ օգտակար դարձնել աշխատաւոր ժողովրդին:

... Այս բոլորը մենք անում ենք որոշ եւ պարզ շրջանակների մէջ, միշտ պահանջելով որ միութիւնները, իրենց արածների եւ անելիքների մասին հաշիւ տան Կ. Կոմիտէին, յանուն կազմակերպական դիսցիպլինի<sup>10</sup>, եւ յանուն այն ընթացիկ տակտիկի որ մենք կիրառել ենք մեր ընթացիկ կեանքում: Այլապէս մենք մեր ձեռքով մեր ներքին կազմակերպական կեանքում կը ստեղծենք անարխիա<sup>11</sup>... եւն եւն եւն»:

Ահա գլխաւոր կէտերով այն ինչ կարող է հետաքրքիր լինել ձեզ, մնացածները կամ միութիւնների կուսակցական լինելու կամ ներքին յեղափոխական կեանքին յարմարեցնելու մասին է... Այս ազդը կ'ուղարկւի եւ ձեզ, երբ վերջնական կերպով հաստատուի մեր ռայոնական ժողովի կողմից:

Այս մասին էլ պէտք է գրէք ձեր կարծիքները. ի՞նչ անել եւ ի՞նչ ձեռով շարունակել: Իմացէք որ շարժումը մեզնից անկախ էլ սկսւել է եւ կ'երթայ. հէնց դրա օրինակ այն, որ Տրապիզոնում էլ գործադուլներ է եղել, որի մասին գրեցինք ձեզ անցեալ նամակում...

\*  
\* \*

Ներփակ կը գ[տ]նէք եւ Մրգաստանի Կ. Կոմիտէին ուղղւած մի նամակի պատճէնը. եթէ իսկականը չէք ստացել գէթ սրանով մեր գործնական բաներին գոհացում տւէք, մանաւանդ գրելու մեքենային վերաբերող մասերը:

Մնացած գործերն էլ շատ յաջող է. Բիթլիս-ից\*\* էլ լուր առանք. այնտեղի շարժման պարագլուխները հետաքրքրւում են մեր շարժումով եւ մեր ծրագրով: Մտածում ենք հրատարակել մի բրոշիւր — մենք ո՞վ ենք եւ ի՞նչ ենք ուզում, թիւրքերէն լեզուով: Տեսնենք կը յաջողինք:

Մի քանի լնգալ\*\* ընկերներ յաջողեցինք գալ եւ տեղաւորել, այսպէս որ տեղացիներով, մեր շարքերը աւելի խտացան: Ամէն բան լաւ կ'երթայ. ախր ձեր կողմից նամակները չառնելը մեզ շատ բէղամաղ կ'անէ<sup>12</sup> — դուք ձեր Աստուած:

Ընկերներ ամէնքը լաւ են եւ առողջ. մեծ մասամբ գաւառ են – փախստականներ: Շամիրում մնացել ենք 6-8 հոգի: Թերթերը կանոնաւոր չենք ստացել, մինչեւ հիմա տեսել ենք միայն «Խարխախ» NN 1-7:

էլ ինչ գրենք, այսքանն էլ բաւական է, մանաւանդ որ ամէն անգամ գրել ենք մեր ընթացիկ կեանքի ու գործերի մասին:

Ընկերական ողջոյններով  
ՎԱՍՊ Կ. ԿՈՄԻՏԷ

1907 թ. օգոստոս 14  
Շամիր

**Յ. Գ.**– Ներփակ կը ստանաք թիւրքերէն թերթից մի օրինակ եւ նրանց հրատարակած երկու այլ թռուցիկները եւ մեր կողմից բաց թողնւած մի թռուցիկ «Երթաս բարով»:

ՆՈՅՆ

1.- Խօսքը կը վերաբերի Վասպուրականի Կ. Կ.ի նախածեռնութեամբ եւ թուրք ազատական տարրերու գործակցութեամբ հրատարակուող «Սապահ-իլ-իւլ-իւլ» թերթին:

2.- Սալնոյ Չոր – ծածկանուն Բաղէշ-Պիթիսի շրջանի:

3.- Արդարեւ Հ.Յ.Ղ. Չորրորդ Ընդի. ժողովի որոշումներէն մէկը եղած էր մերձեցում եւ գործակցութիւն ստեղծել թուրք ազատական տարրերու հետ, որու արդիւնքով նոյն տարուան (1907) Դեկտ. ամսուն Փարիզի մէջ կայացաւ Օսմանեան կայսրութեան ընդդիմադիր տարրերու կոնգրէն:

4.- Յուցմունքներ, հրահանգներ:

5.- Կիսամիջոց, ոչ հիմնական դարման:

6.- Տարբերակում, շերտաւորում:

7.- Մարտավարութիւն:

8.- Յետադիմական:

9.- Ժողովրդավարական:

10.- Կարգապահութեան:

11.- Անիշխանութիւն, անկարգութիւն:

12.- Պարսկերէն – խելքէ կը հանէ իմաստով:

### Արեւելեան Բիւրոյին

Ընկերներ!

Այսօր դուրս է գալիս մեր տեղական ընկերներէն Արմէնը-այս մասին կարիք ենք գգում մի քանի խօսք ասելու:

Նա մեր եռանդուն, երիտասարդ ուժերից մէկն է. ամենալայն չափով մասնակցել է մեր կազմակերպական եւ պրոպագանդի գործերին: Եղել է Քաղ[աքային] կոմիտէի լաւ անդամներից մէկը:

Վերջին ժամանակները (յուն. — փետր.) եղած խստութիւնների ժամանակ փախըտական եղաւ: Այն ինչ մենք իրեն պատրաստում էինք կամ Բարձրաբերդ կամ Վիշապաձոր<sup>1</sup> ուղարկելու, իբրեւ լեզալ ընկեր, վիճակը փոխւեց: Երկու տարւայ աշխատանքից յետոյ եկել է այն եզրակացութեան, որ իր ունեցած պատրաստութեամբ, շատ քան չի կարող անել, այդ ի հարկէ իր կարծիքն է:

Մենք ինչքան ցանկացանք որ մնայ մեզ մօտ, չեղաւ. փախստական վիճակը տանել չի կարող. փակած կեանքը յոգնեցրել է: Սա մեզ մօտ վերջերս միակ մարդն էր որ դեկավարում էր մեր թիւրք ընկերների պրոպագանդի տեխնիկական մասը:

Ինչպէս ասացինք դուրս է գալիս, մի երկու տարի սովորելու:

Ի հարկէ միջոցներ չունի. մտադիր է մի կողմից մի քիչ զբաղմունքներ վերցնել, իսկ միւս կողմից էլ սովորել:

Լաւ կը լինի նրան տեղաւորէք Ներսիսեան դպրոցի VII դասարանում. եւ մի ինտելիգենտ — գրական աշխատանք գտնէք.— սրբագրութիւն, թուրքերէնի բաժին եւայլն, որով կարողանայ օրեկան 3-4 ժամ աշխատել եւ սովորել:

Իսկ մինչ գործ ճարելը՝ 2-3 ամիս մեր հաշուով պահելու էք:

Ինքը ընդունակ եւ բաւական պաշար ունեցող տղայ է. սա նախկին տաճկահայ ուսանողներից չէ. աւելի է կապած կազմակերպութեան հետ եւ անհամեմատ օգտակար է եղել մեզ քան ուրիշները: Լիայոյս ենք, որ մեր ընկերոջ կը տաք բարոյական օժանդակութիւն հարկաւոր չափով, որպէսզի նա կարողանայ եւ սովորել եւ ապրել:

Ուրիշ ասելիք չմնաց այս մասին: Աւելորդ ենք համարում ասել, որ սրան մասնակից պէտք է համարէք կազմակերպական գործերում, մանաւանդ երկրի յարաբերութեան:

Պրոպագանդի գործում էլ օգտակար կը լինի երբ մի քիչ ծանօթանայ ձեր տեղական գործերին:

Բարեւներով՝ ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1907 թ. օգոստոս 28ին, Շամիր

1.- Բարձրաբերդ – ծածկանուն Կարին-Էրզրումի:  
2.- Վիշապաձոր – ծածկանուն Տիգրանակերտ-Տիարպեթիի:

Արամի անթուակիր այս նամակը ուղղուած է Թիֆլիս, Արեւելեան բիրոյի անդամ Համօ Օհանջանեանին, որուն ծանօթ էր հինէն, ապա միասին էին եղած Վիեննա, Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհ. Ժողովին:

*Սիրելի Համօ!*

*Ձգիտեմ ո՞ւր ես եւ ի՞նչ վիճակի մէջ: Իմ դրուածքները լաւ է. հոգեկանս խաղաղ, գործերս յաջող, այնպէս որ ամէն մարդ կարող է ինձ նախանձել: Միայն ֆիզիքական թուլութիւնս ինձ սպանեց. գլխացաւը եւ ընդհանուր յոգնածութիւնը անտանելի է: Լինում է ըստէս, որ ես ինձ զգում եմ ամենադժբախտը, որովհետեւ գործ կայ եւ մենք չենք կարողանում հասնել:*

*Գալիս է մեր լաւ ընկերներից մէկը — Արմէն — սովորելու ցանկութիւն ունի. կարմիր խաչից կամ միւս այլ տեղից մի բան յարմարեցրէք սովորէ: Սա մնացածների նման չէ եւ շատ է կապուած մեզ եւ գործի հետ, նոր մեթոտի գործնէութեամբ ոգեւորւածներից է:*

*Սրան քեզ եմ յանձնում. սա այն բազմաթիւ երիտասարդներից մէկն է, որ ես արմենականութիւնից հանել եւ կենդանի մարդ եմ դարձրել մեր գործի մէջ. շարունակութիւնը քեզ կը մնայ: Հոգեպէս մաքուր է...*

*Ո՞ւր է Ռուբինան, Նադիան. մեզ մոռացա՞ն, թէ իրանք էլ մեզ պէս նեղ վիճակի մէջ են:*

*Կը ցանկանայի քեզ երկար գրելու: Քեզ հետ անցկացրած լաւ եւ վատ գիշերները չեմ մոռանում, միշտ էլ, սիրով պիտի յիշեմ:*

*Քեզ, Նադիային եւ Մաշուկին ուղարկեցի մէկ-մէկ բանտի քիսիկ, գործած մեր ընկերների ձեռքով. աւելի գեղեցիկ նուէր չգտայ: Ռուբինային ուղարկել եմ Մինարէթով, Հորտանսի շալի հետ: Օլգա Վասիլենային կ' ուղարկեմ եկող անգամ, պատրաստ չէր. Ջերմ համբոյրներս իրեն եւ քեզ:*

*Քու  
ԱՐԱՄ*

Արեւելեան քիւրոյին ուղղուած գրութիւն է. կարմիր քանաքը տեղ-տեղ այնքան է տարածուած, մանաւանդ Չրդ էջին, որ գրեթէ անընթեռնելի կը դարձնէ նամակը: 1907 թ. Մեպտ. 3-ին առաքուած գրութիւնը, Թիֆլիս հասած է Հոկտ. 5ին:

Ընկերներ!

Առաջնայ նամակները գրել վերջացրել էինք, երբ պատահեց մի քանի նորութիւններ: Ամէնից առաջ յայտնենք որ չէկը ստացուեց. թիւրիմացութեամբ մի քանի օր ուշացաւ. այնպէս որ էլ կարիք չկայ հեռագրի: Վերջին օրերի ամենահետաքրքիր նորութիւնը, տեղիս թիւրքական շարժումն է:

Սեւ հարիւրեակները կազմակերպեցին նախկին կուսակալի հրահանգներով, որպէսզի յաջողեն կուսակալին հոս պահել, իրենց շահատակութիւնները շարունակելու համար. խուժեցին հեռագրատուն, հեռագրեցին Պոլիս որ կուսակալը չպիտի հեռանայ: Այս առթիւ տրւած է չորս հեռագիր, որոնց բովանդակութիւնն այս է մօտաւորապէս.

ա.- Միւֆթին եւ երկու շէյխերն հեռագրել են.— Այլի բէկին այստեղից հեռացնելը հայերին ուրախացնել, իսկ մուսուլմաններին վշտացնել կը նշանակէ. կառավարութիւնը դրանով զավուրներին երես կը տայ:

բ.- Սեւ հարիւրեակի գլխաւորները, ոստիկանական պաշտօնեաներ եւ պալատիայի ըէյրզը, քաղաքապետը [ուսներէն անընթեռնելի անուն] եւ քաղաքապետութեան մնացած պաշտօնեաները [անընթեռնելի մէկ բառ] թիւրք եւ հայ պաշտօնեաները հեռագրել են.— Հայ յեղ[ափոխականները] այնքան են ուժեղացել հոս, որ միայն Այլի բէյը կարող է նրանց գսպել. եթէ Այլի բէյը հեռանայ, տեղը հոս պէտք է թագաւորութիւն հիմնեն եւ մեզ ստրկացնեն. մենք հոս ապրել անկարող ենք առանց Այլի բէյի, նրա հետ մենք էլ կը գաղթենք:

գ.- Զինւորականութիւնը տարւած է ազատական հովերով. պրոպագանդան նրանց մէջ ուժեղ կերպով տարուած է եւ մեծ յաջողութիւններ ստացած շնորհիւ նրա որ սրանք հակառակութեան մէջ էին մալիայի հետ ռոճիկների չստանալու պատճառով: Սրանք հեռագրել են. հեռագրատուն հաւաքածները ժողովրդի ներկայացուցիչները չեն, այլ մի քանի պաշտօնեաներ, որոնք հոս են եկած Այլի բէյի թեւադրութեամբ. իսկական ժողովուրդը դժգոհ է ..... հիւրանոցները փակեց եւ գործադուլ յայտարարեց (ակնարկուած է հայերին):

[Անընթեռնելի մօտ մէկ էջ]:

..... Սեւ հարիւրեակը գնում է փոստատուն. նրա յետեւից եւ զինւորականները:

Այդտեղ էլ սկսում է անհամուլթիւններն եւ վիճաբանութիւնները շարքը՝ գինւորականները ցանկանում են բռնի կերպով արգելել հեռագիր տալը՝ այդտեղ արդէն պարզուում է ամէն բան․ սեւ հարիւրեակի պետերը կանչում են, որ իրենք փոստատուն են մտել կուսակալի հրամանով եւ գիտութեամբ․ գինւորականները թողնում եւ գնում են կոմանդանտի տուն ժողովի։ Մի ժամից յետոյ կոմանդանտը ինքը անձամբ մտնում է փոստատուն, ցանկանալով հեռագիր տալ ղէպքի առթիւ։ Ամբոխը [?] ուզում է արգելել․ կոմանդանտը կուսակալից պահանջում է որ իրեն թոյլ տրւի հեռագրատուն մտնել․ կուսակալը [անընթեռնելի մէկ բառ] է․ կոմանդանտը յայտարարել է, որ եթէ կամաւոր կերպով թոյլ չտրւի, ինքը զէնքի ուժով կը մտնի։ Այդ ժամանակ գինւորականները լուր են տալիս հայերին շարսուն<sup>1</sup> փակել։ Մենք էլ մեր կողմից գործադուլ յայտարարեցինք, առաջարկելով՝ մինչեւ որ կուսակալը չհեռանայ խանութները չի բացւի․ այդպէս էլ եղաւ․ ամբողջ հայերը եւ մեր համակիր թիւրքերը խանութները փակեցին 5 օր, մինչեւ հրէշը հեռացաւ այստեղից...

Ժողովրդի տրամադրութիւնը շատ բարձր էր․ թուրք կոմիտէն թնուցիկ բաց թողեց․ մենք էլ մեր կողմից բաց թողեցինք․ դրանցից մէկ մէկ օրինակ ուղարկեցինք ձեզ, կը տպագրէք։

Այս ղէպքը շատ լաւ եղաւ․ թուրք հասարակութեան ցնցեց․ մեր գործադուլը ու բոյկոտը հրաշալի ազդեց թիւրքերի վրայ․ այս օրերը բաւական նոր համակիրներ աւելացան։ Այդ առիթ տուաւ եւ ցրւած թիւրք ուժերը միացնել եւ իրար հետ կապել․ վերջապէս շատ լաւ եղաւ։ Գաւառը մանաւանդ շատ ոգեւորուեց․ մնացածը Արմէնը կը պատմէ բերանացի։

Նոր մութասարիֆը<sup>2</sup> եկաւ․ նախկին ցուցարարները զնացին նրան էլ դիմաւորեցին եւ փէշերը համբուրեցին։

[Հինգ տող անընթեռնելի]։

Ուրախալին այն էր որ հակահայկական ցոյցեր հէջ հեղաւ․ նոյնիսկ սեւ հարիւրեակը համակրութեամբ եւ յարգանքով էր վերաբերուում ղէպի հայերը։

[Երեք տող անընթեռնելի]։

..... այսքան ապիկարութիւն սոսկալի էր։ Դաւաճանները իրենց արեան գնով պէտք է տուժեն․ վաղը կը հասնեն ձեզ տեւորի լուրեր...

Գործերը շատցան․ ինտենսիւ աշխատանքը մեծ ուժ եւ եռանդ է խլում․ մենք համարեա հեւ ի հեւ ենք հասնում։ Թուրք բրոշուրային գրականութիւն ստեղծեցէք։ Եթէ ուզում էք մենք հոս թարգմանել տանք, դուք հոս տպագրեցէք։

Առայժմ այսքանը շտապեցրէք նպաստից դրամները, քանի որ հացը այս օրերը համեմատաբար էժան է․ յետոյ պէտք է թանկանայ։

Բարեւներով՝ ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1907 թ. սեպտ. 3ին, Շամիր

1.- Շուկան։  
2.- Կառավարիչ, նահանգապետ։



**ՄԻ ՌԵԶՈԼՈՒՑԻԱ**

Մի ռեզոլուցիա (որոշում) խորագիրը կրող այս գրութիւնը թուուցիկ մըն է, խըմ-բագրուած եւ ստորագրուած Արամի կողմէ, բայց այլ ձեռագրով արտագրուած:

Լսելով մեր ընկեր պատգամաւորի գեկուցումը եւ կարդալով Ընդհ. Ժողովի որոշումները մեր թերթերի մէջ, Շամիրի մի խումբ դաշնակցական երիտասարդներ թւով 60, հաւաքուելով այդ առթիւ ունեցանք մտքերի փոխանակութիւն եւ հետեւեալ մի քանի կարեւոր հարցերի մասին դուրս բերինք մեր ռեզոլուցիան: —

I Անջատման հարց.— Շամիրի դաշնակցական երիտասարդների ժողովը գտաւ, որ Ընդհ. Ժողովի կողմից անջատման հարցը<sup>1</sup> միահամուռ ուժով յետ մղելը աւելի քան խելօք եւ նպատակայարմար մի քայլ է: Բացի այն որ մի քանի նշանակալի նկատումներից, որ արած է Ընդհ. Ժողովը մեր երկրի գործունէութեան տեսակէտից, կը գտնենք որ երկու երկիրներէ<sup>2</sup> աշխատաւորական կազմակերպական միութիւնը կու տայ մեզ՝

Ա) Նիւթական-տեսական, յեղափոխական-բարոյական լայն եւ կազմակերպուած օժանդակութիւն, մի բան որից դժբախտաբար շատ աղքատ է մեր տաճկահայ իրականութիւնը:

Բ) Միացեալ գործունէութիւնը մեզ հաղորդակից կ'անէ կովկասեան սոցիալիստական գործունէութեան եւ հոսանքներին եւ կը մղէ մեզ դէպի սոցիալիզմ եւ միջազգայնութիւն, այլապէս մեր առանձնակի գործունէութիւնը, այն էլ մեր դժոխք երկրին մէջ, պիտի տանէր դէպի շովէն ազգայնական ուղղութիւն: Միայն կազմակերպական ընկերական կապն է, որ ընդունակ կը լինի կովկասեան հոսանքներին հոս արձագանգել տալ:

Գ) Որ այդ միութիւնը իբրեւ մի սոցիալիստական ծրագրով խարսխուած միութիւն, երբեք չի կարող ազդել մեր կազմակերպութեան հոս թուլանալուն, որովհետեւ մենք գերազանցապէս աշխատաւորական մասսաներ ունենք հոս եւ աշխատաւորական կազմակերպութիւն ենք, որ տաճկահայ բուրժուազիան երբեք ակտիւ մասնակցութիւն չի ունեցեր մեր շարժման մէջ, ինչպէս այդ կարկառուն կերպով արտայայտուեց վերջին արհեստակցական միութիւնների գործադուլների ժամանակ, երբ աշակերտները ամբողջութեամբ դաշնակցականներ էին, իսկ վարպետներն եւ առհասարակ գործադուլին հակառակողները՝ կամ չէզոքներ կամ արմենականներ:

Աւելորդ չենք համարեր յայտնել այստեղ մեր բուռն համակրութիւնը կովկասեան մեր այն երիտասարդ դաշնակցական ընկերներին, որոնք յետ վանեցին անջատ-

ման խնդիրը եւ դարձան կուսակցութեան գիրկը, պաշտպանելու երկու երկիրների աշխատակողմների շահերը եւ կուսակցութեան անցեալի դրական ուղղութիւնը:

II Քաղաքական տեւորը.— Ժողովը ուրախութիւն կը յայտնէ Ընդհ. Ժողովի այս աւելի քան այժմէական եւ յեղափոխական ձեռնարկի որոշման առթիւ: Քաղաքական տեւորը մի նոր դարագլուխ պիտի կազմէ մեր երկրի յեղափոխական պատմութեան մէջ:

Ժողովը ցանկութիւն կը յայտնէ, որ այդ ձեռնարկը չսահմանափակուի որոշ միջավայրերի մէջ, այլ տարածուի մեր երկրի բոլոր կողմեր, հաւաստիացնելով, որ ժամանակները այնքան են փոխուեր եւ տաճիկ մասսաների մտածելակերպը այնքան փոփոխութիւն է կրեր, որ դա չի կարող մեծ անակնկալներ յառաջ [չ]բերել:

Ժողովը կը ցանկայ տեսնել այդ որոշման իրագործումը կեանքին մէջ:

III Համերաշխութեան խնդիրը թիւրք եւ Օսմ. բոլոր դժգոհ տարրերի հետ.— Ժողովը գտաւ որ Ընդհ. Ժողովը ամենայն իմաստութեամբ արձագանգ է եղեր կեանքի առաջադրած այդ կարեւոր խնդրին սանկցիա<sup>3</sup> տալով եւ յանձնարարելով մարմիններին գործի սկսելու:

Ժողովը նկատել կու տայ, որ այդ ուղղութեամբ գործունէութիւնը այս մի քանի ամսուայ մէջ, թափ ու նոր ոգեւորութիւն է մտցուցեր մեր կազմակերպութեան եւ ժողովրդի լայն մասսայական խաւերի մէջ, որ դա արմատականապէս ցնցեց նաեւ թուրք մասսաներին:

Ժողովը համոզուած է որ այդ ուղղութեամբ գործունէութիւնը միակ եւ ամենալաւ միջոցն է մեր հարցի լուծման:

Եւ կ'առաջարկէ առաջիկայ Դաշնակցութեան Խորհուրդին աւելի լայնացնելու, խորացնելու եւ կոնկրետ հիմքերի վրայ դնելու համերաշխութեան խնդիրը:

IV Եւրոպական պրոպագանդը.— Ժողովը այդ խնդրի վրայ կը նայի իբրեւ մի միջոցի, որով Եւրոպայի հասարակութիւնը կը ծանօթանայ մեր կուլտուրական եւ յեղ. կեանքին եւ դրանից ոչ մի ակտիւ քայլ չի սպառնայ մեր հարցի լուծման, որի գաղտնիքը կը գտնէ մեր յեղափոխական գործի եւ համերաշխութեան մէջ:

V Կազմակերպական պրոպագանդա.— Ժողովը կ'որոշէ.

ա.- Յայտնել գոհունակութիւն կուսակցութեան տեսական մասի զարգացման եւ ընդլայնման առթիւ:

բ.- Որ այսօր երկրի մէջ դաշնակցական ինտելիգենցիան մեծապէս շահագրգռուած է ոչ միայն գործնական յեղափոխական խնդիրներով, այլեւ տեսական:

Որ մեր տեսական գրականութեան մէջ առանձին տեղ տրուի երկրի ուսումնասիրութեան գործին, մանաւանդ հայկական հարցի եւ Տաճկաստանի տնտեսական, քաղաքական կեանքի ելեւէջների ուսումնասիրութեան:

Ժողովը ցանկութիւն կը յայտնէ հիմնել երկրի մէջ մի իլլեգալ օրգան, որ տեղն ու տեղ արձագանգէ ընթացիկ խնդիրներին, որոնց արտասահմանեան մամուլը անկարող է հետեւել, հեռաւորութեան եւ զանազան դժուարութիւնների պատճառով:

VI Սոցիալիստական ծրագիրը։— Ժողովը կը նկատէ, որ Ընդհ. Ժողովի մեր ծրագրի իւրացնելը ու լայնացնելը ոչ միայն պիտի նպաստէ կովկասեան գործունէ- ութեան յաջողութեան, այլ նաեւ մեծապէս պէտք է նպաստէ եւ երկրի մէջ դասա- կարգային տեսակէտի եւ անտագոնիզմի<sup>4</sup> զարգացման, որ դա պրոպագանդական եւ գործնական տեսակէտից մեծ նշանակութիւն ունի մեզ համար։ Ատով է, որ մենք ցոյց պիտի տանք թէ մենք լոկ քաղաքական նպատակների հետապնդող կուսակցու- թիւն չենք, այլ ունենք որոշ տնտեսական իտէալներ, որ քաղաքական ազատու- թեան երկրորդ օրը պիտի սկսուի տնտեսական, դասակարգային իսկական կազմա- կերպուած կռիւր։

Որ սոցիալիստական ծրագրի կիրառումը համերաշխութեան գործի յաջողու- թեան ամենալաւ խարխիւն է։

Այս բոլորի հետ ժողովը համոզուած է, որ երկու երկրների դաշնակցական երի- տասարդութեան եւ աշխատաւորական մասսաների զոհողութեան գնով եւ անբա- ժան գործակցութեամբ պիտի իրաւակարգ հաստատուի եւ մեր ապաբախտ երկրի մէջ, որի ժամանակ միայն հնարաւոր է իսկական սոցիալիստական ստեղծագործող աշխատանքը...

Իսկ մինչ այդ՝

Կեցցէ երկու երկիրների աշխատաւոր մասսաների սերտ միութիւնը։

Կեցցէ յեղափոխութիւնը

Կեցցէ սոցիալիզմը։

Ի դիմաց ընկերների՝ ԱՐԱՍ

1907 սեպտեմբեր 5

Ի Վան

Իմ սքեյսը այն  
 Կեցցէ երկու երկիրների աշխատաւոր մասսաների սերտ միութիւնը։  
 Կեցցէ յեղափոխութիւնը.  
 Կեցցէ սոցիալիզմը.

Ի սքեյսը Երկիրների միութիւնը

1907 Սեպտեմբեր 5  
 Ի Վան

1.- Ակնարկութիւն այն իրողութեան, որ 1905 թ. Կովկասեան Նախագծի, այսինքն տնտեսական- ընկերային ծրագրի որդեգրումով, կուսակցութեան մէջ առաջ եկած էին ծայրայեղ աջակողմեան եւ ձախակողմեան անջատողական շարժումներ, մինչ ժողովը յաջողած էր պահպանել Դաշնակցու- րեան միասնականութիւնը։

2.- Նկատի ունի Օսմ. Թուրքիան եւ Ռուսիան։

3.- Հաւանութիւն, հաստատում։

4.- Հակամարտութիւն։

### Արեւմտեան Բիւրոյին

Ընկերներ!

Ստացանք Աւարայրի վրայով ձեր գրած երկու նամակները. մէկը կազմակերպական խնդիրների, միւսը տեխնիկական հարցերի մասին. շատ գոհ եղանք այդ մանրամասներից. երանի թէ բոլոր նամակները այդքան բովանդակալից լինէին եւ միշտ էլ գրէիք:

Գրում էք որ տեղի ունեցած դէպքերի մասին մանրամասնութիւններ գրեցէք. մենք շաբթէ շաբաթ ամէն բան մանրամասնաբար գրում ենք Սարուստան. հնարաւորութիւն չկայ նոյն բաները ձեզ էլ կրկնելու. լաւ կը լինի որ Ս. Ք. ընկերները իրենց վրայ վերցնէին այդ պարտականութիւնները:

Ամերիկա էլ գրում էին նորութիւններ ու տեղեկութիւններ. բայց վերջերս ոչ իրանք են գրում, եւ ոչ էլ մենք հաւաս ունենք գրելու. նրանք ուղղակի մեզ յոգնեցրին իրենց «խորհուրդներով» ու «թելադրութիւններով». եթէ մեզ չեն հաւանում թող իրանք դան մեր տեղը բռնեն. այլապէս մենք մի մազաչափ անգամ չենք փոխի մեր տակտիկան, մնալով միշտ Ընդ. Ժող[ովի] որոշումների եւ մեր ծրագրի սահմաններում: Այս օրերին երբ կեանքը հազար ու մի հրամայողական պահանջներ է դնում մեր առաջ, երբ մենք խոր կերպով գգում ենք, որ կեանքի դրած հարցերին չենք կարողանում դեռ գոհացում տալ, իսկ նրանք մեզ մեղադրում են չափազանց արմատականութեան մէջ, մեզ համար անտանելի է դարձել սովորական դարձած Ֆրագաները — որ հոս ազգային հարց կայ միայն, որ հայերն է, որ հոս նեղում են ու հալածում, թուրքերին, քրդերին բան չկայ—. մեռանք լսելով, մենք ենք երկրումը, մենք գիտենք թէ ով է նեղում եւ ով ոչ...

Երեւի նոյն ճնշումների ազդեցութեան տակ է, որ Ռոստոմը ջահելներին խրատներ է տալիս. լսում ենք եւ Ռոստոմին ամբողջ հոգով հասկանում. բայց մնացածները անտանելի են...

Ձեք հասկանում ձեր նամակի առաջին կէտը. ի՞նչ ասել է, թէ մենք միայն պէտք է մտածենք եղածը պահպանել. դա մեր նպատակներից մէկն է միայն. առանց նոր գործի հոս մեզանից եւ ոչ մէկը չի համաձայնի մնալ. մենք գլուխ չունենք հին աւերակների վրայ պահպանի դեր կատարելու... նոր դար է սկսել, նոր հորիզոններ են գծւում. Ընդհանուր Ժող[ովը] սանկցիա է տւել դրանց. էլ մնաս բարով անցեալի պահպանողականութեանը...

Ձայնը հեռւից ուժեղ կը հնչի. ինչ որ մեծ բան է պատահել երկրում, մեծ սարսափ կայ: Դրութիւնը այն է որ կառավարութիւնը օր օրին իր գլուխը կը կորցնէ. իսկ իրականապէս այժմ ներքին նահանգներում կառավարութիւն չկայ. մի տեղ տիրապետող քրդութիւնն է, միւս տեղը մենք... Այդ է ցոյց տալիս եւ ներփակ նամակները, եկած աւելի հեռաւոր գաւառներից:

Վստահ հաւատացած եղէք, եթէ ոչ աւելի գէթ ձեզ չափ սարսափում ենք ընդհարումներից, որովհետեւ դա մեր կեանքն է վտանգում եւ մեր քրտինքով շինւած գործն է քայքայում...

**Գաւառը ոգեւորութեան մէջ է. Կոմսը Անառիկում<sup>1</sup> կռիւ է ունեցել քրդերի հետ: Մի գիւղի թալանը գրաւելուց հաւարի են հասել եւ ազատել:**

Տեղիս վայրն խայտառակութեամբ փախաւ. երեւի եւրոպական հեռագիրները լուր բերին, որ հոս դէպք է տեղի ունեցել. սեւ հարիւրեակները կազմակերպւեցին վայրի հրահանգով. փոստատուն գնացին նրան հոս վերահաստատել տալու. բայց զինւորականութիւնը եւ գիտակից ժողովուրդը կոնտր հեռագրով եւ գործադուլով արգելեց. հինգ օր գործադուլ էր. քաղաք մեռաւ. տրամադրութիւնը շատ բարձր էր. թռուցիկները հրապարակները ողողեցին... ամէնից մէկ մէկ [օրինակ] ուղարկած ենք, երեւի ստացած կը լինէք:

**Մնացած խնդիրների մասին կը գրենք փոստով ուղղակի, անցեալ հասցէով:**

**Ստացել ենք եւ կնիքները: Այդ ի՞նչ N. անուն մարդու մասին է խօսքը. չճանաչեցինք. իբր թէ պիտի գար հոս...**

**Կնիքները ստացանք. ուժ տւէք թուրքերէն բրոշիւրների:**

**Բարեւներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ**

1907 թ. սեպտ. 8-ին

1.- Անառիկ – ծածկանուն Շատախի Թաղ աւանի:

**Ուսանողական, արհեստակցական եւ առհասարակ դասակարգային տնտեսական նպատակների հետապնդող դաշնակցական միութիւններուն**

**Ընկերներ!**

Վերջերս ուժգին թափով ասպարէզ ելան մի քանի արհեստակցական եւ ուսանողական միութիւններ, որոնց արած մի քանի ակտերը – գործողութիւնը – գործադուլներ չարսուում<sup>1</sup> եւ բոյկոտներ - ըմբոստացումներ դպրոցներում, հասարակութեան ուշք ու միտքը դարձրին իրենց կողմը, մի քանիսի կողմից արժանանալով խրախուսանքի, իսկ միւսների կողմից պարսաւանքի:

Այս խնդիրների մասին թէեւ մեր ընկերները ձեզ անձամբ խօսել են եւ բացատրել մեր ծրագրի ոգին եւ մեր տակտիկի խնդիրները այդ առթիւ, բայց մի անգամից մի անգամ պարզելու համար մեր դիրքը եւ մեր վերաբերմունքը դէպի այդ հարցերը, կարիք զգացինք ձեզ դիմելու գրաւոր կերպով: Մեր ապաբախտ երկրում, ուր ամէն բան անորոշ վիճակի մէջ է, ուր ամէն մարդ իրեն կողմից իրաւունք է համարում մեր ճակատագրի հետ խաղալու, այս առթիւ ձայներ բարձրացան, որոշ եւ անորոշ ակնարկներով, թշնամական եւ բարեկամական ցոյցեր եղան:

Մի կողմը կանգնած էին խիկար իմաստունները, որոնք կոչում էին որ այդ գործադուլները եւ բոյկոտները «վաղահաս», «անժամանակ» եւ «ազգադաւ» ձեռնարկներ են, որ հոս շահագործողներ եւ շահագործւողներ չկան:

Իսկ միւս կողմից էլ տանջւած ու տառապած աշխատաւորներն ու իդէալիստ երիտասարդութիւնն է ոտի կանգնել. առաջինը ուժգին թափով պահանջում է «արմատական փոփոխութիւններ» իր տնտեսական կեանքում, իսկ երկրորդը դպրոցում եւ առհասարակ բոլոր հասարակական հիմնարկութիւնների մէջ:

Կազմակերպութիւնը պարտք է զգում, երկուսին էլ տալ իր պատասխանը: «Խիկար իմաստուններին» մենք շատ պատասխանելիքներ չունենք, նրանց դիմակները այն օրւանից է պատուել, երբ նրանք սկսեցին պաշտպանել հասարակութեան արտօնեալ դասերի – հարուստների եւ ազդեցիկ վարպետների շահերը. ուրեմն նրանք կանգնած են դասակարգային շահի տեսակէտի վրայ: Ազգն ու ժամանակը, կամ զանազան «գիտական» կոչւած տեսական շաբլոններով<sup>2</sup> խօսելը միայն դիմակ է, տակը իրենց իրաւունքների շահերն է: Մենք անհունապէս ուրախ ենք, որ այս ողբերը եւ աղաղակները մեծագոյն չափով գալիս է ո՛չ մեր շարքերից, այլ մեր շարքերից դուրս եղածների, կամ իրենց յեղափոխական անլանողների միջից. սա մի աւելորդ անգամ էլ գալիս է ապացուցանելու, որ Դաշնակցութիւնը գերազանցապէս աշխատաւորական մասսա ունի հոս:

Իսկ եթէ իր շարքերում էլ կը գտնեն «խիկար իմաստուններ», նրանց էլ մի պատասխան ունենք,— երթաք բարով — ո՛վ չի ընդունում մեր ծրագիրը, ո՛վ չի են-

Թարկուում մեր դիսցիպլինին, ո՛վ իր մասնաւոր կեանքում շահագործում է ուրիշներին եւ թշուառների արցունքով երջանկութիւն ձեռք բերում, նա չի կարող դանակցական լինել, նա չի կարող ընդունակ լինել այն մեծ անձնագոհութեան որ պահանջում է մեր մեծ քաղաքական գործը. կամ դէպի աջ կամ դէպի ձախ:

Պանք աշխատաւորներին եւ երիտասարդութեան: Սրանք էլ պիտի ասենք, որ այնքան շրջահայեաց եւ քաղաքական խնդիրները ըմբռնելու տեսակէտից հասուն խելքով չէ որ երեւան կ'ելնեն իրենց պահանջների եւ դրանք իրագործելու միջոցների մէջ: Բայց եւ այնպէս փառք իդէալիստներին:

— Այս առթիւ մեր համոզումը, մեր դիրքը պարզ է եւ շիտակ. մենք միշտ պնդել եւ բարձրաձայն աղաղակել ենք, որ մեր ապաբախտ երկրում այն ժամանակ միայն հնարաւոր է արմատական փոփոխութիւններ մտցնել մեր տնտեսական եւ հասարակական կեանքում, երբ կը լինեն քաղաքացիական տարրական ազատութիւններ՝ խօսքի, մամուլի, հաւաքումների, կազմակերպութիւնների, միութիւնների եւ այլն եւ այլն. այլապէս ներկայ բոլոր ձեռնարկները պայխատիւններ — կիսատ միջոցներ են եւ արմատական յեղաշրջում չեն կարող մտցնել մեր կեանքում:

Ուրեմն ներկայ քաղաքական դժոխք կացութեան մէջ, մեր առաջնակարգ հոգսը լինելու է քաղաքական կռիւր: Նա որ ետ պիտի բերէ յեղաշրջումը եւ վերածնութիւնը մեր ներքին կեանքի բոլոր եւելչւնների: Չարիքի արմատը Սուլթան Համիտն է եւ իր գարշելի ուժով:

— Բայց ի նկատի ունենալով այն դասակարգային դիֆերենցիացիան — շերտաւորումը, որ սկսել է մեր իրականութեան մէջ, մենք չենք կարող մեր աչքերը իրականութեան առջ կամաւոր կերպով կուրացնել... Մենք պարտաւոր ենք հնարաւոր չափով հետապնդել եւ դրան — զարգացնել եւ շտապեցնել այդ դիֆերենցիացիան. հասկացնել ամէնքին որ մենք ժողովրդի որոշ մասի — աշխատաւորների — կուսակցութիւն ենք: Որ այդ աշխատաւորների շահերը պատմական հակասութեան մէջ են հասարակութեան փոքրամասնութիւն կազմող արտօնեալ դասակարգի շահերի հետ:

— Որ աշխատաւորների համար նոյնքան վտանգաւոր թշնամիներ են բոլոր շահագործողները, ինչքան որ ներկայ բռնակալ կառավարութիւնը:

— Պէտք է հասկացնել մեր շարքերին եւ առհասարակ հասարակութեան, որ մենք միմիայն քաղաքական նպատակների հետապնդող կուսակցութիւն չենք այլ եւ շատ որոշ տնտեսական իդէալներ ունենք. որ մեզ մանր քաղաքական իդէալները ո՛չ թէ նպատակ են այլ միջոց, մեր տնտեսական նպատակներին դիւրութեամբ հետապնդելու համար:

— Մի քանի խօսք էլ միութիւնների կուսակցական լինելու եւ քաղաքական նպատակներ ունենալու մասին: Սա ոչ թէ մի ճարպիկ խաղ է, ինչպէս կարծում են մի քանի մութ ուժեր, թէ տնտեսական կռիւր միջոց են դարձրել իրենց կուսակիցների շարքերը խտացնելու համար: Սա սխալ է, ինչպէս սխալ են եղել մեր մութ հակառակորդների շատ առարկութիւններ եւ դիտողութիւններ մեր գործերի մասին:

— Միութիւնները կուսակցական-քաղաքական կ'ուզէինք լինէր եւ ո՛չ միայն այն

պատճառով որ այսօր մեր երկրում հրամայողական հարցը քաղաքականութիւնն է, այլ այդ խնդիրը բխեցնում ենք մենք մեր քաղաքական դաւանանքից, մեր ծրագրի ոգուց: Քաղաքականապէս ազատ մի երկրում էլ մենք միթիւնկները կուսակցական հողի վրայ կը կազմակերպէինք, ինչպէս այդ եղաւ Կովկասում:

— Մեր համոզումը այդ առթիւ այս է՝ որ աշխատաւոր մասսաները չպիտի միայն շահագրգռուէին իրենց փորի գոեհիկ կուլտով — պաշտամունքով, այլ նրան պէտք է սովորացնել եւ մարդկայնական զգացմունքներ, որ նա պէտք է ապրէ եւ գործի մարդկութեան, իր ժողովրդի կուլտուրական ոյժի — ի՛ր հայրենիքի բարօրութեան համար:

— Մենք պատկանում ենք այն սոցիալիստական կուսակցութիւնների շարքերին, որոնք դաւանում են, որ պատմութիւնը ո՛չ թէ միայն տարերային ճակատագրական հոսանքով է առաջ գնում, այլ եւ գիտակից ու կազմակերպւած մասսաները կարող են փոխել այդ տարերային հոսանքը եւ նրան տալ նպատակայարմար ուղղութիւն:

Ահա այն գլխաւոր շարժառիթները որոնք ստիպում են մեզ — միութիւնները կուսակցական-քաղաքական հողի վրայ կազմակերպել:

Անցնենք այժմ տնտեսական կուլի ընթացքում կիրառելիք տակտիկական միջոցներին:

Մեր բոլոր կուսակցական օրգանները — խումբ, ուսանողական, արհեստակցական եւ գիւղացիական միութիւններ — պէտք է ենթարկւեն որոշ կազմակերպական դիսցիպլինի, եւ իրենց քայլերը պէտք է յարմարացնեն մեր ընթացիկ տակտիկին:

Երեւի գիտէք, որ ընթացիկ կեանքում — ըստ մեր ապակենտրոնացման սխտեմի — ամէն շրջան ի՛ր ներքին կեանքում ազատ է իր տակտիկական հարցերում, ի հարկէ Ընդհ. Ժողովի ընդգծած սահմաններում — եւ դրա հետեւանքով է, որ ամէն վայր ըստ տեղի հանգամանքների, ունի իր ուրոյն ընթացիկ տակտիկը, յարմարեցրւած ժամանակի, կառավարութեան դիրքի այս կամ այն կերպ դասաւորուելուն:

— Որոշակի կերպով գիտնալու էք եւ այն, որ մեր ներքին կեանքում ունեցած դասակարգային-տնտեսական եւ դրա հետ կապ ունեցող հասարակական խնդիրների առթիւ տեղի ունեցած պայքարում, գործ չենք ածում այն շատ նեղ բուռի յեղափոխական միջոցները, որոնք այնքան ցայտուն կերպով արտայայտուել են մեր քաղաքական կուլի ընթացքում: Վերջին դէպքում մենք դիմում ենք այսպէս կոչւած պասիւլ—կրաւորական միջոցների: Այդպէս է ընդունւած եւրոպական սոցիալիստական եւ նոյն իսկ սոցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնների մօտ:

— Այսինքն կազմակերպում ենք մասսաները, նրանց մէջ զարգացում ենք դասակարգային գիտակցութիւն, վստահութիւն դէպի ի՛ր սեփական ուժերը եւ այն ճանապահները — գործադուլ, բոյկոտ, հասարակական կարծիք, փոխադարձ օգնութիւն, եւ այլն — որոնցով հնարաւոր է ներկայիս գէթ որոշ չափով թեթեւացնել տնտեսական կրիզիսը — ճգնաժամը, կամ հասարակական հիմնարկութիւնները ազատել — բուրժուա, աղայական, կղերական ուժակցիոն անձնաւորութիւնների



խնամակալութիւնից եւ տալ այդ հիմնարկութիւններին, որքան կարելի է դեմոկրատիկ գոյն, եւ դրանց — դպրոց, թաղականութիւն, քաղաքական ժողով, վանքեր եւ այլն — օգտակար եւ մատչելի դարձնել աշխատաւոր ժողովրդին:

Ուրեմն մենք կազմակերպում ենք, մենք նրանց դասակարգային շահերի գիտակցութիւն ենք հասկացնում. մենք նրանց գործելու ճանապարհներ ենք ցոյց տալիս, միշտ պահանջելով, որ իրենց արածների եւ անելիքների մասին հաշիւ տրուի մեզ յանուն կազմակերպական դիսցիպլինի: Այլապէս մենք մեր ձեռքով մեր ներքին կազմակերպական կեանքում կը ստեղծենք անարխիա...

Ընկերներ! Իմացէք եւ այն, որ ամէն գործադուլ եւ ակտ աջողութեամբ չի վերջանայ, որ կազմակերպելուց յետոյ դեռ լաւ չըմբռնած իր շահերը, լաւ չհամոզած վիճակակից ու բախտակից ընկերներին, գործադուլ յայտարարելը անհեռատեսութիւն ու անփորձութիւն է:

Նախ գիտակցութիւն, կազմակերպութիւն, զոհողութեան ոգի, ապա գործադուլ ու այլ ակտեր:

Առաջարկելով այս բոլորը ձեր ընկերական բարի ուշադրութեան, մնում ենք ձեր լաւագոյն քայլերը միշտ խրախուսող:

**ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇ. ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ**

1907 թ. օգոստոս 30ին

Շամիր

1.- Շուկայում:

2.- Կաղապարեայ, սովորական, անիմաստ մտքերով:

**Արեւելեան Բիւրոյին!**

**Ընկերներ!**

Նամակաբերս մեր հին ընկերներից է, որ բաւական օգտակար է եղած գործին. սա հիւանդութեան պատճառով դուրս է գալիս իրեն համար ապրելու եւ աշխատելու. սրան տրւած է բոլոր ծախսերը մինչեւ սահման եւ 4 ոսկի ապրուստի դրամ 2 ամսւայ, ըստ մեր ներքին օրէնքի, ուրեմն սրան միայն պէտք է ցոյց տաք բարոյական օժանդակութիւն:

— Մեզ մօտ առանձին նորութիւններ չկան. սպասում ենք ձեր նամակներին. երկու փոստա անցաւ նամակներ չկայ. միթէ՞ երկու ընկերները չեկա՞ն:

Ի՞նչ եղան մեր ինդերած գրող մեքենայի մելանը, մոմածոյ թուղթը եւ այլն. այսքան գրեցինք ու խնդրեցինք, միթէ դուք Աստուած չունէք, դէթ պատասխանեցէք որ ստացել էք, կամ կարող էք կամ ոչ:

Ընկերները գաւառ են. ուղարկեցինք երկու հատ թիւրք թերթի N 8-ից, որը 15 օրեայ է եղել. ինչո՞ւ մեր թերթում սրանցից բան չեն թարգմանում... N N 4-5, 6, 7, 8 ուղարկել ենք, նոյնպէս բազմաթիւ թռուցիկներ, եւ ոչ մէկը չի երեւում. չե՞ն ստանում:

Եթէ մի այլ բան է պատահել, չենք գիտեր: Գործերը լաւ է. բոլորս համարեա հիւանդ ենք. սեպտեմբեր ամիսը մեր վրան չեկաւ:

Նախկին կուսակալի գնալուց յետոյ, նոր եկողը տեղից հէջ չի շարժուում, աչքերը գոցել է եղածների առաջ:

Տաճկական քաղաքականութիւնն է, խիստից յետոյ միշտ թոյլն է գալիս: Այսօր նորէն մի թաբուր ասկար — զինուոր — տարան սահմանագլուխ. մարդ չի հասկանում այս սահմանագլխի հաշիւը: Պահեստի զինուորներին գէնքի կանչելու հեռագիր է եկել երկու օր առաջ:

Ինչ որ է ընդհանուր շարժումներ է նախագծուում, որ մենք ըմբռնել չենք կարող:

Դուրանի դրամը ամբողջութեամբ տեղափոխեցինք. էլ մեզ մօտ դրամ չմնաց. եթէ դրամներ կան կարող էք ուղարկել, չէկերը այուհետեւ լաւ կը ծախսեն, առհասարակ դրամները ուղարկեցէք Դելտա-ի անունով:

Ռուսական տեղիս հիւպատոսը մեկնում է Մոսկւ՝ չենք գիտեր ինչի համար. երեւում է ռուսական միջամտութեան խօսքը ճշտում է. մարդ չգիտէ թէ մենք ի՞նչ դիրք պէտք է բռնենք. բնականօրէն պիտի մերժենք ռուսական ոեւէ միջամտութիւն: Ռուսը իր երկրում ի՞նչ իրաւակարգ հաստատեց, որ մեզ մօտ էլ ինչ անէ. երեւի ինչ որ է դիպլոմատիկական խաղեր կան. Ռուսիային հաւատալ ղժլար է, ինչպէս առհասարակ դիպլոմատիային:

Գրեցէք ձեր կարծիքները. այս եւ առհասարակ նման երկար նիւթերի մասին. կարող էք գրել բաց Վրէժի գծերով:

«Խորհուրդ» այս տարի միթէ՞ չեղաւ:

Առայժմ այսքանը:

Ընկերական բարեւանքով՝ ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1907 սեպտ. 22ին, Շամիր

## 271

### ՎԿԱՅԱԿԱՆ!

Մոյն վկայական ներկայացնող պ. Պօղոս եւ ընկեր, մեր մարդկանցից են, անց-  
նում են ձեր շրջանից, խնդրում է ամէն տեսակ օժանդակութիւն:

ՀԱՅ ՅԵՂ. ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1907 թ. սեպտ. 24ին, Շամիր

## 272

### Արեւելեան Բիւրոյին

Արամի կողմէ գրուած այս եւ Արեւմտեան բիւրոյին ուղղուած յաջորդ երեք նա-  
մակները քաղուած են Հայաստանի Ազգային արխիւներու գիտական խորհուր-  
դին կողմէ հրատարակուած Ռուբէն Տէր Մինասեանի (Փաստաթղթերի եւ նիւթե-  
րի ժողովածու) նուիրուած հատորէն, Երեւան 2011, էջ 54-58, 67-68, 71-72, 72-73:

Ընկերներ!

Մի գեղեցիկ պատահականութեամբ, երէկ ստացանք միաժամանակ Ձեր գրած  
սեպտ. 14 նամակները: Թերեւս ո՛չ մի ժամանակ բիւրօ կոչուած մարմինը այնպիսի  
սիւրպրիզ<sup>1</sup> չի արել Երկրին: Հանգամանքից օգտուելով, կ'ուզէինք մի քանի հարցե-  
րի մասին երկարօրէն գրել Մինարէթով, իսկ մնացած եւ շտապողականը թողնել  
փոստային:

Ա.- Այլի բէյի տեռորը<sup>2</sup>. դա արդէն չափից դուրս տեղին եւ ժամանակին կատար-  
ւած մի ակտ է: Թէ հայերը ի՛նչ խանդավառութեան մէջ են եւ դա որքան ազդեց մեր  
վարքի եւ հմայքի բարձրանալուն, այդ մասին աւելորդ է գրելը, պէտք է միայն  
զգալ եւ երեւակայել... Ձեզ համար հետաքրքիր է թիւրք եւ քիւրդ ժողովրդի վրայ  
թողած տպաւորութիւնը: Դա զանազան է տարբեր խաւերի վրայ. մեր ընկերները  
եւ հասարակ ժողովուրդը կնտուզիւածի<sup>3</sup> մէջ են, այնպէս են ոգեւորուել եւ թեւ  
առել, որ չենք կարող ասել: Կուսակցութիւնը նրանց աչքում մի հսկայ ժայռի մե-  
ծութիւն դառաւ: Արդէն նախքան գալը իրենց հետ խօսուած էր եւ օր աւուր սպա-  
սում էին լուրի. տեսնէիք, թէ ինչպէս ուրախացան յաջողութիւնից.- էլ մեզ բան չի

լինի, էլ մեզ չեն կարող յաղթել, մեր կուսակցութիւնը զօռլի<sup>4</sup> է... ասա նրանց սովորական խօսքերը: Թռուցիկ արդէն տպել վերջացրել էին[ք] եւ ցրել, նախքան ձեր նամակ ստանալը: Ի՞նչ ասել կ'ուզէ թռուցիկը եղաւ երկու մարմինների ստորագրութեամբ<sup>5</sup>, այս եղաւ շատ հասարակ ձեւով եւ ամենայն ուրախութեամբ յանձն առան այդ գործը դարձնել ընդհանուր բողոքի արտայայտութիւն: Թռուցիկը ներփակում ենք, դա եթէ թոյլ է կամ վերապահութեամբ գրւած, մի կողմից վերագրելու է ստոյգ լուրեր չունենալու (կառավարութիւնը տպաւորութիւնը մեղմացնելու համար տարածել էր, որ բնական մահով է մեռել), իսկ միւս կողմից էլ ձեր բռնելիք դիրքը ըստ քաղաքական կացութեան մեզ անյայտ էր. չուզեցինք աւելի հեռու գնալ, կարծելով, որ դա վատ կ'ազդէ ձեր գործերի վրայ, եթէ ո'չ՝ աւելին կարող էինք անել առանց վերապահութեան, մանաւանդ որ գրգռում կամ հակակրօնութեան նշան չեղաւ: Հետաքրքիր է եւ պաշտօնական շրջանակների կարծիքները: Սրանք ուղղակի սարսափել են.՝ Ուրեմն կոմիտէները (հայ եւ թիւրք), որի վրայ աչք դնեն, նա ազատել անկարող է ուր որ էլ լինի: Ուրեմն յեղափոխականներ] սկսեցինք թիւրք բարձրաստիճան պաշտօնեաներ էլ զարկել: Սա տեսան վերջերս մի քանի փորձերով: Ախ, եթէ կարողանայք հասկանալ այն անբարոյականացուցիչ ազդեցութիւնը ինչ անում էր չարագործների առանց պատժի մնալը պաշտօնեաների եւ թիւրք եւ քիւրդ ժողովրդի վրայ, ինչպէս վերջինները խրախուսուած մեծերի օրինակից սկսել էին բացարձակ շահատակութիւններ անել... Բայց այս վերջին տարին դրանք վերջացան, փոքրները ծակեր մտան, մնացել էին մեծերը, դրանց դասն էլ եղաւ Ալի բէյի սպանութիւնը: Այս բոլորից յետոյ մենք առանց քաշելու այսուհետեւ ամէն բան կ'անենք տեղն ու տեղը, էլ վախ չունենք, մնա'ս բարով փափկանկատութիւն, շուտով կը լսէք բարի լուրեր. անցեալները մէկ 2 ժամ ու չհասնելու պատճառով ազատեց մեր ձեռքից լիբրը\*<sup>6</sup> տեղափոխեց Դուրան պաշտօնով: Երկու ամիս առաջ տեւորի ենթարկեցինք մի ժանդարմ թուրքացած հայ, իսկ 8 օր առաջ մի քիւրդ շէյխ, որը վառել էր Բերկրիի շրջանի հայերին եւ մեծ վնասներ հասցրել մեզ: Այդ արինք չէնց իրենց՝ քրդերի ձեռքով: Կառավարութիւնը ոչ մի կարեւորութիւն չտւաւ:

Այս բոլորից յետոյ միայն կարելի է ասոսալ, որ Ալի բէյ չսատկաւ<sup>7</sup>:

Բ. նկատողութիւն էք արել մի քանի տեղով, որ մեր գործերը միակողմանի են տարւում, որ մենք կարեւորութիւն չենք տալիս մարտական-ազգային գործին: Չենք գիտեր այդ տեղեկութիւնները ինչ աղբիւրներից էք հաւաքել եւ ի՞նչ նպատակով է հաղորդւած. սա հետաքրքիր էլ է՛ր, բայց որ վերջին 3-4 տարւայ մեր ամբողջ գործունէութիւնը դառել է գործնական — կազմակերպութիւն, գինում, փոխադրութիւն եւ վարժութիւններ — խնդիրների շուրջը, այդ երեւի ձեզ անյայտ է եղել կամ էլ, որ մենք միայն այս տարի է փոքր ինչ ուժ ենք տուել պրոպագանդի գործին համերաշխութեան հետ, չմոռանալով եւ մնացածները. այս եւս ձեզ լաւ յայտնի էր, որ մենք միշտ գրել, աղաչել, փնտռել ենք ինստրուկտորներ<sup>8</sup>, բայց լաւ լաւ բնաւորութեամբ եւ կրթւած մարդկանց. ձեզ շատ լաւ յայտնի է, որ մեր ընկերները արտասահմանում ճրագով են փնտռել այդպիսիները, այդ էլ յայտնի է, բայց որ ո'չ թէ տասնեակ հոգի, այլ 2-3ը չեն գտել, այդ էլ պարզ է: Բայց թէ ինչո՞ւ այժմ կամ առաջ ձեզ թոյլ չէք տւել, այդպիսիներին գտնելու եւ ուղարկելու, դրա պատճառն էլ

պարզ է: Երբ մենք տեսնում ենք, որ դուք Սմբատին<sup>9</sup> եւ ընկ. ու նման մարդկանց համաձայնում էք ներս ուղարկել (նոյնիսկ Երկրի կարծիքը առնելուց յետոյ), սկսում ենք կասկածել ձեր ընտրութիւնների յաջողութեան վրայ. անկեղծ կերպով հաւատարմութեամբ ենք, որ փոխադարձ անվստահութիւնը բուն է դրել. սկսում ենք չհաւատալ ձեր հոտառութեան: Այժմ միայն այսքանը կ'ասենք, որ այդպիսի մարդիկ մեզ հարկաւոր են. միայն երկու պայմանով ներս կ'առնենք, առաջին, այդ մասին կարծիք գրեն եւ մեր դրսի ընկերները եւ մենք էլ նամակով իմանանք, թէ ովքեր են... Չէք կարող երեւակայել այն խայտառակ կացութիւնը, երբ առաջ են գալիս այդպիսի անգործ ուժերի ներկայութիւնից. փոխանակ գործը շինելու քանդուում է...

Վերջերս եթէ ուշի ուշով հետեւում էք մեր գործերին, տեսած կը լինէք, որ մենք խուսափում ենք շատ փախստականներ, մանաւանդ դրսեցիներ պահել. դրանք միայն ծանրացնում են վիճակը եւ վտանգը անխուսափելի դարձնում: Երկիրը (մեզ մօտ) գոնէ այնքան է զարգացել, որ երկրորդական ուժեր եւ ձեռքեր կարող է արտադրել. մենք աշխատում ենք լեզու ուժերով գործ տեսնել, եւ որքան կարելի է ամեն գործերը լեզուից առնել. այդ է եղել եւ պատճառներից մէկը, որ մենք հրաժարում ենք նորերը ընդունել:

Փոքր Հայքից եկածներին ուրախութեամբ կ'ընդունենք, մեր շրջանի դուները բաց է օգտւելու համար բոլոր լաւագոյն ուժերի առաջ. գրեցինք Մինարէթ<sup>10</sup> առաջին պատահութեամբ ներս ուղարկեն:

Այս բոլոր անվստահութիւնները թերեւս վերանար, երբ դրա փոխանակ քար անտարբերութեան կամ ինքնագլուխ գործիչների փոխարէն մենք ունենայինք մեզ հասկացող ընկերներ եւ մարմիններ եւ որ ամենագլխաւորն է, յարաբերութիւնները վարել շատ կանոնաւորութեամբ, պահանջներին գոհացում տալ հնարաւոր չափով շատ եւ ամէն բան կատարեալ կը լինէր...

Գ. Ահա՛վիկի [?] դէպքի մասին գրել ենք արդէն մանրամասնաբար եւ թղթակցութեան մէջ. գրելն էլ աւելորդ պիտի լինի, երեւի առաք. միայն մի թիւրիմացութիւն պիտի եղած լինի. մենք գրել էինք, որ Կոմսը կ'երթայ (Դուրան), եթէ Իշխանը շուտ հասնի հոս, այլապէս դժուար է չարժեւել. արդէն գրել ենք մեր գործերի վիճակի մասին, շուտով կ'ունենանք ռայոնական ժողով, ուր ներկայ կը լինի եւ Ռուբէնը. այդտեղ արդէն կ'որոշուի Դուրանի հարցը: Բայց լաւ կը լինի, որ դեկտեմբերի վերջը Խորհուրդը լինի<sup>11</sup>. Ինչպէս գրել ենք՝ զբաղւելու է 3 հարցով. ա. սահմանագլխի, բ. Դուրանի. գ. համերաշխութեան. մեր ռայոնական ժողովից յետոյ մէկին կը ճամբենք մասնակցելու այդ «Խորհրդին», եթէ համաձայն էք, Դելտայի հասցեով հեռագրէք, դրամները ճամբեցինք Յարութիւնին:

Դ. Շատ հետաքրքիր եւ մազալու<sup>12</sup> է ընկեր Վահաբի<sup>13</sup> գրածը Բիւրոյի անդամների ընտրութեան մասին:

ա. Մեր «Աճապարանքը մեզ երբեք սխալեցուցած» չէ եւ չէր էլ կարող, մենք մեր վճիռը արել ենք հիմնուելով ընդհանուր ժողովի որոշումների կարգալուց (ի դէպ, Բիւրոն դեռ չի բարեհաճել մեր շրջանին վերաբերող որոշումները գրաւոր մեզ ուղարկելու, երեւի այս առթիւ էլ մի «աճապարանք» կ'անենք ապագայում), իսկ եթէ աճապարեւը համարել էք Պատ[ասխանատու] մարմնի ընտրութիւնից առաջ մեր

անդամները նշանակելը, այդտեղ արդէն շատ էք հեռու գնացել եւ շատ էք պատմական եղել. արդէն գրել ենք, որ ի՞նչ եւ ի՞նչ պայմաններով առայժմ երկու ռայոնները անկարող են Պատ[ասխանատու] մարմին ունենալ: — Ուրեմն դուք պիտի գրկէք Երկրի արեւելեան ռայոնին Բիւրոյում ձայն ունենայուց, մի բան, որ ո՛չ մի բարոյական հիմք չունի. Սարուստանը իր ներկայացուցիչները ընտրում է իր ռայոնական ժողովով, նոյնը անելու եւ մենք իրաւունք ունենք:

բ. Մենք Վասպ[ուրականի] «սեկցիայի» անդամ չենք ընտրել, այլ ընտրել ենք Վասպ. կողմից «Երկրի սեկցիայի» անդամ: Չմոռանանք ասել, որ դուրանցիք էլ մեզ արտօնել են իրենց կողմից մարդ ընտրել իբրեւ լաւ ծանօթ Դուրանին: Մենք ընդունում ենք, որ երկու սեկցիա պիտի լինի, Երկրի եւ Սարուստանի: Երկրի սեկցիան յատուկ մարդիկ պիտի լինեն եւ Սարուստանի՝ այլ մարդիկ: Երկուսը որքան ընդհանուր պատասխանատուութեան տակ լինեն (ըստ ընդհանուր ժողովի մեծամասնութեան որոշումին, մի բան, որ մենք համաձայն չենք եղել, եւ ենթարկուում ենք զուտ դիսցիպլինայի տեսակէտից) յամենայն դէպս աշխատանքի խիստ բաժանում է պէտք լինի եւ այսպէս երկրորդական պլանի մէջ չենք դնելու Երկրի հարցը: (Էրզրումից գրում է Փիլոս<sup>14</sup>, որ իր նամակներին չէք պատասխանում, Դուրանը խօսքի էք: Մեր հաշիւները նոյնիսկ մինչեւ հիմա չկարողացանք ստուգել, թէ ինչքան դրամ նպաստից էք ուղարկել, ինչքան կազմակերպական, կամ ինչքան ռազմամթերք է[ք] ճամբել[ու] եւ ո՞ւր... Իսկ Վրէժի սահմանների փոխադրական գործը ձեր լիազօրութեամբ դարձեալ Վրէժին թողնելը կատարեալ խայտառակութիւններից մեծ է... Այս բոլորով հանդերձ մենք լուր ենք յանուն ընկերականութեան, իսկ երբ դուք խօսում էք «հապճեպից» եւ «օրինականութիւններից», մենք էլ ստիպւած ենք մեր իրաւունքների արթուն հսկիչը լինել...):

Մենք դարձեալ կանգ ենք առնում մեր որոշման վրայ եւ պահանջում, որ արեւելեան ռայոնը ձայնից չգրկէք եւ հրաւիրէք ժողովի, այլպպէս մենք ստիպւած կը լինենք բոյկոտի ենթարկել Բիւրոյին եւ մեր գործերը կարգադրել դրսում մեր յատուկ ընկերոջ ձեռքով, մինչեւ առաջիկայ նիստը եւ այդ կ'որոշէ այդ իրաւական հարցը...

Լաւ չէ ընկերականութիւնը ծախելը պաշտօնականութեամբ: Մեր ռայոնական ժողովը կը լինի 10-15 օրէն, այդ հարցը կը դնենք եւ այն[տեղ]:

Ե. Մրգաստանի 60 ոսկին ստացել է եւ հարկադրել<sup>15</sup> նպաստից, դրա ընկալագիրը ուղարկւած է ձեզ միւս դրամների ընկալագրերի հետ Վրէժով, միթէ դեռ չէք ստացել:

Զ. Արդէն գրել ենք, որ Գիսակին Ամեր[իկայից] դրամ չեն ուղարկում: Թէեւ խոստացան Ընդ. ժող[ովում] եւ Գիսակին էլ Յ անգամ գրել է առանց պատասխանի. ամերիկացիք մեզ էլ չեն գրում, բոյկոտ են արել, Աստուած իրենց հետ, հէջ հոգս էլ չենք քաշում...

Այս ամիսը դրամ չլինելու պատճառով Գիսակին չկարողացանք դրամ ուղարկել, ինչ կը լինի, չենք գիտեր, մենք էլ ապրում ենք խայտառակ կացութեամբ, այդ արդէն գրւած է փոստով: Եթէ դրամ չէք ուղարկելու՝ վերջնական կերպով գրեցէք, առաջներս ձեռք է գալիս, յարաբերութիւնները 4 ամսով կը մեռնի:

*Առանձին նորութիւններ չկան, եղածները շաբթէ շաբաթ Հաղորդում ենք ձեզ: Բարի եղէք ուղարկելու մեզ «Յառաջ»ի գրադարանի վերջին 6-7 հրատարակու-  
թիւնից 20-30ական օրինակներ:*

*Գնեցէք մի հինգ հատ Բողոքանով - Տնտեսագիտութեան համառօտ ձեռնարկ,  
հրատարակութիւն «Զատկի»:*

*Սմբատին կը պատասխանենք առանձին, իրեն յատուկ համբոյրներ ենք  
ճամբում...*

*Ընկերական ողջոյններով՝  
ՎԱՍՊ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ*

1907 թ. հոկտ. 7ին

Շամիր

**Յ. Գ.— Սահմանագլխի մասին փոստով, շտապ լինելու մասին:**

**ՆՈՅՆ**

**ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 237, թթ. 3-6: Բնագիր, ձեռագիր:**

**(Ռուբէն Տէր Մինասեան, Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Երեւան 2011,  
էջ 54-58):**

1.- Անակնկալ նուր, դէպք:

2.- 1907 թ. Սեպտ. 27ին Պաթումի մէջ ահաբեկման ենթարկուեցաւ Վանի նախկին կուսակալ՝  
հայատեաց Ալի Բէյը: Վճիռը արձակուած էր Վասայ. Կեդր. կոմիտէի կողմէ՝ համաձայնութեամբ  
Վանի թրքական ընդդիմադիր կոմիտէին. այդպէս ալ երկու կոմիտէներու անունով լոյս տեսաւ «Ալի  
Բէյը սատկաւ» յայտարարութիւնը (Հայ Յեղ. Դաշ. Վասայ. Կ. կոմիտէ եւ Թուրքիոյ Յեղ. Միւթէֆիք  
Կ. կոմիտէ): Ահաբեկումը իրագործուեցաւ Հ.Յ.Գ. Պաթումի Կեդր. կոմիտէի միջոցաւ:

3.- Խանդավառութիւն:

4.- Ուժեղ, զօրատր:

5.- Այսինքն՝ թուրք եւ հայ կոմիտէներու:

6.- Բնագրին մէջ ռուսերէն:

7.- Խօսքը Վասպուրականի մէջ կատարուած ահաբեկման փորձի մասին է, որմէ ազատուելով  
Ալի Բէյ փախած էր Պաթում:

8.- Մարզիչներ:

9.- Սմբատ Բորոյեան:

10.- Մինարէթ – ծածկանուն Սալմաստի:

11.- Իմա՝ Դաշնակցութեան Խորհուրդի նիստ:

12.- Ծիծաղելի, զանշտական:

13.- Վահաբ – ծածկանուն Օննիկ Դերձակեանի (1871-1915), աւելի ծանօթ Վռամեան Արշակ  
ծածկանունով. անդամ Արեւելեան բիւրոյի:

14.- Փիլոս Փափախեան (1882-1915), ծանօթ Մարալ ծածկանունով:

15.- Պէտք է ըլլայ յատկացել:

## Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյին

Ընկերներ!

Անցեալ փոստային ձեզ գրեցինք Ֆի[լիպէի] վրայով: Երեւի ստացած կը լինէք. նոյն նամակի հետ ուղարկել էինք մի յօդուած «Դրօշակ»ի համար: Վերջինը ներփակում ենք եւ հոս, կասկածելով, որ նա կը կորչի. դա գրուած էր հոս թուղթիկով բաց թողնելու, բայց ոճի անմատչելիութեան պապուլիար<sup>1</sup> չլինելու պատճառով ուղարկում ենք ձեզ, խնդրելով, որ եթէ դուք էլ յարմար կը գտնէք, տպագրէք թերթի մէջ:

Միւսը տեղիս երիտասարդների ռեզոլուցիայի պատճէնն է<sup>2</sup>, իսկականը ուղարկած է Արեւելեան Բիւրօ:

Իսկ երրորդը տեղիս արհեստակցական միութիւններին ուղղուած մի կոչ է մեր վերաբերմունքի եւ դաւանանքի մասին<sup>3</sup>. ուղարկում ենք ձեզ հետաքրքրութեան համար:

Անցեալ նամակում մանրամասն կցել ենք մեր անելիքների եւ վիճակի մասին. շատ նորութիւններ չկան:

Կեանքը խաղաղ, գրեթէ ամէն բան սպանեցին, կենդանութիւն չմնաց, բոլորովին կտրուել ենք արտաքին աշխարհից, համարեա [Մ.] Բ.-ից չեն գրում, դուք էլ ուշուշ էք գրում, այն էլ գուտ կազմակերպական հարցերի մասին. մտէք մեր վիճակի մէջ, անյայտութեան եւ խաւարի մէջ կորչում ենք, մթնոլորտը այնքան ճնշող է, այնքան սպանող, այնքան գուրկ մտաւորական հոսանքներից, որ մի նամակը կարող է թարմացնել մեզ:

Դուրանի Ռուբէնը<sup>4</sup> այնքան յետ է մնացել, որ մեր նամակներով է միայն սնուում եւ դրանով միայն ապրում... երեւակայեցէք, գիրք, թերթ եւ այլ նորութիւններ տարիների ընթացքում չտեսնել... Յամիս է, մենք էլ այդ վիճակի մէջ ենք... Մնացածը դուք երեւակայեցէք. այս վիճակով դեռ պէտք է պրոպագանդա անենք, գրենք եւ թուղթիկներ հրատարակենք:

Ի դիմաց ընկերների՝ ԱՐԱՄ

5 նոյեմբերի 1907 թ.

Շամիր

ՀԱԱ, Փ. 1048, ց. 1, գ. 237, թթ. 19-20, ինքնագիր:

(Ռուբէն Տէր Մինասեան, Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Երեւան 2011, էջ 67-68):

1.- Հանրամատչելի:

2.- Տես փաստ. 667-140, էջ 467-69:

3.- Տես փաստ. 667-131, էջ 472-75:

4.- Դուրանը ծածկանունն է Տարօնի, Դուրանի Ռուբէնը՝ Տէր Մինասեան Ռուբէն:



## Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյին

Սիրելի ընկերներ!

Ձեզ քանիցս գրել ենք Պոլգարիայի եւ ձեր սովորական հասցէներով, բայց պատասխան չենք առել, չգիտենք, չէք ստացել, թէ՞ չէք գրում:

Մեզ մօտ առանձին նորութիւններ չկան, կեանքը սովորական «խաղաղ» վիճակով առաջ է գնում:

Թիւրք-հայ[կական] համերաշխութեան գործը արագութեամբ տարածւում է եւ նոր շրջաններ է ընդգրկում: Նրանց գրականութիւնը ձեզ ուղարկում ենք, երեւի ստացած կը լինէք:

Լաւ կը լինի «Դրօշակ»ում բանաք յատուկ թիւրքական բաժին եւ նրանց արտասահմանեան եւ երկրի թերթերից ու թժուցիկներից բարգմանաբար տպէք եւ ձեր կարծիքները յայտնէք: Այդ շատ կարեւոր է: Խօսացածը պատրաստել թիւրքերէն լեզուով: Մենք՝ Դաշնակցութիւնը. — ո՞վ ենք եւ ինչ ենք պահանջում — մեր անցեալը, ուրոյն յեղ. դիմելը, եւրոպական միջամտութեան հարցը, թիւրքերի անտարբերութիւնը եւ թշնամանքը անցե[ա]լ, ներկայ համերաշխութիւն, մեր ծրագիրը, մեր քաղաքական դաւանանքը:

Պէտք է հայերէն գրել եւ տալ թիւրքերէն իմաստալի ձեւով թարգմանել. ժամանակն է, որ մենք տպագրենք մեր անունով եւ մեր դրօշի տակ. թիւրքերը չեն հասկանում մեզ, կամ մեծ պատրաստակամութիւն չունեն կանոնաւոր բան գրել: Այս բրոշիւրից պէտք է հազարներով տպել եւ ցրել: Եթէ դուք չանէք, մենք ստիպւած ենք տեղս անագին դժարութիւններով այդ անել - միմիտգրաֆով տպել. բայց եթէ դուք անէք, թէ յաջող կը լինի, թէ խմբագրութեան անունից աւելի ազդեցիկ կը լինի եւ թէ իրբեւ տպագիր, աւելի լաւ կը կարդացելի եւ շատ կը տարածւի: Մեր ընթացիկ գործը հայ թիւրքական պրոպագանդն է. պահանջ է դառել թժուցիկները հայերէն-թիւրքերէն տպելը: Կառավարութիւն շատ վախենում է թիւրքական շարժումից, կ'ուզէ պրովակացիա սարքել, բայց անկարող է:

Բոլորս լաւ ենք, մեր գործերը շատ յաջող, ընդհանուր ժող[ովր] ընդգծած ճանապարհով քայլում ենք եւ յուսով ենք աւելի պիտի յաջողենք, քան անցեալ տարիներուն. մեր քէֆին քէֆ՝ չի հասնի, անցեալ բոլոր երազները իրականանում են, այսօր հայ-թիւրքական համերաշխ գործակցութիւնը ո՛չ թէ խօսք, այլ գործ է...

Մենք լաւ ենք, գրեցէք, ինչպէս են մեր արտասահմանի գործերը եւ ընկերները: «Դրօշակ» ստացել ենք N 5-ը, իսկ վերջին հրատարակութիւնները՝ Աստուած տայ:

Բարեւներով՝  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

[Նոյեմբեր 1907 թ.]

ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 237, թթ. 24-25, ինքնագիր:

(Ռուբէն Տէր Մինասեան, Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Երեւան 2011, էջ 71-72):

Սիրելի Ռուբէն [Տէր Մինասեան]

Ստացանք քո գրած երկու նամակը, ինձ եւ Սարգսին. ինչպէս երեւում է շան-որ-դութիւնը թօբա չես արել, նամակներով էլ շաթուշմիշ ես լինում. ես այդպիսի բաները թօբա եմ արել (!!!), ամբողջը հաւաքել եմ մի թօբբայի մէջ. կը հանեմ այն ժամանակ, երբ դժբախտութիւն կ'ունենաս անձամբ մի գիշեր ինձ հետ միասին լինել... Առայժմ այսչափ:

Քո կամաւորները մանաւանդ քո սիրեցեալ թիկնապահ Աւնի\* յետ ճամբեցինք, ըստ քո բարձր հրամանի. ինչպէս երեւում է դեռ չես յոգնել, շարունակում ես հովանաւորելուց: Իրենք իրենց վրայ եղած բոլոր զէնքերը\* յետ բերին. մենք միայն տւել ենք (100) հատ N2a: Յետոյ տւել ենք ծայրաման, իւղաման, պրոտտիլկա եւ այլն: Չմոռանամ սկզբից եւ եթ աւելացնել, որ այն ծպտեալները որոնք վկայական չունեն յետ են դարձւում. էդ քանբախ երկրում ամէն մարդ իրեն կոմիտէ երեւակայելով իր բարեկամներին, դրացիներին եւ եղբայրներին, մի մեծ հրամանագրով մեզ է ճամբում: Մեր դրութեան մէջ էլ մտէք. ամէն անգամ 20-30 ծպտեալների խմբեր, ահագին դրամ է նստում մի կողմից, իսկ թէ այնքան գլխու ցաւ եւ կամ որքան են փչացնում մեր գիւղերը եւ գծերը, այդ մասին գրելը աւելորդ է: Դրանց ամիսներ շաբաթներ մեր կարեւոր ընկերներին զբաղեցնում է եւ մեր ընթացիկ խաղաղ աշխատանքը խանգարւում է: Անցեալ տարի խեղճ [ռուսատառ անընթեռնելի անուն] 3 ամբողջ ամսիս զբաղւել [է]: Ծախսերը որքան եղան, գրել աւելորդ:

Յետոյ մենք նկատում ենք եւ մի բան (թէեւ կարող է սխալ լինել), որ դու ամէն պատահական մարդու, որ իր անհատական գործով կամ պատահմամբ փախստական լինելով՝ քշում ես մեր կողմը: Գուցէ եւ շատերին չես տեսնում. այս եւ այն շրջանի մարմիններն են յանձնարարում իբրեւ փախստական:

Մեզ թւում է, որ ուղարկածներից շատերը (բացի մերոնցից) բոլորին կարելի է քշել Խնուսի\* գծով, ի հարկէ եթէ միայն ծախսւի դրամ եւ սուրհանդակի վարձ տալու լինէք. մեզ վրայ ձեր ծպտեալներից ամէն մէկը, բացի բարոյական զոհողութիւններից — նայում են առնւազը 3-4 ոսկի մինչեւ Սարուստան հասնելը. նոյն գումարով կարելի էր եւ վերոյիշեալ գծերով քշել. այդ նպատակի համար եթէ դրամ չկայ, մենք կարող էինք օժանդակել: Յետոյ այդ ինչ խայտառակ վկայականներ ես տալիս դրանց ձեռքը. ի՞նչ կարիք կայ բոլորին առանձին-առանձին տալ, այն էլ (չատերին) մինչեւ Սարուստան. բոլոր հաւաքիր մի տեղ վերջանայ գնայ. վկայականները շինել են Պարսկաստանի\*\* անցազիր, որ կ'ուզէ կը տաս: Յետոյ այդ վկայականը գիտես ինչ սկանդալների տեղիք է տրւում Սարուստանում, ուր ամէն մի դուրս գնացողի վրայ նայում են իբրեւ գող ընկերի: Անցեալ տարւայ ուղարկածների շատերը մինչեւ իմ գալու օրերը (մայիս-յունիս) ամսական 10-15 ռուբլի էին ստանում, իբրեւ Ռուբէն-ի\*\* եւ Սարիադ-ի\*\* զինւորներ\*: Ես մի փոքրիկ հաշիւ տեսայ, եւ զարմացմամբ նկատեցի, որ արտասահմանում այդ ծպտեալների զինւորները\* — երկրի — գործիչների վրայ, կրկնակի գումար աւելի է ծախսւած քան նոյն տարին երկիր ուղարկւած գումարը իբրեւ կազմակերպ[ական] ծախսեր:

Պէտք է միշտ նկատի ունենալ, որ մենք պարտաւոր ենք գործերը այնպէս դասաւորել, որ ո՛չ միայն մեր գլխից ըրադ պիտի անենք<sup>1</sup>, այլ պէտք է այնպիսի վիճակի մէջ դնել որ ուրիշ տեղերի ընկերների էլ բալա՛ չընկնեն. միշտ ընդհանուր կազմակերպական շահեր ի նկատի ունեցէք:

Երկար կանգ առի այս յիմար խնդրի վրայ, որովհետեւ սա մի մեծ կազմակերպական ցաւ է, որ վտանգել է մեզ, վրէժցոց եւ սարուստանցոց:

Լսեցինք որ Զրաբերդի գծով ինքնագլուխ կերպով քշել ներս է եկել Պուրակի Ամմիտ Անդուն\* եւ իսկոյն միացել է սեւ հարիւրեակի հետ: Իսկ մի քանի օրից, լսեցինք, որ քո հրահանգներով գործեր է վարում եւ նա է որ ինքնագլուխ 8 ծպտեալ է ճամբել մեզ իբրեւ մեծ սիւպրիզ...

Սիրելիս! Դուրս ընկերների դէմ կուլեւը, նրանցից պահանջելը որ հակադիսցիպլինական քայլեր չանեն, բաւական չէ, դրանով մեր վէճքերը չեն բուժւի. մենք ինքներս պէտք է մեր կեանքով եւ գործով դիսցիպլինի ամենաջերմ կողմնակից լինենք. մեզ թոյլ չպիտի տանք ո՛չ մի կոմպրոմիս, այլապէս մենք կորած ենք:

Այս սրիկան իբրեւ բաշիբոզով եւ լիրբ շանտաժիստ, Ս. Ն. դէպքից յետոյ, գինւորական ժողովի վճռով վռնուել է դուրս եւ յայտնել է իրեն որ իրաւունք չունենայ ներս գալ. նոյնիսկ պէտք է յայտարարուէր «Դրօշակ»ում, բայց Մարիադի\*\* խնդրանօք այդ բանը չեն արել, միայն իրեն են յայտնել. այս մասին մենք գրեցինք եւ դուրս: Դու ո՛չ մի դէպքում նրան չպիտի ընդունէիր, մանաւանդ չպիտի գործ կատարէիր նրա ձեռքով: Մենք նրան գրելու ենք Պուրակից<sup>2</sup> գայ հոս, իբր թէ խորհրդակցելու, եւ ուղղակի դուրս ենք շարտելու. այս ի նկատի ունեցէք, եթէ որեւէ բան ունէք փոստով գրեցէք մեզ:

Յոյս ունենք որ մինչեւ նամակիս ստանալը կը հասնեն եւ ընկերները. մի քիչ քո գործերը կը թեթեւանայ եւ կարող կը լինենք, մի քիչ աւելի ընկերական-կազմակերպական գործ կատարել, մանաւանդ որոշ դիրք բռնել, պոլիտիկա մշակել, դուրս եւ ներսի գործերի համար. պալիատիկների եւ կոմպրոմիսների ժամանակները անցել են, այդպիսի քայլեր անբարոյականացրել է թէ մեզ եւ թէ մեզ շրջապատողներին. հնի եւ նորի կուլի սկսած է. պատերազմի դաշտում, բաց ճակատով պիտի ելնել պայքարի, ուրիշ ճանապարհ չկայ. կամ մենք կամ իրենք. երկու անհաշտելի տարրեր եւ ուղղութիւններ չի կարելի մի շաբլոնի մէջ պահել. կամ դէպի աջ կամ դէպի ձախ:

Վստահ մեր նոր հաւատալիքների ճշմարտութեան վրայ, խրախուսւած տառապող ժողովրդի համակրական ցոյցերից շարունակեցէք ձեր ախտահանիչ գործը. միշտ հաւատացած եւ վստահ եղէք, որ մենք ձեզ հետ [ենք]. որ ամէն նիւթական ու բարոյական ուժ գործ պիտի դնենք նոր հոսանքի կամ ուղղութեան յաղթանակի համար:

Նոր ընկերները անձամբ կը պատմեն այն բոլոր տակտիկական նորութիւնների մասին, ինչ օրէ օր, ժամէ [ժամ] կեանքը մտցնում է մեր գործի մէջ. եւ այս նորը ոչ թէ տանուում է դէպի յարաբերութիւնների սրումը (կառավարութեան\* կամ ժողովուրդների\*), այլ ընդհակառակը, կրքերը մեղմանում են. դու շատ սխալում ես կարծելով որ Շամը հրաբուխի\* վրայ է նստած: Եթէ ընդհանուր երեւոյթներ չպատահի, որը կարող է ընդգրկել շատ շրջանների հետ եւ նրան, ուրիշ ոչինչ չի պատահիլ: Հոս միայն կարող է վտանգ սպառնալ այս կամ այն ընկերով կեանքին, սա իմ անհատական կարծիք է, որը ասել եմ եւ Ընդ. ժող[ովում]. առաջները ամէնքս քեզ պէս էինք մտածում, եւ կարծում էինք որ մօտենում ենք վախճանին: Իսկ ինձ

թուում է թէ այս տարւանից դեռ նոր ենք սկսում ամէն բան. զինտրական\* ուժերի չէզոքացումը այդ ուղղութեամբ շատ շահ բերաւ: Մեզ մեծապէս օգնեց եւ մի այլ անակնկալ – սահմանազլխի\* դէպքերը. պակաս չեն ազդում եւ համաթուրքական\* շարժումը:

Այս մասին մենք պատրաստում ենք մեր կարծիքները եւ վերաբերմունքը գրաւոր կերպով արտայայտել. գուցէ ձեզ էլ ուղարկենք:

Մեր կեանքի մէջ նոր դէպքեր չկան. եղածները ընկերները կը պատմեն. արտասահմանից նորութիւններ չկան, նամակներ չեն գրում, չենք գիտեր ինչ է եղել:

Զարմանում ենք քո միամտութեանդ վրայ, որ կասկածում ես որ Իշխանի\* մասին մի այլ որոշում կայ՝ մենք քեզ չենք գրում. այդ լուրերը որ սեւ ուժերը բերել են քեզ, փողոցային ասէկօսէններ են. իրողութիւնը այս է, որ նա Յ տարի շարունակ երկրում մնալով սոսկալի կերպով յոգնել է Ֆիզիքապէս, իսկ մտաւորապէս որքան յետ մնացած կը լինի, այդ արդէն դու գիտես քո անձնական կեանքի փորձառութեամբ: Իսկ թէ Սարուստանում կեանքը որքան է առաջ գնացել, Ռուս. յեղ[ափոխութիւնը] ինչ մեծ յեղաշրջում է մտցրել հասկացողութիւնների, կուսակցութիւնների գործունէութեան, հաւատալիքների եւ գործելակերպի մէջ, այդ չես կարող երեւակայել:

Ամենասովորական մարդիկ եւ ուժերը, որոնք չունեն ոեւէ հիմնական կրթութիւն, մեզանից մտաւորապէս աւելի են զարգացած, իսկ նոր երիտասարդութիւնը այդ արդէն մի հարցնի. կեանքը, դիւրութիւնները, գործը շատ բան է սովորեցրել, իսկ մենք մնացել ենք նախկին նահապետական զգացումներով եւ հաւատալիքներով «ազգասէրներ»ը: Ահա այս վիճակով ամէն մէկս երբ դուրս ենք գնում իսկոյն մեր հոգեկան վիճակի մէջ առաջ է գալիս մի մեծ քնկում\*\* հին հաւատալիքները կորցնում են իրենց արժէքը, իսկ նորերը դեռ չկան. այս տատանման վիճակը ստեղծում է մի մեծ ապատիւ դէպի ամէն բան. եւ նախկին կուռքերը ոչինչ են եւ կեանքը զզւելի է... Այս բոլորի հետ Իշխան-ը\* հիւանդացաւ:

Իսկ թէ նա ինչպէս տարւող մարդ է, եւ ինչպէս ընդունակութիւններ ունի առաջ գնալու, սովորելու, այդ արդէն գիտես:

Այս բոլորն է որ իրան գրել են երկուութեան մէջ. ո՛չ կարողանում է երկրից ձեռք քաշել եւ ո՛չ ներս գալ. թէեւ նրա կարծիքով կան ընկերական թիրխիմացութիւններ, որից նա խիստ վախենում [է]. սա իմ կարծիքով միայն պատրւակ է. իսկ իրողութիւնը վերոյիշեալներն են, որը կամ չէ ուզում խոստովանել, կամ չի հասկանում դեռ...

Ինչ որ էլ լինի, մենք նրան համարում ենք օգտակար ընկեր եւ նրա ներկայութիւն անհրաժեշտ մեր շրջանում. դրսի ընկերներն էլ նոյն կարծիքի են. Վիշապ\*<sup>3</sup> գնացողները ուզում են իրենց հետ տանել, բայց չեմ կարծում որ գնայ. այժմ Սարուստանը դիմել է Սարգսի\*<sup>4</sup> անհատական կարծիք առնելու իր ներս գալու մասին... Այսքանը կարծում եմ բաւարարութիւն կը տայ քո հետաքրքրութեան. եթէ չեմ սխալւում նոյն հոգեկան վիճակի մէջ է ընկել եւ Տիգրան-ը\*<sup>5</sup>. նա էլ գրել է, որ այսուհետեւ մի տարի էլ պիտի մնայ. թէ ինչո՞ւ, դեռ չգիտենք, հաւանօրէն սովորելու կամ կարդալու համար:

Բան չկայ, ամէն ինչ կ'անցնի. նոյն վիճակի մէջ չընկնելու համար մի բան կայ միայն, որ հոս հնարաւոր ձեւով աշխատենք կարդալու ուսերէն գրքեր բերեն. եթէ կ'ուզես հայերէններ էլ ճամբենք:

Մոռացայ գրել որ եկողները առաջարկեցին որ բերեն Մելօ-ի N 11-ը եւ դուրս գնացած Տիգրանի\* N 1-ը իր ծայրերով: բայց մենք չտւինք, որովհետեւ դու չէիր գրած մեզ, մի կողմից, իսկ միւս կողմից էլ դրանք խարաբաներ են:

Եթէ, իսկապէս դրանց մեծ կարիք կայ, գրեցէք 5-10 հատ բոլոր սարքերով, շատ լաւերը ճամբենք: Ի՛նչ պիտի հասկանաք այդ խարաբաներից:

Ամէնքս լաւ ենք, բայց շատ յոգնած. մի շրջանում մնալը մեր բոլոր լաւագոյն ընդունակութիւնները ճահճացրեց. նոր բան անել չենք կարող. պառուաների պէս անցեալով ենք ապրում: Աշխատեցէք այսուհետեւ յարաբերել փոստով\*. դուք սեւերը գրեցէք որ Տատրակ-ը\*<sup>6</sup> մեզ ճամբի. մեր գրածներն էլ նրան ասացէք որ ձեզ ճանապի. գէթ նամակով կարգին յարաբերութիւններ պահպանեցէք:

Մոռացանք գրել նաեւ այս Աւօ-ի\* մասին: բերանացի եկողները պատմում են որ նա քեզնից հեռու վայրերը ինչ որ է գուրնաչիութիւն է ծախում. մեզ դա շատ մոռթ եւ սեւ ուժ է թւում. եթէ ձեր նամակի այն կէտը չլինէր, որ նրան յետ էք պահանջել, նրան էլ պէտք է քչէինք:

Նամակը կնքելու ենք փոքրիկ փողով: Եկողները պատմում են, որ ամէն մէկին մի ոսկի ճանապարհի ծախս էք տալիս. եթէ ճիշտ է], շատ-շատ է. մենք դուրս գնացողներին հազիւ կարողանում են[ք] 20-30 դրուշ տալ: Նորութիւնների մասին պարբերաբար կը գրենք փոստայով\*: Թերթեր չկար որ ուղարկենք, եղածները ճամբեցինք:

Ձերմ համբոյրներով  
ԱՐԱՄ

1907 թ. նոյեմբեր 8ին

Շամիր

1.- Հետապնդէնք:

2.- Պուրակ – ծածկանուն Խլաք աւանի:

3.- Վիշապ – ծածկանուն Կ. Պոլսոյ:

4.- Սարգիսը Բարսեղեանն է, Շամիլ իսկական անունը՝ Օտապաշեան Պօղոս:

5.- Խօսքը Կողբեցի Յարութիւնի մասին է, բուն անունով Տեր Մկրտչեան Յարութիւն, ծանօթ Տիգրան ծածկանունով:

6.- Տատրակ – ծածկանուն Գեղամ Տեր Կարապետեանի, անդամ Տարօն-Սասունի Կեդր. կոմիտէին: «Գուք սեւերը գրեցէք», այսինքն սեւագրութիւնը կազմեցէք, Տատրակը կ'ուղարկէ ծածկագրով:

## Հ.Յ.Գ. Արեւմտեան Բիւրոյին

Ընկերներ!

Երեւի լսեցիք, որ Իշխանը<sup>1</sup> ապահովութեամբ տեղ հասաւ, բայց դժբախտաբար նրա հետ եկող նոր ընկեր Արշաւիրը<sup>2</sup> ճանապարհին ցրտից նեղանալով ուշանում եւ մի քանի օրէն գալուց պատահական կերպով գարկուում քիւրդ գողերից... Դա մեծ հարուած էր մասնաւորապէս մեզ համար. այդպիսի մի թարմ թիւրքագէտ ուժի կորստով մենք շատ տուժեցինք... Ի՞նչ արած, երկաթի անհրաժեշտութեամբ ենթարկուում ենք այս պատահականութիւններին... Մեզ մօտ նորութիւն քիչ կան. գանգատուում էք, որ թղթակցութիւններ չենք ուղարկուում. մենք ժամանակ չունենք գրելու, տեղացի երիտասարդ ընկերներն էլ աւելի մօտ լինելով եւ հոն կեանքը աւելի կենդանի լինելով թղթակցութիւնները հոն են ճամբում. մասնաւորապէս ես մտածում եմ մէկին համոզել, որ միշտ ձեզ էլ գրի:

Կազմակերպական գործերի վիճակի մասին արդէն միշտ ձեզ գրուում է...

Զանազան լուրեր են պտտուում. իբր թէ ռուս-թիւրքական, թիւրք-պարսկական (այժմ Բաղդադի դժով), եւ թիւրք-բուլղարական պատերազմ կայ...

Երեւի լսեցիք էրզրումի ապստամբների վերջնական ճնշումը<sup>3</sup> եւ պարտութիւնը, շատերը անձամբ անձնատուր եղան. այսպէս է լեզալիզացիայի եւ անկազմակերպ լինելու վիճակը, վնաս չկայ, նոր աւելի երիտասարդ սերունդը նորից կը սկսէ իրական ճամբով. յանցանքը մերն էր, ժամանակին հոն մարդ չճամբեցինք, որ ընթացք տան շարժմանը: Ստացանք «Դրօշակ»ի համարը, դարձեալ թերթը թոյլ է խմբագրուում. թիւրքական կեանքի ու շարժման մասին եւ ոչ մի խօսք. ինչո՞ւ այսքան քար անտարբերութիւն դէպի մի մեծ շարժում:

Մեզ մօտ կեանքը ձմեռուայ եւ անօթութեան պատճառով համարեա մեռած է. ապատիայի<sup>4</sup> մէջ ենք, գուցէ գարունը փրկէ մեզ եւ մեր տրամադրութիւններն. դբազլած եմ պրոպագանդիստական գրական պարապմունքներով...

Շատ եւ շատ բարեւներ բոլոր ընկերներին. այս թղթակցութիւնը եթէ յարմար գտնէք մի քանի կրճատումով դրէք «Պրօ-Արմենիայի»<sup>5</sup> մէջ:

Թիւրք թերթերից միշտ ձեզ ուղարկում ենք, ստանո՞ւմ էք, թէ ոչ, եթէ այդ թեր-

1.- Վանայ Իշխանն է – Պօղոսեան-Միքայէլեան Նիկոյ, որ Հ.Յ.Գ. Չորրորդ Ընդի. ժողովի արարտէն շորջ 6 ամիս ետք միայն կը հասնի Վասպուրական:

2.- Արշաւիր Վամսարական, բուն անունով Կիւտինկեան Արշաւիր, նախկին վերակազմեալ իրն-չակեան, վերջերս միայն յարած Դաշնակցութեան եւ իբրեւ այդպիսին իր առաջին առաքելութեան իսկ գոն կը դառնայ պատահական դէպքի մը:

3.- Խօսքը հացի սղութեան դէմ Էրզրումի թուրքերու ըմբոստացման մասին է, որ բիրտ միջոցներով ճնշուեցաւ:

4.- Անտարբերութեան, ծուլութեան:

5.- Դաշնակցութեան նախաձեռնութեամբ հայ դատի քարոզչութեան նուիրուած ֆրանսերէն երկ-շարքաթերթ, Փարիզ:

Թից Թիւրք չըջանները պահանջում են, կարող ենք ձեր միջոցով ուղարկել, ձեզ կարելի է 10-ի չափ տրամադրելի անել...

Ի՞նչ եղաւ ձեր Թիւրք հրատարակութիւնը...

Ջերմ համբոյրներով՝  
ԱՐԱՄ

7 դեկտեմբերի 1907 թ.

ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 237, թ. 23 եւ չըջ.: Բնագիր, ձեռագիր:

(Ռուբէն Տէր Մինասեան, Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Երեւան 2011, էջ 72-73):

Փաստ. 667-156

277

### Արեւելեան Բիւրոյին

Ընկերներ!

Հակառակ մեր նախկին բոլոր նախագգուչացումներին, որ ձմեռայ առթիւ փոստային յարաբերութիւնները անկանոն են լինում, որ շտապէք ժամանակին բաւարարութիւն տալ մեր ընթացիկ բոլոր կարիքներին, ու փոստով գրէք է՛ն կարեւոր խնդիրների մասին, դուք սկսել էք փոստային ամսինը կամ երկու ամսինը մի անգամ երեւացող նամակներ էլ դարձնել պոլիմիկայի<sup>1</sup> միջոց. իբր թէ այնքան առատ էք գրում, եւ այնքան պարզաժ է «կեանքի եւ մահու խնդիրները», [որ] դուք սկսել էք վիճաբանութիւններ, այն էլ ակադեմիական բնաւորութեամբ: Մի անգամից մի անգամ հարցը պարզելու եւ խնդիրը սպառուած համարելու համար, հարկ սեպեցինք գրել ներկայ (սուրհանդակով) նամակը, որով պէտք է պարզենք այն պատճառները եւ գրութիւնները որոնք առիթ են դառել յայտնի ինցիդենտին<sup>2</sup>:

Սկսենք Բիւրոյի անդամներ ընտրելու հարցից.— Երբ մեր պատգամաւոր ընկերներից մէկը տեղ հասաւ, եւ մենք տեղեկացանք Ընդհանուր Ժողովի որոշումների հետ, բնական էր որ մենք մեր առաջին գործը պիտի համարէինք կանոնաւորել այս արտասահմանեան յարաբերութեան խնդիրը, որովհետեւ մեր ամենահիւանդոտ կողմը այդ էր. թէ ինչո՞ւ այդ մասին չենք գրի, որովհետեւ շատ ենք գրել: Ուստի ձեռնարկեցինք անդամների ընտրութեան, միաժամանակ յայտնելով եւ Դուրանի ընկերներին (առանձին-առանձին, Ռուբէն, Տատրակ, Փիլոս եւ Դերենիկ)<sup>3</sup>. ուրեմն մենք մենակ չէինք ընտրում եւ Վասպուրականի համար չէինք ընտրում. Դուրանից մի նամակ առանք, որ այդ գործի ամբողջ ընտրութիւնը մեզ է թողնում, քանի որ մենք ենք ծանօթ դրսի ընկերներին եւ մենք աւելի յաջող ընտրութիւն կ'անենք:

Հարցը սրանով փակված էինք համարում երբ յանկարծ ստանում ենք Վահագրի<sup>4</sup> հուշակալը նամակը, որի մէջ մեր այդ քայլը հետեւեալ ձևով է բնորոշւում. ահա նա ամբողջութեամբ: — «Ձեր նախորդ նամակով հաղորդած էիք ձեր ընտրութիւնը սեկցիայի համար: Աճապարանքը ձեզ սխալեցուցած էր. ինչպէս գիտէք Պատ[ասխանատու] Մարմնին վերապահւած է Արեւելեան Բիւրոյին երկու անդամներ տալ, երկրի գործերուն հմուտ. (երեւի սա է ձեր ակնարկած «ընկերական յարաբերութիւններու նոյն աւանդական պատշաճ եւ մտերմական ոգին») իսկ դուք իբրեւ Վասպ. Կ. Կ. սեկցիայի անդամներ ընտրած էք (արդէն երկրորդ նամակով պարզել ենք Վասպ. Կ. Կ. սեկցիայի ուսուցիչան, կրկնելը աւելորդ է-) մինչդեռ այդպիսի մարմին գոյութիւն չունի... (յետոյ խօսում է երկրի եւ Կովկասի հատուածներ (իբր թէ սեկցիան հատուած չէ)... Նկատի կ'ունենաք անշուշտ այս դիտողութիւնը եւ Պատ. Մարմնի կազմելուն պէս կը կատարէք նոր ընտրութիւնը — այդ մարմնի կողմէն...»:

Մենք էլ նկատի առնելով այս դիտողութիւնները գրեցինք յայտնի նամակը, որին պատասխանեցիք, իբր թէ արդարութիւնը վերականգնելու համար, բայց փոխանակ արդարութեան ահա թէ ինչ էք ասում 2 ամիս յետոյ նոյն խնդրի մասին:

«... Արեւելեան Բիւրոյին երկու անդամ ընտրելու չարաբաստիկ խնդիրն ալ հարկ եղած լրջութեամբ չէ ըմբռնուած ձեր կողմէն: Ի գուր կը կարծէք որ «սեկցիաներ» կան այն հին ըմբռնումով (այդ որ հին ըմբռնումն է, այդ ո՞վ ասաց որ հնումը «սեկցիաներ» են եղել. եթէ մի քիչ բարի լինէր նամակ գրողը եւ հարցնէր այդ գործին տեղեակ մարդկանցից, կը հասկնար, որ այդ մտքով սեկցիա չի եղել եւ այլ մտքով եղածն էլ գոյութիւն չի ունեցել, այլ սկսել եւ մահացել է... Չէ՞): ... Յետոյ խօսում է որ երկուքն էլ ամբողջ կազմով պատասխանատու են Ընդ. Ժող[ի] առաջ. այդ լաւ գիտենք, գիտենք եւ այն թէ որքան նիզակներ կոտրեցին այդ մէկ եւ անբաժան Բիւրոյի համար Ընդ. Ժող[ովում] — այդ գրեցէք երկրի այն վայրերին, որոնք դժբախտութիւն ունեցան պատգամաւոր չունենալ եւ մեծադորդ կերպով յայտարարեցիք որ Բիւրոներու միջոցով հարկաւոր տեղեկութիւնները եւ իրենց շրջանին վերաբերող որոշումները կազմակերպական ճանապարհով կը ստանան... ո՞ր մնացին, արխիւում, թէ մոռացութեան տուրակում): Խօսելով Սարուստանի դեկտ[եմբերին] լինելիք Ռայոնական Ժողովի մասին շարունակում էք... Եւ ինչո՞ւ դուք ալ չ'ընդունէիք այդ գործը ձեր միացեալ Ռայ. Ժողովին Դուրանի հետ: Կը տեսնէք որ պաշտօնական մտահոգութիւններէ շատ աւելի (ինչպէս տեսանք վերեւում) բարձր(?) նկատումներ պատճառ եղած են մեզ՝ յիշեցնելու ձեզ՝ ձեր աճապարումը...»:

Ուրեմն մենք սխալուած եւ թիւրիմացութեան մէջ էինք, մենք հեռու էինք աւանդական ընկերական նկատումներէ եւ ինչ որ տեղ վշտացած էինք, իսկ դուք ամէն պաշտօնական եւ չինովնիկական նկատումներէ զերծ. ու այս խնդրի հետեւանքով մի անգամ գրում էք — «Պատմ. Մարմնին է վերապահւած Արեւել. Բիւրոյի երկու անդամ տալ...»: իսկ նրա չեղած դէպքում ոչինչ. այժմ էլ «Պատմ. Մարմնին վերապահւած իրաւունքը», մոգական գաւազանի մի հարածով «վերապահում էք» «Ձեր (մեր) միացեալ Ռայ. Ժողովին Դուրանի հետ»: Սրա չեղած դէպքում՝ նորից ոչինչ. իսկ գործը թող մեռնի, քանի որ մի անգամ Պատ. Մարմնի գոյութիւնն է անհնա-



րին, իսկ երկրորդ գէպը ում Ռայոնական ժողովի... եւ այդպէս անվերջ հակասութիւն, եւ այս բոլորը միեւնոյն սառնասրտութեամբ համարում էք «պաշտօնական մտահոգութիւններէ շատ աւելի բարձր նկատումներ»:

Այս մասին կարծում ենք պարզ է եւ բաւական. եթէ չէք կարող յիշողութեան մէջ պահել ձեր հին գրածները, գէթ համառօտագրութիւն պահէք, մանաւանդ միասին կարգացէք ձեր գրածները, որպէսզի բոլոր ընկերները հասկանան, թէ ի՞նչ ձեռով է ձեւակերպուած այս կամ այն որոշումը: Ո՞վ գիտէ գուցէ ոչ միայն ձեր գրածները չեն կարգում բոլոր ընկերները, այլ եւ մեր նամակները...

Այս խնդրի մասին երկու կարծիք լինել չի կարող. մենք նկատի ունենալով հէնց ձեր ակնարկած «փրփականտի, ռազմական, երեւմտական գործերը» յարմարագոյնը սեպեցինք ընտրել Բարսեղեանին եւ Նադիրային. եթէ ընտրութեան իրաւունք մեզ է վերապահուած, եթէ մենք գիտենք թէ երկրի համար ինչպիսի գործիչների հարկաւոր են արտասահմանում, թոյլ տուէք եւ մեզ գիտնալու, թէ ինչու այդ երկուսին ենք ընտրել, եւ թոյլ տուէք մենք տուածներ այդ երկուսի պակասութիւններին...

Աւելորդ է ասելը որ մենք կանգնած ենք նախկին տեսակէտի վրայ եւ մեր ընտրութեանը պիտի համարեն Բիւրոյի անդամներ եւ աշխատակցեն նրա բոլոր գործերին: Ձեր այնքան գեղեցիկ կերպով ձեւակերպած «աւանդական ընկերականութիւնը» հէնց պահանջում էր որ դուք մեր հանդէպ անկեղծ լինէիք եւ փոխանակ օրինական պաշտօնական մարզանքներ անելու, կտրուկ կերպով արտայայտէիք որ ընտրուած ընկերները, ըստ ձեզ «կարող ուժեր չեն» կամ «երկրի գործերուն հմուտ» չեն. այն ժամանակ մենք կ'իմանայինք ձայնը որտեղից է գալիս եւ ո՞ւմ պիտի պատասխանել...

Գանք Սահմանագլխի կամ աւելի ճիշդ Պարսկաստանի\*\* չարաբաստիկ խնդրին. հոս արդէն մենք ոչ միայն սխալուած ենք, այլ եւ մեր «գրածները աւելի ենթադրութիւններէ կը բխէ քան իրական մտադրութիւններէ, որ մենք ունեցած ըլլանք»... Բայց ահա ի՞նչ է ասում այդ մասին ձեր անստորագիր նամակը:

— «... Տաճկաց գործի մի մասի Փարոս<sup>5</sup> ոտ դնելը կարող է մեծ բարդութիւններ առաջ բերել, որոնք մեծապէս կ'ազդեն մեր հարցի վրայ դրական եւ բացասական տեսակէտով. այս պատճառով անհրաժեշտ ենք համարում ձեր ուշադրութիւնը հրաւիրելու այս չափազանց կարեւոր հանգամանքի վրայ... (այստեղ խօսուած է Մինարէթի գրաւման մասին):

— «... Միւս կողմից պարսիկ\* կառավարութիւնը նոյնպէս շահագրգռուած է եւ մէջները ցանկութիւն է նկատուած մերձենալու մեզ եւ միասին շարժելու տաճիկ\* կառավարութեան] դէմ: ... (Թւում է փաստեր): Սրանից եզրակացուած է գործակցութեան հնարաւորութիւն եւ յոյս ունենք յաջողութեան: Եթէ միացեալ ուժերով խորտակենք սահմանագլխի ուժերը, կառավարութիւնը] բաւական ժամանակ յետոյ միմիայն հնարաւորութիւն կ'ունենայ նորէն բաւականաչափ ուժ հաւաքել, իսկ մինչ այդ արդէն դիւանագիտական միջամտութիւն կը լինի (մեր խնդրին ի՞նչ շահ այս աւանդական միջամտութիւնից) (յետոյ խօսում է այն մասին թէ դրանով ինչ դիւրութիւններ կը տայ մեզ կառավարութիւնը հոն) ապա շարունակում է. կը խնդրէինք ձեր կարծիքը այդ մասին, մասնաւորապէս քննութեան էք ենթարկելու հետեւեալ հարցերը. 1) Սահմանափակել արդեօ՞ք սահմանագլխի կռիւներով, չանց-

նե՞լ սահմանը. 2) Յաղթուլթեան դէպքում, անցնե՞լ սահմանը, ուժասպառ անել եւ վերադառնալ. 3) Մնալ սահմանի այն կողմում եւ գուցէ հասնել մինչեւ Շամ...»։ Այս բոլոր իբր թէ մենք չենք տեսել եւ չենք կարդացել. ահա գալիս [է] ընկեր Վահաբը եւ ասում որ մենք ուրիշ բան ենք գրել... եւ ահա թէ ինչ։

— «... Սահմանագլխի վէճի մասին եւս ձեր գրածը աւելի ենթադրուլթիւններէ կը բխեն քան իրական մտադրուլթիւններէ։ Պատերազմը հրատարակելու մասին ոեւէ մէկը խորհած չէ, ոչ ալ դէպի Շամ արշաւելու մասին (ինչպէս տեսանք վերեւում !!!)։ Մեր ամբողջ առաջարկը խտացել է հրոսակային (պարտիզանական) ընդհարումների մէջ, ջանալով ի հարկին օգտել փոխադրուլթեան համար։

Ուրեմն այս էլ երկրորդ սիւլարիգ. լսեցէք թէ ինչ է գրում նոյն հարցի մասին մի երրորդ ընկեր (Սմբատը)<sup>6</sup>։

«... Մեր բարեկամների միջոցով գրգռելու է դրա դէմ թէ ժողովուրդը եւ թէ զօրքը. բռնելու է ուս մամուլի դիրքը, ուս-եապոնական պատերազմի ժամանակ... ներքին յուզումների հետ պատերազմը կը յանգէր կոնգրէի, որը կը լուծէր Արեւել. հարցը, եւ թիւրքին կը դարձնէր սահմանադրական...»։

Բացատրուլթիւնները աւելորդ է. մէկը արշաւում է մինչեւ Շամ, երկրորդը ստեղծում է պարտիզանական կռիւների մի շարք։

Իսկ երրորդը տրամաբանօրէն յանգում է ներքին յեղափոխուլթեան. եւ սա համարում է նոյն մարմնի հաւաքական կարծիք. եւ դեռ նամակներում պնդում են որ Բիւրոն իր գործերը վարում է in corpore<sup>7</sup>... Գէթ մեզ մի գրէք այս խնդրի մասին. ա՛խր աչք է ծակում այս եւ այն անհատի դիկտատուրան. մանաւանդ հակասական գրուլթիւնը պարզաբանելու մեծ եռանդը...։

Պարզ է, որ մենք ստանալով այսպիսի հակասական «հրահանգ խորհուրդներ», պէտք է մեր կաշից դուրս գայինք, եւ ամենահասարակ ճշմարտուլթիւնները շատ դառն եւ մերկապարանոց կերպով դնէինք ձեր առաջ. մենք պարզ տեսնում ենք, որ դուք իրականապէս ուզում էք տնօրինել այնպիսի խնդիրներ, որոնք կեանքի եւ մահու խնդիր են երկրի համար. բանակցուլթիւններ էք սկսում, խոստումներ առնում ու տալիս, Վրէժ հրահանգներ տալիս, իսկ երկիրը ոչինչ... Եւ բոլորից յետոյ դարձեալ մի ճանապարհ կը գտնէք դուրս գալու եւ արդարանալու որ մենք միայն խնդիրներն ենք արծարծել, որոշումները թողել ենք ձեզ... Այդ խնդրի մասին մեր կարծիքը գրած ենք. դուք կանգնում էք ներքին ընդհ. յեղ. տեսակէտի վրայ. չենք հաւատում դրսից դիպլոմատիայի արած եւ ո՛չ մի միջամտուլթեան. Դա կը լինի ինքնին ներքին յեղափոխուլթեան հետեւանքով, եւ ո՛չ թէ զանազան անտեղի կոնպիւնացիաներով բիւրոկրատ կառավարուլթիւնների հետ... Թիւրքիայի ժողովուրդների միանուագ գրոհն է որ պէտք է իրաւակարգ բերէ այս դժբախտ երկրին. մեզ կարող էք առարկել, որ մենք շատ ենք լաւատես թիւրք շարժման վերաբերմամբ, որ մենք շատ ենք յափշտակած դրանով, որ դա հեռու ապագայի խնդիր է. այս մասին ասելիք չունենք, դա տեսակէտի եւ ճաշակի խնդիր է. մենք կանգնած ենք այդ տեսակէտի վրայ եւ դեռ մեզ լաւ դաշնակցականներ ենք համարում...։

Երկու տարի է յոգնեցինք գրելով փոխադրական գործերի ղեկավարուլթիւնը, հսկողուլթիւնը եւ պատասխանատուլթիւնը մեզ թողնելու համար. դա էլ ասալ[?] Ընդհ. ժողը, բայց ձեզ համար այդ բոլորը ոչինչ եղան. դուք էլի «... Մեր կարծի-

քով լաւագոյն բանը ըրած եղանք մարմնի վերահսկողութեան ենթարկելու, քան մէկ մարդու պատասխանատուութեան թողնելու...»: Զեզ ո՛վ ասաց որ մի մարդու պատասխանատուութեան թողէք, ձեզ ո՞վ գրեց, որ Ս. ճամբէք հոն... մեր ամբողջ կուրը նրա մէջն է, որ դուք ձեզ թոյլ չտաք, մեզ՝ երկրին վերաբերող եւ նրա հետ անմիջապէս կապած խնդիրները «լաւագոյն» կերպով տնօրինողը լինել. միանգամից միանգամ հասկանալու ենք, որ այդ քամբախ ապակենտրոնացումը եւ կուսակցական դիսցիպլինը ամէն մէկին իրաւունքների որոշ շրջանակներ է գծել. դուրս գալ դրանից ապօրինութիւն է համարելու...

Զարմանում ենք մանաւանդ այն պատճառով որ այսքան խայտառակութիւններից յետոյ, ձեր այդ քայլը համարում էք «լաւագոյն բանը». ի՞նչ տեսակէտից լաւագոյն. այն, որ այս տարի այնքան ծախսեր, խայտառակութիւններ եղան սահմաններում, թէ այն, որ ձեզ չվերաբերող հարցը առանց մեր գիտութեան տնօրինեցիք, երեւի եւ այս եւ այն...

Բաւական է. սպասւածից եւ արժէքից շատ երկարացրինք. մեզ թւում է որ ընկերականութիւնը, մեր կուսակցութեան լաւագոյն տրադիցիաները, մեր կուսակցութեան շահը իսկ, պահանջում է, որ մենք մինչ զգուժ եմք, ինչ համարում ենք մեր կեանքի ու մահու խնդիրներ՝ պարզենք: Փոլիթիկան պահելը, կեղծ ընկերականութիւնը, ի գուր տեղը թափած զգացումները մեզ չի փրկի... Մենք նոյն իսկ պատրաստ ենք իբրեւ մարդիկ եւ իբրեւ ընկերներ իրարից վշտանալու վտանգին ենթարկւել, բայց թոյլ չտալ որ հասարակական գործը տուժէ յանուն մեր ընկերական շահերի... Ընկերականութիւնը գործերի համար է, եւ ոչ վերջինը առաջինի:

Սրանով սպառնա՞ծ ենք համարում այս ամբողջ վէճը. մենք դարձեալ մեր հին տեսակէտով, մեր հին ընկերական վերաբերմունքով, հոգու ամբողջ թափով պատրաստ ենք ուրախութեամբ տանել մեզ ընկած բաժին գործը, միշտ հսկելով արդարութեան եւ ուրիշների իրաւունքների անբռնաբարեյիտութեան վրայ, եւ այս բոլորը յանուն մեր գործի, յանուն մեր կուսակցութեան լաւագոյն տրադիցիաներին:

Ընկերական բարեւներով  
[ՎԱՄՊ. Կ. ԿՈՄԻՏԷ]

1907 թ. դեկտ. 17

Շամիր

- 1.- Բանավէճի:
- 2.- Միջադէպին:
- 3.- Յաջորդաբար՝ Ռուբէն Տէր Մինասեան, Գեղամ Տէր Կարապետեան, Փիլոս Փափախեան եւ Իսկենտէրեան Վարդան, բոլորն ալ Գուրանի (Տարօն) գործիչներ:
- 4.- Վահագ – ծածկանուն Օննիկ Դերձակեանի, աւելի ծանօթ Արշակ Վռամեան անունով, անդամ Արեւելեան բիւրոյի:
- 5.- Փարոս – ծածկանուն Ուրմիա քաղաքի, Ատրպատական: Մինարեքը՝ Սպլմասուն է:
- 6.- Սմբատ – մէկ այլ ծածկանուն Միսն Չաւարեանի, որ նոյնպէս անդամ էր Արեւելեան բիւրոյի:
- 7.- Լրիւ կազմով:

*Մենաւորի ընկերներին*

Գիերցի Դաիթի դաւաճանական մատնութեան հետեւանքով Վասպուրակա-  
նի զինապահեստներու մէկ կարեւոր բաժնի գրաւման մասին՝ Արամ Մանուկեան  
կը տեղեկացնէ Ատրպատականի մարմնին, առաջին առթիւ գրելով թուրք-պարս-  
կական սահմանի մօտ գտնուող Մենատրի (Ս. Թաղէի) ընկերներուն, թելադրելու  
համար որ ձեռք առնեն հարկ եղած կանխագուշական միջոցներ:

*Սիրելիք !*

Երեւի լսեցիք այն սոսկալի հարւածը, որ իջաւ մեր գլխուն, շնորհիւ մի ընկեր  
կողմէ սրիկայի, որուն դուք ծանօթ էք. այս ամառ իբրեւ «մարտական օժանդակ»  
ներս ճամբեցիք. դա Դհերցի Դաւիթն է Սուսիկն [?]...

Դաւաճանութեան ամենասոսկալին պայթեց մեր գլխուն. մեզ այսպստ պատճա-  
ռով նա բռնել տւեց վերջին 1905, 906 եւ 1907 թ[ւական]ներից այժմ այստեղ փոխադ-  
րած ամբողջ ապրանքները... սերունդների տարիների աշխատանքը ծով ընկաւ:

Առաջին օրը յանկարծակի գալով չկարողացանք մի որեւէ բան անել. ուշ երեկոյ-  
եան միայն իմացանք որ դաւաճանութիւնը մեր շարքերից է եղել. միւս օրը պատ-  
րաստեցինք հակահարւած տալ, բայց դժբախտաբար դաւաճանը ազատեց. կռիւր  
տեւորից փոխեց լայն մասսայականի, 5-6 ժամ երկու կողմից կրակ արձակեց,  
զինուորներից եւ գապթիաններից 8-10 հոգի ընկան. կռիւր եղաւ Աղաւնաձոր թա-  
ղում, Սահակ-բէյի տան դիմաց...

Ժողովրդին համարեա վնաս չեղաւ. մերոնցից մէկը թեթեւ վիրաւորւած է թե-  
ւից, այն էլ մեր զնդակներից: Նոյն կուրի ժամանակ կառավարութիւնից այդ փողո-  
ցում հանւած մէկ պահարանի ապրանքները, համարեա ամբողջութեամբ յետ խե-  
ցինք... Ժողովուրդը մեծ մասամբ սուգ ու շիւանի մէջ է, իսկ մի փոքրամասնու-  
թիւնը, մեր շարքերից, դրսից եւ արմենականներից գլուխ են բարձրացրել եւ միա-  
բերան կը գոռան որ յանցաւորը Կ. Կոմիտէն է, դրսեցիները եւայլն. ոչակցիան  
սկսւում է...

Սրիկան գտնւում է կառավարական մի ազդեցիկ պաշտօնեայի տան (Ալայի բէյ),  
ազատ երթեւեկում է չարշին<sup>1</sup>, խօսում է ժողովրդի հետ առանց ամօթի. շատերին  
ասել է որ ինքը ժողովրդին բարերարութիւն է արել, գէնքերը ժողովրդին կոտորել  
տալու համար է...

Այս երկրորդ օրւայ դէպքից յետոյ, կառավարութիւնը բոլոր ուժերը յետ քաշեց,  
դադարեցրեց խուզարկութիւնը եւ սպասողական վիճակի մէջ մենք եւ կառավա-  
րութեանը դէմ առ դէմ կանգնած ենք. վերջը Աստուած գիտէ թէ ի՛նչ կը լինի:

Դէպքի ժամանակ ձգեցինք մի ռուսը, եւ պատահական կերպով պայթեցրինք մի ցինկ խմոր<sup>2</sup>. այս երկուսի պայթումը սոսկալի ազդեց կառավարուածեան եւ թուրք ամբոխի վրայ. նրանք սարսափած յետ փախան...

Ինչեւէ. գրում ենք ձեզ յոյս չունենալով երկրորդ անգամ գրելուն, սիրտ չունենալով երկար գրելու, երես չունենալով մանրամասն խօսելու...

Այս սուրհանդակը կը ճանաչէք. սա մի անգամ էլ է եկել, բայց վերադարձել է Յակովբի հետ, բերել է հասարակ թերթեր, որը թողնւած է Աւետարան<sup>3</sup>. լաւ կը լինի, որ կապոցը այնպէս թեթեւ լինի եւ յարմար, որ մէջքը կապի. աշխատեցէք ուղարկել Վտակ<sup>4</sup> N 25 [ից] բարձր թւերը, մէկ-մէկ օրինակ, եւ եթէ այլ կարեւոր նորութիւններ կան, այն էլ կը ճամբէք, նորէն մէկ-մէկ օրինակ. ի հարկէ աշխատեցէք մեծ մասամբ նորութիւններ ճամբել, մանաւանդ նամակներ եթէ այդպիսիք կան:

Սրան դրամ հարկաւոր չէ, բացի հացից ոչինչ չէք տայ...

Ինչպէս գիտէք, այն լիրբը ձեր բոլոր գաղտնիքներն էլ գիտէ. զգուշութեան համար, ամէն բան լաւ դասաւորեցէք, ձեր անունները — կեղծ — փոխեցէք եւ միշտ զգոյշ մնացէք մինչեւ նրա սատկիլը: Հետաքրքիր է իմանալ, թէ ձեզ մօտ, Բլուր եւ Աւարայր ու Մինարէթ<sup>5</sup> ինչքան ապրանք կայ պատրաստ...

Զգիտենք ինչ վիճակի մէջ է եւ գծերի դրութիւնը. մեր մարդկանց տրամադրութիւնը ինչպէս է. այս բոլորի մասին դուք գրեցէք մեզ:

Ներփակ նամակները անմիջապէս ըստ պատկանելոյն ճամբեցէք:

Գրեցէք մեզ հոտ եղած նորութիւնների եւ նոր ընկերների մասին եթէ կան այդպիսիք: Լսեցինք որ մի քանի մարդիկ կան որ պատրաստուամ են ներս գալ. լաւ կը լինի որ դրանք սպասեն, տեսնենք ինչ վերջ կ'ունենայ ներկայ ճգնաժամը... Գծերի վրայ դեռ վստահութիւն չկայ, ըստ երեւոյթին ամէն բան քանդուած է թուում...

Մենք առաջժամ ապահով ենք, — մեր տրամադրութիւնը բարձր է, եւ յուսահատուելու էլ տեղիք չունենք. այս էլ կ'անցնի:

Սրան անմիջապէս յետ ճամբեցէք, թող չուշանայ. ո՞վ գիտէ ի՞նչ կը լինի:

Ընկերական բարեւանքով՝  
ԱՐԱՄ

1908<sup>6</sup> թ. փետր. 6-ին

Շամիր

1.- Շուկան:

2.- Վառոդ:

3.- Խաչան գիղ:

4.- «Վտակ» — 1907-1908 թթ. Թիֆլիս հրատարակուող դաշնակցական օրաթերթ, փակուած «Յառաջ»ի շարունակողներէն:

5.- Յաջորդաբար Քիչմիշթեփէ գիղ, Խոյ եւ Սպլմաստ, երեքն ալ Ատրպատական նահանգի մէջ:

6.- Բնագրին մէջ 1907 թ. է, ինչ որ ակնյայտ սխալ է, որովհետեւ զինապահեստներու գրաւումը տեղի ունեցած էր 1908 թ. Յունուար 23էն սկսեալ:

**Մենաւորի ընկերներին**

**Սիրելիք!**

8-10 օր առաջ ուղարկեցի ձեզ մօտ նախկին (մի անգամ եղած Աւետարանի Յակովբի հետ դարձած) լօ-լօ-ի հետ: Այն նամակում գրել էինք այն դժբախտութեան մասին որ պատահել էր մեզ հետ: Ասել էինք որ մեր ընկերներից Դաւիթի բացարձակ դաւաճանութեան պատճառով կառավարութեան ձեռք է ընկել մօտ 300 հրացան եւ 300.000 ծայրեր, մնացած մասերի եւ ապրանքների հետ: Երկրորդ օրը փորձեցինք սատկացնել շան, չջաջողեց, դրա փոխարէն ընկան 7-8 ոստիկան ու զօրք...

Դրանից յետոյ նորութիւններ տեղի չունեցաւ. կառավարութիւնը ո՛չ մի խուզարկութիւն չի անում. սպասողական վիճակի մէջ ենք. կառավարութիւնը հաւանօրէն ուժեր հաւաքելու հոգսի մէջ է. հոս հազիւ 1000-1500 զօրք լինի: Ինչ որ է սեւ ամպեր են կուտակել մեր երկնակամարի վրայ: Գուցէ մեծ անակնկալների կամ կոտորածի նախօրեակին ենք գտնուում...

Արտասահմանից նորութիւններ չկայ. չգիտենք ի՞նչ է լինում. խօսում են որ ռուսական զօրքեր են մտել Պարսկաստան, իբր թէ զօրքեր են մօտենում եւ տաճկական սահմաններին...

Վերջապէս կտրւած ենք ամէն կողմից. խնդրում ենք մեզ բազմակողմանի լուրեր տուէք:

Արդէն խնդրել ենք հող եղած ապրանքների ցուցակը դրկէք մեզ: Բացի սրանից առանձին նորութիւն չկայ:

Սովը սոսկալի է. չգիտենք վերջը ի՞նչ կը լինի:

Ներփակ նամակը իսկոյն հասցրնէք Աւարայր, կարեւոր հեռագիր կայ մէջը:

Ամէնքս ողջ ենք եւ հոգով բարձր. ոչինչ չի կարող մեզ յուսահատեցնել. մեզ գրեցէք պարսկական շարժումների եւ թուրք-պարսկական պատերազմի մասին:

Գրեցէք թէ ո՞վ է եկել Ռուսաստանէն Մինարէթ...

էլ բան չմնաց գրելու. աշխատեցէք մեծ քանակութեամբ թուրքերէն եւ հայերէն գրականութիւն-թերթեր եւ այլն հասցնել մեզ:

Գրեցէք թէ ձեր կողմից գժերը ի՞նչ վիճակի մէջ են:

**Բարեւներով  
ԱՐԱՄ**

[1908 թ. Փետրուար]

280

*Հեռագիր Շամէն – Մ[եծ] Քաղ[աք]*

Վանէն Թիֆլիս՝ Արեւելեան բիրոյին յղած այս հեռագրին կ'ընկերանայ Մարգպետի (Ղազարոսեան Ղազարոս) ընդարձակ նամակը, գրուած Ս. Թադէի վանքէն 27 Փետր. 1908ին, որուն կցուած է հետեւեալ մակագրութիւնը: «Պատճեն այն հեռագրի որ Շամի մարմինը մեր միջոցով յղած է Մ. Ք. Արեւելեան] Բ[իրո]ին:

*Նամակներով յայտնած ենք մեր վիճակը. դրամական կրիզիսի մէջ ենք. դէպքերը վրայ են հասնում. դրամ հասցրէք անմիջապէս, եթէ կարելի հեռագրով, Մրգաստանցու<sup>1</sup> միջոցով:*

*Նպաստի դրամները ծախսեր ենք. սովը սոսկալի. լուրեր կան կոտորածի. զօրքի են սպասւում:*

**ԱՐԱՄ**

[27-2-1908]

1.- Մրգաստանցին Օհանջանեան Մարգիսն է (Ֆարիսդ):

Հ.Յ.Դ. Կեդր. Դիւան

Փաստ. 667-78-ը գաղտնի քանաքով գրուած նամակ է Արամի կողմէ, ուղղուած Իշխանին (Պօղոսեան-Միքայէլեան Նիկոլ), զգուշացնելու համար այս վերջինը կառավարութեան ձեռք առած խիստ միջոցներէն, որոնք կրնային հասնիլ Իշխանի ղեկավարութեան տակ գտնուող Վանայ լճի հարաւային գաւառներուն,– Գաւաշ, Շատախ, Մոկս, Կարկառ, Սպարկերտ եւայլն: Գաղտնի քանաքը, հակառակ անոր որ տեղ-տեղ գրեթէ անընթեմնելի է, բաւական յաջողութեամբ բացուած եւ արտագրուած է, հաւանաբար ժընեի դիւանատան մէջ (փաստ. 667-78ա): Այստեհանդերձ հոս եւս թուականի սխալմունք կայ. թուագրուած է 12 Մարտ (1907). յայտնի չէ, թէ սխալը գրողի անուշադրութեան հետեւանքո՞վ է, թէ արտագրողի վրիպանք: Այս պատճառ եղած է որ այս փաստաթուղթը, ինչպէս նաեւ նախորդող երկուքը, զետեղուին 1907 թուականի թղթածրարին մէջ (թիւ 667), մինչդեռ, ինչպէս յիշուեցաւ արդէն, Դհերցի Դաւիթի մատնութեան հետեւանքով Դաշնակցութեան զինապահեստներու յայտնաբերումը տեղի ունեցած է 1908 թ. Յունուարի 23-էն սկսեալ. այլապէս նաեւ յիշատակուած 12 մարտ 1907-ին թէ՛ Արամ եւ թէ՛ Իշխան կը գտնուէին Վիեննա, Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդի. ժողովին:

Միրելի Իշխան!

Մեր դրուժիւնը ծանրացաւ, ոչ միայն ծանրացաւ այլեւ կոտորածի ուրականը դամոկլեան սրի պէս կախուեց մեր գլխին: Արդէն քանիցս գրել էի լինելիք խուզարկութեան մասին. այդ լուրերը այս օրերը ծանր բնաւորութիւն են ստանում: Հիւպատոսները երաշխաւորութիւն են պահանջում [կառավարութիւնից] խաղաղ ժողովրդեան չդպչել, ու այդ պայմանով միայն յեղափոխականներ բռնել: Այդ երաշխիքը դեռ չէ տրւած եւ երեւի չի էլ տրւի, որովհետեւ խուզարկութեան ծայրը բացուեց: Անցեալ օրը Տիգրանի տեղը իմացել էին Ալիւր\*\* գիւղ.– Տնաչէնը երկու անգամ մտել էր նոյն գիւղը եւ ամէն անգամ 3-4 օր նստել: Իսկոյն 200 զօրք, թնդանօթ եւ նաւթ վերցրած գնացին. բարեբախտաբար կը պահւին եւ կ'ազատւին...:

Երէկ լուրեր կար որ նոյնքան քանակութեամբ եւ աւելին պիտի գան ձեր կողմերը. Աստուծոյ սիրոյն տեղերնիդ գոնէ ժամանակաւոր կերպով փոխեցէք:

Անցնում եմ այն փաստերին որոնք առիթ են տալիս կասկածելու ընդ[հանուր] կոտորածից:

Ա) Մի ամսից աւելի ինչ ջամիներում բացարձակ կոչ է անւում զինւիլ, պատրաստելի եւ յարձակելի հայերի վրայ. այս փաստերը ստուգել են եւ հիւպատոսարանները:



Բ) Արճէշը\*\* գործնական կերպով սկսել է. երեւի լսեցիր որ յարձակել են եկեղեցու վրայ. բարեբախտաբար ժողովուրդը ցրլած է եղել եւ միայն 12-15 հոգի վիրաւորւել եւ տիոց են կերել. այդ առթիւ հոս բողոքեցին, լսող չկայ. տաճիկները հոն արգելել են ժամերգութիւն եւ կոչնակ զարկելը:

Գ) Ամենաստոյգ աղբիւրից տեղեկացանք, որ Պոլսէն մի կոմիսիոն է գալիս՝ պալատականներից 5 հոգի, հոս բարեփոխութիւն մտցնելու համար. երեւի կոտորածը վերսկսելու [?] համար, ինչպէս մեծ դէպքին եղաւ...

Դ) Հոն էլ գործնական քայլեր արել եւ անում են. երէկ ամբողջ Կլոր Դարը<sup>1</sup> պատերազմական դրութեան մէջ էր. ժողովուրդը սարսափած քաշւել էր որոշ վայրեր, տաճիկները պատրաստւել էին յարձակելու, բայց խափիւսները<sup>2</sup> կ'արգելէն...:

Ե) Տաճիկ ժողովուրդին գէնք է բաշխւում, այս հաստատւած իրողութիւն է...:

Ձ) Կոստակալը գնում է Պոլիս, պատրւակելով թէ բժշկութեան կ'երթայ...:

Է) Տաճիկները հայերից վերցրած ապրանքների գինը չեն տալիս բացարձակ սպառնալիքներ կարդալով... եւայլն, եւայլն, եւայլն:

Ահա այս է դրութիւնը ընդ[հանուր] գծերով. մնում է քեզ եզրակացութիւն հանել: Մի քանի խօսք էլ մեր բռնած դիրքի մասին:

Ամէնից առաջ մենք խոստափում ենք ամենակտրուկ միջոցներով մեր կողմից առիթներ չտալ, գոնէ մի առժամանակ յետաձգելու համար... Այս բոլորի հետ յամենայն դէպս մեր ուժերը մոբիլիզացիա<sup>3</sup> ենք անում, ապագայ անակնկալների առաջ չզղկելու համար. ամենամեծ կասկածը չարսուից է. ընդ[հանուր] կարծիքը այն է, որ առաջ այնտեղից պիտի սկսեն: Ժողովուրդի կէսը խանութ չի գնում. ամենապահպանողական գրուիւնները կոտորած են գուշակում... գաւառից եւ ձեր կողմերից դեռ լուր չենք առել. Ս.....ի դէպքի մասին երեւի լսեցիք, մի բան պարզ է, որ դէպքը պիտի սկսի քաղաքից, բայց թէ շրջանը պիտի անցնի թէ չէ, այդ էլ թէեւ ոչ պարզ, բայց հասկանալի չէ:

Ի՞նչ պիտի անէք դուք. ի՞նչ դիրք պիտի բռնէք անակնկալի դէպքում. սպասելու էք կրակը ձեր շրջանը անցնի՞ յետոյ գործի դիմել, թէ դէպքերից կուահելով միջոցների պիտի դիմէք. այս բոլորը շատ հետաքրքիր է մեզ համար...

Երեւոյթների մասին մանրամասն գրեցի դուրս... դրամ 30-40 ոսկի կայ առ այժմ. դու եթէ գէնքի դրամ ունես, կարիքներդ հոգա, մինչեւ այստեղ ես վճարեմ գէնքի:

Համբոյրներով  
ԱՐԱՄ

12 մարտ [1908], Շամ

1.- Կլոր Դար – Վանի քաղամասերէն:  
2.- Գաղտնի ոստիկանները:  
3.- Չօրաշարժ:

Արամի այս նամակին առաջին մեկ կամ ամբողջ էջերը դժբախտաբար կորսուած են. ան ուղղուած է յայտնապէս Դուրան-Բարձրասնդակի (Տարօն-Սասուն) Կ. կոմիտէին կամ շրջանի կուսակցական յայտնի գործիչներէն Ռուբէնին (Տէր Սի-նասեան):

...Ընկերներից ոեւէ մէկին, կամ կոմիտէն եթէ ի հարկէ դուք համաձայն էք մեր կարծիքների եւ տակտիկի հետ, որի վերաբերմամբ չենք կասկածում. վերջինը եթէ անելու էք ուղղակի նամակով յայտնէք Մ. Քաղաք գրեցէք եւ մեզ: Տեղեկագիրը եւ ձեր կարծիքները չմոռանաք. սա կուսակցութեան համար կեանքի եւ մահու խնդիր է. ինչքան էլ որ տաժանելի լինի ձեր արդի վիճակը, թէ եւ մերն էլ պակաս չէ, բայց եւ այնպէս յեղափոխական եւ քաղաքացիական պարտականութիւնը պահանջում է արտայայտել, մանաւանդ որ լաւ-վատ՝ Երկրում իբր մարմին մենք ենք մնացել եւ դուք: Խնդրում ենք մանրամասն գրէք ձեզ մօտ պատահած վերջին բոլոր դէպքերը եւ պատահարները:

Ձեր շրջանի համար նորէն եկել է մօտ 200 ոսկի նպաստից դրամ: Մ. Ք. գանգատ-ւում են որ ստացագրեր չէք ճամբում. մանաւանդ դրամի մասին գրած նամակներին Տատրակը<sup>1</sup> չի պատասխանում. շատ վշտացած են: Գրել են որ այս դրամը ձեզ չճամբենք մինչեւ նախկինների ստացագրերը չուղարկէք: Մեզ Որոտի<sup>2</sup> հետ մի ստացագիր էք ուղարկել կեղծ անուններով, դա ոչ մի կոպէկ չարժէ. քանիցս գրած եւ եկողներին անձամբ խօսել ենք, որ այդ դրամները ժողովուրդը հրապարակով տւել է եւ հրապարակով էլ հաշիւ է պահանջում. ուրեմն պէտք է ստացագրերը հա-ւաքել գիւղերի իսկական անուններով, գիւղի ռէսի, տէրտէրի եւ իշխանների ստո-րագրութեամբ ու կնիքներով մոհրած. ինչ<sup>3</sup> ու դուք գլանում էք այս փոքրիկ տար-րական օրէնքը յարգելուց. չէ<sup>4</sup> որ արտասահմանում մեր հակառակորդները դա փաստ են բռնել եւ մեր հէրը ի գուր տեղը անիծում են... այդ տեսակի կորէկտ հաշ-ւետութիւնը երեւի պատճառ կը դառնար եւ նոր գումարների հաւաքման ու առաքման... Խնդրում եւ աղաչում ենք նախկին ստացագրերը վերոյիշեալ ձեռով իսկոյն մեզ հասցնէք: Չմոռանաք մի մարդ էլ ճամբել Պուրակ<sup>5</sup> եղած դրամները փոխադրելու համար:

Խնամք տարէք որ ձեր գծերը կանոնաւորուեն մինչեւ Պուրակ. իսկ այս կողմի մասին մենք յատուկ հոգ կը տանենք:

Սարուստանից<sup>6</sup> վերջերս նամակներ չենք ստանում. գծերը ժամանակաւոր կեր-պով խանգարել են յայտնի դաւաճանութեան պատճառով<sup>7</sup>:

Արտասահմանում մեծ աղմուկ է հանել վերջերս Փարիզում գումարւած համա-թուրքական ընդհանուր յեղ[ափոխութեան] համար համերաշխ գործակցութեան կոնգրէն, որ գումարւել է Դաշնակցութեան նախաձեռնութեամբ<sup>8</sup>: Ժողովին մաս-

նակցել են համարեա թուրքեր եւ հայեր, բայց մնացած տարրերն էլ միացել են ժողովի վճիռներին: Մակեդոնացիք չեն կարողացել մասնակցել Սարաֆովի<sup>7</sup> սպանութեան պատճառով: Վերջինս սպանեց Սոֆիայում կուսակցական հաշիւներով իրենց հակառակորդների կողմից: Մակեդոնական կուսակցութիւնը Սարաֆովի եւ Կարվանովի սպանութեան պատճառով մեծ կրիզիսի մէջ է:

Ձեզ համար ներփակում ենք ձեռքի տակ եղած նորութիւնները եւ թերթերը, նորերը չկան. այսուհետեւ կանոնաւոր կերպով կ'ուղարկենք ձեզ:

Իշխանը երեւի լսեցիք որ եկել է եւ բաւական առողջ է: Միասին ենք հոս. Տիգրանը<sup>8</sup> խարկով է. ընտանեկան պատճառներով յիմարը գնացել է ծառայելու. իսկ վերջերս գրում է, թէ ծանր կերպով հիւանդացել է:

Մալխասը Մ. Ք. աչքներդ լոյս արդէն պսակւել է:

Արտասահմանում ուրիշ մեծ բան չկայ. Սմբատ Շահագիրզն է մեռել:

Պարսկական յեղափոխութիւնը կանոնաւոր կերպով առաջ է գնում: Վերջերս ուժեղ ցնցումներ է նկատւում. ինչպէս կ'երեւայ Շահին պիտի փոխեն. Լիւդովիկոս 16րդի աստղը բոլորիս խրախուսում է: Այս սահմանային վէճը կամ պատերազմը երեւի ժամանակաւոր կերպով կը դադարեցնէ ներքին յեղափոխութիւնը: Մերոնք հոն մեծ եռանդով պատրաստւում են մասնակցել յեղ[ափոխութեան] եւ սկսւող պատերազմին:

Էլ կարծեմ բան չմնաց. գրեցէք ձեր տրամադրութիւնների, ձեր վիճակի եւ գործերի մասին:

Ամենաջերմ համբոյրներով՝  
ԱՐԱՄ

1908 թ. 22 մարտ

Ազատ-Դաշտ<sup>9</sup>

1.- Տատրակ – ծածկանուն Գեղամ Տէր Կարապետեանի (1865-1918):

2.- Որոտ – արդեօ՞ք Բարունակ Կապուտիկեանն է (1888-1918), որ այս ծածկանունը կը գործածէր:

3.- Պուրակ – ծածկանուն Խլաթ աւանի:

4.- Մարուստան – ծականուն Կովկասի:

5.- Ալնարկութիւն Դիերցի Դալիթի դաւաճանութեան:

6.- Խօսքը կը վերաբերի 1907 թ. Դեկտեմբերի վերջերուն Փարիզի մէջ գումարուած Օսմ. Թուրքիոյ ընդդիմադիր տարրերու համագումարին:


7.- Բորիս Սարաֆով – մակեդոնացի հանրաժանօք յեղափոխական առաջնորդ, սերտ բարեկամ եւ գործակից Դաշնակցութեան: Սպաննուեցաւ Սոֆիա, իր ընկերոջ՝ Կարվանովի հետ 1907 թ. Նոյեմբերին, հակառակորդ Սանդանսկի կուսակցութեան դաւադրութեամբ:

8.- Ազատ Դաշտ – ծածկանուն Գաւաշ/Կաւաշ գաւառի, պատմական Ռշտունիք:

ԱՐԱՄԻ ԲԱՆՏԱՐԿԻԵԼՈՒ ՀՐԱՄԱՆԸ  
ՔՆՆԻԶԻ ԿՈՂՄԻՑ

1908 յուլիս, Վան

(Բնագրի թարգմանութիւնը Մելինէ Անումեանի,  
Պատմական գիտութիւններու դոկտոր, թրքագէտ, Երեսան)



Առանձին փաստաթղթերի եւ դատախազի ներկայացրած ուսումնասիրուելուց յետոյ (հաստատուել է, որ) վերոյիշեալ մեղադրեալին վերագրուած հիմնական բնոյթի յանցագործութիւնները քրեական բնոյթ են կրում, մեղադրեալ, որի անունը եւ բնութագիրը նշուած են վերեւում, եւ քանի որ քրեական օրէնսգրքի 58-րդ յօդուածը պահանջում է, որ նա ձերբակալուի, ապա հարկ է ձերբակալել նրան, (...անընթեռնելի հատուած...) հասցնել ու յանձնել Վանի կալանատուն, եւ պէտք է որ յիշեալ բանտի տնօրէնն ընդունի նրան, պարտաւորուի այնտեղ պահել, իսկ եթէ վերոյիշեալը (մեղադրեալը) փորձի դիմադրել, տնօրէնն անմիջապէս դիմի համապատասխան պաշտօնեաներին, որոնք հարկադրուած կը լինեն (տնօրէնին) ցուցաբերել այդ հարցում անհրաժեշտ օժանդակութիւնը: Սոյն ազատագրկման համար նշանակուած ժամկէտը ներկայացուած, ստորագրուած եւ կնքուած է գրատր կերպով:

Մինչեւ 326 թ. արաբական 6-րդ ամսուայ 16 եւ 324 թ. յուլիսի 1

284

**ԲԱՆՏԷՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԱԾ  
ԱՐԱՄԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՌԱԳԻՐԸ «ԴՐՕՇԱԿ»ԻՆ, ԺԸՆԵԻ**

20-VIII-1908

VIA HONGRIE

SUISSE GENEVE – REDACTION DROSCHAG

DELIVRE AVEC PLUS 250 PRISONNIERS  
GRACIE – PROCLAMATION CONSTITUTION ET AMNISTIE

ARAM

Թարգմանու թիւնը. —

Վան, 20 Օգոստոս<sup>1</sup>

250-է ԱԻԵԼԻ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՎ ԱԶԱՏՈՒԵՑԱՆՔ – ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒ-  
ԹԻՒՆ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐ ՀՈՒԵՑԱԻ:

ԱՐԱՄ

1.- 20 Օգոստոսը նոր տոմարով է. Արեւելեան երկիրներու մէջ գործածուած ըստ հին տոմարին պիտի ըլլայ 7 Օգոստոս:

ՀԵՌԱԳԻՐ «ԴՐՕՇԱԿ»ԻՆ, ԺԸՆԵԻ

GENEVE – REDACTION DROSCHAK – 31 - 8 [1908]

KOMS, SARKIS LEGALISES AUJOURD’HUI – VISITE PATRIOTE COMMANDANT – ECHANGES PAROLES BONNES – TRAVAILLER ENSEMBLE CONSERVER CONSTITUTION – ACCUEIL CORDIAL – VISITE TOMBEAU VASKIN MARTYRS

ARAM

Թարգմանութիւնը.—

Վան, 31 Օգոստոս

ԿՈՄՍԸ, ՍԱՐԳԻՍԸ ԱՐԴԱՐԱՑՈՒԱԾ ԱՅՍՕՐ – ԱՅՅԵԼՈՒԹԻԻՆ ՀԱՅՐԵՆԱՍՔԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ – ՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԽՕՍՔԵՐՈՒ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ – ԱՇԽԱՏԻԼ ՄԻԱՄՆԱԲԱՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ – ՍԻՐԱԼԻՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻԻՆ – ԱՅՅԵԼՈՒԹԻԻՆ ՎԱԶԳԷՆԻ<sup>1</sup> ԵՒ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՇԻՐԻՄՆԵՐՈՒՆ:

ԱՐԱՄ

1.- Տէրոյեան Տիգրան (1877-1898), Վանի 1896 թ. հերսաներէն:

**Սահմանագլխի<sup>1</sup> դաշնակցական ընկերներին!**

Բանտից ելնելուց յետոյ կարդացի ձեր գրած մի շատ պաշտօնական եւ հակայե-  
ղափոխական նամակը. գարմանում եմ որ այդքան բարձր առաքինութիւնների  
պաշտպան լինելով հանդերձ չունէք տարրական համբերողութեան ոգի, դէպի եթէ  
ոչ ձեր նախկին ընկերները, գէթ դէպի մարդը: Մենք ունենք կազմակերպական  
դիսցրիպլինա – Ընդ. Ժող[ով], որը կարող է պատժել այս շրջանի ընկերներին, նրա  
այս եւ այն արարմունքի համար, քննելուց յետոյ. իսկ նախ քան այդ, դիմել այսպի-  
սի կոպիտ միջոցների, դա վայել չէ մանաւանդ ձեզ, որ բարձր յեղ. էթիկայի<sup>2</sup> կողմ-  
նակիցների դերի մէջ էք. դա ինձ յիշեցրեց տաճկական բանտի եւ կառավարութեան  
անտակտութիւնը որ ամէն մի պաշտօնեայ փոխանակ սպասելու կենտրոնական  
մարմնի դատավճռին, իր կողմից ձեռք ընկած դատապարտեալներին նեղում ու  
անարգում է...

Ամէն բան արէք, բայց մի՛ մոռանաք մարդկայնութիւնը...

Եթէ հոս ձեր կարծիքով ամբողջ մարմինը եւ ամբողջ ժողովուրդը անբարոյա-  
կանացել է, գէթ մնացած կը լինէին մի երկու տասնեակ ընկերներ, որոնք բանտե-  
րում ու շղթաների տակ, յատակում ու կուրի դաշտում հաւատարիմ էին Դաշնակ-  
ցութեան տրադիցիաներին. դուք բարոյական իրաւունք չունէք մերժելու այդ ըն-  
կերների բաժինը – պարտաւոր էիք այս յեղ[ափոխական], մեծ օրերին շատ կարե-  
ւոր եղող յեղ. գրականութիւնը բերել եւ հոս ներս ճամբել: Նախկին ընկերներին  
դուրս վճարելու քաղաքացիական արիութիւն ունեցողները կազմակերպական նա-  
մուսի պատիւ էլ ունենալու էին, որ ներս գային, եղած ապրանքները ու գործերը  
իրենց ձեռքը առնէին ու սրիկաներին դուրս քշէին: Փառք Աստուծոյ այժմ կարող  
էք ազատ անցագրով գալ. ինչո՞ւ այժմ էլ տեւորից էք խօսում եւ բարձակոչ վճիռ-  
ներ արձակում, այն էլ նրանց որոնք լաւ գիտեն գրողների յեղ. անցեալը եւ կազմա-  
կերպութեան մատուցած յեղ. գործնէութիւնը:

Լսեցինք որ նոր ընկերներ են եկել, երկու առանձնապէս. Վահաբը<sup>3</sup>, թող հոս  
չտապէ Պի[թի]ս [?], իսկ դուք թերթեր ճամբէք ներս: Վրէժը եւ հաշիւները այդ տե-  
ղը եւ իր օրին մաքրէք:

Սահմանադրականները, սեւ հարիւրեակները իրար հետ միացած մեզ հալածելու

1.- Սահմանագլխի էին ռուս-թրքական (Սուրմալու գաւառ) եւ թուրք-պարսկական (Ատրպա-  
տական) բաժանման գիծերը: Այս պարագան կը վերաբերի Ատրպատականի ընկերներուն:  
2.- Վարքուբարքի, ւաւնդոյթի:  
3.- Վահաբ – ծածկանուն Օննիկ Դերձակեանի, ատլի ծանօթ Արշակ Վաւնեան անունով:  
4.- Չեռագրին մէջ 1907, որ ակնբեր սխալ է: Նամակին սկիզբը Արամ կը խօսի բանտէն ելլելու  
մասին, ինչ որ տեղի ունեցաւ 1908 թ. Օգոստոսի 4ին (հին տոմար):





**Հ. Յեղ. Դաշ. Վասպ. Կ. կոմիտէի ընկեր**

*Սիրելի Տիգրանին!*

Փոստով գրած նամակը ստացանք, շատ զգացւեցինք, որ այդքան բուռն կերպով ճնշւած ես, համաշխարհային, ընտանեկան, կուսակցական եւ ընկերական թախիծով...

Տո՛ տնաքանդ, աշխարհը քանդւեց, դու դեռ նոր ես ընտանեկան խնդիրներով զբաղւում. իբր թէ քո գլխու տարտը քաշեցիր, մնաց ընտանեկան յիմարութիւնները: Ծիծաղելուց մեռանք, լաւ ժամանակին հասաւ քո նամակը, մեր տրամադրութիւնը բացաւ...

Մանաւանդ երբ ես էլ հաղորդեցի որ մայրդ էլ մեռել է... Կ. Կ. միաձայն որոշեց պատարագ անել տալ: Պատարագիչը կը լինի Կոմսը, դա նրա ցեղական սրբազան իրաւունք է...

Վարդ[ան]ն էլ հոս է. նա ծիծաղելուց մեռաւ. մանաւանդ երբ լսեց, որ ընտանեկան բարձր գաղափարներով էլ գիտես տարւել...

Որպէսզի վերածնւիս եւ հանգստանաս, լաւ կը լինի մի 2 ամսով գաս Լիմ եւ անդամ գրւիս այնտեղի մենակեացներին. հոն լաւ կը հանգստանաս, ու նորէն կ'երթաս Ձագրանիցայում կատարելագործելու. չէ՞ որ դա էլ մեր մասնագիտութիւնն է<sup>1</sup>...

Տեղիս միսիոնարութեան լուր տուի՛նք, որ մոլորեալ Տիգրան եղբօր հոգու հանգստութեան համար աղօթք անեն... իշալլահ կը լաւանաս այդ բարեխօսութիւններով:

Տրամադրութիւնդ եթէ չլաւանայ, մանաւանդ եթէ հանգստութիւն եւ ուժ չունենաս գործելու, անմիջապէս գրիր որ մեր պահեստի ուժերից մի երկու փութ ագուաւի փոստով ուղարկենք քեզ՝ ի գործածութիւն...

Առայժմ այսքանը կարող ենք գրել. խնդիրները շատ բարդ էին. չկարողացանք երկար գրել:

*Իսկականի տակ ստորագրում ենք:  
Նախկին կենտրոն. [կոմիտէ] ԱՐԱՄ  
Իսկական կենտրոն. [կոմիտէ] ՍԱՐԳԻՍ  
Ապագայ կենտրոն. [կոմիտէ] ԿՈՄՍ*

Յ. Գ.– Այս տակին իբրեւ ապագայ կենտրոն գաղտուկ կը գրեմ: Դնում ենք մի քանի ծաղիկներ որոնցից մէկ՝ կապոյտը Ռուբինային, մէկ՝ կապոյտը Մամիկին է, իսկ մի դեղին տուէք մի գծի... Արտօսի ծայրից քաղուած ծաղիկներ են<sup>2</sup>:

1.- Տիգրանի (Տէր Սլրոշեան Յարութիւն) Խարկով գացած ըլլալուն եւ հիւանդանալուն մասին խօսք կայ Արամի կողմէ Դուրան Բարձրաւանդակ ուղղուած 22 Մարտ 1908 թուականի նամակին մէջ:  
2.- Յետ գրութեանը Կոմսի ձեռագրով է:

**Իմ սիրելի Տիգրան!**

Այսօր պահանջ եմ գգուում քեզ գրելու, այն էլ գուտ անձնական նամակ. պաշտօնական նամակներ գրելով մեռանք, ո՛չ կարգացող կայ եւ ոչ էլ պատասխանող:

Թէեւ լինում է բոպէ, որ մտածում եմ, որ ընկերները «հեռացան մոռացան» են արել, այլապէս չեմ հասկանում Պետրոսի եւ Մայիսի անվերջ լուսթիւնը. միթէ մենք իբրեւ ընկերներ էլ դադրել ենք իրար ճանաչելու կամ հասկանալու: Անցեալ օրը Մայիսից երկու փոստ կարտ կար, մէկը Սարգսին միւսը Կոմսին, ամէնքին մէկիկ-մէկիկ բարեւել էր: Արամի անունը չկար. ի՛նչ է պատահել, խօ՛ նոր ծուլթիւն չի եղել, թէ սովորական ձեւով խեղճ Արամը մոռացել ամէնքից... Ա՛խ դո՛ւք, դո՛ւք, բոլոր մարդիկ գգուելի են...

Յ ամիս է մենակ եմ ու անընկեր, բառի լայն իմաստով. գործը տասնապատ[կ]ւել է. մանաւանդ պրոպագանդական, այն էլ գրաւոր մասը ուղղակի սպառնում է մեզ խեղդել. լինում է օր, որ պէտք է Յ յօդւած գրենք (թուղթիկ), իսկ սովորական կազմակերպական նամակները, դրա վրայ աւելացնելով եւ թիւրքականները, է՛լ հասկաց[իր]...

Ձղերս ուղղակի յոգնել են, հագիւ հագ են շարժում, օրեկան Յ ժամ ինտենսիւ աշխատանք չեմ կարող անել...

Ա՛խ, գործերը, գործերը, մարդ գայրանում է, կատաղում, երբ տեսնում է առաջը ստեղծագործական աշխատանք եւ ինքը անգօր է կատարելու. դրանից մեծ վիշտ չկայ. թէեւ այս բոլորի հետ շատերը դանդատւում են անգործութիւնից:

– Ի՛նչ գրեմ ընկերական կեանքի մասին. քո պատմածները երազներ էին: Այդ չկայ ու չկայ. ասենք ընկերի երես էլ չտեսանք. բոլորը փախան գաւառ...

Գաւառ, կատարեալ էնդուզիազմ, խանդավառութիւն. ըէակցիան անցաւ. կառավարութիւնը մեռաւ: Ազատութիւն է, ազատութիւն: Ընկերները կամ մէկ-մէկ են պտտւում կամ ծպտւած, – խեղճ Պետրոս, այնքան պտտեց մի ազատ օր չտեսաւ: Կոմսը Անառիկում<sup>1</sup> 1½ ամիս մնաց. 15 օր հէնց մէջ - ցերեկով էին պտտւում... է՛հ ամէն բան փոխել է. իսկապէս անարխիա է. քրդերը աւազակային շայկա են կազմել...

Տիգրան! Ձշտապես, լաւ կազդուրւի՛ր, մանաւանդ մտաւորական բե՛ր: Կը գաս Գոշան [?]. Ժամանակի մասին կը գրենք ձմեռ. իմ օրինակը թող քեզ խրատ լինի: Ախմախ Սարգիսը երէկ նամակ էր գրել, որ ես էլ դուրս գամ հանգստանալու. լաւ երազ է տեսել: էլ մնաս բարով դուրս, գգուել. ո՛չ մէկի երեսը չէի ուզի տեսնել. գործ, գործը միայն կը փրկի ինձ. այսօր մի քիչ գործը թեթեւ է, էլի հոգիս փոթորկւում է:

Չգիտեմ ո՞ւմ բարեւ ղրկեմ, ի՛նձ յիշողներ կան...

է՛հ, Ա[ստուա]ծ իրենց հետ: Գործը յաջողէ, ամէն վէրքի սպեղանի կը լինի:

*Թիւրքերէն թերթին հետեւո՞ւմ ես, թէ՛ չէ՛: Լօթի, Դաշնակցութեան Երուսաղէմն էլ տեսար...*

*Դէ՛հ, գրի՛ր, գրի՛ր, որ իմանանք որ մենք էլ գոյութիւն ունենք. մէկ-մէկ յիշեցրէ՛ք մեզ գործից դուրս եւ ուրիշ կեանքի մասին...*

*Չափազանց ուրախ եղայ, որ օպերացիան յաջող անցաւ...*

*Դէ՛հ, մնացածը դու գրիր...*

*Բարեւներով  
ԱՐԱՄ*

1908<sup>2</sup> թ. սեպտ. 8ին

Շամիր

Սիրելի Տիգրան,

Ուրախութեամբ լսեցինք յաջող ազատուիլդ օպերացիայից, շուտով լաւ առողջացիր եւ արի, սինչեւ գալուդ օր «ինչալլահ, ամէն ինչ այնքան փոխուած պիտի գտնես, որ աչքերիդ չհաւատաս, այլեւս ազատ կերպով առանց հրացանի պիտի կրնաս պտտիլ. քէֆ է, քէֆ եւ փառք համերաշխութեան,

*Համբոյրներով  
ՎԱԹԱՆՅ*<sup>3</sup>

Ձերմ բարեւներ Իշխանէն եւ Մալխասէն:

1.- Անառիկ – ծածկանուն Շատախ գաւառակի կեդրոն Թաղ աւանին:

2.- Չեռագիր 1907 է, ինչ որ բացայայտ սխալ է, որովհետեւ Արամ կը խօսի ազատութեան, իմա՝ Օսմ. սահմանադրութեան մասին, որ 1908 թ. Յուլիսին հռչակուեցաւ:

3.- Վաթան – ծածկանուն Գետոնդ Մելոյեանի:

[Պողոսոյ] Պատ[ասխանատու] Մարմնին<sup>1</sup>

Ընկերներ!

Ստացանք Սմբատի եւ Մառի<sup>2</sup> նամակները. շատ գոհ մնացինք տրուած տեղեկութիւնից. հաստատում ենք անցեալ փոստային մեր գրածները:

Անշուշտ ստացել էք մեր վերջին հեռագիրները: Գաւառներում փառահեղ խանդավառութեան յաջորդեց սեւ ռէակցիան: Ժողովրդի յոյսերը ի դերեւ են ելնում. ոեւէ գործնական փոփոխութիւն չտեսնելով հանդերձ նկատուում է սեւ ուժերի յաղթանակը եւ այս ու այն պաշտօնների մէջ հաստատուելը. մեր գործունէութիւնը, մանաւանդ հեռագրային բողոքները սոսկալի յուզում է առաջ բերել թիւրք, քիւրդ եւ հայ աղաների մէջ. առաջինները պատասխանատուութիւնից փախչելու պատրուակով, իսկ երկրորդը (հայեր) իրենց թեկնածու (մերուս) հայ պատւիրակներ չհասած լինելու առթիւ. վերջին ապոթէոզը լսեցիք հեռագրից. սադրազամից<sup>2</sup> [?] յատուկ հեռագրական հարցում եղաւ տեղիս փոխ-կուսակալին իրողութիւնը ճշտելու համար. վերջինը դեռ որոշ ձեռնարկ կամ հարցովորձ չէ արել այդ առթիւ. միայն լսում ենք որ Թէրզիբաշեան միացած մի քանի թիւրք աղաների հետ խորհրդակցութեան է գնացել կուսակալի տուն ու որոշուել է ամբողջ կուժ ու կուլան կոտորել մեր գլխին. կուսակալը հեռագրել է կամ պիտի նոր հեռագրէ յօգուտ Թէրզիբաշեանի. թիւրք սեւ հարիւրեակները մագմաթա<sup>3</sup> են պատրաստում մեզ այստեղից քշելու համար. գիշերս պէտք է հեռագիր տային, բայց մէկի հակառակութեան պատճառով մնացել է. ամբողջ կուրը քրդերին դատի կանչելու եւ մեր կուսակցութեան թեկնածու դնելն է մէջլիսի<sup>4</sup> համար:

Կ'ուզէինք տալ մանրամասնութիւնը ու դրդապատճառները այն ինցիդենտի<sup>5</sup>, որ տեղի ունեցաւ Թէրզիբաշեանի ու Առաջնորդի միջեւ:

Հիւսէին, էմին փաշաները եւ այլ բէյեր ժամանակին բերած էին հոս եւ յայտարարուած բոլոր գազանները որ ովքեր բողոք ունեն, թող գան. գիւղերից հազարաւորներ թափւեցին քաղաք բողոքելու. միւս կողմից էլ կուսակալը մի շատ լաւ կարգադրութիւն էր արել բոլոր հայ գիւղերից պէտք է ելնեն քրդերը, իսկ եթէ վերջինները թափուի<sup>6</sup> իրաւունքով հողեր ունեն, կարող են դատարանով մաքրել հայերի հետ. յատուկ մի գինւորական կոմիսիան գինւորներով քիչ ժամանակում մաքրեց հայ գիւղերի մի մասին քրդերից, տները քանդելով եւ շատ խայտառակութիւններ անելով. բնորոշը այն է, որ հայերի օրինակից խրախուսւելով եւ «երես առնելով» ինչպէս քիւրդ աղաներն են ասում, թիւրք ու քիւրդ գիւղացիութիւնն էլ բռնի գրաւած հողերից եւ գիւղերից դուրս քշեցին աղաների ընտանիքներին ու տները քանդուեցին. Արճէշ եւ Ալճաւազ սկսել էր մի շտեմնած ագրարային-տար[ե]րային շարժում.— պէտք է այդ շարժումը ընդգրկէր ամբողջ վերա[յէ]թը: Աղաները ի հարկէ

Հանգիստ նստած չէին. հեռագիրներ մուշտրին, Պոլիս, Հոս՝ կուսակալին, տրուում էր, կոմիսիոնի կաշառակերութեան եւ գուլումների մասին. յանկարծ լուր առանք որ կուսակալը հրաման է տւել քրդերին գնալու. ամէնքս յանկարծակիի եկանք. լուրը ստոյգ էր. քիւրդ աղաները եկան մեզ մօտ եւ խնդրեցին, որ մենք էլ պաշտօնապէս արտօնէինք նրանց գնալը. մենք ի հարկէ մերժեցինք ասելով, որ խորհուրդ ենք տալիս դատից չփախչել եւ Իբրահիմ փաշայի վիճակին չենթարկուել. մեր խորհուրդը ուշացած էր. կուսակալի հրամանը գրպաններն էր արդէն. մեր բարեկամ Աղան ասաց որ Հիւսէին փաշայից 1000 ոսկիի փոխառնութիւն են արել կառավարութեան համար ու իրենց արտօնել գնալու: Վերջին լուրը դեռ չենք ստուգած կառավարական աղբիւրից, [Թէ իրօ՞ք 1000 ոսկի տրւած է եւ ո՞ւմ կամ ի՞նչ նպատակով. այնպէս որ այս լուրը վերապահութեամբ գործ ածէք:

Ի հարկէ նոյն լուրը ստացել է եւ Առաջնորդը ու անմիջապէս ձեռնարկել յայտնի հեռագրին. Թէրզիբաշեան կը գայ եւ կը յայտնէ որ դա շատ փափուկ հարց է եւ Առաջնորդը իրաւունք չունի այդպիսի մի հեռագիր տալ, այն էլ միայն իր կողմից: Հարցը թողնում են միւս օրւայ «Խառն ժողովին»<sup>7</sup>, որի ժամանակ տեղի է ունենում յայտնի ինցիդենտը: Խնդիրը այս[պէս] է դասաւորուում... Թէրզիբաշեան նորէն կը հարցնէ [Թէ ի՞նչ իրաւունքով հեռագիր կը տաք Հիւսէին փաշայի գնալու դէմ, քանի որ մենք բազմաթիւ շահերով կապուած ենք նրա հետ: Առաջնորդը սահմանադրութեան օրէնքով ապացուցում է որ ինքը մենակ կարող է ի՛ր պատասխանատուութեամբ հեռագիր տալ. իսկ ի՛նչ վերաբերուում է շահերին, ինքը իբրեւ մի դրսեցի բացի ազգի շահերից ուրիշ շահեր չունի, իսկ եթէ Թէրզիբաշեանը անձնական շահեր ունի Հիւսէին եւ Էմին փաշաների հետ, այդ ինքը չգիտէ... Այստեղ Աղան զայրանում է գոչելով, որ քո միրուքից կը բռնեմ եւ դուրս կը թալեմ, որ դու յեղ[ափոխականների] թելադրութեամբ ես շարժուում, որ դու մեզ ազգ չես համարում, այլ միայն դաշնակցականներին... Առաջնորդը պատասխանում է որ իրեն միրուք բռնող դուրս ձգողը դեռ չի ծնւել. այս խօսքի վրայ կ'ելնէ եւ կը զարկէ ժողովուրդի ներկայութեամբ...

Մենք այս տեղեկութիւնները առել ենք Առաջնորդից, ժողովրդական միտինգում արտասանւած ճառերից, եւ այդ ուղղութեամբ էլ հեռագրած ենք: Մենք իբրեւ մի ժողովրդական խնդիր՝ Հոս առանձին միջամտութիւն չենք ունեցած. ժողովուրդը 4-5 անգամ միտինգ է արել, ճառեր խօսել, վճիռներ արձակել, որոնց պատճէնները ձեզ ենք ճամբում ներփակ. իսկ Թէրզիբաշեանը տեսնելով իր վիճակի փափկութիւնը միջնորդ է ձգում ոստիկանապետին, կուսակալին, որոնք խնդրում են Առաջնորդին հաշտուել եւ այս խնդրին իրաւական-պաշտօնական գոյն չտալ...

Առաջնորդը չի համաձայնում եւ ներփակ «Թաքիրը» ուղարկում է կուսակալութեան խնդրելով Թէրզիբաշեանին հեռացնելու ազգային եւ պետական գործերից: Այսպէս գործը շարունակուում էր. թիւրք ամբողջը գրգռւած էր. Թէրզիբաշեանը ներկայանում էր «խլամութեան» պաշտպան. նոյնիսկ խօսք է եղել որ նա Դաւիթից 15 [անգամ] աւելի «խլամ» է... Վերջինս յաջող կերպով պրովոկացիա էր անում մեր դէմ [թիւրք աղաների շրջանում. հեռագիրը ստանալով մեզ դիմեց «գործը անուշի կապելու»]. մենք մերժեցինք. նա աւելի կատաղեց եւ խօսում են որ դիմել է թիւրքերի խորհրդով կառավարական դատի, մեզ — Կ. Կոմիտէին — պատասխա-

նատուութեան կանչելով իբր զրպարտիչի, այն իմաստով, որ մենք կեղծ կերպով ենք իրեն վերագրել Հիւսէին փաշայի դէմ բողոքի արգիլելու լուրը․ այն ինչ՝ դա ինչպէս իրեն նամակներից է երեւում, հասարակութեան համոզումն է եւ իրականութիւն․ դատի դիմելու նպատակը դարձեալ նոյնն է․ Կոմսին դատի տակ ձգել եւ ղրկել մեքուսի՞ իրաւունքից․ սա նրա ցաւոտ կէտն է։ Դատը հետաքրքիր չէ, բայց խուլիգանական շարժումը պէտք է բնում խեղդել․ դրանով իբրեւ թէ կ'ուզեն մեր մնացած հեռագիրների ազդեցութիւնն էլ կոտորել ներքին գործոց նախարարութեան աչքի առաջ ... եւ երգել են ամէն դրամական միջոց ու զոհողութիւն յանձն առնել մեզ այստեղից դուրս քշելու...

Մնացածը դուք հասկացէք․ ներփակներն էլ ձեզ շատ բան կը պարզեն, այնպէս որ առայժմ ուրիշ բան չմնաց աւելացնելու։ Մեզ համար առայժմ շահեկան խնդիրը ձեր դրած պլատֆորմն է․ առանց գրելու անշուշտ գիտէք որ նրա շատ կէտերին մենք դէմ ենք․ սա խնդրի դեռ հետաքրքիր կողմը չէ, այլ այն, թէ ինչպէս պէտք է այժմ հաշտեցնել այն մեծ հակասութիւնը որ մենք եւ դուք ստեղծել ենք մեր յայտարարած պահանջ թուցիկներով – պլատֆորմով։ Հասկնալի բան է, մենք համաձայն չենք հողի այդ տեսակ ռեֆորմատորական լուծման․ համաձայն չենք դատարանի միայն ձրի դնելու խնդրին․ էականը նրա կազմի ընտրողական լինելու հարցն է, դեռ մի կողմը թողած մշտականը...

Զինուորական ռեֆորմի մասին էլ դեռ առարկութիւններ ունենք․ խնդիրը ի հարկէ տակտիկի մէջ է․ ամէնքս հիմնական հարցերում համաձայն ենք․ տակտիկի հարցում մեր ըմբռնումները երեւում է որ տարբեր են․ մենք կարծում ենք որ դիմացիններին յարգանք ներշնչելու համար մեր հանդէպ, պէտք է դիմել ո՛չ թէ սկզբունքային կոնպրոմիսների, ո՛չ թէ ցոյց տալու թէ մենք նրանց բոլոր տակտիկական ու ծրագրային խնդիրները ծափահարում ենք, այլ ճիշտ հակառակից ենք գնալու։ Թիւրքիան մենք այսպէս ենք ըմբռնում։ Նրանք բացարձակ կ'ուզեն մեր գլուխը իւղելով, մեզ կա՛մ կազմալուծել իրենց մէջ կամ քայքայել մեր յեղ․ ուժը․ դրա հանդէպ մենք պէտք է շեշտենք մեր ուրոյն ուժով, տակտիկով ու պահանջներով։ Տաճկաստանում, կարծում ենք եւ ամէն տեղ, կայացած եւ շեշտած ուժն է որ իրաւասութիւն է վաստակում․ այլապէս մենք պէտք է նորէն տրորենք նորերի ոտքերի տակ։ Կարծում ենք երկու կարծիք չկայ սահմանադրութիւնը պահպանելու հարցի վերաբերմամբ․ չենք էլ մոռանում Ռուսաստանի դէպքերը․ բայց կայ մի էական հարց, որի վերաբերմամբ մենք անկեղծ ենք լինելու․ դա մեր սոցիալիստական յեղ․ համոզումներն են․ եթէ իսկապէս մենք սոցիալիստներ ենք, արտայայտւենք․ եթէ Տաճկաստանի պայմանները այդ մեզ թոյլ չեն տալիս, ծախենք մեր ծրագիրները եւ մի կողմը դնենք, դուրս գալով միայն իբրեւ նացիոնալ-դեմոկրատներ։ Այն ժամանակ երկրում գործողները կարող են իրենց դիրքը որոշել դէպի այս նոր գործելակերպը․ յետոյ մենք չհասկացանք թէ այդ ի՞նչ ներկայացուցչական ժողովի ստորագրութիւն էր պլատֆորմի տակ․ առաջ թերթերում յայտարարուեց որ Խորհուրդ կը գումարւի, իսկ յանկարծ «ներկայացուցիչների խորհուրդ» եղաւ։

Ի՛նչ որ էլ լինի, մասնաւորապէս մեզ համար ծանր կացութիւն է ստեղծւել․ մենք կրկնակի դիմեմի՞ մէջ ենք․ մի կողմից վերջին դէպքերի առթիւ եղած յարձակումը այս եւ այն ընկերների կողմից, միւս կողմից էլ մեր համարեա «մինակութիւնը»

կուսակցութեան մէջ, մեզ համար հոգեկան դժոխք է ստեղծել. աղաչեցինք որ տեղերնիս գէթ փոխենք, կամ դադարենք (հանգստանանք) մինչեւ Ընդհ. ժողով. ո՛չ այս եղաւ եւ ո՛չ այն. Բիւրոն գրում է որ մնանք մինչեւ Ընդ. ժողովը:

Մեզ աւելի վշտացրեց Թիֆլիսից ստացած մի նամակի այն լուրը, որ իբրեւ թէ մենք ձեզ հեռագրած ենք որ հայկական հողերից իբրեւ սոցիալիստներ հակառակ ենք քիւրդ աշխատաւորների դուրս գալը. ճիշտ այդ ձեւով էր գրւած. վերջն էլ աւելացնում են. «Ձեր պահանջը համաձայն է սոցիալիստական ծրագրի եւ յեղ[ափոխականի] ոգուն, միայն այդ պիտի անել ո՛չ թէ ի հաշիւ բռնի գրաււած հայ գիւղացիների հողերին, այլ պետական ու աղայական հողերի հաշիւն»:

Այսինքն ճիշտ այնպէս ինչպէս մենք ենք գրել հեռագրում. «Կազմել կոմիտիոն, որ քննելով գաղթող քրդերի վիճակը նրանց տեղաւորել կառավարական, Վազֆ կամ աղալար հողերում, յանուն այն միջազգայնութեան որ մենք ենք դաւանում...»: Սա խօս պարզ էր եւ այս խնդիրները որոշւած է Մուրադի եւ Մարգպետի ներկայութեամբ. մենք սոցիալիզմ կամ աշխատաւորութեան տերմինը մեր ծրագրում «լիւքսի» համար չենք դրել. կեանքում պէտք է երեւան գանք գործով, մանաւանդ օտարների հանդէպ. սա է իսկական ճամբան աշխատակցելու բոլոր ազգերի հետ կամ համերաշխելու. մեր իսկական բարեկամները աշխատաւոր թիւրքերն ու քրդերն են. նրանց աչքի ու հոգու առաջ է որ մենք պարտաւոր ենք երեւան գալ մեր անկեղծութեամբ եւ միջազգային դրօշակով: Յուսով ենք որ այս կէտը կը ճշտէք Թիֆլիսի հետ. թէեւ մենք իրենց գրեցինք:

Հետա[քր]քիր է ժընեւի հեռագիրը. «նամակներ եւ հեռագիրներ չտաք «Մանգումէի» հասցէին.- միթէ՞ դուք չէիք կարող մեզ հեռագրել, կամ միթէ՞ արդէն ձեր տւած հասցէով չէ գրւում: Այս թիւրիմացութիւնն էլ հարթեցէք:

Քանիցս գրել ենք որ աշխատեցէք Պոլսի եւ առհասարակ եւրոպական Տաճկաստանի ազատական հայ-թիւրք թերթերից մէկ-մէկ օրինակ կամ ձրի կամ դրամով մեզ ճամբել. մինչեւ հիմա չեկաւ, չգիտենք ժամանակ չունէք, թէ անուշադրութեան էք մատնում. գուցէ ընկեր Ջարդարեանը<sup>10</sup> այդ կարողանայ անել. այդ յանձնարարեցէք նրան... Գրեցէք ժընեւ որ «Դրօշակի» եղած տարիների համարները կազմելով մեզ ճամբէ ձեր գծով:

Ուղարկեցէք հոս ծախելու համար մեր հրատարակութիւններից, պատկերներից եւ պոստ-կարտերից:

էրգրումից այսօր Սարգիս եւ Գիսակ հեռագրում են, որ մի 3-րդ ընկեր էլ գնայ Ռ[ալոնական] ժ[ողովին]<sup>11</sup> մասնակցելու, որ լինելու է հոկտեմբեր 10ին. չենք հասկանում թէ ինչ կարիք կայ մի 3-րդի ներկայութեան, առանց այն էլ այստեղ մարդ չմնաց. Վաթան, Սարգիս եւ Գիսակ<sup>12</sup> մեր գործերին լաւ ծանօթ են. նորը գնալու միտք չկայ.— Այդպէս հեռագրեցինք իրենց:

Մոռացանք գրել, որ քրդերը զինուած քաղաք են գալիս, թալան են անում. հայերի գիւղերից քշւած քրդերը, Արճէչ եւ Ալճաւագում նորէն իրենց տեղերը կը դառնան. Հազարինցին մի հայի սպանել են եւ եզը տարել են. խեղճ եգիպտացիներ թալանը տարան երէկ թակուրցի Հիւսէին բէյի մարդիկ. թալանը յետ խլեց, եգիպտացիներից մէկը սպանեց, 2 գերի տարան. բազմաթիւ քրդեր էլ բողոքում են, լսող չկայ:

Թիւրքերը կազմակերպել են մի միւսլիմանական կոմիտէ. բոլոր անդամները

սեւ հարիւրակային պետեր են. դրամ են հանգանակել մեր դէմ կուռելու կամ մեզ քշելու համար... Տեղիս «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» ջէմէէթը լուծւած է, մեզ անհասկանալի պատճառներով:

Վերջապէս կացութիւնը մեր, Բիթլիս եւ Մշոյ շրջանում շատ ողբերգական է, լաւ չէ եւ Տիարբեքիրը:

Ներփակ մատիտով գրւածը կոմիտէի անուններն են. միւս երեսի վրայ դրամները ի քանակը. առայժմ 100 ոսկի է հանգանակւած: Նամակի յուզւած եւ ջղոտ կտորները վերագրեցէք մեր հոգեկան անորմալ կացութեան եւ ո՛չ հակաընկերական ոգուն:

Ռուբինան<sup>13</sup> լսեցինք որ եկել է հոտ. բարեւեցէք իրեն:

Ընկերական բարեւներով՝  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1908 թ. սեպտ.30, Վան

1.- Օսմ. Թուրքիոյ մէջ Սահմանադրութեան հռչակումէն (Յուլիս 1908 թ.) անմիջապէս ետք, Պոլսոյ մէջ կեանքի կոչուեցաւ Դաշնակցութեան Պատասխանատու մարմինը, որու գլխատր պարտականութիւններն էին. ա) Յարաբերութիւն մշակել Թուրքիոյ նոր տէրերուն՝ Իթթիհատ կուսակցութեան հետ՝ ամրացնելու համար կայսրութեան տարածքին սահմանադրական-ազատական կարգերը. բ) Յարաբերութիւն մշակել Թուրքիոյ տարածքին մինչ այդ ընդլատակ գործող կուսակցական մարմիններուն հետ, եւ նորերը կազմակերպել: Վասպուրականը եւս, ինչպէս եւ Արեւմտեան Հայաստանի միւս շրջանները, որոնք մինչ այդ կը գտնուէին Թիֆլիսի Արեւելեան բիւրոյի իրաւասութեան ներքեւ, կը կապուէին Պոլսոյ Պատ. մարմնին, մանաւանդ որ ցարական իշխանութիւններու շրթալազերծած հակադաշնակցական խտտութիւններու հետեւանքով Արեւելեան բիւրոն եւ Կովկասը կիսով ջրատուած էին ու անցած ընդլատակ: Այդ դրութիւնը շարունակուեցաւ մինչեւ Հ.Յ.Դ. Հինգերորդ Ընդհ. ժողով (Օգոստոս 1909), որ այդ նպատակին համար առաջ բերաւ Արեւմտեան բիւրոյի Պոլսոյ հատուած անունով յատուկ մարմինը:

2.- Սմբատ – ծածկանուններէն մէկը Սիմոն Զաւարեանի: Մառ, աւելի ճիշդ Մար – ծածկանուն Սիքայէլ Տէր Մարտիրոսեանի (1869-1931):

3.- Թուրքիոյ վարչապետին տրուած կոչում:

4.- Խորհրդարան, Ազգային ժողով:

5.- Միջադէպի:

6.- Կալուածաթուղթ:

7.- Խառն ժողով – Պոլսոյ հայոց պատրիարքութեան Ազգ. Սահմանադրութեան համաձայն, այդպէս կը կոչուէր թեմի քաղաքական եւ կրօնական ժողովներու միացեալ միատը:

8.- Երեսփոխան, պատգամատր Ազգ. խորհրդարանի:

9.- Երկրնարանքի:

10.- Ծանօթ արձակագիր Ռուբին Զարդարեանն է (1874-1915), անդամ Պոլսոյ Պատ. մարմնին:

11.- Ռայոնական ժողովներ գումարելը հնուց սովորութեան կարգ անցած էր Կովկասի մէջ: Երկրի, այսինքն Արեւմտեան Հայաստանի մէջ առաջին անգամ է որ Կարմոյ մէջ 1908 թ. Հոկտ. 13ին պիտի գումարուէր այդ անունով ժողով, այն ալ մասնակցութեամբ միայն շրջանի գործադիր մարմիններու ներկայացուցիչներուն եւ կարգ մը գործիչներու:

12.- Յաջորդաբար՝ Ղեւոնդ Մելոյեան (Վաթան), Սարգիս Բարսեղեան (Շամի) եւ Յովի. Սերենկիւլեան (Գիսակ): Վերջինս, բազմաթիւ ուրիշներու շարքին, սահմանադրութեան հռչակման առիթով՝ ազատ արձակուած էր քանտէն:

13.- Ռուբինա – Արեւեան Սոֆիա:



[Պոլսոյ] Պատ[ասխանատու] Մարմինն

Ընկերներ!

Առանք ձեր 19 հոկտ. այլա ֆրանկա թւակիր հեռագիրը, որը բաւական զարմացրեց մեզ. չգիտենք ինչն՞ով բացատրենք ձեր տարօրինակ վերաբերմունքը դէպի գաւառի մարմինները. դուք առանց այդ մարմինների համաձայնութեան պլատֆորմա էք հրատարակում<sup>1</sup>, եւ երբ տեղական մարմինները ապակենտրոն իրաւունքով ձեզնից առաջ յստակ պահանջներ են արել, ո՞վ է եղել այնպարմար բան անողները. դո՞ւք թէ մենք: Եթէ Պատ. մարմինը տեղական բնոյթ չունի, այլ ներկայանում է Ս.Ր.-ներին<sup>2</sup> Կ. Կոմիտէի պէս մի մարմին, այդ ուրիշ բան. իսկ եթէ զուտ տեղական մարմին է, կարծում ենք այդ «նոտաներն էլ» «անյարմար» բաներ են. արդէն էրզրուումից էլ բողոքներ կան որ Մարմինը դիկտատորի դերի մէջ է մտնում:

Գալով կուսակցական դիսցիպլինայի եւ կոռեկտութեան սկզբունքի յարգելու հարցին, այդ կէտում մենք աւելի զիջող ենք եղել եւ աւելի համբերող քան դուք: Դուք Պլատֆորմը կազմելու ժամանակ տեղ չէք տւել մեր թուղցիկում յայտնած պահանջներից համարեա ոչ մէկին: Արաբները պահանջում են եկեղեցու բաժանում պետութիւնից, իսկ այդ խնդրի առթիւ դաշնակ[ցականները] խոհեմութեամբ լռում են. մեզ մօտ նոյնիսկ կարծողներ կան որ ձեր հողային ծրագիրը տանում է դէպի հողի նացիոնալիզացիա փոխանակ սոցիալիզացիայի. այս բոլորի համար մենք լռել ենք եւ սպասում ենք Ընդհ. Ժողով եւ մեր անցեալ նամակով գրել էինք մեր բացառիկ վիճակը. եւ ձեր Պլատֆորմը լոյս տեսնելուց յետոյ մենք երբեք չենք արտայայտւել. միայն երէկ ունէինք մի դասախօսութիւն.— կուսակցական շերտաւորումներ մէջլիսում — բոլորի դրած պլատֆորմների մասին: Ի հարկէ Դ[աշնակցութեան] պլատֆորմը մենք համարեցինք ձեր յայտարարածը, բացատրելով այն կոմպրոմիսների պատճառները ինչ որ Դ[աշնակցութիւն]ը արել է իր հիմնական ծրագրի վերաբերմամբ, յանուն ներկայ փափուկ մո[մե]նտի եւ համերաշխութեան գործին. բնականաբար այստեղ խայտառակեցինք մենք իբրեւ մի դ[աշնակցական] Կ. Կոմիտէ...!!! Ուրեմն էլ տեղիք չէր մնում նոր յայտարարութիւնների:

Նոյն բանը ստիպւած ենք ասել եւ ընտրութիւնների առթիւ համերաշխութիւնների գործին. մեր դէմ չկայ ո՛չ մի կազմակերպւած գէթ սահմանադրական իմբակ որի հետ միանանք. բոլորը սեւ հարիւրեակներ են իրենց յստակ թեկնածուներով, որոնք մեզ ո՛չ մի ձայնի զիջողութիւն չեն անի, ինչպէ՛ս եւ մենք իրենց. Միութիւն եւ Առաջադիմութիւն կոմիտէ չկայ եւ ոչ էլ այդ անունով պայքար մղող. ուրեմն մնում ենք մենք եւ «սեւերը»: Հայ իմբակների հետ միանալու կարիք չունենք, որովհետեւ սկզբից գիտէինք որ նրանք ոչ մի պատւիրակ չահելու յոյս չունէին. ուրեմն մենք կամ առանձին դուրս պիտի գայինք կամ բոյկոտ պիտի անէինք. տեղական պարագաները այլ կերպ չեն կարող տրամադրելի լինել:

Ընտրութիւնների հետեւանքները այս կերպ կը լինի. կամ սեւերի ձայները ցրւելով, մենք երկու պատգամաւոր կը շահենք. մտածել ենք մէկը թիւրք ընտրել — մեր

նախկին ընկերներից, ժողովրդական տիպ...

Կամ նրանք միանալով երկու ձայնը իրենք կը շահեն. շատ կասկածելի է սահմանադրական թեկնածուի ընտրութիւնը նրանց ձայներով: Հեքիարին ընտրեց մի քիւրտ պատգամաւոր Շէյխ Թաօ. յոյս ունենք որ անպայման սահմանադրական կը լինի եւ կ'ընդունէ ապակենտրոնացման խնդիր եւ փոքր ազգերի իրաւահաւասարութիւն:

Այստեղի վիճակի մասին անցեալ անգամ գրել ենք. օրւայ նորութիւնը «Տացի ցոյցն է»: Ժողովուրդները — հայ-թիւրք — միացած կոխեցին — բելեղիան<sup>3</sup> ամբողջ ցրեցին եւ ժամանակաւոր մարմին ընտրելով կառավարութեան 5 պահանջ ներկայացրին, որոնք ամբողջութեամբ ընդունեց. այսօր սեւերը պրովոկացիայի փորձեր կ'անեն բայց հագիւ թէ յաջողեն. հացի խնդիրը հոս միշտ միացրել են հակադիր զգացմունքներ ունեցող մասսաներին. հարկաւոր ցուցմունքները եւ ուղղութիւնը տրոււմ է: Վերջերս այնտեղ հրապարակ իջաւ հայերի տուրք չտալու խնդիրը. սա էլ մի ինտրիգային բնոյթ ունի. կ'ուզեն հայերին ապստամբ ներկայացնել...!!

Հեռագրով խնդրել էինք մեր Գրադարանի համար Ժան-Ժօրէսի «Հռոմանիտէն». չմոռանաք գրել տալ. լաւ կը լինի որ Մանաստերի եւ Սելանիկի բոլոր թերթերը բաժանորդագրուէք մեր հաշիւն:

Մ. Ք. գրում են 200 ոսկի կայ հոտ նպաստի դրամ. դրան 100-ը ուղարկէք Դուրան, իսկ 100-ը մեզ Տէր Պօղոսեանի միջոցով:

Շատ անհրաժեշտ է, որ այդտեղից յատակ պրոպագանդի խմբեր ցրէք գաւառները, որոնք խարխափում են թանձր խաւարի մէջ. ինչո՞ւ Սելանիկից եկող Վէհիբ բէյի հետ, դուք էլ ընկեր չդրիք. նա այսօր Մշից ճանապարհուել է հոս գալու. Կարին մերոնց հետ կարծենք լաւ չէ վերաբերել. տեսնենք հոս ի՞նչ կը լինի:

Զարմանում ենք որ մենք այսքան երկար երկար գրելուց յետոյ բաւականանում էք միայն չոր ու ցամաք պաշտօնական գրութիւններով. յաճախակի յարաբերութիւններն է որ կարող է ամէն թիւրիմացութիւններ հարթել:

Հակառակ մեր բոլոր դիմումներին ո՛չ ոք չեկաւ դրսից եւ մեր գործերը մնացին երեսի վրայ:

Սեպուհ, Առաքել աղա եւ Աւետիս գնացին Մուշ:

Սկսել ենք Ազգային Սահմանադրական ընտրութիւններին մասնակցել. Զարդարեան կամ Շահրիկեան կ'ընդունեն<sup>4</sup> այստեղից երեցփոխ լինել հոտ հեռագրեցէք:

Առայժմ այսքան. գաւառներում դեռ շարունակում են թալանները. երէկ տարան Խորանց<sup>4</sup> գիւղի 400 ոչխարները, քոչից 4 ժամ հեռու. կասկածները գերանցիների<sup>5</sup> վրայ է: Թէրզիբաշեանի խնդիրը քննեք. նոր գործողութիւններ չեղան. դատը չուրը ընկաւ:

Բարեւներով՝ ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1908 թ. հոկտ. 6ին

1.- Հարցը կը վերաբերի Օսմ. կայսրութեան մէջ խորհրդարանական առաջին ընտրութիւններու առթիւ, Հ. Յ. Դաշնակցութեան անունով Պոլսոյ Պատ. մարմնի հրատարակած ընտրական պլատֆորմին (1 սեպտ. 1908), ուր շեշտը կը դրուէր ապակեդրոնացման, նահանգներու ինքնավարութեան սկզբունքներու կիրարկման, ինչպէս նաեւ ժողովրդավար կարգերու հաստատման անհրաժեշտութեան վրայ:

2.- Ռուսական Սոցիալ րետուցիոնէր կուսակցութիւն:

3.- Քաղաքապետարան:

4.- Խորանց — գիւղ Արծկէ գաւառակի, Վանի նահանգ:

5.- Գերանցի — քրտական ցեղախումբ:

291

Պոլիս, Պատ. Մարմինն

Ըստ մեր հեռագրի եթէ դեռ չէք ճամբած Դուրանի ընկերներին 100 օսմանեան ոսկի՝ անմիջապէս ճամբեցէք: Այս դրամը նպաստից դրամ է որ գիւղի ուէսի, քահանայի եւ առաջնորդարանի վաւերացրած ընկալագրով պէտք է ճամբել Մ. Ք. «Վտակ» թերթի իմբագրութեան անունով:

Ի դիմաց ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷԻ ԱՐԱՍ

1908 թ. հոկտ. 14ին, Վան

292

[Պոլսոյ] Պատ. Մարմինն

Ընկերներ!

Վերջին փոստային նամակներ չստացանք. թէեւ հեռագիրներով շաբթէ շաբաթ գրում էք կարիքներ եւ նորութիւններ. վերջին հեռագիրը վերաբերում էր զեղծարար եւ չարամիտ պաշտօնէից ու քուրդ աղաների մասին մանրամասն տեղեկութիւններ հաղորդելուն. իբր թէ հեռագիրներին չեն հաւատում, բայց մեզ թւում է որ փաստերն էլ աւելորդ կը լինի դրանք համոզելու համար. այն երկդիմի քաղաքականութիւնը, որ դրանք կիրառել են, բան չի կարող նեշնչել. մեր հեռագիրներին բացասաբար վերաբերելու գաղտնիքը անփաստարկութեան մէջ չէ,— Առաջնորդարանը, ժողովուրդը, տեղիս մէջլիսը եւ կառավարութիւնը համարեա միաժամանակ նոյն մարդկանց մասին անփաստահոլթեան քուէ տուել [են],— այլ նրա մէջ է որ տեղիս կոմանդարը այդ օրերով մեր դէմ մի խայտառակ հեռագիր էր ուղարկել ներքին գործոց նախարար Հակիբ բէյին. վերջինը դիմել էր տեղիդ անգլիական դեսպանին, որ նա էլ իր ազդեցութիւնը գործ դնէ եւ ստիպէ մեզ որ հեռանանք երկրից: Դեսպանն էլ այդ բովանդակութեամբ հարցում էր արել այստեղից: Տեղիս հիւպատոսը այդ մասին բացատրութիւն էր ուզել կոմանդարից, որը պատասխանած է, որ մեր դէմ այժմ ոչինչ չունէ, որ մենք երկրին շատ օգտ[ակ]ար ենք եւ այլն: Երկու կողմից էլ հոտ հեռագրւած է այս մասին. վերջին օրերը ժողովրդի եւ կառավարական շրջանակների տրամադրութիւնը ազդու կերպով փոխած է մեր հանդէպ:

Գալով ռեֆորմի հարցին, կարծում ենք դանդաղ կերպով պիտի առաջ քայլէ. Սեւանիկից եկող Վեհիբ բէյ հոս գաղտնի եւ յայտնի մարմիններ կազմակերպեց: Գաղտնին չգիտենք թէ ո՞վքեր է, բայց կ'երեւայ որ լաւ մարդիկ են լինելու. առհասարակ նրա շուրջը բաւական շիտակ մարդիկ են հաւաքւած. տեսնենք վերջը. որոշ պաշտօնէիութեան եւ քուրդ աղաների մասին հրահանգ է տւել ձերբակալելու. տես-

նենք վաղը միևս օրը ի՞նչ հետեւանք կ'ունենայ:

Մի բան էլ իմացէք. անգլիական հիւպատոսները մեծ եռանդով աշխատում են քուրդ աղաների եւ զեղծարար պաշօնէութեան քշելու մասին. սրանք մեծ ազդեցութիւն ունեն, թէ ջամիաթի<sup>1</sup> եւ թէ կառավարութեան վրայ: Պատերազմի վտանգը ամբողջապէս անգլիացիների գիրկն է նետել սրանց. գուցէ սա էլ ազդէ ռեֆորմի գործին: Վերջապէս թիւրքիան թուիչքներ չի սիրում. տեսնենք վերջը:

Նոյեմբեր 5 ռայոնական ժողով անպայման կը լինի. երանի թէ խարբերդի պատգամաւորը ժամանակին հասնէր: Սա Անատոլի յեղ[ափոխութեան] եւ ռեֆորմի գործին մեծ զարկ կարող էր տալ. հոտ չյաջողեցինք կոնֆերանս, գէթ հոս լինէր. ժողովի սկսելու եւ գործերի մասին ժամանակին կը գրենք:

Մէջլիսի պատգամաւորների գործը երկու օրէն կը լմննայ. այսքան ժամանակ անտարբերութեան մատնած «Մ[իլլութիւն] եւ Առաջ[դիմութիւն]» տեղիս ջամիաթը վերջին օրերը գործի է դիմել. տեսնելով որ երկու պատգամաւորները՝ հայ եւ թիւրք մերն են, կ'ուզեն ապօրինի միջամտութեամբ թիւրքի թեկնածութիւնը, գուցէ դրա պատրւակի տակ եւ կոմսի թեկնածութիւնը՝ ջուր ձգելու: Մենք ընկել ենք դիլեմմայի մէջ. եթէ համաձայնենք, վախենում ենք մեր մի պատգամաւորից էլ զրկենք. եթէ չհամաձայնենք վախենանք մէջերնիս պաղութիւն ընկնէ:

Երեւի նամակից շուտ կը լսէք հեռագրով ընտրութեան հետեւանքը: Ի դէպ, Սեւանիկից երէկ մի շատ տգեղ հեռագիր էր եկել Վեհիբ բէյին. իբր թէ յոյները խաբել են իրենց եւ թիւրք ձայները առնելով միայն յոյներ են անցկացրել իբրեւ պատգամաւոր. պատուիրում է հեռագիրը յոյների հետ ոչ մի միութեան մէջ չմտնել... Ուրքան ճիշտ է չենք գիտեր, բայց ոճը շատ պաշտօնական էր:

Մեր գործերը այնքան յաջող չեն գնում. դժւարանում ենք կազմակերպութիւն առաջ բերել. սկզբունքային տարբերութիւններ կան այդ առթիւ. հարցը արհեստակցական-գիւղացիական միութիւնների, միևս կողմից էլ մարտական-քաղաքական խմբերի մասին է: Բիւրոն աւելի վերջինի վրայ է պնդում. մենք սպասում ենք էրզրումի ժողովի եզրակացութիւններին. միևս կողմից էլ՝ Վահաբի եւ Բարսեղեանի<sup>2</sup> հոս գալուն. գալիս են քիչ ժամանակով վերջին դէպքերի քննութեան համար:

Սպասում ենք տպագրական մամուլի. մենք այստեղ տեղական միջոցներով կը սկսենք մի ոչ պաշտօնական թերթի հրատարակութեան, ի հարկէ դաշնակցական ուղղութեամբ: Հետաքրքիր է թէ «Բիւզանդիոնի» պէս մի օրաթերթ կամ շաբաթաթերթ տպելու համար ինչքան տառեր է հարկաւոր. դրան կից եւ բրոշիւրներ տպելու դիւրութիւն: Այս մասին հեռագրով մեզ յայտնեցէք. մենք պատրաստ ենք դրամ հասցնելու:

Սոսկալի նեղած ենք գործերի շատութիւնից եւ նախկին օրերի յոգնածութիւնից: Չմոռանաք մեզ ճամբել 30-ական օրինակ Դրօշակի հրատարակութիւններից:

Բարեւներով՝ ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1908 թ. հոկտ. 21, Վան

1.- Խօսքը Իթքիիստ կուսակցութեան տեղական կոմիտէի մասին է:

2.- Վահաբ – ծածկամուն Արշակ Վռամեանի: Բարսեղեանը, հոս, քծ. Յովսէփ Տէր Դաւթեանն է, երկուքն ալ անդամ Արեւելեան բիւրոյի:

Արամի այս համառօտ գրութիւնը կցուած է Վասպուրականի Կեդր. կոմիտէի կողմէ (ձեռագիրը Կոմս – Վահան Փափագեանի) «Բիթլիսի կոնֆերանսին մասնակցող ընկերներին» ուղղուած ցուցմունքներու մէկ նամակին: Յիշեալ կոնֆերանսը պիտի գումարուէր Պիթլիս մասնակցութեամբ մօտակայ շրջաններու թուրք, քիւրտ եւ հայ ներկայացուցիչներու: Կոնֆերանսը տեղի պիտի ունենար մանասանդ ի ներկայութեան Իթթիհատ կուսակցութեան ազդեցիկ դէմքերէն Վեհիպ պէյի, որ շրջան այցելութեան եկած էր Իթթիհատի դիրքերը զօրացնելու նպատակով: Արամի յաւելուածը կը վերաբերի կոնֆերանսի աւարտին Կարին վերադարձող ընկերներուն, որոնցմէ յատկապէս կը յիշուի Փիլոսը (Փափախեան), այլապէս ծանօթ Մարալ անունով:

*Սիրելիք!*

*Էրզրուժ գնացողները թող ճանապարհը այս կողմից ուղղեն. թէ կը տեսնենք եւ թէ նոր եկող ընկերների հետը Վուամեան եւ Բարսեղեանին կը տեսնենք ու մի կարգ խնդիրների մասին կը խօսենք. վերջապէս գալը լաւ կը լինի:*

*Ո՛վ գայ չգայ. Փիլոսին անպայման ուղարկեցէք 2-3 օրով հիւր: Հոս պահելու մտքով չէ որ կ'ասեմ, թող գայ Վանն էլ տեսնէ...*

*Բարեւներով  
ԱՐԱՄ*

[5-XI-908, Վան]

[Պոլսոյ] Պատ. Մարմնին

Ընկերներ!

Ստացանք Անտոնի<sup>1</sup> վերջին երկար նամակը:

Այդ սկզբունքային պոլեմիկան<sup>2</sup> փակում ենք թողնելով այդ իր արտայայտու-  
թիւնը գտնէ «Խորհրդում» կամ Ընդ. Ժողովում, մանաւանդ [որ] շատ յոգնեցու-  
ցիչ են դառել ակնյայտնի բաները իբրեւ դասեր սրան-նրան հրամցնել. այնքան  
ակնյայտնի փաստեր եւրոպական սոցիալիստական կուսակցութիւնների կեանքից  
վերցրւած, որ առաջարկում էք մեզ, ոչ թէ մենք, այլ ամէն մի սովորական լրագրի  
ընթերցող գիտէ. կարծում ենք եթէ ոչ ձեզ չափ, բայց փոքր ինչ կարող ենք հասկա-  
նալ խնդիրների կամ հարցերի գուտ տակտիկական կամ էական-ծրագրային կողմե-  
րը. եւ ոչ մի տակտիկական խնդիր չկայ ձեր պլատֆորմի խնդրի հէնց առաջին կէ-  
տի մէջ. այդ էլ տակտիկ է. դո՛ւք գնում էք նրանով դէպի սեպարատիզմ<sup>3</sup>.— Բայց  
թող մնայ, քանի որ կուսակցութեան բոլոր իրաւասու մարմինները իրենց վստա-  
հութեան քէն տւել են ձեզ, ուրեմն կարող էք շարունակել ձեր գործը: Կ'ուզէինք  
ստուգել մի կէտ. մեզ երբեք ոչ դուք եւ ոչ էլ Բիւրոն չէ հրաւիրած հոտ պլատֆորմ  
մշակելու. մեզ գրւած էր որ մեզնից մէկը գայ հոտ ձեր կազմը լրացնելու — կար-  
ծում էինք Պատ. Մարմին — իսկ լրագիրներից եւ նամակներից տեսնում էինք որ մի  
մեծ հոսանք է սկսւել դէպի Պոլիս. գուտ տեղական խնդիրների համար մարդ ու-  
ղարկելու անհրաժեշտութիւն չգտանք. մանաւանդ որ գաւառները գործիչների սով  
էր. եղածները ցրեցինք մեր դրացի վիլայէթներում. յետոյ մենք միայն նոր ենք հաս-  
կանում, որ դուք այժմ ներկայացնում էք կուսակցութեան «կամքը ներկայացնող  
մարմին» երկրում. այդ էլ իմացանք նոր եկող ընկերներից, այլապէս միտք ունէ՞ր  
մեր առանձնակի դիմումները եւ պահանջները մեր անունով... Ի՛նչ որ է. դրութիւ-  
նը որքան փափուկ լինի, գործերը այնքան անհրաժեշտ. իմացէք որ մեր հոգեկանը  
խախտւած է. առանց մեր տեղափոխութեան, առանց նոր ընկերների հաստատւելու  
այստեղ, ոչ համերաշխութիւն կը ստեղծւի եւ ոչ էլ գործ:

Ժողովրդական հայածանքների եւ գեղծումների մասին տեղեկութիւնները  
կենտրոնացնում ենք Առաջնորդական, իբրեւ լիազոր մարմին, նրա միջոցով հոտ  
հաղորդելու. ուրեմն դուք էլ նոյն աղբիւրներից կարող էք օգտւել — եթէ կ'ուզէք  
նոյն փաստերը մենք էլ տանք, լաւ:

Վերջերս Արճէշում սպանեցին մի գայմազամի համիդիական աղաներին հակա-  
ռակ լինելու համար. գործը դեռ չէ քննւած, տեսնենք ինչպէս կը վերաբերւենք:

Երեւի ձեզ գրել ենք եւ երկրորդ հազարեցի գիւղացու սպանութիւնը Մանդան  
գիւղի մօտ. սա երկրորդը եղաւ. գործողութիւնների հերոսը Մանդանից<sup>4</sup> աղա Սէիդ  
բէյն է. սա դէպքից դէս գրաւել է այդ հայկական գիւղը, բոլորին քշել եւ ինքը ապրում  
է նոյն գիւղում. մինչեւ այսօր ոեւէ կարգադրութիւն չեղաւ նրա վերաբերմամբ:

Մեծ աւազակապետ Շաքիրին բաց թողին, մինիստրի կարգադրութեամբ. վեր-  
ջինս բռնւած եւ բանտարկւած էր տեղիս ջէմիաթի<sup>5</sup> եւ անգլիական հիւպատոսի

կարգադրույթեամբ. բաց թողնելը պատճառաբանում է նրանով, որ իբր թէ նրա վերաբերմամբ առանձնապէս փաստեր չկան, որ այժմ – ըստ նոր օրէնքի – անհատական պատասխանատուութիւն կայ եւ ո՛չ համայնական. այս ձեւով բոլոր քրորդ աղաները կ'արդարան[ան], մէջտեղ նետելով մի քանի խեղճ ու կրակ քրորեր: Պէտք է կանգ առնել այս տեղի վրայ, քրորական կեանքում կատարուող բոլոր երեւոյթները աղաների գիտակցութեամբ է լինում:

Լուրեր կան որ Հիւսէին փաշային բերելու են հոս եւ աքսորելու. դեռ չեկաւ...

Երեւան նահանգից 1000 ընտանիք արճչէնցի եւ արճաւազցի 12 ներկայացուցիչներ են դրկել հոս, ստուգելու լրագիրներում տպւած հաւաստիացումները հողերի յետ դարձնելու մասին: Նրանք պահանջ են դնում ապօրինի կերպով գր[ա]ւած հողերից գէթ առանց թափուները, ամբողջապէս դատարկեան աղաների ղոլամներից, որ իրենք վստահանան – գան: Նրանք պնդում են այս հողերի մաս-մաս յետ տրւելու եւ մաս-մաս ընտանիքների գալը Արճէչ կորստաբեր է, որովհետեւ հայերի հոծ ներկայութիւնը միայն կարող է իրենց ինքնագոյուլութիւնը ապահովել. այլապէս մաս-մաս աղաները կարող են կամ քչել, կամ կոտորել կամ կազմալուծել... Այս մասին յատուկ հոգ տարէք:

– Ընտրութեան գործը այնպէս կը մնայ. այստեղ պահանջել էին ամբողջ վայրերի վերընտրութիւն, որով թիւրքերը առաջին առթիւ ցրւած ձայները կը միացնեն. յոյսը միայն բլուկի մէջ է. ջեմիսթը գլուխ չունի. բոլորը պանիսլամիստ են. գործերը ձեռքից չենք թողնի. այդտեղից աշխատեցէք ազդել. նրանք 20-25 ձայնի առաւելութիւն ունեն. առանց համաձայնութեան յոյս չկայ. նրանք մեր պրիոմներով<sup>6</sup> պէտք է միանան մեր դէմ...

– Բիթլիսի ժողովը այսօր կը վերջանայ. յոյս չկայ մեծ բաների. Վեհիբ բէյ ուղղակի երեւոյթներ փրկելու համար, եւ մեզ յուսադրելու համար այդպիսի փորձեր է անում. նկատել է մեր ուժը Անատոլում, այժմ այս այն կողմը կ'ընկնի...

– Բարսեղեան եւ Վահաբ հոս են. քննութիւնները սկսել են վերջին խայտառակութիւնների. նպատակ ունեն 10-15 օրից էրզրումով – Մշի վրայով դառնալ...

Աստոծոյ սիրոյն գաւառները մարդ ճամբեցէք, կամ գէթ փոխադրութիւններ արէք...

Ուրիշ նորութիւններ չկան...

Բարեկներով՝ ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

1908<sup>7</sup> թ. նոյեմբեր 12ին, Վան

**Յ. Գ.** – «Ազատութեան լոյս» գրադարանի համար ձեզ արւած բարոյական օժանդակութիւնները չմերժէք. մեր հիմնած գործ է...

1.- Անտոն – ծածկանուն Սիմոն Չաւարեանի, անդամ Պոլսոյ Պատասխանատու մարմնին:  
2.- Բանավէճը. ակնարկութիւն Պատ. մարմնի հրատարակած ընտրական պլատֆորմի առթիւ Վասպ. Կ. կոմիտէի առարկութիւններուն. տես փաստ. 668-71:  
3.- Անջատողականութիւն:  
4.- Մանդան – գիտ՝ Վանի գաւառի Արճակի շրջանի:  
5.- Իթքիատ կուսակցութեան կոմիտէի:  
6.- Հնարքներով:  
7.- Չեռագրին մէջ 1907, ինչ որ բացայայտ սխալ է:

**ԽՈՐՀՐԴԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԸ**

Հ.Յ.Դ. Հինգերորդ Ընդհ. ժողովի գումարման նախատեսությամբ, Վասպուրականի Կեդր. կոմիտեի առաջարկները (Արամ Մանուկեանի գրիչով), Դաշնակցութեան Խորհուրդին՝ իբրև օրակարգի նիւթեր:

I

Թուրքիոյ Ահաբեկիչ Մարմին

1. Ներկայ քաղաքական պայմաններում մի իլլեգալ – մարտական-տեռորական Մարմնի անհրաժեշտութիւնը:
2. Ահաբեկիչ Մարմինը կ'իրագործէ ամբողջ երկրի Կ. Կոմիտէների [եւ] Կ[ենտ.] Պատ[ասխանատու] Մարմնի տեռորական որոշումները:
3. Ահաբեկիչ Մարմինը մի կենտրոնացած ամբողջութիւն է, որը կարող է կարիքի դէպքում այլ եւ այլ վայրերում իր ճիւղերը կամ ներկայացուցիչները ունենալու:
4. Կ. Կոմիտէների որոշումները իրագործելու ատեն Ահաբեկիչ Մարմինը պիտի աշխատի փոխադարձ համաձայնութեան գալ տեղական մարմինների հետ, գործողութեան ժամանակի եւ զանազան անպատեհութիւնների առթիւ:
5. Երկրի եւ Արտասահմանի մարմինները պարտաւոր են միմիայն բարոյական օգնութիւն ցոյց տալ Ահաբեկիչ Մարմնին կամ ներկայացուցիչներին:
6. «Խորհուրդը» ժամանակաւորապէս կ'որոշէ «Ահաբեկիչ Մ-նի» առաւելագոյն կամ նւազագոյն բիւտճէն, որը կը հայթայթուի երկրի բոլոր մարմիններից վերցըրած որոշ տոկոսից (%):
7. «Ահաբեկիչ Մ-նը» կ'ընտրուի «Խորհուրդի» կողմից ու կը վաւերացւի առաջիկայ Ընդ. Ժող[ովում] եւ կ'ենթարկւի Տաճկաստանի բարձրագոյն ձեռնհաս մարմնին (մենք նպատակ ունենք առաջիկայ Ընդ. Ժող[ովին] առաջարկել մի Կ[ենտ.] Մարմին ամբողջ Երկրի ընդհանուր ձեռնարկների համար, տեռորական, պարլամենտական, համերաշխութեան, պրոպագանդական-հրատարակչական եւ այլն:
8. Կազմը 3-5 հոգի պիտ լինի. Մ-նի մէջ մտնելու են կուսակցութեան գործունէութեան ու տրադիցիաներին եւ երկրին լաւ ծանօթ, փորձաւոր ընկերներից, որոնցից գոնէ երկուսը մտաւորական ուժեր են լինելու:

II

Կուսակցութեան պարլամենտական գործունէութիւնը  
Տաճկաստանում

9. Անմիջապէս ընտրել դաշնակցական պարլամենտական բիւրօ, որը կը կազմւի



դաշնակցական երեսփոխաններից եւ տեղին վրայ գտնուող ձեռնհաս ընկերներից:

10. Բիւրոն որոշում է կուսակցութեան պարլամենտական պատգամաւորներին տաքտիկան:

11. Բիւրոն մշակում է պարլամենտական ընկերների առաջարկելիք հարցերը:

12. Բիւրոն ամիսը առնուազը մի անգամ կուսակցութեան բոլոր իրաւասու մարմիններին տալիս է, պարլամենտի մեր ֆրակցիայի եւ առհասարակ բոլոր ֆրակցիաների մանրամասն գործունէութեան տեղեկագիրը:

13. Պարլամենտական ամէն նստաշրջանից յետոյ բիւրոն պարտաւոր է ընդ. հաշիւ տալ Ընդ. Ժողովին:

14. Բիւրոն կը վարէ պարլամենտական ընդհանուր ընդդիմադիր, մասնաւորապէս մանր ազգերի ընդդիմադիր տարրերի միջեւ համերաշխութեան գործը:

15. Բիւրոն պիտի ղեկավարւի այս խորհրդի ընդգծած պարլամենտական պլատֆորմով:

Ծանօթ.— Պատ. Մարմնի պլատֆորմը «Խորհուրդը» վաւերացնելու եւ վերամշակելու է:

16. Բիւրօ-ի բիւտճէն կ'որոշէ «Խորհուրդը» այս ձեւով. նախ ամէն դաշնակցական պատգամաւոր իր ռոճիկի 30%ը յատկացնելու է Բիւրոյին, իսկ մնացած բացը ծածկելու է կուսակցութեան բիւտճէից:

17. Բիւրոն պարտաւոր է ընդհանրապէս պարլամենտի, մասնաւորապէս մեր կուսակցութեան ֆրակցիայի գործունէութեան էութիւնը մատչելի դարձնել հասարակութեան (բոլոր ազգերի) լայն խաւերին, մամուլի եւ պրոպագանդական այլ միջոցներով:

18. Բիւրոն իր պարլամենտական գործունէութեան մէջ պիտի ղեկավարուի հետեւեալ սկզբունքներով:

Ա. Ազատական կարգերի վերջնական հաստատումը ապահովելով:

Բ. Բլոկ կազմելով բոլոր ընդդիմադիր տարրերի հետ ձգտելու է, բոլոր ազգերի աշխատաւոր տարրին պարզելու անհրաժեշտութիւնը պետութեան դեմոկրատիզացիայի, տնտեսական բարեփոխութիւնների եւ լայն կուլտուրական ձեռնարկների կիրառումը:

Գ. Բիւրոն ամէն առթիւ դնելու է մեր պահանջները նոյն իսկ երբ համոզւած է որ իր առաջարկը վիճաբանութեան էլ չի ենթարկւելու, եւ պիտի տիրապետող ֆրակցիայի ո՛չ դեմոկրատիկական առաջարկները ամենախիստ քննադատութեան ենթարկէ, աշխատաւորների շահի տեսակէտից:

Դ. Բիւրոն իր առաջարկները նոյն իսկ զուտ հայկականը պէտք է ձեւակերպէ այնպէս, որ դա շահագրգռէ բոլոր ազգերի աշխատաւորներին:

### 19. Դիսցիպլինա

Մեր ամէն մի պատգամաւորը, պահելով հանդերձ իր դաշնակցական անհատականութիւնը, պարտաւոր է բոլոր կարեւոր հարցերում ղեկավարւել եւ հանդէս գալ պարլամենտում բիւրոյի ծրագրով ու տակտիկով:

20. Այն դաշնակցական պատգամաւորը որ կը դադարէ մնալ կուսակցութեան

ծրագրի ու տակտիկի ու պարլամենտական բիւրոյի ընդգծած սահմաններում, դադարում է դաշնակցական լինելուց եւ այս մասին անմիջապէս յայտարարում է կուսակցութեան պաշտօնական ատեաններում ու նրան կանչելու է կուսակցութեան բարձրագոյն ատեանի առաջ:

**Ծանօթ.—** Կուսակցական հարցերում եղած թիւրիմացութիւնները պատգամաւորի ու բիւրոյի միջեւ կը քննուեն երկրի ձեռնհաս բարձրագոյն մարմնի կողմից:

### III

#### Ռուսաստան եւ Պարսկաստան

21. «**Խորհուրդը**» ընտրում է մի ժամանակաւոր Կ[ենտրոնական] մարմին Սառուստանի ընդհանուր կուսակցական գործերի կարգադրութեան եւ ապագայ անակնկալ դէպքերին դիմագրաւելու համար:

22. «**Խորհուրդը**» սանկցիա տալով կուսակցութեան պարսկական շարժման միջամտութեան, պէտք է որոշէ նրա սահմանները ու տրամադրելի միջոցները:

### IV

**Վանի գործը**<sup>1</sup>. Անմիջական կերպով քննել Վանի գործը, այդ մասին յայտարարել կուսակցութեան բոլոր ձեռնհաս մարմիններին, իսկ **Ընդ. Ժող[ովի]** սանկցիայից յետոյ ամբողջ հասարակութեան:

### V

#### Ընդ. Ժող[ով]

23. «**Խորհուրդը**» իր պարապմունքները եւ կուսակցութեան գործերը այնպէս պիտի դասաւորէ, որ իր վերջին նիստից մի ամիս յետոյ անպայման բացուի **Ընդ. Ժող[ովը]**:

24. «**Խորհուրդը**» կ'որոշէ **Ընդ. Ժող[ովին]** մասնակցելու իրաւունք ունեցող վայրերը եւ մարմինները:

**Ծանօթ.—** Այն նոր վայրերը որոնք միայն սահմանադրութիւնից յետոյ են կազմակերպւել, եւ ունեն միայն դրամական ցենց, ունենալու են խորհրդակցական ձայն:

25. «**Խորհուրդը**» կը կազմէ կոմիտիոններ **Ընդ. Ժող[ովին]** առաջարկւելիք գանազան նախագծերի, ծրագիրների պատրաստութեան, վերամշակման համար. օրինակ, պարլամենտական պլատֆորմը ու տակտիկ, երկրի համար ուրոյն ծրագրային նազագոյն պահանջներ, կանոնագրեր՝ գիւղացիական, արհեստակցական, քաղաքական, մարտական եւ այլ միութիւնների համար եւ այլն, եւ այլն:

#### **Վերջ**

**ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇ. ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ**

1909 թ. յունւար 31-ին, Վան

1. - Հարցը կը վերաբերի Վասպուրականի զինապահեստներու ծանօթ գրաման մէջ ընկերներու ունեցած պատասխանատուութեան բաժնին:

«Դրօշակի» խմբագրութեան

Ընկերներ!

Այս[տեղ] հիմնել ենք մի կուսակցական գրադարան-ընթերցարան «Ազատութեան լոյս» անունով, մեր պրոպագանդի գործը դիւրացնելու համար մանաւանդ գիւղերուամբ. կարիք ենք զգուճում եւ մի «մոգական լապտերի» որը ունենայ մեծ մասամբ հայ, թուրք, պարսիկ, ռուս, Ֆրանսիական յեղափոխականների կամ տեսարանների, խմբերի պատկեր-ապակիներ. բացի դրանից եւ յայտնի քաղաքական գործիչների ու դէմքերի պատկերներ:

Այդ նպատակի համար ունենք տրամադրելի 400-500 Ֆրանկ դրամ. գրել էինք հոտ վանեցի մի ուսանողի որ վերցնէ իր վրայ այդ գործը. նա հեռանալու պատճառով յանձնարարուճ է, որ ձեր միջոցով այդ գործը յանձնենք տեղիդ ուսանողական «Ջանք» խմբին:

Ուրեմն բարի եղէք յանձնարարելու մեր կողմից այդ խմբի ընկերներին որ այդ գործը իրենց վրայ վերցնեն, գնեն նոր մեքենայ, որ 100-150 Ֆ. [արժէ] ամենալաւ տեսակը ընտրեն, ամենագործնական եւ դիւրին սխտեմը, որ հոս գործածել հնարաւոր լինի, մանաւանդ լապտերը լինելու է շատ ուժեղ եւ այնպիսի նիւթից որ հոս կամ Պոլիս գտնուի, այլապէս նկարից մեծ քանակութեամբ է գնելու:

Ապակիների մասին կ'ասեն, որ մի Ֆրանկով հազիւ շինել, իսկ Վահաբը կ'ասէ [որ] Ամերիկայի համար մենք շինել ենք տւել աւելի էժան: Ի՞նչ որ էլ լինի, 400-500 Ֆրանկ տրամադրելի արէք, այդ գումարը կամ ուղղակի ձեզ կամ Պոլիս Մարմինը կը ճամբենք: Այս մասին ապահով էք լինելու. չգիտեմ իմ ծանօթ ընկերներից ո՛վ կայ հող, եւ նրան հասկացնեմ որ դրամը ուշանալ, կամ կորչել չի լինի:

Եթէ հայկական կամ պարսկական խմբերի պատկերներ չունէք, գրեցէք մենք ձեզ հասցնենք. ուսականի մէջ կանանց էլ մեծ բաժին տւէք. խմբանկարին մեծ տեղ է տալու:

Լապտերը ուղարկելը լինելու է Պոլիս վրայով, հոն մեր գործակալն է «Արծիւ» գրատունը, Վան ուղարկելու մակագրութեամբ:

Խնդրում եմ ականջի ետեւ չձգէք, ամառային շրջիկ պրոպագանդիստների խմբի համար այդ շատ անհրաժեշտ է. եթէ դրամը կանխիկ կ'ուզէք, մեր հաշւին, հեռագրեցէք Վան – Արամին – ուրիշ ոչինչ. դրամ ուղարկէք: Պատկերները լինեն մի քանի հարիւր, մեքենայի չափը այնպէս է լինելու, որ դպրոցական պէտքերի էլ ծառայէ. բուսաբանական, կենդանաբանական, աշխարհագրական պատկերների համար. դրանց ապակիները արդէն յետոյ կ'առնենք դպրոցների հաշւին:

Ինչու մեզ «Դրօշակ» կամ այլ հրատարակութիւններ չէք ճամբում. կամ նամակներ չէք գրում, դո՞ւք էլ մեզ պէս խրատ էք գործերի մէջ, թէ դուք էլ Վանին բոյկոտ էք արել:

Ձեր քէֆ...

Ընկերական բարեւանքով՝ ԱՐԱՄ

1909 թ. մարտ 8-ին, Վան

*Ընդհ. ժող[ովին]*

Արամ Մանուկեանի կողմէ Հ.Յ.Գ. Հինգերորդ Ընդհ. ժողովին (1909 թ. Օգոստոս-Սեպտեմբեր) ուղղուած այս նամակը Դիւանին կողմէ մակագրուած է «Խորհրդին», ինչ որ կը նշանակէր թէ հարցը դատական բնոյթ ունենալուն՝ Դաշնակցութեան Խորհուրդն էր որ պէտք է քննէր զայն: Արծարծուած խնդիրը կը վերաբերէր Գեորգ Չաուշի մահուան պարագաներուն, որ պատահած էր Սուլուխի ծանօթ կոնիներու ընթացքին (1907 թ. Մայիս 27-28), եւ այդ մասին տարածուած չարամիտ տարածայնութիւններուն: Բացի Արամէն, Խորհուրդին դիմած էր նաեւ ամբաստանաւանդներէն Փիլոս Փափախեան, իսկ Ռուբէն Տէր Մինասեան – Գեորգ Չաուշի հետ գլխաւոր ղեկավարող Սուլուխի կռուին – վրդովուած իր անուան կապուած գրպարտութենէն, պիտի դիմէր Ռոստոմին եւ Ալմունիին արդարութեան վերականգնումի պահանջով: Յարօք չեն պահուած այս մասին Դաշնակցութեան Խորհուրդի արձանագրութիւնները. ունինք սակայն Արեւմտեան բիրոյնի կնքեալ նամակը (փաստ. 57-213), որ կ'ըսէ.– *Խորհուրդը նկատի առնելով դրական փաստերի կատարեալ բացակայութիւնը՝ հրահանգում է Սշոյ Կ. Կ.ին պաշտօնական ազդով հերքել այդ անհիմն լուրերը Գ. Չաուշի սպանութեան իբր թէ «մասնակից» մեր ընկերների մասին [Ստացուած 1909 թ. 27-ին դեկտ.ի]:*

*Ընկերներ!*

*Վերջերս պատահական կերպով անցայ Սշոյ դաշտ, ցաւօք սրտի լսեցինք մի շատ վրդովեցուցիչ լուր, որ պատիւ չի բերում ո՛չ միայն յեղափոխական ընկերներին այլ եւ սովորական քաղաքացիներին: Խնդիրը այս է. մեր նահատակ ընկեր Գեորգ Չաւուշի սպանելու ցաւատանջ իրողութիւնը ձգտում կայ վերագրելու մեր շարքերին կամ այս այն ընկերոջ: Հասկանալի է որ սա կարող է տխուր գործողութիւնների դռներ բանալ եթէ մի հեղինակաւոր մարմին իրողութիւնները քննելով չսսէ իր վերջին խօսքը:*

*Չգիտեմ այդ լուրը ումի՞ց կամ ինչպէ՞ս է տարածուել մեր շրջաններում, բայց ընկերներ՝ Մուրադ, Սեպուհ, Աւետիս, Առաքել եւ ուրիշ շատերը բաժանելով կամ հաւատ ընծայելով այդ լուրերին սկսել են քննութիւններ կատարել, վկաների կանչել եւ որոշ ռապորտ<sup>1</sup> կ'ուզեն կազմած այդ խնդրի շուրջը:*

*Ինչպէս եւ հասկացայ մեր ճանապարհորդութեան մէջ ընկեր Մուրադից, խնդիրը առանձնապէս դառնում է այդ շրջանում եղած մեր գործիչ ընկերներից Ռուբէնի եւ Փիլոսի<sup>2</sup> շուրջը:*

*Իբր թէ այդ երկուսի անձնական թշնամութիւնը դէպի Չաւուշը նրանց տարել է*

[այն] աստիճանին, որ նրանք ժողովրդի եւ մեր զինուորների մէջ այնքան ատելութիւն են ստեղծել, որ բնականօրէն կարող է ուրիշ անգամ կամ հէնց վերջին Սուլուդի կուէի ժամանակ Գէորգի կռնակէն ստացած վէրքը լինել մեր ընկերների կողմից:

Որ իբր թէ նման փորձեր եղել [են] եւ ուրիշ անգամ բայց այնչափ է անցել. օրինակ Մուրադը պատմում է որ *Խնուսում՝ Առնոս գիւղում կազմակերպութեան գէնքերով տեղական ընկերները զինել են դիմադրելու Գէորգին եթէ նա փորձ անէր այնտեղի դաւաճաններից մէկին գիւղի մէջ զարկել. իբր թէ այդ կատարել է առնուազը Փիլոսի լուռ համաձայնութեամբ...*

Չեմ ուզում երկարացնել. չեմ էլ ուզում իմ կողմից ոեւէ բան աւելացնել այդ իրողութիւնների մասին, թէեւ ինձ համար շատ բաներ պարզեց իմ հոն լինելու հետեւանքով, դա դատական գործի հետեւանքը կը պարզէ ամէն ինչ:

Այս խնդիրը ինձ համար շահեկան է այն տեսակէտից, որ այդ կողմերում եւ մեր ընկերական շատ շրջաններում վերոյիշեալ ընկերներ (Մուրադ եւ ընկ.) այդ ուղղութեամբ խօսում են, եւ թէ իրենք ու թէ լսողները բաւականաչափ, եթէ չասեմ ամբողջապէս, հաւատում են պատմած լուրերին:

Ուրեմն ի պատիւ մեր ընկած ընկերոջ յիշատակին եւ փրկութեան [համար] մեր ներկայ ապրող գործիչ ընկերների վարկին, խնդրում եմ միջամտել, այս առթիւ մի վերջնական եզրակացութեան գալու:

Անշուշտ ցաւալի է որ հակառակ նախկին Ընդ. Ժող[ովի] որոշման դուք նորէն ստիպւած էք միջամտելու դատական գործերի. բայց իրողութիւնների հետ պիտի հաշուենք:

Ես անպայման կողմնակից չեմ մեծ աղմկարար դատերի եւ վիճաբանութիւնների այս խնդիրների շուրջը. բայց քանի որ երկու կողմի մարդիկն էլ ներկայ են, ուստի լաւ կը լինէր գէթ բացատրութիւններ առնելով փակել այդ հարցը:

Այլապէս մեր անձնական սենյատիւաներով ու անտիպատիւաներով<sup>3</sup> պէտք է առաջ բերենք մեր շարքերում ու ժողովրդի մէջ մի պրաւակացիոն<sup>4</sup> վիճակ, որը կը ծնէ ինչպէս վերեւ ասացի շատ ցաւալի դէպքեր...

Ընդունեցէք սիրելի ընկերներ իմ ջերմ ողջոյնները ձեր դժւարին աշխատանքների եւ տանջանքների համար:

Ընկերական բարեկներով  
ԱՐԱՄ

1909 թ. սեպտ. 3

Կ. Պոլիս

- 1.- Տեղեկագիր, գեկուցագիր:
- 2.- Ռուբէն Տէր Մինասեան եւ Փիլոս Փափախեան:
- 3.- Համակրանքներով եւ հակակրանքներով:
- 4.- Գրգռիչ, գայթակղիչ:



Արամ Մանուկեան  
Օրսոյի մէջ



Արամ Մանուկեան Ժընեւի մէջ 1912

## Ե.– ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՕՐՏՈՒԻ ՄԷՁ – ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ

Մահմանադրութեան առաջին տարին չլրացած, 1909 թ. Յունիսին Արամ Մանուկեան կը հեռանայ Վանէն, ինչպէս ըրած էին շատ ուրիշներ, ոմանք Երուսալոսանելու, ուրիշներ սեփական աշխատանքով կեանքը վաստկելու եւ կուսակցութեան վրայ բեռ չըլլալու մտահոգութեամբ, եւ կամ խաղաղ օրերու յատուկ կրթական, քարոզչական, կազմակերպական աշխատանքի լծուելու համար: Արամի համար եւս, կարծես յեղափոխական գործունէութեան դադրելով՝ Վան մնալու մասնատր պատճառ չէ մնացած: Ուստի Վան այցելութեան եկած Ռոստոմի հետ կը մեկնի Կարին, անկէ Պոլիս, ուրկէ Մեպտեմբերին կ'անցնի Օրտու, հրաւիրւած ըլլալով տեղոյն Ազգ. վարժարանի տեսչութեան պաշտօնին:

Օրտու Տրապիզոն նահանգի փոքր նաւահանգիստներէն մէկն էր, յոյն, հայ եւ քուրճ բնակչութեամբ. կը հաշուէր 300 հայ տուն, որոնք ունէին լուսաւորչական եւ հայ հաւաքականութեանց պատկանող երկու դպրոցներ. մեծագոյնը Ազգ. վարժարանն էր շուրջ 500 երկսեռ աշակերտութեամբ. ունէր նաեւ մանկապարտէզ: Արամի Օրտուի կեանքէն քիչ բան յայտնի է: Կրթական երկու տարեշրջաններու համար (1909– 1911), ան դպրոցին տեսուչն է, բարձր կարգերուն մէջ կը դասաւանդէ քաղաքական գիտութիւններու առարկան. կը ճոխացնէ կրթական հաստատութեան գրադարանը՝ արտասահմանէն բերել տալով նոր հրատարակութիւններ: Մէկ խօսքով, Անատոլոյի այդ յետամնաց քաղաքին մէջ ճիգ չի խնայեր դրպրոցին ուսման մակարդակը բարձրացնելու, այդ նպատակով կիրարկութեան դնելով արդի մանկավարժութեան նորագոյն մեթոտները:

Արամ կը մասնակցի նաեւ տեղոյն հասարակական կեանքին, կը կազմակերպէ լսարաններ եւ հրապարակային դասախօսութիւններ: Կուսակցութեան վերին մարմիններուն կողմէ իրեն կը վստահուին նոյնպէս շարք մը առաքելութիւններ, որոնց բերումով զինք կը գտնենք զանազան վայրեր,– Մարգուսան, Պրուսա, Էրզրում, Տրապիզոն եւայլն:

ԽՄԲ.

### Միրելի Սիմոն<sup>1</sup>!

Չգիտեմ իմացար թէ ո՛չ, որ ես էլ այս տարի Օրդուրի վարժարանների Տեսուչ հրահրուեցի: Հինգ ամիս կայ որ հոս եմ. սկիզբը շատ նեղուեցի. մի կողմից այն, որ յեղափոխական շրջանից եւ գործի ասպարէզից յանկարծ քաշուեցի եւ ընկայ այսպէս մի խուլ ու փոքրիկ քաղաք: Բայց վնաս չունի, բաւական հանգիստ եմ զգում այս տարի ինձ: Միւս կողմից էլ նեղում էի դպրոցական գործի մէջ ունեցած անփորձութեամբս. 10 տարի է այդ կեանքից կտրուել եմ. առաջ էլ վարչական (դպրոցական) գործերով չէի զբաղւած. վերջապէս աշխատութեամբ, ռուսերէն աղբիւրներ ձեռք բերելով մի կերպ դրսուել եմ:

Այժմ թէեւ իմ աչքում շատ պակասաւոր, բայց այստեղ հասարակութիւնը իմ մասին ի գուր տեղը մեծ կարծիք է կազմել, իբրեւ լաւ վարժապետի եւ տեսչի: Անցեալ տարի դպրոցական յեղ[ափոխութիւն] է եղել հոս եւ ամէն բան տակն ու վրայ արել. 500 աշակերտ-աշակերտուհիներ են. ունի եւ մանկապարտէզ. աշակերտները շատ շփացել էին: Անցեալ տարւայ տեսչին վախեցրել են ատրճանակով... տարւայ սկիզբը մի քանի անհամուժիւններ արին, բայց դիւսցիւլինը խիստ բռնելով, մօտիկութիւն ստեղծելով, մանաւանդ խօսակցութեամբ ու ընթերցանութիւններով, կարգի բերի, այժմ ամէնքը յարգանքով են վերաբերուում:

Լաւ տպաւորութիւն [են] արել մանաւանդ մանկավարժական ժողովները, փորձնական դասերը, ծնողական ժողովները, որոնց մասին հոս զաղափար չկար...

Փոքրիկ քաղաք է, 300-40 տուն հայ, ընդամէնը 200 տուն երեխայ ունեն վարժարանի մէջ. 70 տուն բողոքական կան որոնք նոյնպէս առանձին վարժարան ունեն: Դպրոցը ոեւէ եկամուտ չի ստանում. ամբողջապէս պահուում է ազգային սուրբով. տարեկան 500 ոսկի պիւջէ ունեն: Եւ պէտք է խոստովանել որ ժողովուրդը առանց շատ տրտնջալու կը տայ. ամէնքը տուրք տալիս են, թէ որդի ունեցող թէ չունեցող: Այն էլ ըստ հարստութեան, 20 ոսկուց մինչեւ 5 դրուչ: Մերժողները գրկուում են ազգային իրաւունքներից. կրօնական ծէսերի իրաւունք չեն տալիս. մեռել թաղել, մկրտութիւն, պսակ եւ այլն. կառավարութեան հետ գործ ունեցած ժամանակ թաղականութիւնը ինքնութիւնը չի հաստատեր եւ այլն: Կարծեմ օրիժինալ ձեւ է, եւ շատ տեղեր չկան. գէթ ես չգիտեմ:

Դպրոցը եւ ուսուցիչները ողորմելի են. այնպէս որ ի գուր է սոցանից բան սպասել:

Կազմակերպական գործն էլ լաւ է. ընդամէնը 100 ընկեր ունենք, բայց դուրսը մեծ մասամբ մեզ են համակիր եւ մեր թերթերն է տարածուում. 40 օրինակ «Ազատամարտ» նոյնքան էլ «Դրօշակ» եւ այլն:

Տասնչինգ օրը մի անգամ ժողովրդական դասախօսութիւններ կ'ունենանք եւ այսպէս կ'ապրենք...

Հոգեկան վիճակս շատ գէշ է. երբ գործ չի լինում սկսում եմ ինքնանալիզով զբաղւել եւ տարուում եմ շատ յոռետես մտքերով. ո՛չ մի տեղի հետ էլ կապ չունեմ.



վերջերս Ռայ[ոնահական] ժող[ով] ունէինք, Տրապիզոն գնացի, Ռոստոմն էլ հոն է-  
այն խեղճն էլ բանից պրծել է. մի կողմից յոգնածութիւնը, միւս կողմից էլ ընտանե-  
կան ծանօթ դժբախտութիւնը:

Այս շրջանը ընդհանրապէս թարմ շրջան է եւ ընդունակ ու տրամադիր ժողո-  
վուրդ. բայց մարդու սով է. գաղափարները նահապետական, մերոնք դուրս մնա-  
ցածներից ոչինչով չեն տարբերուում:

Գարահիսարն<sup>2</sup> էլ այստեղի հետ կապեցինք, որովհետեւ հոն էլ մարդու սով է:

Ներփակ 18 ոսկու չէկը, այստեղի ընկերներից հանգանակած մի գումար է,  
Ընդհ. Ժող[ովի] որոշման համաձայն, իբրեւ ռազմ[ական] օժանդակութիւն  
Բարձ[րաւանդակ]ին<sup>3</sup>: Չէկ տւողը այստեղ յայտնի վաճառական է, կը յուսամ որ  
հեշտութեամբ կը ծախսւի հոտ, Պոլիս ուղարկելու համար: Եթէ ոեւէ թիւրիմացու-  
թիւն լինի անշուշտ կը գրես կամ կը հեռագրես: Երեւի այդչափ մի գումար էլ մին-  
չեւ մի ամիս կը հասցնենք եւ տեղիդ դպրոցներին համար, իբրեւ արձագանք ձեր կո-  
չին, մի քանի հարիւր արդէն պատրաստ է: Շատ՝ հնարաւոր չեղաւ որովհետեւ այս  
Ադանան<sup>4</sup>, մեր տունը քանդւեց. յետոյ մենք էլ զբաղուում ենք կովկասի բանտարկե-  
լոց մի գումար ճամբելու գործով առայժմ<sup>5</sup>:

Այստեղ իբրեւ նոր կազմակերպւած վայր, ամերիկացիների բնակարանութիւնը ու-  
նեն. հնչակներից դարձած մարդիկ են. ինչքան որ էլ լինի կարծեմ դեռ կասկածի մի՛  
չեշտ կայ. ուստի լաւ կը լինի թէ Մարմնի կողմից մի պաշտօնական կնքւած ընկա-  
լագիր ճամբէք եւ թէ դու կամ Մարմինը մի նամակ էլ գրէք, խրախուսելով սրանց  
այս զոհողութիւնները, առաջինը արդէն անպայման կ'անէք, հէնց առաջին պատե-  
հութեամբ:

Ռուբէնը եւ Միհրանն<sup>6</sup> էլ արդէն գիտես Եւրոպա են. Սարգիսը<sup>7</sup>, նոյնպէս, այն-  
տեղէն կ'անցնի վան:

Եթէ ժամանակ ունես գրի՛ր քո գործերի, տրամադրութեան եւ վիճակիդ մասին:  
Բոլոր ընկերներին շատ-շատ բարեւներ անես, չմոռնաս եւ մեր վանեցի Թռչնա-  
կին:

Համբոյրներով՝  
ԱՐԱՄ

1910 փետր. 10

Օրդու

Յ. Գ.— Իմ հասցէն՝

Օրդու, Յակոբ Չիլճեան, յանձնել Արամին:

Յակոբը մեր ընկերն է եւ Մարմնի անդամ, պաշտօնական նամակ կարող էք գրել  
եւ նրան ուղղակի:

ՆՈՅՆ

Սիմոն!

Խարախանեան եպիս[կոպոսը]<sup>8</sup> եթէ տեսնէք, իմ կողմից բարեւեցէք եւ ասացէք.

*Արամը կ'ըսէ թէ շատ կը ցաւիմ որ Աղթամարի քննութեան գործը իր վրայ չվերցը-  
րաւ. նա շատ լաւ կարող էր այդ բոլոր խայտառակութիւնը մի լաւ ապովթէոզով<sup>9</sup>  
վերջացնել, մանաւանդ որ Երոստաղէմ երկար եղել էր, կարող էր համեմատութեան  
մէջ դնել: Եթէ ցրտերի համար է, Մարտ[ի] վերջին հոն շատ լաւ կը լինի եղանակները  
եւ ձի շատ լաւ կը բանի: Այդ ի՛նչ դպրոցական կռիւ է եղել, որ հեռագիր էիք տւել...*

**ՆՈՅՆ**

- 1.- Արամի նամակը ուղղուած է Միսնոն Չաւարեանին, որ այդ շրջանի ընդհանուր տեսուչի պաշ-  
տօն կը վարէր Տարօնի մէջ:
- 2.- Խօսքը Շապին Գարահիսարի մասին է:
- 3.- Բարձրաւանդակը Սասունն է:
- 4.- Ակնարկութիւն 1909 թ.ի Ատանայի կոտորածներուն:
- 5.- Խօսքը կը վերաբերի Դաշնակցութեան գործով Կովկասի բանտարկեալներու դատական  
պաշտպանութեան գործին:
- 6.- Ռուբէն Տէր Միմասեան եւ Միհրան Թերլեմէզեան. երկուքն ալ Ջուիցերիա ուսանելու մեկնած:
- 7.- Սարգիսը՝ Վանայ Սարգիսն է, Շամիլ, իսկական անունը՝ Պօղոս Օտապաշեան:
- 8.- Ներսէս եպս. Խարախանեան (1850-1915), Տարօնի առաջնորդ, ջերմ կողմնակից ազատագ-  
րական շարժման. 1896ին արքայութեան Երուսաղէմ եւ միայն Սահմանադրութեան հռչակումէն ետք  
վերադարձած Տարօն:

---

## 299

### **Միրելի Միմոն<sup>1</sup>!**

*Քո եւ Գարմէնի<sup>2</sup> նամակը ժամանակին ստացել եմ. անմիջապէս չգրեցի պատաս-  
խան, որովհետեւ բան չկար գրելու, յետոյ կը սպասէի որ դպրոցների համար որոշ  
գումար չտկենք. դերասանները (կովկասահայ) եկան եւ մեր ձեռնարկները մի քիչ  
ուշացրին, այնպէս որ այս անգամ էլ դրամ չեմ ուղարկի, եղածը 8-900 դրշ. չեմ ու-  
զում ճամբել որ աւելացնելու առիթ մնայ:*

*Ներսիսի թերթերը թերեւս քեզ եւ ռուսերէն կարդացող ընկերների համար հե-  
տաքրքիր լինի. եթէ կ'ուզէք միշտ ճամբենք:*

*Բժիշկ Զաւրիեւը շուտով կը գայ, երեւի արդէն գիտես. Միհրանը<sup>3</sup> Գերմանիայէն  
կը գրէ որ մշեցի մեր ընկերներէն մէկը մանկավարժութիւն աւարտելով ճանա-  
պարհւեց Մուշ, երեւի նա էլ 20-30 օրէն կը հասնի ձեզ մօտ. կարծեմ կամաց-կամաց  
չըջան կը ստեղծւի եւ քո գործերը մի քիչ կը թեթեւանան:*

*Հիւանդութիւնս վերջերս սաստկացաւ, Ռոստոմը հեռագրել էր որ կիսատ ձգեմ  
գնամ, բայց չարի, սպասում եմ մայիսին. ուզեմ չուզեմ պիտի երթամ, հա՛լ չկայ:  
Խաժակին նորէն բանտարկել են. Շահխաթունեանին<sup>4</sup> նոյնպէս:*

**Բարեւներով ԱՐԱՄ**

**1910 թ. մարտ 23ին, Օրդու**

- 1.- Միսնոն Չաւարեան:
- 2.- Գարմէն – ծածկանուր Մկրտիչ Մելքոնեանի, նախկին Տաճատ վարդապետ. կուսակցական  
գործիչ էր Տարօնի շրջան:
- 3.- Միհրան Թերլեմէզեան:
- 4.- Գարեգին Խաժակ (Չազալեան) եւ Շահխաթունեան Աւետիս, երկուքն ալ Դաշնակցութեան  
գործով ամբաստանուած:

**Միրելի Յոնան<sup>1</sup>!**

Քո եւ Հորտանսի նամակը ժամանակին ստացել եմ. բայց ստանալու օրերը հիւանդ էի. յետոյ էլ գործերով տարւած, այնպէս որ մոռցայ գրել. թէ եւ շատ բաներ կայ գրելու:

Նախ գործնական հարցերի մասին.

Ա) Անցեալ անգամայ ուղարկւած դրամը եղել է 100 Ֆրանկ. փոստայէն պահանջեցէք. Կիրասոնէն էլ հեռագրով յայտնեց տեղիդ փոստային վարչութեան:

Բ) Այս անգամ կ'ուղարկէք նոր հրատարակութիւններէն

- 1) Համաժողովրդական բանակ.- 20 օրինակ
  - 2) Վերածննդը հայրենիք եւ մեր դերը.- 20 օրինակ
- Մեծադիր պատկերներէն.

3) Բասենի եւ Դէլի բաբայի կուրի ֆետայիները. 20 օրինակ

4) Թումանի մարտական խումբը. 20 օրինակ

5) Կայծակ ձիաւոր խումբ. 20 օրինակ

6) Սամաթիոյ հերոսները. 10 օրինակ

7) Դէպի Ազատութիւն (եթէ նոր բան է) 10 օրինակ

Բաց նամակներէն

8) Արշաւիր Կամսարական – 20

9) Կարօ (Աղաջանեան) – 20

Գ) 1908 եւ 1909 թ.թ. Դրօշակներէն մէկ-մէկ օրինակ:

Դ) 92 թ. ծրագրէն<sup>2</sup> անպայման մի օրինակ ճամբեցէք ինձ. մասնաւորապէս շատ հարկաւոր է գալիս պրոպագանդի ժամանակ:

Ե) Մեր բոլոր հրատարակութիւններէն մէկ-մէկ օրինակ, տեղիս կուսակցական գրադարանի համար:

Զ) Վանի մոզական լապտերի «Լոյս ամփոփելու համար անկիզբի թելից պատրաստած «չառը» փչացել է»: Խնդրեմ նրանից մի հատ կամ եթէ թեթեւ բան [է] 2-3 հատ դրէք:

Է) «Եւրոպայի Ուսանողական միութիւնը» որոշել է իր հրատարակութիւնը տարածել, գրադարաններին նւիրելով. ինդրեցէք որ մի մեծ բաժին հանեն Վանի եւ Մուշի շրջանի գրադարաններին. Վանի բաժինը ուղարկել այնտեղի «Ազատութեան լոյս» գրադարանի հասցէով. իսկ Մշինը ուղղակի Սիմոնին<sup>3</sup>: Եթէ Փոքր Ասիայի համար էլ տրամադրելի կ'անեն, թող ճամբեն իմ հասցէով:

Ը) Գրել եմ Թաւրիզ որ Ստեփան<sup>4</sup> Պարսկական շարժման վերաբերեալ պատկերներ ճամբէ մոզական լապտերի համար. ներփակ կը դնեմ եւ մի պատկեր. այդ բոլորը կեդրոնացրէք եւ մէկ-մէկ շինել տւէք. դրանց նեգատիւները պահեցէք, երեւի մնացած շրջաններէն էլ պիտի ուզեն. գէթ նրանց էփան կը նստի:

**Թ) Այսուհետեւ նոր հրատարակութիւններ երբ կը լինեն, անմիջապէս իմ տւած հասցէով 10 օրինակ կ'ուղարկէք. դրամները անմիջապէս կ'ուղարկենք. սրանք ըստ ամենայնի վստահելի են դրամական հաշիւների մէջ. այնպէս որ չխորհէք:**

**Այս ուզածներս անմիջապէս հասցրէք, գուցէ զատկական տօներին հասնեն եւ շուտ ծախեն:**

**Լսեցի որ Ընդհ. Ժող. որոշել է, 20ամեակի առթիւ այլում պիտի հրատարակէք. լաւ կը լինի որ Վանի մեր նահատակւած մի շարք ընկերների պատկերներն էլ դնէք. մասնաւորապէս Յարութիւնի<sup>5</sup> պատկերը. եթէ այս պատկերների եւ կենսագրական տեղեկութիւնների մասին պէտք ունենաք, ես կարող եմ կազմել եւ գտնել: Չեմ կարողանում հասկանալ թէ ինչո՞ւ մեր Մենակը (Եգոր) եւ Մուսը (Մարգար) չարժանացան պոստ-կարտ ունենալու<sup>6</sup>:**

**Ի՞նչ էք խորհում 20ամեակի տօնելու մասին. մի ընդհանուր բան պիտի անենք, թէ 10ամեակի պէս նորէն Ժընեւը պիտի տօնէ: Գործերը առհասարակ գաւառնե-րում լաւ է. այս զգեցի Պոլիսն է որ մեր կուսակցական կեանքը թունաւորում է:**

**Ինչու մենք «Դրօշակ» չստացանք. N 2էն յետոյ էլ լոյս չտեսաւ:**

**Միքայէլի<sup>7</sup> վիճակը ինչպէս է. ամառը ո՞ւր պիտի անցկացնէ:**

**Հորտանսին գրելու ժամանակ չմնաց. նաւի ժամանակ է՞. շատ եւ շատ բարեւ-ներ. բաւական ուրախացայ. լաւ լուրեր էր:**

**Իմ դրութիւնս էլ լաւ է. վերջին օրերը բաւական կազդուրւել եմ:**

**Բարեւներով  
ԱՐԱՄ**

1910 թ. ապրիլ 4/17

**Օրդու**

**Յ. Գ.— Առաքել Աղան, Վարդանը (Շահպազ) հոս են. ինձ հիւր են եկել. քեզ եւ Հորտանսին շատ-շատ բարեւներ կ'անեն...**

1.- Յոնան Գաթեան, Ժընեւ. Հորտանսը իր գուիցերուի կինն է:

2.- Խօսքը 1892 թ. Հ.Յ.Գ. առաջին ծրագրի մասին է:

3.- Ձաւարեանին:

4.- Ստեփան Ստեփանեան (1865-1915), ծանօթ Բալաջան ծածկանունով. մասնագիտութեամբ լուսանկարիչ էր:

5.- Յարութիւն Միրաբեան (1878-1909), մշեցի, Ամերիկայէն եկած եւ Արամի ընկերացած ու Վասպուրական հաստատուած:

6.- Յիշուած անուններէն Յարութիւնը Միրաբեանն է (1878-1909), Մենակը՝ Եգոր Առստամեան (1882-1903), Մուսը՝ Մարգար Ժամհարեան (1877-1905):

7.- Միքայէլ Վարանդեան, «Դրօշակ»ի խմբագիր:

8.- Իմա՝ նամակը պէտք է հասցնել մեկնող նաւուն:

Միրելի Բարսեղեան<sup>1</sup>!

Օրդուէն քեզ գրել եմ եւ երկրորդ նամակը, իսկ թերթեր միշտ ճամբել եմ. այն-տեղից գրելու նիւթ չկար, խորհում էի Պոլսէն գրել. հոնտեղն էլ այնքան զբաղւած էի, որ մնաց մինչեւ այսօր:

Պոլիսը այս տարի նոյնքան վատ տեսայ որքան անցեալ տարի. նախ կազմակերպական ներքին համերաշխութիւն չկայ. Գարոյի եւ Շահրիկի վէճը կը շարունակուի եւ վերջանալիք չունի<sup>2</sup>... Թէեւ ըստ երեւոյթին շատ մարդ կան ժողովւած հոն բայց գործի նայող չկայ. մի քանի ընկերների վրայ է ամէն բան. Ռոստոմը չորացել է, խելք չի մնացել գլխին, քաշւել է գիւղ. Վռամեանը այժմ ամէն ինչ է, եւ խմբագիր, եւ գրող, եւ լսարաններում խօսող եւ կազմակերպական գործեր ղեկավարող ամբողջ երկրի. այս վիճակով նա էլ կը խելագարուի:

Զարդար(եան) հիւանդացաւ, արդէն թոյլ էր, գնաց հանգստանալու: Լիպարիտը<sup>3</sup> համեմատաբար լաւ է, նա էլ գիտես, տնաքանդի լեզուի մէջ պողպատ չկայ. քաշւած կղզիացած կ'ապրի. ասենք իր թղթակցութիւնների համար այն ժամանակ կը գայ, որ այլ բան անելու հնարաւորութիւն չունի: Առայժմ նրա օժանդակութիւնը այն է, որ 2 օրը մի յօդւած կը տայ: Արտաշէս Զիլինգարեանին<sup>4</sup> զգեցրել փախցրել են. խեղճ տղան իր հաշիւին ապրելով, գէթ ազատութիւն չեն տւել արտայայտելու. Ակնունին ուղղակի նրան ճնշել ու փախցրել է: Այժմ նա Եւրոպա է. թերթը ո'չ մի ձեռնհաս, տեսական պատրաստութիւն ունեցող մարդ չունի: Առաջարկեցի որ Արտաշէսին կանչենք. հարկաւոր է նրան ամիսը 5-6 ոսկի տրամադրելի անել. կ'ըսեն դրամ չկայ, թէեւ սկզբունքով ընդունեցին նրա ներկայութեան անհրաժեշտութիւնը. թերթերը կը տեսնես, թոյլ եւ անգոյն:

Կառավարութեան եւ «Իթթիհատի» հետ յարաբերութիւնները նոյն է:

Մշոյ եւ այլ տեղերի դէպքերը մասնակի երեւոյթներ են. շատ բան եւ շուտով եթէ այդ առթիւ չկրցանք անել, պատճառը այն է, որ մեր մէջ ներքին համաձայնութիւն կամ դիսցիպլինի կապ չկայ:

Երեւի լսել էք որ Թայիր փաշան Բիթլիս է գնացել Վարդգէսի<sup>5</sup> բարեխօսութեամբ, իսկ հողային հարցի վերաբերմամբ, երբ անցեալ շաբթւայ «Պառն մարմնի»<sup>5</sup> նիստի մէջ Վռամեանը կտրուկ կերպով դրել է, որ հարկաւոր է Իթթիհատի ազդու միջամտութիւնը եւ այդ հարցի անմիջական լուծումը, տնաքանդ Գարոն եւ Վարդգէսը կ'անցնեն «Իթթիհատի» կողմը, ասելով որ այդ հարցը ուսումնասիրւած չէ, ժողովուրդը չափազանցութիւններ կ'անէ, թւեր չունենք ձեռքի տակ եւ այլն եւ այլն, եւ թուրքերը ի հարկէ թեւ են առել ու նեղ վիճակէն դուրս գալու ճամբայ գտել:

Արդէն մեր պատգամաւորներից ո'չ մէկը չկրցաւ ճիշտ արտայայտիչ լինել ո'չ մեր կուսակցական քաղաքականութեան եւ ո'չ էլ հայ ժողովրդի արդի վիճակին. Վարդգէսը որ խօսելու աւելի հնարաւորութիւն ունի, շատ անգամ աւելի վնասա-

կար եւ հակասական բաներ կ'անէ. ի՞նչ տպաւորութիւն թողեց ձեզ վրայ նրա Սամի բէյի (խմբագիր, հակաիթիհատական) սպանութեան առթիւ արած պաշտպանողականը պետութեան եւ իթիհատին. «... Ամէն երկրում էլ, Եւրոպա էլ նման մասնակի սպանութիւններ կը լինեն...» եւ ճիշտ Հիլմի փաշան<sup>6</sup> նոյն ձեւով է պաշտպանում կառավարութեան Անատոլուի [?] մէջ պատահած դէպքերի առթիւ...

**Չեմ հասկանում. դրանք իրենց մասին կարծես մեծ կարծիք ունեն. ամէն բան կ'անեն առանց հաշիւ տալու եւ խորհելու:**

Այս բոլորը չէի գրի, եթէ Գարոն եւ Վարդգէսը որոշած չլինէին Երկիր գալ. կարծես այս բոլորը բամբասանքի բնոյթ է առնում. այն էի խնդրում գրելու, որ հոտ գալուց մի լաւ հուպ տուէք. յետոյ այնպէս դասաւորեցէք որ անձամբ գնան, այդ հողային հարցը քիչ ուսումնասիրեն, իրենց աչքով տեսնեն ժողովրդի վիճակը, յետոյ խօսեն՝ տա՛ք, տաք...

Երեւի լսեցիր որ թերթը յաւելած շաբաթաթերթ կ'ունենայ<sup>7</sup>, գրական-գիտական ուղղութեամբ: Բայց մարդ չկայ. չգիտեմ ո՛վ պիտի խմբագրէ:

Ես կը խորհէի որ մի ամսագիր հրատարակեն, կարծում եմ 1000 ռուսկով գլուխ կը լինի. 1000 բաժանորդ էլ կը տայ. ահագին ուժեր կան, շան որդիքը բոլոր վարձի են սպասում. եթէ դրամ տաս կը գրեն...

Արշակի համար Ռոստոմի ստորագրութեամբ հեռագիր տւի. երեւի ստացաք. նա լաւ կը լինի, թէ թերթի մէջ կ'աշխատի եւ թէ պրոպագանդի համար:

Մի քիչ էլ իմ մասին. 8 օր է հոս եմ. լողանում եմ. ջուրը քուքուրտային է. բժիշկները կ'ասեն ուեւմատիզմի համար լաւ է: Այս 8 օրւայ մէջ բաւական ազդեցութիւն արել է. ցաւերը ո՛չ միայն մեղմացել են, այլ եւ համարեա չէզոքացել: Բայց ջղերս շատ թոյլ են, ոյժ չկայ: Մտադիր եմ, կազդուրւելու համար, վերցնել մի 10 վաննա երկաթային ջրեր. կարծեմ նա կը կազդուրի: Չգիտեմ առաջիկայ տարին ի՞նչ անեմ. Ռոստոմը կ'ասէ գործ մի՛ վերցնի, հանգստացի՛ր. բայց խելքս բան չի կտրում, այս

---

1.- Այս Բարսեղեանը ծածկանունն է շատ հաւանաբար բժիշկ Յովսէփ Տէր Դաթեանին, անդամ Արեւելեան բիւրոյի Երկրի հատուածին (Կարին):

2.- Արմէն Գարոյի (Փաստրմաճեան Գարեգին) եւ Յարութիւն Շահրիկեանի միջու տարիներ տետոյ վէճը կը կայանար հետեւեալին մէջ. իբրեւ Օսմ. խորհրդարանի անդամ Արմէն Գարօ, հայկական նահանգներու զարգացման նպատակով, կառավարութեան ներկայացուցած էր Թուրքիոյ արեւելեան վիլայեթներէն անցնող երկաթագծի մը կառուցման ծրագիր, մինչ Շահրիկեան, ֆրանսական դրամատան մը ներկայացուցիչի հանգամանքով միջամտած էր, ինչ որ ըստ Արմէն Գարոյի խանգարած էր ծրագրի իրագործումը:

3.- Լիպարիտ Նազարեանց (1874-1947):

4.- Չիլիզկարեան Արտաշէսը ատլի ծանօթ է Ռուբէն Դարբինեան (1883-1968) անունով, ատլի ուշ խմբագիր «Հայրենիք» ամսագրի: Ատլի վար յիշուած Արտաշէսը հաւանաբար նոյն Չիլիզկարեան-Դարբինեանի համար է:

5.- Վարդգէսը միեւնոյն Գիսակն է, բուն անունով Յովհաննէս Սերենկիլեան, որ նոյնպէս Կարինէն ընտրուած երեսփոխան էր Օսմ. խորհրդարանին մէջ:

6.- Խառն մարմին անունը կը տրուէր Արեւմտեան բիւրոյի Թուրքիոյ հատուածի ընդլայնուած նիստերուն, որոնց կը մասնակցէին նաեւ պետական երեսփոխանները եւ շարք մը այլ գործիչներ:

7.- Թուրքիոյ Սատրագամ - վարչապետ:

8.- Խօսքը Պոլսոյ «Ազատամարտ» օրաթերթի յաւելուածի մասին է:

9.- Խօսքը Կարնոյ Սանասարեան վարժարանի տնօրէն Աստուածատուր Խաչատրեանի մասին է (1861-1944):

վիճակով ապրելու համար ահագին դրամ է հարկաւոր. ես կը խորհէի, այնպիսի տեղ պաշտօն վերցնել, որ աւելի գործին մօտիկ լինէի եւ կարողանայի ազդել, այժմ կարծես ոչ թէ կուսակցութեան մէջ ես, այլ կուսակցութեան կողքին\*\*։ Բարոյական իրաւունք էլ չկայ կարծես միջամտելու, քանի որ ինքդ ոեւէ աւտիւ միջամտութիւն կամ օժանդակութիւն չունես գործերի ընթացքի վրայ...

Հա՛, մի բան էլ. այդտեղ Սանասարեանի իրաւաւորեանին<sup>9</sup> գրել էի, որ Օրդուի իմ աշակերտներէն 2-ին վերցնի դպրոցի մէջ, մէկը ձրի, միւսը վարձով. պատասխանել է որ ձրիավարժի տեղ չկայ, տղան կարող է մտնել VIII կամ IX կարգը. Ատրունուն իմ կողմից կը խնդրես որ իբրեւ հոգաբարձու միջամտէ եւ եթէ հնարաւոր է ընդունիլ տայ, լաւ տղայ է եւ տէր-տիրական չունի։ Այս մասին չմոռանաս ասել եւ արդիւնքը գրել ինձ անմիջապէս։

Վանի տղաների հետ նամակագրութիւն չունեմ. նրանք էլ Մշոյ դէպքերից նեղւել են, թերթ պիտի հրատարակեն. մուկը չկարողացաւ ծակից ելնել, ցախաւելն էլ պոչից կապեցին...

Ի՞նչ նորութիւններ ունես Ռուսաստանէն...

Բարեւներով՝ ԱՐԱՍ

1910 թ. յունիս 29  
Պուրաս

**Յ. Գ.— Իմ հասցէն Սէթ բաշի, Լոկանթաջի Միհրան աղային. յանձնել Արամին։ Գրել եւ թուրքերէն։**

**Յ. Գ.— Նոր ստացայ Պարունակեանի եւ Ատրունիի նամակները, կը պատասխանեմ, առաջին պատեհութեամբ. Պարունակեանը ի՞նչ դասեր կը վերցնէ։**

Փաստ. 99-44

302

Ընկերներ!

Երկու օրէն Ռոստոմ եւ Մուրադ<sup>1</sup> կ'երթան Պոլիս. այստեղ նորութիւններ չկան։ Ռոստոմը խնդրում է որ Կորիւնի եւ ընկ. Դռիոյի [?] մասին, առհասարակ մեզ հետաքրքրող հարցերի մասին գրէք Պոլիս Ռոստոմի հասցէով։

Երեւի լսած էք որ Սեպուհ<sup>2</sup> կարգւել է։

Սամէլի մասին որ հեռագրել էք հոս է. մի քանի օրէն կը գայ. Սմբուլը<sup>3</sup> ուղարկել են Դերջան։

ԱՐԱՍ

27-7-1910, էրզրում

1.- Ռոստոմ – ծածկանուն չ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներէն Ստեփան Զօրեանի (1867-1919)։ Մուրադը՝ Սեբաստացի Մուրատն է, Խրիմեան-Տօնիկեան (1874-1918)։

2.- Սեպուհ – ծածկանուն Արշակ Ներսէսեանի։

3.- Մշեցի Սմբուլ, իսկական անունը Սմբատ Յակոբեան (+1914)։

**Դրօշակի խմբագրութեան<sup>1</sup>**

Ընկերներ,

Պոլիս տեսայ նոր հրատարակութիւնը – «Վերածնունդ հայրենիք եւ մեր դերը»<sup>2</sup>, որին կը սպասէի վաղուց...

Անմիջապէս Օրդուի սովորական հասցէով – Յովհաննէս Անդրէասեան – Օրդու – 20 օրինակ ճամբեցէք, վրան գրելով Արամին յանձնելի:

Վանի շրջանում նահատակած բազմաթիւ ընկերների կենսագրութիւնները եւ պատկերները պէտք է հասցնենք ձեզ. բայց լաւ կը լինի իմանալ, թէ մինչեւ որ ամիսը կարելի է հասցնել:

Այստեղ դեռ պայքարը սուր է. գաւառները լաւ է. ամբողջութեամբ մեր կողմն է եւ կազմակերպութիւնը օր օրին կ'ուժեղանայ:

Սիմոնը<sup>3</sup> կ'ուզէ Մուշէն հեռանալ: Հեռագրեցինք մնայ:

**Բարեւներով  
ԱՐԱՄ**

1910 թ. յուլիս 28, Պոլիս

- 1.- Բացիկ է:
- 2.- Հեղինակութիւն Միքայէլ Վարսնդեանի:
- 3.- Սիմոն Ջաւարեան:



Արամի այս նամակը տեսակ մը զեկուցագիր է ուղղուած Արշակ Վռամեանին, անդամ Հ.Յ.Դ. Արեւմտեան բիրոյի Թուրքիոյ կամ Պոլսոյ հաստուածին. եւ արդէն այս վերջինի կողմէ լիազօրուած ներկայացուցիչի հանգամանքով ան կը մասնակցէր Մարզուանի 1910 թ. Շրջանային ժողովին: Մարզուանը կեդրոնն էր Սեւ ծովու հարաւային ափին տարածուող եւ կուսակցական «Բանալի» ծածկանու- նով ծանօթ Կեդր. կոմիտէութեան (Մարզուան, Սամսոն, Ամասիա եւայլն):

*Միրելի Վռամեան!*

*Երեք-չորս օր առաջ ժողովը վերջացրինք: Ինձնից անկախ պատճառով չկարողա- ցայ գնալ եւ Ամասիա. ժողովին կը մասնակցէին 9 մարմիններէն միայն 7-ը, 2-ը չե- կան. պատճառները չիմացանք: Անցնիմ տպաւորութիւններին:*

*Ա- Կազմակերպական վիճակ.— Ընդհանրապէս նախանձելի վիճակի մէջ չի կա- րելի տեսնել կազմակերպութիւնները: Շնորհիւ վերջին շարժումներին այս շրջանը իբրեւ նոր շրջան բնականաբար շուտ է ազատուել: Հնչակեաններն էլ պակաս դեր չեն կատարել տրամադրութիւններ փչացնելու մէջ, բայց մի մխիթարական բան կայ, համարեա բոլոր վայրերում կազմակերպութիւնների սաղմերը մնացել են. մանաւանդ երիտասարդութիւնը ամէն տեղ հաւատարիմ է մնացել: Վերջին 5-6 ամիսը բոլոր տեղերը վերակազմուել են, շրջաններ ստեղծել եւ գործ կատարել. պէտք է խոստովանուել որ Աստիկեանի տուրնէն<sup>1</sup> բաւական գործ կատարել է այս շրջանում. առանց նրան հաւանօրէն շատ գէշ կը լինէին այս կողմերը. թէեւ այս բանը իրենք չեն գգում... Կարծում եմ այնպէս է դուրս չոր գործերի հիմքը որ իրենց տեղական ուժերով պիտի կրնան շարունակել. առայժմ 500էն աւելի կազմա- կերպած ընկերներ կան, եւ յոյս կայ որ աւելին կը լինի քանի որ առաջիկայ տարին մեծ փոթորիկներ չի սպասուում:*

*Բ.- Մտաւոր վիճակ.— Ողորմելի դրութիւն է. մերոնք ոչինչով տարբեր չեն դուրս մնացածներէն. տարբերութիւնը միայն զգացմունքների մէջ է. սրանք մեծ մասամբ երիտասարդ եւ մաքուր տարրեր են. անպայման կը հաւատան եւ փարած են կազմակերպութեան. նորութիւն լսելը, կարգալու, զարգանալու ծարաւի են. գրադարան-ընթերցարաններ համարեա չկայ. եղածներն էլ հնչակեաններինն է. մե- րոնք ունեն Մարզուան մի ընթերցարան, որ կը ստանայ մեր թերթերէն միայն «Ազատամարտ», իսկ մնացածը՝ «Ժամանակ», «Բիւզանդիոն», «Դաշինք», «Կաւ- ոռչ», «Ասպարէզ» եւ այլն...*

*Երբ նկատողութիւն արի, թէ ինչո՞ւ այդ խայտառակութիւնները կը տարածէք, կը պատասխանեն.- «Զէ՞ որ համոզմունքի ազատութիւն է...»: Ահա թէ ինչպէս են*

հասկանում համոզմունքի ազատութիւնը...

Մարզուան լաւ երիտասարդութիւն կայ, բայց ցաւալի է որ մէկը չկայ որ դրանց ղեկավարէ, առաջնորդէ. ինչպէս Վան, այնպէս էլ այստեղ երիտասարդների եւ հասակաւորների մէջ պաղուծիւն կայ. գործերը բնականաբար վերջինների ձեռքն է. առաջիններն էլ, լքած, իրենց համար գործ որոնելու են ելել եւ գտել են... Կազմակերպել են մի միութիւն «Նոր-Սերունդ» անունով, գրել են մի անագին ծրագիր, լաւ երեւակայութեամբ եւ յիմարութիւններով լեցուն. կ'ուզենային կառավարութեան հաստատել տալ եւ գործի սկսել. պիտի զբաղեն կրթական-դպրոցական եւ ինքնագարգացման գործով: Բնական է, որ կռիւր եւ անհամութիւնները սկսել էին: Վանի փորձը առաջս էր. ինձ ոչինչ չէր մնում անել, եթէ ոչ կանչել... Չահեղներին եւ հասկացնել որ իրենք սխալ ճանապարհի վրայ են եւ այդպիսով թէ Դաշնակցութիւնից պիտի հեռանան եւ թէ կռիւների պատճառ դառնան. երկու անգամ էլ դրանց հետ ժողով արի, երկար բարակ ճնշումներէ վերջը, ծրագիր-մրագիր մի կողմը թողեցին եւ որոշեցին զբաղել կուսակցական գործով եւ չտարւել այդ դրսի հարցերով...

Այս կողմերը կարծեմ եւ ամէն տեղ, առայժմ յեղ. գործունէութիւնը կարծես դպրոցական, թաղական եւ վանական հարցերի մէջ է, ուրիշ բան պահանջել յիմարութիւն կը կարծեն... Ժողովի մէջ շատ շեշտեց այդ կէտը. երկար ու բարակ խօսեցի, բացատրեցի. տեսնենք կեանքը պիտի թողնէ այլ բաների մասին խորհելու:

**Գ. Թերթերի գործ.**— Ի՞նչ որ մենք մեր մէջ խօսենք «Ազատամարտի» մասին, պէտք է խոստովանւել որ նա, բայց եւ այնպէս միակ կապ պահպանողը, միակ միացնողը, միակ յուշարարն է եղել մեր գործնէութեան, մեր գոյութեան. ընդհանրապէս ամէնքը գոհ են: Մի քիչ դժգոհութիւն յայտնեցին Ղալալին յօղաւանների մասին: Մեզնից աւելի քաղաքավարի եւ պաղարիւն պատասխան կը սպասեն: Հասկանալի հոգեբանութիւն է. խօսողները կուռի դաշտէն հեռու են... Հետաքրքիր [է] եւ այն որ ամէնքը դժգոհ են մասնաւորապէս Շահրիկեանէն. նրան մեղադրում են որ շատ է անհատներով զբաղուում, որ շատ է կռիւների պատճառ դառնում. մէկը նոյն իսկ առաջարկ էր բերել, խնդրելու որ առ այժմ նա դադարէ թերթի մէջ աշխատակցելուց. ժողովը անյարմար գտաւ այդ առաջարկը, բայց որոշեց այդ ուղղութեամբ ընդհանուր նկատողութիւն անել: Տարածումը այնքան մխիթարական չէ. բայց յոյս կայ, որ այսուհետեւ կը շատանայ:

Պէտք է հոգ տանել մասնաւոր կուսակցական գրականութեան տարածման. մի շրջիկ գրավաճառի հանդիպեցի. խաչագողին մէկն էր. բայց նրանից հասկացայ որ մեծ յաջողութիւն ունի. մեծ մասամբ Պոլսոյ վերջին հրատարակութիւնները կը ծախէ. մեր եւ հնչակեաններինը. իր ասելով մերոնք (Արծիւը) 10%-է աւելի գեղջ չեն տալիս. իսկ ուրիշները կը տան եղեր 40-50%. կարող է պատահել. քանի որ վերջինները թանգ կը գնահատեն եւ այդպէս կը ծախեն. աչքովս տեսայ Աստուածածնի տօնի օրը մեծ քանակութեամբ սպառւեց: Երանի թէ մեզնից մէկն էլ նոյն գործով զբաղւի կամ մէկ բարեխիղճ մարդ գտնէինք այդ գործը անող. նրա ասելով տարին 70-80 ոսկի շահ կրնայ ունենալ... նա եղել է Իգմիզի, Ատաբազարի, Պուրսայի եւ այդ կողմերը. ընդհանրապէս գոհ է մնացել. այժմ անցել է Փոքր Հայք...

Հրաչի<sup>2</sup> յանձնարարութիւնները կատարեցի. ամէն տեղից խոստացան եւ մա-

սամբ էլ դրամները ճամբեցին: Կամաց-կամաց մնացածներն էլ կը գայ: Նրան յայտնիր որ Հաւգա, Տիգրան Անդրէասեանի թերթը դադարեցնի, որովհետեւ նրանք գնացին Օրդու:

**Դ.- Հնչակեանները եւ մերոնց յարաբերութիւնները գէշ են.**— Նրանք այս կողմերը կ'երեւայ որ եթէ ոչ կազմակերպած գէթ ազդելու ոյժ ունեն. ժողովրդի աղայական մասը նրանց համակիր է. հին տրադիցիաներ կան, կապը մի անգամէն չի կտրւի. սրանք մեծ մասամբ հակակենտրոնական են. վերջն էլ կ'երեւայ վախենալով երկդիմի դիրք են բռնել: Վերջերս դիմել են մեր մարմիններին որ «բաց ու գոցի»<sup>3</sup> խնդիրների վերաբերմամբ անտարբեր դիրք բռնեն մինչեւ 3 ամիս. չգիտեմ սա ի՞նչ խաղ է. հոտ միասին աշխատել, իսկ հոս փայլուն չէզոքութիւն յայտարարել: Ժողովի մէջ հասկացրի որ ամէն կերպ աշխատեն համերաշխութիւնը պահպանել, մինչեւ տեսնենք նրանց ժողովը ի՞նչ կը որոշէ...

**Ե.- Իթթիհատի հետ լաւ են.**— Տեսայ Մուստաֆա — Նաջիբին. վան եկողներէն մէկն է. լաւ տղայ է. երկար բարակ խօսեցինք. հնչակեանները շատ պոլիտիկա կ'անեն իրեն. Սվազ էլ ոսկի մեղալիոն են նուէր տուել, բայց ընդհանրապէս նրանց անկեղծութեան վրայ կը կասկածէ. կ'ասէ. «ես նրանց հետ այնքան սրտանց չեմ խօսիր կամ գործեր, որքան ձեզ...»: Չգիտեմ մեզ հետ որքան անկեղծ է, բայց անպայման ճշմարտութիւն կը լինի:

Տեղիս գայմագամի մասին ընկերները խնդրել են որ միջամտես, յիմարին մէկն է. Նէջիբն էլ դժգոհ է. պիտի փոխեն, դուք ոեւէ բան չանէք. մերոնք նրա կեղծաւորութենէն խաբւել են ձեզ դիմելով. վերջին օրերը իր գոյնը ցոյց տաւ. մի խնդրի առթիւ յայտնել է, որ «ձեր գործը չեմ տեսնի» որովհետեւ դուք օրինի կուսակցութիւն չէք»: Հնչակեանները մագմաթա<sup>4</sup> են կազմել, վալիին դիմել են որ տեղս պիտի գայ, խնդրելու որ մնայ. «իթթիհատականները» լաւերը (նրանց մի մասն էլ կ'ուզէ) շատ դժգոհ է այդ քայլից... Ի՞նչ եղաւ այդ օրինականացման հարցը<sup>5</sup>. կ'երեւայ գաւառներում դա նշանակութիւն ունի. հնչակեաններն են գոռում որ մենք լեզալ չենք, վտանգաւոր ենք: Ամսուս 31-ին Օրդու կը լինեմ. էլ բան չմնաց. արձանագրութենէն մնացածը կ'իմանաք:

Բարեւներով  
ԱՐԱՄ

1910 թ. օգոստոս 23

Մարզլան

1.- Տորնէ – շրջագայութիւն: Տիգրան Աստիկեանը, բնիկ խարբերոցի Ամերիկա գաղթած, իբրեւ պատգամատր մասնակցած էր ձ.Յ.Գ. Հինգերորդ Ընդի. ժողովին, ապա մնացած ու որպէս գործիչ լծուած էր կազմակերպական աշխատանքի:

2.- Հրաչ – Հայկ Թիրեաքեան, Բաբգէն Միւնիի եւ Արմէն Գարոյի հետ եղած էր Պան օրոքումնի գրաման ձեռնարկի ղեկավարներէն: Այդ օրերուն կը վարէր «Ազատամարտ»ի վարչական բաժինը:

3.- Սահմանադրութեան տարիներուն «բացի-գոցի» խնդիրը վեճի մեծ նիւթ դարձած էր Թուրքիոյ մէջ: Հարցը այն էր թէ եկեղեցոյ բեմերը պէտք է գործածուէին հասարակական գործիչներու առաջ թէ ոչ:

4.- Հանրագրութիւն, բողոքագիր:

5.- Օսմանեան Թուրքիոյ մէջ Դաշնակցութեան պետական օրինականացումը ձեռք բերուած է 1910 թ. Դեկտեմբերին միայն:

«Դրօշակի» խմբ[ագրութեան]<sup>1</sup>

Ընկերներ!

Ժամանակին ստացել եմ ձեր ուղարկած 20 օր[ինակ] «Վերածննդ Հայրենիքը եւ մեր դերը»․ բոլորը ծախսել եմ․ դրամ պիտի փոխադրեմ բայց անցեալ տարւանից էլ հաշիւներ կան․ խնդրեմ պատասխանէք այս հարցերին:

- 1) Ինչքան պարտք ունեմ․ նշանակեցէք թէ ինչ էք ճամբել, ինչքա՞ն եւ ամէն մէկի արժէքը:
- 2) Կարո՞ղ եմ դրամները ուղարկել «Ազատամարտ»ին թէ ուղղակի ձեզ:
- 3) Մնացած ապրանքները — հին գրքեր, պատկերներ եւ այլն լաւ չէր լինի տարւայ վերջը ուղարկեմ Պոլիս:
- 4) Բարի եղէք նորէն ուղարկելու 20 օր․ «Վերածննդ Հայրենիք»:
- 5) Ժընեւ հրատարակած կամ ձեզ մօտ եղած հնչակեանները մերկացնող գրականութիւն:

Ի դէպ Վարանդեանէն իմացէք, թէ հնչակ[եանները] այս անգամ — Կոպենհակ դիմե՞լ են «Ինտերնացիոնալին»<sup>2</sup> միանալու, կամ Փրանսիացի մէկին պատգամաւոր նշանակե՞լ են․ այս կողմերը եւ Փոքր Հայք, նրանք մեզ շատ են զբաղեցնում: Մենք դեռ «Դրօշակ» չստացանք:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

Հասցէս․ Օրդու, Արամ Մանուկեան

1910 թ. հոկտ. 28, Օրդու

1.- Բացիկ է:  
 2.- 1910 թ. Օգոստոս ամսուն Դանիոյ մայրաքաղաք Քոփենհակնի մէջ կայացած էր Ընկերվար Միաջագգայնականի 8րդ Համագումարը, որուն Դաշնակցութեան կողմէ մասնակցած էին Միք. Վարանդեան, Արմենակ Բարսեղեան, Մարտիրոս Յարութիւնեան եւ Նիկոլ Դուման (Տէր Յովհաննիսեան):

Սիրելի Վահագն<sup>1</sup>!

Քեզ արդէն գրել եմ․ ուրիշ նորութիւն չեղաւ այնուհետեւ․ անպիտան նաւերը գալ-գնալ չունեն որ մարդ նորութիւններ ունենայ:

Անցեալ օրը հեռագրով մի քանի հարցում արի, դեռ պատասխան չեմ ստացել: Հանգանակութիւնը վերջացրինք․ գումարը պիտի աշխատենք նամակաբերիս հետ ուղարկել:

Սա մեր տեղիս երիտասարդ լաւ ընկերներէն է, գալիս [է] հոտ մի երկու ամսով, մեր դասախօսութիւններուն եւ շրջաններուն մօտեցրէք:

Այդ ի՛նչ աղմուկ էք բարձրացրել. տաք տեղէն կը խօսես, երեւի վիճակներնիդ լաւ է. ի՛նչ պիտի անել գաւառներում. ինչու բան չէք գրում:

Ի դէպ Կովկասի բանտարկելոց<sup>2</sup> համար եղած «կոչը» ինչու բոլոր կոմիտէներին չէք ուղարկած. մի քանի տեղերէն կը գրեն թէ լուր չունեն:

Սիմոնը<sup>3</sup> ինչպէ՞ս եղաւ որ Խարբերդ գնաց. ո՞վ մնաց նրա տեղը:

Դրամները բանտարկելոց համար երբ ստանաս նախ կնքած ընկալագիր կը ձամբես, յետոյ դու կամ Բիւրոն – այդ դուք գիտէք – գրէ տեղիս ընկերներին. թող սրանք իմանան որ իրենց զոհողութիւնները գնահատուում են մարմինների կողմից:

Շատ բաներ կան գրելու. բայց ժամանակ չունեմ. խօսքը մեր մէջ «Մարի»<sup>4</sup> յօդ-ւածները ինձ վրայ լաւ տպաւորութիւն չեն անում. ինձ թւում է թէ դուք չէք խօսում յայտնի պատճառներով, բայց եթէ ես կամ կարծում եմ ինձ պէս մտածող ուս-սահայ մի ընկեր լինէր հոտ, պիտի խորհուրդ տար, որ այդ յօդւածները չտպաւի-պատմութիւն գրելու ժամանակ չէ. գրելու տոնը եւ փաստերի դասաւորումը – մի բան որ աւելին կարելի է սսել – այնպէս է որ հակառակորդների ձեռքը գէնք կը դառնայ մեր դէմ պրովակասիոն<sup>5</sup> հանելու... Ա՛խր ո՞ւմ համար է այդ. [եթէ] հակա-ռակորդների՝ այդ ի գուր է. եթէ տաճկահայ մասսայի, գաւառի համար է, նա աւե-լի ուսասհայերին, նրանց կարծիքներին միտող եւ պաշտող է քան ի՛ր. էլ ի՞նչ կ'ու-զէք. գէթ այդպէս է մտածում Վանի եւ Մուշի ժողովուրդը:

Չգիտեմ ինչ միտումով է գրուում կամ տպւում. քո կարծիքը գրիր ինձ: Այս կա-րող ես իրեն էլ յայտնել, մտածելու բան չունեմ:

Գրի՛ր մանրամասն:

Բարեւներով՝ ԱՐԱՍ

7-11-1910, Օրդու

Յ. Գ.— Գումարը հասաւ, հազար վեց հարիւր եօթանասուն չորս 1674. որ է 15 1/2 ոսկի. կը ստանաք այս նամակաբեր ընկեր Միհրան Անդրէասեանէն:

Ընկալագիր չմոռանաս շուտով ուղարկել:

Կ'ուղարկէք եւ տեղիս համար կնքած ընկալագրեր. նոր ծրագիր կանոնագիր:

ՆՈՅՆ

1.- Վահաբ – ծածկանուն Արշակ Վռամեանի:

2.- Խօսքը Կովկասի մէջ Դաշնակցութեան գործով բանտարկուածներու մասին է:

3.- Սիմոն Զաւարեան:

4.- Մար – ծածկանուն Միքայէլ Տէր Մարտիրոսեանի:

5.- Գրգռութիւն:

«Դրօշակի» խմբագրութեան

Ընկերներ!

Ժամանակին ստացել եմ Միքայելի<sup>1</sup> եւ ձեր հաշւեցոյց նամակները. կը ներէք որ իսկոյն չպատասխանեցի եւ մանաւանդ դրամ չուղարկեցի. պատճառը մասամբ ծուլութիւնս է եւ մասամբ այն որ լսել էի Պոլիս տեղափոխելու մտադրութիւն[ն]իդ<sup>2</sup>, բայց վերջին անգամ լուր առայ որ հոդ էք առայժմ...

Եկող փոստային կը ստանաք 400 Ֆրանքի չէկ Միքայելի անունով. ստանալիդ անմիջապէս գրեցէք. կարդալով «Դրօշակի» մէջ կորած նամակի մասին, հարկ համարեցի նախ գրել ապա ուղարկել:

Այդ դրամէն 200 Ֆրանկը կը հաշէք իմ տալիքների դիմաց. ի նկատի ունեցէք որ Տրապիզոնէն ու Սամսոնէն էլ անցեալ տարւայ մնացորդ — կարտ-պոստալ, պատկեր ու բրոշիւրներ, հաւաքել-բերել եմ հոս չկորսուելու եւ ծախելու համար. Տրապիզոնէն բերւածներէն ծախւած է մօտ 80 Ֆ. իսկ նոյնքան էլ Սամսոնէ բերւածներէն: Սամսոն իրենց տւած հաշի համաձայն 3200 կարտ-պոստալ են ստացած, չգիտեմ ձեզնից թէ Պոլսէն, որմէն 2015ը ուղարկել են ինձ, ինչպէս եւ մի օսմանեան ոսկի դրամ. մնացածները զանազան հաշիւներ են ներկայացրել, որոնք կը քննեմ գարնան Պոլիս դարձած ժամանակս:

— Անցեալ տարի ձեզնից ստացւած պատկերների մի մասը դեռ չի ծախւած. տարւայ վերջը մի բան կ'անեմ. կ'ուզեմ այս բոլոր ապրանքները տալ տեղիս մարմինն, դրամները առնել եւ միանգամայն վերջացնել: Չմոռանամ ասել, որ պատկերները եւ կարտերը (վերջինները սերիայով) մի քիչ աւելի էժան գնով ենք ծախել, քան թէ ձեր գրածներն են. դա արել եմ իմ պատասխանատուութեամբ շատ եւ շատ ծախելու համար:

— Կը խնդրեմ հաշիւները, միանգամայն փակելու համար գրէք ինձ, թէ

1) Տրապիզոնի եւ Սամսոնի հետ դուք անձամբ հաշիւ ունեցե՞լ էք, թէ Պոլսէն են առել:

2) Անցեալ տարւանէ «Դրօշակ»ի համար ուղարկւած դրամներէն 10 Ֆ. աւելի կայ. հաշւե՞լ թէ ո՛չ:

3) Վանէն ուղարկել էի ձեզ մոզական լապտերի համար դրամ. անոր հաշիւները վանի հետ մաքրեցի՞ք, թէ ոչ: Կարծեմ բաւական մնացորդ դրամ մնաց ձեզ վրայ:

— 400 Ֆրանկէն 200ը ուղարկել եմ որ տեղիս մեր գրադարան — ընթերցարանի համար մի մոզական լապտեր առնէք, ամենալաւը, վան ուղարկածի ձեւով: Մեքենան կարծեմ 100 Ֆրանկի չափ արժէ ամենալաւը: Մնացած տուէք պատկերների, աշխատեցէք պատկերները գունաւոր լինի. պատուէրը արդէն վանի համար պատրաստել էի անցեալ տարի. ուրեմն այս անգամ էժան կը լինի. բացի մեր յեղ. կեանքի պատկերներէն պէտք է Ֆրանսալական, ռուսական, թիւրքական եւայլն քաղաքա-

կան ու նշանաւոր պատմական պատկերներ:

– Փշացող եւ կոտորող մասերէն շական հատ աւելի առէք որ Վանի պէս կրակ չընկնենք:

Մեքենան եթէ եկող կը լինի ուղարկեցէք Պոլիս «Արծիւ» գրավաճառանոց, յայտնելով որ Արամի համար է. իսկ եթէ եկող չկայ, փոստով կ'ուղարկէք Կիրասոն, Վահան Պատարեանին, Օրդուի համար. վրան գրեցէք արժէքը աւելի էժան քան գինն է, մաքսը հոս պիտի առնեն:

Մեզ էլ նամակով կը գրէք թէ մանրամասն հաշիւներ եւ թէ գործադրութեան մասին հրահանգներ. հետը եթէ Ֆրանսերէն լեզուով գործ ածելու մասին ցուցմունքներ առնէք աղէկ կը լինի:

– «Հոսանքներ»<sup>3</sup> մեզ չուղարկեցիք ասելով որ Պոլսէն առէք, պոլսեցիք էլ կ'ասեն դեռ չեն ստացած. մեր գործերի տարածման այս ձեւը ուղղակի անտանելի է:

«Վերածնող հայրենիքէն» 40 օրինակ միայն այս փոքր քաղաքի մէջ (ընդամէնը 300 տուն) ծախեց, ընդհանրապէս ամէն կողմը տաճկահայ երիտասարդութեան կողմէն խանդավառութեամբ ընդունեց այս գիրքը. մեծ ազդեցութիւն է արել, ամէնքը խնդրեցին որ Միքայէլին գոհունակութիւններ գրեմ. խեղճերը լուրջ քան չեն տեսել, ուղղակի լափում են...

– «Դրօշակի» անցեալ տարւայ 3 N N-ը թռաք!!! Ի՞նչ պիտի անէք. այստեղ մենք նորէն բաժանորդագրութիւնը սկսեցինք. գուցէ այս դրամների հետ 100 Ֆրանկ էլ «Դրօշակի» համար աւելացնեմ. 50 օրինակ ուղարկեցէք, գիւղեր եւ գանազան տեղեր – Ռուսաստան կ'ուղարկենք: «Դրօշակը» նոյն հասցեով կարող էք շարունակել:

– «Ալբոմի» հրատարակութեան համար պատրաստութիւններ կը տեսնէք թէ մոռացւեց...

– Ընդհանուր ժողովի մասին երեւի ձեզ լուր տուին. ես դէմ եմ այս տարի հրաւիրելուն. ատոր փոխարէն լաւ կը լինէր այս տարի միայն կազմել Տաճկաստանի ռայոնական ժողով, ուր մի լաւ հիմքերի վրայ կը դրւէր այստեղի գործը, մի քիչ միօրինակութիւն կը մտցնէիք շրջանների ու կազմակերպութիւնների մէջ, ապա եկող տարի կ'անէիք Ընդհանուր ժողով. չգիտեմ եթէ Ռուսիա շտապողական պահանջներ ունի, այդ ինձ առայժմ անյայտ է. ի՞նչ է Միքայէլի կարծիքը:

– Մեր կուսակցական գործերը ընդհանրապէս լաւ են, վերակազմութեան օրերում կ'ապրենք. «Հուրիաթը» շատերին էր մեզ մօտ նետել. այժմ կը զգան որ իրենց տեղը չէ. կամայ-ակամայ կը մաքրւեն... Մեծ ջանքեր կան կուլտուրական-պրոպագանդական ձեռնարկների վրայ. համարեա ամբողջ գործունէութեան ծանրութեան կենտրոնը հոտ է. մեր մտածելակերպը, աւանդութիւնները, գործելակերպը եւ այլն խոշոր ալիքներով շրջան են անում, ամենախուլ անկիւններում...

Ամառը հաւանական է պտոյտի պիտի ելնեմ Փոքր Հայք, ապա Մեծ Հայք:

---

1.- Միքայէլ Վարանդեանի:  
2.- Մէկ ժամանակ խօսք կար «Դրօշակ»ը Պոլիս տեղափոխել:  
3.- «Հոսանքներ», ինչպէս եւ «Վերածնող հայրենիք» – Միք. Վարանդեանի երկասիրութիւններն են, «Դրօշակ»ի մատենաշար:

Ինչպէ՞ս է Միքայէլի առողջութիւնը, քէֆը... Խեղճեր, մենակ մնացիք այդ տաղտկալի տեղը... Երանի ձեր համբերութեան:

— Հա՛, մոռացայ հարցնել. չէ՞ր կարելի «Դրօշակի» սպառուած Ն Ն-ը կրկին տպել տալ սակաւաթիւ եւ վաճառել. եթէ բանը մի քանի 100 Ֆրանկով գլուխ կը գայ արէք, շատերը կը խնդրեն ժողովածուների մասին...

— Ի՞նչ նոր հրատարակութիւններ ունէք...

Ընկերական ջերմ բարեկներով  
ԱՐԱՄ

1911 թ. մարտ 9

Օրդու

Յ. Գ.— Լաւ կը լինի որ ինձ մի մասնաւոր ու մշտական հասցէ տաք. «Դրօշակի» հետեւեալ Ն Ն-ը ուղարկեցէք.

904 թ. յունւար, փետրւար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս

905 յունւար, փետրւար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, օգոստոս, հոկտեմբեր

906 փետրւար, ապրիլ, մայիս, յուլիս, օգոստոս, նոյեմբեր

907 օգոստոս

1908 փետրւար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս, օգոստոս

1909 թ. յունւար

---

Փաստ. 790-19

## 308

Միրելի Միքայէլ!

Մի քանի օր առաջ նամակ էի գրել իմբագրութեան, յայտնելով որ առաջիկային կ'ուղարկեմ չէկով դրամը:

Ներփակ կը գտնես 500 Ֆրանկի չէկ. ատոր 200 իմ հաշւի դիմաց, 200-ը մոգական լապտերի տեղիս համար եւ 100 էլ այս տարւայ «Դրօշակի» համար:

Կ'ուղարկէք 50 օր[ինակ] «Դրօշակ», որի մի մասը կը տանք (35 հոգի) բաժանորդների, իսկ միւսը կ'ուղարկենք Ռուսիա եւ գիւղերը:

Այս բոլորից յետոյ աւելացնեմ եւ այն որ իմբագրութիւնը մի բաց նամակ էր գրել յիշեցնելով որ պարտքս ուղարկեմ. կը ցաւիմ որ այսքան ուշացաւ, թէեւ պատճառը ինձմէ անկախ էր, որի մասին մանրամասն առաջին նամակիս մէջ գրել եմ:

Ուրիշ նորութիւն չկայ. դրամ ստանալուդ մասին գրի՛ր որ ապահովեմ տեղ հասնելու մասին:

Բարեկներով՝ ԱՐԱՄ

1911 թ. մարտ 21

Օրդու



Միրելի Ռուբէն<sup>1</sup>!

Մի ամիս կը լինի կարծեմ պոստ-կարտիդ ստանալը, բայց չկրցայ պատասխանել. նախ ես հոս չէի, գնացել էի Տրապիզոն, ռայ[ոնական] ժող[ովի]: Եթէ ճիշտը կ'ուզես մարդ տեսնելու, որովհետեւ ես էլ ճիշտ այն վիճակի մէջ եմ հոգեպէս ինչպէս եւ դու: Վերադառնալուց յետոյ, դասեր, ազգասիրութիւն, (որ իներցիայով կ'երթայ, արհեստ դարձածի պէս) եւ զանազան պարապմունքներ թոյլ չտւին նամակ գրեմ քեզ:

Սկզբից պիտի ասեմ, որ կամաւոր ապուշ ես եղել, նորէն կը մնաս նոյնը. երեւի Եւրոպան էլ քեզ փրկելիք չունի... Ինչե՞ր ես մտածում. քեզ մոռացել ենք, այս եւ այն... է՛հ, թողնենք այդ կեղծ ձեւերը. եթէ մարդկային կեանքի մէջ յիշողութիւններ պահելը կամ ունենալը իրաւունք եւ օրէնք է, ամենալաւը եւ ամենաքաղցր յիշողութիւնները մենք կ'ունենանք: Գալով իրար հետ կապւած լինելուն, ես էլ մի տարօրինակ բան եմ տեսնում մեր մէջ. երբ մենք քով քովի ենք գալիս, կարծես իրար այնքան մօտ չենք, բայց որ հեռանում ենք, մի հոգեկան պահանջ կայ իրար հետ կապւելու, հոգով քով քովի լինելու:

Բալա՛մ, առանձնապէս ես տարօրինակ մարդ եմ: Ես միշտ իմ մասին այն կարծիքն եմ ունեցել որ ես տանելի մարդ եմ, որ կարող եմ ունենալ ընկերներ\*, բայց բանից դուրս է գալիս, որ դա Ֆրազա<sup>2</sup> է, իսկ իրողութիւնը այն է, որ ես վանող, կոշտ մի գիծ ունեմ, որ բոլորին պատկառելի հեռաւորութեան վրայ է պահում:

Չգիտեմ գործի համար, գործի ժամանակ ինձ սիրում են, լաւ ասում, իսկ յետոյ մի ի՛նչ որ է չէզոքացում: Եկել եմ այն եզրակացութեան, որ գուցէ ես պէտք եմ միայն գործի համար, իսկ իբրեւ մարդ անտանելի եմ... Ապացոյցներ կ'ուզե՛ս. ես էլ քեզ պէս ընկել եմ այս խուլ անկիւնը. հիւանդ, յոգնած, մէկը չկայ, որ ինքնաբերաբար հարցնի մեռա՞ր, թէ կ'ապրիս, կամ ի՞նչ կայ, ի՞նչ չկայ...:

Հոգեկանս դժոխք է. անհատապէս ես ինձ համարում եմ ամենադժբախտը:

Ռուբէն՛! գիտես, կեանքի բոլոր ծալքերում եղել ենք, ե՛ւ լաւ, ե՛ւ վատ. դեռ չեմ հասկացել երջանկութիւնը ո՞ւր է, կամ ի՞նչ է: Եթէ մինչեւ հիմա ես մի բան չեմ ունեցել, գուցէ սիրահարութիւնն է, իւր պրոգրակ<sup>3</sup> վերջաբանով: Բայց բանականութիւնս (կարծեմ ո՛չ զգացմունքներս) կ'ասէ որ հոն էլ սնանկութիւնն է, եւ այս խելքով ես չեմ խորհի ամուսնութեան մասին... Բայց վերջապէս ինչո՞ւ ենք ապրում: Ո՞ւր է անհատական երջանկութեան գաղտնիքը: Յոռետես մտքերը ինձ կը սպանէ. շատ անգամ եմ խորհել որ մարդ կարողութիւն ունենայ ջախջախելու\* ի՛ր գանգը: Բայց թոյլ եմ, չեմ կարծում որ կարողանամ:

Շատ անգամ էլ կարծում եմ որ գուցէ ջղերիս հիւանդութիւնն է ինձ այս թափառուամենբեր անել տալիս: Ամբողջ հոգով կը ցանկանայի եւ այդ փորձել. մտածում եմ որ եթէ մի տարի ռուսական մի որեւէ քաղաք մնամ, մթնոլորտը կը փոխւի, քիչ կը թարմանամ, լեզու կը կատարելագործեմ, կը կարդամ, բայց դրամ չկայ: Այս տարի 80 ոսկով պաշտօն գտայ, տարւայ գլուխ հագիւ 20 ոսկի աւելացնեմ ամառւայ համար. մի՛ բան էլ չեմ արել, ո՛չ ինձ համար, ո՛չ էլ ս[ի]րե[լի]ների համար, բայց կ'եր-

Թայ... առնւազը 1000 ռուբլի է բժշկելու, ապրելու համար... Բայց լաւը այն է, որ կարծում էի, որ չենք կարող աշխատել: Այս տարւայ փորձս ցոյց տւաւ որ կարող եմ լաւ վարժապետ լինել. այս էլ միտթարութիւն է: Վերջապէս կեանքը կարծես ինքնախաբէութեամբ է անցնում: Միշտ երազում ես լաւը, բայց բան չհասկացած պիտի ընկնես...

Գործի մասին կ'ուզես: Կարծեմ լաւ բան չկայ. գաւառներից յուսահատական աղաղակներ եմ լսում: Այս երազած ազատութիւնն էլ մի բան չէր: Ի՞նչ հասկացանք: Բռնակալութեան օրով գէթ գաղափարական-յեղափոխական տարրերի հոսանք, ազդեցութիւն կար, այժմ գործը մեծ մասամբ տափակացել է սիրողների ձեռքերում: Եւ կարծես մենք վռնդեցինք մեր տներէն, նորերը տեղաւորեցին:

Վարդանին<sup>4</sup> տեսայ, նա էլ լաւ վիճակի մէջ չէ. ամէնքը կարծես հիասթափւել են. սա ի՞նչ հասարակական ապատիա է: Ռուսական յեղափոխութենէն վերջը բաւական թափ, ոգեւորութիւն կար, այնտեղից նոյնիսկ այդ հոսանքի ալիքները հոս էլ կը հասնէր, իսկ այս տափակ երկրի յեղ[ափոխութիւնը], իր ներսն էլ կարծես ոգեւորելու խանդ չունի: Այժմ ինքնախաբէութեան նոր երազ եմ հիւսում յանձին գալիք ռուսական յեղափոխութեան...

Տղաներին (քեզ, Միհրան<sup>5</sup>) չեմ ուզեր գրել. մտածում եմ որ նոր կեանքը, գիտութիւնը թերեւս ձեզ կ'լանել է, նորից մտատանջութիւնների մէջ չձգեմ...

Միհրանին 2 ամիս կայ չեմ գրում. վերջին անգամ պահանջում է որ ուրախ տրամադրութեամբ նամակ գրեմ. վալլահ չկայ: Ես կ'ուրախանամ, երբ մի անգամ էլ քով քովի գանք խօսենք, եւ մի կուշտ ծիծաղենք. վստահ եղիր՝ որ նորէն կ'երիտասարդանամ. իսկ այժմ ինձ պառւաւած եմ զգում. մենակութիւնը ինձ համար ուղղակի տաղտկալի է. շուրջս անապատ մանր եսերի, շահերի եւ տգիտութեան, որոնք դեռ ոգեւորում են այն երեւոյթներով, ինչ մենք արել ենք դեռ մեր աշակերտական սեղանի վրայ...

Միհրանին «Ազատամարտ» կը ճամբեմ. եթէ դու էլ թերթ չես ստանում, քեզ էլ ուղարկեմ...

Կոմսը երեւի եկաւ հոդ, տեսած կը լինես: Սարգիսը<sup>6</sup> գիտես ամուսնացաւ: Է՛հ խելք... Վանի գործի դատի պատճառով ես սկսել եմ հեռանալ եւ Սարգսից:

Այդ ինդըրում իմ դիրքը ինձ թւում է, որ երկդիմի է, ինչո՞ւ չեմ գիտեր. մի ժամանակ որոշեցի լռել, եւ թողնել Սարգսին ինչ ձեւով ուզում է վերջացնէ, բայց այս եւ այն առթիւ արտայայտած լինելս, գրւած նամակներից այս եւ այն Ֆրագները, անջատ ձեւով հրապարակ է իջել եւ իմ մասին այնպէս բաներ խօսել տւել, որ ինձ թւում է ես չեմ մտածել այդպէս բան... Այժմ միջամտելն էլ, համարում եմ ինքնապաշտպանութեան նման մի բան. իսկ ներկայ դատը ինձ համար վերջացած է իմ խղճի դատաստանով, ո՛չ յօգուտ ինձ: Էլ ի՞նչ լարախաղացութիւններ պիտի անեմ... Կարծեմ հասկացար, իմ ամբողջ հիւանդութեան վիճակս, հոգով, մտքով եւ մարմնով:

Մշում Միմոնը կարծեմ բաւական կեանք է ստեղծել: «Բարձրի»<sup>7</sup> ինքնապաշտպանութեան եւ դպրոցների համար դիմումներ է եղած բոլոր մարմիններին. այստեղ էլ մի բան արինք: Երեւի մի 20 ոսկի առաջինի, նոյնքան էլ երկրորդի համար կը ճամբենք: Այս տեսակէտից ես պէտք է ասեմ յաջողակ եմ. հոս էլ դրսի ժողովուրդը, նոյնիսկ «Աղաների» լաւ մասը համակրութեամբ են վերաբերում ինձ. այնպէս

որ այդպէս բաներ կարող եմ անել. այդ բախտը կուրօրէն հետեւում է ինձ... երանի թէ անհատական կեանքում էլ այդ [բան] յաջողակ լինէի:

Դէ՛հ, կարծեմ երկար եղաւ, թէեւ բարոյապէս, գուցէ եւ տեղեկութիւններով սնանկ...

Հա, չմոռանամ ասել որ, Վաթանն<sup>8</sup> էլ Ատաբազար վարժապետ է. նա էլ ինձնից բէթար ապատիայի<sup>9</sup> մէջ է. անշուշտ ինքզինքը տւել է վիպաս[ան]ութեան. կարծեմ 3-4 բան է գրել. նա էլ դրանով է իրեն խաբում... Է՛հ, պիտի աշխատեմ նորէն գրել, եթէ կեանքիս մէջ նորութիւններ մտան, իսկ մինչ այդ քեզ հանգստութիւն կը ցանկամ...

Շատ շատ համբոյրներով՝ ԱՐԱՄ

Յ. Գ.— Արա՛, ես յոյսս կտրել եմ միմեանց տեսնելու: Իշխանն<sup>10</sup> էլ, երեւի կը գայ հոդ: Մի անգամ քովէ քով հաւաքւեցէք, խնդացէք, ինձ էլ յիշեցէք:

1.- Ռուբէն Տէր Սինասեան, որ այդ օրերուն ուսանող էր Ջուիցերիա: Գրութիւնը անթուակիր է, հաւանաբար 1911 թ. գարնան վերջերուն ուղարկուած: «Անգործութեան» մատուած Արամ իր խառնաշփոթ հոգեվիճակի մասին մտերմօրէն կը բացուի ընկերջ:

2.- Խօսք է:

3.- Սովորական, գլխացաւանք պատճառով:

4.- Վարդան Շահպազ (Տօնիկեան):

5.- Միհրան Թերլեմէզեան, նոյնպէս Ջուիցերիա ուսանող:

6.- Մարգիս Բարսեղեան (Շամի), որ նոր ամուսնացած էր ծանօթ գրագիտուի Պերճուի Պարտիզպանեանի հետ (1889-1940):

7.- Միմունը Ջաւարեանն է, «Բարձր»ը՝ Բարձրաւանդակ-Մասուն:

8.- Վաթան – ծածկամուն Ղեւոնդ Մելոյեանի. Ատաբազարը գիւղաբաղաք է Նիկոմիտիոյ շրջանին մէջ:

9.- Բէթար – աւելի վատ: Ապատիա՝ անհոգութիւն, անզգայութիւն:

10.- Վանայ Իշխանն է, Պօղոսեան-Միքայէլեան Նիկոլ:

Փաստ. 108-99

310

Ընկերներ<sup>1!</sup>

Օրդուէն 500 ֆրանք էի ուղարկել մոզական լապտերի համար: Փարիզէն եկող մի ընկեր մեքենան բերել է առանց պատկերների. կ'աղաչեմ այդ պակասը անմիջապէս լրացնել. այլապէս ես պիտի խայտառակեմ:

Պատկերները պիտի լինեն հայկական, ֆրանսական, ռուսական, պարսկական եւ այլ յեղափոխական-պատմական կեանք[ից]:

Արդէն Վանի համար ուղարկել էք, նոյն բովանդակութեամբ լինելու է եւ Օրդուիւնը: Պատկերները աշխատեցէք գունաւոր լինի:

Շտապեցրէք եւ անմիջապէս եկողով կամ փոստով ուղարկեցէք Պոլիս, վրան գրելով Օրդուի համար: Պատկերներու չափը ներփակ թուղթն է:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

1911 թ. օգոստոս 29/11, Կ. Պոլիս

1.- Գրութիւնը ուղղուած է Ժընեւ, «Դիօշակ»ի խմբագրութեան:

## Զ. – ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԶՈՒՒՑԵՐԻՈՅ ՄԷՁ

(1911 թ. Նոյեմբեր – 1912 թ. Օգոստոս)

Երկու տարի Օրտու մնալէ ետք, 1911 թ. կրթական տարեշրջանի աւարտին, Արամ կը հեռանայ գաւառական այդ քաղաքէն: Մեծ կարիք ունէր մթնոլորտ փոխելու, կազդուրուելու հոգեպէս եւ ֆիզիքսապէս, հոգալու մանաւանդ իր առողջութեան մասին, որ ըստ երեւոյթին վատթարացած էր յատկապէս զինք տառապեցնող յօդացաւին պատճառով: Նոյն տարուան Յուլիս ամսուն Արամը կը գտնենք Պոլիս, ուր հրաւեր կը ստանայ, իբրեւ «քաղաքս գտնուող գործիչ ընկեր», մասնակցելու ամսու 12ին սկսող տեղոյն Շրջանային ժողովին. նիստերուն ներկայ է մէկ-երկու օր միայն, յայտնապէս անտրամադիր:

Արամ Պոլիս կը մնայ շուրջ չորս ամիս, մինչեւ Հոկտեմբերի աւարտը: Այդ միջոցին Թուրքիոյ մայրաքաղաքին մէջ կը գումարուի Հ.Յ.Դ. Վեցերորդ Ընդհ. ժողովը, որ կը տեսէ ճիշդ մէկ ամիս (17 Օգոստոս – 17 Սեպտեմբեր): Վանի պատգամատր նշանակուած ըլլալով՝ Արամ կը մասնակցի նաեւ այդ համագումարին: Ապա, Նոյեմբերի սկիզբը, ընկերներու կարգադրութեամբ Արամ կ'ուղարկուի Զուիցերիա, հանգստանալու եւ դարմանուելու համար: Այս առթիւ Ռոստոմ 22 Հոկտ.ի (հին տոմար) նամակով Ժընեւի ընկերներուն կը գրէ. «Արամը հանգստանալու համար այդտեղ պիտի գար: Քշեցէք մի գիւղ, որ մարդու երես չտեսնէ»:

Այնուհետեւ Ժընեւ է, ուր հասած պէտք է ըլլայ Հոկտեմբերի վերջերուն կամ Նոյեմբերի սկիզբը: Ժընեւի մէջ Արամը կը գտնենք «Դոշակ»ի խմբագրատան մէջ, ուր կը զբաղի թերթի վարչական-յարաբերական գործերով, կը գրէ կենսագրութիւնները շարք մը նահատակուած ընկերներու: Ժընեւի դաշնակցական ուսանողներու «Ձանք» խումբի ժողովին մասնակցելով՝ դասախօսութիւն կը կարդայ «Աշակերտական միութիւնները պէտք է լինեն կուսակցական թէ ոչ» նիւթերու շուրջ<sup>1</sup>: Կը հրահրուի նոյն քաղաքին մէջ 1912 թ. Ապրիլ 9-14 կայացող Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուս. միութեան Չորրորդ համագումարին: Միք. Վարանդեանի ողջոյնի ուղերձէն ետք խօսք կը տրուի Արամին, որ կը յիշէ «այն երկար տարիները, որ ապրած եմ գաւառներում, երազել եմ տեսնել այն ինտելիգենցիան, որ գնալու է Երկիր զիրենք փոխարինելու: Եւրոպայի ուսանողութիւնը պէտք է միշտ յեղափոխական ճանապարհին հետեւի. պէտք է գործէ եւ յեղափոխականներ պատրաստէ»<sup>2</sup>: Նոյն համագումարի Ապրիլ 12 նիստին Արամ կը դասախօսէ, նիւթ ունենալով «Կուսակցական շերտատրումը Թուրքիոյ մէջ՝ համապետական տեսակետից»: Ատենագրութեան մէջ սեղմ զիծերով տրուած է Թուրքիոյ տարածքին ապրող տարբեր ազգութեանց ընկերային եւ կուսակցական բաղկացութիւնը<sup>3</sup>:

Արամի Զուիցերիա կեցութեան մասին հետաքրքրական նիւթեր կը պարունա-

կէ Հ.Յ.Դ. Պոսթրնի Կեդր. արխիւներուն մէջ պահպանուած թիւ 1911/77 թղթածրարը, ուր կը գտնուին Արամի գրչին պատկանող, ինչպէս նաեւ իրեն ուղղուած բազմաթիւ նամակներ եւ բացիկներ<sup>4</sup>: Անոնց մէկ կարեւոր մասը Օրտուէն ուղարկուած գրութիւններ են, ուր տեղույն Ազգ. վարժարանի հոգաբարձուներ կամ թաղականութեան անդամներ թախանձագին կը խնդրեն իրմէ վերադառնալ Օրտու եւ յառաջիկայ տարեշրջանին վերստանձնել դպրոցին տեսչութիւնը: Թղթածրարը կը բովանդակէ նոյնպէս Արամի եւ Ջուիցերիա ուսանող մէկ քանի ընկերներու միջեւ փոխանակուած գրութիւններ: Ասոնցմէ մէկը Վանի գործիչներէն Գերմանիա ուսանող Միհրան Թերլեմէզեանն էր, միւսը՝ Ռուբէն Տէր Մինասեան. երկուքն ալ Ջուիցերիա կ'ուսանէին Արամի հոն գտնուած միջոցին: Ռուբէնի հետ, մասնաւորաբար, Արամի ծանօթութիւնը կու գար հինէն, 1903 թ.ի Կարսի գործունէութեան օրերէն: Իրենց մտերմութիւնն ու փոխադարձ գործակցութիւնը պիտի շարունակուէր յաջորդ տարիներուն եւս, մինչեւ Հայաստանի անկախացումը:

Հակառակ Օրտուէն կատարուած կրկնակի դիմումներուն, Արամ վճռած էր վերադառնալ Վան, ուր կը հասնի ան 1912 թ. Սեպտեմբերի սկիզբը, Պոլիս եւ Թիֆլիս հանդիպելէ ետք<sup>5</sup>:

ԽՄԲ.

---

1.- Տես «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», Թ. հատոր, էջ 461:

2.- Նոյն, էջ 475:

3.- Նոյն, էջ 479:

4.- Հինք չունի Արամի կենսագիրներէն ոմանց յայտնած այն կարծիքը, որ Երուսալէն վերադառնալէ ետք ան տարի մը եւս պաշտօնավարած է Օրտու, որովհետեւ, ինչպէս ցոյց կու տան արխիւային փաստաթուղթերը, 1912 Յուլիս 29ին (նոր տոմար) Ժընեւէն Միհրան Թերլեմէզեանին ուղղած նամակին մէջ կը գրէ «այսօր ժամը 5-ին կամ վաղ առաւօտ 7-ին կը մեկնիմ»: Օգոստոսի առաջին օրերուն Արամ Պոլիս կը գտնուի արդէն, իսկ Օգոստոս 20ին Թիֆլիսէն կը գրէ Ռուբէնին «երեք օր է հոս եմ. այժմ կայարանում նստած սպասում եմ քրէնի», անշուշտ դէպի Վան ուղեորուելու համար: Այնպէս որ Երուսալէն վերադարձին ան չէր կրնար տարի մը եւս պաշտօնավարել Օրտուի մէջ:

5.- Այդ գրութիւններէն մէկ քանին, թուականի կարգով, տրուած է արդէն նախորդ բաժնին մէջ:

**Սիրելի Քեստանեան<sup>1</sup>,**

Քո 8/III թւակիր նամակդ ժամանակին ստացւել է. «Դրօշակ» ինչպէս գրել ենք ժամանակին, ձեր շրջանին չենք ուղարկել ե՛լ ո՛չ մի տեղ: Պատճառը պարզ է, որովհետեւ որոշել ենք առհաշիւ չցրել: Քո կարտը ստանալուց յետոյ սկսեցինք նորէն ձեր շրջանի զանազան մարմիններին թերթեր ուղարկել այս ձեւով: Ի դէպ է ասել, որ Ֆիլիպէն գրել էր որ 25 օր[ինակ] ուղարկենք փոխան 45-ի. մենք էլ խորհեցինք, որ մնացած մեծ քանակութեամբ ուղարկւած տեղերն էլ կիսենք, սպասելով ձեզնից վերջնական կարգադրութեան:

Ահա անցեալ եւ այս տարւայ ձեր շրջանի զանազան վայրերին ուղարկւած թերթերի քանակը:

	1911	1912
1) Ֆիլիպէ	45 օր[ինակ]	25 օր[ինակ] իրենց կարգադրութեամբ
2) Ռուսչուք	40 օր[ինակ]	20 օր[ինակ] մենք իջեցուցինք
3) Վառնա	15 օր[ինակ]	10 օր[ինակ] » »
4) Սոֆիա	8 օր[ինակ]	8 օր[ինակ] փոքր թւերը նոյնութեամբ թողեցինք
5) Պուրկաս	10 օր[ինակ]	Այս տարի չենք ուղարկել, որովհետեւ անցեալ տարւայ 7-12 N-ը յետ եկաւ փոստէն- կը նշանակէ հոն մարդ չկայ, կամ հասցէն է փոխւել- այս դուք պիտի ստուգէք:
6) Կոստանցա	24 օր[ինակ]	12 օր[ինակ]
7) Սուլինա	5 օր[ինակ]	5 օր[ինակ]
8) Գալաց	3 օր[ինակ]	3 օր[ինակ]
9) Բրախլա	4 օր[ինակ]	4 օր[ինակ]
10) Թուլչա	4 օր[ինակ]	4 օր[ինակ]

Ուրեմն Կ. Կոմիտէն թող շրջաբերականով դիմէ բոլոր վայրերին խնդրելով, որ ճշտեն իրենց անհրաժեշտ քանակը գրելով մեզ ու ձեզ, եւ որը գլխաւորն է դրամները առանց շրջաններ անել տալու ուղղակի փոխադրեն հոս «Դրօշակի» խմբագրութիւն:

---

1.- Գեորգ Քեստանեան, անդամ Պալքանի Կեդր. կոմիտէի. յիշատակուած քաղաքները եւս կը գտնուին Պուլկարիոյ եւ Ռումանիոյ սէջ: Նամակը ստորագրուած է «Դրօշակ»ի խմբագրութիւն, բայց ձեռագիրը Արամիւնն է:

Չմոռանանք ասել եւ այն որ եթէ մինչեւ առաջիկայ ամիսը, այսինքն մինչեւ ապրիլի թիւ, քանակները չճշտւեն եւ դրամները չուղարկեն թերթերը դադարեցնելու ենք: Այսպէս է որոշւած ո՛չ միայն ձեր շրջանի համար, այլ եւ բոլոր տեղերի համար, որովհետեւ «Դրօշակի» ծախքերը հոգալու համար ձեռքի տակ դրամ չկայ այժմ:

Առանձին նորութիւն չկայ այստեղ. Ամերիկան – իր Ռայոնական ժողովով – որոշել է «Դրօշակի» տունը գնել. արդէն 10.000 ֆր. ուղարկել է. մնացածներն էլ պիտի ուղարկեն: Այնպէս որ տունը կը գնենք:

Ընկերական բարեւներով  
«ԴՐՕՇԱԿԻ» ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ

31 մարտ 1912, Ժրնեւ

Փաստ. 60-23

## 312

Ընկեր Քեստանեան!

Ձեր 22/III թւակիրը ստացանք. զարմանում ենք որ դեռ թերթերը չէք ստացած. 8 օր է աւելի ի՛նչ ուղարկւած է բոլոր մարմիններին եւ գրւած այդ մասին ձեզ:

Եթէ թերթը այս անգամ ուշացաւ յանցաւորը դուք էք, քանի որ ժամանակին չգրեցիք թէ ո՞ւր եւ քանի՞ հատ ուղարկենք: Թէեւ արդէն գրել եմ որ ո՞ւր եւ ինչ-քա՞ն ենք ուղարկում, բայց մէկ էլ կրկնեմ անուններով որ աւելի հասկանալի լինի ձեզ համար:

Ահաւասիկ.

1) Գէորգ Մկրտչեան	Ֆիլիպոպոլ	25 օր[ինակ]
2) Ղուկաս Մինասեան	Սոֆիա	8 »
3) Ձեզ մօտ		20 »
4) Արշակ Սարուխանեան	Վառնա	10 »
5) Յակոբ Թորոսեան	Բուրգաս	10 »
կ'երթար, բայց փոստան ետ բերաւ. ստուգեցէք թէ ինչո՞ւ:		
6) Խաչիկ Կարապետեան	Սիլիվան	10 »
7) Գէորգ Սեֆէրեան	Կոնստանցա	10 »
8) Կոստի Նիկողոսեան	Սուլինա	5 »
9) Պետրոս Ագրոսեան	Գալաց	3 »
10) Խաչիկ Իգոյեան	Բրաիւա	4 »
11) Մարտիրոս Կոստանեան	Թուլչա	4 »

Ուրեմն ստուգեցէք եւ գրեցէք թէ որքա՞ն ուղարկենք, որովհետեւ ինչպէս որ առաջին նամակով ենք գրել, շատ ուղարկւող վայրերը կիսել ենք, սպասելով ձեր նոր կարգադրութեան:

Աւելորդ ենք համարում գրել նորէն կանոնաւոր հրատարակելու մասին, որովհետեւ քանիցս շեշտել ենք: Պէտք է գիտնաք որ «Դրօշակը» իբրեւ կուսակցական օրգան, կարող է եւ պէտք է կանոնաւոր հրատարակել միմիայն ընկերների եւ մարմինների բարոյական եւ նիւթական աջակցութեամբ:

Ի՞նչ որ Սմբատ-Բիւրատի մասին էք գրում, կը վարմանանք որ դուք նրան գրածը կ'ընդունէք կամ նրա գրածները կը կարդաք. նա ուղղակի փողոցային գրող է, անոնց պատմական աւանդութիւնները շահագործելու դիտաւորութեամբ:

Նրան ո՛չ ոք պատմական նիւթեր չի տրամադրել, եթէ ի՛նքը գլխին եկածը գրել է, կամ փողոցներից լուրեր է հաւաքել, մենք ի՛նչ կարող ենք անել կամ ի՛նչ դիրք կարող ենք բռնել:

Բարեւներով  
Ի դիմաց ընկերների  
ԱՐԱՄ

Ժընեւ, 1912 թ. ապրիլ 8ին

Փաստ. 60ա-56

### 313

#### [Միքայէլ Վարանդեանին]

Սիրելի Միքայէլ!

Ես այսօր կ'երթամ պանսիոն գտնելու ինձ համար. եթէ յարմար տեղ եղաւ կը մնամ, այնպէս որ մէկ էլ մի ամսէն հազիւ տեսնուենք:

Երեք պատկերներ գտայ, գէթ երկուսը՝ Յարութիւն Միրաքեան, որի կենսագրութիւնը ես կը կազմեմ, եթէ այն թողլի՞ծը ծննդեան թւականի ինձ ուղարկես եւ Դաւիթը անպատճառ դնելու [է] առաջիկայ համարներում: Իսկ Ջիլինկարեանն<sup>1</sup> էլ ես յարմար եմ գտնում, դու էլ երեւի ճանաչում ես: Մինչ այդ երեւի ես մի անգամ կը գամ:

Փարիզից պատկերները կ'ուղարկեն. Պոլսոյ համար 30-35 հատ շինել կը տաք, դրամ դեռ չեկաւ: Ես նորէն 20 ֆրանկ տւել եմ Հայկազունին. ինչո՞րեմ այդ 20 ֆ. տաս Անտոնին<sup>2</sup>, մէկ ուրիշ պիտի տայ: Այսպիսով Հայկազունին տւած կը լինենք 30 ֆրանկ, իրար վրայ հին եւ նոր հատը 50-60 սանտիմ է հաշւելու. Ես իրեն այդպէս էլ ասել եմ:

Ուրեմն մնաս բարով, եթէ ոեւէ բան մոռացել եմ կամ ոեւէ բանի համար պէտք ունենաս ինձ գրիր...

Բարեւներով՝ ԱՐԱՄ

14 ապր. 1912

1.- Դաւիթը՝ Ծոռ Դաւիթն է (Թումանեան). Չիլինգարեանը՝ (Յակոբ) Աշոտ Հայկունին:

2.- Անտոն Գոշ – ծածկանուն Անտոն Պոյաճեանի (1849-1927), նախկին անդամ Պաքանի Կ. կոմիտէին. «Դրօշակ»ի խմբագրատան պահապան, դիւանապետ:



Ընկեր Քեստանեան!

«Դրօշակ»ը այս տարւանից սկսեց կանոնաւոր լոյս տեսնել, ըստ Ընդհ. ժողովի որոշման:

Մնում է տարածելու խնդիրը. ձեր շրջանէն դեռ ո՛չ մի լուր չառաւ խմբագրութիւնը. խնդրում ենք նեղութիւն յանձն առէք եւ դիմէք բոլոր մարմիններին որ բաժանորդագրութիւն բանան եւ դրամները անմիջապէս հոս փոխադրեն: Ներփակ շրջաբերականէն կը տեսնէք որ ապառիկ ո՛չ մէկին չի ուղարկուելու: Լաւ կը լինի որ ամէն մի քաղաքում մի վստահելի ընկեր իր վրայ պարտականութիւն վերցնի իբրեւ գործակալ, այդ գործը վարելու: Խմբագրութիւնը յուսով է որ գաղութները պիտի ջանան «Դրօշակի» բիւզջէի որոշ մասը գոցել բաժանորդագրութեամբ: Դրամները հոս է փոխադրելու հաշիւների կանոնաւորութեան համար: Կը խնդրէի, մնացած վայրերին էլ նոյնը գրել:

Ես էլ հոս եմ, գիտես. բաւական կազդուրուել եմ. մի քանի ամսէն կը վերադառնամ: Քեզ կը գրէ եւ Միքայէլը:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

Ժընեւ, 16 [ապրիլ ?] 1912

Բարեւ սիրելի ընկեր,

Յուսամ կանոնաւորապէս ստանում էք «Դրօշակը»: Սի 3 ամիս Վիեննա էի, կ'աշխատէի Միսիթարեանների հարուստ գրադարանի մէջ. նիւթեր պիտի հաւաքէի: Ձեր հաւաքական նամակը նոր ստացայ:

Շատ բարեւներ  
ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

Միքայէլ!

Պոլսոյ մոզական լապտերի ապակիների համար պատւիրել եմ Հայկազունին որ շինի. լուր է ճամբել թէ «50 Փր. ուղարկեցէք ու ծախսերը տեսնեմ»: Սա շատ շուտ առաջով. խնդրեմ Անտոնին տաս 10 Փր.՝ ի հաշիւ այդ գործի, նրան խօսել եմ: Ես անձամբ Հայկազունին էլ կը տեսնեմ ու կը խօսեմ:

Պոլիս արդէն գրել եմ որ դրամ անմիջապէս ուղարկեն:

ԱՐԱՄ

**Միրելի Ռուբէն<sup>1</sup>!**

Երեւի Տրդատը պատմեց, որ տեղս բաւական լաւ է: Երեւի լաւ կը կազդուրւեմ. լեզու էլ կը սովորեմ, եթէ թանքալուծիւն չանեմ: Գրքերս դեռ չեմ ստացել: Այսօր միայն Տրդատէն նամակ առայ որ ուղարկել է: Վաղւանից կը սկսեմ լուրջ աշխատանքի:

Մելքոնը նամակ է գրել. մեծահոգաբար չ'ուզեր եղեր քո ոտանաւորիդ ոտանաւորով պատասխանել: Թէեւ կ'ասեմ որ վերջին 2-3 տարւայ պրակտիկան իրեն էլ վարպետ է դարձրել այդ ուղղութեամբ:

Լրագիրների նորութիւնները երեւի գիտես. ես շատ բան չգիտեմ: Մի բան երեւի չնկատեցիր – «Ազատամարտի» մէջ Վանէն: Պուլգարացի Սարգիսը<sup>2</sup> սպանել է մի փոլիս եւ ինքն էլ փախստական է: Ուրեմն փախստականութեանը ծայրը դուեց: Լաւը այն է որ սպանութիւնը չի անդրադարձել մասսայի վրայ... Հետաքրքիր են մանրամասնութիւնները...

Քննութիւններդ կարծեմ յաջողութեամբ տւիր. նամակ չգրելու սովորութիւնդ գիտեմ: Նեղութիւն չքաշես խորհել այդ մասին: Դու այն մարդկանցից ես որ կարծում ես գրել, բայց երբեք չես վերջացնում...

Դէ՛հ, մեզնից հարցնես, փառք Աստուծոյ ողջ եւ առողջ ենք: Միհրանի համար էլ մի տեղ գտնելու է: Նրա տեղը ամառը տաք կը լինի:

Համբոյրներով  
ԱՐԱՄ

[Նիուշատէլ] 1912 թ. ապրիլ 23

1.- Բացիկ ուղղուած Ռուբէն Տէր Մինասեանին:  
2.- Պուլկարացի Սարգիս – Միքայէլ Չաթալեան:

[Ռուբէն Տէր Մինասեանին]

Սիրելի Ռուբէն!

Նամակ առայ: Ես էլ այդ Պարսկաստանի խնդրով լուր չունեմ, չեմ էլ միջամտելու: Պոլսում եղած ժամանակս արդէն այն համոզումը կար որ հոն մենք կամաց-կամաց պէտք է չէգոքանանք, ռուսական կառավարութեան ականտուրաներ չանել տալու համար:

Միեւնոյն է. Թաւրիզը եւ Թեհրանը այնպէս են ահաբեկած որ այստեղի հրամաններով չեն շարժուի. սա կեանքի եւ մահու հարց է<sup>1</sup>:

Զարդարեան[էն] նամակ առայ. գրում է՝ «Մեր վիճակը այնքան էլ լաւ չէ, ընտրութեանց այս խայտառակ արդիւնքը շատ վնասեց մեզի. եղածը եղաւ, գոնէ Իթթիհատը պարկեշտութիւն ունենար իւր ստորագրած մեր միւս ազգային պահանջները իրագործելու: Հիմա այս գործին հետապնդութեան մէջ ենք:

Թերեւս Խաթակը վաղը մեկնի դէպի ներսերը, Սամսոնի գծով մինչեւ Ամասիա կամ .....<sup>2</sup>: Վաւերանք թերեւս շուտով մտնի խորհրդարան: Երէկ Վարդգէսն ալ եկաւ:

Միմոնի վերջին յօդածները ահագին սանսասիոն են առաջ բերել Իթթիհատի շրջաններուն, յոյներուն եւ առհասարակ Պոլսոյ օտար շրջաններուն մէջ...»:

Մնացածները թերթի եւ իր գրքերի մասին է, դու չես հետաքրքրում...

Հա՛, այն անտէր ցուցակը իսկոյն ուղարկիր ինձ թարգմանել տալու համար:

Ես այդ մասին ամէն բան կը հոգամ: Եթէ պատկերների խնդիրը լուծւեց մի ամսէն, մի օրով կը գամ ժընեւ, մնացած բաներն էլ միասին կը գնենք: Մնում է ուրեմն դրամի հարցը կարգադրելը:

Այդ լաւ լուր չէ որ ինձ դրամ են ուղարկել: Ես մինչեւ մայիս 20 դրամ ունեմ. ուրեմն նախ պիտի հոգալ պատկերների դրամը, յետոյ իմ մասին խորհել: Զգիտեմ ինչպէս ծախսեցինք այդ զահրմար դրամը, որ այդքան շուտով վերջացաւ:

Ուրեմն իմ դրամը կամ քոնը գալուց առաջին պատեհութեամբ 100-120 Ֆրանք դի՛ր Անտոնի մօտ: Հոն 100 Ֆր. կայ: Պատկերներինը կը շտկենք այսպիսով, մնացածն էլ Աստուած ողորմած է:

Քեզ համար տեղ կ'անենք: Թամա՛մ լրբացել ես, քէօփակ օղլի քէօփակ:

Պուլգարացի Սարգսի պատմութիւն այսպէս է: Հայոց Զորում երկու քիւրդ են սպանել: Այդ օրերը Սարգիսը<sup>3</sup> հոն է եղել: Կառավարութիւնը ուզեցել է նրա գլխուն կոտրի այդ գործը. փորձել են բռնել. զարկել է. անհատական եւ յիմար գոյն է կրում: Փոլիսը թաղել են մեծ հանդէսով: Թիւրքերը ի հարկէ գրգուել են եւ վախ կայ որ ընտրութիւնների վրայ ազդէ...

Մերոյեանի այսօր գրեցի. չմոռացայ եւ քո համբոյրները. շատ կատաղած է քո վրան. լաւ է որ գաղտնիքներդ չգիտէ, թէ չէ պամֆլէտ կը գրէ վրադ: Դարբինեա-

ներ նրան միշտ ասել է, որ քեզ հետ խօսելը վախ է, ի՛նչ որ լսես կ'երթաս կը գրես...

Միհրանը վերջապէս տեղափոխեցինք մեզ մօտ, կէս [ժամ] հեռու: Երէկ է եկել: Մի լաւ ընտանիք է: Պանսիոննէր մինակ ինքն է, դասով հետը 90 ֆրանք: Քեզ համար տեղ կ'անենք, Աստուած ողորմած է: Գալիս ես ինձ մօտ որ բան սովորես հա՛: Այդ գլուխդ մեռնի... կէս ժամ հեռու էլ քեզ տեղ կը գտնեմ, երկու օրիորդների պանսիոն ամէն մէկը 80-90 տարեկան:

Հա՛, տղայ Սարիբէկին ասա՛, որ Մօպասանը ուղարկէ ինձ կարդալու համար, եթէ իրեն պէտք չէ, իսկ Տրդատին՝ Մօննա-Վաննան:

Խաչիկի քէֆը ոնց է: Սարգիսը ի՞նչ կ'անէ: Ամա ինչպէ՞ս էք դուրս եկել պատկերի մէջ: Տօ՛ ոտքերդ էն ո՞ւր են եղել, դու ո՛ւր... Նամակներդ ստորագրէ:

Համբոյրներով՝  
ԱՐԱՄ

Խաչատուրը դեռ հոս է (!!!Արամ)

[Նիուշատէլ] 1912 թ. 6 մայիս

- 1.- Այնարկութիւն Պարսկաստանի մէջ ռուսական բանակի ի գործ դրած խստութիւններուն:
- 2.- Անընթեռնելի տեղանուն: Խաժակը Գարեգին Խաժակն է: Վարդգէսը՝ Յովի. Սերենկիլեան (Գիսակ):
- 3.- Այս Սարգիսը տարբեր է Պուլկարացի Սարգիսէն. Շամիլն է (Բարսեղեան):

318

Սիրելի Ռուբէն!

Գնացի՛ր եւ լուցի՛ր․ շատ խայտառակ վիճակի մէջ եմ․ դեռ դրամ չստացայ․ ամսականս մի կերպ հոստեղէն հոնտեղէն պարտ վերցնելով տուի, բայց ձեռքէ պարտքեր ունեմ չորս կողմս:

10-15 Ֆրանք ճարի, եւ անմիջապէս ուղարկիր այդ պարտքերի համար, մինչեւ տեսնենք Աստուած ինչ ողորմութիւն կը բերի մեր գլխուն:

Այն պատկերների համար էլ այնտեղից է հաշիւ եկել․ գրեցի Անտոնին որ պակասը լրացնելով (65 Ֆ․) միւս երկու հարիւրի հետ ուղարկի:

Դու ի՞նչ որոշեցիր անել: Բալամ, այս Ֆինանսով դու էլ չես կարող այդ մեծ pension-ում մնալ, որովհետեւ հոն հաշիւը շաբթէ շաբաթ են ուզում: Ես պատ[րաստ]-ւում եմ փախչել Պոլիս:

Երբ պիտի գաս․ ժամացոյցդ արել ենք․ ասլը քեզ վայել բան: Կառավերան ապրանք...

Այս դրամական հարցերը շտկի՛ր, Աստուած սիրես, մանաւանդ Լայպցիկ ուղարկելիքը, եթէ Անտոնը արդէն չի ուղարկել:

Բարեկներով  
ԱՐԱՍ

1912 թ. 12 յունիս  
Montezillon

319

Սիրելի Ռուբէն!

Գալը ո՞ւր մնաց․ մեռա՛ր մնացիր, ի՞նչ եղա՛ր․ գիտեմ որ դրամ չես ստացել, հասկացանք․ լուել եւ հոտ մնալը ինչո՞ւ համար է․ քո տունը չքանդուի, յաւիտենական թանքալ ես...

Ես չորեքշաբթի օրը կը գամ ժընեւ մի օրով․ նախ որ ատամս ցաւում է, պէտք է գնամ ատամնաբուժին, ապա մի քանի բաներ կան կարգադրելու:

Ուրեմն եթէ չես ճանապարհւել, սպասի՛ր ինձ:

Ուրիշ բան չկայ․ ապրում ենք․ Բարսեղը գնաց Փարիզ եւ քննութիւնները յաջող կերպով տւել է:

Բարեկներով  
ԱՐԱՍ

[1912 թ.] 24 յունիս  
Montezillon

Սիրելի Ռուբէն!

Թէեւ գրել էի որ այո կը գամ, բայց ըեւմատիզմս բռնեց եւ անկողին մտայ: Այն-  
պէս որ մնաց: Եղանակները շատ վատ կ'անեն հոս:

Դրամի համար ստիպւեցայ դիմել Միքայէլին: Գիտեմ պիտի փրփրես, բայց ուրիշ  
ելք չկար, իս՛ այստեղ չպիտի իրայտառակեմ...

Տրամադրութիւնս սոսկալի է... այնքան վատ եմ զգում ինձ որ չես կարող երե-  
ւակայել: Ա՛խ մեր կեանքը. 33 տարեկան մարդ եւ մէկը չունեմ, մօտիկ, վստահելի,  
որին կարողանաս դիմել եւ ժամանակաւոր մի 3-400 Ֆ. պարտք վերցնել:

է՛հ, վերջապէս, դու ինչո՞ւ ես պապանձւել. ինչու չես գրում:

Համբոյրներով  
ԱՐԱՄ

1912 թ. 27 յունիս  
Montezillon  
[Նիուշատէլ]

Սիրելի Ռուբէն!

Ինչո՞ւ պապանձւել ես. չորրորդ անգամն է գրում եմ, հէջ տեղիցդ շարժւել չի լի-  
նում:

Երբ պիտի գա՛ս. ախր հարկաւոր է սենեակ վարձել. օրերը անցնում են եւ եղած-  
ները բռնւում:

Լռութիւնդ աւելի հիւանդութեամբ եմ բացատրում. վախենում եմ ծանր  
հիւանդ լինես եւ ինձ չգրես:

Վերջապէս այսօր վաղը մի բան գրի:

Համբոյրներով  
ԱՐԱՄ

1 յուլիս [1912]  
Montezillon - Neuchâtel

322

Սիրելի Ռուբէն!

Վեր կաց անմիջապէս ե՛կ հոս, երկու շաբաթ կը մնանք միասին, կը խորհենք եւ յետոյ մի բան կ'անենք:

Տանդ հաշիւները փակի՛ր, յետոյ եթէ մնալու լինես, տեղ գտնելը հեշտ է:

Բարեւներով  
ԱՐԱՄ

1912 թ. յուլիս 4  
Montezillon  
[Նիուշատէլ]

323

Սիրելի Ռուբէն!

Ի՞նչ եղա՛ր, մի շաբաթ է որ գրել [եմ] որ անմիջապէս գաս, ի՞նչ է նորէն ձէնդ կտրեցիր:

Զլինի թէ նորէն բան է պատահել. թէ գալու ես, վեր կաց եկ, ժընեւ մնալու եւ խօսելու ո՛չ ժամանակ մնաց եւ ո՛չ էլ հալ:

Այստեղ նոր բան չկայ, նամակները ստացել եմ:

Բարեւներով  
ԱՐԱՄ

8 juillet  
Montezillon  
[Նիուշատէլ]

**Միրելի Ռուբէն!**

Ներփակ կը գտնես Մաթէոսի եւ Ղեւոնդի նամակները: Ուրեմն մեր կասկածները աւերորդ էին: Մաթէոսը տրամադրութիւն չի ունեցել գրելու:

Կարինէն Յովսէփ (բժիշկ) կը գրէ որ Ռոստոմը գնացել է Մուշ, ուսուցիչներով եւ աշակերտներով, մանկավարժական ժողովներ գումարելու եւ ռայոնական ժողով անելու համար: Նա էլ կ'ասէ որ Արամ եւ Ռուբէնը ո՞ր են... Բոլորը մի երգ են երգում: Սիմոնն է[լ] գրել է. դրութիւնը ծանր է ասում է, եւ գինւորական ղէպքեր է սպասուում. այսօրւայ թերթերը լիքն են լուրերով: Զինւորական գաղտնի մարմինը ուղղակի դիմումներ է արել Պոլսում Սուլթանին. կ'ասեն թէ Պոլսում 20 հաւատարիմ գինւորական չի մնացել Խոտիհատին...<sup>1</sup>

Ուրեմն բաները խարաբ է. մերոնք որոշել են ձէներնին քաշել. երեւի վախենում են ձայն հանել:

..... Ատամներս երեւի մինչ այդ պատրաստ կը լինի: Քանդեց նորէն շինելու համար:

Դրամի համար այսպէս արի. Տրդատը 500 Ֆր. էր ստացել, 100 Ֆ. վերցրի գնալու համար: Կ'աշխատեմ Պոլսէն հասցնել:

Ի հարկէ քեզ խաբեցի, Պոլիս չէի գրել, որ դրամ ուղարկեցէք... Ինչո՞ւ պիտի գրէի...

Յոնանը եւ Հորտանսը եղել են Կովկաս, Դիլիճան, Երկուսն էլ հիւանդ են. երեւի եկող տարի էլ Թաւրիզ կը լինեն: Սիմոն Յակոբեանին կանչել է, չի ուզում գնալ. նրան էլ «Հորիզոնում» մի յօդւածի պատճառով 102 յօդ[ւածով] պատասխանատւութեան են կանչել:

Ուրիշ բան չկայ: Արշակ վերադարձաւ հոս, երդւելով որ էլ գիւղը չի դառնալու:

Ուրեմն ես կ'երթամ. կը սպասեն Պոլսէն իմ նամակին. ի գուր տեղը թիթիգութիւն չանես: Ո՞վ ինչ ասի, դու քո խելքին մտիկ արա՛, գէթ լիսանսիէ եղի՛ր, այդ էլ նորէն մի բան է:

Մելոյեանը ուրեմն խելքին զօր տալով Փարիզ է հասել, բայց ի գուր, երանի թէ հոս գար, աւելի էժան կը լինէր:

Տեղեկութիւններ միշտ կը գրեմ, իմ մասին էլ շատ չխորհես, ի՞նչ էլ լինի, տեղ կը հասնեմ. եթէ չհասայ, էլ աւելի լաւ...

Ուրեմն մնաս բարով, մէկ-մէկ էլ դու գրի ինձ:

Շատ եւ շատ համբոյրներով  
քեզ եւ Միհրանին,  
ԱՐԱՄ

1912 թ. յուլիս 22, Ժընև

1.- Ակնարկութիւն Թուրքիոյ մէջ Իթթիհատի հակառակորդ Իթթիլաֆ կուսակցութեան իշխանութեան գլուխ գալու:



Սիրելի Ռուբէն!

Վերջապէս ատամներս լմնցաւ. այս գիշեր կամ վաղ առաւօտ Վենետիկի վրայով  
կը մեկնեմ: Ծախսերը նոյնն են եւ նոր տեղ տեսած կը լինեմ...

Շաբաթ օրը անակնկալ ձեւով վաւարեանէն 120 Ֆ. ստացայ... Այսօր էլ մի երկ-  
տող, որով գրում է «Առաջ երկտող մը գրած էի, իմացնելով, թէ ամսական գումար  
մը դրկելու անհնարին վիճակի մէջ կը գտնուիք... Այս անգամ կըրցայ հաւաքել եւ  
դրկել 120 Ֆ., որ կարծեմ բանի պէտք կընայ գալ: Ջանա՛ շուտ գալ, որ խորհրդակ-  
ցինք եւ շուտ մեկնիս, որովհետեւ անակնկալ կընայ պատահիլ...»:

Սա արդէն վերջին ապտակն է. իբր թէ ինձ գրած է, որ չի կարող ուղարկել եւ  
մանաւանդ որ դրամ է հաւաքել... մոռացկանի գանձանակով... Ինչեւէ. այս ինձ  
դեռ քիչ է: Ուրեմն սոսա փոսա տեղդ կը նստիս ծանր. իմ էշութիւնս բաւ է:

Աւելի մանրամասն կը գրեմ Պոլսէն՝ անցած դարձածի մասին:

Այսպէս մնաս բարեւ եւ յաջողութիւններ. քննութիւններդ համար աշխատի՛ր.  
ամէն բան կ'երթայ, ան է մնալու գլխուղ...

Համբոյրներով՝ ԱՐԱՄ

Մոռացել էի փոստանիչ դնել. մի ժամէն մեկնում եմ:

1912 թ. յուլիս 27, Genève

Սիրելի Միհրան!

Շաբաթ օրը անակնկալ ձեւով դրամ առայ. քեզ 50 Ֆ. կը փոխադրեմ, ամսա-  
կանդ ժամանակին տալու համար:

Ատամներս վերջնականապէս շինեց: Այս անգամ շատ հաստատուն է, չեմ կար-  
ծեր որ շուտով կոտորի:

Ուրեմն այսօր ժամը 5-ին կամ վաղ առաւօտ 7ին կը մեկնեմ:

Բարսեղը եկաւ: Համոզեց որ Վենետիկով գնանք: Նոյն արժէքն է, ուրեմն այդ-  
պէս կ'անենք: Վենետիկն էլ տեսած կը լինեմ: Մեզ հետ կ'երթայ եւ Զարուհին:

Այսօր Սիմոնից խմբագրութեան եւ ինձ վաւարեանէն նամակ կար. Սիմոնը վատ  
է նկարագրում դրութիւնը: Ի՛ր ասելով, Ներքին գործ[երի] նախ[արարութիւնը]  
միջոցների է դիմում վրէժ առնելու Իտալի[հատից]: Երեւի մեզ էլ ներսը կը խառնեն:  
Վաւարեանը կը գրէ որ շտապեմ, դրութիւնը ծանր է, որպէսզի խորհնք անելիքնե-  
րը: Վանէն իբր թէ նոր հեռագիրներ կան:

Դէ՛հ, այսպէս, նամակ սպասի՛ր Պոլսէն:

Ի դէպ, մի մոռանար Ֆրանսերէնիդ մասին ինձ գրել:

Շատ եւ շատ համբոյրներ  
Քո՛ւ ԱՐԱՄ

1912 թ. յուլիս 29, Genève

**Միրելի Ռուբէն!**

Ուղարկած նամակներս ստացած կը լինես: Միհրանի մի բաց նամակը երէկ ստացայ, գրում է որ շատ վատ հոգեկան վիճակի մէջ ես:

Տօ՛, կատարեալ աւանակ ես եղել, կարծում ես այստեղ մեծ բան կայ, մենք կերանք, մնացի՛ր դու: Լրագիրներին շատ մի՛ հաւատա, մեծ մասը փչոց է՝ երեւի մինչեւ ընտրութիւնները խաղաղ կը մնայ:

Կառավարութեան գոյնը դեռ պարզ չէ՝ մեր գաւառներում դրութիւնը աւելի վատ չէ նախկին կաբինէի ժամանակից:

Հա՛, վերջապէս քո Արտաշէսին<sup>1</sup> տեսայ: Երկու շաբաթ է միասին ենք՝ երէկ էլ խորհեցինք որ քեզ միասին նամակ գրենք: Քեզ շատ է ուզում տեսնել: Հեռուից ձայնը անուշ կու գայ: Լսել է որ մեծ մարդ — հերո՛ս — ես եղել: Ասացի, որ էլը այն էն է, փալանն է փոխւել: չի հաւատում: Վերջապէս կը պատահենք եւ իրար կը տեսնէք: Կարծեմ երկուսդ էլ իրար փոխւած չէք գտնի: Ինձ թւում է թէ՛ սա եւ թէ՛ դու, միշտ նոյն էք եղել բնաւորութեամբ՝ ինչ որ կաք եւ նոյնը պիտի մնաք:

Հա՛, այս անպիտան Արտաշէսը Պոլսոյ բոլոր բանաստեղծներին (որոնք շատ շատ են) աչքը վախեցրել է իր քննադատութիւններով: Բանաստեղծներն էլ վերջերս սկսել են աղերսագրերով դիմել, որ եթէ գրէ իրենց կենսագրութիւնները եւ ընտանեկան պայմանները!!! Իմանալուց եթէ քննադատէր, այդպէս դաժան չէր լինի... Վերջապէս սա էլ մեծ մարդ է՝ չկարծես, թէ Ախալքալաքի միակ մեծ մարդը դու ես եղել (Համոն<sup>2</sup> ձեր հաշւի մէջ չէ):

Շատ կ'ուզէիք լաւ գրող լինել՝ աշխատի՛ր քանի որ Արտաշէսը հոն է հասել: Գուցէ նրա մօտ աշակերտելով դու էլ «գրող» դառնաս...

Հա՛, մոռացայ, մեծ գրողը (ընկեր Մելոյեան) քովդ է եղել, թող քեզ դաս տայ (գեղեցիկի մասին) մինչեւ որ Արտաշէսը կը գտնես:

Դէ՛հ, մնաս բարով՝ մի վերջին խորհուրդ էլ, մեծ մարդ դառնալով նորէն բան չեղար՝ այժմ փորձի՛ր փոքր մարդ լինել, գուցէ ատկէ բան մը ելլէ...

Համբոյրներով  
Քո ԱՐԱՄ<sup>3</sup>

1912 թ. օգոստոս 4, Պոլիս

1.- Արտաշէս Չիլինգարեան, անլի ծանօթ Ռուբէն Գարբինեան ծածկանունով:  
2.- Խօսքը Օհանջանեան Համագասպի մասին է. երեքն ալ (Արտաշէս, Համօ եւ Ռուբէն) ախալքալաքցի էին:  
3.- Արամի այս գրութեան կցում է Արտաշէս Չիլինգարեան-Գարբինեանի նամակը, նոյնպէս ուղղուած Ռուբէնին: Աւարտին Արամ կ'աւելցնէ.— «Մա առաջին նամակը դիպրոմատիական ոճով է. երկրորդը տեսնենք...»:

Սիրելի Միհրան<sup>1</sup>!

Այսօր հասայ Պոլլա հազար ու մի նեղութեամբ (դրամապէս): Առանձին նորու-  
թիւններ դեռ չեմ առել, միայն Վռամեանը տեսայ, կէս ժամով, կ'երթար նախարա-  
րին: Կիրակի է, մէջտեղ մարդ չկայ:

Վանեցիներին տեսայ: Մայրիկիդ մասին բան չգիտեն:

Այսօր (Բչ.) Պարլամենտը պիտի փակեն, պատճառը անյայտ է, պիտի գնամ նիս-  
տի, վերջը երկար կը գրեմ: Մի քանի [օրից] պիտի ճանապարհւեմ դէպի Վան:

Դէ՛հ, ամէն բան կը գրեմ մանրամասն մի քանի օրէն:

Համբոյրներ քեզ եւ Ռուբէնին:

ԱՐԱՄ

1.- Բացիկ ուղղուած Միհրան Թերլեմէզեանին:

Սիրելի Ռուբէն<sup>1</sup>!

Երեք օր է հոս եմ. այժմ կայարանում նստած սպասում եմ թրէնի եւ ժամանա-  
կից օգտուելով քեզ գրում:

Այն երկիւղը որ մենք ունէինք հոս գալու մասին, անտեղի էր. ո՛չ թէ մենք, այլ  
ներսը գտնուող բժիշկները անգամ կարող են գալ եւ արդէն պատրաստուում են աշ-  
նան քոչել: Համեմատաբար տանելի կեանք է ստեղծւել:

Մերոնք լաւ են. այս օրերը առեւտրական հաշիւների վերաքննութեամբ էին  
գբաղւած. ես չհասայ. բոլորը նոյներն են: Արշակը հոգին է գործի եւ շատ լաւ է<sup>1</sup>:

Ձերոնց չկրցայ տեսնել: Գնացի փեսայիդ խանութը, ինքը հոն չէր, եղբայրն էր.  
ասաց որ ամէնքը ամառանոց են, միայն փեսադ է հոս: Նրան էլ տեսնելու պէտք  
չտեսայ:

Մեկնում եմ. ճանապարհին պիտի տեսնեմ Յոնանը<sup>2</sup>. յետոյ էջմիածին պիտի  
մտնեմ Սանասարեանի առթիւ:

Սաթենիկն էլ հոս է: Համօ-ին ոտը եւ ձեռքը դրել են... եւ երեւի կը տանեն<sup>3</sup>: Ու-  
րեմն ամէն բան կ'երթայ...

Միհրանը երբ կը մեկնի՛: Մելոն ո՞ւր է: Արտաշին շատ բարեւ<sup>4</sup>: Վանէն քեզ կը  
գրեմ երկար:

Համբոյրներ ամէնքիդ, քո՝  
[ԱՐԱՄ]

1912 թ. օգոստոս 20, Թիֆլիս

1.- Ալյանրկութիւն Կովկասի դաշնակցականներու դատական գործին առթիւ կազմակերպուած  
դրամահաւաքին (առեւտրական հաշիւներ): Արշակը Վռամեանն է:  
2.- Յոնան Դաւթեան, որուն հետ Արամ իրօք պիտի տեսնուէր Երեւանի մէջ:  
3.- Համօ Օհանջանեան, ձերբակալուած Դաշնակցութեան գործով. Սաթենիկը Համոյի քոյրն է:  
4.- Յաջորդաբար՝ Միհրան Թերլեմէզեան, Ղեւոնդ Մելոյեան եւ Արտաշէս Բաբալեան:

## Է.– ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՎԱՆ

Աւելի քան երեք տարիներու բացակայութենէ ետք, 1912 թ. Օգոստոսի վերջերուն Արամ կը վերադառնար իր այնքան սիրած Վասպուրական աշխարհ: Պաշտօնապէս հրաւիրուած ըլլալով վարելու Աղթամարի շրջանի գիւղական վարժարաններու տեսչութիւնը, բնականաբար առիթ պիտի ունենար մօտէն ծանօթանալու գաւառի հայութեան կեանքին, զբաղելու կուսակցական-կազմակերպական գործերով. յաճախ Վան էր, ուր կը վայելէր մեծ սէր ու յարգանք, մինչեւ իսկ թուրք պետական շրջանակներուն մէջ, որոնք ստիպուած պիտի ընդունէին իր անուրանալի հեղինակութիւնը:

Մահմանադրութեան տարիներուն Դաշնակցութիւնը լծուած էր գաւառական շրջանները դպրոցական ցանցով օժտելու աշխատանքին. իւրաքանչիւր գիւղ պիտի ունենար իր դպրոցը, գրադարան-ընթերցարանը: Վան քաղաքը այլապէս արդէն դարձած էր կեդրոն ազգային, կրթական եւ մշակութային եռուն գործունէութեան, ներգրաւելով յատկապէս նորահաս երիտասարդութիւնը, համախմբուած կուսակցական ակումբներու, լսարաններու եւ «Աշխատանք» թերթի շուրջ: Միեւնոյն գործը կը կատարէին հասարակական միւս հոսանքները եւս: Տիրական դէմքերն էին, բացի տեղական ուժերէն, Արշակ Վառմեանը (պետական երեսփոխան), Սարգիս Բարսեղեան (Շամի), Վանայ Իշխանը, Արամ եւ շատ ուրիշներ:

Դրական այս երեւոյթին կողքին, սակայն, կար գաւառը, ուր դարձեալ սկսած էր գլուխ բարձրացնել քրտական վտանգը, որ թաքուն եւ բացայայտ կերպով կը քաջալերուէր պետական իշխանութեանց կողմէ, մանաւանդ որ 1912-13 տարիներուն Վանի նահանգապետը – Իզզէթ պէյ, ազգութեամբ քիւրտ պաշտօնէայ մը – առիթ չէր փախցնէր մահմետական ազգաբնակչութեան մէջ հակահայ գրգռութիւններ յառաջացնելու համար: Հետեւաբար եւ անպակաս էին քիւրտ ցեղապետներու եւ զինեալ խումբերու շահատակութիւնները, որոնք կ'արտայայտուէին անհատական սպանութիւններով եւ հայաբնակ գիւղերու ասպատակութեամբ:

Ժընեւի եւ Պոլսոյ վերադաս մարմիններուն յղուած մամակներով Արամ Մանուկեան, ինչպէս նաեւ Վասպուրականի Կեդր. կոմիտէի միւս անդամները օրը օրին եւ մանրամասնօրէն կը պարզեն գաւառներու մէջ հայերու եւ քիւրտերու միջեւ ստեղծուած ելեկտրականացած մթնոլորտը, դաշնակցական թռուցիկ խումբերու եւ գիւղական պահակներու ցոյց տուած ուժեղ դիմադրութիւնը այն բոլոր նկրտումներուն դէմ, որոնցմով քիւրտ ցեղապետները կը փորձէին իրենց երբեմնի բռնապետութիւնը վերահաստատել հայկական շրջաններուն վրայ: Դաշնակցութիւնը, սակայն, արթուն էր եւ յաջողութեամբ կը վերահսկէր կացութիւնը՝ գիւղական պահակներու եւ շրջուն խումբերու միջոցաւ հակահարուած տալով թշնամական իւրաքանչիւր արարքի:

«Տասը օր չկայ որ ես եւ Իշխան գաւառ եկանք», կը գրէ Արամ 1912 թ. Դեկտ. 3-ին Արեւմտեան քիւրոյին ուղղած իր մամակով. «Երբեւիցէ այսքան մեծ ոգեւորութիւն եւ զոհողութիւն այս վերջին 10-ամեակում չենք տեսել: Ամէն գիւղ աղաչում է որ ինքնապաշտպան խմբերը իրենց գիւղ մտնէ»: Խօսելով ժողովուրդի զինւածութեան մասին, նոյն մամակին մէջ ան կը գրէ. «Դրութիւնը, ինչպէս առաջ էլ

են գրել, աւելի մխիթարական է քան յեղափոխութենէն (իմա սահմանադրութենէն, Ե.Փ.) առաջ: Այդ մասին ապահով եղէք. երանի թէ մնացած տեղերն էլ այստեղի կէտու չափ ինքնապաշտպանութեան միջոցներ ունենային»:

Այդպիսին էր կացութիւնը 1912-13 տարիներուն Վանի նահանգին մէջ, շնորհիւ ժողովուրդի զինումին եւ մարտական ոգիի զարթումին, գործ մը, որուն իրակա-նացման մէջ շօշափելի բաժին էր ունեցած ինքը՝ Արամ Մանուկեան:

\* \* \*

1913-15 տարիներուն Արամ Մանուկեանի կողմէ Վանէն գրուած միայն սակա-ւաթիւ նամակներ պահուած են Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ. պատճառը պէտք է փնտռել ընդի. պատերազմին եւ անոր ընկերացող ցեղասպանութեան մէջ, որոնց հետեւանքով կարելի չէ եղած ժընել փոխադրել կուսակցական գրականութիւնը: Այդ ճակատագրին ենթարկուած են եւ ի սպառ ոչնչացած ինչպէս Վանի, նոյնպէս նաեւ Օսմանեան կայսրութեան տարածքին գործող կուսակցական միւս միատը-ներու փաստաթուղթերը. այլապէս, աւելի ամբողջական պատկերացում պիտի ու-նենայինք այդ ժամանակաշրջանի անցուդարձերուն մասին: Այսպէս, առաջին աշխարհամարտը պատեհ առիթ պիտի ծառայէր թուրք կառավարութեան համար գործադրութեան դնելու հայ ժողովուրդի արմատական բնաջնջման ծրագիրը: Զօրահաւաք, զինաթափում հայ զինուորներու, այլեւայլ բռնութիւններ, գումար-ւած գաւառական շրջաններու մէջ թուրք կառավարութեան կողմէ քաջալերուած քրտական շահատակութիւններուն՝ անտանելի կացութեան պիտի մատնէին Վասպուրականի հայութիւնը: Արամ Մանուկեանի եւ պետական երեսփոխան Ա. Վռամեանի ջանքերն ու ցուցաբերած գործակցական ոգին ոչինչ փոխեցին կու-սակալ ճեւտէթ պէյի հակահայ ընթացքէն: Լարուածութիւնը ի վերջոյ պիտի յան-գէր իր տրամաբանական վախճանին, երբ Շատախ գաւառի մէջ պատահած դէպքի մը առիթով կուսակալը կ'առաջարկէ Արամին հաշտարար մարդ ուղարկել շրջան. սակայն 1915 թ. Ապրիլ 3-ին այդ առաքելութեամբ մեկնող Իշխանը Հայոց Չորի Հիրճ գիւղին մէջ դաւադրաբար կը սպաննուի իր երեք ընկերներով նոյն ինքն ճեւտէթի ուղարկած չերքէզներու կողմէ: Յաջորդ առաւօտ կուսակալը իր մօտ խորհրդակցութեան կը կանչէ Վռամեանն ու Արամը: Վերջինս կը խուսափի, մինչ Վռամեան անմիջապէս կը ձերբակալուի: Բաժակը լեցուած էր եւ ահագան-գի մատնուած հայութիւնը, անխտիր իր բոլոր խաւերով, կը դիմէ զէնքի՝ ինքնա-պաշտպանութեան համար: Այնուհետեւ ծանօթ է դէպքերու հոլովոյթը՝ Վանի մի-ամսեայ հերոսական ու յաղթական հերոսամարտէն մինչեւ հայ կամաւորներու եւ ռուսական զօրամասի մուտքը Վան եւ Արամի նահանգապետ նշանակումը:

Վան քաղաքի եւ Վասպուրականի միւս գաւառներուն մէջ մղուած կռիւները, ո-րոնց շնորհիւ բնաջնջումէ փրկուեցան հարիւր հազարատը հայեր, լայնօրէն լու-սաբանուած են հայ եւ օտար ականատեսներու վկայութիւններով եւ յուշագրու-թիւններու մէջ: Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ, ինչպէս նշուեցաւ, քիչ քան պահուած է այդ բոլորին մասին, մանաւանդ Արամի գրչին պատկանող: Ուստի ստորեւ տըր-ւած սակաւաթիւ այդ փաստաթուղթերուն միացուցած ենք 1915 թ. անցուդարձե-րուն վերաբերող այլ աղբիւրներէ քաղուած Արամի հեղինակած լրացուցիչ գրու-թիւնները:

ԽՄԲ.

[Արեւմտեան բիւրոյին<sup>1</sup>]

Ընկերներ!

Ստացել ենք ձեր բոլոր նամակները. մենք էլ ամէն փոստայի գրել ենք:

Գրութեան մէջ փոփոխութիւն չկայ լաւ իմաստով. ճիշտ է դէպքերը սուր չեն, բայց հոգեբանական կացութիւնը նոյնն է: Խնդիրը հոն է որ կառավարութիւնը ունենայ կարող միջոցի չի դիմում. այն բոլոր միջոցներով որոնք կիրարկուեցին կառավարութեան կողմէ, ձեր կամ մեր ճնշման տակ, բացի վնասէ շահ չբերաւ, որովհետեւ նրանց հանած ոստիկանական եւ զինուորական խմբերը մեր գլխուն ընկան: Օրինակներ բազմաթիւ են. յիշենք մի քանիսը. երբ հայեր են սպանուում հարցնող փնտռող չկայ. կամ եթէ կ'անեն ձեռի համար է. իսկ անցեալները երբ Գաւաշի եւ Գարգառի միջեւ սպանուեցին 3 քիւրդեր, ամբողջ ոստիկանութիւնը եւ զինուորները ոտքի հանեցին: Հայ գիւղերը սարսափների մատնեցին, Նարեկ եւ Փախներ գիւղում սողաներ եւ կանայք ծեծեցին: Փախներու հայ հովիւին զարթիթը ձեռքեր եւ ոտքեր կապել տալով — նշան է գրել եւ մի քանի անգամ համազարկի բռնել, որպէսզի խոստովանեցնէ որ քիւրդերը հայ յեղափոխականներէ են սպանւած: Այդ գիւղում բռնել են նոյն իսկ պալտով [?] ատրճանակները: Բելու գիւղում — ուր 2 մարդ սպանեցին — ոստիկանները որ ուղարկւած էին գիւղացիներին օգնելու, գիւղը խուզարկել, 2 տասնոց բռնել են եւ գիւղացիներին ծեծել: Ոստիկանները ալ ու ձախ կողոպտում եւ թալանում են: Բելուում ոստիկանները այնքան լաւ վերաբերմունք ունեն դէպի աւագակները, որ հայ գիւղացիք աւագակների պահանջած 50 ոսկին հաւաքել ու տարել են օնբաշուն որ տանէ յանձնէ աւագակ Մահմէին...

Հեռագրով յայտնել է գարգառցի 2 զինուորների սպանութիւնը... Մեր Գալուստը 5 հոգով կը գայ իրենց գիւղացիներին տուն առաջնորդելու (գաւառէ գաւառ եւ նոյն իսկ գիւղէ գիւղ առանց գէնք եւ խմբի երթեւեկել անկարելի է) որոնք Ամերիկայէն կու գային. Նազիկ գիւղում կը հանդիպեն Գաւաշում եւ Գարգառում գազանութիւններ անող ջոկատին. կուրից խուսափելու համար գիւղէն կ'ելնեն. զարթիթը նկատելով համազարկ բանալ կը տայ. 2-ը կը սպանուեն, 9 կը բռնուեն եւ մնացածները փախչելով կ'ազատուեն: Բռնուածների մէջ է Գալուստը, մեր ամենալաւ ընկերներէն մէկը եւ Գարգառի պահապան հրեշտակը: Կուսակալի փոխանորդը, որ իբրեւ լաւ մարդու համբաւ ունի, մեզ եւ առաջնորդի խոստացաւ, որ ազատ կը ձգի. հեռագիր տւաւ Ոստան: Պատասխանել են, որ գործը արդէն դատարան է յանձնուել. 24 ժամեայ մէջ հայերի գործը դատարան է յանձնուում, իսկ քիւրդ աւագակներ, Շաքիր, Չափար եւ այլն տարիներ ի վեր բանտն են առանց վճռի... Այդպէս կիսատ կը թողնեն ներում բերելու կամ ունէ միջոցով ազատելու...

Սպարկերտից եւ Խիզանից մի խումբ զինուած հայեր հոս հասան օգնութիւն խնդրելու: Շէյխ Սէյդ Ալին այժմ ամէն բան [է]. հայերին ժողովի է կանչել եւ յայտ-

նել որ Սահմանադրութիւնը վերջացած է, կամ ինձ պիտի ծառայէք կամ կը կոտորեմ ձեզ... Սպանութիւնները առթիւ քննութեան եկած ոստիկանները ու պաշտօնեաները ժողովրդին բարձրաձայն յայտարարել են, որ եթէ չէյիւր ձեզ չպաշտպանէ, կառավարութիւնը ոչինչ չի կրնայ անել: Յանդիմանել են որ հայերը գէշք են գնում կամ գործածում: Խրատել են որ խոփի եւ մանգաղի ետեւէն գնան ու ծառայեն Շէյ-խին<sup>2</sup>...

Տեսնելով որ հեռագիրները եւ Պոլսոյ հրահանգները չեն օգնում, ստիպուեցանք բոլոր գաւառներում խմբեր հանել... այժմ 8-10 խումբ կը պատէ: Կառավարութիւնը աւելի մտահոգ է մերոնց քան աւագակների հանդէպ: Մեր երեւալէն վերջ, մի քիչ միջնորտը խաղաղեց, ժողովուրդը սրտապնդեց: ամէնքը կը գանգատեն թէ ինչո՞ւ մենք ուչ երեւան ելանք... ինչ որ է, լաւ է ուչ քան երբեք: մենք մեր ուժերը մոբիլիզէ արինք: ժողովուրդը ինքնապաշտպանութեան համար հսկայական զոհողութիւններ է [անում]: միայն Շատախը 6 [?] ամսւայ ընթացքում 1500 ոսկի է տել:

Մինարէթի եւ Աւարայրի<sup>3</sup> հետ կապ պահել անկարելի եղաւ: վաղը Կայծակ եւ Փայլակ<sup>4</sup> կ'երթան դէպի այդ կողմերը, գործերը կարգի բերելու:

100 ոսկին ստացանք, առանց հասկնալու թէ ինչու համար: Բայց կարծում ենք փոխադրութեան համար կը լինի: եթէ 100-ի չափ էլ դրամ ունենայինք մեր շարժումները կանոնաւորելու եւ ուժեղացնելու շատ լաւ կը լինէր...

Ինչպէս գրել եմ երկու շաբաթ առաջ ռայոնական ժողով ունեցանք թեկնածուի եւ անապահովութեան առթիւ:

Թեկնածուի խնդրի արդիւնքը հաղորդեցինք հեռագրով: Ամբողջ գաւառի ընկերները դէմ էին թեկնածուի փոփոխութեան, պնդեցին որ Վառամեան պիտի մնայ: Վահանին<sup>5</sup> ուզող կար միայն քաղաքէն, այն էլ մեծ թիւ չեն կազմել նոյն իսկ ընդհանուր ընկ[երական] ժողովում: դրանց թիւը հասել է 30-ի-դոցանից միայն մի հոգի կար Ռայոնական ժողովում: մնացած 26-ը պահանջում էին Վառամեանին: Նոյնիսկ երիտասարդութիւնը որ անձամբ Վառամեանի հետ լաւ չէր եւ Վահանին աւելի կը սիրէր, այս անգամ պահանջում էր որ Վառամեան պիտի մնայ: Վահանի դէմ ընդհանուր դժգոհութիւնը ձեւակերպում էին սա կերպ: որ նա չխօսեց եւ պայքարի բնաւորութիւն չունի, որ նա չըջանի հանդէպ իր պարտքը չկատարեց, չեկաւ եւ յարաբերութիւններ չպահեց եւ պահանջներուն գոհացում չտաւ:

Կարող եմ ըստ ամենայնի ձեզ վստահեցնել որ ժողովուրդը, գէթ գաւառում, բոլորովին պաղած էր Վահանէն եւ որ այս ընտրութիւնը կատարել է բոլորովին ճշումէ եւ ազդեցութենէ գերծ...

Զմոռանամ ասել որ տեղիդ վանեցի ուսանողները դիմել էին, ո՛չ վայելուչ եւ կազմակերպական միջոցներով, իրենց թեկնածուն պաշտպանելու համար: Բոլոր գաւառները նամակ էին գրել, համոզելով որ առաջի անգամ թեկնածուն փոխել է անձնական հաշիւներով, որ պէտք է պաշտպանել Վահանի թեկնածութիւնը եւ այլն եւ այլն... Եւ երեւակայեցէք որ այս նեղ օրերը երբ անապահովութիւնը մեր ժամանակի մեծ մասը խլած է, մենք պիտի զբաղենք այդպէս չնչին հարցերով:

Ինչ եւէ, կանչեցէք դրանց եւ խօսեցէք որ անհամոթիւններ չանեն եւ եթէ բաներ մը ունին, թող ձեր միջոցով կամ ուղղակի մեր միջոցով անեն: սա կազմակերպութիւն է, Արշակաւան չէ...

*Այստեղ ընտրողական պայքար դեռ չի սկսւել. ո՛չ մենք սիրտ ունենք եւ ոչ էլ ժողովուրդը. շատերը պնդում են, նոյն իսկ մեր ընկերներէն որ այս անգամ պոյկոտ անենք: Ռայոնական ժողովը մերժեց, այդ քայլը վաղ համարելով, ասելով որ պէտք է սպասել ընտրութեան ժամանակ էլ հաստատելու կառավարութեան աչառութիւնը կամ անաչառութիւնը...*

*Ուրեմն վիճակներնիս այս է, ըոպէ առ ըոպէ պայթում կը սպասենք:*

*Դուք ձեր դիրքը որոշեցէք կառավարութեան հանդէպ. ձիւշտ է վերջնագիրը տալը...*

*Ի՞նչ պիտի անել... ուրիշ շրջաններ ի՛նչ են խորհում...*

*Ներփակը յանձնեցէք Վահան Փափազեանին:*

*Բարեւներով  
ԱՐԱՄ*

**19 սեպտ. 1912, Վան**

1.- Արեւմտեան բիւրօ – հոս, ինչպէս նաեւ յաջորդող նամակներուն մէջ, պէտք է հասկնալ Արեւմտեան բիւրոյի Թուրքիոյ կամ Պոլսոյ հատուածին ուղղեալ: Ժընեփ կեդրոնին համար Արամ կը գործածէ «Դրօշակ»ի խմբագրութիւն:

2.- Շէյխ Սէյիդ Ալի-Պիթիսի նահանգին մէջ բիւրօս աւատական ցեղապետ, հանրաձայնօք հարըստահարիչ հայ զինուոր: Աւելի ուշ, 1913 թ. Մայիսին, ի տես հայ մարտիկներու ցոյց տուած դիմադրութեան, ան գործակցութեան ձեռք պիտի մեկնէր Դաշնակցութեան:

3.- Յաջորդաբար՝ Սալմաստի եւ Խոյի հետ:

4.- Կայծակ Առաքել (Ապաճեան Տիգրան) եւ Դերձակեան Ռուբէն (Փայլակ):

5.- Վահան Փափազեանին (Կոմս): Խօսքը խորհրդարանական ընտրութեանց թեկնածուի մասին է:



«Դրօշակի» խմբագրութեան

Սիրելի ընկերներ՝

Անշուշտ վշտացած էք որ այսքան ժամանակ ձեզ նամակ չեմ գրել. խոստացել էի Արտաշէսին<sup>1</sup> գրել Ռուսաստանէն եւ ճանապարհներէն:

Բայց դժբախտաբար այնքան շտապով անցայ, եւ այնքան գործ կար որ հազիւ կարողացայ Պոլիս գրել միայն:

Նոյնը եւ այստեղից. մի ամիս կը լինի որ հոս եմ. 3-4 օր առաջ եկաւ եւ Վռամեանը. սոսկալի շատ գործ կայ. ընտրութիւններ, անապահովութիւն եւ այլն: Մարդ եթէ հազար կտոր էլ լինի, չի հասնի:

Մի քանի տեղեկութիւններ հաղորդեմ: Արդէն լրագիրներից հասկացաք անապահովութեան մանրամասները. դրա գլխաւոր պատճառը վերագրելու է այս դահլիճների փոփոխութեան. այստեղ այն տպաւորութիւնն է ստացւել, որ Սահմանադրութիւնը վերջապէս լմնցաւ... Ուրեմն հարկաւոր է ազատութեան բերած կարգերը ջնջել. եւ փորձել են քիւրդ աղաները վերականգնել իրենց հին իրաւունքները, ոչ միայն այն շրջաններում, որ նրանք շատ ուժեղ են, այլ եւ այն շրջաններում — Շատախ, Գաւաշ, Կարկառ եւ այլ, որ նոյն իսկ հին կարգերի ժամանակ շնորհիւ մեր յեղ. գործունէութեան ի սպառ ջնջւած էր: Սրան նպաստել է եւ այն, որ առաջին օրերը ժողովուրդը քիչ է դիմադրել (դիմադրութիւն եղել է Կարկառ եւ Շատախ) իսկ մնացած տեղերի հայերը համակերպել են, սկսելով ծառայել հին վիճակի պէս քիւրդ աղաներին. այստեղ ի հարկէ յանցաւոր ենք եւ մենք, որովհետեւ իսկոյն չենք երեւացել. քրդերը ասել են, որ վերջացել է ո՛չ միայն սահմանադրութիւնը այլեւ հայ ֆիդան... ի հարկէ ընկերները թէեւ ուշ գլխի են ընկնում եւ անմիջապէս խմբեր հանում. այդ կը լինի մօտաւորապէս մի ամիս. այնուհետեւ ոչ մի դէպք չէ պատահել, եւ քրդերը մտել են իրենց ծակերը: Բայց ի հարկէ ապահովութիւնը դրանով չի վերահաստատուում. մինչեւ որ աւագակութիւնը եւ նրանց պահողները չվերջանան, դրութիւնը չի փոխւի:

Առ այժմ մեր պահանջները կառավարութիւնից այդ է. եթէ մի բան կայ վրդովեցուցիչ, դա այն է որ 4 տարւայ սահմանադրական կարգերէն վերջն էլ, պաշտօնեաները դէպի հայերը այն վերաբերմունքը ունեն ինչ որ առաջ — խտրական ատելութեամբ բռնւած, հակաքրիստոնեայ եւայլն — եւ այս բանը նկատուում է նոյնիսկ կրթւած զինւորականների մէջ: Այս աչառութիւնն է որ մթնոլորտը կը թունաւորի: Հայերին զինաթափ կ'անեն եւ այլն. թէեւ ի հարկէ դրանք մեծ չափեր չեն առնում եւ մենք կարողանում ենք մեծ մասով յետ առնել:

Ռայոնական ժողով ունեցանք, ուր դրեց թեկնածուի եւ անապահովութեան հարցը:

26 ձայնով ընդդէմ 2-ի նորէն ընտրուեց Վռամեանը իբրեւ թեկնածու:

Անապահովութեան վերաբերմամբ սկզբունքով ընդունուեց արտակարգ միջոցների դիմել...

Ժողովուրդը լաւ գինուում է. 4 ամսւայ մէջ Շատախը 1500 ոսկիի գէնք է առել:

Մի անգամ բոլոր լեռնային գաւառները այցելեցի, թէ իմ դպրոցական եւ թէ կազմակերպական գործերով. նախ միսիթարականը այն է որ այս ճգնաժամային օրերում անգամ դպրոցներ են բացուում եւ երկրորդ որ ժողովուրդը տնտեսապէս բաւական կազմուրւել է, ընդհանրապէս — գէթ ոչխարները, քառապատկւել են: Այն գիւղերում որ 200 էր այժմ խօսուում են 1000-ի կամ 2000-ի մասին:

Գիւղացիների տրամադրութիւնը դէպի կազմակերպութիւնը նոյնքան բարձր է. միայն մեզ կը մեղադրեն որ խմբերը ուշ հանեցինք<sup>2</sup>:

Գործերի դրութիւնը այս վիճակի մէջ է:

Այսուհետեւ օր օրին դէպքերը ձեզ կը գրեմ: Այս տեղէն 18-20 նոր բաժանորդների դրամը ուղարկւել է եւ մինչեւ հիմա թերթ չեն ստացել: Խնդրեմ այդ թերթերը իսկոյն ուղարկէք, քանի որ դրամը փոխադրւած է:

Ես էլ Շատախէն 2 բաժանորդագին եմ բերել, դեռ ուրիշներն էլ պիտի հաւաքեմ եւ միասին ուղարկեմ: Խնդրեմ անմիջապէս 2 թերթ յունւարի N-էն սկսած ուղարկել այս հասցէին. երկուսը միացրէք, վրան գրելով. Van-Chatag. Mihran Ter-Margarian.

Իսկ ներսը մէկի վրայ գրեցէք Յովսէփ Չոլոյեան. ուրեմն երկուսը կ'ուղարկէք մէկ հասցէով մէջը միշտ մէկի թերթի վրայ իր անունը գրելով:

Եթէ դրամը չաւելացաւ նոր բաժանորդներով, առաջիկայ փոստային կը փոխադրեմ:

Ամաչում եմ խօսիլ ձեր 200 Փ. մասին. հաւատացէք որ մինչեւ հիմա էլ պարտքով եմ ապրում... Չգիտեմ թէ ի՞նչ անեմ:

Ընկերական բարեկենդրով  
ԱՐԱՄ

1912 թ. սեպտ. 28, Վան

1.- Արտաշէս Բաբայեան, բժշկական ուսանող, Ժընև:

2.- Խօսքը կը վերաբերի ինքնապաշտպանութեան նպատակով գիտերը որկուած զինեալ շրջուն խումբերուն:

«Դրօշակ»ի խմբագրութեան

Ընկերներ!

Ստացել եմ ձեր գրած նամակը, Շատախի թերթերը ստացուում են. շնորհակալութիւն. բայց չիմացանք թէ ինչն<sup>օ</sup>ւ տարւայ կէսէն բաժանորդ ունեցաք:

Այս անգամ էլ նոյն ծրարի մէջ (Վան-Շատախ Միհրան Տ. Մարգարեան),— աւելացնելու է երկու նոր «Դրօշակ» յունւար թւէն սկսած, մէկի վրայ գրեցէք 1) Յովսէփ Գարունեան, միւսի վրայ Յովհան Կարապետեան: Ուրեմն Շատախի ծրարը այսպիսով 4 կ'ըլլայ: Այս չորսի դրամը ուղարկեցի Պոլիս Տէր-Պօղոսեան վաճառականներին 20 Փ. որ ձեզ ուղարկեն. մի հատ էլ «Դրօշակ» յունւարէն ուղարկեցէք մեր Թորոսին<sup>1</sup>: Նրա հասցէն է. Վան-Արճէշ Թորոս Յակոբեան. կ'ուզէք գրեցէք Արճէշ իսկ առաջը — Վան Վիլայէթ, որ մէկ էլ Վան չգայ ու հոն դառնայ: Նա կը խնդրէր որ Վարդանի Յիշատակարանը ունեցող NN-ներն էլ իրեն ուղարկէք, որովհետեւ ինքն էլ կը գրէ, կ'ուզէ ստուգումներ անել: Նա այժմ մեծ վաճառական է Արճէշ!!!

Մեր դրութեան մասին ինչ գրեմ. ժամանակին չկարողացայ գրել մեր ընկեր Ռաֆայէլի<sup>2</sup> կենսագրութիւնը, այս անգամ էլ չեղաւ:

Ժամանակ չկայ գրական զբօսանքներու համար. այժմ մ'նացած զբօսանքները աւելի շատ եւ ցանկալի են. բայց եւ այնպէս նրա կենսագրութիւնը պիտի զրկեմ պատկերով, ի հարկէ եթէ ես էլ չմեռայ այս երկու շաբաթը...

Ռաֆայէլի մահը սոսկալի վատ ազդեց ամէնքիս վրայ, վատ ազդեց ոչ այն պատճառով որ չէինք սպասեր՝ մեզ ընկերներիս վրայ յարձակում, այլ այն տեսակէտով որ քաղաք թափւած հազար գիւղացիները ոեւէ դրական արդիւնքի չհասան կառավարութեան առաջ իրենց արած դիմումներուն. սոսկալի զզւած, գազազւած եւ վրէժով լեցւած տուն դարձան. տուն դարձան ու արիւնը արիւնով լւացին, այն էլ իրենց ձեռքով:

Անշուշտ լրագիրներից իմացաք որ Ռաֆայէլի սպանիչներէն գլխաւոր Հաջի Եաղուբ, իր որդին, Ռաշօ, մէկ ոստիկան եւ 4 ուրիշը սպանել է հայերի ձեռքով խրոխտենց գիւղի մօտերը. կառավարութիւնը խուճապի մատնեց. Ռաֆայէլի մահուանը մատը մատի չտուող վալին, հարիւրաւոր զօրք, ոստիկան եւ յատուկ քննիչներ ուղարկեց Կարկառ քննութեան համար, բայց դժբախտաբար բնութիւնը թոյլ չի տալու բան անել, ճանապարհները գոցել են. ոչ թէ զօրքերն ու ոստիկանները այլ սատանաները չեն կարող այժմ մտնել Կարկառի խորքերը: Հայերու կողմից բան չի եղել, ամբողջ գիւղը փախել (խրոխտենց) է մօտակայ գիւղերը: Հետեւանքները 8-10 օրէն կը պարզւի: Դէպքի տպաւորութիւնը շատ ծանր է կառավարութեան եւ քրդերու վրայ եւ շատ լաւ հայերու վրայ:

Դէ՛հ, էլ ինչ գրեմ, արդէն մի անգամ ասել եմ, որ դրուժիւնը այնքան ծանր չէ որքան եւրոպական, մանաւանդ ռուսական թերթերը կը գրեն. մենք աւելի լաւ ենք պատրաստած (ժողովուրդը) քան Վանի մեծ խուզարկութենէն առաջ<sup>3</sup>: Մի բան ցաւալի է որ այսպէս ժամանակը ո՛չ հնարաւոր է ընդհանուր հաւաքական խորհրդակցութիւն եւ ո՛չ էլ լայն ծաւալով շատ տեղերում մի ձեռնարկ:

Ռուսական քաղաքականութիւնը փոխած է երեւում. տեղիս ռուս հիւպատոսը մեծ եռանդով աշխատում է հայերի համար:

Կառավարութիւնը, մասնաւորապէս վալին, որ մի փիւս քիւրդ է, սկսել է պրովոկացիոններ, իբրեւ թէ մենք ռուսական աժանսներ ենք... Մեր եւ Վալիի դէմ մեծ պայքար կայ, կարդացէ՛ք այս օրերը մեր «Աշխատանք» թերթը, նա բաւական հետաքրքիր է դառել, եւ այդ պայքարի արտայայտիչն է:

Վերջապէս լաւ ենք. տրամադրութիւններս բարձր, նորէն համակել են վերածնունդի մի նոր իդէալով — երանի նա լինի արմատական բարեփոխութիւններ բերող քան թիւրք յեղափոխութիւնը:

Ռուբէնը ուր է: Լսեցինք որ Դուրան կ'երթայ<sup>4</sup>. այժմ այլեւս մնալու ո՛չ պէտք կայ եւ ոչ պատճառ: Իր ուզած գործերը բացւեց: Եթէ չէ մեկներ, թող մեկնի: Իրեն չգրեցի կարծելով որ արդէն ճանապարհին կը լինի:

Թող Ռուսաստանէն գայ, մեզ տեսնելուց յետոյ հոն գնայ: Շատ խօսելիքներ կայ:

Վահաբ կ'երթայ Սարուտան, տեղական գործերի եւ բժշկութեան համար: Վախ բան վերացած է համարում, տեսնենք:

Առ այժմ այսչափ. բարեւներ բոլոր ընկերներին, մանաւանդ Անտոնին<sup>5</sup>:

Համբոյրներով  
ԱՐԱՄ

1912 թ. դեկտ. 3, Վան

1.- Հաւանաբար Գալուստ Ալոյեանն է, որ ծանօթ էր Թորոս ծածկանունով:

2.- Ռաֆայել Երէցեան – ուսուցիչ եւ կուսակցական գործիչ Վասպուրականի գաւառական շրջաններուն մէջ. 1912 թ. Հոկտեմբերին սպաննուած քիւրտերուն կողմէ:

3.- Ալմարկոսթին 1908 թուականին Վանի զինապահեստներու գրաւումին:

4.- Ռուբէն Տէր Միմասեան միայն յաջորդ՝ 1913 թուականին պիտի վերադառնար Տարօն, Երուպայի մէջ ուսման աւարտին:

5.- Անտոն – ծածկանուն Սիմոն Չաւարեանի: Վահաբը Վռամեան Արշակն է, իսկ Սարուտանը՝ Կովկասի ծածկանունը:

[Արեւմտեան Բիւրոյին]

Ընկերներ!

Ստացել ենք ձեր մինչեւ նոյեմբեր 13 թուակիր նամակները, բացառութեամբ նոյեմբեր 10 թուակիրին: Չգիտենք այդ երբ եւ ինչ հասցէով էք ուղարկել: Բարի եղէք դուք էլ գրելու, թէ մեր որ թուակիր նամակներն էք ստացել. մենք ամէն փոստայի ձեզ կը գրենք առանց մէկը բաց թողնելու, շատ անգամ կը գրենք շաբաթական երկու անգամ:

Անցնեմ մեր դրութեան. կուսակալի հետ մեր յարաբերութիւնները ծայր աստիճան խզած են. նա սկսել է սոսկալի պրոպոկացիոն. բացի թերթերու մէջ լոյս տեսածներէն, այստեղ էլ խօսուում է որ Դաշնակցութիւնը պիտի ապաստամբութիւն առաջացնէ, որ իրեն տեռորի պիտի ենթարկէ, որ պիտի դիմէ դեսպանախորհրդին աւտոնոմիա ուզելու, որ դաշնակցականները ռուսական աժանսներ են, եւայլն եւայլն. վախճանը ո՛ր է չգիտենք. հաշտութեան ոեւէ կամուրջ չկայ. սա ապիկար մարդ է, պէտք է այս երկրի գլխուն սոսկալի փոթորիկ մը պայթեցնէ: Վախկոտ, թիւրք եւ քիւրդ աղաներէն ազդուող, սարսափելի քրդասէր. քիչ դեր չեն կատարում եւ հայ աղաները, սրանց մեր դէմ լարելու համար, իրենց անձնական շահերէն դրդւած:

Ձեր յանձնարարական նամակները նրան ուղղւած մեր մասին, արդէն ուշ էր, ինչպէս որ դուք էիք գրած, յամենայնդէպս ուղարկեցինք իրեն, ցոյց տալու համար որ մենք իրենց կարծած մարդիկը չենք:

Ինքնապաշտպանութեան մասին կը գրէք. կառավարութիւնը ոեւէ տրամադրութիւն չի ցոյց տալիս. ժողովրդին գէնք տալու որոշումը Պոլսէն դեռ չեկաւ. գալու էլ լինի, այս կուսակալի օրով միայն քրդերն են օգտուելու: Հայերը իրենց միջոցներով խորհում են ինքնապաշտպանութեան մասին. Դրութիւնը ինչպէս առաջ էլ եմ գրել, աւելի միտիթարական է քան յեղափոխութենէն առաջ: Այդ մասին ապահով եղէք, այս շրջանը լաւ է, երանի թէ մնացած տեղերն էլ այստեղի կէսու չափ ինքնապաշտպանութեան միջոցներ ունենային:

Տեղական կառավարութիւնը շատ խորթ աչքով է նայում ինքնապաշտպան հայերու վրայ: Մանդանի հայերը հերոսական կռիւ ունեցան Սէրդ բէյի հետ. նրան ծանր վիրաւորել են եւ ուրիշ 3-ին սպանել. խօսում են որ ինքն էլ վէրքից մեռել է: Բայց անցեալ անգամ նոյն հայերուն զինաթափ ըրին, բանտարկեցին, հագիւ հագար մի զօրով բանտից ազատել տւինք. բայց գէնքերը զնաց կորան... կ'ըսեն արգիլւած գէնքեր են: Այս եւ այն գաւառում դեռ շարունակում են զինաթափութիւնը հայերու, ի հարկէ այն մասերում ուր հայերը թոյլ են եւ ոչ լաւ կազմակերպւած, մնացած տեղերում զինւած խաղաղութիւն է:

Տասը օր չկայ որ ես եւ Իշխան գաւառ եկանք. երբ եւ իցէ այսքան մեծ ոգեւորութիւն եւ զոհաբերութիւն այս վերջին 10-ամեակում չենք տեսել: Ամէն գիւղ աղաչում է որ ինքնապաշտպան խմբերը իրենց գիւղ մտնէ: Կառավարութենէն բոլորովին յուսահատւած են. երբ կարեւոր հարցերու լուծում է լինում ասում են «Այդ

Թողեցէք ռուսի գալուստը»:

Հեռագիրներէն իմացած [էք] անշուշտ եւ կարկառի նոր դէպքը. խեղճ գառնե-  
րին, ապիկար կուսակալը առիւծ դարձրաւ: Դէպքը հետեւեալ պայմաններու տակ  
է տեղի ունեցել:

Ռաֆայէլի սպանման կազմակերպողը, ինքը անձամբ սպանողը Հաջի Եաղուբ,  
մեզ անհասկանալի պատճառով չձեռքազատեցին. կարծում էինք որ փախստական  
էր, բայց վերջը հասկացանք — դէպքէն յետոյ վալին է ըսել, որ քննութիւնը ցոյց է  
տուել, որ նրա վրայ ոեւէ կասկած չկայ: Այն ինչ 5 վկայով հաստատուած է, այն էլ  
դէպքի վայրը եղած վկաներով, որ Հաջի-Եաղուբ, առաջին կրակի նշանը ինքն է  
տուել եւ հետապնդելով սպանել է Ռաֆայէլին. ինչեւէ. այդ Հաջի Եաղուբ, Ռաջօ, որ  
տնից կրակել են եւ սպանել Ռաֆայէլին. Եաղուբի տղան, որ բանտէն ազատ էր  
թողուած, մի քանի ուրիշ քրդերու եւ մի ոստիկանի հետ կը գան եղեր խրոխտեց  
գիւղը, աշարի<sup>1</sup> մնացողը — խոտի — գանձելու: Այդտեղ յարձակման կ'ենթարկուեն  
անյայտ մարդկանց կողմէն եւ կը սպանեն: Դրանց հետ եւ ոստիկանը: Հաւարը կը  
հասնի գիւղ, քրդերը ոստիկաններու հետ միացած կը յարձակուեն գիւղի վրայ, ետ  
կը մղուեն, մի քիւրդ սպանելով եւ մի ոստիկան վիրաւորելով: 3-րդ օրը նորէն յար-  
ձակում եւ ետ վանում. 3-րդ օրը կառավարութիւնը նոր կը հասնի, քաղաքէն էլ մե-  
ծաքանակ զօրք էին տարած:

Խրոխտեց գիւղը ամբողջապէս փախել է մօտակայ հայ գիւղերը. գայմազամի<sup>2</sup>  
գնալէն վերջ ինչ եղել է, չենք գիտեր. կուր չլինելը հաստատ է. բայց որքան բան-  
տարկեալներ կան չգիտենք: Կուսակալը, մուֆթին եւ ռէակցիոներու թեամբ տեղս  
յայտնի Սատրկը ճամբել է Ոստան, այն կողմերու քրդերուն պրոպագանտա անե-  
լու: Իբրեւ թէ շարժում չանել, որովհետեւ դրութիւնը վատ է, ռուսները ներս կը  
մտնեն: Ռուսի սարսափը ընդհանուր է, կուսակալից մինչեւ ետին քրդու համար:

Սպանուածները 8 հոգի են. Հաջի Եաղուբ, իր որդին, Ռաջօ, մի ոստիկան եւ չորս  
ուրիշները եւ բազմաթիւ վիրաւորեալներ... ըստ առնուած լուրերու հայերին վնաս  
չի եղել:

Դէպքի մանրամասները եւ հետեւանքները կը գրենք եկող անգամ. ի հարկէ շատ  
վատ է ազդել կառավարական շրջանակներու եւ լաւ՝ հայերու վրայ:

Զիֆոնի գործը յաջող է. բայց այդ թողել ենք Թորոսին<sup>3</sup>, իր ռիսկով եւ յօգուտ իրեն  
անելու համար: Մենք միայն դրամական եւ բարոյական օժանդակութիւն ենք տալու:

Մինարէթէն<sup>4</sup> բան չկրցանք բերել, այս վերջին շարժումներու պատճառով:

Ռուբէնը եկա՞ւ Դուրանի համար թէ ոչ: Հոն մարդ է դնելու: Հաւանօրէն գա-  
րուներ պիտի պայթի. ամպերը շատ են խիտ եւ օդը ծանր:

Գրեցէք մեզ թէ ի՞նչ կ'անեն մնացած վայրերու ընկերները: Ստացանք վերջին 50  
ոսկին:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

1912 դեկտ. 3, Վան

1.- Աշար — բերքի տասանորդ տուրք:

2.- Գաւառապետի:

3.- Թորոս — ծածկանուն Գալուստ Ալոյեանի, որ կը գրադէր զէնքի մատակարարումով (Զիֆոն):

4.- Սալմաստէն: «Վերջին շարժումները» ակնարկութիւն է Պարսկաստանի սահմանադրական  
շարժումներուն:

### Արեւմտեան Բիւրոյին

Ընկերներ!

Ստացել ենք ձեր նոյեմբեր 28 թւակիր նամակը. կը հաստատենք մեր դեկտ. 3 թւակիրը, ուղարկւած նորէն, նոյն ճանապարհով:

Դրութեան մէջ նոր փոփոխութիւն չկայ. Կարկառի վերջին դէպքը դեռ օրւայ հարց է: Հայերը վախէն դատարկել են 3-4 գիւղ.— Խրոխտենց, Հաղթ, Զկոր եւ Կիր-ճի[?] գիւղը մնացել են միայն կանայք: Իսկ առաջին 3 օրը, միայն կենդանիները, որոնցից շատերը անօթութենէ մեռած են...

Նոր սպանութիւններ չկան, դէպքի օրը սպանւել է մի այլ գիւղում՝ Բերկրի մի խեղճ հայ, բայց 40էն աւելի փախստականներ կան, որոնց մէջ է Խրոխտենց տէրտէրը. այդ շրջանի մեր նախկին բոլոր զինւորները փախստական եղան, այս ձեւով այժմ Ոզմ եւ մնացած տեղերի փախստականները միջին հաշուով 150-200 փախստականներ կը լինեն:

Ինչպէս գրել եմ, կառավարութիւնը շատ փութկոտ եւ խնամքով հետապնդումներ կը կատարէ, հայ գիւղերը խուզարկել, զինաթափ անել, անմեղ հայեր բանտարկել. նոյնիսկ դէպքի ժամանակ Խրոխտենց գտնւող հայ մուքաշիր Մամբրէն, որ դէպքի լուրը բերել է Ոստան, շղթակայակապ բանտն է.— որովհետեւ հայ է...

Կուսակալը կոմիսիոն որոշեց — հայերէ եւ քրդերէ — մեծ մասամբ աղաներ — դէպքին վայրը քննութիւն կատարելու. նպատակն է ապացուցել որ նախապարձակը հայերն են եղել: Մի բան որ իրենք հայերը արդէն չեն ուրանում. Հաջի Եաղուբի սպանողները նամակ են թողել, բայց պարզած են, որ սպանութիւնը կատարած են ինքնաբերաբար, այն պատճառով, որ գտած՝ թէ կառավարութիւնը ո՛չ միայն չէ ձեռքաւարած ոճրագործը, այլ նրան «թասլաթի» գործ է յանձնւած. չհանդուրժելով այս անարդարութիւնը, յանուկ օսմանեան երկրի անդորրութեան սպանած են Հաջի Եաղուբ եւ ընկերներ, որոնք ամէնքը մեղադրւած են Ռաֆայէլի սպանութեան մէջ:

Կարկառի քրդերը հայերի նման սարսափի մէջ են. մի բնորոշ բան. դէպքի օրը 5 հայ պատահաբար կը գտնւեն Ռաֆայէլի սպանութեան տեղ — Կարկառ քիւրդ գիւղը — քիւրդերը լսելով Հաջի Եաղուբի սպանութիւնը այդ հայերէն կը խնդրեն որ իրենց գիւղէն հեռանան, առարկելով «Զեր արիւնը վերցրէք, գնացէք մի անգամ ըրիք տեսանք համը...»:

Իսկ Ոստանի քրդերը աւելի գրգռւած են, ժողովներ են արել, որոշումներ տալով կոտորածներ սկսել. բայց եղել են քրդեր, որոնք առարկել են, որ այժմ կոտորածներ անել չենք կարող, որովհետեւ հայերը զինւած են, մենք վրայ կ'երթանք: Բայց եւ այնպէս աղաները կը խառնեն, մասնաւորապէս Տախմանից (Գաւաշ) Հիւսէին աղան, որը Ռաֆայէլի սպանութեան թելադրողներէն մէկն է: Իսկ ինչ կը լի-

նի վերջը չգիտենք. գաւառներից եկած նամակները, զանազան տեղերէ, միաբերան կը պնդեն որ եթէ կառավարութիւնը փորձէ հայ գիւղերը խուզարկել, գինեթափ անել, փախստականներ բռնել, դէպքերը անխուսափելի պիտի լինեն:

Կուսակալը նորէն իր հակահայ մանաւանդ հակադաշնակցական պայքարի պատնէշի վրայ է. աւելի կատաղած, աւելի սարսափած վերջին դէպքերէն, կը փորձէ յօգուտ իրեն մագմաթա<sup>1</sup> մը ստորագրել տալ, այն ինչ հակառակը ետեւէն ելաւ...

Կը գարմանանք որ այս բոլորէն վերջը դեռ պատրիարքարանը անոնց մարդու տեղ դրած նամակ եւ հեռագիրներ կը գրէ...

Արդէն ձեզ գրած էինք որ առաջնորդարան եւ Աղթամար «յիշատակագիր-հեռագիր» մը պիտի ներկայացնեն պատրիարքարան. այդ եղաւ անցեալ փոստային, պատճէնը կը ներփակենք: Ժողովրդի լայն խաւերը անտեղեակ այդ որոշումէն ինքնաբերաբար մէկ յիշատակագիր կը պատրաստեն, — ներկայացնելու հիւպատոսներուն եւ պատրիարքարան, պահանջելով եւրոպական կոնտրոլ եւ Յ1-րդ յօդուածի կիրարկում... վերջապէս արտաքոյ կարգի տրամադրութեան մէջ է ժողովուրդը...

Զիֆոնի գործը, մասնաւորների ձեռքով ձմեռւայ պատճառով դադարեց համարեաւ. սոսկալի թանգացաւ. 10-ը-12 ոսկի. իսկ Մ. 1-25-27. բայց նորէն մեծ պահանջ կայ:

Թորոսը բան մը չըրաւ: Մինարէթէն բերելու դիւրութիւնները վերջացան, ձիւնը ամէն բան փակեց<sup>2</sup>:

Չմոռանամ յիշատակել մի բան. անցեալ փոստային պատրիարքարանէն նամակ մը եկաւ Աղթամար, որով կը հրահանգէ, որ այսուհետեւ դիմումներու եւ առհասարակ ամէն կարգի պետական ինդիւններու մասին պէտք է առաջնորդել Վանի առաջնորդարանի հրահանգներով. այսինքն ժողովուրդին մօտ կանգնած Աղթամարը քաղաքականապէս թաղեցին... Հապա ի՞նչ կ'ընէին մեր ընկերները այդ վճռի օրը. զարմանալի է. ե՞րբ պիտի ներդաշնակութիւն լինի մեր քայլերու մէջ: Չէ՞ր կարելի վերջապէս հաստատել տալ Աղթամարի եւ քաղաքիս երեսփոխանական եւ քաղաքական ժողովները, որով գէթ ժողովուրդը կարողանայ իր կամքը արտայայտել:

Այսօր սկսեց մեր ռայոնական ժողովը. ամէն կողմից ընկերներ կան, բացի դէպքերի վայրերէն. որոշումներու մասին եկող անգամ<sup>3</sup>, բայց առհասարակ տրամադրութիւնը շատ բարձր է. դէպքերը աւելի ուժեղացրին կազմակերպութիւնը. ըստ ամենայնի գոհացուցիչ վիճակի մէջ ենք: Ասե՞նք որ մարդիկ չկան գործերը ղեկավարելու համար, որ գործերի ծանրութեան տակ կը ճգմուենք. բայց ինչո՞ւ համար, չէ՞ որ ընկնողը պիտի քաշէ...

Ի դէպ, Իշխանի դատական հարցը նորէն ռայոնական ժողովի սեղանի վրայ եկաւ, հէնց իր պահանջումով. երեւի պիտի որոշւի որ ձեզ դիմեն վերջին որոշումը տալու. երբ պէտք է վերջապէս որոշւի այդ հարցը... Մեզ ամէնից շատ մտատանջողը ներկայ ծանր դէպքերն են. չգիտենք ի՞նչ պիտի անել, այսպիսի առիթները այլեւս ուշ կ'ընկնի մեր ձեռքը, իսկ դուք զբաղւած էք մեզ հրամեցնելով հայ գինեւորներու հաւատարմութեան եւ քաջագործութեան զրոյցներով<sup>4</sup>. տնաշէններ, բանը բանից անցել գնացել է. երկու թշնամի բանակները դէմ առ դէմ են կանգնել, դուք կ'ասէք որ այդ լուրերը տարածենք շրջանի իսլամներու մէջ. ուշ է, շատ ուշ...



*Թէ դուք, թէ Փարիզէն տեղեկագիրներ են ուզում. ի՞նչ տեսակ տեղեկագիրներ, ի՞նչ ուղղութեամբ, ծաւալով եւայլն. օրը օրին դէպքերը մանրամասն ձեզ գրում ենք, էլ ժամանակ որտեղից է որ տեղեկագիրներ էլ կազմենք: Վահաբի Ռուսաստան գնալը անցեալ անգամ գրեցինք. երեւի նա ձեզ կը գրէ:*

*Ընկերական բարեկներով  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ*

1912 թ. դեկտ. 10

*Յ. Գ.— Ժիրայրէն<sup>5</sup> խնդրել ենք որ թերթի («Աշխատանքի») համար գրեր զնի-յան ձնարարական նամակ եւ գրերի տեսակը կցել ենք. դրամը Տէր Պօղոսեանին մօտ է մնում:*

1.- Մեղադրագիր:

2.- Խօսքը կը վերաբերի Պարսկաստանի սահմանադրական կոիւներու ընթացքին գործածուած ռազմամթերքի մնացորդին Վասպուրականի շրջան փոխադրութեան գործին: Մինարէքը ծածկանունն էր Սալմաստի: Թորոսը՝ Գալուստ Ալոյեան, Ջիֆոնի գործին պատասխանատուներէն:

3.- Նշուած ժողովի որոշումներու մասին տեսնել «Նիւթեր» Ժ. հատոր, էջ 242-246:

4.- Ակնարկութիւն Պալքանեան պատերազմի ընթացքին հայ զինուորներու վերաբերումին:

5.- Ժիրայր – ծածկանուն Բարթոլ Ջօրեանի (1879-1915):

### Արեւմտեան Բիւրոյին

Ընկերներ!

Ստացանք ձեր դեկտ. 1 եւ Անտոնի<sup>1</sup> տղաներու հետ գրւած նամակները:

Կը հաստատեմ մեր դեկտ. 10 թւակիրը, ուղարկւած Վրէժի<sup>2</sup> միջոցով:

Անցեալ անգամ յիշատակագիրը մոռացմամբ մնաց. այս անգամ կը ներփակենք:

Այս շաբաթ մեծ նորութիւններ չկան. շեշտենք եղածները:

1) Կարկառի դէպքի հետեւանքով փախստականները դեռ նոյն վիճակի մէջ են, փախած են ո՛չ միայն կառավարութեան կողմէ փնտուռող 30 հոգին, այլ 3 գիւղերու ամբողջ տղամարդիկ:

Կառավարութիւնը 3 տեղով Գաւաշ եւ 3 տեղով Կարկառ գօրք եւ ոստիկաններ է դրած: Եւ այն էլ այնպիսի տեղեր եւ այնպիսի ձեւով որ պարզ երեւում է, որ ինքնապաշտպան խմբերը հետապնդելու կամ նրանց շարժումները խանգարելու համար [է] : Սա խոստովանում են հէնց իրենք պաշտօնեաները... Այն ինչ երբ հայերը սպանւեցին, նման ո՛չ մի շարժում: Սխալ է, որ կը կարծէք թէ հայերը իրաւունք ունեն նոյն իսկ իրենք զիրենք պաշտպանելու ճիշտ հին ռեժիմի ձեւով. քիւրդ աւագ[ակ]ներուն կամ չարագործներուն դէմ եղած հակահարւածը, կառավարութիւնը իրեն վրայ կը վերցնէ եւ անոնց փոխարէն ինքը կը պատասխանէ... Հասարակ ժողովուրդը շարած մնացել է, կառավարութեան դէմ պաշտպանւե՞լ թէ քրդերուն. բայց երկուսի դէմ էլ երեւի ընդհարումը անխուսափելի է: Ճիշտ է որ անմիջական կերպով խրախոյսներ չկան կառավարութեան կողմէ քրդերուն, բայց աչք գոցելու քաղաքականութիւնը քրդերու համար, դրան է հաւասար:

Արդէն գրել եմ որ այդ դէպքը տնտեսապէս շատ թանգ նստեց հայերու վրայ, նոյնիսկ մեղրի փեթակներն էլ են կողոպտել ոստիկանները ու գօրքերը խրոխտենց գիւղում:

2) Կառավարութիւնը կամ վալին – կարծես առաջատները վար է առած. անցեալ օրերը փոլիս միւսիւրը կանչել է Իշխանին եւ երկար ու բարակ խօսել, որ վալին փոշմանած է, որ՝ իրեն շրջապատող մարդիկ են մոլորոցրել, որ լաւ կը լինի գնանք-գանք, որ քիչ միջնորդ հանդիսանամ եւ այլն: [Իշխան] պատասխանած է, որ մենք չենք հաւատար նրան, որովհետեւ հէնց Կարկառի վերջին դէպքը մեզ վրայ է կոտորում... եթէ ինքը տեսնել կ'ուզէ, թող ինքը հաճի մեզի գալ:

Այսպիսով վերջացած է, ուրիշ ճար չկայ. Իզէտ<sup>3</sup> քանի հոս է, անկարելի է որ գարնան ոեւէ շարժում չըլլայ: Զմեռը հազիւ թէ բան լինի, որովհետեւ շարժելու հնարաւորութիւն չկայ:

Պէտք է ամէն կերպով աշխատել, որ վալին փոխել: Ի՞նչ կարծիք ունի այդ մասին պատրիարքարանը: Իմացէք որ հրաբուխի վրայ ենք նստած. զսպւած դժգոհութիւն կայ երկու կողմէն էլ...

Մեզ բանտարկելու լուրեր կան<sup>4</sup>, բայց հազիւ թէ համարձակեն. ասենք առանց մեռնելու էլ յանձնեող չկայ:

Սկսել են առաջամ երկրորդ կարգի ընկերներուն հետապնդել...

3) Մեր ներքին գործերը լաւ է. ռայոնական ժողովը լաւ [էր], որոշումները տրալուում են, կ'ուղարկւի ձեզ:

Ազատութենէն յետոյ ո՛չ այսքան ուժեղ կազմակերպութիւն ենք ունեցել եւ ո՛չ էլ այսքան դրամական եկամուտ. դրամ այլեւս մեզ չուղարկէք, եթէ շատ լինի, պէտք է աւելի թուլացնէ տեղական զոհողութիւնը եւ մեր յեղ[ափոխական] թափը:

Թորոսի ձեռնարկին<sup>5</sup> արդէն 200 ոսկու չափ դրամ տուել են կազմակերպական. աւելին տարու դէմ ենք, որովհետեւ մեր դրամով, մեր միջոցներով ու հեղինակութեամբ չենք կարող ապրանք բերել տալ, որին 100% շահ պիտի վերցնեն թորոս եւ ընկ[երներ]...: Պէտք է] ասենք ինչո՞ւ այդպէս: Որովհետեւ մենք իրողութեան առաջ ենք գտնւած. մեզ հաւատացրին որ Ռոստոմն է այդպէս կարգադրել, էլ մենք ի՞նչ կարող էինք անել: Թէեւ դեռ կանոնաւոր առեւտուր չի սկսւած, խանութը բռնել է, բայց ապրանքները կիսատ պուտ են, եւ դրանից զոհ չլինելով դեռ իրենց համար երկու ուրիշ գործ են ձեռնարկել. իսկական գործի վրայ ամբողջ թափով աշխատանք չկայ:

Կը սպասենք N-... թիւ ապրանքներուն, որ դեռ չեկաւ, կարաւան չկայ, ձիւներու պատճառով: Բացի վերցրածից աւելի բերել անկարելի է. գրեցէք Վրէժին որ իրենց գլուխ ու փայր [?] տեսնեն: Այն էլ պիտի գիտնաք որ եթէ Ռուբէնը հոն չհասնի, համաձայն չենք որ ապրանք ուղարկւի հոն<sup>6</sup> քանի որ մարդ չկայ, եւ եղածը հոս հոն են ցրւած... Սա չկարծէք թէ Վանի հին երգն է, նոյնիսկ Կայծը այդպէս է առաջարկում...

Եթէ Ռուբէն չուտով չկայ, կարճ ժամանակով մեզնից մէկը անցնելու է հոն ձեռնարկ մը անելու համար: Լաւ կը լինի Ռուբէնի գալը յայտնեն մեզ հեռագրով կամ աւելի լաւ կը լինի որ մեզ մօտ անցնի մի խորհրդակցութիւն ունենանք:

Երկու ուսանող ընկերները եկան. ա՛խր, սրանք այն մարդիկ չէին որոնց մենք պէտք ունէինք. ի զուր տեղը ամսական 3 ոսկի ծախսի տակ դրիք. պէտք է զբաղեցնենք քաղաքի պրոպագանդի եւ կազմակերպութեան գործով: Գաւառը այնքան ծանր դրութեան մէջ է, որ դրանք ո՛չ կը դիմանան հոն եւ ոչ էլ մենակ կրնան գլուխ ելնել:

1.- Անտոն – ծածկանուն Սիմոն Չաւարեանի:  
2.- Իմա՝ Ատրպատականի կամ Թաւրիզի (Վրէժ) ճամբով:  
3.- Վանի կուսակալն է (վալի):  
4.- Արդարեւ, 1912 թ. Դեկտ. 23ին անձանօթներու կողմէ Վանի յայտնի ազգայիններէն Պետրոս Գափամաճեանի սպանութիւնը առիթ ծառայած էր Վանի կուսակալ Իգգէթ պէլին ամբաստանութեան տակ առնելու Արշակ Վռամեանն ու Արամ Մանուկեանը: Վերջինները մերժելով ներկայացւած կոչնագիրը՝ հեռագրով խիստ բողոք ներկայացուցին Պոլսոյ Կեդր. կառավարութեան, փաստարկելով որ կուսակալը բացայայտօրէն հակահայ ընթացք կը վարէ, որովհետեւ Վռամեան նոյն ամսուան 4ին դուրս եկած էր Վանէն, իսկ Ա. Մանուկեան, ծանրօրէն հիւանդացած, կը գտնուէր Ամերիկեան հիւանդանոց: Զրպարտութիւնը այնքան ակնբախ էր, որ քիչ անց պաշտօնանկ եղաւ Իգգէթ եւ փոխարինուեցաւ Թահսիմ պէյով:  
5.- Թորոսի ձեռնարկ, Թորոսեանի գործ – ակնարկութիւն գեմքի մատակարարման (Զիֆոնի) գործունէութեան:  
6.- Այսիմքն՝ Տարօն, այնքան ատեն որ Ռուբէն Տէր Միսասեան հոն չէ:  
7.- Սարգիս – Բարսեղեանն է (Շամի), Վասպուրականի Կեդր. կոմիտէի անդամ:

Ինչ եւ է. իբր վերէն եկած հրաման պիտի ընդունենք: Ապրանքներու գինը սոսկալի թանգացաւ. Ձիֆոնեանի մասին խորհեցէք: Սարգիսը<sup>7</sup> բաներ մը կը գրէ, երանի թէ յաջողի:

Լաւ ենք ամէն բանով, նախկին ոգեւորութիւնը եւ թափը վերսկսեց, քրդերը սկսել են նոր դէպքերը երգել, մեր բոլոր յեղ[ափոխական] երգերը թարգմանել է ասորերէն, նոյն եղանակով կը երգեն. նրանց մէջ էլ կազմակերպութիւն սկսեց...

Բարեւներով՝ ԱՐԱՄ

1912 թ. դեկտ. 18, Վան

Յ. Գ.— Մոռացայ գրել նոր կազմի մասին. բոլորը նոր մարդիկ են, անփորձ, որը աւելի դժւարին կը դարձնէ գործը, բայց աշխատող են...

Փաստ. 673-3

### 336

[Արեւմտեան բիւրոյին, Պոլիս]<sup>1</sup>

Ընկերներ!

Լսեցիք հիւանդութեան[ս] մասին. մի ամսէն ի վեր հիւանդանոցը ընկած եմ, հագիւ մի ամսէն ոտքի ելնեմ:

Շիրինի<sup>2</sup> գործը Գրիգորը թեթեւ է նկարագրել, նրան մեղադրում են, ժողովրդին զինելու (բռնի): Նրա հետ բռնած է եւ մի ուրիշ, գիւղացի ընկեր: Այս ձերբակալութիւնները այնքան վրդովեցուցիչ կերպով են կատարւած, որ նմանը չկայ. Շիրինին 30 հոգով դատարան տարան, տանը բռնել [են] 40 հոգով, հիւանդ, անկողնու մէջ: Վալին ասել է որ վերէն [է] հրամանը — ներքին գործոց նախարարի: Փորձեր կ'անենք երաշխաւորութեամբ բաց թողնել տալ, կաբինէի փոփոխութիւնը երեւի քիչ մը կ'ազդէ այս մարդկանց եռանդի վրայ: Դուք հանգամանքից օգտուեցէք վալին եւ այլն փոխել տալու:

Թորոսեանի գործը վիժեց. նախ նրան կարինի մէջ թիւրիմացութիւն պահատեց. ինքը պնդում է որ ձեռնարկը մասնաւոր է իր օգտին, իսկ նրանք պնդում են որ մերն է. ինքն միայն ծախսերը պիտի վերցնի:

Մինարէթէն եկածները 32-ը<sup>3</sup> ջուրը ընկան. մնացածն էլ դեռ չենք ստացել:

Բարեւներով՝ ԱՐԱՄ

[13 յունւար 1913, Վան]

1.- Արամի այս գրութիւնը կցուած է Վասպ. Կեդր. կոմիտէի կողմէ Արեւմտեան բիւրոյին ուղղուած նամակի մը, որ գրուած է Կ. Կ.ի անդամ Գրիգոր Պուլկարացիի (Կեօզեան) կողմէ:

2.- Խառակոնիսի Շիրին (Եղիազարեան, 1876-1920):

3.- Խօսքը Սալմաստէն ղրկուած եւ ղրկուելիք գէնքերու մասին է:

Ամերիկայի Կ. Կոմիտէին<sup>1</sup>

Ընկերներ!

Կազմակերպական գործերի բերումով Յրդ անգամ լինելով Վան հաստատուեցի: Իբրեւ մասնաւոր զբաղմունք վերցրել եմ Աղթամարի շրջանի գիւղական վարժա-  
րանների Գաւառական Տեսչի պաշտօն: Ի՞նչ ասել կ'ուզէ որ ո՛չ մի դիւրուժիւն ու  
միջոց չկայ կուլտուրական գործը կանոնաւոր հողի վրայ դնելու համար: Բայց այդ  
մասին տեղական միջոցներով բան մը անելու աշխատանքի մէջ եմ:

Բայց մեր առաջ դրած է գաւառի կազմակերպման եւ գիտակից շրջանակներ  
ստեղծելու հարցը: Միայն դպրոցները այդ անել չեն կարող: Կուսակցական միջոց-  
ներն եւս այնքան սուղ են, որ նոր պրոպագանդայի միջոցներ ստեղծելը անկարելի  
է: Խորհում ենք որ եթէ ամէն գաւառակի մէջ (30 գիւղ) մէկ շրջուն գրադարան ու-  
նենանք 150-200 գրքերով եւ թերթերով եւ եթէ այդ գրադարանը պտտեցնող մի քիչ  
կրթւած մարդ լինի, կարող է ինքը թերթերը եւ գրքերը անձամբ կարդալ գիւղի հա-  
սարակուժեան: Սա կը լինէր լաւագոյն միջոցը թէ գիւղի կրթականը բարձրացնե-  
լու, թէ մեր գաղափարները տարածելու եւ թէ մեր կազմակերպութիւնները գա-  
ւառներում ամրացնելու համար:

Բայց ինչպէս ասացի այս բաների համար միջոցներ չկան: Պոլսէն գալուց ընկեր  
Ակնուսիի հետ այս մասին խօսեցի. նա պատմեց որ ինքը հոտ եղած ժամանակ կա-  
նանց շրջանակներ է կազմակերպել այդ նպատակի համար, եւ խորհուրդ տւաւ դի-  
մեմ ձեզ որ դուք միջնորդ [էք] այդ միութեան (կարծեմ մեր Կարմիր Խաչի) որ իր  
միջոցները ներածին չափ մեզ օգնի այդ գործը կազմակերպելու համար<sup>2</sup>:

Մեզ հարկաւոր է այս տարի առնւազը 3-5 հոգի այդպիսի ընկերներ: Նախ պիտի  
հոգալ դրանց ծախքը ամէն մէկին 10-16 ոսկի: Այնպէս որ [եթէ] 60-70 ոսկի լինի կա-  
րելի է ունենալ եւ թերթեր ու մի քանի գրքեր: Իսկ եթէ իրենք ունեն կազմակերպ-  
ւած գրադարաններ (գրքեր), աւելի լաւ:

Պէտք է գիտնաք որ գրադարանները առանց մարդու եթէ դրւի այս եւ այն գիւ-  
ղին կամ շրջանին բոլոր[ով]ին անգործութեան կը մատնւի կամ գրքերը երկու ամ-  
սէն կը կորչեն: Այս երկրում դեռ այդքան նախաձեռնութիւն եւ կարգապահութիւն  
չկայ ինքնագործնէութեան համար: Ուրեմն խնդրում եմ, բարի լինէք դիմելու այդ  
Միութեան, բացատրելով մեր վիճակը, թող իրենք միջոցները ներելու չափ ոեւէ օ-  
ժանդակութիւն անեն: Իրենք ի՛նչ պայմաններ առաջարկեն, մենք պատրաստ ենք  
բաւարարութիւն տալու:

Ընկերներ! Անշուշտ գիտէք որ այս դժոխքում գործիչ ընկերները եթէ դրսէն  
խրախոյս եւ օժանդակութիւն չունենան, կամ չեն կարող գործ կատարել կամ կը  
լքեն կը փախչեն տեսնելով որ բան չեն անում...

Մեր շրջանի դրութիւնը սոսկալի է: Քրդերը խրախուսւելով դահլիճի փոփոխու-

Թիւնից եւ այդ նկատելով իբրեւ դարձ հին կարգերը (Իթթիհատը նոցա աչքում Ա-գատուԹիւնը բերող եւ պահողն է, երբ նա հալածուում է) կը խորհն որ ազատու-Թիւնն էլ կը հալածուի) սկսել են շահատակուԹիւններ:

ԿառավարուԹիւնը չուզելով կամ չկարողանալով զսպել խոշոր աւագակներին, խաղաղ ազգաբնակչուԹիւնից անգամ նոր աւագակներ են դուրս գալիս: Զուրը պղտորել է, այնպէս որ ձուկ որսալու ելնողները շատացել են: Մեր ժողովուրդը, քիչ վայրերի բացառուԹեամբ, լքած է: Նորէն դիմում է հին զգուշի միջոցներին, քիւրդ աղայի պաշտպանուԹեան, օտարադաւանուԹեան եւ այլն:

Յեղափոխական կազմակերպուԹեան հմայքը ընկած է, քանի որ մենք ժողովուրդի պահանջներին բաւարարուԹիւն չենք կարողանում տալ, բնական է որ նա էլ լքի մեզ:

Երկու դժուարուԹիւն կայ մեր առաջ. նախ չգիտենք թէ որքան յարմար է հին մեթոտի վերագործադրուԹիւնը եւ երկրորդ ամէնքը այդ ուղին ընդունելով հանդերձ չենք կարողանում միջոցների դիմել, որովհետեւ նիւթականնիս ցամաքել է: Դրանք այնպիսի բաներ են որ տեղական միջոցներով, որը 100-150 ոսկի հագիւ է լինում, անկարելի է բան անել: Չգիտենք. բայց եւ այնպէս եթէ վերջին յոյսերնիս կտրեց կառավարուԹենէն, պիտի ստիպենք անել, առանց մտածելու վերջը, որովհետեւ թէ ժողովուրդը ձեռքից [կը] գնայ եւ թէ մեր ամբողջ հմայքը:

Գուցէ հեռագիրները նամակէս առաջ ձեզ այդ մասին լուրեր բերեն...

Դէ՛հ, ուրիշ բան չկայ. ընտրուԹիւնները սկսում են, յաջողուԹեան մասին չենք կասկածում: Պէտք է համերաշխ գործենք տեղական ոեւէ թիւրք կամ քիւրդ խմբի հետ:

Այս մասին յետոյ:

Եթէ ոեւէ կարիք ունէք, թղթակցուԹիւն, պատկերի եւ այլն, գրեցէք կը հոգանք:

Ընկերական բարեւաններով  
ԱՐԱՄ

1.- Նամակը անթուակիր է, կը գտնուի Ամերիկայի 1913 տարուան քոթածրարին մէջ:

2.- Խօսքը կը վերաբերի Ամերիկայի Հ. Յ. Դաշնակցութեան կողքին գործող կարմիր խաչերուն, որոնք 1910-1912 թթ. Ակնունիի միւսում կազմակերպուեցան եւ աւելի ուշ ստացան Հայ Օգնութեան Միութիւն ընդիանուր անունը:

### Արեւմտեան Բիւրոյին

Ընկերներ!

Ստացել ենք ձեր հասցէին, Ամերիկայի նուէրի լուր տւող եւ վերջին փետր. 8 թւակիր նամակները:

Կը գրէք որ վերջին ժամանակայ մեր լուրթիւն շատ անախորժ է ձեզ համար. դէ՛հ, ի՞նչ անենք [հ]աճարը կերել է պաճարը: Գործ շատ, մարդ չկայ, որ նամակ գրի. երեւի գիտէք որ 2 ամսէն աւելի է հիւանդ ընկած եմ, Գրիգորն<sup>1</sup> էլ հազիւ այդքան գրի: Ի դէպ է ասել, որ ձեր նամակներն էլ առանձին բան չեն ասում, այն ինչ մենք այդտեղից ենք սպասում եւ նորուիւն եւ հրահանգ. աչքերնիս կուրացաւ, ձեր այս մեղանով գրած նամակները, քիչ մըն ալ փոխեցէք, ի սէր մեր աչքերուն...

Անցնենք ձեր հարցերուն:

Ամերիկայի ուղարկած գրքերը դեռ չենք ստացած, ստանալուց հաշիւ, ստացագիր եւ շնորհակալութեան գիր կը գրենք: Բայց չհասկացանք, թէ ասկէ առաջ ի՞նչ է եկել, որ հնի եւ նորի հաշիւները միասին կ'ուզէք:

Գալով ձեր ուղարկած 200 ոսկուն, այդ ամբողջապէս տուած ենք Թորոսեանի գործի համար, իրեն անձամբ, բայց ոչ արդիւնքը տեսնք եւ ոչ գործը: Ուղղակի նա խայտառակութիւն հանեց մեր գլխուն. ես դեռ չեկած, իբր թէ Դն<sup>2</sup> եւ Ռոստոմի հետ համաձայնել են, որ այդ գործը նա սկսի իր անձնական ռիսկով եւ իր օգտին, միայն մենք կոնտրոլի եւ գին նշանակողի դեր ունենանք, այն էլ պայմանով որ դրամ տանք գործ սկսի. այս վերջին պայմանով էր որ 200 ոսկին գնաց. յետոյ որոչեցինք որ ծախսերը եւ կորուստը իրենց վրայ, 100% շահ ունենան:

Այս մասին գրեցինք Ռոստոմին, որը յայտնեց որ ինք այդպէս պայման չի դրել, որ այդ սխալ է, որ նա իբրեւ ընկեր, պէտք է վերցնի միայն իր ապրուստի ծախսերը: Բացատրութիւնները չի վերջացել, այժմ էլ Ռոստոմը գրել է որ իբրեւ թէ Վահաբը եւ Սարգիսն են այդպէս խոստացել. մենք զարմանքի մէջ ենք, հոս մարմին կայ, ընկերներ կան, դրսէն է որ կարգադրութիւն կը լինի իբր թէ, որին մենք չենք հաւատում:

Թորոսեանը ձեզմէ դրամ կ'ուզէր որ Տրապիզոնի հետ էլ առեւտրական գործ անէր. իբրեւ թէ հոս տեղինը լմնցաւ, մնաց այդ տեղերը չորացնելը. վերջապէս նա պատճառ եղաւ, որ մենք ոչինչ ստանանք եւ մեր 200 ոսկին երթայ քնի:

Ի՞նչ կ'ուզէք որ գրենք մեր վիճակի մասին. ձմեռը ամէն բան քնեցրել է. օրւայ հարցը քրդերու խիստ զինեւն է... Քաղաքէն յատուկ պրոպագանդիստներ կ'երթան գաւառները եւ ջարդ ու փշուրով գէնք առնել կը տան քիւրդ գիւղացիներուն:

Այս օրերը ժողով կայ Սէիդ Ալիի տունը, Գաւաշի եւ Կարճկանի աղաները հոն են գնացել, երեւի գարնան համար պատրաստութիւններ են տեսնում: Գաւառներում բացարձակապէս սպառնում են որ եթէ գարունը բացւի, հայերը սաղ չեն մնայ...

Վալին շարունակում է իր շահատակութիւնները. գաւառներից մեր աչքի ընկնող ընկերներին որսում են, այս եւ այն պատրուակով, մի անգամ իբրեւ վկայ, միւս

անգամ պարզ հրաւէր միւտիւրի եւ գայմագամի մօտ, ու դէպի բանտ...

Գաւաչը քանդեցին, այնպէս սիստեմատիկ ծրագրով, որ նմանը չի եղել: Հաջի Եաղուբի սպանութեան հետեւանքով նախ գիւղերը լեցրին ոստիկաններով եւ զին-  
ւորներով որոնք ապրում են գիւղերի հաշւոյն. դպրոցները փակեցին եւ շէնքերը  
վերցրին զինւորներու համար (Նարեկ եւ Խրոխտեց եւ այլն): Շրջանի բոլոր աչքի  
ընկնող մարդկանց, հին զինւոր, ազդեցիկ, ունեւոր, գիւղացիներու դիմադրող  
տարրեր, բոլորը քիւրդերի եւ ոստիկանների վկայութեամբ մեղսակից հանեցին այդ  
սպանութեան եւ ամէնքին փախստական դարձուցին: Այժմ 16 հոգի բանտն են, իսկ  
40-էն աւելի փախստական: Գործերը, իրենց մալ-աշխատանքը կոտորեցին, անտէր  
անտիրական, այնպէս տուն կայ, որ 3-4-ով են փախստական:

Այն ի՞նչ Հաջի Եաղուբը որ Ռաֆայէլին եւ ընկերոջ սպանեց իր ընկերով, այդ  
գործը մեռաւ...

Բանտի մէջ անօթի, ծարաւ, մերկ, կառավարութիւնը նոյնիսկ չոր հաց չի տալիս:

Այս մի մեծ սկանդալ է, պէտք է լրագրում աղմուկ հանել եւ դիմումներ կատա-  
րել որ այս շրջանի 100-ի չափ փախստականները ենթարկւին հրատարակւած ընդ-  
հանուր ներման, որովհետեւ այս էլ քաղաքական գործերի համար է...

Չէ՞ր կարելի Գարգառի համար էլ, «Օգնենք Սասունին» պէս հանգանակութիւն  
սկսել. այս խեղճ գաւառը թէ հին ռեժիմէն եւ թէ այժմ մեր ձեռքէն կրակ ընկաւ,  
եւ մենք ոեւէ բան չկրցանք անել նրա համար... խնդրեմ այս մասին խորհէք:

Անցեալները մի անգամ գրել էի որ մեզ համար ներքին կանոնագիր եւ ծրագիր  
ուղարկէք 100-ական օրինակ. ի՞նչ եղաւ:

Ըստ ձեր գրածի մօտ օրերս, որ 2 ամիս եղաւ, պէտք է պատրիարքարանը վաւե-  
րացնէր Վանի գաւառական երես(փոխանական) ժողովը եւ վարչութիւնը, ուր  
մնաց. գիտէ՞ք ինչ խայտառակութիւններ է կատարուում. որովհետեւ ազգային  
մարմիններ չկան, մենք չենք կարող օրինական-ժողովրդական ոեւէ քայլ անել...  
Աստուծոյ սիրոյն հետապնդէք որ վաւերացնեն:

Իսկ Աղթամարի հարցը դառաւ Գորտեան հանգոյց. եպիսկոպոսը կ'առարկէ որ  
Աղթամարին գրած էր՝ քննիչ ըլլալու մասին. ինքը միայն անպաշտօն իր տպաւո-  
րութիւնները գրած է. ուրեմն թող Աղթամարին այդ մասին յայտնեն:

Տեղս եկաւ ռուսական «Բիրժեվիէ Վեդոմոստի» թերթին թղթակիցը: Լաւ մարդ է  
երեւում, մեզմէ ամէն օժանդակութիւն կը սպասէ: Պիտի պտտի վեց վիլայէթները:

Աստուծոյ սիրոյն վային փոխելու մասին մտածեցէք, սրա ներկայութիւնը գար-  
նան չարիք պիտի լինի:

Դրամական հաշիւները ուշացան իմ հիւանդութեան պատճառով, Որովհետ[եւ]  
ինձ մօտ է կեդրոնացած, այժմ էլ անկողնի մէջ եմ դեռ:

Վահագրը ըստ իր գրածի 15-20 օրէն հոս կը լինի:

Ուրիշ նորութիւններ նայեցէք «Աշխատանքի» մէջ:

Բարեւներով՝ ԱՐԱՍ

1913 փետր. 27, Վան

1.- Կէօզեան Գրիգոր, աւելի ծանօթ Պուկարացի Գրիգոր անունով, անդամ Վասպուրականի  
Կեդր. կոմիտէին:

2.- Դ - հաւանաբար Նիկոլ Դումանն է:



**Դրօշակի խմբ[ագրութեան]**

**Ընկերներ!**

Ստացանք Արարատեանի<sup>1</sup> փետր. 5 թւակիր նամակը «Դրօշակ»ի բաժանորդագրութեան մասին: Կը շտապեմ պատասխանել:

1) Նախ խնդրեմ սովորութիւն ունեցէք պատասխանել եւ մեր նամակներու հարցումներին: Նամակը անշուշտ տեղ հասել է, որովհետեւ յօդւածներ կար «Դրօշակում»: Գրել էի որ ձեզ 30 Փրկ. եմ ուղարկել Պոլսէն, իմ բաժանորդներու համար. ստացա՞ք. նոր բաժանորդներու անուններ էի տւել յունւարէն, սկսեցի՞ք ուղարկել: Մենք պէտք է իմանանք թէ ի՞նչ էք ստացել, որ մնացածը հոգանք:

2) Խնդրեմ յայտնէք թէ անցեալ տարւան է ի՞նչ հաշիւներ է մնացել որ կ'առաջարկէք մաքրել:

3) «Դրօշակ»ը շատ տարածելու համար, պլատոնական ցանկութիւններ բաւական չեն. պէտք է թերթը հետաքրքիր դարձնել, ժամանակին հրատարակել եւ ամիսները իրար հետ չմիացնել: Երբ լուրերը եւ յօդուածները իրենց այժմութիւնը կորցնում են ի՞նչ արժէք կ'ունենան:

4) Բացի իմ տւած բաժանորդներու հասցէներէն, որոնք դրամ արդէն վճարել են, եթէ չէք ստացել յայտնեցէք. սրանց պէտք է ըստ հասցէի թերթ ուղարկէք. այստեղի մեր գործակալը ընկեր Պարունակ Կապուտիկեան<sup>2</sup> խնդրում է որ 20 օրինակ ուղարկէք մարմնի հասցէով, ինքը դրամները շուտով կը հաւաքէ եւ կը հասցնէ: Մի մասը արդէն հաւաքած է. միւսն էլ կամաց-կամաց կը հաւաքուի. ուրեմն 20 օրինակ էլ այդ ձեւով կ'ուղարկէք, դադարեցնելով եւ միւս անհատ բաժանորդներու առաքումը (բացի իր գրածներէն):

Մեզ մօտ առանձին նորութիւններ չկան. ձիւները խաղաղացել են առայժմ, հագիւ թէ մինչեւ 1.5 ամսէն ձիւները վերանան:

Քրդերը մեծ պատրաստութեան մէջ են, լաւ զինուում են, ժողովներ գումարում, որոշումներ տալիս եւ այլն: Մի մասը համերաշխութեան կոչեր են ուղղում, բայց որքան անկեղծ են, Աստուած գիտէ:

Մենք էլ քնած չենք, գործերը լաւ կ'երթայ. գարունը տեսնեք ինչ կը բերէ մեզ: Թերթերու առաքումը չուշացնէք: «Ուսանողի»<sup>3</sup> խմբագրութեան խնդրէք որ այստեղի բաժանորդների թերթերը ուղարկեն կամ իրենց կամ իմ հասցէին:

**Բարեւներով՝ ԱՐԱՄ**

1913 թ. փետր. 27, Վան

1.- Արարատեան – ծածկանուն Շահնագարեան Սարգիսի (1884-1943):  
2.- Բարունակ Կապուտիկեան (1888-1918) – Միլվա Կապուտիկեանի հայրը:  
3.- Հ.Յ.Պ. Երուպայի հայ ուսանողական միութեան հրատարակութիւն (պարբերագիրք):

## Միմոն Զաւարեանին

### Միրելի Անտոն!

Ստացել եմ քո Զաւէնի հետ ուղարկած եւ վերջին փոստայով ուղարկած նամակը ու գրքերը:

Ձեմ պատասխանել հիւանդութեանս պատճառով, ռեւմատիզմը ինձ սպանեց. 4 ամիս անկողին էի մնացել... Այժմ քիչ լաւ եմ, կարող եմ շարժել ու աշխատել: Արած հարցերիդ պատասխանեմ:

1) Նախ ուսումնասիրութեան հարցը<sup>1</sup>. պիտի ամէն ջանք թափեմ բան մը անելու համար, բայց շատ անյարմար ժամանակ է. մեր շրջանը մեծ կրիզի մէջ է. ժողովուրդը այնքան սոսկումի ու վախի մէջ է, գործիչները այնքան զբաղւած գուտ գործնական-գինական հարցերով, որ յաւիտեական դարձած «ապրելու» հարցը ուրիշ բան թոյլ չի տալիս մտածելու եւ անելու: Մանաւանդ ես հարիւր կտոր եմ եղել, դպրոցական գործը շատ. Աղթամարը չհամաձայնեց Ռաֆայէլի տեղ մի ուրիշը վարձել. ամբողջ գործը իմ վրաս մնաց, դրա վրայ հաշուելով եւ Վանքի գործերի ղեկավարութիւնը: Իսկ մեր գործերի մասին ի՞նչ գրեմ. գիտե՛ս թէ ինչքան գործ ունենք:

2) Լուսանկարների մասին դժբախտաբար չպիտի կարողանամ անմիջական պատասխան տալ: Ես էլ նոյն բանը մտածել եմ եւ արդէն մօտ 150 դրշ.ը, իմ դրամով գնել եմ. բայց մենք էլ կը խորհնեք մեր շրջանի ուսումնասիրութեան, յեղ[ափոխութեան] պատմութեան, եւայլն մի ժողովածու հրատարակել՝ «Վասպուրական», այդ պատճառով չենք ուզում որ պատկերները ուրիշ տեղ տալեն: Ուրեմն ների՛ր որ չպիտի ուղարկեմ, այդ է եւ ընկերներու կարծիքը:

3) Ստեփանը<sup>2</sup> հոս չի կարող մեծ աշխատանք ունենալ, որովհետեւ բացի գնացողից հոս երկու ուրիշ լուսանկարիչներ կան: Նրան սահմանից կ'ուզէինք հոս բերել, բայց հեռագիրը չի առել. ուղարկել ենք Մոսկու 5 ոսկի 2 ամիս առաջ. 5 էլ Թորոսի կողմից կ'ուղարկենք այս անգամ:

4) Մաղաք Շալճեան մէկը կար, որ իմ Պոլիս եղած ժամանակը հոտ էր եւ գնաց Ամերիկա: Նրա եղբօրից պիտի հարցնեմ, եթէ եղաւ՝ Զաւէնի հետ պիտի ուղարկեմ:

5) Ա.-Դօ<sup>3</sup> շատ յիմարութիւններ է արել. ուղղակի տգէտ մարդու գործ. գաւառներ կան որ 2000-3000 հոգի տարբերութիւն է դրել. պատահական մարդկանցից հաւաքած տեղեկութիւնները այդպէս կը լինի: Տեղեկութիւններ հաւաքում ենք:

6) Տնկարանի մասին ի՞նչ գրեմ. լաւ կը լինի որ յաջողւի. եթէ միւս անգամները համաձայնեցին, միշտ մարդ կը լինի գնացող ու սովորող: Այդ ուղղութեամբ ցարդ բաւական բան եղել է այս վերջին 2-3 տարին:

Վարագը մարդ ճամբել եւ արդէն գործ է սկսել, բայց անյաջող, որովհետեւ գնացող[ը] բան չի բերել...

Լաւ զարգացել է մեղուաբուծութիւնը, 6-7 հոգի իրենց հաշւին գնացել, սովորել եկել են. հոս էլ շատերը սովորեցին, արդէն 200 նոր մեթոտի փեթակ կայ. հոս եւ գաւառները այս տարի կը լինի 500 հատ:

Մեծ քանակութեամբ գործիքներ է տարածւել,— գութան, խոտ հնձելու մեքենայ եւայլն, եւայլն: Հետաքրքիրը այն է որ մեծ մասամբ քիւրդ աղաներն են գնել...:

Ի՛նչ գրեմ քո ուղարկած պրոպագանդիստների մասին. ընկերները դժգոհ մնացին. ծախսերը չարժեն իրենց արածին. տեղս էլ այդքան պատրաստութիւն ունեցողներ կային: Ի գուր ծախսի տակ խոթեցիք. Չաւէնը 15 ոսկի նստեց այս մի քանի ամսը այ մէջ: Ուզեց որ հոտ գայ քննութիւններու համար. Ի՛նչ պիտի ընէինք, թող գայ...

Աստուածները սիրէք այսուհետեւ առանց մեր գիտութեան մարդ չճամբէք. մեզ այժմ հարկաւոր են խմբեր ղեկավարել գիտցող կիսաինտելիգենտ զինուորական ուժեր, որ թէ՛ ինքնապաշտպանութեան եւ թէ՛ կազմակերպական] գործերը վարեն:

Մնացած տեղեկութիւնները թող Չաւէն անձամբ պատմէ քեզ:

Համբոյրներով, քո՝ ԱՐԱՍ

1913 թ. Ապրիլ 17, Վան

Հ.Յ.Գ. Փարիզի քանգարանի նիւթերէն (այժմ Երեւան):

1.- Խօսքը կը վերաբերի Սիմոն Չաւարեանի ձեռնարկած մէկ ընդարձակ ուսումնասիրութեան հայարնակ վայրերու մասին. ուղարկուած էր մանրամասն հարցարան իւրաքանչիւր բնակավայրի բնակչութեան գրադումին, ունեցուածքին եւ այլնի մասին:

2.- Ստեփան Ստեփանեան (1866-1915), ծանօթ Բալաջան ծածկանունով, արիեստով լուսանկարիչ:

3.- Ա. Դօ – Յովհաննէս Տէր Մարտիրոսեան (1867-1954), վիճակագիր Արեւմտեան Հայաստանի նահանգներուն:

Ինչ որ քո ուղարկած պրոպագանդիստները, ընկերները դժգոհ մնացին. ծախսերը չարժեն իրենց արածին. տեղս էլ այդքան պատրաստութիւն ունեցողներ կային: Ի գուր ծախսի տակ խոթեցիք. Չաւէնը 15 ոսկի նստեց այս մի քանի ամսը այ մէջ: Ուզեց որ հոտ գայ քննութիւններու համար. Ի՛նչ պիտի ընէինք, թող գայ...

Համբոյրներով

1913 թ. ապրիլ 18.  
Գրեմ.

**Արամէն երկու նամակ ուղղուած Սիմոն Վրացեանին,  
Ամերիկա**

Սիմոն Վրացեան, որ այդ օրերուն իբրեւ գործիչ եւ «Հայրենիք»ի խմբագիր կը գտնուէր Ամերիկա, «Հին քոթեր»ուն մէջ Արամ Մանուկեանի հետեւեալ երկու նամակները հրատարակելով կը գրէ.–

**Արամից, Վանից, յաճախ նամակ էի ստանում եւ միշտ նրա կամ աղմ էր պա-  
կաս, կամ մաղր: Բոլորը, դժբախտաբար կորել են. մնացել են հետեւեալ երկու  
կարճ գրութիւնները:**

*Սիմոն Վրացեանի արխիւ, Թղթածրար 5, Թիւ 1*

*Սիրելի Վրացեան,*

*Նամակաբերս, Տոթթ. Րէյնոլդս գալիս է Ամերիկա Վանի մէջ Ամերիկեան Կոլէճ  
մը բանալու համար հանգանակութիւն անելու:*

*Վերջերս սրանց հետ կրթական հարցերու շուրջը համերաշխած լինելով՝ մենք ու-  
րախ կը լինենք, որ սրանք յաջողին կանոնաւոր կոլէճ մը ունենալ հոս:*

*Ուստի կը խնդրենք՝ ես եւ ընկերներ, որ Թերթի եւ այլ միջոցներով ամէն կարգի  
աջակցութիւն ցոյց տաս:*

*Ուրիշ խնդիրներու մասին չեմ գրում. ոտի վրայ եմ. գաւառ կը մեկնեմ:*

*Համբոյրներով քո՝  
ԱՐԱՄ*

1913, սեպտ. 6, Վան

\*  
\*\*

*Սիրելի Սիմոն,*

*Նախորդ երկար նամակս յուսամ ստացել ես եւ խնդրածներս մինտար ալթի չես  
անի: Գրաբերս խաս վանեցի է եւ ինձ շատ մօտիկ: Գալիս է այդտեղ միլիոններ վաս-  
տակելու: Նայիր, որ շուտ վաստակէ եւ վերադառնալով՝ մեզ էլ բաժին հանէ:  
Յանձնում եմ քո հոգատարութեան:*

*Ուրախ եմ, որ հոգ ես տանում, որ «Հայրենիք»ում Վանից շատ Թղթակցութիւն-  
ներ երեւան: Քո յիշած տղաների մասին կ'ասեմ, որ բոլորն էլ լաւ են, բացի Հրան-*

տից, որ զաւգակին մէկն է: Առանձնապէս յանձնարարում եմ Հմայեակին, որ ապագայ ունեցող տղայ է, թէեւ քիչ մը դժարամարս: Թումազեանն էլ կարող է լաւ գրող դառնալ, եթէ վրան աշխատես, դժար տաշելիք քար է: Հումոր ունեցող տղայ է եւ կարող է լաւ երգիծաբան դառնալ:

Խնդրեմ լուրջ ուշադրութիւն դարձրու Վանին. հիանալի երիտասարդութիւն ունենք: Ես շատ եմ ոգեւորւած: Զուր ես ծաղրում իմ «դարաբաղցիական վանեցիութիւնը»: Իրաւունք ունես, ես աւելի վանեցի եմ զգում ինձ, քան թէ դարաբաղցի: Եւ ի՞նչ ես կարծում. Վանի վերջալոյսը տեսնողը ուրիշ տեղացի կ'ուզէ՞ լինել: Վանայ քեաղաք...

Համբոյրներով՝  
ԱՐԱՄ

Ս. Վրացեան, Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962, էջ 36-37:

(Անթուակիր)

\*)- Գրաբերի ով լինելը բոլորովին մոռացել եմ:

Նամակում յիշուած անուններից՝ Հրանտը՝ Հրանտ Կարինեանն է, Բագրունի, որ Վանից քրդ-թակցութիւններ էր գրում «Հայրենիք»ին: Վերջը իսկապէս որ «զաւգակ» դուրս եկաւ:

Հմայեակ - Հմայեակ Խոռոզեան, Մանուկեան:

Թոմազեանը՝ հետագային երգիծաբան Լեւ Կամսար, «Հայրենիք»ին աշխատակցում էր Լեւ կամ Սար ծածկանունով:

Արամի մէկ գրութիւնը «Աշխատանք»ի մէջ

## ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Վաճ-տոսայ թերթի թիւ 42-ի մէջ ում «Ես-Չեմ», որ քաղաքական արիւթիւն ունեցած չէ իր իսկական անունով երեւան գալու, «Վանի եւ ամէն տեղերու Դաշնակցականներուն» խորագրով յօդուածի մը մէջ թոյլ տուած է իրեն ընելու կարգ մը զրպարտութիւններ, որոնցմէ միայն մէկի մասին կ'ուզեմ երկու խօսք ըսել:

Պատմելով որ մենք (Դաշնակցականներս) խանգարած ենք, «նոյնիսկ բռնի, Հրնչակեաններու սոցիալիստական պրոպականտան...» կ'աւելցնէ — «Դաշնակցականները Վանի մէջ, այս տարի իրենց ձեռք անցուցին ազգային հաստատութիւններու մարմինները, եւ անոնք չհանդուրժեցին Հրնչակեանի մը ներկայութիւնը Քաղաքական Ժողովի մէջ, եւ Հրնչակեան Ս. Բրուտեանի որպէս տարիներ շարունակ գործող, գնահատուած ուսուցչի մը ներկայութիւնը Վանի ազգային դպրոցներու մէջ, եւ այս մեծ գործը յաջողցնելու համար հարկ եղաւ մինչեւ անգամ «բարեկամ» Թահսին պէյ կուսակալի հօրը միջամտութիւնն ալ գործադրել...»:

Նախ իմ կանխիկ շնորհակալութիւնս Պ. «Ես-Չեմ»ին, որ այս «գաղտնիքը» հրատարակ հանեց եւ առիթ ընծայեց որ գէթ այս անգամ մենք չամբաստանուինք կուսակցական խնդիրներ յարուցանելու մէջ: Երկրորդ՝ կը խնդրէի Յանկոյսներու թաղականութենէն, ուր բազմած են Բրուտեանի ներկայացուցիչներ Պ. Գիւլումեան եւ Պ. Կարմրամօրուքեան, որ հրատարակով բացատրէ թէ ինչու չէ վարձած Պ. Բրուտեանը:

Ապա լսեցէք պատմութիւնը: Անմիջապէս ըսեմ որ Պ. Ա. Բրուտեան դաւաճանած է մեր ազգային ներքին կուլտուրական ինքնավարութեան իրաւունքներուն: Դաւաճանած է, որովհետեւ ուսուցիչ ըլլալու «մեծ գործը» յաջողցնելու համար, բողոքած է կառավարութեան կրթական Տեսչին եւ անոր միջամտութիւնը հրաւիրած է ապօրինաբար մեր ներքին կրթական գործերուն մէջ...: Բողոքած է որ ինքը իբրեւ կառավարութեան կողմէ ճանչցուած եւ թուրքերէնի համար որոշուած ուժիկի տէր ուսուցիչ, ազգային իշխանութեան ենթարկուելու պարտաւոր չէ... եւ կառավարութեան հօրը միջամտութեան վրայ յենելով էր որ Յանկոյսներու դպրոցը գնաց եւ առանց այլեւայլի փորձեց դասարան մտնել, բայց յետոյ ստիպուեցաւ տեղի տալ տեսչի ընդդիմութեան առջեւ:

Բողոքած է մոռանալով կամ աւելի ճիշտ անտեսելով այն պարագան որ ինք ազգային իշխանութեան կողմէ վարձուած պաշտօնեայ էր, որ ինք ձեւականօրէն միայն կառավարութեան պաշտօնեայ կը համարուէր, եւ որ իր անունով նշանակուած գումարը (տարեթոշակը) կը գանձէր Յանկոյսներու թաղականութիւնը եւ կը մտցնէր զայն իր դպրոցի պիւտոճէին մէջ:

Մոռացած եւ բողոքած է, իսկ կրթական Տեսուչը, իր պաշտօնի բերումով, երբ ազգային Առաջնորդարանի կողմէն ներկայացուեցաւ թուրքերէնի ուսուցիչներու նոր ցանկը, յայտնեց որ Պ. Բրուտեան բողոքած է:

Անոր պատասխանուեցաւ թէ այդ ուսուցիչներու ընտրութեան գործը ազգային իրաւասութեան սահմանին մէջ կ'իյնայ եւ թէ խնդիր կրնայ յարուցուիլ միայն թեկ-

նածուներու ձեռնհասութեան մասին, իսկ այդ կը ստուգուի քննութեամբ, ինչպէս որ եղաւ:

Կրթական Տեսուչը իր առջեւ դռները փակուած գտնելով ապաւինեցաւ վերջին միջոցին՝ ըսելով թէ թուրքերէնի ուսուցիչը իբրեւ պաշտօնեայ կապ ունի Կուսակալի հետ, հետեւաբար անհրաժեշտ է առնել նաեւ անոր հաւանութիւնը:

Ահա այս առթիւ էր որ հանգուցեալ Սարաճեան Սրբազանի հետ այցելեցինք Կուսակալին եւ խստիւ բողոքեցինք ըսելով որ կրթական Տեսուչը իրաւունք չունի անտեղի միջամտութիւններ ընելու մեր ներքին կրթական գործերու մէջ: Բողոքեցինք նաեւ երէկ Ուսումնական Խորհուրդի այն որոշումով թէ հայ դպրոցի որեւէ ուսուցիչ իրաւունք չունի որեւէ ուղղակի կապ պահելու կրթական Տեսուչին հետ, եւ թէ անաստողները պատասխանատուութեան պիտի կանչուին:

Այժմ կը մնայ ճշտել եւ պատասխանատուն անարգանքի սիւնին գամել:

Իսկ այդ պատասխանատուն կամ Արամն է որ կառավարութեան հետ բանակցութեան մէջ էր եւ է դպրոցական խնդրի համար, ոչ իբրեւ Դաշնակցական Արամ, այլ իբրեւ Ուսումնական Խորհուրդի Ատենապետ, եւ կամ Պ. Բրուտեան է պատասխանատու որ իր ուսուցիչ ըլլալու «մեծ գործը» յաջողցնելու համար անհրաժեշտ համարած է կառավարութեան հօգոյ միջամտութեանն ալ դիմել...: Իսկ այս պատասխանատուութիւնը ճշտողը պիտի ըլլայ Ուսումնական Խորհուրդը, որովհետեւ Բրուտեան ուսուցիչ է, իսկ Արամ այդ Խորհուրդի անդամ:

Այսքան կառավարութեան հօգոյ միջամտութեանը մասին:

Մէկ քանի խօսք ալ կուսակալ Թահսին պէյի հետ ունեցած մեր «բարեկամութեան» մասին:

Նախ ըսենք որ մենք պարկեշտ պաշտօնեաներու հետ, մանաւանդ Կուսակալի նման բարձր դիրք ունեցող մէկու մը հետ, չակերտաւոր բարեկամ ըլլալու սովորութիւն չունինք:

Կամ մենք կ'ըլլանք անկեղծ եւ առանց չակերտի բարեկամ եւ կամ բնա՛ւ: Երկրորդ, մենք մեզ անպատուութիւն չենք համարեր բարեկամութիւն մշակել անոնց հետ:

Անպատուութիւն չենք համարեր, որովհետեւ քաջ գիտնալով այս երկրի բարքերը, եւ տեղեակ ըլլալով այն իրողութեան որ եկող բարձրաստիճան պաշտօնեաներն անգամ անծանօթ են մեր երկրի վիճակին եւ մեր ժողովուրդին ձգտումներուն ու կացութեան, բարեկամացած ենք լուսաբանելու, հասկցնելու անոնց մեր ժողովուրդի կարիքները եւ ապա անոնց համար դարման խնդրելու:

Բարեկամացած ենք եւ ոչ ոք կրնայ պնդել թէ այդ բարեկամութիւնը գործ ենք դրած մեր անձնական կամ կուսակցական շահերուն ի նպաստ: Եւ արդեօք մեր այդ բարեկամութեան հետեւանքով չէ՞ որ Հնչակեանները վերջին յայտնի դէպքերու առթիւ պատասխանատուութեան չենթարկուեցան...

Մնացածը ինքնին հասկնալի է: Կը մնայ խնդրել հրապարակով կուսակալ Թահսի պէյէն որ ճշտէ թէ ե՞րբ եւ ինչ ձեւով իր հօգոյ միջամտութիւնը խնդրած ենք Պ. Բրուտեանի պաշտօնագրկուցութեան համար...

Իսկ մինչ այդ՝ պարկեշտ հայ քաղաքացիներուն կը մնայ որոշել թէ մե՞նք ենք կառավարութեան հօգոյ միջամտութեան դիմած թէ Հնչակեան Պ. Բրուտեան:

ԱՐԱՍ

«Աշխատանք» շաբաթաթերթ, Վան, Գ. տարի, Շաբաթ, 16 Նոյեմբեր 1913

Արեւմտեան Բիւրոյին<sup>1</sup>

Ընկերներ!

Ստացանք ձեր 14/17 դեկտ. թւակիր նամակը, որին կը շտապենք պատասխանել: Հոն դուք կը գրէք.

ա. «... Կուսակալի հետ ձեր ունեցած բանակցութիւններու ատեն ունեցած էք շեղումներ...», որը բացարձակապէս սխալ է. մենք պահանջած ենք պարլամենտի եւ նահանգային ժողովներու համար համեմատական իսկ միւս կէտերու համար կէսի դրութիւնը:

բ. «... Բոլորովին սխալ է մեր մարմիններու կողմէ տեղական բանակցութիւնները ...»: Պէտք է գիտնաք որ մենք զուտ տեղական հարցերու համար բանակցութիւններ չենք արած եւ չենք անի. իսկ եթէ տեղական ասելով կ'ուզէք ըսել որ բացի ձեզմէ ուրիշ այլ մարմին մը ընդհանուր հարցերու շուրջը չպիտի բանակցի — մնալով հանդերձ մեր պահանջներու սահմանին մէջ — շատ կը սխալէք: Նախ որ Ընդհանուր ժողովը այդ մասին բացարձակ որոշում մը ունի. «... Ճշտել Հայաստանի բարենորոգութեանց այն «նւազագոյն պահանջները», որոնց իրագործումն սխտեմատիքօրէն միաժամանակ պիտի հետապնդեն կուսակցութեան բոլոր կեդրոնական մարմինները, ոչ միայն եւրոպական դիւանագիտութեան եւ թուրք կենտրոնական կառավարութեան այլ եւ յատկապէս Հայաստանի մէջ, տեղական թրքական մարմիններու քով...»:

Կարծենք բացատրութիւնները աւելորդ է: Ընդհ. ժողովը բացարձակապէս ո'չ միայն արտօնած է այլեւ պահանջած...

Երկրորդ եթէ այդպիսի արտօնութիւն չլինէր անգամ մենք նորէն կ'անէինք: Կ'անէինք ո'չ թէ ձեզմէ գործ խլած լինելու համար կամ «մեծ» բան մը անելու ցանկութեամբ, այլ ուղղակի գործի անհրաժեշտութեան տեսակէտէն. մենք խորունկ համոզում ունենք որ թիւրք կառավարութիւնը այդ պահանջներուն ընդառաջ կ'երթայ երբ համոզուի որ այդ ամբողջ հայերու պահանջն է եւ որ մանաւանդ ատոր համար պատրաստ են միաժամանակ ծառանալու եւ պահանջելու եւ ո'չ թէ ատոնք միայն պահանջ են պատրիարքարանի եւ Պոլսոյ մէջ նստած «կոմիտէներու կենտրոններուն»...

Ահա թէ ինչն է ստիպած մեզ բանակցելու անցեալում եւ որը պիտի ընենք եւ ապագայում:

Հէնց այս շաբաթեայ մէջ կուսակալը փորձեց նման մի քայլ ընտրութիւններու համար. ժողով մը հրաւիրեց առաջնորդարան կուսակցութիւններէն եւ քաղաքայիններէն եւ խնդրեց որ գործը Պոլսին չձգենք, մենք ալ բան մը ընենք...

Կուսակալին պատասխանեց. այս գործը Պոլսինը չէ եւ ոչ ալ անոր է ձգուած, այլ ամբողջ ազգի պահանջն (համեմատական Ազգային ընտրութիւններ), ազգն է որ



թելադրած է Պատրիարքարանին դիմումներ ընէ, որ եթէ նոյնիսկ Պատրիարքարանը զիջողութիւններ ընէ, մենք տեղի չենք տալու... Կարծում ենք այս աւելորդ չէր... նոյնիսկ եթէ այդ մի այլ ձեւով բացատրւի հոտ կոլասակալի կամ նախարարներու կողմէն, քանի որ ներքուստ նոքա համոզւած են որ ի՞նչ ուժ եւ ի՞նչ [մէկ բառ անընթեռնելի] կան:

Կը յուսանք որ այս հարցը սրանով լուսաբանւած պիտի համարէք:

Աւերացնենք եւ այն որ եթէ պահանջներու մէջ պակասութիւններ կան, այդ ալ ձեր մեղքն է. ժամանակին չուղարկեցիք մեր պահանջներու միջնամուտը որ ըստ այնմ շարժւեն մեր մարմինները. կը քնէք, կը քնէք եւ երբ մարմինները ինքնագլուխ բան մը կ'ընեն, նոր յետին թւում նկատողութիւններ կ'ընէք. ո՛չ մեզ եւ ոչ էլ մեր հարեւան մարմիններուն այդ պահանջները չէիք ճամբած:

«Դրօշակ»ի մասին չգիտենք ինչ ասենք. եթէ այդ պարտադիր է, այն ժամանակ ամէն Կ. Կոմիտէին [երկու բառ անընթեռնելի] թերթեր ուղարկեցէք որոշ քանակութեամբ, եւ դրամները միաժամանակ սկզբէն գանձեցէք, թողնելով որ իրենք ծախեն կամ բաժանորդ գտնեն եւ իրենք դրամները վերցնեն: Իսկ եթէ միայն նպաստելու հարց է, մեր շրջանը 50 հատ կը տարածւի եւ դրամներն էլ կ'աշխատենք ժամանակին ճամբել:

Գալով տեղեկագիրները կազմելու եւ ամիսը մի անգամ՝ անհնարին է. գէթ 3 ամիսը մի անգամ կարելի է ընդհանուր գործերու մասին բան մը գրել: Որոշել ենք ընդհանուր տեղեկագիր ուղարկել անցեալ տարւոյ գործունէութեան մասին:

Մեզ մօտ առայժմ բան մը չկայ. գինադադար է. կուսակալը մեզմէ աւելի պաղած կ'երեւայ. ինք կը կարծէր որ իր բոլոր պահանջներուն կամ ակնկալութիւններուն [?] կարող էինք կամ պիտի [մելանի ջնջած երկու բառ]:

Կուսակցական-կազմակերպական եւ ինքնապաշտպանութեան գործը շատ յաջող առաջ կ'երթայ:

[Կէս տող անընթեռնելի]:

Շատ կը կասկածինք որ [մէկ բառ պակաս] դուք կը խորհէք որ մեր կողմէն առանց գործնական քայլերու մեր հարցը յուսալի փուլի մէջ է մտած. Ա[ստուա]ծ տայ որ մենք լինենք սխալւած:

Ի դիմաց Վասպ[ուրականի] Կ. Կոմիտէի  
ԱՐԱՄ

1914 յունւար 6, Վան

1.- Խիստ գունաթափուած ձեռագիր, տեղ-տեղ գրեթէ անընթեռնելի, նշած ենք անկիւնատր փակագծերով:

Արեւմտեան Բիւրոյին

Ընկերներ!

Ձեր տեղատարափ եւ իրար խաչող հեռագիրները ստացանք. ցաւելով կ'ասենք որ մեր կուսակցական կեանքին մէջ թերեւս առաջին անգամն է, որ մեր բիւրոններէն մէկը, ինքզինքը եւ իր հետ ամբողջ կուսակցութիւնը այսպէս խայտառակ վիճակի մէջ կը դնէ: Խայտառակութիւնը ո՛չ միայն հոն է որ մենք թեկնածուներ կ'ունենանք թէ ոչ, այլ հոն՝ որ համերաշխութեան ժողովի<sup>1</sup> մէջ մերոնք փոխանակ դեկավարողի դեր կատարելու, ընդհակառակ խաբւեցին, որովհետեւ այդպիսի դէպքում լաւագոյն ու պատւաբեր նահանջը բոյկոտի, այն էլ համազգային բոյկոտի ճամբան էր. իսկ «չէզոքներով» ընտրութեան մասնակցելը, նախ որ մեր քաղաքական գործունէութեան ինքնասպանութիւն է, երկրորդ՝ մեր դեկավար ընկերներու քաղաքական անփորձութիւնը. այո՛ անփորձութիւնը, որովհետեւ «չէզոք» ասելով յայտնի [է] թէ ովքեր են ընտրւած, եւ ովքեր պիտի լինեն:

Այն անցեալը ինչ մենք ունենք, երբեք մեզ չի ներեր որ կասկածելի «չէզոքներու» եւ «չէզոք» պիտակի տակ մտած հակառակորդներու քուէ տանք. մեր որոշումը անկեղծ է. կամ կուսակցական թեկնածուներով մասնակցութիւն եւ կամ բոյկոտ:

Գալով պատասխանատուութեան հարցին, կը զարմանանք, որ դուք պատասխանատուութիւնը ձեզմէ նետել կ'ուզէք:

Ձեր տւած հեռագիրները պահած ենք. դուք ոչ մի հեռագիր ունէք մեզ ուղղւած, այն հարցումով թէ չէզոք թեկնածուներով մասնակցենք թէ ոչ. դուք մեզ իրողութեան առաջ էիք դրած, հեռագր[ել]ով թէ համերաշխութեան մարմինը այսպէս որոշեց. ուրեմն որոշելէ վերջ է որ մեզ գրած էք, առանց մտածելու, որ կարծիքներ կը հաւաքեն որոշելէ առաջ. երեւի նոյն էք արած եւ միւս մարմիններին: Ինչ եւ է. պատասխանատուութեանը ճշտումը կը թողնենք պատկանեալ մարմինին. այժմ կը մնայ տակտ պահելը. իսկ այդ կարծում ենք այնպէս պիտի լինի, որ դուք գէթ այս երեք վիլայէթներու<sup>2</sup> ընտրութեան հարցում պէտք է առաջնորդէք այս տեղերի դիրեկտիւներով:

Մեր վիլայէթի սահմաններում սկսած է քրդական-չէխական շարժումներ. Բաշկալէի սահմանում Խարզանի (Մուսուլ) շէխն է ապստամբել, իսկ Բիթլիսի կողմերը — Խիզանի շէխը. մեծ քանակութեամբ զօրք դնաց. հետեւանքները ճշտել չենք կարող, որովհետեւ խիստ ձիւն է. երթեկութիւնները դադարած:

Վերջերս տեղական կառավարութիւնը իր յարաբերութիւնները մեզ հետ պաղեցրած կ'երեւի, կը կարծենք Պոլսոյ թելադրութեամբ. վաղին մի անգամ ակնարկ ըրաւ, որ իրենց մարդիկ Պոլսոյ մէջ շատ են դազազած Դաշնակցութեան դէմ: Բայց եւ այնպէս բարեկամական կապերը կը պահենք: Ռեֆորմներու համար բան մը չլսեցինք. այնպէս էք խրելը ընտրողական քառսի մէջ, որ ընթացիկ նամակագրութիւնը

եւ գործերը մոռացած էք:

Պէտք է վերսկսել շաբաթական նամակագրութեան սխտեմը:

Ի դէպ, «Ազատամարտ»ի վարչական-հաշւապահական մասը կ'երեւայ ողբալի վիճակի մէջ է. ո՛չ մի կանոնաւոր հաշւապահութիւն, ոչ էլ բաժանորդներու ցանկ. մէկին 6 ամիս առաջ կը դադրեցնեն, միւսէն դրամ կը ստանան չեն ճամբեր եւ այլն. Բիւրոն պարտականութիւն ունի հսկելու այդ գործի վրայ. ե՞րբ վերջապէս այդ ճիւղի համար պէտք է գտնէք մի խելքը գլխուն մարդ եւ մեզ ազատէք այս խայտա-  
ռակութիւններէ:

Ի դիմաց Մարմնի  
Բարեւներով  
ԱՐԱՄ

1914 մարտ 3, Վան

1.- Համերաշխութեան ժողովը կազմուած էր Պոլսոյ մէջ հայ քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներէն:

2.- Երեք վիլայէթներն էին.– Վանի, Պիթլիսի եւ Կարնոյ նահանգները:

## 346

### Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի Կ. Կոմիտէին

Ընկերներ!

Ներփակ նամակներէն կը տեսնէք որ Կօլտ<sup>1</sup> մեռած Մարտիրոս Անդրէասեանի եղբայրը կ'ուզէ որ իրեն կտակւած 500 դալլէրը մեր միջոցով իրեն ուղարկէք:

Եթէ այս փաստաթղթերը<sup>2</sup> բաւարար կը սեպէք, այս լաւ է. մեզ շատ է, եթէ ձեզ պիտի համոզէ իր ինքնութեան մասին, այդ դրամները փոխադրեցէք մեզ, չէկը կտրելով ընկեր Հմայեակ Դարբինեանի անունով:

Կազմակերպական գործերու մասին Վանիկ<sup>3</sup> արդէն գրած է անցեալ փոստային:

Բարեւներով  
ԱՐԱՄ

1914 ապրիլ 28

Վան

1.- Քաղաք Քանատայի մէջ:

2.- Վանիկ – ծածկանուն Միհրան Թերլեմէզեանի, անդամ Վասպուրականի Կ. կոմիտէի:

3.- Արամի նամակին կցուած են հանգուցեալի եղբոր՝ Խաչատուր Անդրէասեանի եւ Աղքամարի կաթողիկոսական փոխանորդ Եզնիկ վարդապետի վկայագրերը:

[Ռուբէն Տէր Մինասեանին, Տարօն]

Միրելի Ռուբէն!

Նամակս ներկայացնողը Վանի նախկին կոմանդան Ջավէր փաշան է, մեր լաբարեկամն է եւ միշտ էլ մեզ հետ է եղել վերջին տարիները:

Սրան եթէ պէտք լինի, եկող կոմիսիոններու մէկու մէջ դնել տւէք: շատ պարկեշտ եւ ընդունակ մարդ է: գիտէ Փրանսերէն եւ էներժիկ է: կրնայ օգտակար լինել իբրեւ լաւածանօթ մէկը:

Խնդրեմ ներկայացնես եւ ընկերներուն:

Բարեւներով  
ԱՐԱՄ

1914 յունիս] 30

Վան

Արիւն Կարապետ!

Նախնի հիշատակը. վաղ ճարտար  
Եւրոպայի քաղաքացիներն ինչ  
քան բռնաբարեմ են ինչ եւ մէ  
կէ եւ եւրոպայի քաղաքացիներն  
կրնա ինչ քան վաղ ճարտար  
կրնա ինչ քան ճարտար. ինչ քան  
վաղ եւ քաղաքացիներն են ինչ  
քաղաքացիներն եւ ինչ քան  
քաղաքացիներն են ինչ քան

Վան:  
Խնդրեմ ներկայացնես եւ ընկերներուն:

Արիւն Կարապետ

1914 յունիս 30.

Վան

«Արամի նամակի պատճենը Վանից,  
Պաշարման ժամանակ»

Վան, 15-16 ապրիլ 1915

Ծանօթութիւն.— Ստորեւ հրատարակուած նամակը Արամ Մանուկեանը Վանից ուղարկել է Անդրանիկին: Գրաբերը քուրդ վալադ Օսմանն է: Առաջին աշխարհամարտի սկիզբներին Վանմեանը, վալադ գող Մելոյի միջոցով, մի գրութիւն էր ուղարկել բիրոյին: Վալադ Օսմանը երկրորդ գրաբերն էր, որ յիշեալ նամակը Անդրանիկին հասցրեց, հակառակ սահմանը անցնելու ահագին դժուարութիւններին:

Դիւանի գտնուածը պատճենն է այդ նամակի, որ արտագրուած է Ռոստոմի ձեռքով: Նամակի ներքեւ Ռոստոմը փակագիծերի միջեւ գրել է. ընդօրինակուած է բառացի, պահեցէք արխիւում:

*Սիմոն Վրացեանի խմբագրած «Վէմ» պարբերաթերթը (Բ. տարի: Թիւ 3, 1934, էջ 96) հրատարակելով Արամի այս գրութիւնը, իբրեւ ծանօթութիւն կը գրէ.—*

«Բառացի ընդօրինակումն է այն նամակի, որ Արամ գրել է Հ.Յ.Գ. Բիրօ-ին Կովկաս 1915 թ. ապր. 15-16ին: Նամակը գրուած է քիմիական մատիտով, սպիտակ կտտի վրայ եւ գաղտնի ճանապարհով ուղարկուած Կովկաս: Վանի պաշարման օրերից մնացած թանկագին վաւերագրի պատճենն է այս. բնագիրը, երեւի, կորել է»:

ԽՄԲ.

*«Կառավարութիւնը դաւադրութեամբ կոտորածի ձեռնարկեց: Իշխանը դաւով սպանւած է, Վռամեանը աքսորուած: Բազմաթիւ գիւղեր հրկիզուած, 5-6000 կոտորած կանանց, երախաների, գաւառների մէջ: Խիստ ընդհարում Վան եւ Շատախ: 10 օր է ի վեր թնդանօթները կ'որոտան քաղաքի վրայ, ոչ մի վնաս մեզմէ: Շատախը 15 օր է կռւի մէջ է: Ժողովրդի տրամադրութիւնը բարձր: Ժողովրդի վերջին յոյսը ձեր վրայ: Օր մը ուշանալն անգամ դաւաճանութիւն:*

*Շտապեցէք, ժողովրդի փրկութեան համար շուտ հասէք»:*

\*  
\* \*

Արձագանգ հանդիսանալով Վանէն ստացուած լուրին, Եգիպտոսի Հ.Յ.Դ. կոմիտէն, իր կարգին, ֆրանսերէն հեռագրով կը հաղորդէ հետեւեալը կազմակերպական միւս շրջաններուն.–

*Փաստ. 1071գ-27 (Եգիպտոսի [Թղթածրար])*

### Avons Télégramme Vratzian

Aram 15 avril écrit – Van massacres commencées – Ichkhan tué – Vramian exilé – Plusieurs villages brulés – tués 6000 – Révolte Van, provinces – Hâtez secourir – Impatiemment attendons.

GUETRONIAN

Թարգմանութիւնը.–

### Վրացեանէն հեռագիր ունինք

Արամ 15 Ապրիլին կը գրէ – Վան ջարդերը սկսած – Իշխանը սպաննուած – Վռամեան տարագրուած – Բազմաթիւ գիւղեր հրկիզուած – 6000 սպանեալ – Վան, գաւառները ապստամբած – Շտապեցէք օգնութիւն հասցնել – անհամբեր կը սպասենք:

ԿԵԴՐՈՆԵԱՆ

## ԱՐԱՄԻ ԿՈՉԸ ԱԶԱՏԱԳՐՈՒԱԾ ՎԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

**Քաղաքացիներ!**

Ռուսական յաղթական բանակի առաջխաղացումը նոր դարագլուխ եւ իրաւահարգ կը բանայ մեր քաղաքի ու գաւառներու իրաւագուրկ ժողովրդի համար: Դարերու ստրկութեան եւ քաղաքական ճնշումներու վախճանն է, որ մենք կ'ապրինք այս օրերուն, հայ ժողովուրդի շինարար եւ ստեղծագործ ոգիի ծնունդն է, որ մենք կը տօնենք այժմ:

Ռուս զօրքերու հրամանատարը, գեներալ Նիկոլայեւ, գնահատելով Վասպուրահանի հայ ժողովրդի հերոսական ջանքերը՝ թուրք կառավարութիւնը անզօր դարձնելու իր ազգասպան քաղաքականութեան մէջ, եւ հաւանելով հայ ժողովրդի ազգային-կուլտուրական ձգտումները, բարեհաճեցաւ 7 մայիս, 1915 թ. No 16 մասնաւոր հրամանագրով ինձ նշանակել քաղաքի եւ շրջանի կառավարիչ եւ կազմակերպել նոր գործը իր բոլոր ճիւղերով:

Այսօր արդէն կազմակերպւեցան ոստիկանական, դատական, գիւղատնտեսական, գաղթականական, քաղաքապետական եւ այլ վարչութիւններ: Ասով կը յայտարարեմ ամբողջ ժողովրդին, որ նոր կառավարութիւն կազմակերպւած ըլլալով, անհրաժեշտ է բոլոր գործերու համար դիմել նոր կառավարութեան յանձնախումբին, քաղաքի եւ շրջակայքի մէջ բնական վիճակ ստեղծելու համար: Ներկայ պատմական պատասխանատու օրերուն մէջ հայ ժողովուրդը միայն մէկ նշանաբան պիտի ունենայ՝ համախմբուել ամբողջ եռանդով կառավարութեան շուրջը, վերակազմակերպելու համար կեանքը քաղաքի եւ շրջանի մէջ, արժանի լինելու համար քառորդ դարէ աւելի մղած պայքարի մէջ ինկած հերոսներու յոյսերուն եւ յիշատակին ու միշտ բարձր պահելու համար հայ ազգի կուլտուրական պաշտօնի գիտակցութիւնը Փոքր-Ասիոյ այս ծայրագաւառին մէջ:

Ռուս գեներալը մեր այս յոյսերու լիակատար գիտակցութեամբ է, որ հայ ժողովուրդի եւ իմ հանդէպ ցոյց տուաւ այդ մեծ վստահութիւնը:

Քաղաքացիներ, ձեզ կը մնայ մեր այդ յաւանութեանց եւ յոյսերուն ընդառաջ գնացող յաղթական բանակի եւ գեներալի վստահութիւնը բացարձակապէս արդարացնել եւ աւելի լաւագոյնին արժանի եւ պատրաստ գտնուել:

**Վանի շրջանի կառավարիչ  
ԱՐԱՄ**

1915, մայիս 8, Վան-Այգեստան

ՀԱԱ, ֆ. 242, ց.1, գ. 39, ք. 4 եւ շրջ., բնագիր, ձեռագիր (Արամ Մանուկեան, Փաստաթղթերի եւ ցիւցերի ժողովածու, Երեւան 2009, էջ 67-68):

«Հայրենիք» ամսագիր, Մայիս 1925, քիւ 7, էջ 87-88:

**ՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԻՈՐ ԿԱՌԱՎԱՐԻՉ  
ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՀՐԱՄԱՆԸ՝  
ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նկատելով, որ նոր իրաւակարգի մէջ կարգ մը անպատեհութիւններ տեղի կ'ու-  
նենան, որոնք կարող են վատ հետեւանքներ առաջ բերել, ներկայիս կը յայտարա-  
րեմ որ՝

1.- Հրագէն պարպելը ամենախիստ կերպով կ'արգելուի:

2.- Կ'արգելուի ոգելից խմիչքներ ծախել զօրքերուն, խանութներուն եւ մասնա-  
ւոր տուններու մէջ:

3.- Ի սպառ կ'արգելուի թալան, կողոպուտ, ծառեր կտրելը, փայտեր տանելը եւ  
այլն:

4.- Լքուած տուները ինքնագլուխ տիրանալը արգելուած է, ոչ մի գրաւում ոյժ  
չունի, ունեցողները պէտք է դիմեն ինձ:

5.- Հեռագրական եւ հեռախօսական թելերը՝ թէ հին եւ թէ նոր հաստատուած-  
ները — պէտք է ինամքով պահպանել, ոչնչացումէ ազատել եւ հսկել որ թշնամին  
չկտրէ: Գեներալ Նիկոլաեւի հրամանով, հեռագրական եւ թելեֆօնի թելերը կտրե-  
լու մէջ մեղադրուողը 24 ժամուայ ընթացքին դաշտային դատարանի պիտի են-  
թարկուի եւ գնդակահարուի:

6.- Ով որ թելեֆօնի եւ հեռագիրի գործիքներ ունի, անմիջապէս պէտք է բերէ  
կառավարչատունը:

Այս հրահանգներուն անսաստողները ամենաուժեղ պատժի պիտի ենթարկուին:

Կառավարչատունը կը գտնուի Դօմինիկեան քոյրերու դպրոցի մէջ (Փոքր  
Քէնտրչի), պաշտօնատունները բաց են առաւօտ ժամը 9-12 եւ կէսօրէ ետք ժամը 2-5:

Վանի շրջանի կառավարիչ՝  
ԱՐԱՄ

8 մայիս 1915 թ., Վան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 43, ք. 1, տպագիր օրինակ (Արամ Մանուկեան, Փաստաթղթերի եւ  
նիւթերի ժողովածու, Երեւան 2009, էջ 68):



## Արամ Մանուկեանի նամակը ընկերոջը

Սիրելի .....

Երեւի հեռագիրներէն արդէն իմացար մեր պայքարի վախճանը: Անսպասելի յաջողութիւն ունեցանք: Արդէն գիտես, որ կռիւը սկսաւ ապր[իլի] 7-ին: Շատախուժ ութ[ը] օր առաջ ընկերոջ ձերբակալելը առիթ եղաւ ընդհարումի եւ հեռագրի թելերու կտրելուն: Ջեւեղութիւն (վալին) ինձ կանչեց, որ մարդ ուղարկեմ, վերջը առաջարկեց մեզմէ մէկը երթայ. որոշեցինք Իշխանին: Կ'երթայ մինչեւ Հիրճ ուր գիշերը չերթէ՞զները յանկարծ կը մտնեն ու կը կոտորեն 4 ընկերները՝ Իշխան, Վահան Խոռուհի, Բոթոթ Պօղոս, Միհրան Տէր Մկրտչեան (Շատախցի):

Միւս օրը մենք բանից բեխապար կը հրաւիրուենք կոսակալի մօտ: Ես կը կասկածեմ գնալ, Վուսմը իբրեւ մեքուս կ'երթայ, վար կը դնէ առանց այլեայլութեան: Իշխանի սպանութիւնը կը լինի ուրբաթ, Վուսմին կը ձերբակալեն շաբաթ: Կառավարութիւնը նոյն օրը կռիւ կը սպասէ, մենք դիտամբ յետաձգեցինք՝ գործը կազմակերպելու, կառավարութիւնն էլ կ'ուզէր գաւառների եւ ապա մեր գլխուն ընկնել: Մինչ այդ, յետոյ իմացանք, որ գաւառները սկսած էին: Վերջապէս ապրիլի 7-ին կռիւը պայթեց: Կառավարութիւնը քաղաքի 4 կողմը խրամատներ էր փորել եւ թնդանօթներ դրել: Հոս 10-15 հին սիստեմի թնդանօթ կար եւ 2 հատ արագահարուած: Վերջինն պայթուցիկ, իսկ առաջինն կլոր գնդակներով էր: Կռիւի ընթացքում Կարինէն բերան թաքուր (800-1000) մը զօրք: Կռիւը տեւեց 30 օր: 12 թնդանօթներից «կրակում էին» քաղաքի վրայ: Թնդանօթները համարեա վնաս չտւին. ցերեկը տները կը քանդէին, գիշերը մենք պատերը կը շարէինք, այնպէս որ մենք որեւէ դիրք չենք տւած թշնամուն, իսկ թշնամուց խլեցինք 20-էն աւելի դիրքեր: Ամենամեծ յարթութիւնը տարինք կռուի 4-րդ օրը: Այդ եղաւ Հա[մ]մուդ աղի կշլայի պայթեցում-հրդեհումը: Բուլ[ղարացին] դինամիտ դրաւ (ցուցումով պատրաստւած էր) համարեա 3 ֆունտի չափ, հիմքի տակ դինամիտը պայթեց, բայց, դժբախտաբար, տունը չխորտակեց, քիչ ըլլալու պատճառով, բայց գիշերը յանկարծ տեսանք, որ կշլան կը վառուի. յետոյ հասկացանք, որ դինամիտը խորացել է եւ հասել խոտի ամբարին, կամաց-կամաց վառել գիշերը հրդեհել: Զօրքի մի մասը վառուեց, իսկ միւսը գիշերէն օգտելով փախաւ: Այդ դիրքէն թշնամուն վռնդելով, մենք տէր դառանք ամբողջ Այգեստանին: Անկէ վերջը կառավարութիւնը փորձեց յարձակումներ անել, բայց բոլոր կէտերու վրայ ետ վանեցինք. վիրաւոր եւ սպանւած թուրքերու ասկեարներն մօտ 100 հոգի կը հաշուեն: Մոռացայ ըսել, որ կառավարութեան ոյժն 6000էն աւելի չէր, հագիւ կէսը կանոնաւոր զօրք: Այսպիսի կռիւ կարծեմ մեր ամբողջ ժողովուրդը առանց դասի եւ կոչման խտրութեան մասնակցեց եւ ամէն զոհողութիւն արին: Յետոյ ամենանշանաւորը այնպիսի հերոսութիւններ յայտնեցին եւ այնպիսի ղեկավարներ դուրս եկան մեր տղաները, որ ոչ ոք չէր սպասել: Գործի տնտեսական մասը առանձին կազմակերպեցինք, զէնքերն առանձին շրջաններու բաժանեցինք:

Կառավարութիւնը բոլոր միջոցների դիմեց մեզ համոզելու, որ թասլիմ ըլլանք նամակները պահել ենք, «Աշխատանք»-ի մէջ կը տպենք: Կարդա՛ շարժման աջողութեան գլխաւոր պատճառը: Մանաւանդ այն պանգամանքն էր, որ ամէնքը փախտականներ էին ու կեանքի ու մահու խնդիր էր: Մեր վիրայէթում 10.000 փախտական գինոր կայ: Մենք մինչեւ վերջը չիմացանք թէ մերոնք կու գան: Կառավարութիւնը վերջին շաբաթը դիմեց այլ միջոցներու մեզ խեղդելու համար. գաւառներու բոլոր կանայք ու երեխաները քչեց քաղաք՝ մեզ սովով կոտորելու: Մենք մի ամսույ պատրաստութիւն տեսանք հացի ու ռազմամթերքի: Սա ու անծուխ վառօդ ալ չի նեցինք, մօտ 30000 փամփուշտ լեցրինք:

Վերջին օրերը թիւրքերու մէջէն եկող կանայք ըսին, որ թիւրքերը կը փախչին ու մենք տեսանք մեր դիրքերէն ծովի վրայ եղած բազմաթիւ նաւեր: Կուրի 27 օրը փորձեցինք մօտենալ մնացած զօրանոցներուն, տեսանք որ պահակ քիչ են եւ թեթեւ կուէ մը վերջը առինք եւ բոլորը հրդեհեցինք, յոյս չունենալով որ ռուսները շուտով կը գան եւ կրնայ ըլլալ, որ թիւրքերը նորէն գան դիրքեր բռնեն: Յետոյ կամաց-կամաց կ'առաջանանք դէպի թիւրքերու թաղերը, տեսանք որ հոն ալ թոյլ ոյժեր են մնացել: Կուելով, թալանելով (թալանն ըրին գիւղացիք որ հոն էին հաւաքուած՝ 25-30 հազար) եւ հրդեհելով հասանք մինչեւ Քաղաքամէջն, ուր ալ հերոսական դիմադրութիւն էր եղած, աւելի լաւ, քան Այգեստանում: Բայց թնդանօթները աւելի շատ էին գործած: Վերջապէս ամբողջ թիւրքի թաղերն հրդեհեցինք: Մոռացայ ըսել, որ զօրանոցներէն առանք 5 թնդանօթ, իսկ քաղաքացիներն բերդը գրաւեցին:

Շատախում կուրը դեռ շարունակուում է, այն կողմերուն ալ հերոսութիւններ կ'ըլլան: Աշխատէք շուտ գալ, դրամ հասցրէք մեզ՝ աւերած քաղաքը եւ գիւղերը վերաշինելու. 1000 լիրա պարտք մնաց կուր օրերէն:

(Վերջում մի քանի հոգիների առաջարկում է գալ՝ Վանում աշխատելու):

**ԱՐԱՄ**

(Ապստամբների ղեկավար, այժմ նահանգապետ)

10 մայիսի 1915 թ., Վան

**Յաւելածը իմը.** Երեւի լսած կը լինէք, որ մինչեւ ռուսաց զօրքի Վան հասնելը, ապստամբները 2-3 օր տիրած են լինում քաղաքին եւ ռուս զօրքը ստանում է Արամի ձեռքով քաղաքի բանալիները:

«Բանբեր Հայաստանի արխիւների», Երեւան, 2016, էջ 54-55:

# ՎԱՆԻ

Շ Ր Զ Ա Ն Ա Յ Ի Ն

352

## ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

N=

Հայրենակիցներ!

Հաճոյքով լսեցինք այն բուռն ոգեւորութիւնը, որ առաջ բերին Վանի միամսեայ ինքնապաշտպանութեան կռիւները Կովկասի եւ գաղութներու մեր Հայրենակիցներու մէջ:

Ժողովուրդը ուժասպառ, յամեցած (?) եւ քայքայուած, իր յոյսը դրաւ Կովկասի եւ արտասահմանի եղբայրներու վրայ, որ անոնք կու գան իր աւ[ե]ր[ու]ած տուներու, քանդուած օճախներու, հազարաւոր հիւանդներու եւ քայքայուած տնտեսութեան վերակազմութեան օժանդակելու:

Շնորհակալութեամբ արդէն ստացանք բաւականաչափ գումարներ Ս. Էջմիածնէն, Թիֆլիսէն եւ Բագուէն. տեղս հասաւ «Եղբայրական Օգնութեան կոմիտէ» բժշկական խումբը — մէկ բժիշկ, մէկ ֆելդշեր<sup>1</sup> եւ մէկ գլխութեան քոյր: Երէկ տեղս հասան Թիֆլիսի Կ. Կոմիտէի եւ Հայ Բարեգործական ընկերութեան բժշկական խումբն եւս — 2 բժիշկ, 3 կին բժիշկ օգնականներ, — Կ. Կոմիտէի ներկայացուցիչ պ. Սարգիս Աբովեան, գաղթականներուն սնունդ բաշխելու գործը կարգադրելու համար. երկու խումբերն ալ բերած են բաւականաչափ դեղորայք, հագուստ, շաքար եւայլն:

Արդէն գործի ենք սկսած: «Եղբայրական Օգնութեան» կոմիտէն բացած է քաղաքի մէջ բուժարան իր բժիշկով եւ օգնականով: Պատրաստութեան մէջ ենք վարակիչ հիւանդութիւններու առանձին հիւանդանոց մը բանալ քանի մը օրէն: Վեհափառ կաթողիկոսը նոյնպէս հրամայած է 56 անկողինով հիւանդանոց մը բանալ: Որոշած ենք այդ հիւանդանոցը հիմնել կանանց, երեխաներու եւ առհասարակ վարակիչ հիւանդութիւններու համար:

Թիֆլիսի Կ. Կոմիտէի բժիշկներէն պ. Քոչարեանը պիտի մեկնի վաղն իսկ Ռուստան, հոն բժշկական գործը կազմակերպելու:

Երեւի գիտէք որ այս գործերը վարելու համար արդէն կազմուած է Սրբազան Այվատեանի նախագահութեամբ «Եղբայրական Օգնութեան» կոմիտէ մը: Կ. Կոմիտէի բժշկական խումբը գալին ետք, գործը համերաշխութեամբ եւ միացեալ կերպով վարելու համար, համաձայնութեան եկանք Կ. Կոմիտէի գլխաւոր բժիշկ պ. Հ. Օհանջանեանին<sup>2</sup> [հետ] — պ. Ս. Աբովեանը վերցուցինք վերոյիշեալ կազմին մէջ:

Այս ձեւով գործը կազմակերպելու ձեւին մէջ դրինք գրեթէ: Փութամ աւելցնել եւ այն որ, նախքան Կովկասի օգնութեան հասնիլը եւ գալին ետքն ալ, աշխատեցինք տեղական միջոցներով ալ կազմակերպել գաղթականներու օգնութեան գործը:

Տեղական միջոցներով մինչեւ հիմա հայթայթած ենք մօտ 10.000 փութ ցորեն, որու կէսը արդէն ցըրուած է եւ կէսն ալ նոր կը ցըրուի, կազմուած կոմիտէի տրամադրութեան տակ: Արդէն բաշխած ենք կարիք ունեցող գիւղերուն մօտ 8-10.000 ոչխար եւ 2000-էն աւելի սեւատաւար:

Դիւրութիւն ենք ստեղծած Ոստանի մէջ, ուր բոլոր հիւանդները, ճրիաբար, տեղական միջոցներով կաթ, մածոն եւ այլն կը ստանան: Այսպիսով աշխատած ենք դուրսի օժանդակութեան հետ տեղացին ալ մասնակից ընելու, ժողովուրդը չայլատեցելու համար:

Կարիքի պատկերը այսպէս կարելի է պատկերացնել:

Ամբողջ Վասպուրականը հիւանդանոցի է փոխուած: Տուն չկայ որ մէկէ աւելի հիւանդներ չունենայ: Աւելի ծանր է վիճակը Ոստանի-Աղթամարի շրջանին մէջ, ուր հաւաքուած են Սպարկերտի, Մամրտանքի, Խիզանի, Կարկարի եւ Կարճկանի ժողովուրդը՝ 15-25.000 հոգի, որոնցմէ նուազագոյնը 2-3000-ը հիւանդ են: Հիւանդութեան տեսակները մեծ մասամբ տիֆն է իր բոլոր նմուշներով եւ տիզանթերի եւայլն: Նոյնն է եւ Թիմար կոչուած շրջանին մէջ: Հոն հաւաքուած էին եւ են Ալճաւազի եւ Բերկրիի շրջանի հայերը: Հիւանդութիւնները սոսկալի են եւ բժշկական ոչ մէկ օգնութիւն չենք կրնար հասցունել: Աւելի սոսկալի է սուրի քաշուած Արճէշի վիճակը. հոն մօտ 5000 ժողովուրդ կայ անտէր անտիրական եւ հիւանդ, եւ իբր աւելի հեռու ինկած գաւառ՝ աւելի քիչ է խնամքի արժանացած: Ի դէպ է ըսել որ առհասարակ բժիշկներու հետ պայմանաւորուելու էք, որ անոնք, ի պահանջել հարկին, համաձայնին գաւառներն ալ երթալ: Գերադասութիւն տուէք տղամարդ ֆելդշերներուն, որոնք միայն կրնան դիմանալ գաւառի եւ գիւղի դժուարութեանց: Իսկ մնացած գաւառները, ուր թէեւ գաղթականներ չկան բայց ամբողջ ազգաբնակչութիւնը հիւանդ է: Պէտք է նկատել որ եթէ շուտով համաճարակի առաջը չառնուի, ժողովուրդը դեռ ձմեռը չհասած սովամահ պիտի ըլլայ, որովհետեւ աշխատող ձեռքերը եթէ դաշտային աշխատանքին չհասնին, բերքերը կը մնան անբաղ: Պէտք է ուրեմն անմիջապէս լրացնել բժշկական օգնութեան գործը: Անհրաժեշտ են բժիշկներ, օգնականներ եւ դեղորայք, 1) Արճէշի, 2) Ալճաւազի, 3) Թիմարի, 4) Բերկրիի, 5) Արճակի, 6) Հայոց Ձորի, 7) Շատախի, 8) Մոկսի շրջաններու համար: Եթէ անհնար է բժիշկներ գտնել, կարելի է 4 բժիշկով եւ քանի մը ֆելդշերով գոհանալ՝ երկու գաւառի մէկ բժիշկ տալով, այսինքն 2000 հիւանդին՝ մէկ հոգի: Բժշկական գործի հետ պէտք է կազմակերպել եւ սնունդի ու նպաստի գործը: Փաստերը ցոյց են տուած որ շատերը մահացած են սովի եւ շատերը հիւանդացած՝ սնունդ չըլլալուն պատճառով:

Որոշած ենք մեր տրամադրութեան տակ եղած մօտ 50.000 ռուբլի գումարէն որոշ տոկոս մը յատկացնել հացահատիկներու գնման թէ ներկայի եւ թէ ձմրան համար:

Պէտք է նոր գումարներ հասցնել հիւանդանոցներու, բժշկական օգնութեան, սնունդի եւ այլ պահանջներ գոհացնելու համար: Հաւաքելու էք հին հագուստներ կամ կտորներ՝ հագուստի համար: Պէտք են մեծ քանակութեամբ թէյ, շաքար եւայլն, որովհետեւ տեղս ոչինչ չի գտնուիր:

Այս բոլորի աւելցնելու է ինտելիգենտ, ժողովրդասէր ու ձեռնհաս մարդկանց պահանջը: Տեղացիներու մեծ մասը թէեւ յոգնած՝ բայց նորէն գործի գլուխն է, բայց անոր ուժերը անբաւական են այս յոգնութեամբ ե՛ւ կառավարական գործերը տանելու, ե՛ւ տեղական ինքնապաշտպանութիւնը ապահովելու, ե՛ւ գաղթականական գործը տանելու:

1.- Բուժակ, օգնական բժիշկ:

2.- Նոյնիքն բժիշկ Համազասպ Օհանջանեան, անդամ Վ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյի:

Կոչ պէտք է ընել երիտասարդութեան, որ գոնէ քանի մը ամսով երկիր մտնէ՝ գաղթականներու օգնութեան եւ տեղաւորման գործը կազմակերպելու համար:

Եթէ ամփոփելու ըլլանք մեր ըսածները, կը ստանանք հետեւեալը.—

Ա.- Գործը գրեթէ կազմակերպուելու վրայ է:

Բ.- Անհրաժեշտ է առնուազն 4-5 բժիշկ եւ բաւականաչափ ֆելչերներ՝ դեղորայքով:

Գ.- Պէտք է փութացնել սնունդի գործը, ամբարելու համար ժամանակին հաց եւայլն, ինչպէս նաեւ դուրսէն բերել տալ թէյ, շաքար:

Դ.- Անհրաժեշտ է փութացնել երկրագործական գործիքներու առաքումը առ առաւելն մինչեւ Յուլիսի կէսը — հնձող մեքենայ, գերանդի, կալսող եւ քամող մեքենաներ եւայլն:

Ե.- Գործի կազմակերպութիւնը ուժեղացնելու համար հայ ինտելիգենտ ուժերու ներկայութեան հրամայական պահանջը:

Ձեր ուշադրութեան ներկայացնելով այս բոլորը, կը խնդրեմ դիմել բոլոր միջոցներուն, կոչ ընել ամէնքին որ իրենց գոհողութիւնները՝ որքան կարելի է շուտ եւ առատ ժամանակին տեղ հասցնեն, որպէսզի դեռ ձմեռը չեկած կարող ըլլանք գործերը հիմնականապէս կազմակերպել:

**ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ**

23 յունիս 1915, Վան

*Վանի Նահապետ*

**353**

**ԱՐԱՄԻ ԿՈՉՁ ՎԱՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ,  
ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԳՐԱԻՈՒՄԷՆ ԵՏՔ**

Վանի վիլայէթի հայութեան,

Վանը վերագրաւած ըլլալով, գինւորական իշխանութեան կողմանէ թոյլատրուած է միայն տղամարդկանց դառնալու:

Ես քանի մը օրէն կը մեկնիմ գէնքի ու աշխատանքի ընդունակ տարրերու հետ:

Ցանկալի է, որ ընտանիքները տեղաւորելէ վերջ եւ մանաւանդ ընտանեկան հոգս չունեցողները շտապէն միանալու ինձ եւ կամ ինձմէ վերջ ուղղակի մեկնին Վան:

Վկայական եւ այլ դիւրութիւններ կը տրուին Իգդիրը:

Վանի նահանգապետ՝ **ԱՐԱՄ**

6 օգոստոս 1915, Երեւան

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, ք. 31, տպագիր օրինակ:

## Վանի ընկերներին

Սիրելիք!

Զեզնից բազմաթիւ նամակներ եմ ստացել եւ ոչ մէկին կարծեմ հնարաւոր չեղաւ պատասխանել: Լրագիրներից կ'իմանաք վերջին անցուղարձը: Ես ուզում եմ միայն ստեղծած կացութեան մասին մի քանի գործնական թելադրութիւններ անել ձեզ:

I.— Լրագիրներից եւ նամակներից կը տեսնէք, որ Կովկասը ահաբեկւած եւ խուճապի է մատնւած. սրա պատճառը փնտռելու էք ոչ թէ թշնամու գերագանց ուժերի մէջ, այլ մեր ներքին կացութեան մէջ. զօրքը անբարոյականացել է. տուն փախչելու ֆիզիսօզը հասել է ծայրայեղութեան. սրա դէմ վերջերս միջոցների դիմեցինք, կիրարկելով մահւան պատիժը, եւ աջ-ձախ սկսել ենք զարգել. առաջին տպաւորութիւնները լաւ է: Այս լքածութիւնը մեծապէս ազդեց Ֆրոնտների վրայ. հրաման են տւել ետ քաշել. երեւի, նոյնը կ'անեն եւ ձեզ:

Քաջ ծանօթ լինելով թիւրքերի վիճակին՝ կարծում եմ, որ դուք այժմ ինձանից լաւ դիտէք այդ. պէտք է տեղի չտալ, դէթ պաշտպանել Ալաշկերտ-Վան հողամասը, թիկունքը լաւ ամրացնելու պայմանով:

Այժմ, մեղաւորներ որոնելու ետեւից չընկնենք. այսքանը միայն իմացէք, որ այստեղ մի չնչին փոքրամասնութիւն դարձեալ հերոսական ճիգեր է անում, որ ոեւէ կերպով նոր ուժեր հասցնենք ճակատ: Ես անձամբ հաւատացած եմ, որ այդ մեզ կը յաջողի, միայն թէ դուք դիմացէք:


II.— Վանի պրիզադային ձեր հրահանգին համաձայն թոյլ չտւի, որ շատ մարդ վերցնի. մօտ 1500 գէնք եւ 4000 կոմպլէկտ հագուստ ունենք պատրաստ ձեզ համար: Ես կարող եմ հասցնել մինչեւ Իգդիր. աշխատեցէք այնտեղ բեռներով եւ ոեւէ կերպ ներս քաշել:

Ալաշկերտի Ղարաքիլիսէն փամփուշտ կայ մոսինի. աշխատեցէք այնտեղից էլ օգտւել:

Այնտեղ մօտ մէկ միլիոն պատրաստի փամփուշտ կայ ձեզ համար:

Խիստ եղէք դասայիքների եւ դաւաճանների վերաբերմամբ:

Վանի պրիզադայի պետը մի լաւ մարդ եւ հրաշալի ու փորձառու պոլկովնիկ<sup>1</sup> է, ներկայացրւած է գեներալութեան, կամ դէպքերի պատճառով չի ստացել. շատ պիտի սիրէք, հոգով հայ է եւ տղամարդ. ինքն էլ ղարաբաղցի է իսկական տիպով: Շուտով կը պատրաստենք եւ թնդանօթածիգներ. արդէն հեռագիրներ ունենք, որ



սպաներ են գալիս, այնպէս որ դրանց հետ ուսուցանողները կը դնենք եւ կ'ուղարկենք անմիջապէս ձեզ:

III.— Իմ կարծիքով V պոլիի աւելորդ գէնքեր եւ ինչքեր ձեզ թողնելով, վերցնելով եւ լաւ սպաներին՝ միւսներին պիտի թողնել, որ ռազ լինեն<sup>2</sup>. այդպէս էլ ես պիտի աշխատեմ այստեղ:

IV.— Դրամի համար ամէն կերպ աշխատեցինք, որ մի գումար հասցնենք. այդտեղից փողից քաշեցէք՝ հոս վճարենք ընտանիքներին:

V.— Շուտով ներկայացրէք ձեր զինւորների ընտանիքների անդամների թիւը, զինւորների իրենց անուանների հետ, որ ամսականներ կապենք. երեւի գիտէք, որ տուն մնացող մարդազուլիս, մեծ ու փոքր, աղքատ կամ հարուստ ստանալու է ամսական 20 ռուբլի:

VI.— Սուրհանդակներ հանեցէք մինչեւ Երեւան. ուրիշ կերպ լուր առնել կամ տալ անհնարին է:

VII.— Կովկասը մեծ ճգնաժամ է ապրում. հայ-թիւրքական ո՛չ թէ ընդպարում, այլ պատերազմ է սկսւել. Վրաստանը մեզ էլ, իրեն էլ խայտառակեց. սկզբից հակառակւելով մոբիլիզացիային, հիմա խուճապով սկսել են զինուոր հաւաքել:

Նահանգ նահանգ[ի] հետ կապ չունի. մի ամիս է Թիֆլիսից լրագրի կամ փոստա չենք ստանում:

Բազում եւ Շուշու կողմերը դրուժինը ծանր է. դեռ ընդհարումներ չկան, բայց օր է օր սպասում է. մերոնք լաւ կազմակերպւած են:

Պօլկեր<sup>3</sup> կան Շուշու, Գանձակ, Նուխի, Բագու եւ այլն:

Եւրոպական բեմից լուր չունենք: Անգլիացիք, ըստ երեւոյթին, Երուսաղէմի կողմերը յաղթանակներ են տարել:

Գերմանիացին, ըստ լուրեր[ի], գրաւել է Օդեսա, Կիւեւ, Խարկով, Մոսկուա, Պետրոգրադ եւ այլն:

Հիւսիսային Կովկասից հաց չենք ստանում. զօրքը պահում ենք ազգային միջոցներով: Երեւան քաղաք տւել է մէկ միլիոն ռուբլի: Հացի գինը խալվարը (30 փութ) 1500 ռուբլի է. սկսել են բրինձի եւ ցորեն[ի] խառն հաց թիւել զօրքի եւ ժողովրդի համար:

Թալան, գողութիւն եւ սպանութիւններ աջ ու ձախ լեցւած է:

Եկողները աւելի լաւ են պատմում ձեր շրջանի մասին, այնպէս որ մենք նախանձում ենք ձեզ:

Լեւոնին<sup>4</sup> ասացէք, որ 500 ռուբլին ուղարկել եմ...

Շատ եւ շատ բարեւներով  
ԱՐԱՄ

6 մարտ 1918, Երեւան

Հ.Յ.Գ. Փարիզի քանգարանի նիւթերէն (այժմ Երեւան):

1.- Գնդապետ: Խնդրոյ առարկան Պաւել Բէկ Փիրումեանն է:  
2.- Հեռագրան:  
3.- Գունդեր:  
4.- Շաղոյեան Լեւոն (1887-1974):

## Ը.– ՅԱԻԵԼՈՒԱԾ

### ԿԵՆԴՐԱՆԱԳՐԵՐ՝ ՆԱՀԱՏԱԿ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ

Իբրև յաւելուածական բաժին Արամ Մանուկեանի Նամականիին, կը կցենք իր կողմէ գրի առնուած կենդանագրերը՝ հայ ժողովուրդի ազատագրական պայքարի ճանապարհին զոհուած շարք մը գործիչներու եւ մարտիկներու: Անոնցմէ ոմանք, ինչպէս Սիմոն Զաւարեան, Վանայ Իշխան, հանրայայտ դէմքեր էին, ուրիշներ թերեւս նուազ ծանօթ, սակայն միեւնոյն իտէալով կախարդուած մարդիկ էին, անմոռաց հերոսներ, որոնք իրենց կեանքը նուիրաբերած էին հարազատ ժողովուրդի փրկութեան համար: Նահատակուածներէն շատեր Արամի աշակերտական օրերու ընկերներէն էին, միւսները Կարսի եւ Վասպուրականի գործունէութեան շրջանի գործակիցներ եւ մարտակիցներ, որոնց յիշատակը յաւերժացնելու սահմանուած մէկական յուշարձաններ են Արամ Մանուկեանի կողմէ հիւսուած այդ կենդանագրերը:

\*

\*\*

Յայտնենք որ, բացի նամակներէն եւ կենսագրութիւններէն, Արամ Մանուկեան ձեռնարկած է նաեւ գրել իր յուշերը. շարադրանքը սկսած է Թիֆլիս 1917 թ. սկիզբը, ապա շարունակած Խրիմի Սաքի կոչուած բուժարանին մէջ, ուր գացած էր նոյն տարին դարմանուելու համար: Այդ յիշողութիւնները, դժբախտաբար անաւարտ, կ'ընդգրկեն միայն Ատրպատական-Վանեան գործունէութեան առաջին երկու տարիները (1904-1906): Արամի այս յուշերը առաջին անգամ լոյս տեսան 1922-23ին «Հայրենիք» ամսագրի Ա. տարուան թիւերուն մէջ, ապա Ռուբէն Տէր Մինասեանի «Հայ Յեղափոխականի մը յիշատակները» գործի Բ. հատորին մէջ: Առանձին հատորով անոնք հրատարակուեցան Պէլյուք, 1969ին, իր մահուան 60-ամեակին առթիւ Հ.Յ.Դ. Բիւրոյի լոյս ընծայած ծաւալուն գրքին մէջ: Այնուհետեւ եղան բազմաթիւ արտատպումներ մեծ յափշտակութեամբ ընթերցուող Արամի Յուշերուն:

Վերջերս Հայաստանի Ազգային արխիւներուն մէջ Արամի յուշագրութիւններէն յայտնաբերուեցան եւ հրատարակուեցան նոր պատառիկներ, որոնք կը վերաբերին Վանի 1915 թ. յաղթական հերոսամարտին եւ Արամի նահանգապետութեան ժամանակաշրջանին\*:

ԽՄԲ.

---

\* Տես Բանբեր Հայաստանի արխիւների, թիւ 2, 2006 թ., էջ 10-15 եւ 2016 թ., էջ 47-96:





## ԹՈՒՄԱՆ ԹՈՒՄԵԱՆ (ԹՈՐԳՈՄ)

Հ.Յ.Գ. Կենտր. դիւանի թիւ 1784 թղթածրարում պահուած է Արամ Մանուկեանի ձեռագիր կենսագրականը Թուման Թումեանի – Թորգոմի մասին, որ առաջ ենք բերում ստորեւ: Թումանը Արամի մտերիւմ ընկերներից էր. Կարսի շրջանում նրանք գործում էին միասին: Կենսագրութիւնը գրուած է Թումանի մահատակութիւնից անմիջապէս յետոյ: Մեր կողմից աւելացնում ենք Որստրոյ խմբի եւ Թումանի ու ընկերների մահատակութեան պատմութիւնը [Ս. Վրացեան]:

Թորգոմը ծնուել է 1879 թ. Մայիս 11-ին, Շուշի քաղաքում: Մնողները, բնիկ շուշեցի, սովորական կարողութեան տէր մարդիկ էին, բայց Թումանին փոքր հասակից արհեստի տալու փոխարէն դպրոց ուղարկեցին:

Շուշուէյ Թեմական դպրոցի լաւ օրերն էին: Թորգոմը դպրոցում ամենաառաջադէմ եւ ընդունակ աշակերտ էր. ոչ ոք նրա հետ չէր կարող մրցել ընդունակութեան եւ յաջողութեան մէջ: Ընկերները նախանձում էին նրա ընդունակութիւններին, իսկ ուսուցիչները ուրախանում:

Բացի աշակերտական պարապմունքներից, Թորգոմը ամենայն ճշգրտագոյնութեամբ յաճախում էր եւ ընկերական ժողովներ եւ ուրիշ հաւաքումներ. պարապում էր դրսի խմբերի հետ:

1897 թվին աւարտելով դպրոցը, Թորգոմը գնում է Մոսկուա՝ ուսումը շարունակելու համար. մտադիր էր Գիմնազիոնի քննութիւն տալ եւ մտնել բժշկական բաժինը. շատ էր սիրում բնագիտական առարկաներ: Բայց Ռուսաստանի սառնամանիքները վատ են ազդում առողջութեանը վրայ: Թորգոմը հիւանդանում եւ ստիպւած է լինում վերադառնալ հայրենիք:

Թորգոմի հասարակական գործունէութիւնը սկսում է հէնց այդ տարուանից, 1898-ից, երբ նա ձեռնարկում է աշակերտութեան կազմակերպութեան եւ կարողանում է որոշ ուղղութիւն տալ: Նրա նախաձեռնութեամբ է, որ հրատարակւում է «Կոկոն» թերթը: Նա է լինում նրա անմիջական խմբագիրը եւ արտագրողն ու յօդուածները կանոնաւորողը:

Թումանը չի բաւականանում միայն աշակերտութեան շրջանով. նա պնդում է, որ աշակերտութիւնը պէտք է մնայ աշակերտութիւն, իսկ հասարակական գործով պէտք է զբաղուի դրսի երիտասարդութիւնը: Բայց ո՞ր է Շուշում երիտասարդութիւնը. Բագուն եւ այլ քաղաքները բոլորովին գրաւել-տարել են: Թումանը եղածով էլ բաւականանում է. կազմում է գործակատարներից մի խումբ, ամենաբարեխիղճ կերպով պարապում է նրանց հետ: Մի տարի յետոյ, նրա աշխատանքն արդէն այնքան բեղմնաւոր արդիւնք է տալիս, որ ամբողջ գործակատարութիւնը կազմակերպւում եւ մտնում է Դաշնակցութեան դրօշակի տակ: Այդ խմբերից վերջը կա-

նոնաւոր տղաներ դուրս եկան եւ մի քանիսն էլ մտան կոմիտէական կազմի մէջ:

Այդ ժամանակները Շուշում, ինչպէս եւ ամէն տեղ, թագաւորում էր հակայեղափոխական ըէակցիան, բայց շնորհիւ Թումանի եւ մի շարք ուրիշ ընկերների թափած ջանքերի, յեղափոխական կրակը բորբոքուած է պահուում եւ հետագային այդ կրակը կլանել է ողջ Շուշին եւ գաւառները...

Թումանը դեռ Շուշում էր, երբ Մենակը (Գէորգ Առստամեան)՝ գնաց Բագու, Թումանը հակառակ էր Բագու գնալուն. նա պնդում էր, որ Բագուն գերեզման է. այնտեղ ընկնողը է՛լ յարուլթիւն չի առնում:

Բագուից կամաց-կամաց լուրեր են հասնում, թէ այնտեղ է եկել արտասահմանից մի նոր մարդ եւ կանոնաւոր կազմակերպութիւն է առաջ բերում, ու յեղափոխական տրամադրութիւնը բաւական բարձրանում է... Լուրեր հաղորդողը Մենակն էր, սակայն, Թումանն ու ընկերներ էլի չեն հաւատում եւ սպասում են, որ Շուշիում աւելի վստահելի տեղեկութիւն ստացուի: Բայց փոխանակ տեղեկութեան, ահա մի գեղեցիկ օր Շուշի է վերադառնում Մենակը:

Մի փոքր, խոնակ խոլցում, քաղաքի յետ ընկած փողոցներից մէկում, ընկերական ժողով է: Մենակը բան ունի ասելու. ընկերները հաւաքուել են, բոլորը դասընկերներ եւ վերջին տարին՝ կեանքի ընկերներ: Մուսլ եւ մառախլապատ երեկոյ է. մի համեստ սեղանի շուրջը բոլորած, առանց ուշադրութիւն դարձնելու ցրտին, լսում են Մենակի գեկուցումը:

Իսկ գեկուցումը կարճ է. ըէակցիան Կովկասում եւ երկրում անցել է, հարկաւոր է կանոնաւոր գործի ձեռնարկել. գործի գլուխ պիտի անցնի թարմ երիտասարդութիւնը. հները կամ ընկել են կուռի դաշտում, կամ հրաթափուել... Պատում է Բագում տեղի ունեցած խառն ժողովների մասին, Սոցիալ Դեմոկրատ կուսակցութեան կազմակերպուելու մասին, եւ այն մասին, որ ինքը վճռել է անցնել Երկիր, որ ինդիւրը անցել է, որ ինքը եկել է Շուշի, իր ընկերների տրամադրութիւնը իմանալու, ա՛յն ընկերների, որ միշտ խոստացել են միասին գործել...

Խնդիրը պարզ է. բոլոր ընկերները բաժակ են բարձրացնում Մենակի յաջողութեան համար եւ խոստանում են, որ հէնց առաջիկայ գարնանից իրենք եւս կը հեռանան Շուշուց՝ հետեւելու համար Մենակի օրինակին...

Ամբողջ գիշեր խոստովանութիւնների եւ փոխադարձ խոստումների զգացմունքների ազդեցութեան տակ լուսացնում են ու Մենակին «Խաղաղ Դաշտի» ներդաշնակ երգով ճանապարհ են ձգում՝ իրենք էլ գնալու պայմանով...

Եւ գնում են: Գնացողներից առաջինը Թորգոմն էր: Նա արդէն մտել էր կամաւոր զինուորական ծառայութեան եւ ստացել էր պահեստի սպայի աստիճանը: 1901 թ. ամառը նա, իբրեւ սպայ, պէտք է գնար փորձնական ծառայութեան: Ծառայութեան տեղ դիտմամբ ընտրում է Ալեքսանդրապոլը՝ Մենակին եւ սահմանին մօտենալու համար: Ծառայութիւնը տեւում է միայն 3 ամիս: Վերջացնելուց յետոյ, դեռ զինուորական համագրեստը հագին՝ Թորգոմը ներկայանում է Զրաբերդի (Կարսի) Կենտրոնական կոմիտէին եւ բերանացի կերպով առաջարկութիւն է անում ամբողջապէս նուիրուելու յեղափոխական գործին: Ի՞նչ ասել կ'ուզէ, որ Կենտր. կոմիտէն գրկաբաց ընդունում է երիտասարդ սպայի եւ մտաւորական մարդու առաջարկութիւնը: Այդ օրուանից էլ սկսւում է Թորգոմի յեղափոխական-մարտական գործունէութիւնը: Նա միշտ ասում էր, թէ սիրողի դերը իրեն համար ատելի է, որոշ չափով, նոյնիսկ յանցանք է. անթոյլատրելի է, որ յեղափոխական գործիչը ուրիշներին

ուղարկէ կրակի գիրկը, իսկ ինքը հեռուից միայն դիտողի դեր կատարէ:

Բէակցիայից յետոյ, Զրաբերդը նոր էր վերակազմուում. հին ու փորձուած բոլոր ընկերները կամ հեռացել էին, կամ հիասթափուած չէզոքացել էին: Նոր կենտրոնական կոմիտէն կազմուած էր նոր եւ անփորձ մարդկանցից, որոնք դեռ նոր էին սկսում յեղափոխական գործունէութեան: Բնականաբար, Թորգոմը իրեն ուժեղ կը զգար այդ նոր եւ թարմ շրջանում, ուր կուսակցական գործը սահմանափակուած չէր պաշտօնական նեղ շրջանակներով:

Մենակը դեռ Զրաբերդում էր եւ Երկիր անցնելու պատրաստութիւններ էր տեսնում: Մենակի գործունէութիւնը Զրաբերդի շրջանում քարոզչական-նախապատրաստական էր. նա դեռ խօսում էր, զգացմունքների վրայ էր ազդում: Թորգոմը արդէն կազմակերպող էր, կենդանի գործի մարդ: Զրաբերդի շրջանում չմնաց մի գիւղ, ուր Թորգոմը մտած չլինէր: Մինչեւ Թորգոմը Զրաբերդի շրջանում կար մասնակի եւ անկանոն կազմակերպութիւն. Թորգոմի օրով էր, որ խմբական կազմակերպութիւնը դառնում է համայնական. գիւղի ամբողջ համայնքն է մասնակցում կուսակցական գործին: Գիւղերում ստեղծուում են գիւղական ենթակոմիտէներ, գիւղի զգալուն տարրերը առաջ են քաշուում եւ կազմում են տեղական ու շարժական զինուորական խմբեր:

Քաղաքներում եւս կանոնաւոր խմբերի կազմակերպութիւնը սկսում է Թորգոմի օրով: Նրա օրով է սկսում կանոնաւոր երեկոյթների եւ ընկերական հաւաքոյթների շրջանը: Նրա օրով է, որ, 1901-902-ին Զրաբերդում հրատարակուում են մի շարք թռուցիկներ:

Բայց, Զրաբերդի շրջանի գործունէութիւնը ինչքան էլ հետաքրքիր եւ օգտակար լինէր, չէր կարող Թորգոմին կապել ու պահել: Նա Զրաբերդ էր եկել Երկիր անցնելու նպատակով եւ ոչ թէ Զրաբերդում մնալու համար. Զրաբերդը փորձառութեան վայր էր սոսկ՝ Երկիր մտնող անփորձ յեղափոխականների համար, որոնք այնտեղ կարող էին անցնել յեղափոխական գործի դպրոցը: Թորգոմը արդէն անցել էր այդ շրջանը, հարկաւոր էր անել երկրորդ քայլը: Մենակը յաջողութիւն էր գտել Բասենում եւ նամակներով առաջարկութիւն էր անում գէնք եւ մարդ ուղարկելու Երկիր: Թորգոմը պատրաստակամութիւն է յայտնում անցնելու Երկիր: Զրաբերդի Մարմինը խորհրդակցելով Կովկասի ընկերների հետ՝ որոշում է Թորգոմին մի թեթեւ խմբով ճամբել Սասուն:

Սկսում է «Արրիկ» խմբի պատրաստութիւնը: Զրաբերդում միայն Թորգոմը չէր, որ ցանկանում էր Երկիր մտնել. այնտեղ վաղուց հաւաքուել էին մեր հին, փորձառու զինուորները, որոնք անդադար դիմումներ էին անում Երկիր անցնելու: Այդ ընկերների խումբը ընդհանուր անունով կոչուում էր «Սվազցիների խումբ»:  
Թորգոմը իր շուրջն է հաւաքում այդ ընկերներին, եւ քիչ յետոյ, «Արրիկ» ձիււոր խումբը արդէն կազմ եւ պատրաստ էր:

«Արրիկ» խմբի մէջ մտան այն զինուորները, որոնք Սասունի վերջին ապստամբութեան ժամանակ այնքան հերոսական կերպով բարձրացրել էին հայ Ֆիտայու անունը: Դրանք ոչ թէ պարզ զինուորներ էին, այլ մէկ-մէկ խմբապետներ — Ֆարհատ, Մուրատ, Սեպուհ, Որսարդ Գէորդ, Առաքել եւ այլն: Վերջին դէպքերի հերոսներ էին սրանք, որոնց անունները բերնէ բերան էին պտտում հայութեան մէջ:

Ընկերների ընդհանուր համաձայնութեամբ Թորգոմը ընտրուում է խմբապետ, հակառակ իր ցանկութեան: Նա առարկուում էր, թէ խմբապետութեան համար իրե-

նից աւելի փորձառու եւ արժանաւոր ընկերներ կային, բայց ընկերները գաղտնի քուէարկութեամբ միաձայնութեամբ ընտրում են նրան խմբապետ:

«Մրրիկ»ի յաղթական մոտաքը Սասուն, յայտնի է ամէնքին: «Մրրիկ»ի հասցրած օգնութիւնը Սասունի ընկերներին՝ անգնահատելի էր: Ընկերների յանկարծական եւ անսպասելի մոտաքը Սասուն, յուզեց ամբողջ ժողովուրդը: «Մրրիկ»ի իւրաքանչիւր անդամ ամենալաւ յիշողութիւններն ունի սասունցիների ցոյց տուած ջերմ ընդունելութիւնից: Նախ քան բարեւելը պատարագ է կատարում Սերոբի գերեզմանի վրայ, գէնք ու զրահով, զինուորական յարգանք է տրւում հերոսի յիշատակին, ապա սկսւում է ընկերական գրկախառնութիւնը եւ «բարով եկաք»ները...

Թորգոմը Սասունում մտնում է Պատասխանատու Մարմնի մէջ եւ զբաղւում է կազմակերպողի, պրոպագանդիստի ու թղթակցի դերով: Նրա քաղցր ու հետաքրքիր նամակները ձեռքէ ձեռք պտտում են Կովկասում...

1904 թ. գարնան Սասունի Պատասխանատու Մարմինը ստանում է արտասահմանի ընկերներից Ընդհանուր ժողովին մասնակցելու հրահր: Երկար վիճաբանութիւններից յետոյ, երբ անյարմար է գտնւում Վահանի եւ Հրայրի գնալը, վճռւում է ուղարկել Թորգոմին եւ Կայծակին՝ առաջինը Բարձրաւանդակի ներկայացուցիչ, իսկ երկրորդը Տարօնի: Թորգոմը աղաչում է ընկերներին, որ իրեն Կովկաս չողարկեն, բայց այդ անհնար է լինում: Թորգոմը եւ Կայծակը հարուստ տեղեկագրերով ու տպաւորութիւններով, ահագին ղժուարութիւններով, անցնում են Կովկաս...

Կովկասեան նախապատրաստական ժողովը վճռում է, որ ընկերներից մէկը մնայ Կովկասում՝ Սասունի պահանջներին բաւարարութիւն տալու համար: Թորգոմը յանձն է առնում, մնում է Կովկասում եւ ձեռնարկում է աշխատանքի: Երբ Ընդհանուր ժողովի գնացող ընկերները վերադառնում են արտասահմանից, նորից վճռւում է, որ Թորգոմը մնայ եւ վերջին խմբի հետ ներս մտնէ Երկիր:

Ներս գնալու փորձերի անյաջող անցնելու պատճառով, Թորգոմը անցնում է «Որսորդ» խմբի գլուխը եւ այնքան եղբրական կռուով մեռնում է Օլթիի բարձունքների վրայ, ուստի կոզակներից...

Անժամանակ գնդակը վերջ տուեց այն կեանքին, որ այնքան յոյսեր էր ներշնչել ընկերներին եւ ժողովրդին: Ժողովուրդը բազմաթիւ երգերով անմահացրել է սիրելի գործչի յիշատակը:

Սիրելի ընկեր, քո եւ ընկերների աճիւնները ա՛յն ժամանակ հանգիստ կը գտնեն, երբ սահմանի անդին եւ ասդին բռնակալ քաղաքական ռեժիմները խորտակուին յեղափոխական անյաղթելի ուժով եւ թալանի ու բռնակալութեան վայրերում սկսի խաղաղ քաղաքակրթութեան նոր դարագլուխ:

Միմոն Վրացեան, «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան» (1890-1950), Բոստոն 1950, էջ 456-461:

## ՉԱՒԷՆ (ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳՍԵԱՆ)

Մեզ մօտ պատահած վերջին մեծ դաւաճանութիւնը եւ նրան ուղեկցող մեծ կո-  
րուստներն ու դէպքերը թոյլ չտուին իր ժամանակին գրելու Մշոյ դաշտում ընկած  
մեր երիտասարդ ընկերոջ՝ Զաւէնի մասին:

Զաւէնը պատկանում է կովկասեան այն բացառիկ ու գաղափարական ինտելի-  
գենցիայի շարքին, որոնք յանձն են առնում գերմարդկային գոհողութիւններ, գա-  
լու հալածանքի ու տառապանքի դասական հայրենիքը, բորբոքելու ազատագրա-  
կան սրբազան կայծը...

Նա բնիկ գանձակեցի է, միջին կարողութեան տէր ընտանիքի զաւակ. սկզբնա-  
կան կրթութիւնն ստացել է իրենց քաղաքի ռուսական քաղաքային դպրոցում, ա-  
պա անցել է էջմիածնի Գէորգեան ճեմարանը:

Աշակերտական սեղանից նա եղել է ըմբոստների առաջին շարքերում. Գէորգ-  
եան ճեմարանի պատմութիւնը հարուստ է աշակերտական ըմբոստութիւններով,  
բայց վերջին ռուսական մեծ յեղափոխութեան այլքները աւելի ուժգին թափով  
բորբոքեցին ըմբոստ ոգին... Աշակերտներն առաջադրել էին մի շարք պահանջներ,  
որոնք արմատականապէս «Աշխարհականացումն» էին առաջադրում կղերական  
վարչութեան»... Կրօնական անհամբերողութեան ոգին ներել չի կարող այդ ըմբոս-  
տութիւնը եւ ահա երկրի ծաղիկ երիտասարդութիւնը արձակած դպրոցից «վասն  
ըմբոստ վարուց»...

Զաւէնը, իբրեւ առաջնորդ ըմբոստների, վռնտաւածների առաջին շարքում է,  
բայց ուսման ծարաւը նրան թոյլ չէ տալիս մի րոպէ անգամ դպրոցից դուրս մնալ:  
Ահա նա Երեւանի թեմական դպրոցումն է, բոլոր դպրոցներից ըմբոստութեան հա-  
մար վռնտաւածների միակ ապաստարանում:

Բայց Երեւանում էլ նա հանգիստ չունի. այնտեղ էլ պայթում է աշակերտական  
դժգոհութեան ռումբը. Զաւէնը դարձեալ ըմբոստների շէֆն է. այս 1905 թ. ըմբոս-  
տացումը կը մնայ բոլոր սեմինարիաների, մասնաւորապէս Երեւանի սեմինարիա-  
յի պատմութեան մէջ միշտ բացառիկ: Վարչութիւնը յամառում է ոեւէ զիջողու-  
թիւն անել, իսկ աշակերտութիւնը շարունակում է իր ուսումնադուլը. վերջապէս  
հասարակութեան ազդու միջամտութեամբ ու փոխադարձ զիջողութեամբ դպրոցը  
վերաբացում է...

Զաւէնն աշակերտական կեանքում եղել է մի կենտրոն, որն իր շուրջն է հաւա-  
քել ու կապել որոշ գաղափարական տիպի աշակերտութիւն. նրա սենեակը եղել է  
գաղափարական վիճաբանութիւնների, ոգեւորութեան ու իդէալական ծրագիրներ  
կազմելու վայր... Աշակերտական սեղանից իսկ մասնակցել է յեղափոխական գոր-  
ծին հէնց Դաշնակցութեան միջոցով. նա եղել է պրոպագանդիստների շրջանակի  
լաւ անդամներից մէկը...

Բայց Զաւէնի դէմքը աւելի որոշ կերպով պարզեց ու ձեւաւորեց բուն երկ-  
րում, առանձնապէս Վանում...

Դպրոցն ավարտելու առաջին տարին իսկ հարց է դնում երկիր մտնելու ընկերների յորդորը, դեռ սպասել, կեանք տեսնել, ուսումը կատարելագործել, ի գուր է անցնում. 1906-ի ամառը արդէն Սալմաստումն է. երկրի ընկերների խորհրդով հոն մնում է մի առժամանակ սկզբնական փորձութիւն ձեռք բերելու համար: Ղալասարցիք<sup>1</sup> նրան միշտ կը յիշեն. նա նրանց սիրելի ուսուցիչներէց մէկն է եղել. սիրելի ոչ միայն դպրոցում, այլ եւ դպրոցից դուրս: Սալմաստի բոլոր գիւղացիները, մանաւանդ նրա տանջւած ու կեղեքւած աշխատաւորութիւնը լաւ կը ճանաչէ իր երիտասարդ պրոպագանդիստ-սոցիալիստին: «Հողի եւ ազատութեան» պրոպագանդան թեւ առած թռչում է բոլոր գիւղերում...

Սկսում է սովորական տրաման, հարուստների եւ աղքատների կռիւը. Ձաւէնին պաշտելու եւ նրա դէմ չլսած անէծքների ու ինտրիգների շարանը... Բայց նա այնտեղի համար չէ. 1907 թ. մարտին երկրի ընկերների հրաւէրով նա ճանապարհւում է դէպի Վան... Ով ծանօթ է Տաճկահայաստանի ձմրան, ով կեանքի մէջ գէթ մի անգամ դժբախտութիւն կամ երջանկութիւն է ունեցել յեղափոխական գաղտնի ճանապարհ գնալու, այն էլ ոտով եւ 7-8 օր շարունակ, նա՛ միայն կարող է ըմբռնել այն տանջանքներն ու գերմարդկային համբերութիւնը, որով 20-21 տարեկան երիտասարդ, փափուկ կեանքին սովոր մարդը կարող կը լինի յաղթանակել ու հասնել իր նպատակին... Միշտ սարսափով ու մեծ հիացմունքով կը պատմէր իր քաջած նեղութիւնը, մինչեւ կուրծքը ձիւների եւ ջրերի մէջ հագուստով քայլելը, դուրս մնալու դժուարութիւնը եւ դրան ուղեկցող գաղափարական երազները: Առանձնապէս շեշտում էր այն կէտը որ ինքն այդ ընկերներին տանել չէր կարող այն անհեթեթ թէօրիան, որ կովկասեան երիտասարդութեան որոշ շրջանում շաբլոն<sup>1</sup> կերպով բերանէ-բերան պտտում էր, «Որ իբր Դաշնակցութիւնը իր գործունէութեամբ միայն, այն էլ գիտակցաբար, ծառայում էր կովկասեան բուրժուազիայի շահերին, նրա համար բանալով մի արդիւնաւէտ շուկայ Տաճկահայաստանում...»:

Այսքան տանջանքներ, այսքան հալածանքներ, այսքան զոհողութիւններ արւած հարազատ աշխատաւոր ժողովրդի քաղաքական ու տնտեսական ազատագրման համար եւ սա միայն հոլովել բուրժուազիայի շահերի տեսակէտից, այն էլ զուտ մատերիալիստական տեսակէտով, ամենակսկծեցուցիչ խոհեր են գարթեցնում այդ սեւ ընկերներին...

Ահա Ձաւէնը Վան է... մի թարմ, երիտասարդական մեծ շրջանում, սիրած եւ երագած վայրում... եւ նա ամենակարճ ժամանակաշրջանում ցոյց տուց իր ներկայութիւնը: Կազմակերպւած եւ գաղափարական որոշ բարձրութիւն ու գործունէութիւն ունեցող երիտասարդութիւնը Ձաւէնի դասախօսութիւնների եւ կրակոտ ճառերի ազդեցութեամբ ուժգին թափ է առնում. նախկին բոլոր հաւատալիքները — եւ ընտանիք, եւ համայնք, եւ ազգ, եւ դպրոց, եւ կրօն, եւ ամէն բան — վերագնահատման է ենթարկւում... երիտասարդական ուժեղ ֆանտազիան՝ սահմանները եւ իրական կեանքը մոռանալու եւ ժխտելու հանւած տրամադրութեամբ՝ առաջ է քայլում... Վանում ստեղծւում է մի մեծ երիտասարդական հոսանք, որը մկրտւում է «Նոր-Սերունդ» անունով երիտասարդների հրատարակած նոյնանուն թերթի անունով...

Կովկասեան աշակերտական շարժումների արձագանքները հասնում են Վան... Նորէն Ձաւէնը ղեկավար է ու խորհրդատու... Երիտասարդութիւնը երկար քնից ոտի է ելել. Ռուսական մեծ յեղափոխութեան ազդեցութիւնը, այս շրջանի վերջին տարիների սիստեմատիք գործունէութիւնը՝ երիտասարդութեան առաջ բացել է

նոր հորիզոններ, գործունէութեան նոր տաքտիկ. մտքի ու գաղափարական յեղափոխութիւնը նոր-նոր շրջանակներ է նւաճում... Բացում է դասախօսութիւնների մի մեծ շրջան, սոցիոլոգիայի, քաղաքական ազատութիւնների, հողային հարցի, յեղափոխական տաքտիկայի, համապետական յեղափոխութեան կարեւորութեան, համաթիւրքական համերաշխ գործունէութեան եւ այլ հարցերի մասին...

Զաւէնն այս շրջանի եւ այս ուղղութեան լաւագոյն աշխատողներից եւ ուժերից մէկն էր եւ թերեւս որոշ կողմերով միակը. շնորհիւ փորձած ոյժերի ներկայութեան, նա կարիք չունէր միջամտելու գործնական կազմակերպական հարցերին. նա ամբողջապէս տարած էր իր սիրած պրոպագանդի գործով: Զաւէնի այս եւ առաջիկայ բոլոր յաջողութիւնները ըմբռնելու համար պէտք է ի նկատի առնել, որ՝ նա օժտւած էր բազմակողմանի ընդունակութիւններով, որ՝ հակառակ իր կրթութեան եւ հասակին, աւելի մեծ պաշար ունէր, որ նա գիշեր եւ ցերեկ, քաղաքում եւ գիւղերում, լեռներում եւ հանգստութեան վայրերում գիրքը ձեռքից վայր չէր ձգում: Տաճկաստանում, այն էլ յեղափոխական գործի ընթացքում, այսքան աշխուժով կարգացող ոչ մի ընկեր մենք չենք տեսել կամ լսել, սա մի բացառիկ երեւոյթ էր: Կարծես զգալով իր երիտասարդական սխալը, որ առանց հիմնաւոր կրթութեան մտել է երկիր եւ գործի մէջ, ցանկանում էր այդ գերմարդկային ճիգերով լրացնել պակասը. ի պատիւ նրա, պէտք է ասել, որ լրացնում էր եւ երանի մեր բոլոր երիտասարդ ընկերներն ունենային այդ շատ գնահատելի եւ բարձր հոգեկան ընդունակութիւնը եւ մեծ պահանջը... Այս բոլոր յատկութիւնների հետ նրա բնաւորութեան մէջ կային գծեր, որ նրան անպայման մեծացնում էին ու բարձրացնում իր շրջապատում. նա անպայման մի երազուն իդէալիստ էր, օժտւած ամենամեծ չափով յեղափոխական շիտակութեամբ, մանաւանդ անկեղծութեամբ, վերջը ուղղակի հասած էր կատարեալ չափերի եւ ահա այս բոլոր յատկութիւնների բերմամբ նա կարճ ժամանակում դարձաւ մեր շրջանի երիտասարդ ընկերների յոյսն ու երազը, ոգեւորութեան աղբիւրը...

Բացի երիտասարդական-մտաւորական շրջանակից, Զաւէնը քաղաքում լայն չափով մասնակցել է ժողովրդական լայն շրջանների կազմակերպչական, մանաւանդ պրոպագանդայի գործով...

1907 թւի ամառը Վանում մէկը միւսի ետեւից պայթող արհեստակցական շարժումներն ու գործադուլները մեծ մասամբ Զաւէնի պրոպագանդի եւ աշխատանքի հետեւանքներն էին. նա էր, որ Վանի աշխատաւորութիւնը սկզբնական աշխատութիւններից բարձրացրեց եւ լայն դասակարգային-արհեստակցական միութիւններ առաջ բերաւ...

Ամառուայ գաւառական գործունէութեան ժամանակամիջոցում, երբ դիւրութիւն կայ մտնելու գիւղերը եւ ապաստանելու լեռները ռեւէ վտանգի դէպքում, Զաւէնը թողեց քաղաքի համեմատական յարմարաւոր կեանքը եւ նետուց դէպի գիւղական շրջանը: Արճակի եւ Հայոց Զորերի աշխատաւոր ժողովուրդը, մանաւանդ նրա երիտասարդ մասը ամենախորհրդաւոր յիշողութիւններն ու սպաւորութիւններն ունի Զաւէնից. 3-4 ամիս շրջելով գաւառ մեր փորձած ընկերներից մէկի հետ, վերջը սկսում է մի քանի պրոպագանդիստ-շրջիկ ընկերների հետ գաւառ իջնել մեծ մասամբ ծպտւած. այդ օրերում նա տանում էր եւ պրոպագանդական եւ կազմակերպական եւ գիւղական-համայնական գործերը. վերջինի մասին ամէն անգամ գիւղից դառնալուց կ'ասէր. «Այդ համայնական գործերը եւ դատերը մեր գահ-

լէն տարան, դրանց մէջ ոչ մի յեղափոխական գործ չկայ, մենք ուղղակի այդպիսի գործերի միջամտելով կեղտոտուում ենք կամ փչանում, կառավարական ֆունկցիաները միշտ զգւելի են...»:

Ընկերների բոլոր բացատրութիւնները, որ մենք ստիպւած ենք ժամանակաւորապէս միայն մեզ վրայ վերցնել այդ գործը, որ այդ էլ անում ենք գիւղական-համայնական մարմինների միջոցով, որ վերջինը մի անխուսափելի չարիք է, բայց փոքրագոյնը, դրանով չէզոքացնում ենք կառավարութեան ազդեցութիւնն ու ներկայութիւնը գիւղերում եւ հնարաւորութիւն ստեղծում յեղափոխական գործունէութեան... Բայց բոլոր համոզումները ի զուր են. նա մի անգամ նկատել է, որ դա հակայեղափոխական ձեռնարկ է, ուրեմն եւ անարժան միջամտութեան:

Այսպէս շարունակուում էր մեր խաղաղ կեանքը. յաջողութիւնները յաջողութիւնների ետեւից գալիս են. Ալի-Բէկի<sup>3</sup> բոլոր ճիգուհտութիւնները ի դերեւ ելան. համաթիւրքական յեղափոխութիւնը փաստ դարձաւ. վերջին Ընդհանուր Ժողովը<sup>4</sup> խորունկացրեց մեր սոցիալիստական ծրագիրը, գտեց մեր շարքերը, վերջ տւաւ ներքին երկպառակութիւններին, մանաւանդ կիրառեց Տաճկաստանի համար մի նոր ու կենսունակ գործելակերպ. մնաս բարեւ հին, խաբուսիկ երագներ. մենք այժմ աւելի ենք կպած մեր երկրին. մենք այժմ աւելի ուժեղ ենք, քան առաջ, մեր շարքերը այսօր խտանում են եւ մահմետական տարրերով... Բայց «մի ծաղկով գարուն չի լինի»։ Վանի գործունէութիւնը պէտք է ընդգրկել եւ այլ շրջաններում, առանձնապէս դժբախտ, բայց միշտ հերոս եւ յեղափոխութեան աւանգարդ Մշոյ դաշտում... Ընդհանուր Ժողովի ցանկութիւնն էլ այդ էր...

Զաւէնը դաշնակցական երիտասարդութեան յատուկ թափով ձգտում է դէպի աւելի մուտք ու խաւար անկիւններ, դէպի այնպիսի վայրեր, ուր պահանջւում է աւելի մեծ ընկեր ու գոհողութիւն, քան հոս: Մշոյ դաշտը այդ տեսակէտից ամենատիպիքականն էր. տաճիկ կառավարութիւնն իր յոռի ուժերով ամբողջ թոյնը մի մեծ թափով թափում է այդ ժողովրդի գլխին. վերջին դէպքերը, կռիւները, խժոժութիւնները ուղղակի դժոխք են դարձրել այդ շրջանը. հարկաւոր է նոր ուղղութեամբ գործունէութիւն, ուրեմն եւ ինտելիգենտ ընկերների ներկայութիւն... Իսկ էրզրումի դրացիութիւնն այդ շրջանին, նրա թիւրքական ըմբոստութիւնը աւելի անհրաժեշտ է դարձնում ընկերների ներկայութիւնը... Մշից եկած նամակները սարսափով էին կարդացւում. ընկեր, ընկեր եւ ընկեր, այս էր նրանց միակ պահանջը... Զաւէնը հանգիստ չունէր. դէպի Մուշ. ահա վերջին ամիսների նրա ամբողջ մտածողութեան առարկան. դէպի նոր վայր, դէպի այնպիսի վայր, ուր գործը դեռ նոր է սկսւում եւ հնարաւորութիւն կայ սկզբէն ցանկալի եւ յեղափոխական ձեւով գործի հիմքը դնելու. դէպի ինքնուրոյն գործունէութիւն... Ահա նրա երագները... Ընկերների բոլոր բացատրութիւնները... նա դեռ անփորձ է, որ չի կարող դիմանալ Մշոյ դժարութիւններին, որ նա հոս անհամեմատ աւելի օգտակար կը լինի, շնորհիւ համեմատական «խաղաղ» կեանքին կամ քաղաքի երիտասարդութեան, այդ բոլորը ի զուր են, որոշել է գնալ, ուրեմն պիտի գնայ...

Աշնան ձիւնախառն ու ցուրտ օրերին պատրաստութիւններ ենք տեսնում Զաւէնին եւ ընկերներին ճամբայ դնելու. նրա ամբողջ պահանջը լաւ գէնք եւ բազմաթիւ ընտիր ուռեսերէն գրքեր են. գիրք եւ գէնք, գէնք ու գիրք, ահա Զաւէնի պաշտամունքները. վերջին երեկոն նա աշխարհի երջանիկն է համարում իրան. Սպարտացու բաժանումն է, նոյնիսկ առանց համբոյրի. սենտիմենտալութիւն չի սիրում...



«Մնաք բարեաւ... Անհունապէս երջանիկ եմ գնալուս համար»... Ահա վերջին խօսքերը... Եւ մի քանի շաբթից յետոյ բօթաբեր լուրը. Չաւէնը Սէյտօ[ի] եւ Ջնդոյի հետ, Կասըմ բէյի հետ տեսակցելու ժամանակ, հէնց իր տանը տմարդի կերպով գըլխատուած է, այն Կասըմ բէյի, որի հետ Գէորգ-Չաւուշ տարիներ շարունակ բարեկամութիւն է արել, որի գիւղը վերջերս կառավարութիւնն ումբակոծել էր իբրեւ յեղափոխականներին «եաթաղ» տուղի... Ուրիշ կերպ սպասել դժուար էր. քրուրդ բէկ, որոշ դասակարգային շահերով... վերջ ի վերջոյ պէտք է դաւաճանէր... Ուրիշ կերպ չէր կարող լինել. երիտասարդ ու վառվռուն ընկեր, առանց փորձուած ձեռքի պէտք է վառւէր առաջին պատահած գրաւիչ կրակում... Սպանութեան մանրամասնութիւններն այնտեղից կը գրեն ընկերները, միայն այսքանը գիտենք, որ ընկերներից Ռուբէնն անգամ չի տեսնել այստեղից գնացողների հետ, որ այդ տեսակցութիւնը եղել է անակնկալով եւ հետեւանքն էլ ողբերգական... Եւ այսպէս 21 տարեկան հասակում գերեզման իջաւ օտար, բայց պաշտուած հորիզոնների տակ Չաւէնը...

Յանձին Չաւէնի Դաշնակցութիւնը կորցրեց իր տաղանդաւոր, երիտասարդ եւ մեծ ապագայ խոստացող երիտասարդ ընկերներից մէկին... Վարդը դեռ չբացուած թառամեց...

Չաւէնը գնաց ճոխացնելու Բաբգէն Սիւնիների, Մենակների, Իսաջանների, Թորգոմների, Ռուս Գէորգների, Վահանների, Թաթուլների երկար շարքը մի նոր, չքեղ դէմքով: Յարգանք պարտականութեան դաշտում ընկողների յիշատակին, ծունր մեր սիրելի Չաւէնի անշիրիմ նշխարների առաջ...

Թող ծնողները բանաստեղծի ասածի պէս լան եւ ընկերները Չաւէնի պէս մեղամաղձտութեամբ երգեն.

«Լաց, մէրիկ ջան, որ էլ չեմ գայ,  
Վէրքս խորն է տուն չեմ գայ»...

ԱՐԱՄ

1908 թ., ապրիլ 14

Ծանօթ խմբ.– Արամի այս յօդուածը, որոշ խտացումով եւ անստորագիր, լոյս տեսած է «Դրօշակ»ի մէջ, 1908 թ. թիւ 6, էջ 91:

1.- Ղալասար – Մալմաստի գիւղերէն, Ատրպատական:

2.- Կաղապարեալ, սովորական, տափակ կերպով:

3.- Ալի բէկ – Վանի նահանգապետ, հայահալած. սպանումը դաշնակցական անաբեկիչի կողմէ:

4.- Խօսքը 1907 թ. ՀՅԴ. Չորրորդ Ընդհ. ժողովի մասին է:

# ՏԻՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ («ՀԱՅՐԻԿ»)



Հեռագիրները օրը օրին գուժում են մեր լայնարձակ հայրենիքի այս ու այն ծայրից մահերը մեր թանկագին ընկերների...

«Հայրիկն» էլ մեռաւ... Այդ անւան հետ կապւած չէ մեր կուսակցական տերմինոլոգիայի ոեւէ ածական. Տիրանը զօրավար չէ, խմբապետ չէ, Կոմիտէի անդամ էլ չէ... Նա մի սոսկ զինւոր էր — զինւոր տառապանքի, լուռութեան, անյայտութեան, կարօտութեան եւ անաղարտ անձնուիրութեան:

Խեղճ Տիրան. քո մահն եւս գուցէ անյայտ կը մնայ, ինչպէս քո կեանքն ու գործը: Իմ աչքի առջեւ է նա, այդ բարի ու հեղ դէմքով, բաբախուն սրտով ընկերը, երբ նա առաջին անգամ էր ոտք կոխում Հայաստան, Վան, իր երազների աշխարհը, տեսնում նրա ժպտուն երեսը. այնքան գոհ, այնքան երջանիկ, ինչպէս փոքրիկ երեխան հարսանիքի մէջ...

— Վերջապէս, հասանք: Տասը տարի է, երազել եմ, յուզել, լացել, փախել, տառապել. վերջապէս, հասանք. ալ մեռնելը հոգ չէ, ասանկ չէ՞, Կարօ...

— Տօ ի՞նչ մեռնել, մինչեւ «Հայաստանը չագատենք ո՞վ կը մեռնի»...

Խեղճ Կարօ, «Հայաստանը ագատուեց» առանց հայ ժողովրդի տառապանքը վերջանալու եւ առանց քեզ գոհ թողնելու, ապա եւ հեռագիրը գուժում է:

«Տիրանը մեռաւ»... Չասենք մեռաւ, Տիրանը մի վառուած մոմ էր մեր ագատութեան մեհեանին մէջ, նա վառուեց եւ մարեց:

Բայց ո՞վ էր նա: Մեր կուսակցութեան միշտ ծածանւող դրօշին տակ շատ ու անյայտ ընկնողներից մէկը...

Նրա կենսագրութիւնը կարճ է եւ անպաճոյճ, ինչպէս կարճ եղաւ նրա կեանքը: Բուրգարիայում ծնւած, այնտեղ մեծցած եւ այնտեղ կրթւած:

Մէկը այն դէմքերից, որոնք հայրենիքի եւ իր սիրած ժողովրդի սահմաններից սարբեր ու ձորեր հեռու լինելով հանդերձ, ապրել են նրա հետ եւ լացել ու խնդացել նրա հետ:

Բուրգարիոյ մէջ նրա կուսակցական կեանքը յայտնի է. խմբեր կազմակերպել, ամսավճարներ հաւաքել, ներկայացումներ տալ եւ այլն:

Բայց այդ բոլորը չէր կարող նրան գոհացում տալ... այն ժամանակ՝ երբ հայրենիքի սահմանազուլիներում ժողովուրդը հնչեցնում էր իր ուղիղ ձայրը.

«Դաշնակցական խո՛ւմբ, գնանք մենք Մասուն»...

Եւ ահա միացած երկու այլ ընկերների, Սարգսի եւ Կարոյի հետ (առաջինը նոյնպէս բուրգարացի, վերջերս Վանի մէջ մի փոլիս զարնելով, փախստական եղաւ. երկրորդը՝ Ամերիկայէն) — ուղեւորուեց Կովկաս՝ Սասուն երթալու համար...

Ուշ էր... Հայրենի երկրի արծիւները ընկճել էին հերոսական դիմադրութիւնից յետոյ: Օգնութեան գացողները ընկել էին սահմանազուլիներում:

Բայց Կովկասի մէջ գործ կար, նգովեալ թիւրքական ընդհարումները, կենդանի

եւ արիւնալի գործ. եւ ահա երրորդութիւնը՝ Հայրիկ, Կարօ եւ Սարգիս՝ Շուշի են. ամենակարեւոր դերի մէջ: Ռմբագործութիւն, ռակետային գործ, ուժանակային, դաւադրական ձեռնարկներ եւայլն: Իրենց միացել էին եւ ուրիշները, որոնցից մէկը միայն մինչեւ վերջ մնաց իրենց հետ — Զոհրապը, որ այժմ Պարսկաստանի կռիւների մէջ է:

Բայց սրանք միայն պատրաստող չեն, այլ եւ գործադրող: Շուշում եւ Ղարաբաղի բազմաթիւ ընդհարումների մէջ այդ խմբակը մասնակից է եղել, բայց կռիւները ղեկավարող խմբապետը երբեք չի մոռանում սրանց՝ մանաւանդ Տիքատանգուրիի յայտնի դիրքը գրաւելու ժամին, երբ խմբակը մահաւան հետ խաղալով, հսկայ դինամիտն էր պայթեցնում...

Կառավարական հալածանքից ազատելու համար փոխադրում են արհեստանոցը Վարանդա, Շուշույ գաւառը. եւ ահա գրկանքների, խոնաւութեան եւ խաւարի մէջ՝ Տիրանը պէտք է ածուխ ծեծէ, ուժանակ կտրատէ, ապագայ ձեռնարկների համար... Եւ այդ բոլորը՝ իր թոյլ, թոքախտաւոր կրծքով:

Հայ թրքական ընդհարումները վերջացան. Տիրանը հանգստանալու մասին չի մտածում:

Դէպի երկիր... դէպի Վան... հակառակ նոյնիսկ Վանի մարմնի կամքին, որ չէր ուզում՝ նոր մարդ ընդունել:

Խումբը Վան է, նորէն արհեստանոց, նորէն խարտոց, նորէն ածուխ ծեծել. աւելի սոսկալի պայմաններում, քան Շուշի:

Չեմ մոռանայ Վանի Աղուէսաձորի արհեստանոցը. մի համեստ ընտանիք իր սենեակներից մէկը տրամադրել է մեզ իբրեւ արհեստանոց. այնտեղ է թագցրւում հարիւրաւոր ռումբեր, այնտեղ են նորոգւում հազարաւոր գէնքեր... եւ այս բոլորը ամիսներ շարունակ. կառավարութիւնը անգիտակ, ժողովուրդը բէխաբար. եւ օրին մէկը, արհեստանոցի մի այլ վարպետ ընկերոջ սեղանին դրուած ռումբը պայթում է... գոհ են գնում տան երեխան եւ մեր գինուոր Ռուբէնը:

Տիրանը եւ ընկերները ազատւում են, դուրսը գտնուելով: Խումբը, այնուամենայնիւ, չի կորցնում իր պաղարիւնութիւնը. հարիւրաւոր գէնքեր, գործիքներ, ռումբեր պահելով գաղտնի պահարանի մէջ, վիրաւոր եւ մահացած ընկերների հետ օրը ցերեկով քաշւում է Այգեստանի մի այլ թաղ:

Այդտեղ եւս աղմուկ է ընկնում: Կառավարութիւնը լսում է: Ամէնքը գիտէին, որ ռումբ է պայթել, բայց թէ ո՞ւր՝ ոչ ոք գիտէր, որովհետեւ ոչ ոք կը կասկածէր «Ճոճ Աղայի» տանը արհեստանոց լինելը. վերջապէս, տանը մնացած միակ պառակիւնը միամտաբար խոստովանում է դրացի հայ փոլիսին, խուզարկում են եւ հետքեր գտնում, առանց մեծ բան տանելու: Մի քանի օրից՝ փոլիսը գետին է գլորւում: Մի քանի ամիս դադար: Նոր արհեստանոցի համար տեղ պէտք է գտնել. սարսափը ընկել է քաղաքը. ամենամտերիմ եւ հաւատարիմ տներն անգամ մերժում են տեղ տալու ռումբի գործարանի համար... Խնդիրը ձգձգւում է եւ ահա յանկարծ Դաւո-ի սեւ դաւաճանութեան օրը:

Անբաժան ընկերները իրար հետ են, խուզարկում է դրացու տունը. մեզնից թոյլտուութիւն են խնդրում, աղաչում, պաղատում, որ թոյլ տանք կրակելու. իրողութիւնը ինձ անյայտ է, չեմ գիտեր ի՞նչ է անցնում մեր շուրջը. խումբը ոտքի հանելուց եւ հարկաւոր կարգադրութիւնը Կարոյին անելուց յետոյ, մեկնում եմ ընկերները գտնելու եւ հաւաքական խորհրդակցութեամբ մի բան անելու: Իրողու-

Թիւնը հասկանում ենք կէսօրին: Վճռում ենք, որ մի խմբակ թափանցի զօրքի մէջ եւ Դաւօ-ին տերրորի ենթարկի: Ո՞վ կարող է առաջ գալ մի այդպիսի դերի համար-ամէնքն են ուզում, բայց նախապատուութիւնը այդպիսի քայլերի համար տրւում է փոքրիկ խմբակին: Տիրան եւ ընկերներն չեն յաջողում այն օրը:

Գիշերը վրայ է հասնում, գինւորական ընդհանուր ժողով-խորհուրդը ունինք, ի՞նչ անենքը ցցած մեր առաջ. ամբողջ գիշերայ խորհրդակցութիւնից յետոյ որոշ-ւում է յաջորդ օրը խմբերը տեղաւորել այն դիրքերում, ո՛ւր որ գէնք կայ. մի քանի կասկածելի տեղերից արդէն գէնքերը հանել էինք, խումբը պիտի սպասէր, որ Դա-ւօն զօրքերի հետ խուզարկութեան գար, տեղնուտեղը սպանելու համար:

Մեր հաշիւների մէջ սխալում ենք. բոլորովին հակառակ կողմն է խուզարկ-ւում. յուսահատութիւնը պաշարում է ժողովրդին. գէնքերը օր ցերեկով տանում են, հարկ է դիմադրել:

Խմբերը ցերեկով տեղերնին փոխում են եւ բռնում են այն ճամբան, որով Դաւօն պիտի անցնէր: Կարեւոր ընկերները բռնում են Սահակ-բէյի յայտնի դիրքը. հոն է խմբակը, որի մէջ եւ «Հայրիկը»: Պայմանը այս է. երբ Դաւօն փողոց ելնի, լաւ նշան գարկողները պէտք է կրակեն: Զօրքը ելնում է. ընկերները նշան են առնում, սա-կայն մոլորում են, որովհետեւ դաւաճանը աչքի ցաւ ունենալով, աչքը կապած էր: Մեր նշանն այդ էր: Զարագործը մեր բոլոր ձեւերին ծանօթ լինելով, հագել էր գին-ւորի հագուստ եւ իր ձեւով շատերի աչքը կապել տւել: Անհամբերներէն մէկը տես-նելով առաջին աչքը կապած մի գինուոր, զարկում է: Զինուորն ընկնում է, իսկ Դա-ւօն ճողպարում, քաշւելով փողոցի տներից մէկը: Կռիւր պայթում է. ամէն կողմից թափւում են կռուող խմբերը եւ տեղական կամաւորները կռւի վայրը. Դաւօն զօր-քով շրջապատւած է. իրենից առաջ մի կառք լի գէնքերով, ռումբերով, դինամիտի մեծ արկղներով եւ 20,000-ի չափ փամփուշտով, թողնում ու փաչխում են: Մեր եւ նրանց շղթայի հեռաւորութիւնը 30-40 քայլ է. թիւրքերը փորձում են կառքը քշել, մերոնք կրակում են կառքի ձիերի վրայ, կառքը անշարժեցնելու համար: Թիւրքե-րը եւ զօրքը տեղի չեն տալիս, հարկ է լինում իջնել ուղղակի փողոց:

Յիշում եմ հազարաւոր կրակներ մեր եւ թշնամու կողմից, փողոցը դատարկ՝ մի կիլոմետր երկարութեամբ. Տիրանը չոքած է կառքի մի ծայրը, Զոհրապը միւս, մնացածները գնդակների տակ գէնքերը եւ փամփուշտներն են կրում: Այսպէս 1-2 ժամ գնդակի կարկուտը չի թուլացնում անտէր, անապաւէն կռուողներին. Հայրիկը գոռում է.— «գէթ մերոնց յայտնեցէք, որ մեզ վրայ չկրակեն, հեռու են, չեն ճանա-չում մեզ»: Մերոնց գնդակէն մի ընկեր թեւից վիրաւորւում է: Կառքը համարեա դատարկ է, տղաները յոգնել են, վերեւից կանչում են. քրտինքի, ցեխի եւ վառօդի մոլորի մէջ խղճւած... ոտի վրայ կանգնել չի լինում... Թիւրքերը նորից փորձում են մօտենալ կառքին, մերոնց համազարկը նորից կանգնեցնում է նրանց: Համազարկի որոտը դեռ չմարած՝ լսւում է մի հսկայական պայթում: Մենք կարծում ենք, թէ թնդանօթ են արձակում. մեր գլխաւոր դիրքը — Սահակ-բէյի տան մի պատը խոր-տակւում է, փողոցի բոլոր պատուհանները ջարդւում:

Ահագին պայթումից յետոյ՝ խեղդող լուութիւն... Մենք սպասում ենք երկրորդ պայթումին, բայց չկայ: Յանկարծ նկատում ենք, որ թշնամին դիմացի դիրքերը — փողոցը — մաքրում ու փախչում է դէպի թիւրքական թաղերի խորքերը: Յետոյ հասկանում ենք, որ կառքի մէջ եղած ուժանակի ցինկի տուպն է պայթել եւ սոս-կումն առաջացրել ամբողջ քաղաքի մէջ:

Զօրքերը խկոյն քաշուում են զօրանոցները: Մնում է մեր շղթայի մէջ եղած վաշտը, Դաւիթի հետ: Պաշարած զօրքը օգնութիւն է աղաղակում տուրուբաներով, բայց պատասխանը զօրանոցներից բացասական է, իրենց էլ հրաւիրում են վերադառնալ... Վերջապէս, մութը վրայ գալով, զօրքը կարողանում է խուսափել, օգտուելով նրանից, որ պայթումի պատճառով Սահակ-բէյի դիրքից մեր ընկերները քաշուել էին արդէն:

Վրայ է հասնում ճշնող գիշերը. երկու ժամ չանցած՝ իմաց են տալիս, որ հրդեհ է սկսուել Սահակ-բէյի տնից. յետոյ իմացանք, որ կառավարութիւնը դիտմամբ վառել էր տւել այդ անագին տունը, որ 1896-ին եւս դիրք էր ծառայել եւ վառուել: Վերաշինուել էր, նորէն վառեցին եւ տէրը մեզ հետ բանտ նստեցրին, տան ամբողջ հարստութիւնն էլ վրայ տալով:

Այս անակնկալ դիմադրութիւնը կառավարութեան յանկարծակիի բերաւ: Նա հասկացաւ, որ դեռ պէտք է դիմադրենք. արդէն Դաւո-ի դաւաճանութեամբ մեր ուժերի մասին գաղափար ունէր, այժմ՝ իրենց տւած 40-45 զոհը սարսափեցրեց: Ուրոշում են — անբաւարար համարելով քաղաքում եղած 5000 զօրքը — նոր զօրք պահանջել Կարինէն:

Զինադադար 40 օր: Հայկական թաղերը մերն են. ոստիկաններ, պաշտօնեաներ, թիւրք ժողովուրդ քշած այնտեղից: Շուկան գոց է:

Հետեւանքը յայտնի է. մի անյայտ պատանի, որի գոյութեան մասին շատերը գաղափար չունէին — Տաճառը<sup>2</sup>, օրը ցերեկով, զօրքի քթի տակ, գետին է գլորում դաւաճանին:

Մատնութիւններն ու դաւաճանութիւնները սկսում են մասսայական բնոյթ ստանալ. խմբերը քաշուում են լեռնային գաւառները:

Նոր զօրքը հասնում է Կարինէն ու Մուշէն. ասում էին, որ 20,000 էր հաւաքուել: Սկսում է Վանի յայտնի դրաման. ամէնքը լքում են. մնում է քաջերի մի խմբակ, որ թափառում է լեռների մէջ անօթի եւ անապաստան:

Ընկերներից մէկը պատմում է, որ մի անգամ լեռը ելնելիս, Հայրիկը ուշացել էր խմբից. ամէնքը կարծում էին, որ կրծքի թուլութեան պատճառով էր. խումբը նստում է հանգստանալու եւ Հայրիկին սպասելու: Նա գալիս է. պատմող ընկերը նկատում է, որ Տիրանը չի կարող ոտքերը գետին դնել: Երբ նա նստում է, ամէն ինչ պարզուում է. կօշիկները եւ գուլբաները պատուտուել են, Տիրանը քար է գալիս ամբողջ օրեր, բոբիկ ոտներով փշերի ու մացառների վրայով, անտրտունջ եւ անվհատ:

Սահմանադրութիւնը հռչակուում է. Տիրանը Վան է, կարկտնած սօլերով, պատառտած շորերով եւ կարմրած թշերով. անողոք հիւանդութիւնը արդէն բոյն էր դրել...:

Դրամ չունինք, չենք կարող ամէնքի համար զգեստ գնել. գինւորներին տուն ենք դրկում:

Տիրանը հեռացաւ Վանէն — չարաբախտ Վանէն — նոյն կարկատուն սօլերով, նոյն ծւատած շորերով, գրպանը դատարկ: Խմբակը գնաց Պարսկաստան: Յետոյ լսեցինք, որ Տիրանը այնտեղի կռիւների մէջ է:

Բայց թոյնը լափում էր ներսից: Ընկերները ստիպում են նրան տուն դառնալ: Մնացածը յայտնի է:

Երիտասարդ, վառվռուն գաւակը վերադառնում է հայրենի աղքատ տնակը, արդէն մէջքը ծռած, անընդունակ աշխատանքի:

Ընկերոջ մասնաւոր աջակցութեամբ Տիրանը գնում է բժշկւելու մի կլինիկ, ուսկից մահւան գոյժը տւին մեզ:

Այժմ էլ դեռ լաւ յիշում եմ այդ սիրելի դէմքը. յիշում եմ, թէ ինչպէս երեկոները, երբ հանգիստ քաղաքացիները իրենց զգեստները հանելով անկողին կը մտնէին, մեր դժբախտ ընկերները պէտք է պատրոնտաշները ամրացնէին՝ տեղափոխւելու կամ գիշերւայ անակնկալներին դիմադրելու համար:

Յիշում եմ, թէ ինչպէ՛ս մեր Տիրանը, որպէսզի ազատի պատրոնտաշի սոսկալի ճնշումից իր թոյլ կուրծքը, իր հնամաշ ու կեղտից սեւցած երեսսրբիչը խնամքով ծալած դնում էր կրծքի վրայ շապիկի տակ, պաղ եւ մայրական, գուրգուրանքի կարօտ սիրտը տաքացնելու համար:

Յիշում եմ, թէ ինչպէս գիշերները, երբ պահապան էր, ճրագը վար դրած, լոյսը վար իջեցրած եւ ինքը երեսի վրայ ընկած, կարդում էր «Յառաջ»ի գրադարանի գրքերը:

Յիշում եմ, թէ որպիսի ջերմեռանդութեամբ պաշտպանում էր նա ընկերվարական սկզբունքները ընդդէմ մոլեռանդ եւ բորբոսնած «ազգասիրութեան»...

Ես միշտ զարմանում էի, թէ ինչպէս է այդ վտիտ մարմինը կարողացել այդքան գիտելիքներ հաւաքել, այդքան դառն օրերի մէջ եւ այդ գործնական ու տաժանելի աշխատանքների ընթացքում:

Մի անգամ իմ կատակ-հարցումին.

– Տիրա՛ն, Դաշնակցութեան մէջ ի՞նչը կը սիրես.–

Պատասխանում է.

– Նախ անոր գաղափարները կը սիրեմ, ապա Քրիստաֆորը<sup>3</sup>:

Մեռաւ եւ թաղեց ո՛չ հեռու իր երկրպագութեան առարկայից...

Թո՛ղ Քրիստաֆորը իր մեծ, իր տաք սրտի մէջ ջերմացնէ քեզ, իմ խեղճ, իմ բազմատանջ Տիրան... մինչեւ որ կը ծնւի եւ հայերի մէջ այն մեծ արձանագործը, որը կը կերտէ «անյայտներիդ» արձանը, այս տողերով.

«Այստեղ կանգնի՛ր ու խոնարհուի՛ր, ո՛վ անցորդ, որովհետեւ այստեղ են բոլոր նրանք, որ հիւսեցին ձեր սիրուն երազները»...

Իսկ մինչ այդ՝ դու եւ բոլոր անյայտներդ կ'ապրէք այն սրտերի մէջ, որոնց հետ ապրել էք եւ տառապել էք:

Անյա՛յտ զինուորներ ժողովրդական ազատութեան, դուք մեր փառքն էք եւ անմահ էք...

ԱՐԱՄ


«Դրօշակ», 1912 թ., թիւ 5, էջ 117-119:

1.- Արդեօ՞ք տուրուտապերով, այսինքն հոգին տալու տազնապով, հոգեվարքով:

2.- Խօսքը Տաճատ Թերլեմէզեանի մասին է (1888-1982):

3.- Խօսքը Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներէն Քրիստափոր Միքայէլեանի մասին է:

## ԾՈՒՌ ԴԱՒԻԹ (ԴԱՒԻԹ ԹՈՒՄԱՆԵԱՆ)



1910 Յուլիս 30-ին Վանի Արարուց հրապարակի վրայ, մի գզլ[ե]լի դաւադրութեան գոհ գնաց մեր Ծուռ Դաւիթը – Դաշնակցութեան զինուորական շարքի ամենայանդուզն տիպերից մէկը:

Դաւիթը բնիկ Ալջաւագցի է – Վանի գաւառէն, գիւղի գաւակ, անգրագէտ, բայց գգայուն սրտով եւ իր ժողովուրդի ցաւերին գիտակից:

Նա յարել է Դաշնակցութեանը մեծ կոտորածներից առաջ, աշխատել է դեռ Պետոյի եւ Վազգէնի օրերում<sup>1</sup>:

Ջարդերէն վերջը, երբ 800 վասպուրականցի երիտասարդներ իրենց գերեզմանը գտան Գիւզուլդարայի լանջերում, եւ երբ քաղաքի մէջ մնացել էին «խոհեմները» իրենց հպատակութեան կոչերով, Դաւիթը դուրս է մնացել այդ անկումից եւ չդիմանալով այդ լքման՝ անցել էր արտասահման:

Կոտորածները, հակառակ Համիդի երազներին, չեն դառնում յեղափոխութեան գերեզմանափորը, ընդհակառակը. Գիւզուլդարի գոհերը վրէժ էին աղաղակում – եւ վրէժը լուծւեց... «Խանասորի արշաւանքը», նոր թափ ու ոգեւորութիւն մտքեց երկրի մէջ մնացած յեղափոխական փոքրիկ շրջանակների մէջ. պէտք էր վերակազմել: Դէպքերից յետոյ արտասահման անցած ուժերը կամաց-կամաց անցնում են երկիր. արդէն ճիշտ «Արշաւանքի» օրերը Վազգէնի եւ Գուրգէնի<sup>2</sup> եւ երկրացի բազմաթիւ ընկերների հետ առաջին խումբը մտնում է Վան:

Հարկաւոր էր նորէն ոյժ ամբարել, հարկաւոր էր գէնք, իսկ այդ կը բերուէր արտասահմանէն, ամէն մի գէնքի համար յաճախ մի քանի մարդկային գոհեր տալով...

Եւ ահա՛ «Խանասորի Արշաւանքի» դպրոցի զինուորների առաջին զինատար խումբը ճանապարհուում է Վան, յայտնի սպարկերտցի Շաշոյի<sup>3</sup> խմբապետութեամբ, որը Արշաւանքի քաջերէն մէկն էր:

Դաւիթ արտասահման մնացողներէն չէ, երկիրը քաշում է նրան, եւ նա արդէն Շաշոյի հետ [է]:

Խումբը մատնւած է հէնց սահմանազիւից եւ կուլի բռնուում: Չտեսնւած եւ չլսւած զինատար խմբերի պատմութեան մէջ – նրանք 8 օր գրեթէ անդադար կուլելով, առաջանում են դէպի Վան... Կուլները սարսափ են տարածում շրջանին մէջ, կուռղներից մի քանիսը իրար կորցնում են, նրանց մէջ էր Դաւիթը: Լաւ ծանօթ լինելով շրջանին եւ ճանապարհին՝ նա գէնքերը պահելով, ուզում է մտնել Բաշկալէ, բայց դժբախտաբար բռնուում է: Եւ սկսում է համիդեան ռեժիմին յատուկ բարբարոս

ծեծը... Դաւիթը անյողդողդէ է. բան փրցնել բերնից չեն կարողանում. ընդհակառակը գաղափարի եւ գէնքի մարդը յաղթանակում է: Դաւիթը սկսում է բանտում իր սիրած քրոջական երգը, որով գրաւում է բոլոր պաշտօնեաներին եւ քիւրդ բանտարկեալներին... Ծեծը վերջանում է, սկսւում է դատավարութիւն. արդիւնքը պարզ է. գէնքով դիմադրութիւնը կառավարութեան արժանանում է «կախաղանի», բայց օր աւուր սպասող կախաղանի փոխարէն հասնում է ընդհանուր ներման լուրը:

Դաւիթ ազատ է եւ Վանում սուսիկ-փուսիկ զբաղւած է իր գործով. նա արհեստով պայտագործ էր: Վերակազմութիւնը շարունակւում է, խմբերից յետոյ հասնում են ինտելիգենտ ուժերը. յեղափոխական կեանքը սկսում է տաքանալ Վանում, հասել է եւ Վարդգէսը... Դաւիթը արդէն նրա մօտ է... ցորեկը համեստ արհեստաւոր, գիշերը կտորիճ ֆեդայի,— ահա Վանի մեր համեստ ընկերներից մի քանիսի մեծ արժանիքը:

Աշխատել միշտ լեզալ լինել, աշխատել բեռ չլինել կազմակերպութեան գլխուն, ընտանիք պահել եւ կուսակցական գործերն էլ տանել, ահա Դաւիթի եւ նման ընկերների թանկագին առաքինութիւնը:

Բայց այդ երկար չի տեւում, մէկ-երկու տարի եւ ահա ծայրը բացւում է, այս կամ այն ձեւով:

Դաւիթը երկար չի կարողանում մնալ լեզալ վիճակի մէջ: Կառավարութիւնը գործի վրայ է, նրա քունը խանգարւել է:

Գերեզմանները շարժւում են, մեռելները յարութիւն առնում, մեռած կարծւած յեղափոխութիւնը նորէն հասունանում է, բայց բռնակալները կոյր են, փոխանակ իսկական պատճառները հարւածելու, հետեւանքներն են հարւածւում...

Յեղափոխական խմորումը Վանի մէջ զգալի կերպով ուժեղացաւ Վարդգէսի գալէն վերջը եւ կառավարութիւնը տրամաբանեց. ուրեմն «յեղափոխութիւն»ը Վարդգէսն է, նրան մէջտեղից վերացնելով՝ յեղափոխութիւնն էլ կը մեռնի...

Վանը — ի մեծ ցաւ վանեցիներին եւ ի մեծ դժբախտութիւն մեր շարժման — հարուստ է ո՛չ միայն յեղափոխականներով (Վազգէն, Աւետիսեան, Միքօ, Փոխան, Ախպար եւ այլն<sup>4</sup>) այլ մանաւանդ լաւ դաւաճաններով. պատճառների մէջ չենք մտնում...

Հայ մատնիչի օգնութեամբ Վարդգէսի տեղը մատնւում է, զօրքերը շրջապատւում են խամար Քասանի անկիւնի «Թուռչանց» տունը, ուր գտնւում էր Վարդգէսը միայն երկու զինւորներով: Տօների առթիւ տեղացի զինւորները տուն էին գնացել, իսկ դրսի ընկերներէն Գէորգ Չաւուշ (այդ ժամանակ մի քանի ընկերներով Վան էր) Վարդան-Շահպազ, Դաւիթ եւ ուրիշներ խմբով անցել էին Այճալազ՝ կազմակերպական գործով:

Վարդգէսը հասկանում է որ շրջապատւած են. սենեակէն դուրս ելնելով, կրակում են կտուրի վրայ կանգնած զինւորների վրայ, որոնք թափւում են փողոց...

Որոշում են փողոցի դուռը բանալ, յանկարծ գրոհ տալ, մեռնել եւ կամ ազատւել: Դուռը բանալով ներսի ու դրսի կրակները իրար են զարնւում, Վարդգէսը ոտէն զարկւում է, առաջանալ այլեւս անկարելի է, զինւորների գէնքերը փչանում են, կրակել չի լինում... ստիպւում են դառնալ եւ փորձել տանիքների վրայով խու-



սափել. ելնում են տանիքը.— դրացու կտուրը մօտ է իրենց տանը, անցնել հեշտ է, բայց միևս կողմը հարկաւոր է վար ցատկել 6-8 մետր մի կտուր, զինուորները ցատկում են, նրանց հետեւում է եւ Վարդգէսը ու ոտի վէրքէն ուշագնաց լինելով մնում տեղնուտեղը... Մնացածը յայտնի է, միևս օրը Վարդգէսը ձերբակալում է<sup>5</sup>:

Քաղաքը սարսափ է ընկնում, կոտորածների սարսափը դեռ թարմ էր...

Վարդան եւ Դաւիթ Ալճաւազէն կը դառնան՝ գործերը ղեկավարելու: Բայց նախ պէտք է դաւաճանը զարնել...

Դաւիթն է տերրորիստը: Օրը ցերեկով, քաղաքի բանուկ փողոցի մէջ, դաշոյնի մի քանի հարածով գետին է փռում մատնիչ ինչիկ Սէմերճեանը: Եւ սարսափը կրկնապատկում է. կառավարութիւնը ամենախիստ միջոցների է դիմում տերրորիստը բռնելու համար... Քաղաքացիք ահաբեկած՝ չեն տալիս ապաստան եւ ահա մեր Վարդան-Շահպազը, Դաւիթը եւ միևս ընկերները ստիպւած են լեռ քաշել ձիւն-ձմեռը, 3-4 մետր ձեան մէջ ապրել շաբաթներով, Վարագի լեռների քարանձաւներում, վայրի այծերի ընկերակցութեամբ, անօթի ու ծարաւ: Իսկ վարը՝ քաղաքը կատարում է իր քրիստոնէական պարտականութիւնը տօների եւ խրախճանքների մէջ...

Դաւիթ փախստական է արդէն, զբաղւում է զէնքերի փոխադրութեամբ, զինուորական խմբեր կազմակերպելով՝ նորեկ ընկերներին գաւառ առաջնորդելով եւայլն: Սէմերճեանի տերրորը Դաւիթի շուրջը նոր համակրանք եւ պաշտամունք է բերում... «Ծուռ Դաւոն» արդէն ահ ու սարսափի նշանակ է. նրան սկսում են երգել, նա ինքն էլ հիւսում է Վարդգէսի բանտարկութեան եւ դաւաճանի սպանութեան առթիւ մի քրդերէն երգ, որ յետոյ այդ շրջանի քիւրդ ժողովուրդի սիրած երգերից մէկն եղաւ...

1905 թ. ամառն է. լսում է, որ Կովկասի մէջ կռիւ կայ, պահել չի լինում. գանգատում է, թէ՛ «Վանի պարոնները խաղաղասէր են, անոնք կռիւ չեն ուզեր. աղէկ կ'ընեն, բայց ես առանց կռիւ չեմ կրնայ մնալ, Կովկաս կ'երթամ...»:

Եւ ահա նա Կովկաս է, հայ թուրքական ընդհարումների մէջ, միշտ քաջ, միշտ անձնէր, եւ միշտ մաքուր, մի բան, որ փոքր ինչ դժւար էր գտնուում այդ ժամանակ, սունկի պէս բուսած նորելուկ զինուորների մօտ...

Ընդհարումները վերջացած են, նա քաշւում է գործի՝ Բագու: Յանկարծ, պայթում է Վանի աղէտաւոր դաւաճանութիւնը<sup>6</sup> (1908 թ.): Դաւիթը սահմանադրուիւն է, խմբերի հետ պատրաստում է Վան մտնել... Ուշ էր, սահմանադրութիւնը երկրնքից շուտ հասաւ, մեզ եւ իրենց փրկելու համար: Բայց նա նորէն Վան է... Միշտ նոյն ձգտումներով, նոյն կորովով եւ անձնէրութեամբ: Ի՛ր ընտանիքի հացը հայթայթելու համար, նա զբաղւած է ի՛ր գործով եւ հարկաւոր դէպքում կազմակերպութեան: Եւ այդ օրերից մինչեւ իր մահուան օրը՝ նա մնաց Վանի կազմակերպութեան պահապան հրեշտակը. նա է Վռամեանի հետ ամէն տեղ, նա է գաւառների ամէն անկիւն վագողը, նա է մարտ 31-ի ուճակսիոնի օրը<sup>7</sup> շուկայ վագողը եւ ժողովուրդին ամենավտանգաւոր ճանապարհով Այգեստան առաջնորդողը...



*Իրաւունք ունէր Դաւիթի մահը «Դրօշակի» խմբագրութեան հաղորդող ընկերը, երբ նա ասում էր. «... Սա մի չափազանց տժգոյն նկարագրութիւն է, եթէ ի նկատի ունենանք «Դաւիթին» իր ծայրայեղ կորովով, յանդգնութեամբ, գոհաբերութեամբ: Նա մի անձնաւորութիւն էր, որ յեղափոխական ժամանակներում սարսափ էր ազդում թշնամիներին, խաղաղ ատեն պատկառանք եւ սէր: Նրա մահով մենք չկորցրինք մի սոսկ մարդ, այլ մի անձ որ յիշեցնում էր իր ներկայութեամբ մի ամբողջ շրջան: Նա գնաց, նրան ուրիշով փոխարինել դժւար կը լինի...»:*

*Այո նա գնաց պառկելու Արարուց գերեզմանատանը՝ Վազգէնի, Միքոյի, Արշակի, Յարութիւնի, Ռուբէնի քով... եւ այդ գերեզմանները կը դառնան ուխտատեղի յեղափոխական հաւատացեալների համար:*

**ԱՐԱՄ**

«Դրօշակ», 1912 թ. քիւ 6, էջ 149-152:

1.- Իմա՝ ԺԹ. դարու 90ական թուականներում: Պետո – Ադեքսանդր Պետրոսեան. արմենական Աւետիսեանի եւ հնչակեան Մարտիկի հետ 1896 թ. Վանի ապստամբութեան ղեկավարներն էին: Վարդգէսը նոյն Գիսակն է, բուն անունով Յովի. Մերենկիւեան (1871-1915):

2.- Գուրգէն – ծածկանուն Բաղդասար Մալեանի (1873-1899):

3.- Շաշօ – ծածկանուն Խանասարի արշաւանքի խմբապետներէն Խաչատուր Սոսոյեանի:

4.- Յաջորդաբար իրենց իսկական անուններով՝ Սկրտիչ Թերլեմէզեան (Աւետիսեան), Միքայէլ Ազիզ-Մելիքեան (Միքօ), Վահրամ Յովհաննիսեան (Փոխան, Փոխիկ), Յարութիւն Դաւթեան-Փոլատեան (Աղպեր):

5.- Վարդգէս (Մերենկիւեան Յովի.) կը ձերբակալուի 1902 թ. դեկտ. 31ին եւ բանտ կը մնայ (Վան եւ Տիարպեքիք) մինչեւ 1908, օսմանեան սահմանադրութեան հռչակումը:

6.- Ալնարկութիւն Դիերցի Դալիթի մատնութեան հետեւանքով Դաշնակցութեան զինապահեստներու գրաւման: Մատնիչ դաւաճանը շուտով պիտի ահաբեկուէր Տաճատ Թերլեմէզեանի ձեռքով:

7.- Ալնարկութիւն 1909 թ. Մարտ 31ին Ապտիլ Համիտի կողմէ սարքուած պետական հարուածին, որուն նպատակն էր ջնջել Սահմանադրութիւնը եւ վերահաստատել Թուրքիոյ մէջ բռնակալական վարչակարգը:

## ՅԱԿՈՒ ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆ (ԱՇՈՏ ՀԱՅԿՈՒՆԻ)



Ահա ռուսական գնդանի զոհերէն մէկը, մե-  
ռած Վլադիկավկազի բանտում, տիֆլից:

Ընկեր Յակոբ Չիլինկարեան բնիկ ալեքսանդ-  
րոպոլցի էր (Կովկաս), այն քաղաքից, որ տւել է  
բազմաթիւ յեղափոխական գործիչներ (Պետո,  
Աւետիս Մալոյեան, Վաղօ Եւայլն) եւ որ եղել է  
տաճկահայ դատի համար ամենամեծ բարոյա-  
կան ու նիւթական զոհողութիւններ անողներից  
մինը:

Յակոբը իր միջնակարգ կրթութիւնը ստացել  
է Ճեմարանում, որտեղից (VI կարգի վկայակա-  
նով) հեռացրւել է իբրեւ ըմբոստ. ապա իբրեւ  
կամաւոր զինուոր ծառայել է ռուսական բանակում եւ պահեստի սպայի աստիճա-  
նով հեռացել բանակէն:

Նա յեղափոխական գործին յարել է դեռ պատանեկան հասակում, իր մայրենի  
քաղաքում — Ալեքսանդրոպոլում — ուր շարժման սկզբից ի վեր եղել է միշտ մի  
առանձին ոգեւորութիւն, որի հանդէպ զգայուն սրտերը անտարբեր լինել չէին կա-  
րող:

Բայց լայն կուսակցական գործունէութիւն նա սկսել է Բագում, ուր 1901-1902  
թւականներին, շնորհիւ Քրիստաֆորի Կովկաս դառնալուն եւ որոշ ժամանակ հոն  
հաստատւելուն, սկսել էր յեղափոխական շրջանակներ ստեղծւել, բանուորական եւ  
երիտասարդութեան կազմակերպութիւններ առաջ գալ:

Յակոբը այդ նոր սկսող կազմակերպական շրջանակի ամենաեռանդուն տղա-  
ներից մէկն էր... Ժամանակն էլ բարեյաջող էր, Թիւրքահայաստանից թարմ լուրեր  
կը գային, Անդրանիկի ու Գէորգ Չաւուչի Առաքելոց վանքի գրաւման լուրերը նոր  
թափ ու ոգեւորութիւն էին հաղորդել...

Այդ ժամանակն էր եւ տաճկահայ գաղթականների ռուսաց ցարի հրամանով  
Թիւրքիա քշւիլը. ամէն կողմից ոգեւորութիւն էր, կարծում էին, թէ Համիդը պի-  
տի ընդունի գաղթականներին, համարում էին այդ մեծ յաղթանակ... Թարմ, յեղա-  
փոխութեան գաղափարներով տոգորւած մի հոսանք կ'երթար երկիր: Շատերը  
մեզնից պատրաստուում էին միանալ գաղթականներին եւ իբրեւ հայաստանցի ներս  
գնալ: Բայց բոլորիս յոյսերն ի դերեւ ելան, ցարիզմը նորէն կը խաղար իր ստոր դա-  
ւերը մեր խեղճ ժողովրդի գլխուն: Գաղթականները թւով 70,000 մնացին սահմա-  
նազխում, ձիւն ձմեռ... ոչ թիւրք կառավարութիւնն էր ներս առնում եւ ոչ էլ  
ռուս կառավարութիւնը համաձայնում էր պահել: Հետեւանքը յայտնի է:

Այդ ժամանակն էր եւ եկեղեցական կալւածների գրաւումը:

Ճիշտ նոյն ժամանակները սկսել էին կազմակերպւել ռուս սոց-դեմոկրատիային

յարակից հայ բանւորական կազմակերպութիւններ: Տենդային պայքարի օրեր էին, «բոլոր արժէքները վերագնահատման էին ենթարկուում», ժողովներով, կոնֆերանսներով, դաղտնի թուղթերով եւ թերթերով: Տաճկահայ դատ, ազգային հարց, տնտեսական, դասակարգային պայքար, ռուսահայերի եւ տաճկահայերի փոխադարձ օգնութեան խնդիր, բռնի եւ խաղաղ յեղափոխութիւն, զուտ կովկասեան տեղական սոցիալիստ գործունէութիւն եւլն. եւլն. հարցեր՝ որոնց շուրջ սկսել էր կատաղի կռիւ... Երկու հոսանքի մարդիկ էլ (դաշնակցական եւ ռ[ուսական] ս[ոցիալ]-դեմոկրատական) գործի են սկսում, բանւորական կազմակերպութիւններ ստեղծելով: Ի՞նչ ասել կ'ուզէ, որ հայ բանւորական շրջանակներում յաղթանակողը լինում է դաշնակցական երիտասարդութիւնը: Թէեւ այն ժամանակ մեզ համար եւս դեռ բոլորովին պարզ չէր մեր անելիքը կովկասում, բայց ամէնքս մի բանի մէջ համոզւած էինք՝ որ նախ մեր կապը պիտի պահպանենք թիւրքահայ դատի հետ, որ այդ դատի պրոպագանդը պիտի մղել եւ բանւորական շրջանակներում. եւ երկրորդ՝ ամէնքս ընդունում էինք, որ հայ բանւորները իրենց տնտեսական-բանւորական պահանջների համար էլ աշխատելու են համերաշխութեամբ մնացած բանւորական կազմակերպութիւնների հետ: Եւ այս գործունէութիւնն էր, որ սանկցիա ստացաւ մեր 4-րդ Ընդհանուր Ժողովից:

Յակոբը Բալխանիի իր շրջանի բանւորական խմբերի կազմակերպողը եւ կապ պահպանողն էր:

Յորեկները 12 ժամ անտանելի աշխատանք գործարանում եւ գիշերները մինչեւ ժամը 1-2, շատ անգամ մինչեւ լոյս, բանւորական գիշերային դաղտնի ժողովներում, երեկոյթներում ու վիճաբանական ժողովներում:

Բնաւորութեամբ մեղմ, չափազանց համեստ եւ սակաւախօս մարդ էր. միշտ կ'ասէր. «խօսեցէ՛ք, վերջը գիտեմ, որ իմ գլխուս պիտի մնայ»... Եւ յիւրաւի, բոլոր գործնական աշխատանքները կը տանէր մեն-մինակ:

Իսկ նրա տո՞ւնը... մի կատարեալ հիւրանոց էր. օր չկար, որ այս կամ այն ընկերը հոն չլինէր կամ չպառկէր — իսկ Բագում անգործ մարդիկ չա՛տ...

Այդ բոլորը նա տանում էր ուրախութեամբ, հաճոյքով, բայց այդ բոլորը նրան չէր գոհացնում, հարկաւոր էր ամբողջապէս նւիրել գործին:

Եկեղեցական գոյքերի գրաւումը եւ նրան ուղեկցող ցոյցերը եղան վերջին ազդանշանը Բագւի երիտասարդութեան համար՝ դէպի գաւառ մեկնելուն: Դէպի գաւառ — ժողովուրդը կազմակերպելու եւ պայքարը ուժեղ վարելու համար:

Գաւառ գնացող հոսանքի մի ուժեղ ճիւղը ուղղւեց դէպի Ղարս: Եւ այդ՝ կրկնակի պատճառով. նախ՝ որ Ղարսն ու Ալեքսանդրոպոլը սահմանազուլիս լինելով, տաճկահայ դատի գործունէութեան համար լայն ասպարէզ էին. երկրորդ՝ այդ շրջանից էր, որ սկսւեցին առաջին անգամը մեծ ժողովրդային ցոյցերը ընդդէմ ռուս կառավարութեան:

Եւ ահա 1903 թ. Յակոբը Ղարս է. զբաղւում է տեղական կազմակերպական-գիւնւորական գործերով:

Նորէն նոյն սուսիկ-փուսիկ գործող Յակոբը, առանց հրապարակային ճոռոմաբանութեան եւ ցոյցերի, առանց կազմակերպութեան վրայ տնտեսական բեռ լինելու, նա ապրում էր Բագւի մէջ տնտեսած իր գումարներով: Եւ, ասում են, նոյն սովորութիւնը պահել է մինչեւ վերջը: Շարժումը լայն ծաւալ է ստանում, գրաւելով Երեւանի, Ղարաբաղի եւ ապա հիւսիսային կովկասի հայկական շրջանները:

Վրայ է հասնում հայ-թիւրքական ընդհարումը: Յակոբը արդէն գէնքի գործով հիւսիսային Կովկաս է. մասնակցում է «Ժլատ»ի Կ. Կոմիտէի գործունէութեան, որպէս ազատ ընկեր-գործիչ. այցելում է «Նալբանդի» շրջանը<sup>1</sup> նոյնպէս գէնքի եւ կազմակերպական գործով: 1906-ին գնում է դէպի հեռաւոր արեւելք – Մանջուրիա, նորէն գէնքի գործով, այնտեղից Աշոտ Հայկունի կեղծանունով կը թղթակցէր մեր Կովկասի թերթերին:

1907-1908-ին մասնակցում է միհրանական հոսանքի դէմ կազմակերպած պայքարին. 1907-ի ամառը ինքն անձամբ գնում է Արմաւիր եւ Պետտիգորսկ՝ դաւաճանի դէմ տեռորը կազմակերպելու:

Իսկ 1908 թ., Ռայոնական ժողովի որոշումով, գնում է նորէն հիւսիսային Կովկաս «Զիֆոնի»<sup>2</sup> հաշիւները մաքրելու համար. ահա հէնց այդ ժամանակ մատնւում է Պետտիգորսկում եւ բռնելով փոխադրւում է Վլատիկավկազ, ուր Յ տարի դաժան բանտարկութիւնից յետոյ, իր թոյլ կազմը չդիմանալով բանտային դժոխքին, վարակւում է տիֆով եւ անտէր, անօգնական մեռնում է միս-մենակ բանտի խուցի մէջ:

Մայր ու քոյր չկար՝ աչքերը գոցելու, ընկեր չկար վերջին համբոյրը տալու համար...

Ռուս պահապանն էր միակ վկան, որ անտարբեր երթեւեկում էր խուցի առջեւ եւ լսում մահւան հռնդիւնները...

Միւս օրը նրան թաղում են հիւսիսային Կովկասի մի խուլ անկիւնում:

Եւ այնտեղ, հեռուն, Ալեքսանդրոպոլի մէջ, իր հարազատները հսկումն են կատարում իրենց ընտանիքի երկրորդ եւ թանկագին գոհի համար... Յակոբի փոքր եղբայրը սպանել էր ռմբային մի փորձի ժամանակ, 1902-ին Ալեքսանդրոպոլում:

Եւ այսպէս, բռնակալները սահմանի այս եւ այն կողմը հնձում են անդադար մեր ծաղիկ յոյսերը...

**ԱՐԱՄ**

«Դրօշակ», 1912 թ., թիւ 7-8, էջ 179-191:

1.- Ժլատը եւ Նալբանդը հիւս. Կովկասի մէջ գործող կեդր. կոմիտէութիւններ էին. Ժլատի կեդրոնը Վլադիկավկազն էր, իսկ Նալբանդի՝ Ռոստով – Նոր Նախիջեւանը:

2.- Զիֆոն – զինուորական ֆոնդ զէնք-զինամթերքի հայթայթման համար:

# ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՐԱՔԵԱՆ (1878 – 1908)



Երբեմն մարդիկ յաւերժանում են սերունդների յիշողութեան մէջ, շնորհիւ աւելի իրենց մահւան ձեւին, քան կատարած գործերին: Եւ որքա՛ն դժբախտ են նրանք, որոնց մահը չի համապատասխանում իրենց կեանքին ու գործին... Հասկանալի է, որ բոլոր ուժեղ յեղափոխական դէմքերը սարսափում են խաղաղ, հիւանդ, անկողնում մահանալու հեռապատկերից...

Այդ կարգին է պատկանում մեր Յարութիւնը: Նա մեռաւ Վանում լեղիի հիւանդութիւնից եւ բժիշկների անկարողութեան պատճառով: Մի մարդ, որ բազմաթիւ անգամներ խաղացել էր մահւան հետ, կուրի դաշտում եւ ազատել ամենավտանգաւոր պատահարներից, ընկաւ մի այդպիսի մահով...

Նա բնիկ Մշոյ Գէնջ գաւառակի Օղնուտ գիւղէն էր, նահապետական ընտանիքի գաւակ: Իր սկզբնական կրթութիւնը ստացել է «Միացեալի» իրենց գիւղի Կ-ամեայ վարժարանում, ուր յայտնի է եղել իբրեւ ժիր եւ ընդունակ աշակերտ:

Մեծ կոտորածներէն վերջ, երբ երկիրը տնտեսապէս սնանկացաւ եւ սկսեց գաղթի ու պանդխտութեան հոսանքը, Յարութիւնն էլ շատերի հետ Պոլիս անցաւ, ապա Բուլգարիա, ուր գործարանների մէջ կ'աշխատէր՝ աղքատ ու սնանկացած ընտանիքին օգնութեան հասնելու համար:

Արտասահմանում նա շփուում է յեղափոխական կուսակցութիւնների հետ եւ 1900 թ. մտնում է Դաշնակցութեան մէջ:

Այնուհետեւ նա փոխադրւում է Ամերիկայ: Պրովիդէնսի կուսակցական կեանքի կենտրոնական անձնաւորութիւններից մէկն է դառնում եւ մասնաւորապէս հոգում է իր ինքնագարգացման մասին: Թիւրքահայաստանում եւ Կովկասում ծայր տուող հոսանքների ալիքը հասնում է Ամերիկայ: Սկսւում էին Սասնոյ ապստամբութեան նախապատրաստութիւնները եւ Թումանի, Մուրադի, Սեպուհի, Քեռիի<sup>1</sup> խումբերը աջողութեամբ Սասուն էին հասնում:

Յարութիւնը չի կարողանում տանել ամերիկեան հանգիստ կեանքը: Սահմանադիւրում հնչող ռազմերգերը կուրի կը հրաւիրէին ցրւած ընկերները... «Մեր քաջ ընկերներ մեզի կը սպասեն»... Յանկանայով երկրում աւելի օգտակար լինել, նա մտնում է իբր կամաւոր ամերիկեան բանակը, սովորում է զինավարժութիւն, որպէսզի երկրի մէջ կարողանայ տեղին վրայ սորվեցնել նոյն արհեստը ժողովրդին: Եւ 1903-ի աշնան մի քանի այլ ընկերների հետ ճանապարհւում են Կովկաս, այցելելով նախ ժընեւ, կուսակցութեան արտասահմանեան ուխտատեղին... «Ոչ ոքի չէինք ճանչնար, մեզի հանդիպեց մէկ ծերունի ու կաղ մարդ, շատ համեստ հագնւած, կը կարծէինք, թէ ծառայողներէն մէկն է. մեզի հետ շատ անուշ կը վարւէր, մեզի ճաշարան տարաւ, կերցուց ու թոյլ չէր տար, որ մենք վճարենք: Ըսինք՝ ապօ (հայ-

րիկ) մենք Ամերիկայէն դրամ շատ ենք բերած, ինչո՞ւ չես թողներ, որ մենք վճարենք... Քօռնանք մենք, չէինք գիտեր, յետոյ իմացանք, որ Քրիստափորն է եղել եւ տղայի պէս մեզի կը ծառայէ եղեր... Ափսո՛ս, ալ չտեսանք... բայց անոր համբոյրը դեռ թարմ է մեր ճակտին: Մեռնենք ալ հոգ չէ, Քրիստափորը տեսանք... Կը շտապէինք երկիր՝ Անդրանիկն ալ տեսներու»...

Ահա այն տպաւորութիւնը, որ նա եւ ընկերները ստացել էին ժընեւէն:

Ընկերներով Կարս եւս — յեղափոխականների ժամադրավայրը: Սասունն արդէն պարզել էր ապստամբութեան դրօշը: Կռուողները իջել էին Դաշտ: Խմբով Սասուն հասնել անկարելի էր. Խանի եւ Նեւրուզի խմբերի օրինակը կենդանի է, սահմանագլուխները լեցած էին գօրքերով:

Արեւելեան Բիւրոն եւ երկրի գործով զբաղող Մարմինները, յենուած III Ընդհ. ժողովի որոշումների վրայ, վճռում են կազմակերպել արշաւախմբեր: Արդէն յայտնի են Երեւանի գծով գնացած երկու խմբերի եւ Օլթիի խմբի դժբախտ պատմութիւնները: Այդ ժամանակ կազմակերպւած էր եւ մի ռմբային ցոյց սահմանագլխի պահականոցներից մէկի դէմ, ընկեր Տուրբախի<sup>2</sup> ղեկավարութեամբ: Ահա այդ վերջին խմբի մէջ է մտնում եւ Յարութիւնը, որ արդէն Բուլգարիայում եւ Կովկասում մարզւել էր ռմբային գործողութիւնների մէջ:

Մի սոսկալի, անձրեակային գիշեր՝ խումբը մօտենում է սահմանին: Պէտք էր այն աստիճան մօտենալ պահակին, որ հնարաւոր լինէր ձեռքով ռումբ նետել: Հսկողները նկատում են մերոնց եւ սկսում է կրակը երկու կողմից: Մերոնք յետ են նահանջում: Շարժումները վերջանում են երկրի ներսը եւ դուրսը, առանց սպասած արդիւնքը տալու: Ներսի գինւորական ոյժերի մեծ մասը ստիպւում է արտասահման անցնել ռազմական պաշարի պակասութիւնից եւ կառավարական խստութիւններից ստիպւած... Ծայր են տալիս լքման նշաններ: Հարկ էր գործը նորէն սկսել. հարկ էր գտնել նոր ու թարմ մարդիկ, որ գնային մրջիւնային աշխատանքով նոր գործ ստեղծելու, քայքայւած վայրերը վերակազմակերպէին: Այս անգամ շարժման ծանրութեան կէտը փոխադրւում է Վան: Մի վայր, որ համեմատաբար խաղաղ է մնացել եւ ուր կարելի է սիստեմատիկ աշխատանք սկսել:

Եւ ահա Յարութիւնը ուրիշ 3 ընկերների հետ անցնում է Պարսկաստան<sup>3</sup>, Վան երթալու համար: Ճանապարհւում են հազար ու մի նեղութիւններով, ռուսական սահմանից մինչեւ Վան մօտ 20 օրւայ ճամբայ ոտով գնալու պայմանով:

Նա կարճ ժամանակամիջոցում Վանի մէջ ստեղծում է իրեն համար մի բացառիկ դիրք: Մի քանի այցելութիւններ այս եւ այն գիւղում արդէն բնորոշում են նրա կարողութիւնները:

Քաւառները հիմնւած էին կոմիտէներ եւ ամէն կոմիտէական շրջանում կար մի շրջիկ ընկեր, գինւորական խմբով:

Յարութիւն նախ տեսակցեց փորձւած ընկերների հետ, ապա ինքը մենակ սկսեց կառավարել մի ամբողջ շրջան: Եւ մի տարի չանցած, նա արդէն ժողովրդական գործիչ էր:

Ի՞նչ էր նրա այդ ժողովրդականութեան գաղտնիքը: Անուշ ու համեստ բնավորութիւնը, անկեղծ ժողովրդասիրութիւնը ու բուռն եռանդը: Նա իսկական ժողովրդի մարդ էր. ժողովրդական էր մանաւանդ իր քարոզչական տաղանդով, նա ժողովրդի հետ խօսել գիտէր իր լեզուով, ժողովրդի բարբառով, համեմաւած օրինակներով եւ շատ անգամ քրդերէն բառերով: Ամերիկայի վիճաբանական ժողովները



եւ իր բնածին խօսելու կարողութիւնը նրան դարձրին ժողովրդական տրիբուն... Եւ շատ անգամ իրմէն բարձր կրթութիւն ստացածները, երբ կը խօսէին գիւղում, ժողովուրդը կը խնդրէր, որ «պարոնի խօսածները Յարութիւնը թարգմանէ իրենց»:

Արճակի շրջանը, որ իրմէն առաջ համարեա անկազմակերպ էր, մի տարւայ ընթացքում 32 գիւղ կազմակերպւեցին, այն էլ ո՛չ թէ սոսկ անունով, այլ եւ իրական ռազմական ոյժով... Գիւղ չկար, որ առնւազը մի տասնեակ չունենար գինւած, իսկ մեծ գիւղերը մինչեւ 4-5-ը ունէին:

Նրա ամենամեծ եւ անմոռանալի գործն եղաւ՝ գինւորական խմբերի պատրաստութիւնը: Վարդանից<sup>4</sup> յետոյ, Յարութիւնը առաջինն է եղել, որ լայն չափով գինւորական խմբեր է ստեղծել քաղաքում եւ գաւառում: Եւ նրա գինավարժ աշակերտները այսօր իսկ հարիւրներով կարելի է հաշուել քաղաքում եւ գիւղերում: Դա ոչ միայն թէօրիական վարժութիւն էր սենեակի մէջ, այլ եւ գործնական: Ձմեռը սենեակի մէջ, նա թէօրիկ դասեր կը տար, իսկ ամառը լեռան կատարներին կը սորվեցնէր նշանաձգութիւն, յարձակում, պաշտպանութիւն, դիրք նստել եւ այլն: Նա հանդիսացել է նոյնպէս Վանի շրջանի լաւ գինւորական խմբապետներից մէկը: Թողնենք այն մանր-մոռնր ընդհարումները, որ նա ունեցել է գաւառներում՝ գիշերային փոխադրութեան ժամանակ, նրա կռիւներից ամենանշանաւորը Վարագի յայտնի ընդհարումն էր, 1907 թ. Յունիս 16-ին:

Խումբը մէկ շաբաթէ ի վեր կը գտնւէր Վերին Վարագի բարձունքները, մի վայր, ուր կառավարական պաշտօնեայի ոտք չէր կոխել եւ ուր ապաստանել էին Պետոն ու Մարտիրը մեծ կոտորածներէն վերջը: Դա Յարութիւնի սիրած վայրն էր. կայ այդտեղ մի աւերակ եկեղեցի: Շրջանի երկար ու դժւարին պտոյտներից յետոյ, խումբը հոգ հանգիստ կ'առնէր մի քանի օրով՝ նորէն գաւառ իջնելու համար: Այլի բէյի հալածանքների օրերն էին. քաղաքը այնքան էլ յարմար չէր երթեկեկութեան համար...

Կուրի նախընթաց օրը Յարութիւնը լսում է, որ իր սիրած ընկերներէն մէկը այդ օրը արտասահմանէն եկել է եւ քաղաք կը մտնի՝ Վիեննայի ժողովի<sup>5</sup> լուրերով: Նա անմիջապէս մարդ է դրկում, խնդրելով որ նախ ընկերը իրենց այցելէ, որովհետեւ խումբը քաղաք մտնելու դիւրութիւն եւ ժամանակ չունի: Ընկերը զիջում է եւ նոյն գիշեր լեռան ստորոտում գտնւող Ս. Գրիգոր վանքում, նոր եկող ընկերը ու Յարութիւնի խումբը կը գիշերեն. խմբի մի մասը լեռը կը մնայ զգուշութեան եւ եղած ապրանքների հսկողութեան համար: Միւս օրը, երբ առաւօտեան վանքը եղած խումբը լեռ կը քաշւէր, կը լսէին հրացանի ձայներ. քիչ աւելի վեր ելնելուց յետոյ, կը պարզուէր, որ խումբը մատնել է եւ շրջապատւած է ոստիկանների շղթայով:

Մատնութիւնը կը կատարուի նախընթաց օրը. նոյն գիշեր ժանդարմերիայի յայտնի հարիւրապետ Շիւքրի բէյի առաջնորդութեամբ, 200 ոստիկաններ կը մեկնին դէպի լեռ, որ քաղաքէն ընդամէն 2-3 ժամ է: Արեւը դեռ չծագած՝ ոստիկանները կը հասնին խմբի վայրը, բայց ոչ ոք չէր համարձակուի մօտենալ:

Արեւը ծագելուն պէս, մեր ընկեր պահապանը ապահովւած, որ լուսացել է եւ այլեւս վտանգ չկայ, 3 քնած ընկերները թողնելով աւերակ եկեղեցու մէջ, ինքը կ'երթայ վարի կողմերը՝ եկող խումբին դիմաւորելու:

Շիւքրի բէյը տեսնելով, որ ոստիկաններից ոչ ոք չի համարձակւում մօտենալ աւերակ եկեղեցուն, ինքը եսփունջին ուսերին կամաց-կամաց կը մօտենայ եկեղե-

ցու պատերին, կ'ելնէ պատի վրայ եւ հրացանը կ'ուղղէ վարը քնած զինուորների դէմ: Վարի զինուորներէն մէկը յանկարծ կ'արթննայ եւ գիրկը բռնած ու փամփուշտը մէջը պատրաստ հրացանը արագութեամբ կը կրակէ Շիւքրի[ի] վրայ, որ տեղն ու տեղը կը սպանւի: Կրակի ձայնից ոստիկանները ուշքի են գալիս եւ սկսում են իրենք էլ կրակել ու մօտենալ: Այդ ժամանակ աւերակի մէջ եղած 3 զինուորները դուրս թռչելով, դիրք կը բռնեն եւ կը սկսին կռիւր: Ճիշտ այդ ժամանակ Յարութիւնը խմբով հասնում է վարէն: ոստիկանները, որ շրջապատել էին խումբը 3 կողմից եւ կը գտնէին վերի եւ վարի խմբի միջեւ, իրենց կրակը կ'ուղղեն շեշտակի դէպի վարէն եկող Յարութիւնի խումբը: Յարութիւնն իսկոյն խումբը երկու մասի բաժանելով, մի մասը կ'ուղարկէ ետեւից մեր խմբէն վեր բարձրանալու եւ վերի դիրքերը բռնել տալու համար, իսկ ինքը մի քանի ընկերներով՝ Մոսօ, Պետրոս, եւայլն, կը նետի ուղղակի կռւի ամենատաք կենտրոնը: Պաշարած ընկերները կրիտիկական վիճակի մէջ էին: Շիւքրիին սպանող ընկերոջ հրացանը աւերուում է, ոստիկանները նոր օգնական գնդեր են ունենում: Յարութիւնը պատռելով շղթան, հասնում է անվնաս ընկերների մօտ: Իսկոյն շտկում է աւերած հրացանը եւ սկսում են կանոնաւոր կռիւր: Խմբի միւս մասն էլ հասնում է լերան գագաթը եւ հնչում է ծանօթ ռազմերգը. «Կուեցէք տղերք, կուեցէք քաջ քաջ»...

Քաղաքից հասնում է հազարէն աւելի զօրք, բայց մերոնք լերան լաւ դիրքերը գրաւած լինելով, զօրքը չի կարողանում լեռ ելնել: ոստիկաններն էլ տեսնելով Շիւքրիի դիակը, յետ են փախչում եւ կռուում են հեռուից:

Լեռան լանջը գտնւող գիւղերի կամաւորները երկու կէտից օգնութեան են հասնում: կռիւր տեւում է մինչեւ կէսօր, երբ յանկարծ սկսւում է խիստ կարկուտ ու ձիւն, ապա թանձր մառախուղը: Սարալանջերում եւ ձորերի մէջ տիրում է խորին լռութիւն: մերոնք կամաց-կամաց վեր են քաշւում: Յետոյ իմանում են, որ զօրքը քաշւել է վանքերը — Վարագ եւ Ս. Գրիգոր կողոպտելու նպատակով:

Յարութիւնը առնում է խումբը, որ մինչեւ ոսկորները թրջւած էր ու յոգնած եւ ամբողջ օրը ոչինչ էր կերել — քաշւում է դիմացի մի այլ լեռ, ապա անցնում է գաւառ: Մերոնցից սպանւում է մի անգէն գիւղացի երիտասարդ, որ պատահամբ հոն գտնւած էր:

Լերան շուրջը հայ գիւղերը բերկրանքի մէջ են, նախ որ խումբը ազատւել էր մեծ վտանգից եւ ապա՝ սպանւել էր Շիւքրի բէյ, որ սարսափ էր տարածել շրջանի մէջ: Այնուհետեւ քիւրդերն եւս սկսեցին երգել Յարութիւնին:

Սակայն բոլոր այդ աջողութիւններն ու ներբողները ոեւէ ազդեցութիւն չեն անում համակրելի խմբապետի վրայ: Նա մնում է նորէն նոյն համեստ, նոյն ընկերասէր Յարութիւնը: Իր զինուորների հետ վարւում էր իբրեւ հաւասար ընկերների եւ ամէնքը նրան պաշտելու չափ սիրում էին:

Գիւղերի մէջ բացի կազմակերպական-ռազմական գործերից, Յարութիւն մեծ զարկ է տւել եւ կրթական գործին: Համարեա ամէն տեղ դպրոցներ է հիմնել տւել, քաղաքից երիտասարդ ուսուցիչներ տարել ու տեղաւորել: Ուսուցիչների վարկը ապահովելու համար, գիւղերում համայնական միջոցներով ցանել է տւել արտեր եւ դրանց արգիւնքը յատկացրել դպրոցին:

Այսպէս նա գործում է անդուլ անդադրում — 3 տարի, մինչեւ որ յոգնած ու ուժասպառ, ընկերների խորհրդով անցնում է Կովկաս մի տարով հանգստանալու: Նրա հետ է լինում եւ Վարդան Շահպաղը: Կովկասի ամենալքւած ժամանակն էր:

մեր կարեւոր ընկերներից մէկը պատմում էր, որ Յարուլթիւնի եւ Վարդանի Կովկաս անցնելը եւ մեր շրջաններում երեւալը եւ նրանց լոկ ներկայութիւնը ու թարմ ոգին ահագին ոգեւորութիւն է առաջ բերել ղեկավարող շրջանակներում:

Վանի մէջ մատնութիւնը պայթում է: Յարուլթիւնը Մուռ Դաւիթի<sup>6</sup> (որ իր սիրելի ընկերն էր) եւ Վարդան Շահպագի հետ սահմանագլխում խումբ են պատրաստում՝ ներս մտնելու: Սահմանադրութիւնը վրայ հասնելով, երեքը միասին անցան Վան:

Այնուհետեւ մի երկու ամիս հազիւ մնալով ոտքի վրայ եւ մասնակցելով օսման. առաջին պարլամենտի ընտրողական պայքարին, հիւանդանում է եւ անկողին ընկնում: Մի քանի ամսից յետոյ՝ մեռնում է:

Զինն ձմեռ էր, Վասպուրականի ձմեռը: Մահուան բոթը հեռագրեցինք շրջանները: Սակայն չէինք սպասեր, թէ մարդ կարող էր գալ այդ ձիւն ձմեռը, այն էլ երկու օրւայ ընթացքում:

Վանը չէր տեսել այնպիսի թաղում: 10-15,000 ժողովուրդ, մեծ մասամբ գիւղացի, անցնում են դազադի ետեւից, Վանի լայն փողոցներով: Զինւորները ահագին շղթայ էին կապել դազադի շուրջը: Հետեւում էին ներկայացուցիչներ՝ կառավարութիւնից, գինւորականներից, հիւպատոսներից, միսիոնարներից, վաճառականներից եւլն:

Հանդէսը կանգ է առնում Արարուց եկեղեցու գերեզմանատանը, արտասանւում են դամբանականներ: Ապա Վազգէնի<sup>7</sup> եւ միւս նահատակների քով՝ հողին ենք յանձնում ժողովրդի սիրելին: Ժողովուրդը երկար ժամանակ չէր հեռանում գերեզմանից:

Դառնօրէն ողբացինք մեր սիրելի ընկերոջը, որ նա մեռաւ այնքան վաղաժամ եւ այնքան սովորական մահով: Ողբացինք եւ երդեցինք գերեզմանի վրայ, որ իր դրօշակը պիտի շարունակենք բարձր պահել ապրողներս:

Ընկերներ, չմոռանանք այդ ուխտը:

ԱՐԱՄ

«Դրօշակ», 1913 թ., թիւ 9-10, էջ 157-160:

1.- Յաջորդաբար՝ Թումեանց Թուման (1879-1904), Խրիմեան Մուրատ (Մեքաստացի Մուրատ – 1874-1918), Ներսէսեան Արշակ (Մեպոտ – 1872-1940), Գաւաֆեան Արշակ (Զեռի – 1858-1916):

2.- Տուրբախ – ծածկանուն յայտնի մարտիկ Յարութիւն Կիրակոսեանի (1866-1913):

3.- Երեք ընկերներէն մէկը Արամ Մանուկեանն էր, միւսները՝ Գանձակեցի Նիկոլմ ու Մանգակերացի Մոսն:

4.- Խօսքը Վարդան Շահպագի մասին է:

5.- Խօսքը Վիեննայի մէջ գումարուած Հ.Յ.Գ. Չորրորդ Ընդի. Չորրորդի մասին է, Վիեննայէն վերադարձող ընկերը Արամն է:

6.- Խօսքը կը վերաբերի Դիերցի Դաւիթի ծանօթ մատնութեան: Ծուռ Դաւիթը՝ Թումանեան Դաւիթն է:

7.- Վազգէն – ծածկանուն Տէրոյեան Տիգրանի (1872-1898):

# ՄԻՄԷՈՆ ՉԱԻԱՐԵԱՆ

(Կենսագրական ակնարկներ)



Հեռագիրը Պոլսին գուժեց Հ. Յ. Դաշնակցութեան վարդեմի վեթերան Սիմէոն Զաւարեանի մահը 47 տարեկան հասակին մէջ:

Բօթի ազդեցութիւնը այնքան ուժեղ է, որ անկարելի է հաշտուիլ երէկուան մեր առաջնորդի կենսագրութիւնը գրելու տխուր դերին հետ:

Դժուար է ատիկա մանաւանդ այն պատճառով, որ Զաւարեանի կենսագրութիւնը գրել կը նշանակէ գրել Դաշնակցութեան պատմութիւնը, որովհետեւ

անիկա ոչ միայն Կուսակցութեան հիմնադիրներէն մէկն է, այլեւ հիմնադրութեան օրէն մինչեւ մահուան ժամը անոր ազնուագոյն դրօշակակիրն եղաւ: Զկայ Կուսակցութեան մէջ խոշոր ձեռնարկ մը, ուր նա իր գործօն աջակցութիւնը բերած չըլլայ: Անհնարին է գրել կենսագրական մանրամասնութիւններ նաեւ այն պատճառով որ հոս կը պակսին չոր նիւթեր:

Թողլով Կուսակցութեան պաշտօնական օրկանին, ինչպէս նաեւ կուսակցական թերթերուն տալ շահեկան մանրամասնութիւններ մեր այնքան սիրուած ընկերոջ մասին, մենք կը բաւականանանք միայն խոշոր գիծերով ներկայացնել այդ փայլուն դէմքը:

Զաւարեան Ռուսահայաստանի Ղազախ գաւառէն է. հայ ազնուական ընտանիքէ: Ազնուական ընտանիքի մէջ ծնաւ ապագային ազնուականութեան դէմ պայքարելու համար:

Մէկ անգամ, կ'ըսէր ան, իր ազնուական կոչումը պէտք եղած է իրեն այն ալ միմիայն բանտերու մէջ, որովհետեւ ռուսական օրէնքով ազնուականները մեծ դիւրութիւններ կը վայելեն բանտի մէջ:

Իր միջնակարգ կրթութիւնը ստացաւ Թիֆլիսի պետական գիմնազիոնի մէջ:

Պատանեկութիւնը եւ երիտասարդութիւնը անցուց ռուսական շրջանակներուն մէջ: Իսկ այդ թուականներուն (1870-80) ռուս մտաւորականութիւնը բռնած էր լայն ժողովրդական-ընկերվարական ուղղութիւն: Այդ ժամանակ Ռուսիոյ մէջ, մասնաւորապէս մտաւորականներու մէջ, տիրապետող յեղափոխական քաղաքական կուսակցութիւնը «Նարոդնայեա Վոլիա»ն էր, որ ռուս յեղափոխական պատմութեան ոսկեգարբ կը կազմէ: Թերեւս ո՛չ մէկ ժողովրդական յեղափոխական կուսակցութիւն տուած չէ այնքան գաղափարական, այնքան անձնուէր ժողովրդասէր հերոսներ, որքան ռուսական «Նարոդնայեա Վոլիա»ն: Դուք անոր շարքերուն մէջ կը գտնէք ազնուական դասի որդիներ ու օրիորդներ, որոնք փախուստ տալով ընտանիքէ, փառահեղ դիրքերէ ու պաշտօններէ, իբրեւ հասարակ բանուոր, կօշկակար, հագուազիւտ անգամ ուսուցիչ ու հիւանդապահ, կ'երթային «Դէպի՛ ժողովուրդ»:

Դէպի ժողովուրդ... այդ էր ժամանակակից ռուս մտաւորականի իտէալը. դէպի՛ ժողովուրդ, լուսաւորելու, կրթելու, կազմակերպելու եւ ըմբոստացնելու զայն իր դահիճներու, յաճախ հէնց իր ազնուական հայրերուն դէմ: Եւ այս բոլորը սարսափելի զնով: Ապրելով ժողովուրդի մէջ, հազնելով անոր նման, ուտելով նրա կերածը եւ խօսելով անոր լեզուն: Անոնց կենսագրութիւնը կարդացողը կարծես գործ ունի Քրիստոնէութեան առաջին դարերու սուրբերուն հետ...

Ահա այսպիսի գաղափարական ու բարոյական մեծ մթնոլորտի մէջ սնաւ այն մարդը, որ հայկական աւելի դաժան կեանքի մէջ հանդիսացաւ նոյն անձնագոհ սուրբը եւ որ այսօր յետին չքաւորութեան մէջ կնքեց իր մահկանացուն:

Դեռ քիմնագիտոնի աշակերտական սեղանի վրայ նա եղաւ անդամ «Նարոզնայեա Վոլիա»-յին եւ 7-րդ կարգին մէջ եղած ատեն բանտարկուեցաւ 7 ամիս՝ այդ Կոստակցութեան պատկանելուն համար:

Զաւարեան իր համալսարանական ուսումը ստացաւ Փեթերսպոլիի «Ալեքսանդրեան Ակադեմիայի» մէջ, ուսանելով գիւղատնտեսութիւն: Այդ համալսարանը վերջէն գոցուեցաւ ռուս կառավարութեան կողմէ, որովհետեւ յեղափոխականներ պատրաստեց: Համալսարանի սեղանին վրայ նա եղաւ առաջնորդ ու իտէալը ամբողջ համալսարանի թէ՛ ռուս, թէ՛ լեհ, թէ՛ հրեայ եւ թէ՛ հայ ուսանողութեան:

Միջազգայնութեան կամ աւելի ճիշտ քոզմոփոլիթիզմի չրջանն էր: Զաւարեան ոգեւորուած քոզմոփոլիթ էր: Եւ խտրութիւն չէր դներ ո՛չ Հայի, ո՛չ Ռուսի եւ ոչ ալ թուրքի միջեւ...

Համալսարանը աւարտեց 1890-ին փայլուն վկայականով եւ ճամբորդեց Կովկաս, հայ երկրի մէջ տարածելու այն գիտութիւնը, զոր ստացած էր Մայրաքաղաքին մէջ:

Փայլուն վկայականով հայրենիք դարձող երիտասարդը ո՛չ միայն չի մտածեր իր անձնական ապահովութեան մասին, այլ նաեւ իր մէջը խեղդած խորունկ գիտնականի միտքը՝ կը նետուի հասարակական յեղափոխական կեանքի մէջ:

Ով որ ծանօթ է Զաւարեանի ռուսերէն լեզուով լոյս ընծայած գիտական ուսումնասիրութիւններուն, որոնք հրատարակուած են ռուս կառավարութեան Կովկասի գիւղատնտեսական ընկ. կողմէ, ինչպէս «Կովկասի անբերութեան պատճառները», անիկա կը համոզուի որ ուրիշ ազգի մը եւ ուրիշ պայմաններու մէջ Զաւարեան կ'ըլլար մեծ գիտնական մը. բայց հայկական կեանքի մէջ բանաստեղծի ըսածին պէս, «սուր չի թողնում որ աշուղ դառնամ»: Դառնարով Կովկաս Զաւարեանի գործը կ'ըլլայ հայերու մէջն ալ կազմակերպել «Նարոզնայեա Վոլիա»ի մասնաճիւղեր:

Այդ ժամանակները 1870-80ականներուն՝ Պալքանեան փոքր ազգերու ազատագրութեան, ռուս-թուրքական պատերազմներու օրերն էին, երբ դեռ նոր էր ծայր տուեր «Հայկական Հարցը»: Նոր սկսած էին խօսիլ թուրքահայ տառապանքի եւ անոր ազատագրութեան միջոցներուն մասին:

Ահա երկընտրանք մը երիտասարդներու առջեւ: Կամ տարուիլ ռուսական համամարդկային հոսանքով, եւ կամ նոյն գաղափարներով տոգորուած՝ նուիրուիլ սեփական ժողովուրդի ազատագրման: Հոս է որ մեծ դեր կը կատարէ Զաւարեանի անբաժանելի ընկեր Քրիստափոր: Թողունք որ Զաւարեան ինք խօսի այդ մասին: Քրիստափորին նուիրուած գրքոյկին մէջ. այսպէս կը գրէ Զաւարեան ընկերական

հաւաքողութի մը մասին խօսելով:—

«Վէճը ազգայնութեան մասին էր, ցանկալի է արդեօք, որ փոքրիկ ազգերը պահպանեն իրենց ազգային գոյութիւնը, թէ մարդկութեան շահի ու յառաջդիմութեան տեսակէտից աւելի լաւ է, որ նրանք ձուլուեն մեծերի հետ, ունենան մի համաշխարհային լեզու, մի գրականութիւն, յարաբերութեան մի բառարան: Ես էլ միւս «կարմիրներ» հետ տաք-տաք ապացուցում էի, որ յետադիմութիւն է ստեղծել մանր ու մոռնր գրականութիւններ, պահպանել առաջուց մեռելութեան դատապարտուած լեզուները»:

Միխայէլովը<sup>1</sup> մեզ հետ թէեւ համամիտ չէր, բայց չէր յարձակուում, չէր տաքանում: Վերջը միայն մի հարց տուեց նա.

Լա՛ւ, վերջ մի լեզու է լինելու, բայց մինչեւ այդ, ի՞նչ լեզուով են զարգանալու հայր, վրացին եւ այլ միլիոնաւոր բազմութիւններ, յանուն ո՞ր արդարութեան փոքրիկ ոչխարը չպիտի արածէ բնութեան այն արօտներում, ուր պտտում է եւ աւելի խոշոր տաւարը, յանուն ո՞ր արդարութեան:

Այս միտքն այնքան պարզ էր, որ մենք շփոթուեցինք եւ թէեւ վիճում էինք, բայց սրտներին խորքում համակերպուեցինք անոր ճշմարտութեան հետ:

Հայ ժողովրդի մասին մտածելը մեզ համար դարձաւ նոյնչափ արդարացի, ինչչափ եւ ռուս գիւղացու մասին հոգալը»:

Եւ Հայրենիքի տառապանքի ձայնը կը յաղթանակէ: «Նարոզնայեա Վոլիա»-ի դրօշակին տակ կազմակերպուած հայ խմբակը կ'որոշէ նուիրուել տաճկահայ դատին: Այդ ժամանակ կազմուած էին նաեւ ուրիշ խմբակցութիւններ նոյն նպատակով, ինչպէս «հայրենասէրներու խմբակը», «Հնչակեան խմբակ» եւ այլն:

Այդ բոլոր խմբակցութիւնները մկրտուած ըլլալով նոյն ռուս գաղափարական աւազանին մէջ, նուիրուած նոյն գաղափարին, կը մտադրեն միանալ մէկ դրօշակի տակ եւ գործել միացեալ ուժերով: Ահա՛ այս միացեալ ուժէն է որ առաջ կու գայ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որմէ դժբախտաբար մեծ մասամբ անձնական պատճառներով կ'անջատուի Հնչակեան կուսակցութիւնը եւ կը շարունակէ իր առանձին գործունէութիւնը:

Դաշնակցութիւնը կազմուած է արդէն. Ռուսական «դէպի ժողովուրդ» նշանաբանը մեզ մօտ կը փոխուի «դէպի երկիր» կոչին:

«Դէպի երկիր» հայկական գրկանքները տեսնելու, դէպի երկիր ժողովուրդը ուսումնասիրելու, դէպի երկիր ժողովուրդը լուսաւորելու, դէպի երկիր ժողովուրդը ըմբոստացնելու իր դահիճներուն դէմ: Եւ ահա հայկական փլէպալը<sup>2</sup>: Կուկունեան, Գոլոշեան, Պետօ, Մարտիկ (հնչակեան), Մարգար վարժապետ եւ ուրիշներ...

Զաւարեան 91 թուին արդէն Տրապիզոն է, ազգային վարժարանի ուսուցիչ, բայց այդ լեկալ գործունէութեան համար Համիտեան ռեժիմը ասպարէզ չէր տար: Մէկ քանի ամիսէն ետք Զաւարեան Տրապիզոնի բանտն է, ապա դատարանի առջեւ եւ յետոյ քշուած Ռուսաստան:

Բայց հոն ալ հանգիստ չի մնար, հոն ալ միշտ բանտ, միշտ աքսոր...

Ու այնուհետեւ կու գան հայկական սարսափի օրերը: Յեղափոխական երիտասարդութիւնը կը պատրաստուի հակահարուածի: Ահա «Պանք օտոմանը», ահա «Խանասորը», Զաւարեան երկուսի հոգին է...

90ական լքման տարիները նա փոքրիկ խմբի հետ պատնէշի վրայ է այս անգամ գրչով հայկական ռէակսիոնը վանելու համար: «Դրօշակ»ի [18]98, 99, 900 թիւերու

մարտական լեզուն յայտնի է ընթերցողներուն:

903ին<sup>3</sup> մ/թնտղորտը կը փոխուի, Պուլիարիոյ մէջ գումարուած Դաշնակցութեան ընդհանուր ժողովը նոր գործունէութեան ուրուագիծը կը պատրաստէ: Մասսայական շարժումներու պատրաստութիւն Սասունի, Վանի եւ Կիլիկիոյ մէջ: Մեծ մարդասպանի դէմ դաւադրութիւն Պոլսոյ մէջ: Դերերը կը բաժնուին, հայրուկները հրացանները ձեռներնին դէպի Մուշ, Վան: Քրիստափորը եւ ընկերները ռումբը ձեռներնին դէպի Պոլիս, իսկ Զաւարեան փրփականդիստի գաւազան ձեռքը դէպի Կիլիկիա: Ինչ պատահեցաւ Սասուն, Վան եւ Պոլիս յայտնի է. բայց ի՞նչ եղաւ Կիլիկիա, այդ քիչերը իմացան: Պէյրութի համալսարանի եւ ուրիշ քաղաքներու երիտասարդ ուսանողութիւնը գիտէ թէ ինչ եղաւ հոն:

Զաւարեան հոն անմիջական գործունէութեան (մասսայական շարժում) համար հող չգտաւ: Եւ եկաւ այն եզրակացութեան թէ տակաւին պէտք է ամէն բան այդ ու բենէն սկսել: Հրացաններու հետ հոն փոխադրել տուաւ Բաֆֆիի զիրքերը: Երկու տարուան գործունէութենէն ետք որուն արդիւնքը եղաւ բազմաթիւ երիտասարդ ուժերու երեւան գալը, որոնք այսօր Փոքր Հայքի եւ Կիլիկիոյ լաւագոյն ուժերն են, Զաւարեան կը մեկնի ժրնեւ 1906 թուին, երբ արդէն սկսած էր Կովկասեան յեղափոխական շարժումը եւ ապա հայ-թուրքական ընդհարումները: Այդ պատմութիւնը ամէնուն յայտնի է:

Այդ սեւ օրերուն երբ «Կովկասեան Վանդէան» մէկ կողմէ եւ երիտասարդ ուժերու լքումը միւս կողմէ, Կուսակցութիւնը դրած էին անելի մէջ, նորէն Զաւարեան եւ սակաւաթիւ ընկերներն են, որոնք չեն լքեր տաճկահայ դատը եւ կը պահպանեն թուրքահայ եւ ռուսահայ միութիւնը:

Ահա վերջապէս եւ 1908 թուի Ազատութեան օրերը Թուրքիոյ համար: Զաւարեան դարձեալ ամէնէն առաջ հոն է, Պոլսոյ մէջ: Նա էր որ սկիզբ դրաւ ազատական ու հասարակական դասախօսութիւններու շարքին: Նա էր որ նախաձեռնարկը եղաւ «Ազատութեան Մատենադարանի» հրատարակութեանց: Ազատութեան օրերուն կը յաղորդեն Ատանայի կոտորածները: Զաւարեանը դարձեալ հոն է. կը կազմակերպէ աղէտեալներու օգնութեան գործը եւ ջարդի պատճառներն ու հետեւանքները կ'ուսումնասիրէ մեծ ձեռնհասութեամբ:

Այնուհետեւ կը տեսնենք զինք Մուշի մէջ թեմական տեսչի պաշտօնով: Ընթերցողները կը յիշեն անշուշտ այն ոգեւորութիւնը զոր անիկա առաջ բերաւ այդ շրջանին մէջ: Բացուեցան 100է աւելի վարժարաններ, որոնք ստացան բազմաթիւ գումարներ հայկական գաղութներէն... Եւ այդ նպաստները կը տեղային Մուշ, Զաւարեանի անձնաւորութեան հանդէպ ուրիշներու ունեցած յարգանքին հետեւանքով:

Շատեր տեսան թէ ինչ պայմաններու տակ անիկա մեկնեցաւ Մուշէն, հալածուած հաստափոր կղերականներէ եւ աղաներէ... մերկ ու զրպանը դատարկ, բայց հպարտ եւ մաքուր, այնքան մաքուր դրամական հարցերու մէջ, որ անոր առջեւ կը խոնարհէին ո՛չ միայն ընկերներ այլ եւ հակառակորդները:

Եւ դարձեալ Պոլիս: Նա էր որ առաջին անգամ սկսաւ հարուածել Իթթիհատը «Ազատամարտ»ի էջերուն մէջ, խորապէս ազդուած այն խաբէական քաղաքականութենէն զոր Իթթիհատը ունեցաւ հայ ազգային պահանջներուն հանդէպ:

Նա միշտ մնաց հաւատարիմ ու անկեղծ իր ներքին զգացումներու առջեւ, անկաշառ իր համոզումներուն մէջ, միշտ թարմ իր գաղափարականութեան մէջ,

միշտ սիրող երիտասարդութիւնը եւ սիրուած անկէ, միշտ պահապան հրեշտակ Կուսակցութեան մաքրութեան ու առաջդիմութեան...

Եւ այժմ երբ կը յիշեմ անոր մարգարէական անէծքներն ու կոչերը մեր Ընդհանուր ժողովներուն մէջ, երբ կը մտաբերեմ այն տիրական ազդեցութիւնը զոր ունէր անիկա ամէնուն վրայ, կը յիշեմ եւ այն որ ամէնքն ալ կը պնդէին թէ Զաւարեանը բազմիցս փրկած է Կուսակցութիւնը անկումներէ:

Կը յիշեմ ու կը մտածեմ, թէ ո՞վ պիտի ըլլայ այսուհետեւ մեր կուսակցութեան մարգարէն, անոր թերութիւնը անիծող Մովսէսը բայց եւ միեւնոյն ատեն զայն դէպի Աւետեաց Երկիր առաջնորդողը անփառունակ ու դաժան անապատներէ...

Կը մտածեմ ու ծնկաչոք կը խոնարհիմ անոր ածիւններուն առջեւ, կը խոնարհիմ հաւատարով, որ այսուհետեւ ալ անոր ոգին մեզ պիտի ոգեւորէ, մեզ պիտի առաջնորդէ դէպի հեռաւոր իտէալները...

Կը մտածեմ եւ չեմ յուսահատիր, որովհետեւ երրորդութեան մէկ անդամը, հաստատուն կաղնին, դեռ կանգուն է<sup>4</sup>, եւ անոր արդէն շրջապատած են իր որդիներն ու թոռները...

Պիտի ապրինք դեռ եւ դե՛ռ շատ Զաւարեաններ պիտի տանք...

Պիտի ապրինք դեռ մինչեւ որ հայ ժողովուրդը հասնի «Աւետեաց Երկիր»:

Իսկ մինչ այդ՝

Փա՛ռք ընկնողներուն...

ԱՐԱՄ

«Աշխատանք», Վան, 1913 թ. էջ 1658-1660:

1.- Խօսքը Քրիստափոր Միքայէլեանի մասին է:

2.- Միեւնոյն ժամանակ երեսն եկող մտաւորական կամ այլ փայլուն գործիչներու բոյլ:

3.- Պէտք է ըլլայ 1904 (Փետրուար-Մարտ ամիսներ):

4.- Այնարկութիւնը Ռոստոմի համար է:



# ԻՇԽԱՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ



Ապրիլ 3ի գիշերուայ Հիրճի մէջ եղած դաւադրական ոճիրը, որը դարձաւ ազդանշանը Վանի հերոսական ապրիլեան ապստամբութեան, գերեզման տարաւ մեր սիրելի Իշխանը՝ իրեք ընկերներով:

Թէեւ շատ ծանօթ դէմք մըն է Իշխանը Վանի համար, որովհետեւ իր ամբողջ յեղափոխական կարգերը ստեղծած է հոս, բայց վերջիչէլ այդ հերոսական կեանքէն քանի մը էջեր, անօգտակար չէր ըլլար մեզի համար:

Իշխան բնիկ դարաբաղցի է, գիւղացու զաւակ: Ղարաբաղի գեղերէն խրոխտ եւ անտառուտ լեռնային Քրասնի գիւղէն: Անոր ծնողները հարուստ գիւղացիներ էին, հայրը վերջերը գիւղը թողած զբաղած է ընկուզի տախտակ արտահանելով արտասահման, մեծ մասամբ Մարսէյ: Արհեստի բերումով աշխարհ տեսած մարդ, անգրագէտ, բայց փափաքող ուսման: Նա իր տղուն ուսման տալու համար կը փոխադրէ Շուշուայ թեմական դպրոցը:

Իշխանի դպրոցական կեանքը կը զուգադիպի մեր յեղափոխական շարժման լաւ ու վատ օրերուն: 1892-1902 թուականը Սասնոյ հերոսական ապստամբութիւնը, Զէյթունի կռիւները, Բանք Օդոման, Խանասոր եւ այլն, դրուագներ որոնց շուրջը հիւսուած էին երգեր ու որոնք կը թրթռացնէին պատանիներու սիրտը:

90-ական թուականները Շուշուայ թեմական դպրոցի ընթացիկին օրերն էին: Կղերականներու ընթացիկ մանաւանդ անոնց գլուխ գործոց Բէնիկ վարդապետի ժամանակաշրջանին, դպրոցը դարձուցած էր ստրուկներու որջ, բռնակալութիւնը՝ օրէնք:

Պատանիները իրենց հոգեկան ձգտումներուն գոհացումը կը ստանային դպրոցէն դուրս ընկերական գաղտնի շրջանի մէջ, ուր կը կարդային «Արշարոյսին», «Ուրիշի գերեզմանի վրայ առանց արցունքի են լաց լինում», «Վերջին դաս», «Խենդ», «Ջայլէդտին», «Կայծեր», «Լուսադիմին» եւ այլն... Պատանիներու երեւակայութիւնը կը թուչէր դէպի Սասուն, Վան, Զէյթուն, կարճ խօսքով դէպի Հայաստան...

Դէպի Հայաստան կ'ուզէն երթալ նոյնիսկ 10-12 տարեկան պատանիներ, եւ մի գեղեցիկ օր ընկերները կը լսեն որ պատանի Իշխանը՝ 12 տարեկան, խումբ մը ընկերներով փախած է Հայաստան, վալադ բռնելով դարաբաղցի համալ մը: Խեղճ պատանիներուն համալը առաջին գիշերը կը տանի մինչեւ Քերսի<sup>1</sup> տակ ու ինքը կը փախչի: Քանի մը օր վերջ Հայաստան փախչող ըմբոստը՝ Իշխան, ընկերները կը տեսնեն սեւացած դէմքով բայց միշտ բարձր բռնած գլխով կանգնած է իրենց մէջ... Ընկերներու կատակ հարցումին՝ «Ի՞նչ խաբար բերար Հայաստանէն»... պատասխան կ'ըլլայ «Ես ոչ միայն Հայաստան կ'երթամ, այլ Հայաստանցի պիտի ըլլամ...»:

Հայաստանի սիրով խենդացած ըմբոստի համար դպրոցը դարձեր էր բանդ, բնականէն օժտուած հարուստ ընդունակութիւններով, չէր կարող մարսել եւ տա-

նեւ Բէնիկեան ուժովի սխալաստիկան... Եւ ահաւասիկ խուլ դժգոհութիւն մը դպրոցէն ներսը կը փոխուի ըմբոստութեան: Դպրոցական հանդէսի մը ատեն քանի մը ընկերներով Իշխանը կ'ըմբոստանայ տեսուչ վարդապետի դէմ, հազարաւոր բազմութեան մէջ աթոռ մը առնելով կը զարնէ ուսուցիչի մը գլխուն... Սոսկալի խայտառակութիւն. ժողովուրդը սոսկումնահար կը փախչի: Բէնիկը երեսի վրայ ընկած կ'ողբայ իր խայտառակութիւնը, իսկ ըմբոստ Իշխանը կը փախչի Քարի տակի սարը, ոստիկանութեան ձեռքէն ազատուելու համար...

Այսպիսի պայմաններու տակ ուսումը շարունակելը անհնարին ըլլալով, ըմբոստները կը փոխադրուին Երեւանի թեմական դպրոցը: Հոն ալ վերջին կարգի մէջ աւարտական քննութեան ժամանակ յանկարծ սկանտալ, եւ վերջնական կերպով դպրոցէն հեռացում:

Այնուհետեւ Իշխանին դուք կը գտնէք պրոպականդիստի ցուպը ձեռքին՝ ճորձի դաշտին կամ Ղարսի գիւղերու մէջ:

1902 թուին, արդէն «դէպի երկիր» հոսանքը նոր մտաւորական տարրեր կը գտնէր: Բասեն էր մտած արդէն Մենակ (Եզոր Առստամեան), Իշխանի համագիւղացին եւ ազգական: Մենակ Իշխանին կը հրաւիրէ իր մօտ իրեն օժանդակելու համար: Մի երկու ամիս մնալէ վերջ կ'անցնի Ռուսական Բասեն, Խանի եւ եւ Նէվրուզի խումբը երկիր առաջնորդելու համար:

Իւզվերանի եւ Բասենի այլ վայրերու հերոսական կռիւէն վերջ քանի մը ազատուած ընկերներու հետ, թուրք զապիթ մը սպաննելով շորերը հագած, ձին հեծած՝ Իշխան նորէն Կարս կը գտնենք:

Ապա նորէն պրոպականդիստ Ղարսի շրջանի մէջ ու Կոմսի (Վահան Փափագեանի) հետ Տաք Աղբիւրի<sup>2</sup> գծով դէպի Վան:

Ահա Ռիտունեաց լեռներու մէջն է որ կանգ կ'առնէ անհանգիստ ու թափառական պատանին:

Այդ օրերէն Իշխանին վերյիշողները գիտեն, անպեղ ու անմօրոքս պատանին, անցած իրմէ կրկնակի հասակաւոր ու փորձառու մարդկանց գլուխը, անըմբռնելի եռանդով եւ հեռատեսութեամբ: Նմանը չտեսնուած ժողովրդական-ուսմանական կազմակերպութիւն կը ստեղծէ Կարկառ, Գաւաշ, Մոկս, Կարճկան եւ Շատախ եւ ամենալայն չափով կը զինէ ժողովուրդը:

Այդ շրջանի մէջ երկու անգամ հերոսական կռիւներ կ'ունենայ Նարեկ գիւղի մէջ, ուր արդէն Իշխանը կը դառնայ ժողովրդական հերոս ու երգերու նիւթ... Հայ գեղջուկը արդէն կը սկսի անով ներշնչուիլ, անով ոգեւորուիլ՝ «Իշխանն եկաւ ձեռք մաւիգէր, վա՛յ լէ լէ, ջա՛ն լօ լօ լօ...»:

Ամենազարմանալին այն է այս հերոսական կեանքի մէջ, որ այդ ամենադաժան պայմաններու մէջ ժամանակ կ'ունենայ ինքնազարգացմամբ զբաղուիլ եւ կրնամ ըսել աւելի շատ բան սովորեց քան դպրոցի մէջ եւ ատոր կից, յեղափոխական գործի ծանր բեռի տակ, ժամանակ ունենալ կրթական-դպրոցական գործերով զբաղուելու:

Ինչ ալ որ ըսեն մեր հակառակորդները անոր կատարած դերի մասին Աղթամարի եւ անոր թեմերուն մէջ, բայց պատմութիւնը վերջ ի վերջոյ պիտի արձանագրէ, որ այդ ախոռը մաքրող, անոր տնտեսութիւնը կանոնաւորող, զայն ժողովրդին ծառայեցնողը, անոր կեդրոնական դպրոց հիմնողը եւ այնքան հրաշալի ոգով գիւղա-

կան ուսուցիչ-ինտելիգենցիա հասցնող եղեր է Իշխանը:

Եւ այսօր այն պատանիները, որոնք Շատախի, Մոկսի, Կարկառի, Կարճկանի, Գաւաշի եւ Հայոց Չորի մէջ կուրծք են տուած թշնամուն, կամ անոր զէնքի կամ անոր հիմնած դպրոցի աշակերտներն են: Թէ որքան են կապուած եղեր Աղթամարի աշակերտները Իշխանի հետ եւ թէ անոր հերոսական կեանքը ինչեր է ներշնչեր անոնց, աւելի շուտ կը պարզուի հետեւեալ էպիգրօով:

Աղթամարի դպրոցի ամսվերջին քննութեան ատեն, Հայոց պատմութեան դասի ժամանակ, երբ կը հարցնեն, թէ հայերը այժմ թագաւոր ունին, պատասխանը կ'ըլլայ «այո», երբ կը հարցնեն թէ ո՞վ է — պատասխանը կ'ըլլայ «Իշխան»:

Այնուհետեւ 1906ի աշնան Իշխան կը մեկնի արտասահման Վիեննայի ընդհ. ժողովին մասնակցելու: Տարի մը հոն մնալէ վերջ նորէն նախկին դիրքի վրայ կը գտնենք զինքը:

ԱՐԱՄ

«Աշխատանք», Վան, Ե. տարի, 1915 թ. Յունիս 6:

1.- Քերս կամ Քիրս – Լեռնագագաթ Արցախի մէջ:

2.- Տաք Աղբիւր – ծածկանուն Պայագիտ գաւառի Միրզաջան գիւղի, որ ֆետայիներու համար Երեսանի շրջանէն դէպի Ալաշկերտ եւ Վան անցման կէտ էր:

# ԻՇԽԱՆ (ՆԻԿՈԼ ՊՕՂՈՄԵԱՆ)<sup>1</sup> 1881-1914

Վանի ապրիլեան կռիւների ազդանշանը եղաւ Իշխանի սպանութիւնը:

Ապագան պիտի կարենայ պարզել միայն այս մահաւան ամբողջ մեծութիւնը, որովհետեւ առանց այս մահաւան կարող էին բոլորովին ուրիշ կերպ դասաւորուել Վանի դէպքերը եւ ժողովրդի կեանքը:

Իշխանը ծնւել է Շուշու գաւառի Քուսանի գիւղում-ինքը գիւղական ապահով ընտանիքի գաւակ լինելով, կը տեղափոխուի քաղաք եւ կը մտնի թեմական դպրոց:

Շուշուայ թեմական դպրոցի վերիվայրումների ժամանակն էր, Լ. Սարգսեանի խմբի հեռացումով դպրոցը մատնեց անիշխանութեան, իսկ այդ անիշխանութիւնը Բենիկ վարդապետի օրով դարձաւ անհանդուրժելի. աշակերտական ըմբոստացումները ծայր տւին եւ վերջացան այն մեծ ցոյցով (ամսավերջի հանդէսի առթիւ), որը դպրոցը դարձրեց ոստիկանատուն, իսկ Բենիկին ու իր խմբակին ոստիկանական գործակալներ: Սկսուում է ձեռքաւարութիւնների ու դպրոցից վճարումների երկար շարան... Վաճառների երկար կարաւանը հանգիստ էր առնում Երեւանի հիւրընկալ եւ համբերատար թեմականում:

Շատ հետաքրքրական է ամսավերջի հանդէսի ըմբոստացման մէջ Իշխանի դերը. սկիզբը ցոյցը կրում էր պասսիւ բնոյթ, միայն գոռում-գոչումներ, «չենք ուզեր Բենիկ վարդապետը», «սոտ կասէ» եւ անկապ խօսքեր, մէկ էլ յանկարծ դահլիճը ալեկոծուում է, վերջին շարքերում կանգնած վարժապետներից մէկը մի հարած ստանալուն պէս գլորուում է գետին, նրա յետեւից էլ մի աթոռ ճօճելով օդում, ընկնում է հասարակութեան գլխին, խուճապը պատրաստ է, փախչող փախչողին է: Բենիկը եւ Գառնակերեան եպիսկոպոսը ամբիոնի վրայ ընկած ողբում են...

Լրտես վարժապետը ծեծողը եւ աթոռ նետողը Իշխանն էր... անկէ յետոյ, կարծեմ, սկսուում է նրա աստանդական կեանքը. Երեւան հասնող կարաւանի մէջ է Իշխանը:

Իշխանը իր հայրենասիրական եւ համայնասիրական զգացմունքները ստացել է Շուշուայ թեմական դպրոցի աշակերտական շրջանակների մէջ:

Դպրոցում գրկած բաւականութիւն ստանալու դիւրութիւնից, աշակերտների միտքը դառնում է ինքնուրոյն միջոցներով զարգացում ստանալու կողմը: Այսպիսով սկսուում է գաղտնի աշակերտական շրջանակների կազմակերպութիւնը, որոնց սկզբնական նպատակն էր, ինքնագարգացում ձեռք բերել խմբական ընթերցանութեամբ, դասախօսութիւններով եւ անհատական ընթերցանութեամբ. ունէինք եւ գրադարան, որ վերջը նւիրեցինք Թաւրիզի Լիլաւայի վարժարանին:

Ժամանակի իղէալները 90-ական թւականի իղէալներն են, «Հայաստանի Ազատութեան»-ը տողորած 96-ի սոսկալի ջարդերի ազդեցութեամբ: Իշխանը դեռ 14 տարեկան փախչում է Հայաստան, բայց հասնելով Քիրսի տակ՝ փոշմանած ետ է դառնում...

Շուշեցիների խուժումով Երեւանի թեմական դպրոցի խաղաղ յարկի տակ էլ սկսուում են աշակերտական շրջանակներ, ընթերցանութիւն, դասախօսութիւն, երեկոյթ, եւն...

Աւարտական քննութիւնները դեռ չլմնցած, ինձ անյայտ պատճառով, Իշխանը հեռանում է թեմական դպրոցից ու նետուում հասարակական ասպարէզ:

Արդէն 900-ական թւականների սկիզբն էր: Անդրանիկի Առաքելոց վանք մտնե-

լու օրերը, Սասունի նոր եւ երկրորդ ապստամբութեան նախօրեակին, կոտորածների ռէակցիան անցել էր, Կովկասից խումբ խումբ երիտասարդներ մեկնում էին դէպի երկիր: Արդէն Բասեն էր Մենակը — Եգոր Առստամեան, ճանապարհուէլ էր Թումանի խումբը, ռազմական զարդերով, Քեռի, Մուրադ, Սեպուհ, Կայծակ, Աւօ, Որսորդ Գէորգ, Մոկացի Գրիգոր եւն եւն, որոնք յետոյ Հանդիսացան մէկ-մէկ մեծ խմբապետներ...

Կարսի շրջանը եռ ու գեռի մէջ էր, օրւայ իդէայը Սասունին օգնութիւն գնալն էր մարդով, մանաւանդ գէնքով...

Իշխանը ինքզինքը կը նետէ Կարսի շրջանը, ապա իսկոյն կ'անցնի Բասեն Մենակին օգնելու համար: Իւզվերանն ու Գոմաձոր դեռ յիշում են իրենց պատանի յեղափոխականին... Ճիշտ այդ ժամանակն է, որ պատրաստուում էին երկիր մեկնել խանի ձիաւոր եւ Նեվրուզի հետեւակ խմբերը:

Մենակից ուզւած էին «վախազներ», այդ խումբը եկաւ գլխաւորութեամբ Իշխանի: Այդ խմբի ղեփախտ վախճանը յայտնի է. Գոմաձորի բարձունքների վրայ եւ Իւզվերանի տափաստանում հերոսական դիմադրութիւնը հազարաւոր զօրքերի թնդանօղների ու քրդերի դէմ, վերջանում է մերոնց հերոսական մահով, բացի մի քանիսից, որոնք յաջողում են ճողոպրել թիւրքական շղթայէն եւ նորէն մեր կողմը անցնել: Այս կողմը անցնողներէն մէկն էլ Իշխանն է. այնտեղ կուրին մասնակցած էր բոլոր ուժով եւ սպանած մի քանի զինւոր, ի միջի այլոց եւ մի սպայ. հազած անոր զգեստները, կապած թուրը, նստած ձին, յանկարծ երեւաց Ս. Խաչի անտառը:

1903-ի աշնան Կոմսը պատրաստուում էր Վան մտնել, Իշխանը այդ ժամանակ Ալեքսանդրապոլի շրջանում կազմակերպչական-պրոպագանդի գործով էր զբաղւած, լսելով Կոմսի մտադրութիւնը, եւ յուսահատուած Բասենից, որովհետեւ արդէն Մենակ նահատակուել էր ու այդ շրջանի բոլոր կարտերը բացուել, անցնում է Երեւան եւ միանում Կոմսին:

Գայլ Վահանի<sup>2</sup> զինատար խումբը իր հետ առնելով Կոմսին, Իշխանին՝ մեկնում է դէպի Դիարդին, ճանապարհին անհուն նեղութիւններ կրելով հասնում են Վան:

Վանում էլ ռէակցիայի պէս մի բան կար, Վարդգէսը<sup>3</sup> ձերբակալւած էր, ժողովուրդը հաբեկւած, այնտեղ մնացած փախստականները ապաստանած էին լեռները եւ ամենադժարին կացութեան մէջ:

Կոմսի եւ Իշխանի գալով դրութիւնը կամաց-կամաց մեղմանում է, իսկ քիչ վերջը, մերոնք նորէն դրութեան տէր են դառնում եւ ամբողջ շրջանի կազմակերպման անցնում:

Կոմսը մնում է քաղաք, իսկ Իշխանին վիճակուում է Ռշտունեաց երկիրը, լեռնային գաւառների՝ Շատախ, Մոկս, Կարկառ, Գեաւաշ, Կարճկանի կազմակերպման գործը: 21 տարեկան պատանին գործի է անցնում: Մի տարուց յետոյ, երբ մարդ մօտիկից ծանօթանար նրա ստեղծած ինքնապաշտպանութեան խմբերի հետ, հէնց իր խմբի կազմի հետ, կը տեսնէր որ սա ստեղծւած է մի երկաթէ կամք ունեցող, տոկուն եւ հետեւողական մարդու ձեռքով, իսկ այդ մարդը ի գարմանս ամէնքի պատանի Իշխանն էր...

Այսպիսով սկսում է նրա կեանքի բեղուն շրջանը: Ժողովուրդը ճանաչել է իր գործիչին, արդէն նա երգ է հիւսել:

Իշխանն եկաւ ձեռք մաւզէր,

Վայ լէ, լէ, ջան լէլէ լէ:

\* \* \*

Սասունի 1904-ի ապստամբութիւնը, ինչպէս յայտնի է, վերջացաւ նրանով, որ

ամսւայ մը չափ հերոսական դիմադրութենէ վերջ Անդրանիկ եւ ուրիշ ռազմիկներ ստիպւեցան քաշել Վան: Նաւով հասնում են Ադրթամար կղզին, շուտով նրանց մօտ է հասնում Կոմսը քաղաքէն, իսկ Իշխանը իր խումբով Կարկառէն:

Արսէն վարդապետի դաւաճանութեամբ խումբը կուրի է հանդիպում կղզու վրայ. մերոնք յաջողում են ճողոպրիլ ու նաւերով Վան ապաստանիլ...

Արսէն վարդապետը զոհ կ'երթայ իր մատնութեան. քանի մը շաբաթէն Իշխանին յանձնում է, որ խմբով այդ գործը կատարէ: Արսէնը սպանում է եւ մթնոլորտը խաղաղում...

Անդրանիկը հեռանում է Վանից, փոթորիկը անցնում է եւ սկսում Վանի համար խաղաղ աշխատանքի շրջան:

Իշխանի գործունէութեան միւս տարիները կրում է զարմանալիօրէն բազմակողմանի բնոյթ: Նախ եւ առաջ ժողովրդի զինում, ռազմական խմբերի ստեղծում, քաղաքական խմբերի կազմակերպութիւն, դպրոցների բացում, գրադարանների հիմնում, Ադրթամարում մի միջնակարգ դպրոցի բացում, շէնքի շինութեան, գաւառին ուսուցիչներ հասցնելու համար եւ այլն...

Այդ շրջանում նա ունեցել է մի քանի ընդհարումներ թիւրք զօրքի եւ քրդերի հետ, որոնցից ամենանշանակաւորը Նարեկի I եւ II կռիւներն են, ուր նա հարիւրաւոր զօրքերի դէմ կուրի է մի փոքրիկ խմբով մինչեւ երեկոյ եւ անյայտացել դէպի լեռ, առանց զոհի: Այսպէս շարունակեց մինչեւ 1906-ը, երբ ընկերների որոշմամբ անցնում է արտասահման մասնակցելու Վիեննայի Ընդհ. ժողովին:

1907-ի ձմեռը կրկին անցնում է Վան խմբով. գործը արդէն ընդարձակ սահմանների մէջ էր ընկել, Վան էին հաւաքել բաւական փորձած եւ երիտասարդ ուժեր: Գալով Վան՝ նա կրկին անցնում է իր սիրեցեալ Լեռնապարը՝ Սարգսի<sup>4</sup> հետ:

1908-ի սկիզբը պայթում է Դաւիթի դաւաճանութիւնը. ամէնքը սարսափի են մատնւում, սկսում է խուզարկութիւնների եւ հետապնդումների մի երկար շարան, Վանի գաւառներում եւ քաղաքում կառավարութիւնը յաջողում է ժողովրդի ինքնապաշտպանութեան ամբողջ գէնքերը հաւաքել: Իսկ Իշխանի շրջանում այդ չի յաջողում, նա ինքը բոլոր գիւղերից գէնքերը հաւաքում է եւ շալակով լեռներում պահում. ահաբեկում է ոստիկանութեան եւ սպանում բազմաթիւ դաւաճան ուսներ ու պաշտօնեաներ:

1908-ի սահմանադրութիւնը լոյս աշխարհ է հանում ամէնքի հետ եւ Իշխանին, այդ ժամանակ էլ նա մի կողմից զբաղւած էր դարձեալ ժողովրդի զինման գործով եւ միւս կողմից էլ «Աշխատանք» թերթի խմբագրութեամբ:

Մի կողմից ուրեմն կը պատրաստէր ժողովուրդը սեւ օրւայ համար, իսկ թերթով էլ Օսմանեան Սահմանադրութեան իրագործման կը ձգտէր:

Լաւ օրեր էին, յոյսի ու երազի, ամէն բան անցած էինք համարում, խաղաղ օրդանական աշխատանքի ժամանակ: Ազգային երեսփոխանական ժողովի ընտրութեան հետեւանքով Իշխանը ընտրւում է Ազգային ժողովի ատենապետ: Հոֆը<sup>5</sup> Վան է հասել: Առաջնորդարանը պատրաստել է ընդունել: Ազգային Առաջնորդարանի ներկայացուցիչները առաջնորդի եւ Իշխանի հետ Արտամէտ են գնում Հոֆին: Հոֆը միւս օրը փոխ այցելութիւն է տալիս, երաժշտութեամբ ընդունւում է ներս, սովորական խօսակցութիւններից յետոյ սկսում են քաղաքական ճառերը: Առաջնորդարանի կողմից խօսում է Իշխանը. տպաւորութիւնը ահագին է, ամբողջ քաղաքը խանդավառութեան մէջ է, որ Իշխանը պատւաւոր ձեւով ազգը ներկայացրաւ Հոֆին:

Պատերազմի յայտարարութիւնից յետոյ սկսում է երկար պատմութիւն, թիւրք

կառավարութեան եւ մեր միջեւ: Այդ յարաբերութեան մի մասը վերապահւած է աւելի բարեպատեհ ժամանակի: Իշխանի դերը այդ շրջանում եղել է ամենալայնը ու ծանրը: մի կողմից պահել կառավարութեան հետ լոյսալուծեան<sup>6</sup> կապը, որին ինքը շատ չէր հաւատում, միւս կողմից կազմակերպել անխուսափելի ինքնապաշտպանութեան կռիւ նախանիւթերը, զէնք, ռազմանիւթ, դիրքեր, ռազմիկներ եւն, եւն-առաջինը, դիպլոմատիկական յարաբերութիւնները, նա թողեց միւս ընկերներուն, իսկ երկրորդը՝ ռազմական մասը ամբողջապէս վերցրեց իր ուսերի վրայ...

Ահ ու դողի ամիսներ էինք ապրում, կոտորածը գաւառներէն (914 թ. աշնանա-յին նահանջի հետեւանքով) կամաց-կամաց մօտենում էր քաղաքին:

Դասալքութեան հարցը հիւանդագին բնոյթ էր ստացել: կառավարութիւնը պահանջում է փախած զինւորներին, մենք համաձայն ենք որոշ չափով գոհացում տալուն, մի քանի հարիւր մարդու գնալուն, ժամանակ շահելուն, բաժակը մեզնից հեռու վանելու համար... Ժողովուրդը, երիտասարդութիւնը անհաւատ է դէպի կառավարութիւնը, նրա բնազդը կոտորածի հոտ է առնում, «գնացողներին պիտի կոտորեն Արճէշ չհասած», «դուք դաւաճաններ էք», «երիտասարդներին զինուոր ուղարկողները ազգի թշնամիներ են»...

Միջին ճամբայ չկայ, ելք չենք կարող գտնել, ինդիրը օրերի, մինչեւ անգամ ժամերի հետ է կապւած. խօսք ենք տւել կառավարութեան ազգովին, որ պէտք է զինւորներ տանք, բայց գնացող չկայ, փորձութեան ենթարկող չկայ, ամէնքը, մանաւանդ ամբոխը կը սարսափի առաջին գոհը լինելու: Ահա այդ օրերն էին, որ պայթեց Շատախի ըմբոստացումը: Մտածում էինք կրկին ջուր լեցնել, կրկին մարել, նորէն ժամանակ շահիլ. ոչ մի կողմից փրկութիւն, օգնութեան յոյս չկար: կառավարութիւնը ըստ երեւոյթին մեզ հետ համաձայն է. Իշխանը կ'ուղարկենք Շատախ հանգստացնելու կառավարական պաշտօնեաների հետ. իսկ նրա ետեւից Զէվտէթ<sup>7</sup> բէյը իր թիկնապահ չերքէզներին է ուղարկում եւ Հիրճի մէջ, Հայոց Զորում, բարեկամական թիւրք յարկին տակ սպանւում են Իշխանը եւ 3 ընկերները...

Զոհը արւած է, փորձութեան անդունդը լեցւեց Իշխանի եւ 3 ընկերների դիակներով:

Իշխանը մեռաւ, Վանը փրկւեց...

Այնուհետեւ սկսաւ Ապրիլեան մենամարտը, առանց Իշխանի, առանց Վանմեանի:

ԱՐԱՄ

«Հորիզոն», Հինգշաբթի 7 Ապրիլ 1916, թիւ 78, էջ 2:

1., Պողոսեան իսկական ազգանունն է Իշխանի. ինք սակայն կը գործածէր Միքայէլեանը, իր հօր Միքայէլի անունով: Իրարու յաջորդող երկու կենսագրականներուն մէջ Արամ կը գործածէ երկու ազգանունները:

2.- Գայլ Վահան – ծածկանուն Տոլպաշեան Մինասի (1872-1904):

3.- Վարդգէս, նաեւ Գիսակ, ծածկանուն Յովի. Մերենկիլեանի:

4.- Բարսեղեան Սարգիս (Շամիլ): Լեռնապար – կուս. ծածկանունն է Վասպուրականի լեռնային գաւառներուն:

5.- Հոֆֆ – նորվեկիացի պաշտօնեայ, որ 1914 թ. Յունուար 26/ Փետրուար 8ին կնքուած բարենորոգումներու ծրագրով հայկ. նահանգներու համար ընդի. քննիչ նշանակուած երկու մարզականներէն մէկը, որու կեդրոնատեղի նշանակուած էր Վան քաղաքը:

6.- Օրինապահութեան:

7.- Վանի նահանգապետ:

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ\*

- Աբղրահիմ բէկ (քիւրտ ցեղապետ)** – 104, 112, 147:
- Աբրահամ բէկ (քիւրտ ցեղապետ Իպրահիմ)** – 101:
- Ագրիպասեան Յովհաննէս (1865-1889)** – 191:
- Ադաշ – Տես Մոսօ:**
- Ա-Դօ – Տես Մարտիրոսեան Յովհաննէս:**
- Ազատ (գինուոր)** – 273, 274:
- Ալէս – Տես Պարսամեան Արմենակ:**
- Ալի բէյ (Վանի կոլսակալ)** – 465, 477, 478, 481, 618, 619:
- Ալոյեան Գալուստ (Դարվիշ – 1864-1914)** – 74, 98, 99, 573, 576, 578, 579, 581, 585, 588:
- Ալվրցեան Հայկազուն – 9:**
- Ալօ (սուրհանդակ)** – 407, 415, 431, 446:
- Ախպար, Ախպէր (Մոկացի Յարուժիւն, իսկական անունը՝ Դաւթեան-Փոլատեան Յարուժիւն – 1861-1902)** – 626, 629:
- Ակնունի (Խաչատուր Մալումեան – 1863-1915)** – 401, 448, 449, 526, 535, 583, 584:
- Ահարոնեան Աւետիս (Ղարիբ)** – 44, 89, 329, 401:
- Աճեմեան Նշան (կոլս. գործիչ, մարտիկ)** – 116, 117:
- Ամի (վանեցի գինուոր)** – 66, 94, 121:
- Անդրանիկ (Օզանեան – 1866-1927)** – 6, 17, 36, 37, 42, 143, 144, 196, 197, 276, 278, 401, 599, 630, 634, 646, 648:
- Անմեղեանց – Տես Սեւքարեցի Սաքօ:**
- Անումեան Մելինէ – 502:**
- Անտոն – Տես Զաւարեան Սիմոն:**
- Անտոն Գոշ (Պոյաճեան Անտոն – 1849-1927)** – 554, 555, 557, 559:
- Աշեր Քլարէնս (Վանի ամերիկեան հիւանդանոցիբժիշկ)** – 338:
- Աչոտ (Հնչակեան գործիչ)** – 49, 83, 84, 91, 92, 100, 125-127, 138, 142:
- Ապտիւլ Համիտ (սուլթան)** – 230, 258, 265, 272, 301, 302, 320, 401, 402, 473, 625, 629, 630:
- Առաքել (Ս. Թադէ վանքի ծառայ)** – 33, 39:
- Առաքել – Տես Կայծակ Առաքել:**
- Առստամեան Գէորգ – Եգոր (Մենակ – 1882-1903)** – 7, 57, 534, 612, 613, 644, 647:
- Ասորի Սահակ (սուրհանդակ)** – 151, 152:
- Աստիկեան Տիգրան (կոլս. գործիչ, Ամերիկայէն)** – 539, 541:
- Աստղիկ – 264, 296, 425:**
- Աստուածատուր (գինագործ)** – 53, 86, 421:
- Ասրունի (Արամ)** – 537:
- Ատրպետ (Մուպազաճեան Սարգիս – 1860-1937)** – 297:
- Արամ (խոյեցի)** – 336, 339, 353, 365, 371, 372, 408, 417, 418, 430:
- Արամայիս, Բաշգառնեցի Մարտիրոս (Աբրահամեան – 1885-1957)** – 28-30, 34-36, 39:
- Արիս – 322, 323:**
- Արծրունի Գրիգոր – 210:**
- Արմենակ – Տես Օխիկեան Արմենակ (Սլաք):**
- Արմէն – 463, 464:**
- Արմէն Գարօ (Փաստրմաճեան Գարեգին – 1872-1923)** – 535, 536, 541:
- Արշակ (սուրհանդակ)** – 39, 122, 253:
- Արշաւիր Կամսարական – 488, 533:**
- Արսէն վարդապետ – 648:**

\* Ձանց առնուած է նշել Արամ Մանուկեանը, որուն անունին կարելի է համոզուիլ հատորի գրեթէ իւրաքանչիւր էջին:



*Արտաշէս – Տես Մալխաս:*  
*Արտաշէս (Մրգաստանցի) – 188, 264:*  
*Արտուր (Կուս. գործիչ Ս. Թադէի մէջ) – 18, 19, 22-24, 26-29, 32-34, 48:*  
*Աւետիս (Բիզեան, Կիւմիւլիսիանցի Աւօ – 1867-1917) – 516, 536, 647:*  
*Աւետիս (Թեհրանցի) – 37, 92, 264, 361, 369, 373, 374, 385, 392, 395, 428:*  
*Աւետիսեան (Թերլեմէզեան Մկրտիչ – 1864-1896) – 626, 629:*  
*Աւսո, քիւրտ Աւսո – 240, 241, 249:*  
*Աւօ (Թիկնապահ) – 484, 487:*

**Բ**  
*Բաբարեան Արտաշէս (1886-1959) – 565, 571, 572:*  
*Բաբգէն Սիւնի (Փարեան Պետրոս – 1872-1896) – 541:*  
*Բաբկէն (նախկին անդամ Վասպուրականի Կ. կոմիտէի) – 60, 61, 245, 290, 292, 296, 297, 305, 307, 320, 323, 344, 349, 404, 405, 428, 433:*  
*Բագրատ (սուրհանդակ) – 120, 122, 124, 136:*  
*Բաղէշեան Գարեգին (1867-1937) – 449:*  
*Բաղէշեան Համազասպ (Սալման – 1883-1907) – 81, 84, 233, 234, 237, 272, 288, 292, 307, 312, 313, 318, 325, 328, 330, 349, 352, 359, 362, 363, 377, 396, 400, 401, 405, 408, 409, 416, 427, 429-431, 433, 440, 448, 449:*  
*Բարսեղ (Շահպազ – 1883-1915, Ժընեւ) – 559, 563:*  
*Բարսեղեան – Տես Տէր Դաւթեան Յովսէփ:*  
*Բարսեղեան Արմենակ – 542:*  
*Բարսեղեան Սարգիս – Տես Սարգիս (Շամիր):*  
*Բենիկ վարդապետ – 6, 643, 644, 646:*  
*Բէկ – Տես Սաֆօ:*  
*Բժիշկ – Տես Կոմս:*  
*Բժիշկ – Տես Փայլակ:*  
*Բուկրէշտ – Տես Պուքրէշտ:*

*Բրախուլամ (Որսորդ, Խաչանցի կտրիճ սուրհանդակ) – 46-48, 62, 157, 289:*  
*Բրուտեան Ս. (Հնչակեան) – 592, 593:*

**Գ**  
*Գալուստ – 568:*  
*Գայլ Վահան (Տոլպաշեան Մինաս – 1872-1904) – 647, 649:*  
*Գառնակերեան եպիսկոպոս – 646:*  
*Գասպար (գինուոր) – 180, 245, 253, 264, 273, 277, 281, 282, 286:*  
*Գարեգին – Տես Թադէոսեան Ստեփան:*  
*Գարեգին Խաժակ (Չազալեան – 1867-1915) – 236, 237, 532, 557, 558:*  
*Գարմէն (Մելքոնեան Մկրտիչ) – 532:*  
*Գարօ – Տես Արմէն Գարօ:*  
*Գափամաճեան Պետրոս – 581:*  
*Գէորգ (սուրհանդակ) – 106, 108, 439:*  
*Գէորգ Չառուշ (Աղամեան-Ղազարեան Գէորգ, Սարհաղ – 1870-1907) – 6, 17, 54, 141, 161, 162, 190, 196, 199, 200, 210, 214, 216, 217, 246, 247, 274, 275, 281, 282, 286, 287, 292, 297, 313-315, 347, 351, 378, 484, 485, 526, 527, 619, 626:*  
*Գիսակ (Սերենկիւլեան Յովհաննէս – 1871-1915) – 7, 42, 51, 52, 57, 60, 61, 72, 77, 80, 86, 88, 89, 97, 98, 100, 106, 114, 116, 118, 119, 142, 159, 181, 201, 203, 209, 210, 217, 233, 234, 262, 268, 294, 295, 297, 305, 307, 315, 319, 328, 338, 345, 346, 350, 352, 398, 480, 513, 514, 535, 536, 557, 558, 626, 627, 629, 647, 649:*  
*Գիւլիսանդանեան Աբրահամ (1875-1946) – 55, 56, 233, 234:*  
*Գոլրշեան Ալեքսանդր (1867-1889) – 191, 640:*  
*Գուրգէն – 65, 177:*  
*Գուրգէն (Մալեան Բաղդասար – 1873-1899) – 625, 629:*  
*Գրիգոր (ուսուցիչ) – 13, 46, 47, 62, 87, 90, 122, 157, 296, 297, 308, 320, 322, 323, 340, 344, 392, 425:*  
*Գրիգոր (Վարդանեան) – Տես Սարգիս-Շամիր:*

**Դանիել** (արհեստաւոր) – 437, 440:  
**Դարվիչ – Տես Ալոյեան Գալուստ:**  
**Դաւթեան Յոնան** (1865-1918) – 455, 533, 534, 562, 565:  
**Դաւիթ** (սուրհանդակ, զինուոր) – 273, 277:  
**Դաւիթ, Դաւօ** (դհերցի, դաւաճան) – 450, 494, 496, 498, 501, 511, 622, 623, 628, 629, 637, 648:  
**Դելտա** (կուս. գործիչ) – 340, 349, 350, 476, 479:  
**Դերենիկ** (Իսկենտէրեան Վարդան) – 489, 493:  
**Դերձակեան Ռուբէն – Տես Փայլակ:**  
**Դերձակեան Օննիկ – Տես Վուամեան Արչակ:**  
**Դոնչօ** (Պետրոս Բալայեան) – 428, 433, 440:  
**Դուրբախ** (Յարութիւն Կիրակոսեան – 1866-1913) – 168, 205, 256, 634, 637:

**Եդուարդ** (կուս. գործիչ) – 356, 359, 361, 366, 367, 373, 380, 382, 385, 390, 392, 395, 410, 413, 420, 424, 427, 430, 436, 439, 440-442, 446:  
**Երէցեան Ռաֆայէլ** (ուսուցիչ, գործիչ +1912) – 573, 574, 576, 577, 586, 588:  
**Եփրատ** (Թումաղեան-Թովմասեան Յարութիւն) – 237, 238, 253, 407, 408:

**Զաման** (տասնապէս զինուոր, խլաթ-ցի) – 32, 66, 388:  
**Զարդարեան Ռուբէն** (1874-1915) – 401, 513, 514, 535, 557:  
**Զարուհի** (Տէրոյեան) – 135, 192, 206, 229, 230, 312, 313, 563:  
**Զաւարեան Միմոն** (1866-1913) – 377, 401, 492, 493, 514, 520, 521, 530, 532-534, 538, 543, 548, 549, 557, 562, 563, 574, 580, 581, 588, 589, 610, 638-642:

**Զաւրեան Յակոբ** (բժիշկ Զաւրիւս – 1865-1920) – 199, 215, 532:  
**Զոհրապ** – 621, 622:  
**Զուլումաթ** (Պասեցի Յովհաննէս – 1875-1911) – 378, 379, 408, 419, 437:  
**Զօրեան Բարթող** (Ժիրայր – 1879-1915) – 579:

**Էլլէն – Տես Միքայէլեան Քրիստափոր:**

**Ընծայր, Ընձայր** (Գէորգ վրդ. Նալպանտեան – 1857-1915) – 11, 18, 29-32, 36, 38, 48, 56, 66, 90, 112, 120, 122, 134, 136, 141, 150, 152, 157, 158, 163, 167, 207, 213, 221, 248, 250-252, 266, 277, 287, 293, 294, 310, 331, 336, 339, 351, 354, 355, 380, 391, 405, 409, 418, 433, 435, 441, 446:

**Թաղէսեան Ստեփան** (Գարեգին, Սամսոն – 1870-1945) – 11, 28, 30, 35, 39, 45, 63-66, 73, 74, 83, 84, 87, 88, 93, 94, 97, 98, 100, 104, 105, 107, 110, 113, 115, 118, 121, 128, 129, 132, 135, 137, 141, 143, 153, 154, 158, 159, 164, 166, 171, 174, 175, 179, 186, 188, 189, 194, 196, 197, 200, 208, 209, 213, 216-218, 221, 222, 225, 239, 247, 248, 251, 257, 263, 272, 274-276, 280, 281, 285, 287, 297, 299, 300-309, 319, 323, 326, 330-332, 336, 338, 343, 350, 351, 371, 372, 382, 383, 386, 398, 406-408, 416-418, 422, 423, 426, 430, 434, 435, 441, 449, 533:  
**Թաթար** (սուրհանդակ, փոխադրող) – 92, 96, 99, 100, 102, 106, 108, 120, 122, 124, 134, 136, 137, 179, 201:  
**Թաթոս** (Ս. Թաղէ վանքի սպասաւոր) – 38, 39, 46, 136, 240, 241, 249:  
**Թաթուլ** (վանեցի, անձնագրահ գործիչ) –

48, 201, 203, 209, 210, 263-265, 284, 292, 319:  
**Թաճարն պէյ** (կոստակալ նախ Կարնոյ, ապա Վանի) – 581, 593:  
**Թայիր փաշա** – 535:  
**Թարխան** – 362, 376:  
**Թաւաքալեան Բագրատ վրդ.** – 215:  
**Թէոս – Տես Թորգոմ (Տեղորիկեան Թէոս):**  
**Թէրզիբաշեան Աւետիս** (1873-1947) – 510, 516:  
**Թէրլեմէզեան Միհրան** (1889-1915) – 531, 532, 548, 549, 551, 556, 558, 562-565, 597:  
**Թիրեաքեան Հայկ (Հրաչ – 1871-1915)** – 540:  
**Թումազեան Արամ (Լեռ Կամսար – 1885-1965)** – 591:  
**Թումաս (Թաղէի վանքի զինուոր)** – 18, 33, 46, 48, 87, 90, 158, 208, 336, 387, 405, 435, 441:  
**Թորգոմ (Տեղորիկեան Թէոս – 1877-1922)** – 60, 61, 80, 97, 98, 110, 112, 180, 181, 200, 202, 203, 212, 218, 220, 223, 225, 227, 230, 233, 234, 246, 247, 259-262, 264, 272, 280, 282, 285, 286, 289-292, 295, 305, 308-310, 312, 313, 315, 318, 322, 323, 326, 329, 331, 338, 340, 343, 349, 355, 357, 364, 366, 383, 386, 388, 408, 413, 415, 416, 418, 422, 423, 425, 426, 430, 431, 440-442, 446:  
**Թորոս – Տես Ալոյեան Գալուստ:**  
**Թութունճեան Միմոն** – 209, 228:  
**Թումանեան Դաւիթ (Ծուռ Դաւիթ, Սուրուջի Դաւիթ, +1910)** – 94, 116, 117, 169, 173, 174, 180, 183, 224, 264, 286, 296, 306, 421, 444, 445, 554, 625-629, 637:  
**Թումեանց Թուման (Թորգոմ – 1879-1904)** – 7, 57, 119, 533, 611-614, 633, 637, 647:  
**Թուռցիկ (Գէորգ Տէր Աբրահամեան – 1877-1909)** – 53, 316, 318:  
**Թուռցիկ (Հնչակեան)** – 118, 145:  
**Թռչուն, Մոկացի Թռչնակ (Շահինեան Մինաս +1927)** – 83, 100, 254, 264, 267, 268, 273, 277, 280, 282, 286, 531:

**Ժամհարեան Մարգար (Մուսա – 1877-1905)** – 261, 534:

**Ժան Ժօնէս (Ֆրանսացի ընկերվարական ղեկավար, տեսաբան – 1859-1914)** – 516:

**Ճենիա – Տես Զարուհի (Տէրոյեան)**

**Իզգէթ պէյ (Վանի կոստակալ)** – 566, 580, 581:

**Իշխան (Պօղոսեան-Միքայէլեան Նիկոլ – 1883-1915)** – 8, 12, 36, 37, 42, 52, 53, 57, 60, 61, 66, 70, 80, 84, 97, 99, 100, 110, 118, 131, 132, 153, 159, 163, 165, 167, 173-175, 180-182, 184, 186, 198, 200, 214, 216, 217, 220, 225, 231, 232, 242, 245, 253, 254, 260, 263, 268, 272, 280-282, 286, 289, 290, 291, 292, 294, 296, 300, 304, 308, 312, 313, 315, 317, 321, 323, 325, 340, 352, 362, 377, 383, 390, 391, 398, 399, 401, 406, 423, 425-427, 444, 451, 454, 479, 486, 488, 498, 501, 509, 549, 566, 575, 578, 580, 599, 600, 603, 610, 643-649:

**Իուսուֆեան Յովհաննէս (1850-1920)** – 100, 200, 202:

**Իսահակեան Աւետիք (1874-1957)** – 66, 140:

**Լեւոն, Հաջի Լեւոն** – 36, 129, 156, 191, 192:

**Լէօ (Բաբախանեան Առաքել)** – 210, 320, 389:

**Լէօենք** – 116, 306, 320, 350:

**Լօրիս (վանքի, կոստ. գործիչ)** – 356, 359, 361, 368, 369, 373-375, 380, 382, 383, 385, 390, 392, 393, 410, 412, 415, 417, 420, 424, 430, 431, 436, 443, 446:

**Խաթակ – Տես Գարեգին Խաթակ:**

*Խան (Թիրեաքեան Բարսեղ – 1863-1903) – 634, 644, 647:*

*Խաչատուր – Տես Ակնունի (Մալումեան):*

*Խաչատրեան փրոֆ. Աստուածատուր (1861-1944) – 536, 537:*

*Խարախանեան եպս. Ներսէս (1850-1915) – 531, 532:*

*Խոռունի Վահան – 603:*

*Խոսրով (Կիրճեցի) – 137, 193, 207, 249, 292, 446:*

*Խրիմեան Հայրիկ – 6:*

**Մ** *երենց (Շիշմանեան Յովսէփ) – 44, 89:*

*Մովակ (գործիչ) – 325, 340:*

*Մուռ Դաւիթ – Տես Թումանեան Դաւիթ:*

**Կ** *այծակ (Պաղտասարեան Վաղարշակ – 1875-1904) – 119, 614:*

*Կայծակ Առաքել (Ապաճեան Տիգրան – 1869-1917) – 516, 526, 534, 569, 570, 613, 347:*

*Կապուտիկեան Բարունակ (Որոտ – 1888-1918) – 500, 501, 587:*

*Կասրմ, Ղասրմ բէյ – 619:*

*Կարապետեան Սրմայ – 265, 283, 286, 314, 319, 327:*

*Կարէն (ուսուցիչ, շրջիկ գործիչ) – 83, 106, 138, 170, 177, 184, 185:*

*Կարինեան Հրանտ (1890-1931 (աքսոր)) – 590, 591:*

*Կարվանով (մակեդոնացի յեղափոխական գործիչ) – 501:*

*Կարօ (Ամերիկայէն եկած) – 620, 621:*

*Կիրակոսեան Սաթենիկ – 265, 283, 286, 314, 319, 327:*

*Կնեազ (սուրհանդակ, Բրախուլամի որդի) – 62, 310:*

*Կոմս (Փափազեան Վահան – 1876-1973) – 7, 11, 12, 14, 18, 19, 21-23, 25, 26, 29, 34, 36-39, 42, 52, 57, 60, 61, 71-73, 80, 82, 83,*

*87, 88, 90, 91, 93-95, 97, 98, 104, 106, 110, 112-115, 120, 122, 124, 128, 129, 139, 148, 149, 152, 154, 157, 159, 166, 173-175, 186, 191, 195, 196, 200, 203, 209, 213, 214, 218-220, 222, 231, 233, 235, 239, 246, 248, 252, 257, 259, 260, 262, 264-266, 271, 272, 278, 279, 281, 284, 289, 291, 295, 296, 306, 308-311, 315, 316, 319, 320, 323, 328, 349, 350, 354, 357, 377, 384, 386, 388, 395, 401, 405, 408, 416, 421, 422, 425-427, 430, 437, 440, 444, 445, 450, 451, 455, 471, 479, 504, 507, 508, 518, 519, 548, 569, 570, 644, 647, 648:*

*Կորիւն (Գոմսայ Իսօ, իսկական անուն՝ Սարգիսեան Իսահակ – 1876-1915) – 281, 286, 537:*

*Կուկունեան Սարգիս (1863-1913) – 17, 640:*

**Հ** *աթամ բէկ – 340:*

*Հաճի Գէորգ – 163, 190:*

*Համբօ (փոխադրող) – 94, 100, 124:*

*Համօ (Մհեր, Օհանջանեան Համազասպ – 1874-1947) – 263, 265:*

*Հայկազուն – 554, 555:*

*Հայրիկ – Տես Մինասեան Տիրան:*

*Հանգոյց (Նիկոլ Աղբալեան – 1873-1947) – 297:*

*Հաջի Եաղուպ – 573, 576, 577, 586:*

*Հաջի Լեւոն – Տես Լեւոն-Հաջի Լեւոն:*

*Հաջի Յակոբ (հնչակեան) – 27, 88, 89, 95, 118, 119, 124, 132, 138, 142, 241:*

*Հասօ (քիւրտ ուղեցոյց, սուրհանդակ) – 39, 147, 167, 194, 221, 310, 373, 393:*

*Հիլմի փաշա (վարչապետ) – 536:*

*Հիւսէին փաշա – Տես Քէօռ Հիւսէին փաշա:*

*Հորտանս (Դաւթեան – 1864-1915) – 455, 464, 533, 534, 562:*

*Հոֆֆ (նորվեկիացի, ընդհ. քննիչ հայկ. նահանգներու (Վան)) – 648-649:*

*Հրայր-Դժոխք (Ղազարեան Արմենակ – 1864-1904) – 6, 7, 89, 119, 614:*

**Ղարիբ** – *Տես Ահարոնեան Աւետիս:*  
**Ղեւոնդ** – *Տես Մելոյեան Ղեւոնդ:*

**Ճեւտէթ պէյ** – *Տես Զեւտէթ:*

**Մարխաս** (*Յովսէփեան Արտաշէս* – 1877-1962) – 11-13, 18, 23, 25, 28, 29, 31, 35, 36, 38, 44, 56, 62, 63, 73, 86, 88, 90, 93, 97, 98, 100, 104, 105, 107, 111-113, 120, 129, 132, 134, 135, 137, 139, 148, 150-154, 156, 158, 161, 167, 171, 175, 179, 180, 186, 188-191, 196, 200, 203, 207, 210, 213, 217, 221, 240, 260, 264, 306, 340, 344, 354, 357, 362, 377, 383, 387, 388, 413, 417, 427, 430, 431, 433, 437, 440, 445, 454, 501, 508, 509:

**Մարոյեան Աւետիս** (1864-1896) – 630:

**Մախսուդ** (*այգեստացի սուրհանդակ*) – 95, 96, 100, 102, 122, 138:

**Մահմեդ բէկ** – *Տես Սաֆօ:*

**Մահմէ** (*քիւրտ աւագակ*) – 568:

**Մամբրէ** – 577:

**Մանուկ** (*աւետարանցի*) – 361, 383, 385:

**Մանուկեան-Խոռոզեան Հմայեակ** (1880-1920) – 591:

**Մաշտոց, Մեսրոպ Մաշտոց** (*Աւետիսեան*) – 31, 33, 140, 207, 211, 252, 264, 268, 269, 289, 291, 293-295, 300, 306, 397, 398, 404, 428, 433, 436, 439, 440, 446:

**Մար** – *Տես Տէր Մարտիրոսեան Միքայէլ:*

**Մարալ** – *Տես Փիլոս (Փափախեան):*

**Մարգար վարժապետ** (*Ամիրեան-Ամրոյեան Մարգար* – 1857-1893) – 640:

**Մարգպետ, Մարգպետունի** (*Ղազարոս Ղազարոսեան* – 1878-1918) – 353, 354, 364, 366, 380, 386, 390, 404-406, 408, 410, 417, 422, 428, 434, 440, 444, 497:

**Մարկոսեան Աննա** – 265, 283, 286, 314, 319, 327:

**Մարտիկ** (*Մարուխանեան Մարտիրոս* – 1873-1896) – 629, 635, 640:

**Մելիք-Արծրունի** – 222, 259, 265, 281, 284, 319, 323:

**Մելոյեան Ղեւոնդ** (*Վաթան* – 1877-1967) – 81, 84, 233, 234, 238, 313, 316, 318, 330, 362, 363, 396, 400, 408, 409, 509, 513, 514, 531, 549, 557, 562, 564, 565:

**Մելքոն** (*Ս. Թաղէ վանքի զինուոր*) – 31, 33, 39, 40, 46, 48, 122, 136, 435:

**Մելքոն** (*Ժընեւի ընկեր*) – 556:

**Մելօ** (*անձաւցի, զինուոր, սուրհանդակ, ծածկանուռը՝ Պարապ*) – 65, 66, 98, 99, 120, 122, 134, 136-139, 157, 178, 179, 193, 194, 207, 221, 240, 249, 255, 298, 310, 325, 329, 349, 355, 357, 360, 361, 366-368, 373-375, 380, 382, 383, 390, 393, 394, 410, 418, 420, 441, 445, 487, 562:

**Մենակ** – *Տես Առստամեան Եգոր:*

**Մենիկ** (*Վան, արհեստաւոր*) – 80, 211, 253, 289, 325, 376, 416:

**Մեսրոպ** – *Տես Մաշտոց:*

**Միհրան** – *Տես Թերլեմէզեան Միհրան:*

**Միհրան** (*զինագործ*) – 53, 205, 211, 232, 258, 260, 285:

**Միհրան** (*խլաթցի*) – 291, 425:

**Միհրան** (*Վանի ֆրանս. հիւպատոսարանի թարգման*) – 271, 377:

**Մինաս** – *Տես Տէր Մինասեան Ռուբէն:*

**Մինասեան Տիրան** (*Հայրիկ +1912*) – 348, 620-624:

**Միրաքեան** – *Տես Յարութիւն:*

**Միքայէլեան Քրիստափոր** (*Էլլէն* – 1859-1905) – 11, 67, 73, 89, 94, 95, 97, 102, 113, 311, 313, 624, 630, 634, 639-642:

**Միքօ** (*Ազիզ-Մելիքեան Միքայէլ* – 1856-1898) – 626, 629:

**Միքօ** (*քիւրտ սուրհանդակ*) – 325:

**Մկօ** – *Տես Տէրտէրի Մկօ:*

**Մնէի Պօղոս** (*Ս. Թաղէ վանքի զինուոր*) – 38:

**Մնջիկ** (*Մարմեսցի Յունան, կաւագործ, կուս. գրականութիւն փոխադրող*) – 94,

95, 102, 109, 125, 126:

*Մոկացի Գրիգոր (Նահապետեան – 1875-1929) – 647:*

*Մոնտէ (Վանի կուս. գործիչներէն) – 99, 118, 200, 209, 280, 282, 284, 285, 295, 350:*

*Մոսո (մանագիւրացի, զինուոր) – 47, 87, 125, 153, 221, 225, 252, 258, 298, 299, 636, 637:*

*Մուշեղ (բանտարկեալ, Վան) – 52, 140, 154:*

*Մուշեղեան (Թրֆլիս) – 235, 248, 350:*

*Մուրատ – Տես Սեբաստացի Մուրատ:*

*Մօպսսան (Ֆրանսացի գրող – 1850-1893) – 558:*

**Յ** *Յակոբեան Սիմոն (1880-1942) – 562:*

*Յակովբ (Ս. Թաղէ վանքի զինուոր) – 31, 33, 87, 93, 98, 111, 136, 153, 175, 495, 496:*

*Յակովբեան Յակոբ – 345:*

*Յարուժիւն (Միրաբեան – 1878-1908) – 21, 33, 39, 40, 45-47, 55, 56, 63, 65, 66, 85, 120, 122, 123, 137, 157, 171, 174, 180, 181, 186, 243, 245, 255, 261, 264, 290, 292, 295, 306, 307, 342, 345, 346, 349, 375, 408, 442, 479, 534, 554, 629, 633-637:*

*Յարուժիւն (Պստիկ Գեղցի) – 174, 184, 376:*

*Յարուժիւնեան Մարտիրոս (1875-1958) – 542:*

*Յոնան, Յովնան – Տես Դաւթեան Յոնան:*

*Յովհաննէս (Մոկացի, Ս. Թաղէ վանքի զինուոր) – 46, 48, 136:*

*Յովսէփեան Աւագիմ – 55, 56:*

**Ն** *Նազիա – 455, 464, 491:*

*Նազարեանց Լիպարիա (1874-1947) – 535, 536:*

*Նալպանտեան Գէորգ վարդապետ – Տես Ընծայր:*

*Նեւրուզ (Օննիկ, +1903) – 634, 644, 647:*

*Նիկոլ (Գանձակեցի, Արամի ուղեկցողներէն) – 29, 36, 45-47, 55, 56, 264, 292, 296, 307, 323, 338, 404, 413, 425, 427-429, 431, 432, 434, 637:*

*Նիկոլ (Օտապաշեան) – 437, 439, 442:*

*Նիկոլաեւ (զօրավար) – 601, 602:*

*Նիկոլ Դուման (Տէր Յովհաննիսեան – 1866-1914) – 11, 55, 56, 209, 211, 218, 220, 542, 585, 586:*

*Նշան – 94, 95, 167, 228:*

*Նուրօ (քիւրտ սուրհանդակ) – 403, 404, 417, 429, 436, 439, 443, 446:*

**Շ** *Շարձեան Մաղաք – 588:*

*Շախգելդեան Շուշանիկ – 55, 56:*

*Շահէն – Տես Անդրանիկ:*

*Շահխաթունեան Աւետիք (1883-1918) – 532:*

*Շահմիր (Հնչակեան գործիչ) – 133, 145:*

*Շահնազարեան Սարգիս (Արարատեան – 1884-1943) – 587:*

*Շահպազ – Տես Վարդան Շահպազ:*

*Շահրիկեան Յարուժիւն (1860-1915) – 516, 535, 536, 540:*

*Շաղոյեան Լեւոն (1887-1974) – 609:*

*Շանթ (Ս. Թաղէի փոխադրութեան գործ) – 158, 189, 221, 222, 248, 250, 257, 258, 264, 267:*

*Շաշօ (Սոսոյեան Խաչատուր) – 625, 629:*

*Շարաֆ բէկ (քիւրտ ցեղապետ) – 111, 364, 376:*

*Շաւարշ – 224, 446:*

*Շաքիր (աւագակ) – 520, 568:*

**Շիրին (խառակոնիսցի, Եղիազարեան-Յակոբեան** – 1876-1920) – 386, 582:  
**Շիւքրի բէյ (ոստիկանապետ)** – 635, 636:

**Որսորդ – Տես Բրախուլամ:**  
**Որսորդ Գէորգ** – 613, 647:  
**Ուսուլ** – 186, 187, 254:

**Չալիկ (սուրհանդակ)** – 165, 168, 170, 204, 210, 222, 231, 234, 235, 246, 247, 256, 259, 261, 262, 289, 292, 295, 296, 306, 370, 371, 384, 443:

**Չարկազ (սուրհանդակ)** – 336, 393, 404, 406, 407, 409, 414:

**Չիլինգարեան Արտաշէս (Դարբինեան Ռուբէն** – 1883-1968) – 535, 536, 557, 564:

**Չիլինկիրեան Յակոբ (Աշոտ Հայկունի,** +1911) – 74, 554, 630-632:

**Չոլոյեան Յովսէփ** – 572, 573:

**Պապիկ – Տես Գիսակ:**

**Պատուելի (Խոյի կուս. գործիչներէն)** – 32, 33, 37, 40, 56, 153, 154, 251, 310, 341, 383, 391, 416:

**Պարապ – Տես Մելօ (Անձաւցի):**

**Պարոյր – Տես Անդրանիկ Օզանեան:**

**Պարունակեան Կարապետ** – 28, 29:

**Պարսամեան Արմենակ (Ալէս)** – 80, 253:

**Պարտիզպանեան-Բարսեղեան Պերճուհի** (1889-1940) – 549:

**Պետրոս (Տէր Յովհաննիսեան Բագրատ, զինագործ** – 1877-1937) – 39, 112, 115, 404, 417-419, 427-429, 433, 440, 443, 445-447, 508:

**Պետրոսեան (կուս. գործիչ)** – 88, 110, 112, 128:

**Պետօ (Պետրոսեան Ալեքսանդր** – 1870-

1896) – 11, 625, 629, 630, 635, 640:

**Պուլկարացի Գրիգոր (Կէօզեան** – 1878-1918) – 582, 585, 586, 603:

**Պուլկարացի Սարգիս (Միքայէլ Չաթալեան)** – 556, 557, 620, 621:

**Պուկրէշտ (Խաչան գիւղի գործիչներէն)** – 41, 90, 140, 157, 158, 163, 174, 178, 183:

**Պօղոս** – 156, 392, 393:

**Ջալլաթ (աւետարանցի)** – 361, 374, 375, 395, 421:

**Ջամալեան Արշակ** (1882-1940) – 449:

**Ջաֆար (Սեւանցի Սահակ, ատեն մը քրտացած, Հայուիթեան վերադարձած սուրհանդակ)** – 22, 32, 35, 38, 96, 100, 152, 157, 167, 190, 194, 214, 221, 222, 250-252, 266-268, 287, 289, 290, 294, 297, 298, 304, 336, 338, 339, 341, 349, 351, 376, 381, 383, 386, 387, 390, 397, 398, 403, 404, 415, 417-419, 428, 429, 431, 433, 434, 436, 441, 442, 444, 445:

**Ջեւտէթ, Ճեւտէթ (Վանի կուսակալ)** – 567, 603, 649:

**Ջնդօ (Աճէմեան Արմենակ** – 1877-1907) – 485, 619:

**Ջոջ-Աղա (Ֆլէեան Յովհաննէս** – 1878-1904) – 116, 117:

**Ռաչօ** – 573, 576:

**Ռաֆայէլ – Տես Երէցեան Ռաֆայէլ:**  
**Տոբթ. Ռէյնոլդս** – 215, 263, 283, 286, 345, 346, 590:

**Ռոստոմ (Ստեփան Զօրեան** – 1867-1919) – 316, 449, 455, 470, 529, 531, 532, 536, 537, 550, 562, 581, 585, 599, 642:

**Ռուբէն – Տես Տէր Մինասեան Ռուբէն:**  
**Ռուբինա (Արէշեան Սոֆի** – 1881-1971) – 449, 455, 464, 507:

**Սաթենիկ (Օհանջանեան) – 565:**  
**Սալման – Տես Բաղէչցեան Համազասպ:**  
**Սահակ, Սեւանցի Սահակ (քրտացած հայ, սուրհանդակ) – Տես Զաֆար:**  
**Սամի բէյ (Թուրք խմբագիր) – 536:**  
**Սամուէլ (սուրհանդակ) – 413, 425:**  
**Սամսոն – Տես Թաղէոսեան Ստեփան:**  
**Սարաֆով Բորիս (մակեդոնացի յեղ- գործիչ) – 429, 433, 501:**  
**Սարգիս (Շամիլ, Բարսեղեան, իսկա- կան անունը Օդապաշեան Պօղոս – 1875-1915) – 66, 166, 190, 192, 205, 209, 213, 215, 219, 220, 223, 225, 228, 230-232, 234, 258-260, 262, 265, 269, 270, 272, 277, 280, 283, 285, 287, 289, 306, 311, 313, 338, 349, 352, 357, 362, 365, 377, 404, 407, 413, 427, 430, 433, 435, 437, 450, 451, 455, 484, 486, 487, 491, 504, 507, 508, 513, 514, 531, 532, 548, 549, 557, 558, 566, 581, 582, 585, 648:**  
**Սարգսեան Լեւոն (1863-1927) – 646:**  
**Սարհադ – Տես Գէորգ Չաւուշ:**  
**Սաֆօ (Մեհմէտ բէյ, քիւրտ ցեղապետ) – 152, 154, 167, 178, 179, 201, 207, 239, 255, 261, 274, 336, 376, 425, 443:**  
**Սեբաստացի Մուրատ (Խրիմեան – 1874-1918) – 6, 349, 352, 401, 526, 527, 537, 633, 637, 647:**  
**Սեթօ (սուրհանդակ) – 357:**  
**Սեմերճեան Խաչիկ (մատնիչ) – 627:**  
**Սեպուհ (արմենական, Քէօսէեան Երուանդ – 1881-1908) – 319, 325:**  
**Սեպուհ (Ներսէսեան Արշակ – 1872-1940) – 6, 161, 162, 190, 191, 192, 216, 275, 281, 282, 286, 287, 401, 516, 526, 537, 613, 633, 637, 647:**  
**Սերենիկիւրեան Յովհաննէս – Տես Գի- սակ:**  
**Սեւքարեցի Սաքօ (Ծովրանեան – 1870-1908) – 11, 28-30, 34, 35, 209, 211, 218, 220, 401:**  
**Սէյրօ Պօղոս (1874-1907) – 349, 378, 379, 619:**

**Սէիդ (Ալի) բէյ (քիւրտ ցեղապետ) – 520, 569, 570, 575, 585:**  
**Սիմոն – Տես Զաւարեան Սիմոն:**  
**Սիոն (կայանցի) – 388:**  
**Սլաք (Օխիկեան Արմենակ – 1874-1915) – 52, 140, 192, 295, 297, 300, 306, 319, 345, 346, 350, 352, 389, 390:**  
**Սմբատ – Տես Զաւարեան Սիմոն:**  
**Սմբատ – 410, 430, 443:**  
**Սմբատ-Բիւրատ (1862-1915) – 554:**  
**Սմբատ (Բորոյեան – 1881-1956) – 479, 481:**  
**Սմբատ Շահազիզ (1840-1907) – 501:**  
**Սմբուլ (Սմբատ Յակոբեան) – 537:**  
**Սողօ (խիզարի Փետայի, Արամի թիկ- նապահ) – 123, 136, 137, 291, 307, 349, 383, 385:**  
**Սուրէն (չրջիկ գործիչ) – 60, 61, 176, 245, 286, 289, 290, 292, 296, 297, 307, 313, 319, 320, 322, 344, 349, 404:**  
**Ստեփան – Տես Թաղէոսեան Ստե- փան:**  
**Ստեփանեան բժ. Յարութիւն (Արմե- նակ – 1870-1953) – 378, 379, 387:**  
**Ստեփանեան Ստեփան (Բալաջան – 1865-1915) – 533, 534, 588, 589:**

**Վազգէն (Տէրոյեան Տիգրան – 1872-1898) – 11, 34, 35, 52, 116, 117, 135, 190, 203, 233, 234, 257, 258, 313, 504, 625, 626, 629, 637:**  
**Վաթան – Տես Մելոյեան Ղեւոնդ:**  
**Վահաբ – Տես Վաւմեան Արշակ:**  
**Վահան (Տողրամաճեան – 1866-1904) – 6, 89, 119, 614:**  
**Վահանեան – Տես Իոսուֆեան Յով- հաննէս:**  
**Վաղարշակ (դեղագործ) – 255, 263, 265, 326:**  
**Վաղօ (Պատուալի Վաղօ – Ղարիբեան Աւետիս – 1866-1904) – 630:**



**Վանիկ – Տես թերթմէզեան Միհրան:**  
**Վան-Փուշ** – 205, 211, 264, 296:  
**Վասիլ** – 367-369, 374, 392-395, 415, 418, 419, 427:  
**Վարազդատ** – 233, 234, 257, 298, 312:  
**Վարանդեան Միքայէլ (1872-1934)** – 534, 538, 542, 544-546, 554, 560:  
**Վարդան – Տես Վարդան Շահապ:**  
**Վարդան (զինուոր, զինագործ)** – 86, 274:  
**Վարդանեան Գրիգոր – Տես Սարգիս (Շամիր):**  
**Վարդան Խանասորայ (Մեհրաբեան Սարգիս – 1867-1943)** – 11, 211, 229, 230, 401, 573:  
**Վարդան Շահապ (Տօնիկեան Մինաս – 1864-1959)** – 16, 27, 42, 60, 61, 66, 70, 74, 87, 98-100, 110, 112, 116, 118, 119, 122, 123, 136, 137, 148, 150, 152, 158, 166, 174, 180, 183, 186, 201, 202, 216-218, 220, 221, 225, 245, 254, 264, 286, 334, 335, 427, 443, 507, 534, 548, 549, 626, 627, 635-637:  
**Վարդգէս – Տես Գիսակ:**  
**Վարդօ (Վարդպատրիկեան Յակոբ)** – 263, 265, 269:  
**Վեհիբ պէյ** – 516-519, 521:  
**Վռամեան Արչակ (Վահապ – 1871-1915)** – 8, 269, 270, 401, 479, 481, 490, 493, 505, 518, 519, 521, 525, 535, 539, 542, 543, 557, 563, 565-567, 569, 571, 572, 574, 581, 585, 586, 599, 600, 603, 627, 628, 649:  
**Վրացեան Սիմոն (1882-1969)** – 590, 591, 599, 600, 611, 614:  
**Վրոյր (Վասպուրահանի կուս. գործիչներէն)** – 126, 217, 306:  
  
**Տաճատ (Թերթմէզեան – 1888-1982)**  
 – 450, 623, 624, 629:  
**Տաճատ վարժապետ** – 124, 133:

**Տաճիկ (սուրհանդակ)** – 200, 240, 249, 289:  
**Տատրակ (Տէր Կարապետեան Գեղամ – 1865-1918)** – 159, 347, 487, 489, 493, 500, 501:  
**Տեղտրիկեան Թէոս – Տես Թորգոմ:**  
**Տէր Դաւթեան Յովսէփ (բժիշկ – 1870-1946)** – 114, 195-197, 259, 260, 262, 265, 276, 278, 280, 281, 283-285, 290, 341, 358, 518, 519, 521, 535, 536, 562:  
**Տէր Մարտիրոսեան Միքայէլ (Մար – 1869-1931)** – 510, 514, 543:  
**Տէր Մարտիրոսեան Յովհաննէս (Օնիկ, Ա-Դօ – 1867-1954)** – 159, 196, 200, 588, 589:  
**Տէր Մինասեան Երուանդ (Ռուբէն) – 169, 256, 296, 297, 346, 456:**  
**Տէր Մինասեան Ռուբէն (Մինաս, Ռուբէն – 1881-1951)** – 85, 89, 110, 112, 115, 152, 154, 161-164, 172-174, 180, 201, 202, 218, 220, 286, 291, 296, 334, 335, 346, 347, 378, 456, 477, 479, 481, 482, 489, 493, 500, 526, 527, 531, 532, 547, 549, 551, 556, 557, 559-565, 574, 576, 581, 598, 610, 619:  
**Տէր Մկրտչեան Մ.** – 55, 56, 285:  
**Տէր-Տէր** – 147, 217, 226, 273, 274, 280, 282, 306, 408, 413, 415, 416, 421:  
**Տէրտէրի Մկօ (Մ. Թադէ վանքի զինուոր)** – 38, 40, 46, 48:  
**Տիգրան (Յարութիւն Տէր Մկրտչեան – 1880-1915)** – 22, 23, 29, 34, 35, 42, 57, 59, 60, 66, 70, 74, 80, 82, 83, 91, 93, 95, 96, 100, 105, 108, 110, 124, 127, 130, 132, 137, 151, 160, 171, 173, 174, 180, 182, 183, 186, 193, 218, 220, 224, 245, 252-255, 261, 264, 268-270, 273, 289-292, 294, 296, 299, 300, 304, 306, 311, 324, 439, 440, 446, 454, 486, 487, 498, 501, 507, 508:  
**Տուրբախ – Տես Դուրբախ:**  
**Տրդատ (Ժընեւի ընկեր)** – 556, 558, 562:

**Ր**աֆֆի (Մելիք-Յակոբեան Յակոբ) – 44, 89, 641:

**Ց**ուլակ – 224, 324, 325:

**Փ**այլակ (Դերձակեան Ռուբէն – 1870-1915) – 11, 13, 16, 23, 28, 30, 34-40, 45, 47, 55, 56, 62, 65, 74, 87, 89-91, 93, 111, 128, 139, 141, 189, 221, 357, 404, 406, 408, 417, 419, 435, 569, 570:

**Փ**ափազեան Վահան – Տես Կոմս:  
**Փ**իլոս (Փափախեան – 1882-1915) – 480, 481, 489, 493, 519, 526, 527:  
**Փ**ոխան, **Փ**ոխիկ (Օհանեան Վահրամ – 1873-1904) – 118, 119, 626:

**Ք**անքանեանց Մելիք Յակոբ – 317:  
**Ք**եռի-Ֆարհատ (Գաւաֆեան Արշակ – 1858-1916) – 6, 90, 93, 94, 98, 100, 157, 613, 633, 637, 647:  
**Ք**եստանեան Գէորգ – 552, 553, 555:  
**Ք**էօռ Հիւսէին փաշա – 181, 189, 205, 206, 211, 214, 243, 317, 332, 333, 397, 510, 511, 513, 521:

**Ք**րիստափոր – Տես Միքայէլեան Քրիստափոր:

**Օ**հանջանեան Համազասպ (1874-1947) – 449, 455, 464, 564, 565, 605, 606:

**Օ**հանջանեան Սարգիս – Տես Ֆարհադ:

**Օ**նիկ, **Օ**ննիկ – Տես Մարտիրոսեան Յովհաննէս:

**Տ**անդի (քիւրտ սուրհանդակ, 10-10) – 373, 383:

**Տ**արհադ (Օհանջանեան Սարգիս – 1869-1918) – 16, 27, 34, 35, 48, 62, 63, 65, 66, 87, 89, 110-112, 129, 191, 192, 200, 209, 211, 213, 215, 218, 220, 225, 257, 258, 262, 266, 453, 455, 497:

**Տ**արհատ-Քեռի – Տես Քեռի-Ֆարհատ:

**Տ**երիկ փաշա – 228:

**Տ**էգօ (Մարիֆեան +1916) – 173, 217, 264, 389, 418, 419:

**Տ**էտայ – Տես Գիսակ:

**Տ**րանգեան Երուանդ (1878-1928) – 196, 300, 309:

## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ\*

**Աբաղա (Դաշտ, Բերկրի գաւառակ)** – 11, 41, 299, 361:

**Ազատ-Դաշտ – Տես Գաւառ:**

**Աթանան (գիւղ, Հայոց Զոր գաւառակ)** – 208:

**Ալագան (սար, Թուրք-պարսկական սահմանի վրայ)** – 41, 136, 137:

**Ալեքսանդրապոլ (Քար)** – 28-30, 39, 53, 54, 58, 61, 78, 203, 210, 218, 220, 222, 223, 236, 246, 247, 263, 279, 284, 308, 319, 320, 326, 331, 338, 345, 426, 437, 612, 630-632, 647:

**Ալիւր – Տես Զուարթ:**

**Ալճաւազ, Ատլճեազ (Արծկէ), Վան, Համանուն գաւառ եւ քաղաք** – 189, 192, 206, 211, 243, 305, 510, 513, 606, 625-627:

**Ալվառինջ (գիւղ, Մուշ գաւառ)** – 190, 192, 281, 283, 286, 287:

**Ախալքալաք** – 564:

**Ախլաթ – Տես Խլաթ:**

**Ս. Աղբերիկ (վանք, Սասնոյ Բոնաշէն գաւառակ)** – 190, 192:

**Աղթամար (Ս. Հեղինէ)** – 52, 98, 99, 216, 217, 245, 247, 254, 309, 362, 532, 566, 578, 583, 586, 588, 597, 606, 645, 648:

**Ամասիւ** – 539, 557:

**Ամերիկա (Միացեալ Նահանգներ)** – 9, 12, 21, 33, 66, 72, 73, 97, 105, 135, 190, 202, 204, 225, 227, 228, 233, 242, 244, 252, 270, 271, 279-281, 284, 285, 292, 306, 312, 314, 316, 318, 346, 354, 396, 408, 441, 458, 470, 480, 525, 534, 541, 553, 568, 583-585, 588, 590, 597, 620, 633, 634:

**Ամրոց – Տես Ղարաղաղ:**

**Այգեստան (Վանի քաղաքամաս)** – 34, 35, 41, 173, 603, 621, 627, 628:

**Այգեստան (ծածկանուն Գործոթ գիւղի, Բերկրի գաւառակ)** – 421, 427, 436:

**Անառիկ (Թաղ աւան, Շատախ գաւառակ)** – 132, 133, 180, 181, 471, 508, 509:

**Անգլիա** – 289, 322:

**Անգործ (ծածկանուն Բերկրի գաւառակի մէկ գիւղի)** – 136, 137, 373, 393, 395, 410, 418, 421, 441, 445:

**Անկիւն (ծածկանուն Աւերակի գիւղի, Վան-Տոսպ գաւառակ)** – 445, 447:

**Անտառ (Խիզանի գիւղախումբ, Պիթլիս նահանգ)** – 211:

**Ապառաժ – Տես Ղարաբաղ:**

**Ապառաժ (ծածկանուն Կողպանց գիւղի, Վան-Տոսպ գաւառակ)** – 442, 443:

**Ապաստան (Սոչի?)** – 140, 141, 250, 357:

**Առաքելոց վանք (Տարօն)** – 630, 646:

**Առէն (գիւղ, Ալճաւազ-Արծկէ գաւառ)** – 317:

**Առնոս գիւղ (Խնուս գաւառ)** – 527:

**Ատաբազար** – 540, 549:

**Ատանա** – 532, 641:

**Ատրպատական – Տես նաեւ Վրէժ** – 7, 9, 11-13, 16, 17, 21, 25, 33, 37, 42, 43, 53, 57, 61, 66, 79, 115, 129, 141, 144, 159, 189, 197, 220, 252, 292, 343, 348, 352, 353, 401, 403, 413, 422, 426, 433, 447, 494, 610:

**Արաբիա** – 147, 179, 181, 206, 211, 243:

**Արարատ (ծածկանուն Իգտիրի)** – 388, 389, 419, 421, 425, 427, 430, 433, 437, 439, 440, 445, 452, 453:

\* Չեն յիշատակուած տեղանունները՝ Հայաստանի, Երկիրի, Տաճկահայաստանի: Ծածկանուն-տեղանուններու պարագային, փակագծերով ընդհանրապէս նշուած են անոնց իսկական անունները:

**Արծկէ – Տես Ալճաւագ:**  
**Արծուաբոյն – Տես Վարագ:**  
**Արճակ (Եղեգնուտ) –** 266, 267, 361, 386, 407, 408, 415, 416, 446, 606, 617, 635:  
**Արճէչ –** 206, 327, 446, 447, 499, 510, 513, 520, 521, 573, 606, 649:  
**Արմաւիր (Նոր) –** 632:  
**Արտագ – Տես Մակու:**  
**Արտամէտ – Տես Պալար:**  
**Արցախ (ծածկանուն թիմար գիւղի, թիմար գաւառակ) –** 224, 225, 329, 362:  
**Աւարայր (Խոյ) –** 7, 19, 20, 22, 23, 25, 27, 30, 33-36, 44, 47, 51, 56, 62, 90, 91, 104, 105, 111, 113, 122, 123, 128, 129, 136, 139, 140-144, 154, 155, 157, 160, 178, 180, 188-192, 194-196, 200, 204, 207, 208, 210, 221, 222, 232, 234, 236, 239-242, 248-252, 257, 258, 260, 263, 264, 267, 276, 289, 293, 294, 313, 326, 334, 341, 349, 353, 356, 364, 366, 372, 380-382, 386, 387, 389, 404-406, 408, 410, 413, 415-418, 422, 425, 426, 428, 429, 433, 434, 439-442, 444, 445, 470, 495, 496, 569, 570:  
**Աւետարան (Խաչան գիւղ, Վան նահանգի Բերկրի գաւառակ) –** 11, 22, 23, 31, 32-35, 37, 38, 41, 46, 47, 55, 62, 87, 90, 91, 98, 100, 122, 123, 140, 141, 150, 157, 158, 161, 163, 164, 167, 171, 178, 179, 188, 207, 221, 239, 240, 249, 264, 267, 298, 300, 310, 324, 326, 336, 339, 344, 351, 355-357, 360-362, 364, 366-368, 373, 374, 376, 377, 380-382, 385, 387, 390, 393, 403, 405-407, 410, 413, 417-420, 423, 425, 427-430, 434, 436, 437, 439, 440, 442-446, 452, 453, 495, 496:

**Բագոս (Շահբաղի գիւղ, Վան, թիմար գաւառակ) –** 407, 442, 443:  
**Բագու (Պաքու, տես նաեւ Ոսկանապատ) –** 6, 35, 55, 56, 61, 65, 66, 99, 209, 258, 340, 605, 609, 612, 627, 630, 631:  
**Բաղէչ, Բիթլիս – Տես Պիթլիս:**

**Բաշկալէ –** 596, 625:  
**Բասեն –** 613, 644, 647:  
**Բարձրաբերդ – Տես Կարին-էրզրում:**  
**Բարձրաւանդակ – Տես Սասուն:**  
**Բելու (գիւղ, Վան, Կարճկան գաւառակ) –** 568:  
**Բերկրի (Վան նահանգի գաւառակներէն) –** 23, 33, 35, 40, 41, 46, 66, 90, 121, 123, 129, 136, 137, 141, 154, 158, 164, 171, 179, 208, 250, 333, 377, 405, 408, 478, 577, 606:  
**Բիթլիս – Տես Պիթլիս:**  
**Բլուր (ծածկանուն Մակուի շրջանի Քիչմիշթեփէ գիւղի) –** 39, 293, 404, 405, 419, 428, 433, 436, 439, 442-444, 446, 447, 495:  
**Բուժարան (ծածկանուն Ս. Աստուածածին գիւղի, թիմար գաւառակ) –** 177, 362:  
**Բուլգարիա – Տես Պուլկարիա:**  
**Բուրգաս –** 553:  
**Բունաչէն (Սասնոյ գաւառներէն) –** 192:  
**Բրաիլա (Ռումանիա) –** 552, 553:

**Գարաց (Ռումանիա) –** 552, 553:  
**Գանձակ –** 6, 256, 322, 609:  
**Գարգառ – Տես Կարկառ:**  
**Գաւաչ (Վանի գաւառակ) –** 43, 173, 176, 181, 498, 501, 568, 571, 577, 580, 585, 586, 644, 645, 647:  
**Գերմանիա –** 289, 532, 551:  
**Գէնջ (Մշոյ գաւառակներէն) –** 633:  
**Գոմաձոր (գիւղ, Կարնոյ Խորասան գաւառ) –** 647:

**Դամասկոս –** 135, 192:  
**Դարվէզ, Դավրէզ (Մարմես գիւղ, Վան, թիմար գաւառակ) –** 41, 94, 95, 102, 126, 127:  
**Դերիկ –** 213, 215:

**Դերձան** – 537:

**Դերօ** – **Տես Սահման:**

**Դիադին** (գիւղ, Կարնոյ Բայազէտ գաւառ) – 647:

**Դիարբեքիր** – **Տես Տիարպեքիր-Տիգրանակերտ:**

**Դիլիճան** – 562:

**Դուրան** – **Տես Տարօն:**

**Դուրան-Բարձրաւանդակ** – **Տես Տարօն եւ Սասուն:**

**Եգիպտոս** – 354, 388, 600:

**Եղեգնուտ** – **Տես Արճակ:**

**Երեւան (Մրգաստան)** – 6, 8, 16, 23, 27, 29, 32, 33, 38-40, 43, 45, 47, 48, 52, 53, 58, 61, 65, 74, 78, 111, 117, 121, 139, 143, 150, 159, 172, 174, 186, 191, 196, 198, 200, 205, 209, 210, 213, 218-221, 227, 236, 246-248, 254, 257, 262, 263, 265, 266, 279, 319, 326, 331, 344, 402, 416, 419, 425, 445, 447, 461, 477, 480-483, 489, 502, 521, 565, 589, 601, 602, 604, 607, 609, 615, 631, 634, 644, 646, 647:

**Երզնկա** – 333:

**Երոստաղէմ** – 135, 192, 290, 313, 509, 532, 609:

**Եւրոպա** – 7, 35, 82, 229, 280, 301, 461, 468, 529, 531, 533, 535, 536, 547, 550, 551, 574:

**Եօլբասան (Նոր Գիւղ, Վան, Թիմար գաւառակ)** – 342, 359, 416:

**Զէյթուն (Կիլիկիա)** – 643:

**Զէյվա** – 5:

**Զինասէր (Բերդակ գիւղ, Կարկառ գաւառակ)** – 171, 323:

**Զմիւռնիա (Իզմիր)** – 263:

**Զուարթ (նաեւ Այլւր, գիւղ, Վան, Թիմար գաւառակ)** – 82, 95, 106, 327, 498:

**Զուլիցերիա** – 532, 549, 550, 551:

**Էջմիածին** – 318, 376, 377, 565, 605, 615:  
**էրզրում** – **Տես Կարին-էրզրում:**

**Թաղէի վանք** – **Տես Մենաւոր:**

**Թաւրիզ (տես նաեւ Վրէժ, Վրէժստան)** – 11, 31, 37, 112, 141, 144, 181, 236, 252, 335, 533, 557, 562, 646:

**Թեհրան** – 557:

**Թիմար (Վանի գաւառակներէն)** – 82, 84, 95, 102, 106, 124, 127, 171, 177, 288, 297, 301, 311, 324, 327, 342, 606:

**Թիֆլիս (Մեծ Քաղաք, Մ.Ք.)** – 7-9, 11, 16, 19-21, 23, 27-29, 31, 34, 36-40, 46, 48, 51, 58, 61, 73, 74, 78, 79, 85, 88, 93, 95, 97, 113-115, 120, 128, 153, 162, 166, 194, 196, 202, 203, 205, 209, 210, 213, 218, 220, 234-236, 241, 252, 256, 257, 259, 279, 284, 287, 313, 315, 319, 320, 322, 326, 338, 340, 344-346, 350, 352, 401, 408, 450, 452, 464, 465, 482, 497, 500, 501, 513, 514, 516, 551, 565, 605, 609, 610, 638:

**Թուլչա** – 552, 553:

**Թուրքիա** – **Օսմանեան կայսրութիւն, Տաճկաստան** – 7, 70, 79, 147, 230, 263, 275, 332, 401, 468, 469, 492, 501, 512, 514, 518, 522, 539, 541, 545, 550, 562, 570, 617, 618, 629:

**Ժընեւ** – 9, 20, 33, 67, 101, 103, 197, 206, 217, 227, 231, 244, 252, 261, 301, 401, 498, 503, 504, 513, 542, 549-551, 553, 554, 557, 559, 561-563, 566, 567, 570, 634, 641:

**ժլատ (ծածկանունն չիւս. Կովկասի Հ.Յ.Դ. Կեդր. կոմիտէի, Վրադիկաւկազ կեդրոնով)** – 631, 632:

**Ի**գգիւր – 266, 344, 388, 389, 419, 421, 426, 433, 443, 453, 607:

**Իգմիդ** – 540:

**Իջեւան** – *Տես Խառակոնիս:*

**Իւզվերան** (*գիւղ, Կարնոյ Խորասան գաւառ*) – 644, 647:

**Լեռնապար** (*Վասպուրականի հարաւը, Լեռնային գաւառակներու կողմ. ծածկանուն*) – 12, 42, 43, 52, 60, 61, 81, 84, 110, 131-133, 173, 197, 220, 268-270, 272, 280, 282, 285, 310, 312, 314, 315, 335, 347, 352, 391, 401, 451, 648, 649:

**Լեռնավայր** (*Կիրիկիա*) – 20, 211, 229, 230, 263, 265, 641:

**Լեռնաքար** (*Այնթապ գիւղ, հին Պայազէտ գաւառ*) – 226:

**Լէզք** – *Տես Սֆինկս:*

**Լիմ կղզի** – 507:

**Խանասոր** – 53, 419, 625, 629, 640, 643:

**Խաչան** – *Տես Աւետարան:*

**Խառակոնիս** (*գիւղ, Արճակ գաւառակի, ծածկանունը Իջեւան*) – 266, 267, 361, 385, 386, 403, 405, 407, 408, 415, 416, 436, 439, 441, 446:

**Խարբերդ** – 543:

**Խարկով** – 501, 507, 609:

**Խիզան** (*Պիթլիսի գաւառակ*) – 43, 568, 596, 606:

**Խլաթ, Ախլաթ** (*Պուրակ*) – 60, 61, 104, 111, 121, 131, 161, 162, 198, 199, 291, 306, 307, 485, 487, 500, 501:

**Խնուս** – 484, 527:

**Խոռանց** (*Ալջաւազ-Արծկէ գաւառակի գիւղ*) – 516:

**Խուփ** (*ծածկանուն գիւղի, Բերկրի գաւառակ*) – 339, 359-361, 366-368, 373, 374, 380, 383, 385, 393, 410, 418, 420, 436, 439, 440, 446:

**Խոյ – Տես Աւարայր:**

**Խրիմ** – 610:

**Խրոխտենց** (*գիւղ, Կարկառ գաւառակ*) – 573, 576, 577, 586:

**Մաղկոտն** – *Տես Արճէշ:*

**Մովաբեր** (*Մվստան գիւղ, Վան-Տոսպ գաւառակ*) – 186, 187, 254, 289:

**Մովածոց** (*ծածկանուն Թիմար գաւառակի մէկ գիւղի*) – 106:

**Մովահայեաց** (*ծածկանուն Թիմար գաւառակի Խժիշկ գիւղի*) – 125:

**Մվստան** – *Տես Մովաբեր:*

**Կաղզուան** – *Տես Պարտիզաւան:*

**Կամուրջ** (*Կարէ գիւղ, Ս. Թաղէի մօտ*) – 37, 40, 41, 45, 46, 55, 91, 179, 208, 267:

**Կայան** (*Պատիկ Գեղ, Վան, Բերկրի գաւառակ*) – 39-41, 55, 65, 66, 90, 91, 96, 102, 108, 120, 122-124, 134, 158, 163, 170, 178, 179, 201, 210, 240, 249, 250, 324, 418, 421, 436:

**Կայարան** (*ենթակոմիտէ Թիմար եւ Հայոց Զոր գաւառակներու*) – 98, 171, 245:

**Կապուտան** (*Ատրպատականի Ուրմիա աւան*) – 376, 377, 382, 383, 439:

**Կարանի** (*Աւան Մակու գաւառի մէջ*) – 41:

**Կարին-էրզրում** – 42, 52, 205, 214, 272, 275-277, 282, 285, 450, 463, 513-516, 518, 519, 529, 536, 537, 562, 597, 603, 618, 623:

**Կարկառ** (*Վան նահանգի գաւառակ*) – 43, 173, 211, 498, 568, 571, 573, 576, 577, 580, 586, 606, 644, 647, 648:

**Կարճկան** (*Վան նահանգի գաւառակներէն*) – 585, 606, 644, 647:

**Կարս** (*Ջրաբերդ*) – 6, 7, 11, 12, 17, 20, 21, 28, 30, 34, 35, 43, 46, 52-54, 57, 58, 61, 63, 78, 98, 99, 115, 164, 166, 168, 204, 205, 218, 220, 247, 256, 258, 260, 263, 292, 296, 297,

320, 384, 452, 485, 610, 611-613, 631, 634, 644, 647:

*Կզրլդաշ գիւղ (Հայոց Զոր)* – 181:

*Կիլիկիա – Տես Լեոնավայր:*

*Կիրճ (քրտաբնակ Քեաղուկ գիւղ, Բերկրի գաւառակ)* – 22, 23, 31, 33, 39, 40, 120-122, 137, 152, 154, 179, 207, 240, 249, 250, 356, 359-361, 366-368, 373-375, 380, 383, 385, 393, 421, 444, 446:

*Կոթուր (լեոնանցք թուրք-պարսկական սահմանի՝ Զազրոշեան լեոնաշղթայի վրայ)* – 93:

*Կոնստանցա* – 552, 553:

*Կոպենհակ* – 542:

*Կովկաս (Սարուստան)* – 5, 13, 14, 16, 18-20, 22, 23, 27-29, 33, 34, 36, 37, 40, 42, 43, 46-48, 52, 55, 57, 59, 61, 65-67, 69, 70, 72-75, 77, 79, 80, 83, 88, 89, 93, 94, 104, 110, 112, 113, 128, 178, 183, 189, 194, 195, 197, 202-204, 206, 213, 214, 221, 224, 227, 229, 236, 239, 244, 246, 247, 250, 251, 257, 260-262, 267, 269-271, 275, 279, 281, 282, 286, 292, 295, 296, 298, 304, 306, 307, 309-311, 316, 318, 321, 331, 334, 335, 347, 353-355, 376, 381, 383, 386-388, 390, 401, 407, 417, 419, 422, 425, 426, 429, 430, 441, 448, 449, 452, 458, 474, 479, 480, 484, 486, 490, 500, 501, 532, 543, 562, 565, 574, 599, 605, 608, 609, 612, 614, 620, 627, 630-634, 636, 637, 639, 641, 647:

*Կոռուբաշ (գիւղ Վան-Տոսպ գաւառակ, տես նաեւ Նեղուց)* – 188, 192:

*Կոռադաշտ (ծածկանուն Մակուի շրջանի մէկ գիւղի)* – 351, 352, 386, 387, 425, 426, 428, 433, 440, 445, 446:

*Կտուց անապատ – Տես Հեպթաղէմ:*

*Հարս (գիւղ, Կարկառ գաւառակ)* – 210, 211:

*Հաղթ (գիւղ, Կարկառ գաւառակ)* – 577:

*Հայկավանք (Թաղամաս Վանի պարիսպներէն դուրս)* – 41:

*Հայոց Զոր (Վան-Տոսպ գաւառակ)* – 43, 95, 171, 180, 181, 208, 252, 261, 292, 300, 302, 377, 405, 557, 567, 606, 617, 645, 649:

*Հանք (ծածկանուն Օլթի աւանի, Կարսի մարզ)* – 256, 354, 614, 634:

*Ս. Հեղինէ – Տես Աղթամար:*

*Հեպթաղէմ (Կտուց անապատ)* – 92, 96, 98, 108, 109, 124, 138, 170, 184, 200, 202, 224, 225, 306, 322, 328, 329, 349, 352:

*Հերկերտ (գիւղ, Տարօն գաւառ)* – 214:

*Հեքիարի (Վան նահանգի գաւառ)* – 40, 171, 516:

*Հին Քաղաք (Քեօլնաշահր, Մակուի շրջան)* – 428, 433:

*Հիրճ (գիւղ, Հայոց Զոր գաւառակ)* – 567, 603, 643, 649:

*Հիւսնենց, Կիւսնենց (գիւղ, Թիմար գաւառակ)* – 387:

*Հնադարեան (Լիմ անապատ եւ «Դրսի տուն») – 124, 165, 177, 200, 202, 224, 322, 436:*

*Հնդկաստան* – 243:

*Հոգեվանք (վանք եւ գիւղ, Հայոց Զոր գաւառակ)* – 338:

*Զկոր, Ծկոր (գիւղ, Կարկառ գաւառակ)* – 577:

*Ղազախ (գաւառ)* – 638:

*Ղարասար (Սալմաստի հայաբնակ գիւղերէն)* – 616, 619:

*Ղարաբաղ-Արցախ* – 5, 55, 56, 234, 260, 270, 621, 631, 643:

*Ղարադաղ (Ամրոց, Վան-Այգեստանի Փաշի Փողան թաղ)* – 41, 109, 126, 127, 130, 134, 137, 150, 178, 179, 193, 267, 310,

329, 339, 357, 361, 369, 388, 395, 400, 410, 416, 420, 421, 441:

**Ղարս – Տես Կարս:**

**Ղարս, Խարս (գիւղ, Մշոյ գաւառ)** – 190, 192:

**Ղափան (Կապան)** – 5:

**Մակեդոնիա** – 321, 429:

**Մակու (ծածկանուն Արտազ գաւառի)** – 18, 40, 208, 352, 376, 405, 407, 418, 422, 423, 442:

**Մամուտանք (գիւղախումբ Պիթլիսի Խիզան գաւառակի)** – 43, 606:

**Մանաստեր (Մակեդոնիա)** – 516:

**Մանդան (գիւղ, Արճակ գաւառակ)** – 520, 521, 575:

**Մանջուրիա** – 632:

**Մարգուան** – 529, 539, 540:

**Մարմետ – Տես Դարվէզ, Դավրէզ:**

**Մարսէլ** – 643:

**Մեծ Քաղաք, Մ.Ք. – Տես Թիֆլիս:**

**Մենաւոր (Մ. Թաղէի վանք, Ատրպատական)** – 7, 11, 13, 15, 16, 18-21, 24-30, 32-35, 38-41, 44, 47-49, 52, 55, 56, 63, 74, 87-90, 98, 100, 102, 108, 110-112, 120, 128, 134, 135, 138-140, 142, 144, 152, 154, 155, 157, 163, 164, 166, 175, 178, 180, 181, 189-191, 193, 194, 201, 207, 211, 213, 221, 225, 232, 234, 236, 240, 241, 248-252, 255, 257, 258, 264, 267, 274, 276-278, 287, 289, 294-296, 298, 299, 306, 310, 319, 320, 325, 326, 330-332, 334, 335, 340, 341, 344, 351, 353-355, 359, 360, 362, 366-369, 373-375, 377, 380, 387, 389, 392, 395, 401, 403, 406, 409, 416-420, 424, 425, 430, 432, 434, 435, 439, 494, 496, 497:

**Մինարէթ (Մարմաստ)** – 11, 14, 27, 30, 33, 34, 36, 37, 40, 48, 52, 53, 55-57, 74, 104, 111, 113, 129, 140, 142-144, 160, 178-182, 189, 194, 200, 203, 206, 208, 223, 229, 230, 235-237, 239, 250-252, 258, 259, 263-

265, 267, 274, 276, 293, 294, 299, 305, 308, 313, 316, 318-320, 326, 331, 334, 335, 339-341, 343, 344, 346, 349, 353, 356, 357, 362, 364-366, 372, 376, 377, 380-383, 390, 393, 404, 406, 408, 417, 418, 422, 426, 428, 439-442, 445, 464, 477, 479, 481, 491, 493, 495, 496, 519, 570, 576, 578, 579, 582, 616:

**Մոկս (Վան նահանգի գաւառակ)** – 12, 43, 53, 173, 498, 606, 644, 647:

**Մոսկուա** – 453, 609, 611:

**Մուշ, Մշոյ դաշտ** – 190, 192, 199, 271, 476, 514, 516, 521, 526, 532, 533, 535, 537, 543, 548, 562, 615, 618, 623, 633, 641:

**Մուսուլ** – 308, 309, 310, 317, 588, 596:

**Մրգաստան – Տես Երեւան:**

**Յանկոյներ (Վան-Այգեստանի թաղամաս)** – 592:

**Յեպթաղէմ – Տես Հեպթաղէմ (Կտուց անապատ):**

**Նալբանդ (ծածկանուն Հ.Յ.Դ. Ռոստով-Նոր Նախիջեւանի կեդր. կոմիտէ-ութեան)** – 631, 632:

**Նախավկայ վանք (Մ. Ստեփանոս. տես նաեւ Զրափ)** – 413, 419, 422, 423:

**Նախիջեւան (Հին)** – 153, 171, 180, 181, 186, 198, 234, 279, 289, 291, 296, 331, 377:

**Նարեկ (գիւղ, Գաւազ գաւառակ)** – 568, 586, 644, 648:

**Նեղուց (Կուռուպաշ գիւղ, Վան-Տոսպ գաւառակ)** – 289, 291, 416:

**Նիւշատէլ (Զուլիցերիա)** – 556, 558-561:

**Նոր-Մծբին, Մծբին (Ալաշկերտ)** – 222, 223, 235, 237, 608:

**Նուխի** – 609:

**Նպաստաւոր (Էրերին գիւղ, Թիմար գաւառակ)** – 176, 177, 224, 296, 297:



**Շ**ահբաղի (գիւղ Վանի մօտ) – 39, 40, 84:  
**Շամ, Շամիր, Շամիրամ – Տես Վան:**  
**Շապին Գարահիսար** – 276, 285, 531, 532:  
**Շատախ (Վանի գաւառակ)** – 43, 53, 133, 173, 181, 471, 509, 567, 569, 571-573, 599, 603, 604, 606, 644, 647, 649:  
**Շէնիձոր (գիւղախումբ Պիթլիսի Խիզան գաւառակի)** – 43:  
**Շուշանց – Տես Սասունիկ:**  
**Շուշի** – 5, 56, 261, 609, 611, 612, 621, 643, 646:

**Ո**գմ (գիւղ, Մոկս գաւառակ) – 577:  
**Ոսկանապատ (Հ.Յ.Դ. Պաքուի Կեդր-կոմիտէ)** – 6, 34, 35, 53, 55, 56, 58, 78, 117, 135, 203, 222, 223, 234:  
**Ոսկերակ (Վանի մօտ գիւղ)** – 365, 366:  
**Ոսկեհանք (Գզըլտաշ գիւղ, Գաւաշ գաւառակ)** – 171:  
**Ոստան (աւան, Գաւաշ գաւառակ)** – 268, 576, 577, 605, 606:

**Չ**իպուխու (գիւղ Աբաղայի դաշտի մէջ) – 41, 355, 360:

**Պ**աթում, Բաթում – 481:  
**Պալար (Ժածկանուն Արտամէտ գիւղի, Վան-Տոսպ գաւառակ)** – 182, 193, 254, 297, 308, 312, 313, 320, 648:  
**Պարսկաստան** – 9, 11, 13, 18, 60, 177, 187, 322, 484, 491, 496, 524, 557, 558, 576, 579, 621, 623, 634:  
**Պարտիզական (Կաղզուան)** – 86, 166, 168, 222, 223, 231, 246, 247, 256, 262, 292, 295-297, 370, 384, 439, 452, 453:

**Պաքու – Տես Բագու:**  
**Պեստիգորակ (Հիւս. Կովկաս)** – 632:  
**Պետերբուրգ** – 35, 453, 455, 609, 639:  
**Պէյրութ** – 591, 610, 641:  
**Պիթլիս-Բիթլիս (Բաղէշ)** – 34, 42, 43, 53, 173, 193, 199, 206, 211, 214, 247, 272, 283, 291, 390, 461, 462, 514, 519, 521, 570, 596, 597:  
**Պոլիս – Տես Վիշապ:**  
**Պոսթըն** – 9, 11, 451, 551, 614:  
**Պուլկարիա** – 98, 206, 228, 230, 243, 314, 353, 408, 483, 552, 620, 633, 634, 640:  
**Պուրակ – Տես Խլաթ:**  
**Պուրկաս** – 552:  
**Պստիկ Գեղ – Տես Կայան:**  
**Պրուսա** – 529, 540:

**Ջ**ուլֆա (Հին) – 11, 30, 121, 413:  
**Ջրաբերդ – Տես Կարս:**  
**Ջրաղաց (Սղկա գիւղ, Վան-Տոսպ գաւառակ)** – 323, 362, 375-377, 416, 442, 443:  
**Ջրափ, Ջրի Ափ, Գետ-Ափ** – 413, 417, 419, 422, 436:

**Ռ**շտունիք (գաւառ, Վանի նահանգ) – 644, 647:  
**Ռոստով – Նոր Նախիջեւան** – 632:  
**Ռումանիա** – 552:  
**Ռուսիա, Ռուսաստան** – 7, 35, 114, 116, 188, 317, 351, 395, 421, 435, 461, 469, 476, 512, 524, 537, 545, 546, 571, 574, 611, 638, 640:  
**Ռուսջուք** – 552:

**Ս**ալմաստ – Տես Մինարէթ:  
**Սալնոյ Ջոր (Ժածկանուն Բաղէշ-Պիթլիսի շրջանին)** – 457:

**Սայրը (Ճանիկ գիւղ, Թիմար գաւառակ)** – 95, 96, 100, 324, 325:

**Սահման (Դերօ գիւղ, Բերկրի գաւառակ)** – 129, 136, 355, 357, 360, 361, 366, 367, 373-375, 382, 383, 387, 388, 390, 393, 395, 406, 408, 410:

**Սամսոն** – 539, 544, 557:

**Սանամերիկ (Սալմաստի գիւղերէն)** – 32, 33, 55, 56:

**Սասուն (Բարձրաւանդակ)** – 6, 7, 11, 16, 17, 20, 26, 37, 42, 43, 53, 60, 61, 63, 65, 67, 68, 75, 76, 83, 85, 89, 92, 110, 112, 144, 195, 197, 204, 218, 224, 229, 246, 247, 268, 270, 278, 347, 370, 401, 500, 531, 532, 548, 586, 613, 614, 620, 633, 634, 641, 643, 647:

**Սասունիկ (Շուշանց գիւղ, Վան-Տոսպ գաւառակ)** – 186, 187, 254, 442:

**Սարուստան – Տես Կովկաս:**

**Սելանիկ** – 516, 517:

**Սիլիվան (Պուլկարիա)** – 553:

**Սդերդ** – 214:

**Սդկա – Տես Զրաղաց:**

**Սողորդ (գիւղ, Պիթլիսի Խլաթ գաւառակ)** – 242:

**Սուլինա (Ռուժանիա)** – 552, 553:

**Սուլուխ (գիւղ, Մշոյ գաւառ)** – 526, 527:

**Սոֆիա** – 70, 94, 98, 115, 501, 552, 553:

**Սպարկերտ (գաւառակ Պիթլիս նահանգի)** – 12, 43, 53, 173, 498, 568, 606:

**Սվազ (Սեբաստիա)** – 541:

**Սֆինկս (Աէզք գիւղ, Վան-Տոսպ գաւառակ)** – 176, 177, 375-377, 442:

**Վան (Շամ, Շամիր, Շամիրամ)** – 7-9, 11, 19, 20, 23, 26, 27, 29, 32, 35, 37-44, 47, 50, 51, 53-55, 60, 61, 63, 67-69, 74, 75, 77, 79, 84, 86, 87, 89, 91, 93, 95, 97, 99, 101, 102, 105, 107-110, 112-114, 116, 117, 119, 121, 124, 129, 131, 133, 135, 138, 140, 144, 149, 152-154, 156, 158, 164, 166, 173, 175,

179, 182, 183, 185, 187, 191, 192, 194, 197, 206, 208, 211, 215, 218, 222, 228-230, 233, 234, 241, 242, 244-247, 251, 257-259, 265, 268, 270, 272, 274, 276, 278, 280, 282, 285, 289, 291, 293, 294, 297, 299, 301, 304, 307-316, 318, 320, 321-324, 330, 335, 337, 338, 343, 346-348, 352-354, 362, 371, 372, 384, 389, 391, 400, 401, 403, 408, 409, 415-419, 422, 425, 427, 429, 441, 445, 448, 450, 451, 455, 462, 463, 466, 467, 469, 475-477, 481, 482, 485, 492, 493, 495, 497, 499, 502, 503, 506, 509, 514, 516-519, 521, 524, 525, 529, 531, 533, 537, 538, 540, 541, 543-545, 548-551, 556, 563, 566, 567, 573, 574, 576, 578, 581, 582, 586, 587, 590-593, 595, 597-602, 604, 605, 607, 608, 615-621, 623, 625-629, 633-635, 637, 641-649:

**Վառնա** – 265, 398, 552, 553:

**Վասպուրական** – 6-9, 11, 12, 17, 20, 21, 23, 33, 35, 37, 42, 43, 50, 53, 57, 61, 63, 64, 67, 70-72, 74, 79, 82, 84, 89, 91-93, 95, 96, 98, 99, 101-103, 105, 107-109, 112, 114, 117, 119, 121, 123, 124, 126, 127, 129-135, 137, 138, 140, 144-146, 149, 150, 153, 156, 158, 160, 162-168, 170, 173, 175, 176, 179, 181-183, 185, 187, 191, 192, 194, 197, 199, 200, 202, 209, 211, 215, 218, 220, 222, 225-227, 229, 230, 233, 242, 245, 252, 258, 267, 269, 270, 272, 274, 277, 283, 286, 287, 292, 301, 317, 318, 321, 343, 347, 353, 362, 371, 379, 388, 391, 400-403, 422, 424, 448, 450, 451, 454, 462, 463, 466, 471, 475-477, 480-482, 489, 490, 493, 507, 514, 516-519, 521, 534, 566, 567, 574, 579, 581, 595, 597, 601, 606, 610, 637, 649:

**Վարազ – Տես Արծուաբոյն:**

**Վարազ (վանք եւ համանուն գիւղ, Վան-Տոսպ գաւառակ)** – 407, 415, 416, 588, 627, 635, 636:

**Վարանդա (Արցախ-Ղարաբաղի գաւառներէն)** – 621:

**Ս. Վարդան (գիւղ, Վան, Հայոց Զոր գաւառակ)** – 245:

**Վենետիկ** – 563:

**Վիեննա** – 401, 413, 448, 450, 464, 498, 555, 635, 648:

**Վիշապ (նաեւ Պոլիս)** – 20, 82, 88, 98, 99, 104, 105, 108, 110, 118, 120, 124, 132, 133, 159, 171, 172, 200, 202, 206, 212, 216, 217, 227, 228, 230, 243, 254, 258, 263, 264, 269, 271, 279, 281, 284, 289, 314, 318-320, 327, 332, 333, 340, 344, 350, 351, 451, 465, 486, 487, 499, 510, 511, 513, 515-517, 520, 525, 527, 529, 531, 534-538, 540, 542, 544, 545, 549-551, 554, 555, 557, 559, 562-566, 569, 570, 575, 582, 583, 587, 588, 594, 596, 597, 633, 638, 641:

**Վիշապածոր (ծածկանունն Տիարպեքիր-Տիգրանակերտի)** – 463:

**Վլատիկաւիզ** – 74, 630, 632:

**Վրէժ, Վրէժստան (Թաւրիզի կամ Ատրպատականի Կեդր. կոմիտէ)** – 11, 13, 14, 16, 19, 23, 25, 26, 34, 36, 37, 39, 46, 48, 49, 53, 56, 59, 73, 74, 79, 85, 88, 111, 112, 115, 117, 121, 139, 141, 142, 148, 153-155, 158, 161-163, 166, 172, 180, 189-191, 195, 196, 200, 206, 209, 211, 214, 216, 218, 227, 232, 235, 236, 239-243, 248, 251, 252, 257, 259, 262, 267, 270, 272, 276, 279-281, 284-287, 295, 297, 305, 312, 313, 315, 317, 319, 326, 332, 334, 340, 341, 344, 366, 378, 387, 398, 407, 408, 416, 418, 422, 424, 426, 434, 435, 437, 441, 445, 446, 455, 480, 492, 505, 580, 581:

**Տախմանց (գիւղ, Գաւաշ գաւառակ)** – 577:

**Տաճկաստան – Տես Թուրքիա:**

**Տարօն (Դուրան)** – 7, 11, 16, 20, 43, 83, 86, 129, 141, 159, 162, 172, 190, 192, 196, 198, 200, 206, 214, 217, 241, 247, 254, 274, 283, 347, 349, 428, 433, 456, 457, 478-480, 482, 489, 490, 493, 500, 516, 517, 532, 574, 576, 581, 614:

**Տաք Աղբիւր (ծածկանունն Տիատինի Միրզաջան գիւղի, Հին Պայագիտ գաւառ)** – 446, 447, 644, 645:

**Տիարպեքիր – Տիգրանակերտ** – 53, 275, 276, 280, 285, 463, 514, 629:

**Տիրամէր Աստուածածին (գիւղ, Բերկրի գաւառակ)** – 41, 302:

**Տոհմիկ (Իշխանագոմ գիւղ, Հայոց Զոր գաւառակ)** – 292:

**Տրապիզոն** – 263, 529, 531, 544, 547, 585, 640:

**Փախներ (գիւղ, Արճէշ գաւառակ)** – 568:

**Փաշի Փողան – Տես Ղարաղաղ:**

**Փարիզ** – 318, 500, 501, 549, 554, 559, 562, 589:

**Փարոս (Ուրմիա քաղաք, Ատրպատական)** – 343, 491, 493:

**Փարուխ (Ֆառուղ, Վան-Տոսպ գաւառակի գիւղ)** – 167:

**Փեթերսպուրկ – Տես Պետերբուրգ:**

**Քաջայոյս (Քոզեռն գիւղ, Արճէշ գաւառակ)** – 226:

**Քաջարին (Խորգոմ գիւղ, Հայոց Զոր գաւառակ)** – 376, 377:

**Քար – Տես Ալեքսանդրապոլ:**

**Քարի տակ (սար Ղարաբաղի մէջ)** – 644:

**Քեաղուկ – Տես Կիրճ:**

**Քերս, Քիրս (լեռնագագաթ Ղարաբաղի մէջ)** – 643, 645, 646:

**Քիչմիշթեփէ (ծածկանունը՝ Բլուր) – Տես Բլուր:**

**Քոչկոան, Քոչգիրան (գիւղ Մարմեա գետի ափին, Վան, Մահմուտիէ գաւառակ)** – 416:

**Քրասնի (գիւղ Ղարաբաղ-Արցախի մէջ)** – 643, 646:

**Օ**րեսա – 609:

Օլլթի (Տես նաեւ Հանք) – 614, 634:

Օղնուտ (գիւղ, Մշոյ Գէնջ գաւառ) – 633:

Օսմանեան կայսրութիւն – Տես Թուրքիա:

Օրդու – 529, 530, 534, 537, 538, 541-543, 545, 546, 549-551:

**Ֆ**առուի (գիւղ, Վան-Տոսպ գաւառակ) – 387:

Ֆիլիպէ (այժմ Փլովտիւ, Պուլկարիա) – 482, 552, 553:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ----- 5

Ա. Բաժին  
ԱՐԱՄ ՍԱՆՈՒԿԵԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՄԷՋ ----- 11-41  
(1914 թ. Նոյ. – 1905 թ. Փետրուար)

Բ. Բաժին  
ԱՐԱՄ ՍԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԷՋ ----- 42-400  
(1905 թ. Փետր. – 1906 թ. Հոկտ.)

Գ. Բաժին  
ԴԷՊԻ ՎԻԵՆՆԱ Հ.Յ.Դ. ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ ----- 401-449  
(1906 – 1907 թթ.)

Դ. Բաժին  
ՎԵՐԱԴԱՐՉ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ----- 450-527  
(1907 – 1909 թթ.)

Ե. Բաժին  
ԱՐԱՄ ՍԱՆՈՒԿԵԱՆ ՕՐՏՈՒԻ ՄԷՋ  
ԱՋԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ (1909 – 1911 թթ.) ----- 529-549

Չ. Բաժին  
ԱՐԱՄ ՍԱՆՈՒԿԵԱՆ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՄԷՋ  
(1911 թ. Նոյ. – 1912 թ. Օգոստոս) ----- 550-565

Է. Բաժին  
ԱՐԱՄ ՍԱՆՈՒԿԵԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՉԸ ՎԱՆ ----- 566-609  
(1912 – 1915 թթ.)

Ը. Յանդուած  
ԿԵՆԴԱՆԱԳՐԵՐ՝ ՆԱՀԱՏԱԿ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ----- 610-649

ԹՈՒՄԱՆ ԹՈՒՄԵԱՆ (ԹՈՐԳՈՍ), ՋԱԲԵՆ (ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳՍԵԱՆ), ՏԻՐԱՆ ՄԻՆԱՄԵԱՆ (ՀԱՅՐԻԿ), ԾՈՒՌ ԴԱԻԹ (ԴԱԻԹ ԹՈՒՄԱՆԵԱՆ), ՅԱԿՈԲ ՉԻԼԻՆ-ԿԱՐԵԱՆ (ԱՇՈՏ ՀԱՅԿՈՒՆԻ), ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՐԱՋԵԱՆ, ՄԻՍԵՈՆ ՋԱԲԱՐԵԱՆ, ՆԻԿՈԼ ՊՕՂՈՍԵԱՆ-ՄԻՋԱՅԷԼԵԱՆ (ԻՇԽԱՆ):

ԱՆՉՆԱՆՈՒՆՆԵՐ ----- 650-660

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ----- 661-670

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ

## ՆԱՄԱԿԱՆԻ

Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն  
եւ ծանօթագրութիւններ  
ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒԲԵԱՆԻ  
Համակարգչային շարուածք եւ ձեւաւորում  
ԹԱՄԱՐ ՄՆԱՊԵԱՆ-ՍՈՒՐՃԵԱՆԻ  
Շապիկի ձեւաւորումը  
ԱՐՄԷՆ ՊԱՏՈՒԱԿԱՆԵԱՆԻ

Հատորը տեղադրուած է  
[www.historyofarmenia.am](http://www.historyofarmenia.am) եւ  
[www.elibrary.am](http://www.elibrary.am) կայքերուն վրայ:

Տպագրված է «Բեկոր-հրատ» տպագրատանը:  
ք. Երևան, Արշակունյաց 5

Ստորագրուած է տպագրութեան՝ 22.03.2018:  
Չափսը՝ 70x100 1/16: Տպ. մամուլը՝ 42:  
Տպաքանակը՝ 1000:

ԵՊՀ հրատարակչութիւն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկեան 1  
[www.publishing.am](http://www.publishing.am)



ԿՐԾՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2018  
[publishing-ysu.am](http://publishing-ysu.am)